

Тем, что эта книга дошла до Вас, мы обязаны в первую очередь библиотекарям, которые долгие годы бережно хранили её. Сотрудники Google оцифровали её в рамках проекта, цель которого – сделать книги со всего мира доступными через Интернет.

Эта книга находится в общественном достоянии. В общих чертах, юридически, книга передаётся в общественное достояние, когда истекает срок действия имущественных авторских прав на неё, а также если правообладатель сам передал её в общественное достояние или не заявил на неё авторских прав. Такие книги – это ключ к прошлому, к сокровищам нашей истории и культуры, и к знаниям, которые зачастую нигде больше не найдёшь.

В этой цифровой копии мы оставили без изменений все рукописные пометки, которые были в оригинальном издании. Пускай они будут напоминанием о всех тех руках, через которые прошла эта книга – автора, издателя, библиотекаря и предыдущих читателей – чтобы наконец попасть в Ваши.

Правила пользования
Мы гордимся нашим сотрудничеством с библиотеками, в рамках которого мы оцифровываем книги в общественном достоянии и делаем их доступными для всех. Эти книги принадлежат всему человечеству, а мы – лишь их хранители. Тем не менее, оцифровка книг и поддержка этого проекта стоят немало, и поэтому, чтобы и в дальнейшем предоставлять этот ресурс, мы предприняли некоторые меры, чтобы предотвратить коммерческое использование этих книг. Одна из них – это технические ограничения на автоматические запросы.

Мы также просим Вас:

- **Не использовать файлы в коммерческих целях.** Мы разработали программу Поиска по книгам Google для всех пользователей, поэтому, пожалуйста, используйте эти файлы только в личных, некоммерческих целях.
- **Не отправлять автоматические запросы.** Не отправляйте в систему Google автоматические запросы любого рода. Если Вам требуется доступ к большим объёмам текстов для исследований в области машинного перевода, оптического распознавания текста, или в других похожих целях, свяжитесь с нами. Для этих целей мы настоятельно рекомендуем использовать исключительно материалы в общественном достоянии.
- **Не удалять логотипы и другие атрибуты Google из файлов.** Изображения в каждом файле помечены логотипами Google для того, чтобы рассказать читателям о нашем проекте и помочь им найти дополнительные материалы. Не удаляйте их.
- **Соблюдать законы Вашей и других стран.** В конечном итоге, именно Вы несёте полную ответственность за Ваши действия – поэтому, пожалуйста, убедитесь, что Вы не нарушаете соответствующие законы Вашей или других стран. Имейте в виду, что даже если книга более не находится под защитой авторских прав в США, то это ещё совсем не значит, что её можно распространять в других странах. К сожалению, законодательство в сфере интеллектуальной собственности очень разнообразно, и не существует универсального способа определить, как разрешено использовать книгу в конкретной стране. Не рассчитывайте на то, что если книга появилась в поиске по книгам Google, то её можно использовать где и как угодно. Наказание за нарушение авторских прав может оказаться очень серьёзным.

О программе
Наша миссия – организовать информацию во всём мире и сделать её доступной и полезной для всех. Поиск по книгам Google помогает пользователям найти книги со всего света, а авторам и издателям – новых читателей. Чтобы произвести поиск по этой книге в полнотекстовом режиме, откройте страницу `http://books.google.com`.


Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Bible - N.T. Armenian

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵՐՈՆ ՄԵՐՈՑ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԸՍՏ ՀԱՐԱՎՈՑՑ ՆԱԽՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵՆՆ ՀԱՅԿԱԶՅՂ ՀԱՅ-
ՐԱՍՏԱՐՈՒՄ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵՄԲ Ի ՀԱՅՐԱՊԱՏԻՑ ԼՒԴԱՒՒ

Ի ՀԱՃԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԵՍԻ ԱՐՔԱՆԵՂՆՅՒՐ ԿԱԹՈՒ-
ՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԱՍՊԵՏԻ

ԵՐԲՈՐԴ ՏՊԻ

ՀԱՆԴԵՐՁ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱԳՐԱՏԱՆ Ա. Գ. ՉԱՐՅԱՆ

1856—ՈՑԵ

Digitized by Google

THE NEW YORK
PUBLIC LIBRARY
592398 A
ASTOR, LENOX AND
TILDEN FOUNDATIONS
R 1932 L

Ոչսոյն զայս տպագրութիւն գացես յար և նման՝ ըստ բնագրանի՝ նոյն իսկ առաջին տպագրութեան որ ՚ի Հռոկաւ Հ՚եմարանի Տեառց Լազարեանց տպեալ ՚ի Վ՚ոսկով յամի 1834 երիւք ազգատարութեամբ քով այսքիւք ։

"՚ի Հայրապետութեան Տեառն Յովհաննու Ժ՚ամանըմեիր Կաթուղիկոսի ամենայն Հայոց և Պատեաի" ։

"Յառաջնորդութեան Ոսկիբերան Հայոց առաքելաշուիղ Տեառն Ներսես Արքեպիսկոպոսի և Պատեաի" ։

"Հրամայեցաք տպագրել , դառաքննիչ Կրօց Վ՚իքայէլ Վ՚արդապետ Վալտենեանց Կոստանդնուպօլսեցի Վ՚իաբան և Հուրիակ Արքոյ Հ՚Էջմիածնի , ՚ի 16 Վ՚արաի 1833 ՚ի Վ՚ոսկով" ։

Digitized by Google

Ց Ե Ն Կ

Ն Ո Ր Կ Տ Ա Կ Ա Ր Ա Ն Ի

Էրես

Ըստ Մատթէոսի 1
Ըստ Մարկոսի 113
Ըստ Ղուկասու 183
Ըստ Յովհաննու 304
Գործք Առաքելոց 399
Թուղթ Պօղոսի Առ Հռովմայեցիան 520
,, ,, Առ Կորնթացիան Առաջին 573
,, ,, Առ Կորնթացիան Երկրորդ 624
,, ,, Առ Գաղատացիան 659
,, ,, Առ Եփեսացիան 677
,, ,, Առ Փիլիպեցիան 697
,, ,, Առ Կողոսացիան 710
,, ,, Առ Թեսաղոնիկեցիան Առաջին 722
,, ,, Առ Թեսաղոնիկեցիան Երկրորդ 734
,, ,, Առ Տիմոթէոս Առաջին 741
,, ,, Առ Տիմոթէոս Երկրորդ 756
,, ,, Առ Տիտոս 767
,, ,, Առ Փիլիմոն 774
,, ,, Առ Եբրայեցիան 777
,, Կաթուղիկեաց Յակոբոս 815
,, ,, Պետրոսի Առաջին 829
,, ,, Պետրոսի Երկրորդ 844
,, ,, Յովհաննու Առաջին 854
,, ,, Յովհաննու Երկրորդ 868
,, ,, Յովհաննու Երրորդ 870
,, ,, Յուդայի Առաքելոյ 872
Յայտնութիւն Յովհաննու Առաքելոյ 876

GOOD 3 4E832

Digitized by Google

Digitized by Google

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Հրիստոսի ազգահամարն Աբրահամից մինչև Յովսէփն : 18 Ծնունդ Յսուսի Քրիստոսի, և Յովսէփի նշանած կոյս Մարիամից ծնանիլն : 20 Հրեշտակն Յովսէփի ունեցած մտածմունքը փարատէ, և Յովսէփ առնու Մարիամ կին :

1 Գիրք ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ Դաւթի որդւոյ Աբրահամու :

2 Աբրահամ ծնաւ զԻսահակ. Իսահակ ծնաւ զՅակովբ. Յակովբ ծնաւ զՅուդա, և զեղբարս նորա :

3 Յուդա ծնաւ զՓարէս և զԶարա ի Թամարայ. Փարէս ծնաւ զԵզրոմն. Եզրոմն ծնաւ զԱրամ :

4 Արամ ծնաւ զԱմինադաբ. Ամինադաբ ծնաւ զՆաասոնն. Նաասոնն ծնաւ զԱզմոնն :

5 Ազմոնն ծնաւ զԻովս ի Հռաքաբայ. Իովս ծնաւ զԱվբէթ ի Հռութայ. Ավբէթ ծնաւ զՅեսսէ. Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ :

1 Յիսուսի Քրիստոսի Դաւթի[1] որդւոյ Աբրահամի[2] որդւոյ ծննդեան[3] գիրքն :

2 Աբրահա՛մ[4] ծնաւ Իսահակին. Իսահակի՝ ծնաւ Յակոբին. Յակոբ՝ ծնաւ Յուդային և նորա եղբարն[5] :

3 Յուդան[7] ծնաւ Փարէսին և Զարային Թամարից. Փարէսի՝ ծնաւ Եզրոնին. Եզրոնն ծնաւ Արամին :

4 Արամ ծնաւ Ամինադաբին. Ամինադաբ ծնաւ Նաասոնին. Նաասոնն ծնաւ Սաղմոնին :

5 Սաղմո՛ն ծնաւ Հոյսին՝ Հռաքեքայից. Հոյսն ծնաւ Ովբէթին՝ Հռութից. Ովբէթն ծնաւ Յեսսէին. Յեսսէ՝ ծնաւ Դաւիթ թագաւորին :

(1) Սամ. ՚ձբ. 11 : Նաոյ. ժա. 1 : Երեմ. իդ. 5 : Սոփ. իբ. 12 : Յովէ. է. 12 : Գործ. բ. 30 : ԺԳ. 23 : Հռոմ. ա. 3 : (2) Ծննդ. ԺԲ. 3 : իբ. 18 : Գաղ. գ. 16 : (3) Լուսաւ. գ. 23 : (1) Ծննդ. իա. 2, 3 : (5) Ծննդ. ԼԸ. 26 : (6) Ծննդ. իԹ. 35 : (7) Ծննդ. ԼԶ. 27 : (8) Հռութ. գ. 18, Ռուղ. ա Թագ. բ. 5. 9, Ռուղ. (9) ա Թագ. ԺԶ. 1 : ԺԷ. 13 :

Digitized by Google

6 Պաւիթ արքայ ծնաւ զՍաղոմոնն ի կնոջէն Ուրիայ :

7 Սաղոմոն ծնաւ զՌոբովամ . Ռոբովամ ծնաւ զԱբիա . Աբիա ծնաւ զԱսափ :

8 Ասափ ծնաւ զՅովսափատ . Յովսափատ ծնաւ զՅովրամ . Յովրամ ծնաւ զՈզիա :

9 Ոզիա ծնաւ զՅոթամ . Յոթամ ծնաւ զԱքազ . Աքազ ծնաւ զԵզեկիա :

10 Եզեկիա ծնաւ զՄանասէ . Մանասէ ծնաւ զԱմոն . Ամոն ծնաւ զՅովսիա :

11 Յովսիա ծնաւ զՅեքոնիա , եւ զեղբարս նորա առ գերութեամն Բաբելացւոց :

12 Յետ գերութեանն Բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ . Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ :

13 Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ . Աբիուդ ծնաւ զԵղիակիմ . Եղիակիմ ծնաւ զԱզովր :

14 Ազովր ծնաւ զՍադովկ . Սադովկ ծնաւ զԱքին . Աքին ծնաւ զԵղիուդ :

15 Եղիուդ ծնաւ զԵղիազար . Եղիազար ծնաւ զՄատթան . Մատթան ծնաւ զՅակովբ :

16 Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարեմայ՝ որում խոստացեալ զՔրիստոս կոյս . յորմէ ծնաւ Յիսուս , որ անուանեցաւ Քրիստոս :

17 Ամք՝ ամենայն ազգք Աբրահամէ մինչեւ ի Դաւիթ ազգք չորեքտասանք . եւ ի Դաւթէ մինչեւ ի գերութիւնն Բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք . եւ ի գերութենէն Բաբելացւոց մինչեւ ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք :

18 Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս : Խոստացեալ ըզ-

6 Դաւիթ[10] թագաւորն ծնաւ Սաղոմոնին Ուրիայի կնկանիցն :

7 Սաղոմոն[11] ծնաւ Ռոբովամին . Ռոբովամն ծնաւ Աբիային . Աբիան ծնաւ Ասափին :

8 Ասափն ծնաւ Յովսափաթին . Յովսափաթն ծնաւ Յովրամին . Յովրամն ծնաւ Ոզիային :

9 Ոզիան ծնաւ Յովաթամին . Յովաթամն ծնաւ Աքազին . Աքազն ծնաւ Եզեկիային :

10 Եզեկիան[12] ծնաւ Մանասէին . Մանասէն ծնաւ Ամոնին . Ամոն ծնաւ Յոսիային :

11 Յոսիան[13] ծնաւ Յեքոնիային՝ և նորա եղբարսն իւրեանց , Բաբելացոյց[14] գերութեան ժամանակումն :

12 Բաբելացոց գերութենէն ետև՝ Յեքոնիան[15] ծնաւ Սաղաթիէլն . Սաղաթիէլն ծնաւ Զօրաբաբէլն[16] :

13 Զօրաբաբէլն ծնաւ Աբիուդին . Աբիուդն ծնաւ Եղիակիմին . Եղիակիմն ծնաւ Ազորին :

14 Ազորն ծնաւ Սադոկին . Սադոկն ծնաւ Աքինին . Աքինն ծնաւ Եղիուդին :

15 Եղիուդն ծնաւ Եղիազարին . Եղիազարն ծնաւ Մատթանին . Մատթանն ծնաւ Յակոբին :

16 Յակոբն ծնաւ Յոսէփին՝ Մարիամու մարդոյն . որ նորաւն ննջեցեալ էր Մարիամ կոյսն . որ Նորանից ծնվաւ Յիսուս՝ որ Քրիստոս կոչվեցաւ :

17 Ասպէս՝ ամէն ազգերն Աբրահամից մինչև Դաւիթն տասնուչորս պորտ (են) և Դաւթից մինչև Բաբիլացոց գերութիւնն տասնուչորս պորտ . և Բաբիլացոց գերութենից մինչև Քրիստոս՝ տասնուչորս պորտ :

18 Եւ Յիսուսի[17] Քրիստոսի ծնունդն էսպէս էր . Նորա մայր Մա-

(10) բ Մնաց . ժբ . 24 : (11) ա Մնաց . գ . 10 , և այլն : (12) գ Մնաց . ի . 21 : ա Մնաց . գ . 33 : (13) ա Մնաց . գ . 15 , 16 : (14) գ Մնաց . խգ . 14—16 : իե . 11 : բ Մնաց . լգ . 10 . 20 : Երեմ . իե . 20 : լԲ . 9 : Ծբ . 11 . 15 . 28 , 22 , 30 : Դան . ա . 2 : (15) ա Մնաց . գ . 17 . 19 : (16) Նեղ . գ . 2 : 6 . 2 : Նեհեմ . ժբ . 1 : Ընդ . ա . 1 : Հինգերորդ. ամ նախ քան գՀաստատակ թուականն Քրիստոսի : (17) Լուկ . ա . 27 :

Digitized by Google

մայր նորա Մարիամ Յովսէփոս՝ մինչչեւ եկեալ առ Միքեան՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ :

19 Եւ Յովսէփ այր նորա, քանզի արդար էր՝ եւ ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա :

20 Եւ մինչդեռ նա զայս ածէր ի մտաց, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա՝ եւ ասէ . Յովսէփ որդի Դաւթի՝ մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո . քանզի որ ի նմանէ ծնեալ է՝ ի Հոգւոյն Սրբոյ է :

21 Ընծայեսցէ որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս . զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց :

22 Ամենայն եղեւ, զի լցցի որ ասացաւն ի Տեառնէ ի ձեռն Եսայեայ մարգարէի :

23 Ահա կոյսն յղացեալ եւ ծնցի որդի . եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ . որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած :

24 Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա հրեշտակն Տեառն, եւ առ զին քո զինեն իւր :

25 Եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ . եւ կոչեցաւ զանուն նորա Յիսուս :

1 Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Յրէաստանի յաւուրս

թիսմն նշանած էր Յովսէփին, եւ դեռ որ իրար մօտ չէին եկած՝ ինքն Աստուծոյ հղացած գտաւ[18] :

19 Եւ նորա մարդ Յովսէփն՝ որովհետեւ արդար (մարդ) էր . եւ չէր ուզում որ նորան խայտառակ[19] անէ, միտք արաւ որ ձայն չը հանած՝ քաց թողէ նորան :

20 Եւ դեռ որ նա էս մտածմունքի մէջն էր՝ ահա Տէրի հրեշտակն երեւզում երեւեց . նորան և ասաց . Դաւթի որդի Յովսէփ՝ մի՛ վախենար՝ քո Մարիամ կինն քեզ մօտ առնել . պատճառն[20] նորանում ծընւածն՝ Աստուծ է :

21 Եւ[21] Որդի կը ծնի և նորա անունն Յիսուս կը դնես . նրա համար որ նա[22] իւր ժողովուրդն կազատէ իրանց մեղքերից :

22 Այդ էս ամէն բաներս էսպէս էլաւ՝ որ կատարվի Տէրից ասած բանն՝ Եսայի մարգարէի ձեռովն (թէ) :

23 Ահա[23] կոյս կը յղանայ և որդի կը ծնի . և նորա անունն Էմմանուէլ կը կանչեն . որ նշանակում՝ Աստուած մեզ հետ :

24 Եւ Յովսէփ որ քնից զարթնացաւ՝ էնպէս արաւ ինչպէս որ Տէրի հրեշտակն հրամայեց իրան . և առաւ իրան կինն իրան մօտ :

25 Եւ չէր գիտում նորան, մինչեւ որ նա իրան առաջինեկ[24] որդին ծնաւ . և նորա անունն կոչեց Յիսուս :

ԿԻ. Ր

1 Մոգեր արեւելքից՝ աստղի առաջնորդութիւնովն Բեթլեհեմ կը գան : 11 Աղօթանք Քրիստոսի աստղի երկրպագութիւնն կանեն, և իրանց ընծայներն կը տան նորան : 14 Յովսէփ վեր կառնէ Յիսուսին և նորան մօրն և Եգիպտոս կը փախչէ : 16 Հերովդէսի երեխաներ կոտորելը : 20 Իրան մահն : 23 Քրիստոսի Եգիպտոսից գառնալն և Նազարէթի նազարեցի բնակվելը :

1 Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Յրէաստանի (Քահոպտոպան) երկրի

(18) Աղաւ . ա . 35 : (19) բ Օրին . իդ . 1 : (20) Աղաւ . ա . 35 : (21) Աղաւ . ա . 31 : Եբրայեցի՝ փրկիչ, նշան : (22) Կոպ . գ . 12 : ե . 31 : ժգ . 33 . 38 : (23) Նսայ . է . 14 : (24) Ելից . ժգ . 3 : Աղաւ . բ . 7 . 21 : Ծորդուդ ամ նախ քան զհասարակ թուականն Քրիստոսի : (1) Աղաւ . բ . ե . 6 , 7 :

Digitized by Google

Երուզեղի ապքայի, ահա մոգք յա-
րևելից եկին Երուսաղէմ ։

2 Եւ ասեն. Ո՞ւր է որ ծնաւ ար-
քայն Հրէից. զի տեսաք զաստղն նո-
րա յարևելս, և եկաք երկիրպագա-
նել նմա ։

3 Եւ իբրև լուաւ ապքայ Երուզ-
դէս՝ խռովեցաւ, և ամենայն Երու-
սաղէմ ընդ նմա ։

4 Եւ ժողովեալ զամենայն զքա-
հանայապետան և զգիպիս ժողովրդ-
եանն, հարցանէր ի նոցանէ՝ թէ Ո՞ւր
ծնանիցի Քրիստոս ։

5 Եւ նոքա ասեն ցնա. Ի Բեթ-
ղէհէմ Հրէաստանի. զի այսպէս
գրեալ է ի ձեռն մագարէին ։

6 Եւ դու Բեթղէհէմ երկիր
Յուդայ՝ ոչընչ կրասեր ես յիշխանս
Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան, ո-
րովհետեւ զժողովուրդ իմ զԻսրայէլ ։

7 Յայնժամ Երուզդէս գաղտ կոչ-
եաց զմոգսն, և ստուգեաց ի նո-
ցանէ զժամանակ աստեղն երևելոյ ։

8 Եւ առաքեալ զնոսա ի Բեթ-
ղէհէմ, ասէ. Գնացէք ստուգեցէք
վասն մանկանն, և յորժամ գտանի-
ցէք՝ ազդ արասջիք ինձ. զի և ես եկ-
եալ երկիրպագից նմա ։

9 Եւ նոքա իբրև լուան ի թագա-
ւորէն՝ գնացին. և ահա աստղն զոր
տեսին յարևելս՝ առաջնորդեաց նո-
ցա, մինչև եկեալ եկաց ի վերայ
ուր էր մանուկն ։

10 Իբրև տեսին զաստղն, խնդացին
յոյժ ուրախութիւն մեծ ։

11 Եւ իբրև մտին ի տուն, տեսին
զմանուկն Յանդերձ Մարեամ մօր
Բեթղէհէմայ, Երօդէս թագա-
ւորի օրերուն, ահա մոգեր արևել-
քից[2] եկին Երուսաղէմ ։

2 Եւ ասացին. Ո՞րտեղ[3] է որ
ծնվաւ Հրէաների (Ջհուդանէրէ) թա-
գաւորն. որ մենք նորա[4] աստղն տես-
ինք արևելքումն, և եկինք որ եր-
կրպագութիւն տանք նորան ։

3 Եւ երբոր Երօդէս թագաւորն
էս լսեց՝ շփոթվեցաւ, և ամեն Երու-
սաղէմն էլ նորա հետ ։

4 Եւ ամեն քահանայապետներն[5]
և ժողովրդի[6] կարգացողներն ժողո-
վեց և նորանցից հարցուց՝ թէ Ո՞ր-
տեղ Քրիստոն ո՞րտեղ պիտի ծնվի ։

5 Եւ նորանք ասացին նորան. Թէ Հրէաստանի (Ջհուդսթանէ) Բեթղէհէմումն. ինչուր՝ էսպէս գրված է մարգարէի ձեռովն (թէ). ։

6 Դու[7] էլ Բեթղէհէմ. Յուդայի երկիր՝ իսկի վոքր չես Յուդայի իշխանների մէջն. քեզանից ինձ իշ-
խան պիտի դուս գայ, որ[8] իմ Իսրա-
յել ժողովուրդս կառավարե ։

7 Էն ժամանակն Հրօդէսն թա-
գուն մոգերին իլան մօտ կանչեց, և նորանցից էն երևևցած աստղի ժա-
մանակին հաստատ տեղեկացաւ ։

8 Եւ նորանց դէպի Բեթղէհէմն ուղարկեց և ասաց. Գնացեք շիտակ իմացէք՝ էն երեխայի համար, և եր-
բոր կը գտնէք, ինձ էլ իմաց արէք. որ ես էլ գամ նորան երկրպագու-
թիւն անեմ ։

9 Եւ նորանք երբոր (էս) լսեցին թագաւորից՝ գնացին. և ահա էն աստղն որ արևելքումն տեսել էին, ճանապարհն ցոյց տուաւ նորանց՝ մինչև որ եկաւ կանգնեց էն տեղին վերայ, որ տեղ որ երեխան էր ։

10 Երբոր էն աստղն տեսին, շատ մեծ ուրախութեամբ ուրախացան ։

11 Եւ երբոր տունն մտին, տեսին երեխային իլան մայր Մարիամու

(2) Ցննդ. ժ. 30։ Ելք. ի. 9։ գ Նահ. գ. 30։ (3) Ղուկ. բ. 11։ (4) Գործ. իգ. 17։ Եսայ. կ. 3։ (5) բ Մնաց. լբ. 14։ (6) բ Մնաց. լգ. 13։ (7) Մատ. բ. 7։ (8) Մի՛ և 4. 3։ Հովհ. է. 52։ (9) Հայտ. բ. 27։

Digitized by Google

բըն իւրով, և անկեալ երկիրպագանէին նմա. և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս՝ ոսկի և կնդրուկ և զմուռս:

12 Եւ հրաման առեալ՝ ի տեսլեան չգառնալ անդրէն առ Հերովդէս ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց:

13 Եւ իբրև գնացին նոքա անտի, ահա հրեշտակ Տեառն երևեր ի տեսլեան Յովսէփու, և ասէր. Ա՛րի առ զմանուկդ և զմայր իւր՝ և փախիր յԵգիպտոս, և անդ լինիջիր ցոյժամ ասացից քեզ, քանզի ի խնդիր է Հերովդէս կորուսանել զմանուկդ:

14 Եւ նա յարուցեալ առ զմանուկն և զմայր իւր գիշերի՝ և գնաց յԵգիպտոս, և անդ էր մինչև ցվախճան Հերովդի:

15 Որ լցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին, որ ասէ. ՅԵգիպտոսէ կոչեցից զորդի իմ:

16 Յայնժամ իբրև տեսս Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի, բարկացաւ յոյժ. և առաքեաց կոտորեաց զամենայն մանկունսն որ էին ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա՝ յերկեմնից և ի խոնարհ, ըստ ժամանակին զոր ատեաց եաց ի մոգուց:

17 Յայնժամ կատարեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայ մարգարէի՝ որ ասէ:

18 Ձայն գուժեաց ի Հռամայ, ողբութիւն և լալումն և աշխարհութիւն յոյժ. Հռաքէլ լայր զորդիս իւր, և ոչ կամէր մխիթարիլ զի ոչ էին:

19 Եւ ի վախճանելն Հերովդի, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեր Յովսէփայ յԵգիպտոս:

20 Եւ ասէր. Ա՛րի առ զմանուկդ և զմայր իւր, և գնա յերկիրն Իսրայէլ, և երեանեաց վերայ ընկնելով երկրպագութիւն արին նորան. և իւրանց գանձերն (խոյնանէին) բաց արին՝ և ընծայ[10] տուին նորան. ոսկի և կնդրուկ և զմուռս:

12 Եւ երազումն[11] հրամայեաց առաքին՝ որ մինէլ յամ չը գառնան Հերովդէսի մօտ, (եւ) ուրիշ ճանապարհով գընացին իրանց աշխարհն:

13 Եւ երբոր նոքա էն տեղից գնացին. ահա Տէրի հրեշտակն երազումն երևեցաւ Յոսէփին՝ և ասաց. Ա՛ռ կաց վեր կալ եւ փախիր և իրան մօրն և փախիր Եգիպտոս և էն տեղ մնա՝ մինչև որ ասեմ քեզ, պատճառն որ՝ Հերովդէսն ուզումէ էդ երեխայիդ կորցնել:

14 Եւ նա վերկացաւ վեր առաւ երեխային և իրան մօրն գիշերումն և գնաց Եգիպտոս. և էն տեղ էր մինչև Հերովդէսի մեռնիլն:

15 Որ կատարվի Տէրից ասվածն (էն) մարգարէի ձեռովն՝ որ ասումէ. Եգիպտոսից[12] կը կանչեմ իմ որդին:

16 Իրն ժամանակն երբոր Հերովդէս տեսաւ՝ թէ էն մոգերից խաբվեցաւ, շատ բարկացաւ. և ուղարկեց ամէն երեխայքն որ Բեթղեհէմումն և նորա չորս կողմումն էին՝ երկու տարեկաններից (սկսած) և նորանցից ցածերն կոտորեց, էն ժամանակին նայելով որ մոգերից իմացաւ:

17 Իրն ժամանակն կատարվեցաւ Երեմիա մարգարէի ձեռովն ասվածն՝ որ ասումէ:

18 Իրլոց ձայն[13] լսվեցաւ Հռամայի մէջն. սուգ և լաց և շատ վայ տալով գոռալ. Հռաքէլ իրան որդոց վերայ լաց էր լինում՝ և չէր կամենում որ մըխիթարվի. ինչուր նորանք չը կային:

19 Եւ երբոր Հերովդէս մեռաւ, ահա Տէրի հրեշտակն Եգիպտոսի մէջ երազումն երևեցաւ Յոսէփին:

20 Եւ ասաց. Ա՛ռ կաց վեր կալ երեխայիդ և իրան մօրն և գնա Իս-

(10) Ասէ՝ հբ. 10: Նայ. 4. 6: (11) Մտթ. ա. 20: (12) Ովս. ժա. 1: (13) Երեմ. լա. 15:

Digitized by Google

րայելի • զի մեռանի որ խնդրէին զան-
ձըն մանկանդ ։

21 Եւ նա յարուցեալ առ զմանու-
կըն և զմայր նորա , և եկն յերկիրն
Իսրայելի ։
22 Եւ իբրև լուաւ եթէ Արքելա-
յոս թագաւորեաց Հրէաստանի փո-
խանակ Հերովդի հօրն իւրոյ , երկ-
եաւ երթալ անդր • և հրաման առ-
եալ ՚ի տեսլեան , գնաց ՚ի կողմանս
Գալիլեացւոց ։

23 Եւ եկեալ բնակեցաւ ՚ի քա-
ղաքին՝ որ կոչէր Նազարէթ • զի լցի
բանն մարգարէիցն , թէ Նա-
զովրեցի կոչեսցի ։

րայելացոց երկիրն • պատճառանօր՝ մե-
ռան նորանք՝ որ երեխայիդ կեանքն
ուզուելին առնել ։
21 Եւ նա վերկացաւ , երեխային
և իւրան մօրն վեր առաւ և եկաւ Իս-
րայելացոց երկիրն ։
22 Եւ լուրջ լսեց՝ թէ Արքեղայոս
Հրէաստանին (Ջհուդասդանին) վե-
րայ թագաւորութիւն է անում ի-
րան հայր Հերովդէսի տեղն , վախե-
ցաւ գնալ էն տեղ • և երազումն
հրաման առնելով գնաց[14] Գալիլեա-
յի կողմերն ։
23 Եւ եկաւ բնակվեցաւ էն քա-
ղաքումն որ Նազարէթ[15] էր ասվա-մ.
որ կատարվի մարգարէներուն խօսքն[16]՝
թէ Նազօրեցի կը կոչվի ։

ԿԻ • Ի

1 Յովհաննէսի քարոզելն . իրան պաշտօնն . ապրիլն և միրուելն ։ 7 փարիսեցիներին կը յանդիմանէ • 13 Քրիստոսն Յորդանանոյ վրայէն կը միրուի ։

1 Յաւուրսն յայնոսիկ գայ Յով-
հաննէս մկրտիչ քարոզել յանա-
պատին Հրէաստանի ։

2 Եւ ասել • Ապաշխարեցէք՝ զի
մերձեալ է արքայութիւնն երկնից ։
3 Զի սա է՝ վասն որոյ ասացաւ
՚ի ձեռն Եսայեայ մարգարէի , որ ա-
սէ • Ձայն բարբառոյ Յանապատի ,
պատրաստ արարէք զճանապարհ
Տեառն , և ուղիղ արարէք զշաւիղս
նորա ։

4 Եւ ինքն Յովհաննէս ունէր
հանդերձ ՚ի սաւոյ ուղտու , և գօտի
մաշկեղէն ընդ մէջ իւր • և կերա-
կուր նորա էր մարախ և մեղր վայ-
րենի ։

1 Ի՛ն օրերումն Յօհաննէս[1] մը-
կըրտիչն եկաւ , որ Հրէաստանի ա-
նապատումն[2] (Ջհուդասդանի չօ-
լըմ) քարոզ տայ ։
2 Եւ ասումէր • Ապաշխարեցէք՝
որ երկնքի[3] թագաւորութիւնն մօ-
տացել է ։
3 Ինչուոր սա է՝ որ նորա Համար
ասվելէ Եսայի մարգարէի ձեռովն ,
որ ասումէ • Ականջովի[4] ձայն անա-
պատումն՝ թէ պատրաստ[5] արէք Տէ-
րի ճանապարհն , և չիտակ արէք նո-
րա գնալոյ ճանապարհն ։
4 Եւ Յօհաննէս[6] ինքն Հագուստ
ունէր ուղտու[7] բրդիցն և կաշվէ գօ-
տիկ իրան մէջքումն , և նորա կերա-
կուրն մարախ[8] էր և վայրի[9] մեղր ։

(14) Մատթ • գ • 13 ։ Ղուկ • բ • 39 ։ (15) Յովհ • ա • 45 ։ (16) Դասք • ժգ • 5 ։ ա Յովհ • ա • 11 ։ (1) Մատթ • ա • 4 • 15 ։ Ղուկ • գ • 2 , 3 ։ Յովհ • ա • 28 ։ (2) Յես • ժգ • 10 ։ (3) Դան • բ • 44 ։ Մատթ • դ • 17 ։ ժ • 7 ։ (4) Ղասդ • խ • 3 ։ Մարկ • ա • 3 ։ Ղուկ • գ • 4 ։ Յովհ • ա • 23 ։ (5) Ղուկ • ա • 76 ։ (6) Մատթ • ա • 6 ։ (7) գ Թագ • ա • 8 ։ Զաք • ժգ • 4 ։ (8) Ղեւտ • ժա • 22 ։ (9) ա Թագ • ժգ • 25 , 26 ։

Digitized by Google

5 Այնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք՝ և ամենայն Հրէաստան՝ և ամենայն կողմն Յորդանանայ։

6 Եւ մկրտեին ի նմանէ ի Յորդանան, և խոստովան լինէին զմեզս իւրեանց։

7 Եւ տեսեալ զբազումս ի սադուկեցւոցն և ի փարիսեցւոց եկեալս ի մկրտութիւն նորա, ասէ ցնոսա. Ընծայեցաք իմիջ՝ ո՞ եցոյց ձեզ փախչել ի բարկութենէն, որ գալոցն է։

8 Արարէք այսուհետև պտուղ արժանի ապաշխարութեան։

9 Եւ մի՛ համարիցիք ասել յանձինս՝ թէ Հայր ունիմք մեք Յարբրահամ. ասեմ ձեզ, Օի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս Յարբրահամայ։

10 Օի ահաւասիկ ասպար առ արմատն ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ առնիցէ զպտուղ բարի, հատանի և ի հուր արկանի։

11 Ես մկրտեմ զձեզ ջրով ի ապաշխարութիւն. բայց որ զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, և ես չեմ բաւական բառնալ զկօշիկս նորա. նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ և ի հուր։

12 Որոյ հեծանոցն ի ձեռին իւրում. և սրբեսցէ զկալ իւր, և ժողովեսցէ զցորեանն ի շտեմարանս իւր, և զչարդն այրեսցէ անշէջ հրով։

13 Այնժամ գայ Յիսուս ի Գալիլեացէ ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ։

14 Եւ Յովհաննէս արգելու զնա

5 Եւ ելանէին առ նա Երուսաղէմացիք և ամէն Հրէաստան (Ըստ Յոսեփոսի) և Յորդանանի ամէն կողմերն նորա մեծ էին դուրս գնում։

6 Եւ նորանից մկրտվում էին Յորդանանի մէջն և իրանց մեղքերի խոստովանում էին։

7 Եւ (Ինքն) որ տեսաւ թէ սադուկեցիներից և փարիսեցիներից շատերն եկել էին որ իրանից մկրտուին, ասաց նորանց Ժ (ձէ) զաւակներ՝ ձեզ ո՞վ սովորեցրեց փախչել են բարկութենից, որ գալու է։

8 Ի՛սկ հետև ապաշխարութեան արժանի պտուղ արէք։

9 Եւ չկարծէք ասել ձեր մէջում՝ թէ Ի՛նք Ի՛բրահամ ունինք Հայր. ասում եմ ձեզ, թէ Ի՛ստուած կարող է էս քարերից որդիք դուրս հանել Ի՛բրահամ համար։

10 Ինչու որ՝ հիմիկ կացինն ծառերի արմատին (Բնութեան) մօտ դրած է. ամէն ծառ որ բարի պտուղ չի բերում՝ կը կտրվի և կրակի մէջն կը քրցվի։

11 Ես ջրով եմ մկրտում ձեզ՝ ապաշխարութեան համար. բայց նա՝ որ ինձանից հետև կը գայ, ինձանից զօրաւոր է. և ես արժանի չեմ նորա կօշիկներն վեր առնել. նա ձեզ Սուրբ Հոգով և կրակով կը մկրտէ։

12 Որ հոսելին իրան ձեռին է, և իրան կալն կը սրբէ և ցորենն կը հաւաքէ իրան ամբարն, դարմանն անանցելի կրակով կայրէ։

13 Յն ժամանակն Յիսուս Գալիլեայիցն եկաւ Յորդանան Յովհաննէսի մօտն՝ որ նորանից մկրտվի։

14 Եւ Յովհաննէս արգելից նո-

(10) Մատթ. ա. 5։ Ղուկ. գ. 7։ (11) Գործ. ժբ. 4. 18։ (12) Մատթ. ժբ. 30։ Ղուկ. գ. 33. 38։ Ղուկ. գ. 7, 8, 9։ (13) Հռոմ. ե. 9։ ա Թես. ա. 10։ (14) Յովհ. բ. 33. 39։ Գործ. ժբ. 26։ Հռոմ. գ. 1. 12. 16։ (15) Մատթ. է. 19։ Ղուկ. ժբ. 7. 9։ Յովհ. ժե. 6։ (16) Մատթ. ա. 8։ Ղուկ. գ. 16։ Յովհ. ա. 15. 26. 33։ Գործ. ա. 5։ ժա. 16։ ժբ. 4։ (17) Ես. գ. 4։ Ղուկ. 3։ Մատ. գ. 2։ Գործ. բ. 3, 4։ Հայտն. ժբ. 15։ (18) Ի՛սկ. գ. 3։ (19) Մատ. գ. 1։ Մատթ. ժգ. 30։ (20) Մատթ. ա. 9։ Ղուկ. գ. 21։ (21) Մատթ. բ. 22։

Digitized by Google

և ասէ · Ինձ պիտոյ է ՚ի քէն մկրտել՝ և դու առ իս գաս :

15 Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ ցնա · Ներոյլ տուր այժմ՝ զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն · և ապա թոյլ եւ նմա :

16 Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս , ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի · և ահա բացան նմա երկինք · և ետես զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի , և գայր ՚ի վերայ նորա :

17 Եւ ահա ձայն յերկնից՝ ոյ ասէր · Ահա է որդի իմ սիրելի , ընդ որ հաճեցայ :

լան և ասաց · Ինձ պէտք է որ քեզնից մկրտվիմ՝ և դուն ինձ մօտ ես գալիս :

15 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորան · Ներոյլ տուր հիմիկ , ինչուր՝ էսպէս կը վայելէ մեզ՝ որ ամէն արդարութիւնն կատարենք · և յետոյ թոյլ տուաւ նորան :

16 Եւ երբոր մկրտվեցաւ[22] Յիսուս , շուտով ջրից դուրս եկաւ · և ահա (հրէից) երկինքն բացվաւ նորա համար · և Աստուծոյ Հոգին[23] տեսաւ որ վեր էր գալիս աղաւնու պէս և գալիս էր նորա վերայ :

17 Եւ ահա երկնքիցն ձայն[24] եկաւ՝ որ ասումէր · Ահա է իմ սիրելի Որդին[25] որ դորան հաւան կացայ :

ԿԻ · Ի

1 Հրթռաւոյ ծոմ պահէլն , և փորձիլն : 11 Հրեշտակ ներն նորան պատաւորութիւն են առնում : 13 Կերթայ կափառնայում՝ կը քնակվի : 17 Քարոզելոյ կը սկսի : 18 Պետրոս և Ընդրեաս , 21 Յակօբոս և Յովհաննէան կը կանչէ : 23 Ու ամէն հիւանդներն կը բժշկի :

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատս ՚ի Հոգւոյն՝ փորձիլ ՚ի Սատանայէ :

2 Եւ պահեալ զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ :

3 Եւ մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա · Եթէ Որդի ես Աստուծոյ՝ ասա զի քարինք այսոքիկ հաց լինիցին :

4 Եւ նա պատասխանի եւ ասէ · Գրեալ է՝ թէ Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ , այլ ամենայն բանիւ , որ ելանէ ՚ի բերանոյ Աստուծոյ :

5 Յայնժամ առեալ սածէ զնա Սատանայ ՚ի քաղաքն սուրբ , և կացուցանէ զնա ՚ի վերայ աշտարակի տաճարին :

1 Յն ժամանակն Յիսուս[1] Հոգեվընն[2] տարվաւ անապատն՝ (չէօլն) որ Սատանայիցն փորձվի :

2 Եւ քառասուն ցերեկ և քառասուն գիշեր ծոմ պահելուցն ետև՝ սովեց :

3 Եւ փորձիչն եկաւ , նորան ասաց · Եթէ որ դու Աստուծոյ Որդին ես , ասա՝ որ էս քարերս հաց լինին :

4 Նա պատասխան տուաւ և ասաց · Գրուած է՝ որ Մէնակ հացով կապրի մարդ , այլ ամէն խօսքովն՝ որ Աստուծոյ բերանիցն դուրս է գալիս[3] :

5 Յն ժամանակն Սատանան նորան առաւ տարաւ սուրբ քաղաքն[4] , և տաճարի աշտարակին (քիւբէնի) վերայ կանգնացրուց :

(32) Մտթ · ա · 10 : (23) Նոյ · ժա · 2 : Ղուկ · գ · 22 : Յովհ · ա · 32, 33 : (24) Յովհ · ժբ · 28 : (25) Մտթ · բ · 7 : Նոյ · խբ · 1 : Մտթ · ժբ · 18 : ժէ · 5 : Մրկ · ա · 11 : Ղուկ · թ · 35 : Նփէս · ա · 6 : Կող · ա · 13 : բ Պետ · ա · 17 : (1) Մրկ · ա · 12 , Հայլ : Ղուկ · գ · 1 , Հայլ : (2) գ Թագ · ժբ · 12 : Նեհ · գ · 14 : ը · 3 : ժա · 1 · 24 : ի · 3 : խգ · 5 : Կոր · ը · 39 : (3) բ Օրին · ը · 3 : (4) Գեհ · ժա · 1 · 13 : Նոյ · խը · 2 : ծբ · 1 : Մտթ · իե · 53 : Յայտ · ժա · 2 :

Digitized by Google

6 Եւ ասէ ցնա . Եթէ Որդի ես Աստուծոյ՝ արկ զքեզ աստի՛ վայր . զի գրեալ է թէ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո , և ի վերայ ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի երբէք հարցես զքարի զոտն քո :

7 Ասէ ցնա դարձեալ Յիսուս . Գրեալ է՝ թէ Ո՛չ փորձեսցես զՏէր Աստուած քո :

8 Դարձեալ առնու ածէ զնա Սատանայ՝ի լեառն մի բարձր յոյժ , և ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի , և զփառս նոցա :

9 Եւ ասէ ցնա . Զայս ամենայն քեզ տաց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ :

10 Յայնժամ ասէ ցնա Յիսուս . Երթ յետս իմ Սատանայ . չի գրեալ է Տեառն Աստուծոյ քում երկիրպագցես , և զնա միայն պաշտեսցես :

11 Ապա եթող զնա Սատանայ . և ահա հրեշտակք մատեան և պաշտէին զնա :

12 Եւ իբրև լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս մատնեցաւ , մեկնեցաւ գնաց՝ի Գալիլեա :

13 Եւ թողեալ զՆազարէթ , եկն բնակեցաւ՝ի Կափառնաւում՝ի ծովեզերին , ի սահմանս Զաբուղոնի և Նեփթաղիմայ :

14 Զի լցի բանն՝ որ ասացաւ՝ի ձեռն Եսայեայ մարգարէի :

15 Երկիր Զաբուղոնի և երկիր Նեփթաղիմայ՝ ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու , Գալիլեա Հեթանոսաց :

16 Ժողովուրդ որ նստէր՝ի խաւարի՝ եաես լոյս մեծ . և որոց նստէր

6 Եւ նորան ասաց . Թէ որ Աստուծոյ Որդին ես՝ էս տեղից քեզ վէր քցիր . ինչուր գրված է՝ թէ Իրան հրեշտակներին հրամայելէ քեզ համար[5] և ձեռներին վերայ կառնեն քեզ՝ որ իսկի մին ժամանակ քո ոտըդ քարի չի դիպցնես :

7 Ա՛յնէլ Յիսուս նորան ասաց . Գրուած է՝ թէ Ա՛ր փորձեր քո Տէր Աստուածդ[6] :

8 Սատանան միևէլ առաւ նորան (և) տարաւ մին շատ բարձր սարի վերայ՝ և ցոյց տուաւ նորան աշխարհքի ամէն թագաւորութիւննեբրըն և նորանց փառքըն :

9 Եւ նորան ասաց . Էս ամէնըս քեզ կը տամ՝ թէ որ երեսիդ վերայ ընկնելով ինձ երկրպագութիւն անես :

10 Էն ժամանակին Յիսուս նորան ասաց . Գնէն գնա ինձանից Սատանայ . ինչուր գրված է՝ թէ Քո Տէր Աստուածդ պէտք է երկրպագութիւն անես և մէնակ նորան պաշտես[7] :

11 Յետոյ Սատանան թողեց նորան . և ահա հրեշտակներն մօտ եկին և ծառայութիւն էին անում նորան[8] :

12 Եւ երբոր Յիսուս լսեց՝ թէ Յոհաննէան մատնվեցաւ[9] , ինքն հեռացաւ գնաց՝ Գալիլեա :

13 Եւ Նազարէթըն թողեց . եկաւ բնակվեցաւ Կափառնայումի մէջն ծովի եզրին (ըզօղին) մօտ . Զաբուղոնի և Նեփթաղիմի երկրումն :

14 Որ կատարվի էն խօսքն՝ որ Եսայի մարգարէի ձեռովն ասված է՝ (թէ)

15 Զաբուղոնի երկիրն և Նեփթաղիմի երկիրն՝ ծովու ճանապարհն՝ Յորդանանի էն կողմն , Գալիլեան Հեթանոսաց[10] :

16 Ժողովուրդն որ խաւարի մէջն նստած էր , մեծ լոյս տեսաւ . և լոյս

(5) Սաղ . ղա . 11 , 12 : (6) Բ Օրին . գ . 16 : (7) Բ Օրին . գ . 13 : ժ . 20 : Յես . խդ . 14 : ա Թագ . Ը . 3 : (8) Նբէ . ա . 13 : (9) Մատթ . ա . 14 : Ղուկ . գ . 20 : գ . 14 . 31 : Ցովհ . գ . 23 : (10) Նոյ . Բ . 1 , 2 :

Digitized by Google

ին յաշխարհին և ի սաուերս մահու, լոյս ծագեաց նոցա :

17 Այնմ՝ հետէ սկսաւ քարոզել Յիսուս՝ և ասել. Ապաշխարեցէք զի մերձեալ է արքայութիւն երկնից :

18 Ա՝ինչգեռ գնայր Յիսուս ընդ եզը ծովուն Գալիլեացւոց, եահս երկուս եղբարս՝ զՍիմոն զկոչեցեալն Պետրոս, և զԱնդրէաս եղբայր նորա՝ արկեալ ուռկան ի ծով. քանզի ձկնորսք էին :

19 Եւ ասէ ցնոսա. Եկայք զկնի իմ, և արարից զձեզ որսորդս մարդկան :

20 Եւ նոցա թողեալ վաղվաղակի զգործիսն՝ գնացին զկնի նորա :

21 Եւ մատուցեալ անտի յառաջ՝ եահս այլ երկուս եղբարս, զՅակոբոս Օ՝եբեդեայ և զՅովհաննէս զեղբայր նորա ի նաւի՝ Օ՝եբեդեաւ հանդերձ հարբն իւրեանց, մինչ կազմէին զուռկանս իւրեանց, և կոչեաց զնոսա :

22 Եւ նոցա թողեալ վաղվաղակի զնաւն և զհայրն իւրեանց, գնացին զկնի նորա :

23 Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս և զամենայն ախտս ի ժողովրդեանն :

24 Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն Սորւոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարսն և զլուսնոտս և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա :

Ծագեց նորանց որ մահի երկրում և շուաքում նստած էին[11] :

17 Նրանից ետև Յիսուս սկսեց քարոզել[12] և ասել. Ապաշխարեցէք[13] որ երկնքի թագաւորութիւնն մօտացել է :

18 Երբոր Յիսուս Գալիլեացոց ծովի եզերումն (ջրափին) մանէր գալիս[14] տեսաւ երկու եղբարք Սիմոնին՝ որ Պետրոս[15] էր կոչված, և Նորա Անդրէաս եղբօրըն. որ ուռկանըն (ընտը) քցել էին ծովն. ինչուր՝ ձուկըն բռնող էին :

19 Եւ նորանց ասաց. Նո՛մ եասէք եկէք, և ձեզ մարդկանց հորսորգ կանեմ[16] :

20 Նորանք էլ շուտով իրանց գործիքներըն թողին՝ և Նորա եասէն գնացին[17] :

21 Եւ էնտեղից որ առաջ գնաց՝ երկու ուրիշ եղբարք տեսաւ[18], Յակօբոս Օ՝եբեդեանըն՝ և Նորա Յոհաննէս եղբօրըն՝ որ նաւի մէջն իրանց հայր Օ՝եբեդէոսի հետ իրանց ուռկաններըն (ընտէրքն) շինում էին, և Նորանց կանչեց :

22 Նորանք էլ շուտով նաւըն և իրանց հօրըն թողին. և Նորա եասէն գնացին :

23 Եւ Յիսուս մանէր գալիս Գալիլեայի ամէն կողմերումն. Նորանց ծողովարանների մէջն սովորցնում[19] և արքայութեան աւետարանն[20] քարոզում, և ամէն ժողովրդի մէջ ելած հիւանդութիւն, ներըն և ցաւերըն բժշկում[21] :

24 Եւ Նորա համբաւն դուրս եկաւ Սորոց ամէն երկրումն. և ամէն հիւանդներն որ կերպ կերպ ցաւերով և չարչարանքներով տանջված էին, Նորա մօտ բերին. և դիւահարներն և լուսնոտներըն և անդամալոյծներըն. և Նորանց բժշկեց :

(11) Նոտ. խր. 7 : Գլուխ. բ. 32 : (12) Մարկ. ա. 14, 15 : (13) Մարկ. գ. 2 : ժ. 7 : (14) Մարկ. ա. 16, 17, 18 : Գլուխ. ե. 2 : (15) Յովհ. ա. 42 : (16) Գլուխ. ե. 10, 11 : (17) Մարկ. ժ. 28 : Գլուխ. ժը. 28 : (18) Մարկ. ա. 19, 20 : Գլուխ. ե. 10 : (19) Մարկ. բ. 35 : Մարկ. ա. 21, 39 : Գլուխ. գ. 15, 44 : (20) Մարկ. ժբ. 14 : Մարկ. ա. 14 : (21) Մարկ. ա. 34 :

Digitized by Google

25 Եւ երթային զՀետ նորա ժո-
ղովուրդք բազումք՝ ի Գալիլեէ և ի
Դեկապօլեայ և Յերուսաղեմէ և ի
Հրէաստանէ, և յայնկոյս Յորդա-
նանու, և բժշկեաց զնոսա:

25 Եւ նորա եւևէն շատ ժողո-
վուրդներ[22] էին գնում Գալիլեայիցն
և Դեկապօլիսից՝ և Երուսաղէմիցն
և Հրէաստանիցն (Ջհուդասդանիցն),
և Յորդանանի էն կողմիցն և նո-
րանց բժշկեց:

ԺԱ · Ե

1 Ռջխատա տարին վերայ երան քարոզն կը սկսէ: 3 Յոյց կը տայ թէ որո՞նք են երանելի լինելոնքն: 13 Նրկրի աղն: 14 Աշխարհի լոյսն, տարին վերայ եւսե քաղաքն: 15 Ճրագն: 17 Հին նա եկաւ որ օրէնքն կատարէ: 21 Մարդասպանութիւնն, 27 Եւ շնութիւն անձն քանի տեսակ է: 33 Խոխ երդում չուտել: 38 Խօսա կը տայ անիրաւութեան դէմ հատնելութիւն տանել: 44 Թշնամիներն էլ սիրել: 48 Եւ կատարեալ լինելոյ ուխտակիչ:

1 Եւ տեսեալ զժողովուրդն՝ ել
ի լեառն. և իբրև նստաւ անդ մօտ-
եան առ նա աշակերտքն նորա:

2 Եւ բացեալ զբերան իւր ուսու-
ցանէր զնոսա, և ասէր:
3 Երանի աղքատացդ հոգւով, զի
նոցա է արքայութիւն երկնից:

4 Երանի սգաւորացդ, զի նոքա
մխիթարեսցին:
5 Երանի հեզոյ, զի նոքա ժա-
ռանգեսցեն զերկիր:
6 Երանի որ քաղցեալ և ծարա-
ւի իցեն արդարութեան, զի նոքա
յագեսցին:
7 Երանի ողորմածացդ, զի նոքա
ողորմութիւն գտցեն:
8 Երանի սրտացիկ՝ որ սուրբ են
սրտիւք, զի նոքա զԱստուած տես-
ցեն:
9 Երանի խաղաղարարացդ, զի
նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին:

10 Երանի որ հալածեալ իցեն վա-

1 Եւ երբոր ժողովուրդներին տե-
սաւ վեր ելաւ սարն[1]. և երբոր էն-
տեղ նստեց, նորա աշակերտներն
եկին նորա մօտ:
2 Եւ իրան բերանն բացաւ, և
նորանց սովորցնում էր՝ և ասում:
3 Երանի հոգով աղքատներին[2]
որ նորանց է երկնքի արքայութիւ-
նըն:
4 Երանի սգաւորներին[3] որ նո-
րանք պիտի մխիթարվին:
5 Երանի հեզահոգիներին[4] որ
նորանք պիտի ժառանգին երկիրը[5]:
6 Երանի նորանց՝ որ սոված և
ծարաւ են արդարութեան հնամար՝
որ նորանք պիտի կըշտանան[6]:
7 Երանի ողորմածներին՝ որ նո-
րանք պիտի ողորմութիւն գտնեն[7]:
8 Երանի նորանց՝ որ սրտով
սուրբ են[8], որ նորանք պիտի Ա-
ստուածոյն տեսնեն[9]:
9 Երանի խաղաղութիւն սիրո-
ղներին՝ որ նորանք պիտի Աստուծոյ
որդիք կոչվին:
10 Երանի նորանց՝ որ արդարու-

(32) Մատ. գ. 7: (1) Մատ. դ. 13. 20: (2) Լուկ. զ. 20: Սաղմ. ծա. 17: Ե-
սայ. ժգ. 19: ԽԲ. 23: Նաում. ծէ. 15: Կգ. 2: (3) Նաում. կա. 3, 8: Լուկ. գ.
21: Հովհ. ժգ. 20: բ Կորնթ. ա. 7: Հայտ. խա. 4: (4) Սաղմ. լէ. 11: (5) Հռովմ.
դ. 13: (6) Նաում. ծէ. 1: կէ. 13: (7) Սաղմ. խա. 1: Մատթ. զ. 14: Մատ. ժա.
25: բ Տիմ. ա. 16: Նէեմ. զ. 10: Յակ. բ. 13: (8) Սաղմ. ժէ. 2: Խոս. 4: Նէեմ.
ժբ. 14: (9) ա Մատթ. ժգ. 12: ա Հովհ. գ. 2, 3:

Digitized by Google

սըն արդարութեան , զի նոցա է արքայութիւն երկնից :

11 Երանի՛ է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն , և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ :

12 Ցնծացէ՛ք և ուրախ լերուք , զի վարձք ձեր բազում են յերկինս . զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին :

13 Դուք էք աղ երկրի . ապա թէ աղն անհամի՝ ի՞ւ յաղիցի . ոչ իմիք ազդիցէ այնուհետև , բայց եթէ ընկենուլ արտաքս և կոխան լինել ՚ի մարդկանէ :

14 Դուք էք լոյս աշխարհի . ոչ կարէ քաղաք թաքչել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ :

15 Եւ ոչ լուցանեն ճրագ՝ և դնեն ընդ գրուանաւ , այլ ՚ի վերայ աշտանակի . և լոյս տայ ամենեցուն՝ որ ՚ի տանն իցեն :

16 Լո՛յնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան , որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս , և փառաւորեսցեն զ՚Հայր ձեր՝ որ յերկինս է :

17 Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս . ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ :

18 Ա՛մէն ասեմ՝ ձեզ՝ Մի՝ինչև անցցեն երկինք և երկիր , յոտն մի՝ որ նշանախեց մի է , ոչ անցցէ յօրինացըն և ՚ի մարգարէից՝ մինչև ամենայն եղիցի :

Թեան համար հալածված են[10] որ նորանց է երկրնքի արքայութիւնն :

11 Երանի՛ է ձեզ՝ երբոր նախատինք կը տան[11] և կը հալածեն ձեզ , և իմ պատճառովն՝ ամէն չար բան[12] սուտ տեղն կասեն ձեր վրայ :

12 Ցնծացէ՛ք[13] և ուրախ եղէք՝ որ ձեր վարձքն շատ են երկնքումն . հնչուտ՝ էսպէս էլ հալածեցին մարգարէներուն[14] որ ձեզմանից առաջ կային :

13 Դուք երկրի աղն էք . թէ որ աղն անհամանայ[15] , ինչով պիտի աղանվի . նորանից եւս իսկի միւս բանի համար գործածելոյ չէ , միայն թէ դուրս քցվի և մարդկանց ոտի տակն կոխան լինի :

14 Դուք աշխարհքի լոյսն էք[16] էն քաղաքն որ սարի վերայ կայ չի կարող թաքուն մնալ :

15 Եւ ճրագըն չեն վառիլ և տաշտի տակ դնիլ[17] , այլ ճրագակալի վերայ՝ և լոյս կը տայ ամէնին՝ որ տան մէջն են :

16 Նո՛յնպէս էլ ձեր լոյսն պէտք է լուսաւորէ մարդկանց առաջին , որ ձեր բարի գործքն տեսնեն[18] , և փառաւորեն ձեր Հայրըն[19] որ երկընքումն է :

17 Ղը՛ կարծէք[20] թէ ես եկել եմ՝ որ օրէնքըն կամ մարգարէներըն քանդեմ . չեմ եկել քանդելոյ , բայց կատարելոյ համար :

18 Ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ Որ մինչև երկինքն և երկիրս անց կենան[21] , օրէնքիցն և մարգարէներիցն միե կէտ՝ որ պզտիկ նշանագիր է , չի անցկենալ մինչև ամէնն կատարվի :

(19) Բ Կորնթ . գ . 17 : Բ Տիմ . բ . 12 : ա Պետ . գ . 14 : (11) Դոմ . գ . 22 : (12) ա Պետ . գ . 14 : (13) Դոմ . գ . 22 : Յուդա . 1 . 41 : Հռոմ . ե . 3 : Հայ . ա . 2 : ա Պետ . գ . 18 : (14) Նեհ . թ . 26 : Բ Մնաց . Լշ . 10 : Մատթ . ի . 34 . 37 : Գործ . է . 52 : ա Թես . բ . 15 : (15) Մատթ . ե . 50 : Դոմ . ժգ . 34 , 35 : (16) Նոմ . գ . 18 : Փիլ . բ . 15 : (17) Մատթ . գ . 21 : Դոմ . ը . 16 : ժա . 33 : (18) ա Պետ . բ . 12 : (19) Հովհ . ժե . 8 : ա Կորնթ . ժգ . 25 : (20) Հռոմ . գ . 31 : ժ . 4 : Ղուկ . գ 24 : (21) Դոմ . ժշ . 17 :

Digitized by Google

19 Իր զբ լուծցե մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ ՚ի փոքունց, և ուսուացե այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայութեան երկնից. իսկ որ արասցէ և ուսուացէ, նա մեծ կոչեսցի յարքայութեան երկնից:

20 Ասեմ ձեզ. Զի եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից:

21 Լուարուք՝ զի ասացաւ առաջնոցն, թէ Ո՛չ սպանաներ, զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի:

22 Ես ասեմ ձեզ. Եթէ ամենայն որ բարկանայ եղբօր իւրում առընապարտուց, պարտաւոր լիցի դատաստանի. և որ ասիցէ ցեղբայր իւր Հիմար, պարտաւոր լիցի տանի. և որ ասիցէ ցեղբայր իւր Յորոս, պարտաւոր լիցի ՚ի գեհենն հրոյն:

23 Եթէ մատուցանիցես զպատարագ քո ՚ի վերայ սեղանոյ, և անդ յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն,

24 Ձո՛ղ զպատարագն քո առաջի սեղանոյն. երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում, և ապա եկեալ մատուսջեր զպատարագն քո:

25 Լեր իրաւախոհ ընդ ոսոխի քում վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ՚ի ճանապարհի. գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, և դատաւորն գահճի, և արկանիցիս ՚ի բանտ:

26 Ամէն ասեմ քեզ. Ոչ ելանիցես անտի, մինչև հատուցանիցես զյետին նաքարակիան:

19 Որ եւ իցէ փոքր պատուիրանքներիցս մինոյն քանդէ[23], և մարդկանց էնպէս սովորցնէ՝ նա փոքր կը կոչվի երկնքի արքայութենուն. բայց նա՝ որ կանէ և կը սովորցնէ, մեծ կը կոչվի երկնքի արքայութենուն:

20 Որ՝ ասում եմ ձեզ՝ Թէ որ ձեր արդարութիւնն չաւելանայ աւելի քան կարդացողներուն և փարիսեցիներուն[23], չէք մտնիլ երկնքի արքայութիւնն:

21 Լսեցէք՝ որ առաջին մարդկանց ասվեցաւ, Թէ Որ սպաներ[24] ինչուորովհետև որ կը սպանէ, պարտական կը լինի դատաստանին:

22 Բայց ես ասում եմ ձեզ՝ Թէ ով որ զուր տեղն կը բարկանայ[25] իրան եղբօր վերայ, պարտական կը լինի դատաստանին. և ով որ իրան եղբօրն կասէ՝ Հիմար[26], պարտական կը լինի մեծ դատաստանին. և ով որ իրան եղբօրն կասէ՝ Որոս, պարտական կը լինի գեհենի կրակին:

23 (Ուրեմն) Թէ որ սեղանի վերայ քո պատարագդ մատուցանես[27] և հնտեղ միտդ բերես՝ Թէ քո եղբայրդ քեզանից մի խռովութիւն ունի,

24 Թո՛ղ պատարագդ[28] սեղանի առաջին Թո՛ղ. և գնա առաջ հաշտվիր քո եղբօր հետ. և յետոյ եկ քո պատարագդ արա:

25 Հաճախակ ոսոխի հետ շուտով քո բանդդ շինա՛ր[29] քանի որ նորա հետ ճանապարհումն ես[30]. որ չը լինի Թէ ոսոխդ քեզ դատաւորին մատնէ, և դատաւորն դահճին (ճեղլոփին). և բանտն (պընտոնն) ընկնիս:

26 Ճշմարիտը ասում եմ քեզ. Դուրս չես գալ էն տեղից, մինչև վերջին դանկը էլ չը վճարես:

(22) Հով. բ. 10: (23) Ժամ. Ե. 31. ժ. 3: (24) Ելից. բ. 13: բ Օրին. ե. 17: (25) ա Հովհ. գ. 15: (26) Հով. բ. 20: բ Ժամ. գ. 20: (27) Մարկ. ը. 4: իգ. 19: (28) Մարկ. ժը. 19: ա Տիմ. բ. 8: ա Պետ. գ. 7: (29) Ընտ. իե. 8: Լուկ. ժը. 58, 59: (30) Մատ. լը. 6: Լուկ. ժե. 6:

Digitized by Google

27 Լ՝ձեռուք՝ զի ասացաւ, Մի՛ ջնար։

28 Լ՝ասացի ես ասեմ ձեզ. Թէ ոք ատէ զկին ծարդ առ՝ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա՝ի սրտի իւրում։

29 Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ զքեզ, խլեա՛ զնա՝ և ընկեա՛ ՚ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի՛ անդամն կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի՛ ՚ի գեհենն։

30 Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հա՛ա զնա՝ և ընկեա՛ ՚ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի՛ անդամդ քոյ կորիցէ, և մի՛ ամենայն մարմինդ քո արկանիցի՛ ՚ի գեհենն։

31 Ասացաւ եւս՝ եթէ Ոք արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն։

32 Եւ ես ասեմ ձեզ, եթէ Ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ. և որ զարձակեալն առնէ՝ շնայ։

33 Դարձեալ լուարուք, զի ասացաւ առաջնոցն. Մի՛ երդնուցուս սուտ, այլ հատուսցես Տեառն զերդմունս քո։

34 Ես ասեմ ձեզ՝ Ամենևին մի՛ երդնուլ. մի՛ յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ.

35 Եւ մի՛ յերկիր՝ զի պատուական ոտից նորա է. և մի՛ յԵրուսաղեմ՝ զի քաղաք է մեծի արքայի։

27 Լսեալք՝ որ ասացաւ՝ Թէ Ո՛չ նուիրեսցես[31]։

28 Եւ ես ասեմ ձեզ. Թէ ամենայն որ մին կնկան վերայ մտիկ տայ[32] նորան ցանկանալոյ համար, նա իսկոյն շնացաւ նորա հետ իրան սրտի մէջն։

29 Եւ որ քո աջ աչքդ գայթակղացնէ քեզ[33], հանի՛ր նորա և քեզանից դէն քցիր[34]. ինչուար՝ լաւ է քեզ համար, թէ քո անդամներիցդ մինն կորչի. և քո ամէն մարմինդ չընկնի գեհենն։

30 Եւ թէ որ քո աջ ձեռքդ գայթակղացնէ քեզ, կտրի՛ր նորան և քեզանից դէն քցիր. ինչուար՝ լաւ է քեզ համար՝ թէ քո անդամ ներիցդ մինն կորչի. և քո ամէն մարմինդ չընկնի գեհենն։

31 Ասացին եւս՝ թէ Ո՛վ որ թողուն կինըն թո՛ղ անէ[35], դուրս առնելոյ թուղթ տայ նորան։

32 Եւ ես ասեմ ձեզ. Թէ Ո՛վ որ իրան կինըն դուրս անէ առանց պոռնկութեան պատճառի, նորա շնութեան պատճառն ինքն կը լինի[36]. և ով որ էն դուրս արածն առնէ, շնութիւն կը գործէ։

33 Ա՛յնէլ լսեցէք՝ որ ասացաւ առաջին մարդկանցն[37], Թէ Մի՛ ուտա՛ երդում չի՛ ուտես[38], բայց Տէրին արած երդմունքդ վճարի՛ր[39]։

34 Եւ ես ասեմ ձեզ. Ամէ՛ն երդում մի՛ ուտէք[40]. ո՛չ երկինքովն՝ որ Աստուծոյ աթոռն է[41].

35 Եւ ո՛չ երկրովս՝ որ նորա ոտն դնելոյ տեղն է. և ո՛չ Երուսաղէմովն՝ որ մեծ թագաւորի քաղաքըն է[42]։

(31) Ընթ. ք. 14։ բ Օրին. ե. 18։ (32) Ծնվ. լա. 1։ Աստ. գ. 25։ Ածնդ. լբ. 2։ բ Թագ. ժա. 3 (33) Ածր. ըգ. 8, 9։ Ածր. ք. 44—47։ (34) Հռոմ. ը. 13։ ա Կորնթ. ք. 27։ Ածղ. գ. 5։ (35) բ Օրին. խդ. 1։ Ընթ. գ. 1։ Ածր. ըք. 3, Ածյն։ Ածր. ը. 2, Ածյն։ (36) Ածր. ըք. 9։ Ղած. ըգ. 18։ Հռոմ. է. 3։ ա Կորնթ. է. 10, 11։ (37) Ածա. խգ. 15։ (38) Ընթ. ք. 7. 16։ Ղած. ըք. 12։ բ Օրին. ե. 11։ Թագ. ը. 2։ (39) բ Օրին. ք. 23։ (40) Ածր. խգ. 16. 18. 22։ Ցած. ե. 12։ (41) Ածյ Հգ. 1։ (42) Ածղ. ըը. 2։ ԼԶ. 3։

36 Եւ մի՛ ի գլուխ քո երդնուցուս , զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ :
37 Այլ եղիցի ձեր բան , այոն՝ այո , և ոչն՝ ոչ· զի աւելին քան զայն ի չարէն է :
38 Լուարուք , զի ասացաւ· Աչն ընդ ականի , և ատամն ընդ ատամանի :

39 Այլ ես ասեմ ձեզ , Ա՛ի կալ հակառակ չարին· այլ եթէ ոք առնիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ գարձո՛ նմա և զմիւսն :

40 Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո , թո՛ղ ի նա և զբաճկոն քո :
41 Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի , երի՛ ընդ նմա և երկուս :

42 Որում խնդրէ ի քէն՝ տո՛ւր· և որ կամի փոխ առնուլ ի՛նքէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս :

43 Լուարուք ասացաւ , զի ասացաւ· Սիրեսցե՛ զընկեր քո , և ատեսցե՛ զթշնամին քո :
44 Ա՛յլ ես ասեմ ձեզ· Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր· օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր· բարի արարէ՛ք առելեաց ձերոց· և աղօթի՛ս արարէ՛ք ի վերայ այնոցիկ՝ որ լլկենն զձեզ և հալածեն :
45 Զի եղիջի՛ք որդիք Հօր ձերոյ՝ որ յերկինսն է· զի զարեգակն իւր ծագէ ի վերայ չարաց և բարեաց , և անձրեւ տայ ի վերայ արդարոց և մեղաւորաց :

36 Եւ ո՛չ քո գլխովդ երդնում տա՛ս՝ որ կարող չես միւ մազ ճերմակ անել կամ թուխ :
37 Այլ ձեր խօսքն Թո՛ղ լինի , հան՝ հա՛· և չէն՝ չէ[43]· և նրանից աւելին չարից է :
38 Լսելէք՝ որ ասվեցաւ՝ Թէ Աչքի աչքին տեղ , և ատամի՝ ատամին տեղ[44] :
39 Այլ ես ասում ձեզ · Չարին հակառակ մի՛ կենա՛ք[45]· բայց Թէ որ միւն ապտակ (չեղէ) կը տայ քո աջ երեսիդ , մեկելն էլ նորան դէմ արա՛[46] :
40 Եւ ո՛վ որ կուզէ քեզ հետ կռիւ անել և քո շապկիդ առնել , քո կապան էլ Թո՛ղ նորա մօտ :
41 Եւ ո՛վ որ զոր տեղն քեզ բռնած միւն մղոն (տարա՛ճ) ճանապարհ կը քշէ[47] , նորա հետ երկուսն էլ գնա՛ :
42 Ո՛վ որ քեզանից բան ուզէ՝ տո՛ւր· և ո՛վ կամենայ քեզանից փոխ առնել երեսդ յետ մի՛ դարձներ նորանից[48] :
43 Ա՛ինէլ լսելէք՝ որ ասվեցաւ՝ Թէ Որ ընկերիդ սիրէ[49] և քո Թշնամիդ ատէ[50] :
44 Այլ ես ասում ձեզ · Սիրեցէ՛ք ձեր Թշնամիներըն[51] , օրհնեցէ՛ք ձեզ անիծողներին · բարի արէ՛ք ձեզ ատողներին · և աղօթէ՛ք առէ՛ք նորանց վերայ , որ ձեզ կը չարչարեն և կը հալածեն[52] :
45 Որ արդիք լինի՛ք ձեր Հօրն , որ երկնքումն է · որ նա իւրան արեգական ծագում է չար և բարի մարդկանց վերայ[53] , և անձրեւ է ածում արդարներին և մեղաւորներին վերայ :

(43) Ելն· գ· 6 : Ելն· ե· 12 : (44) Լևտ· ի· 24 : Ել· ի· 20 : բ Օրին· ժբ· 21 :
(45) Ա՛ռած· բ· 22 : իգ· 29 : Ա՛ռած· գ· 29 : Հռով· ժբ· 17· 19 : առակ· գ· 7 :
առնե· ե· 15 : առակ· գ· 3 : (46) Լամ· ե· 6 : Ոռբ· գ· 30 : (47) Մատ· իե· 32 :
Մատ· ժե· 21 : (48) բ Օրին· ժե· 8· 10 : Ա՛ռած· գ· 30· 35 : (49) Ա՛ռած· ժբ· 18 :
(50) բ Օրին· իգ· 6 : Ա՛ռած· իա· 10 : (51) Ա՛ռած· գ· 27· 35 Հռով· ժբ· 17· 20 :
(52) Ա՛ռած· իգ· 34 : Գործ· ի· 4· 60 : առ Կորնթ· գ· 12 , 13 : առ Թես· բ· 20 · գ· 3 :
(53) Ովբ· իե· 3 :

Digitized by Google

46 Օ՛, եթէ սիրիցէք զայնոսիկ որ սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն, ոչ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն։

47 Եւ եթէ ասիցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք, ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնոյն գործեն։

48 Լի՛ջէք՝ եղերո՛ւք դուք կատարեալք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է։

46 Վասն զի եթէ որ միանակ նորանց սիրէք որ ձեզ սիրեմե՞ն, էլ ի՞նչ վարձք կը լինի ձեզ. չէ՞ որ մաքսաւորներն (ՀԽուՓՉԵՆԵՔՆ) էլ էնպէս են անում։

47 Եւ եթէ որ միանակ ձեր բարեկամներին բարև տաք. ի՞նչ աւելի բան կանէք. չէ՞ որ մաքսաւորներն (ՀԽուՓՉԵՆԵՔՆ) և մեղաւորներն էլ էնպէս են անում։

48 Ուրեմն դուք կատարեա՛լ էլէք՝ ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրն կատարեալ է՝ ։

ԳԼՈՒԽ Ը

1 Ողորմութիւն ձեր մի՛ առնէք մարդկան առաջի՝ որպէս թէ տեսնեն զձեզ. եթէ ոչ ապա վարձ չունիք առ Հայր ձեր որ յերկինս է։

2 Եւ երբ ողորմութիւն առնիցես՝ մի՛ հարկանել առաջի քո փող, որպէս կեղծաւորքն առնեն ի ժողովուրդս և ի հրապարակս, զի փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

3 Եւ դու երբ ողորմութիւն առնիցես՝ մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո։

4 Զի ողորմութիւն քո ի ծածուկ լիցի. և Հայրն՝ որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։

5 Եւ երբ աղօթիցես՝ մի՛ լինիցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն ի ժողովուրդս և յանկիւնս

1 Զգո՛յշ կացէք ձեր ողորմութեան՝ որ մարդկանց առաջին չլինէք, իբր նորանց ցոյց տալոյ համար. որ չը լինի, թէ վարձք չառնէք ձեր Հօրից՝ որ երկնքումն է։

2 Հայց երբոր ողորմութիւն առնես[1]. փող չի տաս փչել քո առաջիդ. ինչպէս որ կեղծաւորներն առնում ժողովարանների մէջն և փողոցներումն՝ որ մարդկանից փառաւորվին. ճշմարիտն ասում եմ ձեզ. որ նորանց վարձքն միանակ էն է։

3 Հայց երբոր դու ողորմութիւն անես, թող չիմանայ քո ձախ ձեռդ՝ թէ ինչ է գործում քո աջք։

4 Որ էսպէս քո ողորմութիւնն ծածուկ լինի, և քո Հայրն՝ որ ծածուկը տեսնում է, յայտնի կը հատուցանէ քեզ[2]։

5 Եւ երբոր աղօթք անես, մի՛ լինիր կեղծաւորներին պէս. ինչուր՝ նորանք սիրում են ժողովարանների

(54) Ղ՚ած. գ. 33։ (55) Չ՚ունք. ժէ. 1։ Ղ՚ած. ժա. 44։ ԺԹ. 2։ Ղ՚ած. գ. 36։ Ղեղ. ա. 28։ գ. 12։ Հով. ա. 4։ ա Պետ. ա. 15, 16։ (56) Նախ. ե. 1։ (1) Հմմտ. ԺԹ. 8։ (2) Ղ՚ած. ժգ. 14։

հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի եւևնցին մարդկան. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։

6 Եւ դու յորժամ կայցես յաղօթս, մտ՚ա՛ ի սենեակ քո՝ և փակեա՛ զդուրս քո, և կաց յաղօթս առ Հա՛յր քո ի ծածուկ. և Հա՛յրն քո՝ որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս։

7 Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի՛ շատախօսք լինիք իւրև զհեթանոսն. զի համարին եթէ ի բազում խօսից իւրեանց լսելի լինիցին։

8 Մի՛ դո՛ւք՝ մի՛ նմանիցէք նոցա. զի գիտէ Հա՛յրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մի՛ոչ՚ն ձեզ խնդրեալ ինչ իցէ ի նմանէ։

9 Եւ արդ՝ այսպէս կացէք դուք յաղօթս։ Հա՛յր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո։

10 Եկեսցէ արքայութիւն քո. եղիցի կամք քո որպէս յերկինս և յերկրի։

11 ԶՀաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր։

12 Եւ լո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողուա՛ք մերոց պարտապանաց։

13 Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն, զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

14 Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ Հա՛յրն ձեր երկնաւոր։

15 Ապա թէ ո՛չ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, և փողցն ձեր ոչ թողցէ ձեզ Հա՛յրն ձեր։

6 Նայ դու ինչ ժամանակ որ աղօթք անես, մտի՛ր քո խուցդ՝ և քո դռնեերդ փակի՛ր[9] և ծածուկ աղօթք արա դէպի քո Հա՛յրդ. և քո Հա՛յրդ որ ծածուկըն տեսնող է՝ յայտնի կը հատուցանէ քեզ։

7 Եւ էն ժամանակն որ աղօթք անէք, շատախօս մի՛ լինիք[4]. ինչպես Հեթանոսներն. որ նոքա կարծեմեն՝ թէ իրանց շատ խօսելոյն համար կը լսվին[5]։

8 Նրանցմէ նոյնց նման մի՛ լինիք. ինչուա՛ր ձեր Հա՛յրն գիտէ՝ թէ ի՞նչ պէտք է ձուզ, քանի որ մին քան դուռ չէք խնդրել նորանից։

9 Այսպէս դուք էսպէս աղօթք արէք. Այ՛ր Հա՛յր որ երկնքումն ես՝ քո անունդ սո՛ւրբ լինի[6]։

10 Գ՚ալո արքայութիւնդ գա՛յ, քո կամքդ լինի՛ ինչպես երկնքումն, էնպէս էլ երկրիս վերայ։

11 Այ՛ր ամէն օրվան Հացըն[7] էս օր տո՛ւր մեզ։

12 Եւ մեր պարտքըն լո՛ղ մեզ[10]. ինչպես որ մենք էլ լոզացուցինք մեր պարտականներին։

13 Եւ մեզ փորձանքի մէջ մի՛ քըցեր[11]. բայց մեզ չարիցն ազատի[12]. ինչուա՛ր քո է թագաւորութիւնն[13] և զօրութիւնն՝ և փառքն՝ յաւիտեանս ամէն։

14 Պատճառնոր՝ եթէ դուք մարդկանց իրանց մեղքն լոզաք[14] ձեր երկնաւոր Հա՛յրն էլ ձեզ լոզացուցանէ։

15 Ապա թէ որ դուք մարդկանց

(1) գ Նոտ · գ · 33 : (1) Հաղ · ե · 2 : (3) գ Նոտ · ժգ · 26 · 39 : (6) Ղուկ · ժա · 8, Նայն : (7) Մատթ · Խղ · 39 · 43 : գՈւրթ · իա · 16 : (9) Ղուկ · ոգ · 20, 21 : (9) Հովէլ · ե · 12 : Ընտ · Հ · 8 : (10) Մատթ · ժգ · 21, Նայն : (11) Մատթ · Խղ · 41 : Ղուկ · Խդ · 40 · 46 · ասդծ · ժ · 13 : գՊետ · ե · 9 : Հայտ · գ · 10 : (12) Հովհ · ժե · 15 : (13) ա Մատթ · ԽԲ · 11 : (14) Մատթ · ժա · 25, 26 : Նէհ · գ · 33 : Հոգ · գ · 13 :

Digitized by Google

կան գլանդրանս նոցա, և ձէր Հայրն ձեր ինքն ձեզ գլանացանս ձեր։

16 Եւ յորժամ պահիցէք՝ մի՛ լի-նիք իբրև զկեղծաւորսն տրտմագունք. որ ապականեն զերեսս իւրեանց, որպէս զի երեւեցին մարդկանց պա-պահիցեն. ամէն ասեմ ձեզ, Նոքա իակ են վարձք նոցա։

17 Դու դու յորժամ պահիցես, օծ զգլուխ քո՝ եւ լուա զերեսս քո։

18 Որպէս մի՛ երեւեսցին մարդկան իբրև զպահօղ. այլ Հօրն քում՝ որ ի ծածուկ, և Հայրն քո՝ որ տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտ-նապէս։

19 Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկ-րի. ուր ցեց և ուտիճ ապականեն, և ուր գողք պկան հատանեն և գո-ղանան։

20 Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց և ոչ ուտիճ ա-պականեն, և ոչ գողք պկան հա-տանեն և գողանան։

21 Որ տեղ գանձք ձեր են՝ անդ և սիրտք ձեր եղիցին։

22 Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի։

23 Այլ եթէ ակն քո չար է՝ ա-մենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն որչափ ևս։

24 Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. կամ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարի-չէք թողել իրանց միգբան[18], ձեր Հայրն եւ ձեր միգբան ձեզ չի թո-ղիլ։

16 Եւ էն ժամանակին որ պաս կը պահէք[16], չը լինի որ կեղծաւորնե-րին պէս տրտում երևիք, որ իրանց երեսըն տխրացնում են, որ մարդ-կանց երևին թէ պաս են պահում. ճշմարիտըն ասում եմ ձեզ՝ թէ Ա-րանց վարձքն մէնակ էն է։

17 Հապց դու ինչ ժամանակ որ պաս պահես, քո գլուխդ իւղով օ-ծիր[17] և քո երեսդ լուա։

18 Որ մարդկանց առաջին չերևիս պաս պահօղի նման, բայց ծածուկ քո Հօրդ առաջին. և քո Հայրն՝ որ ծածուկն տեսնում է, յայտնի կը հատուցանէ քեզ։

19 Ձեզ համար գանձ[18] (խազնայ) մի՛ հաւաքէք երկրիս վերայ. որ տեղ որ ցեցն և ժանկն ապականու-մեն. և որ տեղ որ գողերն գնանի տակըն փորումեն և գողանում։

20 Հապց երկնքումն ձեզ համար գանձ (խազնայ) ժողովեցէք[19] որ էն տեղ ոչ ցեց և ոչ ժանկ չեն ա-պականում, և գողերն գնանի տա-կըն չեն փորում և գողանում։

21 Պատճառնոր՝ ինչ տեղ որ ձեր գանձերն են, էնտեղ էլ ձեր սիրտն կը լինի։

22 Աչքդ մարմնոյ ճրագն է[20]. եթէ որ քո աչքդ պարզ է, քո ամէն մարմինդ լուսաւոր կը լինի։

23 Հապց եթէ որ քո աչքդ չար է, քո ամէն մարմինդ խաւար կը լինի։ Ուրեմն՝ եթէ որ էն լոյսն որ քեզ-գանում է՝ խաւար է, ապա խաւարն որչափ կը լինի։

24 Ոչ ով կարօղ չէ երկու տիրոջ ծառայութիւն անել[21]. կամ մէնին կատէ՝ և մէկէլին կը սիրէ, կամ

(18) Մատթ. չ. 35։ Ղուկ. բ. 12։ (19) Նոյն. ԺԲ. 33։ (17) Մատթ. գ. 3։ Ղուկ. ժ. 3։ (18) Ա Տիմոթ. խ. 6։ ս Տիմոթ. ա. 17։ Եբր. ժգ. 5։ Ցակ. ե. 2, համեմ։ (19) Մատթ. ԺԲ. 34։ Ղուկ. ժբ. 33, 34։ ժգ. 28։ ա Տիմոթ. գ. 10։ ա Պետ. ա. 4։ (20) Ղուկ. ժա. 34, 36։ (21) Ա Յովհ. բ. 15։

Digitized by Google

քե, և զիւան ապշամարհիցե. ուչ խորհ լ՚առուծոյ ծառայել և մա-
մոնայի:

25 Վ՚ասն այդորիկ ասեմ ձեզ. Վ՚Ի հոգալ վասն ոգւոց ձերոց զինչ
ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք. և ի՛ վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ
զգանիցիք. ոչ ապաքէն ոգի առա-
ւել է քան զկերակուր՝ և մարմին
քան զհանդերձ:

26 Հայեցարո՛ւք ի թռչունս երկ-
նից՝ զի ոչ վաւրեն և ոչ հնձեն և
ի ժողովեն ի շտեմարանս, և Հայ-
րըն ձեր երկնաւոր կերակրէ զնո-
սա. ոչ ապաքէն դուք առաւել էք
քան զնոսա:

27 Իսկ ո՛ր ոք ի ձէնջ առ հո-
գալ իւրում՝ յաւելուլ կարիցէ ի
հասակ իւր կանգուն մի:

28 Եւ վասն հանդերձի զի՞ հո-
գայք. հայեցարո՛ւք ի շուշանն վեց-
րինի՝ ծիպիկս ածէ. ոչ ջանայ, և
ոչ նիւթէ:

29 Հասեմ ձեզ՝ զի և ոչ Վողո-
մոն յամենայն ի փառան իւրում
պեպսաւ իրրև զմի ի նոցանէ:

30 Իսկ եթէ զխոտն ի վայրի որ
այսօր է՝ և վաղիւն ի հնոց արկա-
նի, Հ՚առաւած այնպէս զգեցուցանէ.
որչափ ևս առաւել զձեզ Քերթ-
հաւաքք:

31 Վ՚Ի այսուհետև հոգայցէք՝ և ա-
սիցէք. Ո՞ինչ կերիցուք կամ Ո՞ինչ
արբցուք՝ կամ Ո՞ինչ զգեցցուք:

32 Ո՞ի զայդ ամենայն հեթանոսք
խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր
երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ
ամենայն:

33 Խնդրեցէք նախ զարքայու-
թիւնն Հ՚առուծոյ և զարդարու-
թիւն նորա. և այդ ամենայն յա-
ւելցի ձեզ:

մըն֊ին կը պատուէ՝ եւ մէկէլին ոչ ինչ
սեղ կը համարէ: Ընէք կարող Հ՚ա-
ստուծոյ ծառայել և մամոնային:

25 Վրասհամար ասեմ ձեզ. Հոգա մի՛ անէք ձեր հոգոյն հա-
մար. թէ ինչ պիտի ուտէք, կամ
ինչ պիտի խմէք. և ոչ ձեր մարմ-
նոյն համար՝ թէ ինչ պիտի հագ-
նիք: Ընդ որ հոգին աւելի է կեր-
տիէն՝ և մարմինն շորեղիքն:

26 Վ՚աքէկ արէք երկնքի թռչուն-
ներուն, որ ոչ վարդանին, և ոչ
հընձանին, և ոչ ամբարներուն ժո-
ղովանին, և ձեր երկնաւոր Հայրն
կերակրէ նորանց. չէ՞ որ դուք
նորանցմէ աւելի էք:

27 Հ՚ձեզմէ ո՞վ կրնայ իր
հոգս անելովն իւրան հասա-
կին վերայ մին գազ էլ աւելցնել:

28 Եւ զգեստի համար ինչու հոգ
կ՚անէք. մտիկ արէք վայրի
շուշան ծաղկին՝ թէ ինչպէս աճեց-
նուած. ոչ կ՚անքե անառած՝ և ոչ մա-
նուած:

29 Հ՚սուսմէ ձեզ՝ թէ Վաղամնն
էլ իրան ամէն փառքի մէջն նպատակ
մըն֊ին նման չը հագաւ:

30 Վ՚սկայ թէ որ վայրի խոտն՝ որ
էսօր կայ և էգուց կ՚ըլլի՝ Հ՚ա-
ստուած էնպէս է հագցնում, ա-
պա որքան աւելի ձեզ՝ Քիրեհա-
ւատներ:

31 Վրասհամար էլ հոգա մի՛ անէք՝
և մի՛ ասէք. թէ Հ՚նչ ուտենք, կամ
Հ՚նչ խմենք, կամ Հ՚նչ հագնինք:

32 Հ՚նչուան՝ էդ ամէն բաներուդ
հեթանոսներն են ուզում. պատ-
ճառն ու՝ ձեր երկնաւոր Հ՚այրն գի-
տէ՝ թէ էդ ամենդ պէտք է ձեզ:

33 Վ՚ոնց որ՝ առաջ Հ՚ստուծոյ տը-
քայութիւնը և նորա արդարա-
թիւնը խնդրեցէք. և էդ ամէն բա-
ներդ կաւելանայ ձեզ:

(22) Պաշ. ա. 10: ա Տիմ. գ. 17: Յով. դ. 8: ա Պետ. բ. 15: (23) Մատ. ե. 22: Լուկ. ժբ. 23, 28: Փիլ. դ. 8: ա Պետ. ե. 7: (24) Ղուկ. լբ. 21: Մատ. զ. 9: Ղուկ. ժբ. 24, Հայն: (25) գ Կոռնթ. զ. 13: Մատ. ը. 25: Մարկ. ժ. 30: Ղուկ. ժբ. 31: ա Տիմ. դ. 8:

Digitized by Google

31 Այլ պատշճեսցես հոգալոցիդ վասն վաշխին . զի վաշխուն վասն իւր հոգասցի . շատ է աւուրն չար իւր ։

34 Լուսնեայ եգուցվան համար հոգա մի՛ անէք , ինչուա՛ եգուցվան օրն իրան համար հոգս կանէ . օրի համար բաւական է իրան նեղութիւնն ։

ԿԻՆ . Ի

1 Խրխատա սարի վերայ իրան քարոզն վերջ անելոյ ժամանակին՝ ծառս գաւազներին կը յանդիմանէ ։ 6 Աւուր բաներըն չներւի տալն կարգելէ ։ 7 Նը յորդորէ որ ապրիք անեն ։ 13 Նինէ գռնէն ներս մտանն ։ 15 Ասա մարգարէներից զգուշ լինին ։ 21 Խոսքն ճշմարիտ տօղներ չեն լինին , բայց կատարողներ ։ 24 Վերայ վերայ լինելոց ոչնչերի նմանին , 26 և թե ինչ ասալ վերայ ։

1 Այլ դատէք՝ զի մի՛ դատիցիք ։

2 Օրի որով դատաստանաւ դատէք՝ դատեսցուց էք . և որով չափով չափէք՝ չափեսցի ձեզ ։

3 Օրի տեսանես զչիւղ յականն եղբօր քո , և ի քում ականդ բղեգերատդ ոչ տեսանես ։

4 Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո , ինդ հանից զչիւղդ յականէ քումմէ . և ահաւադիկ ի քում ականդ գերան կայ ։

5 Կեղծաւոր՝ հան նախ զգերանդդ յականէ քումմէ , և ապա հասցես հանել զչիւղն յականէ եղբօր քո ։

6 Այլ՝ ի տալ զսրբութիւն շանց . և մի՛ արկանէք զվարգարիտս ձեր առաջի խոզից , զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա , և դարձեալ երդիծասցանիցեն զձեզ ։

7 Խնդրեցէք՝ և տայի ձեզ , հայցեցէք՝ և գտնիք , բախեցէք՝ և բացցի ձեզ ։

8 Օրի ամենայն որ խնդրէ՝ առնու , և որ հայցէ՝ գտանէ , և որ բախէ՝ բացցի նմա ։

1 Այլ դատէք՝ որ (դուք էլ) չը դատվիք[1] ։

2 Պատճառնոր՝ ինչ դատաստանով որ ուրիշին դատէք , (նորանով) պիտի դատվիք . և ինչ չափով որ չափէք[2] , (նորանով) կը չափվի ձեզ ։

3 Ինչուա՞ քո եղբօր աչքի մէջի ծեղըն տեսնուսիս , և քո աչքիդ մէջի գերանըն չես տեսնուս[3] ։

4 Կամ ինչպէս ես ասուս եղբօրդ՝ հնդ քո աչքիդ ծեղըն հանեմ , և ահա քո աչքիդ մէջին գերան կայ ։

5 Կեղծաւոր՝ առաջ քո աչքիդ գերանըն հանիր , և յետոյ տեսիր , որ քո եղբօր աչքիդն ծեղըն հանես ։

6 Սուրբ բանըն մի՛ տաք շներին[4] . և ձեր մարգարիտներն խոզերի առաջն մի՛ ձգէք . որ նորանց ոտով կոխ չը տան՝ և յետ դառնան ձեզ պատառեն ։

7 Խնդրեցէք և կը տրվի ձեզ[5] . մանր նկէք և կը գտնէք . (դուռըն) թակեցէք և կը բացվի ձեզ ։

8 Ինչուա՞ , ամեն ով որ կը խընդրէ[6] կառնէ , և ով որ կանը կը գայ կը գտնէ , և ով որ կը թակէ կը բացվի նորան ։

(1) Ղուկ . զ . 37 ։ Հռոմ . բ . 1 ։ Ժգ . 3 , 4 . 10 . 13 ։ Ա Կորնթ . գ . 3 . 5 ։ Գաղ . գ . 11 , 12։ (2) Մարկ . գ . 24 ։ Ղուկ . զ . 38 ։ (3) Ղուկ . զ . 41 , 42 ։ (4) Ընտ . թ . 7 , 8 ։ Իգ . 9 ։ Պսղ . ԺԹ . 45 , 46 ։ (5) Մատթ . իա . 22 ։ Մարկ . ժա . 24 ։ Ղուկ . ժա . 9 , 10 ։ Ժգ . 1 ։ Գաղ . Ժդ . 13 ։ Ժե . 7 ։ Ժզ . 23 , 24 ։ Գաղ . ա . 5 , 6 ։ Ա Գաղ . գ . 22 ։ Ե . 14 , 15 ։ (6) Ընտ . ը . 17 ։ Երեմ . ԼԹ . 13 , 14 ։

Digitized by Google

9 Ո՞վ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ զոր խնդրիցէ օրդի իւր հաց, միթէ քար տայցէ նմա։

10 Եւ կամ խնդրիցէ ձուկն, միթէ օձ տայցէ նմա։

11 Ի՛րդ՝ եթէ դուք որ չարքդ էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, որչափ ևս առաւել Հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս այնոցիկ որ խնդրեն զնա։

12 Ամենայն զոր միանգամ կամիցիք՝ լեզ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն և մարգարէք։

13 Ա՛ռէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռնն՝ և հարձակ ճանապարհն՝ որ տանի ՚ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա։

14 Զի՛նչ անձուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի ՚ի կեանս, և սակաւք են որ գտանեն զնա։

15 Զգո՛յշ լերուք ՚ի սուտ մարգարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց, և ՚ի ներքոյ են գայլք յափշտակողք։

16 ՚Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա. միթէ քաղեցեն ՚ի փշոց խաղող կամ ՚ի տատասկէ թուզ։

17 Ի՛սկպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, և ծառ չար՝ պտուղ չար առնէ։

18 Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել, և ո՛չ ծառ չար՝ պտուղ բարի առնել։

19 Ա՛մենայն ծառ՝ որ ոչ առնէ

9 Ո՞վ է ձեզանից էն մարդն՝ որ նորանից իւրան որդին հաց ուզէ միթէ քար կը տայ նորան։

10 Եւ կամ ձուկն ուզէ՝ միթէ օձ կը տայ նորան։

11 Արդեօք թէ որ դուք որ չար էք՝ գիտուքէք լաւ պարգեւներ տալ ձեր որդոցն. ապա որքան աւելի ձեր Հայրն որ երկնքումն է, բարի լաւներ կը տայ նորանից որ ուզումեն իրանից։

12 Ա՛յն ինչ որ կամենուքէք թէ մարդիքն ձեզ անեն, էնպէս էլ դուք արէք նորանց. ինչու որ՝ հենց էս է օրէնքն և մարգարէքն։

13 Ձեղ դռնումն նեղ մտէք. ինչուորտ լայն է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ դէպի կորուստն է տանուում. և շատ են նորանք որ նորանով են մտնում։

14 Ա՛յնքան նեղ է դուռն՝ և նեղ է ճանապարհն, որ դէպի կեանքն է տանում. և քիչ են նորանք որ գտնումեն նորան։

15 Զգո՛յշ կացէք (էն) սուտ մարգարէներից՝ որ ոչխարի շորեր ձեզ մօտ են գալիս, և իրանց միջումն յափշտակող գայլեր են։

16 Նրանց պտղից էն նորանց ճանաչեցէք. կարո՞ղ որ փշերից խաղող քաղեն. կամ տատասկից թուզ։

17 Այսպէս ամէն բարի ծառ բարի պտուղ է բերում. և չար ծառն չար պտուղ է բերում։

18 Չի կարող բարի ծառն՝ չար պտուղ բերել, և ոչ էլ չար ծառն բարի պտուղ բերել։

19 Ամեն ծառ որ բարի պտուղ

(7) Ղուկ. ժա. 11, 13, 13։ (8) Հովհ. գ. 5։ ը. 21։ (9) Ղուկ. գ. 31։ (10) Ղեսդ. ժԲ. 16։ Մատթ. իբ. 10։ Հռոմ. ժգ. 8, 9, 10։ Գաղ. ե. 14։ ա Տիմ. ա. 5։ (11) Ղուկ. ժգ. 24։ (12) Բ Օրին. ժգ. 3։ Նեհեմ. թ. 16։ Մատթ. իգ. 4։ 5. 11. 24։ Մատթ. ժգ. 22։ Հռոմ. ժգ. 17, 18։ Նեհեմ. ե. 6։ Կազ. բ. 8։ Բ Պետ. բ. 1, 2, 3։ ա Հովհ. գ. 1։ (13) Մատթ. գ. 5։ բ Տիմ. գ. 5։ (14) Ղուկ. ի. 30, 39։ (15) Վեր. 20։ Մատթ. ժբ. 33։ (16) Ղուկ. գ. 33. 44։ (17) Նեհեմ. ժա. 19։ Մատթ. ժբ. 33։ (18) Մատթ. է. 10։ Ղուկ. է. 9։ Հովհ. ժե. 2. 6։

Digitized by Google

պատ՝զ քարի , հատանիք և՛ ի հուր արկանիք ։

20 Ա՛պա՝ ի պաղոյ նոցա ծանիցիք զնոսա ։

21 Ա՛յ ամենայն որ ասէ ցիս՝ Տէր Տէր , մտցէ յարքայութիւն երկնից . այլ որ առնէ զկամս Հօր իմոյ՝ որ յերկինս է ։

22 Նազելովք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ . Տէր Տէր՝ ո՛չ յանուն քո մարգարէացաք , և յանուն քո դևս հանաք , և յանուն քո զօրութիւնս բազումս արարաք ։

23 Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ Ա՛յ երբէք գիտեի զձեզ . ՚ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէիք զանօրէնութիւն ։

24 Ա՛մենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և առնէ զսոսա , նմանեցի առն խմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ վիմի ։

25 Իջին անձրևք՝ և խաղացին գետք , շնչեցին հողմք՝ և բախեցին զտանն , և ո՛չ կործանեցաւ . քանզի ՚ի վերայ վիմի հաստատեալ էր ։

26 Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ և ո՛չ առնէ զսոսա , նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց զբնակարան իւր ՚ի վերայ աւազոյ ։

27 Իջին անձրևք՝ յարեան գետք , շնչեցին հողմք՝ հարին զտունն , և անկաւ . և էր կործանումն նորա մեծ յոյժ ։

28 Եւ եղև իբրև կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ , զարհուրեցան ամբոխքն ի վարդապետութեան նորա ։

29 Զի էր ուսուցանէր զնոսա իբրև զոր իշխանութիւն ունի՝ և ո՛չ իբրև գրագիրքն և փարիսեցիքն ։

1 Եւ իջեալ նորա ՚ի լերինն՝ հետևեցան նմա բազումք ի բազմաց ։

2 Եւ ահա մարդ մի մերկացեալ եկեալ երկրպագանէր նմա՝ և ասէր . Տէր , եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել ։

3 Եւ երկարեալ Յիսուս զձեռն՝ դպաւ նմա՝ և ասէ . Կամիմ , սրբեցիր ։ Եւ անդէն մերկացեալ նորա սրբեցաւ ։

4 Եւ ասէ ցնա Յիսուս . Տես մի՛ ումեք ասիցես , այլ երթ՝ ցուցո՛ զանձն քահանայապետին , և մատո՛ զպատարագ զոր պատուիրեաց Մովսէս , ի վկայութիւն նոցա ։

5 Եւ մտեալ Յիսուս ՚ի Կափառնայում՝ մատեան առ նա հարիւրապետ մի՝ աղաչելով զնա ։

6 Եւ ասէ . Տէր , մանուկ իմ պառկի ՚ի տան իմում՝ անդամալոյծ , և չարչարի ահագին ։

7 Եւ ասէ ցնա Յիսուս . Ես եկեալ բժշկեցից զնա ։

8 Եւ պատասխանի ետ հարիւրապետն՝ և ասէ . Տէր , ոչ եմ արժան զի մտցես ՚ի ներքս ՚ի տանս իմ , այլ միայն ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկ իմ ։

9 Զի և ես մարդ եմ հնազանդ իշխանի , ունիմ ՚ի ներքս զզինուորս , և ասեմ ցայս՝ Երթ՝ և երթայ , և ցայլ՝ Եկ՝ և գայ , և ծառայի իմում՝ Արա՛ զայս՝ և առնէ ։

10 Եւ լուեալ Յիսուսի՝ զարմացաւ , և ասէ ցհետևողսն . Ամէն ասեմ ձեզ , զայսպիսի հաւատս ո՛չ գտի յոք իսրայէլացիս ։

11 Եւ ասեմ ձեզ , զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն՝ և նստցին ընդ Աբրահամու և ընդ Իսահակայ և ընդ Յակոբայ ՚ի թագաւորութեան երկնից ։

12 Եւ որդիքն թագաւորութեանն արտաքս հանցին ՚ի խաւարն արտաքինս . անդ եղիցի լալ և կրճտել ատամանց ։

13 Եւ ասէ Յիսուս հարիւրապետին . Երթ՝ և որպէս հաւատացեր՝ եղիցի քեզ ։ Եւ բժշկեցաւ մանուկն նորա յժամուն յայնմիկ ։

14 Եւ եկեալ Յիսուս ՚ի տունն Պետրոսի՝ ետես զաներն նորա՝ որ պառկէր և տենդոտէր ։

15 Եւ մերձեցաւ և ձեռնառ եղև ձեռին նորա՝ և թողաւ զնա տենդն , և յարեաւ և սպասաւորէր նմա ։

16 Եւ իբրև եղև երեկո՝ մատուցին առ նա բազումս դիւահարս , և հանէր զդևսն բանիւ , և զամենայն հիւանդսն բժշկէր ։

17 Զի լցցի որ ասացաւ ՚ի մարգարէէն Եսայեայ՝ որ ասէ . Զանձինս մերս ինքն առ , և զհիւանդութիւնս մեր ինքն կրեաց ։

18 Եւ տեսեալ Յիսուսի զբազումս ՚ի շուրջ իւր՝ հրամայեաց երթալ ՚ի կողմն միւս կողմանն ։

19 Եւ մատեան առ նա գրագիր մի՝ և ասէ ցնա . Վարդապետ , երթայց զհետ քո ուր և գնասցես ։

20 Եւ ասէ ցնա Յիսուս . Աղուէսք զբուներս ունին , և թռչունք երկնից զբներս , իսկ Որդի մարդոյ ո՛չ ունի ուր զգլուխ իւր դիցէ ։

21 Եւ այլ ոմն ՚ի աշակերտացն ասէ ցնա . Տէր , արձակեա՛ զիս նախ՝ և երթիցեմ թաղեցից զհայր իմ ։

22 Եւ Յիսուս ասէ ցնա . Հետևեա՛ ինձ , և թո՛ղ զմեռեալսն թաղեսցեն զմեռեալս իւրեանց ։

23 Եւ նա մտեալ ՚ի նաւ՝ հետևեցան նմա աշակերտք նորա ։

24 Եւ ահա շարժումն մեծ եղև ՚ի ծովուն , մինչև ծածկեցան ալեաց զնաւն . և նա քնացեալ էր ։

25 Եւ մատեան առ նա աշակերտք նորա՝ և յարուցին զնա՝ և ասեն . Տէր , փրկեա՛ զմեզ , կորնչիմք ։

26 Եւ ասէ ցնոսա Յիսուս . Ընդէ՞ր երկնչիք դուք , սակաւահաւատք ։ Յետ այնորիկ յարուցեալ՝ սաստեաց հողմոցն և ծովուն , և եղև խաղաղութիւն մեծ ։

27 Եւ զարհուրեալ մարդիկն ասէին . Ո՞ է սա , զի և հողմք և ծովն հնազանդին նմա ։

28 Եւ եկեալ նորա յայն կողմն յերկիրն Գադարացւոց՝ ընդդիմացան նմա երկու դիւահարք՝ ելեալք ի գերեզմանաց , չարագոյնք յոյժ , մինչև ոչ ոք կարէր անցանել ճանապարհաւ յայնմիկ ։

29 Եւ ահա գոչեցին՝ և ասեն . Զի՞ մեզ և քեզ , Որդի Աստուծոյ . եկե՞ր հանդերձ ժամանակի տանջել զմեզ ։

30 Էր ոչ հեռի ՚ի նոցանէ հօտ խոզից բազմաց արածեալ ։

31 Դևքն ուրեմն աղաչեցին զնա՝ և ասեն . Եթէ հանես զմեզ՝ արձակեա՛ ՚ի հօտ խոզից զմեզ մտանել ։

32 Եւ ասէ ցնոսա . Երթայք ։ Եւ նոքա ելեալ գնացին ՚ի հօտ խոզից , և ահա ամենայն հօտ խոզից ընթացեալ ընկղմեցաւ ՚ի ծովն , և մեռան ՚ի ջուրս ։

33 Եւ արածողքն փախեան՝ և գնացեալ ՚ի քաղաքն՝ պատմեցին զամենայն և զդիւահարացն ։

34 Եւ ահա ամենայն քաղաքն ելեալ ընդառաջ Յիսուսի՝ և տեսեալ զնա՝ աղաչեցին զի անցցէ ՚ի սահմանաց նոցա ։

1 Եւ նաւեալ Յիսուս՝ անցեալ եկն ՚ի կողմանս իւր քաղաքին ։

2 Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի՝ պառկեալ ՚ի մահիճս ։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն . Քաջալերեա՛ , որդեակ , թողին քեզ մեղքդ քո ։

3 Եւ ահա ոմանք ՚ի գրագիրացն ասեն ՚ի սիրտս իւրեանց . Այս հայհոյէ ։

4 Եւ տեսեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ . Ընդէ՞ր խորհիք չարիս ՚ի սիրտս ձեր ։

5 Զի՞ է դիւրագոյն ասել՝ Թողին քեզ մեղքդ քո , կամ ասել՝ Յարի՛ և գնա՛ ։

6 Բայց զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ մեղս՝ յայնժամ ասէ անդամալոյծին . Յարի՛ , առ զմահիճս քո՝ և գնա՛ ՚ի տուն քո ։

7 Եւ յարեաւ՝ և գնաց ՚ի տուն իւր ։

8 Եւ տեսեալ ամբոխացն՝ զարհուրեցան՝ և փառաւորեցին զԱստուած՝ որ տուեալ է զիշխանութիւն այսպիսի մարդկան ։

9 Եւ անցեալ Յիսուս անտի՝ ետես մարդ մի՝ որ նստէր ՚ի մաքսատան՝ անուն կոչեցեալ Մատթէոս , և ասէ ցնա . Հետևեա՛ ինձ ։ Եւ յարուցեալ՝ հետևեցաւ նմա ։

10 Եւ եղև նստելոյ նմա ՚ի տան՝ և ահա բազումք ՚ի մաքսաւորաց և ՚ի մեղաւորաց եկեալ՝ նստեան ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա ։

11 Եւ տեսեալ փարիսեցւոցն՝ ասէին ցաշակերտսն նորա . Ընդէ՞ր ընդ մաքսաւորաց և ընդ մեղաւորաց ուտէ վարդապետ ձեր ։

12 Եւ լուեալ Յիսուսի՝ ասէ ցնոսա . Ոչ պիտոյ են առողջացն բժիշկք , այլ հիւանդացն ։

13 Երթայք՝ և ուսարուք զի՞ է այն՝ Ողորմութիւն կամիմ , և ո՛չ պատարագ ։ Զի ո՛չ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս ։

14 Յայնմ ժամու մատեան առ նա աշակերտք Յովհաննու՝ և ասեն . Ընդէ՞ր մեք և փարիսեցիքն բազում պահեմք , և աշակերտք քո ո՛չ պահեն ։

15 Եւ ասէ ցնոսա Յիսուս . Միթէ կարող են որդիք հարսանեացն սգալ՝ մինչդեռ փեսայն ընդ նոսա է ։ Այլ եկեսցեն աւուրք՝ յորում վասն առնուցի ՚ի նոցանէ փեսայն՝ յայնժամ պահեսցեն ։

16 Եւ ոչ ոք կարկատան ՚ի նոր ձորձոյ ՚ի հին հանդերձ դնէ . զի առեալ զլրումն՝ ՚ի հինն՝ պատառէ զնոսա , և չարագոյն պատառումն լինի ։

17 Եւ ոչ դնեն զգինի նոր ՚ի տիկս հինս . զի ապա պատառին տիկքն , և գինին հեղուն , և տիկքն կորնչին . այլ դնեն զգինի նոր ՚ի տիկս նոր , և երկոքինն պահին ։

18 Զայս նոցա խօսելոյ՝ ահա մի ՚ի պետացն մատեան՝ երկրպագանէր նմա՝ և ասէր . Դուստր իմ նոր մեռաւ , այլ եկ՝ և դիր զձեռն քո ՚ի վերայ նորա՝ և կեցցէ ։

19 Եւ յարուցեալ Յիսուս՝ գնաց զհետ նորա՝ և աշակերտք նորա ։

20 Եւ ահա կին մի՝ որ տասն և երկու ամ էր արեամբ հոսանաւ , մատեալ ՚ի թիկունս նորա՝ մերձեցաւ ՚ի վերնոյ հանդերձի նորա ։

21 Զի ասէր ՚ի սիրտս իւր . Եթէ միայն մերձեցայց ՚ի հանդերձ նորա՝ կեցցէ ։

22 Եւ Յիսուս դարձեալ՝ և տեսեալ զնա՝ ասէ . Քաջալերեա՛ , դուստր , հաւատք քո կեցուցին զքեզ ։ Եւ կեցցէ կինն յժամուն յայնմիկ ։

23 Եւ եկեալ Յիսուս ՚ի տունն պետին՝ և տեսեալ զնուագարանսն և զբազմութիւնն աղմկելով՝

(19) Ա՛ղ . ը . 2 : Ա՛ռաք . ի՛ր . 11 , 12 : Ա՛ղաք . գ . 16 : ժգ . 25 : Գործ . ժԲ . 13 : Հռոմ . բ . 13 : Գա՛լ . ա . 23 : (20) Ծն . իգ . 4 : Ա՛ղ . ժ . 51 : Ա՛ռաքեալ . ժգ . 3 : (21) Ա՛ռաք . ի՛ր . 13 : Ա՛ղաք . ժգ . 25 , 27 : Բ Տի՛մ . բ . 19 : (22) Ա՛ռաք . ե . 5 : գ . 6 : Ա՛ռաք . ի՛ր 41 : (23) Ա՛ղաք . գ . 17 , Նաչ ։

զաբանային ժողովուրդքն ընդ վար-
գապետութիւն նորա :
29 Ոչ իրրև իշխանութեամբ ու-
սուցանէր՝ և ոչ զրպես դպիրքն :

նորին զարմանային[25] էին նորա վար-
գապետութեանն վերայ[26] :
29 Քանզի՝ իշխանութիւն ունէր
ոչ պէս էր ուսուցանէ[27] . և ոչ
թէ իրանց կարդացողներին պէս :

ԿԻ · Ը

2 Բռնաւոր բորոտ սրբեցի , 5 Հարիւրապետի աղան , 14 Պետրոսի զքրանէն , 16 Նա ըստ ասելոյ գիւահարսն և հիւանդներ բժշկէն : 19 Ոչ ոք ասէ թէ իրան հետևին ինչպես կա-
րելացնէ երթալ : 23 Հրամի փոթորկին խաղաղեցնուցի : 28 Երկու գիւահարսնքի անհնարին
գիներն կը հանէ , 31 Նա կը թողէ որ երթան խոզերն միջամին մանին :

1 Եւ իբրև էջ ՚ի լեռնէ անտի ,
գնացին զինի նորա փողովուրդք բա-
զումք :
2 Եւ ահա մատուցեալ բորոտ մի
երկիրպագանէր նմա , և ասէր .
Տէր՝ եթէ կամիս՝ կարող ես զիս
սրբել :
3 Եւ զգեալ զձեռն իւր և հասոյց
՚ի նա Յիսուս և ասէ . Կամիմ՝
սրբեաց . և վաղվաղակի սրբեցաւ ՚ի
նմանէ բորոտութիւնն :
4 Եւ ասէ ցնա Յիսուս . Ոչգոյշ
լիր մի ումեք ասիցես . այլ երթ
ցոյց զանձն քո քահանային . և մատո
զպատարագն , զոր հրամայեաց
Մովսէս , ՚ի վկայութիւն նոցա :

5 Եւ մտեալ ՚ի Կափառնաում ,
մատեաւ առ նա հարիւրապետ մի ,
աղաչէր զնա ,
6 Եւ ասէր . Տէր՝ մանուկ իմ
անկեալ կայ ՚ի տան անդամալոյծ՝
չարաչար ածեալ :
7 Ասէ ցնա Յիսուս . Ես երկիւղ և
բժշկեցից զնա :
8 Պատասխանի եւս հարիւրա-
պետն՝ և ասէ . Տէր՝ չիմ բաւա-
կան՝ եթէ ընդ հարկաւ իմով մըտ-
ցես . այլ ասա բանիւ , և բժշկեսցի
մանուկն իմ :

1 Բայց երբոր էն սարդին վեր
եկաւ , շատ ժողովուրդներ նորա ե-
ւևէն գնացին :
2 Եւ ահա մին բորոտ մարդ
մօտ եկաւ՝ երկրպագութիւն արաւ
նորան և ասաց . Տէր՝ թէ որ կա-
մենաս , կարող ես ինձ սրբել :
3 Յիսուս իրան ձեռքն մեկնեց
և նորան հասցորուց և ասաց . Կա-
մենումմ՝ սրբվիր . և շուտով բո-
րոտութիւնն սրբվեցաւ նորանից :
4 Եւ Յիսուս ասաց նորան .
Զգոյշ կաց՝ խոսի մին մարդոյ բան
չասես[2] . միայն թէ գնա՝ քո անձըդ
ցոյց տուր քահանային . և Մովսե-
սից հրամայած պատարագըն[3] ասա՝
որ վկայութիւն լինի նորանց :
5 Եւ երբոր մտաւ Կափառնա-
յում[4] , մին հարիւրապետ եկաւ
նորա մօտ աղաչելուվեր նորան ,
6 Եւ ասելվեր . Տէր՝ իմ աղան
անդամալոյծ վերընկած է տան մէ-
ջըն՝ և ասասիկ տանջվելուվ :
7 Յիսուս նորան ասաց . Ես կը-
գամ և նորան կը բժշկեմ :
8 Հարիւրապետն պատասխան
տուաւ և ասաց . Տէր՝ արժանի չեմ
որ իմ տան ծածկի տակն մտնես ,
բայց միայն խոսքով ասա՝ և իմ
աղան կը բժշկվի :

(24) Մատ . ժգ . 44 : Մարկ . ա . 32 : ղ . 8 : Լուկ . գ . 38 : (25) Հովհ . է . 30 . (1) Մատ . ա . 40 , Լուկ : Լուկ . է . 12 : (2) Մատ . ժ . 30 : Մարկ . է . 44 : (3) Լեւտ . ժգ . 8 , է . 10 : Լուկ . է . 14 : (4) Լուկ . է . 1 , Լուկ : (5) Լուկ . ժգ . 10 . 21 ; (6) Մատ . ժ . 29 .

Digitized by Google

9 Վասնզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինձ զինուորս. ասեմ սմա Երթ՝ և երթայ, և այլում Թէ Եկ՝ և գայ, և ծառայի իմում Թէ Արա զայս՝ և առնէ:

10 Լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային. Ամէն ասեմ ձեզ՝ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք:

11 Այլ ասեմ ձեզ, զի բազումք յարևելից և յարևմտից եկեսցեն և բազմասցին ընդ Աբրահամու՝ և ընդ Իսահակայ՝ և ընդ Յակոբայ յարքայութեան երկնից:

12 Իսկ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն արտաքին. անդ եղցի լալ և կրճել ատամանց:

13 Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. Երթ՝ և որպէս հաւատացեր դու եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ:

14 Իսկ եկեալ Յիսուս ի տունն Պետրոսի, եհաս զի զոքանչ նորա անկեալ դնէր տապացեալ:

15 Այլաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշտէր զնոսա:

16 Իրրև եղև երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան պայման բանիւ. և զամենայն հիւանդսն բժշկեաց:

17 Որպէս լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. Նա զհիւանդութիւնսն մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ:

18 Տեսեալ Յիսուսի ժողովուրդս

9 Ինչուան՝ ես էլ մին իշխանութեան տակ լինող մարդ եմ. իմ ձեռս տակն զինուորներ ունիմ և առումեմ այս՝ Թէ Գնա՛ և գնում է. և մէկէլին Թէ Եկ՝ և գալիս է. և իմ ծառայիս՝ Թէ Այս բանը արա՛ և անում է:

10 Երբոր Յիսուս լսեց, զարմացաւ և ասաց նորանց որ իրան եւ տևէն գնում էին. Ճշմարիտն ասում եմ ձեզ, որ Իսրայէլի մէջն էլ իմ կին մին ժամանակ էսպէսի հաւատք չը գտի:

11 Այլ ասումեմ ձեզ, որ շատ մարդիք արևելքից և արևմտքից կը գան, և Աբրահամի և Իսահակի և Յակոբի հետ երկնքի արքայութեանումն կը նստին:

12 Եւ արքայութեան որդիքն դուրս կէլլին դրսի խաւարն, որ էն տեղ լաց և ատամների կրճտելն կը լինի:

13 Եւ Յիսուս ասաց հարիւրապետին. Գնա՛ և ինչպէս որ հաւատացիր՝ թող էնպէս լինի քեզ. և նորա տղան էն օրումն առողջացաւ:

14 Եւ երբոր Յիսուս եկաւ Պետրոսի տունն, տեսաւ որ նորա զոքանչն տեռնի մէջն վերընկած էր:

15 Ձեռքին դպնեց, և տենդն թողեց նորան. վերկացաւ և ծառայում էր անում նորանց:

16 Երբոր իրիկուն էլաւ շատ դիւահարներ բերին նորան մօտ՝ և (մէնակ) խօսքով հանեց դևերն, և ամէն հիւանդներըն բժշկեց:

17 Որ կատարվի Եսայի մարգարէի ձեռով ասված բանն. Թէ Նա մեր հիւանդութիւններըն վերացրուց՝ և մեր ցաւերըն վերկալաւ:

18 Յիսուս երբոր շատ ժողո-

(1) Նահում. ժբ. 3: Նոյ. բ. 2, 3: ժա. 10: Մատ. ա. 11: Ղուկ. ժգ. 29, գլուխ. ժ. 45: ժա. 18: ժգ. 26: Հռոմ. ժբ. 9, Եփես. գ. 6: (3) Մատթ. ժա. 43: (9) ժգ. 43. 50: ԺԲ. 13: ԽԴ. 51: ԺԲ. 30: Ղուկ. ժգ. 28: ԲՊետ. բ. 17: Յոհան. 13: (10) Մատթ. ա. 20. 30, 31: Ղուկ. գ. 38, 39: (11) ա Պետրոս. ԺԲ. 5: (12) Մատթ. ա. 22, Հռոմ. Ղուկ. գ. 10, 14: (13) Լուսա. ծգ. 6 ա Պետր. բ. 24:

Digitized by Google

բազումս զհիւրս, հրամայեաց երթալ յայնկոյս :

19 Եւ մատուցեալ դպիր մի ասէ ցնա. Վարդապետ՝ եկից և ես զկնի քո յոր վայր և երթիցես :

20 Ասէ ցնա Յիսուս. Աղուեսս ծակս ունին, և թռչունք երկնից բոյնք, այլ Որդի մարդոյ ոչ ունի ուր դիցէ զգլուխ իւր :

21 Եւ մի ոմն յաշակերտացն նորա ասէ ցնա. Տէր՝ տուր ինձ հրամանն՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ :

22 Ասէ ցնա Յիսուս. Ե՛կ զկնի իմ, և թո՛ղ մեռելոցն թաղել զմեռեալս իւրեանց :

23 Եւ իբրև եմուտ ի նաւն, գնացին զկնի նորա աշակերտքն նորա :

24 Եւ ահա շարժումն մեծ եղև ի ծովուն՝ մինչ նաւին ծածկել յալեացս անտի, և ինքն ննջէր :

25 Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա և ասեն. Տէր՝ փրկեա՛ զմեզ՝ զի կորնչիմք :

26 Եւ ասէ ցնոսա. Ընդէր վատասիրտք էք ոչնչաւորք. յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն, և եղև խաղաղութիւն մեծ :

27 Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին. Որպիսի՞ ոք իցէ սա՝ զի և հողմք և ծով լսելականդիման սմա :

28 Եւ իբրև անց յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ :

վուրդներ տեսաւ իրան չորս կողմէն, հրաման առաւ էն կողմն գնալ :

19 Եւ մին կարդացող մօտ եկաւ և ըսաւ. Վարդապե՛տ, ես էլ քո եւևէդ կը գամ որ տեղ որ գնաս[14] :

20 Եւ Յիսուս ըսաւ. Աղուեսներն կենալու փոսեր ունին, և երկնքի թռչուններն բուն. բայց Որդին մարդոյ մին տեղ չունի՝ որ իրան գլուխն դնէ :

21 Եւ ըսաւ աշակերտներէն մինն ըսաց. Տէր՝ ինձ հրամայեա՛ որ գնամ առաջ իմ հայրըն թաղեմ :

22 Յիսուս ըսաւ. Ի՛մ եւևէս եկ, և թո՛ղ մեռելներն որ իրանց մեռելներըն թաղեն :

23 Եւ երբոր մտաւ նաւն, ըսաւ աշակերտներն ըսաւ եւևէն գնացին :

24 Եւ ահա մեծ ալեկոծութիւն է՛ղաւ ծովի մէջն, մինչև որ նաւն էլ ծածկվուէր ալիքներէն. և ինքըն քնած էր[17] :

25 Եւ աշակերտներն մօտ եկին՝ ըսաւ զարթնացուին և ըսացին. Տէր՝ մեզ փրկէ՛, որ կորչումենք :

26 Եւ ըսաւ ըսաց. Ինչո՞ւ վախկոտ էք պակասահաւատներ : Ան ժամանակն վերկացաւ՝ քամիներին և ծովին սաստեց[18], և մեծ խաղաղութիւն էղաւ :

27 Եւ մարդիկն զարմացան՝ ըսաւին. Ա՛ս ի՞նչպէս մարդ է՝ որ քամիներն և ծովն էլ հնազանդվումեն ասոնք :

28 Եւ երբոր էն կողմն անցին Գերգեսացոց երկիրն[19], երկու դիւահար մարդ պատահեցին նորան, գերեզմաններիցն դուրս եկած՝ որ էնքան շատ էին, մինչև որ էնտեղ չէր, թէ մին մարդ էն ճանապարհովն անցկենայ :

(14) Գոյ · բ · 57, 58 : (15) Գոյ · 59, 60 : (16) ա Թագ · ժբ · 26 : (17) Մարկ · գ · 37, հատ : Գոյ · ը · 23, հատ : (18) Սաղ · կե · 7 : ձբ · 9 : ճե · 29 · (19) Մարկ · ե · 1, հատ : Գոյ · ը · 26, հատ ·

Digitized by Google

29 Եւ ահա աղաղակեցին և ասեն. Ո՞վ կայ մեր և քո Յիսուս Որդի Աստուծոյ, եկիր տաւրաժամ առնջել զմեզ:
30 Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից բազում:
31 Եւ դևքն աղաչէին զնա և ասէին. Եթէ հանես զմեզ աստի, հրամայեա մեզ երթալ յերամակ խոզից:
32 Եւ ասէ ցնոսա՝ Երթայք. և նոքա ելեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ի ծով, և մեռան ի ջուրսն:
33 Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն, և զերս դիւահարացն:
34 Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իւրև տեսին զնա՝ աղաչեցին, զի գնասցէ ի սահմանաց նոցա:

29 Եւ ահա աղաղակեցին և ասացին. Յիսուս Որդի Աստուծոյ քեզ ինչ բան կայ մեզ հետ, որ եկեր ես անժամանակ մեզ առնջել:
30 Եւ նորանցից հեռու մի խառն երամակ (ախոռ) կար որ արածուէր:
31 Եւ դևերն աղաչեցին նորան և ասեն, Եթէ որ մեզ ես տեղից հանես, հրամայեա մեզ որ գնանք էն խոզերի երամակն (ախոռ):
32 Եւ նորանց ասաց՝ Կնացէք. և նորանք դուրս եկին գնացին խոզերի երամակն. և խոզերի ամէն երամակն էն բարձր տեղից վազեց ծովի մէջն, և ջրերի միջումն մեռան:
33 Եւ խոզարածներն փախան, և գնացին քաղաքն. պատմեցին ամէնն, և դիւահարներուն բաներըն էլ:
34 Եւ ահա ամէն քաղաքն դուրս եկաւ Յիսուսի առաջն. երբոր նորան տեսին՝ աղաչեցին որ գնայ իրանց երկրից[20]:

ԿԻ. Ա

2 Ուրիշների անդամալոյծ բժշկելն, 9 Մատթէոսը մաքսաւորութենից կանչելն, 10 Մաքսաւորներին և մեղաւորներին հետ ուտելն: 14 Իրան աշակերտներին պատ չի պահելն պաշտպանում: 20 Տնաւաճ կինն կը բժշկէ: 23 Հայրոսի աղջկան մեռելներից կը յարուցանէ: 27 Երկու կոյր մարդկանց աչքերըն կը բանայ: 32 Համր դիւահար մին մարդ կը բժշկէ: 36 Նէ ժողովուրդին կը խղճայ, որ ոչխարների պէս հովիւ չունին:

1 Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս, և եկն ի քաղաք իւր:
2 Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Քաջալերեա՛, որդեակ, քեզ մեղք քո:
3 Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա:

1 Եւ նաւն մտաւ անցկացաւ էն կողմն, և եկաւ իրան քաղաքն[1]:
2 Եւ ահա մին անդամալոյծ[2] (մարդ) բերին նորա մօտ, որ մահճի (փէօշէկի) մէջն դրած էր. և Յիսուս նորանց հաւատքն[3] տեսնելով՝ անդամալուծին ասաց. Վո՛ մեղքերն թողուած լինին քեզ:
3 Եւ ահա կարդացողներից մին քահանի իրանց մտքումն ասացին. Թէ՛ հայհոյումէ դա:

(20) ԲՕրին. ե. 25: ա՛Թագ. ժէ. 18: Ա՛ռաք. ը. 8: Գործ. ժԶ. 39: (1) Մատթ. գ. 13: (2) Մարկ. բ. 3: Ա՛ռաք. ե. 18: (3) Մատթ. Զ. 10:

Digitized by Google

4 Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. Ընդէր խորհիք դուք չարիս ՚ի սիրտս ձեր:

5 Զի՞նչ դիւրին է. ասել՝ Ներեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել՝ Արի և շրջեաց:

6 Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի Որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. յայնժամ՝ ասէ ցանգամալոյծն. Արի՝ առ զմահիճս քո՝ և երթ ՚ի տուն քո:

7 Եւ յարուցեալ գնաց ՚ի տուն իւր:

8 Իբրև տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի իշխանութեան մարդկան:

9 Եւ անցեալ ընդ այն Յիսուս՝ ետես զայր մի, զի նստէր ՚ի մաքսաւորութեան՝ Աստիեոս անուն. և ասէ ցնա՝ Ե՛կ զկնի իմ. և յարուցեալ գնաց զկնի նորա:

10 Եւ եղև իբրև բազմեալ էր նա ՚ի տան, և ահա բազում՝ մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի՝ և ընդ աշակերտս նորա:

11 Իբրև տեսին փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. Ընդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր:

12 Իսկ Յիսուս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա. Ոչ է պիտոյ բժիշկ կարողաց՝ այլ հիւանդաց:

13 Երթայք՝ ուսարուք զի՛նչ է. Ողորմութիւն կամիմ, և ո՛չ զզոհ.

4 Յիսուս նորանց մտածմունքն իմացաւ[4] և ասաց նորանց. Ի՞նչու էք չար բան մտածում դուք ձեր սրտերումը:

5 Որն է հեշտ, ասել՝ թէ Քո մեղքերդ թողված լինին քեզ, թէ ասել՝ Ոտքի կաց և մեն ևկ:

6 Բայց որ դուք իմանաք՝ թէ Որդին մարդոյ իշխանութիւն ունի երկրիս վրայ մեղաց թողութիւն տալոյ. էն ժամանակն անդամալուծին ասաց. Ոտքի կաց քո մահիճդ (փէշկէտը) վերառ և գնա քո տուն ընդ:

7 Եւ նա վերկացաւ և գնաց իրան տունն:

8 Երբոր ժողովուրդներն տեսին, զարմացան՝ և Աստուծոյ փառք էին տալիս, որ էնպիսի իշխանութիւն է տուել մարդկանց:

9 Եւ Յիսուս երբոր էն տեղից առաջ գնաց, տեսաւ մին Աստիեոս անուն մարդ, որ նստած մաքսաւորութիւն (կիմրուկնէն) էր անում[5]. և Նորան ասաց. Իմ եաւէս ևկ. և նա վերկացաւ գնաց Նորա ետևէն:

10 Եւ էլաւ երբոր Նորա տան մէջն սեղանի վերայ նստած էր, և ահա ուրիշ էլ շատ մաքսաւորներ (կիմրուկնէնը) և մեղաւորներ ևկել էին. և Յիսուսի և Նորա աշակերտների հետ նստած էին[6]:

11 Երբոր փարիսեցիքն տեսին, Նորա աշակերտներին ասացին. Ի՞նչու ձեր վարդապետն մաքսաւորներին[7] և մեղաւորներին[8] հետ (հաց) է ուտում:

12 Բայց Յիսուս երբոր լսեց, Նորանց ասաց. Կարօղներին բժիշկ պէտք չէ, այլ հիւանդներին:

13 Գնացէք սովորեցէք՝ թէ ի՞նչ է (որ կասվի՝) Ողորմութիւն եմ կա-

(1) Մատ. ՚ա. 2: Մարկ. ժբ. 25: Մարթ. ժբ. 15: Գոյ. ե. 22: ը. 8: ք. 47: ժա. 17: (5) Մարթ. բ. 14: Գոյ. ե. 27: (6) Մարթ. բ. 15, Նայե՛ Գոյ. ե. 29, Նայե՛: (7) Մարթ. ժա. 19: Գոյ. ե. 30: ժե. 2: (8) Գոյ. բ. 15:

Digitized by Google

զի ոչ եկի կոչել զարդարս՝ այլ ըզմեղաւորս ։

14 Յայնժամ մատեան առ նա աշակերտքն Յովհաննու՝ և ասեն . Ընդէր մեք և փարիսեցիքն պահեմք յաճախ , և քո աշակերտքդ ոչ պահեն ։

15 Ցո՛ւսց ցնոսա Յիսուս . Միթէ մարթ է՞ն իցէ մանկանց առաւգաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ . այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն , և ապա պահեսցեն ։

16 Ոչ ոք արկանէ կտաւեր ան թափ ի վերայ հնացեալ ձորձոյ . զի առնու ելանէ զլրումիւնն նորա ի հանդերձէն , և ևս չար պատառումն լինի ։

17 Եւ ոչ արկանեն գինի նոր ի սիկս հինս . ապա թէ ոչ՝ սիկքն պատառին՝ և գինին հեղու , և սիկքն կորնչին . այլ արկանեն գինի նոր ի սիկս նորս , և երկոքին պահին ։

18 Միդ՝ինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա , ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր . Դուստրն իմ արդ ևս վախճանեցաւ . այլ եկեալ դիցես զձեռն քո ի վերայ նորա՝ և կեցցէ ։

19 Յարեաւ Յիսուս՝ և գնաց զկնի նորա աշակերտօքն հանդերձ ։

20 Եւ ահա կին մի տառապեալ երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա ։

21 Ասէր ի մտի իւրում . Եթէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ ։

22 Դարձեալ Յիսուս իբրև դարձաւ և եհաս զնա՝ ասէ . Դո՛ստեր , ջուր մեծ ընդունուն՝ և ոչ մատաղ . ինչուք՝ ես չեմ եկել որդւոցն կանչել , այլ մեղաւորսն[10] ։

14 Յն ժամանակն Յովհաննէսի աշակերտունքն նորա մօտ եկին և ասացին . Ընդէ՞ր մեք և փարիսեցիքն շատ պաս ենք պահում[11] , և քո աշակերտունդ չեն պահում ։

15 Յիսուս նորանց ասաց . Միթէ կարելի՞ է որ հարսանիքի ազգքն[12] սուգ անեն քանի որ փեսան նորանց հետ է . բայց օրեր կը գան՝ որ փեսան նորանցից վերկառնվի , և ընդ նոսին եւս կը պահեն[13] ։

16 Ոչ ով չը մաշված կարկատան կաւոր հին շորի վերայ չի ձգիլ . ինչուք՝ նա էն հին շորի ուժգն էլ կառնէ դուրս կը գնայ՝ և նորա պատռվածքն էլ աւելի չար կը լինի ։

17 Եւ նոր գինին հին սրկերի մէջ չեն ածիլ . ապա թէ ոչ՝ սրկերն կը պատռվին՝ և գինին կը թափվի , և սրկերն էլ կը կորչին . բայց նոր գինին նոր սրկերի մէջ կածեն , և երկուքն էլ կը պահվին ։

18 Վասքանի որ նա էս խօսում էր նորանց հետ , ահա մին իշխան[14] եկաւ նորան երկրպագութիւն արաւ՝ և ասաց . Իմ աղջիկս հենց հիմիկ մեռնելոյ վերայ է . միայն թէ դու քո ձեռքդ նորա վերայ դիր՝ և կապրի ։

19 Յիսուս վերկացաւ և աշակերտներովն գնաց նորա եաւէն ։

20 Եւ ահա մին կին[15] , որ տասներկու տարի միշտ արիւն թափելով ցաւագար էր , մօտ եկաւ՝ և եաւիջն նորա շորի ծայրին դիպաւ ։

21 Ինչուք՝ իրան մտքումն ասում էր՝ թէ Միդ՝էնակ նորա շորին դիպչիմ , կը փրկվիմ ։

22 Դայց երբոր Յիսուս յետ դարձաւ և նորան տեսաւ , ասաց . Դուստր

(9) Ամբ . գ . 6 ։ Մրկ . գ . 6 , 7 , 8 ։ Մատ . ժբ . 7 ։ (10) ա Տիմ . ա . 15 ։ (11) Մրկ . բ . 18 , Ղուկ . Ե . 33 , Յայտ . ժբ . 12 ։ (12) Յովհ . գ . 29 ։ (13) Դատ . ժգ . 3 , 8 ։ ժգ . 23 ։ ա Պետր . Ե . 5 ։ (14) Մրկ . Ե . 22 . Ղուկ . ը . 41 , Յայտ . (15) Մատ . Ե . 25 ։ Ղուկ . ը . 43 ։

Digitized by Google

դուստր՝ հաւատաք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ի ժամէն յայնմանէ :

23 Իբրև եկն Յիսուս ի տուն իշխանին, և ետես զփողարան և ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. 'Ի բաց գնացէք :

24 Զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ :

25 Եւ ծաղր առնէին զնա. և իբրև եւ ամբոխն ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն :

26 Եւ եւ համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն :

27 Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զՀնա եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին՝ և ասէին, Ո՛ղորմեա մեզ Որդի Դաւթի :

28 Եւ իբրև եկն ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. Հաւատայք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ Այո՛ Տէր :

29 Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ. Ի սա հաւատոց ձերոց եղիցի ձեզ :

30 Եւ բացան աչք նոցա. և սպառնաց նոցա Յիսուս՝ և ասէ. Օգնիշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ :

31 Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն :

32 Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար :

33 Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն և ասեն. Թէ եւ ոչ երբեք երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի :

կաց ով դուստր՝ քո հաւատքդ քեզ ապրեցուց[16]. և հնոյ էն ժամէն (սահմանն) կինն ազատվեցաւ :

23 Երբոր Յիսուս եկաւ իշխանի տունն[17], տեսաւ փողփրչօղներըն[18] և շատ ամբոխն (խուլէ), նորանց ասաց. Հեռու գնացէք[19] :

24 Ինչուր՝ էդ աղջիկդ մեռած չէ, բայց քնած է :

25 Եւ ծաղր էին անում նորան. և երբոր ամբոխն (խուլէն) դուրս էլաւ, ներս մտաւ՝ նրա ձեռիցն բռնեց. և աղջիկն վերկացաւ :

26 Եւ էս համբաւս դուրս եկաւ էն ամէն երկիրն :

27 Եւ ինչ ժամանակ որ Յիսուս էն տեղիցն անց էր կենում, երկու կոյր աղաղակումէին նորա ետևէն՝ և ասում. Ողորմի Դաւթի[20] մեզ ողորմած :

28 Եւ երբոր տունն մտաւ, կուրերն նորա մօտ եկին. և Յիսուս նորանց ասաց. Հաւատումէք թէ կարօղ եմ էդ անել ձեզ. և նորան ասացին. Այո՛ Տէր :

29 Յն ժամանակն նորանց աչքերին մօտեցաւ՝ և ասաց. Ձեր հաւատալուն պէս թող լինի ձեզ :

30 Եւ նորանց աչքերն բացվան. և Յիսուս նորանց սաստեց՝ և ասաց. Օգնիշ կացէք[21] որ մին մարդ չիմանայ :

31 Եւ նորանք որ դուրս գնացին, էն ամէն երկրումն նորա անունըն յայտնի արին[22] :

32 Եւ երբոր նորանք դուրս էին գնում, ահա մին համր[23] (լռկի) դիւահար մարդ բերին նորա մօտ :

33 Եւ երբոր դևն դուրս եկաւ, համրն (լռկի) (մարդն) խօսեց. և ժողովուրդներն զարմացան և ասացին. Իսկի մին ժամանակ Իսրայէլի մէջն էսպիսի բան չէ երևեցաւ :

(16) Լուկ. է. 50 : ը. 48 : ժէ. 19 : ժը. 42 : (17) Մատ. է. 38 : Լուկ. ը. 51 : (18) բ Մատ. լը. 35 : (19) Յովի. ի. 10 : (20) Մատ. ժե. 22 : ի. 30, 31 : Մատ. ժ. 47, 48 : Լուկ. ժը. 38, 39 : (21) Մատ. ը. 4 : ժը. 16 : ժէ. 9 : Լուկ. է. 14 : (22) Մատ. է. 26 : (23) Մատ. ժը. 22 : Լուկ. ժա. 14 :

Digitized by Google

34 Եւ՝ փարիսեցիքն ասէին, Թէ
Իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս :

35 Եւ շրջէր Յիսուս ընդ ամ-
նայն քաղաքս և ընդ գիւղս . ու-
սուցանէր ի ժողովուրդս նոցա , և
քարոզէր զաւետարանն արքայու-
թեան . և բժշկէր զամենայն ախտս
և զամենայն հիւանդութիւնս ի ժո-
ղովրդեանն :

36 Եւ տեսեալ զժողովուրդն՝ գը-
թացաւ ի նոսա . զի էին աշխատ-
եալք և ցրուեալք իբրև զոչխարս ,
որոց ոչ իցէ հովիւ :

37 Յայնժամ ասէ ցաշակերտան
իւր . Հունձք բազում են՝ և մշակք
սակաւ :

38 Աղաչեցէք զՏէր հնձոց՝
զի հանցէ մշակս ի հունձս իւր :

34 Այլ փարիսեցիքն ասէին .
Թէ Ողա դևերի իշխանովն[24] է հա-
նում դևերն :

35 Եւ Յիսուս ամէն քաղաքներն
և գիւղերն մաներ գալիս[25] . Նո-
րանց ժողովարանների մէջն սովոր-
ցնում էր . և արքայութեան աւետա-
րանըն քարոզում էր . և ժողովրդի
միջի ամէն ցաւերն և ամէն հիւան-
դութիւններըն բժշկում էր[26] :

36 Եւ ժողովուրդներն որ տե-
սան՝ խեղճն եկան նորանց վերայ[27] .
որ աշխատած և ցրված էին , ինչ-
պէս ոչխարներ որ հովիւ (չոպան)
չունին[28] :

37 Յն ժամանակն իրան աշա-
կերտներին ասաց . Հունձքն շատ
են՝ և մշակներն քիչ[29] :

38 Ուրեմն աղաչեցէք Տիրոջն[30] որ մշակներ ուղարկէ իրան
հունձն :

ԻԱ · Ի

1 Կրկոտաս իրան տասներկու աշակերտներին իշխանութիւն կը տայ որ նորանք հանեն և նորանք կուղարկէ : 5 Նորանց պատուէր կը տայ , և կը տովորցնէ : 16 Հալածանքներ-
ին համար նորանց սիրտ կը տայ : 40 Եւ իրանք ընդունողներին վարձք խոստ կը տայ :

1 Եւ կոչեցեալ առ ինքն զեր-
կոտասանեակսն աշակերտան իւր , ետ
նոցա իշխանութիւն այսոց պղծոց
հանել զնոսա , և բժշկել զամենայն
ցաւս և զամենայն հիւանդութիւնս :

2 Եւ առաքելոցն երկոտասանից
էին անունք այսոքիկ . առաջին
Սիմոն՝ անուանեալն Պետրոս , և
Անդրէաս եղբայր նորա :

3 Յակոբոս Զեբեդեայ , և Յով-
հաննէս եղբայր նորա . Փիլիպպոս ,
և Բարթողիմէոս . Թովմաս , և
Մատթէոս մաքսաւոր . Յակոբոս

1 Եւ իրան տասներկու աշա-
կերտներին իրան մօտ կանչեց[1] , և
նորանց իշխանութիւն տուաւ ամէն
պիղծ դևերին վերայ , որ նորանց
հանեն . և ամէն ցաւերըն և ամէն
հիւանդութիւններըն բժշկեն :

2 Եւ էն տասներկու առաքելոց
անուններն էս էին . առաջինն Սի-
մոն՝ Պետրոս կոչվածն , և նորա
եղբայր Անդրէասն :

3 Յակոբոս Զեբեդեանն՝ և նո-
րա եղբայր Յոհաննէսն . Փիլիպպոս
և Բարթողիմէոս . Թոմասն և Մատ-
թէոս մաքսաւորն (Լեվի-Մատթէն) . Յա-

(24) Մատթ . ժբ . 24 : Մարկ . գ . 22 : Ղուկ . ժա . 15 : (25) Մարկ . զ . 6 : Ղուկ . ժգ . 22 : (26) Մատթ . դ . 23 : (27) Մարկ . զ . 34 : (28) Համ . իե . 17 : գ Թագ . իբ . 17 : Եզեկ . ե . 5 : Զաք . ժ . 2 : (29) Ղուկ . ժ . 2 . Յովհ . դ . 35 : (30) բ Թես . գ . 1 :
(1) Մարկ . գ . 13 , 14 : զ . 7 : Ղուկ . զ . 13 : թ . 1 : (2) Գործ . ա . 13 :

Digitized by Google

Ղևեայ , և Ղեբեռն՝ ու անուանեցաւ Ղադէոս ։

4 Սիմէոնի Կանանացի . և Յուդա Իսկարիովացի՝ որ և մատնեցաւ զնա ։

5 Զոյսս եւկոտասանեսին առաքեաց Յիսուս , պատուիրեաց նոցա՝ և ասէ . Ի ճանապարհ Հեթանոսաց մի՛ երթայցէք , և ի քաղաք Սամարացւոց մի՛ մտանիցէք ։

6 Այլ երթայք առաւել առ ոչխարան կորուսեալս տանն Իսրայէլի ։

7 Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասացէք , թէ Մերձեալ է արքայութիւն երկնից ։

8 Զհիւանդս բժշկեցէք , զբորոտս սրբեցէք , զդևս հանէք , ձրի առիք՝ և ձրի տուք ։

9 Մի՛ տաճնայք ոսկի՝ և մի՛ արծաթ՝ և մի՛ պղինձ ի գօտիս ձեր ։
10 Մի՛ պարկ ի ճանապարհ , և ի՛ երկուս հանդերձս , մի՛ կօշիկս , մի՛ ցուպ · զի արժանի է մշակն կերակրոյ իւրոյ ։

11 Որ քաղաք մտանիցէք կամ ի գեօղ , հարցանիցէք՝ թէ ո՞ է ի նմա արժանի . և անդ լինիջիք՝ մինչև ելանիցէք անտի ։

12 Եւ իբրև մտանիցէք ի տունն , ողջոյն ասջիք նմա՝ և ասասջիք . Ողջոյն տանս այսմիկ ։

13 Եթէ իցէ տունն արժանի , եկեսցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա . ապա թէ ոչ իցէ արժանի , ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի ։

14 Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝ և ոչ լուիցէ բանից ձերոց , իբրև ելանիցէք ի տանէն՝ կամ ի քաղաքէն

կոտոս Ղեբեռն , և Ղեբեռն որ Թադէոս կոչվեցաւ ։

4 Սիմոն Կանանացին[3] և Յուդա Իսկարիովտացին[4] նա , որ մատնեց նորան ։

5 Զսա առաքեր կուսին Յիսուս ուղարկեց , նորանց պատուէր տուաւ և ասաց . Հեթանոսների ճանապարհն[5] չը գնաք . և Սամարացոց քաղաքն[6] չը մտնէք ։

6 Այլ աւելի գնացէք Իսրայէլի տան[7] կորած ոչխարներին մօտ[8] ։

7 Եւ երբոր կը գնաք[9] , քարոզեցէք և ասացէք . Երկնքի արքայութիւնն մօտացել է[10] ։

8 Հիւանդներն բժշկեցէք . բոլոռաներն սրբեցէք . դևերն հանեցէք . ձրի (Ֆոֆա) առիլէք[11] ձրի (Ֆոֆա) տուէք ։

9 Ոսկի չէ՛ առնէք ոչ ոսկի՝ և ոչ արծաթ[12] , և ոչ պղնձէ փող ձեր գօտիներումն[13] ։

10 Ոչ ճանապարհի պարկ , և ոչ երկու շոր՝ ոչ կօշիկ՝ ոչ գաւազան . իւչուոր՝ մշակն իրան կերակրին արժանի է[14] ։

11 Որ քաղաք՝ կամ (որ) գիւղ որ մտնէք[15] , հարցրէք՝ թէ նորանում ով է արժանի , և էնտեղ կացէք՝ մինչև որ էն տեղից դուրս գնաք ։

12 Եւ երբոր տունըն կը մտնէք , ողջոյն տուէք նորան և ասացէք . Ողջոյն էս տանս ։

13 Թէ որ էն տունն արժանի է[16] , ձեր ողջոյնն նորա վերայ կը գայ . բայց թէ որ արժանի չէ՝ ձեր ողջոյնն յետ կը դառնայ դէպի ձեզ[17] ։

14 Եւ ով որ ձեզ չէ՛ ընդունի[18] և ձեր խօսքին ականջ չէ՛ դնէ , երը-

(1) Ղուկ . ը . 15 ։ Պօղ . ա . 13 ։ (4) Յովհ . ժգ . 26 ։ (5) Մատթ . դ , 15 ։ (6) Բ Թագ . ժէ . 24 ։ Յովհ . գ . 9 . 20 ։ (7) Մատթ . ժե . 24 ։ Գործ . ժգ . 46 ։ (8) Նաւ . ծգ . 8 ։ Երեմ . ե . 6 . 17 ։ Եզեկ . ԼԴ . 5 . 16 ։ ա Պետ . բ . 25 ։ (9) Ղուկ . թ . 2 ։ (10) Մատթ . գ . 2 ։ դ . 17 ։ Ղուկ . ժ . 9 ։ (11) Գործ . ը . 18 . 20 ։ (12) ա Թագ . թ . 7 ։ Մատթ . ղ . 8 ։ Ղուկ . թ . 3 ։ ժ . 4 ։ բր . 35 ։ (13) Մատթ . ղ . 8 ։ (14) Ղուկ . ժ . 7 ։ ա Կորն . թ . 7 ։ Լեւտ . ա Տիմ . ե . 18 (15) Ղուկ . ժ . 8 ։ (16) Ղուկ . ժ . 5 ։ (17) Սաղմ . կե . 13 ։ (18) Մատթ . ղ . 11 ։ Ղուկ . թ . 5 ։ ժ . 10 ։ 11 ։

Digitized by Google

յայնմանէ , թօթափեցէք զփոշին յոտից ձերոց :

15 Ա՛մէն ասեմ ձեզ՝ Ի՛սրագոյն լիցի երկրին Սոդոմացւոց և Գոմորացւոց յաւուրն դատաստանի , քան քաղաքին այնմիկ :

16 Ի՛հաւասիկ ես առաքեմ զձեզ իբրև զոչխարս ՚ի մէջ գայլոց . եղերուք այսուհետև խորագէտք իբրև զօձս , և միամիտք իբրև զաղաւնիս :

17 Զգո՛յշ լինիջիք ՚ի մարդկանէ . զի մատնեսցեն զձեզ յատեանս . և ՚ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն զձեզ :

18 Եւ առաջի դատաւորաց և թագաւորաց տանիցին զձեզ վասն իմ ՚ի վկայութիւն նոցա և հեթանոսաց :

19 Ի՛սկ յորժամ մատնեսցեն զձեզ , մի՛ հոգայցէք՝ թէ ո՛րպէս կամ զի՞նչ խօսիցիք . զի տացի ձեզ ՚ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք :

20 Զի՛ ո՛չ եթէ դուք իցէք՝ որ խօսիցիք , այլ հոգին հօր ձերոյ՝ որ խօսիցի ՚ի ձեզ :

21 Ա՛մանեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ , և հայր զորդի . և յարիցեն որդիք ՚ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա :

22 Եւ եղիջիքատեցեալք յամենեցուն վասն անուան իմոյ . իսկ որ համբերեսցէ իսպառ , նա կեցցէ :

23 Եւ յորժամ հալածեսցեն զձեզ ՚ի քաղաքիս յայսմիկ՝ փախեր են յայնի կամ են քաղաքին դուրս կը գնաք , ձեր ականերիցն փոշին թափ առէք[19] :

15 Ա՛շմարիտն ասեմ ձեզ , որ Սոդոմացոց և Գոմորացոց երկրին համար աւելի հեշտ կը լինի[20] դատաստանի օրուանն քան էն քաղաքին :

16 Ի՛նչա՛ես ուղարկումեմ ձեզ ինչպէս ոչխարներ գայլերի մէջ[21] . սրամտամբ խորագէտ էլէք[22]՝ ինչպէս օձերն , և պա՛մ՛ա[23]՝ ինչպէս աղաւնիքն :

17 Զգո՛յշ կացէք մարդկանցից . ինչուր ձեզ դատաստան կը քաշեն[24] և իրանց ժողովարանների մէջն[25] կը տանջեն ձեզ :

18 Եւ դատաւորների և թագաւորների առջեւ[26] կը տանեն ձեզ իմ պատճառով՝ որ (ինձ համար) նորանց և հեթանոսներին վկայութիւն լինի :

19 Ի՛սկ երբոր կը մատնեն ձեզ , հոգա մի՛ անէք՝ թէ ի՞նչպէս կամ ի՞նչ պիտի խօսիք[27] . ինչուր՝ էնդ էն ժամուն (առհասա՛ն) կը տըրուի ձեզ ինչ որ պիտի խօսիք[28] :

20 Պատճառը չէ՛ թէ դուք էք որ կը խօսիք[29] , քանի ձեր հո՛ր հո՛գին է որ ձեզանում կը խօսի :

21 Եղբայրն եղբօրն մահու կը մատնէ[30] , և հայրն որդին . և որդիքն վեր կը կենան իրանց հարանց վերայ՝ և նորանց կը սպանեն :

22 Եւ ամէնին ատելի կը լինիք[31] իմ անունիս համար . քանի ով որ կը համբերէ[32] մինչև վերջն՝ նա կապրի :

23 Եւ երբոր էս քաղաքումն հալածեն ձեզ , փախէք ուրիշն[33] . և

(19) Նեհ. ե · 13 : Ծնոթ · ժգ · 51 : ժբ · 6 : (20) Մատթ · ժա · 23 · 24 : (21) Ղուկ · ժ : 3 : (22) Հռովմ · ժգ · 19 : Եփես · ե · 15 : (23) ա Պետր · ժգ · 39 : Փիլ · բ · 15 : (24) Մատթ · իգ · 9 : Մատթ · ժգ · 9 : Ղուկ · ժբ · 11 : իա · 12 : (25) Գործ · ե · 40 : (26) Գործ · ժբ · 1 : իգ · 16 : իե · 7 · 23 : բ Տիմ · գ · 16 : (27) Մատթ · ժգ · 11, 12, 13 : Ղուկ · ժբ · 11 : իա · 14, 15 : (28) Նէտ · գ · 13 : Նէհ · ա · 7 : (29) բ Կռնթ · իգ · 3 : Գործ · գ · 9 : ը · 10 : բ Տիմ · գ · 17 : (30) Մի · ե · 6 : Վայր · 35 , 36 : Ղուկ · իա · 16 : (31) Ղուկ · իա · 17 : (32) Դան · ժբ · 12 , 13 : Մատթ · իգ · 13 : Մատթ · ժգ · 13 : (33) Մատթ · բ · 13 : գ · 12 : ժբ · 15 : Գործ · ը · 1 : բ · 25 : ժգ · 6 :

Digitized by Google

չէք յայլ · և եթէ յայնմանէ հա-
լածիցեն զձեզ՝ փախիջէք ի միւս ։
Ամէն ասեմ ձեզ՝ ոչ սպառեսջիք
զքաղաքս Իսրայէլի՝ մինչև եկեսցէ
Որդի մարդոյ ։

24 Ոչ է աշակերտ առաւել քան
վարդապետ , և ոչ ծառայ քան
տէր իւր ։

25 Ընդ իցէ աշակերտին՝ եթէ
եղիցի իբրև վարդապետ իւր , և
ծառային՝ իբրև տէր իւր · եթէ
զտանուտէրն Հեզզեբուղ կոչեցին ,
որչափ և առաւել զընտանիս նորա ։

26 Ոչ ի այսուհետև երկնչիջիք ի
նոցանէ · զի ոչ ինչ է ի ծածուկ՝
որ ոչ յայտնեսցի , և գաղտնի՝ որ
ոչ ծանիցի ։

27 Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝
ասացէք ի լոյս · և զոր լսէք յունկ-
նէ՝ քարոզեցէք ի վերայ տանեաց ։

28 Եւ մի՛ երկնչիջիք յայնցանէ՝ որ
սպանանեն զմարմին , և զոգի ոչ
կարեն սպանանել · այլ երկերուք
դուք առաւել յայնմանէ՝ որ կա-
րօղն է զոգի և զմարմին կորուսա-
նել ի գեհենի ։

29 Ոչ ապաքէն երկու ճնճղուկք
դանկի միոջ վաճառին , և մի ի
նոցանէ յերկիր ոչ անկցի առանց
Հօր ձերոյ ։

30 Ասլ ձեր և ամենայն իսկ հեր
գլխոյ թիուեալ է ։

31 Եւ արդ՝ մի՛ երկնչիջիք՝ զի
լաւ էք քան զբազում ճնճղուկս ։

32 Ամենայն որ խոստովանեսցի յիս
առաջի մարդկան , խոստովանեցից
և ես զնմանէ առաջի Հօր իմոյ՝
որ յերկինսն է ։

Թէ որ նորանից էլ հալածեն ձեզ՝
փախէք էն ուրիշը ։ Ճշմարիտն
ասում եմ ձեզ , Որ չէք վերջացընիլ
Իսրայէլի քաղաքներն . մինչև Որ-
դին մարդոյ կը գայ[34] ։

24 Աշակերտն վարպետից աւելի
չէ[35] , և ոչ ծառան իրան տիրոջից ։

25 Նաւականն է՝ թէ աշակերտն
իրան վարպետի նման լինի . և ծա-
ռան իրան տիրոջ նման ։ Եթէ որ տա-
նուտէրին Հեզզեբուղ կոչեցին[36] ,
ապա ոլքան աւելի նորա ընտանի-
քըն ։

26 Արդ՝ մի՛ վախենաք
նորանցից · ինչուռ՝ իսկի ծածուկ
բան չը կայ՝ որ յայտնի չըլինի[37] ·
և թագուն բան՝ որ չիմացվի ։

27 Ինչ որ խաւարումն ասում եմ
ձեզ , լուսի մէջն ասացէք . և ինչ
որ ականջում լսում եք՝ կռչըրնելին
վերայ քարոզեցէք ։

28 Ա՛ի վախենաք երանցից՝ որ
մարմինըն սպանում են և հոգին չեն
կարօղ սպանել[38] · բայց աւելի վա-
խեցէք նորանից՝ որ կարօղ է հո-
գին և մարմինըն կորցնել գեհենի
մէջն ։

29 Ղէ որ երկու ծիտ մին դանկի
են ծախվում՝ . և նորանցից մինն չի
ընկնիլ գետինն առանց ձեր Հօրն ։

30 Ասլց ձեր գլխի ամէն մազերն
էլ համարված է[39] ։

31 Ուրեմն մի՛ վախենաք . ինչուռ՝
դուք աւելի լաւ էք քան շատ ծը-
առել ։

32 Ամէն ով որ ինձ մարդկանց
առաջին կը դաւանէ[40] . ես էլ նորան
կը դաւանեմ՝ իմ Հօրս առաջին որ
երկինքումն է[41] ։

(34) Մատթ · ժգ · 28 ։ (35) Ղուկ · զ · 40 ։ Յովհ ժգ · 16 ։ ժե · 20 ։ (36) Մատթ · ժբ · 24 ։ Մարկ · գ · 22 ։ Ղուկ · ժ · 15 ։ Յովհ · ը · 48 · 52 ։ (37) Մարկ · դ · 22 ։ Ղուկ · ը · 17 ։ ժբ · 2 , 3 ։ (38) Յակոբ · ը · 12 , 13 ։ Ղուկ · ժբ · 4 ։ ա Պետ · գ · 14 ։ (39) Մատթ · ժբ · 29 ։ ը Մատթ · ժբ · 11 ։ Ղուկ · խ · 18 ։ Գործ · եե · 34 ։ (40) Ղուկ · ժբ · 8 ։ Հռոմ · ժ · 9 , 10 ։ (41) Յայտ · գ · 5 ։

Digitized by Google

33 Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան, ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ՝ որ յերկինսն է:

34 Մի՛ համարիք եթէ եկի արկանել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ սուր:

35 Ի՛անդի եկի քակել զայր ՚ի հօրէ իւրմէ, և դուստր ՚ի մօրէ իւրմէ, և զհարսն ՚ի սկսրէ իւրմէ:

36 Եւ թշնամիք առն ընտանիք իւր:

37 Որ սիրէ զհայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի. և որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել քան զիս՝ չէ ինձ արժանի:

38 Եւ որ ոչ առնու զխաչ իւր՝ և գայ զկնի իմ, չէ ինձ արժանի:

39 Որ գտանէ զանձն իւր, կորուսցէ զնա՝ և որ կորոյս զանձն իւր վասն իմ, գտցէ զնա:

40 Որ ընդունի զձեզ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ:

41 Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մարգարէի առցէ. և որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ:

42 Եւ որ արբուսցէ միում ՚ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ միայն՝ յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ, Ո՛չ կորուսցէ զվարձս իւր:

33 Եւ ում որ ինձ կուրանայ[42] մարդկանց առաջին՝ ես էլ նորան կուրանամ իմ Հօրս առաջին՝ որ յերկինքումն է:

34 Ձեր կարծէք թէ նկել եմ երկրիս վերայ խաղաղութիւն քրցնել[43]. չեմ նկել խաղաղութիւն քրցնել, այլ սուր:

35 Պատճառն որ՝ նկի որ մարդըն իրան Հօրիցն, և աղջիկըն իրան մօրիցն, և հարսըն իրան սկեսուրիցն յաժանեմ[44]:

36 Եւ մարդոյ թշնամիներն իրան ընտանիքն կը լինին[45]:

37 Ո՛վ որ Հօրն կամ մօրըն ինձանից աւելի կը սիրէ[46], նա ինձ արժանի չէ. և ում որ իրան որդին կամ աղջիկն ինձանից աւելի կը սիրէ, նա ինձ արժանի չէ:

38 Եւ ում որ իրան խաչըն չառնէ և իմ ետևէս գայ[47], նա ինձ արժանի չէ:

39 Ո՛վ որ իրան անձըն կը գըտնէ[48]՝ կը կորցնէ նորան, և ում որ իրան անձըն ինձ համար կորցրուց, կը գտնէ նորան:

40 Ո՛վ որ ձեզ կընդունի[49]՝ ինձ կընդունի. և ում որ ինձ կընդունի, իմ ուղարկողին կընդունի:

41 Ո՛վ որ մարգարէ կընդունի մարգարէի անունովն[50]՝ նա մարգարէի վարձք կառնէ. և ում որ արդարը կընդունի արդարի անունովն՝ արդարի վարձք կառնէ:

42 Եւ ում որ էս փոքրներիցս մընին[51] մէնակ մին սաման ցուրտ ջուր խմացնէ աշակերտի անունովն, ճըշմարիտն ասում եմ ձեզ, Ա՛նա չի կորցնիլ իրան վարձքն:

(32) Մարկ. ը. 38: Ղուկ. թ. 26: բ Տիմ. բ. 12: (33) Ղուկ. ժբ. 49. 51, 52, 53: (34) Մարկ. ժ. 6: (35) Ղուկ. խա. 9: ծբ. 13: Միք. է. 6: Հովհ. ժդ. 18: (36) Ղուկ. ժբ. 26: (37) Ղուկ. ժզ. 24: Մարկ. ը. 34: Ղուկ. ի. 23: ժբ. 27: (38) Մարկ. ժզ. 25: Ղուկ. ժէ. 33: Հովհ. ժբ. 25: (39) Մարկ. ժը. 5: Ղուկ. ի. 48: ժ. 16: Հովհ. ժբ. 44: ժդ. 20: Գործ. գ. 14: (50) գ Յոհ. ժէ. 19: ժը. 4: դ Յոհ. գ. 3: (51) Մարկ. ը. 5, 6: խթ. 40: Մարկ. ի. 41: Նէեր. ջ. 10:

Digitized by Google

ԳԼ · ԺԱ

2 Յովհաննէս իրան աշակերտներն Քրիստոսի կուղարկէ : 7 Քրիստոսի Յովհաննէսի համար արած վկայութիւնն : 18 Քրիստոսի և Յովհաննէսի համար ժողովուրդին ունեցած կարծիքն : 20 Քրիստոս նախատինք կը տայ Խորազին Լեռնապիդա և Կափառնայում քաղաքներին որ ներքնք ապերախտութիւն արին և չապաշխարեցին : 25 Նա կը գովէ իրան Հօր խնամութիւնն որ աւետարանն աղայից յայտնեց : 28 Նա ամեն մեղքի ծանրութիւն իմացողներն իրան կը կանչէ :

1 Նա եղև իբրև կատարեաց Յիսուս զպատուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցանել ի քաղաքս նոցա :

2 Իսկ Յովհաննէս իբրև լուաւ ի բանտին զգործսն Քրիստոսի, առաքեաց ի ձեռն աշակերտացն իւրոց :

3 Եւ ասէ ցնա . Դո՞ւ ես որ գալոցն ես, եթէ այլում ակնկալցուք :

4 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա Դնացէք պատմեցէք Յովհաննու, զոր լուայք և տեսէք :

5 Կոյրք տեսանեն, կուղք գնան, բորոտք սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատք աւետարանին :

6 Եւ երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի ի իս :

7 Եւ իբրև նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ցժողովուրդն զՅովհաննէ . Ո՞ւր ելէք տեսանել յանապատին, եղէգն շարժուն ի հողմոյ :

8 Այլ զի՞նչ ելէք տեսանել . մարդ ի հանդերձս փափկութեան զարդարեալ . ահաւասիկ որ զփա-

1 Նա էլաւ երբոր Յիսուս տասներկու աշակերտների պատուիրանքները վերջացրուց, էն տեղից գնաց որ նորանց քաղաքներումն քարոզ տայ և սովորցնէ :

2 Իսկ Յովհաննէս երբոր բանտումն (գնդապետանոցում) Քրիստոսի գործքերըն լսեց, իրան աշակերտներն ուղարկեց,

3 Եւ նորան ասաց . Դո՞ւն ես էն որ պէտք է գաս, թէ ուրիշի սպասենք :

4 Յիսուս պատասխան տուաւ և նորանց ասաց . Գնացէք Յովհաննէսին պատմեցէք, ինչ որ լսեցիք և տեսիք :

5 Կուրերն տեսնումեն, կաղերն գնումեն, բորոտներն սրբվումեն . խուլերն (ժանգերն) լսումեն, մեռելներն յարութիւն են առնում, և աղքատներին աւետարան է քարոզվում :

6 Եւ երանելի է նա, որ ինձ վրայ չի գայթակղվի :

7 Իսկ երբոր նորանք գնացին, Յիսուս սկսեց ժողովուրդներին ասել Յովհաննէսին համար . (դուք) դուրս գնացիք ի՞նչ տեսնելոյ անապատումն (չօլումն), մին եղէգը (գլխիչը) որ քամուցն շարժվում է :

8 Ի՞սպա ի՞նչ տեսնելոյ դուրս գընացիք . մին մարդ փափուկ շորերով

(1) Մատթ . ժդ . 3 : (2) Ղուկ . է . 18 , 19 , Լայնէ : (3) Ծննդ . խթ . 10 : Թագ . իգ . 17 : Դան . թ . 24 : Յովէլ . գ . 14 : (4) Նոյ . իթ . 18 : Լե . 4 , 5 , 6 : Խր . 7 : Յովէլ . բ . 23 : գ . 2 : է . 36 : ժ . 25 . 38 : ժդ . 11 : (5) Սաղ . իը . 26 : Նոյ . կա . 1 : Ղուկ . դ . 18 : Յով . բ . 5 : (6) Նոյ . ը . 14 , 15 : Մատթ . ժգ . 57 : իգ . 10 : իզ . 31 : Հռովմ . թ . 32 , 33 : ա Կորնթ . ա . 23 : բ . 14 : Գաղ . է . 11 : ա Պետ . բ . 8 : (7) Ղուկ . է . 24 : (8) Նեեմ . գ . 14 :

Digitized by Google

փուկան զեղցեալ են՝ ի ստունս Թագաւորաց են :

9 Ո՞վ կի՛նչ երկք տեսանել . մարգարէ՛ . այո՝ ասեմ՝ ձեզ , և առաւել ևս քան զմարգարէ :

10 Օ՛վ նա է վասն որոյ գրեալն է. Ո՛հա ես առաքեցից զհրեշտակ իմ՝ առաջի երեսաց քոց՝ որ պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո :

11 Ա՛մէն ասեմ ձեզ՝ Ղէ չյարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս Մկրտիչ . բայց փոքրիկն յարքայութեան երկնից մեծ է քան զնա :

12 Ի՛սկ յաւուրցն Յովհաննու Մկրտչի մինչև ցայժմ՝ արքայութիւն երկնից բռնադատի , և բռնաւորք յափշտակեն զնա :

13 Վ՛ասնզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև ցՅովհաննէս մարգարէացան :

14 Եւ թէ կամիք ընդունել՝ նա է Եղիա՝ որ գալոցն է :

15 Ո՛ր ունիցի ականջս լսելոյ , լուիցէ :

16 Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս . նման է մանկտւոյ՝ որ նստեալին ի հրապարակս , կարդացեալն զընկերս իւրեանց ,

17 Եւ ասեցեն . փող հարաք ձեզ՝ և ո՛չ կաքաւեցէք , ողբացաք ձեզ՝ և ո՛չ կսկծեցարուք :

18 Եկն Յովհաննէս , ո՛չ ուտէր և ո՛չ ըմպէր . և ասեն՝ Վհս գոյ ի նմա :

19 Եկն Որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ . և ասեն , Ո՛հա այր կերօղ և արբեցօղ , բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց . և արդարացաւ զարդարութիւնն . ա՛չք նորանք որ փափուկ հագած են՝ Թագաւորաց ընդերումն են :

9 Ա՛րեղեն (դուք) ի՞նչ տեսանելոյ դուքս գնացիք . մին մարգարէ՞ . ի՛րաւի ասացեմ ձեզ , որ մարգարէից էլ շատ աւելի է՝ :

10 Ինչուր՝ նա էն է՝ որ նորա համար գրված է . (Թէ) Ո՛հա ես իմ հրեշտակս կուղարկեմ քո երեսիդ առաջին , որ քո առաջիդ քո ճանապարհըն պատրաստէ[10] :

11 Ճ՛շմարիտն ասեմ ձեզ . Որ կանանց ծնվածներու մէջն աւելի մեծ առաջ եկած չէ՝ քան Յօհաննէս մկրտիչն . բայց երկնքի արքայութեան մէջն փոքրն նորանից մեծ է :

12 Ո՛այց Յօհաննէս մկրտչի օրերիցն[11] մինչև հիմիկ երկնքի արքայութիւնն ուժով առնվուած՝ և ուժովներն յափշտակուսմեն նորան :

13 Ինչուր՝ ամեն օրէնքն և մարգարէքն մինչև Յօհաննէսեան մարգարէացան[12] :

14 Եւ թէ կամենաք ընդունիլ , նա է Եղիան[13] , որ պէտք է գայ :

15 Ո՛վ որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ[14] :

16 Ո՞ւմ նմանեցնեմ էս ազգս[15] . էն տղայոցն նման է՝ որ փողոցներումն նըստին և իրանց ընկերներին կանչեն ,

17 Եւ ասեն . Փող փչեցինք ձեզ համար՝ և պար չեկիք . ուղբ արինք ձեզ համար՝ և լաց չէլաք :

18 Յօհաննէսն նկաւ , ո՛չ ուտեր մեր և ո՛չ խմուսմեր . և ասումեն՝ Վհ կայ նորանում :

19 Որդին մարդոյ եկաւ՝ ուտումէ և խմումէ , և ասումեն . Ո՛հա ուտող և խմող մարդ . մաքսաւորների (Ա՛խպուրչնեբէ) և մեղաւորների[16]

(9) Մատթ . ժգ . 5 : իա . 26 : Ղուկ . ա . 76 : է . 26 : (10) Մղ . գ . 1 : Մատթ . ա . 2 : Ղուկ . ա . 76 : է . 27 : (11) Ղուկ . ժգ . 16 : (12) Մղ . գ . 6 : (13) Մղ . գ . 5 : Մատթ . ժէ . 12 : Ղուկ . ա . 17 : (14) Մատթ . ժգ . 9 : Ղուկ . ը . 8 Յայտ . բ . ը . 11 . 17 . 29 . գ . 6 . 13 . 22 : (15) Ղուկ . է . 31 : (16) Մատթ . բ . 10 :

Digitized by Google

քաւ խնամատարութիւն յոյժ մեծ իւրոց :

20 Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա , և ոչ ապաշխարեցին :

21 Ա՛յ քեզ Քորազին , վա՛յ քեզ Բեթսայիդա . զի եթէ ի Տիւրոս և ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն որ ի ձեզ եղեն , վաղուց ևս ապականօք խորգով և մոխրով ապաշխարեալ էր :

22 Այլ ասեմ ձեզ . Պիւրագոյն լինի երկրին Տիւրոսի և Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան ձեզ :

23 Եւ դու Կափառնաում , մի՛ մինչև յերկինս բարձրասցիս , այլ մինչև ի դժոխս իջցես . զի եթէ ի Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի քեզ եղեն , ապաքէն կային ևս մինչև ցայսօր :

24 Այլ ասեմ ձեզ՝ եթէ երկրին Սոդոմացւոց դիւրագոյն լինի յաւուրն դատաստանի՝ քան քեզ :

25 Յայնմ ժամանակի պատասխանի եաս Յիսուս և ասէ . Խոստանամ քեզ Հա՛յր՝ Տէր երկնի և երկրի . զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց , և յայտնեցեր տղայոց :

26 Այո՛ Հա՛յր . զի այսպէս հաճոյ եղև առաջի քո :

27 Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ . և ոչ ոք ճանաչէ զՈրդին՝ եթէ ոչ Հայր , և ոչ զՀայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ Որդի , և ումդին կամիցի յայտնել :

քաթեկամ . և իմաստութիւնն արդարացաւ իրան որդիքներից[17] :

20 Յն ժամանակն սկսեց նախատինք տալ էն քաղաքներին[18] ուր որ նորա շատ հրաշքներն էլան՝ և չապաշխարեցին :

21 Ա՛յ քեզ Քորազին . վա՛յ քեզ Բեթսայիդա . ինչուր՝ եթէ Տիւրոսի և Սիդօնի մէջն էլած էին էն հրաշքներն որ ձեր մէջն էլան , շատ կանուխ քրձով[19] (հապէ ղրով) և մոխրով ապաշխարել էին :

22 Այլ ասումեմ ձեզ . Պատասխանի օրումն աւելի հեշտ կլլինի Տիւրոսի և Սիդօնի երկրին՝ քան ձեզ[20] :

23 Եւ դու Քափառնայում . մինչև երկինք չի լաւձրանաս[21] , քայց մինչև դժոխք կըցածանաս . ինչուր՝ եթէ Սոդոմի մէջն էլած էին էն հրաշքներն՝ որ քեզանումն էլան , ուղորդ որ՝ մինչև էս օր դեռ մընումէին :

24 Այլ ասումեմ ձեզ՝ Որ դատաստանի օրումն Սոդոմացոց երկրին համար աւելի հեշտ կլլինի[22] , քան քեզ :

25 Յն ժամանակն Յիսուս պատասխան տուաւ և ասաց . Խոստանումեմ քեզանից[23] . ով Հայր երկընքի և երկրի Տէր . որ իմաստուններին և գիտուններին էս բանըս ծածկեցիր[24] և տղայոցն յայտնեցիր[25] :

26 Իրաւի է ով Հայր . ինչուր՝ էսպէս հաճոյ էլաւ քո առաջիդ :

27 Ամէն բան ինձ տրվաւ իմ Հօրից[26] . և ոչ ով չի ճանաչումէ Որդուն՝ քայց միայն Հայրն , և ոչ ով չի ճանաչումէ Հօրն[27] քայց միայն Որդին . և ումի որ Որդին կամենայ յայտնել :

(17) Ղուկ . է . 35 : (18) Ղուկ . ժ . 13 , Լայլ : (19) Եսայ . գ . 7 , 8 : (20) Մատթ . ժ . 15 : Մրկ . 24 : (21) Եսայ . ժգ . 13 : Ղուկ . բ . 1 : (22) Մատթ . ժ . 15 : (23) Ղուկ . ժ . 21 : (24) Եսայ . ը . 2 : ա Կորնթ . ա . 19 . 27 : բ . 8 : բ Կորնթ . գ . 14 : (25) Մատթ . ժզ . 17 : (26) Մատթ . խը . 18 : Ղուկ . ժ . 22 : Եսայ . դ . 35 : ժգ . 8 : ժէ . 2 : ա Կորնթ . ժե . 27 : (27) Եսայ . ա . 16 : ղ . 46 : ժ . 15 :

Digitized by Google

28 Եկայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք , և ես հանգուցից զձեզ ։
29 Առէք զլուծ իմ ՚ի ձեզ , և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ . և գտջիք հանգիստ անձանց ձերոց ։

30 Օ՚լի լուծ իմ քաղցր է . և բեռն իմ փոքրոգի ։

28 Ինձ մօտ եկէք՝ ամէն վաստակածներ և բեռնաւորուածներ . և ես հանգիստ կը տամ ձեզ ։
29 Իմ լուծս ձեզ վերայ առէք , և ինձմէ սորվեցէք[28] . ինչուո՛ր՝ ես հեզագոդի եմ և սրտովս խոնարհ[29] . և ձեր անձին համար հանգըստութիւն կը գտնէք[30] ։
30 Ինչուո՛ր՝ իմ լուծս քաղցր է , և իմ բեռս թեթեւ[31] ։

ԳԼՈՒԽ ԺԲ

1 Ընթանալ շաբաթ չպահելոյ համար փարիսեցոց ուննգած կատուածին կը յանդիմանէ 3 Սուրբ Դաւիթը օրինակ բերելով, 8 Իրաւունքով, 13 Նաև միւս հրաշքով։ 23 Ամբ և մոգնէ դիւահարն կը բժշկէ ։ 31 Սուրբ Հոգոյն դեմ հայհոյանքն իսկի չպիտղվիլ։ 36 Ընդ ամէն դատաստի բանի համար պատասխան պիտի տան ։ 38 Ինհաւատաներին կը յանդիմանէ որ նոքանք նշան կ՚ուզեն ։ 49 Նա ցոյց կը տայ թէ իրան եղբայր քոյր և մայր ունի ։

1 Յայնժամ գնաց Յիսուս ընդ արտորայն նոցա ՚ի շաբաթու . և աշակերտքն նորա քաղցեան , և սկսան հասկ կորղել և ուտել ։

2 Փարիսեցիքն իրրև տեսին՝ ասեն ցնա . Ո՚հաւասիկ աշակերտքն քո գործեն , զոր ոչ է արժան գործել ՚ի շաբաթու ։

3 Եւ նա ասէ ցնոսա . Ոչ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ , յորժամ քաղցեաւն , և որ ընդ նմայն էին ։

4 Օ՚ւրդ եմուտ ՚ի տունն Ա՚ստուծոյ՝ և եկեր զՀացն ըստաջատուրութեան . զոր ոչ էր օրէն նմա ուտել , և ոչ որոց ընդ նմայն էին , բայց միայն քահանայից ։

5 Կամ թէ չիցէ ընթերցեալ յօրէնս՝ զի ՚ի շաբաթու քահանայքն ՚ի տաճարին պղծեն զշաբաթն , և անմեղք են ։

1 Ան ժամանակն Յիսուս շաբաթի օրուընն գնաց նորանց արտերի մէջն[1] , և նորա աշակերտներն սկսան վնցին , և սկսեցին հասկ պոկել և ուտել ։
2 Երբոր փարիսեցիքն տեսին՝ նորան ասացին . Ո՚յա քու աշակերտներդ բան են անում , որ արժան չէ շաբաթի օրուընն անել ։
3 Ա՚յս էլ ասաց նորանց . Դուք չէք կարդացել էն՝ որ Դաւիթն արաւ էն ժամանակն որ ինքն սովեց[2] . և նորանք էլ որ նորա հետն էին ։
4 Մէկ ինչպէս Ա՚ստուծոյ տունն մտաւ և առաջաւորութեան (Ա՚ստուծոյ սեղանէն վերայ դրած) հացըն կերաւ[3] . որ օրէնք չէր նորան ուտել , և ոչ էլ նորանց որ նորա հետ էին . բայց միայն քահանայից[4] ։
5 Կամ թէ չէք կարդացել օրէնքումն[5] , որ քահանայքն շաբաթի օրերումն տաճարի մէջն շաբաթն պղծում են , և մեղք չէ նորանց ։

(28) Հռվհ . ժգ . 15 ։ փիլիպ . բ . 5 ։ ա պետ . ե . 21 ։ ա Հռվհ . բ . 6 ։ (29) Ածփ . թ . 9 ։ փիլիպ . բ . 7 , 8 ։ (30) Նբիմ . գ . 18 ։ (31) ա Հռվհ . ե . 3 ։ (1) բ Օրին . իգ . 25 ։ Մատթ . բ . 23 ։ Ղուկ . գ . 1 ։ (2) ա Թագէ . իա . 6 ։ (3) Նէսթ . իե . 30 ։ Ղեւտ . իգ . 8 ։ (4) Նէսթ . իէ . 32 , 33 ։ Ղեւտ . ը . 31 ։ իդ . 9 ։ (5) Թուոց . իը . 9 ։ Հռվհ . է . 22 ։

Digitized by Google

6 Ասացէք ձեզ՝ Օ՛ի մեծ քան զաշակերն է աստ։
7 Եւ եթէ գիտէիք զինչ է՝ Օ՛ողորմութիւն կամիմ՝ և ոչ զզոհ՝ ապա ոչ դատապարտէիք դուք զանպարտսն։
8 Օ՛ի աեր է շաբաթուց՝ Որդին մարդոյ։
9 Եւ գնացեալ անտի Յիսուս՝ եկն ի ժողովուրդն նոցա։
10 Եւ ահա էր այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին զնա՝ և ասեն, եթէ Պիտա իցէ ի շաբաթուց բժշկել. զի չարախօսացեն զնմանէ։

11 Եւ նա ասէ ցնոսա. Որ է ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ի խորխորատ՝ ի շաբաթուց. միթէ ոչ ունիցի և յարուցանիցէ զնա։
12 Ասկ արդ՝ որչափ ևս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրմէն պարտ է ի շաբաթուց բարիս գործել։
13 Յայնժամ ասէ ցայրն. Զգեաց զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղև առղջ իբրև զմիւսն։
14 Ասկ փարիսեցիքն ելեալ առաջաք խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա։
15 Եւ Յիսուս իբրև գիտաց, մեկնեցաւ անտի. և գնացին զհետ նորա ժողովուրդք յաւղումք, և բժշկեաց զամենեսեան։
16 Եւ սաստեաց նոցա՝ զի մի յայտնեսցեն զնմանէ ումեք։
17 Օ՛ի լցի, որ ասացաւն ի ձեռն Եսայեայ մարգարէի։
18 Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զՀոգի իմ ի վերայ

6 Ասացէք ձեզ՝ Որ սաճարիդն եղ մեծն է էս տեղ։
7 Ասացի թէ որ գիտէիք ինչ է էն բանն՝ թէ Ողորմութիւն եմ ուզում և ոչ թէ մատաղ, դուք չէիք դատապարտիլ էն անմեղներին։
8 Ինչուայ՝ շաբաթու տէրն՝ Որդին մարդոյ է։
9 Եւ Յիսուս էն տեղից գնաց եկաւ նորանց ժողովարանի մէջ։
10 Ինչ էն տեղ մին մարդ կար՝ որ նորա ձեռն չորացած էր. նորան հարցրին և ասացին՝ թէ Շաբաթ օրումն պէտք է բժշկութիւն անել, որ նորա վերայ չարախօսին։
11 Եւ նա ասաց նորանց. Ո՛վ է ձեզանից էն մարդն, որ մին ոչխար ունենայ և էն ընկնի փոսի մէջ շաբաթ օրումն, միթէ չի բռնիլ նորան և վերկացնիլ։
12 Ապա որքան աւելի է մարդ քան թէ ոչխար. Նրահամար պէտք է շաբաթ օրումն բարիք գործել։

13 Յն ժամանակն ասաց էն մարդոյն. Ձեռդ մեկնիլ, նա էլ մեկնեց. և ողջ էլաւ էն մկկելին պէս։
14 Ասկ փարիսեցիքն դուրս գնացին[11]. և նորա համար խորհուրդ արին՝ թէ ինչպէս կորցնեն նորան։
15 Եւ Յիսուս նրանր իմացաւ, էն տեղից հեռացաւ[12]. և շատ ժողովուրդներ նորա ետևէն գնացին[13]. և ամէնքն լաժշկեց։
16 Եւ նորանց սաստից[14] որ իրանից մին մարդոյ բան չի յայտնեն։
17 Որ կատարուի Եսայի մարգարէի ձեռով ասվածն։
18 Ահա իմ մանուկն՝ որ ես ընտրեցի[15]. և իմ սիրելին՝ որ իմ անձս հաւանել է նորա[16]. իմ Հոգիս նո-

(6) բ Մ Նայ • ղ • 18։ Մտ. գ • 1։ (7) Ոչխ • ղ • 6։ Մթ • ղ • 6, 7, 8։ Մտթ • բ • 13։ (8) Մտ. գ • 1։ Ղտ. ղ • 6։ (9) Ղտ. ժգ • 14։ ժգ • 3։ Հվհ • բ • 16։ (10) Ելք • իե • 4, 5։ բ Օրին • իր • 4։ (11) Մտթ • իե • 1։ Մտ. գ • 6։ Ղտ. ղ • 11։ Ճաղ • ե • 18։ ժ • 39։ ժա • 53։ (12) Մտթ • ժ • 23։ Մտ. գ • 7։ (13) Մտթ • ժբ • 2։ (14) Մտթ • թ • 30։ (15) Եսայ • խբ • 1։ (16) Մտթ • գ • 17։ ժե • 5։

Digitized by Google

նորա , և իրաւունս Հեթանոսաց պատմեսցէ :

19 Ո՛չ հակառակեսցի՝ և ո՛չ աղաղակեսցէ , և ո՛չ ոք լուիցէ ի հրապարակս զբաթբառ նորա :

20 Ո՛ղեգն չախչախեալ ո՛չ փըշրեսցէ , և զպատրոյկն առկայծեալ ո՛չ շիջուսցէ . մինչև հանցէ ի յաղթութիւն զդատաստանն :

21 Եւ յանուն նորա Հեթանոսք յուսասցին :

22 Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր , և բժշկեաց զնա . որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ :

23 Ու՛րմանցան ամենայն ժողովուրդքն՝ և ասէին . Միթէ սա իցէ Քրիստոս որդի Դաւթի :

24 Նայց փարիսեցիքն իբրև լսեան՝ ասեն . Ո՛չ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ Ներգեբուղ իշխանաւն դիւաց :

25 Իբրև գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա . Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի . և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ո՛չ կացցէ :

26 Եւ եթէ Սատանայ զՍատանայ հանէ , յանձն իւր բաժանեցաւ . արդ՝ զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա :

27 Եւ եթէ ես Ներգեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր ի՞ հանիցեն . վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք :

28 Ապա թէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս , ուրեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ :

29 Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տունն հզօրի և զկարասիսն նորա յափշտակել , եթէ ոչ նախ զհզօրն կապեսցէ , և ապա զտունն նորա յափշտակեսցէ :

19 (Ա՛ւա) չի՛ հակառակիլ . և չի՛ աղաղակիլ , և փողոցներու մէջն՝ ո՛չ ոք նորա ձայնըն չի՛ լսիլ :

20 Ջարդված եղէգը (ցամքած) չի փշրիլ , և վերջի կայծն հատած պատրիքը չի՛ անցնիլ . մինչև դատաստանը գլուխ հանէ յաղթութեամբ :

21 Եւ նորա անունին Հեթանոսներն յոյս կը դնեն :

22 Ան ժամանակն մին կոյր և համր (լռիկ) դիւահար բերին նորա մօտ[17], և նորան բժշկեց . ենպէս որ համրն և կոյրն խօսեց և տեսաւ :

23 Ամէն ժողովուրդներն զարմացան և ասումէին . Գըլխինք թէ սա է Քրիստոս Դաւթի որդին :

24 Նայց փարիսեցիքն երբոր լսեցին[18] ասացին . Թէ Նա դևերըն ուրիշ բանով չի հանում . բայց միայն Ներգեղբուղ դևերու իշխանի ձեռովն :

25 Երբոր Յիսուս նորանց միտքըն իմացաւ[19] , ասաց նորանց . Ամէն թագաւորութիւն որ իրան մէջն բաժանվածք է՝ կը կործանվի . և ամէն քաղաք կամ տուն որ իրան մէջն բաժանվածք է՝ չի՛ մնալ :

26 Եւ թէ որ Սատանան Սատանայն հանէ , իրան միջումն բաժանվեցաւ . ել ինչպէս նորա թագաւորութիւնն կը կենայ :

27 Եւ եթէ ես Ներգեբուղաւն եմ հանում դևերըն , ապա ձեր որդիքն ինչով կը հանեն . նոքա ձեզ դատաւոր :

28 Ապա թէ որ ես Աստուծոյ Հոգովն եմ հանում դևերըն , ուրեմն Աստուծոյ արքայութիւնն ձեզ վերայ հասել է[20] :

29 Կամ ինչպէս մին մարդ կա-

(17) Մատթ . թ . 32 . Մարկ . գ . 11 : Ղուկ . ժա . 14 : (18) Մատթ . թ . 34 : Մարկ . գ . 22 : Ղուկ . ժա . 15 : (19) Մատթ . թ . 4 : Յովհ . բ . 25 : Յայտ . բ . 23 : (20) Դան . բ . 44 : է . 14 : Լուկ . ա . 33 : ժա . 20 : գէտ . 20 , 21 :

Digitized by Google

՚ի տուն Հզօրի՝ և զդուծիան նորա յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ զՀզօրն, և ապա զտունն նորա յափշտակիցէ :

30 Որ ոչ ընդ իս է, հակառակ իմ է. և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ :

31 Վասն այդորիկ ասեմ ձեզ. Ամենայն մեղք և հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զհոգւոյն հայհոյութիւն ոչ՝ թողցի :

32 Եւ որ ոք ասիցէ բան զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ ըզհոգւոյն Սրբոյ ասիցէ՝ ոչ՝ թողցի նմա, ոչ՝ յայսմ աշխարհի՝ և ոչ՝ ի հանդերձեալումն :

33 Կամ արարէք զծառն բարի՝ և զպտուղ նորա բարի. կամ արարէք զծառն չար՝ և զպտուղ նորա չար. քանզի ՚ի պտղոյ անտի ծանիցին ծառքն ճանաչի :

34 Ընդունդք իժից՝ զիա՞րդ կարիցէք բարիս խօսել՝ որ չարքդ էք. քանզի ՚ի յաւելուածոյ սրտի խօսի բերան :

35 Այր բարի՝ ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբարիս. և մարդ չար՝ ՚ի չար գանձուց սրտի իւրոյ, հանէ զչարիս :

36 Այլ ասեմ ձեզ. եթէ ընդ ամենայն դատաստիկ բանի զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն դատաստանի :

37 Ո՛վ ՚ի բանից քոց արդարասցիս, և ՚ի բանից քոց պարտասցիս :

38 Յայնժամ պատասխանի եմուն ոմանք ՚ի դպրացն և ՚ի փարիսեցւոց՝ և ասեն. Վարդապետ՝ կամիմք տեսանել ՚ի քէն :

րօղ է զօրաւոր մարդոյ տունն մըտանել[21] և նորա բաներն յափշտակել. թէպէտ առաջ էն զօրաւոր մարդն չը կապէ, և յետոյ նորա տունն յափշտակէ :

30 Ո՛վ որ ինձ հետ չէ՝ (նա) ինձ հակառակ է. և ո՛վ որ ինձ հետ չի ժողովու՝ (նա) ցրվումէ :

31 ՎրաՀամար ասումեմ ձեզ. Ամէն մեղք և հայհոյանք կը թողվին մարդկանց[22], բայց Հոգվոյն դէմ հայհոյանքն չի թողվիլ[23] :

32 Եւ ո՛վ որ Որդոյն մարդոյ դէմ[24] բան ասէ՝ կը թողվի նորան[25]. բայց ո՛վ որ Սուրբ Հոգվոյն դէմ ասէ, նորան չի թողվիլ. ո՛չ էս աշխարհքումը՝ և ո՛չ էն :

33 Կամ ծառը բարի արէք՝ և նորա պըտուղը եւ բարի[26]. կամ ծառը չար արէք՝ և նորա պտուղը եւ չար. ինչուր՝ ծառն իրան պտղովն կը ճանաչվի :

34 (Ով) օձի զաւակներ՝ դուք ինչպէս կարող էք բարի բաներ խօսիլ որ չար էք. ինչուր՝ սրտի աւելցածիցը կը խօսի բերանն[27] :

35 Ո՛ւր մարդն՝ իրան սրտի բարի գանձիցն (խազնոյիցն) բարիք կը հանէ, և չար մարդն իրան սրտի չար գանձիցն չար կը հանէ :

36 Այլ ես ձեզ ասումեմ ձեզ. Ամէն դատարկ բանի համար որ մարդիկ կը խօսին՝ պատասխան պիտի տան դատաստանի օրումն :

37 Ինչուր՝ քո խօսքերովդ կարդարանաս, և քո խօսքերովդ կը դատապարտվիս :

38 Յն ժամանակն մին քանեան կարդացօղներից և փարիսեցիներից պատասխան տուին և ասացին. Վարդապետ՝ ուզումենք որ քեզանից մին նշան տեսանենք[28] :

(21) Նոյ. խե. 28 : Ղուկ. ժա. 21, 22, 26 : (22) Մատ. գ. 28 : Ղուկ. ժգ. 10 : Եբր. գ. 4, Եսայ. ժ. 26. 29 : ա Յովհ. ե. 16 : (23) Գործ. է. 51 : (24) Մատ. ժա. 19 : ժգ. 55 : Յովհ. է. 12. 52 : (25) ա Ջիմ, ա. 13 : (26) Մատ. է. 17 : իգ. 33 : (27) Ղուկ. գ. 45 : (28) Մատ. ժգ. 1 : Մարկ. ը. 11 : Ղուկ. ժա. 16. 29 : Յովհ. բ. 18 : ա Կորնթ. ա. 22 :

Digitized by Google

39 Այս պատասխանի եւ ասէ ցնոսա . Ուզ չար և շնացօղ ազգս նշան խնդրէ . և նշան մի՛ տացի նմա , բայց նշանն Յովնանու մարգարէի :

40 Օի որպէս էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս , նոյնպէս եղիցի և Որդի մարդոյ ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս :

41 Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա , զի ղղջացան ի քարոզութեանն Յովնանու . և արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ :

42 Թագուհի հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցէ զսա . զի եկն ի ծագաց երկրի՝ լսել զիմաստութիւնն Սողոմոնի . և աւասիկ մեծ քան զՍողոմոն է աստ :

43 Իսկ յորժամ ոգին պիղծ ելանէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդիս տեղիս . խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ :

44 Յայնժամ ասէ . Դարձայց ի տուն իմ՝ ուստի եկի . և եկեալ գտանէ զնա պարապուրդ , մաքրեալ և յարդարեալ :

45 Յայնժամ երթայ՝ և առնու ընդ իւր եօթն այլ ոգիս չարագոյնս քան զինքն , և մտեալ բնակէ անդ . և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն . այնպէս եղիցի և ազգիս այսմիկ չարի :

46 Մինչդեռ նա ընդ ժողովուրդս

39 Այս պատասխան տուաւ և նոյանց ասաց . Չար և շնացօղ ազգն նշան է ուզուշ[29] . և նշան չի տրվվիլ նորան , բայց միայն Յովնան մարգարէի նշանն :

40 Պատճառն որ՝ ինչպէս Յովհան երկեք օր և երկեք գիշեր կէտ ձրկան փորումն էլաւ[30] , էնպէս էլ Որդին մարդոյ երկեք օր և երկեք գիշեր երկրի սրտումն կը լինի :

41 Նինուէացւոց մարդիքն դատաստանումն վեր կը կենան էս ազգիս հետ[31] , և սուրան կը դատապարտեն[32] . ինչուր՝ նորանք Յովնանու քարոզութեանովն ապաշխարեցին[33] . և հիմիկ ահա Յովնանիցն աւելի մեծն է էս տեղ :

42 Հարաւային երկրի թագուհին դատաստանումն վեր կը կենայ էս ազգիս հետ[34] , և սուրան կը դատապարտէ . ինչուր՝ նա երկրի ծայրիցն եկաւ՝ որ Սողոմոնի իմաստութիւնը լսէ . և ահա Սողոմոնիցն աւելի մեծն է էս տեղ :

43 Այդ ինչ ժամանակ որ պիղծ դևն դուրս է գալիս մարդուցմէ[35] անջուր տեղերումն սնան է գալիս[36] . հանգիստ է խնդրում՝ և չի գտնում :

44 Ասն ժամանակն ասում է . Կեամ դառնամ իմ տունս՝ որ էն տեղից դուրս եկի . և գալիս է նորան գըտնում՝ պարապ , սրբված և պատրաստված :

45 Ասն ժամանակն գնում է իրանից էլ աւելի չար՝ եօթն դև է առնում իրան հետ , և մտնում բնակվում էն տեղ . և էն մարդոյ յետինն աւելի չար է լինում քան իրէ առաջինն[37] . էսպէս էլ կը լինի էս չար ազգիս :

46 Դեռքանի որ նա ժողովուրդ-

(29) Նոյ . ծէ . 3 : Մատ . ժգ . 4 : Մարկ . ը . 38 : Յովհ . գ . 48 : (30) Յովն . ա . 17 : (31) Ղուկ . ժա . 32 . (32) Երէմ . գ . 11 : Եզէկ . ժգ . 51 , 52 : Ամովս . բ . 27 : (33) Յովն . գ . 5 : (34) գ Թագ . ժ . 1 : բ Մնաց . Բ . 1 : Ղուկ . ժա . 31 : (35) Ղուկ . ժա . 24 . (36) Յովբ . ա . 7 : ա Պետր . ե . 8 . (37) Նբր . ջ . 4 : ժ . 26 : բ Պետր . բ . 20 , 21 , 22 :

Digitized by Google

սըն խօսէր, ահա մայր նորա և հղբարք նորա կային արտաքոյ և խընդրէին խօսել ընդ նմա ։

47 Եւ ասէ ոմն ցնա · Ահա մայր քո՝ և եղբարք քո կան արտաքոյ, և խնդրեն խօսել ընդ քեզ ։

48 Եւ պատասխանի ետ այնմիկ՝ որ ասացն ցնա, և ասէ · Ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք ։

49 Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտան՝ ասէ · Ահա մայր իմ և եղբարք իմ ։

50 Զի որ առնիցէ զկամս Հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր՝ և քոյր՝ և մայր ։

նէրին հետ խօսումէր, ահա նորա մայրն[38] և նորա եղբարքն[39] դուրսըն կանդնել էին՝ և ուզումէին որ նորա հետ խօսին ։

47 Եւ մին մարդ նորան ասաց · Ահա քո մայրդ և քո եղբարդ դուրսըն կանդնած են, և ուզումեն որ քեզ հետ խօսին ։

48 Ան պատասխան տուաւ նորան՝ ու ասաց իրան, և ասաց · Ո՞վ է իմ մայրս կամ ո՞վ են իմ եղբարքս ։

49 Եւ իրան ձեռքն դէպ ի աշակերտներին մեկնեց՝ և ասաց · Ահա իմ մայրս և իմ եղբարքս ։

50 Ինչուա՝ ո՞վ որ իմ Հօրս կամքն կատարէ[40] որ երկնքումն է, նա է իմ եղբայրս՝ քոյրս և մայրս ։

ԿԻ · ԺԴ

3 Մերմ ցանօղն և սերմն առակն ։ 18 Ցորանին մեկնութիւնն ։ Լրոմի, 31 Մանանեխ ի հատի, 33 Խմորի, 44 Պահվատ գտանի, 45 Մարգարիտի, 47 Ձկոյն քցած առակն առակներն ։ 53 Իրիստոսի իրան քաղաքացիներից անարգվիլն ։

1 Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս ի տանէն՝ նստէր առ ծովեզերն ։

2 Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մտանել նմա ի նաւն՝ և նստել · և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն ։

3 Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք՝ և ասէր ։

4 Ահա ել սերմանահան սերմանել · և ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ · և եկն թռչունն երկնից՝ և եկեր զնա ։

5 Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում · և վաղ

1 Ան օրումն Յիսուս տանից դուրս ելաւ՝ և ծովի եզերին[1] (ղբրպէնէ) մօտ նստեց ։

2 Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ ժողովվեցան[2], մինչև որ նա նաւն մտաւ և նստեց[3] · և ամեն ժողովուրդն ծովի եզերումն (ղբրպէնէ) կանգնել էր ։

3 Եւ նորանց հետ շատ բան էր խօսում առակներով, և ասումէր ։

4 Ահա մին սերմ ցանօղ մարդ դուրս գնաց որ սերմերն ցանէ[4] · և իրան սերմելոյ ժամանակին մին քանիսըն ճանապարհի վերայ ընկաւ՝ և երկնքի թռչունն եկաւ և նորան կերաւ ։

5 Եւ մէկելն քարքարուտ տեղ ընկաւ՝ որ տեղ որ շատ հող չըկար,

(38) Մարկ · գ · 31 ։ Ղուկ · ը · 19, 20, 21 ։ (39) Մարկ · ժգ · 55 ։ Մարկ · գ · 3 ։ Յովհ · բ · 12 ։ է · 3 · 5 ։ Գործ · ա · 14 ։ ա Կորնթ · ը · 5 ։ Գալ · ա · 19 ։ (40) Յովհ · ժե · 14 ։ Գալ · է · 6 ։ գ · 15 ։ Կող · գ · 11 ։ Նբր · բ · 11 ։ (1) Մարկ · գ · 1 ։ (2) Ղուկ · ը · 4 ։ (3) Ղուկ · է · 3 ։ (4) Ղուկ · ը · 5 ։

Digitized by Google

վաղակի բուսաւ՝ առ ՚ի չգոյէ հիւթոյ երկրին ։

6 ՚Ի ծագել արեւուս տապացաւ, և զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ ։

7 Եւ այլն անկաւ ՚ի մէջ փշոց, և ելին փուշքն և հեղձուցին զնա ։

8 Եւ այլն անկաւ ՚ի երկիր բարի, և տայր պտուղ · էր որ հարիւրապատուոր, և էր որ վաթնասուոր · և էր որ երեսնասուոր ։

9 Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ ։

10 Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա · Ընդէր առակօք խօսիս ընդ նոսա ։

11 ՚Նա պատասխանի եւ ասէ ցնոսա · ՚Ձանզի ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեանն երկնից, և նոցա չէ տուեալ ։

12 Զի որ գուցէ՝ տացի նմա և յաւելցի · և որ ոչն գուցէ, և զոր ունիցին՝ բարձցի ՚ի նմանէ ։

13 Վասն այնորիկ առակօք խօսիմ ընդ նոսա · զի տեսանեն՝ և ոչ տեսանեն, և լսեն և ոչ լսեն, և ոչ առնուն ՚ի միտ ։

14 Եւ կատարի առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ՝ որ ասէ · Լսելով լուիջիք՝ և մի՛ իմասջիք, և տեսանելով տեսջիք՝ և մի՛ տեսջիք ։

15 Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այսորիկ, և ականջօք իւրեանց ծանրունս լուան · և զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ երբէք տեսցեն աչօքն՝ և ականջօք լուիցեն՝ և շուտով բուսաւ հողի պակասութեան պատճառաւն ։

6 Երբոր արեգակն ծագեց, տապացաւ · և որովհետև արմատ (ῥιζα) չունէր՝ չորացաւ ։

7 Եւ մէկելն ընկաւ փշերի մէջը, և փշերն դուրս եկին և խեղդեցին նորան ։

8 Եւ մէկելն բարի երկրի վերայ ընկաւ, և պտուղ էր տալիս · կար որ հարիւր՝, և կար որ վաթսուն, և կար որ երեսուն ։

9 Որ ունի ականջս լսելոյ՝ թող լսէ ։

10 Եւ աշակերտներն մօտ եկին՝ և նորան ասացին · Ինչու՞ նորանց հետ առակներով ես խօսում ։

11 ՚Նա պատասխան տուաւ՝ և նորանց ասաց · Որովհամար որ՝ ձեզ տրվված է երկնքի արքայութեան խորհուրդները՞ գիտել, բայց նորանց չի՛ տրվված ։

12 Որովհետև՝ ով որ ունի՞ նորան կը տրվվի և կաւելանայ · և ով որ չունի՝ նորանից՝ էն էլ որ ունի, վերկառնըվի ։

13 ՚Որովհամար առակներով եմ խօսում նորանց հետ, որ տեսնում են և չեն տեսնում · և լսումեն՝ և չեն լսում, և մտքներն չեն առնում ։

14 Եւ Եսայեայ մարգարէութիւնն կատարվում է նորանց վերայ՝ որ ասում է · Լսելով կը լսէք՝ և չէք իմանալ · և տեսնելով կը տեսնէք, և չէք տեսնիլ ։

15 Ինչուր՝ էս ժողովրդիս սիրտն թանձրացաւ, և իրանց ականջներովն ծանր լսեցին՝ և իրանց աչքերն խփեցին՝ որ իսկի մին ժամանակ աչքերով չը տեսնեն՝ և ա-

(5) Կրնար · իշ · 12 : (6) Մարկ · ժա · 15 : Մարկ · գ · 9 : (7) Մարկ · ժա · 25 : ժշ · 17 : Մարկ · գ · 11 : ա Կազմ · բ · 10 : ա Յովհ · բ · 27 : (8) Մարկ · իե · 29 : Մարկ · գ · 25 : Ղևտ · ը · 18 : ժբ · 26 : (9) Նշայ · ղ · 9 : Նովհ · ժբ · 2 : Մարկ · գ · 18 : Ղևտ · ը · 10 : Յովհ · ժբ · 30 : Կորնթ · իբ · 26, 27 : Հռովմ · ժա · 8 : բ Պետ · ե · 14, 15 : (10) Եսթ · ե · 11 :

Digitized by Google

և պահուք իմացին , և դարձին և բժշկեցից զնոսա :

16 Եայց ձեր երանի է աչացդ՝ զի տեսանեն , և ականջաց ձերոց՝ զի լսեն :

17 Ամէն ասեմ ձեզ . Օ՛ի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին , և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան :

18 Եւ արդ՝ լուարուք դուք զառակ սերմանացանին :

19 Ցամենայնի՝ որ լսէ զբանն արքայութեան՝ և ոչ առնու՝ ի միտ , գայ չարն՝ և յափշտակէ զսերմանեալն ՝ի սիրտ նորա . այն է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ :

20 Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն է , որ իբրև լսէ զբանն , և վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա :

21 Եայց քանզի ոչ ունի արմատս ՚ի նմա , այլ առ ժամանակ մի է . ՚ի լինել նեղութեան և հալածանաց վասն բանին՝ վաղվաղակի գայթակղի :

22 Իսկ որ ՚ի մէջ փշոյն սերմանեցաւ՝ այն է , որ իբրև լսէ զբանն , և հոգք աշխարհիս և պատրանք մեծութեան հեղձուցանեն զբանն , և լինի անպտուղ :

23 Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ այն է , որ իբրև լսէ զբանն՝ և ՚ի միտ պահու , և տայ զպտուղ . է որ հարիւր , և է որ վաթսուն , և է որ երեսուն :

24 Այլ առակ արկ առ նոսա՝ և

կանջներով չը լսեն , և սրտով չիմանան , և չեմ դառնան և ես նոցա բժշկեմ :

16 Եայց երանի է[11] ձեր աչքերին՝ որ տեսանուն , և ձեր ականջներին՝ որ լսուն :

17 Ա՛շմարիտն ասեմ ձեզ . Ւոր շատ մարգարէներ և արդարներ ցանկացան տեսնել[12] էն՝ որ դուք տեսանուք , և չը տեսին . և լսել էն՝ որ դուք լսուք՝ և չը լսեցին :

18 Եւ հիմիկ լսեցէք դուք սերմ ցանօղի առակըն[13] :

19 Ւն ամենքին՝ որ արքայութեան բանըն[14] լսուն և միտք չի առնու , գալիս է չարն՝ և նորա սրտի մէջ սերմածըն յափրշտակուն . սա էն է՝ որ ճանապարհին վերայ սերմըվեցաւ :

20 Եւ էն որ քարքարուտ տեղն սերմըվեցաւ՝ նա է , որ երբոր բանըն լսուն՝ շուտով ուրախութեամբ ընդունուն[15] նորան :

21 Եայց ոդովհետև արմատ (ֆեօ) չունի իրան մէջ , քիչ ժամանակ է ինուն . երբոր նեղութիւն և հալածանք են լինում էն բանին համար , շուտով գայթակղըվուն[16] :

22 Եայց (էն) որ փշերի[17] մէջն սերմըվեցաւ՝ նա է[18] , որ երբոր բանըն լսուն , աշխարհքիս հոգերն և մեծութեան խաբեբայութիւնն էն բանըն խեղդուն՝ և անպտուղ է լինում :

23 Եայց (էն) որ բարի երկրումն սերմըվեցաւ՝ նա է , որ երբոր բանըն լսուն՝ (նորան) էլ միտքն է առնում և պտուղ է տալիս . կայ որ հարիւր , և կայ որ վաթսուն , և կայ որ երեսուն :

24 Ուրիշ առակ էլ նորանց ա-

(11) Մատ . ժզ . 17 : Ղուկ . ժ . 23 , 24 : Յովհ . ի . 29 : (12) Ի՛ր . ժա . 13 : ա Պետր . ա . 10 , 11 : (13) Մատ . գ . 11 : Ղուկ . ը . 11 : (14) Մատ . դ . 23 : (15) Նաոյ . ծը . 2 : Ի՛ովի . ԼԳ . 31 , 32 : (16) Մատ . ժա . 6 : բ Տի՛մ . ա . 15 : (17) Ի՛ովի . դ . 3 : (18) Մատ . ժԲ . 23 : Մարկ . ժ . 23 : Ղուկ . ժը . 24 : ա Տի՛մ . գ . 9 : բ Տի՛մ . դ . 10 :

Digitized by Google

ասէ. Կ՚ումանեցաւ արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում:

25 Եւ ի քուն լինել մարդկան, եկն թշնամի նորա. և ցաւեսց ի վերայ որոմն ի մէջ ցորենոյն՝ և գնաց:

26 Եւ իբրև բուսաւ խոտն՝ և արար պտուղ, ապա երևեցաւ և որոմնն:

27 Ի՝ստուցեալ ծառայք տանուտեառնն ասեն ցնա. Տէր՝ ոչ սերմն քո բարի սերմանեցեր յագարակին քում՝ արդ՝ ուստի՞ ունիցի զորոմ նրն:

28 Եւ նա ասէ ցնոսա. Ի՝ր թշնամի արար զայն: Ի՝սեն ցնա ծառայքն. Կամի՞ս՝ զի երթիցուք քաղսցուք զայն ի բաց:

29 Եւ նա ասէ ցնոսա. Ի՝, դուցէ մինչ քաղիցէք զորոմնն, և ըղցորեանն ընդ նմին ի բաց խլիցէք:

30 Հո՛ղ տուք երկոցունց աճել ի միասին մինչև ի հունձս, և ի ժամանակի հնձոցն ասացից ցհնձօղսն. Հաւաղեցէք նախ զորոմնդ և կապեցէք զայդ խրձունս առ ի յայրել, և զցորեանն ժողովեցէք ի շտեմարանս իմ:

31 Ի՝ւրմէ առակ արկ առ նոսա՝ և ասէ. Կ՚ումանէ արքայութիւն երկնից հասոյ մանանխոյ, զոր առեալ մարդոյ՝ սերմանաց յագարակի իւրում:

32 Ի՝ր փոքր է քան զամենայն սերմանիս. և յորժամ աճ ցէ, մեծ է քան զամենայն բանջարս. և լինի ծառ՝ մինչև գալ թռչնոց երկնից և հանգչել յոստս նորա:

33 Ի՝րմէ առակ խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ. Կ՚ումանէ արքայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ ոչխարին դրաւ և ասաց. Երկինքի արքայութիւնն նմանվնցաւ մին մարդոյ՝ որ իրան արտաւմն բարի սերմն ցանց:

25 Եւ որ ժամանակ մարդիքն քուն էլան, նորա թշնամին եկաւ և ցորենին մէջ որում (խոշնան ծաղիկ) ցանց և գնաց:

26 Եւ երբոր խոտն բուսաւ՝ և պտուղ տուաւ՝ ապա որոմն էլ երևեցաւ:

27 Տան տիրոջ ծառաներն եկին նորան ասացին. Տէր՝ չէ՞ որ դուք արտաւմն բարի սերմըն սերմեցիր, ապա ի՞նչ տեղից է էն որոմն:

28 Կ՚ա էլ ասաց նորանց. Թշնամի մարդ է արել էն: Ծառաներն ասացին նորան. Կամենո՞ւմես որ գնանք էն քաղեինք դուրս հանենք:

29 Կ՚ա էլ նորանց ասաց. Չէ. չըլինի թէ երբոր որոմն քաղէք, ցորիևրն էլ նորա հետ դուրս հանէք:

30 Թո՛ղ տուէք որ երկուսն միասին տեղ մեծանան մինչև հունձքն. և հնձի ժամանակին հնձօղներին կասեմ՝ թէ Կ՚ոպղ որոմըն քաղեցէք և նորան խուրձ խուրձ կապեցէք որ այրվի, և ցորենըն իմ ամբարները մէջ ժողովեցէք[19]:

31 Ի՝ն ուրիշ առակ էլ նորանց առաջին դրաւ և ասաց. Երկինքի արքայութիւնն նման է մանանեխի (խոպոպուկ) հատի[20]. որ նորան մին մարդ առաւ՝ և իրան արտի մէջն սերմեց:

32 Ի՝ր ամէն սերմունքիցն փոքր է. և երբոր կաճի, ամէն բանջարի վերայ մեծանում, և ծառ է լինում՝ մինչև որ երկնքի թռչունները գան և նորա ճղերին վրայ հանգիստ առնեն:

33 Ի՝ւրիշ առակ էլ խօսեց նորանց հետ և ասաց. Երկինքի արքայութիւնն նման է խմորի[21] որ նորան

(19) Մատ. ը • 12 : (20) Լուս. բ • 33 : Ա՛ր • գ • 1 : Մատ. ը • 31 : Ղու՛կ • ժգ • 18, 19 : (21) Ղու՛կ • ժգ • 21 :

Digitized by Google

թագոյց ՚ի դրիւս երիս ալեր՝ մինչև ամենայն խմոյնցաւ ։

34 Այս ամենայն խօսեցաւ Յիսուս առակիւք ընդ ժողովուրդսն . և առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա ։

35 Այլ յետի ասացեալն ՚ի մարգարէէն . Բացից առակօք զբերան իմ՝ բղխեցից զծածկեալսն ՚ի սկզբանէ աշխարհի ։

36 Յայնժամ թողեալ Յիսուս զժողովուրդսն՝ եկն ՚ի տուն . մատեան առ նա աշակերտքն նորա՝ և ասեն . Մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակի ։

37 Եւ նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա . Որ սերմանէ զսերմն բարի՝ է Որդի մարդոյ ։

38 Եւ ագարակն աշխարհս է . սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեան են . իսկ որոմն որդիք չարին են ։

39 Եւ թշնամին որ վարեաց զայն՝ Սատանայ է . և հունձքն կատարած աշխարհիս է . և հնձողքն հրեշտակք են ։

40 Որպէս ժողովի որոմն՝ և ՚ի հուր այրի , այնպէս եղիցի ՚ի կատարած աշխարհիս ։

41 Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակս իւր , և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս , և զգործսն անօրէնութեան ։

42 Եւ արկցեն զնոսա ՚ի հնոց հրոյ . անդ եղիցի լաւ և կրճտել ատամանց ։

43 Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն ՚ի արքայութեան Հաւր իւրոց . որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ ։

34 Զայս ամենայն ասաց Յիսուս առակիւք[22] ցբազումս , և առանց առակի ոչ խօսէր ընդ նոսա ։

35 Զի լցցի որ ասացեալն է մարգարէիւն , որ ասէ . Բացից առակիւք զբերան իմ , արտասանեցից զգաղտնիս յաւիտենից[23] ։

36 Յայնժամ արձակեալ Յիսուս զբազմութիւնն՝ եկն ՚ի տունն . և մատեան առ նա աշակերտքն նորա՝ և ասեն . Մեկնեա մեզ զառակ որոմանցն արտին[24] ։

37 Եւ նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա . Որ սերմանէ զսերմն բարի՝ է Որդի մարդոյ ։

38 Եւ արտն[25] է աշխարհս . սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեան են . և որոմն՝ չարի որդիքն են[26] ։

39 Եւ թշնամին որ սերմեց զնոսա , Սատանայ է . և հունձքն կատարած աշխարհի վերջն է[27] . և հնձողքն՝ հրեշտակքն են ։

40 Ուրեմն որպէս որոմն հաւաքվի և հրով այրվի , այսպէս եղիցի ի կատարած աշխարհիս ։

41 Առաքեսցէ Որդի մարդոյ զհրեշտակսն իւր , և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթակղութիւնս[28] , և զանօրէնսն արասցեն ։

42 Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ[29] . անդ եղիցի լաց և կրճտումն ատամանց ։

43 Յայնժամ արդարքն արասցեն[31] ա-

(22) Մատ . գ . 33 , 34 ։ (23) Ողմ . հը . 2 ։ (24) Հոգմ . ժգ . 25 , 26 ։ ա Կորնթ . բ . 7 ։ Նփես . գ . 9 ։ Կող . ա . 26 ։ (3) Մատթ . իդ . 14 ։ իը . 19 ։ Մարկ . ժգ . 15 . 20 ։ Ղուկ . իդ . 47 ։ Հոգմ . ժ . 18 ։ Կող . ա . 6 ։ (26) Հայեր . գ . 13 , Յովհ . ը . 44 ։ Պետր . ժգ . 10 ։ (27) Հովել . գ . 13 ։ Յայտ . ժգ . 15 ։ (28) Մատթ . ժը . 7 ։ ը Պետր . բ . 1 , 2 ։ (29) Մատթ . գ . 12 ։ Յայտ . ժբ . 20 ։ բ . 10 ։ (30) Մատթ . ը . 12 ։ Ածայր . 50 ։ (31) Գան . ժը . 3 ։ ա Կորնթ . ժե . 42 , 43 ։

Digitized by Google

ցեն իբրև զարեգական յարքայու-
թեան երկնից ։ Որ ունիցի ական-
ջս լսելով՝ լուիցէ ։

44 Կարձեալ՝ նման է արքայու-
թիւն երկնից գանձի ծածկելոյ յա-
գարակի , զոր գտեալ մարդոյ՝ թա-
գոյց · և ՚ի խնդութենէ անտի եր-
թայ վաճառէ զամենայն ինչ զոր ու-
նի , և գնէ զագարակն զայն ։

45 Կարձեալ՝ նման է արքայու-
թիւն երկնից առն վաճառականի՝
որ խնդրէիցէ մարգարիտս գեղեցիկս ։

46 Եւ գտեալ մի պատուական
մարգարիտ՝ երթեալ վաճառեաց
զամենայն զոր ինչ ունէր , և գնե-
աց զայն մարգարիտ ։

47 Կարձեալ՝ նման է արքայու-
թիւն երկնից ուռկանի արկելոյ ՚ի
ծով՝ և յամենայն ազգաց ժողովե-
լոյ ։

48 Որ՝ իբրև լցաւ , հանեալ ՚ի
ցամաք՝ և նստեալ ժողովեցին ըզ-
բարի բարին յամանս , և զխոտա-
նըն ՚ի բաց ընկիցին ։

49 Այնպէս եղիցի ՚ի կատարած
աշխարհիս . ելցեն հրեշտակք՝ և
մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդարոց ,

50 Եւ արկցեն զնոսա ՚ի նոց հը-
րոյն · անդ եղիցի լալ և կրճել ա-
տամանց ։

51 Ասէ ցնոսա Յիսուս . Իմացա-
րուք զայս ամենայն ։ Ասեն ցնա .
Այո՛ Տէր ։

52 Եւ նա ասէ ցնոսա . Ա՛ն այ-
սորիկ ամենայն դպիր աշակերտեալ
արքայութեան երկնից՝ նման է ա-
ղբն առնուաւատն , որ հանէ ՚ի
գանձէ իւրմէ զնոր և զհին ։

53 Եւ եղև իբրև կատարեաց
Յիսուս զառակս զայսոսիկ՝ փոխե-
ցաւ անտի ։

րեգական պէս կը ծագին երկնքի
արքայութեան մէջն . Ո՛վ որ լսե-
լոյ ականջ ունի՝ թո՛ղ լսէ[32] ։

44 Ո՛ւնկէ՝ երկնքի արքայութիւ-
նըն նման է մին արտի մէջ պահված
գանձի (խոպնայէ) , որ նորան մին
մարդ գտաւ պահեց . և ուրախու-
թենիցն կը գնայ ամէն ինչ որ ու-
նի ծախուելո[33] և էն արտըն գնուելո[34] ։

45 Ո՛ւնկէ՝ երկնքի արքայութիւն
նման է մին վաճառական մարդոյ ·
որ գեղեցիկ մարգարիտներ ման կը
գայ ։

46 Եւ երբոր մին պատուական
մարգարիտ[35] գըտաւ , գնաց ամէն
ինչ որ ունէր ծախեց՝ և էն մար-
գարիտըն գնեց ։

47 Ո՛ւնկէ՝ երկնքի արքայութիւնն
նման է մին ծովի քցած ուռկանի
(ըռօթէ) , որ ամէն կերպ (ձկներ)
ժողովեց[36] ։

48 Եւ երբոր լցվաւ՝ նորան ցա-
մաքն հանեցին , նստեցին և լաւե-
րըն ժողովեցին ամաններուն մէջ , և
անպէտքներըն դուրս քցեցին ։

49 Այսպէս էլ կը լինի աշխարհքիս
վերջուանն . հրեշտակներն[37] դուրս
կը գան՝ և չարերըն կը ջոկեն ար-
դարներուն մէջէն ,

50 Եւ նորանց կը քցեն կրակի
փուռն[38] մէջն , որ էնտեղ լաց և
ատամներուն կըրճտելն կը լինի ։

51 Յիսուս ասաց նորանց . Հաս-
կացաք էս ամէն բաներըս . ասացին
նորան . Հա՛ , Տէր ։

52 Նա էլ նորանց ասաց . Որա-
համար ամէն կարդացօղն որ երկնքի
արքայութեան բաներին սեղեկաց-
ած է , նման է տանտէր մարդոյ՝ որ
իրան գանձիցն (խոպնայիցն) նորըն
և հինըն հանում[39] ։

53 Եւ էլաւ երբոր Յիսուս էս
առակներըս կատարեց , էն տեղից
գնաց ։

(32) Ա Իր · 9 · (33) Փիլիպ · գ · 7 , 8 · (34) Նոյ · ծե · 1 · Յայտ · գ · 18 · (35) Մատ · բ · 4 · գ · 14 , 15 · ը · 10 · 19 · (36) Մատ · խը · 10 · (37) Մատ · իե · 39 · (38) Ա Իր · 43 · (39) Նրէ · 4 · 13 ·

Digitized by Google

54 Եւ եկեալ ՚ի գաւառս իւր՝ ուս-
ուցանէր զնոսա ՚ի ժողովրդեանն
նոցա , մինչեւ զարմանալ նոցա և
ասել . Ամա՞ ուստի՞ իցէ այս իմաս-
տութիւն և զօրութիւնք :

55 Ո՞չ սա է Հիւսանն որդի . ո՞չ
մայր սորա կոչի Մարիամ . և եղ-
բարք սորա Յակոբոս՝ և Յովսէս՝ և
Սիմոն , և Յուդաս :

56 Եւ քոյրք սորա ամենեքեան առ-
ձեզ են . արդ ուստի՞ է սմա այս
ամենայն :

57 Եւ գայթակղէին ՚ի նա : Եւ
Յիսուս ասէ ցնոսա . Ընդ մարգա-
րէ անարգ՝ եթէ ո՛չ յիւրում գա-
ւառի և յիւրում տան :

58 Եւ ո՛չ արար անդ զօրութիւնս
բազումս վասն անհաւատութեան
նոցա :

54 Եւ եկաւ իրան գաւառն[40] և
նորանց ժողովարաններումն սովորց-
նում էր նորանց , մինչև որ զարմա-
նում էին նորանք և ասում էին . Ո-
րան որ տեղից է էս իմաստութիւնս
և զօրութիւններս :

55 Չէ՞ որ սա հիւսան[41] (փէօլվէր)
որդին է . չէ՞ որ սորա մայրն՝ Մա-
րիամ կը կոչվի . և սորա եղբարքն[42]
Յակոբոս՝ և Յոսէս[43] և Սիմոն , և
Յուդաս :

56 Եւ չէ՞ որ սորա ամէն քրվերքն
մեզ մօտ են . ապա ուր տեղից է սրան
էս ամէն բաներս :

57 Եւ գայթակղվումին[44] նորա
վերայ . Յիսուս էլ նորանց ասաց .
(մին) Մարգարէ անարգված չի լի-
նիլ՝ բայց իրան երկրի և իրան տան
մէջն[45] :

58 Եւ էն տեղ շատ հրաշքներ
չարաւ[46] նորանց անհաւատութեան
պատճառաւն :

ԿԱ · ԺԴ

1 Հրեաստի համար ՚Երօդէսի կարծիքն : 3 Յօհաննէս մկրտչի գլուխ կտրելոյ պատ-
ճառն : 13 Յիսուս մին անապատ տեղ կը գնայ : 15 Նա հոն հինգ հացով և երկու ձու-
կով հինգ հազար մարդկանց կերակրում է : 25 Ծովին վերայ գնալով աշակերտներին մօտ
կը գնայ : 34 Գեննեսարեթ կը գնայ և հիւանդներն իրան շուրջ ծայրէն գիպչելով
կը փրկվին :

1 Յայնմ ժամանակի լուաւ ՚Ե-
րոդէս չորրորդապետ զլուր Յի-
սուսի :

2 Եւ ասէ ցծառայս իւր . ՚Նա է
Յովհաննէս մկրտիչ , նա յարեաւ
՚ի մեռելոց , և վասն այնորիկ զօ-
րութիւնք լինին նովաւ :

3 Քանզի ՚Երովդէս կալաւ զՅո-
վհաննէս , կապեաց զնա և եդ
՚ի բանտի՝ վասն ՚Երովդիայ կնոջ

1 Ընդ ժամանակն ՚Երօդէս չոր-
րորդապետն[1] Յիսուսի համբաւըն
լսեց :

2 Եւ իրան ծառաներին ասաց .
՚Նա Յօհաննէս մկրտիչն է , նա
մեռելների միջէն յարութիւն ա-
ռաւ . և նրա համար հրաշքներ
են լինում նորանով :

3 Պատճառն՝ ՚Երօդէս բռնե-
ցաց Յօհաննէսին[2] նորան կապեց
և բանտի մէջ դրաւ՝ ՚Երօդիայի

(40) Մարկ . բ . 23 : Մատթ . ը . 1 : Ղուկ . դ . 16 . 28 : (41) Նոյն . խթ . 7 :
Մատթ . ը . 3 : Ղուկ . դ . 23 : Յովհ . ը . 42 : (42) Մարկ . ժբ . 40 : (43) Մատթ .
ժե . 40 : (44) Մարկ . ժա . 6 : Մատթ . ը . 3 , 4 : (45) Ղուկ . դ . 24 : Յովհ . դ .
44 : (46) Մատթ . ը . 5 , 6 : (1) Մատթ . ը . 18 : Ղուկ . բ . 7 : (2) Մատթ . ը . 17 :
Ղուկ . դ . 19 , 20 :

Digitized by Google

փիլիպպոսի եղբօր նորա :

4 Ասէր ցնա Յովհաննէս . Ոչ արժան քեզ ունել զկա :

5 Եւ կամէր զնա սպանանել , բայց երկնչէր ՚ի ժողովրդենէ անտի . քանզի իբրև զմարգարէ ունէին զնա :

6 Եւ իբրև եղեն ծնունդք Հերովդի՝ կաքաւեաց դուստրն Հերովդեայ ՚ի մէջ բազմականին . և հաճոյ թուեցաւ Հերովդի :

7 Ուստի և երդմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ :

8 Եւ նա յառաջագոյն խրատեալ ՚ի մօրէ իւրմէ , Տուր ինձ ասէ այսր ՚ի վերայ սկահեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի :

9 Եւ տրտմեցաւ թագաւորն . բայց վասն երդմանցն և զարհամարհացանցն՝ հրամայեաց տալ նմա :

10 Եւ առաքեաց գլխատեաց զՅովհաննէս ՚ի բանտի :

11 Եւ բերաւ գլուխ նորա սկահեղ և ետուն աղջկանն , և տարաւ առ մայր իւր :

12 Եւ մնասուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն և թաղեցին , և եկեալ պատմեցին Յիսուսի :

13 Եւ իբրև լուաւ Յիսուս , գնաց անտի նաւու յանապատ տեղի ամուանձինն : Իբրև լուան ժողովուրդքն , գնացին զհետ նորա հետի ՚ի քաղաքաց անտի :

14 Եւ իբրև ել՝ ետես ժողովուրդք բազում , գթացաւ ՚ի նոսա , և բժշկեաց զհիւանդս նոցա :

Համար . որ իրան եղբայր փիլիպպոսի կինն էր :

4 Ուստի՝ Յովհաննէս նորան ասէր , Թէ Չէ քեզ արժան քեզ՝ որ դուրան (կին) ունենաս :

5 Եւ ուզումէր որ նորան սպաննէ , բայց ժողովրդից վախումէր , ինչուար՝ նորան մարգարէի տեղ էին համարում՝ :

6 Եւ երբոր Հերովդէսի ծնընդեան օրն էլաւ , Հերովդիայի աղջկն սեղանի նստածների մէջն պարեկաւ՝ և Հերովդէսին լաւ թուեցաւ :

7 Ուրահամար էլ երդումով խոստացաւ նորան՝ Թէ ինչ որ ուզէ՝ տայ նորան :

8 Նա էլ ինչպէս որ առաջ իրան մօրից խրատ էր առել՝ ասաց . Այս սկուտեղի (պնակի) վերայ Յովհաննէս Մկրտչի գլուխն ուզում եմ :

9 Եւ թագաւորն տրտմեցաւ՝ բայց իրա՛ երդումին՝ և իրան հետ նստած մարդկանց համար՝ հրամայեց տուաւ , որ տան նորան :

10 Եւ ուղարկեց բանտի (պնդոնի) միջումն Յովհաննէսի գլուխըն կտրեց :

11 Եւ նորա գլուխըն սկուտեղի (պնակի) վերայ բերին և աղջկանն տուին՝ և նա տարաւ իրան մօր մօտն :

12 Եւ նորա աշակերտներն եկին նորա մարմինն վերկալան և թաղեցին . և եկին Յիսուսին պատմեցին :

13 Եւ Յիսուս երբոր լսեց՝ էն տեղից նաւով գնաց առանձին մի անապատ տեղ : Ժողովուրդներն երբոր լսեցին , էն տեղի քաղաքներից ոտով գնացին նորա ետևէն :

14 Եւ երբոր դուրս եկաւ՝ և էն շատ ժողովուրդն տեսաւ , խղճաց նորանց վերայ , և նորանց հիւանդներըն բժշկեց :

(3) Լուս . ժը . 16 : ի . 21 : (4) Մարկ . ի . 20 : Լուս . ի . 6 : (5) Մարկ . ժ . 33 : ժը . 15 : Մատ . գ . 33 : Լուս . ի . 10 : Յովհ . գ . 1 , 2 : (6) Մարկ . ի . 30 : Մատ . գ . 34 :

Digitized by Google

15 Իբրև ընդ երեկս եղև, մտա-
ետն առ նա աշակերտքն՝ և ասեն.
Տեղիս անապատ է՝ և օրս տարա-
ժամեալ, արձակեա զժողովուրդսդ,
զի երթիցեն շուրջ ՚ի շէնսն՝ գնես-
ցեն խրթանց կերակուրս:

16 Եւ ասէ Յիսուս. Ո՛չինչ պի-
տոյ է դոցա երթալ. դուք տուք
դոցա ուտել:
17 Եւ նոքա ասեն ցնա. Ոչ ինչ
ունիմք ասա, բայց հինգ նկանակ և
երկուս ձկունս:

18 Եւ ասէ ցնոսա. Ներբէք այսր
ցոյն:
19 Եւ հրամայեաց բազմեցուցա-
նել զժողովուրդսն ՚ի վերայ խոտոյ.
և առեալ զհինգ նկանականն և զեր-
կուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս,
օրհնեաց և եբեկ՝ և ետ ցաշակերտ-
սն զնկանականն, և աշակերտքն ժո-
ղովրդոցն:
20 Կերան ամենեքեան՝ և յագե-
ցան, և բարձին զնշխարս կտորոցն
երկոտասան սակոտի լի:
21 Եւ որք կերանն՝ էին արք իբ-
րև հինգ հազար. Ոչ՝ զկանայս և
զմանկունս:
22 Եւ տեղեաց վաղվաղակի զա-
շակերտան մտանել ՚ի նաւ՝ և յա-
ռաջել յայնկոյս, մինչ ինքն զժո-
ղովրդան արձակիցէ:

23 Եւ իբրև արձակեաց զժողո-
վուրդսն, ել ՚ի լեառն առանձինն
կալ յաղօթիս. և իբրև ընդ երեկս
եղև, անդ էր միայն:
24 Եւ նաւն մեկնեալ էր ՚ի ցա-
մաքէն բազում ասպարիզօք ծփեալ
յալեացն. քանզի ընդդէմ էր հողմն:

25 Եւ ՚ի չորրորգում՝ պահս գի-
շերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով
՚ի վերայ ծովուն:

15 Եւ երբոր իրիկնան դէմ ե-
լաւ[7] աշակերտներն նորա մօտ ե-
կին և ասացին. Տեղս անապատ է՝
և օրս էլ անցել է. էդ ժողո-
վուրդներըդ թող արա՝ որ գընան
չորս կողմի գիւղերն՝ իրանց համար
կերակուր գնեն:
16 Եւ Յիսուս ասաց. Պէտք չէ
դորանց որ գնան. դուք տուէք
դորանց ուտել:
17 Եւ նորանք ասացին նորան.
Ա՛ենք էստեղ բան չունինք, բայց
միայն հինգ հատ հաց՝ և երկու
ձուկն:
18 Եւ նորանց ասաց. ՙՒորանց
էստեղ բերէք:
19 Եւ հրաման տուաւ որ ժողո-
վուրդն խոտի վերայ նստացնեն.
և էն հինգ հացըն և երկու ձուկն
առաւ գէպի երկինքն նայեց՝ օրհ-
նեց և կըտրեց[8], և էն հացերըն
աշակերտանց՝ ին տուաւ՝ և աշա-
կերտներն էլ ժողովուրդներին:
20 Ո՛ւտէն կերին և կըշտացան,
և աւելցած կտորներից տասներկու
քթոց լիքն վերկալան:
21 Եւ նորանք որ կերին՝ հինգ
հազարի չափ մարդիք էին՝ կանանց
ցից և երեխաներից զոկ (կ՚ման):
22 Եւ շուտով աշակերտներին
վռազացրուց որ նաւն մտնեն՝ և ի-
րանից առաջ անցկենան էն կողմն.
մինչև որ ինքն էն ժողովուրդներն
արձակէ:
23 Եւ երբոր ժողովուրդներն
արձակեց[9], վերելաւ սարն, որ մե-
նակ աղօթք անէ. և երբոր իրի-
կուն էլաւ[10], մենակ էնտեղ էր:
24 Եւ նաւն շատ ասպարէզով
(մանկլկով) հեռացել էր ցամաքի-
ցըն՝ և ալեկոծութեան մէջն էր.
ինչուորդ՝ քամին ներհակ էր:
25 Եւ գիշերի չորս քաժդնի ժա-
մանակումն՝ Յիսուս ծովին վերայ
գնալով՝ նորանց մօտ եկաւ:

(7) Մրկ. գ. 35: Ղուկ. թ. 12: Յովհ. գ. 5: (8) Մտթ. ժե. 36: (9) Մրկ. գ. 46: (10) Յովհ. գ. 10:

Digitized by Google

26 Իբրև տեսին զնա աշակերտքն զի գնայր ՚ի վերայ ծովուն՝ խռովեցան, և ասեն թէ Ո՛րաւչօք ինչ իցէ. և առ ահին աղաղակեցին:

27 Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա Յիսուս՝ և ասէ ՚Ցաջալերա՛ցարո՛ւք՝ ես եմ, մի՛ երկնչի՛ք:
28 Պատասխանի եւ նմա Պետրոս՝ և ասէ. Տէր՝ եթէ դու ես, հրամայեա՛ ինձ գալ առ քեզ ՚ի վերայ ջուրց:
29 Եւ նա ասէ, Ե՛կ. և իջեալ ՚ի նաւէն Պետրոս՝ գնաց ՚ի վերայ ջուրցն, և եկն առ Յիսուս:
30 Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. և իբրև սկսաւ ընկղմիլ՝ աղաղակեաց՝ և ասէ. Տէր փրկեա՛ զիս:
31 Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կալաւ զնա և ասէ. Ի՛մրահաւատ՝ ընդէր երկմտեցեր:
32 Եւ իբրև ելին ՚ի նաւն՝ հանդարտեաց հողմն:
33 Եւ որ ՚ի նաւին էին՝ մատեան երկիրպագին նմա՝ և ասեն. Ո՛րդեւիւ Որդի Աստուծոյ ես դու:

34 Եւ անցեալ եկին ՚ի ցամաք ՚ի Գեննեսարեթ:
35 Եւ իբրև ծանեան զնա՝ արք տեղւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ և ածին առ նա զամենայն հիւանդս:
36 Եւ աղաչէին զնա, զի գոնէ միայն ՚ի քղանցս հանդերձի նորա մերձենացին. և որ միանգամ մերձեցան՝ փրկեցան:

26 Ո՛շակերտեանքն երբոր տեսին նորան՝ որ ծովին վերայ գնումբ[11], շփոթվեցան և ասացին՝ թէ Ո՛ւր երեւոյթ բան է. և վախեցուցին աղաղակեցին:
27 Եւ Յիսուս շուտով խօսեց ընդ նոսա՝ և ասաց. Արա՛սպինա կացէ՛ք՝ ես եմ՝ մի՛ վախենա՛ք:
28 Պետրոս պատասխան տուաւ նորան և ասաց. Տէր՝ թէ որ դու ես, հրամայեա տուր ինձ. որ ջրիս վերայով քեզ մօտ գամ:
29 Ա՛ւ էլ ասաց. Ե՛կ. և Պետրոս նաւէն վերկեաւ ջրի վերայովն գնաց՝ և եկաւ Յիսուսի մօտ:
30 Եւ էն սաստիկ քամին տեսնելով՝ վախեցաւ. և երբոր սկսեց թաղվիլ, աղաղակեց և ասաց. Տէր՝ ինձ փրկի՛ր:
31 Եւ շուտով Յիսուս իրան ձեռըն մեկնեց՝ նորան բռնեց և ասաց. Ի՛մրահաւատ՝ ինչո՞ւ երկմտեցիր:

32 Եւ երբոր նաւն մտին, քամին հանդարտեց:
33 Եւ նորանք որ նաւի մէջն էին՝ մօտ եկին նորան երկրպագուեցին ասելին՝ և ասացին. Իրաւի՛ որ դու Ո՛ստուծոյ Որդին ես[12]:
34 Եւ անցկացան ցամաքն[13] և եկին Գեննեսարեթ:
35 Եւ երբոր էնտեղի մարդիքն ճանաչեցին նորան, ուղարկեցին էն ամէն գաւառն՝ և ամէն հիւանդները բերին նորա մօտ բերին:
36 Եւ նորան աղաչումէին՝ որ էնց մէնակ նորա շորի ծայրին (էշշիւքին) դիպչէին. և նորանք որ միան գամ դիպան[14], փրկվեցան:

(11) Յովբ. թ. 8: (12) Սամ. բ. 7: Սաղմ. ա. 1: Սաղմ. ժգ. 16: խգ. 68: Ղեւտ. գ. 31: Յովհ. ա. 49: ղ. 69: ժա. 27: Գործ. ը. 37: Հռոմ. ա. 4: (13) Սաղմ. ղ. 53: (14) Սաղմ. թ. 20: Սաղմ. գ. 10: Ղեւտ. ղ. 19: Գործ. ժբ. 12:

Digitized by Google

ԳԼ · ԺԹ

3 Քրէից գործիներին և փարիսեցիներին յանգիմանեմ է իրանց ապականաւոր Աստուծոյ պատուիրանքովը անց կենալոյ համար : 11 Որ ավետարանէ Քէ էն բանն որ բերան մտնալէն՝ ոչ պղծուէ մարդն : 23 Քանանացի կնկան ապրիկն , 30 Ու ուրիշ շատ բաժանութիւններն կը բժշկէ : 32 Իւ հօրն հացով և ձուկն ձկներով չորս հազար մարդիկը կըշտացնուէ՝ Քանանացին և երեխաներէքն չկ :

1 Յայնժամ մատեան առ Յիսուս որ Երուսաղէմէ փարիսեցիքն և դպիրք՝ և ասեն :

2 Ընդէր աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն . զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն :

3 Ա՛յս պատասխանի եա՝ և ասէ ցնոսա . Իսկ դուք ընդէր անցանէք զպատուիրանաւն Աստուծոյ՝ վասն ձերոյ աւանդութեանն :

4 Օ՛ր Աստուած ասաց . Պատուեա զՀայր քո և զմայր :
5 Եւ որ բամբասէ զՀայր կամ զմայր՝ մահու վախճանեսցի :

6 Եւ դուք ասէք . Որ ասիցէ Հայրն իւր կամ մայրն իւր , Ձօ պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս , և ոչ պատուիցէ զՀայրն իւր և զմայրն իւր . և խոտեք զբանն Աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն :

7 Կեղծաւորք՝ բարւոք մարգարէացաւ Ի վերայ ձեր Եսայի՝ և ասէ :

8 Ժողովուրդս այս շրթամբք պատուէ զիս , և Ի սիրտ իւրեանց հեռացեալ մնկուսի է յինէն :

9 Օ՛ուր պաշտեն զիս . ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուիրեալս :

1 Ին ժամանակն Յիսուսի մօտ եկին Երուսաղէմից եկած[1] փարիսեցիքն և կարդացօղներն , և ասացին :

2 Ինչու՞ քո աշակերտներդ[2] ծերերի աւանդութենովն անց են[3] կենում . պատճառնոր՝ ձեռներըն չեն լուանում երբոր հաց են ուտում :

3 Ա՛յս էլ պատասխան տուաւ և նորանց ասաց . Ա՛պա դուք ինչու՞ Աստուծոյ պատուիրանքովն անց էք կենում ձեր աւանդութեան պատճառաւն :

4 Ինչուր՝ Աստուած ասաց . Քէ Պո հօրդդ և մօրդդ պատուիր[4] :

5 Եւ նա որ իրան հօրըն կամ մօրըն կը բամբասէ , մահով պիտի մեռնի[5] :

6 Եւ դուք ասումէք՝ Քէ Ով որ իրան հօրըն կամ մօրըն ասէ՝ Ձօ պատարագ է էն[6] , որ ինձանից պիտի շտվիս , և չի պատուէ իրան հօրըն և իրան մօրըն . և (էսպէս) ձեր աւանդութեան համար՝ Աստուծոյ խօսքըն ոչնչի տեղ էք դնում :

7 Կեղծաւորներ՝ լաւ մարգարէացաւ[7] ձեզ վերայ Եսային՝ և ասումէ :

8 Այս ժողովուրդս պատուշներովն է պատուում ինձ[8] . և իրանց սիրտն ինձանից հեռացած զգկված է :

9 Օ՛ուր աշխն են պաշտում ինձ . մարդկանցից պատուիրած վարդապետութիւններըն են սովորցնում[9]

(1) Մրկ · է · 1 : (2) Մրկ · է · 5 : (3) Կող · բ · 8 : (4) Ելք · բ · 12 : Ղեւ · ԺԹ . 3 : բ Օրին · է · 16 : Ա՛ռակ · իգ · 22 : Երեմ · ղ · 2 : (5) Ելք · իա · 17 : Ղեւ · բ · 9 : բ Օրին · իէ · 16 : Ա՛ռակ · բ · 20 : Լ · 17 : (6) Մրկ · է · 11 , 12 : (7) Մրկ · է · 6 : (8) Ա՛ռակ · ԼԲ · 13 : Երեմ · ղ · 31 : (9) Ա՛ռակ · ԼԲ · 13 : Կող · բ · 18—22 : Յես · ա · 15 :

Digitized by Google

10 Եւ կոչեցեալ առ ինքն զԺողովուրդսն՝ ասէ ցնոսա. Լուարուք և իմ՛ասջիք և մի՛ տառք:
11 Ո՛չ որ ինչ մտանէ ընդ բերանն՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ:

12 Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն ցնա. Գիտե՞ս զի փարիսեցիքն իրրև լուան զբանն՝ գայթակղեցան:
13 Ա՛յս պատասխանի եւս նոցա՝ և ասէ. Ամենայն տունկ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր, խլեսցի:
14 Թո՛ղ տուք զնոսա. Կոյրք են՝ կուրաց առաջնորդք. կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքեան ի խորխորատ անկանին:
15 Պատասխանի եւս Նմա Պետրոս և ասէ. Մեկնեա մեզ զառակս զայս:

16 Ասէ Յիսուս. Տակաւին և դուք անմիտք էք:
17 Եւ ոչ իմանայք, եթէ ամենայն որ մտանէ ի բերան, յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ:
18 Իսկ որ ելանէ ի բերանոյ՝ ի սրտէ անտի գայ. և այն պղծէ զմարդն:
19 Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանութիւնք, շնութիւնք, պոռնկութիւնք, գողութիւնք, սուտ վկայութիւնք, հայհոյութիւնք:
20 Այս ամենայն է՝ որ պղծէ զմարդն, այլ անլուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ:
21 Եւ ելեալ անտի Յիսուս գնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի:

22 Եւ ահա կին մի Քանանացի

10 Եւ ժողովուրդները իրան մօտ կանչեց, և նորանց ասաց. Լսեցէք և մտքներդ առէք[10]:
11 Ո՛չ թէ ինչ որ մտնում է բերանն[11], պղծում է մարդուն, այլ ինչ որ բերանից դուրս է գալիս, էն է որ մարդուն պղծում:
12 Այն ժամանակ նորա աշակերտները եկին՝ նորան ասացին. Գիտո՞ւմ ես՝ որ փարիսեցիքը երբոր էն բանըն լսեցին գայթակղվեցան:
13 Նա պատասխան տուաւ նորանց և ասաց. Ամէն տունկ[12] որ իմ երկնաւոր Հայրս չէ տնկել՝ թող պոկվի:
14 Թո՛ղ առէք նորանց՝ կոյր են կուրերի առաջնորդ[13]. կոյրն երբոր կուրին առաջնորդէ, կը մոլորվի՝ և երկուքն էլ փոսի մէջ կընկնին:
15 Պետրոս նորան պատասխան տուաւ՝ և ասաց. Այս առակը մեզ մեկնիր[14]:
16 Յիսուս ասաց. Դուք էլ դեռ անխելք էք[15]:
17 Եւ չէք իմանում, թէ ամէն բան որ բերանն է մտնում, փորն է գնում[16] և դուրս է գալիս:
18 Հապա էն ոք բերանիցն դուրս է գալիս[17], յաւուկ սրտիցն է գալիս՝ և էն է մարդուն պղծում:
19 Ինչուար՝ սրտիցն են դուրս գալիս չար խորհուրդներ[18]՝ սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ:
20 Այս ամէնս է՝ որ մարդուն պղծում. բայց անլուայ ձեռքով ուտելն՝ մարդուն չի պղծում:
21 Եւ Յիսուս էնտեղից դուրս եկաւ գնաց Տիւրոսի և Սիդոնի կողմերն[19]:
22 Եւ ահա մին Քանանեայի կին

(10) Մատ. է. 15: (11) Գործ. ժ. 15: Հռոմ. ժգ. 14. 17, 20: ա Տիմ. գ. 4: Տիտ. ա. 15: (12) Հռոմ. ժե. 2: ա Կորնթ. գ. 12, և այլն: (13) Նաում. բ. 16: Մատ. ր. 8: Մատթ. ժգ. 16: Դատ. ը. 39: (14) Մատթ. ժ. 17: (15) Մատթ. ժգ. 9: Մատթ. ժդ. 18: (16) ա Կորնթ. գ. 13: (17) Ղուկ. գ. 4: (18) Ելից. գ. 5: ը. 21: Ելից. գ. 14: Երեմ. ժե. 9: Մատթ. է. 21: (19) Ելից. է. 24:

Digitized by Google

'ի սահմանսդ անտի նոցա ելեալ , ա-
ղաղակեր և ասէր . Ողորմեա՛ ինձ
Տէր որդի Դաւթի , դուստր իմ
չարաչար այսահարի :
23 Եւ նա ոչ ետ նմա պատաս-
խանի . և մատուցեալ աշակերտքն
նորա՝ ազաչէին զնա և ասէին . Ար-
ձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր :

24 Եւ պատասխանի ետ և ասէ .
Ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ
ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի :

25 Եւ նա մատուցեալ երկիրպա-
գանէր նմա և ասէր . Տէր՝ օգնեա
ինձ :
26 Պատասխանի ետ նմա և ասէ .
Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց :
27 Եւ նա ասէ . Այո Տէր , քանզի
և շունք կերակրին 'ի փշրանաց
անկելոց 'ի սեղանոյ տեառն իւրեանց :
28 Յայնժամ պատասխանի ետ
նմա Յիսուս և ասէ . Ո՛վ կին դու՝
մեծ են հաւատք քո , եղիցի քեզ որպէս և կամիս . և բժշկեցաւ դուստր
նորա 'ի նմին ժամու :

29 Եւ գնացեալ անտի Յիսուսի ,
եկն 'ի ծովեզերն Գալիլեացւոց , և
ելեալ 'ի լեառն նստէր անդ :

30 Ա՝ատեան առ նա ժողովուրդք
բազումք , որ ունէին ընդ իւրեանս՝
կաղս , կոյրս , համրս , միակողմանս
և այլս բազումս . և ընկեցին
զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց
զնոսա .
31 Ա՝ինչ զարմանալ ժողովրդոցն՝
որ տեսանէին , զի համրքն խօսէին՝ կաղք գնային՝ միակողմանիք
բժշկէին՝ կոյրք տեսանէին , և փա-
ռաւորեցին զԱստուած Իսրայէլի :

32 Եւ Յիսուս կոչեալ զաշակերտս իւր ասէ . Ողորմիմ ես ժողովրդեանդ՝ զի արդ երիս աւուրս
համբերեցին ինձ՝ և չունին զինչ
կերիցեն . և զկերակրել նոցա ոչ
կամիմ՝ զի մի՛ նուաղեսցեն ճանապարհին :
33 Եւ ասեն ցնա աշակերտքն .
Զկո՞ւր մեզ յանապատի հանել հացս
բազումս՝ զի կերակրեսցեն զբազմութիւնս զայս :
34 Եւ ասէ ցնոսա Յիսուս . Քանի՞ հաց ունիք դուք . Եւ նոքա ասեն .
Եօթն , և սակաւ ինչ ձկունս :
35 Եւ պատուիրեաց ամբոխին՝
զի նստցին ի վերայ երկրի :
36 Եւ առեալ զեօթն հացսն և
զձկունսն , գոհացեալ՝ բեկանէր և
տայր աշակերտացն , և աշակերտքն
ամբոխին :
37 Եւ կերեալ ամենեքին՝ յագեցան , և առեալ զաւելորդսն կտորաց՝ եւթն սպիւռս լցին :
38 Եւ որ կերեալ էին՝ էին չորեքհազարք արանց , զատ ի կանանց և
ի մանկանց :
39 Եւ արձակեալ զամբոխն՝ նաւ
եհան , և եկն յազգս Մագադանու :

16 Եւ մերձեցեալ Փարիսեցիքն և
Սադուկեցիքն՝ փորձելով՝ խնդրէին
ի նմանէ , զի նշան յերկնից ցուցցէ
նոցա :
2 Եւ նա պատասխանի ետ և ասէ
ցնոսա . Երեկոյ եղեալ՝ ասէք . Պայծառ է երկինք , զի կարմրի :
3 Եւ առաւօտ՝ ասէք . Այսօր
ձմերուկ է , զի կարմրի և ստնանի
երկինք : Զերեսս երկնից գիտէք
զատել , և զնշանս ժամանակաց ոչ
կարէք :
4 Ազգ չար և շնացող նշան խնդրէ , և նշան ոչ տացի նմա՝ բայց
զնշանն Յովնանու մարգարէի : Եւ
թողեալ զնոսա՝ գնաց :
5 Եւ աշակերտքն եկեալ յայնկոյս
ծովուն՝ մոռացան հաց առնուլ :
6 Եւ Յիսուս ասէ ցնոսա . Տեսէք
և զգուշացարուք յաղանէ Փարիսեցւոց և Սադուկեցւոց :
7 Եւ նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին . Զի հաց չառինք :
8 Եւ գիտացեալ Յիսուս՝ ասէ .
Զի՞ խորհիք ընդ միմեանս , հաւատացեալք սակաւ , զի հաց չունիք :
9 Ոչ դեռ իմանայք , և ոչ յիշէք
զհինգ հացսն հազարացն , և զքանի՞ սպիւռս առէք :
10 Եւ ոչ զեօթն հացսն չորեքհազարացն , և զքանի՞ սպիւռս առէք :
11 Զիա՞րդ ոչ իմանայք , զի ոչ
վասն հացոյ ասացի ձեզ . զգուշացարուք յաղանէ Փարիսեցւոց և
Սադուկեցւոց :
12 Յայնժամ իմացան , զի ոչ ասաց զգուշանալ յաղանէ հացոյ ,
այլ ուսուցանելոյ Փարիսեցւոց և
Սադուկեցւոց :
13 Եւ եկն Յիսուս ի կողմանս
Կեսարիոյ Փիլիպպոսի , և հարցանէր
զաշակերտսն իւր՝ և ասէր . Զո՞ ասեն մարդիկ զիս որդի մարդոյ լինել :
14 Եւ նոքա ասեն . Ոմանք զՅովհաննէս Մկրտիչ , և այլք զԷղիա ,
և ուրեմնք զՅերեմիա կամ զմի ոք
ի մարգարէից :
15 Ասէ ցնոսա Յիսուս . Դուք
զիս զո՞ ասէք լինել :
16 Պատասխանի ետ Սիմոն Պետրոս և ասէ . Դու ես Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ :
17 Եւ պատասխանի ետ Յիսուս
և ասէ ցնա . Երանի՛ քեզ Սիմոն
Բարեհաս , զի մարմին և արիւն ոչ
յայտնեցին քեզ , այլ Հայրն իմ որ
յերկինս է :
18 Եւ ես ասեմ քեզ , զի դու ես
Պետրոս , և ի վերայ այսր վիմի
շինեցից զեկեղեցի իմ , և դրունք
դժոխոց ոչ յաղթեսցեն նմա :
19 Եւ տացեմ քեզ զբանալիսն
արքայութեան երկնից , և զոր կապեսցես յերկրի՝ կապեալ լիցի յերկինս , և զոր արձակեսցես յերկրի՝
արձակեալ լիցի յերկինս :
20 Յայնժամ պատուիրեաց աշակերտացն իւրոց՝ զի մի՛ ումեք ասասցեն , զի նա է Յիսուս Քրիստոս :
21 Սկսաւ յայնմհետէ Յիսուս
յայտնել աշակերտացն իւրոց , զի
երթայ յԵրուսաղէմ , և բազում
չարչարեսցի ի ծերոց և ի քահանայապետաց և ի դպրաց , և սպանցի ,
և յերրորդ աւուր յարիցէ :
22 Եւ առեալ զնա Պետրոս՝ սկսաւ
սաստել նմա՝ և ասէր . Ողորմեսցի
քեզ Տէր , մի՛ եղիցի այդ քեզ :
23 Եւ նա դարձեալ ասէ ցՊետրոս . Դարձի՛ զհետ իմ Սատանայ ,
ընդդիմակա՛ս իմ լեր , զի ոչ համի
զոր Աստուծոյ , այլ զոր մարդկան :
24 Յայնժամ Յիսուս ասէ ցաշակերտսն իւր . Եթէ ոք կամի զհետ
իմ գալ՝ ուրասցի զանձն իւր , և
առցէ զխաչ իւր , և հետեւեսցի ինձ :
25 Զի որ կամիցի զանձն իւր
կեցուցանել՝ կորուսցէ զնա . և որ
կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա :
26 Զի՞ օգտի մարդոյ եթէ զամենայն աշխարհ շահեսցի՝ զանձն
իւր կորուսցէ . կամ զի՞ տացէ մարդ
փոխանակ անձին իւրոյ :
27 Զի Որդի մարդոյ գալոց է
յաստուածութեան Հաւր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք , և յայնժամ հատուսցէ ամենայնի ըստ
գործոց նորա :
28 Ամէն ասեմ ձեզ , եթէ կան
յայսմանէ կայնելոցս՝ որ ոչ համեսցին զմահ , մինչև տեսցեն զՈրդի մարդոյ գալ յարքայութեան իւրում :

17 Եւ զվեց աւուրսն յետ այսոցիկ առնու Յիսուս զՊետրոս և
զՅակոբոս և զՅովհաննէս եղբայր
նորա , և տանի զնոսա յանդիման
ինքեան յանապատ լերինն :
2 Եւ պայծառացաւ առաջի նոցա
կերպարանօք , և երեսք նորա փայլեցին իբրև զարեգակն , և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև
զլոյս :
3 Եւ ահա երեւեցան նոցա Մովսէս և Եղիա՝ խօսակցեալ ընդ
նմա :
4 Եւ պատասխանի ետ Պետրոս
և ասէ ցՅիսուս . Տէր , բարի է մեզ
զայս լինել . եթէ կամիս , արասցուք
անդ երեք խորանս , քեզ մի՝ և Մովսիսի մի՝ և Եղիայի մի :
5 Եւ դեռ նա խօսէր՝ և ահա
ամպ լուսաւոր ծածկեաց զնոսա .
և ահա ձայն յամպէն ասէր . Այս է
Որդի իմ սիրելի , յորում հաճեցայ .
զնա լուարուք :
6 Եւ լուեալ աշակերտացն՝ անկան
ի վերայ երեսաց իւրեանց , և երկեան
յոյժ :
7 Եւ մերձեցեալ Յիսուս՝ հպեաւ
նոցա , և ասէ . Արդ յարուցէք և մի՛
երկնչիք :
8 Եւ համարձակեալ աչս իւրեանց՝ ոչ ոք տեսին , բայց միայն
Յիսուս :
9 Եւ իջանելոց նոցա ի լերինն՝
պատուիրեաց նոցա Յիսուս՝ և ասէ .
Մի՛ ումեք պատմեսջիք զտեսիլն՝
մինչև Որդի մարդոյ յերկելոց յարիցէ :
10 Եւ հարցանէին զնա աշակերտքն՝ և ասէին . Զի՞ ասեն դպիրքն՝ եթէ Եղիա նախ գալոց է :
11 Եւ նա պատասխանի ետ և
ասէ . Եղիա գալոց է նախ՝ և դարձուսցէ զամենայն ինչ :
12 Եւ ասեմ ձեզ , եթէ Եղիա
եկեալ է՝ և ոչ ճանաչեցին զնա , այլ
արարին ընդ նմա զոր կամեցան .
նոյնպէս և Որդի մարդոյ գալոց է
նախ՝ և տանջեսցին ի նոցանէ :
13 Յայնժամ իմացան աշակերտքն , զի զՅովհաննէս Մկրտչէ
ասաց նոցա :
14 Եւ մերձեցեալ առ ամբոխն՝
մարդ մի եկն առ նա , և անկեալ
ի գիրկս նորա՝ ասէ .
15 Տէր , ողորմեա՛ որդւոյ իմում՝
զի ցաւագին է , և չարչարի յոյժ .
զի յաճախ անկանի յերկիր և յերկիր , և յաճախ ընդ ջուր :
16 Եւ մերձեցուցի զնա աշակերտացդ քոց , և ոչ կարացին
բժշկել զնա :
17 Եւ պատասխանի ետ Յիսուս
և ասէ . Ո՛վ ազգ անհաւատ և
խոտոր , մինչև ե՞րբ ընդ ձեզ եղէց ,
մինչև ե՞րբ համբերեցից ձեզ . մատուցէք զնա առ իս հոս :
18 Եւ սաստեաց նմա Յիսուս՝
և ել ի նմանէ դեւն , և բժշկեցաւ
մանուկն յժամուն յայնմիկ :
19 Յայնժամ մերձեցեալ աշակերտքն առ Յիսուս՝ ասէին զգաստ .
Զի՞ մեք ոչ կարացաք հանել զդեւն :
20 Եւ ասէ ցնոսա Յիսուս . Վասն
սակաւ հաւատոյ ձերոյ . ամէն ասեմ
ձեզ , եթէ ունիցիք հաւատս իբրև
զհատ մանանխոյ , ասիցէք լերինդ
այդմիկ . Երթա՛ անտի անդր՝ և
երթիցէ , և ոչ ինչ անկարելի լինիցի
ձեզ :
21 Եւ այս ազգ ոչ ելանէ՝ բայց
աղաւթիւք և պահոք :
22 Եւ դարձեալ նոցա ի Գալիլեա՝ ասէ ցնոսա Յիսուս . Մատնելոց է Որդի մարդոյ ի ձեռս մարդկան :
23 Եւ սպանանիցեն զնա , և յերրորդ աւուր յարիցէ : Եւ տրտմեցան յոյժ :
24 Եւ մերձեցեալ նոցա ի Կափառնայում՝ մատուցին առաքեալքն
առ Պետրոս , և ասեն . Ոչ տուրս
տայ վարդապետ ձեր :
25 Եւ նա ասէ . Տայ : Եւ մտեալ
ի տուն՝ նախ քան զնա Յիսուս ասէ .
Զի՞ կարծես Սիմոն , թագաւորք երկրի յոմանց առնուն մաքս կամ
հարկս , յորդւոցն իւրեանց կամ յայլոց :
26 Եւ նա ասէ . Յայլոց : Ասէ
ցնա Յիսուս . Ապա ուրեմն որդիքն
ազատ են :
27 Բայց զի մի՛ գայթակղեցուսցուք , գնա՛ ի ծով , և արկ կարթ ,
և զառաջինն ձուկն որ ելցէ՝ առ ,
և բացեալ զբերանն նորա՝ գտցես
ստատեր մի , զայն առեալ տուր
նոցա վասն իմ և քո :

18 Յայնմ ժամու մերձեցան աշակերտքն առ Յիսուս՝ և ասեն .
Ո՞վ արդեօք մեծ է յարքայութեան
երկնից :
2 Եւ կոչեալ Յիսուս զմանուկ մի՝
կացոյց զնա առաջի նոցա :
3 Եւ ասէ . Ամէն ասեմ ձեզ , եթէ
ոչ դարձջիք և լինիջիք իբրև զմանկունս , ոչ մտանիջիք յարքայութիւն երկնից :
4 Ապա որ խոնարհեցուցանիցէ
զանձն իւր իբրև զմանուկս զայս՝
նա է մեծ յարքայութեան երկնից :
5 Եւ որ ընկալցի զմանուկ մի
զայսպիսի յանուն իմ՝ զիս ընկալցի :
6 Եւ որ գայթակղեցուցանիցէ
զմի ոք ի մանկանցս զայսոսիկ հաւատացելոցս յիս՝ լաւ է նմա եթէ
կապեսցի ջրաղացաքար մի ի պարանոցի նորա՝ և խորասուզեսցի
յանդունդս ծովուն :
7 Վա՛յ աշխարհի գայթակղութեանց պատճառ . զի պարտ է եկեալ գայթակղութեանց , բայց վա՛յ
մարդոյն յորմէ գայթակղութիւն
գայ :
8 Եւ եթէ ձեռն քո կամ ոտն քո
գայթակղեցուցանիցէ զքեզ՝ կտրեա՛
զնոսա և արկ ի քէն . լաւ է քեզ
մտանել ի կեանս կաղ կամ հաշեակ ,
քան զերկուս ձեռս կամ զերկուս
ոտս ունել և արկանել յհուր յաւիտենական :
(1) Հռով , բ · 21 : (2) ր Օրէն · ժե · 9 : Ընտ · խգ · 6 : Մտթ · զ · 28 : (3) Մտթ · ժբ · 30 : (4) Մտթ · իբ · 14 : (5) Մրկ · ժ · 32 : Ղտա · ժբ · 31 : Հռվ · ժբ · 12 : (6) Մտթ · ժզ · 21 : (7) Մտթ · իե · 2 : Մրկ · ժե · 1 · 16 · Ղտա · իթ · 1 · Հռվ · ժբ · 28 , և այլն : Գործ · գ · 13 : (8) Մրկ · ժ · 35 :

Digitized by Google

որդւոցն Ովբեդեայ որդւովքն իւրովք հանդերձ · երկիրպագանէր՝ և խնդրէր ինչ ի նմանէ ։

21 Եւ նա ասէ ցնա . Ովմ ինչ կամիս . ասէ ցնա . Ո՛սա զի նստցին սոքա երկու որդիքս իմ , մի ընդ աջմէ քումմէ՝ և մի ընդ ահեկէ յարքայութեան քումմ ։

22 Պատասխանի եւ Յիսուս և ասէ . Ո՛չ գիտէք զինչ խնդրէք . կարէք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն եմ , կամ զմկրտութիւնն զոր ես մկրտելոցն եմ՝ մկրտիլ . ասեն ցնա . կարօղ եմք ։

23 Ո՛ասէ ցնոսա Յիսուս . Ովբաժակն իմ ըմպիցէք , և զմկրտութիւնն որ ես մկրտելոցն եմ՝ մկրտիցիք , բայց նստուցանել ընդ աջմէ և ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ , այլ որոց առեալ է ի Հօրէ իմմէ ։

24 Եւ լուեալ տասանցն , բարկացան ի վերայ երկուցն եղբարց ։

25 Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն՝ և ասէ . Գիտէք՝ զի իշխանք ազգաց տիրեն նոցա , և մեծամեծքն իշխեն նոցա ։

26 Ո՛չ այնպէս իցէ և ի ձերում միջի . այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ ։

27 Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ ։

28 Որպէս Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել . և որդւոց մայրն իրան որդւոցն հետ նորա մօտ եկաւ[9] երկրպագութիւն էր անում , և նորանից մին բան էր խնդրում ։

21 Գլա էլ ասաց նորան . Ի՞նչ ես խնդրում . Նորան ասաց . Ո՛սա՝ որ ես իմ երկու որդիքս միմն քո աջ կողմդ՝ և միմն ձախ կողմդ նըստին քո արքայութեանդ[10] ։

22 Յիսուս պատասխան տուաւ և ասաց . Ձէք գիտում՝ թէ ի՞նչ էք խնդրում . կարո՞ղ էք դուք էն բաժակըն[11] (Նապըն) խմել՝ որ ես պիտի խմեմ . կամ էն մկրտութեննոյն[12] մըկըրտվիլ՝ որ ես պիտի մկրտվիմ . նորանք ասացին . Կարօղ ենք ։

23 Յիսուս նորանց ասաց . Իմ բաժակըս[13] կըխըմէք , և էն մկրտութեննոյն որ ես պիտի մկրտվիմ՝ կըմկրտվիք . բայց՝ իմ աջ և ձախ կողմս նստացնելն՝ իմն չէ որ տամ . բայց միայն նորանց որ իմ Հօրից պրծված է[14] ։

24 Եւ էն տասներն երբոր լսեցին[15] , բարկացան էն երկու եղբըց վերայ ։

25 Յիսուս նորանց կանչեց իրան մօտն՝ և ասաց . Գիտուտիք՝ որ ազգերի իշխաններն նորանց վերայ տիրապետութիւն են անում , և մեծամեծներն նորանց վերայ իշխանութիւն են անում ։

26 Ինպէս չըպիտի լինի ձեր միջումդ[16] . բայց ձեզանից ով որ կամենայ մեծ լինիլ , թող ձեզ պաշտօնեայ լինի[17] ։

27 Եւ ձեզանից ով որ կամենայ առաջին լինիլ[18] , թող ձեզ ծառայ լինի ։

28 Ինչպէս[19] որ՝ Որդին մարդոյ չեկաւ որ իրան ծառայեն[20] , բայց որ

(9) Մատթ . գ . 21 ։ (10) Մատթ . ժբ . 28 ։ (11) Մատթ . խգ . 39 . 42 ։ Մարկ . ժդ . 36 ։ Ղուկ . իբ . 42 ։ Յովհ . ժը . 11 ։ (12) Ղուկ . ժբ . 50 ։ (13) Ծնօթ . ժբ . 2 ։ Հռովմ . ը . 17 ։ բ Կորնթ . ա . 7 ։ Յայտ . ա . 9 ։ (14) Մատթ . իե . 34 ։ (15) Մարկ . ժ . 41 ։ Ղուկ . իբ . 24 , 25 ։ (16) ա Պետր . ե . 3 ։ (17) Մատթ . իգ . 11 ։ Մարկ . թ . 35 ։ ժ . 43 ։ (18) Մատթ . ժը . 4 ։ (19) Յովհ . ժգ . 4 ։ (20) Փիլիպ . բ . 7 ։

ասաղ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց :

29 Եւ յելանելն նոցա Յերիքովէ, գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք :

30 Եւ ահա կոյրք երկու նստեին առ ճանապարհաւն . իբրեւ լսեան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն . Ողորմեաց մեզ Յիսուս որդի Դաւթի :

31 Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն . և նոքա ևս առաւել աղաղակէին և ասէին , Տէր՝ ողորմեաց մեզ որդի Դաւթի :

32 Օ՛ծաւդի առ Յիսուս , կոչեաց զնոսա և ասէ . Ո՞ՀԻ կամիք , զի արարից ձեզ :

33 Ի՛սկն ցնա . Տէր՝ զի բացցին աչք մեր :

34 Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա , և վաղվաղակի տեսին և գնացին զհետ նորա :

29 Եւ երբոր Երիքովեցին դուրս եկին[24] , շատ ժողովուրդներ գնացին նորա ետևէն :

30 Եւ ահա երկու կոյր ճանապարհին վերայ նստած էին[25] . երբոր լսեցին՝ թէ Յիսուս անց է կենում , աղաղակեցին և ասացին . Յիսուս որդի Դաւթի՝ մեզ ողորմեա :

31 Եւ ամբոխն (խռնկեան) սաստեց նորանց՝ որ ձայն չըհանեն . և նորանք էլ աւելի աղաղակում էին և ասում . Տէր՝ որդի Դաւթի . մեզ ողորմեա :

32 Յիսուս կանգնեց՝ կանչեց նորանց և ասաց . Ի՞նչ էք ուզում որ անեմ ձեզ :

33 Նորան ասացին . Տէր՝ որ մեր աչքերն բացվին :

34 Եւ Յիսուս խղճաց . նորանց աչքերին մօտեցաւ՝ և շուտով տեսին . և նորա ետևէն գնացին :

ԿԱ · ԻԸ

1 Երբոր հասան Երուսաղէմին մօտ՝ եկան[1] և Բեթփագէ եկին Ձիթենեաց մօտին[2] մօտ , էն ժամանակն Յիսուս իրան աշակերտներից երկուսըն ուղարկեց :

2 Եւ նորանց ասաց . Գնացէք էգ գիւղը՝ որ ձեր առաջին է , և էնտեղ մին կապած էշ կըգտնէք՝ և քովումն էլ նորա հետ , նորան արձակեցէք բերէք ինձ մօտ :

3 Եւ թէ որ մին մարդ բան ասէ ձեզ . ասացէք թէ Նորանք Տէրին

1 Իբրև մօտ եղեն Երուսաղէմ , և եկին ի Բեթփագէ մերձ ի լեառն Ձիթենեաց . յայնժամ Յիսուս արձակեաց երկուս յաշակերտաց իւրոց :

2 Եւ ասէ ցնոսա . Երթայք ի գիւղդ՝ որ առաջի ձեր է , և անդէն գտանէք էշ կապեալ՝ և յաւանակ ընդ նմին . լուծէք ածէք ինձ :

3 Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ , ասասջիք , եթէ Տեառն իւրեանց պի-

(21) Դ՚ղ . իբ . 27 · Յովհ . ժգ . 14 : (22) Մտթ . իգ . 28 : Հռ՚մ . ե . 15 . 19 : Նէր . բ . 28 : (23) Նայ . ծգ . 10 , 11 : Դան . բ . 24 . 30 : Յովհ . ժա . 51 , 52 : ա Տի՛ . բ . 6 : Տիտ . բ . 14 : ա Պետ . ա . 19 : (24) Մրկ . ժ . 46 : Դ՚ղ . ժը . 35 : (25) Մտթ . բ . 27 : (1) Մրկ . ժա . 1 : Դ՚ղ . ժբ . 29 : (2) Ծատ . ժգ . 3 :

Digitized by Google

ասյ են . և վաղվաղակի առաքեսցէ զնոսա :
4 Այլց այս ամենայն եղև՝ զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ :

5 Ասացէք դստեր Սիովնի . ահա թագաւոր քո գայ քեզ հեզ , և հեծեալ յէշ և յաւանակի իշոյ :

6 Գնացին աշակերտքն , և արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս :

7 Եւ ածին զէշն և զյաւանակն , և արկին զնոքօք ձորձս իւրեանց . և նստաւ ի վերայ նոցա :

8 Եւ բազում ժողովուրդք տա-ւրածեցին զհանդերձս իւրեանց ՚ի ճանապարհին , և այլք հատանէին ոստս ՚ի ծառոց՝ և տարածանէին ՚ի ճանապարհին :

9 Եւ ժողովուրդքն՝ որ առաջին և զկնի երթային՝ աղաղակէին և ասէին . Օրհնութիւն որդւոյ Դաւթի . օրհնեալ որ գայ յանուն Տեառն . օրհնութիւն ՚ի բարձունս :

10 Եւ ՚ի մտանելն նորա Յերուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամենայն , և ասէ՝ Ո՞վ իցէ սա :
11 Եւ ժողովուրդքն ասէն . Այս է մարգարէն Յիսուս՝ որ ՚ի Նազարեթէ Գալիլեացւոց :
12 Եւ եմուտ Յիսուս ՚ի տաճարն՝ և եհան զամենեսին , որ վաճառէին և գնէին ՚ի տաճարի անդ . և զսեղանս հատավաճառացն կործանեաց՝ և զաթոռս աղաւնեվաճառացն :

13 Եւ ասէ ցնոսա . Գրեալ է Տուն իմ տուն աղօթից կոչեսցի . և դուք պէտք են . և շուտով կուղարկէ նոքանց :
4 Այլց էս ամէն բաներս էլաւ՝ որ մարգարէի խօսքն կատարվի որ ասում է :
5 Սիօնի աղջկանն[3] ասացէք . ա-հա՛ քո թագաւորդ քեզ մօտ է գալիս . հեզահոգի՝ և էշըն և իշի քուռակըն հեծած :
6 Աշակերտներըն գնացին և արին[4] ինչպէս որ Յիսուս հրամայեց նորանց :
7 Եւ էշըն և քուռակըն բերին՝ և իրանց շորերն նորանց վրայ քըցեցին[5] , և նորանց վերայ նստեց :
8 Եւ շատ ժողովուրդներ իրանց հագուստըն ճանապարհի վերայ փռեցին . և ուրիշներն ծառերից ճղներ էին կտրում և ճանապարհի վերայ փռում էին[6] :
9 Եւ ժողովուրդներն որ առաջին և եաւէն գնում էին , աղաղակում էին և ասում , Օրհնութիւն որդոյն Դաւթի[7] . օրհնեալ է նա[8] որ գալիս է Տեառն անունովն . օրհնութիւն ՚ի բարձունս :
10 Եւ երբոր նա Երուսաղէմ մտաւ[9] , բոլոր քաղաքն դղրդաց և ասաց՝ Այս ո՞վ է :
11 Եւ ժողովուրդներն ասացին . Այս Յիսուս մարգարէն[10] է՝ որ Նազարէթից է :
12 Եւ Յիսուս մտաւ տաճարն[11] և ամէնին որ տաճարի մէջն ծախում էին և առնում էին , դուրս հանեց . և բոլոր փոխողների[12] (սահնէյնէր) սեղանները՝ և աղաւնի ծախողների աթոռները կործանեց :
13 Եւ ասաց նորանց . Գրվածք է՝ թէ Իմ տունս աղօթքի տուն[13] պէտք

(3) Նոմ . կբ . 11 : Ղևտ . բ . 9 : Յեսի . ժբ . 15 : (4) Մատ . ժա . 4 : (5) գ Թագ . բ . 13 : (6) Ի Մակ . ժգ . 40 : Յեսի . ժբ . 13 : (7) Մատ . ԻՀ . 25 : (8) Մատ . ԻԺ . 26 : Մատթ . ԻԳ . 39 : (9) Մատթ . ժա . 15 : Ղուկ . ԺԹ . 45 : Յեսի . բ . 13 . 15 : (10) Մատթ . բ . 23 : Ղուկ . է . 16 : Յովհ . զ . 14 : է . 40 . բ . 17 : (11) Մատթ . ժա . 11 : Ղուկ . ԺԹ . 45 : Յեսի . բ . 15 : (12) Բ Օրէն . ԺԴ . 25 : (13) Նոմ . ծգ . 7 :

Digitized by Google

արարիք զդա այրս աւազակաց :

14 Եւ մատեան առ նա կղերք և կաղք ՚ի տաճարին , և բժշկեաց զնոսա :

15 Իբրև տեսին քահանայապետքն և դպիրք զսքանչելիսն զոր արար , և զմանկտին որ աղաղակէին ՚ի տաճարին և ասէին , Ովսաննա , օրհնութիւն Որդւոյ Դաւթի , բարկացան :

16 Եւ ասեն ցնա . Լսե՞ս զինչ ասեն դոքա . ասէ ցնոսա Յիսուս . Այո՛ , չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ ՚ի բերանոյ աղայոց և ծանդիեցաց կատարեցեր զօրհնութիւն :

17 Եւ թողեալ զնոսա եկ արտաքոյ քաղաքին ՚ի Բեթանիա , և անդ գիշեր :

18 Եւ այգուցն իբրև դարձաւ անդրէն ՚ի քաղաքն քաղցեաւ :

19 Եւ տեսեալ թզենի մի ՚ի վերոյ ճանապարհին՝ եկն ՚ի նա , և ոչ ինչ եգիտ ՚ի նմա՝ բայց միայն տերև . և ասէ ցնա . Ի՛չ այսուհետև ՚ի քէն պտուղ եղիցի յաւիտեան . և առժամայն չորացաւ թզենին :

20 Իբրև տեսին աշակերտքն՝ զարմացան և ասեն , Թէ ո՞իարդ վաղվաղակի ցամաքեցաւ թզենին :

21 Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ ցնոսա . Ամէն ասեմ ձեզ , եթէ ունիցիք հաւատս և ոչ երկմտիցէք՝ ոչ միայն թզենւոյդ առնիցէք , այլ թէպէտ և լերինդ ասիցէք , Համբիր և անկիր ՚ի ծով , եղիցի :

22 Եւ զամենայն ինչ զոր և խնդրիցէք յաղօթս հաւատովք՝ առնուցուք :

է կոչվի . և դուք աւազակների բուն էք արել դորան[14] :

14 Եւ տաճարի միջումն կուրեր և կաղեր եկին նորա մօտ՝ և նորանց բժշկեց :

15 Երբոր քահանայապետներն և կարդացօղներն էն հրաշքներըն տեսին որ արաւ , և երեխաներըն որ տաճարի միջումն աղաղակում էին և ասում . Ովսաննա , օրհնութիւն Որդոյ Դաւթի , բարկացան :

16 Եւ նորան ասացին . Լսո՞ւմ թէ դորանք ինչ են ասում : Յիսուս նորանց ասաց . Այ . դուք էն չէք կարդացել՝ թէ աղաների և կաթնկերների բերանից օրհնութիւն հասատատեցիր[15] :

17 Եւ նորանց թողէց՝ քաղաքըն դուրս գնաց դէպի Բեթանիա՝ և (գիշերն) էնտեղ մնաց[16] :

18 Եւ առաւօտեան[17] երբոր մինէլ յետ դարձաւ քաղաքն , սովեց :

19 Եւ ճանապարհին վերայ մին թըզի ծառ[18] տեսաւ՝ նորա մօտ եկաւ և նորա վերայ բան չզտաւ , բայց միայն տերև . և նորան ասաց . Որանից ետև յաւիտեան քեզանից էլ պտուղ չըլինի . և շուտով էն թըզի ծառն չորացաւ :

20 Աշակերտներն երբոր տեսին՝ զարմացան[19] և ասացին թէ Ո՞նչպէս շուտով թըզի ծառն չորացաւ :

21 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորանց . Ա՛շմարիտըն ասում եմ ձեզ . թէ որ հաւատք[20] ունենաք և չէ՛ երկմտէք[21] , ոչ թէ միայն թըզի ծառին էդ կանէք , այլ թէ որ էդ սարիդ էլ ասէք՝ Վե՛ր կաց և ծովն ընկի՛ր[22] , կըլինի :

22 Եւ ամէն ինչ՝ որ աղօթքի մէջ հաւատքով խնդրէք[23] , կառնէք :

(14) Նբդ . է . 11 : Մարկ . ժա . 17 : Ղուկ . ԺԹ . 46 : (15) Մատ . ը . 2 : (16) Մարկ . ժա . 11 : Ցովհ . ժա . 18 : (17) Մարկ . ժա . 12 : (18) Մարկ . ժա . 13 : (19) Մարկ . ժա . 20 : (20) Մատթ . ԺԷ . 19 : Ղուկ . ԺԷ . 6 : (21) Ցով . ա . 6 : (22) ա Կորնթ . ԺԳ . 2 : (23) Մատթ . է . 7 : Մարկ . ժա . 24 : Ղուկ . ժա . 9 : Ցով . է . 16 : ա Ցովհ . գ . 22 : է . 14 :

Digitized by Google

23 Եւ իբրեւ եկն ի տաճարն · մատեան առ նա մինչդեռ ուսուցանէր , քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն՝ և ասեն . Որով իշխանութեամբ առնես զայդ . և ո՞վ ետ քեզ զիշխանութիւնդ զայդ :

24 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա . Հարցից և ես զձեզ բան մի . զոր թէ ասիցէք ինձ , և ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ առնեմ զայս :

25 Այ՛կրտութիւնն Յովհաննու ուստի՞ էր , յերկնից թէ ի մարդկանէ . և նոքա խորհէին ընդ միմեանս՝ և ասէին ,

26 Եթէ ասեմք Յերկնից , ասէ ցմեզ . Ւնդ ընդէր ո՛չ հաւատացիք նմա . և եթէ ասեմք ի մարդկանէ , երկնչիմք ի ժողովրդենէն . զի ամենեքին զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին :

27 Պատասխանի ետուն Յիսուսի և ասեն . Ո՛չ գիտեմք . ասէ ցնոսա և նա . Եւ ո՛չ ես ասեմ ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս :

28 Ւնչ զկարդ թուի ձեզ . առն միոջ էին երկու որդիք , և մատուցեալ առ առաջինն ասէ . Ո՛րդեակ՝ երթ այսօր գործեա յայգւոջ :

29 Ւնդ պատասխանի ետ և ասէ . Երթեմ Տ՛էր , և ո՛չ գոգաւ :

30 Ա՝տեաւ և առ միւսն , և ասէ նոյնպէս . Նա պատասխանի ետ և ասէ . Ո՛չ կամիմ . յետոյ զղջացաւ՝ և գոգաւ յայգին :

31 Ւ՞րդ՝ ո՞ յերկոցունց արար զկամս հօրն . ասեն՝ Ետերինն . ասէ ցնոսա Յիսուս . Ւ՛մէն ասեմ ձեզ , զի մաքսաւորք և պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքայութիւն երկնից :

23 Եւ երբեր եկաւ տաճարն[24] դեռքանի որ էնտեղ սովորցնումէր , քահանայապետներն և ժողովրդի ծերերն նորա մօտ եկին և ասացին[25] . Դու ի՞նչ իշխանութենով կա՞ս անում էդ . և ո՞վ տուաւ քեզ էդ իշխանութիւնըդ :

24 Յիսուս պատասխան տուաւ՝ և ասաց նորանց . Ես էլ ձեզանից մին բան կը՛հարցնեմ . թէ որ էն ինձ ասէք , ես էլ ձեզ կասեմ՝ թէ ի՞նչ իշխանութեամբ եմ անում էս :

25 Յօհաննէսի մկրտութիւնըն աք տեղից էր , երկնքի՞ցն էր , թէ մարդկանցի՞ցն . և նորանք իրանց մէջ միտք էին անում և ասում էին ,

26 Մե՞ որ ասենք՝ Երկնքի՞ցն էր , կասէ մեզ թէ՝ Ւ՞նչու չը՞հաւատացիք նորան . և թէ որ ասենք՝ Մարդկանցի՞ն , ժողովրդի՞ց վախենումենք . ինչուայ՝ ամէնքն Յօհաննէսին մարգարէի տեղ էին ընդունում[26] :

27 Պատասխան տուին Յիսուսին և ասացին . Չենք գիտում . նա էլ նորանց ասաց . Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ի՞նչ իշխանութենով եմ անում էս :

28 Ա՞ինչն թէ՝ ի՞նչպէս է երեւում ձեզ . մին մարդ երկու որդի ունէր . և եկաւ առաջինին ասաց . Ո՛րդի՝ գնա՛ էս օր այգումը (պողնում) լուն արա :

29 Եւ նա պատասխան տուաւ և ասաց . Կը՛գնամ Տ՛էր . և չը՛գնաց :

30 Ւն մէկելն մտան էլ գնաց և էնպէս ասաց . Նա պատասխան ուղաւ և ասաց . Չեմ կամենում . յետոյ զղջացաւ՝ և գնաց այգին :

31 Ւ՞ինկ էս երկուսից քո՛ն արաւ իւրան հօր կամքըն . ասացին՝ Ետերինն : Յիսուս նորանց ասաց . Ճշմարիտըն ասումեմ ձեզ . որ մաքսաւորներն (ՊՀնդուչէնե՛ր) և պոռնիկներն[27] ձեզանից առաջ կը՛մտնեն երկնքի արքայութիւնն :

(24) Մատ . ժա . 27 : Ղուկ . բ . 1 : (25) Նե՛ . բ . 16 : Գործ . գ . 7 : ե . 27 : (26) Մատ . ժգ . 5 : Մատ . չ . 20 : Ղուկ . բ . 6 : (27) Ղուկ . է . 29 . 50 :

Digitized by Google

32 Օ՜ի եկն Յովհաննէս ճանապարհաւ արդարութեան՝ և ոչ հաւատացիք նմա · և մաքսաւորք և պոռնիկք հաւատացին նմա , և դուք տեսիք՝ և ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա :

33 Լա՛ւ առակ լուարուք · Այր մի էր տանուտէր՝ որ անկեաց այգի և ցանգով պատեաց զնա , և փորեաց ՚ի նմա ճնձան , և շինեաց աշտարակ · և եհան զնա գիշակս , և գնաց ՚ի ստր աշխարհ :

34 Իբրև մերձեցաւ ժամանակ պաղղ , առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպաուղս նորա :

35 Եւ կալեալ մշակացն զծառայս նորա , զոմն տանջեցին՝ զոմն սպանին՝ զոմն քարկոծեցին :

36 Յարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն , և արարին նոցա նոյնպէս :

37 Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր՝ և ասէ · Խնդրեսցեն համարձեսցին զորդի իմ :

38 Իսկ մշակքն իբրև տեսին զորդին , ասեն ընդ միմս · Այս է ժառանգն , եկայք սպանցուք զնա , և կալցուք զժառանգութիւնն նորա :

39 Եւ առեալ հանին զնա արտաքս քան զայգին՝ և սպանին :

40 Արդ՝ յորժամ եկեսցէ տէր այգեացն , զի՞նչ արասցէ մշակացն այնոցիկ :

32 Ինչուա՛ր՝ Յովհաննէս ճարտարթափանցն ճանապարհովն[28] եկաւ՝ և չըհաւատացիք նորան · և մաքսաւորներն[29] և պոռնիկներն հաւատացին նորան · և դուք տեսիք և չըզղջացաք՝ որ յետոյ հաւատաք նորան :

33 Ուրիշ առակ եւս լսեցէ՛ք · Այն տանուտէրը մարդ կար՝ որ այգի (պող) տնկեց և նորան պարսպով պատեց[30] · և նորա մէջն ճնձան փորեց և աշտարակ (պուրջ) շինեց · և տուաւ նորան մշակներին , և գնաց հեռու աշխարհ[31] :

34 Երբոր պտղի ժամանակն մօտեցաւ , իրան ծառաներըն ուղարկեց մշակներին մօտ՝ որ նորա պըտուղներըն առնեն[32] :

35 Եւ մշակներն նորա ծառաներըն բռնեցին՝ մէկըն տանջեցին , մէկելըն սպանեցին , մէկելըն էլ քարկոծեցին[33] :

36 Այ՝ինէլ ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններիցն շատ՝ և նոքա նոցա էլ էնպէս արին :

37 Յետոյ իրան որդին նորանց մօտ ուղարկեց և ասաց · Կըլինի որ էս իմ՝ որդուցս ամաչեն :

38 Հայց մշակներն երբոր որդին տեսին , իրանց մէջտեղն ասացին · Էն է ժառանգն[34] · եկէ՛ք սրան սպանե՛նք[35] , և սորա ժառանգութեանն տիրապետեսնե՛նք :

39 Եւ բռնեցին նոքան[36] · այգուցըն (պողէնի) դուրս հանեցին և սպանեցին :

40 Այ՝պա երբոր են այգի տէրն գայ , ի՞նչ կանէ են մշակներին :

(28) Մատթ · գ · 1 , Խոյն : (29) Լուկ · գ · 12 , 13 : (30) Մատ · ՀԱ · 9 · Մրկ · ԺԲ · 11 : Նաոմ · ե · 1 : Երեմ · բ · 21 : Մատ · ժբ · 1 : Լուկ · ի · 9 : (31) Մատթ · ԻԵ · 14 , 15 : (32) Երեմ · ը · 11 , 12 : (33) ԲՄնաց · իէ · 21 : ԼԶ · 16 : Նեհեմ · ք · 26 : Մատթ · ե · 12 : իգ · 34 , 37 : Գործ · է · 52 : ա Թես · բ · 15 : Երեմ · ժա · 26 , 27 : (34) Յովհ · բ · 3 : Երեմ · ա · 2 : (35) Յովհ · իբ · 2 : Մատթ · իգ · 3 : իե · 1 · Յովհ · ժա · 53 : Գործ · գ · 27 : (36) Մատթ · իգ · 50 , Խոյն : Մատթ · ժգ · 46 , Խոյն : Լուկ · իա · 54 , Խոյն : Յովհ · ժբ · 12 , Խոյն : Գործ · բ · 23 :

Digitized by Google

41 Ա՛սեն ցնա . Ո՛չարսն չարաւ կորուսանէ . և զայգին տացէ այլոց մշակաց , որք տացեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց :

42 Ա՛սէ ցնոսա Յիսուս . Ունի՞ք երբէք ընթերցեալ ձեր ի գիրս . Ո՛վէ՞ն զոր անարգեցին շինողքն , նա եղև գլուխ անկեան . ի Տեառնէ եղև այս , և է սքանչելի յաչս մեր :

43 Վասն այսորիկ ասեմ ձեզ , Ո՛չ բարձցի ի ձէնջ արքայութիւնն Աստուծոյ , և տացի ազգի՝ որ առնիցէ զպտուղս նորա :

44 Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ՝ փշրեսցի , և յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա :

45 Եւ լուան քահանայապետքն և դպիրք և փարիսեցիք զառակս նորա , գիտացին՝ թէ վասն նոցա ասաց :

46 Եւ խնդրէին զնա ունել , բայց երկեան ի ժողովրդոցն . քանզի իբրև զմարգարէ ունէին զնա :

41 Ասեն նորան ասացին[37] . Նո՛ն չարքն չար պատժով կկորուսանէ[38] , և այգին կտայ ուրիշ մշակների[39] որ նորա պտուղները տան իրան ժամանակումն :

42 Յիսուս նորանց ասաց . Ի՞ոկի մին ժամանակ դուք չէք կարդացել գրքումն[40] թէ նո՛ն քարն , որ շինողներն անարգեցին , նա էլաւ անկիւնի գլուխ . էս բանս Տէրիցն էլաւ՝ և մեր աչքերի առաջին զարմանալի է :

43 Վրա համար ասումեմ ձեզ . որ Աստուծոյ արքայութիւնն ձեզանից վեր կառնվի[41] , և էն ազգին կըտրվի , որ նորա պտուղները կըբերէ :

44 Եւ ո՛վ որ էս քարիս[42] վերայ ընկնի՝ կըփշրվի . և ո՛ւմ վերայ որ նա ընկնի , կըջարդէ նորան[43] :

45 Երբոր քահանայապետներն և կարդացողներն և փարիսեցիքն նորա առակներն լսեցին , հասկացան՝ որ իրանց համար ասաց :

46 Եւ խնդրուելին որ բռնեն նորա , բայց ժողովուրդներից վախեցան . ինչուր՝ նորան մարգարէի տեղ էին ընդունում[44] :

ԳԼ • ԻՒ

1 Յաղագս որդւոյն հարցանելի առակն : 9 Հրեայոցն կոչմէն : 12 Հարսանիքի շոր հանդերձի պահիծն : 15 Պատերի հարկ առն պէտք է : 23 Իբրեաս սադուկեցիքն յաղթուելոյան համար կըպատասխանեն : 35 Օրինագէտին ցոյց կըտայ թէ որն է առաջին և մեծ պատուիրանքն : 41 Նէ Աստիայի համար փարիսեցիներն չհոգեմտելոյան մէջ կըբռնէ :

1 Պատասխանեալ պատասխանի եւս Յիսուս , և ասէ ցնոսա առակօք :

2 Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն թագաւորի՝ որ արար հարսանիս որդւոյ իւրում՝ :

1 Պինել Յիսուս պատասխան տուաւ՝ և նորանց ասաց առակներով :

2 Երկնքի արքայութիւնն նմանեցաւ թագաւոր մարդոյ , որ իրան որդոյն հարսանիք արաւ :

(37) Նո՛ւղ . ի . 16 : (38) Նո՛ւղ . իա . 28 : Ներ . բ . 2 : (39) Գործ . ժգ . 46 : ժե . 7 : ժբ . 6 : իբ . 28 : Հռոմ . թ , ժ , ժա : (40) Պսաղ . ճժբ . 23 : Նաայ . իբ . 16 : Պետ . ժբ . 10 : Նո՛ւղ . ի . 17 : Գործ . դ . 11 : Եփես . բ . 20 : ա Պետր . բ . 6 , 7 : (41) Պետր . բ . 12 : (42) Նաայ . ը . 14 , 15 : Ա՛ղտ . ժբ . 3 : Նո՛ւղ . ի . 18 : Հռոմ . թ . 33 : ա Պետր . բ . 8 : (43) Նաայ . ի . 12 : Գան . բ . 44 : (44) Վէր . 11 : Նո՛ւղ . ե . 16 : Հովհ . է . 40 : (1) Նո՛ւղ . ժգ . 16 : Հայտ . ժԲ . 7 . 9 :

Digitized by Google

3 Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւիրեալսն ՚ի հարսանիս. և ո՛չ կամեցան գալ:

4 Կրկնեալ առաքեաց այլ ծառայս՝ և ասէ. Ընացէք հրաւիրեցէն. ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զեզարակը իմ և պարարտակք զեներալ են, և ամենայն ինչ պատրաստ է. եկայք ՚ի հարսանիս:

5 Եւ նոքա յուշացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր, և ոմն ՚ի վաճառ իւր:

6 Եւ այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին, և սպանին:

7 Իսկ թագաւորն իբրև լուաւ՝ բարկացաւ, և առաքեաց զզօրս իւր և սատակեաց զսպանօղսն զայնոսիկ, և զքաղաքն նոցա այրեաց:

8 Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են, և հրաւիրեալքն չէին արժանի:

9 Երթայք երթիք յանցս ճանապարհաց, և զորս միանգամ գտանիցէք՝ կոչեցէք ՚ի հարսանիս:

10 Եւ ելեալ ծառայքն ՚ի ճանապարհս ժողովեցին զամենեսեան զորս և գտին՝ զչարս և զբարիս. և լցան հարսանիքն բազմականօք:

11 Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն, եհաս անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց:

12 Եւ ասէ ցնա. Ո՛նկեր՝ զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունիր հանդերձ հարսանեաց. և նա պապանձեցաւ:

13 Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորան. Կապեցէք զոտս զորա զոսս և զձեռս՝ և հանէք զդա ՚ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ և կրճտել ատամանց:

3 Եւ իբրեն ծառաներն ուղարկեց՝ որ հրաւիրած մարդիքն կանչեն հարսանիքն. և նորանք չկամեցան գալ:

4 Կրկին ուրիշ ծառաներ ուղարկեց և ասաց. Ընացէք հրաւիրածներուն. ահա իմ սեղանըս պատրաստեցի. իմ արջառներս և մատցուներս մորթված են[2], և ամեն բան ներս պատրաստ է, եկէք հարսանիքն:

5 Եւ նորանք հոգս չբրին՝ և գընացին, մինն իրան արան, և միւսն իրան առուտուրի ետևէն:

6 Եւ ուրիշներն նորա ծառանեըրն բռնեցին՝ թուքնամուր տուին և սպաննեցին:

7 Երբոր թագաւորն երբոր էս լսեց, բարկացաւ՝ և իրան զօրքըն ուղարկեց[3] և էն սպանօղներն սատակեց, և նորանց քաղաքըն այրեց:

8 Յետ ժամանակին իրան ծառանեըրին ասաց. Հարսանիքս պատրաստ է՝ և հրաւիրածներն արժանի չէին[4]:

9 Ուրեմն գնացէք դէպի ճանապարհներուն անցքն (կէնէվնէրն)՝ և ում որ գտնէք, կանչեցէք հարսանիքս:

10 Եւ ծառաներն դուրս գնացին՝ ճանապարհներուն վերայ ում որ գտին՝ չարն և բարին՝ ամեն ժողովեցին[5] և հարսանիքն հարսանեքաւորներով լցվաւ:

11 Եւ թագաւորն մտաւ՝ որ սեղանն նստողներին միկ անէ, և էնտեղ մին մարդ տեսաւ՝ որ հարսանիքի շոր չէր հագած[6]:

12 Եւ նորան ասաց՝ Ընկեր քինէս տիր դու էստեղ՝ որ հարսանիքի շոր չունէիր. և նա պապանձվեցաւ:

13 Յետ ժամանակին թագաւորն ասաց ծառաներին, Ոտրա ոտներըն և ձեռներըն կապեցէք. և դրսան դրսի խաւարն հանեցէք[7]. էնտեղ որ լաց՝ և ատամներն կըճտնեն կըլինի:

(2) Ընտ. բ. 2: (3) Դան. բ. 26: Ղուկ. ժբ. 27: (4) Մարկ. ժ. 10. 13: Ղուկ. ժգ. 46: (5) Մարկ. ժգ. 38. 47: (6) Ա Կորնթ. ե. 3: Կէթս. գ. 24: Կող. գ. 10. 12: Յայտ. գ. 4: ժզ. 15: ժբ. 8: (7) Մարկ. ը. 12:

Digitized by Google

14 Օ՛ի քաղուածք են խոչընդոտք, և սակաւք են ընտրեալք։

15 Այնժամ գնացեալ փարիսեցիքն, առին խորհուրդ զնմանէ թէ որպէս զդիցեն նմա որոգայթ բանից։

16 Եւ առաքեն առ նա զաշակերտս իւրեանս Հերովդիանոսեանցն հանդերձ՝ և ասեն. Վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, և զճանապարհն Աստուծոյ ճշմարտութեամբ ուսուցանես, և ոչ է քեզ փոյթ զումեքէ, և ոչ հայիս յերեսս մարդոյ։

17 Ասա մեզ, զիա՞րդ թուի քեզ. Պարտ է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ։

18 Գիտաց Յիսուս զխորամանկութիւն նոցա, և ասէ. Օ՛ի փորձէք զիս կեղծաւորք։

19 Ցուցէք ինձ դրամ հարկին. և բերին մատուցին նմա դահեկան մի։

20 Եւ ասէ ցնոսա. Պատկեր եւ գիր սա՝ կամ ո՞ւր է պատկեր այս՝ կամ գիր։

21 Ասեն՝ կայսեր. Յայնժամ ասէ ցնոսա. Երթայք՝ տուք զկայսերն՝ կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ։

22 Լուան՝ զարմացան. և թողին զնա և գնացին։

23 Յայնմ աւուր մատեան առ նա ազատուկեցիքն, որ ասեն՝ թէ Չիք յարութիւն. հարցին զնա

24 Եւ ասեն. Վարդապետ՝ Մովսէս ասաց. Եթէ ոք մեռցի անորդի՝ այրասցէ զկին նորա եղբայր իւր, և յարուսցէ զաւակ եղբօր իւրոմ։

25 Էին առ մեզ եղբարք եօթն. առաջինն արար կին՝ և մեռաւ. և զի ոչ ունէր զաւակ, եթող զկինն իւր եղբօր իւրոմ։

14 Ուշադի՛ր չատ են կանչեցեալ և քիչ են ընտրեալք[8]։

15 Ի ժամանակն փարիսեցիքն գնացին՝ նորա համար խորհուրդ արին՝ թէ ի՞նպէս խօսքերով որոգայթի (ծուղակ) քցեն նորան։

16 Եւ ի նոցանէ աշակերտներն իւրեանց հետ նորա մօտ ուղարկեցին և ասացին. Ա՛ր դաստիարա՛կ գիտենք որ ճշմարիտ ես՝ և ճշմարտութեամբ ճանապարհն ճշմարտութեան կուսուցանես, և խակի մէկ մարդուց հոգս չունիս, և մարդոց երեսպաշտութիւն չես անում։

17 Արեա՛մն ասա մեզ. ի՞նչպէս է երևում քեզ. կայսերին հարկ տալ պէ՞տք է, թէ չէ։

18 Գիտաց նորանց չարութիւնն խմացաւ և ասաց. Կեղծաւո՛ր էք փորձում ինձ կեղծաւորներ։

19 Ա՛ռարկի տակէն ցո՛յց տուէք ինձ. և նորանք մի դահեկան հանեցին տուին նորան։

20 Եւ նորանց ասաց. Կա՛ պատկերս կամ գիրս ո՞ւմն է։

21 Ասացին՝ կայսերի. Էն ժամանակն ասաց նորանց. Ի՛նչ էք կայսերինըն կայսերին տուէք[10], և Աստուծունըն Աստուծոյն։

22 Երբոր լսեցին, զարմացան. և նորան թողին և գնացին։

23 Էն օրն ատուկեցիքն նորա մօտ[11] եկին՝ որ ասում են՝ թէ կարութիւն չկայ[12]. և նորան հարցրին

24 Եւ ասացին. Վա՛ր դաստիարա՛կ՝ Մովսէն ասաց[13], թէ որ մին մարդ առանց զաւակի մեռնի, նորա կինը թո՛ղ իրան եղբայրն առնէ, և իրան եղբօր համար զաւակ վերկացընէ։

25 Վա՛ղ մօտ եօթն եղբարք կային. նորանց առաջինն կին առաւ և մեռաւ, և որովհետև զաւակ չունէր՝ իրան կինը թողեց իրան եղբօրն։

(8) Մատթ. բ. 16։ (9) Մարկ. ժբ. 13։ Ղուկ. բ. 20։ (10) Մատթ. ժե. 25։ Ղուկ. ժգ. 7։ (11) Մարկ. ժբ. 18։ Ղուկ. բ. 27։ (12) Գործ. իգ. 8։ (13) Օրին. իե. 5։

26 Այնպէս և երկրորդն, և երրորդն, մինչև ցեօթներորդն:
27 Յետ ամենեցուն մեռաւ և կինն:
28 Յարդ՝ ի յարուցմանն որո՞ յեօթանցն եղիցի նա կին. զի ամենեքին կալան զնա կին:

29 Պատասխանի ետ Նոցա Յիսուս և ասէ. Մոլորեալք՝ ոչ գիտէք զգրսն և ոչ զզօրութիւն Աստուծոյ:

30 Զի ի յարուցմանն ոչ կանայս առնեն՝ և ոչ արանց լինին, այլ են իբրև ՚ղՀրեշտակս յերկինս:

31 Եւայց վասն յարուցմանն մեռելոց չիցէ ընթերցեալ ձեր զասացեալն ձեզ ՚ղԱստուծոյ:

32 Ես եմ Աստուած Աբրահամ, Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ. և չէ Աստուած Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց:

33 Իբրև լուան ժողովուրդքն՝ զարմանային ընդ վարդապետութիւն նորա:

34 Իսկ փարիսեցիքն իբրև լուան՝ եթէ պատասխանեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին:

35 Եւ եհարց մի ոմն ի նոցանէ՝ ըզնա փորձելով, և ասէ:

36 Ո՛վ վարդապետ՝ որո՞ պատուիրան է մեծ յօրէնս:

37 Եւ Յիսուս ասէ ցնա. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ՝ և յամենայն անձնէ քումմէ՝ և յամենայն մտաց քոց:

38 Այս է մեծն և առաջին պատուիրան:

39 Եւ երկրորդն նման սմին. Սիրեսցես զընկերն քո՝ իբրև զանձն քո:

26 Նոյնպէս էլ երկրորդ (եղբայրն) և երրորդն՝ մինչև եօթներորդն:
27 Ի՛մէնքն եւս կինն էլ մեռաւ:
28 Ի՛պա յարուցման ժամանակումն են եօթնիցն նա որին պիտի լինի կին. ինչու որ՝ ամէնքն նորան իրանց կին առին:

29 Յիսուս նորանց պատասխան տուաւ և ասաց. Ա՛ղոր մոլորուածներ՝ դուք ոչ դիրքըն էք գիտում[14] և ոչ Աստուծոյ զօրութիւնն:

30 Ինչուոր՝ յարուցման ժամանակումն ոչ կին կառնեն. և ոչ մարդոյ կըզնան. բայց երկնքումն հրեշտակներ նման են[15]:

31 Ա՛իայն թէ մեռելներն յարուցման համար դուք չէք կարդացել էն Աստուածանից ձեզ ասվածըն:

32 Ես եմ Աբրահամի Աստուածն, Իսահակայ Աստուածն, և Յակոբի Աստուածն[16]. և Աստուած մեռելների Աստուած չէ, այլ կենդանիների:

33 Երբոր ժողովուրդներն լսեցին, զարմանում էին նորա վարդապետութեան վերայ[17]:

34 Իսայց փարիսեցիքն երբոր լսեցին[18], թէ սադուկեցիներին պապանձացրուց, միտեղ հաւաքվեցան:

35 Եւ նորանցից մինն փորձելով հարցրուց նորան[19], և ասաց:

36 Ո՛վ վարդապետ՝ օրէնքումն որո՞ պատուիրանք է մեծ:

37 Եւ Յիսուս նորան ասաց. Սիրիր քո Տէր Աստուածդ քո ամէն սրտովդ՝ քո ամէն անձովդ՝ և քո ամէն մտքովդ[20]:

38 Այ՛ս է մեծ և առաջին պատուիրանքն:

39 Եւ երկրորդն սրան նման. Պիտ ընկերըդ քո անձիդ պէս սիրիր[21]:

(14) Յով. ի. 9: (15) ա Յով. գ. 2: (16) Եր. գ. 6. 16: Մատ. ժբ. 26: Ղուկ. ի. 37: Գործ. է. 32: Եբր. ժա. 16: (17) Մատ. է. 28: (18) Մատ. ժբ. 28: (19) Ղուկ. ժ. 25: (20) բ Օրին. զ. 5: ժ. 12: լ. 6: Ղուկ. ժ. 27: (21) Ղևտ. ժգ. 18: Մատ. ժբ. 19: Մատ. ժբ. 31: Ղուկ. ժ. 27: Հռով. ժգ. 9: Գաղ. ե. 14: Յով. բ, 8:

Digitized by Google

40 Այս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան ։
41 Եւ ՚ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց ցնոսա Յիսուս՝ և ասէ ։

42 Զի՞նչ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՛ր որդի է. ասեն ցնա՝ Դաւթի ։
43 Ասէ ցնոսա Յիսուս. Ապա զի՞նչպէս Դաւիթ ՚ի հոգւոյն կոչէ զնա Տէր՝ և ասէ ։
44 Ասաց Տէր ցՏէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։

45 Ապա եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զի՞նչպէս որդի նորա իցէ ։

46 Եւ ո՛չ ոք կարէր առ նմա պատասխանի բան մի, և ո՛չ իշխեր ոք յայնմ օրէ հարցանել զնա և ոչինչ ։

40 Ի սա երկու պատուիրանքեցս ամէն օրէնքն և մարգարէքն կախված են[22] ։
41 Եւ երբոր փարիսեցիքն հաւաքված էին[23], Յիսուս նորանցից հարցրուց՝ և ասաց ։
42 Ձեզ ինչպէս է երևում Քրիստոսի համար՝ ումի որդին է. նորան ասացին. Դաւթի ։
43 Յիսուս էլ նորանց ասաց. Ապա ինչպէս Դաւիթ ՚ի հոգւոյն նորան Տէր է կոչում՝ և ասում ։
44 Տէրն իմ Տէրին ասաց[24]. Թէ նմ ալ կողմն նաբէր, մինչև քո թշնամիներըն քո ոտացդ հոխելիք դնեմ ։
45 Ապա՝ թէ որ Դաւիթ նորան Տէր է կոչում, ինչպէս նորա որդին կըլինի ։
46 Եւ ո՛չ ոք կարօղ էր մին բան պատասխան առալ նորան[25]. և էն օրիցն եաւ՝ էլ մինն էր համարձակվում[26] որ նորանից իսկի մին բան հարցնէ ։

ԳԼ. ԻԳ.

1 Քրիստոս խրատուէ ժողովուրդն որ կարգացողների և փարիսեցիների ասածներն անեն, բայց նորանց գործերին պէս չանեն ։ 5 Իրան աշակերտներին պէտք է որ նորանց փառաբանութիւններից զգոյշ լինեն ։ 13 Ուր վայ կէսարդայ նորանց կեղծաւորութեան և խաբեբայութեան վերայ ։ 34 Նա նրանսայէսի կործանվելոյն վերայ մարգարէութիւն է անում ։

1 Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդսն՝ և ընդ աշակերտսն իւր, և ասէ ։
2 Յաթոռն Մովսէսի նստան դպիրքն և փարիսեցիք ։

3 Զամենայն ինչ զոր ասիցեն ձեզ՝ արարէք և պահեցէք. բայց ըստ գործոցն նոցա մի՛ առնէք, զի ասեն և ո՛չ առնեն ։

1 Յետոյ ժամանակն Յիսուս ժողովուրդներին և իրան աշակերտներին հետ խօսեց, և ասաց ։
2 Մովսէսի աթոռին վերայ կարգացողներն և փարիսեցիքն նստեցին[1] ։
3 Ամէն ինչ որ կասեն ձեզ՝ արէք և պահեցէք. բայց նորանց գործքերին պէս մի՛ անէք. ինչու որ ասում են և չեն անում[2] ։

(22) Մատ. է. 12 ։ ա Տիմ. ա. 5 ։ (23) Մարկ. ժբ. 35 ։ Ղուկ. բ. 41 ։ (24) Սաղմ. ճժ. 1 ։ Գործ. բ. 34 ։ ա Կորնթ. ժե. 25 ։ Եբր. ա. 13 ։ ժ. 12, 13 ։ (25) Ղուկ. ժդ. 6 ։ (26) Մարկ. ժբ. 34 ։ Ղուկ. բ. 46 ։ (1) Նեհեմ. ը. 4. 8 ։ Մաղ. բ. 7 ։ Մարկ. ժը. 38 ։ Ղուկ. բ. 45 ։ (2) Հռովմ. բ. 19, Եսայի ։

Digitized by Google

4 Վասին բեռինս ծանուննս և դժուարակիրս, և գնեն ՚ի վերայ ուսոց մարդկան. և մատամբ իւրեանց չչ կամին շարժել զնոսա։

5 Եւ զամենայն գործս իւրեանց առնեն ՚ի ցոյց մարդկան. լայնեն զպատուականս իւրեանց, և երկայնեն զքղանցս հանդերձից իւրեանց։

6 Սիրեն զառաջադահս յընթրիս, և զնախաթոռս ՚ի ժողովուրդս՝ և զողջոյնս ՚ի հրապարակս։

7 Եւ կոչել ՚ի մարդկանէ՝ Ռաբբի Ռաբբի։

8 Ոչա դուք մի՛ զոք կոչէք Ռ. ուսուցիչ. և ամենեքին դուք եղբարք էք։

9 Եւ հայր մի՛ կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է Հայր՝ որ յերկինսն է։

10 Եւ մի՛ կոչիցիք ուսուցիչք, զի Ռաբբի ձեր Քրիստոս է։

11 Եւ մեծն ՚ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։

12 Ոք բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեցի, և որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի։

13 Ո՛վ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ո՛չ մտանէք, և որոց մտանելն՝ չեալք թոյլ մտանել։

14 Ո՛վ ձեզ դպրաց և փարիսեցւոց

4 Նոքա և գժուար տանելի բեռունք[3] են կապեալ և մարդկանց ուսերի վերայ են դնեալ, և իրանց մատովն չեն ուզում շարժել նորանց։

5 Եւ իրանց ամէն գործքերըն[4] մարդկանց ցոյց տալոյ համար են առնում. իրանց գրապանակներըն[5] (օրէնք չէին գրելոյ) լայնացնում են. և իրանց շորերի ծայրըն երկայնացնում են։

6 Սիրեն նստելոյ ժամանակն սիրում են վերևի տեղերըն[6], ժողովարանների միջումն առաջին աթոռներըն, և փողոցների միջումն բարև առնելըն։

7 Եւ մարդկանցից Ռաբբի Ռաբբի կոչվիլն։

8 Ոչայց դուք մինին Վարդապետ չը՛կանչէք[7]. պատճառն որ ձեր Վարդապետն մին է. և դուք ամէնքդ եղբարք էք։

9 Եւ երկրիս վերայ մինին ձեզ Հայր չը՛կանչէք. ինչուր՝ ձեր Հայրըն մին է՝ որ երկնքումն է[8]։

10 Եւ դուք առաջնորդ չը՛կանչվիք. ինչուր՝ ձեր Առաջնորդն Քրիստոսն է։

11 Եւ նա՝ որ ձեր միջումն մեծ է, ձեզ ծառայ պիտի լինի[9]։

12 Իվ որ իրան անձըն կըբարձրացընէ՝ կըխոնարհվի[10]. և նա որ իրան անձըն կըխոնարհացնէ՝ կըբարձրանայ։

13 Ալ ձեզ կարդացողներ և փարիսեցիներ կեղծաւորներ[11]. որ երկնքի արքայութիւնն մարդկանց առաջին փակումք. դուք չէք մտնում՝ և նորանց որ մանումն թոյլ չէք տալիս որ մանեն։

14 Ալ ձեզ կարդացողներ և

(3) Ղ. ժա. 46։ Գործ. ժե. 10։ Գաղ. գ. 13։ (4) Ասպր. ղ. 1, 2. 5. 16։ (5) Թուոց. ժե. 38։ բ Օրին. գ. 8։ իբ. 12։ Ընդ. դ. 3։ (6) Մտթ. ժբ. 38, 39։ Ղ. ժա. 43։ ի. 46։ դ Ցովհ. 9։ (7) Ցով. դ. 1։ բ Կորնթ. ա. 24։ ա Պետր. ե. 3։ (8) Մտ. ա. 6։ (9) Մտթ. ի. 26, 27։ (10) Ցովբ. իբ. 29։ Ընդ. ժե. 33։ ԽԲ. 23։ Ղ. ժդ. 11։ ժբ. 14։ Ցով. դ. 6։ ա Պետր. ե. 5։ (11) Ղ. ժա. 52։

Digitized by Google

առց կեղծաւորաց . զի ուսէք զգուշանալ յարեաց՝ պատճառանօք երկար ազօթից , վասն զի աւելի դատաստան ընդունիցիք :

15 Ալ այ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց . զի յածիք ընդ ծով և ընդ ցամաք առնել եկամուտս մի . և յորժամ լինիցի , առնէք զնա որդի գեհենի կրկին ևս քան զձեզ :

16 Ալ այ ձեզ առաջնորդք կոյրք , որ ասէք՝ Որ երդնու ի տաճարն՝ չէ ինչ , բայց որ երդնու յոսկին որ ի տաճարին է՝ արժան է :

17 Այ՝ որո՞նք և կոյրք՝ զի՞նչ մեծ է , ասկին՝ եթէ տաճարն՝ որ սրբէ զոսկին :

18 Եւ որ երդնու ի սեղանն՝ չէ ինչ , բայց որ երդնու ի պատարագն որ ի վերայ նորա է՝ արժան է :

19 Հիմարք և կոյրք՝ զի՞նչ մեծ է , պատարագն , եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն :

20 Իսկ արդ՝ որ երդուաւ ի սեղանն , երդնու ի նմա՝ և յամենայն որ ի վերայ նորա է :

21 Եւ որ երգուաւ ի տաճարն , երդնու ի նմա՝ և ի բնակիչն նորա :

22 Եւ որ երգուաւ յերկինս , երդնու յաթոռն Աստուծոյ՝ և յայն որ նստին ի վերայ նորա :

23 Ալ այ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց . զի տասանդեակ զանանուխ և զսամիթ և զչամանն , և թողիք զծանր ծանր օրէնս փարիսեցիներ կեղծաւորներ . որ տրեւելբրներէ սընորըն աստուածք[12] և պատճառներով երկար ազօթք էք անում նրա համար աւելի դատաստան կառնէք :

15 Ալ այ ձեզ կարդացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ . որ ծով և ցամաք շուռ էք գալիս՝ որ մի մարդ հաւատք բերէք . և երբար կըլինի , նորան երկու տակ ձեզանից աւելի գեհենի որդի էք անում :

16 Ալ այ ձեզ կոյր առաջնորդներ[13] որ ասում էք՝ Թէ ով որ տաճարով վրն երդում ուտէ[14] , բան չէ . բայց նա որ ոսկովն երդում ուտէ որ տաճարի մէջն է , պարտական է (անելոյ) :

17 Ա՛նմիտներ և կուրեր . սրն է մեծ , ոսկի՞ն թէ տաճարն՝ որ սուրբ կուն սրբում է[15] :

18 Եւ նա որ սեղանովն երդում ուտէ՝ բան չէ . բայց նա որ նորա վերայ լինօղ պատարագովն երդում ուտէ , պարտական է :

19 Կո՛յրներ և կո՛ւրեր . սրն է մեծ , պատարագն թէ սեղանն[16] , որ պատարագին սրբում է :

20 Ա՛ւրինակ ով որ սեղանովն երդում կերաւ , նա նորանով՝ և էն ամէն բաներովն երդում կերաւ՝ որ նորա վերայ են :

21 Եւ նա որ տաճարովն երգում կերաւ՝ նորանով և նորա միջումն բնակօղովն երգում կերաւ[17] :

22 Եւ նա որ երկնքովն երգում կերաւ , Ա՛ստուծոյ աթոռովն երգում կերաւ[18] , և նորանով էլ՝ որ նորա վերայ նստում է :

23 Ալ այ ձեզ կարգացօղներ և փարիսեցիներ կեղծաւորներ . որ տասնանուխին և սամիթին և չամանին աստանդրդ էք տալիս[19] , և թողում

(12) Աստ . մբ . 40 : Գ՛օհ : ի . 47 : բ Տի՛մ . գ . 6 : Տի՛տ . ա . 11 : (13) Աստ . ժե . 14 : Ա՛ստ . 23 : (14) Աստ . է . 33 , 34 : (15) Ա՛ստ . ՛ . 29 : (16) Ա՛ստ . ՛ . 37 : (17) ի քնտ . ը . 13 : ի Աստ . զ . 2 : Աստ . ՛ . 8 : Ա՛ստ . 24 : (18) Աստ . է . 34 : Աստ . ժա . 4 : Գ՛ոտթ . է . 49 : (19) Ա՛ստ . ժա . 42 :

Digitized by Google

նացն՝ զգաստասան և զոզըրմանքիւն և զՀաւատս . զայս արժան էր առնել և զայն չթողուլ :

24 Կ՚առջնորդէք կոյրք , որ զմժղուխս քաղէք և զուղտս կլանէք :

25 Ալ այ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց . զի սրբէք զարտաքինն զաժակին և զսկաւառակին , և ՚ի ներքոյ լի են յափշտակութեամբ և անխտանութեամբ :

26 փարիսեցի կոյր՝ սրբեա նախ զներքինն բաժակին և զսկաւառակին , զի լինիցի և արտաքինն նոցա սուրբ :

27 Ալ այ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց . զի նման էք գերեզմանաց լուսեղց . որ արտաքոյ երևին գեղեցիկք՝ և ՚ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ :

28 Այսպէս և դուք արտաքոյ երևիք մարդկան արդարք , և ՚ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ և անօրէնութեամբ :

29 Ալ այ ձեզ դպրաց և փարիսեցւոց կեղծաւորաց . զի շինէք ըզշէրմս մարգարէից՝ և զարդարէք զգերեզմանս արդարոց :

30 Եւ ասէք . Եթէ էաք յաւուրս հարցն մերոց , ոչ հաղորդեաք արեան մարգարէիցն :

31 Վասն ասելոյն վկայէք զանձանց՝ եթէ որդիք էք այնոցիկ՝ որ կոտորէին զմարգարէսն :

32 Եւ դուք լցէք զչափ հարցն ձերոց :

33 Օձք՝ ծնունդք խիժից , զկնի՞գ փախուցուք ՚ի դատաստանէ գեհենին :

ամէն օրինաւոր ծանր ծանր բաներըն[30] դատաստանն , ողորմութիւնն և հաւատարմութիւնն . էս պիտի էր անել՝ և էն չթողուել :

24 Կոյր առաջնորդներ . որ մըժիղնիրըն քամուիք , և ուղտերըն կուլ էք տալիս :

25 Ալ այ ձեզ կարդացողներ և փարիսեցիներ կեղծաւորներ . որ քամուիքն (խոպան) և ափսուսակըն (տահանըն) դըրսևանց սրբուելիք[31] եւ ներսևանց յափշտակութենով և անկարգութենով լիքն էք :

26 Կոյր փարիսեցի՝ առաջ բաժակի և ափսուսակի մէջըն սրբիր , որ նորանց գուրսն էլ սուրբ լինի :

27 Ալ այ ձեզ կարդացողներ և փարիսեցիներ կեղծաւորներ . որ նմանէք ծեփած գերեզմաններին[32] , որ դըրսևանց գեղեցիկ են երևում՝ և ներսևանց մեռելների ոսկերքով և ամէն պղծութենով լիքն են :

28 Նոյնպէս էլ դուք դըրսևանց արդար էք երևում մարդկանց և ներսևանց կեղծաւորութենով և անօրէնութենով լիքն էք :

29 Ալ այ ձեզ կարդացողներ և փարիսեցիներ կեղծաւորներ[33] . որ մարգարէների տապանները շինում եք և արդարների գերեզմանները զարդարում եք :

30 Եւ ասում եք , Եթէ մեր հարանց օրերումն լինէինք , մենք մասնակից չէինք լինիլ մարգարէների արիւնին :

31 Ուրեմն դուք ձեզանից վկայում , թէ նորանց որդիքն էք՝ որ մարգարէներին կոտորեցին[34] :

32 Եւ դուք ձեր հարանց չափը լցրել էք[35] :

33 Օձեր՝ (իժ) օձերի զաւակներ[36] , ինչպէս կըփախչիք գեհենի դատապարտութիւնից :

(30) Մատթ . ի . 23 : Ուխտ . ղ . 6 : Մատթ . ղ . 8 : Մատթ . ի . 16 : Ժբ . 7 : (31) Մատթ . է . 4 : Գործ . ժ . 39 : (32) Գործ . ժ . 44 : Գործ . իդ . 3 : (33) Գործ . ժ . 47 : (34) Գործ . է . 51 , 52 : ա Կին . բ . 15 : (35) Գործ . ժէ . 10 : ա Թես . բ . 16 : (36) Մատթ . գ . 7 : Ժբ . 34 :

Digitized by Google

34 Վ ասեն այդպիսիկ ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս և իմաստունս և դպիրս, և ի նոցանէ սպանանիցէք և խաչ հանիցէք, և ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս ձեր, և հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք:

35 Որպէս զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հեղեալ յերկրի. յարենէն Հաբելի արդարոյ մինչև զարիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքիայ՝ զոր սպանէք ընդ միջ սրահարին և սեղանոյ:

36 Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ:

37 Երուսաղէմ, Երուսաղէմ. որ կոտորէիր զմարգարէսն և քարկոծ առնէիր զառաքեալսն առ քեզ. քանի՛ անգամ կամեցայ ժողովել զորդիս քո՝ որպէս ժողովէ հաւ զձագս իւր ընդ թեւովք, և ո՛չ կամեցարուք:

38 Ահա թողեալ լիցի ձեզ աւերակ:

39 Ասացի ասեմ ձեզ՝ թէ ոչ և ես տեսանիցէք զիս յայսմ հետէ, մինչև ասիցէք, Օրհնեալ եկեալ յանուն Տեառն:

34 Վասն այսորիկ՝ ահա ես ձեզ եմ մարգարէներ և իմաստուններ և կարդացօղներ կուղարկեմ[27]. և դուք ոմանցից կըսպանէք[28] և խաչ կըհանէք՝ և ոմանցից ձեր ժողովարանների մէջ կըտանջէք՝ և քաղաքից քաղաք կըհալածէք[29]:

35 Որ եկեսցէ ձեզ վերայ գոյ ամէն արդար արիւնք[30] որ երկրի վերայ թափեալ է. արդար Աբելի[31] արիւնից մինչև Զաքարիայի որդի Բարաքիայի արիւն[32], որ ոմանց սրահարի և սեղանի մէջ սպանեցիք:

36 Ճշմարիտ ասեմ ձեզ. որ ի՛ն ամէնն կըգայ ես ազգիս վերայ:

37 Երուսաղէմ՝ Երուսաղէմ՝ որ մարգարէներըն կոտորումիս[33], և քեզ մեռ ուղարկածներըն քարկոծումիս[34]. քանի՛ անգամ կամեցայ ես երեխաներըն ժողովել[35]. ինչպէս որ հաւն իրան ձագերըն թեւերի տակն է ժողովում[36], և դուք չըկամեցաք:

38 Ի՛նչ ձեր տունն աւերված կըթողվի ձեզ:

39 Ասացի ասումիմ ձեզ. թէ չի՛ տեսնիլ ինձ՝ մինչև որ ասէք. Օրհնեալ է Տէրի անունով եկածն[37]:

ԿԻ. ԻՒՆ

1 Երբ տաճարին կարեւորութիւնն առաջուց է ասում. 3 ինչ նշանից առաջ լինէ և որպէս մեծ նեղութիւններ կըլինին. 29 նմ թէ իրան գաւազանի գալոյ նշանները ինչ են, 36 նմ էն օր և էն ժամ յայտնի չէ. 42 պէտք է որ բարի ծառաների պէս արթուն կենանք, ամէն ժամումն մեր Տէրոջ գալոյն սպասելով:

1 Եւ ելեալ արտաքս Յիսուս ի տաճարէն գնայր. և մատանան աշակերտքն իւրոցն ցուցանել նմա զշինուածս տաճարին:

1 Եւ Յիսուս տաճարիցն դուրս եկեալ գնում էր[1]. և աշակերտներն իւր մօտ եկին՝ որ տաճարի շինուածքն ցոյց տան նորան:

(27) Ասաք. բա. 34, 35: Ղուկ. ժա. 49: (28) Գործ. է. 40: է. 58, 59: իգ. 19: (29) Ասաք. ժ. 17: բ Կորնթ. ժա. 24, 25: (30) Ելոպ. ժբ. 24: (31) Ղևտնդ. գ. 8: ա Յովհ. գ. 12: (32) բ Պնոց. խգ. 20, 21: (33) Ղուկ. ժգ. 34: (34) բ Պնոց. խդ. 21: (35) բ Օրէն. լբ. 11, 12: (36) Ասաք. ժէ. 8: զա. 4: (37) Ասաք. ԻՀԲ. 26: Ասաք. խա. 9: (1) Ասաք. ժգ. 1: Ղուկ. խա. 5:

Digitized by Google

2 եւ նա պատասխանի ետ եւ ասէ ցնոսա . Տիսանիք զայդ ամենայն , ասէն ասեմ ձեզ . Ոչ ձեռացէ այդր քար ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի :

3 Եւ մինչդեռ նստէր ի լերինն Ձիթենեաց , մատեան առ նա աշակերտքն առանձինն եւ ասեն . Ի՞նչ ասէ՝ երբ լինիցի այդ , եւ կամ զի՞նչ նշան իցէ քոյդ գալստեանն եւ վախճանի աշխարհիս :

4 Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա . Զգոյշ լերուք գուցէ ոք զձեզ խաբիցէ :

5 Զի բազումք գայցեն յանուն իմ , եւ ասիցեն՝ թէ Ես եմ Քրիստոս , եւ զբազումս մոլորեցուցանիցեն :

6 Լսելոց էք պատերազմունս՝ եւ համբաւս պատերազմաց . զգոյշ լերուք՝ մի՛ խռովիսջիք , զի պարտ է լինել այնմ ամենայնի , այլ չէ է կատարած :

7 Յարիցէ ազգ յազգի վերայ , եւ թագաւորութիւն ի թագաւորութեան վերայ . եւ եղիցին սովք եւ երաշտութիւնք եւ սատանութիւնք ի տեղիս տեղիս :

8 Սակայն եւ այն ամենայն սկիզբն է երկանց :

9 Յայնժամ մատնեսցեն զձեզ ի նեղութիւն , եւ սպանանիցեն զձեզ . եւ եղիջիք ատելեալք յամենայն ազգաց վասն անուան իմոյ :

10 Եւ յայնժամ գայթակղեսցեն բազումք , եւ զմիմեանս մատնեսցեն՝ եւ ատեսցեն զմիմեանս :

11 Եւ բազում սուտ մարգարէք

2 եւ նա պատասխան տուեալ՝ ասաց նորանց . Տեսանի՞ք զդա ամենայն . ճշմարիտն ասեմ ձեզ . որ ի դէզ քար քարի վերայ չի ձեռք որ չընդկանդվի՞ :

3 Եւ երբոր Ձիթենեաց սարի վերայ նըստած էր , աշակերտանէն առանձին նորա մօտ՝ եկին՝ և ասացին . Ա՛յս մեզ՝ . էգ դանդ երբ կըլինի . կամ թէ գալուդ և աշխարհքիս վերջին նշանն ի՞նչ է :

4 Յիսուս պատասխան առաւ՝ և նորանց ասաց . Զգոյշ կացէք որ չըլինի թէ մինն խաբէ ձեզ՝ :

5 Ինչուր՝ շատ մարդիք կըգան իմ անունովս և կասեն՝ թէ ես Քրիստոսն եմ՝ . և շատերըն կըմոլորացընեն՝ :

6 Կռիւներ և կռիւներէն համբաւ լսելու էք . զգոյշ կացէք , մի՛ շփոթվիք . ինչուս որ՝ էն ամէն բաներն պէտք է լինին . մինչ թէ դեռ վերջըն չէ :

7 Ազգ ազգի վերայ վերկըկենայ՝ , և թագաւորութիւն թագաւորութեան վերայ . և սովեր կըլինին . և աստիկ մահեր՝ և տեղ տեղ երկրի շարժմունքներ :

8 Ասոնց դեռ էն ամէնն՝ նեղութեանց սկիզբն է :

9 Յն ժամանակն ձեզ նեղութեանց մէջ կըբռնեն՝ . և ձեզ կըսպանեն , և իմ անունիս համար ամէն ազգերին ատելի կըլինիք :

10 Եւ էն ժամանակն շատեր կըգայթակղվին[10] . և իրար կըմատնեն և իրար կատեն :

11 Եւ շատ սուտ մարգարէք գուքս

(2) գ Խոչ . ք . 7 : Նյեմ . խգ . 18 : Մի՛ . գ . 12 : Ղ . ոսի . ժբ . 44 : (3) Մարկ . ժգ . 3 : (4) ա Թես . ե . 1 : (5) Նյեմ . ե . 6 : Ներ . բ . 8 . 18 : բ Թես . բ . 3 : ա Ցովհ . գ . 1 : (6) Նյեմ . ժգ . 14 : Ես . 21 . 25 : Վ՚յր . 24 : Ցովհ . ե . 43 : (7) Վ՚յր . 11 : (8) բ Մնաց . ժե . 6 : Նաոյ . ժբ . 2 : Ընկ . բ . 22 : Ղ՚ոսի . ժգ . 13 : (9) Մատթ . ժ . 17 : Մարկ . ժգ . 9 : Ղ . ոսի . ք . 12 : Ցովհ . ժե . 20 : ժգ . 2 : Գործ . գ . 3 , 8 : է . 59 : ժբ . 1 : ա Գերզ . գ . 16 : Ցայտ . բ . 10 . 13 : (10) Մատթ . ժա . 6 . ժգ . 57 : բ Յեմ . ա . 15 : գ . 10 . 26 :

Digitized by Google

յարիցին, և զլսացեալսն մեղուցուսցեն :

12 Եւ վասն բազմանալոյ անօրէնութեան, յամեքելոցի սէրն բազմասցի :

13 Ոչ ոք որ համբերեսցի խոստո, նա կեցցէ :

14 Եւ քարոզեսցի աւետարանս արքայութեան ընդ ամենայն սին վերս՝ ի վկայութիւն ամենայն հեթանոսաց, և ապա եկեսցէ կատարած :

15 Արդ՝ յորժամ տեսանիցէք ըզպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է ի Դանիէլէ մարգարէէ . Որ կայցէ ի տեղւոյն սրբութեան . որ ընթեռնուն՝ ի միտ առցէ :

16 Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախչիցեն ի լերինս :

17 Եւ որ ի տանիս կայցէ, մի՛ իջցէ առնուլ ինչ ի տանէ իւրմէ :

18 Եւ որ յանդի իցէ, մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր :

19 Ոչ ոք վայ իցէ յղեաց և սանձառուց յաւուրսն յայնոսիկ :

20 Յաղօթս կացէք՝ զի մի՛ լինիցի փախուստն ձեր ձմերոյ, և մի՛ ի շաբաթու :

21 Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղեւ ի սկզբանէ աշխարհածոց աշխարհի մինչև ցայժմ, և ոչ ապա լիցի :

22 Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այնոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին . բայց վասն ընտրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ :

կրգան[10] և չասերըն կըմոռասցընեն[11] :

12 Եւ անօրէնութեան չասանալուց պատճառաւ՝ չասերի սէրն կըցամաքի :

13 Ոչ ով որ մինչև վերջն կըհամբերէ[12], նա կապրի :

14 Եւ էս աւրքայութեան աւետարանս[13] ամէն աշխարհքումն կըքարոզվի[14] որ ամէն հեթանոսներին վըկայութիւն լինի՝ և յետոյ վերջն կրգայ :

15 Ուրեմն երբոր աւերածի պղծութիւնն[15] տեսնէք, որ Դանիէլ մարգարէի ձեռքովն ասված է[16] (Որ որբութեան տեղումն կըկանգնի . ով որ կարդայ թող միտք առնէ[17] :

16 Յն ժամանակն նորանք՝ որ Հրէաստանումն (ըջհուդայաստան) են, թող սարերն փախչին :

17 Եւ ով որ կըտարի վերայ կայ՝ թող վեր չըգայ, որ իրան տանիքըն մին բան վեր առնէ :

18 Եւ ով որ յանդումն է՝ թող յետ չդի դառնայ որ իրան շորերըն վերառնէ :

19 Ոխայ էն օրերումն վայ կըլինի յղացածներին և ծիծ տուօղներին[18] :

20 Աղօթք արէք՝ որ էն ձեր փախչելն ձմեռան ժամանակումն և շաբաթ օրումն չըլինի :

21 Զատճառն՝ էն ժամանակն մեծ նեղութիւն կըլինի[19] . ինչպէս որ աշխարհքիս սոեղծագործութեան ըսկիզբից մինչև հիմիկ չէլաւ՝ և էլ չի լինիլ :

22 Եւ թէ որ էն օրերն չըկարճանային, խալխ մին մարմին չէր ապրիլ . բայց ընտրվածներուն համար էն օրերն կըկարճանան[20] :

(11) Մատթ. ը. 15. Պետ. ի. 29. բ. Պետ. բ. 1. (12) ա Յհ. գ. 1. վԼբ. 5. վԼաք. 24. (13) Մատթ. ժ. 22. Մարկ. ժգ. 13. Նբէ. գ. 6. 16. Հռոմ. բ. 19. (14) Մատթ. գ. 23. բ. 35. (15) Մարկ. ժգ. 15. ՀՈռովմ. ժ. 18. Կող. ա. 6. 23. (16) Մարկ. ժգ. 14. Դան. խ. 30. (17) Դան. բ. 27. ժբ. 11. (18) Դան. բ. 33. 35. (19) Հովէլ. խբ. 29. (20) Դան. բ. 26. ժբ. 1. Հովէլ. բ. 2. (21) Նաում. կ. 8, 9. Ովտ. ժգ. 2, 3.

Digitized by Google

23 Վայելչաժամ թէ ոք ասիցէ ձեզ՝ Ահաւասիկ աստ է Քրիստոս կամ անդ, մի՛ հաւատայցէք։
24 Զի յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք. և տացեն նըշանս մեծամեծս և արուեստս, մինչև մոլորեցուցանել՝ թէ ՚ի բաց ինչ ի՛նչ և զընտրեալսն։

25 Ահա յառաջագոյն ասացի ձեզ։
26 Զի եթէ ասիցեն ձեզ. Ահա անապատի է, մի՛ ելանիցէք, և թէ Ահա յշտեմարանս է, մի՛ հաւատայցէք։
27 Զի որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից՝ և երևի մինչև յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ։
28 Զի ուր գիշնի իցէ, անդր ժողովեսցին արծուիք։

29 Ա՛ռ ազվաղակի յետ նեղութեանն աւուրցն այնոցիկ՝ արեգակն խաւարեսցի, և լուսին ոչ տացէ զլոյս իւր, և աստեղք անկցին յերկնից, և զօրութիւնք երկնից շարժեսցին։

30 Եւ տայ երևեսցի նշան Որդւոյ մարդոյ յերկինս, և յայնժամ կոծեսցին ամենայն ազգք երկրի. և տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառաւք բազմօք։
31 Եւ առաքեսցէ զՀրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն զընտրեալսն նորա ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագաց երկնից մինչև ՚ի ծագս նոցա։

23 Այն ժամանակն թէ որ միևն ասէ ձեզ՝ Ահա էստեղ է Քրիստոս կամ հնանդ, մի՛ հաւատաք։
24 Ընդունայն՝ սուտ քրիստոսներ և սուտ մարգարէներ դուրս կելլան, և շատ մեծ նըշաններ և հրաշքներ ցոյց կըտան, մինչև որ, եթէ կարելի լինէր, ընտրվածներին էլ կըմոլորացնէին։
25 Ահա առաջ ասացի ձեզ։
26 Ա՛պա թէ որ ասեն ձեզ. Ահա անապատումն (չէօլումն) է՝ դուրս չը՛գաք. և թէ Ահա ասեն ներսն է՝ չը՛հաւատաք։
27 Պատճառն՝ ինչպես կայծակն կելնի՝ որ արևելքից դուրս կըգայ մինչև արևմուտք կերևի, հնպես էլ Որդոյ մարդոյ գալն կըլինի։
28 Ընդունայն՝ ուր ասեղ մեռած մարմին կը լինի, էն տեղ կըհաւաքվին արծիւները։
29 Ո՛ւռուվ էն նեղութեան օրերից՝ եսև՝ արեգակն կըխաւարվի. և լուսինն իրան լոյսը չի տալ. և աստեղներն երկնքից վեր կընկնին, և երկնքի զօրութիւնները կըշարժվին։
30 Եւ յետոյ Որդոյ մարդոյ նշանն երկնքումն կերևի՝ և էն ժամանակն երկրի ամէն ազգերն լաց կըլինին։ և Որդին մարդոյ կըտեսնեն երկնքի ամպերին վերայ եկած զօրութեամբ և շատ փառքով։
31 Եւ իրան հրեշտակները մեծ փողով կուղարկէ. և իրան ընտրվածներին կըժողովեն չորս կողմից՝ երկնքի մին ծայրից մինչև մեկել ծայրն։

(32) Մարկ. ժգ. 21։ Ղուկ. ժէ. 23։ խա. 8։ (33) բ Օրին. ժգ. 1։ վէր. 5. 11։ բ Կին. բ. 9, 10, 11։ Յայտ. ժգ. 13։ (24) Գործ. գ. 37։ ժ. 28, 29։ Հռոմ. ը. 28, 29, 30։ բ Տիմ. բ. 19։ (25) Ղուկ. ժէ. 24։ (26) Գործ. իէ. 30։ Ղուկ. ժէ. 37։ (27) Կամ. ի. 11, 12։ (28) Լատ. ժգ. 10։ Եղիկ. ը. 7։ Գործ. բ. 10. 31։ գ. 15։ Ա՛ռվ. ե. 20։ ը. 9։ Մարկ. ժգ. 24։ Ղուկ. խա. 25։ Կորնթ. բ. 20։ Յայտ. գ. 12։ (29) Կամ. է. 13։ (30) Զաք. ժբ. 12։ (31) Մարկ. ժգ. 27։ Մարկ. ժգ. 26։ Յայտ. ա. 7։ (32) Մարկ. ժգ. 41։ ա Կորնթ. ժե. 52։ ա Թես. դ. 16։

Digitized by Google

32 Ի՝ Թզենւոյ առակ ուսարուք զառակին . զի յորժամ նորա ոստքն կակղասցին և տերևն ցցուիցի , գիտաէք թէ մերձ է ամառն :

33 Այսպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն , գիտասջիք թէ մերձ է ի դուրս :

34 Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի :

35 Երկինք և երկիր անցցեն , և բանք իմ մի՛ անցցեն :

36 Ուստի վասն աւուրն այնորիկ և ժամու , ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք երկնից՝ և ոչ Որդի՝ բայց միայն Հայր :

37 Եւ որպէս աւուրքն Նոյի , այնպէս եղիցի գալուստն Որդւոյ մարդոյ :

38 Զի որպէս էին յաւուրսն որ յառաջ քան զջրհեղեղն , ուտէին և ըմպէին՝ կանայս առնէին և արանց լինէին , մինչեւ յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն :

39 Եւ ոչ գիտացին՝ մինչեւ եկն ջրհեղեղն և եհարց զամենեսին , այնպէս եղիցի և գալուստն Որդւոյ մարդոյ :

40 Յայնժամ երեք իցեն երկու յագրակի , մին առցի՝ և միւսն թողցի :

41 Եւ երեք երկու աղախնայ ի մի երկանս , մին առցի՝ և միւսն թողցի :

42 Արթնուն կացէք՝ զի ոչ գիտէք յորում ժամու Տէրն ձեր գայ :

32 Իսն թզղի ծառիցն առակ[32] ասացէք՝ որ երբեմն նորա ճղիցն կրկակղին , և տերևն կրծլատնէ , գիտասջիք որ ամառն մեծ է :

33 Այնպէս էլ դուք՝ որ ժամանակ էս ամէն բանիցդ կրտեսանէք , իմացէք որ (էս) դռանն մեծ է[34] :

34 Ա՛ժմարիան ասումեմ ձեզ՝ թէ չպտրաս չի անցկնալ[35] , մինչև էս ամէնս լինին :

35 Երկինքն և երկիրս անց կրկենան՝ և իմ խօսքերս չեն անց կենալ[36] :

36 Այսն թէ էն օրին և ժամին (սահլէնա) Համար՝ ոչ ավ չի պտաւմ[37] ոչ երկնքի հրեշտակներն՝ և ոչ Որդին՝ բայց միայն Հայրն[38] :

37 Ինչպէս էլ ան Նոյի օրքերըն հնպէս էլ կրլինի Որդի մարդի գալն :

38 Ինչուր՝ ինչպէս որ էն օրերումըն էին՝ որ ջրհեղեղին առաջ կրխին[39] , որ ուտումէին և խմումէին , կին էին առնում՝ և մարդի էին գնում , մինչև էն օրն , որ Նոյ մտաւ տապանն :

39 Եւ չգիտացին՝ մինչև որ ջրհեղեղն եկաւ , և ամէնքն վերառաւ . էնպես էլ կրլինի Որդի մարդի գալն :

40 Այն ժամանակն թէ որ երկու հոգի արտումն լինին՝ մինն կառնրվի՝ և մէկէլն կրթողվի[40] :

41 Եւ թէ որ երկու հոգի մին ջաղացում աղան՝ մինն կառնրվի՝ և մէկէլն կրթողվի :

42 Արթուն կացէք[41] ինչուս որ չէք գիտում թէ ձեր Տէրն որ ժամումն (սահլուսին) կրգայ :

(32) Ղուկ . ի . 29 : (34) Մատ . ի . 9 : (35) Մատ . ժգ . 35 : իգ . 30 : Մարկ . ժգ . 30 : Ղուկ . ի . 33 : (36) Մատ . ին . 36 : Նոյ . ծ . 6 : Երեմ . լ . 35 , 36 : Մարկ . ե . 10 : Մարկ . ժգ . 31 : Ղուկ . ի . 33 : Երեմ . ա . 11 : (37) Մարկ . ժգ . 32 : Գործ . ա . 7 : ա Թես . ե . 2 : բ Պետր . գ . 10 : (38) Ա՛ծատ . ժգ . 7 : (39) Ընդեր . գ . 3 , 4 , 5 : է . 5 : Ղուկ . ժէ . 26 : ա Պետր . գ . 20 : (40) Ղուկ . ժէ . 34 , նայէ : (41) Մարկ . ին . 13 : Մարկ . ժգ . 33 , նայէ : Ղուկ . ի . 36 :

Digitized by Google

43 Այլն գիտացջիք, եթէ գիտեր տանուտէրն՝ յորում պահաւ գող գայ, սկսէր՝ և չէ տայր տակն հասանել ըստ իւրոյ։

44 Վասն այսորիկ և դուք եղեր բուք պատրաստք, զի յորում ժամու չէ սիկն ունիցիք՝ գայ Որդի մարդոյ։

45 Ով իմ իցէ հաւատարիմ ծառայ և խնամասուն, զոր կացոյց Տէր իւր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի ժամու։

46 Երանի է ծառային այնմիկ, զոր եկեալ տէրն գտանիցէ այսպէս առնել զայնպէս։

47 Ճշմարիտ ասեմ ձեզ, զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա։

48 Այլ թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում, Տէր իմ յամէ գալոյ։

49 Եւ սկսանիցի հարկանել զծառայակիցս իւր, ուտիցէ և ըմպիցէ ընդ արբեցողս։

50 Գայցէ տէր ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ սկսի ունիցի, և ի ժամու յորում ոչ գիտիցէ։

51 Եւ կտրեսցէ զնա ընդ միջ, և զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։

43 Այն խնայէք՝ թէ որ տան տէրն գիտանար՝ թէ գողն գիշերի որ պահումն կը գայ[42], արթուն կը կենար և թող չէր տար՝ որ իւրան տան տակին փոս փորէ։

44 Սրտհամար դուք էլ պատրաստ կացէք[43]. ինչուր՝ էն ժամն (տհաճ ըլլ)՝ որ դուք չէք սպասիլ, Որդին մարդոյ կը գայ։

45 Այսպ ով կը լինի էն հաւատարիմ և խնամասուն ծառան[44] որ տէրն իրան Տէրն՝ իրան ծառաներին վերայ գրաւ, որ ատոնց կերակուր տայ իրանց ժամանակուանն։

46 Երանի է էն ծառային[45] որ տէրն երբոր կը գայ, տեսնէ անանկ գտնէ։

47 Ա՛շմարիտ տեսումիդ ձեզ. Որ տէրն իրան ամէն ապրանքին վերայ կը դնէ[46]։

48 Այս թէ որ չար ծառան իրան սրտումն ասէ, Թէ Տէրս գալը ուշացնուածէ։

49 Եւ սկսէ իրան ընկեր ծառաներըն ծեծել և հարբեցողներին հետ ուտէ և խմէ։

50 Կը գայ էն ծառային տէրն էն օրն՝ որ նա չի սպասիլ, և էն ժամն՝ (տհաճին) որ նա չի գիտիլ։

51 Եւ տորան միջէնն կը կտրէ և տորա բաժինն կեղծաւորներուն հետ կը դնէ. որ էնտեղ լաց և ատամներ կրճտելն կը լինի[47]։

ԿԻ · ԻՒ

1 Տան կառնոց, 11 և չէ ցանկալի առակն։ 31 Վէրջի դատաստանի համար սաստիկ խօսքերը։

1 Ցայնժամ նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց

1 Այն ժամանակն երկնքի արքայութիւնն կը նմանուի տասն կուսանաց. որ իրանց լապտերներըն (ճա-

(42) Ղուկ · ժբ · 39 : ա Գնխ · է · 2 : բ Պետ · գ · 10 : Հայտ · գ · 3 : ժշ · 15 : (43) Պետ · ա · 13 : ա Գնխ · է · 6 : (44) Ղուկ · ժբ · 42 : Գործ · ի · 28 : ա Պօղոս · գ · 2 : Հբր · գ · 5 : (45) Հայտ · ժշ · 15 : (46) Պետ · ա · 21 · 29 · Ղուկ · ժբ · 38 : (47) Պետ · բ · 13 : ա · 30 :

Digitized by Google

եղբին ընդ առաջ փեսային և հարսին :

2 Էինգն ի նոցանէ յիմարք էին՝ և հինգն խելատունք :

3 Յիմարքն առին զլապտերսն, և ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին :

4 Իսկ խելատունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց :

5 Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան և ի քուն մտին :

6 Եւ ի մէջ գիշերի եղև բարբառ, Ընդ փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նորա :

7 Յայնժամ յարեան ամենայն կուսանքն՝ և կազմեցին զլապտերս իւրեանց :

8 Իսկ յիմարքն ցխմաստունսն, Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի անձայ շիջանին լապտերքս մեր :

9 Պատասխանի ետուն խմաստունքն՝ և ասեն. Կուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթայք ի վաճառականս՝ և գնեսջիք ձեզ :

10 Իբրև նոքա գնացին գնել՝ եկն փեսայն, և պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն՝ և փակեցաւ դուռնն :

11 Յետոյ գան և այլ կուսանքն՝ և ասեն. Տէր Տէր՝ բաց մեզ :

12 Ա՛յս պատասխանի ետ և ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ Ո՛չ գիտեմ զձեզ :

13 Արթո՛ւն կացէք զի ոչ գիտէք զօրն և ոչ զժամն :

14 Ո՛րպէս այր մի գնացեալ ի տար

նառնէ(ն) վերկացան՝ և դուրս եկին փեսային և հարսի առաջի :

2 Եւ նորանցից հինգն յիմար էին և հինգն խելատուն :

3 Յիմարներն լապտերները վերառին՝ և ձէթ վեր չառին իրանց հետ :

4 Նայց խմաստուններն իրենց լապտերներին հետ ամաններով ձէթ վերառին :

5 Եւ փեսան որ ուշացաւ՝ ամենքըն թմրեցին և քուն էլան :

6 Կէս գիշերուայ ձայն էլաւ՝ թէ Ահա փեսան գալիս է՝ դուրս եկէք նորա առաջն :

7 Յն ժամանակն ամէն կուսանքն վերկացան և իրանց լապտերները (ֆանառնէ(ն)ը) պատրաստեցին :

նաեւ զնա տգան , վաղվաղակի շարժ-
լեաց զնա , և անկեալ յերկիր թա-
ւալէր և և փրփրեայր ։

20 Եհարց ցհայր նորա և ասէ .
Վ՝անի՞ ժամանակք են՝ յորմէ՞հետէ
այդ եղեւ դմա . և նա ասէ՝ ՝Ի
մանկութենէ ։
21 Վազում անգամ ՝ի հուր ար-
կանէ զնա և ՝ի ջուր՝ զի կորուս-
ցէ . սրտ եթէ կարօղ ինչ ես , օգնե-
նուս մեզ Տէր՝ գիտացեալ ՝ի վերայ
մեր ։

22 Եւ Յիսուս ասէ ցնա . Ո՞ա-
ցիր՝ թէ կարօղ ես . ամենայն ինչ
հնարաւոր է այնմ , որ հաւատայն ։

23 Եւ վաղվաղակի աղաղակեաց
հայր մանկանն՝ և ասէ . Հաւատամ ,
օգնեա անհաւատութեանս իմում ։
24 Իբրեւ տես Յիսուս՝ եթէ կու-
տի ժողովուրդն ՝ի վերայ , սաստ-
եաց պղծոյ ոգւոյն պղծոյ և ասէ . Հ՝այր
բղդ և խուլ ոգի՝ ես սաստ քեզ հր-
ամայեմ , ել ՝ի դմանէ , և այլ ևս

15 Եւ նորանց հարցուց՝ թէ Ո՞ինչ
հիք հակառակում նորանց հետ ։
16 Յ՝ողովրդի միջից մինն պա-
տասխան առաւ՝ և ասաց՝ Վ՝ ուս-
դադեա՝ իմ որդիս քեզ մօտ բերի ,
որ նորան ՝ համր (լռիկ)] դև բռա-
նել է ։
17 Եւ որտեղ որ նորան հասնում
էր՝ նորան գետնով է տալիս . և
փրփրացնում՝ և ատամները կըր-
ճըտացնում և չամաքում . և քո
աշակերտներին ասացի՝ որ հանեն ,
և չըկարացին հանել նորան ։
18 Ո՝րոնց պատասխան առաւ և
ասաց . Վ՝ ի անհաւատ ազգ՝ մինչև
երբ ձեզ հետ պիտի լինիմ , մին-
չև երբ ձեզ պիտի համբերեմ . նո-
րան բնձ մօտ բերէք ։
19 Եւ նորան բերին նորա մօտ .
երբոր դևն նորան տեսաւ , շուտով
սաստիկ շարժեց նորան[10] . և գե-
տինն ընկած թաւալում և փրփը-
րում ։
20 Ո՝րոա հօրըն հարցրուց և ա-
սաց . Վ՝ որքան ժամանակ է՝ որ էդ
բանըդ էլաւ դորան . և նա ասաց՝
Երեխայութենից ։
21 Հ՝ ա՛ա անգամ կրակի մէջն է
քցում և ջրի մէջն՝ որ դորան կոր-
ցընէ . սակա թէ որ մին բան կա-
րող ես՝ օգնիր մեզ Տէր՝ խղճալով
մեզ վերայ ։
22 Եւ Յիսուս նորան ասաց . Ո՞-
ասցիր՝ թէ որ կարող ես . ամեն
բան կարելի է նորան՝ որ հաւա-
տում[11] ։
23 Եւ հաւատով ազգի հայրն ա-
դաղակեց՝ և ասաց . Հ՝ աւատում եմ ,
իմ անհաւատութեանս օգնիր ։
24 Երբոր Յիսուս տեսաւ՝ թէ ժո-
ղովուրդն վերայ է կխռմում , էն
պիղծ դևին սաստեց և ասաց . Վ՝ ով
համր (լռիկ) և խուլ (ժաա) դև՝ ես
հրամայեմ եմ ասլիս քեզ , դորանից

(9) Մարկ . ժէ . 14 ։ Ղուկ . բ . 38 ։ (10) Մարկ . ա . 26 ։ Ղուկ . բ . 42 ։ (11)
Մարկ . ժէ . 21 ։ Մարկ . ժա . 23 ։ Ղուկ . ժէ . 6 ։ Յակ . ժա . 6 ։

Digitized by Google

մի՛ մեռանիցիս ՝ի դա ։

25 Եւ աղաղակեաց՝ եւ յոգի ըլլ
կեաց զինա , եւ ել . եւ եղև պատա
նեաւքն իբրև զմեռեալ , մինչև բամբ
ասց իսկ ասել թէ Ո՛ւեռաւ ։
26 Եւ Յիսուս կալաւ զձեռանէ
նորա՝ յարոյց զնա , և կանգնե
ցաւ ։
27 Եւ իբրև եմուտ նա ՝ի տուն ,
աշակերտքն առաւելին հարցին ցնա .
Ո՛րք ընդէր ոչ կարացաք հանել
զնա ։
28 Եւ ասէ ցնոսա . Ո՛ւմէ ազգ
ոչ իւիք եղանէ , եթէ ոչ պահովք
և աղօթիւք ։
29 Եւ անտի ելեալ անցանէին
առ Գալիլեացւոքք . և ոչ կամէր
եթէ ոք գիտասցէ ։
30 Ուսանէր զաշակերտսն իւր՝ և ասէր ցնոսա , թէ
Որդի մարդոյ մատնեսցի ՚ի ձեռս
մարդկան , և սպանցեն զնա . և
իբրև սպանցի՝ յերից աւուրց յա
րիցէ ։
31 Եւ նոքա ոչ գիտէին զբանն ,
և երկնչէին հարցանել ցնա ։

32 Եկեն ՚ի Կափառնաում . և իբ
րև եմուտ ՚ի տուն , հարցանէր ցնո
սա . Ո՞ւմ ինչ վիճէիք զճանապարհ
հայն ընդ միմեանս ։
33 Եւ նոքա լռեցին . քանզի ընդ միմեանս վիճէին ՚ի ճանա
պարհին՝ թէ ով մեծ իցէ ։

34 Եւ իբրև նստաւ՝ կոչեաց զնո
կոտասանան և ասէ ցնոսա . Եթէ ոք
կամի առաջին լինել՝ եղիցի ամենե
ցուն կրտսեր՝ և ամենեցուն պաշտօ
նեայ ։
35 Եւ առեալ մանուկ մի կացոյց
՚ի մէջ նոցա . և ընկալեալ զնա ՚ի
դրկեաց նոքա , և մինել գտցեն մէջ չէ
մանեաս ։
25 Եւ շատ ազաղակեց՝ և տատասիկ
չարչարեցաց նորան , և դուրս եկաւ .
և տղան մեռածի պէս կրաւ . մինչև
որ շատերն ասուցին՝ թէ Ո՛ւեռաւ ։
26 Եւ Յիսուս նորա ձեռքէն բռնե
նեց , նորան վերկացուց , և կանգ
նեց ։
27 Եւ երբոր նա տուն մտաւ՝ ա
շակերտներն տուանձին հարցրին նո
րան՝ (թէ) Ո՛նք ինչու չկարաց
ինք հանել նորան[12] ։
28 Եւ նորանց ասաց . Ո՞ր ցեղ
ուրիշ բանով դուրս չի գալ , եթէ
ոչ պատով և աղօթքով ։
29 Եւ էնտեղից դուրս եկած՝ Գա
լիլեացոց միջովն անց էին կենում .
և չէր ուզում որ մինն իմանայ ։
30 Ինչուար՝ իրան աշակերտներին
սովրցնում էր՝ և նորանց ասում էր՝
թէ Որդին մարդոյ մարդկանց ձեռքն
պիտի մատնվի , և նորան կըսպա
նեն . և երբոր կըսպանվի , երեք օ
րում յարութիւն կառնէ[13] ։
31 Եւ նորանք էն բանն չէին ի
մանում . և վախում էին որ հարցնեն
նորան ։
32 Կափառնաում նեկաւ[14] . և եր
բոր տուն մտաւ , նորանց հարցնում
էր՝ (թէ) Ա՛նտեղ որ հունաւ ի՞նչ էիք
հակառակում իրար հետ ։
33 Եւ նորանք լուռ էին կենում .
պատճառնոր՝ ճանապարհումն իրար
հետ հակառակումն էին թէ ո՛վ կընի
մեծն ։
34 Եւ երբոր նստեց , տասներկու
սին կանչեց և նորանց ասաց . Ով
որ մինն ուզումէ առաջին լինել՝ թող
ամենքին փոքր՝ և ամենքին պաշտօ
նեայ լինի[15] ։
35 Եւ մին երեխայ առաւ , կանգ
նացրուց նորանց միջումն[16] . և ձո

(12) Պարի . ժէ . 19 ։ (13) Պարի . ժէ . 23 ։ Ղուկ . թ . 44 ։ (14) Պարի . ժը . 1 ։ Ղուկ . թ . 56 ։ իե . 25 ։ (15) Պարի . ի . 26 , 27 ։ Մարկ . ժ . 43 ։ (16) Պարի . ժը . 2 ։ Մարկ . ժ . 16 ։

գիրկս իւր , ասէ ցնաս ։

36 Որ միանգամ յայտնեալ մանկ կըսուտայ ընկերոջի յանուն իմ, զնս ընդունի· և որ զնս ընդունի , ոչ զնս ընդունի՝ այլ զնոյն՝ որ առաքեացն զնս ։

37 Պատասխանի ետ նմա Յովհաննէս և ասէ· Վարդապետ՝ տեսաք զմի , զի յանուն քո դևս կհանէր՝ և զմեր կնի ոչ ըզդկէր , և արգելաք զնա ։

38 Եւ նա ասէ · Մի՛ արգելուք զնա · զի ոչ ոք է՝ որ առնէ զօրութիւն յանուն իմ, և կարիցէ հայհոյել զիս ։

39 Ո՞ւ որ ոչն է ընդ մեզ հակառակ , ի մեր կոյս է ։

40 Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանունս յայս՝ թէ դուք Քրիստոսի էք , ամէն ասեմ ձեզ՝ մի՛ կորուսցէ զվարձս իւր ։

41 Եւ որ ոք գայթակղեցուսցէ զմի ի փոքրկանցս՝ որ հաւատան ինս , լաւ էր նմա առաւել՝ եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա երկան իշոյ , և ընկեցեալ ի ծով ։

42 Եւ եթէ գայթակղեցուսցէ ըզքեզ ձեռն քո , չա՛ռ ընկեա՛ ի քէն , զի լաւ իցէ քեզ խեղ մտանել ի կեանան յաւիտենից , քան երկուս ձեռս ունել՝ և երթալ ի գեհենն ի հուրն անշէջ ։

43 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ հիւծանի ։

44 Եւ եթէ ոտն քո գայթակղեցուսցէ զքեզ , չա՛ռ ընկեա զնա ի քէն · լաւ իցէ քեզ կաղ մտանել ի կեանան յաւիտենից , քան երկուս ոտս ունել՝ և անկանել ի գեհենն ի հուրն անշէջ ։

բան ատտ. իբան զիրկն· և նորանց ասաց ։

36 Ո՛վ որ ընդունի եղբայրանիրիցն միոյնն իմ անուամբս կընդունի՝ զիս կընդունի· և ով որ զիս կընդունի՝ զիս չէ ընդունիլ , այլ նորան՝ որ զիս առաքեցեալ[17] ։

37 Յովհաննէսն նորան պատասխան ետուաւ և ասաց[18] · Վարդապետ՝ միոյն տեսինք որ քո անունովդ դևերը էր հանում , և մեր ետուինն մեզ էր գալիս , և արգիլեցինք նորան ։

38 Եւ նա ասաց · Մի՛ արգիլէք նորան · ինչուտ՝ ոչ ով գործ որ իմ անունովս զօրութիւն անէ , կարենայ հայհոյել զիս[19] ։

39 Պատճառանաց՝ նա որ մեզ հակառակ չէ՝ մեր կողմն է[20] ։

40 Եւ ով որ միոն բաժակով (լաւ) ջուր կըխմացնէ ձեզ ես անունովս՝ թէ դուք Քրիստոսինն էք , ճշմարիտըն առաջիս ձեզ՝ նա չի կորցնիլ իրան վարձքն[21] ։

41 Եւ ով որ կըգայթակղեցնէ ես փոքրունկըցս միոնքն՝ որ ինձ հաւատուտին , աւելի լաւ էր նորան որ իրան վըզիցն միոն իշու ջաղացի քար անցկացնըվի , և ծովն քցվի[22] ։

42 Եւ եթէ քո ձեռդ քեզ գայթակղեցնէ՝ կտրիր նորան , քեզանից դէն քցիր · ինչուտ՝ լաւ է քեզ որ խեղ (ախտաւ) մանես յաւիտենական կեանքն , քանթէ երկու ձեռք ունենաս՝ և գեհենն գնաս էն անանցնելի կրակի մէջն[23] ։

43 Որտեղ որ նորանց որդն չի մեռնում՝ և կրակն չի անցնում[24] ։

44 Եւ եթէ քո ոտդ քեզ գայթակղեցնէ , կտրիր նորան՝ քեզանից դէն քցիր · լաւ է քեզ որ կաղ մանես յաւիտենական կեանքն , քանթէ երկու ոտք ունենաս՝ և գեհենն ընկնիս էն անանցնելի կրակի մէջն ։

(17) Մատթ. ժ. 40 · Ղուկ. Ը. 48 : (18) Ղուկ. ժա. 28 · Ղուկ. Ը. 49 : (19) Ղուկ. Թ. 50 : (20) Մատթ. ժբ. 30 : (21) Մատթ. ժ. 42 : (22) Մատթ. ժբ. 6 · Ղուկ. Ժէ. 2 : (23) Մատթ. ե. 29 · ժ. 28 : (24) Եսայ. ԿԶ. 24

45 Ուր որդն նոցա մէջ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի :

46 Եւ եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ , հան զնա ի բաց . լաւ իցէ քեզ միով ակամբ մտանել յարքայութիւն Աստուծոյ , քան երկուս աչս ունել՝ և անկանել ի գեհենն :

47 Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ և հուրն ոչ շիջանի :

48 Ամի ամենայն ինչ հրով յաղեսցի , և ամենայն ողջակէզ աղիւ յաղեսցի :

49 Քաւուք է աղ . և եթէ աղն անհամեսցի , ըստ հասմեսցի . արդ՝ դուք կալարուք յանձինս ձեր զաղն , և խաղաղութիւն արարէք ընդ միմեանս :

45 Որտեղ որ նորանց որդն չէ մեռնում՝ և կրակն չէ անցնում :

46 Եւ եթէ քո աչքդ քեզ գայթակղացնէ դուրս հանիր նորան . լաւ է քեզ՝ որ միս աչքով Աստուծոյ արքայութիւնն մանես , քանթէ երկու աչք ունենաս՝ և գեհենն ընկնես :

47 Որտեղ որ նորանց որդն չէ մեռնում՝ և կրակն չէ անցնում :

48 Ոտաճատնոր՝ ամէն քան կրակով պէտք է աղանվի , և ամէն մսատն աղով պէտք է աղանվի[28] :

49 Աղն բարի է[29] . և թէ որ աղն անհամանայ , ինչով պիտի համեղանայ . ուրեմն դուք աղըն բանեցէք ձեր անձնեորումի[30] , և իրար հետ խաղաղութիւն արէք[31] :

ԳԼՈՒԽ Ժ

2 Որբեսաոս կին բաց թողնել չէրն համար փարիսեցոց հետ հակաճառութիւն կանէ . 13 Իսան բերված երեխաներըն խօրհէ . 17 Ոյց կըտայ թէ հարուստ մարդն ինչպես կարող է յաւիտենական կեանքն ժառանգել , 23 Աշակերտներն ցոյց կըտայ . 28 Աւետարանի համար ամէն բան թողնողներն վարձքի խոստանալ կըտայ , 32 Իսան մահն և յարութիւն առնելն առաջուց ասում . 35 Փառք սիրող երկու աշակերտներն պատուէր կըտայ որ ամէնից աւելի իրան հետ չարչարվելոյ վերայ մտածեն : 46 Նա Երեքիքոնի աչքերըն կը բանայ :

1 Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս Հրէաստանի յայնկոյս Յորդանանու . և երթայր դարձեալ խռնեալ ժողովուրդն առ նա . և որպէս սովոր էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա :

2 Եւ մերձեցեալ փարիսեցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ և ասէին , եթէ Արժան իցէ առն զկին իւր արձակել :

3 Նա պատասխանի եհաս նոցա և ասէ . Զի՞նչ պատուիրեաց ձեզ Մովսէս :

1 Եւ էնտեղիցն վերկացաւ և կուտ Հրէաստանի (Ըհիպոտոպանէ) կողմերն՝ Յորդանանի էն կողմն[1] . և միևել ժողովուրդն կիսուած գնուեն մէն նորա մօտ , և ինչպես որ նորա սովորութիւն էր՝ միևել ասվորցնումէր նորանց :

2 Եկայ փարիսեցիներն մօտ և կին , և փորձելով նորան հարցնումէն և ասում . Թէ Արժանն է մարդոյ՝ որ իրան կինըն բաց թողէ[2] :

3 Նա պատասխան տուաւ նորանց և ասաց . Ո՞սէսն ինչ պատուիրեց ձեզ :

(25) Ղ. Բ . 13 : Նեհ . Խ . 24 : (26) Մտթ . Ե . 13 : Ղ. Ե . Ժգ . 24 : (27) Ներ . Գ . 29 : Գաղ . Գ . 6 : (28) Ըսովմ . Ժբ . 18 : Ժգ . 19 : Բ Գորնթ . Ժգ . 11 : Եբր . Ժբ . 14 : (1) Մտթ . Ժբ . 1 : Գեմ . Ժ . 40 : Ժա . 7 : (2) Մտթ . Ժբ . 3 :

Digitized by Google

4 Եւ նորա ասեն . Մ՝ասկս հրաման նա գիր մկնելոյ գրել , և արձակել :

5 Պատասխանի նա Յիսուս՝ և ասէ ցնոսա . Վ՝ասն խստասրտութեան ձերոյ գրեաց ձեզ զպատուիրանն զայն :

6 Ի՝սկզբանէ արարածոց , արու և էգ արար զնոսա Ա՝ստուած ,

7 Վ՝ասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր , և երթիցէ զհետ կնոջ իւրոյ :

8 Եւ եղիցին երկուքն ՝ի մարմին մի . և այնուհետեւ ոչ են երկու՝ այլ մարմին մի :

9 Ա՛րդ՝ զոր Ա՝ստուած զուգեաց , մարդ մի՛ մեկնեսցէ :

10 Եւ ՝ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հարցին ցնա :

11 Եւ ասէ ցնոսա . Եթէ այր արձակեսցէ զկին իւր՝ և առցէ այլ , շնայ :

12 Եւ կին՝ եթէ ելցէ յառնէ իւրմէ՝ և եղիցի առն այլում , շնայ :

13 Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռն դիցէ նոցա . իսկ աշակերտքն ասեցին այնոցիկ՝ որ մատուցանէինն :

14 Ի՛րև եահս Յիսուս , բարկացեալ ասեսցէ նոցա և ասէ . Թո՛ղլ առէք մանկտւոյդ գալ առ իս , և մի՛ արգելուք զդոսա . զի այդպիսեացդէ է արքայութիւն Ա՝ստուծոյ :

15 Ա՛մէն ասեմ՛ ձեզ . Որ ոչ ընկալցի զարքայութիւն Ա՝ստուծոյ իբրև զմանուկ՝ ոչ մտցէ ՝ի նա :

16 Եւ առեալ զնոսա ՝ի գիրկս՝

4 Եւ նորանք ասացին . Մ՝օսէսն հրամայեաց տուեալ՝ դուրս անելոյ թուղթ գրել , և դուրս անել :

5 Յիսուս պատասխան առեալ և նորանց ասաց . Զկոր քարտատութեան ձեռն համար էն պատուիրանքըն գրեց ձեզ :

6 Նայց ստեղծագործութեան ըսկզբիցն Ա՝ստուած նորանց արու (ոչխ) և էգ արաւ , և ասաց .

7 Որ համար մարդն իրան հօրըն և մօրըն կըթողէ , և իրան կնկան հետ կըգնայ՝ :

8 Եւ երկուքն մին մարմին կըլինին . և նրանից եաւս երկու չեն՝ բայց մին մարմին են :

9 Որ բանն էն որ Ա՝ստուած միաւորեց՝ թոզ մարդն չը՛զատկէ :

10 Եւ ան աչքն աշակերտներն միւնէլ հետց էն բանըն հարցրին նորան :

11 Եւ նորանց ասաց . Ամէն որ մարդ իրան կինըն բաց թողէ՝ և մին ուրիշըն առնէ , շնութիւն է գործում :

12 Եւ կինն՝ թէ որ իրան մարդուցըն դուրս գնայ՝ և ուրիշ մարդոց լինի՝ շնութիւն է գործում :

13 Եւ նորա մօտ երեխաներ էին բերում՝ որ ձեռքն գնէ նորանց վրայ . բայց աշակերտներն սաստում էին նորանց՝ որ բերումէին :

14 Երբոր Յիսուս տեսաւ՝ բարկացաւ և նորանց ասաց և ասաց . Թոյլ տուէք եղ երեխաներիդ՝ որ ինձ մօտ գան , և մի՛ արգելէք դրանց . ինչուղ էդպիսիներուն է Ա՝ստուծոյ արքայութիւնն :

15 Ա՛մէն ձեզ՝ (քէ) ով որ Ա՝ստուծոյ արքայութիւնն չընդունի ինչպես երեխայ՝ նա չի՛ մտնիլ նորա մէջ՝ :

16 Եւ նորանց գիրկն առաւ՝ ձե-

(3) բ Օրին . իդ . 1 : Ա՝ռաք . ե . 31 : ժբ . 7 : (4) Ղևտ . ա . 27 : ե . 2 : (5) Ղևտ . ը . 24 : ա Կօրին . զ . 16 : Եփես . ե . 31 : (6) Ա՝ռաք . ե . 33 : ժբ . 9 : Ղևտ . ժգ . 18 : Ա՝մոս . է . 3 : ա . Կորին . ե . 10 , 11 : (7) Ա՝ռաք . ժբ . 13 : Ղևտ . ժգ . 18 ; (8) ա Կորին . ժգ . 20 : ա Պետր . բ . 3 : (9) Ա՝ռաք . ժգ . 3 :

Digitized by Google

ձեան եղ՝ ի վկայ՝ և օրհնաց զնա։

17 Եւ ընդ երանելն նորա անակն ի ճանապարհ, արհատափիկ սէր մեծասոյն քրիստոնեայ՝ ի ծովեր իջեալ նեղ, հարցանէր ցնա և ասէր. Ով արդապետ բարի՝ զի՞նչ արարից զի զկեանսն յաւիտենական ժառանգեցից։

18 Եւ Յիսուս ասէ ցնա. Ո՞ւր առնես զիս բարի. չէք ոչ բարի՝ բայց միայն Աստուած։

19 Զպատուիրանս գիտես. Մի՛ չնար, Մի՛ սպանաներ, Մի՛ գողանար, Մի՛ տուս վկայեր, Պատուեա՛ զՀայր քո և զմայրդ։

20 Եւ նա պատասխանի ետ և ասէ ցնա. Ով արդապետ՝ զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ, արդ՝ զի՞նչ ևս պակաս իցեմ։

21 Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ սիրեաց զնա, և ասէ ցնա. Մի՛ ինչ պակաս է ի քէն. երթ կամիս կատարեալ լինել, ծրթ զոր ինչ ունիս նախ վաճառեա՛, և տուր աղքատաց, և ունիցիս գանձս յերկինս, և արի զհետ՝ և երկ զինի իմ։

22 Եւ նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում. զի ունէր ինչս բազումս։

23 Եւ Յիսուս հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յիսուս, ասէ ցաշակերտսն. Ո՛րքա՛ն դժուարին է՝ որ զինչս ունին՝ մտանել յարքայութիւն Աստուծոյ։

24 Եւ աշակերտքն զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա. իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա և ասէ. Երդեակք՝ որքա՛ն դժուարին է յուսացեալսդ յինչս՝ մտանել յարքայութիւնն Աստուծոյ։

17 Եւ հնանդիման որ դուրս գնաց ճանապարհ, տհա մին հարուստ մերձ վազելով եկաւ՝ ծունր էր դնում՝ եղեալ հարցնուելոյ և ասում. Ուրի՛ վարդապետ. ի՞նչ գործեմ որ յաւիտենական կեանքն ժառանգեմ[10]։

18 Եւ Յիսուս ետուն ասաց. Ինչ զիս ես կոչեալ բարի ասում՝ ոչ ոք բարի չըկայ, բայց միայն միոյն Աստուածոյ։

19 Պատուիրանքներն գիտես՝ Մի՛ շնար, Մի՛ սպաներ, Մի՛ գողանար, Մի՛ ասա վկայեր, Վնա հօրըդ և մօրըդ պատուիրէ[11]։

20 Նա պատասխան ետուն և նմա ասաց. Վարդապետ՝ էդ ամէն ըդ իմ երեխայութենէդս ասի, ապա էլ ի՞նչ բանով եմ պակաս։

21 Եւ Յիսուս նորան մարիկ արաւ՝ նորան սիրեց, և նորան ասաց. Մի՛ ին բան պակաս է քեզանից. թէ որ կամենաս կատարեալ լինել, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ՛ր և աղքատներին տուր. և գանձ (խոշ նայ) կունենաս երկնքումն[12]. և եա՛ էնտեղ ետ՝ և իմ եանէա մէկ։

22 Եւ նա էն բանին համար դըժուարացաւ՝ և տըրտմած գնաց. պատճառն որ՝ շատ ապրանք ունէր։

23 Եւ Յիսուս հակողմն հնկողմն նայելով՝ աշակերտներին ասաց. Ո՞նչքան դժուար է որ հարուստք ոք ապրանք ունին՝ Աստուծոյ արքայութիւնն մտանեն[13]։

24 Եւ աշակերտներն զարմացել էին նորա խօսքերին վերայ. բայց Յիսուս միևնէ պատասխան ետուն նորանց և ասաց. Երդեակնիդ՝ որքա՛ն դժուար է՝ որ հարուստք՝ որ իրանց յոյսըն ապրանքի վերայ են դրել, Աստուծոյ արքայութիւնն մտանեն[14]։

(10) Մատ. ԺԹ. 16. Ղուկ. ԺԸ. 18. (11) Ել. Ք. Երկ. ԺԹ. 9. (12) Մատ. Զ. 19, 20. ԺԹ. 21. Ղուկ. ԺԲ. 33. ԺԸ. 22. (13) Մատ. ԺԹ. 23. Ղուկ. ԺԸ. 24. (14) Մատ. Զ. 19. Ա Տիմ. Զ. 17.

Digitized by Google

25 Դիւրին է մալուոյ ընդ ծակ ասղան անցանել՝ քան մեծատան յարքայութիւն Ղաւուծոյ մտանել ։

26 Եւ նոքա առաւել ևս զարմանային՝ և ասէին ընդ միմեանս . Ով ո՞վ կարասցէ ապրիլ ։

27 Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ . Ղա՛ ի մարդկանէ այդ անկարելի է , այլ ոչ առ ի Ղաւուծոյ ։

28 Սկսաւ ասել ցնա Պետրոս , Ղա՛ հասուածիկ մեք թողաք զամենայն , և եկաք զքեզ ։

29 Պատասխանի եւ Յիսուս և ասէ . Ղա՛մէն ասեմ ձեզ՝ ոչ ոք է որ եթող զառն կամ զեղբարս կամ զքոյր կամ զհայր կամ զմայր կամ զորդիս կամ զագարակս վասն իմ կամ վասն աւետարանին ,

30 Եթէ ոչ առնուցու հարիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի՝ առնս և եղբարս և քոյր և մայր և որդիս և ագարակս հալածանօք հանգերձ , և յաշխարհին որ գալոց է՝ կեանան յաւիտենականս ։

31 Օ՛ի բազումք եղիցին առաջինք յետինք՝ և յետինք առաջինք ։

32 Եւ էին ՚ի ճանապարհի մինչդեռ ելանէին յԵրուսաղէմ . և երթայր Յիսուս առաջի քան զնոսա , և զարմացեալ էին որ զհետն երթային և երկնչէին ։ Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն առանձինն , սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանելոց իցեն ընդ նա ։

33 Թէ Ղհասուածիկ ելանեմք յԵրուսաղէմ . և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետին և դպրապետին , և դատապարտեսցեն զնա մահու , և մատնեսցեն զնա հեթանոսաց ։

25 Ղեւելի հեշտ է որ ուղտն անցանէ ծակով ասղան քան հարուստն Ղաւուծոյ արքայութիւնն մտանէ ։

26 Եւ նոքա էլ աւելի զարմանում էին՝ և մինչն մընին ասում էին . Ղպա ո՞վ կարենայ ապրիլ ։

27 Յիսուս նորանց մտիկ առաւ և ասաց . Ա՛րդեանց հողմանէ՝ էդ անկարելի է , բայց ոչ թէ Ղաւուծոյ հողմանէ ։

28 Պետրոսն սկսաց նորան ասել . Ղհա մենք ամէն բան թողինք , և քո եաւէտ եկինք ։

29 Յիսուս պատասխան առաւ և ասաց . Ա՛ժմարիսն ասում եմ ձեզ՝ թէ ոչ ով չկայ՝ որ տունը կամ եղբարները կամ քրվերքը կամ հօրը կամ մօրը կամ որդիքը կամ արտերը թողնց՝ ինձ համար կամ աւետարանին համար ,

30 Որ հարիւրապատիկ հիմիկ էս ժամանակումս չառնի տուներ և եղբարներ և քրվերք և մարք և որդիք և արտեր հալածմունքի հետ , և էն հոր գալու աշխարհքումն՝ յաւիտենական կեանքն ։

31 Պատճառով՝ շատ առաջիններ յետինք կըլինին՝ և յետիններն առաջինք ։

32 Եւ ճանապարհի վըրայ էին՝ որ Երուսաղէմ էին գնում , և Յիսուս նորանցից առաջ էր գընում . և նորանք՝ որ եաւէն գընումին , զարմացած էին և վախենումին ։ Եւ տասներկուսին միզել առաձին առաւ , սկսեց նորանց ասել թէ ինչ բաներ իրան վերայ պիտի անցկենան ։

33 Թէ Ղհա վեր ենք էլնում Երուսաղէմ . և Որդին մարդոյ կըմատնըվի քահանայապետների և

(15) Նէմ · կր · 17 ։ Մարկ ։ ԺԲ · 26 ։ Ղ՛ուկ ։ ա · 37 ։ (16) Մարկ · ԺԲ · 27 ։ Ղ՛ուկ · ԺԸ · 28 ։ (17) ԲՄնաց · իե · 9 ։ Ղ՛ուկ · ԺԸ · 30 ։ (18) Մարկ · ԺԲ · 30 ։ ի · 16 ։ Ղ՛ուկ · ԺԳ · 30 ։ (19) Մարկ · ի · 17 ։ Ղ՛ուկ · ԺԸ · 31 ։ (20) Մարկ · Ը · 31 ։ Ի · 31 ։ Ղ՛ուկ · Ի · 33 ։ ԺԸ · 31 ։

Digitized by Google

ըաց . և դառեսցին զնա ՚ի մահ , և մատնեսցեն զնա հեթանոսաց .

34 Եւ կատակեսցեն զնովաւ , և հարկանիցեն զնա , և թքանիցեն ՚ի նա , և սպանցեն . և յերիր աւուր յարիցէ :

35 Եւ երթային առ նովաւ Յակովբոս և Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ , և ասեն ցնա . Ո՛վ ուսուցիչ , կամիմք զի զոր ինչ խնդրեսցուք ՚ի քէն՝ արասցես մեզ :

36 Եւ նա ասէ ցնոսա . Զի՞նչ կամիք յինէն՝ զի արասից ձեզ :

37 Եւ նոքա ասեն ցնա . Տո՛ւր մեզ՝ զի նստցուք մի յաջմէ քումմէ և մի յահեկէ ՚ի փառսն քումմ :

38 Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնոսա . Ո՛չ գիտէք զինչ խընդրէք . կարէ՞ք ըմպել զաւժականն՝ զոր ես ըմպելոց եմ , կամ զմկրտութիւնն մկրտիլ՝ զոր ես մկրտելոցն եմ :

39 Եւ նոքա ասեն ցնա ; Կարեմք . և Յիսուս ասէ ցնոսա . Զաւժականն՝ զոր ես ըմպելոց եմ՝ ըմպիցէք , և զմկրտութիւնն՝ զոր ես մկրտելոց եմ՝ մկրտիցիք :

40 Բայլ նստուցանել ընդ աջմէ իմմէ և ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ , այլ որոց պատրաստեալ իցէ :

41 Եւ լուեալ զայն տասանցն , սկսան բարկանալ Յակոբայ և Յովհաննու :

42 Եւ Յիսուս կոչեաց զնոսա առ ինքն , և ասէ ցնոսա . Գիտէք՝ զի որ յանուան իշխանքն են հեթանոսաց , տիրեն նոցա . և մեծամեծք նոցա , իշխեն նոցա :

43 Այլ ոչնպէս իցէ և ՚ի ձերում միջի . այլ որ կամիցի ՚ի ձէնջ մեծ կարդացողներիւ ձեռքն . և նորան մահով կըդատապարտեն , և նորան հեթանոսներին կըմատնեն .

34 Եւ նորան ծաղր կանեն , և նորան կըծեծեն , և նորա վերայ կըթքեն , և կըսպանեն . և երեք օրուն յարութիւն կառնէ :

35 Եւ Յակոբոսի որդիքն՝ Յակոբոսն և Յովհաննէսն նորա մօտ էին գնում՝ և նորան ասացին . Վարդապետ՝ ուզումենք որ՝ ինչ որ քեզանից խնդրենք՝ մեզ անես[21] :

36 Եւ նա նորանց ասաց . Ինչ էք խնդրում ինձանից՝ որ ձեզ անեմ :

37 Եւ նորանք ասացին նորան . Տո՛ւր մեզ՝ որ մինն քո աջ կողմդ և մեկնէն քո ձախ կողմդ նստինք քո փառքումդ :

38 Յիսուս պատասխան առաւ և նորանց ասաց . Ձեք գիտում (թէ) ինչ էք խընդրում . կարծդ էք էն բաժակըն (նապն) խմել՝ որ ես պիտի խմեմ , կամ էն մկրտութենովն մկրտվիլ՝ որ ես պիտի մկրտվիմ :

39 Եւ նորանք ասացին նորան . Կարօղ ենք . և Յիսուս նորանց ասաց . Էն բաժակըն (նապն)՝ որ ես պիտի խմեմ , կըխմէք , և (էն) մկրտութենովն որես պիտի մկրտվիմ կըմկրտվիք :

40 Չայց իմ աջ և իմ ձախ կողմս նստացնելն իմս չէ որ տամ . բայց նորանց՝ որ պատրաստված է :

41 Եւ էն (մնկէլ) տասներն որ լսեցին , սկսեցին բարկանալ Յակոբի և Յովհաննէսի վերայ[22] :

42 Եւ Յիսուս նորանց իրան մօտ կանչեց , և նորանց ասաց . Գիտում էք՝ որ հեթանոսների իշխան կոչվածներն նորանց վերայ տիրում են , և նորանց մեծամեծներն իշխանութիւն են անում նորանց վերայ[23] :

43 Էնպէս չէ պիտի լինի ձեր միջումդ . բայց ձեզանից ով որ կա-

(21) Մատ . ի . 20 : (22) Մատ . ի . 24 : (23) Ղուկ . իբ . 25 .

Digitized by Google

լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ ։

44 Եւ որ կամիցի ի ձէնջ առա-
ջին լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ ։

45 Քանզի և Որդի մարդոյ ոչ
եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել ,
և տալ զանձն իւր փրկանս փոխա-
նակ բազմաց ։

46 Եւ գան յԵրիքով . և ընդ ե-
լանելն նորա յԵրիքովէ աշակերտաց-
քըն և բազում ժողովրդով , որդի
Տիմէի Բարտիմէոս կոյր նստէը մո-
լեցեալ յանցս ճանապարհի ։

47 Եւ լուեալ՝ թէ Յիսուս Նա-
զովրեցի է , սկսաւ աղաղակել և ա-
սել . Որդի Դաւթի Յիսուս՝ ողոր-
մեաց ինձ ։

48 Եւ սաստկին նմա բազումք՝ զի
լռեսցէ . և նա առաւել ևս աղա-
ղակէը . Որդի Դաւթի ողորմեաց
ինձ ։

49 Օ՜ռեղի առ Յիսուս՝ և հրա-
մայեաց կոչել զնա . կոչեն զկոյրն՝
և ասեն ցնա . Քաջալերեաց արի՝
կոչէ զքեզ ։

50 Եւ նորա ընկեցեալ զհանձն
իւր , յարեաւ և եկն առ Յիսուս ։

51 Պատասխանի եւ նմա Յիսուս
և ասէ . Ո՞ր կամիս՝ թէ արա-
րից քեզ . ասէ ցնա կոյրն . Ռաբ-
բունի՝ զի բացայց ։

52 Եւ Յիսուս ասէ ցնա . Երթ
հաւատաք քո կեցուցին զքեզ . և
վաղվաղակի բացաւ , և երթայր
զՀետ նորա ի ճանապարհին ։

լինիլ մեծ լինել քոյդ ձեզ պաշ-
տօնեայ լինի[24] ։

44 Եւ ձեզանիցդ ով որ կամենայ
առաջին լինել քոյդ ամենից ծա-
ռայ լինի ։

45 Զի մարդեայն Որդին մարդոյ
եկ չեկաւ՝ որ իրան ծառայեն՝ բայց
որ ինքն ծառայէ[25] , և իրան տա-
ձըն շատերի տեղակ փրկութեան
գին տայ[26] ։

46 Եւ երիքով եկին . և երբոր
նա աշակերտներովն և շատ ժողո-
վուրդներով երիքովիցն դուրս ե-
կաւ , Տիմէի որդի Բարտիմէոս կոյ-
րըն ճանապարհի վերայ նստած էր
մուրացող[27] ։

47 Երբոր լսեց՝ թէ Յիսուս Նա-
զովրեցին է , սկսեց աղաղակել և
ասել . Յիսուս որդի Դաւթի՝ ինձ
ողորմեայ ։

48 Եւ շատ մարդիք սաստուկին
նորան՝ որ լուռ կենայ . և նա էլ
աւելի աղաղակուէր . Որդի Դաւ-
թի՝ ինձ ողորմեայ ։

49 Յիսուս կանգնեց և հրամայեց՝
որ նորան կանչեն . կուրին կանչե-
ցին՝ և նորան ասացին . Սիրտդ
պինա բունիր . վերկաց , քեզ կան-
չուէ ։

50 Եւ նա իրան շորերըն վեր
քցեց՝ վերկացաւ և Յիսուսի մօտ
եկաւ ։

51 Յիսուս նորան պատասխան
առաւ և ասաց . Ի՞նչ ես կամե-
նում , որ անեմ քեզ . կոյրն նորան
ասաց . Ռաբբունի՝ որ բացվիմ ։

52 Եւ Յիսուս նորան ասաց . Գը-
նա՛ քո հաւատքդ քեզ ապրեցրուց[28] .
և շուտով բացվաւ , և ճանապար-
հումն նորա եաւէն գնուաքը ։

(24) Մատ . ի . 26 . 28 : Մարկ . թ . 35 : Ղուկ . իե . 46 : (25) Հովհ . ժգ . 14 : Փիլպ . բ . 7 : (26) Մատ . ի . 28 : ա Տիմ . բ . 6 : Տիտ . բ . 14 : (27) Մատ . ի . 29 : Ղուկ . ժը . 35 : (28) Մատ . թ . 22 : Մարկ . ե . 34 :

Digitized by Google

ԳԼ· ԺԸ

1 Կրկնաց ուսանակի վերայ նաստ փառքով Նբուսազէմ մնուան : 13 Մեկոյն առնով լիք անպտուղ ծառն կանիծէ · 15 Տաճարն կմաքրէ · 20 Երան աշակերտներին խրատս կը տայ զի հաստատ հաւատոյ ունենան , և իրանց թշնամիներին նեղին · 27 Երան տրամ գործերին ինչ իշխանութիւնով լինին Յօհաննէսի մկրտութիւնին ցոյց կըտայ որ նորան Քաստածանից ուղարկած մին մարդ էր :

1 Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ՝ ի Բեթփագէ և ի Բեթանիա մօտ ի լեառն Ձիթենեաց , առաքէ երկուս յաշակերտաց ան- սր :

2 Եւ ասէ ցնոսա . Երթայք դուք ի գիւղդ՝ որ ընդդէմ ձեր կայ . և նոյնժամայն իբրև մտանէք ի նա , գտանէք յատանակ մի կապեալ՝ յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նըս- տաւ , լուծէք զնա և ածէք :

3 Եւ եթէ ոք ասացէ ձեզ՝ եթէ Ո՞ր լուծանէք զյատանակդ , ասասջիք՝ եթէ Տեառն իւրում պիտոյ է . և վաղվաղակի առաքեսցէ զնա այսր :

4 Ընդան , և գտին զյատանակն կապեալ առ դուրս արտաքոյ ի փո- ղոցի անդ , և լուծին զնա :

5 Եւ ոմանք յորոց անդն կային , ասեն ցնոսա . Ո՞ր գործէք , զի՞ լուծանէք զյատանակդ :

6 Եւ նոքա ասեն ցնոսա , որպէս ասացն Յիսուս . և թոյլ եառն նո- ցա :

7 Ընծեն զյատանակն առ Յիսուս . և արկանեն ի վերայ նորա հան- դերձս , և նստաւ ի վերայ նորա :

8 Եւ բազումք զհանդերձս իւր- եանց առաքածանէին ի վերայ ճա- նապարհին , և այլք ոստս ի ծա- ռոց հատանէին և արկանէին զճա- նապարհսն :

9 Եւ որ առաջին և զկնի եր-

1 Եւ երբոր Երուսաղէմին մօ- տեցան , Բեթփագէ և Բեթանիա (եկին) Ձիթենեաց սարին մօտ՝ են աշակերտներից երկուսը ուղար- կեց՝ :

2 Եւ նորանց ասաց . Գնացէք դուք էդ գիւղդ՝ որ ձեր առաջին կայ . և շուտով երբոր նորա մէջ մտնէք , մին քուռակ կըգտնէք կա- պած՝ որ նորա վերայ իսկի մարդ չէ նստած . նորան արձակեցէք և բերէք :

3 Եւ թէ որ մինն ասէ ձեզ . Թէ Ինչո՞ւ համար էք էդ քուռա- կըդ արձակում , ասացէք՝ Թէ Նա տէրին պէտք է . և շուտով նորան էտեղ կուղարկէ :

4 Գնացին և քուռակըն գտին դուրան փողոցի մէջ դրսներըն առա- ջին կապած , և նորան արձակեցին :

5 Եւ մին քանիսն նորանցից՝ որ էնտեղ կանգնած էին՝ ասացին նո- րանց . Ի՞նչ էք անում . ինչո՞ւ հա- մար էք արձակում էդ քուռակըդ :

6 Եւ նորանք ասացին նորանց , ինչպէս որ Յիսուս ասաց . և Թող առին նորանց :

7 Քուռակըն Յիսուսի մօտ բե- րին . և նորա վերայ շորեր ձգե- ցին , և նորա վերայ նստեց :

8 Եւ շատ մարդիք իրանց շորե- րըն ճանապարհի վերայ փռուե- ին , և ուրիշներն ծառերից ճը- ղեր էին կարում և ճանապարհի վերայ փռում՝ :

9 Եւ նորանք որ առաջին և ե-

(1) Մտթ . խա . 1 : Ղուկ . ժԹ . 29 : Յուհ . ժբ . 14 : (2) Մտթ . խա . 8 :

Digitized by Google

թային , աղաղակէին , և ասէին ։ Ովսաննայ Խարձրելոյն ։

10 Օրհնեալ որ գայդ յանուն Տեառն ։ օրհնեալ թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւիթ ։ խաղաղութիւն յերկինս՝ և փառք ՚ի բարձունս ։

11 Եւ եմուտ Յիսուս Երուսաղէմ ՚ի տաճարն , և հայեցաւ շուրջ զամենեցունցմէ ։ և զի էր երեկոյացեալ ժամն , ել ՚ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ ։

12 Եւ ՚ի վաղիւ անդր ինչուհետ ելանէին ՚ի Բեթանիայ , քաղցեաւ ։

13 Եւ տեսս թզենի մի ՚ի բացատս տերևալից ։ և եկն՝ թէ գտանիցէ ինչ ՚ի նմա ։ և իբրև եկն ՚ի նա՝ ոչինչ եգիտ , բայց միայն տերև ։ զի ոչ խակ էր ժամանակ թզոյ ։

14 Պատասխանի եառ և ասէ ցնա ։ Ի՛ւ ևս զբ յաւիտեան ՚ի քէն պըտուղ կերիցէ ։ և լսէին աշակերտքն նորա ։

15 Գան Երուսաղէմ ։ և մտեալ ՚ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականան և զգնողս՝ որ էին ՚ի տաճարին ։ և զսեղանս հատուփաճառացն գըսեաւց ; և զթռռնս աղաւնեվաճառացն կործանեաց ։

16 Եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ ինչ անցուցանիցէ ընդ տաճարն ։

17 Եւ ուսուցանէր և ասէր ցնոսա ։ Ո՛չ գրեալ է՝ Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց , և դուք արարիք զդա սպրս աւազակաց ։

18 Լսեան քահանայապետքն և դպիրք ։ և խնդրէին՝ թէ ո՛րպէս կո-

ւսէին գնուսիին՝ աղաղակուսիին և ասուս ։ Ովսաննայ Խարձրելոյն[3] ։

10 Օրհնեալ (ես)՝ որ Տէրի ա՛նունովն ես գալիս ։ օրհնեալ է մեր Դաւիթ հօր եկած թագաւորութիւնն ։ խաղաղութիւն երկնքումըն՝ և փառք ՚ի բարձունս ։

11 Եւ Յիսուս մտաւ Երուսաղէմ՝ տաճարին մէջ ։ և չորս կողմուլ ամէն բանի մտիկ տուաւ ։ և որովհետև իրիկվան ժամանակ էր , դուրս գնաց Բեթանիա՝ տասներկուսին հետ ։

12 Եւ հետևեալն օրն երբոր Բեթանիայից դուրս էին գալիս , նա սովեց[4] ։

13 Եւ հեռուստց մի թզի ծառ տեսաւ տերևավ լիքն[5] ։ և մօտ եկաւ՝ որ նորա վերայ մի բան գըտնէ ։ և երբոր եկաւ՝ խակ մի բան չըգտաւ նորանում՝ բայց միայն տերև ։ ինչուտը գեռ թզի ժամանակն չէր ։

14 Պատասխան տուաւ և նորան ասաց ։ Ա՛յնել մինն քեզանից յաւիտեան պտուղ չուտէ ։ և նորա աշակերտներն լսուսին ։

15 Եկին Երուսաղէմ[6] ։ և տաճարն մտաւ՝ սկսեց դուրս հանել վաճառականներն և գնողներն՝ որ տաճարումն էին ։ և ըսուակ փռոխոնների (սեղանների) սեղաններն գըմփեց , և աղաւնի ծախողների աթոռները կործանեց ։

16 Եւ չէր թողում՝ որ մինն մի բան տաճարի միջումն անցկացնէ ։

17 Եւ սովորցնում էր և նորանց ասում էր ։ Գրված է՝ թէ Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչվի ամէն հեթանոսներին համար[7] ։ և դուք աւազակների բուն տրիք դըրան[8] ։

18 Գրագետներն և կարդացողներն լսեցին և խնդրում էին՝

(3) Մաթ . ԻԱ . 26 ։ ՃԼԸ . 1 ։ (4) Մարկ . ԺԱ . 12 ։ (5) Մարկ . ԺԱ . 13 ։ (6) Մարկ . ԺԱ . 19 ։ (7) Մարկ . ԺԱ . 12 ։ Ղուկ , ԺԹ . 45 ։ Եսա . Ը . 14 ։ (8) Նռայ . Ծ . 7 ։ (9) Նէեմ . Է . 11 ։

Digitized by Google

բուցին զնա, այլ երկնչէին ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմացեալ էր ընդ բուսումն նորա։

19 Եւ իբրև եղեկեայ լինէր՝ արտաքոյ քան զքաղաքն կանէին։

20 Եւ մինչդեռ այգուց առ նովաւ անցանէին, տեսին զթզենին ցամաքեալ յարմատոց։

21 Հիշեցաւ Պետրոս և ասէ ցնա. Ռաբբի՝ տես՝ թզենին զոր անիծեր՝ ցամաքեցաւ։

22 Պատասխանի Յիսուս և ասէ ցնոսա. Եթէ ունիցիք հաւատս առն Աստուծոյ,

23 Ամէն ասեմ ձեզ, զի որ ասիցէ լերինս այսմիկ. Վերացիր և անկիր ի ծով, և ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատացէ թէ զոր ասէն՝ լինի, եղիցի նմա զոր ինչ և ասիցէ։

24 Վասն այսորիկ ասեմ ձեզ. Ամենայն ինչ զոր որչ աղօթս առնուցանել խնդրիցէք, և հաւատացէք թէ առնուցուք, եղիցի ձեզ։

25 Եւ յորժամ յաղթութ կայցէք, թողուցուք, եթէ ունիցիք ինչ զոմեքն. զի և Հայրն ձեր որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս ձեր։

26 Ոչ եթէ դուք ոչ թողուցուք, և ձեր Հայրն որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր։

27 Գան միւսանգամ Երուսաղէմ. և մինչդեռ ի տաճարի անդ գնայր, գան առ նա քահանայապետքն և գպիրքն և ծերքն։

28 Եւ ասեն ցնա. Որով իշխա-

(10) Մատ. իա. 45, 46։ Ղուկ. ժբ. 47։ (11) Մատ. է. 28։ Մարկ. ա. 22։ Ղուկ. գ. 32։ (12) Մատ. իա. 19։ (13) Մատ. ժէ. 20։ իա. 21։ Ղուկ. ժէ. 6։ (14) Մատ. է. 7։ Ղուկ. ժա. 9։ Յովհ. ժգ. 13։ ժե. 7։ ժզ. 24։ Յակ. ա. 5, 6։ (15) Մատ. ե. 44։ Կող. գ. 13։ (16) Մատ. ժը. 35։ (17) Մատ. իա. 23։ Ղուկ. ի. 1։

թեմ զինեցեալ կոչեցեալն նորան[10]։ բայց վախենային ամենայնիւ ի ժողովրդենէ, զի ամենայն ժողովուրդն նորա վարդապետութեան վերայ զարմացեալ էին[11]։

19 Եւ երբեմն իրիկուն էր լինում՝ քաղաքիցն դուրս էին գնում։

20 Եւ առաւօտուն երբեմն նորա մօտակն անց էին կենում՝ տեսին էին թզուկն ծառն ամենայնին (իսկոյն) չորացած[12]։

21 Պետրոսն միտքն բերում՝ և նորան ասաց. Ռաբբի՝ տես՝ էն թզուկն ծառն որ անիծեցիր՝ չորացաւ։

22 Յիսուս պատասխան առաւ և նորանց ասաց. Ամէն որ Աստուծոյ հաւատքըն ունենաք,

23 Ճշմարիտն ասում եմ ձեզ, թէ ով որ հա ասարիս ասէ՝ թէ ա՛յր կաց և ծովն ընկիր, և իրան սրտում չէ երկմտի, բայց հաւատայ՝ թէ էն որ ասում կըլինի, նորան կըլինի ինչ որ կասէ[13]։

24 Ահա՛ասում եմ ձեզ՝ թէ ամէն բան, որ նորա համար աղօթք անելով խնդրէք, և հաւատաք թէ կառնէք, էն կըլինի ձեզ[14]։

25 Եւ որ ժամանակ աղօթք անէք, թողութիւն առէք թէ որ մէնակին մի բան ունենաք[15]. որ ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է՝ ձեր մեղքըն թողէ ձեզ։

26 Պատճառներ՝ եթէ դուք թողութիւն չըտաք, ձեր Հայրն էլ՝ որ երկնքումն է, ձեր մեղքըն չէ թողիլ ձեզ[16]։

27 Ա՛ինէլ Երուսաղէմ եկին. և գնում քանի որ նա տաճարումն մէնակ էր գալիս, քահանայապետներն և կարգացօղներն և ծերերն նորա մօտ եկին[17]։

28 Եւ նորան ասացին. Ո՞նչ իշ-

նա թիւամբ առնիս զայդ , և ձի ես քեզ զհետևութիւնդ զայդ :
29 Պատասխանի ես Յիսուս և ասէ ցնա . Հարցից և ես զձեզ բան մի , ասա՛ ինձ պատասխանի , և ես ասացից ձեզ՝ որով իշխանութեամբ առնեմ զայս :

30 Մկրտութիւնն Յովհաննէս յերկնից էր՝ եթէ ի մարդկանէ . ասա՛ ինձ պատասխանի :
31 Խորհէին ընդ միմեանս և ասէին . Եթէ ասեմք՝ եթէ Յերկնից ասէ ցմեզ . Ապա ընդէր ոչ հաւատացէք նմա :
32 Իսկ եթէ ասեմք՝ Ի մարդկանէ , երկնչիմք ի ժողովրդենէն . զի ամենեքին գիտեին զՅովհաննէս թէ մարգարէ էր :

33 Պատասխանի տան և ասեն Յիսուսու . Չգիտեմք : Եւ Յիսուս ես նոցա պատասխանի և ասէ . Եւ ոչ ես առեմ ձեզ , որով իշխանութեամբ առնեմ զայս :

թանութեամբ եւ առաքանեցի՞ զի՛ ասասցէ քեզ հրովիրատուիցէք

29 Յիսուս պատասխանի ասաց նորանց . Ես էլ ձեզանից մին բան կը հարցընեմ ձեզ , պատասխանեցէք , և ես էլ կասեմ ձեզ՝ թէ ի՛նչ իշխանութեամբ եմ անում այս :

30 Յովհաննէսի մկրտութիւնը երկնքի՞ց էր թէ մարդկանցի՞ց . ինձ պատասխանեցէք :
31 Իրար հետ միտք էին անում և ասում . Եթէ ասենք՝ թէ երկնքից , մեզ կասէ . Ապա ինչո՞ւ չհաւատացիք նորան :
32 Կամ եթէ ասենք՝ Մարդկանից (և) , ժողովրդից վախենում ենք . ինչուո՞ւ ամէնքն Յովհաննէսին թէ մարգարէ էր[12] :
33 Պատասխան տուին և Յիսուսին ասացին . Չգիտենք : Եւ Յիսուս նորանց պատասխան տուաւ և ասաց . Ես էլ չեմ ասիլ ձեզ , թէ ի՛նչ իշխանութեամբ եմ անում այս :

ԿԱ . ՅԻՒ

1 Ընդհատում մշակների առակի . Քրիստոս էլեանների վերայ բերվելն և հնազանդների հռչակելն առաջագոյ ասուած : 13. Աւետարանի հարկ առնելս համար փարիսեցիների և Հերովդէականների որ խօսքով որսալ էին ուզում՝ նորանից ազատվելն : 18 Սադուկեցիների մի ծաղրական կնճռի ցոյց կըտայ , որ նորանք առաւելապէս թէ Յարութիւն չեկայ : 28 Ըստ ջն պատուիրանքի համար կարդացողի հարցմանն պատասխան կըտայ . 35 Ցոյց կըտայ թէ Քրիստոսի համար կարդացողների , կարծիքն ճշմարիտ չէ . 38. Ն՝ պատուէր կըտայ ժողովրդին որ նորանց փառասիրութիւնից և կեղծաւորութիւնից զգոյշ լինին . 41. Ն՝ երկու դրամ տրքնաւոր կնկան ասելն գովելի :

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ և ասել . Այր մի անկեաց այգի , և ած շուրջ զնովաւ ցանգ և գուբ ընձան հիւրից , և շինեաց աշտարակ . և եհան զնա գործակատարս , և գնաց ի տար աշխարհ :

1 Եւ սկսաց նորանց հետ առակներով խօսել և ասել . Այն մարդ այգի (Բաղ) տնկեց , և նորա չորս կողմումն պարիսպ քաշեց , և գուբ ընձան հիւրից , և աշտարակ (Բուրգ) շինեց և նորան մշակներին տուաւ և հեռու աշխարհ գնաց :

(18) Մատթ . գ . 5 ; ժգ . 5 ; Մարկ . գ . 20 : (1) Մատթ . խա . 33 ; Գործ . ե . 9 :

2 Եւ առաքեաց առ Հիսուսն՝ ի ժամանակի ծառայ մի, զի՝ ի հիսակաց անտի առցէ՝ ի պտղոյ այգւոյն։

3 Եւ նորա կալեալ՝ գան հարին զնա, և արձակեցին ունայն։

4 Դարձեալ առաքեաց առ նոսա զայլ ծառայ, և զնա կառափնատեցին՝ և արձակեցին անարգեալ։

5 Եւ դարձեալ այլ առաքեաց, և զնա սպանին. և զբազումս այլս՝ զոմանս հարկանէին և զոմանս սպանանէին։

6 Ունայ ոչինչ մնէր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ, և ասէ. թերևս ամաչեցին յորդւոյ սորա իմմէ։

7 Իսկ հիակքն իրրև տեսին զնա՝ ասեն ցմիմեանս. Այս է ժառանգն, եկայք սպանցուք զսա, և մեր լիցի ժառանգութիւնն։

8 Եւ կալեալ զնա սպանին, և հանին արտաքոյ այգւոյն։

9 Ունայ՝ զի՞նչ առցէ տէր այգւոյն. եկեսցէ և կորուսցէ զվհկան, և առցէ զայգին՝ ի ձեռս այլոց։

10 Եւ զչ զգիրն գայն իցէ ընթերցեալ ձեր՝ թէ Ո՛վքեա, զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան։

11 ՚ի Տեառնէ եղև այս, և է աքանչելի յաչս մեր։

12 Եւ խնդրէին զնա առնել, և երկեան՝ ի ժողովրդենէ անտի, զի գիտացին թէ առ նոսա ասաց զառակն. և թողին զնա և գնացին։

13 Եւ առաքեն առ նա զոմանս՝ ի փարհանցւոց անտի՝ և՝ ի հերովդիանոսեցոց, զի զնա որսացեն բանիւ։

14 Եւ նոքա եկեալ՝ հարցանէին

2 Եւ ժամանակաւ՝ հիսակաց մօտն մին ծառայ ուղարկեց որ էն հիակներէրին պտղէ (բաղէ) պըտղէցն առնէ։

3 Եւ նորանք բռնեցին՝ նորան ծեծեցին, և դատարկ ճանապարհ քցեցին։

4 Ունինէ ուրիշ ծառայ ուղարկեց. և նորա գլուխըն պատառեցին և ճիւաքամուր տալով արձակեցին։

5 Ունինէ ուրիշը ուղարկեց՝ և նորան սպանեցին. և էլ շատ ուրիշները, մին քանիսըն ծեծուեցին և մին քանիսըն սպանուեցին։

6 Ունա իրան մին սիրելի որդի ունէր՝ յետոյ նորան ուղարկեց նոցանց մօտ, և ասաց. Ոնինի որ էս իմ որգուցս ամաչեն։

7 Ունայ հիակներն երբոր տեսին նորան՝ որ գալիս էր, իրար ասացին. Այ է ժառանգն. եկէք սորան սպանենք՝ և ժառանգութիւնն մեզ լինի։

8 Եւ նորան բըռնեցին, սպանեցին և այգուցն դուրս հանեցին։

9 Ունա այգոյ տէրն ի՞նչ կանէ. կըգայ և էս հիակներըն կկորցնէ, և այգին ուրիշների ձեռքըն կըտայ։

10 Եւ դուք չէք կարդացել էն գրածըն՝ թէ Ոնին քարն՝ որ շինողներն անարգեցին՝ նա էլաւ անկիւնի գլուխ[2]։

11 Տէրից էլաւ էս բանս, և մեր աչքերի առաջին զարմանալի է։

12 Եւ կամենուէին՝ որ նորան բռնեն, և ժողովրդից վախեցան[3]. ինչուր՝ իմացան՝ թէ էն առակըն ի՛ քանց համար ասաց. և նորան թողին և գնացին։

13 Եւ փարիսեցիներից և Հերովդեսեաններից մին քանի հոգի նորա մօտ ուղարկեցին՝ որ խօսքով որսան նորան[4]։

14 Եւ նորանք եկին՝ հարցնուէ-

(2) Ոսղ. ԿԺԸ. 22։ (3) Մատթ. իա. 45, 46։ Մարկ. ժա. 18։ Ղուկ. կ. 25. 30. 45։ (4) Մատթ. իբ. 15։ Ղուկ. ի. 20։

զնա՝ փնդրեցարուք[1] և առէք ի ձեզ[2] զերկուսեան գիտեմք զի ճշմարիտ ես դու, և զճանապարհ ի քում ուսանիս[3] ըստ ճշմարտութեան, և ոչ հոգաս մարդկան, այլ ճշմարտութեամբ զնանա՝ պարզիկ[4] առաքեալ ոստեցեանս. արդ՝ առաքեալ, [5]ըստ ո՞ր է հարկս տալ կայսեր՝ թե չէ՞ տացո՞ք՝ թե ոչ տացուք։

16 Եւ Յիսուս գիտացեալ զկեղծաւորութիւնն նոցա, ասէ ցնոսա. Ինչ՞ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան մի՝ զի տեսից։

16 Եւ նոքա բերին. և ասէ ցնոսա. Ո՞ր է պատկերս այս կամ գիր. և նոքա ասեն ցնա. Կայսեր։

17 Պատասխանի նա Յիսուս, և ասէ ցնոսա. Երթայք տուք զիշխանսն՝ կայսեր, և զ[6]աստուծոյն [7]աստուծոյ. և զարմացան ընդ նա։

17 Յիսուս պատասխան առաւ և ասաց ցնոսա. Տայցէք կայսերին զնոսին կայսերին տուէք և [7]աստուծոյն՝ [6]աստուծոյն. և զարմացան նորա վերայ։

18 Գան առ նա տագնապիչքն որ ասեն՝ թե Ո՛չ է յարութիւն. հարցանէին ցնա և ասէին։

18 Որում մեռ եկին տագնապիչքն որ ասեն՝ թե Յարութիւն չէ[8]՝ նորան հարցնուելին և ասեն՝

19 Վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ. եթէ ումեքէ եղբայր մեռանի՝ և թողուցու կին՝ և որդի ոչ թողուցու. զի առցէ եղբայր նորա զկին նորա, և յարուսցէ զաւակ եղբօր իւրոյմէ։

19 Վարդապետ Մովսես մեզ հաստատ գրեց՝. թէ որ մէնի եղբայրն մեռանի և (իրան) կինն թողէ, և որդի չընթողէ, թէ նորա եղբայրն նորա կինն առնէ, և իրան եղբօր հաստատ զաւակ վերկացնէ։

20 Էին՝ եղբարք եօթն էին առ մեզ. առաջինն առ կին՝ և մեռաւ, և ոչ եթող զաւակ։

20 Էգա մեզ մեռ եօթըն եղբարք կային. առաջինն կին առաւ՝ և մեռաւ, և զաւակ չընթողեց։

21 Եւ երկրորդն առ զնոյնն՝ և մեռաւ, և ոչ նա եթող զաւակ. նոյնպէս և երրորդն առ զնոյն։

21 Եւ երկրորդն նորան առաւ՝ և մեռաւ, և նա էլ զաւակ չընթողեց. էապէս էլ երրորդն նորան առաւ։

22 Եւ եօթնեքեան խակ՝ ոչ ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն մեռաւ և կինն։

22 Եւ հինց եօթն էլ՝ և զաւակ չընթողին. և ամէնքեան ետև կինն էլ մեռաւ։

23 Էր՝ ի յարութիւնն յորժամ յառանիցեն, ըստ ի նոցանէ լինիցի կինն. զի եօթնեքեան կալան զնա կին։

23 Էգա յարութեան ժամանակ կումն՝ երբոր յարութիւն կառնին, նորանցից որի՞ն կլինի կին. ինչու որ՝ եօթըն էլ նորան կին առին։

(1) Պատ. խր. 23։ (2) Ցաւ. ի. 27։ (3) Գործ. իգ. 3։ (4) Ի Օրին. իե. 5։

Digitized by Google

24 Պատասխանի նա Յիսուս և ասե ցնոսա . Ոչ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք . զի ոչ գիտէք զգիրս՝ և ոչ զզօրութիւնն Աստուծոյ :

25 Ո՛չ յարժամ ի մեռելոց յառնիցեն , ոչ առնք կանայս առնուն , և ոչ կանայք արանց լինին . այլ իբրև զհրեշտակս իցեն՝ որ յերկինս են :

26 Այլ վասն յարութեան մեռելոց զի յառնեն , ոչ իցէ ընթերցեալ ձեզ ի գիրսն Մովսէսի ի մորենւոջն . որպէս ասաց ցնա Աստուած . Ես եմ ասէ Աստուած Աբրահամու , Աստուած Իսահակայ , և Աստուած Յակովբայ :

27 Եւ ոչ է Աստուած մեռելոց՝ այլ կենդանեաց . և արդ՝ դուք յոյժ մոլորեալ էք :

28 Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ լսեր նոցա միով վիճեալին . իբրև նահս եթէ բարւոք ետ նոցա զպատասխանսն , հարց ցնա և ասէ . Ո՛ր պատուիրան է առաջին :

29 Եւ Յիսուս ասէ ցնա . Առաջին քան զամենայն՝ Լո՛ւր Իսրայէլ՝ Տէր Աստուած մեր՝ Տէր մի է :

30 Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ , և յամենայն անձնէ քումմէ , և յամենայն մտաց քոց , և յամենայն զօրութենէ քումմէ . այս է առաջին պատուիրան :

31 Եւ երկրորդն նման սմին . Սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո . մեծ քան զսոսա այլ պատուիրան ոչ գոյ :

32 Եւ ասէ ցնա դպիրն . Լաւ ասացեր է ի ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է Աստուած , և ոչ գոյ այլ բաց ի նմանէ :

24 Ասէ Յիսուս պատասխան առաւ և ետրանց ասաց . Ձի՞ սը հնդց գրա համար մոլորված էք՝ որ ոչ գիրքն էք գիտում և ոչ Աստուծոյ զօրութիւնը :

25 Պատճառանք՝ երբոր մեռելներն միջնից յարութիւն կառնեն՝ ոչ մուրդիք կին կառնեն և ոչ կանայք մուրդոյ կըգնան՝ բայց հրեշտակներին պէս կըլինին՝ որ երկնքում են[8] :

26 Ի՝նչոյն թէ մեռելներն յարութեան համար թէ յարութիւն պիտի առնեն , դուք չէիք կարդացել Մովսէսի գրքի մէջն՝ թէ Աստուած ինչպէս մոշի միջումն ետրան ասաց . Ես եմ Աբրահամս Աստուածն , և Իսահակայ Աստուածն , և Յակոբայ Աստուածն[9] :

27 Եւ Աստուած մեռելների (Աստուած) չէ , բայց կենդանիներին . ուրեմն դուք շատ մոլորված էք :

28 Եւ կարդացողներից միսն մօտ եկաւ՝ ետրանց լսումէր՝ դէտքերի որ հակառակումէին . երբոր տեսաւ թէ լաւ պատասխան առաւ ետրանց՝ հարցուց և ասաց . Առաջին պատուիրանքն որն է[10] :

29 Եւ Յիսուս ետրան ասաց . Առաջինն է (են է թէ) Լսիր Իսրայէլ՝ մեր Տէր Աստուածն մին Տէր է[11] :

30 Եւ սիրիր քո Տէր Աստուածդ՝ քո ամէն սրտով , և քո ամէն անձնուրդ , և քո ամէն մտքով , և քո ամէն զօրութենովդ . էս է առաջին պատուիրանն :

31 Եւ երկրորդն՝ որոն նման . Որ ընկերդ քո անձիդ պէս սիրիր . սորանցից աւելի մեծ ուրիշ պատուիրանք չըկայ[12] :

32 Եւ կարդացողն ետրան ասաց . Լաւ է ալ այդպէս . ճշմարտութեամբ նով ասացիր՝ թէ մին Աստուած է , և ետրանից ջոկ ուրիշ չըկայ[13] :

(8) ա կորնթ . ժե . 53 . 49 . 52 : (9) Ելք . գ . 6 : (10) Մարկ . իբ . 35 : (11) Բ Օրին . ը . 4 : Ղեւ . ժ . 27 : (12) Ղեւ . ժթ . 18 : Մարկ . իբ . 39 : Հռոմ . ժգ . 9 : Գաղ . ե . 14 : Յակ . բ . 8 : (13) Բ Օրին . գ . 39 : Նաղ . խե . 6 . 14 : Խղ . 9 :

Digitized by Google

33 Եւ սիրեցի զնա յամենայն սրտէ եւ յամենայն զօրութենէ եւ յամենայն մտաց եւ սիրելն զընկերն իւր զանձն , առաւել է քան զողջակէզս եւ զզոհս :

34 Եւ տեսեալ Յիսուսի թէ խմաստութեամբ նա պատասխանեաց՝ ասէ ցնա . Ոչ հեռի յարքայութենէ Աստուծոյ . եւ ոչ ևս ոք իշխէր ինչ հարցանել ցնա :

35 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ , մինչ ուսուցանէր ի տաճարին . Ո՞րպէս ասեն դպիրքն , եւ թէ Քրիստոս որդի Դաւթի է :

36 Եւ ինքն Դաւիթ Հոգւովն Սրբով ասէ . Ասաց Տէր ցՏէր իմ , Նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց :

37 Ասդ՝ եթէ ինքն Դաւիթ ընդ Տէր կոչէ՝ զիարդ որդի նորա . եւ բազում ժողովուրդք լսէր նմա քաղցրութեամբ :

38 Եւ ասէր ուսուցանելով ի վարդապետութեան իւրում . Զգուշ լինջիք ի դպրաց անտի , որ կամին ի հանդերձս երեւելիս շրջել . լըզնախաջոյնս խնդրել ի հրապարակս ,

39 Եւ զնախաթոռս ի ժողովուրդս , եւ զդահագուխս յընթերս :

40 Որ ուտեն զտունս այրեաց , պատճառանքով յերկարեալ զաղօթս , զի առնիցեն նա դատաստանս ընկալցին :

41 Նստեր Յիսուս ընդդէմ գանձանակին , տեսանէր թէ զիարդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գան-

33 Եւ նորան սիրելն ամէն սրտով եւ ամէն զօրութենով եւ ամէն մըտքով , եւ ընկերըն անձին պէս սիրելն՝ աւելի է քան թէ աղջակէզներն եւ մատաղներն[14] :

34 Եւ Յիսուս որ տեսաւ՝ թէ խմաստութենով պատասխան ետաւ՝ նորան ասաց . Դու Աստուծոյ արքայութենից չհեռու ես . եւ ոեքա՛ նից եւս էլ մինն չէր համարձակ վուս՝ որ նորան մին բան չարցնէ[15] :

35 Յիսուս պատասխան ետաւ եւ ասաց , դեռքանի որ տաճարին մէջ սովրցնում էր . Կարդացողներն ինչպէս են ասում՝ թէ Քրիստոսն Դաւթի որդին է[16] :

36 Եւ ինքն Դաւիթ Սրբըն Հոգին ասում[17] . Տէրն իմ Տէրին ասաց . (թէ) նմա՛ ձ կողմն նստիր՝ մինչեւ քո թշնամիներըն քո ասոդ կոխակիք դնեմ[18] :

37 Դա՛ թէ որ հենց ինքն Դաւիթ նորան Տէր է կոչում՝ ինչպէս նորա որդին կըլինի . Եւ շատ ժողովուրդներ քաղցրութենով լսում էին նորան :

38 Եւ իւրան վարդապետութեան մէջ տովորցնելով ասում էր[19] . Զգուշ կացէք կարդացողներից՝ որ կամենում պտըծած հագուստներով շուռ գալ[20] եւ բաց փողոցներում ասոջին բարեւներն խնդրել[21] ,

39 Եւ ժողովարաններում ջրն առաջին աթոռներըն , եւ սեղան նըստելոց ժամանակին գլխաւոր տեղերըն :

40 Որ որբևէրների տըներըն ուտում են[22] , եւ պատճառանքով երկար աղօթք են անում՝ որ էլ աւելի դատապարտութիւն առնեն :

41 Նիստաւ գանձանակի դիմացն կանգնած էր՝ տեսնում էր թէ ժողովուրդն ինչպէս էր պղինձ քցում

(14) ա Թագ . ժե . 22 : Ոսե . զ . 6 : Մխ . ե . 6 , 7 , 8 : (15) Մարկ . իբ . 16 : (16) Մարկ . իբ . 31 : Ղուկ . ի . 41 : (17) բ Թագ . իգ . 2 : (18) Սալ . ճժ . 1 : (19) Մարկ . գ . 12 : (20) Մարկ . իդ . 2 : Ղուկ . ի . 20 : (21) Ղուկ . ժա . 43 : (22) Մարկ . իդ . 14 :

Digitized by Google

ձանաչին • և քառասուն ամեաւոր անկին քառասուն ինչ :

42 Եկն այրի մի՝ և արկ երկուս լումայս, որ է դանգուածիկ մի :

43 Եւ կոչեցեալ զաւրինքն զշակիրտսն, ասէ ցնոսա • Ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն աղքատացեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակին :

44 Վասնզի ամենեքին յառատութենէ իւրեանց արկին • այլ նա ի չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ արկ զոյիս ամենայն իւր :

գանձանակին[23] • և շատ հարուստներ բազում քան քեզնից[24] :

42 Այն որ երկուքն կին եկաւ և երկու լումայ քեզնից, որ մին նուազ բակիա (կէս ղուշ) է :

43 Եւ իրան աշակերտներըն իրան մօտ կանչեց, և նորանից ասաց • Ճշմարիտն ասում ձեզ, թէ էն խեղճալի այրևերին շատ քեզնից քան թէ էն ամենքն՝ որ գանձանակն քեզնից[25] :

44 Զաւճառն որ ամենքն իրանց աւելցածներից քեզնին • բայց նա իրան չքաւորութենիցն ամեն ինչ որ ունէր՝ իրան կեանքի ամեն ապրուստն քեզնից[26] :

ԿԱ· ՀԻ·

1 Քրիստոս առաջի քահանայիւն ատելոց ապաւէ, 9 և աւետարանի համար լինելոյ հալածանացն • 10 պէտք է որ աւետարանն ամեն ազգերի քարոզվի, 14 ինչ ձեւ նեղութիւներ գալու են Երուսղէմի վերայ : 24 Քրիստոսի գնաստանի գալն • 32 Այս ժամին ոչ ոք գիտէ, նորա համար պէտք է որ ամեն մարդ արթուն լինի և աղօթքի անի որ պատրաստ գտնվի, և ամենին եղ պէտք է որ արթուն լինին • խնդուն չեն գիտեմ թէ ասո՞ւն երբ կըգայ • այլ ինչ թէ ձեզ երբ կըգայ :

1 Եւ յերանելն նորա ի տաճարէ անտի՝ ասէ ցնա մի յաշակերտացն նորա • Ո՛վ վարդապետ, տես որպիսի են քարինքս, և որպիսի շինուածք :

2 Պատասխանի եւս Յիսուս և ասէ • Տեսանե՞ս զայդ ամենայն շինուածս • ամէն ասեմ՝ եթէ ոչ թողցի այդր քար ի քարի վերայ որ ոչ քակեսցի :

3 Եւ որինչ նստեր նա ի լերինն Ձիթենեաց յանդիման տաճարին, հարցանէին ցնա առանձինն Պետրոս և Յակովբոս և Յովհաննէս և Անդրէաս •

4 Այս մեզ երբ լինիցի այդ • և զինչ նշան է յորժամ կատարելոց իցեն այդ ամենայն :

1 Եւ աստծուրից որ գնում էնուց նորա աշակերտներըն մին նորան ասաց • Ո՛վ վարդապետ, տես էս քարեր են, և էս շէնքեր պէսի քարեր են, և շինուածներ են :

2 Յիսուս նորան պատասխան տուն ասաց • Տեսնո՞ւմ էք ամեն շինուածներըդ • ճշմարիտը ասում ձեզ • որ էդ տեղ քար քարի վերայ չի թողվիլ որ չըքանդվիլ :

3 Եւ երբոր նա Ձիթենեաց սարումն նստած էր տաճարի դիմացն, Պետրոսն և Յակոբոսն և Յովհաննէսն և Անդրէասն էնտեղ մի՝ նրանից առանձին հարցրին նորան •

4 Այս մեզ • էդ կանգնելըդ երբ կըլինի՞ և նշանն ի՞նչ է երբոր էդ ամեն բաներըդ պիտի կատարվին[3] :

(25) Գ. ՆՒԿ. ԻԱ. 1 : (25) Ե. ՓՈՂ. Ը. 9 : (25) Ի. ՓՈՂ. Ը. 12 : (26) Ա. ՔՈՐ. Ի. 5 :

5 Պատասխանեք նա, Ելիսեա՛ և ասեք ցնոսա. Օ՛ դուն կացիք, մի՛ ոք զձեզ խաբեսցէ։

6 Օ՛ի բազումք եկեսցեն յանուն իմ, և ասիցեն՝ թէ Ես եմ քրիստոս. և զբազումս մոլորեցուսցեն։

7 Իսկ յորժամ լսիցէք պատերազմունս և համբաւս պատերազմաց՝ մի՛ խռովիցիք, զի պարտ է լինել. բայց դեռ վերջն չէ։

8 Օ՛ի յարիցէ ազգ յազգի վերայ, և թագաւորութիւն՝ ի թագաւորութեան վերայ. և եղիցին շարժմունք՝ ի տեղիս տեղիս, սովք և աղօծութիւնք և խռովութիւնք. այլ այն ամենայն սկիզբն է երկանց։

9 Ես զձեզ խակ մատնեսցեն յատեանս, և՝ ի ժողովուրդս տանջիցեք, և առաջի դատաւորաց և թագաւորաց կայցէք վասն իմ՝ ի վկայութիւն նոցա։

10 Եւ ամենայն հեթանոսաց. բայց նախ պարտ է աւետարանիս քարոզել։

11 Իսկ յորժամ առնիցին զձեզ մատնել, մի՛ յառաջագոյն հոգայցիք, և մի՛ մտաւ ածիցիք՝ թէ զի՞նչ խօսիցիք. այլ որ ինչ տացի ձեզ՝ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի՛ ոչ դուք եք որ խօսիցին այլ՝ Հոգին Սուրբ։

12 Իսկ մատնեսցէ եղբայր զեղբայր՝ ի մահ, և հայր զորդի. և յարիցին որդիք՝ ի վերայ հարց, և ածցեն զնոսա ընդ սուր։

13 Եւ եղիցիք ատելիք յամենեցունց վասն անուան իմոյ. այլ որ համբերեսցէ մինչև ի կատար՝ նա կեցցէ։

5 Ելիսեա պատասխան առաւ և ներանց ասաց. Օ՛ դուն կացիք, չըվհնի որ մինն խաբէ ձեզ[4]։

6 Ինչուա՛ր՝ շատ մարգիկ կըգան իմ անունովս, և կասին՝ թէ ես եմ քրիստոսն՝ և շատ մարդ կըմոլորացնեն։

7 Ասցը եղբար կռիւներ և կըռիւներուն համբաւն կըլսէք՝ մի՛ զարհուիլ, ինչուա՛ր՝ ասիք է որ էն լինի. բայց դեռ վերջն չէ։

8 Պատճառներ՝ ազգ ազգի վերայ վերկըկենայ՝ և թագաւորութիւն թագաւորութեան վերայ. և տեղ տեղ երկրի շարժմունքներ կըլինին, և սովեր և սատակիչ մահեր և խռովութիւններ. բայց էն ամենը նեղութեանց սկիզբն է։

9 Ես հինդ ձեզ կը տիսնանուրին կըմատնեն, և ժողովարաններուն մէջը կըտանջվիք, և դատաւորներուն և թագաւորներուն առաջին կըկանգնիք՝ ինձ համար՝ որ նորանց վկայութիւն լինի[5]։

10 Եւ ամէն հեթանոսներուն. մէյ մը հարկ առաջ պէտք է՝ որ էս աւետարանս քարոզ լինի[6]։

11 Ասցը երբոր ձեզ կըտանին ազ մատնելին՝ առաջուց հոգա չանիք և չըմտածիք թէ ի՛նչ պիտի խօսիք[7]. բայց ինչ որ են ժամուն (տուսլուն) կըտրվվի ձեզ՝ էն պիտի խօսիք. ինչուա՛ր՝ դուք չէք՝ որ խոսելիք, բայց Աստուծ Հոգին[8]։

12 Եղբայր եղբօրն կըմատնէ մահի մէջ և հայր որդին. և որդիք վերկըկենան հարանց վրայ, և նորանց կըպատանին[9]։

13 Եւ ամենուն սատկի կըլինիք իմ անունիս համար[10]. բայց ով որ մինչև վերջն հընդուրկնէ՝ նա կազատի[11]։

(4) Նեմ · իբ · 3 : Նեհ · ե · 6 : բ Թես · բ · 3 : (5) Պարի · իդ · 6 : (6) Պարի · ժ · 17, 18 : իդ · 9 : Հայտ · բ · 10 : (7) Պարի · իդ · 14 : (8) Պարի · ժ · 19 · Ղուկ · ժբ · 11 · իա · 14 : (9) Գործ · բ · 4 · գ · 8 · 31 : (10) Պէտ · ե · 6 · Պարի · ք · 24 · իդ · 10 · Ղուկ · իա · 16 : (11) Պարի · իդ · 9 : Ղուկ · իա · 17 : (12) Դան · ժբ · 13 : Պարի · ժ · 22 : իդ · 13 : Հայտ · բ · 10 :

Digitized by Google

14 Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւնն աւերածին, զի կայցէ՛ ի տեղւոջ՝ ուր չիցէ արժան. որ ընթեռնուն՝ ի միտ առցէ. յայնժամ որ՛ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն՛ ի լերինս:

15 Եւ որ՛ի վերայ տանեացն իցէ՝ մի՛ իջցէ՛ ի տուն, և մի՛ մտցէ բառնալ ինչ՛ ի տանէ իւրմէ:

16 Եւ որ յագարակին իցէ՝ մի՛ դարձցի յետս առնուլ զձորձս իւր:

17 Վայ վայ իցէ յղեաց և ածնուսուցս յաւուրսն յայնոսիկ:

18 Ցաղթեա կացէք՝ զի մի՛ ձմերայնի լինիցի այն:

19 Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութիւնք՝ ոյորիսի ոչ եղեն երբէք այնպիսիք՛ ի սկզբանէ արարածոց մինչև ցայժմ, և մի՛ այլ լինցի:

20 Եւ եթէ ոչ էր կարձեալ Տէրն աւուրցն զայնոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն մարմին. այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կարձեաց զաւուրսն զայնոսիկ:

21 Ցայնժամ եթէ ոք ասիցէ ձեզ, եթէ Քրիստոս է՝ Քրիստոս՝ կամ աստանիկ, մի՛ հաւատայցէք:

22 Զի յարիցեն ստուտ քրիստոսք և ստուտ մարգարէք, և տացեն նշանս և արուեստս՝ ստ՛ի մոլորեցուցանելոյ եթէ ՚ևար ինչ իցէ և զընտրեալսն:

23 Ցայն դուք զգո՛յշ լերուք՝ ահաւասիկ յառաջագոյն ասացի ձեզ զամենայն:

24 Քա՛յլ յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ, արեգակն

14 Եւ երբոր տեսնէք աւերածին պղծութիւնը, որ էն տեղւումն կը կանգնի՝ որ արժան չէ[13]. ով որ կարդումէ՝ միտք առնէ[14]. էն ժամանակն նորանք որ Հրէաստանումը են՝ թող սարերուն փախչին[15]:

15 Եւ ով որ կանոնների վերայ է՝ թող վար չիջցայ տան մէջ և չմտնէ՝ իրան տանիցն մին բան վերառնելու:

16 Եւ ով որ յանդումն է՝ թող յետ չդառնէ, որ իրան շորերը առնէ:

17 Վայ էն օրերումն վայ կըլլինի յղացածներին և ծիծ տուողներին[16]:

18 Աղօթք արէք՝ որ էն ձմեռան ժամանակումն չըլլինի:

19 Էն օրերումն ինպէս նեղութիւններ կըլլինին՝ ինչպէս որ աշխարհի սկզբէն մինչև հիմիկ իսկի մին ժամանակ չէն եղած, և կրկին չլինին[17]:

20 Եւ թէ որ Տէրոջմէն ընտրուածներուն համար էն օրերը չէր կարճացրել, իսկի մին մարմին չէր ապրիլ. բայց էն ընտրուածներուն համար՝ որ ընտրեց՝ էն օրերը կարճացուց:

21 Էն ժամանակին թէ որ մին ձեզ թէ Քրիստոս էս տեղ է՝ Քրիստոս կամ էն տեղ, մի՛ հաւատաք[18]:

22 Պատմաւոնոր՝ ստոյ քրիստոսներ և ստոյ մարգարէներ վերկենան. և նշաններ և հրաշքներ տալ կըբերեն՝ որ թէ կարելի ընէր՝ ընտրուածներն էլ կըմոլորացընէին:

23 Էն ատեն դուք զգոյշ կացէք[19]. ահա ամէն բանը ձեզի առաջուց ասացի ձեզ:

24 Էն օրերումն էն նեղութենէն ետև արեգակն կըխաւար-

(13) Մատ. խդ. 15: (14) Դան. թ. 27: (15) Ղուկ. խա. 21: (16) Ղուկ. ա. խա. 23: խդ. 29: (17) Դան. թ. 26: ժբ. 1: Յովէլ. բ. 2: Մատ. խդ. 21: (18) Մատ. խդ. 23: Ղուկ. ծէ. 23: խա. 8: (19) Բ Պետ. գ. 17:

Digitized by Google

խաւարեսցի , և լուսին ոչ տացէ լոյս իւր :

25 Եւ աստեղք յերկնից թօթափեսցին , և զօրութիւնք յերկինս շարժեսցին :

26 Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ամպովք՝ զօրութեամբ և փառօք բազմօք :

27 Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր , և ժողովեսցէ զընտրեալս իւր ՚ի չորից հողմոց՝ ՚ի ծագից երկրի մինչև ՚ի ծագս երկնից :

28 Ասա դուք ՚ի թզենւոյ առակ ուսջիք զառակն . յորժամ առեալ առաջն նորա կակղանայցեն և տերև արձակիցէ ՚ի նմա , գիտէք թէ մերձ է ամառն :

29 Այնպէս և դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ , գիտասջիք թէ մերձ է առ դուրս :

30 Ամէն ասեմ ձեզ , թէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչև այս ամենայն եղիցի :

31 Երկինք և երկիր անցցեն , և բանք իմ ոչ անցանիցեն :

32 Զայլ ժամն աւուրն այնորիկ և ժամուն՝ ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք յերկինս՝ և ոչ Որդի , բայց Հայր միայն :

33 Զգոյշ եղերուք . սկսջիք և կացէք յաղօթս . զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ :

34 Որպէս այր մի գնացեալ ՚ի տարբերայ թողուցու զառն իւր . և տայցէ ծառայից իւրոց իշխանութիւն , և իւրաքանչիւր զգործս իւր . և դռնապանին պատուիրէ տայցէ , զի արթուն լինիցի :

25 Եւ աստեղունքն երկնքիցն կը-թափիլին , և զօրութիւնները երկնքին կը շարժուին :

26 Եւ են ժամանակին կը տեսանեն Որդին մարդոյ ամպերով եկած , շատ զօրութենով և փառքով[21] :

27 Եւ են ժամանակին իրան հրեշտակները կուղարկէ , և իրան ընտրեալները չորս կողմիցն կը ժողովէ երկրի ծայրիցն մինչև երկնքի ծայրը :

28 Ասա դուք՝ թզուղի ծառիցն սովորեցէք առակը . երբոր նորա ճիւղերն մին քիչ կը կակղին և տերև կարձակվին՝ գիտուք թէ ամառն մօտ է[22] :

29 Ինչպէս եղ դուք՝ երբոր տեսնէք էս ամէն բաները կ՚ըլած՝ իմացէք թէ են մօտիկ է դրունները :

30 Ա՛շմարիտն ասումիմ ձեզ , թէ ոչ պրոտս չի անցկինալ՝ մինչև որ էս ամէնս լինին :

31 Երկինքն և երկիրս անցկրկեանան , բայց իմ խօսքերս չեն անցկինալ[23] :

32 Այ՝ իսկ թէ էն օրին և ժամին (սահմանին) համար ոչ ով չի գիտում՝ ոչ հրեշտակներն երկնքում՝ և ոչ Որդին , բայց միայն Հայրն :

33 Զգոյշ կ՚ըլէք , արթնուն կացէք և աղօթք արէք . ինչուր՝ չէք գիտում , թէ են ժամանակն երբ կ՚ըլինի[24] :

34 Ինչպէս մին մարդ՝ որ հեռու աշխարհ գնալով ժամանակումն՝ իրան տունըն կը թողէ . և իրան ծառաներին իշխանութիւն կուտայ , և ամէն մէկին իրան գործըն . և դռնապանին հրաման կ՚ուտայ՝ որ արթուն կենայ[25] :

(20) Դան . է · 10 : Պսփս . ա · 15 : Մատթ . իգ · 29 : Ղ.ա · իա · 25 : (21) Դան . է · 13 , 14 : Մատթ . ժգ · 27 : իգ · 30 : Մատթ . ժգ · 02 : Գործ . ա · 11 : ա Թես . գ · 16 : բ Թես . ա · 7 · 10 : Յայտ . ա · 7 : (22) Մատթ . իգ · 32 : Ղ.ա · ըա · 29 : (23) Նայ . իս · 6 : (24) Մատթ . իգ · 42 : իե · 13 : Ղ.ա · ժգ · 40 : իա · 34 : Հ.ա · ժգ · 11 : ա Թես . ե · 6 : (25) Մատթ . իգ · 45 : իե · 14 :

Digitized by Google

35 Ա՛րդ՝ արթնուն կացէք, զի ո՛չ գիտէք երբ տէր տանն գայցէ՝ յե՞ր
ընկոյեայ՝ եթէ ՚ի միջ գիշերի եթէ ՚ի հաւախօսի՝ եթէ ընդ առաւօտս ։

36 Գուցէ եկեալ յանկարծակի՝ գտանիցէ զձեզ ՚ի քուն ։
37 Եւայց զոր ձեզ ասեմ, ամենեցուն ասեմ՝ Արթնուն կացէք ։

35 Ընդհակառակն արթնուն կացէք[a]. ինչուորո՝ չէք գիտեր երբ կընդայ իրիկունն, թէ միջնորդին, թէ հաւուն խոհեղոյ ժամանակն, թէ առաւօտանց ։
36 Մի՛ երբէք թէ յանկարծ գայ՝ և ձեզ քնեալ գտանէ ։
37 Եւայց ինչ որ ձեզ ասեմ՝ ամենուն եղ ասեմ ։ Արթնուն կացէք ։

ԿԻ. ԺԴ.

1 Կրկնասիրէ զմի խորհուրդ վանեին որ նորան բանին ։ 3 Որ ինն նորա գլխին վերայ ազնիւ խունկ կերթափէ ։ 10 Ցուդասի իսան Տէր մատնելը փոխ վասիք ։ 18 Կրկնասա առաքելոց ասելն թէ ի՞նչպես իսան աշակերտներից պիտի նորան մատնուէր ։ 22 Ծառիին զաւազանելոյ և ուսանելոյ եւս իսան ընծրիքն կընշանակէ ։ 26. Խոստանալ առաքելոց թէ ամէն իսան աշակերտներն կընդայիսկզբին նորանից և կընդրկին, և Պետրոսն էլ նորան պիտի ուրանայ ։ 43 Հնդասի հանկարծակի նորան մատնելն ։ 46 Պարտէզի մէջ նորան բռնելն, 55 Իսան առաջ դիտարկութիւն կանէ, և Հրէից ժողովին անօրէնութիւնով նորան կընդատապարտեն ։ 65 Խայտառակութիւնով կընախատեն ։ 66 Պետրոսի երեք անգամ ուրանալն ։

1 Ե՛ւ էր զատիկն և բաղարջակերք յետ երկուց աւուրց ։ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ եթէ զիա՞րդ զնա ձեռնհաս կալեալ սպանանիցեն ։
2 Ասէին՝ թէ Ո՛չ ՚ի տօնի ասա, զի մի՛ խռովութիւն լինիցի ՚ի ժողովրդեանն ։
3 Եւ մինչ էր ՚ի Բեթանիա՝ ՚ի տան Սիմոնի բորոտի բազմեալ, եկն կին մի՝ որ ունէր շիշ խուղոյ նարդեայ ազնուի մեծագնոյ, և բեկեալ զշիշն՝ եհե՛ղ ՚ի վերայ գլխոյ նորա ։

4 Եւ աշակերտքն զբարկին և ասէին ։ Ընդէ՞ր եղև կորուստ խուղոյդ այդորիկ ։
5 Կա՛րէր էր զայդ խուզ վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի, և տալ աղքատաց ։ Եւ զկնի նորա ։

1 Եւ երկու օրից էր զատիկն և բաղարջակերք ։ քահանայապետներն և կարդացողներն խնդրէին՝ թէ ինչպէս նորան նենգաթեամբ բռնեն և սպանեն ։
2 Ասէին՝ թէ Ոչ ազնաւմն չըլինի՝ որ ժողովրդի մէջն խռովութիւն չըլինի ։
3 Եւ երբոր Բեթանիա էր՝ Սիմոն բորոտի տանն սեղան նստած՝ մին կին եկաւ՝ որ մին շիշ (ղ—ղայ) ազնիւ թանկագին նարդեայ խուղ առնէր, և էն շիշըն (ղ—ղան) կոտրեց՝ և նորա գլխին վերայ թափեց ։
4 Եւ աշակերտներն գժռտուեցան՝ և ասում ։ Ինչըմ էդ խուղը (ղ—ղ սեղն) կորաւ ։
5 Կարելի էր էդ խուղը երեք հարիւր դահեկանից աւելի թանգ ծախել, և աղքատներին տալ ։ Եւ շատ բարկութեամբ որանջումէին նորա վերայ ։

(38) Մատ. իգ. 43. 44. (1) Մատ. իզ. 2 ։ Ղուկ. իբ. 1 ։ Յովհ. ժա. 55 ։ ժբ. 1 ։ (2) Մատ. իզ. 6 ։ Ղուկ. 4 ։ 37 ։ Յովհ. ժբ. 1. 3 ։

Digitized by Google

6 Եւ Յիսուս ասէ ցնոսա . Ամէն ամէն ասեմ ձեզ , զի աշխատ ատենէք , զի գործ մի բարի գործեաց դա յիս :

7 Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք , և յորժամ կամիք կարող էք առնել նոցա բարիս . այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք :

8 Զոր ունէրդ՝ արար . յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ի նշան պատանեաց :

9 Ամէն ասեմ ձեզ . Ուր և քարոզեցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ , և զոր արար դա խօսեսցի վասն յիշատակի դորին :

10 Եւ Յուդա Իսկարիովտացի մի յերկոտասանից անտի , գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա :

11 Եւ նոքա իբրև լուան՝ խնդացին , և խոստացան տալ նմա արծաթ . և խնդրէր՝ թէ զիա՞րդ պարապուլ մատնեսցէ զնա :

12 Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ յորժամ զպատիւն զոհեւին , ասեն ցնա աշակերտքն . Ո՞ւր կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք՝ զի կերիցես զպատիւն :

13 Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ և ասէ ցնոսա . Երթայք ի քաղաք , և իբրև մտանիցէք ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր մի՝ որ ջափոր ջրոյ յուս ունիցի , երթայք զհետ նորա :

14 Եւ յոր տուն մտանիցէ , ասասջիք ցտանուտէրն . Ա՛ր արդապետ ասէ՝ Ո՞ւր են իջեւանքն , ուր աշակերտօքս ուտիցեմ զզատիկն :

15 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն

6 Եւ Յիսուս ՚ի նորանց ասաց . Լաւ արէք դորան . ինչո՞ւ էք նեղութիւն տալիս դորան . ինչուա՞ր՝ դա մին բարի բան գործեց ինձ վերայ :

7 Ամէն ժամանակ աղքատներըն ձեզ հետ ունիք , և երբոր կամենաք՝ կարող էք նորանց բարի անել . բայց ինձ ամէն ժամանակ ձեզ հետ չունիք :

8 Ինչ որ ունէր՝ արաւ . առաջուց իմ մարմինըս օծեց՝ որ պատանքի նշան լինի :

9 Ճշմարիտն ասումեմ ձեզ՝ որ Ամէն աշխարհքի մէջն որտեղ որ էս աւետարանս կըքարոզվի՝ դորա շատակին համար էն էլ կըխօսվի՝ որ դա արաւ :

10 Եւ Յուդա Իսկարիօտացին՝ էն տասներկուսից մինն , քահանայապետներին մօտ գնաց՝ որ նորան մատնէ նորանց ձեռքըն :

11 Նորանք երբոր լսեցին՝ ուրախացան , և խոստացան՝ որ նորան արծաթ տան . և խնդրումէր՝ թէ ինչպէս յարմար ժամանակով մատնէ նորան :

12 Եւ բարղարջակերաց առաջին օրումն՝ որ ժամանակ որ զատկի գառըն մորթումէին , աշակերտներն նորան ասացին . Ո՞ւր տեղ ես կամենում՝ որ գնանք պատրաստենք՝ որ զատիկըն ուտես :

13 Եւ էն աշակերտներից երկուսին ուղարկեց և նորանց ասաց . Գնացէք քաղաքն , և երբոր մըտնէք քաղաքն՝ մին մարդ կըպատահի ձեզ՝ որ ջրի կուժըն ուսին վերայ կունենայ . նորա ետևէն գնացէք :

14 Եւ որ տունն որ մտնէ , էն տան տիրոջն ասացէք . Ա՛ր արդապետն ասումէ՝ Ո՞ւր է էն վէր գալոյ տեղըն՝ որ նորանում զատիկըն ուտեմ աշակերտներիս հետ :

15 Եւ նա մին մեծ զարդարված

(3) ը Օրդ . ժ . 11 : (4) Մարկ . իգ . 14 : Ղուկ . իբ . 3 , 4 : (5) Մարկ . իգ . 17 : Ղուկ . իբ . 7 :

Digitized by Google

մի մեծ զարդարեալ . անդ պատրաստեցէք մեզ :

16 Եւ գնացին պատրաստել աշակերտքն նորա . եկին ի քաղաքն՝ և գտին որպէս ասացն նոցա . և պատրաստեցին զզատիկն :

17 Եւ իբրև երեկոյ եղև՝ գայ եբ- կատասանիւքն հանգերձ :

18 Եւ իբրև բազմեցան՝ և գեհ ուտէին , ասէ Յիսուս . Ա՛մէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ի ձէնջ , մատնելոց է զիս , որ ուտէ ինձ ընդ իս :

19 Եւ նորա սկսան տրտմել՝ և ասել մի ըստ միոջէ . Ա՞րդեւ ես իցեմ , և միւսն՝ Ա՞րդեւ ես իցեմ :

20 Եւ նա պատասխանի եւս և ասէ ցնոսա . Ա՞ի յերկուասանից այսր , որ միսեաց ընդ իս ի սկաւառակդ :

21 Աւրէ Որդի մարդոյ երթայ՝ որպէս և գրեալ է վասն նորա . բայց վայ իցէ մարգոյն այնմիկ՝ յորմէ Որդի մարդոյ մատնեսցի . լաւ էր նմա՝ թէ չէր իսկ ծնեալ մարդն այն :

22 Եւ մինչդեռ ուտէին , առեալ Յիսուս հաց՝ օրհնեաց և երբեկ՝ եւ նոցա , և ասէ . Ա՛ռէք՝ այդ է մարմին իմ :

23 Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ և եւս նոցա , և արբին ի նմանէ ամենեքեան :

24 Եւ ասէ ցնոսա . Ա՛յս է արիւն իմ նորոյ ուխտի , որ վոխանակ բազմաց հեղանի :

25 Ա՛մէն ասեմ ձեզ , թէ ոչ ևս յաւելից ըմպել ի բերոյ որթոյ մինչև ցօրն ցայն՝ յորժամ արբից զնա նոր յարքայութեան Աստուծոյ :

26 Եւ գոհացեալ՝ ելին ի լեառն Ձիթենեաց :

27 Եւ ասէ ցնոսա Յիսուս . Ընկերանաւն ըղձի կրասցէ ձեզ . էն անդ պատրաստեցէք մեզ համար :

16 Եւ նորա աշակերտանքն գնացին որ պատրաստանն . քաղաքն եկին՝ և հնդէս գտին ինչպէս որ նա բանց ասաց . և զատիկն պատրաստեցին :

17 Եւ երբոր իրիկուն եղաւ՝ տասն երկուսին հետ եկաւ :

18 Եւ երբոր սեղան նստեցին՝ և գեհ ուտէին , Յիսուս ասաց . Ա՛մէն ասեմ ձեզ՝ որ ձեզանից միսն կըմատնէ ինձ . նա որ հետս ինձ հետ ուտէ :

19 Եւ նորանք սկսեցին տրտմել՝ և միսն մըմեկ եաւս ասել՝ Ա՞րդեւ ես եմ . և մեկէլն՝ Ա՞րդեւ ես եմ :

20 Եւ պատասխան ուտէ և նորանց ասաց . Ի տասներկուսէդ միսն՝ որ ինձ հետ ձեռքն էդ սկաւառակիզ (տախտակ) մէջն մտցուց :

21 Ասց Որդին մարդոյ կըգնայ՝ ինչպես որ նորա համար գրված է . բայց վայ է էն մարգոյն՝ որ նորա ձեռնէն Որդին մարդոյ կըմատնվի . լաւ էր նորան՝ թէ էն մարգն իսկի ծնված չըլինէր՝ :

22 Եւ գեռքերնի որ ուտուտէին ; Յիսուս հաց առաւ՝ օրհնեց և կըտրեց՝ տուաւ նորանց և ասաց . Ա՛ռէք՝ էդ է իմ մարմինս :

23 Եւ բաժակըն (ըսասկն) տուաւ՝ գոհացաւ , նորանց տուաւ , և ամենքն խմեցին նորանից :

24 Եւ նորանց ասաց . Ա՛յս է իմ արիւնս նոր ուխտի և պայմանի , որ շատերի համար կըթափվուի :

25 Ա՛մէն ասեմ ձեզ . թէ մինէլ որթի (վազի) բերքից չեմ խմի մինչև էն օրն , երբոր նորան նոր կըխմեմ Աստուծոյ արքայութեան մէջն :

26 Եւ գոհացան՝ և գնացին ելան Ձիթենեաց սարն՝ :

27 Եւ Յիսուս նորանց ասաց .

(6) Մատ . խզ . 20 , Լուկ . (7) Մատ . խզ . 24 . Ղուկ . խբ . 22 . (8) Մատ . խզ . 26 . Ղուկ . խբ . 19 . ա Ցովհ . ժա . 23 . (9) Մատ . խզ . 30 .

Digitized by Google

ձենդքին գոյքիտակերպութեց ինչ չկնէն յայսմ գիշերի. զի գրեալ է, թէ հրեշտակի չէասցին՝ եւ ոչխարքն ցրուասցին։

28 Եւ յետ յարութեան իմոյ յառաջագոյն երթայց քան զձեզ՝ ի Գալիլեա։

29 Պատասխանի ես Պետրոս եւ ասէ ցնա. Թէպէտ եւ ամենեքին գայթակղեսցին, սակայն ես ոչ։

30 Եւ ասէ ցնա Յիսուս. Ամէն ասեմ քեզ. թէ դու իսկ յայսմ գիշերի մինչեւ հաւուս (երկիցս) ուրասցես զիս։

31 Իսկ Պետրոս առաւել ևս պնդագոյն ասէր. Եթէ ինձանէդ ևս հատանիցէ քեզ քեզ, ոչ ուրասցայց։ Նոյնպէս եւ ամենեքեան ասէին։

32 Գան՝ ի գիւղն՝ որում անուն էր Գեթսեմանի. եւ ասէ ցաշակերտսն. Նստարուք աստ՝ մինչեւ ես յաղօթս կացից։

33 Եւ առնու ընդ իւր զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ սկսաւ տրտմել եւ հոգալ։

34 Յայնժամ ասէ ցնոսա. Տրտում է անձն իմ մինչեւ ի մահ, ծացէք աստ եւ արթուն կացէք։

35 Եւ մեռուցանել սակաւիկ մի յառաջ, անկաւ՝ ի վերայ երեսաց իւրոց յերկիր. եւ կայր յաղօթս, զի եթէ ՚ի նմանէ ինչ կ՚անցցէ՝ ի նմանէ ժամն։

36 Եւ ասէ. Աբբայ Հայր՝ ամենայն ինչ քեզ հնարաւոր է, անցո՛ զբաժակս զայս յիս։ Բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ որպէս դու կամիս։

37 Եւ գայ՝ գտանէ զնոսա զի ննջեն, եւ ասէ ցՊետրոս. Սիմոն ննջե՞ս. ոչ կարացեր հսկել մի ժամ։

Աստիճան էս գիշերս կը գայթակղիք ինձանից[10]. ինչուար՝ գրված է թէ Հովիւն (Տէրանն) կը զարկեմ՝ և ոչխարները կը ցրուին[11]։

28 Այլ իմ յարութենիցն ետև ձեզանից առաջ կը գնամ Գալիլեա[12]։

29 Պետրոս պատասխան առաւ եւ նորան ասաց. Թէև ամէնքն էլ գայթակղուին, բայց ես չէ[13]։

30 Եւ Յիսուս նորան ասաց. Ճշմարիտ առաւօտ քեզ. թէ հինց դու էս գիշերս՝ դեռքանէր որ հատնի (երկու անգամ) չէի խօսացիլ երիք անգամ կուրանաս ինձ։

31 Այլ Պետրոսն էլ աւելի խօսքն հաստատուածը և ասաւ. Թէ որ քեզ հետ մեռնելու էլ լինիմ, քեզ չեմ ուրանալ. հնպէս էլ ամէնքն էին ասում։

32 Եկին են գիւղն՝ որ նորա անունն Գեթսեմանի էր. և աշակերտներին ասաց. Նստեղ նստացէք՝ մինչև որ ես աղօթք անեմ[14]։

33 Եւ Պետրոսին և Յակոբին և Յովհաննէսին իրան հետ առաւ, և սկսաց տրտմիլ և հոգս քաշել։

34 Նոյն ժամանակն նորանց ասաց. Իմ անձս մեռնելոյ չափ տրամըված է[15]. էստեղ մնացէք և արթուն կացէք։

35 Եւ մին քիչ առաջ գնաց, իրան երեսին վերայ գետինն ընկաւ, և աղօթք էր անում՝ որ եթէ կարելի է էն ժամն (տառապն) իրանից անցկենայ։

36 Եւ ասաց. Աբբա Հայր[16]՝ ամէն բան կարելի է քեզ[17]. էս բաժակը (Խաչը) ինձանից անցկացրու՝ բայց չէթէ ինչպէս ես եմ կամենում, բայց ինչպէս որ դու ես կամենում[18]։

37 Եւ եկաւ գտաւ նորանց որ քնած էին՝ և Պետրոսին ասաց. Սի-

(10) Մատ. խզ. 31։ (11) Զաք. ժգ. 7։ (12) Մատ. ժզ. 7։ (13) Մատ. խզ. 33, 34։ Ղուկ. խբ. 33, 34։ Յովհ. ժգ. 37, 38։ (14) Մատ. խզ. 36։ Ղուկ. խբ. 39։ Յովհ. ժգ. 1։ (15) Յովհ. ժբ. 27։ (16) Հռոմ. ը. 15։ Գաղ. դ. 6։ (17) Եբր. ե. 7։ (18) Յովհ. ե. 30։ ղ. 38։

Digitized by Google

ջին • ոչ կարացեք ժամ մի արթուն կալ :

38 Արթուն կացէք և յաղօթս կացէք , զի մի՛ մտջիք ի փորձութիւն • ոգիս յօժար է՝ բայց մարմինս ակար :

39 Եւ դարձեալ չորրորդ եկաց յաղօթս , և զնոյն բանս ասաց :

40 Դարձաւ միւսանգամ անգրէն , և եգիտ զնոսա ի քուն • քանզի էին աչք նոցա ծանրացեալ , և ոչ գիտէին թէ զինչ պատասխանի տայցեն նմա :

41 Գայ երրորդ անգամ , և ասէ ցնոսա • Ննջեցէք այսուհետև և հանգերուք , զի հասեալ է վախճան եկն ժամ՝ և ահա մատնի Որդի մարդոյ ի ձեռս մեղաւորաց :

42 Ո՛ն արիք գնասցուք • զի ահաւասիկ մերձեցաւ՝ որ մատնելոցն է զիս :

43 Եւ մինչդեռ նա զայն խօսէր՝ գայ Յուդա Իսկարիովտացի՝ մի յերկոտասանից անտի , և ընդ նմա ամբոխ սուսերօք և բրօք՝ ի քահանայապետին և ի դպրաց և ի ծերոց :

44 Տուեալ էր նշան մատնչին՝ և ասէր • Որ զոր համբուրեցից՝ նա է • կալ զնիք զնա՝ և տարէք զգուշութեամբ :

45 Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ ցնա • Ռաբբի Ռաբբի • և համբուրեաց զնա :

46 Եւ նոքա արկին ի նա ձեռս՝ և կալան զնա :

47 Եւ մի ոմն յայնցանէ՝ որ կացեալ էին՝ ձգեաց սուր , և եհար զծառայ քահանայապետին , և ի բաց եհան զունկն նորա :

48 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա • Իբրև ի վերայ ահի մի՞ն քնուոմ • չէք կարացիք ինձ ժամ (սահմ.) արթուն կենալ :

38 Արթուն կացէք և աղօթք առէք , որ փորձութեան մի՛ չէ՛ մտնէք • հոգիս յօժար է , բայց մարմինս ակար[19] :

39 Եւ մինէլ գնաց աղօթք արաւ , և հնոյն էն խօսքերն ասաց :

40 Ո՛ւրեմն դարձաւ և նորանց քներ մէջ գտաւ • ինչուա՛ր՝ նորանց աչքերն ծանրացել էին , և չէին գիտուա՛ թէ ինչ պատասխան տան նորան :

41 Երրորդ անգամ եկաւ և նորանց ասաց • Արդեօք հաւ քունն էլէք և հանգիստ առէք , ինչուա՛ր՝ վերջն հասել է • ժամն (սահմն) եկաւ , և ահա Որդին մարդոյ մատնվուի մեղաւորաց ձեռքն[20] :

42 Կա՛պա վե՛ր կացէք գնանք[21] • ահա մօտեցաւ նա՝ որ պիտի ինձ մատնէ :

43 Եւ գեռքանի որ նա էն խօսումէր , Յուդա Իսկարիոտացին էն տասներկուսէն մինն եկաւ , և նորա հետ ամբոխ (խուլէ) սրերով և բհրներով՝ քահանայապետներին և կաթողիկներին և ծերերին[22] :

44 Ո՛ւ տանիչն նորանց նշան էր տուել և ասել , թէ Որին որ ես կըհամբուրեմ՝ նա է • նորան բռնեցէք և զգուշութեամբ տարէք :

45 Եւ շուտով մօտ եկաւ և նորան ասաց • Ռաբբի , Ռաբբի , և նորան համբուրեց :

46 Եւ նորանք ձեռք ձգեցին նորան՝ և նորան բռնեցին :

47 Եւ նորանցից մինն՝ որ նորա մօտ կային՝ սուրը քաշեց , և քահանայապետի ծառային զարկեց , և նորա ականջն կտրեց :

48 Յիսուս պատասխան առաւ և նորանց ասաց • Ինչպէս մին աւա-

(19) Հռոմ . է • 22 , 23 : Գաղ . է • 17 • (20) Յովհ . ժգ • 1 : (21) Մատթ . իգ • 46 : Յովհ . ժբ • 1 , 2 : (22) Մատթ . իգ • 47 : Ղուկ . իբ • 47 : Յովհ . ժբ • 3 :

Digitized by Google

ւնդակի եղեք առւսերօք և բրօք ոչ նել զնս ։

49 Հանապազ առ ձեզ էի՝ և ուսուցանէի ի տաճարին, և ոչ կալայք զիս · այլ զի լցցին գիրք մարգարէիցն ։

50 Յայնժամ թողին զնա աշակերտքն ամենքին՝ և փախեան ։

51 Եւ ոմն երիտասարդ գհետ երթայր նօրա՝ արկեալ զնւրև կտաւն ի մերկուց · ունէին զնա երիտասարդքն ։

52 Եւ նօրա թողեալ զկտաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ ։

53 Եւ տարան զՅիսուս առ քահանայապետն Կայիափա · և գրչին ընդ նմա ամենայն քահանայապետքն՝ և դպիրք և ծերք ։

54 Իսկ Պետրոս երթայր ի հետեւանէ գհետ նորա մինչև ի ներքս իակ ի գաւիթ քահանայապետին, և նստեր ընդ սպասաւորսն՝ և ջեռնոյր առ լուսոյն ։

55 Իսկ քահանայապետքն՝ և ամենայն ատեանն խնդրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպանանիցեն զնա · և ոչ գտանէին ։

56 Զի բազումք առաւ վկայութիւն վկայէին զնմանէ, և նման միմեանց ոչ էին վկայութիւնքն ։

57 Ոմանք յարուցեալ վկայէին առաւ զնմանէ, և ասէին ·

58 Թէ Մեք լուաք ի դմանէ՝ զի ասէր · Ես քակեցից զառաջարկ զայդ ձեռագործ, և զերիս աւուրս շինեցից այլ առանց ձեռագործի ։

59 Սակայն և այնպէս չէր նման վկայութիւնն նոցա ։

60 Եւ յարուցեալ քահանայապետն ի մէջ՝ հարցանէր զՅիսուս, և ասէր · Ոչինչ տաս պատասխանի վերայ որոց զայդ վկայեն զքեզ ։

49 Ի՞նչ ձեզ մօտ էի և սանձրուեմն տովօրինուածի · և ինձ չընդունեցիք · բայց ներհամար՝ որ մարգարէիցն գրքերն կատարին[24] ։

50 Այն ժամանակն ամէն աշակերտն նորան թողին՝ և փախան[25] ։

51 Եւ մին երիտասարդ նորա եւս էն գնուածէր՝ որ մերկ մարմնոյն վերայ կաւս էր առել · և երիտասարդներն բռնուածին նորան ։

52 Եւ նա կտաւըն թող թողեց՝ և մերկ փախաւ նորանցից ։

53 Եւ Յիսուսին տարան Կայիափա քահանայապետին մօտ · և ամէն քահանայապետներն և կարգաւորներն և ծերերն նորա մօտ էին գալիս[26] ։

54 Եւ Պետրոս հետուանց գնուածէր նորա եւս էն մինչև ինց քահանայապետի սրահի ներսն, և պասաւորներին հետ նստուածէր՝ և լուսոյ մօտն տաքանուածէր ։

55 Այց քահանայապետներն և ամէն տիվանն Յիսուսին հակառակ մին վկայութիւն էին ուզում՝ որ նորան սպանեն՝ և չէին գտնում[27] ։

56 Պատճառնոր՝ շատ մարդիք սուտ վկայութիւն էին վկայում նորանից · և վկայութիւններն իրար նման չէին ։

57 Ուրիշներ վերկացան և նորանից սուտ էին վկայում, և ասում ·

58 Թէ Մենք դորանից լսեցինք, որ ասուածէր՝ (Թէ) Ես էդ ձեռքով շինած տաճարդ կրքանդեմ՝ և ընք օրում ուրիշը կրշինեմ՝ որ ձեռքով չի շինած[28] ։

59 Այց էնպէս էլ նորանց վկայութիւնն իրար նման չէր ։

60 Պա քահանայապետն վերկացաւ մէջ տեղն՝ և Յիսուսին հարցնուածէր և ասում[29] · Ոսկի պատաս-

(23) Մարկ · իգ · 55 ։ Ղուկ · իբ · 52 ։ (24) Մատ · իբ · 6 ։ Նաոմ · ծգ · 7 ։ Ղուկ · իբ · 37 ։ իգ · 44 ։ (25) Մատ · ձը · 8 ։ Վեր · 27 ։ (26) Մարկ · իգ · 57 ։ Ղուկ · իբ · 54 ։ Յովհ · ժը · 13 ։ (27) Մարկ · իգ · 59 ։ (28) Մարկ · ժե · 29 ։ Յովհ · բ · 19 ։ (29) Մարկ · իգ · 63 ։

Digitized by Google

նի , զինչ գործ զքեն վկայեն ։

61 Եւ նա լուա և ելի կայր՝ և ետայր ինչ պատասխանի . գործ ձեալ քահանայապետն Հարցանէր զնա կրկին անգամ և ասէր . Դո՞ւն ես Քրիստոս՝ Որդի Աստուծոյ օրհնելոյն ։

62 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա . Ես ասացեր՝ թէ ես եմ . բայց տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ աջմէ Զօրութեանն՝ և գալ ընդ ամպս երկնից ։

63 Եւ քահանայապետն պատառեաց վերվարագին զպատմուճանս իւր՝ և ասէ . Զի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայք ։

64 Լո՛ւարդ ամենեքին զՀայհոյութիւն՝ի բերանոյ դորա . զինչ թուի ձեզ . և ամենեքեան դատապարտեցին զնա՝ թէ մահապարտ է ։

65 Եւ ոմանք սկսան թքանել ընդ երեսս նորա , ձորձ զգլխով արկանել , կռիւել և ասել . Մարգարեացիր մեզ՝ Քրիստոս՝ ո՞վ է այն որ եհարան զքեզ . և սպասաւորքն ապտակս հանէին նմա ։

66 Եւ Պետրոս մինչդեռ էր՝ի խնարհ՝ի գաւթին , գայ աղախին մի քահանայապետին ,

67 Եւ տեսանէ զնա՝ զի ջեռնոյր . հայեցեալ ընդ նա՝ և ասէ . Եւ դու ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էիր ։

68 Նա ուրացաւ և ասէ . Ոչ՛ ճանաչեմ և ոչ գիտեմ զինչ դուգասես . և ի բաց ել յարտաքին գաւիթն , և հաւ խօսեցաւ ։

69 Կարձեալ եւս զնա աղախինն , և սկսաւ ասել ցայնոսիկ՝ որ շուրջն կային , թէ Եւ սա՝ի նոցանէ է ։

խան չմի ասացեր , թէ գործոնք քո զանից վկայեն ։

61 Եւ նա լուա՝ կր կնճռեաւ՝ և ետես մին պատասխան չէր տալիս[30] . քահանայապետն միւնոյն երկրորդ անգամ նորան հարցուաքեր և ասաւ . Դո՞ւն ես Քրիստոս՝ օրհնեալ Աստուծոյ Որդին[31] ։

62 Յիսուս պատասխան առաւ և նորան ասաց . Ես ասացիր՝ որ եմ եմ . բայց կըտեսանէք Որդին մարդոյ Զօրութեան ազ կողմն նստած , և երկնքի ամպերով եկած[32] ։

63 Եւ քահանայապետն շուտով իրան շորերըն պատառեց՝ և ասաց . Ալ ի՞նչ պէտք է մեզ վկայ ։

64 Լսեմ ամէնքդ դորա բերանէդն հայհոյանքըն լսեցիք . ի՞նչպես է երևում ձեզ . և ամէնքն դատապարտեցին նորան՝ թէ մահապարտ է ։

65 Եւ մին քանիան սկսեցին նորա երեսին թքել , գլխին վերայ շոր քըշել , բռընցքով թակել և ասել . Գուշակեա՛ մեզ՝ Քրիստո՛ս՝ թէ ո՞վ է՝ որ քեզ զարկեց . և սպասաւորներն նորան ապտակ (սիլլե) էին ածում ։

66 Եւ Պետրոսն դեռ որ ներքին կողմն սրտի մէջն էր , քահանայապետի մին աղախին (պոտաշ) եկաւ[33] ,

67 Եւ նորան տեսաւ՝ որ տաքնում . մտիկ տուաւ նորան՝ և ասաց . Դու էլ Յիսուս Նազորեցոյն հետ էիր ։

68 Նա ուրացաւ և ասաց . Չգիմ ճանաչում և չեմ գիտում , թէ դու ինչ ես խօսում . և երբոր գնաց դրսի սրամն , հաւն խօսեց ։

69 Գինեղ էն աղախինն (պոտաշն) նորան տեսաւ , և սկսեց ասել նորանց՝ որ չորս կողմն էին կանգնած , թէ Սա էլ նորանցից է[34] ։

(30) Նոյ . ծգ . 7 ։ (31) Մտթ . խգ . 63 ։ (32) Մտթ . խդ . 30 ։ խգ . 64 ։ Գործ . բ . 69 ։ (33) Մտթ . խգ . 58 . 69 ։ Ղուկ . իը . 55 ։ Յովհ . ժը . 16 ։ (34) Մտթ . խգ . 71 ։ Ղուկ . իը . 58 ։ Յովհ . ժը . 25 ։

Digitized by Google

70 Եւ նա զարձեալ ուրացաւ. և մի՛ յետ ոտից մերոյ՝ զարձեալ որ շուրջն կային, ասեն ցՊետրոս. Ընդհարեւ և դու՛ ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես, և խօսքդ իսկ քո նմանն են:

71 Եւ նա սկսաւ նզովել, երդնուլ և ասել՝ Թէ Ո՛չ գիտեմ զայրն զորմէ դուքդ ասէք:

72 Եւ երկրորդում կրկին հաւ խօսեցաւ. և յիշեաց Պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս, Թէ Զհ՛ինգ հաւ երկիցս խօսեալ զիս դուն երիցս ուրացիս զիս. և սկսաւ լալ:

70 Եւ նա դիմեալ ուրացաւ. և մինչ քիչ յետոյ նորանք՝ որ էին հոլովեալք կանգնած էին, մինեանց ասացին Պետրոսի. Հ՛իսկի՝ որ դու էլ նոցանից ես[35], ինչուա՛ր՝ Գալիլեացի ես, և չինոց քո խօսքդ էլ նման կ՛[36]:

71 Եւ նա սկսաց անիծել, երդնուլ ուանել և ասել՝ Թէ Զմի՛ գիտեմ այն մարդն՝ որ դուք ասում էք:

72 Եւ շատով հաւն երկրորդ անգամ խօսեց[37]. և Պետրոս միտքն բերաւ էն բանն՝ որ Յիսուս նորան ասաց. Թէ Երան դեռ որ երկու անգամ չի՛ խօսացել՝ դու երեք անգամ ինձ կուրանաս. և սկսեց լաց լինել:

ԳԼ. ԺԵ

1 Յիսուս կապեալ Պիղատոսին կը տանին և նորա առաջի չարախօսութիւն կանեն: 11 Ըմբոխի ազաղակութիւն մոլորացան Հրեաստանի արձակվելը, և Յիսուսի նորանց ձեռնկին տալն՝ որ խաչվի: 17 Փուչերով կղզակվի, 19 Նորա երեսին կը թքթքին, և ծաղր կանեն, 21 Նորա խաչափայտը Սիմոն Կիւրենացին վերկառնէ. 27 Երկու աւազակներին հետ կը խաչվի, 29 Հերկից նախատութիւնը կը քաշէ. 39 Հարիւրապետն կը խոստովանի թէ նա Աստուծոյ Որդին է. 43 Յովսէփ պատուով կը թաղէ նորան:

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արարեալ քահանայապետքն Հանդերձ ծերովքն և դպրօքն՝ և ամենայն ատեանն, կապեցին զՅիսուս՝ և տարան մատնեցին Պիղատոսի:

2 Եհարց զնա Պիղատոս և ասէ. Դո՞ւն ես թագաւորն Հրէից. Նա պատասխանի ետ նմա և ասէ՝ Դու ասես:

3 Եւ չարաչօսէին զնմանէ յոյժ քահանայապետքն, և նա ոչինչ ետէր պատասխանի:

4 Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր զնա. Ոչի՞նչ ասես պատաս-

1 Եւ շուտով առաւօտուն՝ քահանայապետներն ծերերին և կարգաւորներին հետ՝ և բոլոր ախմանն էլ խորհուրդ արին, և Յիսուսին կապեցին՝ և տարան մատնեցին Պիղատոսին[1]:

2 Եւ Պիղատոս նորան հարցրուց և ասաց. Դո՞ւն ես Հրեից թագաւորն[2]. նա պատասխան առաւ նորան և ասաց. Դու ես ասում:

3 Եւ քահանայապետներն շատ չարախօսութիւն էին անում նորանից. և նա իսկի պատասխան չէր տալիս:

4 Իսկ Պիղատոս մինէլ հարցնում էր նորան. Իսկի պատասխան

(35) Մատթ. ԻԶ. 73: Ղուկ. ԻԲ. 59: Յովհ. ԺԸ. 26: (36) Գործ. Բ. 7: (37) Մատթ. ԻԶ. 75: (1) Մատթ. Բ. 2: Մատթ. ԻԷ. 1: Ղուկ. ԻԳ. 66: ԻԴ. 1: Յովհ. ԺԸ. 28: Գործ. Գ. 13: Գ. 23: (2) Մատթ. ԻԷ. 11:

Digitized by Google

խանի , ասա՝ քանի՞ ամպատառանն ըղ-
քէն :

5 Եւ Յիսուս այնուհետեւ ձչէինչ
նա պատասխանի , մինչեւ զարմանալ
յոյժ Պիղատոսի :

6 Ի սոյց ըստ ասելի արձակէր նոցա
զմի ոք զկապեալ , զոր ինքեանք
խնդրէին :

7 Եւ էր՝ որում անուն էր Ա-
բարբաս՝ կապեալ ընդ խռովիչսն , ո-
րոց ՚ի խռովելն՝ սպան մի սպանեալ էր :

8 ՚Ի ձայն բարձր սկսաւ աղա-
ղակել ամբոխն և խնդրել՝ որպէս
սովոր էր , զի արձակեսցէ նոցա ըզ-
Բարաբբայն :

9 Պատասխանի եւս Պիղատոս և
ասէ ցնոսա . Կամիք՝ զի արձակեցից
ձեզ զարքայն Հրէից :

10 ՚Ի գիտէր՝ թէ առ նա-
խանձու մատնեցին զնա քահանայա-
պետքն :

11 Իսկ և զամբոխն հաւանեցու-
ցին՝ զի արձակեսցէ նոցա զԲարաբ-
բայն :

12 Պատասխանի եւս Պի-
ղատոս և ասէ ցնոսա . Իսկ զի՞նչ
կամիք՝ թէ արարից՝ զարքայն Հրէ-
ից :

13 Եւ նորա դարձեալ աղաղակե-
ին՝ յուզեալք ՚ի քահանայապետից ,
՚Ի խաչէ հան զդա :

14 Ասէ ցնոսա Պիղատոս . Զի՞նչ
ինչ չար արարեալ իցէ դորա . Եւ
նորա առաւել ևս աղաղակէին և ա-
սէին . ՚Ի խաչէ հան զդա :

15 Իսկ Պիղատոս իբրև զմիտս կա-
ցեաւ հաճել զամբոխին , արձակեաց
նոցա զԲարաբբայն . Եւ զՅիսուս
գան հարեալ եւս ՚ի ձեռս , զի ՚ի
խաչ ելանիցէ :

չէի՞ սալիս , ասա՝ Հրէից չարաճո-
ւութիւն են անուամ քեզանի՞ :

5 Եւ Յիսուս նրանից եւս իսկի
մին պատասխան չը՛ առաւ , մինչեւ
որ՝ Պիղատոսն շատ զարմանուեցա՛ :

6 Ի սոյց ասնի ժամանակուանից մին
բանտարկեալ էր արձակում նորանց
համար՝ որին որ իրանք խնդրու-
էին՝ :

7 Եւ մինն կար՝ որ նորա անունն
Բարաբբա էր՝ խռովութիւն անօղ-
ներին հետ կապված , որ իրանց խռո-
վութենուանից մին մարդ էին սպանել :

8 Ամբոխն (խալխն) սկսեց բարձր
ձայնով ազաղակել , և խնդրել՝ ինչ-
պէս որ սովոր էր , որ Բարաբբա-
յին արձակէ նորանց համար :

9 Պիղատոս պատասխան առաւ
և նորանց ասաց . Կամենո՞ւք՝ որ
Հրէից թագաւորն արձակեմ ձեզ
համար :

10 Պատճառնոր՝ գիտուէր թէ
քահանայապետներն նախանձով էին
մատնել նորան :

11 Իր ամբոխին (խալխին) էլ հա-
ւանացրին՝ որ Բարաբբային արձա-
կէ նորանց համար՝ :

12 Պիղատոս մինէլ պատասխան
առաւ և նորանց ասաց . Ի՞նչ
Հրէից թագաւորին ի՞նչ էք ու-
զում՝ որ անեմ :

13 Եւ նորանք քահանայապետնե-
րին դրդուած մինէլ աղաղակեցին՝
խաչ հանիր դորան :

14 Պիղատոս նորանց ասաց . Ա-
ի՞նչ չար բան է արել . և նորանք
էլ աւելի աղաղակուէին և ա-
սում . Խաչ հանիր դորան :

15 Ինչ Պիղատոս՝ որովհետև կա-
մեցաւ ամբոխի (խալխի) կամքըն կա-
տարել , Բարաբբային արձակեց նո-
րանց համար՝ . և Յիսուսին ծեծեց ,
և ձեռներն առաւ , որ խաչվի :

(3) Մարկ . խե . 13 : (4) Նոյն . նգ . 7 : Յովհ . ժբ . 9 : (5) Մարկ . խե . 15 :
Ղուկ . խդ . 17 : Յովհ . ժբ . 39 : (6) Մարկ . խե . 20 : Գործ . գ . 14 : (7)
Մարկ . խե . 28 : Յովհ . ժբ . 1 . 19 :

Digitized by Google

16 Եւ զինուորքն տարան զնա ՚ի ներքս ՚ի գաւիթն՝ ուր հրապարակն է՛ր · և կոչեն միանգամայն զամենայն զգաւնդն ։

17 Եւ զգեցուցանեն նմա քղամիդ կարմիր և ծիրանիս , և եդին ՚ի գլուխ նորա պսակ արարեալ ՚ի փշոց ։

18 Եւ սկսան ողջոյն տալ նմա՝ և ասել · Ո՛ղջ եր արքայդ Հրէից ։

19 Եւ ծեծէին զգլուխն եղեգամբ , և թքանէին ընդ երեսս , և ՚ի ծունր խոնհալ երկիրպագանէին նմա ։

20 Եւ իբրև կատակեցին զնա՝ մերկացուցին զքղամիդն և զծիրանիս , և զգեցուցին նմա զնուր հանդերձն , և ածին արտաքս , զի ՚ի խաչ հանցեն զնա ։

21 Եւ ունէին պահակ զԱլիմոն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ յագարակէ , զՀայրն Ալղեքսանդրի և Ռուփայ · զի բարձցէ զխաչափայտն նորա ։

22 Եւ ածեն զնա ՚ի Golgotha՝ տեղի մի , որ թարգմանի՝ տեղի կառափնոյ ։

23 Եւ տային նմա գինի զմռսեալ , և նա ոչ առ · և հանին զնա ՚ի խաչ ։

24 Եւ բաժանեցին զհանդերձս նորա , արկեալ վիճակս ՚ի վերայ՝ թէ ո՞ զինչ առնուցու ։

25 Այր ժամ երրորդ՝ և հանին զնա ՚ի խաչ ։

26 Եւ էր գիր վերնատու նորա գրեալ՝ թէ Թագաւոր Հրէից ։

27 Եւ ընդ նմա հանին ՚ի խաչ երկուս աւազակս · մի ընդ աջմէ՝ և մի ընդ ահեկէ նորա ։

28 Եւ լցաւ գիրն , որ ասէ՝ թէ

16 Եւ զինուորքն տարան նորան ներսի սրահն՝ որ է հրապարակն (Դէյոնան) էր[8] · և բոլոր գունդն (պէօլուքն) միւն տեղ կանչեցին ։

17 Եւ նորան կարմիր քղամիդ (ֆէրճէ) և ծիրանի շորեր հագցրին , և փշերից շինած պսակ նորա գլուխն դրին ։

18 Եւ սկսեցին նորան ողջոյն տալ՝ և ասել · Ո՛ղջ կաց Հրէից (ջահոնէրէ) թագաւոր ։

19 Եւ նորա գլուխն եղէգով (պաղչով) թակում էին , և նորա երեսին թքում էին՝ և ծունր դնելով երկրպագութիւն էին տալիս նորան ։

20 Եւ երբոր ծաղր արին նորան՝ էն քղամիդն (ֆէրճէն) և ծիրանի շորերն նորանից հանեցին , և իրան շորերն հագցրին իրան , և դուրս տարան , որ խաչ հանեն նորան ։

21 Եւ ուժով բռնեցին Սիմոն Կիւրենացոյն , Ալղեքսանդրի և Ռուփի հօրն՝ որ յանդիցն եկած էն տեղից անց էր կենում · որ նորա խաչափայտն վերառնէ[9] ։

22 Եւ տարան նորան մին Golgotha (ասված) տեղ , որ կը թարգմանվի՝ գլխատեղ տեղ[10] ։

23 Եւ նորան զմռսած գինի էին տալիս , և նա չառաւ[11] · և նորան խաչ հանեցին ։

24 Եւ նորա շորերն բաժանեցին , վիճակ քցելով նորանց վերայ՝ թէ ո՛վ ինչ պիտի առնէ[12] ։

25 Երեք ժամն (սահլին) էր՝ և նորան խաչ հանեցին[13] ։

26 Եւ նորա վերսի (սուլէ) գիրն գրված էր՝ թէ Հրէից թագաւորն է[14] ։

27 Եւ նորա հետ երկու աւազակ խաչ հանեցին · մինը նորա աջ կողմն՝ և մինը ձախ կողմն[15] ։

28 Եւ կատարվեցաւ էն գիրն ,

(8) Մարկ · ի՛ե · 27 ։ (9) Մարկ · ի՛ե · 32 ։ Ղուկ · իգ · 26 ։ (10) Մարկ · ի՛ե · 33 ։ Ղուկ · իգ · 33 ։ Յովհ · ժթ · 17 ։ (11) Մարկ · ի՛ե · 34 ։ (12) Սաղ · իբ · 18 ։ Ղուկ · իգ · 34 ։ Յովհ · ժթ · 23 ։ (13) Մարկ · ի՛ե · 45 ։ Ղուկ · իգ · 44 ։ Յովհ · ժթ · 14 ։ (14) Մարկ · ի՛ե · 37 ։ Յովհ · ժթ · 19 ։ (15) Մարկ · ի՛ե · 38 ։

Digitized by Google

Ընդ անօրէնս համարեցաւ ։

29 Եւ որք անցանէին՝ հայհոյէին զնա շարժեալ զգլուխս իւրեանց և ասէին • Վա՛հ, որ քակէիր զաւճաքն՝ և զերիս աւուրս շինէիր ,

30 Սպրեցո՛ զանձն քո և էջ՛ ի խաչէդ ։

31 Նոյնպէս և քահանայապետից սկսան սրտրեալ ընդ միմեանս հանդերձ դպրօքն՝ ասէին • Զայլս ապրեցոյց՝ զանձն ոչ կարէ ապրեցուցանել ։

32 Քրիստոսդ արքայդ Իսրայէլի , իջցէ այժմ՛ ի խաչէ սյսի , զի տեսցուք և հաւատասցուք դմա • և որ ընդ նմա՛ ի խաչն եւեալ էին՝ նախատէին զնա ։

33 Եւ իբրև վեց ժամ եղև՝ խաւար կալաւ զամենայն երկիր մինչև ցինն ժամ ։

34 Եւ յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ , և ասէ • Ելի՛ Ելի՛ լսմա սաբաքթանի • որ թարգմանի՝ Աստուածդ իմ , Աստուածդ իմ, ընդէր թողեր զիս ։

35 Եւ ոմանք՝ ի նոցանէ՝ որ շուրջն կային զնովաւ , իբրև լուան , ասէին՝ թէ Ողիա կարդայ ։

36 Եւ ընթացեալ մի ոմն՝ եւից սպունգ մի քացախով , և հարեալ յեղեգան՝ տայր ըմպել նմա , և ասէ • Թո՛յլ տուր տեսցուք՝ գո՞յ եղիա իջուցանել զդա ։

37 Եւ Յիսուս արձակեաց ձայն մեծ՝ և եհան զոգի ։

որ ասուածդ՝ թէ Անօրէնները՛ն հետ համարվեցաւ[16] ։

29 Եւ նորանք՝ որ էնաեղով անց էին կենում , նորան հայհոյում էին , իրանց գլուխները շարժում էին և ասում[17] • Վա՛հ որ տաճարը քանդում էիր՝ և երեք օրում շինում էիր[18] ,

30 Սպրեցրո՛ քո անձդ և վեր եկ խաչից ։

31 Նոյնպէս էլ քահանայապետները կարդացօղներին հետ իրար մէջ ծաղր էին անում՝ և ասում • Ուրիշներին ապրեցրուց՝ իրան անձը չի կարում ապրեցնել ։

32 Նդ Քրիստոս Իսրայէլի թագաւորդ հիմիկ թող էդ խաչից վեր գայ , որ տեսնենք և դրան հաւատանք • և նորանք էլ որ նորա հետ խաչված էին , նորան նախատինք էին տալիս[19] ։

33 Եւ երբոր վեց ժամ (տհուն) էլաւ՝ խաւար ամէն երկրին բռնեց մինչև ինն ժամն[20] ։

34 Եւ ինն ժամի ժամանակումն Յիսուս մեծ ձայնով աղաղակեց և ասաց • Ելի՛ Ելի՛ լսմա սաբաքթանի[21] • որ կրմեարգմանվի՝ Իմ՛ Աստուած , իմ Աստուած , ինչո՞ւ թողդիր ինձ ։

35 Եւ մինքանիսն նորանցից՝ որ նորա մօտ կանգնած էին , երբոր լսեցին , ասումէին՝ թէ Եղիային է կանչում ։

36 Եւ մինն վազեց մին սպունգ (սխունկը) քացախով լցրուց , և ե՛ղէգի (ջմիղի) վերայ անցրուց[22] , և առաւ նորան՝ որ խմէ , և ասաց[23] • Թո՛ղ տեսնենք՝ թէ Եղիան կըգա՞յ որ նորան վեր բերէ ։

37 Եւ Յիսուս մեծ ձայն արձակեց՝ և հոգին տանեց[24] ։

(16) Նաա • ծգ • 12 ։ Ղ—ե ։ խբ ։ 37 ։ (17) Մաթ • խբ • 7 ։ (18) Մաթ • ժգ • 58 ։ Յովհ • բ • 19 ։ (19) Մաթ • խե • 41 ։ Ղ—ե • խդ • 39 ։ (20) Մաթ • խե • 45 ։ Ղ—ե • խդ • 44 ։ (21) Սաղ • խբ • 1 ։ Մաթ • խե • 46 ։ (22) Մաթ • խե • 48 ։ Յովհ • ժբ • 29 ։ (23) Սաղ • կբ • 21 ։ (24) Մաթ • խե • 50 ։ Ղ—ե • խդ • 46 ։ Յովհ • ժբ • 30 ։

Digitized by Google

38 Եւ վարագոյրը տաճարին պատառեցաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի խոնարհ։

39 Եւ տեսեալ հարիւրապետին՝ որ կայր անդ, եթէ զայդպէսեակաց և ետ հան զոգի, ասէ. Արդարև այրս այս Որդի Աստուծոյ էր։

40 Էին և կանայք՝ որ յայնկոյս ի հեռաստանէ. յորս էր Մարիամ Magdաղենացի, և Մարիամ Յակոբոսի փոքրկան, և Յովսեայ մայրն, և Սողոմէ։

41 Որք յորժամ էր ի Գալիլեա՝ զհետ երթային նորա և պաշտէին զնա, և այլ բազում կանայք՝ որ ընդ նմա էկեալ էին Երուսաղէմ։

42 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ էր՝ որ ի շաբաթն մտանէր,

43 Եկեալ Յովսէփ, որ յԱրիմաթիայ էր, այր պարկեշտ նախարար, որ և ինքն իսկ ակնուներ զարքայութեանն Աստուծոյ. համարձակեցաւ՝ եմուտ առ Պիղատոս, և խնդրեաց զմարմինն Յիսուսի։

44 Եւ Պիղատոս զարմացաւ՝ թէ այնչափ վաղ մեռաւ. և կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, հարց զնա և ասէ՝ թէ Արդարև այնչափ վաղ մեռաւ։

45 Եւ իբրեւ առաքեաց ի հարիւրապետէն անտի, շնորհեաց զմարմինն Յովսեփայ։

46 Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ և իջուցեալ զնա պատեաց կտաւովն, և եդ ի գերեզմանի, զոր էր փորեալ ի վիմի. և թաւալեցոյց վէմ մի ի դուռն գերեզմանին։

38 Եւ տաճարի վարագուրն երկու կտոր պատառվեցաւ՝ վերևիցն մինչև ցածն[25]։

39 Եւ հարիւրապետն՝ որ էնտեղ կանգնած էր[26], երբոր տեսաւ՝ թէ (Յիսուս) աղաղակեց և հոգին հանեց, ասաց. Ա՛շմարիտ որ՝ էս մարդս Աստուծոյ Որդի էր։

40 Կանայք[27] էլ կային՝ որ հեռուանց մեկ էին տեսնում[28]. որ նոցանց միջումն էր Մարիամ Magդաղենացին, և Մարիամ փոքր Յակոբի և Յոսէի մայրն, և Սաղոմէն։

41 Որ նորանք՝ երբոր նա Գալիլեա էր՝ նորա ետևէն մտեն էին գալիս և նորան ծառայում էին[29]. և էլ ուրիշ շատ կանայք՝ որ հետ Երուսաղէմ էին եկել։

42 Եւ երբոր իրիկուն էլաւ[30], քանզի ուրբաթ օր էր՝ որ շաբաթն էր մտնում,

43 Յոսէփն եկաւ՝ որ Արիմաթիայից էր՝ պարկեշտ իշխանաւոր մարդ՝ որ ինքն էլ Աստուծոյ արքայութեանն սպասում էր[31]. սա համարձակվեցաւ՝ Պիղատոսի մոտ մտաւ, և Յիսուսին մարմինն խնդրեց։

44 Եւ Պիղատոս զարմացաւ՝ որ էնքան շուտով մեռաւ. և հարիւրապետին իրան մոտ կանչեց, նորան հարցրուց և ասաց՝ թէ Երբ էի որ էնքան շուտով մեռաւ։

45 Եւ երբոր էն հարիւրապետից տեղեկացաւ (դանին)՝ մարմինը Յոսէփին շնորհեց։

46 Եւ Յոսէփ կտաւ գնեց՝ և նորան վեր բերաւ և կտաւով պատեց, և գերեզմանի մէջ դրաւ՝ որ նորան քարից էր փորել[32]. և մին մեծ քար քցեց գերեզմանի դռան առաջին։

(25) Մատթ. խէ. 51. Ղուկ. իգ. 45։ (26) Մատթ. խէ. 54. Ղուկ. իգ. 47։ (27) Մատթ. խէ. 55. Ղուկ. իգ. 49։ (28) Սաղ. լը. 11։ (29) Ղուկ. ը. 2, 3։ (30) Մատթ. խզ. 57. Ղուկ. իգ. 50. Յովհ. ժթ. 38։ (31) Ղուկ. ը. 25. 38։ (32) Մատթ. խզ. 59, 60. Ղուկ. իգ. 53. Յովհ. ժթ. 40։

Digitized by Google

47 Իսկ Ա՛արիամ Ա՛ագդաղենացի և Ա՛արիամ Յակովբայ և Յովհաէլ, սեսին զսեղին՝ ուր եղեալ։

47 Իսկ Ա՛արիամ Ա՛ագդաղենացին և Յակոբի և Յօսէի Ա՛արիամն սեսին էն սեղն՝ որ դրվեալ։

ԿԻ • ԺՕ

1 Հրեշտակն երեք կնիկներին կասէ որ Ղրիստոս յարութիւն առաւ։ 9 Ղրիստոս Մագդաղենացոյ Մարիամին, 12 Յանդն գնացող երկու մարդկանց երեւումն. 14 Նաեւ Ը-ռաքելոց եւ, 15 Որ նորանք աւետարանն քարոզելոյ կուղարկէ. 19 Նւ երկինքն համ-բարձումն։

1 Ն՛ իբրեւ անց շաբաթն, Ա՛արիամ Ա՛ագդաղենացի և Ա՛արիամ Յակովբայ և Սողովմէ՝ հոգան պատրաստեցին խունկս, զի եկեսցեն օծ-ցեն զնա։

2 Եւ ընդ առաւօտս միաշաբա-թուն գան ՚ի գերեզմանն ընդ ա-րեւագալն։

3 Եւ ասէին ցմիմեանս՝ Ո՛վ թա-ւալեցուսէ մեզ զվէմն ՚ի դրաց գե-րեզմանին։

4 Եւ հայեցեալ սեսին՝ զի թա-ւալեցուցեալ էր վէմն ՚ի գերեզմա-նէն. քանզի էր մեծ յոյժ։

5 Եւ մտեալ ՚ի ներքս ՚ի գերեզ-մանն՝ սեսին երիսասարդ մի, զի նստէր ընդ աջմէ կողմանէ՝ զգես-եալ պատմուճան սպիտակ, և զար-հուրեցան։

6 Եւ նա ասէ ցնոսա. Ա՛՚ի եր-կնչիք, զՅիսուս խնդրէք զՆազով-րեցի զխաչեալեալն, յարեաւ՝ չէ աստ. ահաւադիկ սեղինն՝ ուր եդին զնա։

7 Այլ երթայք ասացէք ցաշա-կերտս նորա և ց՚Պետրոս՝ եթէ ա-ռաջագոյն երթայ քան զձեզ ՚ի Գալիլեա, անդ սեսանիցէք զնա՝ որ-պէս ասացն ձեզ։

8 Եւ իբրեւ լուան՝ ելին և փախ-ան ՚ի գերեզմանէն, քանզի զահի հարեալ էին. և ոչ ումեք ինչ ա-

1 Ն՛ երբոր շաբաթն անցեալ ցաւ, Ա՛արիամ Ա՛ագդաղենացին և Յակոբի Ա՛արիամն և Սաղոմէն՝ գնացին խունկ պատրաստեցին, որ գան նորան օծեն[2]։

2 Եւ մէկշաբթի օրուան առաւօ-տանց արեգական ծագելոյ ժամա-նակն՝ եկին գերեզմանն[3]։

3 Եւ իրար ասում էին՝ Ո՞վ պիտի էն քարը մեզ համար գերեզմանի դրանիցն դէն թօլանէ։

4 Եւ նայեցին սեսին՝ որ քարն գերեզմանէն հեռու էր թօլաւած. ինչուոր շատ մեծ էր։

5 Եւ գերեզմանի մէջն որ մտին, մին երիսասարդ սեսին՝ որ աջ կողմն նստած էր՝ սպիտակ կապայ հագած, և շատ վախցան[4]։

6 Եւ նա ասաց նորանց. Ա՛՚ի վա-խենաք, դուք Յիսուս Նազովրեցի խաչվածն էք ուզում. նա յարու-թիւն առաւ. էստեղ չէ. սէ՛ն էն սեղնն՝ ուր որ նորան դրին։

7 Այլ գնացէք նորա աշակերտ-ներին և Պետրոսին ասացէք՝ Թէ ա-հա նա ձեզանից առաջ կը գնայ Գա-լիլեա. էնտեղ կը սեսնէք նորան ինչպէս որ նա ասաց ձեզ[5]։

8 Եւ երբոր լսեցին՝ դուրս եկին և փախան գերեզմանից, պատճառ-նոր՝ սոսկ բռնըված էին, և իսկի

(1) Ա՛ասլ. • խը • 1։ Գ՛ուխ • խդ • 1։ Յովհ • բ • 1։ (2) Գ՛ուխ • իդ • 56։ (3) Գ՛ուխ • խդ • 1։ Յովհ • բ • 1։ (4) Գ՛ուխ • իդ • 3։ Յովհ • բ • 11, 12։ (5) Ա՛ասլ • իը • 5, 6, 7։ (6) Ա՛ասլ • իգ • 33։ Ա՛ուխ • ժգ • 28։

Digitized by Google

ասցին , զի երկնչէին ։

9 Եւ արուցեալ Յիսուս առաւօտուն առաջինն միաշաբաթուն՝ երեւեցաւ Մարիամու Magdաղենացւոյ , յորմէ հանեալ էր զեօթն դեւս ։

10 Եւ նա երթեալ պատմեաց այնոցիկ՝ որ ընդ նմայն էին , մինչդեռ սգայինն և լային ։

11 Եւ նոքա իբրեւ լուան՝ թէ կենդանի է , և երեւեցաւ նմա , ոչ հաւատացին ։

12 Եւ յետոյ երեւեցաւ այլով կերպարանաւ՝ ոմանք երթային յանդաստան ։

13 Եւ նոքա չուքան պատմեցին այլոց , և ոչ նոցա հաւատացին ։

14 Եւ յետոյ մինչդեռ բազմեալ էին միասնաբար՝ երեւեցաւ նոցա , և թշնամանեաց զանհաւատութիւն նոցա և զկամաւորութիւն . զի որ երեւեցաւ նոցա յարուցեալ՝ ի մեռելոց՝ և նոքա ոչ հաւատացին ։

15 Եւ ասէ ցնոսա . Երթայք յաշխարհ ամենայն , և քարոզեցէք զաւետեարանն ամենայն արարածոց ։

16 Որ հաւատայ և մկրտեսցի՝ կեցցէ , և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի ։

17 Եւ նշանք այսոքիկ՝ որ հաւատասցեն , երթիցեն զՀետ այնոցիկ . յանուն իմ դեւս հանցեն , լեզուս խօսեսցին ,

18 Ի ձեռս իւրեանց օձս յարձցեն , և եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա ինչ ոչ վնասեսցէ . Ի մէնին բան չասացին . ինչուար վախենուն ։

9 Յիսուս որ յարութիւն առաւ՝ մեկշաբթի առաւօտուն առաջ երեւեցաւ Մարիամ Magdաղենացոյն[8] որ նորանից եօթը դեւ էր հանել[9] ։

10 Եւ նա գնաց պատմեց նորանց՝ որ նորա հետ էին[10] , դեռ որ սուգ և լաց էին անում ։

11 Եւ որ նորանք երբոր լսեցին՝ թէ (նա) կենդանի է , և երեւեցաւ նորան՝ չը՛հաւատացին[11] ։

12 Յետոյ ուրիշ կերպարանքով երեւեցաւ նորանց՝ որ յանդն էին գնում[12] ։

13 Եւ որանք գնացին ուրիշներին պատմեցին՝ և նորանց էլ չը՛հաւատացին ։

14 Յետոյ՝ երբոր սեղանում էին նստած՝ նորանց երեւեցաւ և նորանց անհաւատութիւնը և քարաւորութիւնը յանդիմանեց՝ որ չը՛հաւատացին նորանց , որ ինքն մեռելների միջից յարութիւն առած երեւեցաւ նորանց[13] ։

15 Եւ նորանց ասաց[14] . Գնացէք ամէն աշխարհը , և աւետարանն ամէն լսաեղծվածներին քարոզեցէք[15] ։

16 Որ հաւատայ և մկրտվի՝ կապրի[16] . և ով որ չը՛հաւատայ՝ կըդատապարտվի[17] ։

17 Եւ որանց որ հաւատում են , էս նշաններս կըհետևին . իմ անունովս դևեր կըհանեն[18] , լեզուներ կըխօսին[19] ,

18 Իրանց ձեռներովն օձեր վեր կառնեն , և թէ որ մին մահաբեր խմեն՝ վնաս չի տալ նորանց[20] . Հի-

(7) Մատթ . իը . 8 ։ Գործ . իդ . 9 ։ (8) Ցովհ . ի . 14 ։ (9) Գործ . ը . 2 ։ (10) Գործ . իդ . 10 ։ Ցովհ . ի . 18 ։ (11) Գործ . իդ . 11 ։ (12) Գործ . իդ . 13 ։ (13) Գործ . իդ . 36 ։ Ցովհ . ի . 19 ։ ա Կորնթ . ժե . 5 ։ (14) Մատթ . իը . 19 ։ Ցովհ . ժե . 16 ։ (15) Կող . ա . 23 ։ (16) Ցովհ . գ . 18 . 36 ։ Գործ . բ . 38 ։ ժգ . 30 , 31 , 32 ։ Հռոմ . ժ . 9 ։ ա Պետր . գ . 21 ։ (17) Ցովհ . ժբ . 13 ։ (18) Գործ . ժ . 17 ։ Գործ . ե . 16 ։ ը . 7 ։ ժգ . 18 ։ ժբ . 13 ։ (19) Գործ . բ . 4 ։ ժ . 46 ։ ժբ . 6 ։ ա Կորնթ . ժբ . 10 , 28 ։ (20) Գործ . ժ . 19 ; Գործ . իը . 5 ։

Digitized by Google

վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝ և բժշկեսցին :

19 Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս , և նստաւ ընդ աջմէ Հօր :

20 Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն երկիր՝ Տեառն գործակցեալ թեամբ . և զբանն հաստատէին սա՛ մենայն նշանօք՝ որք երթային զհետ նոցա :

ւանդներուն վերայ ձեռք կըդնեն՝ և կըբժշկուին[21] :

19 Եւ ինքն Տէր Յիսուս նոցանից հետ խօսելուցն եաւ[22] երկինքն համբարձաւ[23] , և նստաւ ի աջ կողմն նստից[24] :

20 Եւ նորանք դուրս գնացին , քարոզեցին ամենայն տեղեաց , բոլոր աշխարհքի միջոցն քարոզուածին՝ Տէրն օգնականութիւնով , և զբանն հաստատուածին սմին նշաններով՝ որ հետևուածին նոցանից[25] :

(21) Գործ . ե . 15 , 16 : ք . 17 : իբ . 8 : Հայ . ե . 14 , 15 : (22) Գործ . ա . 3 , 8 : (23) Ղուկ . իդ . 51 : (24) Սաղմ . ճժ . 1 : Գործ . է . 55 : (25) Գործ . ե . 12 : ժդ . 3 : ա Պետ . բ . 4 , 5 : Եբր . բ . 4 :

Digitized by Google

ԵՒՏԱՐԱՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ ԸՈՒԺԲ՚Ն

1 Ներածութիւն աւետարանչին առաջաբանութիւնն իւրան գրած աւետարանի համար : 5 Յօհաննէս մկրտիչի պատմութիւնն , 26 նաև Քրիստոսի յղութիւնն : 39 Քրիստոսի համար Նզիաբեթի և Մարիամի արած մարգարէութիւնն : 57 Յօհաննէսի ծնանիլն և թլփատուիլն : 67 Զաքարիայի Քրիստոսի համար , 76 նաև Յօհաննէսի համար արած մարգարէութիւնն :

1 ՊԱՏՒԱՕՅ բազումք յօժարեցին վերստին կարգել զպատմութիւնն վասն իրացն հաստատելոց ՚ի մեզ ,

2 Որպէս աւանդեցին մեզ՝ որ ՚ի սկզբանէ ականատեսք և սպասաւորք եղեն բանին ,

3 հաճ եղև և ինձ , որ ՚ի սկզբանէ ճշդութեամբ հետևել երթալ էի ամենայնի՝ ճշմարտութեամբ կարգաւ գրել քեզ՝ քաջդ Թէոփիլէ ,

4 զի ծանիցես զբանիցն՝ որոց ասացեալ ես ուսմունս :

5 Եւ եղև յաւուրս Հերովդի արքայի Հրէաստանի , քահանայ ոմն անուն Զաքարիա ՚ի դասակարգէ

1 ՈՐՈՎՀԱՏԵՒ շատ մարդիք յօժարեցին՝ որ նոր կարգեն էն բաներուն պատմութիւնը՝ որ մեր մէջն հաստատուեցան ,

2 ինչպէս որ մեզ աւանդեցին նորանք՝ որ սկզբէն իրանց աչքովն տեսին և սպասաւոր էլան բանին ,

3 Ես էլ , որ սկզբէն ամէն բաներուն ճշմարտութենով հետևեցի՝ կամեցայ , որ կարգով գրեմ քեզ՝ ով պատուականդ Թէոփիլէ ,

4 Որ իմանաս էն բաներուն ճշմարտութիւնը , որ սովորեցիր :

5 Եւ Հերովդէս Հրէաստանի (Ջհուդոսդանի) թագաւորի օրերումն , մին քահանայ էլաւ Զաքարիա ա-

(1) Նէե . բ . 3 : ա Պետ . ե . 1 : բ Պետ . ա . 16 : ա Յովհ . ա . 1 : (2) Մարկ . ա . 1 : Յովհ . ժե . 27 : (3) Գործ . ժե . 19 . 25 . 28 : ա Ելուն . է . 40 : (5) Գործ . ժա . 1 : (5) Գործ . ա . 1 : (6) Յովհ . է . 31 : Ալեքսոդր. ամ՝ նախ քան Քրիստոս :

Digitized by Google

Ա֊բիայ . և կին նորա ՚ի դասերաց Ա֊հարոնի , և անուն նորա Եղիսաբեթ ։

6 Եւ էին արդարք երկոքին առաջի Աստուծոյ , գնային յամենայն պատուիրանս և յիրաւունս Տեառն անարատաք ։

7 Եւ ոչ գոյր նոցա որդեակ , քանզի Եղիսաբեթ ամուլ էր . և երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց ։

8 Եւ եղեւ ՚ի քահանայանալն նորա ըստ կարգի աւուրցն հասանել առաջի Աստուծոյ ,

9 Ըստ օրինի քահանայութեանն՝ եհաս նմա խունկ արկանել մտեալ ՚ի տաճարն Տեառն ։

10 Եւ ամենայն բազմութիւն ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ՝ ՚ի ժամ խնկոցն ։

11 Եւ երևեցաւ նմա հրեշտակ Տեառն . զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն ։

12 Եւ խռովեցաւ Զաքարիա իբրև եւես , և անկաւ ահ ՚ի վերայ նորա ։

13 Ասէ ցնա հրեշտակն Տեառն . Մի՛ երկնչիր Զաքարիա՝ զի լսելի եղեն աղօթք քո , և կին քո Եղիսաբեթ ծնցի քեզ որդի՝ և կոչեսցես զանուն նորա Յովհաննէս ։

14 Եւ եղիցի քեզ ուրախութիւն և ցնծութիւն , և բազումք ՚ի ծնընդեան նորա խնդասցեն .

15 Զի եղիցի մեծ առաջի Տեառն . և գինի և օղի մի՛ արբցէ . և Հոգ-

նեան՝ Ա֊բիայի դասակարգութեանցն . և նորա կինն Ա֊հարոնի աղջկանցն , և նորա անունն Եղիսաբեթ[8] ։

6 Եւ երկուքեան էլ Աստուծոյ առաջին արդար էին՝ և Տէրի ամէն պատուիրանքներումն և իրաւունքներումն անմեղ էին գնում[9] ։

7 Եւ նորանք որդի չունէին , պատճառնոր՝ Եղիսաբեթն ամուլ (ընդէր) էր . և երկուսեան էլ իրանց օրերըն անց էին կացրել ։

8 Եւ ելաւ որ՝ երբոր նա Աստուծոյ առաջին քահանայութիւն էր անում՝ իրան հասած կարգի օրերումն[10] ,

9 Ի֊սահանայութեան սովորութեան պէս (վիճակ) ընկաւ նորան՝ որ Աստուծոյ տաճարն մտնէ , և խնկարկութիւն անէ[11] ։

10 Եւ ժողովրդի ամէն բազմութիւնն դուրսն աղօթք էին անում՝ խնկարկութեան ժամանակումն[12] ։

11 Եւ Տէրի հրեշտակն երևեցաւ նորան . որ կանգնած էր խնկի սեղանի աջ կողմն[13] ։

12 Եւ Զաքարիան երբոր տեսաւ՝ շփոթվեցաւ , և վախ ընկաւ նորա վերայ[14] ։

13 Տէրի հրեշտակն նորան ասաց . Մի՛ վախենար Զաքարիա . ինչուն որ՝ քո աղօթքդ լսվեցաւ , և քո Եղիսաբեթ կինդ մին որդի կը ծնի քեզ՝ և նորա անունը Յոհաննէս կը կանչես[15] ։

14 Եւ քեզ ուրախութիւն և ցնծութիւն կը լինի , և շատ մարդիք նորա ծնվելովն կուրախանան[16] .

15 Ինչուորՙ (նա) մեծ կը լինի Տէրի առաջին՝ և գինի և օղի (հաբէն-

(7) Ա֊ռաք . բ . 1 : (8) ա Ա֊նաց . իդ . 10 . 19 : Ղևիտ . ժբ . 4 . 17 : (9) Ղուկ . է . 1 : ժե . 1 : գ Գնաք . ք . 4 : դ Գնաք . ք . 3 : Յովբ . ա . 1 : Գործ . իբ . 1 : իդ . 16 : փիլիպ . գ . 6 : (10) ա Ա֊նաց . իդ . 19 : բ Ա֊նաց . ը . 14 : ղ . 2 : (11) Ելք . լ . 7 , 8 : ա Գնաք . բ . 28 : ա Ա֊նաց . իդ . 13 : բ Ա֊նաց . իթ . 11 : (13) Ի֊նչ . ժգ . 17 : Յայտ . ը . 3 , 4 : (13) Ելք . լ . 1 : (14) Դատ . զ . 22 : ժգ . 22 : Դան . ժ . 8 : վայր . 29 : Ի֊սաի . բ . 9 : Գործ . ժ . 4 : Յայտ . ա . 17 : (15) վայր . 60 . 63 : (16) վայր . 58 :

Digitized by Google

ւով Արթով լեցի անդամին յորովայնէ մօր իւրոյ ։

16 Եւ զքաջութիւն յորդւոցն Իսրայէլի դարձուացէ ՚ի Տէր Աստուած իւրեանց ։

17 Եւ ինքն եկեսցէ առաջի նորա հոգւով զօրութեամբ Եղիայի, դարձուցանել զսիրտս հարց յորդիս, և զանհնազանս իմաստութիւն արդարոց • պատրաստել Տեառն ժողովուրդ կազմեալ ։

18 Եւ ասէ Զաքարիա ցհրեշտակն • Եւ ի՞ գիտասցից զայդ, զի ես ծեր եմ, և կին իմ անցեալ զաւուրըք իւրովք ։

19 Պատասխանի եւ հրեշտակն և ասէ ցնա • Ես եմ Գաբրիէլ՝ որ կամ առաջի Աստուծոյ, և առաքեցայ խօսել ընդ քեզ՝ և աւետարանել քեզ զայդ ։

20 Եւ ահա եղիցիս համր, և մի՛ կարասցես խօսել մինչև ցօրն՝ յորում այդ լինիցի • փոխանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց՝ որք լցցին ՚ի ժամանակի իւրեանց ։

21 Եւ ժողովուրդն ակնունէր Զաքարիայ, և զարմանային ընդ յապրիլն նորա ՚ի տաճարին ։

22 Եւ իբրև ել՝ ոչ կարէր խօսել ընդ նոսա • և իմացան՝ թէ տեսիլ եառնու ՚ի տաճարի • և նա նշանացեալ խօսէր ընդ նոսա, և կայր պապանձեալ ։

23 Եւ եղև իբրև լցան աւուրք պաշտաման նորա, գնաց ՚ի տուն իւր ։

ցպնօղ խնէնէ) թիղ չբ'խմէ[17], և դեռ իրան մօր փորումն՝ Աուրբ Հոգովն կըլցվի[18] ։

16 Եւ Իսրայէլի որդիքներից շատ հոգի կըդարձնէ դէպի իրանց Տէր Աստուածըն[19] ։

17 Եւ ինքն կըգայ նորա առաջին Եղիայի հոգովն և զօրութեանն[20], որ հարանց սրտերն դէպի որդիքն դարձնէ • և անհնազանդներըն դէպի արդարների իմաստութիւնըն՝ որ Տիրին համար բարեկարգ ժողովուրդ պատրաստէ ։

18 Եւ Զաքարիան հրեշտակին ասաց • Ա՞պա ինչպիվ ճանաչեմ էդ բանըդ[21] • պատճառնոր՝ ես ծեր եմ, և իմ կինս իրան օրերըն անց է կացրել ։

19 Հրեշտակն պատասխան առաւ և նորան ասաց • Ես Գաբրիէլն եմ[22] որ Աստուծոյ առաջին եմ կանգնում, և ուղարկվեցայ՝ որ քեզ հետ խօսիմ, և էդ բանըդ քեզ աւետիք տամ ։

20 Եւ ահա համր (լռէն) կըլինիս, և չես կարենալ խօսիլ, մինչև էն օրն՝ որ էդ բանդ կըլինի[23] • պատճառն որ՝ չը՛հաւատացիր իմ խօսքերիս՝ որ իրանց ժամանակումն պիտի կատարվին ։

21 Եւ ժողովուրդն սպասումէին Զաքարիային՝ և զարմանումէին նորա տաճարի միջումն ուշանալուն համար ։

22 Եւ երբոր դուրս եկաւ՝ չէր կարում խօսիլ նորանց հետ • և իմացան՝ թէ տաճարի մէջն տեսիլք տեսաւ • և նա նշաններով էր խօսում նորանց հետ՝ և կար պապանձված ։

23 Եւ էլաւ՝ երբոր նորա պաշտօնի օրերն լըվան, գնաց իրան տունն[24] ։

(17) Ցնէ՛ • ը • 3 ։ Գոփ • ժդ • 4 ։ Գ՚ոսէ • է • 33 ։ (18) Նէհ • ա • 5 ։ Գող • ա • 15 ։ (19) Մաղ • դ • 5, 6 ։ (20) Մաղ • դ • 5 ։ Մոգէ • ժա • 14 ։ Մաւէ • բ • 13 ։ (21) Ծննդ • ժէ • 17 ։ (22) Գնուղ • ը • 16 ։ բ • 21, 22, 26 ։ Մոգէ • ժը • 10 ։ Նէբ • ա • 14 ։ (23) Նվէ • գ • 26 ։ խդ • 27 ։ (24) դ Գնուղ • ժա • 5 ։ ա Մնաց • բ • 25 ։

Digitized by Google

24 Եւ յետ աւուրցն այնոցիկ յղացաւ Եղիսաբեթ կինն նորա , և թաքուցանէր զանձն ամիսս հինգ , և ասէր .

25 Օ՛ինչ գործ գործեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ յիս բառնալ զնախատինս իմ ՚ի մարդկանէ :

26 Եւ յամենայն վեցերորդի ամսում առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուածոյ ՚ի քաղաք մի Գալիլեացւոց , որում անուն էր ՚Նազարեթ .

27 Առ կոյս խօսեցեալ առն , որում անուն էր Յովսէփ՝ ՚ի տանէ Դաւթի . և անուն կուսին Մարիամ :

28 Եւ եկեալ առ նա՝ ասէ . Ուրա՛խ լեր բերկրեալդ , Տէր ընդ քեզ :

29 Եւ նա ընդ բանն խռովեցաւ , և խորհէր ընդ միտս՝ թէ ո՞րպիսի ինչ իցէ ողջոյնս այս :

30 Եւ ասէ ցնա հրեշտակն . Մի՛ երկնչիր Մարիամ , զի գտեր շնորհս յԱստուծոյ :

31 Եւ ահա յղասջիր՝ և ծնցես որդի . և կոչեսցես զանուն նորա Յիսուս :

32 ՚Նա եղիցի մեծ , և Որդի Գերաձրելոյ կոչեսցի . և տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօր նորա . և թագաւորեսցէ ՚ի վերայ տանն Յակովբայ ՚ի յաւիտեանս :

33 Եւ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի :

34 Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն . Օ՛իարդ լինիցի ինձ այդ , քանզի զայր ոչ գիտեմ :

24 Եւ էն օրերեցն եաւ նորա ե- ղիսաբեթ կինն յղացաւ , և հինգ ամիս իրան անձըն ծածուկ էր պա- հում՝ և ասում էր .

25 Նա ի՞նչ բան է՝ որ Տէրն ինձ վերայ գործեց էս օրերումս՝ որ ինձ վերայ նայեց՝ որ իմ նախատինքըս մարդկանց միջեցն վեր առնէ[25] :

26 Եւ վեցերորդ ամսում Գաբ- րիէլ հրեշտակն Աստուածանից ու- ղարկվեցաւ Գալիլեացոց մին քա- ղաք՝ որ նորա անունն ՚Նազարէթ էր ,

27 Մի՛ին կուսի մօտ՝ որ նշանված էր մին մարդոյ՝ որ նորա անունն Յոսեփ էր՝ Դաւթի տանից . և էն կուսի անունն Մարիամ (էր)[26] :

28 Եւ հրեշտակն որ նորա մօտ ե- կաւ՝ ասաց . Ուրա՛խ լեր շնորհքով լցվածդ[27] . Տէրն քեզ հետ[28] :

29 Եւ նա էն խօսքերին համար շփոթվեցաւ[29] , և իրան մտքումն մտածում էր՝ թէ ինչպէսի բան ող- ջոյն լինի էս բարևս :

30 Եւ հրեշտակն նորան ասաց . Մի՛ վախենար Մարիամ . ինչու որ Աստուածանից շնորհք գտար :

31 Եւ ահա կըյղանաս և որդի կըծնի[30] . և նորա անունըն Յի- սուս կըկանչես[31] :

32 ՚Նա մեծ կըլինի , և Որդի Գարձրելըն կըկոչվի[32] . և Տէր Աս- տուած նորա Դաւթի հօր աթոռն[33] կըտայ նորան . և Յակոբայ տանն վերայ յաւիտեան կըթագաւորէ[34] :

33 Եւ նորա թագաւորութեանն վերջ չի լինիլ :

34 Եւ Մարիամն ասաց հրեշտա- կին . Ի՞նչ բանի կըլինի ինձ , որ ես մարդ չեմ գիտում :

(25) Ծննդ . Լ . 23 : Ելս . գ . 1 . ծդ . 1 . 5 : (26) Ասքն . ա . 18 : Գաղ . բ . 4 , 5 : (27) Դան . թ . 23 : ժ . 19 . (28) Դատ . զ . 12 : (29) Վէս . 12 : (30) Ելս . է . 14 : Ասքն . ա . 31 : (31) Գաղ . բ . 21 : (32) Ասքն . է . 7 : (33) Բ Թագ . է . 11 , 12 : Ելս . թ . 6 , 7 : ժզ . 5 : Երեմ . խդ . 5 : Ասաբ . ձբ . 11 : Յայտ . գ . 7 : (34) Դան . բ . 44 . է . 14 . 27 : Ընդէ . 31 : Մտթ . գ . 7 : Յովհ . ժբ . 34 : Երբ . ա . 8 :

Digitized by Google

35 Պատասխանի նա հրեշտակն և ասէ ցնա. Հոգի Սուրբ եկեսցէ ՚ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ՚ի քէն՝ սուրբ է, և Որդի Աստուծոյ կոչեսցի:

36 Եւ ահա Եղիսաբեթ ազգական քո՝ և նա յղի է ի ծերութեան իւրում. և այս վեցերորդ ամիս է նմա՝ որ ամուլն կոչեցեալ էր.

37 Զի ոչ տկարացի առ Աստուծոյ ամենայն բան:

38 Եւ ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում. և գնաց ՚ի նմանէ հրեշտակն:

39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ, գնաց ՚ի լեռնակողմն փութապէս ՚ի քաղաքն Յուդայ:

40 Եւ եմուտ ՚ի տուն Զաքարիայ, և ետ ողջոյն Եղիսաբեթի:

41 Եւ եղև իբրև լուաւ զողջոյնն Մարիամու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա. և լցաւ Եղիսաբեթ Հոգւով Սրբով:

42 Եւ ՚ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Օրհնեալ ես դու ՚ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո:

43 Եւ ուստի է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս:

44 Զի ահաւասիկ իբրև եղև ձայն ողջունի քո յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայնի իմում:

45 Եւ երանի՛ որ հաւատացեալ է, զի եկեսցէ կատարումն ասացելոցս նմա ՚ի Տեառնէ:

46 Եւ ասէ Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր.

35 Հրեշտակն պատասխան ետուաւ և նորան ասաց. Սուրբ Հոգին կը գայ քեզ վերայ, և Բարձրեղոյ զօրութիւնն քեզ վերայ շուաք կանէ[35]. ինչու որ՝ նա էլ, որ քեզնից պիտի ծնվի, սուրբ է, և Աստուծոյ Որդի կըկոչվի[36]:

36 Եւ ահա քո ազգական Եղիսաբեթին, նա էլ յղի է իրան ծերութենովն. և էս նորա վեցերորդ ամիսն է՝ նա որ ամուլ էր կոչված.

37 Ինչուոր՝ Աստուծոյ առաջին խոսք մին բան անկարելի չէ[37]:

38 Եւ Մարիամն ասաց. Ահա (ես) Տէրի աղախին (պատրաստ) եմ. թող քո խօսքիդ պէս լինի ինձ. և հրեշտակն գնաց նորանից:

39 Մարիամն էն օրերումն վերկացաւ, և վազով սարերի կողմն գընաց Յուդայի քաղաքն[38]:

40 Եւ Զաքարիայի տունն մտաւ, և Եղիսաբեթին բարև տուաւ:

41 Եւ էլաւ երբոր Եղիսաբեթն Մարիամու բարևն լսեց, երեխեան նորա փորումն խաղաց. և Եղիսաբեթ Սուրբ Հոգով լցվաւ:

42 Եւ բարձր ձայնով աղաղակեց և ասաց. Օրհնեալ ես դու կանանց միջումն, և օրհնեալ է քո փորի պտուղն[39]:

43 Եւ էս ինչ տեղից է ինձ՝ որ իմ Տէրի մայրն ինձ մնա գայ:

44 Ինչուոր՝ ահա երբոր քո բարևի ձայնն իմ ականջս հասաւ, իմ երեխաս իմ փորիս մէջն ուրախանալով խաղաց:

45 Եւ երանի է նորան՝ որ կըհաւատայ՝ թէ էն բաներն կըկատարվին, որ Տէրից իրան ասված են:

46 Եւ Մարիամն ասումէր. Փառք իմ անձս փառաւորէ Տէրին[40].

(35) Մատթ. ա. 20: (36) Մատթ. ժդ. 33: խզ. 63, 64: Մարկ. ա. 1: Յովհ. ա. 34: ե. 31: Գործ. ը. 37: Հռոմ. ա. 4: (37) Ննիաց. ժը. 14: Երեմ. լբ. 17: Օբատ. ը. 6: Մատթ. ժբ. 26: Մարկ. ժ. 27: Ղուկ. ժը. 37: Հոբ. ա. 21: (38) Հայ. ե. 9, 10, 11: (39) Գործ. ե. 34: (40) ա Թագ. բ. 1: Սամ. ը. 3, 8: լե. 9: Ելք. գ. 18:

Digitized by Google

47 Եւ ցնծացաւ հոգի իմ յԱ՛ստուածն փրկիչ իմ :
48 Զի հայեցաւ ՚ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ . զի ահա յայսմհետէ երանեացեն ինձ ամենայն ազգք :

49 Զի արար ինձ մեծամեծս Հզօրն , և սուրբ է անուն նորա :

50 Եւ ողորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւրոց :

51 Արար զօրութիւն բազկաւ իւրով . ցրուեաց զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց :

52 Վհակեաց զՀզօրս յաթոռոց , և բարձրացոյց զխոնարհս :

53 Զքաղցեալսն լցոյց բարութեամբ , և զմեծատունս արձակեաց ունայնս :
54 Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի իւրում՝ յիշել ողորմութիւնս :

55 Որպէս խօսեցաւ առ հարս մեր՝ Աբրահամու և զաւակի նորա՝ յաւիտեան :

56 Եկաց Ա՝ուրիամ առ նմա իբրև ամիսս երիս , և դարձաւ ՚ի տունն իւր :

57 Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ , և ծնաւ որդի :
58 Եւ լուան որ շուրջ զնովաւ էին՝ և ազգատոհմ նորա , զի մեծ արար Տէր զողորմութիւն իւր ընդ նմա . և խնդային ընդ նմա :

59 Եւ եղև յաւուրն ութերորդի՝

47 Եւ իմ հոգիս ուրախացաւ՝ իմ փրկիչ Աստուածովս :
48 Պատճառնոր՝ իրան աղախնոյ (ծառա-ուհի) խոնարհութեանն մարկ առաւ[41] , ինչու որ՝ ահա հիմիկուց եւս ամէն ազգերն երանի կըսան ինձ[42] :

49 Պատճառնոր՝ Հօրաւորն մեծ մեծ բաներ արաւ ինձ[43] , և սուրբ է նորա անունն[44] :

50 Եւ նորա ողորմութիւնն պարտէ պարտ նորա վախեցողներին վերայ է[45] :

51 Հօրութիւն արաւ իրան բազուկովն[46] ցրվեց ամբարտաւաններին , իրանց սրտի մտածմունքներովն[47] :

52 Հօրաւորներին իրանց աթոռներէն կործանեց , և խոնարհներն բարձրացուց[48] :

53 Սովածներին բարութենով լեցուց , և հարուստներին դատարկ թողեց[49] :

54 Իրան Իսրայէլ ծառային խընամք տարաւ՝ իրան ողորմութենն յիշելով[50] :

55 Ինչպես որ մեր հարանց խոստացաւ՝ Աբրահամին և նորա զաւակին՝ մինչև յաւիտեան[51] :

56 Ա՝արիամն մնաց նորա մօտ երեք ամսի չափ՝ և (ապա) դարձաւ իրան տունն :

57 Եւ Եղիսաբեթի ծնելոյ ժամանակն լցվաւ , և որդի ծնաւ :

58 Եւ նորանք՝ որ նորա չորս կողմն էին՝ և նորա ազգականներն լսեցին՝ թէ Տէրն իրան ողորմութիւնը մեծ արաւ նորա վերայ . և ուրախացան նորա հետ[52] :

59 Եւ էլաւ՝ ութ օրուանն եկին ,

(41) ա Յհոէ . ա . 11 : Յոզ . ձբ . 6 : (42) Յոզ . գ . 12 : Ղուկ . ժա . 27 : (43) Յոզ . հա . 19 : ձբ . 2 , 3 : (44) Յոզ . ձժա . 9 : (45) Ծննդ . ժէ . 7 : Ելէ . է . 6 : Յոզ . ձգ . 17 , 18 : (46) Յոզ . զբ . 1 : ձժբ . 15 : Նաւմ . ի . 10 : ծա . 9 : ծբ . 10 : (47) Յոզ . լբ . 10 : ա Պետր . ե . 5 : (48) ա Յհոէ . բ . 6 : Յակոբ . ե . 11 : Յոզ . ձժգ . 6 : (49) ա Յհոէ . բ . 5 : Յոզ . լբ . 10 : (50) Յոզ . զբ . 3 : Երէմ . լա . 3 . 20 : (51) Ծննդ . ժէ . 19 : Յոզ . ձգբ . 11 : Հռով . ժա . 28 : Ղուկ . գ . 16 : (52) Վէր . 14 :

Digitized by Google

եկին թլփատել զմանուկն , և կո-
չէին զնա յանուն հօր իւրոյ Զա-
քարիա ։
60 Պատասխանի եւս մայրն նորա և
ասէ . Ո՛չ այլ կոչեսցի Յովհաննէս ։

61 Եւ ասեն ցնա . Ո՛չ ոք է յազգի քումմէ , որոյ կոչի անուն
Յովհաննէս ։
62 Ընկարկէին հօրն նորա՝ թէ զի՞նչ կամիցի կոչել զնա ։

63 Եւ խնդրեաց տախտակ , գրեաց՝
և ասէ . Յովհաննէս է անուն դո-
րա . և զարմացան ամենեքին ։
64 Եւ բացաւ բերան նորա վաղ-
վաղակի՝ և լեզու նորա , և խօսէր՝
և օրհնէր զԱստուած ։
65 Եւ եղև ահ ՚ի վերայ ամենե-
ցուն՝ որ լսէին զայս , և որ շուրջ
բնակեալ էին զնոքօք . և ընդ ամե-
նայն լեռնակողմն Հրէաստանի պատ-
մէին ամենայն բանքս այսոքիկ ։

66 Եւ եդին ամենեքեան որ լսէ-
ին՝ ՚ի սիրտս իւրեանց , և ասէին .
Ո՞րինչ լինիցի մանուկս այս . և ձեռն
Տեառն էր ընդ նմա ։
67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ
Հոգւով Սրբով , մարգարէացաւ և
ասէ .
68 Օրհնեալ Տէր Աստուած Իս-
րայէլի , զի այցեալ եւ մեզ , և արար
փրկութիւն ժողովրդեան իւրում ։

69 Եւ յարոյց եղջիւր փրկու-
թեան մեզ ՚ի տանէ Դաւթի ծա-
ռայի իւրոյ ։
70 Որպէս խօսեցաւ բերանով սըր-
բոց՝ որ յաւիտենից մարգարէքն նո-
րա էին .

որ երեխային թլփատեն , և նորան
իւրան հօր անունովն Զաքարիա է-
ին կոչում[53] ։
60 Նորա մայրն պատասխան ար-
ասաւ և ասաց . Ձի՛ այլ Յօհան-
նէս պիտի կոչվի[54] ։
61 Եւ նորան ասացին՝ թէ Ո՛չ
ով չը՛կայ քո ազգումդ՝ որ նորա
անունն Յօհաննէս կոչվի ։
62 Նորա հօրն աչքով էին ա-
նում՝ թէ ի՞նչ կըկամենայ կոչել
նորան ։
63 Եւ նա տախտակ խնդրեց , գը-
րեց՝ և ասաց , դորա անունն Յօ-
հաննէս է . և ամենքն զարմացան[55] ։
64 Եւ շուտով նորա բերանն և
լեզուն բացվաւ . և խօսեալէր՝ և
Աստուծոյն օրհնումէր[56] ։
65 Եւ ահ ընկաւ ամենին վերայ ,
որ էս (բանըս) լսումէին , և որ նո-
րանց չորս կողմինն բընակված էին .
և Հրէաստանի սարերի ամեն կող-
մերումն էս ամեն բաներըս պատմը-
վումէին[57] ։
66 Եւ ամենքն՝ որ լսումէին՝ իրանց
սրտերումն դրին և ասացին[58] . Ին
երեխաս ի՞նչ պիտի լինի . և Տէրի
ձեռն նորա հետն էր[59] ։
33 Եւ եթէ բարի արարէք բարերարացն ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեզ . զի և մեղաւորքն նոյնպէս առնեն :

34 Եւ եթէ տայք փոխս յորոց յուսայք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեզ . զի և մեղաւորքն մեղաւորաց տան փոխս , զի առցեն զհատուցումն :

35 Այլ սիրեցէք զթշնամիս ձեր , և բարի արարէք , և տայք փոխս՝ ոչ յուսացեալ ինչ առնուլ . և եղիցի վարձք ձեր բազումք , և լինիջիք որդիք Բարձրելոյն . զի նա քաղցր է անշնորհաց և չարաց :

36 Եղերուք գթած որպէս և Հայր ձեր գթած է :

37 Եւ մի՛ դատիք , և մի՛ դատիցիք ձեզ . մի՛ դատիք զոք , և մի՛ դատիցիք ձեզ . թողէք , և թողցին ձեզ :

38 Տուք , և տացին ձեզ . չափ բարի , սեղմեալ , և ծանրացեալ , և լցեալ , և ՚ի ծոց ձեր տացեն . զի որով չափով չափէք՝ նովաւ

նա • և նա իւրաքանչիւր ումեք ՚ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա ։

42 Եւ նէին դէպ ՚ի քաղաքաց, ա-ղաղակէին և ասէին՝ եթէ Կու ես Որդի Ա՛ստուծոյ • և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա՝ թէ Ք՚րիստոսն է ։

43 Եւ իրրև առաւ եղև՝ ել գնաց յանապատ տեղի • և ժողովուրդքն խնդրէին զնա • եկին մինչև առ նա՝ և արգելուին զնա՝ զի մի՛ գըներայէ ՚ի նոցանէ ։

44 Եւ նա ասէ ցնոսա • Եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ աւետարանել զարքայութիւն Ա՛ստուծոյ, զի յայն իսկ առաքեցայ ։

45 Եւ քարոզէր ՚ի ժողովուրդսն Գալիլեացւոց ։

բանց բերուածին նորա մեռ • և նա ներանց ամէն մէկին վերայ ձեռք էր դնում՝ և նորանց բժշկում էր[31] ։

42 Հ՚ետո մարդկանցից էլ դուրս էին գալիս դևերը, և աղաղակում էին և ասում՝ թէ Դու ես Ա՛ստուծոյ Որդին[32] • և նա սաստում էր նորանց՝ և թոյլ չէր տալիս՝ որ խօսին • ինչուր՝ գիտում էին թէ նա Ք՚րիստոսն է[33] ։

43 Եւ երբոր ցերեկ էլաւ՝ դուրս եկաւ գնաց անապատ (չէօլ) տեղ • և ժողովուրդները մեծ էին գալիս նորան՝ և մեռ նորա մեռան • և արգելումէին նորան՝ որ չը՛գնայ իրանցից[34] ։

44 Եւ նա ասաց նորանց • Պէտք է՝ որ ես ուրիշ քաղաքներին էլ Ա՛ստուծոյ պատգամը աւետարանեմ • ինչուր՝ հէնց սրա համար ուղարկուեցայ ։

45 Եւ Գալիլեացոց ժողովարանները մէջն քարոզում[35] ։

ԿԱ • Ն

1 Ք՚րիստոս Պետրոսի նաւերի մէջից ժողովուրդն կատարելիս • և ձկաբռով ձկներ բռնել կտայ և Պետրոսին կիմացնէ թէ նա իրան ընկերներուն մարդկանց հոգորդներ պիտի անէ • 12 Կորած սրտմիը • 16 Ք՚րիստոսի անապատ տեղերանքի սրած աղօթքն • 18 Մէն անդամալոյծ կը բժշկէ • 27 Մատթէոս մաքսատուն կընկնէ • 29 Հոդոց բժիշկ լինելու համար մեղաւորներին հետ ուտելն • 34 Իրան համբառնալուցն հետև առաքելոց պատ պահելն և նորանց քաջելոյ չարչարանքներն առաջուց կըպատմէ • 36 Նոր շորից հին հագուստի վերայ չի ջգվելոյ և նոր գինին հին տոպրակի մէջ չի ածվելոյ առաջներն ասում ։

1 Եւ եղև ՚ի խնդրել զնովաւ ժողովրդեանն և լսել զբանն Ա՛ստուծոյ, և ինքն կայր առ ծովակն Գեննեսարեթայ ։

2 Եւ ետես երկուս նաւս՝ զի կային առ ծովակին, և ձկնորքն եղեալ ՚ի նոցանէ՝ լուանային զգործեան ։

1 Եւ էլաւ որ ժողովուրդն նորա վերայ կիսվումէր, և Ա՛ստուծոյ բանըն լսումէր, և ինքն Գեննեսարեթի ծովակին մեռ կանգնած էր[1] ։

2 Եւ երկու նաւ տեսաւ՝ որ ծովակին մեռ կանգնած էին, և ձուկ հոսօղներն նորանցից դուրս էին եկած՝ և գործիքներըն լուանում էին ։

(31) Մարկ • ը • 16 ։ Մարկ • ա • 32 ։ (32) Մարկ • ա • 34 ։ գ • 11 ։ (33) Մարկ • ա • 25 • 34 ։ վէր • 34, 35 ։ (34) Մարկ • ա • 35 ։ (35) Մարկ • ա • 39 ։ (1) Մարկ • գ • 18 ։ Մարկ • ա • 16 ։

Digitized by Google

3 Եվ նա ՚ի մի նաւուցն՝ որ էր Սիմոնին, և աղաչեաց զնա մակաւթիկ մի մանել ՚ի ներքս ՚ի ցամաքէն · նստաւ՝ և ուսուցանէր ՚ի նաւէ առնսի զժողովուրդսն ։

4 Եւ իբրև լռեաց ՚ի խօսիցն, ասէ ցՍիմոնէ · խաղացո ՚ի խորն, և արկէք զգործս ձեր յորս ։

5 Պատասխանի եւ Սիմոն և ասէ ցնա · Վարդապետ՝ զամենայն գիշերս աշխատեղաք և ոչինչ կալաք, բայց վասն քո բանիդ արկցուք զգործս ։

6 Այս իբրև արարին՝ փակեցին ՚ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչև պատռատէին ուռկանք նոցա ։

7 Եւ ակնարկէին որսակցացն ՚ի միւս նաւն՝ գալ օգնել նոցա · և եկին՝ և լցան երկոքին նաւքն, մինչև մերձ յընկղմել նոցա ։

8 Իրբև եաես Սիմոն Պետրոս՝ անկաւ առ ծունկն Յիսուսի և ասէ · ՚ի բաց գնա յինէն Տէր, զի այր մեղաւոր եմ ես ։

9 Զանգի ահ պատեաց զնա և զամենեսեան որ ընդ նմայն էին՝ վասն որսոյ ձկանցն զոր ըմբռնեցին ։

10 Նոյնպէս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ զորդիսն Զեբեդեայ, որ էին որսակիցք Սիմոնի · և ասէ ցՍիմոնէ Յիսուս · Ա՛ի երկնչիր՝ յայսմհետէ զմարդիկ որսայցես ՚ի կեանս ։

11 Եւ հանեալ զնաւն ՚ի ցամաք, թողին զամենայն, և գնացին զՀետ նորա ։

12 Եւ եղև ՚ի հասանելն նորա ՚ի մի քաղաքացն, ահա այր մի լի բռնաւթեամբ իբրև եաես զՅիսուս՝

3 Նա էն նաւերէն մէնէ մէջ մտաւ՝ որ Սիմոնին էր, և ուրան աղաչեց՝ որ նաւէն մին քիչ ցամաքին ներս տանի · նստաց՝ և նաւէնն սովորցնուէր ժողովուրդներին ։

4 Եւ երբոր խօսքըն վերջացուց, Սիմոնին ասաց · Նաւըն դէպի խորն տար, և ձեր գործիքները դուք ձգեցէք հարստոյ համար[2] ։

5 Սիմոն պատասխան առաւ՝ և ուրան ասաց · Վարդապետ՝ էս բոլոր գիշերս աշխատեցինք՝ և ոչի մին բան չբռնեցինք, միայն թէ քո խօսքիդ համար գործիքներս կը ձգենք ։

6 Երբոր էս արին՝ ձկներէն մեծ բազմութիւն ներս փակեցին, մինչև որ ուրանց ուռկաններն (ընտէն) պատռտուէին ։

7 Եւ ուրիշ էին անուամ մէկել նաւի մէջ ընէող հարսընկերներին՝ որ գան իրանց օգնեն · և եկին՝ և երկու նաւն էլ լցուան, մինչև որ թաղվելոյ մօտ էին ։

8 Երբոր Սիմոն Պետրոս տեսաւ՝ ընկաւ Յիսուսի ծունկերըն և ասաց · Տէր ինձմէնէ հեռու գնա[3], ինչուռը՝ ես մեղաւոր մարդ եմ ։

9 Պատճառնոր՝ ուր պատեց նորան և ամէնին էլ՝ որ նորա հետ էին՝ էն ձկներէն հարսին համար, որ բռնեցին ։

10 Ինպէս էլ Զեբեդիայի որդիքներին՝ Յակոբին և Յոհաննէսին, որ Սիմոնի հարսընկերներըն էին · և Յիսուս Սիմոնին ասաց · Ա՛ի վախնար՝ սրանէց եաև մարդկանց կը հարսա դէպի կեանքն[4] ։

11 Եւ նաւըն հանեցին ցամաքն, ամէն բաներըն թողին[5], և նորա եաևէն գնացին ։

12 Եւ էլաւ՝ երբոր նա քաղաքներիցն մէնէ մէջ հասաւ, ուր մին մարդ՝ որ բարառաթենով լիքն էր,

(2) Յոհ · ի · 6 ։ (3) Բ Խոտ · ը · 9 ։ գ Խոտ · ժէ · 18 ։ (4) Մարկ · դ · 19 ։ Ճոխ · ա · 17 ։ (5) Մարկ · գ · 20 ։ ԺԲ · 27 ։ Մարկ · ա · 18 ։ Ղուկ · ժը · 28 ։

անկեալ ՚ի վերոյ երեսաց ազաչեաց զնա՝ և ասէ . Տէր՝ եթէ կամիս , կարօղ ես զիս սրբել :

13 Ձգեաց զձեռն իւր՝ հասոյց ՚ի նա՝ և ասէ . Կամիմ՝ սրբեաց . և վաղվաղակի գնաց ՚ի նմանէ բորոտութիւնն :

14 Եւ նա պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել , այլ թէ երթ ցոյց զանձն քո քահանային , և մատո պատարագ վասն սրբութեան քո՝ որպէս և հրամայեաց Մովսէս , ՚ի վկայութիւն նոցա :

15 Եւ յորդէր առաւել բանն ըզնմանէ . և ժողովէին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկել ՚ի հիւանդութենէ իւրեանց :

16 Եւ նա խոյս ասէր յանապատս տեղիս , և կայր յաղօթս :

17 Եւ եղև ՚ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր , և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին , որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գալիլեացւոց՝ և Հրէաստանի և Երուսաղեմի . և զօրութիւն Տեառն էր ՚ի բժշկել զնոսա :

18 Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ , և խնդրէին զնա մուծանել ՚ի ներքս՝ և դնել առաջի նորա :

19 Եւ իբրև ոչ գտանէին՝ թէ ընդ որ մուծանիցեն զնա ՚ի ներքս վասն ամբոխին , ելին ՚ի տանիս , և ՚ի ցուցն կախեցին զնա , և իջուցին մահճօքն հանդերձ ՚ի մէջ առաջի Յիսուսի :

20 Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա . Ո՛վ դո՛ւ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո :

եգբար Յիսուսի տեսաւ՝ երեսին վերայ քնկաւ , նզովեաց՝ և ասաց . Տէր՝ թէ որ կամենաս , կարօղ ես ինձ սրբել[6] :

13 Իրան ձեռքն մեկնեց՝ հասցուց նորան՝ և ասաց . Կամենումեմ՝ սրբուիր . և շուտով բորոտութիւնն գընաց նորանից :

14 Եւ նա պատուիրեց նորան՝ որ իսկի մընին չասէ[7] , բայց թէ՝ գնա՛ , քո անձըդ ցոյց տուր քահանային , և քո սրբութեան համար պատարագ բեր՝ ինչպես որ Մովսէսն էլ հրամայեց , որ նորանց վկայութիւն լինի[8] :

15 Եւ նորա համբաւն էլ աւելի շատանում էր . և շատ ժողովուրդներ ժողովվում էին՝ որ լսեն և իրանց հիւանդութիւններից բժշկվին[9] :

16 Եւ նա քաշվում էր անապատ (չոլ) տեղերանք , և աղօթք էր անում[10] :

17 Եւ մին օր էլաւ՝ որ ինքն ուսուցանում էր՝ և փարիսեցիներն և օրինաց վարդապետներն նստած էին , որ Գալիլեացից և Հրէաստանի ամեն քաղաքներից և Երուսաղեմից հաւաքված էին . և Տէրի զօրութիւնն կար նորանց բժշկելոյ համար :

18 Եւ ահա մարդիք մին մարդ էին բերում մահճով (փէշկեշ)՝ որ անդամալուծ էր , և ուզում էին՝ որ նորան ներս տանեն , և նորա առաջին դնեն[11] :

19 Եւ երբոր տեղ չէին գտնում՝ որ նորան ներս տանեն՝ էն ամբոխի (խալխ) պատճառովն , վեր էլան կատուրն , և օճուրքից կախեցին նորան , և մահիճովն (փէշկեշովն) վեր բերին մէջ տեղն Յիսուսի առաջին :

20 Եւ նորանց հաւատքն որ տեսաւ՝ նորան ասաց . Ո՛վ մարդ՝ թող քա մեղքերդ թողված լինին քեզ :

(6) Մարկ . ը · 2 : Մատ . ո · 50 : (7) Մարկ . ը · 4 : (8) Ղևտ . ժգ . 4 · 10 · 21 , 22 : (9) Մարկ . դ · 25 : Մատ . գ · 7 : Յովհ . ը . 2 : (10) Մարկ . ժգ . 23 : Մատ . ե . 16 : (11) Մարկ . բ · 3 : Մատ . ը . 3 :

Digitized by Google

21 Ի՛կան խորհել զպիրքն և փա-
րիսեցիքն , և ասեն . Ո՞ է սա՝ որ
խօսի զՀայհոյութիւնս , ո՞վ կարէ թո-
ղուլ զմեղս՝ բայց միայն Ա՛ստուած :

22 Իսկ գիտաց Յիսուս զխոր-
հուրդս նոցա , պատասխանի ետ և
ասէ ցնոսա . Ո՛ւմ խորհիք ՚ի սիրտս
ձեր :

23 Ո՞րն է դիւրագոյն է . ասել՝
Թողեալ լիցին քեզ մեղք քո , եթէ
ասել՝ Ա՛րի և գնա՛ :

24 Ա՛յլ զի գիտասջիք՝ եթէ իշխա-
նութիւն ունի Որդի մարդոյ յերկրի
Թողուլ զմեղս . ասէ ցանդամալոյծն ,
Ա՛րի՛ ասեմ՝ ար՛ի՛ ա՛ռ զմահիճս քո՝
և երթ ՚ի տուն քո :

25 Եւ առաջմայն յարուցեալ ա-
ռաջի ամենեցուն՝ առ զիւրմէ յորոյ
վերայ անկեալ դնէր , գնաց ՚ի տուն
իւր , և փառաւոր առնէր զԱ՛ստ-
ուած :

26 Ո՛ւրմանք կալան զամենեսեան ,
և փառաւոր առնէին զԱ՛ստուած .
լի եղեն ահիւ , և ասեն՝ եթէ Տես-
աք այսօր նոր նշան :

27 Եւ յետ այնորիկ ել անտի՛ և
ետես մաքսաւոր մի՝ որում անուն
էր Ղևի , զի նստէր ՚ի մաքսաւու-
թեան . և ասէ ցնա . Ե՛կ զկնի
իմ :

28 Եւ Թողեալ զամենայն , յար-
եաւ գնաց զկնի նորա :

29 Եւ արար ընդունելութիւն մեծ
նմա Ղևի ՚ի տան իւրում . և էր
ժողովուրդ բազում մաքսաւորաց և
այլոց՝ որ էին բազմեալ ընդ նոսա :

30 Եւ արտնչէին փարիսեցիքն և
դպիրքն նոցա զնմանէ առ աշա-

21 Ասկզբացօղներն և փարիսեցի-
ներն սկսեցին միտք անել , և ա-
սացին[12] . Այս ո՞վ է՝ որ հայհոյանք
է խօսում . ո՛վ կարօղ է մեղքըն
Թողել՝ բայց միայն Ա՛ստուած[13] :

22 Յիսուս երբոր նորանց մտած-
մունքներըն իմացաւ , պատասխան
առաւ և նորանց ասաց . Ի՞նչ էք
միտք անում ձեր սրտերումն :

23 Որն է աւելի հեշտ . ասել՝ Թէ
Ա՛ռ մեղքերդ Թողված լինին քեզ ,
Թէ ասել՝ Ա՛ռ կաց և գնա՛ :

24 Ասյց որ իմանաք՝ Թէ Որդին
մարդոյ իշխանութիւն ունի՝ երկրիս
վերայ մեղքերըն Թողելոյ . անդա-
մալուծին ասաց , Ա՛սեց եմ ասում՝
վե՛ր կաց քո մահճերդ (պէօշէկդ)
ա՛ռ՝ և գնա՛ քո տունդ :

25 Եւ հենց էն ժամումն (սահ-
ման) ամենի առաջին վերկացաւ ,
իրան վերայ առաւ էն՝ որ նորա վե-
րայ ընկած դրրած էր , գնաց իրան
տունն , և փառք էր տալիս Ա՛ստուծոյն :

26 Ո՛ւրմանք բռնեց ամենին , և
փառք էին տալիս Ա՛ստուծոյն . և
հով լցվան , և ասում էին՝ Թէ Տես-
նոր նշան տեսնինք :

27 Եւ նրանից ետև Յիսուս էն-
տեղից դուրս գնաց՝ և մին մաք-
սաւոր (Ա՛մպոլէ) տեսաւ՝ որ նորս
անունն Ղևի էր , և նստած մաք-
սաւորութիւն էր անում . և նորան
ասաց , Ի՛մ ետևէս ե՛կ[14] :

28 Եւ նա ամեն բան Թողեց , վեր-
կացաւ գնաց նորա ետևէն :

29 Եւ Ղևի նորան մեծ հայկե-
րութիւն արաւ իրան տան մէջն[15] .
և շատ ժողովուրդ կար մաքսաւոր-
ների (Ա՛մպոլէնէրի) և ուրիշների՝
որ նորանց հետ սեղան էին նստել[16] :

30 Եւ փարիսեցիներն և նորանց
կարդացօղներն նորանից տրտնջու-

(12) Մատ . Բ . 3 : Մարկ . բ . 6 , 7 : (13) Յովհ . ը . 5 : Նեեմ . իգ . 25 : (14) Մատ . Թ . 9 : Մարկ . բ . 13 , 14 : (15) Մատ . Թ . 10 : Մարկ . բ . 15 : (16) Գործ . ժե . 1 :

Digitized by Google

կերան նորա՝ և ասէին . Ի՞նդէր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէք և ըմպէք ։

31 Պատասխանի եաս Յիսուս և ասէ ցնոսա . Ոչ են պիտոյ բժիշկք ողջոց , այլ հիւանդաց ։
32 Եւ ոչ եկի կոչել զարդարս , այլ զմեղաւորս յապաշխարութիւն ։

33 Եւ նոքա ասեն ցնա . Ի՞նդէր աշակերտքն Յովհաննու պահեն յաճախ՝ և խնդրուածս առնեն , նոյնպէս և փարիսեցւոցն . և քոյդ ուտեն և ըմպեն ։

34 Եւ նա ասէ ցնոսա . Ա՞րդեօք կարօղ էք մանկանց առագաստի , մինչ փեսայն ընդ նոսա իցէ , հրաման տալ պահել ։
35 Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն . ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ ։
36 Ի՛սաց և առակ մի առ նոսա , թէ Ո՛չ ոք արկանէ ՚ի նոր հանդերձէ ՚ի վերայ վետացեալ ձորձոյ . ապա թէ ոչ՝ և զնորն պատառէ , և ընդ հնոյն չիաբանի կապերան որ ՚ի նորոյն ։
37 Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ՚ի տիկս հինս . ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին նոր զտիկսն հինս . ինքն հեղու , և տիկքն կորնչին ։

38 Այլ գինի նոր ՚ի տիկս նորս արկանելի է , և երկոքին պահին ։

39 Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ և կամի զնորն . քանզի ասէ՝ Թէ հինն աղեկատակն է ։

մէին նորա աշակերտաներէն առաջին՝ և ասէր . Ինչո՞ւ կը մաքսաւորներէն և մեղաւորներէն հետ ուտէք և խըմէք ։

31 Յիսուս պատասխան առաւ և նորանց ասաց . Առողջներուն բժիշկ պէտք չէ , այլ հիւանդներուն ։
32 Չեմ եկել՝ որ արդարներըն կանչեմ , այլ մեղաւորներըն՝ որ ապաշխարեն[17] ։

33 Եւ նորանք ասացին նորան . Ինչո՞ւ Յօհաննէսի աշակերտներն շատ ժամանակ պաս են պահում՝ և աղօթք են անում , հնպէս էլ փարիսեցիներուն . և քո (աշակերտներդ) ուտում և խմում[18] ։
34 Եւ նա նորանց ասաց . Ա՞րթէ կարօղ էք հարսանիքի աղաներին , դեռ քանի որ փեսան նորանց հետ է , հրաման տալ որ պաս պահեն ։
35 Օրեր կըգան՝ երբոր փեսան վերկառնվի նորանցից . ապա էն օրերուն կըպահեն ։
36 Ա՛յն առակ էլ ասաց նորանց , թէ Ո՛չ ով մի նոր շորից հին գուսան վերայ (կարկատան) չի՛ դըցիլ . ապա թէ չէ՝ էն նորըն էլ կըպատառե , և կտորն՝ որ նորից է , հընին հետ չի՛ միաբանվիլ[19] ։
37 Եւ ոչ ով նոր գինին հին տըկերի մէջ չի՛ ածիլ . ապա թէ չէ՝ նոր գինին հին տըկերըն կըպատառե . ինքն կըթափվի , և տըկերըն կըկորչին ։
38 Այլ նոր գինին նոր տըկերի մէջ պէտք է ածվի , և երկուքն էլ կըպահվին ։
39 Եւ ոչ ով չը՛կայ՝ որ հինըն խմի՝ և նորըն կամենայ . ինչուտ՝ ասում՝ թէ հինն աւելի քաղցր է ։

(17) Մտթ . թ . 13 ։ ա Տի՛ ● ա . 15 ։ (18) Մտթ . թ . 14 ։ Մրկ . բ . 18 ։ (19) Մտթ . թ . 16 , 17 ։ Մրկ . բ . 21 , 22 ։

Digitized by Google

ԳԼ. Ի.

1 Քրիստոս ըսաւ՝ պահելոյ համար փարիսեցւոց ունեցած կուրութիւնն Սուրբ Հոգւով վկայութիւնով իւրաւունքով և հաշտով իրանց երեսին կը թափէ : 13 Տասներկու առաքեալներն կը նշանակէ : 17 Հալածողներն և պիղծ դեւերոյ չարչարվածներն կը փշէ : 20 Յաղագս առաքելոյ աշակերտներուն երանութիւն և ուրիշներուն վայ կըսայ : 27 Եւ ցոյց կըտայ թէ Քրիստոս պէտք է որ մեր թշնամիներն սիրենք . 46 Եւ իրան խօսքերն լսելով նաբտանց անոնք , որ չգիտին թէ փորձութեան ժամանակումն հոգի վերայ չինված հիմն չունեն. ցաղ ասն պես կործանվինք :

1 Եւ եղև ՚ի շաբաթու յերկրորդում առաջնոյն՝ անցանել նմա ընդ արտորայն . և աշակերտքն նորա կորզէին հասկ՝ շփէին ընդ ափ, և ուտէին :

2 Եւ ոմանք ՚ի փարիսեցւոցն ասեն ցնոսա . Ո՞ւնչ գործէք՝ զոր չէ օրէն ՚ի շաբաթու :

3 Պատասխանի եւս Նոցա Յիսուս և ասէ . Ոչիցէ ընթերցեալ ձեր՝ զոր արարն Դաւիթ , յորժամ քաղցեաւն ինքն՝ և որ ընդ նմայն էին :

4 Որպէրդ եմուտ նա ՚ի տունն Աստուծոյ , և զհացն զառաջաւորու- թեան եկեր , և եւս այնոցիկ՝ որ ընդ նմայն էին . զոր ոչ էր օրէն ուտիք ուտել , բայց միայն քահանայապետից :

5 Եւ ասէ ցնոսա . Տէր է Որդի մարդոյ և շաբաթու :

6 Եւ եղև ՚ի միւսում շաբաթուն մտանել նմա ՚ի ժողովուրդն՝ և ուսուցանել . և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսացեալ էր :

7 Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ , զի գտանիցեն չարախօսու- թիւն զնմանէ :

8 Եւ նա գիտէր զխորհուրդս նո-

1 Եւ էլաւ՝ որ նա երկրորդի առաջին շաբաթ օրումն արտերովն անց էր կենում , և նորա աշակերտներն հասկ էին պոկում՝ ափի մէջն փըշրում էին , և ուտում՝ :

2 Եւ փարիսեցիներիցն մին քանիսն ասացին նորանց . Ընդ ինչ էք անում՝ որ շաբաթ օրումն օրէնք չէ[2] :

3 Յիսուս նորանց պատասխան տուաւ և ասաց . Ոչ էք կարդացել էն՝ որ Դաւիթն արաւ , երբոր սովեց ինքն և նորանք՝ որ նորա հետն էին[3] :

4 (և) ինչպէս նա Աստուծոյ տունն մտաւ , և առաջաւորութեան (Աստուծոյ սեղանի վերայ դրած) հացըն կերաւ , և նորանց էլ տըւաւ՝ որ նորա հետ էին . որ օրէնք չէր ուտել , բայց միայն քահանայապետներին[4] :

5 Եւ նորանց ասաց . Որդին մարդոյ շաբաթի էլ տէրն է :

6 Եւ էլաւ՝ որ նա մէկել շաբաթ օրումն ժողովարանի մէջ մըտաւ՝ և սովորցնումէր . և էնտեղ մին մարդ կար՝ և նորա աջ ձեռն չորացել էր[5] :

7 Եւ կարդացողներն և փարիսեցիներն սպասումին նորան՝ եթէ շաբաթ օրումն բժշկէ , որ նորա- նից չարախօսելոյ պատճառ գտնեն :

8 Եւ նա գիտումէր նորանց մը-

(1) Մատթ. ժբ. 1 : Մարկ. բ. 23 : (2) Լևտ. ի. 10 : (3) ա Թագ. իա. 6 : (4) Ղևտ. իդ. 9 : (5) Մատթ. ժբ. 9 : Մարկ. գ. 1 : Ղևտ. ժգ. 15 : ժգ. 3 : Ծեր. ի. 16 :

Digitized by Google

ցա , ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գտաւեալ էր . Ընդ ինձ ի մէջ . և նա յարուցեալ եկաց ։

9 Ասէ ցնոսա Յիսուս . Հարցից ինչ զձեզ . Օ՞րինչ արժան է՝ ի շաբաթաց , բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել , ոգի՞ մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել ։

10 Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա . Զերգնա՛ զձեռն քո . և նա ձգեաց , և հաստատեցաւ ձեռն նորա իբրև ըզմիւսն ։

11 Նոքա լցան յիմարութեամբ , և խօսէին ընդ միմեանս՝ թէ զի՞նչ առնիցեն Յիսուսի ։

12 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ՚ի լեառն կալ յաղօթս , և հանէր զգիշերն ՚ի գլուխն յաղօթսն Աստուծոյ ։

13 Եւ իբրև այգ եղև՝ կոչեաց զաշակերտսն իւր , և ընտրեաց ՚ի նոցանէ երկոտասանս , զորս և առաքեալս անուանեաց ։

14 Սիմովն՝ զոր և Պետրոս անուանեաց , և զԱնդրէաս զեղբայր նորին , և զՅակովբոս և զՅովհաննէս , և զՓիլիպպոս և զԲարթողիմէոս ,

15 Եւ զՄատթէոս և զԹովմաս , և զՅակովբոս Ալփեայ , և զՍիմովն զկոչեցեալն նախանձայոյզ ,

16 Եւ զՅուդա Յակովբայ , և զՅուդա Իսկարիովտացի՝ որ եղև իսկ մատնիչ ։

17 Եւ իջեալ նոքօք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ . և ժողով աշակերտացն նորա և բազմութիւն մեծ ժողովրդեան , յամենայն Հրէաստանէ և Երուսաղէմ և յայնմ կողմանէ և ՚ի ծովեզերեայն Տիւրոսի և Սիդոնի .

18 Որ եկին լսել ՚ի նմանէ և բժշկուել ՚ի ախտից իւրեանց , և էին մաքրեալք՝ որ նորա ձեռն չորացեալ էր՝ ասաց . Ոչ կաց եկ մէջ տեղն . և նա վերկացաւ կանգնեց ։

9 Յիսուս Նորանց ասաց . Ա՛ինքան հարցնեմ ձեզանից . Ի՞նչ արժան է շաբաթ օրումն , բարի՞ բան անել՝ թէ չար գործել , մի՞ հոգի ապրեցնել՝ թէ կորցնել ։

10 Եւ շատ բարկացած չորս կողմով ամէնին վերայ նայեց՝ և նորան ասաց . Ա՛ր ձեռդ մեկնիր . և նա մեկնեց , և նորա ձեռն միւս կէսին պէս հաստատուեցաւ ։

11 Նորանք յիմարութենով լցուան , և իրար հետ խօսուէին՝ թէ ի՞նչ անեն Յիսուսին ։

12 Եւ էլաւ էն օրերումն՝ որ վերէլաւ սարն՝ աղօթք անել , գիշերըն լուսացրուց աղօթք անելով դէպի Աստուած[6] ։

13 Եւ երբոր առաւօտ էլաւ՝ իրան աշակերտներըն կանչեց , և նորանցից տասներկուսին ընտրեց՝ որ էլ առաքեալ անուանեց նորանց[7] ։

14 Սիմոնին՝ որ էլ Պետրոս անուանեց նորան[8] , և նորա Անդրէաս եղբօրըն , և Յակոբին և Յոհաննէսին , և Փիլիպպոսին և Բարթողիմէոսին ,

15 Եւ Մատթէոսին և Թոմասին և Յակոբոս Ալփեանին , և Սիմոնին՝ նախանձայոյզ կոչվածին ։

16 Եւ Յակոբայ Յուդային[9] , և Յուդա Իսկարիոտացոյն՝ որ էլ մատնիչ էլաւ ։

17 Եւ վեր եկաւ նորանց հետ մին տափակ տեղ . և էնտեղ էր նորա աշակերտների ժողովն և ժողովրդի մեծ բազմութիւն , ամէն Հրէաստանից և Երուսաղէմից և մեկէլ կողմերից և Տիւրոսի և Սիդոնի ծովի եզերից (ղողէկի)[10] .

18 Որ եկին նորանից լսել և ի-

(6) Մարկ . ժդ . 23 ։ (7) Մարկ . ճ . 2 ։ (8) Յովհ . ա . 42 ։ (9) Յակոբ , 1 ։ (10) Մարկ . գ . 25 ։ Մարկ . գ . 7 ։

Digitized by Google

կել ՚ի հիւանդութենէ իւրեանց · և նեզեալքն յոյսոց պղծոց բժըշկէին ։

19 Եւ ամենայն ժողովուրդն խընդրէր մերձենալ ՚ի նա , զի զօրութիւն ելանէր ՚ի նմանէ՝ և բժըշկէր զամենեսին ։

20 Եւ նա ամփարձ զաչս իւր յաշակերտան իւր՝ և ասէ · Երանի՛ աղքատացդ հոգւով , զի ձեր է արքայութիւնն Ղստուծոյ ։

21 Երանի՛ որ քաղցեալ են այժմ , զի յագեցին : Երանի՛ որ լան այժմ , զի ծիծաղեսցին ։

22 Երանի՛ է ձեզ , յորժամ նախատիցեն զձեզ մարդիկ , և յորժամ հալածիցեն զձեզ և նախատիցեն , և հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդւոյ մարդոյ ։

23 Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ և ցնծասջիք , զի ահա վարձք ձեր բազում են յերկինս · ըստ գմին օրինակի առնէին մարգարէիցն հարք իւրեանց ։

24 Նայց վայ ձեզ մեծատանդ , զի ընկալայք զմխիթարութիւն ձեր ։

25 Վայ ձեզ՝ որ յագեալք էք այժմ , զի քաղցիցէք · վայ ձեզ՝ որ ծիծաղիքդ այժմ , զի սգայցէք և լայցէք ։

26 Վայ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ ամենայն մարդիկ , զի այդպէս առնէին սուտ մարգարէիցն հարք նոցա ։

27 Նայլ ձեզ ասեմ՝ որ լսէքդ · զանց հիւանդութիւններից բժըշկվիլ · և պիղծ դևերից չարչարվածներն բժշկվաւքին ։

19 Եւ ամէն ժողովուրդն խընդրուէր՝ որ մօտենայ նորան[11] , ինչուր՝ նորանից շատ զօրութիւն էր դուրս գալիս՝ և ամէնին բժշկուէր[12] ։

20 Եւ նա իրան աչքերըն դէպի իրան աշակերտներին բարձրացրուց՝ և ասաց · Երանի է ձեզ՝ հոգով աղքատներիդ , որ ձերն է Ղստուծոյ արքայութիւնն[13] ։

21 Երանի նորանց՝ որ հիմիկ տկած են[14] , որ պիտի կըշտանան · երանի նորանց՝ որ հիմիկ լաց են լինում , որ պիտի ծիծաղեն[15] ։

22 Երանի է ձեզ , երբոր մարդիք նախատինք կըտան ձեզ[16] , և երբոր ձեզ կըջկեն և կատեն , և ձեզ վերայ չար անուն կըչհանեն՝ Որդոյ մարդոյ պատճառովն[17] ։

23 Ուրախ եղէք էն օրումն և ցընծացէք , ինչուր՝ ահա ձեր վարձքն շատ է երկնքումն[18] · հենց էդ կերպով մարգարէներին էին անում նորանց հարքն[19] ։

24 Նայց վայ ձեզ[20] հարրուստներիդ[21] , ինչուր՝ ձեր մխիթարութիւնըդ ընդունեցիք[22] ։

25 Վայ ձեզ՝ որ հիմիկ կըշտացել էք[23] , ինչուր՝ պիտի սովիք · վայ ձեզ՝ որ հիմիկ ծիծաղումէք , ինչուր՝ սուգ պիտի անէք , և լաց պիտի լինիք[24] ։

26 Վայ ձեզ՝ երբոր ամէն մարդիք ձեզանից բարի ասեն , ինչուր՝ էդպէս էլ սուտ մարգարէներին էին անում նորանց հարքն[25] ։

27 Նայց ձեզ՝ որ լսումք , ասում

(11) Մարկ · ժդ · 36 ։ (12) Մարկ · ե · 30 ։ Ղստ · ը · 46 ։ (13) Մատ · ե · 3 ։ ժա · 5 ։ Յակ · բ · 5 ։ (14) Նռոց · ծե · 1 ։ կե · 13 ։ Մարկ · ե · 6 ։ (15) Նռոց · կա · 3 ։ Մատ · ե · 4 ։ (16) Մարկ · ե · 11 ։ ա Պետր · բ · 19 ։ գ · 14 ։ դ · 14 ։ (17) Յովհ · ժզ · 2 ։ (18) Մատ · ե · 12 ։ Գործ · ե · 41 ։ կոր · ա · 28 ։ Յակ · ա · 2 ։ (19) Գործ · է · 51 ։ (20) Ղմով · գ · 1 ։ Յակ · ե · 1 ։ (21) Ղստ · ժբ · 21 ։ (22) Մատ · զ , 2 · 5 · 16 ։ Ղստ · ժգ · 25 ։ (23) Նռոց · կե · 13 ։ (24) Ըստ · ժգ · 13 ։ (25) Յովհ · ժե · 19 ։ ա Յովհ · գ · 5 ։

Digitized by Google

Սիրեցէք զթշնամիս ձեր , բարի ա-
րարէք առնելեաց ձերոց :
28 Օրհնեցէք զանիծիչս ձեր , ա-
ղօթս արարէք ՚ի վերայ նեղչաց ձե-
րոց :
29 Որ հարկանէ զծնօտ քո՝ մատո՛
նմա և զմիւսն . և որ հանէ ՚ի քէն
զբաճկոն քո՝ մի՛ արգելուր ՚ի նմա-
նէ և զշապիկս :

30 Ո՚մենայնի՝ որ խնդրէ ՚ի քէն՝
տո՛ւր , և զոր ինչ հանէ ոք ՚ի քէն՝
մի՛ պահանջեր :
31 Եւ որպէս կամիք՝ թէ արաս-
ցեն ձեզ մարդիկ , այնպէս արասջի՛ք
և դուք նոցա :
32 Եւ եթէ սիրէք դուք զսիրելիս
ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր , զի և մե-
ղաւորք սիրեն զսիրելիս իւրեանց :

33 Եւ եթէ բարի առնէք բարե-
րարաց ձերոց՝ որ շնորհ է ձեր , զի
և մեղաւորք զնոյն գործեն :

34 Եւ եթէ տալք փոխ այնոցիկ՝
յորոց ակն ունիցիք առնուլ՝ որ շնորհ
է ձեր . քանզի և մեղաւորք մեղա-
ւորաց փոխ տան , զի առցեն անդ-
րէն զկշիռն :

35 Այլ սիրեցէք զթշնամիս ձեր ,
և բարի արարէք ատելեաց ձերոց .
և տո՛ւք փոխ՝ ուստի ո՛չ ակն ունի-
ցիք առնուլ . և եղիցին վարձք ձեր
բազում , և եղիջիք որդիք Բարձ-
րելոյ . զի նա քաղցր է ՚ի վերայ
չարաց և ապաշնորհաց :

36 Եղերո՛ւք գթածք՝ որպէս և
Հայրն ձեր գթած է :
37 Մի՛ դատէք՝ և ո՛չ դատիցիք .
մեմ[26] . Սիրեցէք ձեր թշնամիներըն ,
բարի արէք ձեզատողներին :
28 Օրհնեցէք ձեզ անիծողներին ,
աղօթք արէք ձեզ նեղացողներին
վերայ[27] :
29 Ա՛յս որ քո մին երեսիդ զար-
կումէ՝ մէկելըն էլ դէմ արա նա-
րան[28] . և նա որ քո կապան քեզա-
նից հանումէ՝ շապկիդդ էլ մի՛ ար-
գելեր նորանից[29] :
30 Ո՚մէնին՝ որքան ուզումէ քեզա-
զանից՝ տո՛ւր , և ինչ որ միւնն քե-
զանից հանումէ՝ յետ մի՛ ուզեր[30] :
31 Եւ ինչպէս որ կամենումէք՝ թէ
մարդիքն ձեզ անեն , էնպէս էլ դուք
արէք նորանց[31] :
32 Եւ թէ որ դուք ձեզ սիրօղնե-
րին սիրէք՝ ի՞նչ շնորհք է ձեզ , ին-
չուր՝ մեղաւորներն էլ իրանց սի-
րօղներին սիրումեն[32] :
33 Եւ թէ որ ձեր բարերարներին
բարի անէք՝ ի՞նչ շնորհք է ձեզ , ին-
չուր՝ մեղաւորներն էլ հենց էնպէս
են անում :
34 Եւ եթէ փոխ տաք նորանց՝ որ
նորանցից յետ առնելոյ յոյս ունիք՝
ի՞նչ շնորհք է ձեզ[33] . ինչուր՝ մե-
ղաւորներն էլ մեղաւորներին փոխ
են տալիս , որ հաւասար չափըն յետ
առնեն :
35 Այլ սիրեցէք ձեր թշնամինե-
րըն[34] , և բարի արէք ձեզ ատողնե-
րին . և փոխ տուէք նորանց՝ որ յետ
առնելոյ յոյս չունիք[35] . և ձեր
վարձքն շատ կըլինի , և Բարձրե-
լոյ որդիք կըլինիք[36] . ինչուր՝ նա
քաղցր է չարերի և երախտամոռներին
վերայ :
36 Ողորմած էլէք՝ ինչպէս
որ ձեր Հայրն էլ ողորմած է[37] :
27 Մի՛ դատէք՝ և չէք դատվիլ[38] .

(26) Ղւկ . խգ . 4 : Ընտ . իե . 21 : Մտթ . ե . 44 : վեր . 35 : Հռովմ . ժբ . 20 :
(27) Ղւկ . խգ . 28 : Պետ . ե . 60 : (28) Մտթ . ե . 39 : (29) ա Կորնթ . գ . 7 :
(30) բ Օրին . ժե . 7 , 8 . 10 : Ընտ . իա . 26 : Մտթ . ե . 42 : (31) Մտթ . է .
12 : (32) Մտթ . ե . 46 : (33) Մտթ . ե . 42 : (34) վեր . 27 : (35) Ղւկ . զէ .
26 : վեր . 30 : (36) Մտթ . ե . 45 : (37) Մտթ . ե . 47 : (38) Մտթ . է . 1 :

Digitized by Google

մի՛ պատժէք՝ և ոչ պատժիցիք • արձակիցէք՝ և արձակիցիք ։

38 Տո՛ւք՝ և տացի ձեզ • չափ բարեաւք թաթաղուն շարժուն զերդուն տացեն ՚ի գոգս ձեր • նովին չափով՝ որով չափէք, չափեացի ձեզ ։

39 Ո՞ւստ և առակ մի առ նոսա • Ո՞ւթէ կարիցէ կոյր կուրի առաջնորդել, ոչ ապաքէն երկոքին ՚ի խորխորատ անկանիցին ։

40 Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր • ամենայն կատարեալն եղիցի իբրև զվարդապետ իւր ։

41 Զի՞ տեսանես զշիւղ յականն եղբօր քո, և ՚ի քում ականն զգերանդ ոչ նշմարես ։

42 Կամ զիա՞րդ կարես ասել ցեղբայր քո • Եղբայր՝ թո՛ղ հանից զշիւղդ յականէ քումմէ, և դու ՚ի քում ականն զգերանդ ոչ տեսանես • կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ, և ապա հայեսցիր հանել զշիւղ յականէ եղբօր քո ։

43 Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար, և ոչ դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի •

44 Զի իւրաքանչիւր ծառ ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի • զի ոչ եղէզ ՚ի փշոց քաղեն թուզ, և ոչ ՚ի մորենւոյ կթեն խաղող ։

45 Ո՞ւրդ բարի ՚ի բարի գանձուց սրտի իւրոյ բղխէ զբարի, և մարդ չար ՚ի չարէն բղխէ զչար • քանզի ՚ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա ։

46 Զի կոչէք զիս՝ Տէր Տէր, և զոր ասեմ ոչ առնէք ։

47 Ո՞մնայն որ գայ առ իս, և լսէ զբանս իմ՝ պատժէք՝ և չէք պատժըվիլ • արձակեցէք՝ և կարձակվիք ։

38 Տուէք՝ և կըտրվի ձեզ[39] • լաւ թափ տրվված շարժված առատ չափ կըտան ձեր գոգն[40] • որ չափով որ չափէք՝ նորանով կըչափվի ձեզ[41] ։

39 Ո՞ւստի առակ էլ ասաց նորանց՝ թէ Ո՞ւթէ կարօղ է կոյրն կուրին առաջնորդել[42], չէ՞ որ երկուքն էլ փոսի մէջ կընկնին ։

40 Ո՞չ աշակերտն իւրն վարդապետիցն լաւ չէ[43] • ամէն կատարեալն իւրն վարդապետին պէս կըլինի ։

41 Ինչո՞ւ քո եղբօր աչքին միջի ծեղըն տեսնումես, և քո աչքիդ մէջի գերանըն չես տեսնում[44] ։

42 Կամ ի՞նչպէս կարօղ ես քո եղբօրդ ասել • Եղբա՛յր՝ թո՛ղ քո աչքիդ ծեղըն հանեմ, և քո աչքիդ մէջի գերանըն չես տեսնում • կեղծաւո՛ր՝ առաջ քո աչքիդ գերանըն հանիր, և ապա մտիկ արա՝ որ քո եղբօր աչքիցն ծեղն հանես[45] ։

43 Ինչուո՞ւ՝ բարի ծառ չը՛կայ՝ որ չար պտուղ բերէ, և էնպէս էլ չար ծառ չը՛կայ՝ որ բարի պտուղ բերէ[46] •

44 Ինչուո՞ւ՝ ամէն մէկ ծառ իրան պըտղիցն է ճանաչվում[47] • պատճառնո՛ր՝ ոչ փըշերիցն թուզ են քաղում, և ոչ մորիցն խաղող են կըթում ։

45 Ի՞ւարի մարդն իրան սրտի բարի գանձուցն (խոպնոյիցն) բարիք է բղխում[48], և չար մարդն չար (գանձուցն) չարիք է բղխում • ինչուո՞ւ՝ սրտի աւելցածիցն է խօսում նորա բերանն[49] ։

46 Ինչո՞ւ էք ինձ Տէր Տէր կըչում, և էն որ ասումեմ, չէք անում[50] ։

47 Ո՞մն՝ ամ որ ինձ մօտ է գալիս,

(39) Ըստ • ԺԲ • 17 ։ (40) Մատ • ՀԲ • 13 ։ (41) Մարկ • է • 2 ։ Մարկ • դ • 24 ։ Ճառ • բ • 13 ։ (42) Մարկ • ԺԵ • 14 ։ (43) Մարկ • ժ • 24 ։ Հովհ • ԺԳ • 16 ։ ԺԵ • 20 ։ (44) Մարկ • է • 3 ։ (45) Ըստ • ԺԲ • 17 ։ (46) Մարկ • է • 16 , 17 ։ (47) Մարկ • ԺԲ • 33 ։ (48) Մարկ • ԺԲ • 35 ։ (49) Մարկ • ԺԲ • 34 ։ (50) Մղ • ա • 6 ։ Մարկ • է • 21 ։ ԺԵ • 11 ։ Ղուկ • ԺԳ • 25 ։

Digitized by Google

լսէ զբանս իմ և առնէ զնոսա , յա-
ղից ձեզ ումմ նման է ։

48 Նման է առն՝ որ շինիցէ տուն ։
որ փորեաց և խորհեաց , և եդ հիմն
ի վերայ վիմի ։ ի յառնել հեղեղ-
ացք՝ բաղխեցաւ գետ զտունն , և ոչ
կարաց շարժել զնա ։ զի հաստատ-
եալ էր հիմն ի վերայ վիմի ։

49 Իսկ որ լսէ զբանս իմ՝ և ոչ
առնէ , նման է առն՝ որ շինիցէ տուն
ի վերայ հողոյ առանց հիմանց ։ զոր
բաղխեցաւ գետ , և վաղվաղակի ան-
կաւ ։ և եղև կործանումն տանն այ-
նորիկ մեծ ։

և իմ խօսքերըս լսէ՝ և նոքա
անում , ցոյց տամ ձեզ թէ ում
նման է՝[1] ։

48 Նման է էն մարդոյն որ տուն
կը շինէ ։ որ փորեց և խորացուց ,
և հիմն քարի վերայ դրաւ ։ ջրի
հեղեղներ որ վերկացան՝ գետն էն
տանըն թակեց , և չը՛կարաց շար-
ժել նորան , ինչուր՝ նորա հիմնն
քարի վերայ հաստատված էր ։

49 Նայց նա՝ որ իմ խօսքերըս լը-
սուէ՝ և չի անում , նման է էն
մարդոյն՝ որ տունըն հողի վերայ կը-
շինէ առանց հիմունքի ։ գետն նա-
րան թակեց , և շուտով վեր ըն-
կաւ ։ և էն տան կործանվիլն ստա-
տիկ էլաւ ։

ԳԼ · Ւ։

1 Վրիաոս հեթանոս հարեւրապետի մէջ ։ հրեաներից շատ սիրելի մեծ հաւատք է գտնում , 10 ։ նոյն տեղից նորա ծառան կը բժշկէ ։ 11 Նային քաղաքի որբևէրի կնոջ մեռած որ-
դին կը յարուցանէ ։ 18 Յովհաննէսի աղաչիքով մարդկանց՝ հրաշքներով պատասխան կը-
տայ ։ 24 Յաղթվուդի առաջն կը վկայէ թէ նա Յովհաննէսի համար ինչ կարծիք ունի ։
30 ։ հրեաներն ատտաուածք որ ո՛չ Յովհաննէսի և ո՛չ էլ իրան բանած ձամրանին կը յարգացնին ։
36 Ինչ Մարիամ Մագդաղենացուի պատմատավ ցոյց կըտայ թէ նա մեղաւորաց բարեկամն է ,
չէ՛ թէ նորանք մեղքի մէջ ինալոյ համար նորանց բարեկամ կը լինի , հապա որ նորանք հա-
ւատան իրան և զղջալով՝ իրանց մեղքերին թողութիւն առնեն նորանից ։

1 Եւ եղև իբրև կատարեաց զա-
մենայն զբանս իւր ի լսելիս ժողո-
վրդեանն , եմուտ ի Կափառնա-
ում ։

2 Հարիւրապետի ուրումն ծա-
ռայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ
էր ի վախճանել , որ էր նմա պատ-
ուական ։

3 Իրրև լուաւ զՅիսուսէ , ա-
ռաքեաց զծերսն ի Հրէից , ա-
ղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցու-
ցէ զծառայն նորա ։

4 Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝
ազաչէին զնա ստէպ՝ և ասէին ,
թէ Արժանի է՝ որում զշնորհս զայս
առնես ։

1 Եւ երբոր իրան ամէն խօսքե-
րըն կատարեց ժողովրդի ականջնե-
րում , մտաւ Կափառնայում[1] ։

2 Ա՛յին հարիւրապետի ծառայ
խիստ հիւանդացած՝ մեռնելոյ մօտ
էր , որ պատուական էր նորան ։

3 Երբոր Յիսուսի համար լսեց ,
Հրէաների (Ըհու-պնէրի) ծերերըն
ուղարկեց՝ որ աղաչեն նորան՝ որ
գայ իրան ծառային ապրեցնէ ։

4 Եւ նորանք Յիսուսի մօտ ե-
կին՝ նորան խիստ ազաչելովին՝ և
ասում , թէ Արժանի է նա՝ որ էս
շնորհքըս անես նորան ։

(51) Մտթ · է · 28 ։ (1) Մտթ · ը · 5 ։

Digitized by Google

5 Ոմի սիրէ զազգս մեր, և զժողովրդեանոյն նա շինեաց մեզ:

6 Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրև ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս, և ասէ ցնա. Տէր՝ մի՛ ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես:

7 Վասն որոյ և ոչ զանձն հաճարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկ իմ:

8 Զի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինև զինուորս, և ասեմ սըմա՝ Երթ, և երթայ. և այլում՝ թէ Եկ, և գայ. և ծառայի իմում՝ թէ Արա զայս, և առնէ:

9 Եւ իբրև լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն՝ որ երթային զՀետ նորա՝ և ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս գտի:

10 Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ:

11 Եւ եղև ի վաղիւն երթայր ի քաղաք մի, որում անուն էր Նայիմ. երթային ընդ նմա և աշակերտք նորա և ժողովուրդ բազում:

12 Իբրև մերձ եղև ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի. և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա:

13 Իբրև եահս զնա Տէր՝ գթացաւ ի նա և ասէ. Մի՛ լար:

14 Եւ մատուցեալ մերձեցաւ ի դագաղն. և որք բարձեալն առնէին՝ զաղեղ առին, և ասէ. Պա-

5 Պատճառեաց՝ մեր ազգին սիրում, և ժողովարանն նա շինեց մեզ համար:

6 Եւ Յիսուս նորանց հետ գընաց. երբոր ան[ո]ւրիցն շատ հեռու չէր, հարիւրապետն բարեկամները ուղարկեց նորա մօտ, և նորան ասաց. Տէր՝ աշխատանք մի՛ քաշեր, ինչու որ՝ արժանի չեմ՝ որ իմ (տան) ծածքի տակն մտնես:

7 Այրահամայր էլ ես իմ անձրս արժանաւոր չը՛համարեցի՝ որ քեզ մօտ գամ. բայց խօսքով ասա՝ և իմ աղա կըբժշկվի:

8 Ինչուր՝ ես էլ մին իշխանութեան տակ լինօղ մարդ եմ. իմ ձեռիս տակն զինուորներ ունիմ, և մընին ասումիմ՝ թէ Գնա՝ և նա գնում. և մեկելին՝ թէ Եկ՝ և գալիս է. և իմ ծառային՝ թէ Այս բանըս արա՝ և անում:

9 Եւ երբոր Յիսուս էս լսեց՝ զարմացաւ, դարձաւ դէպի ժողովուրդն՝ որ նորա ետևէն գնումէին՝ և ասաց. Ա՛շմարիտըն ասումիմ ձեզ՝ թէ Իսրայէլի մէջն էլ էսքան հաւատք չը՛գտի:

10 Եւ էն ուղարկված մարդիքն գնա դարձան տուն, և հիւանդ ծառային բժշկված գտին:

11 Եւ յետևի օրումն էլաւ՝ որ մին քաղաք էր գնում, որ նորա անունն Նային էր. նորա աշակերտներն էլ նորա հետ գնումէին և շատ ժողովուրդ էլ:

12 Երբոր մօտեցաւ քաղաքի դըռանն, ահա մին մեռեալ էին դուրս բերում՝ որ իրան մօր միածնեանդ որդի էր, և նա որբևէրի էր. և քաղաքից շատ ժողովուրդ կար նորա հետ:

13 Երբոր Տէրն նորան տեսաւ՝ խղճաց նորա վերայ և ասաց. Լաց մի՛ լինիր:

14 Եւ մօտ եկաւ նաժիշն մռնաց. և նորանք՝ որ վեր առած տարնումէին, կանգնեցին. և ասաց,

Digitized by Google

ասանի դու՝ քեզ ասեմ՝ արի ։

15 Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր ։

16 Եւ ահ կալաւ զամենեսին, և փառաւոր առնէին զԱստուած՝ և ասէին, թէ Արգարեւ ոմն մեծ յարուցեալ է ի միջի մերում, և թէ Այց արար Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն ։

17 Եւ ել զօրացա այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա՝ և ընդ ամենայն կողմանս աշխարհին ։

18 Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ ։

19 Եւ կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց Յովհաննէս, առաքեաց առ Տէր և ասէ. Դու ես որ գալոցն ես, և թէ այլում ակն կալցուք ։

20 Եւ եկեալ արքն առ նա՝ ասեն. Յովհաննէս Մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ, Դու ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք ։

21 Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս ի հիւանդութեանց և ի հարուածոց և յայսց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել ։

22 Պատասխանի ետ նոցա և ասէ. Երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսիքդ և լուայք. զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին ։

23 Եւ երանի՛ իցէ՝ որ ոչ գայթակղեսցի յիս ։

Ա՛վ երիտասարդ՝ քեզ եմ ասում՝ վեր կաց[3] ։

15 Մեռեալն վերկացաւ, նստեց և սկսեց խօսել. և նորան տուաւ իրան մօրն ։

16 Եւ ահ բռնեց ամէնին[3], և Աստուծոյն փառք էին տալիս՝ և ասում՝ թէ Ինչ մեծ մարգարէ[4] առաջ է եկել մեր միջումն, և թէ Աստուած իրան ժողովրդին աներեսութիւն եկաւ բարութեամբ[5] ։

17 Եւ էս ձայնս նորա համար դուրս գնաց բոլոր Հրէաստանն՝ և էն աշխարհքի ամէն կողմերն ։

18 Եւ Յոհաննէսին պատմեցին իրան աշակերտներն էս ամէն բաներ համար[6] ։

19 Եւ Յոհաննէս իրան աշակերտներից երկու հոգի կանչեց իրան մօտ, ուղարկեց Տէրին մօտ և ասաց. Դու ես էն՝ որ պէտք է գաս, թէ ուրիշի սպասենք ։

20 Եւ էն մարդիքն նորա մօտ եկին և ասացին. Յոհաննէս Մկրտիչն մեզ ուղարկեց քեզ մօտ՝ և ասում, Դու ես էն՝ որ պէտք է գաս, թէ ուրիշի սպասենք ։

21 Եւ (Յիսուս) հէնց էն ժամուն (ահաւասիկ) շատ մարդկանց բժշկեց հիւանդութիւններից և չարչարանքից և չար դևերից, և շատ կուրերին տեսնել շնորհեց ։

22 Պատասխան տուաւ նորան և ասաց. Գնացէք Յոհաննէսին պատմեցէք՝ ինչ որ տեսիք և լսեցիք. թէ կուրերն տեսնում են, կաղերն գնում են, բորոտներն սրբըվում են, խուլերն (ականջն) լսում են, մեռելներն յարութիւն են առնում[8], աղքատներին աւետարան է քարոզվում[9] ։

23 Եւ երանի է նորան՝ որ ինձ վերայ չի գայթակղվի ։

(2) Գլուխ • ը • 54 ։ Յովհ • ժա • 43 ։ Գործ • բ • 40 ։ Հռովմ • դ • 17 ։ (3) Գլուխ • ա • 65 ։ (4) Գլուխ • իդ • 19 ։ Յովհ • գ • 19 ։ ը • 14 ։ բ • 17 ։ (5) Գլուխ • ա • 68 ։ (6) Մատթ • ժա • 2 ։ (7) Մատթ • ժա • 5 ։ (8) Եսայ • կբ • 5 ։ (9) Գլուխ • դ • 18 ։

Digitized by Google

24 Եւ իբրեւ գնացին հրեշտակքն Յովհաննու, սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն Յովհաննու. Ո՞ի ելէք յանապատն տեսանել, եղէգն շարժեալ ի հողմոյ։

25 Այլ զի՞նչ ելէք տեսանել, մի՛ի հանդերձեալ փափկութեամբ զարդարեալ. տե՛ս անձինք որք ի հանդերձս երեւելիս և ի փափկութեան են՝ յարքունիս են։

26 Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ՞. այո՛ ասեմ ձեզ՝ առաւել եւս քան զմարգարէ։

27 Ո՛ի սա է՝ վասն որոյ գրեալն է, թէ Ահա առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ ըզճանապարհս քո առաջի քո։

28 Այլ ասեմ ձեզ. Ա՛ծծ ի ծնունդս կանանց մարգարէ քան զՅովհաննէս ո՛չ ոք է. բայց փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա։

29 Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ լուաւ՝ և մաքսաւորքն, արդարացուցին զԱստուած. զի մկրտեցան ի մկրտութիւնն Յովհաննու։

30 Իսկ փարիսեցիքն և օրինականք զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս իւրեանց, զի ո՛չ մկրտեցան ի նմանէ։

31 Այլ ո՞ւմ նմանեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ. և ո՞ւմ իցեն նմանօղք։

32 Նման են մանկտւոյ՝ որ ի հրապարակս նստիցին, կարդայցեն ցմիմեանս և ասիցեն. փող հարաք ձեզ՝ և ո՛չ կաքաւեցիք, ողբացաք՝ և ո՛չ լացիք։

24 Եւ երբոր Յովհաննէսի ուղարկուած մարդիկը գնացին, սկսաւ ժողովուրդներուն հետ Յովհաննէսի համար խօսել[10]. (Ի՞նչ) իւ՛նչ տեսնելու դուրս գնացիք անապատը, մին եղէգ (ղամիշ)՝ որ քամուն շարժըւում է։

25 Այլ իւ՛նչ տեսնելու դուրս գընացիք, մին մարդ փափուկ շորերով զարդարուած. ահա նուրանք՝ որ փառաւոր շորերուն և փափկութեան են՝ թագաւորներուն պալատներումն են։

26 Այլ իւ՛նչ տեսնելու դուրս գընացիք, մին մարգարէ՞. իրաւի ասումեմ ձեզ՝ որ մարգարէից էլ աւելի է։

27 Ինչուր՝ սա էն է՝ որ նորա համար գրուած է, թէ Ահա իմ հրեշտակըս ուղարկումեմ քո առաջիդ՝ որ քո առաջիդ քո ճանապարհդ պատրաստէ[11]։

28 Ա՛յսմարիտըն ասումեմ ձեզ՝ որ կանանց ծնուածներուն միջումն ո՛չ ոք աւելի մեծ մարգարէ չը՛կայ՝ քան Յովհաննէսն. բայց Աստուծոյ արքայութեան միջի փոքրն նորանից մեծ է։

29 Եւ ամէն ժողովուրդն երբոր էս լսեցին՝ և մաքսաւորներն (Կիւրուէնէ) Աստուծոյն արդարացրին. ինչուր՝ Յովհաննէսի մկրտութենովն մկրտուեցան[12]։

30 Նայց փարիսեցիներն և օրէնք գիտօղներն Աստուծոյ խորհուրդըն անարգեցին իրանց անձներումն[13]. ինչուր՝ չը՛մկրտուեցան նորանից։

31 Այս ո՞ւմ նմանեցնեմ էս ազգիս մարդիքըն. և ո՞ւմ նման են[14]։

32 Նրն տղայոց նման են որ փողոցներումն նստին, իրար կանչելն և և ասեն. փող փչեցինք ձեզ համար՝ և պար չեկիք, սուգ արինք՝ և լաց չէլաք։

(10) Մատթ. ժա. 7։ (11) Մալ. գ. 1։ (12) Մատթ. գ. 5։ Ղուկ. գ. 12։ (13) Գործ. ի. 27։ (14) Մատթ. ժա. 16։

Digitized by Google

33 Եկն Յովհաննէս մկրտիչ՝ ոչ ուտէր և ոչ ըմպէր , և ասէիք . Դև գոյ՝ի նմա ։
34 Եկն Որդի մարդոյ՝ ուտէ և ըմպէ , և ասէք . Ահա այր կերօղ և արբեցօղ՝ բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց ։

35 Եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց ։
36 Աղաչէր զնա ումն՝ի փարիսեցւոցն՝ զի կերիցէ ճաշ ընդ նմա . և մտեալ՝ի տուն փարիսեցւոյն՝ բազմեցաւ ։
37 Եւ կին մի էր՝ի քաղաքին մեղաւոր . իբրև գիտաց թէ բազմեալ է՝ի տան փարիսեցւոյն , բերեալ շիշ մի իւղոյ ազնուի .

38 կայր յետոյ առ ոտս նորա , լալով . և արտասուօքն սկսաւ թրջել զոտս նորա , և հերովք գլխոյ իւրոյ չնչէր , և համբուրէր զոտս նորա , և օծանէր իւղովն ։

39 Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ կոչեացն զնա , ասէր ընդ միտս իւր . Այս թէ մարգարէ ոք էր , ապա գիտէր՝ թէ ո՛վ և որպիսի ոք կին մերձենայ՝ի սա , զի մեղաւոր է ։

40 Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնա . Սիմոն՝ ունիմ ինչ ասել քեզ . և նա ասէ . Ուսո՛ւ վարդապետ . և ասէ .
41 Երկու պարտապանք էին ումումն փոխատուի . մինն պարտէր հինգ հարիւր դահեկան , և միւսն յիսուն ։
42 Եւ իբրև ոչ գոյր նոցա հատուցանել , երկոցունցն ընդ հեաց . արդ ասա՛ ո՞վ առաւել սիրեսցէ զնա ։

33 Յովհաննէս մկրտիչն եկաւ՝ ոչ ուտէր և ոչ խմէր , և ասէիք՝ Դև կայ նորա մէջ ։
34 Որդին մարդոյ եկաւ՝ ուտէ և խմէ , և ասէք . Ահա մարդ՝ մաքսաւորներուն (հնչմտչներուն) և մեղաւորներուն բարեկամ ։
35 Եւ իմաստութիւնն արդարացաւ իրան որդիքներովն ։
36 Փարիսեցիներէն մին ազաչէր նորան՝ որ հաց ուտէ իրան հետ . և մտաւ փարիսեցւոյ տունը՝ և սեղան նստաւ ։
37 Եւ ահա քաղաքացւոյն մին մեղաւոր կին կար . երբոր իմացաւ , թէ փարիսեցւոյ տանը սեղան է նստած , մին շիշ (շուշ) սպիտակ իւղ բերաւ .
38 Ու որա ետևէն նորա ոտից մօտ կանգնած էր , և լաց էր լինում . և արտասուքովն նորա ոտները սկսաց թրջել , և իրան գլխի մազերովն սրբում էր , և նորա ոտները համբուրում էր , և իւղովն օծում էր ։
39 Եւ (էն) փարիսեցին՝ որ նորան կանչեց , երբոր տեսաւ՝ իրան մտքումն ասում էր . Ա՛ն թէ որ մին մարգարէ էր , պատ կը գիտէր՝ թէ ո՞վ կամ ի՞նչպէսի կին է նա՝ որ իրան կը մօտենայ , ինչուան մեղաւոր է ։
40 Յիսուս պատասխան տուաւ և նորան ասաց . Սիմո՛ն , ունիմ քեզի ասելիք . և նա ասաց . Ուսո՛ւցիչ , ասա՛ ։
41 Երկու մարդ պարտական էին մին փոխատուողի . մինն հինգ հարիւր դահեկան պարտական էր , և մէկելն յիսուն ։
42 Եւ երբոր նորանք բան չունէին՝ որ վճարեն , երկուսին էլ բաշխեց . հիմի՝ ասա՛ նորանցից ո՞վ աւելի կը սիրէ նորան ։

(15) Մարկ . գ . է ։ Մատ . ա . 6 ։ Ղուկ . ա . 15 ։ (16) Մարկ . ժա . 19 ։ (17) Մարկ . իշ . 6 ։ Մատ . ժգ . 3 ։ Յովհ . ժա . 2 ։ (18) Ղուկ . ժբ . 3 ։

Digitized by Google

43 Եւ Ասիմոն . Ինձ այսպէս թուի՝ որում ներուած է աւելի, նորին եւ սիրոյ է . Եւ նա ասէ ցնա . Ուղիղ դատեցեր :

44 Եւ դարձեալ ի կինն հայեցաւ , ասէ ցԱսիմոն . Տեսանես զայս կին , մտի ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ եռար , իսկ սա արտասուօք թրջեաց զոտս իմ , և հերով իւրով չորեաց :

45 Համբոյր մի դու ոչ եռուր ինձ . սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց ի համբուրելոյ զոտս իմ :

46 Իւղով գլուխ իմ ոչ օծեր . սա իւղով անուշիւ օծ :

47 Վասն որոյ ասեմ քեզ . Թողեալ լինին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց . զի որում շատ թողացեալ՝ շատ սիրէ , և որում սակաւ՝ սակաւ :

48 Եւ ասէ ցնա . Թողեալ լինին քեզ մեղք քո :

49 Եւ սկսան՝ որ բազմեալն էին ընդ նմա , ասել ընդ միտս իւրեանց . Ո՞վ է սա՝ որ զմեղս թողու :

50 Եւ նա ասէ ցկինն . Հաւատք քո կեցուցին զքեզ՝ երթ ի խաղաղութիւն :

43 Ասիմոն ասաց . Ինձ էապէս է երեւեալ , թէ նա՝ որ նորան շատ բաշխեց . Եւ նա ասաց նորան . Հարկաւ դատեցիր :

44 Եւ դարձաւ դէպի կինն , եւ Ասիմոնին ասաց . Տեսանե՞ս դու կինս , զի ես եկի քո տունդ մտի՝ իմ ոտացս ջուր չը՛տուիր , բայց սա իր արտասուքովն իմ ոտներուս թրջեց , և իրան մազերովն սրբեց :

45 Դու ինձ համբոյր չը՛տուիր ինձ . սա՝ ես՝ քանի որ եկայ եմ մտնել իմ ոտներուս համբուրելուցն չը՛դադարեց :

46 Դու իւղով չօծեցիր իմ գլուխս[19] . սա՝ անուշ իւղով օծեց :

47 Վասն որոյ ասեմ քեզ . Ներուած են իրան մեղքերն իրան թողուած կըլլինին , ինչուըր շատ սիրեց[20] . պատճառնոր՝ որին որ շատ կը թողուի՝ նա շատ կը սիրէ , և որին որ քիչ՝ նա քիչ :

48 Եւ նորան ասաց . Ներուած մեղքերդ թողուած լինին քեզ[21] :

49 Եւ ներանք՝ որ նորա հետ սեղան էին նստած , սկսեցին իրանց մէջերնին ասել . Ա՞ր մեղք է թողում[22] :

50 Եւ նա ասաց էն կնկանն . Հաւատքդ ապրեցուց քեզ՝ գնա՛ խաղաղութեամբ[23] :

ԳԼ · Ը

3 Ներկեալներն իրանց ապրանքներէն Ներքեսեան ծառայութիւն էին անում : 4 Ներքեսոս իւրեան ազգակիրներով քաղաքներն և գիւղերն քարոզելուցն եւս սերմ ցանօղի , 16 Ե՛ն ճրագի առակն ասէ . 21 Հոյժ կարեւոր թէ որո՞նք են իրան մայրն և եղբայրներն . 22 Ո՛ւմն առակն է : 26 Դևերուն լեգէոնն մարդուցն հանելն և նորանց խոզերի երամակումն առ ջրափնէն . 37 Գերգեսացիքն նորան չեն ընդունում : 43 Երիւն տեսնող կինն կը բժշկէ , 49 Ե՛ն Յայրոսի մեռեալ աղջիկն կապրեցնէ :

1 Եւ եղև յետ այնորիկ՝ և ինքն շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս ,

1 Եւ ներանից եւս էլաւ՝ որ նա մանէր գալիս քաղաքներն և գիւ-

(19) Սաղ . խդ . 5 : (20) ա Յհ . ա . 14 : (21) Մարկ . բ . 2 : Մարկ . բ . 5 : (22) Մարկ . բ . 8 : Մարկ . բ . 7 : (23) Մարկ . բ . 22 : Մարկ . ե . 34 : ժ . 52 : Ղուկ . է . 48 : ժը . 42 :

Digitized by Google

քարոզէր և աւետարանէր զարքայութիւն Աստուծոյ . և երկոտասանքն ընդ նմա ,

2 Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայտց չարաց և ի հիւանդութեանց . Մարիամ՝ որ կոչէր Magdաղենացի , յորմէ եօթն դեւն ելեալ էր ,

3 Եւ Յովհաննա կին Խուզայ՝ հազարապետին Հերովդի , և Հռուշան , և այլք բազումք , որք պաշտէին զնա յընչից իւրեանց :

4 Եւ ի ժողովել բազում ժողովրդոց , և ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա՝ ասէ առակաւ :

5 Ել սերմանացան սերմանել զսերմանիս իւր . և ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ՝ և եղև կոխան , և թռչունք երկնից կերան զնա :

6 Եւ այլն անկաւ յապառաժի . և ընդ բուսանելն՝ չորացաւ առ ի չգոյէ հիւմոյ :

7 Եւ այլն անկաւ ի մէջ փշոց , և ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա :

8 Եւ այլն անկաւ յերկիր բարի և պարարտ . և բուսեալ՝ արար պտուղ հարիւրապատիկ . զայս ըստ իւրում խօսեցաւ , ասէ . Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ :

9 Հարցանէին զնա աշակերտքն՝ թէ զի՞նչ իցէ առակն :

10 Եւ նա ասէ . Ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս արքայութեան Աստուծոյ , բայց այլոցն առակօք . զի տեսցեն՝ և մի՛ տեսցեն , և լսիցեն՝ և մի՛ իմացին :

11 Այց առակն այս ինչ է . սերմն բանն Աստուծոյ է :

ղերն , քարոզեալքն և Աստուծոյ արքայութիւնքն աւետարանեալքն . և են սոքա որ երկուքն էլ նորա հետ ,

2 Եւ քանի մի կանայք՝ որ էին ի դեւերից և հիւանդութիւններից բժշկեալք էին[1] . Մարիամն՝ որ Magdաղենացի էր կոչեալ , որ նորանից եօթն դեւ էին դուրս եկել[2] ,

3 Եւ Յոհաննան՝ Հերովդէսի անտես Խուզայի կինն , և Հռուշանն , և շատ ուրիշներ , որ իրանց ապրանքներից նորան ծառայութիւն էին անում :

4 Եւ երբոր շատ ժողովուրդներ հաւաքվեցան , և ամէն մէկ քաղաքներից նորա մօտ եկին՝ առակով ասաց[3] :

5 Մի՛ն սերմ ցանօղ մարդ դուրս գնաց՝ որ իրան սերմանելքն ցանէ . և իրան սերմելոյ ժամանակին՝ կար որ ճանապարհի վերայ ընկաւ՝ և կոխվեցաւ , և երկնքի թռչուններն ըրն նորան կերին :

6 Եւ մէկելն քարքարուտ տեղ ընկաւ . և բուսանելոյ ժամանակին՝ չորացաւ հողի պակասութեան պատճառովն :

7 Եւ մէկելն փշերի մէջն ընկաւ , և փշերն նորա հետ բուսան՝ և խեղդեցին նորան :

8 Եւ մէկելն բարի և պատրաստ երկրի վերայ ընկաւ . և բուսաւ՝ և հարիւրապատիկ պտուղ տուաւ . երբոր էս խօսեց , ասաց . Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ :

9 Հաշակերտներն նորան հարցնում էին՝ թէ ի՞նչ է էն առակն[4] :

10 Եւ նա ասաց . Ձեզ տրվված է Աստուծոյ արքայութեան խորհուրդները գիտել , բայց ուրիշներին առակներով . որ տեսնեն՝ և չի տեսնեն , և լսեն՝ և չիմանան[5] :

11 Մի՛սն էս առակն էս է . սերմն Աստուծոյ բանն է[6] :

(1) Մարկ . ի՛է . 55 , 56 . (2) Մուխ . ժգ . 9 : (3) Մարկ . ժգ . 3 : Մուխ . գ . 1 : (4) Մարկ . ժգ . 10 : Մուխ . դ . 10 : (5) Եսայ . զ . 9 : Մուխ . դ . 12 . (6) Մարկ . ժգ . 18 : Մուխ . դ . 14 :

Digitized by Google

12 Եւ որք առ ճանապարհաւն, որոյ եղիցի՛ն որ լսիցեն. և ապա Աստուածայ՝ հանե զբանն ի սրտից նոցա, զի մի՛ հաւատացեալ՝ և ապրեսցին։

13 Եւ որք յապառաժին, որք յորժամ լսիցեն՝ խնդութեամբ ընդունին զբանն, և արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ մի հաւատան, և ի ժամանակի փորձութեան հեռանան։

14 Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ խրթև լսեն զբանն՝ և ի հոգս և ի մեծութիւն և ի ցանկութիւն աշխարհիս զգաղեալ հեզձնուն, և անպտուղ լինին։

15 Իսկ որ յերկիրն պարարտ, որք յորց խրթոք և զուարթագին սրտիւ լսեալ զբանն՝ ընդունին, և տան պտուղ համբերութեամբ։

16 Ոչ ոք լուցանէ ճրագ և թաքուցանէ ընդ կարասեաւ՝ կամ դնէ ընդ մահճաւք, այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որ մտանեն՝ զլոյս տեսցեն։

17 Ոչինչ ծածուկ՝ որ ոչ յայտ լիցի. և ոչ գաղտնի՝ որ ոչ ծանիցի, և եկեսցէ ի յայտ։

18 Տեսէք այսուհետև զիա՛րդ լսէքդ. զի որ գուցէ՝ տացի նմա, և որ ոչն գուցէ՝ և զոր կարծէն թէ ունիցի, բարձցի ի նմանէ։

19 Եկին առ նա մայրն և եղբարք իւր, և ոչ կարէին հասանել ի նա վասն բազմութեանն։

20 Ի՛զդ եղև նմա և ասեն. Ա՛յր քո և եղբարք քո կան արտաքոյ՝ և կամին զքեզ տեսանել։

12 Եւ որ ճանապարհի վերայ են, նորանք են որ լսեալին. և ապա Սատանան գալիս է՝ բանըն նորանց սրտից հանուելէ, որ չը՛հաւատան և ապրին։

13 Եւ որ քարքարուտի վերայ են, նորանք են որ երբոր լսեն՝ բանըն ուրախութենով ընդունուելին, և արմատ (ւեօտ) չեւնին. նորանք մին ժամանակ հաւատուելին, և փորձութեան ժամանակուն հեռանուելին։

14 Իսյց էն՝ որ փըշերի մէջն ընկաւ, նորանք են՝ որ երբոր բանըն լսեալին՝ հոգսերով և մեծութենով և աշխարհքի ցանկութիւններով զբաղուած՝ խեղդուելին, և պտուղ չեն տալիս։

15 Իսյց էն՝ որ պարարտ երկրին վերայ (ընկաւ), նորանք են՝ որ բարի և յօժար սրտով բանըն լըսեալին՝ և ընդունելին, և համբերութենով պտուղ են տալիս։

16 Ո՛չ ոք ճրագ չի վառիլ և ամանի տակ թաքցնիլ՝ կամ մահիճի (խրեվաթի) տակ դնիլ, բայց ճրագակալի վերայ կըդնէ, որ նորանք՝ որ ներս են մտնում՝ լոյս տեսանեն՝։

17 Իսկի ծածուկ բան չը՛կայ՝ որ չը՛յայտնըվի[8]. և ոչ թաքուն բան՝ որ չիմացվի, և դէպի լոյսն գայ։

18 Ի՛պա տեսէք՝ թէ դուք ինչպես էք լսում. ինչուար՝ ով որ ունի, նորան կըտըվվի, և ով որ չունի՝ էն էլ որ կարծումէ՝ թէ ունի, նորանից վեր կառնըվի[9]։

19 Ի՛նորա մայրն և նորա եղբարքըն նորա մօտ եկին[10], և չէին կարում նորա մօտ հասանել (մարդկանց) բազմութեան պատճառովն։

20 Ի՛նորան իմաց արին և ասացին. Ի՛նո մայրդ և քո եղբարդք դուրսն կանգնած են՝ և ուզումեն քեզ տեսնել։

(7) Մատ. ե. 15։ Մրկ. դ. 21։ Ղուկ. ժա. 33։ (8) Մատ. ժ. 26։ Ղուկ. ժբ. 2։ (9) Մատ. ժգ. 12։ ԺԳ. 29։ Ղուկ. ժԲ. 26։ (10) Մատ. ժբ. 46։ Մրկ. գ. 31։

Digitized by Google

21 Եւ ասէ ցնոսա. Այսր իմ եւ եղբարք իմ սոքա են՝ որ զբանն Աստուծոյ լսեն եւ առնեն:

22 Եւ եղեւ ի միում աւուրց ինքն եւ ի նաւ՝ եւ աշակերտքն նորա, եւ ասէ ցնոսա. Եկեսցուք անցցուք յայնկոյս ծովակին. եւ գնացին:

23 Եւ մինչդեռ նաւէին՝ ի քուն եմուտ. եւ էջ մրրիկ հողմոյ ի ծովակին՝ եւ սուննայր, եւ ստգնապէին:

24 Այսուհետեւ զարթուցին զնա եւ ասեն. Վարդապետ վարդապետ՝ կորնչիմք աւասիկ. եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն եւ խռովութեան ջուրցն՝ եւ հանդարտեցին, եւ եղեւ խաղաղութիւն:

25 Ասէ ցնոսա. Ո՞ւր են հաւատք ձեր. եւ զայն հարեալ զարմացան, եւ ասէին ցմիմեանս. Ո՞վ արդեօք իցէ սա՝ զի եւ հողմոց եւ ջրոց հրամայ ասէ, եւ լսեն նմա:

26 Եւ նաւեցին իջին յաշխարհն Գերգեսացւոց. որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ:

27 Եւ ընդ ելանելն նորա ի ցամաքն, պատահեաց այր մի ի քաղաքէն՝ յորում էին դեւք. եւ բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ, եւ ոչ ի տան բնակեալ, այլ ի գերեզմանս:

28 Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց եւ անկաւ առաջի նորա, եւ ասէ մեծաձայն. Ո՞ւմ կայ իմ եւ քո Յիսուս Որդի Աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ՝ մի՛ տանջեր զիս:

29 Վասնզի հրամայեաց այսր այսոցն պղծոյ ելանել ի մարդոյ անտի. զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, եւ կապէր ի շղթայս, եւ պահէր յերկաթս, եւ խզէր զկապեալսն

21 Եւ նորանց ասաց. Իմ մայրը և իմ եղբարքս սորանք են, որ Աստուծոյ խօսքըն լսումեն և անում.

22 Եւ ելաւ օրերից մընաւ որ ինքն նաւ մտաւ, և նորա աշակերտներն էլ. և նորանց ասաց[11]. Եկէք անց կենանք ծովակի ետևը. և գնացին:

23 Եւ դեռ որ նաւում գնում էին նա քուն մտաւ. և քամի մրրիկ ընկաւ էն ծովակի մէջ և (նաւը) բարձրանում էր, և նեղութեան մէջ էին:

24 Մօտ եկին, նորան զարթնեցրին և ասացին. Վարդապետ վարդապետ՝ ահա կորչում ենք. և նա վերկացաւ, և քամին և ջրի ալեկոծութեանն սաստեց և հանգարտեցին, և խաղաղութիւն էլաւ:

25 Ասաց նորանց. Ո՞րտեղ մեզ չէ ձեր հաւատքն. և խիստ վախեցած զարմացան, և իրար ասում էին. Սա ո՞վ պիտի լինի՝ որ քամիներին և ջրերին հրամայ է տալիս, և նորան վճռանվում սորան:

26 Եւ նաւով գնացին, հասան Գերգեսացոց աշխարհն[12] որ կը կողմն է Գալիլեայի դիմացն:

27 Եւ երբոր նա դուրս էր գալիս ցամաքն, քաղաքից մին մարդ պատահեց նորան՝ որ նորանում դեւեր կային. և շատ ժամանակ շոր չէր հագած՝ և ոչ տան մէջ բնակվածէ, այլ գերեզմաններումն:

28 Եւ Յիսուսին որ տեսաւ, աղաղակեց և նորա առաջին ընկաւ, և բարձր ձայնով ասաց. Ի՞նչ ի՞նչ բան կայ ինձ հետ՝ Յիսուս Աստուծոյ Որդի Աստուծոյ Բարձրեալ. աղաչումեմ քեզ՝ մի՛ տանջեր ինձ:

29 Զատճառնոր՝ նա պիղծ դեին հրաման էր տալիս որ էն մարդուցն դուրս գայ. ինչուր՝ շատ անգամ յափշտակել էր նորան, և շղթաներով (պնդելով) կապվումէր,

(11) Մարկ. Ը · 23 : Մաթէ. գ · 35 : (12) Մարկ. Ը · 26 : Մաթէ. Դ · 1 :

Digitized by Google

պանան , և վարձք ՚ի դիւէն յա-
ղագաստս :

30 Եհարց ցնա Յիսուս՝ և ասէ ·
Ո՞ր[illegible] անուն է քեզ · և նա ասէ ,
Լեգէոն · զի դեւք բազումք մտեալ
էին ՚ի նա :

31 Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրա-
մայեսցէ նոցա երթալ յանդունդս :

32 Եւ էր անդ երամակ մի խոզից
բազմաց արօտական ՚ի լերինն , և
աղաչէին զնա՝ զի հրամայեսցէ
նոցա մտանել ՚ի նոսա · և հրամայ-
եաց նոցա :

33 Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին
՚ի խոզսն . և դիմեաց երամակն
՚ի գահէ անտի ՚ի ծովակին՝ և հեղ-
ձաւ :

34 Իրբև տեսին խոզարածքն զիր-
սն որ եղեն՝ փախեան , և պատ-
մեցին ՚ի քաղաքին և յագարակսն :

35 Եւ իրբև ելին տեսանել ըզ-
գործսն , և եկին առ Յիսուս , և
գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ է-
ին , զգեցեալ և զգաստացեալ ներս-
աւղբ առ ոտս Յիսուսի · և երկ-
եան :

36 Պատմեցին նոցա՝ որոց տեսեալն
էր թէ զիա՛րդ փրկեցաւ դիւահարն :

37 Եւ աղաչէր զնա ամենայն բազ-
մութիւնն շուրջ զվաշտսդքն Գեր-
գեսացւոց՝ գնալ ՚ի սահմանաց նո-
ցա , քանզի ահիւ մեծաւ տագնա-
պէին · և նա մտեալ ՚ի նաւ՝ դար-
ձաւ անդրէն :

38 Ոդաչէր զնա այրն՝ ուստի դեւք
ըզնա ելեալ էին , շնջել ընդ նմա .
արձակեաց զնա՝ և ասէ .

39 Դարձ ՚ի տուն քո , և պատմեա
զոր մեծագոյ արար քեզ Աստուած .
և երկաքնեաց մեջ պահվուելիք , և
նա կապանքներըն կարուելիք , և դե-
իցն քաշվուելիք անսպասելի տեղ :

30 Յիսուս նորան հարցրուց՝ և ա-
սաց . Ո՞ր անունդ ինչ է . և նա
ասաց . Լեգէօն , ինչուր՝ շատ դե-
ւեր էին մտած նորա մեջ :

31 Եւ աղաչում էին նորան՝ որ չը-
հրամայէ նորանց գնալ անդունդն[13] :

32 Եւ հենտեղ շատ խոզերի մին
երամակ (նախրու) կար՝ որ էն տա-
րին վերայ արածում էին , և աղաչե-
ցին նորան՝ որ հրամայի տայ իրանց
մտնել նորանց մեջ . և հրամայեց
նորանց :

33 Եւ դեւերն էն մարդուցն դուրս
եկին՝ և խոզերին մեջ մտին . և ե-
րամակն էն բարձր տեղիցն վազեց
ծովակին մեջ և խեղդվեցաւ :

34 Երբոր խոզարածներն տեսին
էն բաներըն՝ որ եղան , փախան , և
էն քաղաքի և շէնների մեջն պատ-
մեցին :

35 Եւ երբոր (մարդիք) դուրս է-
լան էն բաներըն տեսնելոյ , և Յի-
սուսի մօտ եկին , էն մարդըն գտին՝
որ նորանից դեւերն դուրս էին ե-
կել , որ հագված և խելքն դլուխն
եկած՝ Յիսուսի ոտներին մօտ նըս-
տած էր . և վախեցան :

36 Լուրանք՝ որ տեսել էին , պատ-
մեցին նորանց , թէ ինչպէս փրկվե-
ցաւ էն դիւահարն :

37 Եւ Գերգեսացոց ամէն չորս
կողմերն էլած մարդիքն աղաչում-
էին[14] նորան՝ որ իրանց սահմաննե-
րից գնայ[15] , պատճառն որ՝ սաստիկ
ահով և վախով բռնըված էին . և
նա նաւ մտաւ՝ և յետ դարձաւ :

38 Էն մարդն՝ որ նորանից դևե-
րըն դուրս էին եկել , նորան աղա-
չում էր՝ որ նորա հետ մնի գայ[16] .
արձակեց նորան՝ և ասաց .

39 Դարձիր քո տունդ , և պատ-
միր ամէն ինչ որ Աստուած քեզ

(13) Յայտ . ի · 3 : (14) Մտթ . ը · 34 : (15) Գործ . ժգ · 39 : (16) Մտթ . ի · 28 :

Digitized by Google

գնաց ՚ի քաղաքն՝ և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս ։

40 Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս , ընկալաւ զնա ժողովուրդն . քանզի ամենեքեան ակն ունէին նմա ։

41 Եւ ահա եկն այր մի՝ որում ա- նուն էր Յայրոս , և նա էր իշխան ժողովրդեանն . անկեալ առ ոտս Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ՚ի տուն նորա ։

42 Զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրև երկոտասանից , և էր մերձ ՚ի մահ . և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա ։

43 Եւ կին մի էր ՚ի տեառնէստե- ղեան արեան ամաց երկոտասանից , որ ՚ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր . որում ոչ էր լեալ կարող յումեքէ բժշկիլ ։

44 Ա՝ատուցեալ յետոյ մերձեցաւ ՚ի քղանցս հանդերձի նորա . և նոյն ժամայն եկաց բղխումն արեան նո- րա ։

45 Եւ ասէ Յիսուս . Ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս . իբրև ամենեքեան ուրանային , ասէ Պետրոս՝ և որ ընդ նմա էին . Ա՝րգապետ՝ ժողովուրդք ազդեն և նեղեն զքեզ ։

46 Եւ ասէ Յիսուս . Ոմն մերձե- ցաւ յիս . քանզի գիտացի՝ եթէ զօ- րութիւն ել յինէն ։

47 Իբրև ետես կինն՝ եթէ ոչ ծած- կեցաւ ՚ի նմանէ , եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա , թէ վասն ո- րոյ իւրց մերձեցաւ ՚ի նա՝ պատ- մեաց առաջի ամենայն ժողովրդեա- նըն , և թէ որպէս բժշկեցաւ առ- ժամայն ։

48 Եւ ասէ . Ո՝ալալերեաց դուստր՝ առաւ . նա գնաց քաղաքն՝ և քարո- զումէր ինչ որ Յիսուս իրան արար ։

40 Եւ երբոր Յիսուս յետ դար- ձաւ , ժողովուրդն ընդունեց նորան . ինչուորՙ ամէնքն էլ սպասումին նո- րան ։

41 Եւ ահա մին մարդ եկաւ՝ որ նորա անունն Յայրոս էր , և նա ժո- ղովարանի իշխան էր[17] . Յիսուսի ոտներըն ընկած՝ աղաչումէր նորան , որ իրան տունն մտնէ ։

42 Ինչուորՙ մին միածնունդ աղ- ջիկ ունէր , իբր տասներկու տարե- կան , և նա մեռնելոյ մօտ էր . և նո- րա գնալոյ ժամանակն՝ ժողովուրդ- ներն նեղացնումէին նորան ։

43 Եւ մին կին կար արիւն քա- փելոյ հիւանդութեան մէջ տասներ- կու տարուց՝ որ իրան ամէն ապրանք- ներըն բժշկներին էր տուել՝ փո- ճացրել[18] . որ նորան ինար չէր կ- լած՝ մըն ինչ բժշկվելոյ ։

44 Ա՝ա մօտ եկաւ , և եւսիթըն նո- րա շորի ծայրերին (փեշերին) դի- պաւ . և շուտավ հենց էն ժամումն (ատհլոնին) նորա արիւնի վազելն դադարեց ։

45 Եւ Յիսուս ասաց . Ո՞վ է՝ որ ինձ դիպաւ . երբոր ամէնքն ուրա- նումէին , Պետրոս և նորանք որ նորա հետ էին՝ ասացին . Ա՝րդա- պետՙ ժողովուրդներդ պնդումեն և նեղացնումեն քեզ ։

46 Եւ Յիսուս ասաց . Ա՝ինն դի- պաւ ինձ . ինչուորՙ իմացայ՝ որ զօ- րութիւն դուրս եկաւ ինձանից[19] ։

47 Երբոր կինն տեսաւ՝ որ չէ՛ ծածկըվեցաւ նորանից , դողալով ե- կաւ՝ և նորա առաջին ընկաւ , և ամէն ժողովրդի առաջին պատմեց՝ թէ ինչ բանի համար նորան դիպաւ , և թէ ինչպէս հենց էն ժամումն բժշկվեցաւ ։

48 Եւ (նա) ասաց . Աբրապէնդ

(17) Մարկ . Բ . 18 ։ Մարկ . Ե . 22 ։ (18) Մարկ . Բ . 20 ։ (19) Մարկ . Ե . 30 ։ Ղուկ . Զ . 19 ։

Digitized by Google

Հաւատաք քո կեցուցին զքեզ , Սրթ ի խաղաղութիւն :

49 Եւ մինչդեռ նա խօսէր , գայ ոմն ի տանէ ժողովրդապետին , և ասէ ցնա . Մեռաւ դուստրն քո , մի՛ ինչ աշխատ առներ զդա :

50 Իսկ Յիսուս իբրև լուաւ , պատասխանի ետ նմա՝ և ասէ . Մի՛ երկնչիր , միայն հաւատա՛ և կեցցէ :

51 Եւ մտեալ ի տունն՝ ոչ ոք եթող մտանել , բայց միայն զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս , և զհայր մանկանն և զմայր նորա :

52 Լային ամենեքեան՝ և կոծէին զնա . և նա ասէ , Մի՛ լայք՝ զի չէ մեռեալ , այլ ննջէ :

53 Եւ նորա ծաղր առնէին զնա , զի գիտէին՝ թէ մեռաւ :

54 Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս ,

55 կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ . Աղջի կաց մնդկ դու :

56 Եւ դարձաւ ոգի նորա , և կանգնեցաւ վաղվաղակի . և հրամայեաց տալ նմա ուտել :

57 Եւ զարմացան ծնօղքն նորա . և նա պատուիրէր մի՛ ումեք ասել՝ որ ինչ եղեւն :

կաց դուստր՝ քո հաւատքդ ողջացուց քեզ , գնա խաղաղութեամբ :

49 Եւ դեռ որ նա խօսումէր , էն ժողովրդապետի տանից մին մարդ եկաւ , և նորան ասաց[20] . Աղջկդ մեռաւ , էլ դուրան մի՛ աշխատացնիր :

50 Յայց Յիսուս երբոր լսեց , նորան պատասխան տուաւ և ասաց . Մի՛ վախենար , միայն հաւատա՛ և նա կապրի :

51 Եւ տունն որ մտաւ՝ իսկի մըննին չը՛թողց որ մտնէ , բայց միայն Պետրոսին , և Յակոբին և Յոհաննէսին , և երեխայի հօրն և նորա մօրն :

52 Լմինքն լաց էին լինում՝ և նորա վերայ սուգ էին անում . և նա ասաց , Լաց մի՛ լինիք , ինչուր՝ մեռած չէ , այլ քնած է[21] :

53 Եւ նորանք ծաղր էին անում նորան , ինչուր՝ գիտումէին , որ մեռաւ :

54 Եւ նա ամենին դուրս հանեց ,

55 Նորա ձեռքէն բռնեց , խօսեց և ասաց . Ա՛վ երեխայ՝ վեր կաց[22] , կանգնիր :

56 Եւ նորա հոգին դարձաւ , և շուտով կանգնեց . և հրամայից՝ որ նորան բան տան ուտելոյ :

57 Եւ նորա ծնօղքն զարմացան . և նա պատուիրումէր՝ որ իսկի մըննին չասեն էն՝ ինչ որ էլաւ[23] :

(20) Մաթ . է . 35 : (21) Յովհ . ժա . 11 . 13 : (22) Գոր . է . 14 : Յովհ . ժա . 43 : (23) Մաթ . ը . 4 : Բ . 30 : Մաթ . է . 43 :

Digitized by Google

ԿՒ. Ի

1 Աշակերտներն հրաւէր գործելոյ և քարոզելոյ կուղարկին : 7 Երեսէս Հերովդէս իշխան բուժի որ տեսանէ : 17 Հրեշտաւոր հինգ հազար մարդկանց կերակրացնէ . 18 եղերացնէ աշակերտներին թէ ժողովուրդն իրան համար ո՞վ են ասեն . 22 Իրան չարչարանքներն ա ուրուց կասէ . 23 Նորանց առաջն դնէ մէ որ իրան հետէն գնացողներն իրանց անձն ուրանան և իրանց խաչն առնեն և իրան հետէն գնան : 28 Իրան կերպարանքի փոխուիլն . 37 Աստուան կերժշկէ . 43 Մինէ կերեսի իրան աշակերտներին՝ իրան քարոզելոյ չարչարանքներն վերայ . 46 Իրան աշակերտներին խոնարհութիւն կերքարոզէ . 51 Ե պատուէր կուտայ նորանց որ ամէն մարդ սիրեն , և ոխ հանող չըլլիին . 57 Մէն քանի մարդ մին մին պատճառով Հրեսաւոյ հետէն գնալ են ուզում :

1 Ե կոչեցեալ զերկոտասան աշակերտսն , եւ նոցա զօրութիւն և իշխանութիւն ՚ի վերայ ամենայն դիւաց , և բժշկել զհիւանդութիւնս :

2 Եւ առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ , և բժշկիել զախտաւորեսն :

3 Եւ ասէ ցնոսա . Ա՛ր ինչ բառնայք ՚ի ճանապարհ . մի՛ գաւազան և մի՛ մախաղ , մի՛ հաց և մի՛ արծաթ , մի՛ երկուս հանդերձս ունիցիք :

4 Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ աղջիք , և անտի գնայցէք :

5 Եւ որք ոչ ընդունիցին զձեզ , յորժամ ելանիցէք ՚ի քաղաքէն յայնմանէ , զփոշի ոտից ձերոց թօթափեսջիք ՚ի վկայութիւն նոցա :

6 Եւ ելեալ շրջէին ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ աւետարանէին , և բժշկէին ընդ ամենայն տեղիս :

7 Լուաւ Հերովդէս չորրորդապետ զգործսն ամենայն . և զարմանայր վասն ասելոյն յոմանց .

8 Թէ Յովհաննէս յարեաւ ՚ի

1 Ե տասներկու առաքեալներին կանչեց , և նորանց զօրութիւն և իշխանութիւն տուաւ ամէն դևերին վերայ , և հիւանդութիւններ բժշկելոյ[1] :

2 Եւ նորանց ուղարկեց՝ որ Աստուծոյ արքայութիւնն քարոզեն . և ցաւագարներըն բժշկեն[2] :

3 Եւ նորանց ասաց . Ոսկի մի բան վեր չառնէք ճանապարհի համար . ո՛չ գաւազան , ո՛չ պարկ , ո՛չ հաց և ո՛չ արծաթ , երկու հագուստ էլ չունենաք[3] :

4 Եւ որ տուն որ մանէք՝ էնտեղ մնացէք , և էնտեղիցըն գընացէք[4] :

5 Եւ նորանք՝ որ ձեզ չընդունին[5] , երբոր էն քաղաքիցն գուրս կըգնաք , ձեր ոտներէն փոշին թափ տուէք՝ որ նորանց վկայութիւն լինի[6] :

6 Եւ դուրս գնացին և մտին էին գալիս քաղաքներն և գիւղերն՝ աւետարանըն քարոզումին , և ամէն տեղ բժշկութիւն էին անում[7] :

7 Հերովդէս չորրորդապետըն էն ամէն գործքերըն լսեց[8] . և զարմանում էր նորա համար՝ որ մին քանիսն ասում էին .

8 Թէ Յովհաննէս մեռելներէ մի-

(1) Մտթ . ժ . 1 : Մրկ . գ . 13 : Ղ . 7 : (2) Մտթ . ժ . 7 , 8 : Մրկ . Ղ . 12 : Ղ՚ա՛ . ժ . 1 . 9 : (3) Մտթ . ժ . 9 : Մրկ . Ղ . 8 : Ղ՚ա՛ . ժ . 4 : Ր . 35 : (4) Մտթ . ժ . 11 : Մրկ . Ղ . 10 : (5) Մտթ . ժ . 14 : (6) Դործ . ժգ . 51 : (7) Մրկ . Ղ . 12 : (8) Մտթ . ժգ . 1 : Մրկ . Ղ . 14 :

Digitized by Google

ՎՀԱՆՆԷՍ , և յոմանց՝ Թէ Եղիա յայտնեցաւ , և յայլոց՝ Թէ Մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ ։

9 Ա՛յլ Հերովդէս . ԶՈվհաննես ես գլխատեցի . իսկ սա ո՞վ է՝ զոր զայսպիսի իրս լսեմ . և խնդրէր տեսանել զնա ։

10 Դարձան առաքեալքն , և պատմեցին նմա զամենայն՝ զոր արարին . և առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն ՚ի տեղի անապատ քաղաքի մի՛ , որում անուն էր Ը՛թսայիդա ։

11 Եւ ժողովուրդքն իբրև գիտացին , գնացին զետ նորա . և ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ նոսա վասն արքայութեան Ա՛ստուծոյ , և զոմն պէտք էին բժշկութեան՝ բժշկէր ։

12 Եւ օրն սկսաւ տարաժամել . մօտեան երկոտասանքն և ասեն ցնա . Ա՛ձակեա՛ զժողովուրդսդ , զի երթեալ շուրջ ՚ի գիւղսն և յարգարակս՝ հանգիցեն , և գտցեն կերակուր . զի աստ յանապատի տեղւոջ եմք ։

13 Ա՛յն ցնոսա . Տո՛ւք տուք գոյս ուտել . և նոքա ասեն . Ո՛չ զոյ մեզ աւելի քան զհինգ նկանակ և զերկուս ձկունս , բայց եթէ երթիցուք գնեսցուք բաւական ժողովրդեանդ կերակուր ։

14 Ո՛ւանզի էին արք իբրև հինգ հազար . ասէ ցաշակերտան . Ո՛ւղղեցո՛ք զգուստ գուստ գուստ՝ յիսուն յիսուն ։

15 Եւ արարին այնպէս , և բազմեցուցին զամենեսեան ։

16 Եւ առեալ զհինգ նկանակն և զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս , օրհնեաց և երբե՛կ՝ և տայր աշակերտացն դնել առաջի բազմութեան ։

17 Եւ կերան ամենեքին և յագեցան , և վերացուցին զաւելորդսն նոցա՝ տասն զամաս ։

18 Եւ եղև՝ մինչդեռ աղօթէր առանձինն՝ էին աշակերտքն ընդ նմա , և հարցանէր զնոսա՝ ասելով . Զո՞վ զիս ասեն ամբոխքն թէ եմ ։

19 Եւ նոքա պատասխանի տուեալ ասեն . Յովհաննէս Մկրտիչ , և այլք՝ Եղիա , և այլք՝ Թէ Մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ ։

20 Եւ նա ասէ ցնոսա . Դուք զիս ո՞վ ասէք թէ եմ . պատասխանի տուեալ Պետրոս ասէ . ԶՔրիստոս Աստուծոյ ։

21 Եւ նա պատուիրեաց նոցա՝ և հրամայեաց ոչ ումեք պատմել զայդ ։

22 Ասելով . Թէ պարտ է զՈրդի մարդոյ բազում չարչարանս կրել , և մերժեալ լինել յերիցանց և ՚ի մեծամեծաց քահանայապետացն և ՚ի դպրացն , և սպանանել , և յերրորդում աւուրն յարիցէ ։

23 Եւ ասէր ցամենեսեան . Եթէ ոք կամի զհետ իմ գալ՝ ուրասցի զանձն իւր , և առցէ զխաչ իւր զամենայն աւուր , և հետեւեսցի ինձ ։

24 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա . և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ նա կեցուսցէ զնա ։

25 Զի զի՞նչ օգուտ է մարդոյ , եթէ զամենայն աշխարհ շահեսցի , և զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցէ ։

26 Զի որ ամաչեսցէ զիս և զբանս իմ՝ յայդմ ազգի պոռնկի և մեղաւոր՝ և Որդի մարդոյ ամաչեսցէ զնա , յորժամ եկեսցէ ՚ի փառս Հաւր իւրոյ և սրբոց հրեշտակաց ։

27 Ասեմ ձեզ ճշմարտապէս , եթէ կան ոմանք յայսոսիկ որ կայցեն աստ , որ ո՛չ համտեսցեն զմահ , մինչև տեսցեն զարքայութիւն Ա՛ստուծոյ ։

28 Եւ եղև յետ այսոցիկ բանից իբրև ութ աւուրք , առեալ զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս՝ ել ՚ի լեառն աղօթել ։

29 Եւ եղև՝ մինչդեռ աղօթէր՝ փոփոխեցաւ տեսիլ երեսաց նորա , և հանդերձ նորա սպիտակ եղև փայլակնաւոր ։

30 Եւ ահա երկու արք խօսէին ընդ նմա , որ էին Մովսէս և Եղիա ։

31 Որ երեւեալ փառօք՝ ասէին զբաղումն նորա զկատարածն , զոր պիտի կատարել ՚ի Երուսաղէմ ։

32 Եւ Պետրոս և որ ընդ նմա էին՝ ծանրացեալ էին քնով . և արթնացեալ տեսին զփառսն նորա , և զերկուս արս որ կային ընդ նմա ։

33 Եւ եղև՝ մինչդեռ բաժանէին նոքա յնմանէ՝ ասէ Պետրոս ցՅիսուս . Վարդապե՛տ , բարի է մեզ աստ լինել , և արասցո՛ւք երիս տաղաւարս , մի՛ քեզ և մի՛ Մովսիսի և մի՛ Եղիայի . զի ո՛չ գիտէր զինչ ասէր ։

34 Եւ մինչդեռ զայդ խօսէր՝ եղև ամպ և ստուերեաց նոցա . և երկեան՝ մտանելով նոցա ՚ի ամպն ։

35 Եւ ձայն եղև ՚ի միջոյ ամպոյն՝ ասելով . Սա է Որդի իմ սիրելի , զնա՛ լուարուք ։

36 Եւ ՚ի լինել ձայնին՝ գտաւ Յիսուս միայն . և նոքա լռեցին , և ո՛չ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ զամենայն զոր տեսին ։

37 Եւ եղև յաւուրսն յետնումս՝ իջեալ նոցա ՚ի լերինն , ընդառաջ եկն նոցա բազում ժողովուրդ ։

38 Եւ ահա այր ոմն ՚ի ժողովրդենէն գոչեաց՝ ասելով . Վարդապե՛տ , աղաչեմ զքեզ՝ նայեաց ՚ի որդի իմ , զի միածին է ինձ ։

39 Եւ ահա ոգի առնու զնա , և յանկարծ գոչէ , և խարխափէ զնա հանդերձ փրփրելով , և ընդդիմանալով ՚ի ծանր ՚ի վերայ հարանալ զնմանէ ։

40 Եւ աղաչեցի զաշակերտսդ քո՝ հանել զնա , և ո՛չ կարացին ։

41 Եւ պատասխանի տուեալ Յիսուս ասէ . Ո՛վ ազգ անհաւատ և ծուռ , մինչև յե՞րբ ընդ ձեզ եղէց և համբերեցից ձեզ . մատո՛ զորդի քո հոս ։

42 Եւ մինչդեռ մատուցանէր զնա՝ ընկէց զնա դեւն , և խարխափեաց զնա . և հանդերձ փրփրելով ընդդիմանալով ՚ի ծանր ՚ի վերայ հարանալ զնմանէ ։

43 Եւ զարհուրեցուցանէր զամենեսեան զհզօրութիւն Ա՛ստուծոյ ։

44 Եւ մինչդեռ զամենեսեան զարհուրեցուցանէին ամենայն գործք զոր արարանէր Յիսուս՝ ասէ ցաշակերտսն իւր .

(9) Ղկ · ի · 7 · (10) Մտթ · ղ · 20 · (11) Մտթ · ժդ · 13 · (12) Մտթ · ժդ · 15 · Մտթ · ղ · 35 · Յովհ · ղ · 1 · 5 ։

Digitized by Google

ցաշակերտան սրկանել ժողովըրդեանն :

17 Կերան և յագեցան ամենեքեան . և բարձին զնշխարս կոտրփոցն՝ երկոտասան սակառի :

18 Եւ եղև ՚ի կալն նորա յաղօթս առանձինն , էին ընդ նմա և աշակերտքն նորա . եհարց զնոսա և ասէ . Զո՞ ոք ասեն զիս էնել ժողովուրդքն՝ թէ իցեմ :

19 Եւ նոցա պատասխանի տուեալ ասեն . ԶՅովհաննէս մկրտիչ , և այլք Զնդլիա , իսկ այլք՝ թէ Ա՛րգարէ ոք յառաջնոցն յարեաւ :

20 Ա՛սէ ցնոսա . Դուք զի՞մ ոք ասէք զիս էնել՝ թէ իցեմ . պատասխանի ետ Պետրոս և ասէ . ԶՔրիստոսն Ա՛ստուծոյ :

21 Ա՛յս սաստեաց ՚ի նոսա , և պատուիրեաց մի՛ ումեք ասել զայն :

22 Եւ ասէ , թէ Պարտ է Որդւոյ մարդոյ բազումս չարչարիլ և անարգիլ ՚ի քահանայապետից և ՚ի ծերոց և ՚ի դպրաց , և սպանանիլ և յերիր աւուր յառնել :

23 Եւ ասէր առ ամենեսին , Եթէ ոք կամի զնալ իմ գալ , ուրասցի զանձն՝ և առցէ զխաչ իւր հանապազ՝ և նկեսցէ զհետ իմ :

24 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա , և որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ կեցուսցէ զնա :

25 Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշխարհ շահեսցի , և զանձն իւր կորուսցէ կամ տուժեսցի :

եր աշակերտներին՝ որ քցեն ժողովըրդին :

17 Ա՛մէնքն կերին և կշտացան . և կտորների փշրանքները վերկալան՝ տասներկու քոթոց :

18 Եւ էլաւ՝ երբոր նա առանձին աղօթք էր անում՝ նորա աշակերտներն էլ նորա հետ էին . Հարցրուց նորանց և ասաց . Զո՞վ ժողովուրդներն ինձ համար ոչ են ասում՝ որ լինիմ[13] :

19 Եւ նորանք պատասխան տըւին և ասացին . ԶՅոհաննէս մկրտիչն[14] , և ուրիշներն՝ (թէ) Եղիան , և ուրիշներն՝ թէ Ա՛ռաջին մարգարէներից մինն յարեաւ նա :

20 Նորանց ասաց . Դուք ձի՞ էք ասում ինձ համար՝ որ լինիմ . Պետրոսն պատասխան տուաւ և ասաց . Ա՛ստուծոյ Քրիստոսն[15] :

21 Նա սաստեց նորանց , և պատուիրեց՝ որ էն իսկի մէնին չասեն[16] :

22 Եւ ասաց՝ թէ Պէտք է , որ Որդին մարդոյ շատ չարչարվի և անարգվի քահանայապետներից և ծերերից և կարդացողներից , և սպանվի՝ և երեք օրուայ յարութիւն առնէ[17] :

23 Եւ ամենին ասում էր , թէ որ մինն կամենում իմ ետևէս գալ՝ թող իրան անձնն ուրանայ՝ և առնէ օր իրան խաչն առնէ՝ և իմ ետևէս գայ[18] :

24 Պատճառնոր՝ ով որ կամենայ իրան անձնն ապրեցնել՝ կկորցնէ նորան . և ով որ իրան անձնն կըկորցնէ ինձ համար՝ կապրեցնէ նորան :

25 Ի՞նչ օգուտ է մարդոյ՝ որ աշխարհըրս ստանայ , և իրան անձնն կորցնէ , կամ (նորան) ջնջած տայ[19] :

(13) Մարկ . ժգ . 13 : Մարկ . ը . 27 : (14) Մարկ . ժգ . 2 : վէր . 7 , 8 : (15) Մարկ . ժգ . 16 : Յովհ . գ . 69 : (16) Մարկ . ժգ . 20 : (17) Մարկ . ժգ . 21 : ժէ . 23 : (18) Մարկ . ժ . 38 : ժգ . 24 : Մարկ . ը . 34 : Ղուկ . ժգ . 27 : (19) Մարկ . ժգ . 26 : Մարկ . ը . 36 :

Digitized by Google

26 Ոչ՝ որ ամօթ համարեցայի զիս և զբանս իմ, զնա և Աբրդի մարդոյ յամօթ արասցէ՝ յորժամ գայցէ փառօք Իւրովք՝ և Հօր՝ և հրեշտակօց սրբոց:

27 Ասէր արգարև ասեմ ձեզ, եթէ են ոմանք ի դոցանէ որ այդր կան՝ որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսցեն զարքայութիւն Աստուծոյ:

28 Եւ եղև յետ այսց բանից իբրև աւուրք ութ, առեալ զՊետրոս և զՅակովբոս և զՅովհաննէս՝ ել ի լեառն կալ յաղօթս:

29 Եւ ի կալ նմա յաղօթս՝ եղև տեսիլ երեսաց նորա այլակերպ. և փոխեցաւ հանդերձ նորա՝ և եղև սպիտակ փայլուն:

30 Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա, որ էին Մովսէս և Եղիա,

31 Երևեալ փառօք. և ասէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ:

32 Իսկ Պետրոս՝ և որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք ի քնոյ՝ զարթեան, տեսին զփառսն նորա՝ և զերկուս արսն, որ կային առ նմա:

33 Եւ եղև ի մեկնելն նոցա ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս. Վարդապետ՝ բարւոք է մեզ առ լինել, և արասցուք երիս տաղաւարս, մի քեզ և մի Մովսէսի՝ և մի Եղիայի. և ոչ գիտէր զինչ խօսէր:

34 Եւ իբրև զայս ասաց, եկն ամպ և հովանի եղև ի վերայ նոցա. և երկնչեան ի մտանելն նոցա ընդ ամպսն:

26 Ինչուառ՝ ով որ ինձ և իմ խօսքերս ամօթ կըհամարէ՝ Որդին մարդոյ էլ նորան ամօթ կանէ՝ երբ որ իրան և Հօր և սուրբ հրեշտակների փառքովն կըգայ[20]:

27 Այլ ուղղորդն ասումեմ ձեզ. թէ Այստեղ լինողներիցըն մին քանիսն կան, որ մահ չեն տեսնիլ, մինչև որ Աստուծոյ արքայութիւնն տեսանեն[21]:

28 Եւ էլաւ՝ որ ութ օրի չափ էս խօսքերիցս եաև, Պետրոսին և Յակոբին և Յովհաննէսին առաւ՝ և վեր էլաւ մին սար աղօթք անելոյ[22]:

29 Եւ նորա աղօթք անելոյ ժամանակն՝ նորա երեսի կերպարանքն ուրիշ կերպ էլան. և նորա հագուստն փոխվեցաւ՝ և սպիտակ փայլուն էլաւ:

30 Եւ ահա երկու մարդ խօսում էին նորա հետ. որ նորանք Մովսէսն և Եղիան էին,

31 փառքով երևցած՝ և նորա վախճանին համար խօսումէին՝ որ Երուսաղէմումն պէտք էր կատարէ:

32 Այլ Պետրոսն և նորանք՝ որ նորա հետ էին՝ որ քնով ծանրացած էին, զարթնացան՝ տեսին նորա փառքըն, և էն երկու մարդն՝ որ նորա մետ կանգնած էին[23]:

33 Եւ էլաւ երբոր նորանք հեռանումին նորանից, Պետրոսն ասաց Յիսուսին. Վարդապետ՝ լաւ է, որ մենք էստեղ կենանք, և երեք տաղաւար (չատր) շինենք, մինըն քեզ համար. և մինըն Մովսէսին և մինըն Եղիային. և չէր գիտում՝ թէ ինչ էր խօսում:

34 Եւ երբոր էս ասաց, մին ամպ եկաւ և նորանց վերայ շուաք արաւ. և վախեցան, երբոր էն ամպին մէջ մտին:

(20) Մարկ. ը. 38: Մատ. ժզ. 28: Մարկ. ը. 1: (21) Մատ. ժզ. 28: Մարկ. ը. 1: (22) Մարկ. ժե. 1: Մարկ. ը. 2: (23) Ղուկ. ը. 18: ժ. 9:

Digitized by Google

35 Ձայն եղև յամպին և ասէ. Դա է Որդի իմ ընտրեալ, դմա լաւարուք:
36 Եւ ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն. և ինքեանք լռեցին, և ոչ ումեք պատմեցին յաւուրսն յայնոսիկ և ոչ ինչ յորոց տեսին:

37 Եւ եղև ՚ի վաղիւն մինչ իջանէին նոքա ՚ի լեռնէ անտի, ընդառաջ եղև նմա ժողովուրդ բազում:

38 Եւ ահա այր մի ՚ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. Ո՛վ ուրախ աղաչեմ զքեզ, հայեցիր յորդի իմ, զի միամօր է ինձ:

39 Եւ ահա այս հարկանի ՚ի նմա, և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ զնա և թաւալեցուցանէ և փրփրեցուցանէ, և հազիւ ձկնի ՚ի նմանէ խորտակեալ զնա:

40 Եւ աղաչեցի զաշակերտան քո, զի հանցեն զնա, և ոչ կարացին:

41 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ո՛վ ազգ անհաւատ և թիւր, մինչև յերբ եղեց ընդ ձեզ՝ և անձայեցեմ ձեզ. մատո այսր զորդին քո:
42 Եւ մինչդեռ մատչէր, զարկեալ զնա դևն՝ և շարժեցաւ:

43 Սաստեաց Յիսուս այսոյն ապականեալ, և բժշկեաց զմանուկն. և ետ զնա ցհայր իւր:
44 Եւ զարմանային ամենեքեան ՚ի վերայ մեծամեծացն Աստուծոյ. և ՚ի զարմանալ ամենեցուն ՚ի վերայ ամենայնի՝ զոր առնէր, ասէ ցաշակերտան իւր. Դիք դուք ՚ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի Որդի մարդոյ մատնի ՚ի ձեռս մարդկան:

35 Ձայն էլաւ ամպիցն և ասաց. Դա է իմ ընտրեալ Որդին[24] զբան ականջ դիրք[25]:
36 Եւ էն ձայնն որ էլաւ՝ Յիսուս մինակ գտաւ, և նորանք լռեաց և էն օրերումն խոսք մին մարդոյ չպատմեցին էն բանն ներիցն՝ որ տեսին[26]:

37 Եւ էլաւ էգուցվան օրեամբն՝ երբոր էն սարիցն վէր էին գալիս՝ շատ ժողովուրդ նորա առաջն եկաւ[27]:
38 Եւ ահա էն ժողովրդիցն մին մարդ աղաղակեց և ասաց. Ո՛վ տէր դառիս՝ աղաչեումէմ քեզ, նայիկ տաւար իմ որդոյս. ինչուար միածնեակ է ինձ:
39 Եւ ահա դև բռնեումէ նորան, և յանկարծ գոռգոռումէ՝ և նորան գետնով է տալիս, և թաւալցնեումէ նորան և փրփրացնեումէ, և դժուար թէ նորան կոտրատելըդ[28] եանէ հեռանեումէ նորանից:
40 Եւ քո աշակերտներին ազաչեցի, որ հանեն նորան, և չըկարացին:
41 Յիսուս պատասխան առաւ և ասաց. Ո՛վ անհաւատ և ծռազազ, մինչև երբ ձեզ հետ պիտի լինիմ և համբերեմ ձեզ. քո որդին հասեղ բեր:
42 Եւ դեռ որ մօտ էր գալիս, դևն գետնով զարկեց նորան՝ և շատ սաստիկ շարժեց:
43 Յիսուս սաստեց պիղծ դևին, և աղային բժշկեց. և նորան տաւս իրան հօրն:
44 Եւ ամէնքն զարմանումին Աստուծոյ մեծամեծ գործքերին վերայ. և դեռ որ ամէնքն զարմանումին էն ամէն բաներին վերայ՝ որ անումէր, իրան աշակերտներին ասաց. Էս բաներըս դրէք դուք ձեր ականջներն[29]. որ Որդին մարդ-

(24) Ա՚ոքր. գ. 17. (25) Գործ. գ. 22. (26) Ա՚ոքր. ժե. 9. (27) Ա՚ոքր. ժե. 14. Ա՚ոքր. թ. 14. 17. (28) Ա՚ոքր. ժե. 22.

Digitized by Google

ձելոց է ՚ի ձեռս մարդկան ։

45 Եւ նգաբ ոչ գիտէին զբանն, և էր ծածկեալ ՚ի նոցանէ՝ զի մի՛ գիտասցեն, և երկնչէին հարցանել զինս վասն բանին այնորիկ ։

46 Եմուտ խորհուրդ ՚ի նոսա՝ թէ ո՞ արդեօք մեծ իցէ ՚ի նոցանէ ։

47 Յիսուս իբրև ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա, առ մանուկ մի՛ կացոյց ՚ի մէջ նոցա առ իւր,

48 Եւ ասէ ցնոսա • Որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս ընդունի, և որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն իմ • զի որ փոքրիկն է յամենեսին ՚ի ձեզ՝ նա եղիցի մեծ ։

49 Պատասխանի ետ Յովհաննէս և ասէ • Վ՛արդապետ՝ տեսաք զոմն՝ որ յանուն քո դևս հանէր՝ և արգելաք զնա, զի ոչ շրջի ընդ մեզ ։

50 Ասէ ցնոսա Յիսուս • Մի՛ արգելուք, զի որ ոչն է ձեր թշնամի՝ ՚ի ձեր կողմն է ։

51 Եւ եղև ՚ի կատարել աւուրց վերանալոյ նորա՝ և ինքն զերեսս հաստատեաց երթալ Յերուսաղէմ ։

52 Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց իւրոց • և իբրև չոգան՝ մտին ՚ի գիւղ մի Սամարացւոց պատրաստել ինչ նմա ։

53 Եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նորա երթալ Յերուսաղէմ ։

54 Իբրև տեսին աշակերտքն Յակովբոս և Յովհաննէս, ասեն • Տէր՝

դոյ մարդկանց ձեռքն պիտի մատնիմ ։

45 Եւ նորա՛նք չէին գիտեա՛մ էն բանըն և ծածկվա՛ծ էր նորանցից՝ որ չը՛գիտենա՛ն[29] • և վախե՛ւմէին հարցնել նորան էն բանին համար ։

46 Ա՛յն խորհո՛ւրդ մտա՛ւ նորանց մէջ՝ թէ նորանցից ո՛վ լինի մե՛ծն[30] ։

47 Յիսուս երբոր նորանց սրտերի մտածմունքներըն իմացա՛՝ մին երեխայ առա՛՝ և նորանց միջումն կանգնացրուց իրան մօտ,

48 Եւ նորանց ասաց • Ո՛վ որ էս երեխայիս կընդունի իմ անունո՛վ՝ ինձ կընդունի[31] • և ո՛վ որ ինձ կընդունի՝ իմ ուղարկողին կընդունի • պատճառն որ՝ ո՛վ որ ձեր ամէնիդ մէջն շատ փոքրն է՝ նա մե՛ծ կըլինի[32] ։

49 Յոհաննէսն պատասխան արա՛ւաւ և ասաց[33] • Վ՛արդապետ՝ մի՛նը տեսինք՝ որ քո անունո՛վդ դևեր էր հանում՝ և արգելեցինք նորան, ինչո՛ւոր՝ մեզ հետ չէր գալիս ։

50 Յիսուս նորանց ասաց • Մի՛ արգելէ՛ք նորան • պատճառն որ՝ ո՛վ որ ձեր թշնամի չէ՝ ձեր կողմն է[34] ։

51 Եւ հլա՛ւ երբոր նորա վերա՛նալոյ օրերն կատարվո՛ւմէին[35], և ինքն երեսըն հաստատեց՝ որ գնայ Երուսաղէմ ։

52 Եւ իրան երեսի առաջին պատգամաւորներ ուղարկեց՝ և երբոր գնացին՝ Սամարացոց մին գիւղ մտին՝ որ նորա համար բան պատրաստեն ։

53 Եւ չընդունեցին նորան • ինչո՛ւոր՝ իրան երեսըն դրած էր՝ որ Երուսաղէմ գնայ[36] ։

54 Երբոր Յակոբոս և Յոհաննէս աշակերտներն տեսին՝ ասացին • Տէր՝

(29) Մարկ • ը • 33 ։ Ղուկ • բ • 50 ։ ժը • 34 ։ (30) Մարկ • ժը • 1 ։ Մատ • ԺԸ • 34 ։ (31) Մարկ • ժ • 40 ։ ժը • 5 ։ Մատ • ԺԸ • 37 ։ Ծովհ • ժը • 44 ։ ժգ • 20 ։ (32) Մարկ • թ • 11 , 12 ։ (33) Ծնոթ • ժա • 28 ։ Մատ • ԺԸ • 38 ։ (34) Մարկ • ժը • 38 ։ Ղուկ ժա • 23 ։ (35) Մատ • ժգ • 19 ։ Գործ • ա • 2 ։ (36) Ծովհ • դ • 4 • 9 ։

Digitized by Google

կամիմ , զի ասասցուք , և իջցէ հուր յերկնից՝ և սատակեսցէ զնոսա :

55 Դարձաւ սաստեաց ՚ի նոսա՝ և ասէ . Ո՛չ գիտէք՝ որոյ հոգւոյ էք դուք :

56 Որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կեցուցանել . և գնացին յայլ գիւղ :

57 Եւ մինչդեռ երթային նոքա ՚ի ճանապարհի , ասէ ոմն ցնա . Եկից զքէնի քո՝ յոր վայր և երթիցես :

58 Ո՛ւսէ ցնա Յիսուս , Աղուէսունք բոյս ունին , և թռչնոց երկնից դասք . և Որդւոյ մարդոյ ոչ գոյ ուր դիցէ զգլուխ :

59 Ո՛ւսէ ցմիւս ևս . Ե՛կ զքէնի իմ . և նա ասէ . Տէր հրամայեա տուր ինձ երթալ նախ թաղել զհայր իմ :

60 Ո՛ւսէ ցնա Յիսուս . Թո՛ղ զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց , և դու երթ պատմեա զարքայութիւն Ո՛ստուծոյ :

61 Ո՛ւսէ և այլ ոմն . Եկից զքէնի քո Տէր , բայց նախ հրամայեա տուր ինձ հրաժարիլ ՚ի տանէ իմմէ :

62 Ո՛ւսէ ցնա Յիսուս . Ո՛չ ոք արկանէ ձեռն զմաճով՝ և հայիցի յետս , եթէ յաջողեալ իցէ արքայութեան Ո՛ստուծոյ :

55 Դարձաւ՝ սաստեց նորանց և ասաց . Ընդէ գիտուք՝ թէ որ հոգոյ էք դուք :

56 Պատճառանալ՝ Որդին մարդոյ չեկաւ՝ որ մարդկանց հոգիները կորուցնէ , այլ որ ապրեցնէ[38] . և գնացին ուրիշ գիւղ :

57 Եւ դեռ որ ճանապարհումն գնումէին՝ մին մարդ նորան ասաց . Ես էլ քո ետևէդ կըգամ՝ որ տեղ որ գնաս[39] :

58 Յիսուս նորան ասաց . Աղուէսներն բուն ունին , և երկնքի թռչուններն դադարելոյ տեղ՝ և Որդին մարդոյ տեղ չունի՝ որ իրան գլուխը դնէ :

59 Ա՛յն ուրիշին ասաց՝ Իմ ետևէս ես եկ . և նա ասաց . Տէր հրամայեա տուր՝ որ գնամ առաջ իմ հայրըս թաղեմ[40] :

60 Յիսուս նորան ասաց . Թո՛ղ մեռելներին՝ որ իրանց մեռելներըն թաղեն . և դու գնա՝ Ստուծոյ արքայութիւնըն պատմի՛ր :

61 Ա՛յն ուրիշն էլ ասաց . Տէր՝ քո ետևէդ կըգամ . միայն թէ առաջ հրամայեա տուր ինձ , որ իմ տանս բարև մնա անեմ[41] :

62 Յիսուս նորան ասաց . Ա՛յ ով՝ որ ձեռնըն մածի վերայ քցէ՝ և յետ նայի՝ Ստուծոյ արքայութեան համար յաջողված չէ :

(37) գ Թագ . ա · 10 · 12 : (38) Ովհ · գ · 17 : Ժբ · 47 : (39) Մատթ · ը · 19 · (40) Մատթ · ը · 21 :

ԳԼ · Ժ

1 Քրիստոս եօթանասուն և երկու աշակերտներ էլ կուղարկէ որ նորանք հետք անեն և քաղաքէն · 17 Նորանց խրատ կըտայ որ խնդուրէ լինին , և թէ ո՛ր բանի համար պէտք է որ նորանք ուրախ լինին · 21 Շնորհակալ կըլինի իրան Հօրից որ ես խորհուրդն տղայոց յայտնեց · 23 Իրան նկնդեցոյ վիճակին երանի կըտայ · 25 Օրէնք գիտօղին կըսովորցնէ թէ յաւիտենական կեանքը ինչպես պիտի ժառանգէ , և իրան պէտք է որ ամէն կարօտ եւ հոգներին ողորմութիւն անէ իրան ընկերներին պէս : 41 Մարթան ասաստուծ և նորա քոյր Մարիամ գովուածէ :

1 Յետ այսորիկ երևեցոյց Տէր և այլ եւս եօթանասուն և երկուս . և առաքեաց զնոսա երկուս երկուս առաջի իւր յամենայն քաղաք և տեղիս , ուր ինքն երթալոց էր :

2 Եւ ասէ ցնոսա . Հունձք բազում են , և մշակք սակաւ . արդ՝ աղաչեցէք զՏէր հնձոց , զի հանցէ մշակս ի հունձս իւր :

3 Երթայք , ահա առաքեմ զձեզ իբրև զգառինս ի մէջ գայլոց :

4 Մի՛ բառնայք քսակ , մի՛ մուխաղ , մի՛ կօշիկս , և ի ճանապարհի ումեք ողջոյն մի՛ տայցէք :

5 Յոր տուն մտանիցէք՝ նախ ասասջիք՝ Թէ Ողջոյն տանս այսմիկ :

6 Եւ եթէ իցէ անդ արդի ողջունի , հանգիցէ ի վերայ նորա ողջոյնն ձեր . ապա թէ ոչ՝ ի ձեզ գարձցի :

7 Եւ ի նմին տան ագանիջիք , ուտիջիք և ըմպիջիք ի նոցանէ . զի արժանի է մշակն վարձու իւրոյ . մի՛ փոխիցիք տանէ ի տուն :

8 Յոր քաղաք մտանիցէք՝ և ընդունիցին զձեզ , ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր :

9 Եւ բժշկեսջիք՝ որ ի նմա հիւանդք իցեն . և ասասջիք նոցա ,

1 Ապանից եաև Տէրն ուրիշ եօթանասուն և երկու հոգի էլ կարգեց . և նորանց երկու երկու իրան առաջին ուղարկեց էն ամէն քաղաքներն և տեղերն՝ որ տեղ որ ինքն պէտք էր գնայ[1] :

2 Եւ նորանց ասաց . Հունձքն շատ է , և մշակներն քիչ[2] . ուրեմն աղաչեցէք Տիրոջն՝ որ մշակներ ուղարկէ իրան հունձքն[3] :

3 Գնացէք . ահա ուղարկումիմ ձեզ ինչպես գառներ գայլերի մէջ[4] :

4 Ալ մի՛ առնէք ոչ քսակ , ոչ պարկ , ոչ կօշիկներ[5] . և ճանապարհումն իսկի մարդին բարև չը՛տաք[6] :

5 Որ տուն որ մտնէք՝ առաջ ասացէք՝ Թէ Ողջոյն էս տանս[7] :

6 Եվ որ էնտեղ ողջունի որդի լինի , ձեր ողջոյնն նորա վերայ կըձգայ . ապա թէ չէ՝ կըդառնայ դէպի ձեզ :

7 Եւ էն տանն մնացէք[8] , նորանցից կերէք և խմեցէք[9] . ինչու որ՝ մշակն իրան վարձքին արժանի է[10] . տանից տուն մի՛ փոխվիք :

8 Որ քաղաք որ մտնէք՝ և ձեզ ընդունին , կերէք՝ ինչ որ կըդընեն ձեր առաջին :

9 Եւ հիւանդները՝ որ էնտեղ լինին՝ բժշկեցէք[11] . և նորանց ա-

(1) Մատթ . ժ . 1 : Մարկ . զ . 7 : (2) Մատթ . թ . 37 , 38 : Յովհ . դ . 35 : (3) Ը Թես . գ . 1 : (4) Մատթ . ժ . 16 : (5) Մատթ . ժ . 9 , 10 : Մարկ . զ . 8 : Ղուկ . թ . 3 : (6) Ը Թագ . գ . 20 : (7) Մատթ . ժ . 12 : (8) Մատթ . ժ . 11 : (9) ա Կորնթ . ժ . 27 : (10) Մատթ . ժ . 10 : ա Կորնթ . թ . 4 , Եւայլն : ա Տիմ . ե . 18 : (11) Ղուկ . թ . 2 :

Digitized by Google

Ա՝երձեալ է ՚ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ ։

10 Իսկ որ քաղաք մտանիցէք՝ և ոչ ընդունիցին զձեզ, իբրև ելանիցէք ՚ի հրապարակս նորա, ասասջիք.

11 Եւ զփոշիս որ կառաւեալ է ՚ի քաղաքէ ձերմէ յոտս մեր՝ թօթափիս ունիցուք ՚ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ է արքայութիւն Աստուծոյ ։

12 Ասեմ ձեզ, զի Սոդոմացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան քաղաքին այնմիկ ։

13 Ա՛յ քեզ Քորազին. վա՛յ քեզ Բեթսայիդա. զի եթէ ՚ի Տիւրոս և ՚ի Սիդովն եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ՚ի ձեզ, վաղուց ևս արդեօք ՚ի խորգ և ՚ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր ։

14 Բայց Տիւրոսի և Սիդովնի ընդարձակագոյն լիցի ՚ի դատաստանի՝ քան ձեզ ։

15 Եւ դու Կափառնաում, որ մինչև յերկինս բարձրացեալ ես, մինչև ՚ի դժոխս իջցես ։

16 Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, և որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ. և որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ անարգէ. և որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ, որ զիս առաքեաց ։

17 Դարձան եօթանասունն և երկուքն խնդութեամբ և ասեն. Տէր՝ և դևք ՚ի մեզ յանուն քո ։

18 Եւ ասէ ցնոսա. Տեսանէի զՂ

սացէք՝ (Թէ) Աստուծոյ արքայութիւնն մօտացել է ձեզ վերայ[12] ։

10 Ասյց որ քաղաք որ մտնէք, և ձեզ չընդունին՝ երթալ գուրս գաք նորա քաց փողոցներն՝ ասացէք.

11 Նա փոշիս էլ՝ որ ձեր քաղքէն մեր ոտներիս է կպել՝ թափ ենք տալիս ձեզ վերայ[13]. սակայն թէ էս գիտացէք, որ Աստուծոյ արքայութիւնն մօտացել է ։

12 Ասում ձեզ՝ որ Սոդոմացոց համար աւելի հեշտ կլինի էն օրուանից՝ քանթէ էն քաղաքին համար[14] ։

13 Ա՛յ քեզ Քորազին. վա՛յ քեզ Բեթսայիդա[15]. պատճառն որ՝ եթէ Տիւրոսի և Սիդօնի մէջն եղած էին էն զօրութիւնները՝ որ ձեր մէջն էլան՝ շատ առաջուց քրքջի (հագէ շորի) և մոխրի մէջ նստած ապաշխարել էին[16] ։

14 Բայց Տիւրոսի և Սիդօնի համար աւելի հեշտ կլինի գատաստանի օրուանից՝ քանթէ ձեզ համար ։

15 Եւ դու Կափառնայում[17]՝ որ մինչև երկինքն բարձրացած ես[18]՝ մինչև դժոխքն պիտի վէր գաս[19] ։

16 Ով որ ձեզ կը լսէ՝ ինձ կը լսէ[20]. և ով որ ձեզ կանարգէ՝ ինձ կանարգէ[21]. և ով որ ինձ կանարգէ, ինձ ուղարկողին կանարգէ[22]. և ով որ ինձ կը լսէ՝ նորան կը լսէ, որ ինձ ուղարկեց ։

17 Էն եօթանասուն և երկուքն ուրախութենով կու դան ասացին[23]. Տէր՝ դևերն էլ՝ քո անունովդ մեզ քո անոնովդ ։

18 Եւ նորանց ասաց. Տեսանէի

(12) Մատթ. ը. 2 ։ ը. 17 ։ ժ. 7 ։ Մարկ. 11 ։ (13) Մատթ. ժ. 14 ։ Ղուկ. բ. 5 ։ Ծնոթ. ժգ. 51 ։ ժգ. 6 ։ (14) Մատթ. ժ. 15 ։ Մատթ. չ. 11 ։ (15) Մատթ. ժա. 21 ։ (16) Նախ. գ. 6 ։ (17) Մատթ. ժա. 23 ։ (18) Նախատ. ժա. 4 ։ Բ Օրին. ա. 28 ։ Նոյ. ժգ. 13 ։ Նբուխ. ծ. 53 ։ (19) Նբուխ. թչ. 20 ։ կը. 18 ։ (20) Մատթ. ժ. 40 ։ Մարկ. բ. 37 ։ Ղուկ. ժգ. 20 ։ (21) ա Թես. գ. 8 ։ (22) Յովհ. ե. 23 ։ (23) Ա՚Նբ. 1 ։

Digitized by Google

Աստուածոյ անկեալ յերկինից իջեալ ցիս ցվայրկեան :

19 Ընդ եւս ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն , և ձեզ ոչ ինչ մեզանչեցեն :

20 Այլ ընդ այն մի՛ խնդայք՝ եթէ ոգիք ընազանդին ձեզ , այլ խընդացէք՝ զի անուանք ձեր գրեալ են յերկինս :

21 Ի նմին ժամու ցնծացաւ Յիսուս Հոգւովն Սրբով և ասէ . Խոստովանիմ զքեզ Հա՛յր՝ Տէր երկնից և երկրի , զի ծածկեցեր զայս յիմաստնոց և ի գիտնոց՝ և յայտնեցեր զայս տղայոց . այո՛ Հա՛յր , զի այսպէս հաճոյ եղեւ առաջի քո :

22 Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ . և ոչ ոք գիտէ՝ թէ ով է Որդի , եթէ ոչ Հայր , և ոչ ոք գիտէ՝ թէ ով է Հայր՝ եթէ ոչ Որդի , և ումն կամիցի Որդին յայտնել :

23 Եւ դարձեալ առանձինն առ աշակերտան ասէ . Երանի՛ աչաց՝ որ տեսանիցեն՝ զոր տեսանէք դուք :

24 Ասեմ ձեզ . Զի բազումք մարգարէք և թագաւորք կամեցան տեսանել՝ զոր դուքդ տեսանէք , և ոչ տեսին . և լսել՝ զոր լսէքդ , և ոչ լուան :

25 Եւ ահա յարեաւ ումն օրինաց՝ փորձէր զնա և ասէր . Վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ զի զկեանս յաւիտենականս ժառանգեցից :

Աստուածային , որ կայծակի պէս երկնքիցն վեր էր ընկնում[24] :

19 Ահա իշխանութիւն տուի ձեզ՝ որ օձերը և կարիճները և թշնամոյ ամէն զօրութիւնըն կոխէք , և ձեզ իսկի վնաս չանեն[25] :

20 Այ՝սոյն թէ՝ նորա համար մի՛ ուրախանաք՝ որ դևերն ձեզ ընազանդվումեն ձեզ՝ բայց ուրախացէք՝ որ ձեր անուններն երկնքումն գըրվածեն[26] :

21 Ընդ էն ժամումն (սահմնան) Յիսուս Սուրբ Հոգովն ցընծացաւ և ասաց . Խոհանումեմ քեզանից ով Հայր՝ երկնքի և երկրի Տէր , որ իմաստուններից և գիտուններին էս բանըս ծածկեցիր և տղոցն յայտնեցիր սրան . իրաւի ով Հայր . ինչուր՝ էապէս հաճոյ էաւ քո առաջիդ[27] :

22 Ինձն բան տըվված ինձ իմ Հօրից[28] . և ոչ ով չի գիտում՝ թէ ով է Որդին՝ բայց միայն Հայրն . և թէ ով է Հայրն՝ բայց միայն Որդին , և ում որ Որդին կամենայ յայտնել[29] :

23 Եւ դարձաւ դէպի աշակերտներն առանձին՝ և ասաց . Երանի՛ է էն աչքերին՝ որ տեսնումեն էն՝ որ դուք տեսնումէք[30] :

24 Ասում ձեզ՝ թէ շատ մարգարէներ և թագաւորներ կամեցան տեսնել էն՝ որ դուք տեսնումէք , և չը՛տեսին[31] . և լսել էն՝ որ դուք լսումէք , և չը՛լսեցին :

25 Եւ ահա մին օրէնք գիտօղ վերկացաւ՝ նորան փորձումէր և ասում . Վարդապետ՝ ի՞նչ պիտի անեմ՝ որ յաւիտենական կեանքըն ժառանգեմ[32] :

(24) Հովհ . ժբ . 31 : ժգ . 11 : Հայտ . ի . 1 : ժբ . 8 , 9 : (25) Մարկ . ժգ . 18 : Գործ . իբ . 5 : (26) Լուկ . լբ . 32 : Մատ . կի . 28 : Նահայ . դ . 3 : Գան . ժբ . 1 : փիլիպ . գ . 3 : Նբէր . ժբ . 23 : Հայտ . ժգ . 8 : ի . 12 : իա . 27 : (27) Մարկ . ժա . 25 : (28) Մարկ . իբ . 8 : Հովհ . գ . 35 : ե . 27 : ժէ . 2 : (29) Հովհ . ա . 18 : գ . 11 . 16 : (30) Մարկ . ժգ . 16 : (31) ա Պետր . ա . 10 : (32) Մարկ . ժբ . 16 : իբ . 35 :

Digitized by Google

26 Եւ նա ասէ ցնա . Յօրէնս զի՞նչ գրեալ է ; որպէս ընթեռնուս :

27 Եւ նա պատասխանի եւ ասէ . Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ , եւ յամենայն անձնէ քումմէ , եւ յամենայն զօրութենէ քումմէ , եւ յամենայն մտաց քոց . և զընկեր քո իբրև զանձն քո :

28 Եւ ասէ ցնա . Ուղիղ եսուր զպատասխանիդ , զայդ արա՛ եւ կեցցես :

29 Եւ նա իբրև կամեցաւ զանձն արդարացուցանել՝ ասէ ցՅիսուս . Եւ ո՛վ է իմ ընկեր :

30 Պատասխանի եւ Յիսուս և ասէ . Ի՛յր մի իջանէր յԵրուսաղէմ յԵրիքով , և անկաւ ՚ի ձեռս աւազակաց , որք մերկացուցին զնա՝ և վէրս ՚ի վերոյ եդին , թողին կիսամահ և գնացին :

31 Վպ եղև քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ , և տեսեալ զնա՝ զանց արար :

32 Եւ նոյնպէս և Ղեւտացի մի՝ ելեալ ընդ նոյն տեղի՝ եւ տես և զանց արար :

33 Սամարացի ոմն ճանապարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ , և տեսեալ զնա՝ գթացաւ :

34 Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա , արկեալ ՚ի վերայ ձէթ և գինի . և եդեալ ՚ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ՚ի պանդոկի մի , և դարմանեաց զնա :

35 Եւ ՚ի վաղիւ անդր իբրև ելանէր անտի , հանեալ եւ ցպանդոկապետն երկուս դահեկանս՝ և ասէ . Վարմանն տար դմա , և զոր ինչ ծախեսցես ՚ի դա՝ ՚ի վերադա-

26 Եւ նա ասաց նորան . Օրէնքումն ի՞նչ է գրված , ի՞նչպէս ես կարդում :

27 Եւ պատասխան առաւ և ասաց . Սիրիր զՏէր Աստուածդ քո ամէն սրտովդ , ի՛ ամէն անձնովդ , ի՛ ամէն զօրութիւնովդ , և ի՛ ամէն մտքովդ[33] . և զի ընկերդ քո անձին պէս[34] :

28 Եւ նորան ասաց . Հիւանդ պատասխան տուիր՝ էդ արա՛ և կապրիս[35] :

29 Եւ նա՝ որովհետև կամեցաւ իրան անձին արդարացնել՝ Յիսուսին ասաց . Եւ իմ ընկերս ո՞վ է[36] :

30 Յիսուս պատասխան առաւ և ասաց . Ո՛րի մարդ Երուսաղէմից վէր էր գալիս Երիքով . և աւազակներ ձեռքն ընկաւ՝ որ մերկացրին նորան՝ և խոցեր դրին նորա վերայ , կիսամահ թողին և գնացին :

31 Պատահեց՝ որ մին քահանայ հենց էն ճանապարհովն գնում էր՝ և նորան տեսաւ՝ (թողեց) անցկացաւ[37] :

32 Նոյնպէս էլ մին Ղեւտացի հենց էն տեղն եկաւ , տեսաւ և անցկացաւ :

33 Ո՛րն Սամարացի՝ որ ճանապարհ էր գնում՝ եկաւ հենց նորա մօտ[38] . և նորան որ տեսաւ՝ խղճն եկաւ :

34 Եւ մօտ եկաւ՝ նորա խոցերին վերայ ձէթ և գինի ածեց և պատեց . և իրան անասունին վերայ դրաւ՝ մին իջևան (դոլշան տեղ) տարաւ նորան , և նորա համար հոգս արաւ :

35 Եւ հետևի օրումն՝ երբոր էն տեղիցն դուրս էր գնում՝ երկու դահեկան հանեց և իջևանի (դոլշան տիրոջն) տիրոջն տուաւ և ասաց . Նորա համար հոգս արա , և ինչ որ

(33) ը Օրէն · Շ · 5 : (34) Ղեւտ · ԺԹ · 18 : (35) Ղեւտ · ԺԸ · 5 : Նեհ · Բ · 28 : Նեհ · Ի · 11 · 13 · 21 : Ածով · Ժ · 5 : (36) Ղեւտ · ԺԹ · 15 : (37) Սաղ · ԿԲ · 11 : (38) Յովհ · Դ · 9 :

Digitized by Google

գամ. գալատեամն իմում, հատուցից քեզ :

36 Ա՛րդ՝ ո՞ յերեցուն՝ ի նոցանէ քեզ մերձաւոր լեալ անկելոյն ՚ի ձեռս ոտաւարաց :

37 Եւ նա ասէ. Որ արար ողորմութիւնն ՚ի վերայ նորա : Ա՛սէ ցնա Իսուս. Երթ և դու արա նոյնպէս :

38 Եւ եղև ՚ի գնալն նոցա, և ինքն եմուտ ՚ի գեօղ մի, և կին ոմն անուն Ա՛րթա ընկալաւ զնա ՚ի տան իւրում :

39 Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Ա՛րիամ. որ և եկն նստաւ առ ոտան Տեառն, և լսէր զբանս նորա :

40 Եւ Ա՛րթա զբաղեալ էր ՚ի բազում սպասու. եկն եկաց առ նմա և ասէ. Տէր ոչինչ է փոյթ քեզ, զի քոյրդ իմ միայն եթող զիս ՚ի սպասու. արդ՝ ասա դմա, զի օգնասցէ ինձ :

41 Պատասխանի ետ Իսուս և ասէ. Ա՛րթա Ա՛րթա՝ դու հոգաս և զբազում իւիք զբաղեալ ես.

42 Ա՛սոյց աստ սակաւ ինչ պիտոյ է. Ա՛րիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ՚ի նմանէ :

զոր Հայրն կրճատեաց՝ իմ մէկէլ գալոյ ժամանակն կրվճարեմ քեզ :

36 Ի՞միկ էն երեքիցն որն է երևումք քեզ՝ թէ մտաւոր է էն աւազակներուն ձեռքն ընկած մարդոյն :

37 Եւ նա ասաց. Ա՛յ՝ որ ողորմութիւն արաւ նորա վերայ : Իսուս նորան ասաց. Գնա դու էլ հետց էնպէս արա :

38 Եւ էլաւ որ նորանց գնալոյ ժամանակն ինքն էլ մին գիւղ մտաւ. և մին կին Ա՛րթա անուն նորան ընդունեց իրան տունն[39] :

39 Եւ նա մին քոյր ունէր՝ որ նորա անունն Ա՛րիամ էր. որ էլ եկաւ[40] Տէրի ոտներին մտա նստեց, և նորա խօսքերըն լսումէր[41] :

40 Ա՛րթան ծառայութեան համար շատ զբաղմունքի մէջ էր. եկաւ նորա մտան կանգնեց և ասաց. Տէր՝ դու իսկի հոգս չունի՞ս որ իմ քոյրս ինձ մենակ թողեց ծառայութեան մէջ. ասա ասայ դորան՝ որ օգնէ ինձ :

41 Իսուս պատասխան առաւ և ասաց. Ա՛րթա Ա՛րթա՝ դու հոգս ես քաշում և շատ բաներով զբաղված ես.

42 Ա՛սոյց էստեղ քիչ բան պէտք է.* Ա՛րիամն բարի բաժինըն ընտրեց՝ որ վեր չառնըվիլ նորանից :

ԻԱ. ՅՈՒ

1 Վերստին աղօթք անել կըսովորցնէ իրան աշակերտներին և պատուէր կըտայ նորանց որ խիստ ազատութիւն աղօթք անեն, 11 Որ Ընտուած նորանց էպէս բարի բաներ կըտայ : 14 Մին մունջ դև կըհանի և հայհոյութիւն անող փարիսեցիքն կըստահ. 28 Այս կըտայ թէ երանելի ոչ նա կըլինին և ինչ բանով կըլինին. 29 Յովնովսդիէն կըքարոզէ. 37 Ու փարիսեցոյ և օրինք գիտացողներին տատամսէ և վայ է տալիս որ իրանց դըրսի կողմէն զբաւանին, 45 Ու յովնովսդն կորցընումին :

1 Ա՛ն եղև ՚ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս. և իբրև դադարեաց՝ ա-

1 Ա՛ն էլաւ որ մին տեղ աղօթք էր անում. և երբոր դադարեց, ի-

(39) Յովհ. ժա. 1 : ԺԲ. 2, 3 : (40) ա Պետ. է. 32, Եսայի : (41) Ղուկ. Ը. 35 : Գործ. իբ. 3 :

* Յունարէն՝ բայց միայն բան պէտք է :

Digitized by Google

ան ձեռաց իւրոց • Տէր՝ ուսո՛ մեզ յաղօթս կալ, որպէս և Յովհաննէս ուսոյց աշակերտաց իւրոց ։

2 Ասէ ցնոսա, Յորժամ կայցէք յաղօթս, ասացէք • Հա՛յր մե՛ր՝ սուրբ եղիցի անուն քո • եւ կեսցէ արքայութիւն քո ։

3 Հաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ ցօրըստօրէն ։

4 Եւ թո՛ղ մեզ զմեղս մեր, զի և մեք թողումք ամենայնի՝ որ պարտական մեզ • և մի՛ առներ զմեզ ՚ի փորձութիւն ։

5 Եւ ասէ ցնոսա • Որ է ՚ի ձէնջ օրէն իցէ բարեկամ, և երթայցէ առ նա ՚ի մէջ գիշերի, և ասիցէ ցնա • Բարեկա՛մ տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս •

6 Զի բարեկամ իմ եկն առ իս յուղեւ, և ոչինչ ունիմ դնել առաջի նորա ։

7 Եւ նա ՚ի ներքուստ ասիցէ պատասխանի և ասիցէ • Մի՛ աշխատեր զիս, զի դուրգդ փակեալ են, և մանկունքս ընդ ինև կան յանկողնի • ոչ կարեմ յառնել և տալ քեզ ։

8 Ասեմ ձեզ՝ Եթէ ոչ յարուցեալ ասիցէ նմա վասն բարեկամութեան, սակայն վասն ժուժութեանն յարուցեալ ասիցէ նմա՝ զինչ և պիտոյ իցէ ։

9 Եւ ես ասեմ ձեզ, խնդրեցէ՛ք՝ և տացի ձեզ, հայցեցէ՛ք՝ և գտջիք, թակեցէ՛ք և բացցի ձեզ ։

10 Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, և որ հայցէ՝ գտանէ, և որ թակէ՝ բացցի նմա ։

11 Ո՞ր ոք ՚ի ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փո-

ղան աշակերտներից՝ ինչպէս ուսոյց նա՛ և մեզ • Տէր՝ սովորեցո՛ մեզ աղօթք անել, ինչպէս որ Յովհաննէս իւրոց աշակերտներին սովորեցուց ։

2 Ասաց նորանց • Երբոր աղօթք անէք, ասացէք • Հա՛յր • քո անունդ սո՛ւրբ լինի • քո արքայութիւնդ գա՛յ ։

3 Հա՛ր ամէն օրվան հացը օրէցօր տո՛ւր մեզ ։

4 Եւ մեր մեղքերըն թո՛ղ մեզ • որ մենք էլ թողումենք են ամէնին՝ որ պարտական են մեզ • և մեզ փորձանքի մէջ մի՛ ձգիր ։

5 Եւ նորանց ասաց • Ձեզանից ո՞վ է, որ բարեկամ ունենայ, և կէս գիշերումն նորա մօտ գնայ, և նորան ասէ • Բարեկա՛մ ինձ երեք հաց փո՛խ տուր •

6 Ինչուա՛ր՝ իմ բարեկամս ինձ մօտ եկաւ ճանապարհիցն, և բան չունիմ՝ որ նորա առաջին դնեմ ։

7 Եւ նա՝ պատասխան տայ ներսիցն և ասէ • Մի՛ աշխատացներ ինձ • ինչու որ՝ դռներն փակված են, և երեխաներս ինձ հետ անկողնումն (լաւալոնում) (թեքըլնած) են • չեմ կարող վեր կանգնել և տալ քեզ ։

8 Ասում ձեզ՝ թէ որ բարեկամութեան համար վեր չկենայ և տայ նորան[2], բայց նորա խիստ աղաչանքին համար վերկենայ և կըտայ նորան՝ ինչ որ էլ պէտք լինի ։

9 Եւ ես ասում[3] ձեզ՝ խնդրեցէ՛ք և կըտրվի ձեզ, մանեկէ՛ք և կըգտնէք, (դուռըն) թակեցէ՛ք և կըբացվի ձեզ ։

10 Ինչու որ՝ ամէն ով որ կըխընդրէ՝ կառնէ, և ով որ մանկըգա՝ կըգտնէ, և ով որ կըթակէ՝ կըբացվի նորան ։

11 Ձեզանից ո՞վ է էն հայրն՝ որ նորանից իրան որդին ձուկն ուզէ,

(1) Մատթ • ձ • 9 ։ (2) Ղուկ • ժը • 1 ; Եսայ ։ (3) Մատթ • է • 7 ; ի • 22 ։ Մարկ • ժա • 24 ։ Յովհ • ժե • 7 ։ Յակ • ա • 6 ։ ա Յովհ • գ • 22 ։

Digitized by Google

քանակ ձիանն ծէ տայցէ նմա ։

12 Եւ կամ խնդրիցէ ձու , մի-
թէ կարճ տայցէ նմա ։
13 Ուստի եթէ դուք որ չարքդ
էք՝ գիտէք պարգեւս բարիս տալ
որդւոց ձերոց , որչափ ևս առաւել
Հայրն ձեր յերկնից տացէ բարիս
այնոցիկ , որ խնդրեսն ՚ի նմանէ ։

14 Եւ հանէր դեւ մի համր , և
եղեւ յելանել դիւին՝ խօսեցաւ համ-
րըն , և զարմացան ամենայն ժո-
ղովուրդքն ։

15 Եւ ոմանք ՚ի նոցանէ ասեն՝
Ի Բեեզեբուղաս իշխանաւն դիւաց
հանէ զդեւս ։
16 Եւ այլք փորձէին և նշան
յերկնից խնդրէին ՚ի նմանէ ։

17 Ուստի նորա գիտացեալ զխոր-
հուրդս նոցա՝ ասէ ցնոսա . Ա-
մէն թագաւորութիւն բաժանեալ
յանձն՝ աւերի , և տուն բաժան-
եալ յանձն՝ կործանի ։

18 Ա՛պա եթէ և Սատանայ բա-
ժանեցաւ յանձնէ , զինչպէ կայցէ
թագաւորութիւնն նորա . զի ասէք
զինէն եթէ Ի Բեեզեբուղաս իշխա-
նաւն գիւաց հանէ զդեւս ։

19 Եթէ ես Ի Բեեզեբուղաս հա-
նեմ զդեւս , որդիքն ձեր ՚ի հա-
նիցեն . վասն այսորիկ նոքին ե-
ղիցին ձեր դատաւորք ։

20 Ուստի եթէ մատամբ Ա՛ստուծոյ
հանեմ զդեւս , ապա հասեալ է ՚ի
վերայ ձեր արքայութիւն Ա՛ստու-
ծոյ ։
21 Յորժամ հզօր վառեալ պա-

հեսցէ զինեալ զաւանն իւր , ան-
խաթար կացցէ ինչ նորա ։
22 Եւ եթէ հզօրագոյն քան զնա
եկեալ յաղթեսցէ նմա , զամենայն
զէնս նորա առնուցուն , յորս յու-
սացեալ էր , և զաւարս նորա բա-
ժանեսցէ ։
23 Որ ոչ է ընդ իս՝ հակառակ
իս է , և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ ։
24 Երբեմն հոգի պղծութեան
ելանէ յմարդոյ , երթայ ընդ անա-
պատս՝ հանգիստ խնդրելով , և ոչ
գտանէ . ապա ասէ՝ Դարձից յտուն
իմ , որ ելի ՚ի նմանէ ։
25 Եւ եկեալ գտանէ սրբեալ և
զարդարեալ ։
26 Ապա երթեալ առնու ընդ իւր
եօթն հոգիս այլս քան զինքն չա-
րագոյնս , և մտեալ բնակին անդ .
և լինին վերջինք մարդոյն այնո-
ցիկ չարագոյնք քան զառաջինսն ։

27 Եղեւ յորժամ զայս ասէր , ի-
մացեալ կին մի ՚ի բազմութենէ ձայ-
նեաց զբերանոյ իւրոյ , և ասէ ցնա .
Երանի արգանդի որ կրեաց զքեզ ,
և ծոցոց որ սնուցին զքեզ ։
28 Ա՛յլ նա ասէ . Այո երանի
նոցա որ լսեն զբան Ա՛ստուծոյ ,
և պահեն ։

29 Եւ ժողովրդոցն հաւաքեալ
ընդ նմա , սկսաւ ասել . Ազգ չա-
րագործ է ազգս այս , նշան խնդրէ ,
և նշան ոչ տացի նմա , բայց զնշան
Յովնանու մարգարէին ։
30 Զի որպէս եղեւ Յովնան նշան
Նենուացւոցն , նոյնպէս եղիցի և
Որդի մարդոյ ազգիս այսմիկ ։

(4) Մատթ · ե · 9 ։ (5) Մատթ · ք · 33 ։ մր · 28 ։ (6) Մատթ · ք · 34 · մր · 24 ։
(7) Մատթ · մր · 33 · մղ · 1 ։ (8) Մատթ · մր · 25 ։ Մարկ · գ · 24 ։ (9) Ցովհ · ը · 25 ։ (10) Ելս · ը · 19 ։

Digitized by Google

հիցէ զառն իւր ; ՚ի խաղաղու-
թեան են ինչք նորա ։

22 Այլ եթէ հզօրագոյն քան
զնա ՚ի վերայ եկեալ յաղթեսցէ
նմա , զպատառգինութիւնն հանէ՝
յոր յուսացեալ էր , և զաւար նո-
րա բաշխեսցէ ։

23 Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ
է , և որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցըր-
ուէ ։

24 Յորժամ այսն ելանիցէ ՚ի մար-
դոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս ,
խնդրէ հանգիստ . և իբրև ոչ գը-
տանէ , ասէ . Դարձայց անդրէն
՚ի տուն իմ ուստի ելի ։

25 Եւ գայ մտանէ մաքրեալ և
յարդարեալ ։
26 Յայնժամ երթայ և առնու
հօթն այլ այսս չար քան զինքըն՝ և մտանէ բնակէ անդ , և
լինի յետինն մարդոյն այնորիկ չար
քան զառաջինն ։
27 Եւ եղև մինչդեռ խօսէր զայս ,
ձայն եբարձ կին մի ՚ի ժողովրդե-
նէ անտի և ասէ . Երանի՛ է ո-
րովայնին՝ որ կրեացն զքեզ , և
առեանցն՝ որ դիեցուցին զքեզ ։

28 Եւ նա ասէ . Այ՛ երանի
այնոցիկ է , որ լսեն զբանն Աս-
տուծոյ և առնեն ։
29 Եւ ՚ի դիմանել ՚ի վերայ նո-
ցա ժողովրդոցն , սկսաւ ասել .
Ազգս այս ազգ չար է . նշան
խնդրէ , և նշան յերկինից ոչ տա-
ցի սմա՝ բայց նշանն Յովնանու ։

30 Զի որպէս եղև Յովնան նը-
շան Նինուէացւոց , այնպէս եղի-
Հագած իրան տունըն պահէ , նը-
րա ապրանքներն խաղաղութեանով
են[11] ։

22 Այլ թէ որ նորանից էլ ա-
ւելի զօրաւոր գայ (նորա) վերայ
և նորան յաղթէ , նորա զէնքերըն
որ յոյսըն նորանց վերայ էր դրել ,
կըհանէ և նորա աւարըն (թալա-
նըն) կըբաժանէ[12] ։
23 Ով որ ինձ հետ չէ՝ (նա) ինձ
հակառակ է , և ով որ ինձ հետ չէ
ժողովում՝ (նա) ցրվում է[13] ։
24 Երբոր պիղծ դևըն դուրս է
գալիս մարդուցն՝ անջուր տեղերան-
քում է մանգալիս և հանգիստ խընդ-
րում . և երբոր չէ գտնում՝ ա-
սում է . Հետ դառնամ իմ տունը
որտեղից որ դուրս եկի[14] ։
25 Եւ գալիս է նորան սրբված և
պատրաստված է գտնում ։
26 Այն ժամանակն գնում է և ի-
րանից էլ աւելի չար եօթն դև է
առնում՝ և մտնում բնակվում էն
տեզ , և էն մարդոյ յետինն աւելի
չար է լինում քան թէ առաջինն[15] ։
27 Եւ էլաւ դեռ քանի որ էս խօ-
սում էր , ժողովրդի միջիցըն մին կին
ձայն բարձրացրուց և ասաց . Ե-
րանի է էն փորին՝ որ քեզ պահեց ,
և էն ծըծերին՝ որ քեզ ծըծացը-
րին[16] ։
28 Եւ նա ասաց . Այլ աւելի երա-
նի է՝ նորանց , որ Աստուծոյ բանըն
լսում են և անում[17] ։
29 Եւ երբոր ժողովուրդներն , նո-
րա վերայ դիվում էին՝ սկսեց ասել .
Այս ազգս չար ազգ է[18] . նշան է
խնդրում , և երկնքիցն նշան չի
տրվիլ սորան՝ բայց միայն Յովնա-
նու նշանըն ։
30 Պատճառն որ՝ ինչպես որ Յով-
նան նշան էլաւ Նինուէացոց հա-

(11) Մատթ . ժբ . 29 ։ Մարկ . գ . 27 ։ (12) Նայ . ծգ . 12 ։ Կող . բ . 15 ։ (13) Մատթ . ժբ . 30 ։ (14) Մատթ . ժբ . 43 ։ (15) Ովհ . ե . 14 ։ Եբր . զ . 4 ։ ժ . 26 ։ բ Պետր . բ . 20 ։ (16) Ղուկ . ա . 28 . 48 ։ (17) Մատթ . է . 21 ։ Ղուկ . ը . 21 ։ Յակ . ա . 25 ։ (18) Մատթ . ժբ . 38 , 39 ։

Digitized by Google

ջիւ մարդի մերկաց ազգիս այսմիկ։

31 Պէտուն Հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ և դատապարտեսցէ զսոսա , զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաստութիւնն Սողոմոնի . և ահա առաւել քան զՍողոմոն է աստ ։

32 Նոքա Նինուէացիք յարիցեն ի դատաստանի ընդ ազգիս այսմիկ և դատապարտեսցեն զսա , զի առաքեալսն ի քարոզութեան Յովնանու . և ահա առաւել քան զՅովնան է աստ ։

33 Ոչ ածէք լուցեալ ճրագ՝ դնել ի խաթարան , և ոչ ընդ գրաստանաս . այլ ի վերայ աշտանակի , զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն ։

34 Ճրագ մարմնոյ ակն է . յորժամ ակն առատ է , ամենայն մարմինն լուսաւոր եղիցի . և երբ ակն չար է , և մարմինն խաւարին եղիցի ։

35 Ետուր զգոյշ լեր , գուցէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար իցէ ։

36 Եթէ մարմինդ քո ամենայն լուսաւոր է՝ և չգուցէ մասն ինչ խաւարին , եղիցի լուսաւոր ամենայն . որպէս յաժամ ճրագն ընդ լուսաւորեսցէ զքեզ ։

37 Եւ մինչդեռ խօսէր զայս , ազաչէր զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա . և նա մտեալ բազմեցաւ ։

38 Իսկ եւս փարիսեցին՝ զարմացաւ , զի նախ ոչ մկրտեցաւ յաջորջ քան զճաշ ։

39 Ասէ ցնա Տէր . Ա՛յժմ դուք փարիսեցիքդ զարտաքինն բաժակին և

մաք , էնպէս էլ Որդին մարդոյ էս ազգիս համար կըլինի[19] ։

31 Հարաւային երկրի թագուհին հին դատաստանում վերկըկենայ էս ազգիս մարդկանց հետ և սորանց կդատապարտէ , պատճառն որ՝ նա երկրի ծայրից եկաւ , որ Սաղոմոնի իմաստութիւնըն լսէ , և ահա Սաղոմոնից էլ աւելին կայ էստեղ է[20] ։

32 Նինուէացոց մարդիքն դատաստանում վեր կրկենան էս ազգիս հետ և սորան կդատապարտեն , ինչու որ՝ նորանք Յովնանու քարոզութիւնովնապաշխարեցին[21] . և ահա Յովնանից էլ աւելին կայ էստեղ է ։

33 Ոչ ով ճրագ չի վառում և թաքուն տեղ դնում և ոչ տաշտի տակ , բայց ճրագակալի վրայ , որ նորանք որ ներս են մտնում՝ լոյս տեսնեն[22] ։

34 Աչքն ճրագն է մարմնոյ . երբոր աչքն պարզ է , ամէն մարմինն լուսաւոր կըլինի . և երբոր աչքն չար է՝ մարմինն էլ խաւար կըլինի[23] ։

35 Նայեա՛ զգոյշ կաց , չըլինի որ էն լոյսն , որ քեզանում է՝ խաւար լինի ։

36 Եթէ որ քո ամէն մարմինդ լուսաւոր է և խոկի խաւարի մի մասն չըկայ , ամէնն լուսաւոր կըլինի . ինչպէս էն ժամանակն՝ որ ճրագն իրան շողներովն լուսաւորէ քեզ ։

37 Եւ դեռ որ էս խօսում էր՝ մէն փարիսեցի աղաչում էր նորան՝ որ նորա մօտ հաց ուտէ . և նա մըտաւ՝ և սեղան նստաց ։

38 Երբոր փարիսեցին տեսաւ՝ զարմացաւ , որ ճաշիցն առաջ չըլուացվաւ[24] ։

39 Տէրն ասաց նորան . Հիմիկ դուք փարիսեցիներդ բաժակի (Լու-

(19) Մատթ . ժբ . 42 : (20) Մատթ . ժբ . 41 : (21) Յովն . գ . 5 : (22) Մատթ . ե . 15 : Մարկ . դ . 21 : Լուկ . ը . 16 : (23) Մատթ . զ . 22 : (24) Մարկ . է . 3 :

Digitized by Google

պանակին սրբէք. և նոյքինն ձեր ի է յաւիշտակութեամբ և չարութեամբ :

40 Նմիտ՝ ոչ ապաքէն որ զարտաքինն արար՝ և զներքինն նոյն արար :

41 Այլ այղէ զալժանն իսկ՝ տուք ողորմութիւն, և ահա ամենայն սուրբ է ձեր :

42 Այլ վայ ձեզ փարիսեցւոց՝ զի տասանորդէք զանանուխ և զփեգենայ և զամենայն բանջար, և անցանէք զիրաւամբք և զսիրոյն Աստուծոյ. զայս արժան էր առնել, և զայնոսիկ ոչ անցանել :

43 Այ ձեզ փարիսեցւոց, զի սիրէք ղբազմարգահաս ի ժողովուրդս, և զնախաղջեան ի հրապարակս :

44 Այ ձեզ՝ զի էք դուք իբրև զգերեզմանս անյայտս, և մարդիկ գնան ի վերայ՝ և ոչ գիտեն :

45 Պատասխանի ետ ոմն յօրինականացն՝ և ասէ ցնա, Այ ուրդապետ զայս բանս ասելով և զմեզ թշնամանես :

46 Եւ նա ասէ. Եւ ձեզ վայ օրինականացդ. զի բառնայք մարդկան բեռինս դժուարակիրս, և դուք մատաւք միով ի բեռինն ոչ մերձենայք :

47 Այ ձեզ՝ զի շինէք զշերիմս մարգարէիցն, և հարքն ձեր սպան զնոսա :

48 Այսպա ուրեմն վկայէք՝ եթէ կամակից էք գործոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, և դուք զգերեզմանս նոցա շինէք :

49 Այսան այնորիկ իմաստութիւնն

և) և պնակի զբաժի կողքն սրբեցէք. և ձեր ներսինն յափշտակութենով և չարութենով լիքն է[25] :

40 Անմիտներ՝ չէ՞ որ նա որ զբաժինըն արաւ՝ ներսինըն էլ նա արաւ :

41 Այլ տեսլի էն արէք որ արժանն է, ողորմութիւն տուէք և ահա ձեր ամէն բանն սուրբ է[27] :

42 Այլ վայ ձեզ փարիսեցիներիդ՝ որ անանուխի և փեգենայի և ամէն բանջարի տասանորդ էք տալիս և Աստուծոյ իրաւունքն և սիրոյն անց էք կենում. էս պէտք էր անել, և նորանով անց չըկենալ[28] :

43 Այ ձեզ փարիսեցիներիդ, որ ժողովարանների միջումն վերևի տեղերըն էք սիրում, և փողոցների մէջն առաջին բարեւներըն[29] :

44 Այ ձեզ[30] որ դուք գերեզմանների պէս էք, որ չեն տեսնըվում և մարդիք նրանց վերայ կնումեն և չեն գիտում[31] :

45 Պատասխան տուաւ օրէնք գիտողներից մինն և ասաց նորան՝ Այ ուրդապետ՝ էդ բաներդ ասելով մեզ էլ նախատինք ես տալիս :

46 Եւ նա ասաց, Ձեզ օրէնք գիտողներիդ էլ վայ. ինչու որ՝ գժուար տանելի բեռներ էք բեռնում մարդկանց, և դուք մին մատով չէք ձօնեում էն բեռներին[32] :

47 Այ ձեզ, որ մարգարէների տապանները շինում էք և ձեր հարքըն սպանեցին նորանց[33] :

48 Այսպա ուրեմն վկայում էք՝ թէ ձեր հայրանց գործերին հետ կամակից էք. ինչուր՝ նորանք կոտորեցին նորանց, և դուք նորանց գերեզմանները շինում էք :

49 Վրահասալ Աստուծոյ իմաս-

(25) Մատթ. իգ. 25 : (26) Ցնծ. ա. 15 : (27) Նոյ. ծը. 7 : Դտն. գ. 27, Ղևտ. ժբ. 33 : (28) Մատթ. իգ. 23 : (29) Մատթ. իգ. 6 : Մարկ. ժբ. 38, 39 : (30) Մատթ. իգ. 27 : (31) Թուոց. ե. 2 : (32) Մատթ. իգ. 4 : (33) Մատթ. իգ. 29 :

Digitized by Google

Ա՛ստուծոյ ասաց • Ա՛ստիցեցից ՚ի նոսա մարգարէս և առաքեալս , և ՚ի նոցանէ սպանանիցեն և հալածիցեն ։

50 Ո՛ւի խնդրեսցի արիւն ամենայն մարգարէից՝ հեղեալ ՚ի սկզբանէ աշխարհի յազգէ յայդմանէ ,

51 Յաբէնէն Ա՛բելի մինչև յարիւնն Ո՛զքարիայ կորուսելոյ ընդ սեղանն և ընդ տաճարն . այո՛ ասեմ ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ ։

52 Վա՛յ ձեզ օրինականացդ • զի թաքուցանէք զվկայական գիտութեռա նըն • դուք ո՛չ մտանէք , և որ մտանելոցն են՝ արգելուք ։

53 Եւ ՚ի իսօսելն զայս ամենայն առ նոսա առաջի ամենայն ժողովրդեանն , զամօթի հարկանէին • և բռնկեան դպիրքն և փարիսեցիք ՝ զբաքել՝ և գրգռել ընդ նմա վասն բազումս իրաց ։

54 Եւ սպասել որսալ ինչ բանս ՚ի բերանոյ նորա , զի չարախօսեսցեն զնմանէ ։

առաքիւնն ասաց • Թէ՝ Վտրգռէնեմ և առաքեալներ կազարկեմ նորանց մօտ , և նոյանցիկ կբապաննեն և կըհալածեն[34] ։

50 Որ ամէն մարգարէների արիւնն որ աշխարհքի սկզբիցն թափված է՝ էս ազգիս խնդրուի ,

51 Ա՛բելի արիւնեցն[35] մինչև Զաքարիայի արիւնն[36] որ սպանան և տաճարի մէջն կորաւ • իրաւի՝ ասեմ ձեզ , այդ ազգիդ կըխնդրուի ։

52 Վա՛յ ձեզ օրէնք գիտողներիդ՝ որ գիտութեան բանալիքըն վազ ցընուիք • դուք չէք մտնում , և նորանց՝ որ մտնելու են արգելուիք[37] ։

53 Եւ երբոր էս ամէն բաներըս ասաց նորանց ամէն ժողովրդի առաջին , շատ ամօթ էին քաշում՝ և կարդացողներն և փարիսեցիներըն սկսեցին նախանձով բարկանալ և շատ բաների համար նորա հետ հակառակել ։

54 Եւ սպասումին՝ որ նորա բերանից մին խօսք որսան , որ չարախօսին նորա վերայ[38] ։

ԿԱ • ԺԱՆ

1 Ա՛ստուծոյ իրան աշակերտներին կընդառաջ որ իրանց անձներին զգոյշ պահին փաղչանքոց կեղծաւորութենից՝ և իրան վարդապետութիւնները տարածելոյ համար չը վախենան • 16 Ցոն համարձակ լինել մին հարատև մարդոյ առակով ժողովուրդն ադահութենից զգոյշ կըպահէ • 23 Պէտք չէ որ հոգոյ համար ո՛չ էլ մարմնոյ համար հոգս անենք • 31 Ասոյց պէտք է որ Ա՛ստուծոյ արքայութիւնն խնդրենք , 33 Ողորմութիւն տանք , 36 Որ ժամանակ որ գայ մեր Տէրն և դուռն թակէ չտատով բանալոյ պատրաստ լինինք ։ 41 Ա՛ռիթաւոր անառանձներն պէտք է որ իրանց հրամանն էլած բաներին համար չատ հոգս տանին , 49 Եւ հալածանք քաշելն անձներին առնեն , 54 Ժողովուրդն պէտք է որ Ա՛ռիթաւորի ընդհանրոյ ժամանակն չը կորցընէ , 58 Ո՛ւռ հակառակ ոտնի հետ չուտով քո գործն տա՛ սյոյնքան հաշտվէ , որ չը լինի թէ էնպէս մեռնիս և յաւիտենական կորուստն գնաս ։

1 Ա՛յն ժամանակն երբոր հազարաւոր ժողովուրդներ դիպվուածին մինչև որ իրար կոխ էին տալին՝

1 Սկսաւ ՚ի կոտակել մեծ բազմութեան ժողովրդեանն՝ մինչև կոխել զմիմեանս , ասել սկսաւ յաշակերտսն

(34) Ա՛ստ • խգ • 34 ։ (35) Ա՛ննէ • գ • 8 ։ (36) բ Ա՛նոց • խգ • 20 , 21 ։ (37) Ա՛ստ խգ • 13 ։ (38) Ա՛ստ • ժբ • 13 ։

Digitized by Google

իւր . ‘Լաւ՝ զգիշէր լերուք անձանց ի խմորէ փարիսեցւոցն , որ է կեղծաւորութիւն :

2 Ոչ ինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի , և գաղտնի՝ որ ոչ ծանիցի :

3 Վասն զի՝ զոր ինչ ասիցէք ի խաւարի , լսեսցի ի լոյս . և զոր յականջն խօսեցարուք ի շտեմարանս , քարոզեսցի ի վերայ տանեաց :

4 Ասացից ձեզ սիրելեաց իմոց . Մի՛ զարհուրիցէք յայնցանէ որ սպանանեն զմարմինն , և յետ այսորիկ առնել ինչ ոչ ունիցին առնել :

5 Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիջիք . երկնչիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեն . այո՛ ասեմ ձեզ՝ երկնչիջիք :

6 Ո՞չ ապաքէն հինգ ճագ երկուց դանգաց վաճառի , և մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի Աստուծոյ :

7 Այլ ձեր և ամենայն խիլ հեր գլխոյ թուեալ է . մի՛ երկնչիջիք՝ զի քան զբազում ճագս լաւ էք դուք :

8 Ասեմ ձեզ . զի Ամենայն որ խոստովանեսցի յիս առաջի մարդկան , և Որդի մարդոյ խոստովանեսցի զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ :

9 Եւ որ ուրասցի զիս առաջի մարդկան , ուրացեալ լիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ :

10 Եւ ամենայն որ ասէ բան զՈրդւոյ մարդոյ թողցի նմա . բայց որ սկսեալ իրան աշակերտանելոյն ասէ . Առաջ անձներնիդ զգոյշ պահեցէք փարիսեցւոց խմորէն՝ որ կեղծաւորութիւն է[2] :

2 Ինչսա որ՝ խաւի ծածուկ բան չէ՝ որ չյայտնուիլի՝ և թաքուն բան՝ որ չիմացուի[3] :

3 Պատճառն որ՝ ինչ որ խաւարն ասէք , լուսոյ մէջ կըլսուի . ինչ որ ներսինները սան մէջն ձայն ասէք՝ կըքարոզուի :

4 Այլ ձեզ՝ իմ սիրելիներիս ասեմ[5] . Մի՛ վախնաք ընդանցիկ՝ որ մարմինըն սպանուելն , և ետեւն ասելի բան չունին՝ որ անեն :

5 Այլ ցոյց կըտամ ձեզ՝ թէ ումէ պէտք է վախնալ . Վախցէք՝ որ սպանելուն ետեւ իշխանութիւն ունի գեհենի մէջ քշելոյ . իրաւի ասումեմ ձեզ՝ Այսրանից վախցէք :

6 Հինգ որ հինգ ծիտ երկու դանկի են ծախվում . և ընդանցիկ միւնէն էլ Աստուծոյ առաջին մոռացած չէ :

7 Այլ ձեր գլխի հենց ամէն մազերն էլ համարված է . մի՛ վախնաք . ինչու որ՝ դուք ասելի լաւ էք քան շատ ծրտեր :

8 Ասումեմ ձեզ՝ թէ Ումն ով որ ինձ մարդկանց առաջին կըդաւանէ՝ Որդին մարդոյ էլ նորան կըդաւանէ Աստուծոյ հրեշտակներուն առաջին[6] :

9 Եւ ով որ ինձ կուրանայ մարդկանց առաջին՝ (նա էլ) ուրացված կըլինի Աստուծոյ հրեշտակներուն առաջին :

10 Եւ ամէն ով որ Որդոյ մարդոյ դէմ բան ասէ՝ կըլթողվի նորան .

(1) Մատթ . ժգ . 6 : Մարկ . ը . 15 : (2) Մատթ . ժգ . 12 : (3) Մատթ . ժ . 26 : Մարկ . դ . 22 : Լուկ . ը . 17 : (4) Նոյն . ծա . 7 , 8 , 12 , 13 : Եբրայ . ա . 8 : Մատթ . ժ . 28 : (5) Հաւհ . ժե . 14 , 15 : (6) Մատթ . ժ . 32 : Մարկ . ը . 38 : ը . 8 : Յհ . ը . 12 : ա Յովհ . ը . 23 :

Digitized by Google

զՆոքին Աստուծ Իսրայէլի՝ մի՛ թողուր քեզ նմա։

11 Եւ յորժամ առնիցին զձեզ ի ժողովուրդս և ի պատասխանիս և ի քննութիւնս, մի՛ հոգայցէք՝ որպես զինչ պատասխանի տայցէք, կամ զինչ ասիցէք։

12 Որ ի նոքին Աստուծ ուսուցանէ ձեզ ի նոյն ժամուն՝ զինչ պարտ իցէ խօսել։

13 Եթէ ոք ի ժողովրդենէն ցնծայ և այգեպահ՝ առնէ ցեղբարս իմ բանս խօսել զնոր կտակարանն իմ։

14 Եւ նա ասէ ցնա։ Այր դու՝ ո՞ կացցես զիս դատաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր։

15 Եւ ասէ ցնոսա։ Տեսէք և զգուշ կացէք ամենայն ագահութենէ, զի ոչ ներէ ի մերմէ ընչից սերոյ իցեն կեանք նորա։

16 Խօսեցաւ առ նոսա առակ մի՝ և ասէ։ Արտն ուրումն մեծատան եբեր առատ արդիւնս։

17 Եւ խորհէր ի միտս իւր և ասէր։ Զի՞նչ արարից զի ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զպտուղս իմ։

18 Եւ ասէ։ Կայեսցեմ զինչ արարից։ քակեցից զշտեմարանս իմ, և նա մեծագոյնս շինեցից։ և անդր ժողովեցից զցորեանն և զամենայն բարիս իմ։

19 Եւ ասացից ցանձն իմ։ Ունիս անձն քեզ ի մեծի ամի բազումս։ հանգիր՝ կեր՝ արբ և ուրախ լեր։

20 Այլ ասէ ցնա Աստուած։ Անմիտ՝ յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց

բերեն զքեզ։ զոր ինչ պատրաստեցեր՝ նորա՞ն չի լինիցի։

11 Այսպէս երբեմն կըտանեն ձեզ ժողովարանների մէջ և դատաւորների և իշխանների առաջին, հոգա՛ մի՛ առնէք՝ իբրեւ ինչ պատասխան պիտի տաք, կամ ինչ պիտի ասէք։

12 Որովհետեւ որ՝ Հոգին Սուրբ չինեց ձեզ ժամուն (առհասարակ) կըսովորցնէ ձեզ՝ թէ ինչ պէտք է խօսել։

13 Հաղովրդի միջէն մին ասաց նորան. Ո՛վ վարդապետ՝ իմ եղբօրս ասա՛ որ ժառանգութիւնը ինձ հետ բաժանէ։

14 Եւ նա ասաց նորան. Ո՛վ մարդ՝ ինձ ո՞վ կարգեց ձեզ վերայ դատաւոր կամ բաժինաբոյ։

15 Եւ նորանց ասաց. Տեսէք և զգուշ կացէք ամէն ագահութիւններից[10], պատճառն որ՝ իսկի մէնակեանքն իրան կիսուած ապրանքներից չէ։

16 Որոնց մին առակ խօսեց և ասաց. Այ՛ն հարուստ մարդոյ արտերըն առատ պտուղ առին։

17 Եւ իրան մտքումն մտածումէր և ասում. Ի՞նչ անեմ՝ որ տեղ չըկայ որ իմ պտուղներըս հաւաքեմ։

18 Եւ ասաց. Կ՚անեմ՝ ինչ անեմ. իմ հասկերներըս կըքանդեմ, և էլ աւելի մեծ կըշինեմ, և իմ ցորեններս և ամէն բարիքներըս կըժողովեմ հաւաքեմ։

19 Եւ իմ անձիս կասեմ. Ո՛վ անձն՝ շատ բարիքներ ունիս շատ տարիների համար ամբարուած[11]. ապա հանգիստ առ՝ կեր՝ խմի՛ր և ուրախ լեր։

20 Այսուհետեւ նորան ասաց. Ո՛վ անմիտ. էս գիշերուս քո հո-

(1) Մատթ. ժ. 21, 39։ Մարկ. գ. 28։ ա Յովհ. ե. 10։ (3) Մատթ. ժ. 19։ Մարկ. ժգ. 11։ Լուսաւ. խա. 10։ (9) Յովհ. ժգ. 30։ (10) ա Տիմ. գ. 7, Տիտոս։ (11) Ժող. ժա. 9։ ա Առակ. ժե. 32։ Յով. ե. 5։

Digitized by Google

պահանջիցեն , խակ զոր պատրաստեցեր՝ ո՞մ լինիցի :

21 Այսպէս և որ գանձէ անձին , և ոչ յԱստուած մեծանայցէ :

22 Ասէ ցաշակերտան իւր . Վասն այդորիկ ասեմ ձեզ . մի՛ հոգայք ընդ ոգւոյ՝ թէ զի՞նչ ուտիցէք , և մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զի՞նչ զգենուցուք :

23 Զի ոգի առաւել է քան զկեր բակուր , և մարմին քան զհանդերձ :

24 Հայեցարո՛ւք ընդ ագռաւս , զի ոչ սերմանեն և ոչ ընձեն , որոց ոչ գոն շտեմարանք՝ և ոչ համբարա՝ շոցք , և Աստուած կերակրէ զնոսա . որչափ և առաւել զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս :

25 Որ՞վ ՚ի ձէնջ առ հոգալ՝ կարիցէ յաւելուլ ՚ի հասակ իւր կանգուն մի :

26 Իսկ արդ՝ եթէ ՚ի փոքուն չէք քաւական՝ վասն այլոցն զի՞ հոգայցէք :

27 Հայեցարո՛ւք ընդ շուշանն՝ որպէս աճէ , ոչ վանայ՝ և ոչ նիւթէ . ասեմ ձեզ , եթէ ոչ Սողոմոն յամենայն ՚ի փառսն իւր՝ զգեցաւ իբրև զմի ՚ի նոցանէ :

28 Իսկ եթէ զխոտն՝ որ այսօր ՚ի գետի է՝ և վաղիւ ՚ի ննջ արկանելի , Աստուած այնպէս զգեցուցանէ . որչափ և առաւել զձեզ՝ Հնարաւորք :

29 Եւ դուք մի՛ խնդրէք՝ զինչ ուտիցէք կամ զինչ ըմպիցէք , և մի՛ զբաղնուք .

30 Զի զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն . այլ ձեր Հայր հոգիդ քեզանից կեա՛ կրկնագրին[12] . ապա էն որ պատրաստեցիր՝ ո՞մ կը լինի[13] :

21 Ինչպէս էլ նա՝ որ իրան անձին համար գանձ (խաղաղ) հաւաքէ , և Աստուծով չը հարուստանայ[14] :

22 Իրան աշակերտներին ասաց . Ի՛րա համար ասում եմ ձեզ . հոգա՛ մի՛ անէք հոգոյ համար՝ թէ ինչ պիտի ուտէք , և ոչ մարմնոյ համար՝ թէ ինչ պիտի հագնիք[15] :

23 Ինչու՞ որ՝ հոգին աւելի է քան թէ կեղակուրն , և մարմինն քան թէ հագուստն :

24 Նա՛յեցէք ագռաւներին . որ ոչ սերմանեն և ոչ ընձանեն . ոչ նորանք ոչ մառաններ ունին և ոչ ամբարներ , և Աստուած կերակրում է նորանց[16] . ապա որքան էլ աւելի ձեզ՝ որ թռչուններից աւելի լաւ էք :

25 Ձեզանից ո՞վ կարող է իրան հօգա անելոյն իրան հասակին վերայ մին գազ աւելացնել :

26 Ապա եթէ որ փոքր բանի համար բաւական չէք՝ ինչու ուրիշ բանների համար հոգա էք անում :

27 Նա՛յեցէք շուշանն (ծաղկին) , թէ ինչպես է մեծանում . ոչ ջանք է անում և ոչ մանում . ասում եմ ձեզ՝ թէ Սողոմոնն էլ իրան ամէն փառքի մէջն նորանց մրնի նման չը հագաւ :

28 Ապա եթէ որ խոտն որ էսօր յանդումն կայ՝ և էգուց փուռն մէջ կը ձգվի , Աստուած էնպէս է հագցնում , ապա որքան էլ աւելի ձեզ՝ ով Թերահաւատներ :

29 Եւ դուք մի՛ խնդրէք՝ թէ ինչ պիտի ուտէք կամ ինչ պիտի խըմէք , և հոգա մի՛ քաշէք .

30 Ինչու որ՝ էդ ամէն բաներըդ աշխարհքի հեթանոսներն են խնդ-

(12) Գոր . բ . 23 . բէ . 8 : Պաղ . գբ . 7 . Ումի . գ . 14 : (13) Պաղ . լբ . 6 : Ե՛ր . ժէ . 11 : (14) Պաղ . գ . 20 : Ա Տի՛ . գ . 18 , 19 : Ումի . բ . 5 : (15) Պաղ . գ . 25 : (16) Գոր . լէ . 11 : Պաղ . ռեզ . 9 :

Digitized by Google

գիտէք՝ զի պիտոյ է ամենայն ։

31 Եւայց խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ · և այն ամենայն յաւելցի ձեզ ։

32 Մի երկնչիր հօտ փոքրիկ · զի հաճեցաւ Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն ։

33 Ա՛ճառեցէք զինչ ձեր և տուք ողորմութիւն · և արարէք ձեզ քսակս առանց ի ծանալոյ , գանձ անպակաս յերկինս · ուր ոչ գող մերձենայ , և ոչ ցեց ապականէ ։

34 Զի ուր գանձն ձեր է , անդ և սիրտք ձեր եղիցին ։

35 Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջ՝ և ճրագունք լուցեալք ։

36 Եւ դուք նմանօղք մարդկան՝ որ սպասեն տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսանեացց · զի յորժամ գայցէ և բախիցէ , վազ վաղակի բանայցեն նմա ։

37 Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթնաւոն · ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ ածցէ՝ և բազմեցուսցէ զնոսա , և անցեալ պաշտիցէ զնոսա ։

38 Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ պահու եկեսցէ՝ և գտցէ այնպէս , երանելի են ծառայքն այնոքիկ ։

39 Եւայց զայն գիտասջիք , եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր , և չտայր թողել տալ տան հատանել ի տան իւրում ։

40 Եւ դուք պատրաստ լերուք · զի յորում ժամու ոչ կարծէք՝ Որդի մարդոյ գայ ։

41 Ասէ ցնա Պետրոս · Տէր , մեզ՞ ասես զառակս այս , կամ և ամենայն ժողովրդեան ։

42 Ասէ Տէր · Ո՞վ է արդեօք հաւատարիմ գանձապետ և իմաստուն , զոր կացուսցէ տէր նորա ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա ի ժամու պիտոյից զչափ ։

43 Երանի ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր նորա գտցէ այսպէս առնելով ։

44 Ճշմարիտ ասեմ ձեզ՝ զի ի վերայ ամենայն ստացուածոց իւրոց կացուսցէ զնա ։

45 Եթէ ասասցէ ծառայն այն ի սրտի իւրում · Ուշացուցանէ տէր իմ գալ իւր , և սկսցէ հարկանել զծառայսն և զսպասաւորսն , ուտել և արբենալ ։

46 Եկեսցէ տէր ծառային այնմիկ յօր ոչ սպասէ , և ի ժամ զոր ոչ գիտէ , և պատառեսցէ զնա , և զբաժինն նորա ընդ անհաւատսն դիցէ ։

47 Եւ ծառայն այն որ գիտաց զկամս տեառն իւրոյ , և ոչ պատրաստեաց , և ոչ արար ըստ կամաց նորա , հարկանելոց է բազումս ։

48 Եւ որ ոչ գիտաց , և արար արժանս հարկանաց , սակաւս հարկանելոց է ։ Եւ ամենայն որում տուաւ բազում , բազում խնդրեսցի ի նմանէ · և որում ետուն բազում , աւելի խնդրեսցեն ի նմանէ ։

49 Զկրակ եկի արկանել ի վերայ երկրի , և զի՞նչ կամիմ , եթէ ոչ զի վառեսցի ։

50 Եւ մկրտութեամբ մկրտիլ ունիմ , և զի՞նչ կամիմ , մինչև կատարեսցի ։

51 Զի խաղաղութիւն կարծէք թէ եկի տալ ի վերայ երկրի ։ Ոչ , ասեմ ձեզ , այլ զբաժանումն ։

52 Զի ոչ ինչ ապագայ հինգ հոգիք ի միում տանն բաժանեալք իցեն , երիք ի վերայ երկուց , և երկուք ի վերայ երից ։

53 Բաժանեսցին հայր ի վերայ որդւոյ , և որդի ի վերայ հաւր , մայր ի վերայ դստերն , և դուստր ի վերայ մաւրն , սկեսուր ի վերայ հարսին իւրոյ , և հարսն ի վերայ սկեսրին ։

54 Եւ ասէր ցժողովուրդսն · Յորժամ տեսանիցէք զամպ ելանել յարեւմտից , անդէն ասէք՝ եկն տարափ , և եղեալ է այնպէս ։

55 Եւ յորժամ հարաւոյ շնչէ , ասէք՝ զի տապ լինիցի , և լինի ։

56 Ով կեղծաւորք , զերեսս երկրի և զերկնից գիտէք քննել , զի՞նչ ոչ գիտէք քննել զժամանակս այս ։

57 Եւ ընդէ՞ր ոչ ինքեանք ի ձեզ դատիցէք զարդարն ։

58 Զի յորժամ երթիցես ընդ հակառակորդ քո առ իշխանն , ի ճանապարհի ջան ածիր ազատել ի նմանէ , զի մի՞ քաշեսցէ զքեզ առ դատաւորն , և դատաւորն մատնեսցէ զքեզ դահճապետին , և դահճապետն արկցէ զքեզ ի բանտ ։

59 Ասեմ քեզ՝ զի մի՞ ելցես անտի , մինչև հատուցանիցես զվերջին դրամն ։

(17) Մատ · գ · 33 ։ (18) Մատ · ժգ · 25 , 28 ։ (19) Մատ · ժԹ · 21 ։ Գործ · բ · 45 ։ գ · 34 ։ (20) Մատ · ղ · 20 ։ Գ Տիմ · գ · 19 ։ (21) Եփես · գ · 14 · ա Պետր · ա · 13 ։ (22) Մատ · իե · 1 , Նաչէ ։ (23) Մատ · իգ · 46 ։ (24) Մատ · իգ · 43 ։ ա Յով · ե · 2 ։ բ Պետր · գ · 10 ։ Յայտ · գ · 3 · ժգ · 15 ։

Digitized by Google

40 Եւ դուք եղերո՛ւք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք, գայ Որդի մարդոյ։
41 Ասէ Պետրոս. Տէր՝ առ մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ ա-մենեսեան։
42 Եւ ասէ Տէր. Ո՞վ իցէ հաւատարիմ անառակ և խմաստուն, զոր կացուցցէ աէր իւր՝ ի վերայ գերդաստանի իւրոյ տալ՝ ի ժամու զկերա-կուրս։

43 Երանի իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ աէր իւր գտանիցէ արար-եալ այնպէս։
44 Ո՛րդեւս ասեմ ձեզ՝ զի՝ ի վե-րայ ամենայն ընչից իւրոց կացուցցէ զնա։
45 Ո՛պա եթէ ասիցէ ծառայն այն՝ ի սրտի իւրմէ. Հայր աէր իմ՝ ի գալ. և սկսանիցի հարկանել զծա-ռայսն և զաղախնայս, ուտել և ըմ-պել և արբենալ։

46 Եկեսցէ աէր ծառային այնո-րիկ՝ յաւուր յորում ակն ոչ ու-նիցի, և՝ ի ժամու յորում ոչ գի-տիցէ. ընդմէջ կտրեսցէ զնա, և զմասն նորա ընդ անհաւատս դիցէ։

47 Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամն աէրունն իւրոյ՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բա-զում։
48 Եւ որ ոչն գիտիցէ՝ և արժանի գանի ինչ գործիցէ, արբցի գան սակաւ. ամենայնի՝ որում շատ տա-ւաւ, շատ խնդրեսցի՝ ի նմանէ. և զոր-ում բազում աւանդեցաւ, առա-ւել ևս պահանջեսցեն՝ ի նմանէ։

49 Հուր եկի արկանել յերկիր.

40 Եւ գուք պատրաստ կացէք՝ ինչու որ՝ էն ժամուն որ չէք կար-ծիլ, Որդին մարդոյ կը գա՞յ։
41 Պետրոսն ասաց. Տէր. էդ առակըդ մե՞զ ասացիր, թէ ամէ-նին։
42 Եւ Տէրն ասաց. Ո՞վ է էն հաւատարիմ և խմաստուն ծառան՝ որ տիրոջ՝ իրան աէրն ատն ընտան-եաց վերայ կարգեց՝ որ տուողը կերակուր ատյ (իրանց) ժամանակ-ուն՝[26]։
43 Երանի է էն ծառային՝ որ ի-րան աէրն՝ եկըտր գայ, ընպէս ա-րած գտնէ տիրոջ։
44 Ճշմարիտըն ասում ձեզ՝ թէ իրան ամէն ապրանքներին վե-րայ կըդնէ տիրոջ[27]։
45 Ո՛պա թէ էն ծառան իրան սրտումն ասէ՝ թէ իմ աէրս ա-շանում գալ, և սկսէ ծառաներ-րին և ազախիններբին (ջարտուղնե-ղին) ծեծել, ուտել և խմել և հարբենալ[28]։
46 Կըգայ էն ծառայի աէրն էն օրումն՝ որ նա չի սպասիլ, և էն ժամուն (սահմանն) որ նա չի գիտիլ. նորան միջեցն կըկտրէ, և նորա բաժինըն անհաւատներին հետ կըդնէ։
47 Եւ ծառան որ իրան աէրոջ կամքըն գիտենայ և նորա կամացն պէս չըպատրաստէ, շատ ծեծ կու-ուէ[29]։
48 Եւ նա որ չըգիտենայ՝ և ծե-ծի արժանի բան գործէ, քիչ ծեծ կուտէ[30]. էն ամենին ումմ որ շատ տրվվաւ՝ նորանից շատ կըխնդրըվի. և ումմ որ շատ (բան) պահ տրվվաւ՝ նորանից էլ աւելի կըխնդրեն։

49 (Ես) եկի՝ որ կրակ քցեմ երկ-

(35) Մատթ. իդ. ԽԱ. իե. 13. Մարկ. ժգ. 33. Ղուկ. իա. 34. 36. ա Յովհ. է. 6. բ Գործ. գ. 12. (36) Մատթ. իդ. 35. իե. 21. ա Գործ. գ. 2. (37) Մատթ. իդ. 47. (38) Մատթ. իդ. 48. (39) Յովհան. ժե. 20. բ Օրին. իե. 2. Ղուկ. ի. 22. ժե. 23. Գործ. ժե. 20. Ճառ. գ. 47. (40) Կ. Նա. է. 47. ա ՃԱ. գ. 13.

Digitized by Google

և զինչ կամիմ թէ արդէն իսկ բոր-
բոքեր :
50 Եւ մկրտութիւն մի ունիմ
մկրտել , և զինքդ փութամ մինչև
կատարեցի :

51 Համարիք եթէ խաղաղութիւն
եկի տալ յերկիր . Ոչ՝ ասեմ ձեզ ,
այլ բաժին :

52 Զի եղիցին յայսմհետե հինգ
ի սան միում բաժանեալք , երեքն
յերկուց , և երկուքն յերից :

53 Բաժանեսցի հայր յորդւոյ՝ և
որդի ի հօրէ , մայր ի դստերէ՝ և
դուստրն ի մօրէ , սկեսուր ի հարս-
նէ՝ և հարսն ի սկեսրէ իւրմէ :

54 Ասաց և ցժողովուրդսն . Յոր-
ժամ տեսանիցէք ամպ ծագեալ յա-
րևմտից , իսկոյն ասէք՝ թէ Անձրև
գայ , և լինի այնպէս .

55 Եւ յորժամ հարաւ շնչեալ ,
ասէք՝ թէ խորշակ լինի , և լինի
այնպէս :
56 Կեղծաւորք՝ զերեսս երկնի և
երկրի գիտէք փորձել , իսկ զժամա-
նակս զայս զինչդ ոչ փորձէք :
57 Ընդէր և յանձանց իսկ ոչ
ընտրէք զարժանն :
58 Յորժամ երթայցես ընդ ոսոխի
քում առ իշխան , ի ճանապարհի
տուր զշաւիւն զերծանել ի նմանէ .
զի գուցէ քարշիցէ զքեզ առ դա-
տաւարն , և դատաւարն մատնիցէ
դահճի , և դահիճն արկանիցէ ի
բանս :

59 Ասեմ քեզ , Ոչ ելանիցես ան-
տի՝ մինչև հատուցանիցես զյետին
քնիոնն :

բիս վերայ[31] . և ինչ՝ ուզումեմ
որ հնոց հիմուկուց բորբոքվեր :
50 Ունայց մին մկրտութիւն ունիմ
որ պիտի մկրտվիմ[32] . և քանի՞
հազա՝ եմ քաշում մինչև որ էն
կատարվի :

51 Կ՚ինէք կարծումիք թէ եկի
խաղաղութիւն տալ երկրիս վե-
րայ[33] . Չէ՛ ասումեմ ձեզ՝ բայց
բաժանմունք[34] :

52 Ինչու որ՝ սրանից եւս հինգ
հոգի մին տան մէջ բաժանված կը-
լինին , երեքն երկուսից՝ և եր-
կուքն երեքից[35] :

53 Հայրն կրբաժանվի որդուցն՝
և որդին հօրից , մայրն (իրան)
աղջկանից՝ և աղջկին իրան մօրի-
ցըն . կեսուրն (իրան) հարսից՝ և
հարսն իրան կեսուրից :

54 Յողովուրդներին էլ ասաց .
Երբոր տեսնումիք թէ արևմտից
ամպ է դուրս գալիս՝ շուտով ա-
սումիք՝ թէ Անձրև կըգայ , և էն-
պէս է լինում[36] :

55 Եւ երբոր հարաւային քամին
փչումէ , ասումիք՝ թէ Շոգ կը-
լինի և էնպէս է լինում :

56 Կեղծաւորներ՝ երկնքի և երկ-
րի երեսըն գիտումիք փորձել . բայց
էս ժամանակըս ինչու՞ չէք փորձում :

57 Եւ ինչու՞ հնոց ձեզանից էլ
չէք ընտրում էն՝ որ արժանն է :

58 Երբոր քո հակառակ ոսոխի
հետ իշխանի մօտ գնալու լինիս[37] ,
ճանապարհումն տալիքըն տուր՝ որ
նորա ձեռքից ազատվիս[38] . որ չը-
լինի թէ քեզ դատաւարին մօտ քա-
շէ՝ և դատաւարն դահճին (ձեռա-
պին) մատնէ , և դահիճն բանտի
մէջ քցէ :

59 Ասումեմ քեզ . Նեռնեղից դուրս
չես գալ՝ մինչև որ վերջին դան-
կըն էլ չըվճարես :

(31) Ա՛այր . 51 : (32) Պտրտ . ի . 22 : Պտրտ . ժ . 38 : (33) Պտրտ . ժ . 34 : Ա՛ԽՐ . 49 : (34) Պ՚ետ . է . 6 : Յովհ . է . 43 : Բ . 16 : ժ . 19 : (35) Պտրտ . ժ . 35 : (36) Պտրտ . ժԶ . 2 : (37) Ղտաւ . իե . 8 : Պտրտ . է . 25 : (38) Սաղ . լբ . 6 : Նտաղ . իե . 8 :

Digitized by Google

ԿԼ · ԺՓ

1 Դրխոտոս Գալիլեացոց և ուրիշներուն պատիժ քաջալերելը տպաւորութեան կեղծաւոր : 6 Ընդհատուղ թուզի ծառն Ըստուած չ'կամենալուն որ նորան երկիւղ խոխտանք : 11 Սինկլետի մին կենդան բժշկելը : 18 Դրխոտոս մանաւանդ հասարակ և խմորի առակները դոյզ կըսայ թէ իրան խոհեմներն իրան ընդհանուրին պատմելու ինչպես զօրութիւն գործուած : 24 Նեղտրելու որ նեղ դրան մէջը մտնեն : 31 Նա Հերովդէսի և Նրատապետին կըսատկէ :

1 Ակին ոմանք ՚ի նմին ժամա-
նակի, և պատմեցին նմա վասն Գա-
լիլեացւոցն, որոց զարիւնն Պիղա-
տոս խառնեաց ընդ զոհս նոցա :

2 Պատասխանի եհ և ասէ ցնո-
սա. Եթէ ոչ ապաշխարիջիք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք :

3 Եւ ասեմ ձեզ. Եթէ ոչ ապաշխարիջիք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք :

4 Եւ զորս վիրաւորեաց աշտարակն ի Սելովամ, և սպան զնոսա. Համարիք եթէ նոքա պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնակեալ են ՅԵրուսաղէմ :

5 Եւ ասեմ ձեզ. Եթէ ոչ ապաշխարիջիք՝ ամենեքեան նոյնպէս կորնչիջիք :

6 Ասաց և զառակս զայս. Ձիւենի մի էր ուրումն անկեալ յայգւոջ իւրում. և եկն խնդրել պտուղ ՚ի նմանէ, և ոչ եգիտ :

7 Եւ ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ՚ի թզենւոջդ՝ և ոչ գտանեմ. արդ՝ կարեւ զգա, ընդէր և զերկիրդ խափանէ :

8 Եւ նա պատասխանի եհ և ասէ. Տէր՝ թող զդա յայս ամ ևս, մինչև շուրջ զդովս բրեցից և արկից աղբ.

1 Հենց էն ժամանակուան մէն քանի մարդիկ եկին և պատմեցին նորա էն Գալիլեացիներին համար, որ նորանց արիւնըն Պիղատոս նորանց մատաղի հետ խառնեց :

2 Պատասխան առաւ և նորանց ասաց. Միթէ կարծում եք թէ էն Գալիլեացիները աւելի մեղաւոր էլան, քանթէ ամէն Գալիլեացիներն, որ էնպիսի բան եկաւ նորանց վերայ :

3 Չէ, ասում եմ ձեզ. Խայց թէ որ չապաշխարէք, ամէնքդ էլ էնպէս կըկորչիք.

4 Կամ էն տասնուերկու հոգին որ Սելովամի մէջ աշտարակն (Բաշլը) վերընկաւ նորանց վերայ, և նորանց սպանեց. մի թէ կարծում եք թէ նորանք աւելի պարտական էլան քան ամէն մարդիկ՝ որ Երուսաղէմում բնակված են :

5 Չէ, ասում եմ ձեզ. Խայց թէ որ չապաշխարէք՝ ամէնքդ էլ էնպէս կըկորչիք :

6 Նա առակըս էլ ասաց. Մէնի մարդ իրան այգդ (Բաղչէ) մէջ մի թըզի ծառ էր տնկել. և եկաւ, որ պտուղ խնդրէ նորանից, և չըգտաւ[1] :

7 Այգեպանին ասաց. Ահա երեք տարի է՝ որ գալիսեմ պտուղ խնդրել էդ թըզի ծառիցդ, և չեմ գտնում. ուրեմն կարիր դրան, էլ ինչու՞ դա երկիրդ խափանում :

8 Նա պատասխան առաւ և ասաց. Տէր՝ էս տարին էլ թող դրան, մինչև որ դորա չորս կողմից փորեմ և աղբ ածեմ.

(1) Նայ · ե · 3 : Մատ · իա · 19 ·

Digitized by Google

9 Ինքնին տրտունջ պատուղ մի՛ տրտնջէք միմեանց վրայ, որպէս թէ չէք դատուիլ. ահա դատաւորը առջեւի դրան կայ։

10 Եղբարք, առէք օրինակ չարչարանաց եւ համբերութեան զհարիւրապետացն որ խօսեցան յանուն Տեառն։

11 Ահա երանի կոչեմք զհամբերողսն։ Զհամբերութիւն Յոբայ լուարուք, եւ զվախճան Տեառն տեսէք, զի գթած է Տէր եւ ողորմած։

12 Մանաւանդ, եղբարք իմ, մի՛ երդնուիք ոչ երկինք եւ ոչ երկիր եւ ոչ այլ երդում մի՛ ինչ, այլ թող ձեր այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ, զի մի՛ դատապարտութեան մերձենայք։

13 Ոք ոմն ի ձեզ չարչարի՞, թող աղաչէ. ոք ուրախանայ՞, թող երգէ։

14 Ոք ոմն ի ձեզ հիւանդանայ՞, թող կոչեսցէ զծերակուտս եկեղեցւոյ, եւ թող աղաչեսցեն զնա՝ օծանելով զնա իւղով յանուն Տեառն։

15 Եւ աղօթք հաւատոյ զհիւանդն կեցուսցէ, եւ Տէր յարուցէ զնա. եւ եթէ մեղս գործեաց, թողցին նմա։

16 Խոստովանեցարուք միմեանց զյանցանսն, եւ աղօթեցարուք վասն միմեանց, զի բժշկիցիք։ Բազում զօրութիւն աղաչանաց արդարոյ, որ ներգործի։

17 Եղիա մարդ նմանապէս ի բնութենէ մերմէ էր, եւ աղօթիւք աղաչեաց զի մի՛ անձրեւեսցէ, եւ ոչ անձրեւեաց ի վերայ երկրի երիս ամս եւ վեց ամիս։

18 Եւ դարձեալ աղաչեաց, եւ երկինք անձրեւ տուին, եւ երկիր բուսոյց զպտուղ իւր։

19 Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ի ճշմարտութենէ, եւ դարձուսցէ զնա ոք,

20 գիտասցէ եթէ որ դարձուցանէ զմեղաւորն ի մոլորութենէ ճանապարհի նորա, կեցուսանէ զանձն ի մահուանէ, եւ ծածկէ զբազմութիւն մեղաց։

9 Մի՛ տրտնջէք, եղբարք, միմեանց վրայ, զի մի՛ դատապարտիցիք. ահա դատաւորն առաջի դրանն կայ։

10 Եղբարք իմ, առէք օրինակ զչարչարանաց եւ զհամբերութեան զմարգարէսն, որ խօսեցան յանուն Տեառն։

11 Ահա զհամբերողսն երանի կոչեմք։ Զհամբերութիւն Յոբայ լուարուք, եւ զվախճան Տեառն տեսէք, զի գթած է Տէր եւ ողորմած։

12 Մանաւանդ, եղբարք իմ, մի՛ երդնուիք ոչ երկինք եւ ոչ երկիր եւ ոչ այլ երդում մի՛ ինչ, այլ թող ձեր այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ, զի մի՛ դատապարտութեան մերձենայք։

13 Ոք ոմն ի ձեզ չարչարի՞, թող աղաչէ. ոք ուրախանայ՞, թող երգէ։

14 Ոք ոմն ի ձեզ հիւանդանայ՞, թող կոչեսցէ զծերակուտս եկեղեցւոյ, եւ թող աղաչեսցեն զնա՝ օծանելով զնա իւղով յանուն Տեառն։

15 Եւ աղօթք հաւատոյ զհիւանդն կեցուսցէ, եւ Տէր յարուցէ զնա. եւ եթէ մեղս գործեաց, թողցին նմա։

16 Խոստովանեցարուք միմեանց զյանցանսն, եւ աղօթեցարուք վասն միմեանց, զի բժշկիցիք։ Բազում զօրութիւն աղաչանաց արդարոյ, որ ներգործի։

17 Եղիա մարդ նմանապէս ի բնութենէ մերմէ էր, եւ աղօթիւք աղաչեաց զի մի՛ անձրեւեսցէ, եւ ոչ անձրեւեաց ի վերայ երկրի երիս ամս եւ վեց ամիս։

18 Եւ դարձեալ աղաչեաց, եւ երկինք անձրեւ տուին, եւ երկիր բուսոյց զպտուղ իւր։

19 Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորեսցի ի ճշմարտութենէ, եւ դարձուսցէ զնա ոք,

20 գիտասցէ եթէ որ դարձուցանէ զմեղաւորն ի մոլորութենէ ճանապարհի նորա, կեցուսանէ զանձն ի մահուանէ, եւ ծածկէ զբազմութիւն մեղաց։

(1) Ոմանք. ժղ. 18 ։ Պատճ. ք. 17 ։ (2) Ոմանք. ժբ. 10 ։ Ոմանք. գ. 2 ։ Ոմանք. շ. 7 ։ ժգ. 3 ։ (3) Ոմանք. ժգ. 5 ։ (4) Ոմանք. ժբ. 9 ։

Digitized by Google

քայութիւն Աստուծոյ , եւ զայնմ նմանութեան նմանեցուցից զնա ։

19 Զայն է հասոյ մանանխոյ , զոր առեալ մարդոյ արկ ի պարտէզ իւր · աճեաց և եղև ծառ , և թռչունք երկնից բնակեալ էին յոստս նորա ։

20 Եւ դարձեալ ասէ . Ումե՞մ նմանեցուցից զարքայութիւն Աստուծոյ ·

21 Զայն է խմորոյ , զոր առեալ կնոջ թաքուցեալ յալեր երից գրուանց , մինչև խմորեցաւ ամենայն ։

22 Եւ շրջէր ընդ քաղաքս և ընդ գեօղս՝ ուսուցանէր . և ճանապարհ արարեալ Երուսաղէմ ·

23 Ասէ ոմն ցնա . Տէր՝ եթէ սակա՞ւք իցեն , որ ապրելոց իցեն . և նա ասէ ցնոսա ։

24 Ջանացարո՛ւք մտանել ընդ դուռն նեղ . ասեմ ձեզ , զի շատ՚զումք խնդրեսցեն մտանել՝ և ո՛չ կարացեն ։

25 Յորմէ հետէ մտցէ՚տանուտէրն և փակեսցէ զդուռնն . և սկսանիցիք կալ արտաքո՛ւստ՝ և բախել զդուռնն , և ասել . Տէր Տէր՝ բա՛ց մեզ . և պատասխանի առեալ ասիցէ ձեզ . Ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք ։

26 Յայնժամ սկսանիցիք ասել . Կերաք առաջի քո և արբաք , և՝ի հրապարակս մեր ուսուցեր ։

27 Եւ ասիցէ . Ա՛սեմ ձեզ , ո՛չ գիտեմ զձեզ ուստի էք . ՚ի բա՛ց կացէք յինէն ամենայն մշակքդ անիրաւութեան ։

քայութիւնն մեմ նման է . և ինչ նմանութեամբ նմանեցնեմ նորան՞ ։

19 Ա՛նանձխի (խրփոլէ) հատի նման է , որ առեալ մին մարդ առաւ իրան պարտէզի (պօսքան՚) մէջը ցանեց . մեծացաւ և ծառ է լաւ՝ և երկնքի թռչուններն նորա ճղներին վերայ բնակված էին ։

20 Եւ միւսի ասաց . Ումե՞մ նըմանեցնեմ Աստուծոյ արքայութիւնը ։

21 Խմորի նման է , որ նորան մին կին առաւ և երեք չափ ալիւրի մէջ պահեց , մինչև որ ամէնն խմորվեցաւ ։

22 Եւ միան էր գալիս քաղաքներումն և գիւղերումն՝ և սովորեցնուէր[8] . և երբոր ճանապարհ ընկած գնուէր դէպի Երուսաղէմ ,

23 Ա՛ինն ասաց նորան . Տէր՝ միթէ քիչ են նորանք , որ պիտի ապրին . և նա ասաց նորանց ։

24 Ջանք արէք որ նեղ դըռնովն ներս մտնէք[9] . ասումեմ ձեզ , թէ շատ մարդիկ կըխնդրեն մըտնել և չեն կարենալ[10] ։

25 Երբոնից եաւս որ տան տէրն կըմտնէ[11] և դուռըն կըփակէ . և կըսկսէք դուրսն կանգնիլ և դուռըն թակել և ասել[12] . Տէր Տէր՝ բաց մեզ[13] . պատասխան տալով կասէ ձեզ . Չեմ ճանաչըւմ ձեզ թէ ինչ տեղից էք[14] ։

26 Յն ժամանակն կըսկսէք ասել . (Ա՛ենք) քո առաջից կերինք և խըմեցինք , և (դու) մեր փողոցներումն սովորցրիր ։

27 Եւ կասէ . Ա՛սումեմ ձեզ , ես չեմ ճանաչըւմ ձեզ[15] . թէ ի՞նչ տե՛ղից էք . հեռո՛ւ կացէք ինձանից դուք անիրաւութեան ամէն մշակներդ[16] ։

(7) Մատթ · ժգ · 31 · Մարկ · գ · 30 · (8) Մատթ · բ · 35 · Մարկ · զ · 6 · (9) Մատթ · է · 13 · (10) Յովհ · է · 34 · ը · 21 · ժգ · 33 · Հռովմ · բ · 31 · (11) Մատ · լբ · 6 · Նաում · ա · 6 · (12) Մատթ · լե · 10 · (13) Ղուկ · զ · 46 · (14) Մատթ · է · 23 · լե · 12 · (15) Մատթ · է · 23 և լե · 41 · Ա՚Յ · 25 · (16) Պսաղ · գ · 8 · Մատթ · լե · 41 ·

Digitized by Google

28 Ընդ եղեգի լալ և կրճել ա-
ստմանց . յորժամ տեսանիցէք զՆ-
բրահամ և զԻսահակ և զՅակոբ և
զամենայն մարգարէս յարքայու-
թեան Աստուծոյ , և զձեզ հան-
նալ արտաքս ։

29 Եւ եկեսցեն յարևելից և՝ յա-
րևմտից և՝ ի հիւսիսոյ և՝ ի հա-
րաւոյ , և բազմասցին յարքայու-
թեան Աստուծոյ ։

30 Եւ ահա իցեն յետինք՝ որ և-
կիցեն առաջինք , և իցեն առաջինք՝
որ լինիցին յետինք ։

31 Ի նմին աւուր մատեան ոմանք
փարիսեցիք , և ասեն ցնա . Ել և
գնա՛ աստ , զի Հերովդէս կամի
սպանանել զքեզ ։

32 Եւ ասէ ցնոսա . Երթա՛յք ա-
սացէք աղուէսուն այնմիկ . Ի՛նա-
սիկ հանեմ դեւս , և բժշկութիւնս
կատարեմ այսօր և վաղիւ . և յե-
րիր աւուր կատարիմ ։

33 Այլ պարտ է այսօր և վա-
ղիւ և ի միւսում աւուր գնալ .
զի ոչ է մարթի մարգարէի կորնչել
արտաքոյ քան զԵրուսաղէմ ։

34 Երուսաղէմ Երուսաղէմ որ
կատարէիր զմարգարէս , և քարկո՛
տանէիր զառաքեալսն առ քեզ . քա-
նիցս անգամ կամեցայ ժողովել զորդ-
դիս քո , որպէս հաւ զճագս իւր ընդ
թեւովք և ոչ կամեցարուք ։

35 Ի՛նչ թողեալ լիցի ձեզ աուն
ձեր : Այլ ասեմ ձեզ , եթէ ո՛չ
ևս տեսանիցէք զիս , մինչև ասիցէք՝
Օրհնեալ եկեալն յանուն Տեառն ։

28 Անտեղ կրկնեի լաց և ատամ-
ներ կրճտանեն[17] . երբար Աբրահա-
ամն և Իսահակն և Յակոբն եւ
ամեն մարգարեներուն Աստուծոյ ար-
քայութեան մէջն կըտեսնէք՝ և ձեզ
դուրս հանած[18] ։

29 Եւ արևելքէն և արևմտէն ,
և հիւսիսէն և հարաւէն կրգան
և Աստուծոյ արքայութենէն կը-
նստին ։

30 Եւ ահա յետիններ կան՝ որ ա-
ռաջին կրլինին . և առաջիններ կան՝
որ յետին կրլինին[19] ։

31 Հենց էն օրուանն մին քանի
փարիսեցիք մօտ եկին և ներսն ա-
սացին . Վռաս եկ և գնա՛ էստեղէց .
ինչու որ՝ Հերովդէս կամենուած որ
քեզ սպանէ ։

32 Եւ նորանց ասաց . Գնացէ՛ք
ասացէ՛ք էն աղուէսին , թէ Ի՛նչ
դևեր եմ հանում և բժշկութիւն-
ներ եմ կատարում էսօր և էգուց .
և երէք օրուանն կրկատարեմ[20] ։

33 Այլ էսօր և էգուց և մէկել
օրն պէտք է գնալ . ինչու որ՝ կո-
րնչելի չէ՝ որ մին մարգարէ Երու-
սաղէմից դուրս կորչի ։

34 Եր՛ուսաղէմ Եր՛ուսաղէմ՝ որ
մարգարէները կսատրուածիր , և
քեզ մօտ ուղարկուածները քարկո-
ծուածիր . քանի՛ անգամ կամեցայ
որ որդիքներըդ ժողովել՝ ինչպես որ
հաւն իրան ձագերը թևերի տակն
(է ժողովում) . և չկամեցաք[21] ։

35 Ի՛նչ ձեր տունդ թողուած կը-
լինի ձեզ[22] . բայց ասումեմ ձեզ՝ թէ
Ալ ինձ չէք տեսնիլ՝ մինչև որ ա-
ռէք . Օրհնեալ է Տէրի անունով ե-
կածն[23] ։

(17) Ասղ . ը . 12 : ժգ . 42 : ին . 51 : (18) Ասղ . ը . 11 : (19) Ասղ . ժբ .
30 : բ . 16 : Ասլ . ժ . 31 : (20) Ելք . բ . 10 : (21) Ասղ . իդ . 37 : (22)
Ղևտ . իդ . 31 , 32 : Սամ . կբ . 25 : Նոռ . ա . 7 : Գան . բ . 27 : (23) Ասլ .
գ . 13 : Սամ . ճկը . 26 : Ասղ . իա . 9 : Ասլ . ժա . 10 : Ղուկ . ժբ . 38 :
Ամբ . ժբ . 13 :

Digitized by Google

ԳԻ. ԺԴ

1 Վրէժառաւ ջնջումն ջրոցդ՝ մարդն կըրժէ . 7 խոնարհութիւն ; 12 Նւ աղքատներին ձեռ անելն կըտուրցնէ . 15 Նւ մի՛ ընդիմիր առաքեալ ծայր կըտայ թէ Ընառնոյ խոսքն առաջ աշխարհասէր մարդիքն ինչպես երկնքին գուբս պիտի գըցին : 25 Նրբա աշակերտ լինել և իրանց խաչն վեր առնել կամեցողներն պէտք է որ առաջուց իրանց անձնէրին փորձեն , որ չը լինի թէ վերջն ամօթով յետ գառնան , 31 Նւ հանի կրնան ազի պէս անպիտան լինին :

1 Նւ եղև ՚ի մտանելն նորա ՚ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց ՚ի շաբաթու ուտել հաց , և նոքա սպասէին նմա :

2 Եւ ահա այր ումն էր անդ ջրգողացեալ առաջի նորա :

3 Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցօրինաւորսն և ցփարիսեցիս . Եթէ արժան ի՞ւրէ ՚ի շաբաթու բժշկել :

4 Եւ նոքա լուռ եղեն . և բռնեաւ զնմանէ՝ բժշկեաց զնա , և արձակեաց :

5 Եւ ասէ ցնոսա . Որ ուրուք ՚ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի ՚ի ջրհոր , և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու :

6 Եւ ոչ կարացին առալ նմա պատասխանի առ այն :

7 Ասաց և առ կոչնականսն առակ մի , հայեցեալ թէ զնիւրգ բարձրնտիր լինէին , ասէ ցնոսա :

8 Որժամ կոչիցէ ոք զքեզ ՚ի հարսանիս՝ կամ ՚ի կոչնունս , մի՛ բազմիցիս յառաջին բարձին . գուցէ պատուականագոյն ևս քան զքեզ իցէ կոչեցեալ ՚ի նմանէ :

9 Եւ եկեալ՝ որ զքեզն և զնա կոչեաց , ասիցէ ցքեզ . Տո՛ւր սմա տեղի . և ապա սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել :

10 Այլ որժամ կոչիցիս , երթիջիր՝ բազմեաջիր ՚ի յետին տեղ-

1 Նւ էլաւ որ նա մին շաբաթ օրուամ փարիսեցւոց իշխաններէն մընէր տունն մուտ՝ որ հաց ուտէ . և նորանք ապասուէին նորան :

2 Եւ ահա էնտեղ մին ջրգողացած մարդ կար նորա առաջին :

3 Յիսուս պատասխան առաւ և էն օրէնք գիտօղներին և փարիսեցիներին ասաց . Այ՝ իրէ արժան է շաբաթ օրուամ բժշկուրիւն անել[1] :

4 Եւ նորանք լուռ կացան . և ձեռով բռնեց նորան՝ և նորան բժշկեց և արձակեց :

5 Եւ նորանց ասաց . Ձեզանից որի էշն կամ եզն ջրհորի մէջ ընկնի և շուտով չըհանէ նորան շաբաթ օրուամ[2] :

6 Եւ չըկարացին պատասխան տալ նորան էն բանի համար :

7 Այն կանչված մարդկանցն էլ մին առակ ասաց , տեսնելով՝ թէ ինչպես վերևի տեղերըն ընտրում էին . ասաց նորանց :

8 Երբոր մինն քեզ հարսանիք կամ հացկերուրիւն կանչէ , առաջին բարձի վերայ մի՛ նստիր . չըլինի թէ քեզանից էլ աւելի պատուական (մարդ) լինի կանչված նորանից :

9 Եւ նա՝ որ քեզ և նորան կանչեց , գայ և քեզ ասէ . Սորան տեղ տուր . և ապա սկսես ամօթով տեղումն նստիլ :

10 Ըայց երբոր կանչվիս՝ գնա՛ տեղումն նստիր[3] . որ նա՝

(1) Մտթ . ժբ . 10 : (2) Նւ . ԽԴ . 5 : Ը Օրէն . Խ . 4 : Ղ . ա . ժգ . 15 . (3) Ես . ԽԵ . 6 , 7 :

Digitized by Google

ւոջ · զի յորժամ գայցէ՝ որ կոչէ եառցն զքեզ , ասիցէ ցքեզ · Խնդրեա՛ մա՛ւ ի վե՛ր մեծաւր · յայնժամ եղիցի քեզ փառք առաջի բարձակեցեալ ընդ :

11 Ո՛վ ամենայն որ բարձրացուցանէ զանձն , խոնարհեցուցանի զանձն , բարձրասցի :

12 Ասէ և ցհոչեցեալսն · Երբ ժամ առնիցես ճաշ կամ ընթրիս , մի՛ կոչեր զբարեկամս քո , և մի՛ զեղբարս քո , և մի՛ զազգականս քո , և մի՛ զդրացիս քո , և մի՛ զմեծատունս · զի մի՛ և նոքա փոխարէն կոչեսցեն զքեզ , և լինիցի քեզ հատուցումն :

13 Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն , կոչեա՛ զաղքատս և զբեղեալս և զկաղս և զկոյրս :

14 Եւ երանելի լինիցիս · զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ · և հատուսցի քեզ փոխարէն ի յարութեան արդարոց :

15 Իբրև լուաւ զայս ոմն ի բազմականացն՝ ասէ ցնա · Երանի՛ որ կերիցէ ճաշ յարքայութեան Աստուծոյ :

16 Եւ նա ասէ · Այր ոմն գործեաց ընթրիս , և հրաւիրեաց զբազումս :

17 Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամու ընթրեացն կոչել զհրաւիրեալսն՝ թէ եկայք , զի ահաւասիկ պատրաստ է ամենայն ինչ :

18 Եւ սկսան մի ըստ միոջէ ամենեքեան հրաժարել · առաջինն ասէ · ար կանչեց քեզ՝ երբոր գայ , ասէ քեզ · Խնդրեա՛մ վիրև նասիր · էն ժամանակն քեզ հետ նստողներ առաջին փառք կըլինի քեզ :

11 Պատճառն որ՝ ամէն ով որ իրան անձըն բարձրացնում՝ կըխոնարհվի · և ով որ (իրան) անձըն խոնարհացնում՝ կըբարձրանայ[4] :

12 Եւ հաղկերութեան ախրոջն էլ ասաց · Երբոր ճաշ կամ ընթրիք (իւնիւան հայլէսուիւն) անես , մի՛ կանչեր քո բարեկամներիդ , և ոչ քո եղբայրներիդ , և ոչ քո ազգականներիդ , և ոչ քո հարևաններիդ և ոչ էլ մեծամեծներին · որ չըլինի թէ նորանք էլ նորա տեղակ կանչեն քեզ և էն հատուցումն լինի քեզ :

13 Այլ երբոր հաղկերութիւն անես՝ կանչեր աղքատներին և խեղերին (ուխոպնէրին) և կաղերին և կուրերին[5] :

14 Եւ երանելի կըլինիս · ինչու որ՝ բան չունին որ նորա տեղակ վճարեն քեզ · և արդարների յարութեան ժամանակումն նորա տեղակ հատուցումն կըլինի քեզ :

15 Երբոր էն սեղան նստողներից մինն էս բանըս լսեց՝ նորան ասաց · Երանի՛ նորան՝ որ Աստուծոյ արքայութենումն ճաշ կուտէ[6] ,

16 Եւ նա ասաց · Այ՛ին մարդ ընթրիք (իւնիւան հայլէսուիւն) արաւ և շատ մարդիկ հրաւիրեց[7] :

17 Եւ ընթրիքի ժամն (սահմէն) որ եկաւ՝ իրան ծառան ուղարկեց՝ որ էն հրաւիրածներըն կանչէ թէ եկէք , որ տա՛ւ ամէն բան պատրաստ է[8] :

18 Եւ ամենքն սկսեցին մին մին յետ քաշվիլ · առաջինն ասաց ·

(4) Ցած · իա · 29 : Աստ · ժը · 27 : Նահ · իբ · 28 : Մատ · իգ · 12 : Ղուկ · ժը · 14 : Յով · գ · 6 : ա Պետր · ե · 5 : (5) Ղևիտ · բ · 10 · 12 : (6) Յայտ · ժբ : 9 : (7) Մատ · իա · 3 : (8) Նահ · բ · 3 · 5 :

Digitized by Google

Լ՚գարակ գնեցի, և չարիք է ելա-
նել աներանել գնա, աղաչեմ զքեզ՝
կալ զիս հրաժարեալ ։
19 Եւ միւսն ասէ. Լուծա հինգ
եզանց գնեցի, և երթամ փորձել
զնոսա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս
հրաժարեալ ։
20 Եւ միւսն ասէ. կին ածի, և
վասն այնորիկ ոչ կարեմ գալ ։
21 Եւ եկեալ ծառայն պատմեաց
զայն տեառն իւրում։ Յայնժամ
բարկացեալ տանուտէրն՝ ասէ ցծա-
ռայն իւր. Ել վաղվաղակի ՚ի հրա-
պարակս և ՚ի փողոցս քաղաքիդ,
և զաղքատս և զնեղս և զկաղս և
զկոյրս մի՛ծ այսր ։

22 Եւ ասէ ծառայն. Տէր՝. եղև
զոր հրամայեցեր, և կայ և տեղի ։

23 Եւ ասէ տէրն ցծառայն. Ել
՚ի ճանապարհս և ՚ի ցանգս, և ա-
ր՚այ այսր մտանել, զի լցցի տունս
իմ ։
24 Լ՚ասեմ ձեզ, զի ոՒ՛ք ոք յայնց
կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց ի-
մոց ։
24 Եւ երթային ընդ նմա ժողո-
վուրդք բազումք. դարձաւ և ասէ
ցնոսա ։
26 Եթէ ոք գայ առ իս՝ և ոչ ա-
տայ զՀայր իւր և զմայր և զկին
և զորդիս և զեղբարս և զքոյրս,
նաև զանձն ևս իւր, ոչ կարէ
իմ աշակերտ լինել ։

27 Ո՚ւ որ ոչ բառնայ զխաչ իւր՝
և գայ զկնի իմ, ոչ կարէ իմ ա-
շակերտ լինել ։
28 ՈՒ՞մ ոք ՚ի ձէնջ կամիցի շինել
աշտարակ, և ոչ նախ նստեալ հա-
մրիցի զծախսն՝ եթէ ունիցի բա-
ւական ՚ի կատարումն ։

Լ՚քա գնեցի, և պէտք է՝ որ գը-
նամ նորան տեսնեմ. աղաչեմ
քեզ՝ որ ինձ թո՛ղ ասս ։
19 Եւ մեկէլն ասաց. Հինգ չուխա
եզ գնեցի, և գնումեմ որ նորանց
փորձեմ. աղաչումեմ քեզ՝ որ ինձ
թո՛ղ ասս ։
20 Եւ մեկէլն ասաց. կին առի,
և նրաշամար չե՛մ կարօղ գալ ։
21 Եւ ծառան եկաւ և էս բա-
նըս պատմեց իրան տիրոջն. էն
ժամանակն տան աէրն բարկացաւ և
իրան ծառային ասաց. Գնա՛ր գը-
նա շուտով քաղաքիդ բաց ան-
ղերանքն և փողոցներն. և աղքատ-
ներին և խեղերին, և կաղերին և
կուրերին բե՛ր մացրո՛ւ էստեղս ։
22 Եւ ծառան ասաց. Տէր՝ ինչ
որ հրամայեցիր էլաւ, և դեռ էլ
տեղ կայ ։
23 Եւ աէրն ասաց ծառային.
Գնա՛ր գնա ճանապարհներն և պա-
տի տակերն՝ և տիպիր որ էստեղս
մնանն, որ իմ տունս լցվի ։
24 Լ՚սում ձեզ՝ թէ Ոչ՛ կանչ-
վածներիցն իսկի մինն էլ իմ ըն-
թրիքիս համըն չըպիտի առնէ[9] ։
25 Եւ շատ ժողովուրդներ նորա
հետ գնումէին. դարձաւ և նորանց
ասաց.
26 Ինչ որ մինն ինձ մօտ գայ[10] և
չատէ իրան հօրըն և մօրըն, կըն-
կանըն և որդիքներին, և եղբայր-
ներին և քըվերներին[11], և չհնց ի-
րան անձին էլ[12]. նա չի՛ կարօղ ինձ
աշակերտ լինիլ ։
27 Ինչուս որ՝ ամ որ իրան խաչըն
վեր չառնէ և իմ ետևէս գայ՝ նա
չի՛ կարօղ ինձ աշակերտ լինիլ[13] ։
28 Ձեզանից ո՛վ է՝ որ կամենայ
աշտարակ (Բա՛րձ) շինել՝ և առաջ
չի՛ նստի և ծախսըն համարէ՝ եթէ
ասարտելոյ համար բաւական բան
ունի՞[14] ։

(9) Մատ. ի. 14 ։ իբ. 8 ։ Գործ. ժգ. 46 ։ (10) բ Օրին. ժգ. 6 ։ իդ. 9 ։
Մատ. ժ. 37 ։ (11) Հռով. ի. 13 ։ (12) Յայտ. ժբ. 11 ։ (13) Մատ. ժդ.
24 ։ Մարկ. ը. 34 ։ Ղուկ. թ. 23 ։ բ Տիմ. գ. 12 ։ (14) Ղուկ. իդ. 27 ։

Digitized by Google

29 Ո՞վ թուլ եղբարձ ոչ ինչ հիմնա-
քեն ինչ և չբնաքօգտանայ առատանալ,
ամենքն որ տեսանեն, ակսին ծաղր
անել նորան,

30 Եւ ասել. Թէ Այս մարդուս
ակսեց շինել, և չկարաց աւարտել:

31 կամ՝ որ թագաւոր կրճ
գնայ տարշ թագաւորի հետ կռիւ
կանէ. և չի նստիլ առաջ միաք
անել՝ եթէ տասն հազարով կարող
է դէմ կենալ նորան՝ որ քսան հա-
զարով պիտի գայ իրան վերայ:

32 Ապա թէ ոչ՝ մինչդեռ հեռա-
գոյն իցէ, հրեշտակս ղրկէ առաք-
նել՝ աղաչելոց՝ ի խաղաղութիւն:

33 Այգ՝ այսպէս ամենայն որ՝ ի
ձենջ՝ որ ոչ հրաժարեսցէ յամենայն
ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշա-
կերտ լինել:

34 Կարուզ է աղ. ապա թէ աղն
անհամեսցի, ի՞նչ համեսցի:

35 Ո՛չ յերկիր՝ և ոչ յաղբ է պի-
տանացաւ, այլ ընկենուլ զնա արտ-
աքս. որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ:

29 Որ չըլլնան թէ երբոր հիմուն-
քըն դնէ և չկրնայ աւարտել,
ամէնքն որ տեսնեն, սկսին ծաղր
անել նորան,

30 Եւ ասել. Թէ Այս մարդուս
սկսեց շինել, և չկարաց աւար-
տել:

31 կամ Թէ՝ որ թագաւոր կրճ
գնայ տարշ թագաւորի հետ կռիւ
կանէ. և չի նստիլ առաջ միաք
անել՝ եթէ տասն հազարով կարող
է դէմ կենալ նորան՝ որ քսան հա-
զարով պիտի գայ իրան վերայ:

32 Ապա թէ ոչ՝ քանի որ հեռու
է՝ պատգամաւոր կուղարկէ՝ և կա-
ղաչէ՝ որ խաղաղութիւն անէ:

33 Ուրեմն՝ ինպէս էլ ձեզմանից
ամէն մէկն՝ որ իրան ամէն ապրանք-
քըն չհրաժարվի՝ չի կարող ինձ
աշակերտ լինել:

34 Աղը լաւ (բան) է. բայց թէ
որ աղը անհամանայ՝ ինչով պիտի
համեղանայ[15]:

35 Ոչ հողի համար է պիտանի և
ոչ աղբի համար, այլ պէտք է դուս
քցվի. ով որ լսելու ականջ ունի՝
լսէ:

ԳԼ. Ժ.

1 Ելթան ոչխարի, 8 Դրամի, 11 Նոր անառակ որդոյ առակինքն:

1 Եւ էին մերձ առ նա ամենայն
մաքսաւորք և մեղաւորք՝ լսել՝ ի
նմանէ:

2 Եւ դրանջէին փարիսեցիքն և դպ-
իրքն՝ և ասէին. Ընդէր սա զմե-
ղաւորս ընդունի՝ և ուտէ ընդ նոսա:

3 Եւ ասաց առ նոսա զառակս զայս:

4 Ո՞վ ոք իցէ՝ ի ձենջ մարդ՝ ո-
րոյ իցէ հարիւր ոչխար, և կորոյ-
սանիցէ մի՝ ի նոցանէ. ոչ թողու

1 Եւ ամէն մաքսաւորներն (կամ
գուշչիներն) և մեղաւորներն մօտե-
նուելին նորան որ (բան) լսեն նո-
րանից[1]:

2 Փարիսեցիներն և կարգացօղ-
ներն տրանջալուելին և ասում. Այս
ինչու է մեղաւորներին ընդունում՝
և նորանց հետ ուտում[2]:

3 Ես առակըս ասաց նորանք:

4 Ձեզմանից ո՞վ է էն մարդըն՝ որ
հարիւր ոչխար ունեննայ, և նորան-
ցից մինըն կորցնէ[3]. Նա չի՞ թողուլ

(15) Մատթ. ե. 13: Մարկ. բ. 50: (1) Մատթ. ը. 10: (2) Գործ. ժա. 3:
Գաղ. բ. 12: (3) Մատթ. ժը. 12:

Digitized by Google

ցու զինեսուն և զինն յանապատի , և երթայցէ զհետ կորուսելոյն՝ մինչև գտանիցէ զնա :

5 Եւ իբրև գտանէ , դնէ զնա ՚ի վերայ ուսոց իւրոց խնդալով .

6 Եւ երթայ ՚ի տուն . կոչէ զընկերսն և զդրացիս , և ասէ ցնոսա . Ուրախ եղերուք ընդ իս , զի գտի զչխարս իմ զկորուսեալ :

7 Ա՛սեմ ձեզ . զի Ա՛յսպէս է ուրախութիւն լերկինս վասն միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ , քան վասն իննսուն և հինգ արդարոց՝ որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն :

8 Կամ որ իցէ կին , որոյ իցեն դրամք տասն . և եթէ կորուսանիցէ դրամ մի , ոչ լուցանիցէ ճրագ , և ածիցէ ուրել ՚ի տան և խնդրիցէ ստէպ՝ մինչև գտանիցէ :

9 Եւ իբրև գտանէ , կոչէ զընկերս և զդրացիս և ասէ . Ուրախ լերուք ընդ իս , զի գտի զդրամն իմ զոր կորուսի :

10 Ա՛յնպէս՝ ասեմ ձեզ , Ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ՚ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ :

11 Եւ ասէ . Ա՛ն միոջ էին երկու որդիք .

12 Ա՛ռ կրտսերն ՚ի նոցանէ ցհայրն . Հա՛յր՝ տուր ինձ բաժին , որ անկանի յընչիցդ . և նա բաժանեաց նոցա զկեանսն :

13 Եւ յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդին՝ գնաց յաշխարհ հեռի . և անդ վատնեաց զինչս իւր , զի կայր առնառակութեամբ :

14 Եւ իբրև սպառեաց զամենայն , եղև սով սաստիկ յաշխարհին յայնմիկ , և սկսաւ ինքն չքաւորել :

քն ինեսուն և ինքն անապատումն (չխօսքն) և էն կորածի եանէն գըտնալ՝ մինչև որ գտնէ նորան :

5 Եւ երբոր կըգտնէ՝ ուրախանալով իրան ուսերին վերայ կըդընէ նորան .

6 Եւ տուն կըգնայ . բարեկամներին և դրացիներին (հարևաններին) կըկանչէ և նորանց կասէ . Ուրախացէք ինձ հետ . ինչու որ իմ կորած ոչխարըս գտի՛ :

7 Ա՛սում ձեզ , թէ այսպէս ուրախութիւն կըլինի երկընքումն մին մեղաւորի համար՝ որ ապաշխարէ , քանթէ իննսուն և ինն արդարների համար՝ որ ապաշխարութիւն պէտք չէ նորանց՝ :

8 Կամ ո՞վ է էն կինն՝ որ տասն դրամ ունենայ , և թէ որ մին գըտնամ կորցնէ՝ ճրագ չի՞ վառիլ և տան մէջն աւելել և շատ շուռ գալ՝ մինչև որ գտնէ :

9 Եւ երբոր կըգտնէ՝ բարեկամներին և դրացիներին (հարևաններին) կըկանչէ և կասէ . Ուրախացէք ինձ հետ . ինչու որ իմ դրամըս գտի՛՝ որ կորցրել էի :

10 Ա՛սում ձեզ , Այնպես էլ Աստուծոյ հրեշտակների առաջին ուրախութիւն կըլինի մին մեղաւորի համար որ կապաշխարէ :

11 Եւ ասաց . Ա՛յնմարդ երկու որդի ունէր .

12 Ա՛յորանցից փոքրն ասաց հօրն . Հա՛յր՝ ինձ բաժին տուր ինչ որ կըհասնէ ինձ ապրանքներիդ , և նա իրան ապրանքըն բաժանեց նորանց՝ :

13 Եւ շատ օր չանցկացաւ՝ որ փոքր որդին ամէն բաներըն ժողովեց և հեռու աշխարհ գնաց . և էնտեղ իրան ապրանքըն մսխեց , ինչու որ անառակութեամբ կեանք էր վարում՝ :

14 Եւ երբոր ամէնըն հատցուց՝ սաստիկ սով էլաւ էն աշխարհըն՝ և ինքն սկսեց չքաւորվիլ :

(4) ա Պետր . բ . 10 . 25 : (5) Ղուկ . է . 32 : (6) Մատթ . ժբ . 44 :

Digitized by Google

15 Եւ գնացեալ յարեցաւ ՚ի մի ոմն ՚ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ . և յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս :

16 Եւ ցանկայր լնուլ զորովայնն իւր յեղջերէն , զոր խոզքն ուտէին , և ուչ ոք տայր նմա :

17 Եւ եկեալ ՚ի միտս իւր՝ ասէ . Քանի՞ վարձկանք հօրն ՚ի մեծ հաց խոյ հացակից , և ես սով սաստիկ կորնչիմ :

18 Յառուցեալ գնացից առ հայր իմ , և ասացից ցնա . Հա՛յր՝ մեղայ յերկինս և առաջի քո .

19 Եւ ուչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո . արա զիս իբրև զմի ՚ի վարձկանաց քոց :

20 Եւ յարուցեալ եկն առ հայր իւր . և մինչդեռ հեռագոյն էր , եւ տես զնա հայրն՝ և գթացաւ . յարեաւ և ընթացաւ ընդ առաջ . անկաւ զպարանոցսն նորա , և համբուրեաց զնա :

21 Եւ ասէ ցնա որդին . Հա՛յր՝ մեղայ յերկինս և առաջի քո , ուչ ևս եմ արժանի կոչիլ որդի քո :

22 Իսկ հայրն ցծառայս իւր . Արագվագակի հանէք զպատմուճանն առաջին , և ագուցէք նմա , և տա՛ւք ղմատանին ՚ի ձեռն նորա , և կօշիկս յոտս նորա .

23 Եւ ածէք զեզն պարարակ՝ զեղէք , կերիցո՛ւք և ուրախ լիցո՛ք :

24 Զի այս որդի իմ մեռեալ էր՝ և եկաց , կորուսեալ էր՝ և գտաւ . և սկսան ուրախ լինել :

25 Եւ էր երէց որդին նորա յագարակի . և մինչդեռ գայր՝ և մերձ եղև ՚ի տունն , լուաւ զձայն երգոց և զպարուց :

26 Եւ կոչեցեալ առ ինքն զմի ՚ի

15 Եւ գնաց կից աշխարհքի քաղաքացիներէն մէնին մօտ մնաւ . և նա ղրկեց ուղարկեց իրան յանդս որ խոզ արածացնէ :

16 Եւ ցանկանայր՝ որ իրան փորը լցնէ էն եղջիւրովին՝ որ խոզերն ուտէին՝ և ոչ ով չէր տալիս նորան :

17 Եւ երբոր իրան խելքն եկաւ , ասաց . Քանի՞ բանվորներ կան իմ հօրս տանն՝ հացով լցված՝ և ես հոս սովամահ կորչում եմ :

18 Կ՚ելնեմ գնամ իմ հօրս մօտ՝ և նորան ասեմ . Հա՛յր՝ ես մեղայ երկնքի դէմ և քու առջևդ .

19 Եւ էլ արժանի չեմ , որ քեզ որդի կոչվիմ . ինձ քու բանվորներէն մէնին պէս արա :

20 Եւ վերկացաւ եկաւ իրան հօրմօտ . և դեռ որ հեռու էր՝ հայրն տեսաւ նորան և խղճաց . վերացաւ և առաջն վազեց՝ նորա վզովն ընկաւ՝ և համբուրեց նորան[7] :

21 Եւ որդին ասաց նորան . Հա՛յր՝ ես մեղայ երկնքի դէմ և քու առջևդ , և էլ չեմ արժանի՝ որ քեզ որդի կոչվիմ[8] :

22 Հայրն ասաց իրան ծառաներին . Հո՛ւռով առաջին կապան հանեցէք և հագցրէք նորան , և մատանի դրէք նորա ձեռն՝ և կօշիկներ նորա ոտներն :

23 Եւ մատղու եզն բերէք մորթեցէք՝ ուտենք և ուրախ լինինք :

24 Ինչու որ՝ էս իմ որդիս մեռած էր , և կենդանացաւ . կորած էր , և գտաւ . և սկսեցին ուրախ լինիլ[9] :

25 Եւ նորա մեծ որդին յանդումն էր . և երբոր դալիսէր և տանն մօտեցաւ՝ տաղերի և պարգալոյ ձայն նըրն լսեց :

26 Եւ ծառաներից մէնին կանչեց

(7) Գործ . բ . 39 : Եփես . բ . 13 . 17 ; բ . 1 ; ե . 14 : Հայտ . գ . 1 :

(8) Ղուկ . ծա . 4 : (9) Պայր . 32 : Եփես . Digitized by Google

ծառայիցն՝ հարցանէր ըմե զինչ իցէ այն ։

27 Եւ նա ասէ ցնա . Օ՛ն եղբայրդ քո եկեալ է , և եզեն հայր քո զնչն սպարարակ . զի ողջամբ ընդունեալ զնա ։

28 Բարկացաւ՝ և ոչ կամէր մտանել , և հայրն ելեալ աղաչէր զնա ։

29 Պատասխանի ետ և ասէ ցհայրն . Ա՛յս քանի՞ ամք են՝ զի ծառայեմ քեզ , և երբէք զպատուիրանս քո չանց . ու մի երբէք ոչ հատուր ինձ՝ զի ուրախ եզէի ընդ բարեկամս իմ ։

30 Յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ կերր զկինանս քո ընդ պոռնիկս , զեզեր դմա զնչն պարարակ ։

31 Եւ ասէ ցնա . Ո՛րդեակ՝ դու հանապազ ընդ իս ես , և ամենայն որ ինչ իմ է՝ քո է ։

32 Ա՛յլ ուրախ լինել և խնդալ պարտ էր , զի եղբայր քո այս մեռեալ էր՝ և եկեաց , կորուսեալ էր՝ և գտաւ ։

իրան մոտ՝ հարցնում էր թէ դէ ինչ (բան) է ։

27 Եւ նա ասաց նորան . Եղբայրդ եկել է , և քո հայրը մեռցրու եզն մարմեծ՝ ո. րովհետև ողջամբ նորան ընդունեց նորան ։

28 Բարկացաւ և չէր ուզում ներս մանել՝ և հայրն դուրս եկաւ՝ աղաչում էր նորան ։

29 Պատասխան տուաւ՝ և ասաց հօրն . Ա՛յս քանի՞ տարի է՝ որ քեզ ծառայում՝ և քո պատուիրանքիցդ խիկ մին ժամանակ դուրս չեմ եկել . մին ուլ չըտուիր ինձ որ իմ բարեկամներիս հետ ուրախ լինէի ։

30 Երբոր էդ քո որդին եկաւ՝ որ քո ապրանքդրգ պոռնիկներին հետ կերաւ , մեռցրու եզըն մորթեցիր գորա համար ։

31 Եւ Նորան ասաց . Ո՛րդեակ՝ դու ամէն ժամանակն ինձ հետ ես , և ամէն ինչ որ իմն է՝ քոնն է ։

32 Ա՛յց ուրախ լինել և խնդալ պէտք էր . ինչու որ՝ էս քո եղբայրըդ մեռած էր և կենդանացաւ . կորած էր և գտաւ[10] ։

ԿԱ. ԺՕ.

1 Ընդքաւ առաքեալ առակ ։ 14 Ընդխոտոր ազահ փարիսեցոց հեգնաւորութիւնն ելոտաւ ։ 19 Շատակեր և գինեսէր պիտոյ հարուստի և աղքատ Ղազարոսի առակ ։

1 Ն և ասէր առ աշակերտան . Էր մի էր մեծատուն , որոյ էր տնտես . և եղև զնմանէ ամբաստանութիւն որպէս թե վատնիցէ զինչս նորա ։

2 Կոչեաց , և ասէ ցնա . Զինչ է այս զոր լսեմն զքէն , տուր զհաշիւ տնտեսութեան քո . զի ոչ ևս կարես լինել տնտես ։

3 Ասէ ընդ միտս իւր տնտեսն . Զի՞նչ գործեցից , զի տէր իմ հա-

1 Ն աշակերտներին ասաց . Մի՝ին հարուստ մարդ կար՝ որ տընտես ունէր . և չարախօսութիւն էլաւ նորանից իբր թէ նորա տպրանքըն նա մխսում է ։

2 Կանչեց՝ և ասաց նորան . Ա՛յս ինչ է որ ես լսում քեզանից . քո տնտեսութեան համարըն տուր . ինչու որ՝ էլ կարօղ չես տնտես լինել ։

3 Տնտեսն իրան մտքումն ասաց . Ի՛նչ անեմ . որ իմ տէրս տնտե-

Digitized by Google

նե՝ զամենասուքիանա . զաքսնել ոչ կարեմ՝ մեսրանալ ամենեմ :

4 Վախեմ զինչ արարից . զի յորժամ ի տաղ լինիցիմ ի անտառս՝ ինձ ընկալցին զիս ի տունս իւրեանց :

5 Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ի պարտապանաց տեառն իւրոյ , ասէ ցառաջինն . Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում :

6 Եւ նա ասէ . Հարիւր մար ձիթոյ . ասէ ցնա . Կա՛ զգիր քո , և նիստ գրեա՛ վաղվաղակի հինգս :

7 Ապա ասէ ցմիւսն . Դու քանի՞ ինչ պարտիս , և նա ասէ . Հարիւր քուռ ցորենոյ . և ասէ ցնա . Կա՛ զգիր քո՝ և նիստ գրեա՛ ութսուն :

8 Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան , զի խոհականաբեմն արարեալ . զի որդիք աշխարհիս այսոքիկ իմաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց :

9 Եւ ես ձեզ ասեմ . Արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէն անիրաւութեան . զի յորժամ պակասիցէ այն՝ ընկալցին զձեզ ի յաւիտեան յաւիտենականս :

10 Որ ի փոքուն հաւատարիմ է , և ի բազմին հաւատարիմ է . և որ ի փոքուն անիրաւ է , և ի բազմին անիրաւ է :

11 Եթէ ուրդ՝ ի մամոնայէն անիրաւ մի՞ն ոք հաւատարիմ , զճշմարիտն ո՞վ հաւատասցէ ձեզ :

12 Եւ եթէ յօտարին չիք հաւատարիմ , զձերն ո՞վ տացէ ձեզ :

13 Ոչ ոք ծառայ կարէ երկուց տնտէս իւրեանէն ինձանից առնուլ . զոր զորմն ատիցէ՝ զնմա սիրեսցէ , կամ զորմէ մի հնազանդեսցի՝ զնմա անարգեսցէ . ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնայի :

4 Վասն որոյ ասեմ ես , որ երբոր ես անտեսութենիցս գործս գամ՝ (մարդիք) ընդունին ինձ իւրեանց տունս :

5 Եւ իրան տիրոջ պարտականներին մին մին իրան մօտ կանչեց , առաջինին ասաց . Քանի՞ բան պարտական ես իմ տիրոջս :

6 Եւ նա ասաց . Հարիւր մար (չափ) ձէթ . նորան ասաց . Կո գիրդ առ և նստիր շուտով գրիր հինգս :

7 Յետոյ մէկելին էլ ասաց . Դու քանի՞ բան պարտական ես . և նա ասաց . Հարիւր քուռ (ամոր) ցորեն . և նորան ասաց . Կո գիրդ առ և նստիր գրիր ութսուն :

8 Եւ տէրն էն անիրաւ անտեսին գովեց , որ իմաստութեամբ գործեց . պատճառն որ՝ էս աշխարհքիս որդիքն լուսոյ որդիքներից աւելի իմաստուն են իրանց ցեղի մէջն[1] :

9 Եւ ես ասում ձեզ . Ձեզ Աստուած մամոնայից բարեկամներ արէք ձեզ համար՝ որ երբոր էն պակասի , յաւիտենական բնակարաններին մէջ ընդունեն ձեզ :

10 Ով որ քիչ բանի մէջ հաւատարիմ է , (նա) շատ բանի մէջ էլ հաւատարիմ է[2] . և նա որ քիչ բանի մէջ անիրաւ է , շատ բանի մէջ էլ անիրաւ է :

11 Ուրեմն եթէ որ անիրաւ մամոնայի մէջ հաւատարիմ չէլաք . ապա ճշմարիտն ով կրտայ ձեր ձեռքն :

12 Եւ եթէ որ օտար բանի մէջ հաւատարիմ չէլաք , ապա ձերն ով կրտայ ձեզ :

13 Ով ծառայ չի կարօղ եր-

(1) Գաղ . ժե . 8 . Ես . ե . 8 . ա Թես . ե . 5 : (2) Դաղ . գ . 27 : Մատթ . ղ . 29 : ԺԲ . 21 : Գործ . ժ . 21 : ա Յովհ . ե . 17—19 : (3) Մատթ . ԽԸ . 21 : Ղուկ . ԺԲ . 26 :

Digitized by Google

աներանց ծառայել • զի եթէ զմին ատիցէ, և զմիւսն սիրիցէ • կամ զմին մեծարիցէ, և զմիւսն արհամարհիցէ • ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնային :

14 Լսէին զայս ամենայն փարիսեցիքն՝ քանզի արծաթասէրք էին, և անգոնեին զնա :

15 Եւ ասէ ցնոսա • Դուք էք՝ որ արդարացուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստուած գիտէ զսիրտս ձեր • զի որ առաջի մարդկան բարձր է, պիղծ է առաջի Աստուծոյ :

16 Օրէնքն և մարգարէքն մինչև Յովհաննէս • յայնմհետէ աւրքս յաւետիւն Աստուծոյ ասեսարանի, և ամենայն ոք զնա բռնաբարէ :

17 Դիւրին իցէ երկնից և երկրի անցանել, քան յօրինացն մեյ նըւազանաթեցի անկանել :

18 Ամենայն՝ որ արձակէ զկին իւր, և առնէ այլ, շնայ • և որ զարձակեալն առնէ, շնայ :

19 Այր ոմն էր մեծատուն և զգանէր բեհեզս և ծիրանիս, և ուրախ լինէր հանապազ առատապէս :

20 Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ •

21 Եւ ցանկայր յագել ի փըշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն • այլ և շունք լաս գա-

կու տիրոջ ծառայել • ինչուղ՝ կամ մըննին կատէ և մեկելին կըսիրէ • կամ մըննին կրպատուէ և մեկելին ոչընչի տեղ կըհամարէ • կարող չէք Աստուծոյ ծառայել և մամոնային :

14 Լսեն ամեն բաներըս երբոր փարիսեցիներն լսումին՝ որովհետև արծաթասէր էին, ծաղր էին անոնմ նորան :

15 Եւ նորանց ասաց • Դուք էք որ մարդկանց առաջին ձեր անձնեըրդ արդարացնումէք՝ բայց Աստուած գիտումէ ձեր սրտերըն՝ • պատճառն որ՝ ով որ մարդկանց առաջին բարձր է՝ նա պիղծ է Աստուծոյ առաջին :

16 Օրէնքն և մարգարէքն մինչև Յովհաննէս (էլան) • ետքէն Աստուծոյ արքայութիւնն ասեսարանվումէ, և ամեն մարդ ժողովրդեան բռնումէ նորան :

17 Լեւի հեշտ է որ երկինքն և երկիրս անցկենան, քան օրէնքիցն մին պզտիկ նշանագիր վեր ընկնի :

18 Ամեն ով որ իրան կինըն գարձ է անեամ և ուրիշ առնումէ, շնութիւն է գործեամ • և նա որ էն դարձ արածըն առնումէ՝ շնութիւն է գործեամ :

19 Մի հարուստ մարդ կար՝ և շատ ազնիւ բեհեզներ և ծիրանի շորեր էր հագնում՝ և ամեն ժամանակ շատ ուրախութեան մէջ էր :

20 Եւ մին աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անուն • որ խոցերով լցված նորա դռան մօտ վեր ընկած էր :

21 Եւ ցանկանումէր՝ որ իրան փորըն լցնէ էն փշրանքներից՝ որ էն հարուստի սեղանից ընկնում-

(1) Մատ. զ • 24 : (5) Մատ. իգ • 14 : (6) Ղուկ. ժ • 29 : (7) Սաղ. է • 9 : (8) ա Թես. ժգ • 7 : (9) Մատ. գ • 17 : ժա • 13, 12 : Ղուկ. է • 29 : (10) Սաղ. ճբ • 26, 27 : Նաում. ք • 3 : ծա • 6 : Մատ. է • 18 : ա Պետր. ա • 25 : (11) Մատ. է • 32 : ժԹ • 9 : Մուկ. ժ • 11 : ա Կորնթ. է • 10, 11 :

Digitized by Google

քին , և լեզուին ղվէրս նորա ։

22 Եւ եղև մեռանել աղքատին , և առնել հրեշտակաց զնա ՚ի գոգսն Աբրահամու . մեռաւ և մեծաւ ուն՝ և թաղեցաւ ։

23 Եւ ՚ի դժոխսն ամբարձ զաչս իւր , մինչ ՚ի տանջանսն էր . և տես զԱբրահամ ՚ի հեռաստանէ , և զՂազարոս ՚ի գոգ նորա հանգուցեալ ։

24 Եւ նա աղաղակեաց և ասէ . Հայր Աբրահամ՝ ողորմեայ ինձ , և առաքեա զՂազարոս , զի թացցէ զծագ մատին իւրոյ ՚ի ջուր , և զովացուսցէ զլեզու իմ . զի պատակիմ ՚ի սազոյ սոսկ ։

25 Եւ ասէ ցնա Աբրահամ . Որդեակ՝ յիշեա , զի ընկալար անդէն զբարիս քո ՚ի կեանսն քումմ , և Ղազարոս նոյնպես զչարչարանս . արդ՝ սա [1]սոսա մխիթարի , և դու պատդ պատակիս ։

26 Եւ ՚ի վերայ այսր ամենայնի՝ միհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ . եթէ կամիցին սոսի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն , և ոչ այսի ոք առ մեզ անցանել ։

27 Եւ ասէ . Արդ աղաչեմ զքեզ Հայր , զի արձակեացես զնա ՚ի տուն հօր իմոյ ։

28 Ունի իմ անդ եղբարք հինգ ; զի զգացէ նոցա վկայութիւն . գնա՛ և նոքա գայցեն յայս տեղի տանջանաց ։

29 Եւ ասէ Աբրահամ . Ունին զՄովսէս և զմարգարէս , նոցա լսիցեն ։

30 Եւ նա ասէ . Ոչ Հայր Աբրահամ , բայց եթէ ՚ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա , և ապաշխարեսցեն ։

31 Եւ ասէ ցնա . Եթէ զՄովսէս և զմարգարէսն ոչ լսեն , ոչ եթէ ոք յերկնից յարիցէ՝ հաւատասցեն ։

ԺԶ

1 Եւ ասէ առ աշակերտս իւր . Անհնար է գայթագղութեանց չգալ , բայց վայ նմա՝ որով գան ։

2 Լաւ է նմա՝ եթէ քար ջրաղացի կապեսցի ընդ պարանոցի նորա , և ընկեսցի յովկիանոս , քան զի գայթագղեսցէ զմի ՚ի մանկանցս սոցանէ ։

3 Զգուշ լերուք ՚ի ձեզ . եթէ մեղանչիցէ եղբայր քո՝ նզովեա՛ զնա , և եթէ ապաշխարեսցէ՝ ներեա՛ նմա ։

4 Եւ եթէ եւթն անգամ յաւր մի մեղանչիցէ ՚ի քեզ , և եւթն անգամ դարձցի առ քեզ՝ ասելով . Ապաշխարեցի՝ ներեսցես նմա ։

5 Եւ ասեն առաքեալքն առ Տէր . Յաւելո՛ զհաւատս մեր ։

6 Եւ ասէ Տէր . Եթէ ունիցիք հաւատս իբրև զհատ սնապի , ասիցէք լերկնի սորոյ՝ Արմատասցի՛ և տնկեսցի ՚ի ծովս , և հնազանդեսցի ձեզ ։

7 Եւ ո՞վ ՚ի ձէնջ ունիցի ծառայ հերկեալ կամ արածեալ , որ դարձեալ ասիցէ նմա ՚ի գալ նորա յագրոյ . Անցո՛ և նստիր ընդ սեղանի ։

8 Եւ ոչ ասիցէ նմա . Պատրաստեա՛ զինչ ուտիցեմ , և զգեցեալ զգեցիցես զքեզ , և սպասաւորեսցես ինձ՝ մինչև ուտիցեմ և արբից , և ապա դու ուտիցես և արբիցես ։

9 Միթէ շնորհակալ լինիցի ծառային՝ զի արարին զհրամանսն ։ Ոչ կարծեմ ։

10 Նոյնպէս և դուք՝ յորժամ արարիցէք զամենայն զհրամանսն որ հրամայեցան ձեզ , ասասջիք . Ծառայք անպիտանք եմք , զոր պարտ էր արարաք՝ արարաք ։

11 Եւ եղև գնալ նորա յԵրուսաղէմ , և անցանել նորա միջով Սամարիայ և Գալիլեայ ։

12 Եւ մտեալ նորա ՚ի գեղ մի , ընդդիմացան նմա տասն այր բորոտք , որ կային հեռի ։

13 Եւ բարձին ձայն առ նա՝ ասելով . Յիսո՛ւս վարդապե՛տ , ողորմեա՛ մեզ ։

14 Եւ տեսեալ նորա՝ ասէ ցնոսա . Երթա՛յք , ցուցէ՛ք զանձինս քահանայապետին ։ Եւ եղև գնալ նոցա՝ սրբեցան ։

15 Եւ մի ՚ի նոցանէ՝ տեսեալ զի սրբեցաւ , դարձաւ փառաւորելով զԱստուած ձայնիւ մեծաւ ։

16 Եւ անկեալ ՚ի գլուխ առ ոտս նորա՝ գոհանայր նմա . և նա էր Սամարացի ։

17 Եւ պատասխանի ետ Յիսուս և ասէ . Ո՞չ տասնեքին սրբեցան , և ո՞ւր են իննեքին ։

18 Ո՞չ գտան որ դարձցին տալ փառս Աստուծոյ՝ բայց միայն այս օտարազգի ։

19 Եւ ասէ ցնա . Յարո՛ , գնա՛ , հաւատք քո կեցուցին զքեզ ։

20 Եւ հարցեալ նորա ՚ի Փարիսեցւոցն՝ եթէ ե՞րբ գայցէ արքայութիւն Աստուծոյ , պատասխանի ետ նոցա և ասէ . Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ ընդ հետս հայելով ։

21 Եւ ոչ ասասցեն . Ահա՛ աստ է , կամ անդ է ։ Զի ահա արքայութիւն Աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ է ։

22 Եւ ասէ առ աշակերտս իւր . Եկեսցեն աւուրք՝ յորս ցանկասջիք տեսանել զաւուրս միոյ ՚ի որդւոցն մարդոյ , և ոչ տեսանիցէք ։

23 Եւ ասասցեն ցձեզ . Ահա՛ աստ է , կամ անդ է ։ Մի՛ երթայք , և մի՛ հետեւիք ։

24 Զի որպէս փայլակն որ փայլատակեալ ՚ի կողմանց երկնից՝ լուսաւորէ մինչև ՚ի կողմանս երկնից , նոյնպէս լինիցի և որդի մարդոյ յաւուր իւրում ։

25 Բայց նախ պարտ է նմա բազում չարչարանս կրել , և մերժեալ լինել յազգէ սմա ։

26 Եւ որպէս եղև յաւուրս Նոյի , նոյնպէս լինիցի և յաւուրս որդւոյն մարդոյ ։

27 Ուտէին , ըմպէին , կանայք առնուին , արանց տային՝ մինչև յաւուրն յորում մտանէ Նոյ ՚ի տապանն , և եկն ջրհեղեղ և կորոյս զամենեսեան ։

28 Նոյնպէս և որպէս եղև յաւուրս Lովտայ . ուտէին , ըմպէին , գնէին , ծախէին , տնկէին , շինէին ։

29 Յաւուրն յորում ել Lովտ ՚ի Սոդոմայ , անձրեւեաց հուր և ծծումբ յերկնից , և կորոյս զամենեսեան ։

30 Նոյնպէս լինիցի յաւուրն յորում որդի մարդոյ յայտնեսցի ։

31 Յաւուրն յայնմիկ՝ որ իցէ ՚ի տանիսն , և կարասիք նորա ՚ի տան , մի՛ իջցէ առնուլ զայն . և որ իցէ ՚ի դաշտի , նոյնպէս մի՛ դարձցի յետս ։

32 Յիշեցէ՛ք զկին Lովտայ ։

33 Որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զայն . և որ կորուսցէ զանձն իւր՝ կենդանասցուցէ զայն ։

34 Ասեմ ձեզ՝ յայնմ գիշերի իցեն երկու ՚ի մահիճս միում , մին առցի և մին թողցի ։

35 Երկու իցեն աղախնայք միասին աղալ , մին առցի և մին թողցի ։

36 Երկու իցեն ՚ի դաշտի , մին առցի և մին թողցի ։

37 Եւ պատասխանի տուեալ ասեն ցնա . Ո՞ւր է , Տէր ։ Եւ նա ասէ ցնոսա . Ուր և իցէ դիակունն , անդ ժողովեսցին և արծուիք ։

ԺԷ

1 Եւ ասէ առակ ինչ ցնոսա՝ զի պարտ է միշտ աղաչել և ոչ նեղանալ ։

2 Ասելով . Դատաւոր մի էր ՚ի քաղաքի մի , որ զԱստուած ոչ երկնչէր և զմարդ ոչ ամաչէր ։

3 Եւ այրի մի էր ՚ի քաղաքին յայնմիկ , և գայր առ նա՝ ասելով . Արա՛ դատաստան ինձ յանիրաւէ իմմէ ։

4 Եւ նա ոչ կամէր յաւուրս բազումս ։ Եւ յետ այսորիկ ասէ ՚ի միտս իւր . Թէպէտ և զԱստուած ոչ երկնչիմ , և զմարդ ոչ ամաչեմ ։

5 Բայց զի այրի այս ինձ նեղ առնէ , դատաստան արասցեմ նմա , զի մի՛ ՚ի վերջոյ եկեսցէ և ապտակեսցէ զերեսս իմ ։

6 Եւ ասէ Տէր . Լուարո՛ զինչ դատաւորն անիրաւութեան ասէ ։

7 Եւ Աստուած ոչ առնիցէ դատաստան ընտրելոցն իւրոց , որ գոչեն առ նա ցերեկ և ցգիշեր , և համբերէ նոցա ։

8 Ասեմ ձեզ՝ զի առնիցէ դատաստան նոցա վաղվաղակի ։ Բայց որդի մարդոյ յորժամ եկեսցէ՝ արդեօք գտցէ զհաւատս յերկրի ։

9 Եւ ասէ առակ ինչ առ որս ՚ի վստահութեան էին ՚ի սեպհականս իւրեանց , թէ արդարք են , և զայլս ամենեսեան արհամարհէին ։

10 Մարդիկ երկու ելին յուխտ աղօթել ՚ի տաճարն , մին Փարիսեցի և մին մաքսաւոր ։

11 Փարիսեցին կայր և զայս ինչ յանձն իւր աղօթէր . Աստուա՛ծ , գոհանամ քեզ , զի ոչ եմ իբրև զայլ մարդիկ՝ յափշտակիչք , անիրաւք , շինականք , կամ իբրև զայս մաքսաւոր ։

12 Պահեմ զերկուս օր յաւուր իմում , տասանորդեմ զամենայն զոր ինչ ունիմ ։

13 Եւ մաքսաւորն հեռի կայր , և ոչ կամէր զաչս յերկինս վերացուցանել , այլ ծեծէր զկուրծս իւր և ասէր . Աստուա՛ծ , ողորմեա՛ ինձ մեղաւորի ։

14 Ասեմ ձեզ՝ իջանէ սա արդարացեալ ՚ի տուն իւր քան զայնոսիկ . զի ամենայն որ զանձն իւր բարձրացուցանէ՝ խոնարհեսցի , և որ զանձն իւր խոնարհեցուցանէ՝ բարձրասցի ։

15 Եւ մատուցանէին առ նա և զմանկունս , զի մերձեցուցցէ նոցա ձեռն իւր . և տեսեալ աշակերտացն՝ նզովէին զնոսա ։

16 Եւ Յիսուս կոչեալ զնոսա՝ ասէ . Թողէ՛ք զմանկունսն գալ առ իս , և մի՛ արգելուք զնոսա , զի նոցա է արքայութիւն Աստուծոյ ։

17 Ամէն ասեմ ձեզ՝ որ ոչ ընկալցի զարքայութիւն Աստուծոյ իբրև զմանուկ , ոչ մտցէ ՚ի նա ։

18 Եւ հարցեալ նորա ՚ի մեծամեծաց՝ ասէ . Վարդապե՛տ բարի , զի՞նչ արարեալ զկեանս յաւիտենական ժառանգեցից ։

19 Եւ ասէ ցնա Յիսուս . Զի՞ կոչես զիս բարի , ոչ ոք է բարի՝ բայց միայն Աստուած ։

20 Զպատուիրանսն գիտես . Մի՛ շնար , մի՛ սպան , մի՛ գողացիր , մի՛ սուտ վկայեր , պատուեա՛ զհայր քո և զմայր քո ։

21 Եւ նա ասէ . Զայս ամենայն պահեցի յանմանկութենէ իմմէ ։

22 Եւ լուեալ Յիսուսի՝ ասէ ցնա . Մի՛ ինչ պակասէ քեզ , ամենայն զոր ինչ ունիս՝ վաճառեա՛ և բաշխեա՛ տկարաց , և ունիցիս գանձ յերկինս , և եկ՝ հետեւեա՛ ինձ ։

23 Եւ նա լուեալ զայս՝ տրտմեցաւ յոյժ , զի մեծատուն էր յոյժ ։

24 Եւ տեսեալ Յիսուսի զնա տրտմեցեալ՝ ասէ . Որպէս դժուարաւ որ ունիցին զհարստութիւնս՝ մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ ։

25 Դիւրագոյն է ուղտի անցանել ընդ ծակ ասեղան , քան հարստի մտանել յարքայութիւն Աստուծոյ ։

26 Եւ ասեն որ լուան . Եւ ո՞վ կարէ կեցուցանել ։

27 Եւ ասէ . Որ անկարելի է մարդկան՝ կարելի է Աստուծոյ ։

28 Եւ ասէ Պետրոս . Ահա՛ մեք թողաք զամենայն զոր ինչ ունէաք , և հետեւեցաք քեզ ։

29 Եւ ասէ ցնոսա . Ամէն ասեմ ձեզ՝ զի չիք ոք որ թողցէ զտուն , կամ զծնողս , կամ զեղբարս , կամ զկին , կամ զորդիս վասն արքայութեան Աստուծոյ ։

30 Եւ ոչ առցէ բազմապատիկ յաւուրս յայսմիկ , և յաշխարհին գալոց զկեանս յաւիտենական ։

31 Եւ առեալ զտասներկուսն՝ ասէ ցնոսա . Ահա՛ ելանեմք յԵրուսաղէմ , և կատարեսցին ամենայն որ գրեցան ՚ի մարգարէսն վասն որդւոյն մարդոյ ։

32 Մատնեսցի հեթանոսաց , և ծաղր արարցեն և հայհոյեսցեն և թքանս արկցեն ՚ի նա ։

33 Եւ մտանելով սրով հարցեն զնա , և յերրորդում աւուրն յարիցէ ։

34 Եւ նոքա ոչ ինչ իմացան զայս , և էր բան այս ծածուկ նոցա , և ոչ գիտէին զասացեալսն ։

35 Եւ եղև մերձենալ նորա ՚ի Յերիքով , կոյր մի նստէր առ ճանապարհաւ մուրացեալ ։

36 Եւ լուեալ նմա զանցանել բազմութեան՝ հարցանէր զինչ իցէ այս ։

37 Եւ պատմեցին նմա թէ Յիսուս Նազովրեցի անցանէ ։

38 Եւ բարձեալ ձայն՝ ասէ . Յիսո՛ւս , Որդի Դաւթի , ողորմեա՛ ինձ ։

39 Եւ որ առաջի գնային՝ սաստէին նմա զի լռեսցէ ։ Նա աւելի բարձեալ ձայն՝ աղաղակէր . Որդի Դաւթի , ողորմեա՛ ինձ ։

40 Եւ կայեալ Յիսուս՝ հրամայեաց զնա տանել առ ինքն ։ Եւ մերձեցեալ նորա՝ հարցանէ զնա

(1) Ոսոս . ժգ . 12 . (2) Նոսա . կզ . 24 : Մտէ . ք . 14 , Լայն . (3) Յոբ . թա . 18 . Ղսէ . գ . 21 . (4) Նոսա . ը . 20 : ւթ . 16 . Յովհ . ե . 39 . 45 : Պոսդ . ժե . 21 : ժե . 11 :

Digitized by Google

31 Եւ ասէ ցնա . Եթէ Մովսէսի եւ մարգարէիցն ոչ լսեն , եւ ոչ թէ ՚ի մեռելոց ոք յառնիցէ՝ հաւատասցեն :

31 Եւ նորան ըսաց . Եթէ որ Մովսէսին եւ մարգարէներուն ականջ չեն գներ՝ եր թէ ոք մեռելներէն մէկն յարութիւն առնէ՝ չեն հաւատար[16] :

ԿԱ · ԺԱ

2 Սկսեալ կըսաւորելոյն որ գայթակղութիւնն տալոյ բանիցէ գործոյ լինին : 3 Եւ ներոյ նկատի : 6 Հաւատոյ զօրութիւնն : 7 Մինչ Աստուածոյն պաշտօնեան ինչ , եւ մի թէ Աստուած մեզ պարտական է : 11 Տասն բորոտներուն սրբելին : 20 Աստուծոյ արքայութեան եւ որդւոյ մարդոյ գալոյ պատմութիւնն :

1 Ասաց եւ առ աշակերտան իւր . Անյն է մարթ չգալ գայթակղութեանն . բայց վայ այնմիկ ՚ի յորմէ ձեռն գայցէ :

2 Լաւ էր նմա՝ թէ վէմ երկնաքար կախեր զպարանոցն նորա՝ եւ անկաներ ՚ի ծով , քան թէ գայթակղեցուցանէ զմի ոք ՚ի փոքրկանցըս յայոցանէ :

3 Զգոյշ կացէք անձանց . եթէ մեղիցէ եղբայր քո , տաստեա նմա . եւ եթէ ապաշխարիցէ , թող նմա :

4 Եւ եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ , եւ եօթն անգամ դարձցի ՚ի քեզ՝ եւ ասիցէ , Ապաշխարեմ , թողցես նմա :

5 Եւ ասեն առաքեալքն ցՏէր . Յաւելո՛ մեզ հաւատս :

6 Եւ ասէ Տէր . Եթէ ունիցէք հաւատս քան զՀատ մանանեհոյ , եւ ասիցէք թզենւոյս այսմիկ , Իսկեաց եւ անկածց ՚ի ծովու , եւ լսեալ նա դեսցի ձեզ :

7 Իակ ո՞վ ոք ՚ի ձէնջ , որ ունիցի ծառայ հողագործ կամ հովիւ , որ իբրեւ մտանիցէ յագարակէ՝ ասիցէ ցնա վաղվաղակի . Թէ Անց բազմեաց :

8 Այլ ո՛չ ասիցէ ցնա . Թէ Պատ-

1 Ըսաւ եւ անոնց . Անկարելի չէ՝ որ գայթակղութիւն չըգայ[1] . բայց վա՛յ անոր որ անով կըգայ :

2 Աւելի լաւ էր անոր որ ներսի վզովը ջաղացի քար կախուէր եւ ծովը ընկնէր՝ քան թէ այս փոքրիկներէն մէկին գայթակղացնէ :

3 Զգո՛յշ կացէք անձնիդ . Թէ որ քո եղբայրդ մեղք անէ՝ սաստա՛ ներսը[2] . եւ թէ որ ապաշխարէ՝ թողութիւն տո՛ւր անոր :

4 Եւ թէ որ օրէն անգամ քեզ դէմ մեղք անէ՝ եւ օրէն անգամ քեզ մօտ դառնայ եւ ասէ՝ (թէ) Ապաշխարումեմ՝ թողութիւն տո՛ւր անոր :

5 Եւ առաքեալներն ատացին Տէրոջմէն՝ Ա՛ռ հաւատքըն ա՛ւելցուր մեզի :

6 Եւ Տէրն ասաց . Թէ որ մանանեխի (խրտիլ) հատին չափ հաւատք ունենաք , եւ էս թըզի ծառին ասէք . Պոկվիր եւ ծովի մէջն անկըվիր՝ կըլսէ ձեզ[3] :

7 Ձեզմէ ո՞վ կայ նա՝ որ ունի հոտաղ կամ հովիւ (չոպան) ծառայ ունեցող , որ երբոր գան դիցն (գայ տուն) մանէ՝ շուտով ասէ նորան՝ Եկ սեղան նստէ՛ :

8 Հապա չասէ՞ նորան՝ Պատ-

(16) Յովհ . ժբ . 10 , 11 : (1) Մատթ . ժը . 6 , 7 : Մրկ . թ . 42 : ա Նախնի . ժա , 19 : (2) Մատթ . ժը . 15 . 21 : (3) Ղկ . ժԹ . 17 : Ես . ժԿ , 10 : Ովհ . Կ . 19 : (4) Մատթ . ժէ . 20 : ի . 21 : Մրկ . թ . 23 : ժա . 23 :

Digitized by Google

բառանայ պինձ ընթրելոց իցեմ, և գօսի ածնալ պաշտաւնայ զիս՝ մինչև կերթայց և տրբիմ, և ապա կերթիցես և տրբցիս դու։

9 Ա՝իթէ չնորհ ինչ ունիցի ծառային այնմիկ, զի տարար զամենայն հրամանաւն։

10 Ա՝յնպէս և դուք՝ յորժամ առնիցէք զամենայն հրամայեալսն ձեզ, ասացէք՝ թէ Ծառայք անպիտանք եմք. զոր պարտէաքն առնել, արարաք։

11 Եւ եղև մինչև երթայր նա Երուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարեայ և Գալիլեացւոց։

12 Եւ մինչդեռ մտանէր ի գիւղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք կացին ի հեռաստանէ մեղ։

13 Ձայնէին զձայնս՝ և ասեն. Յիսուս Վարդապետ՝ ողորմեայ մեզ։

14 Եւ իբրև եսես զնոսա, ասէ ցնոսա. Երթայք ցուցէք զանձինս քահանայիցն. և եղև իբրև գնային, առժամայն սրբեցան։

15 Ա՝ի մէն ի նոցանէ իբրև եսես՝ եթէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ի ձայն մեծ փառաւորս առնէր զԱստուած։

16 Ընկաւ ի վերայ երեսաց իւրոց առ առն նորա, և գոհանայր զնմանէ. և ինքն էր Սամարացի։

17 Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ոչ ասան սորա սրբեցան, իսկ արդ՝ ինդունքն ո՞ւր են։

18 Ոչ ի՛ գտան դառնալ տալ

բառաիր ինչ որ խրիկունս պիտի ուտեմ, և գօտիկըդ կապած ինձ ծառայիր՝ մինչև որ ուտեմ և խըմեմ, և յետոյ դու էլ կիր և խըմիր[b]։

9 Ա՝իթէ էն ծառային շնորհակալ կըլինի՝ որ էն ամէն հրամանները արաւ։

10 Նպէս էլ դուք՝ երբոր ամէն ձեզ հրամայված բաներըն անէք, ասացէք թէ՝ Ա՝նք անպիտան ծառաներ ենք[c]. էն որ պարտական էինք անելոց, արինք։

11 Եւ էլաւ՝ երբոր նա Երուսաղէմ էր գնում՝ և ինքն Սամարիայի և Գալիլեացոց միջից էր անցկենում[7]։

12 Եւ երբոր մին գիւղ էր մըտնում, ասան բորոտ մարդիք պատահեցին նորան որ հեռուանց կանգնեցին[8]։

13 Ձայներըն բարձրացրին՝ և ասացին. Յիսուս Վարդապետ՝ մեզ ողորմեա։

14 Եւ երբոր տեսաւ նորանց՝ ասաց նորանց. Գնացէք անձներըդ քահանաներին ցոյց տուէք[9]. և էլաւ երբոր գնացին՝ շուտով սրբվեցան։

15 Նորանցից մինն երբոր տեսաւ՝ թէ բժշկվեցաւ, յետ դարձաւ՝ բարձր ձայնով փառք էր տալիս Աստուծոյն։

16 Ւրան երեսին վերայ ընկաւ նորա ոտների առաջին, և գոհանում էր նորանից. և ինքն Սամարացի էր։

17 Յիսուս պատասխան տուաւ և ասաց. Չէ՞ որ ասան էին տորանք որ սրբվեցան. ապա էն ինն ո՞ւր են։

18 Որ խակի չէ՞ գտվան որ յետ

(5) Ղեւ. ժբ. 37։ (6) Յոբ. ԽԲ. 3։ Լե. 7։ Սալ. ժզ. 2։ Մաթ. լե. 30։ Ջաւալ. գ. 12։ ժա. 35։ ա Կորնթ. Բ. 16, 17։ Փիլիպ. 11։ (7) Ղեւ. Բ. 52, 52։ Յոշ. գ. 4։ (8) Ղեւ. ժգ. 46։ (9) Ղեւ. ժգ. 2։ ժդ. 2։ Մաթ. ը. 4։ Ղեւ. ե. 15։

Digitized by Google

փառս Աստուծոյ , բայց միայն ապ-
լաջիս այս :
19 Եւ ասէ ցնա . Արի գնա՛ . զի
հաւատք քո կեցուցին զքեզ :

20 Իբրև հարցաւ ՚ի փարիսեց-
ւոցն՝ թէ ե՛րբ գայցէ արքայութիւն
Աստուծոյ . պատասխանի ետ նոցա
և ասէ . Ո՛չ գայ արքայութիւն Ա-
ստուծոյ խարանօք :

21 Եւ չասիցեն , թէ Ո՛հաւասիկ
աստ է՛ կամ անդ . զի ահա արքա-
յութիւն Աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ
է :
22 Ասաց և առ աշակերտան . Ե-
կեսցեն աւուրք ցանկանալոյ ձեզ մի
յաւուրցն Որդւոյ մարդոյ տեսանել՝
և ո՛չ տեսանիցէք :
23 Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ Ո-
հաւասիկ է՛ կամ անդ , մի՛ երթայ-
ցէք զհետ :
24 Ո՛ւի որպէս փայլակն փայլա-
տակեալ ՚ի ներքոյ երկնից՝ ընդ երկ-
նիւք ծագիցէ , նոյնպէս և Որդի
մարդոյ յաւուրն իւրում :

25 Ո՛այց նախ պարտ է նմա բա-
զումս չարչարիլ և խոտիլ յազգէս
յայսմանէ :
26 Եւ որպէս եղև յաւուրսն Ո՛ո-
յի , նոյնպէս եղիցի և յաւուրս
Որդւոյ մարդոյ :
27 Ուտէին՝ ըմպէին՝ կանայս առ-
նէին՝ և արանց լինէին , մինչև
յօրն՝ յորում եմուտ Ո՛ոյ ՚ի տա-
պանն , և եկն ջրհեղեղն՝ և կորոյս
զամենեսին :
28 Ո՛ոյնպէս՝ և որպէս յաւուրսն
Ղովտայ եղև , ուտէին , ըմպէին ,
գնէին՝ և Աստուծոյն փառք ասէ .
բայց միայն էս այլազգիս :
19 Եւ ասաց նորան . Ա՛երի կաց
գնա՛ . ինչու որ քո հաւատքդ ապ-
րեցոյց քեզ[10] :
20 Երբոր փարիսեցիներին հարց-
վեցաւ՝ թէ Աստուծոյ արքայու-
թիւնն ե՛րբ պիտի գայ . պատաս-
խան առաւ նորանց և ասաց . Ա-
ստուծոյ արքայութիւնն դիտուի նը-
շաններով չի՛ գալ :
21 Եւ չեն ասիլ՝ թէ Ո՛հա էստեղ՝
կամ հնտեղ[11] . ինչուր՝ ահա
Աստուծոյ արքայութիւնն հենց ձեր
ներսևումն է[12] :
22 Աշակերտներին էլ ասաց . Օ-
րեր կըգան՝ որ դուք կըցանկանաք
Որդոյ մարդոյ օրերից մինըն տես-
նելոյ , և չէք տեսնիլ[13] :
23 Եւ թէ որ ասեն ձեզ՝ Ահա
էստեղ է կամ հնտեղ՝ եասէն չը-
գնաք[14] :
24 Պատճառն որ՝ ինչպէս կայծա-
կըն որ փայլումէ , երկնքի տակն
(մին կողմիցն) լոյս է տալիս մին-
չև երկնքի տակումն (մեկել կողմն)՝
հնպէս էլ Որդին մարդոյ իրան օ-
րումն[15] :
25 Ա՛այց առաջ պէտք է՝ որ նա
շատ չարչարվի և անարգվի էս
ազգիցս[16] :
26 Եւ ինչպէս որ ՚Նոյի օրերու-
մըն էլաւ՝ հնպէս էլ Որդոյ մար-
դոյ օրերումն կըլինի[17] :
27 Ուտումէին՝ խմումէին՝ կին է-
ին առնումէ՝ և մարդոյ էին գնումէ՝
մինչև էն օրն՝ որ ՚Նոյ մտաւ տա-
պանն . և ջրհեղեղն եկաւ և ա-
մենին կորցրուց :
28 Ինպէս էլ՝ ինչպէս որ Ղովթի
օրերումն էլաւ . ուտումէին , խըմ-

(10) Մարկ . ը . 22 : Մատթ . ե . 34 : ժ . 52 : Ղուկ . է . 50 : ը . 48 : ժը . 42 .
(11) Այլք . 23 : (12) Հռոմ . ժգ . 17 : (13) Մարկ . ը . 15 : Ովսէ . ժէ . 12 .
(14) Մարկ . ԺԳ . 23 : Մատթ . ժգ . 21 : Ղուկ . ի . 8 : (15) Մարկ . ԺԳ . 27 : (16)
Մատթ . ը . 31 : ի . 31 : ժ . 38 : Ղուկ . ի . 22 : (17) Ծննդ . է : Մարկ . ԺԳ . 37 .

Digitized by Google

գնէին, վաճառէին, անկէին, շինէին։

29 Եւ յորում աւուր եկն Ղովտ ի Սոդոմայ, տեղաց Տէր եւ ծըծումբ յերկնից եւ կորոյս զամենեսեան։

30 Ըստ նմին օրինակի եղիցի եւ յաւուրն, յորում Որդի մարդոյ յայտնեսցի է։

31 Յայնմ աւուր որ կայցէ ի տանէ՝ եւ կարասի իւր ի տան, մի՛ իջցէ առնուլ զայն. եւ որ յանդի իցէ, նոյնպէս մի՛ դարձցի յետս։

32 Յիշեցէք զկինն Ղովտայ։

33 Որ խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա. եւ որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա։

34 Ըստեմ ձեզ. Յայնմ գիշերի՝ թէ եղիցին երկու ի մի մահիճս, մին առցի՝ եւ միւսն թողցի։

35 Եւ եթէ եղիցին երկու աղալ ի միասին, մին առցի՝ եւ միւսն թողցի. եւ եթէ իցեն երկու յանդի, մին առցի՝ եւ միւսն թողցի։

36 Պատասխանի եառեալ եւ ասեն ցնա. Յո՞ Տէր։

37 Եւ նա ասէ ցնոսա. Ուր մարմինն է, անդր եւ արծուիք ժողովեսցին։

մումէին, գնուէին՝ ծախուէին, անկուէին՝ շինուէին[18]։

29 Եւ էն օրումն՝ որ Ղովտ Սոդոմիցն դուրս եկաւ՝ կրակ եւ ծըծումբ (յուղուղ) թափվեցաւ երկընքիցն եւ ամէնին կորցրուց[19]։

30 Ինչ էն կերպովն էլ կըլինի էն օրումն՝ որ Որդին մարդոյ կըյայտնըվի[20]։

31 Էն օրումն՝ նա որ կըտրի վերայ լինի եւ իրան բաներն տան մէջըն՝ թող վէր չը գայ, որ նորանց առնէ[21]. եւ ով որ յանդումն լինի՝ էնպէս էլ թող յետ չըդառնայ։

32 Ի՞նչքեղդ զկինն Ղովտի[22]։

33 Ով որ կըկամենայ իրան անձըն ապրեցնել՝ կըկորցնէ նորան. եւ ով որ կըկորցնէ, կապրեցնէ նորան[23]։

34 Ըսում ձեզ. Էն գիշերուն էրէք երկու հոգի մին մահճի (փէօշէկի) մէջ լինին՝ մինն կառնըվի եւ մէկէլն կըթողվի[24]։

35 Եւ էրէք երկու հոգի մինտեղ աղալըս վերայ լինին՝ մինն կառնըվի եւ մէկէլն կըթողվի. եւ էրէք երկու հոգի յանդումն լինին՝ մինն կառնըվի եւ մէկէլն կըթողվի։

36 Պատասխան տուին՝ եւ Նորան ասացին. Տէր՝ ո՞րտեղ (պիտի լինի)[25]։

37 Եւ նա ասաց նորանց. Որտեղ որ մարմին կայ, արծիւներն էլ էնտեղ կըհաւաքվին։

(18) Ղկինդ։ ԺԲ։ (19) Ղկինդ. ԺԲ. 18. 24։ (20) Բ թիւս. ա. 7։ (21) Մտթ. ԺԴ. 17։ Մրկ. ԺԳ. 15։ (22) Ղկինդ. ԺԲ. 26։ (23) Մտթ. Ժ. 39։ ԺԶ. 25։ Մրկ. Ը. 35։ Ղուկ. Թ. 24։ Յովհ. ԺԲ. 25։ (24) Մտթ. ԻԴ. 40, 41։ ա Թես. Դ. 17։ (25) Յոբ. ԼԹ. 30։ Մտթ. ԻԴ. 28։

Digitized by Google

ԳԼ. ԺՐ.

3 Հայտ աշխատացնող սրբևէրի հնկան , և փարխեցոյ և մաքառաւորի պատմութիւնն : 15 Նբեխանէրին Ուրխատոի բնրվիլն : 18 Հաւխանէական հնտնէն կամեցող և Ուրխատոի հառնէն գնալոյ համար իրան հարստութինից արգելված խլխանն : 28 Ուրխատոի համեց ամէն բաներըն քցողն վարքն : 31 Ուրխատոս իրան մանկ առաջուց ցոյց կըտայ : 35 Մէն կար մարդոյ աչքերն կըբանայ :

1 Ա՛սաց և առաք մի նորա՝ առ ոյն , թէ պարտ է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս և մի՛ ձանձրանալ :

2 Ա՛սէ . Դատաւոր մի էր ի քաղաքի ուրումն , յԱստուծոյ ոչ երկընչէր՝ և ի մարդկանէ ոչ ամաչէր :

3 Եւ այրի մի էր ի նմին քաղաքի , գայր առ նա և ասէր . Դատ արա ինձ յոսոխէ իմմէ :

4 Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս . յետ այնորիկ ասէ ի մտի իւրում . Եթէ և յԱստուծոյ ոչ երկնչիմ , և ի մարդկանէ ոչ ամաչեմ ,

5 Դանէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ , զի մի՛ խափան եկեալ յանախանձիցէ զիս :

6 Եւ ասէ Տէր . Լուարուք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր :

7 Իսկ Աստուած ոչ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց , որ աղաղակեն առ նա ի տուէ և ի գիշերի . և երկայնամիտ միայն լինիցի առ նոսա :

8 Այո՛ , ասեմ ձեզ . զի առնիցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի . իսկ Որդի մարդոյ եկեալ գտանիցէ արդեօք հաւատս յերկրի :

9 Ասաց և առ ոմանս պանծացեալս յանձինս , թէ արդարք իցեն՝

1 Մին առաք էլ ասաց նորանց՝ նրա վերայ թէ պէտք է նորանց՝ որ ամէն ժամանակ աղօթք անեն և չը՛ձանձրանան[1] :

2 Ասաց . Մին դատաւոր կար մին քաղաքի մէջ , որ Աստուածանից էր վախենում և մարդկանցից էլ էր ամաչում :

3 Եւ մին որբևէրի էլ կար էն քաղաքումն , նորա մօտ էր գալիս և ասում , թէ Իրաւունք արա ինձ իմ հակառակ ոսոխիցս :

4 Եւ նա շատ ժամանակ չէր կամենում . նրանից ետև իրան մտքումն ասաց . Թէ և Աստուածանից չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում ,

5 Այլ որովհետև էս որբևէրիս աշխատացնում ինձ՝ իրաւունք կընեմ նորան՝ որ չը՛գայ աղաչելով խափան ձանձրացնէ ինձ[2] :

6 Եւ Տէրն ասաց . Լսեցէք թէ անիրաւ դատաւորն ինչ էր ասում :

7 Այլ Աստուած միթէ իրան ծառաներին համար վրէժ չի՞ խընդրիլ , որ ցերեկ և գիշեր աղաչում դէպի նա[3] . և մինակ նրանց համար երկայնամիտ կըլինի :

8 Իրաւի՛ ասում եմ ձեզ՝ թէ շուտով վրէժխնդրութիւն կանէ նորանց համար[4] . բայց Որդին մարդոյ երբոր կըգայ՝ միթէ հաւատք կըգտնէ երկրի վերայ :

9 Այն քանի մարդկանց էլ՝ որ իրանց մտքերումն պարծենում էին՝

(1) Լուկ . ժա . 5 : իա . 36 : Հռովմ . ժբ . 12 : Եփես . գ . 18 : Կող . դ . 2 : ա Թես . ե . 17 : (2) Ղուկ . ժա . 8 : (3) Յայտ . գ . 10 : (4) Նբր . ժ . 37 : բ Պետր . գ . 8 , 9 :

Digitized by Google

և խոսիցին զբազումն , զատակս զայս ։

10 Ջոր երկու եկին ՚ի տաճարն կալ յաղօթս , մին փարիսեցի՝ և միւսն մաքսաւոր ։

11 փարիսեցին կայր մեկուսի , և զայս առանձինն աղօթս մատուցանէր ։ Աստուածո՛ իմ՝ գոհանամ ըզքեզ , զի ոչ եմ իբրև զայլս ՚ի մարդկանէ , զյափշտակիսն՝ և զանիրաւս՝ և զշունս , կամ իբրև զայս մաքսաւոր ։

12 Արի պահեմ երկիցս ՚ի շաբաթու , և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց ։

13 Եւ մաքսաւորն կայր մեկուսի , և ոչ կամէր և ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ ։ այլ կոծէր զկուրծս իւր՝ և ասէր ։ Աստուածո՛ քաւեա զիս մեղաւորս ։

14 Ասեմ ձեզ ։ Իջ սա արդարացեալ ՚ի տուն իւր քան զնա ։ զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն իւր , խոնարհեսցի ։ և որ խոնարհեցուցանէ զանձն , բարձրասցի ։

15 Ա՛ստուցանէին առ նա և մանկունս՝ զի մերձենայցէ ՚ի նոսա ։ իբրև տեսին աշակերտքն՝ սաստէին նոցա ։

16 Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝ ասէ ։ Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս , և մի՛ արգելուք զդոսա ։ զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոյ ։

17 Ամէն ասեմ ձեզ ։ Որ ոչ ընդունիցի զարքայութիւն Աստուծոյ իբրև թէ արդար են՝ և ուրիշներին ոչ ինչ էին համարում՝ էս ասացի նոցա ։

10 Երկու մարդ վեր էլան տաճարն որ աղօթք անեն ։ մինն փարիսեցի և մէկէլն մաքսաւոր (կամ գոյժչի) ։

11 փարիսեցին ջոկ կանգնած էր և առանձին էս աղօթքը էր անում[6] ։ Իմ Աստուած , գոհանում եմ քեզանից՝ որ ես ուրիշ մարդկանց պէս չեմ՝ յափշտակողների , և անիրաւների , և շնացողների , կամ թէ էս մաքսաւորիս պէս[7] ։

12 Ամէն շաբաթումն երկու անգամ պահ եմ պահում՝ և իմ ամէն ապրանքներիցս տասանորդ եմ տալիս ։

13 Եւ մաքսաւորն հեռու կանգնած էր՝ և իրան աչքերըն էլ չէր կամենում դէպի երկինքն բարձրացընել ։ բայց իրան կուրծքըն (պոշըն) թակումէր և ասում ։ Աստուածո՛ քաւիր ինձ մեղաւորիս ։

14 Ասումեմ ձեզ՝ թէ Սա արդարացած գնաց իրան տունըն քան թէ նա ։ ինչու որ՝ ամէն ով որ իրան անձըն բարձրացնումէ՝ կըխոնարհվի , և ով որ իրան անձըն խոնարհացնումէ՝ կըբարձրանայ[8] ։

15 Երեխաներ էլ բերումէին նորա մօտ՝ որ նորանց մօտենայ[9] ։ աշակերտներն երբոր տեսին , սաստումէին նորանց ։

16 Ամէն Յիսուս նորանց իրան մօտ կանչեց , և ասաց ։ Թոյլ տուէք էդ երեխաներիդ՝ որ ինձ մօտ գան , և մի՛ արգելէք դորանց ։ ինչու որ՝ էդպէսիներին է Աստուծոյ արքայութիւնն[10] ։

17 Ճշմարիտըն ասումեմ ձեզ ։ թէ Ով որ Աստուծոյ արքայութիւ-

(5) Ղուկ . ժ . 29 ։ ԺԶ . 15 ։ (6) Սաղ . ՃԼԲ . 2 ։ (7) Եսայ . ա . 15 ։ ԾԶ . 3 ։ Եզեկ . գ . 17 ։ (8) Ովբ . խբ . 29 ։ Մատթ . իգ . 12 ։ Ղուկ . ժգ . 11 ։ Յակ . գ . 6 ։ ա Պետր . ե . 5 , 6 ։ (9) Մատթ . ԺԹ . 13 ։ Մարկ . ժ . 13 ։ (10) ա Կորնթ . ժգ . 20 ։ ա Պետր . բ . 2 ։

Digitized by Google

իբրև զմանուկ ; ոչ մոցէ ՚ի նա ։

18 Եւ եհարց զնա ոմն իշխան և ասէ . Ով բարեպաշտ բարի՝ զի՞նչ գործեցից , զի զկեանսն յաւիտենական ժառանգեցից ։

19 Ասէ ցնա Յիսուս . Ո՞ւ՛ր ասես զիս բարի . չէ՛ք ոք բարի՝ բայց մի Աստուած ։

20 Պատուիրանս գիտես . Մի՛ շնար , Մի՛ սպանաներ , Մի՛ գողանար , Մի՛ սուտ վկայեր , Պատուեա զՀայր քո և զմայրն ։

21 Եւ նա ասէ . Ոչդ ամենայն պահեցի ՚ի մանկութենէ իմմէ ։

22 Իբրև լուաւ զայն Յիսուս՝ ասէ ցնա . Մի՛ իւն ևս պակաս է քեզ . զամենայն ինչ զոր ունիս , վաճառեա և տուր աղքատաց , և ունիցիս գանձս յերկինս , և եկ զկնի իմ ։

23 ՙայս իբրև լուաւ զայս , տրտմեցաւ . քանզի էր մեծատուն յոյժ ։

24 Իբրև եհաս զնա Յիսուս տրտմեալ , ասէ . Որպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝ մտանիցեն յարքայութիւն Աստուծոյ ։

25 Դիւրագոյն իցէ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել , քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել ։

26 Եւ որ լուանն՝ ասէին . Եւ ո՞ կարիցէ ապրել ։

27 Եւ նա ասէ . Ընդհարինք առ ի մարդկանէ , ընարաւորք են յԱստուծոյ ։

28 Եւ ասէ Պետրոս . Ահաւասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր , և եկաք զկնի քո ։

29 Եւ նա ասէ ցնոսա . Ամէն ասեմ ձեզ , չկայ ոք որ թողու զտուն , կամ զհարս , կամ զեղբարս , կամ զծնողս , կամ զորդիս , կամ զանդս վասն արքայութեան Աստուծոյ ,

30 Եթէ ոչ առցէ բազմապատիկ յաւուրս յայսմիկ , և յաշխարհին հանդերձելոց զկեանսն յաւիտենականս ։

31 Բայց բազումք որ են առաջինք՝ յետինք լինիցին , և յետինք՝ առաջինք ։

32 Եւ էին յճանապարհի ելանելով յԵրուսաղէմ , և Յիսուս առաջի նոցա երթայր . և նոքա զարհուրեալ էին , և հետևակք զհետ նորա երթային ։ Եւ առեալ զերկոտասանսն՝ սկսաւ ասել նոցա զբաներն որ պատահելոց էին նմա ։

33 Ահա ելանեմք յԵրուսաղէմ , և Որդի մարդոյ մատնեսցի քահանայապետացն և դպրացն , և դատապարտեսցեն զնա մահու , և մատնեսցեն զնա հեթանոսաց ։

34 Եւ ծաղր առնիցեն զնա , և հարկանիցեն զնա , և թքանիցեն ի նա , և սրով սպանանիցեն զնա , և յերրորդում աւուր յարիցէ ։

35 Եւ մատեան առ նա Յակոբոս և Յովհաննէս որդիք Զեբեդեայ , և ասեն ցնա . Վարդապետ , կամիմք զոր ինչ և խնդրեսցուք ՚ի քէն՝ առնել զմեզ ։

36 Եւ նա ասէ ցնոսա . Զի՞նչ կամիք առնել ձեզ ։

37 Եւ նոքա ասեն ցնա . Տուր մեզ զի մի ՚ի ձախմէ քումմէ և մի ՚ի ձախմէ նստցուք ՚ի փառս քում ։

38 Եւ Յիսուս ասէ ցնոսա . Ոչ գիտէք զինչ խնդրէք . կարէ՞ք արբուցանել զբաժակն զոր ես արբուցանեմ , և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ , մկրտիլ ։

39 Եւ նոքա ասեն ցնա . Կարեմք ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա . Զբաժակն զոր ես արբուցանեմ՝ արբուցանիցէք , և զմկրտութիւնն զոր ես մկրտիմ՝ մկրտիցիք ։

40 Բայց զի նստիլ ՚ի ձախմէ իմմէ և ՚ի ձախմէ , ոչ իմ է տալ , այլ որոց պատրաստեցաւ ։

41 Եւ լուեալ տասնեցունցն՝ սկսան բարկանալ վասն Յակոբայ և Յովհաննու ։

42 Եւ Յիսուս կոչեալ զնոսա՝ ասէ ցնոսա . Գիտէք զի որ իշխանք ազգաց՝ տիրեն նոցա , և մեծամեծքն՝ իշխեն նոցա ։

43 Այլ ոչ այսպէս իցէ ՚ի ձեզ . այլ որ կամիցի ՚ի ձեզ մեծ լինել՝ եղիցի ձեզ սպասաւոր ։

44 Եւ որ կամիցի ՚ի ձեզ առաջին լինել՝ եղիցի ձեզ ամենեցուն ծառայ ։

45 Զի և Որդի մարդոյ ոչ եկն որ ծառայեսցի նմա , այլ ծառայեսցէ , և տացէ զանձն իւր փրկանս վասն բազմաց ։

46 Եւ եկին յԵրիքով . և յելանելն նորա ՚ի Երիքովայ , և աշակերտացն նորա , և բազում ամբոխի , Բարտիմէոս կոյր որդի Տիմէոսի նստէր առ ճանապարհաւ մուրացիկ ։

47 Եւ լուեալ նմա զի Յիսուս Նազովրեցի է , սկսաւ գոչել և ասել . Որդի Դաւթի Յիսուս , ողորմեա ինձ ։

48 Եւ բազումք նզովէին զնա , զի լռեսցէ ։ Նա առաւել գոչէր . Որդի Դաւթի , ողորմեա ինձ ։

49 Եւ կացեալ Յիսուս՝ ասէ . Կոչեցէ՛ք զնա ։ Եւ կոչեցին զկոյրն՝ ասեն ցնա . Քաջալերեա , յարի՛ , կոչէ զքեզ ։

50 Եւ նա զգեստն իւր ընկեցեալ՝ յարոյց , եկն առ Յիսուս ։

51 Եւ պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա . Զի՞նչ կամիս առնել ձեզ ։ Եւ կոյրն ասէ ցնա . Տէր , զի տեսից ։

52 Եւ Յիսուս ասէ ցնա . Երթ , հաւատք քո զքեզ կեցուցին ։ Եւ անդէն տեսին , և հետևեցաւ նմա ճանապարհաւ ։

ԺԱ

1 Եւ յորժամ մերձեցան յԵրուսաղէմ , ի Բեթփագէ և ի Բեթանիա առ լերինն Ձիթենեաց , առաքէ երկուս յաշակերտաց իւրոց ,

2 Եւ ասէ ցնոսա . Երթայք յգեղն որ առաջի ձեր է , և անդէն մտանելոյ ձերոյ ՚ի նա՝ գտանիցէք զերինջ կապեալ , յորում ոչ ոք երբեք մարդկան նստաւ ։ Արձակեցէ՛ք զնա , և բերէ՛ք ինձ ։

3 Եւ եթէ ոք ասիցէ ցձեզ . Զի՞ արարէք զայդ . ասացէ՛ք . Տէր զնա կարի ունի , և անդէն զերինջն առաքեսցէ ՚ի սա ։

4 Եւ գնացին , և գտին զերինջն կապեալ առ դրան ՚ի դրսի ճանապարհին , և արձակեցին զնա ։

5 Եւ ոմանք յանդի կայեցելոցն ասեն ցնոսա . Զի՞ արձակէք զերինջն ։

6 Եւ նոքա ասացին ցնոսա որպէս պատուիրեաց Յիսուս ։ Եւ թողին զնոսա ։

7 Եւ բերին զերինջն առ Յիսուս , և արկին զհանդերձս իւրեանց ՚ի վերայ նորա , և նստաւ ՚ի վերայ նորա ։

8 Եւ բազումք զհանդերձս իւրեանց տարածեցին ՚ի ճանապարհի , և այլք կտրէին ոստս ՚ի ծառոց , և տարածանէին ՚ի ճանապարհի ։

9 Եւ որ առաջի երթային , և որ զհետ գային , աղաղակէին և ասէին . Օրհնեալ է որ գայ յանուն Տեառն ։

10 Օրհնեալ է որ գայ յանուն Տեառն , զոր Հայր մեր Դաւիթ ունէր ։ Օրհնեալ է որ գայ յանուն Տեառն ։ Ովսաննա յարդարութեանցն ։

11 Եւ մտեալ Յիսուս յԵրուսաղէմ՝ ՚ի տաճարն , և ամենայնի շրջեալ զնովաւ , և ժամն ուշ եղեալ՝ ել յԵրիքով ընդ Տասնեցունցն ։

12 Եւ ՚ի վաղիւն յելանելն նոցա ՚ի Բեթանիայ՝ քաղցեալ էր ։

13 Եւ տեսեալ զթզենի մի հեռի՝ որ տերեւս ունէր , եկն գուցէ գտանիցէ ինչ ՚ի նմա . և եկեալ առ նա՝ ոչ գտ ՚ի նմա բայց զտերեւս , զի ոչ էր ժամանակ թզոյ ։

14 Եւ պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա . Ոչ ոք յաւիտեան յքէն պտուղ ուտիցէ ։ Եւ լուին աշակերտք նորա ։

15 Եւ եկին յԵրուսաղէմ , և մտեալ Յիսուս ՚ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճառականսն և զգնողսն ՚ի տաճարին , և զսեղանս դրամակիցացն և զաթոռս վաճառողացն աղաւնեաց տապալեաց ։

16 Եւ ոչ ետ թողուլ զոք զի անցցէ ամանաւ ՚ի տաճարին ։

17 Եւ ուսուցանէր և ասէր ցնոսա . Ոչ գրեալ է . Զի տունն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն ազգաց , և դուք արարէք զայն որպէս ՚ի քարոյ աւազակաց ։

18 Եւ լուեալ քահանայապետացն և դպրացն՝ խնդրէին զկերպ ինչ զի սպանցեն զնա . զի երկնչէին ՚ի նմանէ , զի ամենայն ժողովուրդ զարհուրեալ էր ՚ի վարդապետութենէ նորա ։

19 Եւ յորժամ երեկոյ եղեալ՝ ել յաստի քաղաքէն ։

20 Եւ ՚ի վաղիւն անցեալ՝ տեսին զթզենին ցամաքեալ յարմատանց ։

21 Եւ Պետրոս յիշեալ ասէ ցնա . Վարդապե՛տ , ահա թզենին զոր անիծեր , ցամաքեալ է ։

22 Եւ պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա . Ունիցի՛ք հաւատս Աստուծոյ ։

23 Զի ճշմարիտ ասեմ ձեզ , եթէ ոք ասիցէ ցայս լեառն . Վերացի՛ր և արկանի՛ր ՚ի ծով , և մի տարակուսիցի սրտիւ իւրում , այլ հաւատասցէ եթէ զոր ինչ ասիցէ՝ եղիցի , ամենայն ինչ եղիցի նմա զոր ասիցէ ։

24 Վասն այսորիկ ասեմ ձեզ , զամենայն ինչ զոր աղաչէք և խնդրէք , հաւատասջի՛ք եթէ առիք , և եղիցի ձեզ ։

25 Եւ յորժամ կայցէք աղաչէք , թողէ՛ք եթէ ունիցիք ինչ ՚ի վերայ ումեք , զի և Հայր ձեր որ յերկինս է թողցէ ձեզ զյանցանս ձեր ։

26 Եւ եթէ դուք ոչ թողուցանէք , և Հայր ձեր որ յերկինս է ոչ թողուցանէ զյանցանս ձեր ։

27 Եւ գային կրկին յԵրուսաղէմ , և յորժամ նա երթայր ՚ի տաճարն , մատեան առ նա քահանայապետքն և դպիրքն և երէցքն ժողովրդեան ,

28 Եւ ասեն ցնա . Ո՞ւմ իշխանութեամբ զայդ առնես , և ո՞վ տուեալ է քեզ զիշխանութիւնս զայդ առնել ։

29 Եւ Յիսուս պատասխանի ետ և ասէ ցնոսա . Հարցից և ես ձեզ մի բան , և պատասխանի տուք ինձ , և ասացից ձեզ ես ՚ի ո՞ւմ իշխանութեամբ զայդ առնեմ ։

30 Մկրտութիւնն Յովհաննու ՚ի յերկնից էր , թէ ՚ի մարդկանէ ։ Պատասխանի տուք ինձ ։

31 Եւ նոքա խորհեցան ընդ միմեանս՝ ասելով . Եթէ ասիցուք թէ ՚ի յերկնից , ասիցէ . Ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա ։

32 Եւ եթէ ասիցուք թէ ՚ի մարդկանէ , զժողովրդենէն երկնչէին , զի ամենեքին զՅովհաննէս ունէին զի իսկ մարգարէ էր ։

33 Եւ պատասխանի տուեալ՝ ասեն ցՅիսուս . Ոչ գիտեմք ։ Եւ Յիսուս ասէ ցնոսա . Ոչ ես ասեմ ձեզ ՚ի ո՞ւմ իշխանութեամբ զայդ առնեմ ։

ԺԲ

1 Եւ սկսաւ առակս ասել ցնոսա . Այգի մի տնկեաց այր , և պատեաց զնա ցանկապատաւ , և փորեաց հնձան , և շինեաց աշտարակ , և մշակաց ետ զնա , և գնաց ՚ի գաւառ ։

2 Եւ առաքեաց առ մշակսն յաւուր ժամու զծառայ , զի առցէ ՚ի մշակացն ՚ի պտղոյ այգւոյն ։

3 Եւ նոքա առեալ զնա՝ ծեծեցին , և արձակեցին զնա դատարկ ։

4 Եւ կրկին առաքեաց առ նոսա ծառայ այլ . և զնա քարկոծեցին , և վէրս արարին ՚ի գլուխ նորա , և արձակեցին զնա նախատեալ ։

5 Եւ կրկին առաքեաց այլ , և զնա սպանին , և զայլս բազումս , զոմանս ծեծեցին , և զոմանս սպանին ։

6 Եւ մի ինչ ունէր որդի սիրելի , և նա առաքեաց զնա առ նոսա յետինս , ասելով . Ամաչեսցեն յորդւոյ իմմէ ։

7 Եւ մշակքն նոքա ասացին ընդ միմեանս . Սա է ժառանգն , եկայք սպանցուք զնա , և մեր եղիցի ժառանգութիւնն ։

8 Եւ առեալ զնա սպանին , և հանին զնա արտաքս յայգւոյն ։

9 Զի՞նչ արասցէ տէր այգւոյն . եկեսցէ և կորուսցէ զմշակսն , և տացէ զայգին այլոց ։

10 Ոչ զայս գրոց ընթերցարուք . Զոր անարգեցին շինողքն , նա եղև գլուխ անկեան ։

11 ՅՏեառնէ եղև այս , և է սքանչելի յաչս մեր ։

12 Եւ խնդրէին զկերպ ինչ զի կալցին զնա , և երկնչէին ՚ի ժողովրդենէն , զի գիտէին եթէ զնոսա ասաց զառակն զայն ։ Եւ թողեալ զնա՝ գնացին ։

13 Եւ առաքեցին առ նա զոմանս ՚ի փարիսեցւոց և ՚ի հերովդիանոսաց , զի որսասցեն զնա ՚ի խօսից ։

14 Եւ եկեալ նոքա՝ ասեն ցնա . Վարդապե՛տ , գիտեմք զի ճշմարիտ ես , և ոչ հոգաս զոք , զի ոչ հայիս ՚ի դէմս մարդկան , այլ ճշմարտութեամբ զճանապարհ Աստուծոյ ուսուցանես ։ Արդ արժան է՞ տալ հարկս կայսեր , թէ ոչ տացուք ։

15 Եւ նա գիտացեալ զկեղծաւորութիւն նոցա՝ ասէ ցնոսա . Զի՞ զիս փորձէք . բերէ՛ք ինձ դահեկան մի տեսից ։

16 Եւ նոքա բերին ։ Եւ ասէ ցնոսա . Զի՞նչ է պատկեր այս և գրութիւն ։ Եւ նոքա ասացին ցնա . Կայսերն ։

17 Եւ պատասխանի տուեալ Յիսուս՝ ասէ ցնոսա . Տուք զկայսերն կայսեր , և զԱստուծոյ Աստուծոյ ։ Եւ զարհուրեալ էին ՚ի նմանէ ։

18 Եւ եկին առ նա Սադուկեցիքն , որ ասեն թէ չիք յարութիւն , և հարցանէին զնա՝ ասելով .

19 Վարդապե՛տ , Մովսէս գրեաց մեզ եթէ եղբայր ոմանց եթէ մեռանիցի , և կին թողցէ , և զաւակ ոչ թողցէ , առցէ եղբայր նորա զկինն նորա , և յարուսցէ զաւակ եղբաւր իւրոյ ։

20 Եւ եղբարք եւթն էին ։ Եւ առեալ առն զկին՝ մեռաւ , և ոչ թողոյ զաւակ ։

21 Եւ առեալ երկրորդն զկինն՝ մեռաւ , և ոչ թողոյ զաւակ ։ Եւ նոյնպէս երրորդն ։

22 Եւ առեալ զնա եւթնեցունցն՝ ոչ թողին զաւակ ։ Յետ ամենեցուն մեռաւ և կինն ։

23 Յարութեանն յորժամ յարիցեն , յորո՞ւմ կին լիցի նա ։ Զի եւթնեցունցն ունէին զնա կին ։

24 Եւ պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնոսա . Ոչ այդ պատճառաւ մոլորիք դուք , զի ոչ գիտէք զգրոցն և զզօրութիւն Աստուծոյ ։

25 Զի յորժամ յարիցեն ՚ի մեռելոց , ոչ կնանան և ոչ կանայք առնուն , այլ իբրև զհրեշտակս որ յերկինս են ։

26 Եւ վասն մեռելոցն թէ յարիցեն , ոչ ընթերցարուք ՚ի գրոցն Մովսիսի , զի ՚ի մորենւոջն ասաց ցնա Աստուած՝ ասելով . Ես եմ Աստուած Աբրահամու , և Աստուած Իսահակայ , և Աստուած Յակոբայ ։

27 Ոչ է Աստուած մեռելոց , այլ կենդանեաց ։ Դուք ուրեմն մոլորեալ էք ։

28 Եւ մատեալ մի ՚ի դպրացն՝ որ լուաւ նոցա խնդրելոց , գիտացեալ եթէ լաւ պատասխանի ետ նոցա՝ հարցանէ զնա . Ո՞րն է առաջին պատուիրանաց ամենայնի ։

29 Եւ Յիսուս պատասխանի ետ նմա . Առաջին պատուիրանաց ամենայնի է . Լո՛ւր Իսրայէլ , Տէր Աստուած մեր Տէր մի է ։

30 Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ , և յամենայն անձնէ քումմէ , և յամենայն մտաց քոց , և յամենայն զօրութենէ քումմէ ։ Սա է առաջին պատուիրան ։

31 Եւ երկրորդ նման նմին . Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո ։ Ոչ է այլ պատուիրան մեծ քան զսոսա ։

32 Եւ ասէ ցնա դպիրն . Լաւ ասացեր , վարդապե՛տ , ճշմարտութեամբ ասացեր , զի Աստուած մի է , և չիք այլ բաց ՚ի նմանէ ։

33 Եւ սիրել զնա յամենայն սրտէ , և յամենայն հանճարոյ , և յամենայն զօրութենէ , և սիրել զընկեր իբրև զանձն , առաւել է քան զամենայն ողջակէզս և զպատարագս ։

34 Եւ Յիսուս տեսեալ զի խելամտութեամբ պատասխանի ետ , ասէ ցնա . Ոչ հեռի ես ՚ի թագաւորութենէ Աստուծոյ ։ Եւ ոչ ոք համարձակեցաւ յետ այնորիկ հարցանել զնա ։

35 Եւ պատասխանի տուեալ Յիսուս՝ ասէր ՚ի տաճարին ուսուցանելով . Զիա՞րդ ասեն դպիրքն եթէ Քրիստոս Որդի Դաւթի է ։

36 Եւ ինքն Դաւիթ ասաց Հոգւովն Սրբով . Ասաց Տէր Տեառն իմում . Նստիր ՚ի աջմէ իմմէ , մինչև եդից զթշնամիս քո սաստ ոտից քոց ։

37 Եւ ինքն Դաւիթ կոչէ զնա Տէր , և զիա՞րդ է նա որդի նորա ։ Եւ բազում ամբոխ լսէին նմա սիրով ։

38 Եւ ասէր ցնոսա ՚ի ուսուցանելն իւրում . Զգուշացարուք ՚ի դպրացն , որ կամին երթալ զգեցեալ ՚ի պատմուճանս , և սիրեն ողջոյնս ՚ի հրապարակս ,

39 Եւ զաթոռս առաջնակարգս ՚ի ժողովարանս , և զկողմանս առաջնակարգս ՚ի հանդէսս ,

40 Որ կլանեն զտունս այրեաց , և երկայնապատիր աղօթս առնեն առ ցուցումն . նոքա առաւել դատաստան կրեն ։

41 Եւ նստեալ Յիսուս դէմ գանձանակին՝ նայէր զկերպ որպէս ձգէր ամբոխն դրամ ՚ի գանձանակն , և բազումք հարուստք ձգէին բազում ինչ ։

42 Եւ եկեալ այրի մի աղքատ՝ ձգեաց երկու լումայս , որ է դանգ մի ։

43 Եւ կոչեալ զաշակերտսն իւր՝ ասէ ցնոսա . Ամէն ասեմ ձեզ , զի այրի աղքատ այս ձգեաց քան զամենեսեան որ ձգեցին ՚ի գանձանակն ։

44 Զի ամենեքին ՚ի բազմութենէ իւրեանց ձգեցին , և նա ՚ի պակասութենէ իւրմէ զամենայն ինչ զոր ունէր ձգեաց , զամենայն կեանս իւր ։

ԺԳ

1 Եւ յորժամ ելանէր նա ՚ի տաճարէն , ասէ ցնա ոմն ՚ի աշակերտացն իւրոց . Վարդապե՛տ , տե՛ս զի՞նչ քարինք և զի՞նչ շինուածք ։

2 Եւ Յիսուս պատասխանի տուեալ՝ ասէ ցնա . Տեսանե՞ս զայս մեծամեծ շինուածս . ոչ մնասցէ քար ՚ի քարի որ ոչ քակեսցի ։

3 Եւ նստեալ նորա ՚ի լերինն Ձիթենեաց դէմ տաճարին՝ հարցանէին զնա առանձինն Պետրոս և Յակոբոս և Յովհաննէս և Անդրէաս ,

4 Ասելով . Ասա մեզ , յորո՞ժամ եղիցին այս ամենայն , և զի՞նչ նշան յորժամ սկսցին այս ամենայն կատարիլ ։

5 Եւ Յիսուս սկսաւ ասել ցնոսա . Տեսէ՛ք զի մի ոք մոլորեցուսցէ զձեզ ։

6 Զի բազումք եկեսցեն յանուն իմ՝ ասելով . Եթէ ես եմ ։ Եւ զբազումս մոլորեցուսցեն ։

7 Եւ յորժամ լուիցէք պատերազմունս և զպատերազմաց լուրս , մի՛ զարհուրիք . զի պարտ է այնոսիկ լինել , այլ ոչ դեռ է վախճան ։

8 Զի յարիցէ ազգ ՚ի վերայ ազգի , և թագաւորութիւն ՚ի վերայ թագաւորութեան , և լինիցին երկրաշարժք յամենայն տեղիս , և լինիցին սովք և խռովք . սկիզբն ցաւոցն են այսոքիկ ։

9 Եւ դուք զգուշացարուք ՚ի ձեզ անձինս . զի մատնեսցեն զձեզ ՚ի ժողովարանս , և ՚ի ժողովս ծեծեսջիք , և առաջի իշխանաց և թագաւորաց կացուսցին վասն իմ , ՚ի վկայութիւն նոցա ։

10 Եւ ամենայն ազգաց նախ պարտ է քարոզել զաւետարանն ։

11 Եւ յորժամ տանիցեն զձեզ մատնելով , մի՛ նախ հոգայք զինչ ասիցէք , և մի՛ խորհիք . այլ զոր ինչ տացի ձեզ յժամուն յայնմիկ՝ զայն խօսեցարուք , զի ոչ դուք էք որ խօսիք , այլ Հոգին Սուրբ ։

12 Եւ մատնեսցէ եղբայր զեղբայր ՚ի մահ , և հայր զորդի , և յարիցեն որդիք ՚ի վերայ ծնողաց , և մահու մատնեսցեն զնոսա ։

13 Եւ լինիցիք ատելիք ամենայն ազգաց վասն անուան իմոյ . բայց որ համբերեսցէ մինչև ՚ի կատարած , նա կեցցէ ։

14 Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն կործանման՝ որ ասացաւ ՚ի Դանիէլ մարգարէէ , որ կայցէ ՚ի տեղւոջ ոչ իւրում , որ կարդայ՝ իմասցի ։ Յայնժամ որ ՚ի Հրէաստան են՝ փախիցին ՚ի լերինս ,

15 Եւ որ ՚ի տանն՝ մի՛ իջցէ ՚ի տունն , և մի՛ մտցէ առնուլ ինչ ՚ի տանէ իւրմէ ,

16 Եւ որ ՚ի դաշտի՝ մի՛ դարձցի ետ առնուլ զհանդերձս իւր ։

17 Վա՛յ յաղուաղակ և ՚ի կաթնասուն յայնմ աւուրս ։

18 Եւ աղաչեցէ՛ք զի մի՛ լիցի ձմերայնի ։

19 Զի եղիցին աւուրք յայնոսիկ նեղութիւն , որպիսի չեղև յսկզբանէ արարչութենէ զոր արար Աստուած մինչև ցայժմ , և ոչ եղիցի ։

20 Եւ եթէ ոչ կրճատեսցէ Տէր զաւուրսն , ոչ ապրեցաւ ամենայն մարմին . այլ վասն ընտրելոցն զորս ընտրեաց՝ կրճատեաց զաւուրսն ։

21 Եւ յայնժամ եթէ ոք ասիցէ ցձեզ . Ահա աստ է Քրիստոս , կամ անդ , մի՛ հաւատայք ։

22 Զի յարիցեն սուտ Քրիստոսք և սուտ մարգարէք , և տացեն նշանս և զսքանչելիս , զի մոլորեցուսցեն , եթէ կարիցեն , և զընտրեալսն ։

23 Դուք ուրեմն զգուշացարուք . ահա նախասացի զամենայն ինչ ձեզ ։

24 Բայց յաւուրսն յայնոսիկ յետ նեղութեանն յայնորիկ՝ արեգակն խաւարեսցի , և լուսին ոչ տացէ զլոյս իւր ,

25 Եւ աստեղք յերկնից անկցին , և զօրութիւնք որ յերկինս են շարժեսցին ։

26 Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ ՚ի ամպս հանդերձ զօրութեամբ բազմաւ և փառաւ ։

27 Եւ յայնժամ առաքեսցէ զհրեշտակսն իւր , և ժողովեսցէ զընտրեալսն իւր ՚ի չորից հողմոց , ՚ի ծագաց երկրի մինչև ՚ի ծագս երկնից ։

28 Եւ ՚ի թզենւոջէ առակ ասացէ՛ք . Յորժամ ոստ նորա մատղաշ լինի , և տերեւս ածանի , գիտէք եթէ մերձ է ամառն ։

29 Նոյնպէս և դուք յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ , գիտասջի՛ք եթէ մերձ է ՚ի դրունս ։

30 Ամէն ասեմ ձեզ , զի մի՛ անցցէ ազգս այս մինչև զայս ամենայն եղիցի ։

31 Երկինք և երկիր անցանիցեն , բայց բանք իմ ոչ անցանիցեն ։

32 Եւ զաւուրն յայնմիկ կամ ժամուն ոչ գիտէ ոք , ոչ հրեշտակք որ յերկինս են , ոչ Որդի , այլ միայն Հայր ։

33 Զգուշացարուք , արթնացարուք և աղօթեցէ՛ք . զի ոչ գիտէք զի՞նչ ժամ իցէ ։

34 Որպէս մարդ մեկնեալ յերկիր՝ եդ զտունն իւր , և ետ զիշխանութիւն ծառայիցն իւրոց , և իւրաքանչիւր զգործ իւր , և դրան պահապանին պատուիրեաց զի արթնասցի ։

35 Արթնացարուք ուրեմն , զի ոչ գիտէք յորո՞ժամ գայցէ տէր տանն , կամ երեկոյ , կամ կէս գիշերի , կամ ՚ի հաւուն , կամ առաւօտ ,

36 Զի մի՛ եկեալ յանկարծ՝ գտցէ զձեզ քնացեալս ։

37 Եւ զոր ասեմ ձեզ՝ ամենեցուն ասեմ , արթնացարուք ։

ԺԴ

1 Եւ էր զատկին և խմորոցն երկու աւուրք ։ Եւ խորհէին քահանայապետքն և դպիրքն զկերպ ինչ զի նենգութեամբ կալցին զնա և սպանցեն ։

2 Եւ ասէին . Ոչ յտօնի , զի մի՛ խռովութիւն լինիցի ՚ի ժողովրդեանն ։

3 Եւ յորժամ էր նա Բեթանիա ՚ի տան Սիմոնի բորոտի , և նստէր ընդ սեղանաւ , եկն կին մի ունելով սրուակ մի ալաբաստրոնի իւղոյ նարդոսի մաքրոյ , և կոտորեալ զսրուակն՝ հեղոյց ՚ի գլուխ նորա ։

4 Եւ էին ոմանք որ ՚ի միտս իւրեանց ասէին . Ընդէ՞ր կորուստ եղև իւղոյս այսորիկ ։

5 Զի կարէր իւղս զայս վաճառել ՚ի գինն երեք հարիւր դահեկանաց , և տալ աղքատաց ։ Եւ նեղէին զնա ։

6 Եւ Յիսուս ասէ . Թողէ՛ք զնա , զի՞ զնա նեղէք . գործ բարի գործեաց ինձ ։

7 Զի զաղքատսն միշտ ունիք ընդ ձեզ , և յորժամ կամիցիք՝ կարող էք նոցա բարի առնել , բայց զիս ոչ միշտ ունիք ։

8 Զոր ինչ կարացին՝ արարին . կանխեաց օծանել զմարմին իմ յաղագս թաղման ։

9 Ամէն ասեմ ձեզ , ուր և քարոզեսցի աւետարանս այս յամենայն աշխարհի , և զոր արարին կինս այս՝ պատմեսցի ՚ի յիշատակ նորա ։

10 Եւ Յուդաս Իսկարիովտացի , որ ՚ի թուոյ տասնեցունցն էր , գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նոցա ։

11 Եւ նոքա լուեալ՝ ուրախ եղեն , և խոստացան տալ նմա արծաթ ։ Եւ խնդրէր զկերպ ինչ զի մատնեսցէ զնա ՚ի ժամ յարմար ։

12 Եւ ՚ի միում յաւուրցն անխմորոցն՝ յորում զատիկն մորթէին , ասեն ցնա աշակերտք նորա . Ո՞ւր կամիս երթալ և պատրաստեսցուք զքեզ զի կերիցես զատիկն ։

13 Եւ առաքէ երկուս յաշակերտաց իւրոց , և ասէ ցնոսա . Երթայք յքաղաքն , և ապանդիսցի ձեզ մարդ մի ջրով կուժ մի բարձեալ , զհետ եկէ՛ք նմա ,

14 Եւ ուր մտցէ ՚ի տունն՝ ասացէ՛ք տանուտերին . Ասէ վարդապետն . Ո՞ւր է ննջարանն ուր զատիկն ընդ աշակերտս իմ կերիցեմ ։

15 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ , զարդարեալ և պատրաստ , անդ պատրաստեցէ՛ք մեզ ։

16 Եւ ելին աշակերտքն նորա , և եկին յքաղաքն , և գտին որպէս ասաց նոցա , և պատրաստեցին զզատիկն ։

17 Եւ յորժամ երեկոյ եղեալ՝ եկն ընդ տասնեցունցն ։

18 Եւ նստեալ նոցա ՚ի սեղանի՝ և ուտելով , ասէ Յիսուս . Ամէն ասեմ ձեզ , զի մի ոք ՚ի ձէնջ մատնեսցէ զիս , որ ուտէ ընդ իս ։

19 Եւ սկսան տրտմել , և ասել ցնա մի ըստ միոջէ . Միթէ՞ ես եմ ։

20 Եւ նա ասէ ցնոսա . Ոմն ՚ի տասնեցունցն , որ ՚ի պնակ ընդ իս ձգէ ։

21 Զի Որդի մարդոյ երթայ որպէս գրեալ է վասն նորա , բայց վա՛յ այնմ մարդոյ որով Որդի մարդոյ մատնեսցի . լաւ էր նմա եթէ չծնեալ լինէր մարդն այն ։

22 Եւ ուտելոցն նոցա՝ առեալ Յիսուս զհաց , և օրհնեալ՝ բեկ և ետ նոցա , և ասէ . Առէ՛ք , կերէ՛ք , այս է մարմին իմ ։

23 Եւ առեալ զբաժակն՝ և շնորհակալ եղեալ՝ ետ նոցա , և արբուցին ամենեքին ՚ի նմանէ ։

24 Եւ ասէ ցնոսա . Այս է արիւն իմ նորոգ ուխտի , որ վասն բազմաց հեղեալ լինի ։

25 Ամէն ասեմ ձեզ , զի ոչ եւս արբից յայսմ ծնունդ որթոյ մինչև յաւուրն յայնմ՝ յորում արբից զայն նոր յարքայութեան Աստուծոյ ։

26 Եւ օրհնեալ՝ ելին յլեառն Ձիթենեաց ։

27 Եւ ասէ Յիսուս ցնոսա . Ամենեքին գայթագղիցիք ՚ի ձեզ զիս յաւուրս յայսմիկ , զի գրեալ է . Հարից զհովիւն , և ցրուեսցին ոչխարքն ։

28 Բայց յետ յարութեանս իմոյ նախագնասցեմ ձեզ յԳալիլեա ։

29 Եւ Պետրոս ասէ ցնա . Եթէ և ամենեքին գայթագղիցին , ես ոչ գայթագղիմ ։

30 Եւ ասէ ցնա Յիսուս . Ամէն ասեմ քեզ , զի դու այսօր յաւուրս յայսմիկ մինչև ոչ երկիցի աքաղաղ՝ երիցս ուրասցես զիս ։

31 Եւ նա աւելի խօսէր . Եթէ ինձ հարկ իցէ հետ քո մեռանել , ոչ ուրասցեմ զքեզ ։ Նոյնպէս և ամենեքին ասէին ։

32 Եւ եկին յանդ որում անուն Գեթսեմանի , և ասէ ցաշակերտսն իւր . Նստարո՛ւք աստ մինչև աղօթեցից ։

33 Եւ առեալ զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս ընդ ինքեան՝ սկսաւ զարհուրել և տագնապել ։

34 Եւ ասէ ցնոսա . Տրտում է անձն իմ մինչև ՚ի մահ . կացէ՛ք աստ և արթնացարուք ։

35 Եւ անցեալ մի ինչ՝ անկաւ ՚ի վերայ երկրի , և աղաչէր զի եթէ կարիցէ՝ անցցէ ՚ի նմանէ ժամն ։

36 Եւ ասէր . Աբբա Հայր , ամենայն ինչ քեզ հնար է , անցո՛ զբաժակս զայս ՚ի ինէն , բայց ոչ զիս կամիս այլ զքո ։

37 Եւ գայ և գտանէ զնոսա քնացեալս , և ասէ ցՊետրոս . Սիմո՛ն , քնացեա՞ր , ոչ կարացեր մի ժամ արթնանալ ։

38 Արթնացարուք և աղօթեցէ՛ք , զի մի՛ մտանիցէք ՚ի փորձութիւն . հոգի պատրաստ է , այլ մարմին տկար ։

39 Եւ կրկին գնացեալ՝ աղաչէր զնոյն բան ասելով ։

40 Եւ դարձեալ եկեալ գտանէ զնոսա քնացեալս , զի ծանրացեալ էին աչք նոցա , և ոչ գիտէին զի՞նչ պատասխանի տացեն նմա ։

41 Եւ գայ երրորդ անգամ՝ և ասէ ցնոսա . Քնացէ՛ք ուրեմն և հանգուցէ՛ք . բաւական է , եկն ժամն , ահա մատնեսցի Որդի մարդոյ ՚ի ձեռս մեղաւորաց ։

42 Յարիջի՛ք , երթա՛նք , ահա մատնիչ իմ մերձեցաւ ։

43 Եւ նա դեռ խօսէր , և ահա Յուդաս Իսկարիովտացի մի ՚ի տասնեցունցն գայ , և ընդ նմա ամբոխ բազում սրով և գաւազանաւ ՚ի քահանայապետացն և ՚ի դպրացն և ՚ի երէցանցն ։

44 Եւ մատնիչն տուեալ նոցա նշան՝ ասելով . Զոր ես համբուրեցից՝ նա է , զնա կալարո՛ւք և տարարո՛ւք զգուշութեամբ ։

45 Եւ եկեալ՝ անդէն մատեաւ առ նա և ասէ . Ռաբբի , Ռաբբի , և համբուրեաց զն

սեմ ձեզ . եթէ ոչ ոք է որ ետես զնա կամ գծնօղս կամ զերգասս կամ զկին կամ զորդին՝ վասն աքսորութեան Յաստուծոյ ,

30 եթէ ոչ առնուցու քառմասիկ ի ժամանակի յայսմիկ . և յաշխարհին՝ որ գալոցն է՝ զկեանն յաւիտենական ժառանգեսցէ :

31 Եւ առեալ զերկոտասանեան աշակերտին՝ ասէ ցնոսա . Յհաւատիկ ելանեմք յԵրուսաղէմ . և կատարեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վասն Որդւոյ մարդոյ :

32 Զի մատնեսցի Հեթանոսաց և կատակեսցի .

33 Եւ հարկանիցեն և սպանանիցեն զնա , և յերիր աւուր յառիցէ :

34 Եւ նոքա ոչինչ իմացան յայնցանէ , այլ էր բանն ծածկեալ ի նոցանէ , և ոչ գիտէին զասացեալսն :

35 Եւ եղև ի մօտենալն նորա յԵրիքովին , կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ :

36 Իբրեւ լուաւ զանցանել ժողովրդեանն , հարցանէր՝ թէ Զի՞նչ իցէ այն :

37 Եւ պատմեցին նմա , թէ Յիսուս Նազովրեցի անցանէ :

38 Յղաղակեաց և ասէ . Յիսուս որդի Դաւթի՝ ողորմեաց ինձ :

39 Եւ որ առաջին երթային՝ ասաստէին նմա , զի լռեսցէ . և նա աւս առաւել աղաղակէր , Որդի Դաւթի ողորմեաց ինձ :

40 Զատեղի առ Յիսուս , և հրամայեաց ածել զնա առ իւր . և իբրեւ մերձ եղև առ նա , եհարց զնա և ասէ .

մարիարն ասուսմամ ձեզ , թէ ոչ՝ ով չըկայ՝ որ տունները կամ ծնօղները կամ եղբարները կամ կինը կամ որգիքը թողեց Յաստուծոյ աքսորութեան համար[19] ,

30 Որ շատ աւելի չառնէ էս ժամանակումս՝ և էն աշխարհըումն՝ որ գալու է՝ յաւիտենական կեանքըն ժառանգէ[20] :

31 Եւ էն տասներկուսին առաջ ձին առաւ և նորանց ասաց[21] . Ըհա վեր ենք էլլում Երուսաղէմ . և ամէն բաներն որ մարգարէներն ձեռովն Որդոյ մարդոյ համար գրուած են , կրկատարվին[22] :

32 Ինչու որ՝ Հեթանոսների ձեռքըն կրմատնվի և ծաղր կրլինի[23] :

33 Եւ կրծեծեն և կրսպանեն նորան . և երեք օրումն յարութիւն կառնէ :

34 Եւ նորանք ոչ ինչ էիմացան էն բաներից՝ թայց խօսքն ծածկըված էր նորանցից՝ և ասած բաները չէին գիտում[24] :

35 Եւ երբոր նա Երիքովին մօտենումէր[25] , մին կոյր ճանապարհի վերայ նստած էր՝ մուրացական :

36 Երբոր ժողովըրդի անցկենալն լսեց , հարցնումէր՝ թէ Ին՞չ է :

37 Եւ պատմեցին նորան՝ թէ Յիսուս Նազովրեցին անց է կենում :

38 Յղաղակեց և ասաց . Յիսուս որդի Դաւթի՝ ինձ ողորմեա :

39 Եւ նորանք՝ որ առաջ էին գնում , ասստումէին նորան՝ որ լռու կենայ . և նա էլ աւելի աղաղակումէր . Որդի Դաւթի՝ ինձ ողորմեա :

40 Յիսուս կանգնեց և հրամայեց՝ որ նորան իրան մօտ բերեն . և երբոր իրան մօտ եկաւ՝ հարցրուց նորան և ասաց :

(19) ք Օրին · լգ · 9 : (20) Յոբ · խբ · 10 : (21) Մատ · ժզ · 21 : ժէ · 22 : ի · 17 : Մարկ · ժ · 32 : (22) Սամ · իբ : Նաում · ծգ : (23) Մատ · իե · 2 : Ղուկ · իգ · 2 : Յովհ · ժբ · 28 : Գործ · գ · 13 : (24) Մարկ · թ · 32 : Ղուկ · ը , 50 : թ · 45 : Յովհ · ժ · 6 : ժբ , 16 : (25) Մատ , ի · 29 : Մարկ · ժ , 46 :

Digitized by Google

41 Ո՞վ ինչ կամիս դու՝ զի տրա-
ցից քեզ · և նա ասէ · Տէր՝ զի
բացցին աչք իմ՝ և տեսից ։
42 Եւ Յիսուս ասէ ցնա · Հաս-
ատ , հաւատք քո կեցուցին զքեզ ։

43 Եւ առժամայն եսաս՝ երթայր
զհետ նորա՝ և փառաւոր առնէր
զԱստուած · և Ամենայն ժողովրդե-
անն տեսեալ , տայր օրհնութիւն
Աստուծոյ ։

41 Ի՞նչ ես պատրաստ դուս որ անեմ
քեզ · և նա ասաց · Տէր՝ որ իմ
աչքերս բացվին և տեսնեմ ։
42 Եւ Յիսուս ասաց նորան ·
Ա՛յսպէս , քո հաւատքդ ապրեցրուց
քեզ[26] ։
43 Եւ շուտով տեսաւ , և նորա
հետևէն գնումէր՝ և Աստուծոյն փա-
ռաւորումէր[27] · և ամէն ժողովուրդն՝
որ տեսաւ՝ օրհնութիւն էր տալիս
Աստուծոյն ։

ԳԼ · ԺԹ

2 Օգթեոս մաքսաւորն ։ 11 Պետանէրի տառին ։ 28 Երիքոսոյ քաղաքէն հնձած չորս թաթիանով նշանագիր մանելն · 41 Կաղաքին վերայ կլսայ · 45 Նոխազներին և գրաճաղներին առաջերց դուրս կրհանէ · 47 Եւ ամէն օր էն տէր կըսովրցնէ · քահանայապետներն և դպրապետներն ուզումէին որ նորան խորտնեն՝ բայց ժողովրդից վախենալէն ։

1 Եւ մտեալ շրջէր ընդ Երի-
քով ։
2 Եւ արդ այր մի անուն կոչեց-
եալ Զաքքէոս , և նա էր մաքսա-
պետ , և ինքն մեծատուն ·

3 Եւ խնդրէր տեսանել զԵիսու
իցէ Յիսուս , և ոչ կարէր ի բազ-
մութենէն , զի կարճ էր հասա-
կաւ ։

4 Եւ ընթացեալ յառաջս , ել
ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ
զնա · քանզի ընդ այն իսկ անցա-
նելոց էր ։

5 Երբեւ եկն ի տեղին , հայեցաւ
ի վեր Յիսուս՝ և ասէ ցնա · Զաք-
քէ փութով էջ այսր , զի այսօր
ի տան քումն արժան է ինձ ագա-
նել ։

6 Փութացաւ և էջ՝ և ընկալաւ
զնա ուրախութեամբ ։

7 Երբեւ տեսին ամենեքին , տրըր-
տնջէին և ասէին՝ թէ Առն մեղաւորի եմուտ լուծանիլ ։

1 Եւ մտաւ Երիքովի միջոցէն
անց էր կենում ։
2 Եւ ահա մին մարդ անունն
Զաքէոս կոչված · և նա մաքսա-
ւորների (Ի՞նչ-որ-չինովնիկի) գլխաւորն
էր , և ինքն էր հարուստ ։
3 Եւ ուզումէր որ տեսնէ՝ թէ
ո՞վ է Յիսուսն , և մարդկանց
բազմութեան պատճառովն չէր կա-
րում · ինչու որ հասակովն կարճ
էր ։
4 Եւ առաջ վազեց և վեր էլաւ
մին ժանտաթզենի ծառ՝ որ տեսնէ
նորան · ինչու որ (Յիսուս) հենց
էնտեղովն պէտք էր անցկենայ ։
5 Երբոր էն տեղն եկաւ՝ Յի-
սուս վեր նայեց և նորան ասաց ·
Զաքէ շուտ արի էգ տեղիցդ վեր
եկ , ինչու որ՝ պէտք է ինձ՝ որ
էս օր քո տանդ վեր գամ ։
6 Ա՛յս վազելով վեր եկաւ և
ուրախութիւնով ընդունեց նորան ։
7 Ա՛մէնն երբոր տեսին , տրըր-
մընջումէին և ասում · թէ Ա՛ն-
դաւոր մարդոյ մօտ մտաւ հանգիստ
առնելոյ համար[1] ։

(26)Ղուկ · ժե · 19 · (27)Ղուկ · ե · 26 · Գործ · դ · 21 · ժա · 18 · (1) Սաղմ · ՃԴ · 11 · Ղուկ · ե · 30 ·

Digitized by Google

8 Եկն եկաց Ովաբէա՝ և ասէ ցՏէր · Տէր՝ ահա ղեկս ընչից իմոց առաց աղքատաց · և եթէ զոք զըրկեցի , հատուցից չորեքկին ։

9 Եւ ասէ ցնա Յիսուս · Ա՛յսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ · քանզի և սա որդի Աբրահամու է ։ 10 Ի՛նչ եկն Որդի մարդոյ խնդրել և կեցուցանել զկորուսեալն ։

11 Եւ մինչդեռ նոքա զայն լսէին , յաւել առակ մի և ասէ , վասն մերձ ձենալոյ նորա Երուսաղէմ , և համարելոյ նոցա եթէ առաջաւին յայտնելոց է արքայութիւն Աստուծոյ ։

12 Ա՛ռէ · Ա՛յր ոմն ազնուական գըներայ յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն և դառնալ ։

13 Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ նոցա տասն մնաս , և ասէ ցնոսա · Շուրջացէք զայդ մինչև եկից ։

14 Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա ։ առաքեցին հրեշտակս զկնի նորա և ասեն , Թէ Ոչ կամիմք թագաւորել դմա ՚ի վերայ մեր ։

15 Եւ եղև դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւնն , և և կոչեցեալ զծառայն՝ որոց տուեալ էր զարծաթն , զի գիտասցէ թէ ո՞ զինչ շահեցաւ ։

16 Եկն առաջինն և ասէ · Տէր մնասն քո՝ տասն մնաս արար ։

17 Եւ ասէ ցնա · Ա՛ղնիւ ծառայ և բարւոյ , զի ՚ի փոքուդ հաւատարիմ եղեր , լիջիր իշխանութիւն ունել ՚ի վերայ տասն քաղաքի ։

8 Ովաբէան եկաւ կանգնեց և Տէրին ասաց · Տէր՝ ահա իմ ապրանքների կէսը աղքատներին կըտամ · և եթէ մէնդն զրկեցի՝ չորս տակ կըվճարեմ[3] (նորան) ։

9 Եւ Յիսուս նորան ասաց · Այս օր փրկութիւն էլաւ էս տանս . ինչու որ՝ սա էլ[4] Աբրահամու որդի է ։

10 Գաւճառն որ՝ Որդին մարդոյ եկաւ , որ մանգայ և ապրեցնէ կորածին[5] ։

11 Եւ դեռ որ նորանք էս բաները լսումին՝ մին առակ աւելացրուց և ասաց , իրան Երուսաղէմին մօտենալոյ համար , և նորանց կարծելոյ համար՝ թէ Աստուծոյ արքայութիւնն շուռավ պիտի յայտնվի[7] ։

12 Ա՛սաց · Ա՛ինն մեծազգի մարդ գնաց հեռա աշխարհ , որ թագաւորութիւն առնէ իրան համար և յետ դառնայ[8] ։

13 Եւ իրան ծառաներին կանչեց , տասն մնաս տուաւ նորանց , և ասաց նորանց · Ա՛նդ բանացրէք մինչև որ գամ ։

14 Եւ նորա քաղաքացիներն , նորան ատումին · նորա հետևէն պատգամաւորներ ուղարկեցին և ասացին · Թէ Չենք ուզում որ դա թագաւոր մեզ վերայ[9] ։

15 Եւ էլաւ՝ որ նա թագաւորութիւնըն առաւ՝ յետ դարձաւ · և էն ծառաներին՝ որ արծաթըն նորանց էր տուել , կանչեց , որ գիտենայ , թէ ով ի՞նչ շահվեցաւ ։

16 Ա՛ռաջինն եկաւ և ասաց · Տէր քո հնասդ տասն հնաս (շահ) արաւ ։

17 Եւ նորան ասաց · Ա՛ղնիւ և բարի ծառայ՝ որովհետև էդ քիչ բանումդ հաւատարիմ էլար՝ թագդ տասն քաղաքի վերայ իշխանութիւն ունենաս[10] ։

(2) Ղուկ · գ · 14 ։ (3) Նիւ · իբ · 1 ։ ա Ցաւգ · ժբ · 3 ։ բ Ցաւգ · ժբ · 6 ։ (4) Ե՛ղուկ · գ · 11 , 13 · 16 ։ Գաղ · գ · 7 ։ (5) Ղուկ · ժգ · 16 ։ (6) Ա՛մբակ · ժ · 6 ։ ժբ · 24 ։ ժը · 11 ։ (7) Գործ · ա · 6 ։ (8) Ա՛ղուկ · իե · 14 ։ Ա՛մբակ · ժգ · 34 ։ (9) Ովսէ · ա · 11 ։ (10) Ա՛ղուկ · իե · 21 ։ Ղուկ · ժը · 10 ։

Digitized by Google

18 Եկն երկրորդն և ասէ. Ա՛նաան քո արար հինգ մնաս:
19 Ա՛սէ և ցնա. Եւ դու լիջիր՝ ի վերայ հինգ քաղաքաց:
20 Եկն միւսն և ասէ. Տէր՝ ահա մնաան քո՝ զոր ունէի ծրարեալ՝ ի վարշամակի:

21 Երկնչէի՝ ի քէն, զի այր ըստամբակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, և ընձես՝ զոր ոչ սերմանեցեր:

22 Եւ ասէ ցնա. Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ՝ զոր ոչ եդի, և ընձեմ՝ ուր ոչ սերմանեցի:

23 Եւ ընդէր ոչ եառուր զարծաթն իմ՝ ի սեղանաւորս, և եկեալ ես տոկոսօք պահանջէի:

24 Եւ ասէ ցպատասաւորսն. Ա՛ռէք՝ ի դմանէ զմնասն, և տարա՛յք առ՛ք այնմ՝ որ ունիցի զտասն մնասն:
25 Եւ ասեն ցնա. Տէր՝ ունի տասն մնաս:
26 Ա՛սեմ ձեզ, եթէ Ա՛մենայնի՝ որ ունիցի, տացի. և յայնմանէ՝ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձցի՝ ի նմանէ:
27 Սակայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէին զիս թագաւորել՝ ի վերայ նոցա, ածէ՛ք այսր և սպանէ՛ք առաջի իմ:
28 Եւ ի բրև զայս ասաց, գնաց յառաջ՝ ելանել Երուսաղէմ:
29 Եւ եղև ի բրև մերձեցաւ՝ ի Բեթփագէ և ի Բեթանիա մօտ՝ ի լեառն՝ որ կոչի Ձիթենեաց, առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց՝ և ասէ:

18 Երկրորդն եկաւ՝ և ասաց. Տէ՛ր մնաստ հինգ մնաս (շահ) արար:
19 Նորան էլ ասաց. Եւ դո՛ւ էլ հինգ քաղաքի վերայ լինիս:
20 Ա՛յլն էլ եկաւ և ասաց. Տէր ահա քո մնաստ՝ որ վարշամակի (խաղտայի) մէջ պատած պահում էի:
21 Վասն ախենաւմէի քեզանից. ինչու որ՝ դու մին քարասիրտ մարդ ես. վեր ես առնում էն՝ որ չըդրիր՝ և ընձուում էն՝ որ չըսերմեցիր[11]:
22 Եւ ասաց նորան. Քո բերանից քեզ կըդատեմ, անհաւատ ծառայ[12]. դու գիտուէիր՝ որ ես մին քարասիրտ մարդ եմ[13], վեր եմ առնում էն՝ որ չըդրի, և հընձուէմ՝ որտեղ որ չըսերմեցի:
23 Ուրեմն ինչո՞ւ իմ արծաթը տասակ փոխոզներին (սոսոփնեբէն) չըտուիր, որ ես գայի շահով յետ առնէի:
24 Եւ ծառաներին ասաց. Ա՛ռէք դորանից էն մնասըն, և տարէք տուէք նորան՝ որ տասն մնասըն ունի:
25 Եւ նորան ասացին. Տէ՛ր. (նա) տասն մնաս ունի:
26 Ա՛սում ձեզ, թէ Ա՛մէնին որ ունի, կըտրվի. և նա որ չունի, նորանից էն էլ, որ ունի, վեր կառնըվի[14]:
27 Սակայց էն իմ թշնամիներս՝ որ չէին ուզում, որ ես նորանց վերայ թագաւորեմ, էստեղ բերէք և սպանեցէ՛ք իմ առաջիս:
28 Եւ երբոր էս ասաց, առաջ գնաց, որ վեր էլնի Երուսաղէմ[15]:
29 Եւ էլաւ երբոր Բեթփագէին և Բեթանեային մօտերցաւ էն սարին մօտ՝ որ Ձիթենեաց սար է կոչվում՝ իրան աշակերտներից երկուսը ուղարկեց և ասաց[16]:

(11) Մատթ. իե. 24: (12) Բ Յոսէ. ա. 16: Յոբ. ժե. 6: Մատթ. ժբ. 37: (13) Մատթ. իե. 26: (14) Մատթ. ժգ. 12: իե. 29: Մարկ. գ. 25: Ղուկ. ը. 18: (15) Մարկ. ժ. 32: (16) Մատթ. իա. 1: Մարկ. ժա. 1:

Digitized by Google

30 Երթա՛ք դուք ի գեօղն՝ որ հանդէպ մեր կայ, յոր իբրև մտա-նէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ոք ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէ՛ք զնա և ածէ՛ք:

31 Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ Ընդէր լուծանէք, այսպէս ա-սասջի՛ք ցնա, թէ Տեառն իւրում պիտոյ է:

32 Իբրև չոքան որ առաքեցանն, գտին որպէս ասացն ցնոսա, կայր յաւանակն:

33 Եւ մինչդեռ լուծանէին զյա-ւանակն, ասեն տէարքն նորա ցնո-սա. Ընդ՞ լուծանէք զյաւանակդ:

34 Եւ նոքա ասեն. Տեառն իւ-րում պիտոյ է:

35 Եւ ածին զնա առ Յիսուս. և արկին զնովաւ հանդերձս, և հե-ծուցին զՅիսուս:

36 Եւ մինչդեռ երթայր, ըզ-հանդերձս իւրեանց տարածանէին ճանապարհաւն:

37 Եւ իբրև այն ինչ մերձ եղև ի զառ ի վայր լերինն Ձիթենե-նաց, սկսան ամենայն բազմութիւն աշակերտացն ուրախութեամբ օրհ-նել զԱստուած ի ձայն մեծ վասն ամենայն եղելոց զօրութեանցն զոր տեսին.

38 Եւ ասէին. Օրհնեալ որ գայ թագաւորդ յանուն Տեառն. խա-ղաղութիւն յերկինս, և փառք ի բարձունս:

39 Եւ ումանք ի փարիսեցւոցն յամբոխէ անտի՝ ասեն ցնա. Ո՛ր-դապետ՝ սաստեա աշակերտացդ քոց:

40 Պատասխանի ետ և ասէ. Ա-

30 Վնացէ՛ք դուք էդ գիւղդ, որ մեր դիմացն է. և երբոր մտնէք նորա մէջ՝ մին քուռակ կըգտնէք կապված, որ նորա վերայ իսկի մին ժամանակ մարդ չը նստեց. նորան արձակեցէ՛ք և բերէ՛ք:

31 Եւ թէ որ մինն հարցնէ ձեզ՝ թէ Ինչո՞ւ էք արձակում՝ նորան էսպէս ասացէ՛ք՝ թէ Տէրին պէտք է սա:

32 Երբոր գնացին նորանք որ ա-ղարկվեցան, էնպէս գտին ինչպէս որ նորանց ասաց, քուռակըն կանգ-նած էր:

33 Եւ երբոր քուռակըն արձա-կումէին՝ նորա տէրերն ասացին նո-րանց. Ինչո՞ւ էք արձակում էդ քուռակըդ:

34 Եւ նորանք ասացին. Տէրին պէտք է սա:

35 Եւ նորան բերին Յիսուսի մօտ. և շորեր քցեցին նորա վե-րայ, և Յիսուսին հեծացրին[17]:

36 Եւ դեռ որ գնումէր՝ իրանց շորերըն փռումէին ճանապարհին վերայ[18]:

37 Եւ երբոր դեռ որ մօտեցաւ որ Ձիթենեաց սարիցն դէպի ցածն վէր գնայ՝ աշակերտների ամէն բազմութիւնն ուրախութենով լսա-կըսեց օրհնութիւն ասել Աստուծոյն բարձր ձայնով՝ էն ամէն էլած զո-րութիւններին համար որ տեսնէլէ-ին:

38 Եւ ասումէին. Օրհնեալ է դա՝ որ գալիս է Թագաւոր Տէրի անունովը[19]. խաղաղութիւն (ևի-նի) երկնքումն և փառք ի բար-ձունս[20]:

39 Եւ փարիսեցիներից մին քա-նիսն, որ ժողովուրդների մէջն է-ին, նորան ասացին. Ո՛վ վարդա-պետ՝ սաստիր քո աշակերտներիդ:

40 Պատասխան առաւ և ասաց՝

(17) գ Թագ. ք. 13: Մատթ. ի. 7: Մարկ. ժա. 7: Յովհ. ժբ. 14: (18) Մատթ. ի. 8: (19) Սաղ. ճժբ. 26: Ղուկ. ժգ. 35: (20) Ղուկ. բ. 14: Եփես. բ. 14:

Digitized by Google

սեմ ձեզ՝ զի եթէ դուքա լռեսցեն , քարինքդ ազաղակեսցեն ։

41 Եւ իբրև մերձեցաւ , տեսեալ զքաղաքն՝ ելաց ՚ի վերայ նորա , և ասէ .

42 Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս յայսմիկ զնաղաղութիւնն քո . բայց այժմ ծածկեցաւ յերեսաց քոց ։

43 Զի եկեսցեն աւուրք ՚ի վերայ քո , և պատեսցեն զքեզ թշնամիքդ քո պատնէշ . և պաշարեսցեն զքեզ , և նեղեսցեն զքեզ յամենայն կողմանց ։

44 Եւ յատակեսցեն զքեզ , և զորդիս քո ՚ի քեզ , և ոչ թողուցուն քար ՚ի քարի վերայ յամենայնի ՚ի քեզ . փոխանակ զի ոչ ծանեար զժամանակ այցելութեան քո ։

45 Եւ մտեալ ՚ի տաճարն սկսաւ հանել զաղաւնեվաճառսն , և ըզ- գնօղս . և զսեղանս հաւաւվաճառացն ջրուեաց ։

46 Եւ ասէ ցնոսա . Գրեալ է՝ Եւ եղիցի տուն իմ տուն աղօթից , և դուք արարիք զդա այրս աւազակաց ։

47 Եւ ուսուցանէր զնոսա հանապազ ՚ի տաճարին . իսկ քահանայապետքն և դպիրք և գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել ,

48 Եւ ոչ գտանէին՝ թէ զինչ առնեսցեն . զի ժողովուրդն ամենայն կախեալ կային զնմանէ ՚ի լսել ։

Լատումէ ձեզ՝ որ եթէ սարանք էլ լուռ կենան՝ էդ քարերդ կաղաղակեն[21] ։

41 Եւ երբոր մօտեցաւ , տեսաւ քաղաքին՝ և լաց էլաւ նորա վրայ և ասաց[22] .

42 Եթէ գոնեա էս օրս գիտնայիր քո խաղաղութիւնըդ . բայց հիմիկ ծածկըվեցաւ քո երեսից ։

43 Ինչաւ որ՝ օրեր կըգան քեզ վերայ , և քո թշնամիներդ քո չորս կողմովդ պատնէշ (Ղալէրա) կըպատեն և քեզ կըպաշարեն և ամեն կողմից քեզ կընեղացնեն[23] ։

44 Եւ հիմնայատակ կանեն քեզ և քո որդիքըդ էլ քո միջումդ[24] ։ և իսկի քար քարի վերայ չեն թողիլ քո միջումդ[25] . ինչաւ որ՝ չըճանաչեցիր (Ուշադոյ) քեզ տես գալոյ ժամանակըն[26] ։

45 Եւ մտաւ տաճարն և սկսաց դուրս հանել աղաւնի ծախողներին և գնողներին , և ըստակ վռնդողներ տախտակներըն ցրվեց[27] ։

46 Եւ նորանց ասաց . Գրված է՝ Իմ տունս աղօթքի տուն պիտի լինի[28] , և դուք դրան աւազակների բուն արիք[29] ։

47 Եւ ամեն օր սովորցնումէր նորանց տաճարի միջումն . բայց քահանայապետներն և կարգացօղներըն և ժողովրդի գլխաւորներն խնդրումէին , որ կորցնեն նորան[30] ։

48 Եւ չէին գտնում՝ թէ ինչ անեն . պատճառն որ՝ ամեն ժողովուրդն նորանից կախված էր որ (նորա խօսքըն) լսէ ։

(21) Ղկ . բ . 11 ։ (22) Հովհ . ժա . 35 ։ (23) Նաում . ԺԲ . 3 , 4 ։ Նբհմ . գ . 3 . 6 ։ Գ–թ . խ . 20 ։ (24) գ Թագ . բ . 7 , 8 ։ Մխ . գ . 12 ։ (25) Մտթ . իգ . 2 ։ Մտթ . ժգ . 2 ։ Ղ–թ . խ . 6 ։ (26) Գան . բ . 24 ։ Ղ–թ . ա . 68 . 78 ։ ա Պետր . բ . 12 ։ (27) Մտթ . քա . 12 ։ Մրկ . ժա . 11 . 15 ։ Հովհ . բ . 14 , 15 ։ (28) Նաում . ծգ . 7 ։ (29) Նբհմ . է . 11 ։ (30) Մրկ . ժ . 18 ։ Հովհ . է . 19 ։ ը . 37 ։

Digitized by Google

ԳԼ · Ի

2 Ուրբաստա Հայհոյեիս մէրոփքի համար մեր բան հարցնելով քահանայապետներին և կարգա- ցուցներին իրան իշխանութիւնն ու տեղից վռնդել կըզործէ։ 9 Ղ.ԺԹ տառին։ 20 Կայսերին հարկ տալը վերայ։ 27 Ուրբաստա տպաւորիցներուն կըհամարձ , նորանք մեռելների յարու- թիւնն կուրանան։ 41 Ուրբաստա Քրիստոս Դաւթի որդին է։ 45 Իրան աշակերտներին կըզգուշացնէ որ կարգացողներն ծերերին հետ վերայ հասին[1] ։

1 Եւ եղև ՚ի միում աւուրցն յայնցանէ , մինչդեռ ուսուցանէր զժողովուրդն ՚ի տաճարի անդ՝ և աւետարանէր , հասին ՚ի վերայ քա- հանայապետքն և դպիրք ծերովքն հանդերձ ,

2 Եւ ասեն ցնա . Ո՞ւստ մեզ՝ արդ՝ իշխանութեամբ գործես դու զայդ , կամ ո՞վ է՝ որ ետ քեզ զայդ իշ- խանութիւն ։

3 Պատասխանի ետ և ասէ ցնո- սա . Հարցից և ես ցձեզ բան մի , և ասացէք ինձ ։

4 Ո՝կրտութիւնն Յովհաննու յերկնից էր՝ եթէ ՚ի մարդկանէ ։

5 Եւ նոքա խորհեցան ՚ի միմեա իւրեանց և ասեն .

6 Եթէ ասեմք Յերկնից , ասէ . Ի՞ակ ընդէր ոչ հաւատացէք նմա . և եթէ ասեմք ՚Ի մարդկանէ , ամե- նայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ . զի համոզեալ է ՚ի միտս զՅովհաննէ , թէ մարգարէ է ։

7 Եւ պատասխանի ետուն չգի- տել թէ ուստի իցէ ։

8 Եւ Յիսուս ասէ ցնոսա . Եւ ոչ ես ասեմ ձեզ , որով իշխանութեամբ առնեմ զայս ։

9 Սկսաւ ասել առ ժողովուրդն՝ զառակս զայս . Ո՞մր ոմն անկեաց այգի , և ետ զնա մշակաց . և ինքն գնաց ՚ի ճանապարհ ժամանակս բա- զումս ։

10 Եւ ՚ի ժամու՝ առաքեաց առ

1 Եւ էլաւ որ էն օրերից մը- նում՝ դեռ քանի որ տաճարումն սովորցնումէր ժողովրդին և աւե- տարանումէր , քահանայապետներն և կարգացողներն ծերերին հետ վերայ հասին[1] ։

2 Եւ նորան ասացին . Ո՞սա մեզ , դու ինչ իշխանութեններով ես ա- նում էդ[2] , կամ ո՞վ է նա , որ էդ իշխանութիւնըդ տուաւ քեզ ։

3 Պատասխան տուաւ և ասաց նորանց . Ես էլ ձեզանից մին բան կըհարցնեմ , և ասացէք ինձ ։

4 Յօհաննէսի մկրտութիւնն եր- կընքիցն էր , թէ մարդկանցիցն ։

5 Եւ նորանք իրանց միջումն միտք արին և ասացին .

6 Մե որ ասենք , երկնքիցն . կասէ . Ուպա ինչու չը՛հաւատացիք նրան . և թէ որ ասենք՝ Ա՝արդ- կանցիցն , ամէն ժողովուրդն մեզ քարկոծ կանեն . ինչու որ՝ իրանց մտքումն համոզած դրել են Յօհան- նէսին համար՝ թէ (նա) մարգարէ է[3] ։

7 Եւ պատասխան տուին՝ չը՛գի- տել , թէ որ տեղից է ։

8 Եւ Յիսուս նորանց ասաց . Ես էլ չեմ ասիլ ձեզ՝ թէ ինչ իշ- խանութեններով եմ անում էս ։

9 (Ո՞ւպա) սկսեց էս առակս ա- սել ժողովրդին . Ա՝ին մարդ այ- գի (քաղ) անկեց , և մշակներին տուաւ նորան , և ինքն ճանապարհ գնաց շատ ժամանակ[4] ։

10 Եւ ժամանակն որ եկաւ՝ մին

(1) Մատթ · խա · 23 ։ (2) Գործ · գ · 7 ։ է · 27 ։ (3) Մատթ · ժգ · 5 ։ խա · 26 ։ Ղուկ · է · 29 ։ (4) Մատթ · խա · 33 ։ Մարկ · ժբ · 1 ։

Digitized by Google

մշական ծառայ , զի ՚ի պղծոյ այգւոյն տացեն նմա . և մշակքն գան հարին զնա , և արձակեցին ունայն :

11 Եւ յաւել միւս ևս ծառայ յղել . նոքա և զնա ևս գան հարին՝ անարգեցին , և առաքեցին ունայն :

12 Եւ յաւել զերրորդն առաքել . նոքա և զնա վիրաւորեցին , և հանին արտաքս :

13 Ասէ տէր այգւոյն . Ո՞ՐՆԷ արարից , առաքեցից զորդի իմ սիրելի , թերևս ՚ի սմանէ պատկառեսցեն :

14 Իրրև տեսին զնա մշակքն , խորհեցան ընդ միմեանս և ասեն . Սա է ժառանգն . սպանցուք զսա , զի մեր լինիցի ժառանգութիւնն :

15 Եւ հանին զնա արտաքս քան զայգին և սպանին . արդ՝ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն :

16 Գո՛ ապաքէն գայցէ և , կորուսանիցէ զմշական զայնոսիկ , և տացէ զայգին այլոց . իրրև լուան՝ ասեն . Ո՛չ՝ մի՛ լիցի :

17 Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ . Իսկ զի՞նչ իցէ այն՝ որ գրեալն է . Թէ Ո՛վէպ զոր անարգեցին շինօղքն , նա եղև գլուխ անկեան :

18 Ո՛մեծայն՝ որ ընդհարցի ընդ վէմս ընդ այս՝ խորտակեսցի , և յոր վիրաւ անկցի՝ հոսեսցէ զնա :

19 Եւ խնդրէին դպիրքն և քահանայապետք արկանել ՚ի նա ձեռս ՚ի նմին ժամու , և երկեան ՚ի ժողովրդենէն . զի գիտացին՝ թէ առ նոսա ասաց զառակն զայն :

20 Եւ ապա սպասեցին , և առաքեցին դաւաճանս կեղծաւորեալս զանձինս առ արդարս ունել , զի ծառայ ուղարկեց մշակներին մեռ , որ այգոյ (քաղէ) պըղտիցն իրանեան . և մշակներն ծեծեցին նորան և դատարկ յետ արձակեցին :

11 Եւ նրա վերայ միւն ուրիշ ծառայ էլ ուղարկեց . և նորան էլ ծեծեցին , թուքըմուր տուին և դատարկ յետ ուղարկեցին :

12 Եւ նրա վերայ երրորդին էլ ուղարկեց . նորանք նորան էլ խոցեցին և դուրս հանեցին :

13 Այգոյ տէրն ասաց . Ի՞նչ անեմ . իմ սիրելի որդիս կուզարկեմ՝ լինի թէ սորանից ամաչեն :

14 Այ՛ն մշակներն երբոր նորան տեսին՝ իրար հետ խորհուրդ արին և ասացին . Այ՛ է ժառանգն . սպանենք սորան . որ ժառանգութիւնն մեզ լինի :

15 Եւ այգուցն (քաղչէն) դուրս հանեցին նորան և սպանեցին . ապա այգոյ տէրն ի՞նչ պիտի անէ նորանց :

16 Ա՛յ որ կըգայ և էն մշակներն կըկորցնէ և այգին ուրիշներին կըտայ , երբոր էս լսեցին՝ ասացին . Ո՛չ՝ լիցի :

17 Եւ նա մտիկ տուաւ նորանց և ասաց . Ի՞պա ի՞նչ է էն որ գըրված է՝ Թէ Այն քարն՝ որ շինօղներն անարգեցին՝ նա էլաւ անկիւնի գլուխ :

18 Ա՛մեն՝ ով որ էս քարիս վերայ ընկնի՝ կըփշրվի՝ և ում վերայ որ (նա) ընկնի՝ կըջարդէ նորան :

19 Եւ կարդացօղներն և քահանայապետներն հենց էն ժամուն (սահլասմն) ուզըտէին , որ ձեռք ձգեն նորա վերայ , և ժողովրդից վախեցան . ինչու որ՝ գիտացին որ՝ իրանց համար ասաց էն առակը :

20 Եւ ապա սպասեցին և նենգաւոր մարգիք ուղարկեցին՝ որ կեղծաւորութեամբ իրանց անձնները

(5) Ասղ . ԺԶը . 23 : Մտթ . խ , 12 : (6) Գոն . բ . 34 , 35 : Մտթ . խ . 44 :

Digitized by Google

ըմբռնեսցին զնա բանիւք , առ ի մատանել զնա պատուհասի եւ իշխանութեան դատաւորի ։

21 Հարցին զնա եւ ասեն . Վարդապետ՝ գիտեմք եթէ ուղիղ խօսիս եւ ուսուցանես , եւ ոչ առնուս ակն՝ այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես ։

22 Հրաժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ ։

23 Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա ասէ ցնոսա .

24 Ցուցէք ինձ դահեկանն . եւ նոքա ցուցին . եւ ասէ . Որո՞ պատկեր եւ գիր ունի . պատասխանի եւ ասեն՝ Կայսեր ։

25 Եւ նա ասէ ցնոսա . Արդ երթայք տուք զկայսերն կայսեր , եւ զԱստուծոյն Աստուծոյ ։

26 Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի ժողովրդեանն . եւ զարմացեալ ընդ պատասխանին նորա՝ լռեցին ։

27 Մատուցեալ ումանք ի սադուկեցւոցն , որք հակառակէին չլինել յարութեան , հարցին զնա

28 Եւ ասեն . Վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ , Եթէ ուրուք եղբայր մեռանիցի , որոյ իցէ կին եւ անորդի իցէ , զի առնուցու եղբայր նորա զկինն , եւ յարուսցէ զաւակ եղբօր իւրում ։

29 Արդ՝ եօթն եղբարք էին . եւ առաջնոյն առեալ կին՝ մեռաւ անորդի ։

30 Առ զնա եւ երկրորդն , մեռաւ եւ նա անորդի ։

31 Առ զնա եւ երրորդն . նոյնպէս

արգար երևացուին . որ խօսքով բռնեն նորան՝ որ մատնեն նորան դատաւորի սէրութեանն եւ իշխանութեանն[7] ։

21 Վարդապետ՝ գիտութեամբ , որ շիտակ ես խօսում եւ սովորցնում , եւ երեսպաշտութիւն չես անում . բայց ճշմարտութեամբ Աստուծոյ ճանապարհն սովորցնում ես[8] ։

22 Հրաժա՞ն է մեզ՝ որ կայսերին հարկ տանք , թէ չէ ։

23 Եւ նորանց չարութիւնն տեսնելով՝ ասաց նորանց . (Ինչո՞ւ էք փորձում ինձ .)

24 Ցոյց տուէք ինձ էն դահեկանն . եւ նորանք ցոյց տուին . եւ ասաց . Ումի պատկերն եւ գիրն ունի (սա) . պատասխան տուին եւ ասացին . Կայսերին ։

25 Եւ նա ասաց նորանց . Ուրեմն գնացէք կայսերինն կայսերին տուէք , և Աստուծունն Աստուծոյ ։

26 Եւ չըկարացին խօսքերով բռնել նորան ժողովրդի առաջին . և նորա պատասխանին վերայ զարմացան և լուռ կացան ։

27 Սադուկեցիների՝ որ հակառակումին թէ յարութիւն չըկայ[10] , մին քանիսն մօտ եկին և նորան հարցրին .

28 Եւ ասացին . Վարդապետ . Մովսէս գրեց մեզ[11] . Եթէ որ մէնի եղբայրն մեռնի , որ կին ունենայ՝ և անորդի լինի , որ նորա եղբայրն էն կինն առնէ , և իրան եղբօր համար զաւակ վերկացնէ ։

29 Էպա՝ եօթն եղբարք կային՝ և առաջինն կին առաւ և առանց զաւակի մեռաւ ։

30 Երկրորդն էլ նորան առաւ , և նա էլ առանց զաւակի մեռաւ ։

31 Երրորդն էլ նորան առաւ .

(7) Մատթ . իբ . 15 ։ (8) Մատթ . իբ . 16 ։ Մարկ . ժբ . 14 ։ (9) Մատթ . իբ . 23 ։ Մարկ . ժբ . 18 ։ (10) Գործ . իգ . 6 . 8 ։ (11) Բ Օրին . իե . 5 ։

Digitized by Google

և հօթանեքին . և սէր թաղնէն որ-
դիս :
32 Ա՝հեռաւ և կինն :

33 Ա՛րդ ՚ի յարութեան ՚ի
նոցանէ լինելոյն կին . զի հօթանե-
քին կալան զնա կին :

34 Պատասխանի եւս Յիսուս
և ասէ . Որդիք աշխարհիս այս-
րիկ կանայս առնեն՝ և արանց լի-
նին :
35 Իսկ որ արժանի լինիցին այնմ
աշխարհի հասանել և յարութեա-
նէն որ ՚ի մեռելոց , ոչ կանայս առ-
նեն , և ոչ արանց լինին :

36 Ո՛չանգի և ոչ մեռանել եւս կա-
րեն , զի հաւասար հրեշտակաց են՝
և որդիք Ա՛ստուծոյ . քանզի յա-
րութեան որդիք են :

37 Ա՛յլ կի յայտնեն մեռեալք , և
Ա՝ովսէս գուշակեաց ՚ի մօրենւոցն ,
որպէս ասէ զՏէառնէ Ա՛ստուծոյ
Ա՛բրահամու և զԱ՛ստուծոյ Իսահա-
կայ և զԱ՛ստուծոյ Յակովբայ :

38 Եւ Ա՛ստուած չէ մեռելոց՝ այլ
կենդանեաց , զի ամենեքին նմա կեն-
դանի են :
39 Պատասխանի եւսուն ումանք ՚ի
դպրացն և ասեն . Ո՛վ ուրուապես՝
բարւոք ասացեր :
40 Եւ ոչ ևս ոք իշխէր հարցանել
զնա՝ և ոչինչ :

41 Ա՛սէ և առ նոսա . Ո՞իպէտ ա-
սեն զՔրիստոսէ՝ թէ որդի է Դաւի-
թի :
42 Ո՞ւ ինքն Դաւիթ ասէ ՚ի գիրս
Սաղմոսաց . Ա՛սաց Տէր ցՏէր իմ ,
Նիստ ընդ աջմէ իմմէ ,

էնպէս հնինց քեն հօթնել , և սրդիք
չըթողին :
32 Եւ (ամէնքին հետ) էն կինն
էլ մեռաւ :
33 Ա՛րդ յարութեան ժամանա-
կուն նորանցից որին պիտի լինի կին . ի-
նչու որ՝ էն հօթն էլ կին առին նո-
րան :
34 Յիսուս պատասխան տուաւ նո-
րանց և ասաց . Ա՛ս աշխարհքիս
որդիքն կին են առնում և մարդոյ
են գնում :
35 Ա՛սոյց նորանք որ արժանի լի-
նին էն աշխարհքին հասնելոյ և մե-
ռելներն միջիցն յարութիւն առնե-
լոյ , ոչ կին կառնեն և ոչ մարդոյ
կըգընան :
36 Պատճառն որ՝ էլ չեն կարող
մեռնիլ . ինչու որ՝ հրեշտակներին
հաւասար են և Ա՛ստուծոյ որդիք[12] ,
նրանցմանը որ յարութեան որդիք
են[13] :
37 Ա՛սոյց դըպահմանը թէ մեռել-
ներն յարութիւն կառնեն՝ Ա՝օսէն
էլ մարգարէացաւ մնչի մնան՝ ինչ-
պէս որ Տէրին համար ասում՝ Ա՛ստ-
ուած Ա՛բրահամու և Ա՛ստուած
Սահակայ և Ա՛ստուած Յակոբայ[14] :
38 Եւ Ա՛ստուած մեռելներին չէ՝
բայց կենդանիներին . ինչու որ՝ ա-
մէնքն կենդանի են նորան[15] :
39 Սարդացօղներըցն մին քանիսն
պատասխան տուին նորան և ասա-
ցին . Ա՛ս արդարապես՝ լաւ ասացիր .
40 Եւ էլ խսկի մինն չէր համար-
ձակվում՝ որ նորանից խսկի մին բան
հարցնէ :
41 Եւ նորանց էլ ասաց . Ի՞նչ-
պէս են ասում Քրիստոսի համար՝
թէ Դաւթի որդին է[16] :
42 Եւ Դաւիթ ինքն Սաղմոս գըր-
քումն ասում . Տէրն իմ Տէրին
ասաց՝ թէ Իմ աջ կողմն նստիր[17] ,

(12) ա Կորնթ . ժե . 42 . 49 . 53 : ա Յովհ . գ . 2 : (13) Հռոմ . ը . 23 : (14) Ելթ . գ . 6 : (15) Հռոմ . գ . 10 , 11 : (16) Մատթ . խը . 42 : Մարկ . ժը . 35 : (17) Սաղմ . ճժ . 1 : Կորնթ . ը . 24 :

Digitized by Google

43 Ա՛ինչև եդից զձիշտսն քո պատուհանդան ոսկից քոց :
44 Ւսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ , զիա՞րդ որդի նորա իցէ :

45 Եւ լսելիս ամենայն ժողովրդեանն ասէ ցաշակերտան :
46 Ջգո՛յշ լերուք ի դպրացն , որ կամին պատմուճանօք շրջել , և սիրեն ողջոյնս ի հրապարակս և ըզնախաթոռս ի ժողովուրդս և ըզբարձրէգս յընթրիս :

47 Որ ուտեն զտունս այրեաց , և պատճառանօք յերկարն զաղօթս . նոքա ընկալցին աւելի դատաստանս :

43 Ա՛ինչև որ քո ի՞շտութիւնդ քո ոտացդ կոխելիք դնեմ :
44 Ւ՚պա՛ թէ որ Դաւիթն Տէր է կոչումն նորան , ի՞նչպէս նորա որդի կրլինի :

45 Եւ ամէն ժողովրդիդ առաջին որ լսումին՝ ասաց աշակերտաներուն[18] :
46 Ջգո՛յշ կացէք կարդացօղներուն՝ որ լայն կապաններով կամենուին մանգալ[19] , և սիրումն բաց տեղերանքուն բարև առնելըն[20] , և ժողովարաններուն մէջն առաջին աթոռներըն՝ և ընթրիքներուն վերևի տեղերըն :
47 Որ որբևէրիներուն տըներն ուտումեն , և պատճառներով երկար աղօթք են անում . նորանք աւելի դատապարտութիւն կընդունին[21] :

ԿԱ · ԻԸ

2 Ջրբեսաս մին ազքատ որբևէրին կըդովէ : 5 Տաճարի և Երուսաղէմի քանդվիլն . 25 Ւս վերջի օրից առաջ լինելոյ նշաններըն առաջուց կասէ : 34 Ւնչդորէն որ արթուն կենան ընդդէմ մարդոյ գալըն ազաւելով :

1 Ւս հայեցեալ ետես զմեծաւսունսն՝ որ արկանէին զտուրս իւրեանց ի գանձանակն :
2 Ետես և զկին ոմն այրի աղքատ , որ արկ անդր երկուս լումայս :

3 Եւ ասէ . Ի՛րդարև ասեմ ձեզ . զի այրին այն աղքատ՝ աւելի արկ քան զամենեսին :
4 Ջմենեքին նոքա ի մէջերից իւրեանց արկին յընծայսն Ւստուծոյ . բայց նա ի կարօտութենէ իւրմէ զամենայն զկեանս իւր զոր աւնէր՝ արկ :

5 Եւ յասելն ամենից զաջմէջն , թէ Ւներկեցաւկ վիմօք և աշտարակօք

1 Ւս մտիկ առաւ , տեսաւ Հարուստներուն՝ որ իրանց առւրքըն գանձանակն էին քցում[1] :
2 Ա՛ին որբևէրի աղքատ կին էլ տեսաւ՝ որ երկու լումայ քցեց հետեղ :
3 Եւ ասաց . Ճ՛շմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ էն աղքատ որբևէրին ամենիցն աւելի քցեց[3] :
4 Ւնչու որ՝ նորանք ամէնքն իրանց աւելցածներիցն քցեցին Ւստուծոյ ընծաների մէջն , բայց նա իրան կարօտութենիցն իրան բոլոր կենաց ապրուստըն՝ որ ուներ՝ քըցեց :

5 Եւ երբոր մին քանի մարդ ասումին տաճարի համար՝ թէ Ւնե-

(18) Մատթ . իգ . 2 . Մարկ . ժբ . 38 : (19) Մատթ . իգ . 5 : (20) Ղուկ . ժա . 43 :
(21) Մատթ . իգ . 14 : (1) Մարկ . ժբ . 41 : (2) Ա Տիմոթ . ե . 23 :

Digitized by Google

զարդարեալ է , ասե ·

6 Ոչ այդ ամենայն զոր սեասանէք , եկեսցեն աւուրք՝ յորս ոչ թողցի այդր քար ՚ի քարի վերայ , որ ոչ քակեսցի ։

7 Հարցին ցնա և ասեն · Ա ՚ւրդասիա՝ երբ լինիցի այդ , և զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ ։

8 Եւ նա ասէ · Ոգուշ կացէք ; մի՛ խաբիցիք · զի բազումք գայցեն յանուն իմ և ասիցեն՝ Թէ ես եմ · և մերձեցաւ ժամանակ · մի՛ երթայցէք զկնի նոցա ։

9 Եւ յորժամ լսիցէք պատերազմունս և խռովութիւնս՝ մի՛ զարհուրիցէք · զի պարտ է նախ այնմ լինել · այլ ոչ առ ժամայն կատարած ։

10 Յայնժամ ասէ ցնոսա · Յարիցէ ազգ յազգի վերայ , և թագաւորութիւն ՚ի թագաւորութեան վերայ ։

11 Եւ շարժմունք մեծամեծք · և ՚ի տեղիս տեղիս սովք և սրածութիւնք , եղիցին արհաւիրք և նշանք մեծամեծք յերկնից ։

12 Այլ յառաջ քան զայս ամենայն , մեսցեն զձեռս իւրեանց ՚ի ձեզ՝ և հալածեսցեն · մատնեսցեն ՚ի ժողովուրդս և ՚ի բանս , և տանիցեն առաջի դատաւորաց և թագաւորաց վասն անուան իմոյ ։

13 Եւ լինիցի ձեզ այն ՚ի վկայութիւն ։

14 Արդ՝ դիք ՚ի սիրտս ձեր՝ մի՛ յառաջագոյն կրթել տալոյ պատասխանի ։

զերկիւղ քաջերով և աշտարակներով (Քուրկէով) զարդարուած է , նա ասաց[3] ·

6 Իդ ամենեցդ որ սեսանուք՝ օրերը կուգան՝ որ էդ սեղ քար քարի վերայ չէ թողուիլ՝ որ չքքանգուի[4] ։

7 Հարցրին նորան և ասացին · Ա ՚ւրդասիա՝ էդ երբ կըլինի , և ի՞նչ է նշանն՝ երբոր էդ պիտի լինի ։

8 Եւ նա ասաց · Ոգուշ կացէք՝ որ չըխաբուիք՝ · ինչու որ՝ շատ մարդիք կուգան իմ անունովս և կասեն՝ Թէ ես եմ · և ժամանակն կըն մօտեցաւ · նորանց հետևէն մի՛ գնաք ։

9 Եւ երբոր կռիւներ և խռովութիւններ կըլսէք՝ մի՛ շփոթուիք · ինչու որ՝ պէտք է , որ առաջ էն լինի , բայց դեռ շուտով վերջն չէ ։

10 Այն ժամանակն նորանց ասաց · Ազգ ազգի վերայ վեր կըկենայ և թագաւորութիւն թագաւորութեան վերայ[6] ։

11 Եւ մեծամեծ գետնաշարժութիւններ՝ և տեղ տեղ սովեր և սաստիկ մահեր (կըլինին) · և երկընքիցն սոսկալի բաներ և մեծամեծ նշաններ կըլինին ։

12 Այլց էս բաներիցս առաջ բռնանց ձեռներըն ձեզ վերայ կըձգեն և կըհալածեն[7] · (և) ժողովարանների և բանտերի մէջ կըմատնեն[8] , և կըտանեն դատաստանների և թագաւորների առաջին՝ իմ անունիս համար[10] ։

13 Եւ էն կըլինի ձեզ վկայութեան համար[11] ։

14 Ուրեմն ձեր սրտի մէջ դրէք՝ որ առաջուց մտոք չանէք պատասխան տալոյ համար[12] ։

(3) Մարկ · խդ · 1 : Մաթ · ժդ · 1 : (4) Ղուկ · ժԲ · 44 : (5) Մարկ · խդ · 4 : Մաթ · ժդ · 5 : Եփես · ե · 6 : բ Յով · բ · 8 : (6) Մարկ · խդ · 7 : (7) Մաթ · ժդ · 9 : Յայտ · բ · 10 : (8) Գործ · դ · 3 : ե · 18 : ժբ · 4 : ժգ · 24 : (9) Գործ · քե · 28 : (10) ա Պետր · բ · 13 : (11) Փիլիպ · ա · 28 : բ Թես · ա · 5 : (12) Մարկ · ժ · 19 : Մաթ · ժդ · 11 : Ղուկ · ժբ · 11 ։

15 Զի ես առայ ձեզ բերան և իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ հակառակ կամ առլ պատասխանի ամենայն հակառակողդքն ձեր։

16 Ապանեցջիք և՝ ի ծնողաց և յեղբարց և յազգականաց և՝ ի բարեկամաց, և սպանանիցեն՝ ի ձէնջ.

17 եւ եղիջիք ատելիք յամենայնոցունց վասն անուան իմոյ։

18 Եւ մազ ի՝ ի գլխոյ ձերմէ ոչ կորիցէ.

19 եւ համբերութեամբ՝ ձերով առնջիք զհոգիս ձեր։

20 Եւայլ յորժամ անօանիցէք շարչ պատառել զօրօք զերրուստղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է աւեր նորա։

21 Յայնժամ որ՝ ի՝ Հրէաստանի իցեն՝ փախիցեն՝ ի լերինս, և որ՝ ի մէջ նորա իցեն՝ խուսասցին, և որ՝ ի գաւառան իցեն՝ մի՝ մտցեն՝ ի նա.

22 Զի աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ՝ առ՝ ի կատարել զամենայն գրելոց։

23 Վայ յղեաց և սընուսուցաց յաւուրսն այնոսիկ. զի եղիցի տագնապ մեծ՝ ի վերայ երկրի, և բարկութիւն ժողովրդեանն այնմիկ։

24 Եւ անկցին՝ ի սուր սատերի, և գերեսցին ամենայն՝ Հեթանոս. և Երուսաղէմ եղիցի կոխան յազգաց՝ մինչև կատարեսցին ժամանակք հեթանոսաց։

25 Եւ եղիցին նշանք յարեգակն և՝ ի լուսին և յաստեղս. և յերկրի տագնապ հեթանոսաց՝ յահեղ

15 Ընչու որ՝ ես բերան և իմաստութիւն կըտամ ձեզ. որ ձեր ամէն հակառակողներն չեն կարենալ դէմ կենալ կամ պատասխան տալ նորան[13]։

16 Կըմատնըվիք էլ ծնօղներից և եղբարներից և ազգականներից և բարեկամներից[14]. և ձեզանից կըսպանեն[15]։

17 Եւ ամէնին ատելի կըլինիք իմ անունիս համար[16]։

18 Եւ ձեր գլխից մին մազ չի կորչիլ[17]։

19 Եւ ձեր համբերութեանըն ձեր հոգին կըշահէք։

20 Ասց երբոր կըտեսնէք թէ Երուսազէմին չորս կողմանից պատած է զօրքերով՝ էն ժամանակն գիտացէք թէ նորա քանդվիլն մօտիկ է[18]։

21 Էն ժամանակն նորանք՝ որ Հրէաստանումն են՝ թող սարերն փախչին, և նորանք՝ որ նորա միջումն են՝ թող գուրս քաշվին, և նորանք՝ որ նորա գաւառներումն են՝ թող չի մտնեն նորա միջն։

22 Ընչու որ՝ էն (օրերն) վրէժխնդրելոյ օրերն են՝ որ ամէն գրվածներն կատարվին[19]։

23 Ասց էն օրերումն վայ կըլինի յղացածներին և ծիծաւօղներին[20]. ընչու որ՝ մեծ նեղութիւն կըլինի երկրիս վերայ, և (Հասածոյ) բարկութիւնն էն ժողովրդին վերայ։

24 Եւ սրի բերան կընկնին, և ամէն հեթանոսների մէջ գերի կըտանվին. և Երուսաղէմն Հեթանոսներից կոխված կըլինի՝ մինչև որ հեթանոսների ժամանակներն կատարվին[21]։

25 Եւ նշաններ կըլինին, արեգակումն և լուսնումն և աստեղներումն, և երկրումս հեթանոսների

(13) Պօր. Ղ. 19։ (14) Միւս. է. 6։ Մարկ. ժգ. 12։ (15) Պօր. է. 59։ ժբ. 2։ (16) Մարկ. ժ. 22։ (17) Մարկ. ժ. 30։ (18) Մարկ. իգ. 15։ Մարկ. ժգ. 18։ (19) Դան. թ. 26, 27։ Ովս. ժա. 1։ (20) Մարկ. իգ. 19։ (21) Դան. թ. 27։ ժգ. 7։ Հռովմ. ժա. 25։

բարբառոյ լեզուի ծովու և խաւարի-
թեան ։

26 Յելանելոյ ոգւոց մարգկան յեր-
կիւղէ և ի կարծեաց եկելոց ի վեր-
նայ տիեզերաց . զի զօրութիւնք
երկնից շարժեսցին ։

27 Եւ յայնժամ տեսցեն զՈրդի
մարդոյ եկեալ՝ ամպովք զօրութեամբ
և փառաւք բազմօք ։

28 Եւ յորժամ սկսանիցի այս լի-
նել , ամփոփեցէք և բարձրացուսջիք
զգլուխս ձեր . զի մերձ է փրկու-
թիւն ձեր ։

29 Եւ ասաց առակ մի նոցա . Տե՛ս-
ջիք զթզենիդ և զամենայն ծառս .

30 Յորժամ ցուցանիցեն զբուսող
բերանց , տեսանէք և ի նոցանէ
ճանաչէք , եթէ մերձ է ամառն ։

31 Նոյնպէս և դուք՝ յորժամ
տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝
գիտասջիք թէ մերձ է արքայութիւն
Աստուծոյ ։

32 Ամէն ասեմ ձեզ . թէ Ոչ
անցցէ ազգս այս , մինչև այս ամե-
նայն լինիցի ։

33 Երկինք և երկիր անցցեն , և
բանք իմ՝ ոչ անցանիցեն ։

34 Զգոյշ լերուք անձանց , գուցէ
ծանրանայցեն սիրտք ձեր շուայտու-
թեամբ և արբեցութեամբ և հո-
գւովք աշխարհականօք , և յանկար-
ծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն
այն ։

35 Օրն իբրև զորոգայթի հասա-
նիցէ ի վերայ ամենեցուն , որ բնակ-
եալ են ընդ ամենայն երեսս երկրի ։

36 Արթնա՛ն կացէք այսուհետև ,
աստիճ ատ և վախ (կրկնիկ) ինչ-
պէս ծովի և խառնուածեան ա՛ս-
ւաջ ձայներին[22] ։

26 Որովհետև մարդկանց հոգիքն
դուրս կերգան վախի համար և էն
բաներին մոխի տալոյ համար՝ որ բո-
լոր աշխարհի վերայ պիտի գան .
ինչու որ՝ երկնքի զօրութիւններն
կը շարժվին[23] ։

27 Եւ են ժամանակն կերեւանին
Որդին մարդոյ ամպերի վերայ եկած
զօրութիւնով և շատ փառքով[24] ։

28 Եւ երբոր էս բաներս կերեւան
լինել՝ վեր կացէք և բարձրացրէք
ձեր գլուխները . ինչու որ՝ ձեր
փրկութիւնն մօտ է[25] ։

29 Եւ նորանց մին առակ ասաց .
Տեսէք թզի ծառն և ամէն ծա-
ռերն[26] .

30 Երբոր իրանց պտուղն երե-
ւցնուցանեն՝ տեսնումէք և ձորանցից
ճանաչումէք , թէ ամառն մօտ է ։

31 Ինչպէս էլ դուք՝ երբոր էս ա-
մէն բաներս էլած տեսնէք՝ գիտա-
ցէք , որ Աստուծոյ արքայութիւնն
մօտ է ։

32 Ճշմարիտն ասում ձեզ՝
թէ Ես պորտս չի անցկնալ . մին-
չև որ էս ամէն բաներս լինին ։

33 Երկինքն և երկիրս անց կերթ-
նան և իմ խօսքերս չեն անցկնալ[27] ։

34 Զգոյշ կացէք անձներիդ՝ որ
ձեր սրտերն չըծանրանան շատակե-
րութեամբ և արբեցութեամբ և
աշխարհական հոգսերով , և էն օրն
յանկարծ հասնէ ձեզ վերայ[28] .

35 Ինչու որ՝ (հենց) պտղակալի
(Խաղալիք) պէս կը հասնէ էն ամէնին
վերայ՝ որ բոլոր երկրի երեսին վե-
րայ բնակված են[29] ։

36 Արթնա՛ն կացէք[30] , ա-

(22) Ղուկ . իդ . 29 : Մատ . ժգ . 24 . բ Պետր . գ . 10—12 : (23) Մատ . իդ . 29 : (24) Մատ . իդ . 30 : Յայտ . ա . 7 : ժգ . 14 : (25) Հռոմ . ը . 19 . 23 : (26) Մատ . իդ . 32 : Մատ . ժգ . 28 : (27) Մատ . իդ . 35 : (28) Հռոմ . ժգ . 13 : ա Յովհ . բ . 6 : ա Պետր . գ . 7 : (29) ա Յովհ . բ . 2 : բ Պետր . գ . 10 : Յայտ . գ . 3 : ժգ . 15 : (30) Մատ . իդ . 42 . կե . 13 : Մատ . ժգ . 33 :

Digitized by Google

յամենայն ժամ ազօթս արարէք . զի արժանի լինիցիք վերածանել յայս ամենայնէ՝ որ լինելոց է , և կալ առաջի Որդւոյ մարդոյ :

37 Եւ ի տուէ ի տաճարին ուսուցանէր , և զգիշերսն ելեալ ազատանէր ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց :

38 Եւ ամենայն ժողովուրդն կանխէր ընդ առաւօտս առնա ի տաճարն լսել զնմանէ :

մին ժամանակ ազօթք արէք[31] , որ արժանի լինիք ազատիլ էն ամենայն չարեաց՝ որ պիտի լինին , և կանգնիլ Որդւոյ մարդոյ առաջին[32] :

37 Եւ ցերեկն տաճարուն ուսուցանէր[33] և գիշերներն դուրս էր գալիս և կենում էր սարումն՝ որ Ձիթենեաց (սար) էր կոչվում[34] :

38 Եւ ամէն ժողովուրդն առաւօտանց շուտով գնում էր տաճարն նոքա ժամ՝ որ նորանից լսէ :

ԿԻ · ԻՒՆ

2 Հրէաներն Յիսուսի համար խորհուրդ կանէն : 3 Սատանան Յուդայի մէջ կը մտնէ ապ նորան մտանէ : 7 Նազարեանները պատրաստուն : 19 Հրէաստա Տէրը Ընթրիքը կը հաստատէ : 21 Չարաճակ մատնօղն առաքեալ կասի . 24 Պիտիլ առաքեալներն փոխանորհներից կը զգուշացնի . 31 Իմաց կը տայ Պետրոսին որ իրան հաւատալ պիտի չը գտնդի . 34 Նայդ երեք անգամ նորան պիտի ուրանայ : 39 Հրէաստի Ձիթենեաց սարին մին տեղ աղօթելն և արիւն քրտունքն թափելն , 47 Յուդան մին համբոյրով Յիսուսին կը մատնէ . 50 Հիսուս Սադեսի ականջը կը բժշկէ , 54 Պետրոսի երեք անգամ ուրանալն . 63 Հրէաստի ծաղր լինելով անարդվելն , 66 Նէ իրան անձն Նաւուծոյ Ուժե լինել կը խոստովանի :

1 Ա՛ւուրքն բաղարջակերաց՝ որ կոչէր Պասքա :

2 Եւ խնդրէին քահանայապետքն և դպիրք՝ թէ ո՛րպէս սպանանիցեն զնա . բայց երկնչէին ի ժողովրդենէ ամենի :

3 Ապա եմուտ Սատանայ ի Յուդա՝ որ կոչեցեալն Իսկարիովտացի , որ էր ի թուոյ երկոտասանիցն :

4 Ազատ եղ բանն ընդ քահանայապետսն և ընդ դպիրս՝ և ընդ իշխանս ժողովրդեանն , զի մատնեսցէ զնա նոցա :

5 Եւ խնդացին , և խոստացան տալ նմա արծաթ :

6 Եւ յանձն առ , և խնդրէր պատեհ մատնել զնա նոցա՝ առկուսն յամբոխէն :

1 Բաղարջակերաց տօնն մօտեցաւ՝ որ Պասքա էր կոչվում[1] :

2 Եւ քահանայապետներն և կարգացողներն խնդրում էին՝ թէ ինչպէս սպանեն նորան[2] . բայց ժողովրդից վախենում էին :

3 Այս Սատանան մտաւ Իսկարիովտացի ասած Յուդայի մէջ՝ որ տասներկուսի թուից էր[3] :

4 Նա գնաց քահանայապետներին և կարգացողներին հետ խօսք կապեց՝ որ նորան մատնէ նորանց :

5 Եւ նորանք ուրախացան և խոստացան՝ որ արծաթ տան նորան[4] :

6 Եւ նա խօսք տուաւ և յարմար ժամանակ էր ուզում՝ որ նորան ամբոխից (խուճապից) հեռու գտած մատնէ նորանց :

(31) Ղուկ . ԻԸ . 1 : (32) Մատ . ա . 5 : Եփես . Ը . 13 : (33) Ղուկ . Ը . 1 , 2 : (34) Ղուկ . ԻԸ . 39 : (1) Մատ . ԻՆ . 2 : Մարկ . ժգ . 1 : (2) Մատ . Բ . 3 : Ղուկ . ժա . 47 : Գործ . գ . 17 : (3) Մատ . ԻՆ . 14 : Մարկ . ժգ . 10 : Ղուկ . ժգ . 3 . 27 : (4) Զաք . ժա . 12 :

Digitized by Google

7 Եկն օր բաղարջակերացն, յոր-
ում օրէն էր զնուել զպատանքն :

8 Եւ առաքեաց զՊետրոս և զՅով-
հաննէս և ասէ . Երթայք պատ-
րաստացէք մեզ զպատանքն՝ զի կերու-
ցուք :

9 Եւ նոքա ասեն . Ո՞ւր կամիս՝
զի պատրաստեսցուք :

10 Եւ ասէ ցնոսա . Ահա իբրև
մտանիցէք ՚ի քաղաքն, պատահեսցէ
ձեզ այր մի բարձեալ սափոր ջրոյ .
երթիջիք զհետ նորա ՚ի տունն, յոր
մտանիցէ .

11 Եւ ասասջիք տանուտէրն տա-
նըն . Ալ արդեաւնա ասէ քեզ . Ո՞ւր
են վանքն իմ, յորում զպատանքն
ուտիցեմ աշակերտաքս հանգերձ :

12 Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն
մի մեծ զարդարեալ, և անդ պատ-
րաստացջիք :

13 Եւ գնացեալ գտին որպէս և
ասացն նոցա . և պատրաստեցին զը-
պատանքն :

14 Եւ իբրև ժամ եղև՝ բազմե-
ցաւ, և երիսասանն առաքեալքն
ընդ նմա :

15 Եւ ասէ ցնոսա . Ցանկանալով
ցանկացայ զայս պատանք ուտել ընդ
ձեզ՝ մինչչև չարչարեալ իցեմ :

16 Ասեմ ձեզ, թէ ոչ և
կերայց ՚ի սմանէ՝ մինչև լցցի յար-
քայութեան Աստուծոյ :

17 Եւ ընկալեալ բաժակ՝ գոհա-
ցաւ և ասէ . Առէք զայդ՝ և բա-
ժանեցէք ՚ի ձեզ :

18 Ասեմ ձեզ՝ թէ Այսմհետէ ոչ
արբից ՚ի բերոյ որթոյ՝ մինչև ե-
կեսցէ արքայութիւն Աստուծոյ :

19 Եւ առեալ հաց գոհացաւ՝ և

7 Խաղարջակերաց օրն եկաւ՝ որ
օրինք էր պասքըն (պասքի գառն)
նուռանուռ մորթել :

8 Եւ Պետրոսին և Յովհաննէսին
ուղարկեց և ասաց . Գնացէք պա-
սքըն պատրաստացէք մեզ համար
որ ուտենք :

9 Եւ նորանք ասացին . Ո՞ւր
տեղ ես կամենուս՝ որ պատրաս-
տենք :

10 Եւ նորանց ասաց . Ահա երբ-
որ քաղաքն կըմտնէք՝ մին մարդ
կըպատահի ձեզ ջրի կուժը վերկա-
ծած . նորա եւևէն գնացէք էն
տունն՝ որ նա կըմտնէ .

11 Եւ էն տան տիրոջն ասացէք .
Գ արդեաւնան ասուաք քեզ . Թէ
Ո՞ւր է իմ վեր գալըլ տեղն՝ որ
նորանուս պասքըն ուտեմ իմ ա-
շակերտներիս հետ :

12 Եւ նա ձեն մեծ զարդարված
վերնատուն ցույց կըտայ ձեզ, և
էն տեղ պատրաստեցէք :

13 Եւ գնացին էնպես գտին՝ ինչ-
պես որ ասաց նորանց . և պասք-
ըն պատրաստացին :

14 Եւ ժամն (ատենն)՝ որ էլաւ՝
տեղան նստաց՝ . և առաքեալներն էլ նորա հետ :

15 Եւ նորանց ասաց . Ցանկա-
նալով ցանկացայ՝ որ էս պասքըս
ձեզ հետ ուտեմ՝ իմ չարչարվե-
լուցն առաջ :

16 Ասացի ասումեմ ձեզ՝ թէ ա-
րանից էլ չեմ ուտիլ մինչև որ՝
կատարվի Աստուծոյ արքայութի-
նումն՝ :

17 Եւ բաժակըն (Խոսըն) առաւ՝
գոհացաւ և ասաց . Առէք գորան
և ձեր միջումըն բաժանեցէք :

18 Ասումեմ ձեզ՝ թէ Արանից ե-
ւև որթի (վազի) բերքիցն չեմ խը-
միլ՝ մինչև որ՝ Աստուծոյ արքա-
յութիւնն գայ՝ :

19 Եւ հաց առաւ, գոհացաւ,

(5) Մատթ . իշ . 17 : Մարկ . ժգ . 12 : (6) Մատթ . իշ . 20 : Մարկ . ժգ . 17 : (7) Ղուկ . ժգ . 15 : Գործ . ժ . 41 : Հայոց . ժԲ . 9 : (8) Մատթ . իշ . 29 : Մարկ . ժգ . 25 :

Digitized by Google

քնիկ և նա նոցա և ասէ . Ո՛չ է մարդին իմ , որ վասն բազմաց տու- նալ · զայս արասջիք առ իսկ յի- շատակի :

20 Ապա՛ցէս և զբաժակն յետ ընթրեացն առ՝ և ասէ . Ո՛չս բա- ժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղեալ :

21 Ո՛չայց առասիկ ձեռն մատնչէ ի- մոյ ընդ իս ի սեղանս :

22 Եւ Որդի մարդոյ ըստ սահմա- նեալն երթայ , բայց վա՛յ մարդոյն այնմիկ՝ յորմէ ձեռն մատնիցի :

23 Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեանս , թէ ո՞վ է ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ :

24 Եւ եղե՛ հակառակութիւն ի մէջ նոցա . թէ ո՞ ի նոցանէ հա- մարիցի մեծ :

25 Եւ նա ասէ ցնոսա . Թագա- ւորք ազգաց տիրեն նոցա . և որ իշխենն նոցա՝ բարերարք կոչին .

26 Ո՛ւր դուք ոչ այնպէս . այլ որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրև ջկրտասերն , և առաջնորդն իբրև ջպատաւորն :

27 Ո՞վ է մեծ , քան զնստեալն՝ եթէ պատաւորն . ո՞չ պատաքին քան զնստեալն . բայց ես եմ ի միջի ձերում իբրև պատաւոր :

28 Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ իս ի փորձութիւնս իմ .

29 Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս և Հայր իմ ուխտեաց ինձ զարքայու- թիւն .

կերից և նորաց տալ և ասաց . Ա՛յս է մարմին իմ , որ վասն բազմաց տու- նալ . զայս արասջիք առ իսկ յի- շատակի :

20 Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ՝ և ասաց . Ա՛յս բա- ժակ է նոր ուխտ իմով արեամբ վասն ձեր հեղեալ :

21 Ա՛յց ահա ձեռն մատնողի ինձ հետ է սեղանոյս :

22 Եւ Որդին մարդոյ կերթայ ինչպէս որ սահմանեալ է . բայց վա՛յ էն մարդոյն՝ որ նորա ձեռամբ կը- մատնուիցի :

23 Եւ նորանք սկսեցին հարցնել իրանց միջումն՝ թէ իրանցից ո՛վ է նա՝ որ պիտի էն բանըն գործէ :

24 Ա՛յսպէս միջումն հակառակա- թիւն էլ եկաւ՝ թէ իրանցից ո՛վ պի- տի մեծ համարուի :

25 Եւ նա ասաց նորանց . Ա՛զ- գերի թագաւորներն տիրապետումն նորանց վերայ , և նորանք՝ որ իշ- խանութիւն են անում նորանց վե- րայ՝ բարերար են կոչւում :

26 Ա՛յց դուք էնպէս չէ . այլ ով որ ձեր միջումն մեծ է՝ թո՛ղ փոքրի պէս լինի , և առաջնորդն ծառայի պէս :

27 Ո՞վ է մեծ , սեղան նստողն՝ թէ ծառան . չէ՞ որ սեղան նստողն . բայց ես՝ ձեր միջումն ծառայի պէս եմ :

28 Եւ դուք էք , որ միշտ ինձ հետ էիք իմ փորձութիւններում :

29 Եւ ես հաստատ խոստանում ձեզ արքայութիւն՝ ինչպէս որ Հայրն էլ ինձ հաստատ խոստա- ցաւ .

(9) Մարկ . իզ . 26 : Մարկ . ժդ . 22 : (10) ա Կորնթ . ժա . 24 : (11) ա Կորնթ . ժ . 16 : (12) Մատ . խա . 9 : Մարկ . իզ . 21 . 23 : Մարկ . ժդ . 18 : Հովհ . ժգ . 21 . 26 : (13) Մարկ . իզ . 24 : (14) Պարբ . ը . 33 : դ . 28 : (15) Մարկ . իզ . 22 : Հովհ . ժգ . 22 . 25 : (16) Մարկ . ը . 34 : Ղուկ . ը . 46 : (17) Մարկ . թ . 35 : Մարկ . ժ . 42 : (18) Մարկ . ի . 26 : ա Պետր . ե . 3 : (19) Ղուկ . ը . 48 : (20) Ղուկ . ժբ . 37 : (21) Մարկ . ի . 28 : Հովհ . ժդ . 13 , 14 : Փիլիպ . բ . 7 : (22) Նիւթ . դ . 15 : (23) Մարկ . իգ . 17 : Ղուկ . ժբ . 33 : բ Կորնթ . ա . 7 : բ Տիմ . բ . 12 :

Digitized by Google

30 Օ՛ի ուսեալք և իմասիցէք ՚ի ա-
զան իմ յարքայութիւնեան իմում,
և նստիցիք յերկոտասան աթոռ՝
դատել զերկոտասան ազգ Իսրայէլի ։

31 Եւ ասէ Տէր. Սիմոն Սիմոն՝
ահա Սատանայ խնդրեաց զձեզ խար-
բալել իբրև զցորեան.
32 Ես աղաչեցի վասն քո՝ զի
մի՛ պակասեսցեն հաւատք քո. և
դու երբեմն դարձեալ և հաստա-
տեսցես զեղբարս քո ։
33 Եւ նա ասէ ցնա. Տէր՝ ընդ
քեզ պատրաստ եմ և ՚ի բանտ և
՚ի մահ երթալ ։

34 Եւ նա ասէ ցնա. Ասեմ քեզ
Պետրէ, չկեցէ այսօր հաւուս խօս-
եալ՝ մինչև երիցս ուրասցիս զիս չգի-
տել ։
35 Եւ ասէ ցնոսա. Յորժամ ա-
ռաքեցի զձեզ առանց քսակի և մա-
խաղէ և կօշկաց, միթէ կարօտա-
ցայք իմիք ։
36 Եւ նոքա ասեն. Եւ ո՛չ իմիք.
ապա ասէ. Ա՛յլ այժմ որ ունիցի
քսակ՝ բարձցէ, նոյնպէս և մախաղ.
և որ ո՛չն ունիցի, վաճառեսցէ ըզ-
ձորձա իւր՝ և գնեսցէ իւր սուսեր ։

37 Ա՛յց ասեմ ձեզ. զի այս ևս
որ գրեալ է՝ պարտ է զի կատա-
րեսցի յիս, թէ Ընդ անօրէնս հա-
մարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝
վճարեալ է ։

38 Եւ նոքա ասեն. Տէր՝ ահա
սասիկ են աստ երկու սուրք. և նա
ասէ ցնոսա. Հատական են ։
39 Եւ ելեալ գնաց ըստ սովորու-

30 իր ուտէք և խմէք՝ իմ սեղա-
նիս վերայ իմ արքայութեանս[34],
և տասներկու աթոռս վերայ նըս-
տիք՝ Իսրայէլի տասներկու ցեղին
դատաստան անելոյ հաւիր[35] ։
31 Եւ Տէրն ասաց. Սիմէ՛ն Սի-
մո՛ն. ահա Սատանան ուզեց[36]՝ որ
ձեզ խախալէ ցորենի պէս[37] ։
32 Հայց ես աղաչեցի քեզ համար՝
որ քո հաւատդ չըպակասի[38]. և
դու մին ժամանակ դառնաս և քո
եղբարներդ հաստատես[39] ։
33 Եւ նա ասաց նորան. Տէր.
ես պատրաստ եմ՝ որ քեզ հետ հինց
բանտի (պընդանի) և մահի մէջ էլ
գնամ ։
34 Եւ նա ասաց նորան. Ըսու-
մեմ քեզ Պետրէ, որ էս օր դեռ
որ հաւն չըհաւսացել, դու երիք
անգամ կուրանաս չըգիտել ինձ[40] ։
35 Եւ նորանց ասաց. Երբոր ու-
ղարկեցի ձեզ առանց քսակի, և
պարկի և կօշիկների՝ միթէ կարօ-
տացաք մին բանի[41] ։
36 Եւ նորանք ասացին. Իսկի մին
բանի էլ չէ. ապա ասաց. բայց հի-
միկ ով որ քսակ ունի, թող վեր
առնէ, էնպես էլ պարկը, և ով
որ չունի՝ թող իրան շորերըն ծա-
խէ և իրան համար սուբ գնէ ։
37 Հայց ասումեմ ձեզ, թէ ես
էլ որ գրված է, պէտք է որ կա-
տարվի ինձանում՝ թէ Ընօրէնների-
րին հետ համարվեցաւ[42]. պատճառն
որ՝ ինչ որ ինձ համար ասված է՝
գլուխ է եկած ։
38 Եւ նորանք ասացին. Տէր՝ ա-
հա էսաեղ երկու սուր կայ. և նա
ասաց նորանց. Հատական են ։
39 Եւ դուրս էլաւ իրան սովո-

(24) Մարկ. ը. 11 : Ղուկ. ժդ. 15 : Յայտ. ժբ. 9 : (25) Սուղ. խթ. 14 : Մարկ. ժբ. 28 : ա Կորնթ. չ. 2 : Գայտ. գ. 21 : (26) ա Պետր. ե. 8 : (27) Ա՛ռաք. բ. 9 : (28) Ծառ. ժե. 9. 11. 15 : (29) Սուղ. ծա. 13 : Ծառ. խ. 15, 16, 17 : (30) Մարկ. իգ. 34 : Սուղ. ժդ. 30 : Ծառ. ժգ. 38 : (31) Մարկ. ժ. 9 : Ղուկ. թ. 3 : ժ. 4 : (32) Եսայ. ծգ. 12 : Սրբ. ժե. 28 :

Digitized by Google

թեանն ՚ի լեառն Ձիթենեաց. գնաց ինն զՀետ նորա և աշակերտքն ։

40 Իբրև եհաս ՚ի տեղին՝ ասէ ցնոսա. Յաղօթս կացէք չմտանել ՚ի փորձութիւն ։
41 Եւ ինքն մեկնեցաւ ՚ի նոցանէ իբրև քարեղկեց մի, եդ ծունր՝ կայր յաղօթս ։
42 Եւ ասէր. Հայր՝ եթէ կամիս տիցի զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին ։

43 Եւ երևեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ և զօրացուցանէր զնա. և էր ՚ի տագնապի, և մատիւրա-թեամբ ևս կայր յաղօթս ։

44 Եւ հոսէին ՚ի նմանէ քրտունք իբրև զկայլակս արեան՝ ոլոռն ու-լաւն, հեղեալ յերկիր ։

45 Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն առ աշակերտսն, եգիտ զնոսա ՚ի քուն ՚ի տրտմութենէն.

46 Եւ ասէ ցնոսա. Ո՞ւմ ննջէք, արդ կացէք յաղօթս՝ զի մի՛ մատնիցէք ՚ի փորձութիւն ։

47 Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ. և որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանիցն՝ առաջնորդէր նոցա ։ Իբրև մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան առեալ էր նոցա, թէ զոր որում ես համբուրեցից, նա է՝ զնա ունիցիք ։

48 Ասէ ցնա Յիսուս. Յուդա՝ րութեան պէս[33] գնաց Ձիթենեաց սարն՝ աշակերտներն էլ նորա ետևէն գնացին[34] ։

40 Երբոր հնտեղն հասաւ՝ նոր-անց ասաց. Ղօթք արէք՝ որ փորձութեան մէջ չըմտնէք[35] ։

41 Եւ ինքն նորանցից հեռացաւ մին քար քցելոյ չափուլ՝ ծունր դըրաւ՝ աղօթք էր անում[36].

42 Ասում. Հայր՝ եթէ կամենում ես բաժակըս (խաչն) անցկացրու ինձանից. միայն թէ՝ ոչ իմ կամքս՝ բայց քո (կամքդ) լինի[37] ։

43 Եւ հրեշտակ երևեցաւ[38] նորան երկնքից, և զօրացնում էր նորան, և մեռնելոյ չափ խռովութեան մէջ էր, և աւելի չանքով աղօթք էր անում[39] ։

44 Եւ քրտունքն վազումէր նորանից, ինչպէս արիւնի կաթիլք՝ որ կլոր կլոր երկրի վերայ էին թափվում ։

45 Եւ աղօթքիցն վերկացաւ՝ եկաւ աշակերտներին մօտ, և նորանց քնի մէջ գտաւ տրտմութեան պատճառովն ։

46 Եւ նորանց ասաց. Ինչո՞ւ էք քնում. վերկացէք աղօթք արէք[40], որ փորձութեան մէջ չըմտնէք ։

47 Եւ դեռ որ խօսումէր՝ ահա ամբոխ (խումբ), և նա որ Յուդա էր կոչվում՝ էն տասներկուսիցն միսն՝ առաջնորդումէր նորանց[41]. երբոր մօտեցաւ Յիսուսին՝ համբուրեց նորան. պատճառն որ՝ էն նշան էր տուել նորանց, թէ որին որ ես կըհամբուրեմ՝ նա է՝ նորան բռնեցէք ։

48 Յիսուս նորան ասաց. Յու-

(33) Ոսկր. խգ. 36 ։ Մարկ. ժգ. 32 ։ Յովհ. ժը. 1 ։ (34) Լուկ. խ. 37 ։ (35) Մատթ. գ. 13 ։ իգ. 41 ։ Մարկ. ժգ. 38 ։ Պետր. 46 ։ (36) Մատթ. իգ. 39 ։ Մարկ. ժգ. 35 ։ (37) Յովհ. ե. 30 ։ գ. 38 ։ (38) Մատթ. դ. 11 ։ (39) Յովհ. ժբ. 27 ։ Եբր. ե. 7 ։ (40) Պէտ. 40 ։ (41) Մատթ. իգ. 47 ։ Մարկ. ժգ. 43 ։ Յովհ. ժը. 3 ։

Digitized by Google

համբուրելով մատնեա զՒրդի մեղ-
դոյ :
49 Իբրև տեսին՝ որ զնավատն էին՝
որ ինչ եղևն, ասեն ցնա. Տէր՝
հարցուք զնոսա սրով :

50 Եւ եհար մի ոմն 'ի նոցանէ
զքահանայապետին ծառայ, և 'ի
լաց եհան զաջոյ ունկն նորա :
51 Պատասխանի եա Յիսուս և ա-
սէ. Թոյլ տուք մինչև ցայդ վայր.
և մատուցեալ յունկնն՝ բժշկեաց
զնա :
52 Եւ ասէ ցեկեալսն 'ի վերայ նո-
րա՝ զքահանայապետսն և ցիշխանս
տաճարին և ցծերս. Իբրև 'ի վե-
րայ աւազակի ելիք սաւսերօք և
բրօք :
53 Հանապազ ընդ ձեզ էի ի տա-
ճարին, և ոչ ձգեցիք ձեռս յիս.
այլ այս է ձեր ժամ, և իշխանու-
թիւն խաւարի :
54 Եւ կալեալ զնա՝ ածին և մու-
ծին 'ի տուն քահանայապետին. և
Պետրոս երթայր զկնի նորա հեռա-
գոյն :
55 Իբրև լուցին կրակ 'ի մէջ
գաւթին՝ և նստան շուրջ, նստաւ
և Պետրոս 'ի մէջ նոցա :

56 Եւ տես զնա աղախին ոմն՝ զի
նստէր առ լոյսն, յայտնեաւ ընդ նա
և ասէ. Եւ սա ընդ նմա էր՝ որ
ընդ նմայն էին :

57 Իսկ Պետրոս ուրացաւ և ասէ.
Ո՛չ գիտեմ զնա կին դու :

58 Եւ յետ սակաւ մի՛ոյ, այլ
ոմն եւս տես զնա, և ասէ. Եւ դու
'ի նոցանէ ես. և Պետրոս ասէ.
Ո՛չ էր դու՝ չեմ 'ի նոցանէ :

դա՞ համբուրելո՞վ ես Որդին մարդ-
դոյ մատնում :
49 Երբոր նորանք՝ որ նորա հե-
տըն էին՝ տեսին ինչ որ էլաւ՝ նո-
րան ասացին. Տէր սրով զարկե՞նք նորանց :
50 Եւ նորանցից մինն քահանա-
յապետի ծառային զարկեց՝ և նո-
րա աջ ականջն կտրեց[42] :
51 Յիսուս պատասխան տուաւ և
ասաց. Լաւ տաէք մինչև էդ տե-
ղըդ. և ականջին մօտեցաւ և բըժ-
ժըշկեց նորան :
52 Եւ իրան վերայ եկածներին՝
քահանայապետներին և տաճարի
իշխաններին և ծերերին ասաց[43]. Ինչպես մին աւազակի վերայ դուրս եկէք սրերով և բշրներով :
53 Ամենօր ձեզ հետ էի տաճա-
րումն. և ձեռներըն չըձգեցիք
ինձ վերայ. էս է ձեր ժամն (ա-
հաւասիկ) և խաւարի իշխանութիւնն[44] :
54 Եւ նորան բռնեցին տարան և
մտցրին քահանայապետի տունն[45].
և Պետրոս հետևանց գնում էր
նորա հետն[46] :
55 Երբոր սրահի մէջն կրակ վա-
ռեցին և շուրջ կողմով նստեցին,
Պետրոսն էլ նստեց նորանց միջ-
մըն[47] :
56 Ա՛ին աղախին (պատաշ) տես-
նում նորան՝ որ լուսոյ մօտ նստած
էր. մտիկ տուաւ նորան և ասաց.
Այ էլ նորանց հետ էր՝ որ նորա
հետն էին :
57 Նայց Պետրոսն ուրացաւ և
ասաց. Ա՛վ կին. ես նորան չեմ
գիտում :
58 Եւ մինչչ յետոյ մին ուրիշն
տեսաւ նորան և ասաց[48]. Դո՛ւ էլ
նորանցից ես. և Պետրոսն ասաց.
Ո՛վ մարդ՝ ես նորանցից չեմ :

(42) Մատ. խզ. 51 : Մարկ. ժդ. 47 : Յովհ. ժը. 10 : (43) Մատ. խզ. 55 : Մարկ. ժդ. 48 : (44) Յովհ. ժը. 27 : (45) Մատ. խզ. 57 : (46) Մատ. խզ. 58 : Յովհ. ժը. 15 : (47) Մատ. խզ. 69 : Մարկ. ժդ. 66 : Յովհ. ժը. 17, 18 : (48) Մատ. խզ. 71 : Մարկ. ժդ. 69 : Յովհ. ժը. 25 :

Digitized by Google

59 Եւ իբրեւ ժամ մի անց՝ ի վե-
րայ, այլ ոմն վիճէր և ասէր .
Այսոյգ և սա ընդ նմա՛ էր, քանզի
Գալիլեացի է :

60 Ա՛ռ Պետրոս . Ա՛յր դո՛, չգի-
տեմ զինչ խօսիդ . և առ ժամայն
դիւզգեա նա զայն ասէր , խօսեցաւ
հաւ :

61 Դարձաւ Տէր՝ և հայեցաւ ՚ի
Պետրոս . և յիշեաց Պետրոս զբանն
Յեսուի՝ զոր ասաց ցնա . Մինչչեւ
հաւս խօսեսցի իցէ , երիցս ուրա-
ցիս՝ չգիտեսը զիս :

62 Եւ ելեալ արտաքս՝ եկաց դառ-
նագոյն :

63 Եւ արքն , որ պահէին զնա ,
այպն առնէին զնովաւ , և հարկա-
նէին :

64 Ծածկէին զերեսս նորա և
առնջէին . և հարցանէին ցնա և
ասէին . Մարգարեաց՝ ոճ է՝ որ և
հարն զքեզ :

65 Եւ այլ բազում ինչ հայհոյու-
թեամբ խօսէին ՚ի նա :

66 Եւ իբրև այգ եղև , ժողովե-
ցաւ ծերակոյտ ժողովրդեանն՝ քա-
հանայապետքն և դպիրք , և հա-
նին զնա յատեանն իւրեանց՝
և ասեն , եթէ դու ես Քրիստոս ,
ասա մեզ :

67 Ա՛ռ ցնոսա . եթէ ասացից
ձեզ , սակայն ոչ հաւատայք .

68 Եւ եթէ հարցից ինչ զձեզ ,
չասէք ինձ պատասխանի՝ կամ ար-
ձակիցէք :

69 Ապայ յայսմհետէ նստի Որդի
մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աս-
ուծոյ :

59 Եւ երբոր մին ժամ (սահմն)
վերայ անցկացաւ՝ մին ուրիշն հա-
կառակուէր և ասում , Հ՞իսակ ,
որ սա էլ նորա հետն էր[49] . ինչու
որ՝ Գալիլեացի է :

60 Պետրոսն ասաց . Ա՛վ մարդ՝
չեմ գիտում թէ դու ինչ ես խօ-
սում . և հենց էն ժամումն դեռ որ
նա էն ասումէր՝ հաւն խօսեց :

61 Տէրն դարձաւ և մտիկ առաւ
Պետրոսին՝ և Պետրոսն միտքն ըն-
կաւ Տէրի էն խօսքըն որ ասաց նո-
րան[50], Թէ՝ Հաւն դեռ չը խօսած ,
երեք անգամ կուրանաս՝ չգիտես
ինձ[51] :

62 Եւ դուրս գնաց և դառն ար-
տասուներով լաց եղաւ :

63 Եւ մարդիկն՝ որ նորան պա-
հումէին՝ ծաղր էին անում նորան և
զարկում[52] :

64 Նորա երեսըն ծածկումէին և
չարչարումէին , և նորան հարցը-
նումէին և ասում . Մարգարէացիր՝
ոճ է նա՝ որ քեզ զարկեց :

65 Եւ էլ ուրիշ շատ բաներ հայ-
հոյանքով խօսումէին նորա դէմ :

66 Եւ երբոր առաւօտ եղաւ[53]՝
ժողովեցան ծերերն և քահանայա-
պետներն և կարդացողներն ժողով-
վեցան[54], և նորան հանեցին տա-
րան իրանց տիվանն՝ և ասացին[55] .
Թէ որ դու Քրիստոսն ես , ա-
սա մեզ :

67 Նորանց ասաց . Թէ որ ա-
սեմ ձեզ , էնպէս էլ դուք չէք
հաւատալ :

68 Եւ թէ որ մին բան հարցնեմ
ձեզ , ինձ պատասխան չէք տալ
կամ արձակիլ :

69 Այդ որանից ետև Որդին մար-
դոյ՝ Աստուծոյ զօրութեան աջ կող-
մըն կընստի[56] :

(49) Մարկ . իգ . 73 : Մտթ . ժգ . 70 : Ղուկ . ժը . 26 : (50) Մարկ . իգ . 75 :
Մտթ . ժգ . 72 : (51) Մարկ . իգ . 34 . 75 : Ղուկ . ժգ . 38 : (52) Մարկ . իգ .
67 , 68 : Մտթ . ժգ . 65 : (53) Մարկ . իե . 1 : (54) Գործ . դ . 26 : Գործ . իբ .
5 : (55) Մարկ . իգ . 63 : Մտթ . ժգ . 61 : (56) Մարկ . իգ . 61 : Մտթ . ժգ . 62
Նբր . ա . 3 : բ . 1 :

Digitized by Google

70 Եւ ասէն ամենեքեան. Ուրե՞մն դու ես Որդին Աստուծոյ. և նա ասէ ցնոսա. Դուք ասէք, թէ ես եմ։

71 Եւ նոքա ասեն. Ո՞րինչ ևս պիտոյ է մեզ վկայութիւն, զի մեզէն իսկ լուաք ՚ի բերանոյ դորա։

70 Եւ ամենքն ասացին. Ուրե՞մն դու ես Աստուծոյ Որդին. և նա ասաց ցնորանց. Դուք կը ասէմ[57], որ ես եմ։

71 Եւ նորանք ասացին. Ընդ ի՞նչ պէտք է մեզ վկայութիւն, ինչպէս՝ հենց մենք ինքն լսեցինք դորա բերանից[58]։

ԿԻ. ԻԴ.

1 Յիսուսին կըչարախօսեն Պիղատոսի առաջին և Հերովդէսի կուղարկվի, 8 Հերովդէսն նորան կանարգէ և ծաղր կանէ։ 12 Պիղատոս և Հերովդէս իրար հետ բարեկամ կըլինին։ 18 Ամբողջութն կամենուվ որ Բարաբբան արձակվի, 25 Պիղատոսն Յիսուսին նորանց կամացն կըմատնէ որ նորան խաչվի։ 27 Կրիսատոս իրան վերայ կոծ և սուգ անող կանանց Երուսաղէմի քանգվիլն իմաց կըտայ. 34 Իրան թշնամիներին համար աղօթք կանէ։ 39 Երկու չարագործներին խօսքն որ իրան հետ խաչն էին հանում։ 46 Յիսուսի մահն, 50 և թաղվիլն։

1 Եւ յարուցեալ ամենայն բազմութիւնն նոցա, ածին զնա առ Պիղատոս։

2 Եւ սկսան չարախօս լինել զնմանէ և ասել. Զտաք զսա՝ զի թիւրեր զազգս մեր, և արգելոյր ՚ի տալոյ հարկս կայսեր, և ասէր զանձն՝ եթէ Քրիստոսն իցէ թագաւոր։

3 Իսկ Պիղատոս եհարց զնա և ասէ. Դու ես թագաւորն Հրէից. Նա պատասխանի ետ նմա և ասէ. Դու ասացեր։

4 Ետես Պիղատոս ցքահանայապետսն և ցժողովուրդսն. Ոչգտանեմ ինչ մեղս յառնա յայսմիկ։

5 Եւ նոքա պնդէին և ասէին, եթէ խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ ամենայն Հրէաստան՝ սկսեալ ՚ի Գալիլեայ մինչև ցայսր։

6 Իսկ Պիղատոս իբրև լուաւ

1 Եւ նորանց ամէն բազմութիւնն վերկացաւ՝ և նորան տարան Պիղատոսի մօտ[1]։

2 Եւ սկսեցին չարախօսութիւն անել նորանից և ասել. Սորան գտինք՝ որ մեր ազգին ծռութիւն[2] և արգելութիւն կայսերին հարկ տալուցն[3]. և ինքն իրան Քրիստոս թագաւոր է[4]։

3 Նայց Պիղատոս հարցրուց նորան և ասաց. Դու ես Հրէից թագաւորն[5]. Նա պատասխան տուաւ նորան և ասաց. Դու ասացիր։

4 Պիղատոս ասաց քահանայապետներին և ժողովրդին. Ես մին պատճառ չեմ գտնում էս մարդումս[6]։

5 Եւ նորանք սաստկացնում էին և ասում՝ թէ ժողովրդները խռովացնում է, և բոլոր Հրէաստանի մէջն սովորցնում՝ Գալիլեայից սկսած մինչև էստեղս։

6 Նայց Պիղատոսն երբոր գա-

(57) Մտթ. իզ. 64։ Մրկ. ժդ. 62։ (58) Մտթ. իզ. 65։ Մրկ. ժդ. 63։ (1) Մտթ. իե. 2։ Մրկ. ժե. 1։ Ցովհ. ժը. 28։ (2) Դուբ. ժե. 7։ (3) Մտթ. ժե. 27։ իբ. 21։ Մրկ. ժը. 17։ (4) Ցովհ. ժԹ. 12։ (5) Մտթ. իե. 11։ ա Տիմ. զ. 13։ (6) ա Պետր. բ. 22։

Digitized by Google

զվաղիլեն , եհարց՝ եթէ վաղիլեացի իցէ այրն ։

7 Եւ իբրեւ գիտաց՝ եթէ յիշխանութենէ Հերովդի է , եւ առաքեալ զնա առ Հերովդէս . քանզի և նա Երուսաղէմ էր յաւուրսն յայնոսիկ ։

8 Եւ Հերովդէս իբրեւ եհաս զՅիսուս , ուրախ եղեւ յոյժ . զի ցանկայր ի բազում ժամանակաց տեսանել զնա . քանզի լսեր բազում անգամ զնմանէ , և ակն ունէր նշան ինչ լեալ՝ տեսանել ի նմանէ ։

9 Հարցանէր զնա բանիւք բազմօք . և նա ոչ ինչ եւս նմա պատասխանի ։

10 Կային քահանայապետքն և դպիրք՝ և պնդագոյնս չարախօսէին զնմանէ ։

11 Արհամարհեաց զնա և Հերովդէս հանդերձ իւրովք զօրականօքն . և այպն արարեալ , արկ զնովաւ հանդերձ սպիտակ , և եւս առաքեաց անդրէն առ Պիղատոս ։

12 Եւ եղեն բարեկամք Պիղատոս և Հերովդէս յաւուր յայնմիկ . քանզի յառաջ թշնամիք էին միմեանց ։

13 Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն և զիշխանս և զժողովուրդն ,

14 Եւ ասէ ցնոսա . Մատուցիք ինձ զայրս զայս իբրև զխոտորեցուցիչ ժողովրդեանն . և ահաւասիկ առաջի ձեր դատեցայ , և ոչինչ ինչ ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոյ դուք չարախօսէքդ զմանէ ։

15 Այլ և ոչ Հերովդէս , քանզի եհաս առնել զդա առ նա . և արդ՝ ոչինչ մահու արժանի է գործեալ զորա ։

լիլեայի համար լսեց , հարցրուց՝ եթէ էդ մարդդ Գալիլեացի՞ է ։

7 Եւ երբոր իմացաւ՝ թէ Հերովդէսի իշխանութենից է[7] . առնիլ առաւ նորան Հերովդէսի մօտ . ինչու որ՝ նա էլ էն օրերումն Երուսաղէմումն էր ։

8 Եւ Հերովդէսն՝ երբոր Յիսուսին տեսաւ՝ շատ ուրախ էլաւ . ինչու որ՝ շատ ժամանակից եռանգնութեամբ տեսնել նորան[8] . պատճառն որ՝ շատ անգամ նորա համար լսուեր , և սպասուեր՝ որ մին նշան տեսնէ նորանից էլած[9] ։

9 Շատ խօսքերով հարցնուեր նորան՝ և նա իսկի մին պատասխան չըտուաւ նորան ։

10 Քահանայապետներն և կարգացողներն կանգնած էին՝ և շատ ասստիկ չարախօսուեին նորանից ։

11 Հերովդէսն էլ իրան զինուորներին հետ անարգեց նորան . և ծաղր անելով՝ մին սպիտակ շոր քցեց նորա վերայ , և յետ առնիլ առաւ Պիղատոսի մօտ[10] ։

12 Եւ Պիղատոս և Հերովդէս բարեկամ էլան էն օրումն . ինչու որ՝ առաջ իրար հետ թշնամի էին[11] ։

13 Պիղատոս կանչեց քահանայապետներին և իշխաններին և ժողովրդին[12] ,

14 Եւ նորանց ասաց . Դուք ինձ մօտ բերիք էս մարդս ինչպէս ժողովրդի մոլորացնող[13] . և ահա ձեր առաջին դատեցի՝ և իսկի վինաս չըգտի էս մարդումն էն բաներին համար , որ դուք չարախօսեցիք դորանից[14] ։

15 Եւ ոչ էլ Հերովդէսն . ինչու որ՝ դորան տանիլ տուի նորա մօտ . և ահա իսկի մեռնելոյ արժանի բան չի գործել դա ։

(7) Ղ. ա · գ · 1 ։ (8) Ղ. ա · բ · 9 ։ (9) Մատթ. ժգ · 1 ։ Մարկ. գ · 14 ։ (10) Նոյն . ծգ · 3 ։ (11) Գործ . գ · 27 ։ (12) Մատթ . իէ · 28 ։ Մարկ . ժե · 14 ։ Ցաքէ . ժը · 38 ։ ժբ · 4 ։ (13) Գէր . 1 , 2 ։ (14) Գէր . 4 ։

Digitized by Google

16 Խրատեցից զձա, և արձակեցից։
17 Օ՛ի հարկ էր մի մի ըստ ասելն արձակել նոցա։

18 Եւ նոքա աղաղակէին ամենայն բազմութեամբն՝ և ասէին. Կարծ զձա՝ և արձակեա մեզ զՀարաբբա.

19 Իր էր վասն խռովութեան ի քիք եղելոյ՝ ի քաղաքին և սպանութեան մտեալ՝ ի բանս։
20 Դարձեալ Պիղատոս սկսաւ խօսիլ. քանզի կամէր արձակել զՅիսուս։
21 Եւ նոքա անդրէն աղաղակէին և ասէին. Ի խաչ հան զձա։

22 Եւ նա երրորդ ասէ ցնոսա. Օ՛րինչ չար արար սա. ոչ ինչ գտաւ մահու գործ՝ ի սմա. խրատեցից զսա և արձակեցից։

23 Եւ նոքա սաստկէին մեծաձայն՝ և խնդրէին զնա՝ ի խաչ հանել. և զօրականացն բարբառք նոցա և քահանայապետիցն։

24 Եւ Պիղատոս հաւանեցաւ առնել զհայցուածս նոցա։
25 Արձակեաց նոցա զՀարաբբայ՝ զոր վասն խռովութեան և սպանութեան արկեալ էր՝ ի բանտ, զոր և խնդրէին իսկ. և զՅիսուս մատնեաց կամաց նոցա։

26 Իբրև առին գնացին զնա, ըմբռնեցին զոմն Սիմոն Կիւրենացի՝ որ գայր յանդէ. եդին՝ ի վերայ նորա զխաչն բերել զկնի Յիսուսի։

27 Եւ երթայր զՀնա նորա բազմութիւն ժողովրդեանն, և կանանց՝

16 Ընդ խրատեալ դորան՝ և կարձակեմ[15]։
17 Պատճառն որ՝ սոքի ժամանակումն հարկաւոր էր՝ որ մին մարդ արձակէ նորանց համար[16].
18 Եւ նորանք սկսին բազմութիւնն աղաղակումբին և ասել[17]. Պետրան վերս առ՝ և Հարաբբային արձակիր մեզ համար.
19 Որ նա քաղաքումն եղած խռովութեան և մարդասպանութեան համար բանտն էր մտել։
20 Պիղատոսն միւն էլ սկսաց խօսիլ. ինչու որ՝ կամնուամբ արձակել Յիսուսին։
21 Եւ նորանք միւն էլ աղաղակումբին և ասալ. Խաչ հանիր դորան։
22 Եւ նա երրեք անգամ ասաց նորանց. Ի՞նչ չար բան գործեց սա. իսկի մեռնելոյ պիտոս չէ՛գան տորանուլ. կըխրատեմ սորան և կարձակեմ։
23 Եւ նորանք բարձր ձայնով սաիպտումբին և խնդրումբին՝ որ խաչ հանէ նորան. և նորանց և քահանայապետներուն աղաղակելն զօրբանումբեր։
24 Եւ Պիղատոս հաւանկացաւ՝ որ նորանց խնդիրքըն անէ[18]։
25 Հարաբբային արձակեց նորանց համար՝ որ խռովութեան և մարդասպանութեան համար բանտի մէջ էր քցված, որ նորանք էլ չենց նորան էին խնդրում. և Յիսուսին մատնեց նորանց կամացն։
26 Երբոր նորան առին գնացին, մին Սիմոն Կիւրենացի (սատ) մտգ բռնեցին՝ որ յանդիցն էր գալիս. (և) խաչըն նորա վերայ դրին, որ Յիսուսի տանէն բերէ[19]։
27 Եւ շատ ժողովուրդ էր գնում նորա տանէն. և կանայք էլ՝ որ

(15) Մարկ. ի. 26։ Յովհ. ժբ. 1։ (16) Մարկ. ի. 15։ Մատթ. ժե. 6։ Յովհ. ժը. 20։ (17) Գործ. գ. 14։ (18) Մարկ. ի. 26։ Մատթ. ժե. 15։ Յովհ. ժբ. 16։ (19) Մարկ. ի. 32։ Մատթ. ժե. 21։ Յովհ. ժբ. 17։

Digitized by Google

որ կոծէին և աշխարէին զնա ։

28 Վարձաւ Յիսուս և ասէ ցնո-
սա . Վաւ՛րք Երուսաղէմի՛ մի՛ լայք
՚ի վերայ իմ՝ , այլ լացէ՛ք ՚ի վերայ
անձանց և ՚ի վերայ որդւոց ձերոց ։

29 Զի եկեսցեն աւուրք , յորս
ասիցեն՝ թէ Երանի՛ ամլոց և որո-
վայնից՝ որ ոչ ծնան , և սեանց՝ որ
ոչ դիեցուցին ։

30 Յայնժամ սկսանիցին ասել լե-
րանց՝ թէ Վնկերո՛ւք ՚ի վերայ մեր ,
և բլուրոց՝ թէ Ծածկեցէ՛ք զմեզ ։
31 Զի եթէ ընդ փայտ դալար
զայս առնեն , ընդ չորն զի՞նչ լի-
նիցի ։
32 Ելին և այլ երկուս չարա-
գործ՝ սպանանել ընդ նմա ։

33 Իբրև չորան ՚ի տեղին՝ կոչեց-
եալ Վագաթին , անդ Հանին զնա
՚ի խաչ . և զչարագործսն զոմն ընդ
աջմէ՛ և զոմն ընդ ձախմէ խաչեցին ։

34 Եւ Յիսուս ասէ . Հա՛յր՝ թո՛ղ
դացա , զի ո՛չ գիտեն՝ զինչ գործեն ։
Եւ ՚ի բաժանել զհանդերձս նորա ,
արկին վիճակս ։

35 Եւ կայր ժողովուրդն հայե-
ցեալ . անգոսնէին զնա իշխանքն
հանդերձ նոքօք՝ և ասէին . Զայլս
ապրեցոյց , ապրեցուսցէ և զանձն՝
եթէ դա է Քրիստոս Որդի Աստու-
ծոյ ընտրեալն ։

36 Հայն առնէին զնա և զին-
կած և սուգ եին անաւասիր նորա վե-
րայ ։
28 Յիսուս դարձաւ և նորանց ա-
սաց . Երուսաղէմի՛ աղջիկունե՛ր՝ լաց
մի՛ լինի՛ք ինձ վերայ՝ այլ լա՛ց է-
լէք ձեր անձնե՛րիդ և ձեր որդոց
վերայ ։
29 Ինչու որ՝ օրեր կըգան՝ որ նո-
րանցում կասեն՝ թէ Երանի՛ ա-
մուլներին (չաբ-բունե՛րին) և էն փո-
րերին , որ չըծնան , և էն ծը-
ծերին , որ չըծըծացրին[20] ։
30 Ին ժամանակն կսկսեն ասել
սարերին՝ թէ Վե՛զ վերայ ընկէ՛ք , և
բլուրներին՝ թէ Ծածկեցէ՛ք մեզ[21] ։
31 Ինչու որ՝ եթէ կանանչ փայ-
տին էս են անում , ապա չորին
ի՞նչ կըլինի[22] ։
32 Ուրիշ երկու չարագործ մար-
դիք էլ տարան , որ նորա հետ
սպանեն[23] ։
33 Երբոր եկին էնտեղն՝ որ Վա-
գաթին էր կոչվում , էնտեղ խաչ
հանեցին նորան . և էն չարագործ-
ներն էլ , միոր աջ կողմն և մի-
կէլը ձախ կողմն խաչեցին[24] ։
34 Եւ Յիսուս ասաց . Հա՛յր՝
Թողութիւն տուր դորանց[25] . ին-
չու որ՝ չեն գիտում թէ ինչ են
անում[26] . և երբոր նորա շարերըն
բաժանում էին , վիճակ քցեցին[27] ։
35 Եւ ժողովուրդն կանգնած նա-
յում էին[28] . իշխաններն նորանց հետ
ծաղր էին անում՝ և ասում[29] . ու-
րիշներին ապրեցրուց՝ թո՛ղ իրան
անձըն էլ ապրեցնէ՝ եթէ դա է
Քրիստոսն , Աստուծոյ ընտրվածն
Որդին ։

(20) Մատ . խդ . 19 : Ղուկ . խա . 23 : (21) Յոան . բ . 19 : Ովս . ժ . 8 : Յայտ . զ . 16 : Ը . 6 : (22) Ղուկ . ժա . 31 : Երէմ . խե . 29 : Եզեկ . ի . 47 : իա . 3 , 4 : ա Պետր . դ . 17 : (23) Յոան . ծգ . 18 : Մատ . խէ . 38 : (24) Մատ . խէ . 38 : Մարկ . ժե . 22 : Յովհ . ժԲ . 17 , 18 : (25) Մատ . է . 44 : Գործ . է . 60 : ա Տիմոթ . դ . 12 : (26) Գործ . գ . 17 : (27) Մատ . խէ . 35 : Մարկ . ժե . 24 : Յովհ . ԺԲ . 23 : (28) Ղուկ . իգ . 17 : Ովս . ժ . 10 : (29) Ղուկ . իգ . 7 : Մատ . խէ . 39 : Մարկ . ժե . 29 :

Digitized by Google

ասոցքն , եկեալ առաջի՝ մատուցա-
նէին նմա քացախ .
37 Եւ ասէին . Եթէ դու ես թա-
գաւորն Հրէից՝ փրկեա զանձն քո :
38 Եւ էր գիր գրեալ ՚ի վերայ
նորա՝ Յունարէն և Պաղմատերէն
և Եբրայեցերէն գրով , Եթէ Այ-
ն է արքայն Հրէից :
39 Իսկ մի ոմն ՚ի կախելոց չարա-
գործացն հայհոյէր զնա , և ասէր .
Ոչ դու ես Քրիստոսն՝ փրկեա
զանձն քո և զմեզ :
40 Պատասխանի եառ ընկերն սաս-
տելով նմա և ասէ . Ողորմիչ դու
չես Աստուծոյ՝ զի ՚ի նմին պատժի
կաս :

41 Եւ մեք յիրաւի , զի արժանի՝
որոց գործեցաքն՝ առնումք զՀա-
տուցումն . և սա ապիրատ ինչ ոչ
գործեաց :
42 Եւ ասէ ցՅիսուս . Յիշեա զիս
Տէր՝ յորժամ գայցես արքայու-
թեամբ քով :
43 Եւ ասէ ցնա Յիսուս . Ամէն
ասեմ քեզ . Այսօր ընդ իս իցես ՚ի
դրախտին :
44 Եւ էր իբրև վեցերորդ ժամ .
և խաւար եղև ՚ի վերայ ամենայն
երկրի մինչև ցիններորդ ժամ . խա-
ւարեցաւ արեգակն :
45 Եւ հերձաւ վարագոյր տաճա-
րին ընդ մէջ :
46 Եւ կարդաց Յիսուս ՚ի ձայն
մեծ՝ և ասէ . Հայր՝ ՚ի ձեռս քո ա-
նանդեմ զհոգի իմ . զայս իբրև ա-
սաց , եհան զոգի :
47 Եւ տեսեալ հարիւրապետին՝
զոր ինչ եղևն , փառաւոր արար
զԱստուած՝ և ասէ . Արդարև այր
այս արդար էր :
48 Եւ ամենայն ժողովուրդքն՝ որ

նում նորան . և մնա գալով քա-
ցախ էին տալիս նորան .
37 Եւ ասում . Լաւ որ դու Հրէից
թագաւորն ես՝ փրկիր քո անձդ :
38 Եւ գիր էր գրված նորա վե-
րայ , Յունարէն , Լատիներէն և
Եբրայեցերէն գրով , Թէ Այս է
Հրէից թագաւորն[30] :
39 Եւ էն կախված չարագործնե-
րից մինն հայհոյում նորան և ա-
սում . Ղէ՞ որ դու ես Քրիստոսն .
փրկիր քո անձդ և մեզ էլ[31] :
40 Նորա ընկերն պատասխան տը-
ւաւ սաստելով նորան՝ և ասաց .
Ղէ՞մ վախենում դու Աստուածա-
նից , որ դու հենց էն պատժի մէջն
ես :
41 Եւ մենք իրաւունքով . ինչու
որ՝ մեր արած գործքերին արժանի
հատուցումն ենք առնում . և սա
իսկի անիրաւ բան չէգործեց :
42 Եւ Յիսուսին ասաց . Տէր՝ ինձ
յիշիր՝ երբոր քո թագաւորութե-
նովդ գաս :
43 Եւ Յիսուս ասաց նորան .
Ճշմարիտն ասումեմ քեզ , թէ Այ-
օր ինձ հետ դրախտումն կըլինիս :
44 Եւ վեց ժամին (ահաւիկն) դեմ
էր . և ամէն երկրի վերայ խաւար
էլաւ մինչև ինն ժամն[32] . արեգակն
խաւարվեցաւ :
45 Եւ տաճարի վարագուրն մի-
ջից պատառվեցաւ[33] :
46 Եւ Յիսուս մեծ ձայնով կան-
չեց և ասաց . Հայր՝ իմ հոգիս քո
ձեռքդ եմ աւանդում[34] . երբոր էս
ասաց . հոգին հանեց[35] :
47 Եւ հարիւրապետն՝ որ տեսաւ
ինչ որ էլաւ , Աստուծոյն փառք տը-
ւաւ և ասաց . Ճշմարիտ որ՝ էս մարդս
արդար էր[36] :
48 Եւ ամէն ժողովուրդներն , որ

(30) Մարկ . ԺԵ . 27 : Մատ . ԺԷ . 26 : Հովհ . ԺԹ . 19 : (31) Մարկ . ԺԵ . 44 :
Մատ . ԺԷ . 32 : (32) Մարկ . ԺԵ . 45 : Մատ . ԺԷ . 33 : (33) Մարկ . ԺԵ . 54 :
Մատ . ԺԷ . 38 : (34) Սաղ . ԼԱ . 5 : ա Պետր . Բ . 23 : (35) Մարկ . ԺԵ . 50 : Մատ .
ԺԷ . 37 : Հովհ . ԺԹ . 30 : (36) Մարկ . ԺԵ . 54 : Մատ . ԺԷ . 39 :

Digitized by Google

եկեալ էին, և սեսանէին զսեսիլն զայն՝ և զգործ, բախէին զկուրծս՝ և դառնային։

49 Իսկ ամենայն ծանօթքն նորա՛ ի հեռասցանէ. և կանայքն, որ եկեալ էին զկնա նորա՛ ի Գալիլեայ՝ սեսանէին զայն։

50 Եւ սա՛ այր մի անուն Յովսէփ, որ էր նախարար՝ այր բարեգործ և արդար։

51 Այս չէր միաբանեալ ընդ խորհուրդս և ընդ գործս նոցա. ՅԱրիմաթեայ քաղաքէ Հրէից, որ և ինքն իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ։

52 Այս մատուցեալ առ Պիղատոս՝ խնդրեաց զմարմինն Յիսուսի.

53 Եւ իջուցեալ զնա՝ պատեաց պատառակալաւ, և եդ ի կուժոյ գերեզմանին. ուր չէր քնաւ ոք եդեալ։

54 Եւ օրն էր ուրբաթ, և շաբաթ լուսանայր։

55 Եւ երթային զկնա նորա կանայք՝ որ եկեալ էին ընդ նմա՛ ի Գալիլեայ. սեսին զգերեզմանն, և որպէս եդաւ մարմին նորա։

56 Դարձան, և պատրաստեցին խունկս և իւղս. և ի շաբաթուն հանգարստեցին վասն պատուիրանին։

եկել էին և էն էլած բաներըն սեսնումին, կուրծքերըն (փոշէրըն) թակումէին՝ և յետ կէին գնումեմ։

49 Գորա ամէն ծանօթներն էլ հեռուանց կանգնած կէին, և էն կանայքն էլ, որ Գալիլեացիից նորա եաւէն էին եկել՝ և սեսնումին էն[37]։

50 Եւ սա՛ մին մարդ՝ Յոսէփ անուն՝ որ իշխան էր՝ բարեգործ և արդար մարդ[38]։

51 Սա չէր միաբանվել նորանց խորհուրդին և գործքերին հետ։ Արեսաների Արիմաթիա քաղաքիցն (էր)՝ որ հենց ինքն էլ սպասումէր Աստուծոյ արքայութեանն[39]։

52 Սա գնաց Պիղատոսի մօտ և Յիսուսի մարմինըն խընդրեց։

53 Եւ վերբերու նորան ազնիվ կտաւով պատեց, և քարից փորած գերեզմանի մէջ դրաւ՝ որ էն սեղ էլ իսկի մին մարդ դրած չէր[40]։

54 Եւ օրն ուրբաթին էր՝ և շաբաթ էր լուսանումէ[41]։

55 Եւ էն կանայքն՝ որ Գալիլեացիցն նորա հետ էին եկել՝ գնումին նորա եաւէն[42], սեսին գերեզմանըն՝ և թէ ինչպես դրվաւ նորա մարմինըն[43]։

56 Գնեա դարձան՝ և խընկեր և իւղեր պատրաստեցին[44]. և շաբաթի օրումն հանդարս մնացին պատուիրանքի պատճառումն[45]։

(37) Ասմ· լբ· 11։ Մատթ· իե· 55։ Մարկ· ժե· 40։ Յովհ· ժթ· 25։ (38) Մատթ· իե· 57։ Մարկ· ժե· 43, 43։ Յովհ· ժթ· 38։ (39) Մարկ· ժե· 43։ Ղուկ· բ· 25· 38։ (40) Մատթ· իե· 59, 60։ Մարկ· ժե· 46։ (41) Մատթ· իե· 62։ (42) Ղուկ· ը· 2։ (43) Մարկ· ժե· 47։ (44) Մարկ· ժզ· 1։ (45) Ելս· ի· 10։

Digitized by Google

ԳԼ · ԻԳ

1 նբիս. հբնշատիներբ գերեզման գնացող կինկներին՝ Քրիստոսի յարութիւնն իմաց կբտան։ 9 Նորանք էլ էս համբառն ուրիշներին իմաց կբտան։ 13 Քրիստոս կ՚ամիաւտա գնացող՝ երկու աշակերտներին երեւուաւ։ 38 Կառ աշակերտներին երեւուաւ եւ իրանց անհաւատութիւնն նորանց երեսներին կըշտակէ։ 47 Նորանց պատուէր կբտայ։ 49 Մարդ ձոլին նորանց կբխոստանայ, 51 Եւ երկնքուաւ կըհամբառնայ։

1 Եայց ՚ի միաշաբաթիուն վաղ- քաջ ընդ առաւօտն եկին ՚ի գե- րեզմանն. բերին զնուանկան՝ զոր պատրաստեցին. և այլ կանայք ընդ նոսա։

2 Եւ գտին զվէմն թաւալեցուց- եալ ՚ի գերեզմանէ անտի։

3 Եւ մտեալ ՚ի ներքս՝ ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի։

4 Եւ եղև ընդ հիանալն նոցա վասն այնորիկ, և ահա արք երկու հասին առ նոսա ՚ի հանդերձս լու- սաւորս։

5 Եւ իբրև զահի հարան, և խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր, ասեն ցնոսա. Ո՞ի կընդ- րէք զկենդանին ընդ մեռեալս։

6 Չէ աստ՝ այլ յարեաւ. յի- շեցէք՝ որպէս խօսեցաւ ընդ ձեզ մինչ էրն ՚ի Գալիլեայ,

7 Եւ ասէր՝ թէ պարտ է Որդ- ւոյ մարդոյ մատնիլ ՚ի ձեռս մարդ- ոց մեղաւորաց, և ՚ի խաչ ելանել՝ և յերրորդ աւուր յառնել։

8 Եւ յիշեցին զբանն նորա։

9 Եւ դարձան պատմեցին զայս ամենայն մեսասանիցն, և այլոցն ամենեցուն։

10 Եւ էին Մարիամ Մագդա- ղենացի և Յովհաննա և Մարիամ Յակովբայ, և այլք ընդ նոսա՝ որ պատմեցին զայս առաքելոցն։

1 Եայց մեկ շաբթի օրուանէ ա- ռաւօտանց կանուխ եկին գերեզման- ն[1], և բերին էն խընկերքն, որ պատրաստեցին[2]. և ուրիշ կա- նայք էլ նորանց հետ։

2 Եւ քարըն գերեզմանիցըն հե- ռու թօլաած գտին[3]։

3 Եւ ներս մտին և Տէր Յի- սուսի մարմինըն չը գտին[4]։

4 Եւ երբոր ներսհամար շատ զարմանուվէին՝ ահա երկու մարդ հասին նորանց լուսաւոր շորերով։

5 Եւ երբոր ահով լցվեն, և խ- րանց երեսներըն դէպի երկիրն խո- նարհացրին, նորանց ասացին. Ին- չու՞ էք կենդանին մեռելներու մէջն խնդրում։

6 Այսեղ չէ, բայց յարութիւն առաւ. մարքներդ բերէք՝ ինչպէս որ (նա) ձեզ հետ խօսեց՝ երբոր Գալիլեայումն էր[5]։

7 Եւ ասում՝ թէ պէտք է, որ Որդին մարդոյ մեղաւոր մարդկանց ձեռքն մատնըվի՝ և խաչ հանվի՝ և երեք օրումն յարութիւն առնէ։

8 Եւ նորա խօսքերըն յիշեցին[7]։

9 Եւ յետ դարձան և էս ամէն բաներըս պատմեցին տասնեւմէնին և ամէն ուրիշներին[8]։

10 Եւ (նորանք) էին Մարիամ Մագդալենացին, և Յոհաննան, և Յակոբայ Մարիամն, և նորանց հետ ուրիշներն էլ՝ որ էս բաներս պատմեցին առաքեալներին[9]։

(1) Մարկ · իը · 1 : Մարկ · ժգ · 1 : Յովհ · ի · 1 : (2) Ղուկ · իգ · 56 : (3) Մարկ · իը · 3 : Մարկ · ժգ · 4 : (4) Ղուկ · 23 : Մարկ · ժգ · 5 : (5) Յովհ · ի · 13 : Գործ · ա · 10 : (6) Մարկ · ժգ · 21 : ժէ · 23 : Մարկ · ը · 31 : ի · 31 : Ղուկ · ի · 22 : (7) Յովհ · ը · 22 : (8) Մարկ · իը · 8 : Մարկ · ժգ · 10 : (9) Ղուկ · ը · 3 :

Digitized by Google

11 Եւ երկեցան առաջի նոցա չարիագործութիւն բանքն նոցա՝ և հետապային նոցա :

12 Խոյց Պետրոս յորուցեալ ընթացաւ ի գերեզմանն , և հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ զի կային . և գնաց ընդ միտս զարմացեալ . թէ զինչ եղև :

13 Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին աւուր ի գիւղ մի , որ հեռի էր յԵրուսաղէմ վաթսան ասպարիզաւ , և էր անուն նորա Եմմաուս :

14 Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամենայն անցիցն անցելոց :

15 Եւ եղև ընդ խօսելն նոցա և ընդ վիճիլ , և ինքն իսկ Յիսուս մերձեցաւ՝ և երթայր ընդ նոսա .

16 Եւ նոցա աչք կալեալ էին առ ի չճանաչելոյ զնա :

17 Եւ ասէ ցնոսա . Ո՞րինչ են բանքդ՝ վասն որոց վիճիքդ ընդ միմեանս՝ մինչ դեռ գնայիքդ , և տրտում եք :

18 Պատասխանի եւս մի ասէ ի նոցանէ՝ որում անուն էր Կղէովպաս, և ասէ ցնա . Դու միայն կաս յԵրուսաղէմ , որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ ի նմա յաւուրս յայսոսիկ :

19 Եւ ասէ ցնոսա . Ո՞րինչ . և նոքա ասեն . Ո՛Յիսուսէ Նազովրեցւոյ , որ եղև այր մարգարէ՝ հզօր արդեամբք և բանիւք առաջի Աստուծոյ , և ամենայն ժողովրդեանն :

20 Իրպէս մատնեցին զնա քահանայապետքն և իշխանքն մեր ի դատապարտութիւն մահու , և խաչեցին զնա :

11 Եւ նորանց ասածներն առասպելական խօսքեր երևեցան նորանց առաջին՝ և չէին հաւատում նորանց[10] :

12 Նայց Պետրոս վերկացաւ վազեց գերեզմանին , և նայելով տեսաւ՝ որ կտաւներն միայնակ կային[11] . և գնաց զարմանալով իրան մէջքումն , թէ ինչ էլաւ :

13 Եւ ահա նորանցից երկու հոգի հենց էն օրումն մին գիւղ էին գնում՝ որ վաթսուն ասպարիզով (Էմմաուս) Երուսաղէմից հեռու էր , և նորա անունն Էմմաուս էր[12] :

14 Եւ նորանք իրար հետ խօսում էին միմն ասեցածքանիբին համար :

15 Եւ էլաւ երբոր նորանք խօսում էին և հակառակում էին՝ հենց Յիսուս ինքն էլ մօտեցաւ՝ և գընում էր նորանց հետ[13] :

16 Եւ նորանց աչքերն բռնըված էին՝ որ չըճանաչին նորան[14] :

17 Եւ նորանց ասաց . Էդ ի՞նչ խօսքեր են՝ որ դուրանց համար իրար հետ հակառակում գնում էք , և տրտմած էք :

18 Պատասխան տուաւ նորանցից միսն , որ նորա անունն Կղէոպաս էր , և ասաց նորան[15] . Միթէ Երուսաղէմումն դու միայնակ ես մընացել՝ որ չիմացար էն բանըն , որ էս օրերումս գործվեցաւ նորանում :

19 Եւ նա ասաց նորանց . Ի՞նչ . և նորանք ասացին . Յիսուս Նազովրեցի համար՝ որ մին մարգարէ մարդ էլաւ[16] , զօրաւոր գործքերով և խօսքերով Աստուծոյ և ամէն ժողովրդի առաջին[17] :

20 Մեր ինչպէս մեր քահանայա-

(10) Ղուկ . ժգ . 11 : Այլ . 25 : (11) Յովհ . ի . 3 . 6 : (12) Մրկ . ժգ . 12 : (13) Մարկ . ժբ . 20 : Այլ . 36 : (14) Յովհ . ի . 14 : իա . 4 : (15) Յովհ . ժբ . 25 : (16) Մարկ . իա . 11 : Ղուկ . ի . 16 : Յովհ . գ . 2 : գ . 19 : ը . 14 : Գործ . ը . 22 : (17) Գործ . ի . 22 :

Digitized by Google

հանապատեաքն և իշխանքն մեր՝ի գաւառսն մահու՝ և հանին զնա՝ի խաչ :

21 Ա՝նք ակն ունէաք՝ թէ նա է՝ որ փրկելոցն իցէ զԻսրայէլ . այլև հանդերձ այսու ամենայնիւ , այս երրորդ օր է՝ յորմէ հետէ այն գործեցաւ :

22 Այլև կանայք ոմանք՝ի մէնջ զարմացուցին զմեզ . որք կանխեալ ընդ առաւօտս չորքան՝ի գերեզմանն ,

23 եւ ոչ գտին զմարմինն նորա . եկին և ասեն , թէ և տեսիլ ևս հրեշտակաց տեսին , որք ասէին ընդ նմանէ՝ թէ կենդանի է :

24 եւ գնացին ոմանք՝ի մէնջ՝ի գերեզմանն , և գտին նոյնպէս , որպէս և կանայքն ասացին . բայց զնա ոչ տեսին :

25 եւ նա ասէ ցնոսա . Ա՛վ անմիտք և հեղգասրտք՝ի հաւատալ յամենայնի , զոր խօսեցան մարգարէքն :

26 Ա՞չ զնոյնս պարտ էր չարչարիլ Ք՛րիստոսի , և մտանել՝ի փառս իւր :

27 եւ սկսեալ՝ի Ա՛ովսեսէ և յամենայն մարգարէից , մեկնէր նոցա՝ որ ինչ յամենայն գիրս գրեալ է զնմանէ :

28 Իբրև մերձեցան՝ի գեօղն յոր երթային , և նա պատճառէր հեռագոյն ևս ուրեք երթալ :

29 եւ բռնադատեցին զնա՝ և ասեն . Լո՛ մեզ ագիր , զի ընդ եւ

պեաներն և իշխանեներն մահի պատաստատին մատնեցին նորան՝ և խաչ հանեցին նորան[18] :

21 Ա՝նք յոյս ունէինք թէ նա է՝ որ Իսրայէլին ապրի փրկէ[19] . բայց ես ամենևին վիրաց , ես երեք օր է՝ որ էն գործվեցաւ :

22 Եւ էլ մեր միջնեցն մին քանի կանայք զարմացրին մեզ . որ առաւօտանց կանուխ գնացին գերեզմանն[20] ,

23 եւ նորա մարմինն չգտանն . եկին և ասացին . թէ հրեշտակների տեսիլը էլ տեսին՝ որ նորա համար ասումին՝ թէ կենդանի է :

24 Եւ մեզանից մին քանիսն գերեզմանն գնացին , և հենց էնպէս գտին , ինչպէս որ կանայքն ասացին , բայց նորան չըտեսին[21] :

25 Եւ նա ասաց նորանց . Ա՛վ անմիտներ և թուլասիրտներ հաւատալու էն ամեն բաներին՝ որ մարգարէներն խօսեցին :

26 Չէ՞ որ պէտք էր՝ որ հենց էնպէս Ք՛րիստոսն չարչարվի , և իրան փառքն մտնէ[22] :

27 Եւ սկսեց[23] Մ՛օսէսիցն[24] և ամեն մարգարէներիցն[25] , մեկնումեր նորանց՝ ամեն ինչ որ գրված էր իրան համար :

28 Երբոր մօտեցան էն գիւղին , որ գնումին՝ նա էնպէս ցոյց էր տալիս՝ թէ մին աւելի հեռու տեղ է գնալու[26] :

29 Եւ բռնադատեցին նորան և ասացին[27] . Ա՛ռ մեզ մնա մնա , ինչու որ՝

(18) Լ՚սաւ . խդ . 1 : Գործ . ժգ . 27 , 28 : (19) Լ՚սաւ . ա . 68 : բ . 38 : Գործ . ա . 6 : (20) Մատթ . իը . 8 : Մարկ . ժչ . 10 : Ա՚ոք . 9 . 10 : Հովհ . բ . 18 : (21) Ա՚ոք . 12 : (22) Ի՚սյ . 50 : Գործ . ժէ . 3 : ա Պետր . ա . 11 : (23) Ա՚սյր . 44 : (24) Ելնդ . գ . 15 : իը . 18 : իչ . 4 : իթ . 10 : Թուոց . իա . 9 : բ Օրին . ժը . 15 : (25) Սամ՚ժ . 9 , 10 : իբ . Ա՚ր . 11 : Ելսայ . է . 14 : ը . 6 : իա . 10 , 11 : ծ . 6 . ծգ : Երեմ . իա . 5 : ի՚ց . 14 , 15 : Հզեկ . ը . 23 : լէ . 25 : Դան . թ . 24 : Միք . է . 20 : Մա՚զ . գ . 1 : գ . 2 : Հովհ . ա . 45 : (26) Ելնդ . լբ . 26 : իը . 7 : Մարկ . չ . 48 : (27) Ելնդ . ժթ . 3 : Գործ . ժչ . 15 :

Digitized by Google

բնակ է՝ և տարածականալ ի օրս ,
և նմանս տգանել անդ ընդ նոսա :

30 Եւ եղև ՚ի բազմելն նորա ընդ
նոսա , առեալ զՀացն՝ օրհնեաց , ե-
բեկ և եաս նոցա :
31 Եւ նոցա բացան աչք՝ և ծանե-
ան զնա . և նա եղև ՚ի նոցանէ
անհետացեալ :
32 Եւ ասեն ցմիմեանս . Ոչ խակ
և սիրտք մեր ճմլէին ՚ի մեզ՝ մինչ
խօսէրն ընդ մեզ ճանապարհայն .
և ճշդէս բանայր մեզ զգիրս :

33 Եւ յարուցեալ նոյնժամայն՝
գարձան Երուսաղէմ , և գտին
ժողովեալ զմեսասանսն՝ և զորս ընդ
նոսայն էին :
34 Եւ ասեն՝ Թէ Յարուցաւ Յոր-
նաս Տէր՝ և երևեցաւ Սիմոնի :

35 Եւ նոքա պատմէին զայն՝ որ
ճանապարհայնն , և թէ ճանաչեցաւ
ծանօթա նոցա ՚ի բեկանել հացին :

36 Ի՚նչգնեւ զայն խօսէին , ինքն
իսկ Յիսուս եկաց ՚ի մէջ նոցա՝ և
ասէ ցնոսա . Խաղաղութիւն ընդ
ձեզ . ես եմ , մի՛ երկնչիք :

37 Եւ ահի հարեալ երկնչէին .
և համարէին ոգի ինչ տեսանել :

38 Եւ ասէ ցնոսա . Ո՚ւր խռովեալ
էք՝ և ընդէր խորհուրդք ելանեն ՚ի
սիրտս ձեր :
39 Տեսէք զձեռս իմ և զոտս , զի
ես նոյն եմ . շօշափեցէք զիս և
տեսէք . զի ոգի՝ մարմին և ոսկերս
ոչ ունի , որպէս զիս տեսանէք զի
ունիմ :
40 Եւ զայս ասացեալ՝ նոյնպէս նոցա
զձեռսն և զոտս :

խրիխուն ի և օրս անդ ՚ի կացել՝ և
մնալ որ ՚նորանց հետ էնանդ մը-
նայ :
30 Եւ էլաւ : կրցար նա նորանց
հետ տեղան նստաց , հացին առաւ՝
օրհնեց , կարեց և տուաւ նորանց[28] :
31 Եւ նորանց աչքերն բացվան՝
և նորան ճանաչեցին . և նա անե-
րևոյթ էլաւ նորանցից :
32 Եւ իրար ասացին . Ո՚ր որ
հենց մեր սրտերս հալխուվին մե-
զանում՝ երբոր ճանապարհուն մեզ
հետ խոսուվեր , և ինչպէս գրքերըն
բաց էր անում մեզ համար :
33 Եւ շուտով վերկացան՝ յետ
գարձան Երուսաղէմ , և էն տաս-
նումընին ժողովված գտին , և նո-
րանց էլ՝ որ նորանց հետ էին :
34 Եւ ասացին . Թէ Իրաւ որ՝
Տէրն յարութիւն առաւ՝ և երևե-
ցաւ Սիմոնին[29] :
35 Եւ նորանք պատմուվին էն՝
որ ճանապարհումն էլաւ , և թէ
ինչպէս իրան ճանաչացուց իրանց
հաց կարնելոյ ժամանակն :
36 Ո՚նց քանի որ էս խոսուվին ,
հենց ինքն Յիսուս կանգնեց նորանց
միջումն և նորանց ասաց . Խաղա-
ղութիւն (լինի) ձեզ հետ՝ ես եմ .
մի՛ վախենաք[30] :
37 Եւ ահուվ լցված վախեցան ,
և համարուվին՝ թէ հոգի են տես-
նում[31] :
38 Եւ նորանց ասաց . Ինչմի էք
շփոթված՝ ինչմի համար խորհուրդ-
ներ են վերկնում ձեր սրտերումն :
39 Տեսէք իմ ձեռներըս և ոտ-
ներըս՝ որ հենց ես էն եմ . բռնե-
ցէք ինձ և տեսէք . զի ոգի՝ մարմին և ոսկերք չունի , ինչ-
պէս որ ինձ տեսնուվէք որ ունիմ[32] :
40 Եւ էս որ ասաց , ձեռներըն և
ոտներըն ցոյց տուաւ նորանց :

(28) Մարկ . ժգ . 19 : (29) ա Կորնթ . ժե . 5 : (30) Մարկ . ժգ . 14 : Ղուկ . խ . 19 : ա Կորնթ . ժե . 5 : (31) Մարկ . գ . 49 : (32) Ղուկ . խ . 20 . 27 :

Digitized by Google

41 Եւ մինչդեռ տակաւին չէ-
տասային՝ ի խնդութենէն՝ և զար-
մացեալ էին, ասէ ցնոսա. Ունի՞ք
ինչ կերակուր ասա՛ :
42 Եւ նոքա եառն նմա ձկան խո-
րովելոյ մասն, և խորիսխ մեղու՝ :

43 Եւ առ՝ եկեր առաջի նոցա, և
զմնացորդսն եա նոցա :

44 Եւ ասէ ցնոսա. Ա՛յս բանք
են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ
ձեզն էի, թէ պարտ է լնուլ ամե-
նայն գրելոցն յօրէնսն Մովսէսի և
ի մարգարէս և ի սաղմոսն վասն
իմ :
45 Յայնժամ եբաց զմիտս նոցա ի-
մանալ զգիրս :

46 Եւ ասէ ցնոսա, թէ Ա՛յսպէս
պարտ էր չարչարիլ Ք՛րիստոսի, և
յառնել ի մեռելոց յաւուր եր-
րորդի .
47 Եւ քարոզել յանուն նորա ա-
պաշխարութիւն և թողութիւն մե-
ղաց յամենայն ազգս՝ սկսեալ յԵ-
րուսաղեմէ :
48 Եւ դուք էք վկայք այսոցիկ :

49 Եւ ահա ես առաքեմ զաւետիս
Հօր իմոյ ի ձեզ. և դուք նստա-
րուք ի քաղաքին Երուսաղէմ,
մինչև զգենուցուք զօրութիւն ի
բարձանէ :
50 Եհան զնոսա մինչև ի Լե-
թանիա, և ամբարձեալ զձեռս իւր՝
օրհնեաց զնոսա :

41 Եւ դեռ քանի որ չկին հաւա-
տալ ուրախութենէն և զարմացած
էին[33]. Նորանց ասաց. Ունի՞ք հո-
կուր ուտելիք հասա՞ղ[34] :
42 Եւ նորանք խորոված ձկան կը-
տոր տուին նորան՝ և մեղրի հաւկի
կտոր :
43 Եւ առաւ կերաւ նորանց ա-
ռաջին, և ասելացածներէն աւե-
նորանց[35] :
44 Եւ ասաց նորանց. Ա՛յս են բա-
ներն են՝ որ ձեզ հետ խօսեցի՝ քանի
որ ձեզ հետ էի, թէ Ա՛ստիճան պէտք է
կատարվի՝ որ Մովսէսի օրէնքին և
մարգարէներուն և սաղմոսներուն
հինձ համար գրվածք[36] :
45 Այն ժամանակին նորանց մտքնե-
րըն բացարաւ՝ որ գրքերըն իմա-
նան[37] :
46 Եւ նորանց ասաց. Թէ Ա՛յսպէս
պէտք էր[38], որ Ք՛րիստոսն չարչար-
վի՝ և երեք օրուան մեռելներէն ա-
ջինն յարութիւն առնէ .
47 Եւ նորա անունովն ապաշխա-
րութիւն և մեղաց թողութիւն քա-
րոզվի[39] ամէն ազգերի միջումն Ե-
րուսաղէմիցն սկսած[40] :
48 Եւ դուք էք էս բաներիս հա-
մար վկայ[41] :
49 Եւ ահա ես իմ Հօրս աւե-
տիքըն կուղարկեմ ձեզ վրայ. և
դուք նստեցէք Երուսաղէմ քաղա-
քումն՝ մինչև վերևիցն զօրութիւն
հագնիք[42] :
50 Եւ նորանց հանեց մինչև Լե-
թանիա. և իւրան ձեռներըն բարձ-
րացուց և նորանց օրհնեց[43] :

(33) Ղուկ. խե. 26 : (34) Յովհ. խա. 5 : (35) Գործ. ժ. 41 : (36) Մատթ. ժգ. 21 : ժե. 22 : ի. 18 : Մարկ. ը. 31 : Ղուկ. բ. 22 : ժը. 31 : Ա Կոր. 6 : (37) Գործ. ժգ. 14 : (38) Ա Կոր. 26 : Ասմ. իբ. Նոյն. ծ. 6 : ծգ. 2 : Եսայի. Գործ. ժե. 3 : (39) Ղուկ. բ. 24 : Գործ. ժգ. 38 . 46 : ա Յովհ. բ. 12 : (40) Ղուկ. Նշնդ. ժբ. 3 : Ասմ. իբ. 27 : Նոյն. խԲ. 6 . 22 : Նբմ. լ. 34 : Ովսէ. բ. 23 : Միխ. գ. 2 : Մատ. ա. 11 : (41) Յովհ. ժե. 27 : Գործ. ա. 8 . 22 : բ. 32 : գ. 15 : (42) Նոյն. խգ. 3 : Յովհ. բ. 28 : Յովհ. ժգ. 16 . 26 . ժե. 26 : ժզ. 7 : Գործ. ա. 4 : բ. 1 , Եսայի : (43) Գործ. ա. 12 .

Digitized by Google

51 Եւ եղև յօրինելն նորա զնո-
սա, մեկնեցաւ ՚ի նոցանէ, և վե-
րանայր յերկինս։

52 Եւ նոքա երկրպագեալ նմա՝
գարձան յԵրուսաղէմ ուրախա-
թեամբ մեծաւ։

53 Եւ էին համապազ ՚ի տաճա-
րին, գովէին և օրհնէին զՂ՚աս-
ուած։

51 Եւ էլաւ՝ դեռ որ նա օրհնու-
մէր նորանց՝ հեռացաւ նորանցից,
և դէպի երկինքն վերանումէր[44]։

52 Եւ նորանք երկրպագութիւն
արին նորան, և մեծ ուրախութե-
նով յետ դարձան Երուսաղէմ[45]։

53 Եւ ամէն ժամանակ տաճա-
րումն էին[46]. գովաբանէին և օրհնու-
մէին Ղ՚աստուծոյն։

(44) գ Թագ. բ. 11։ Ումբ. ժգ. 19։ Յով. ի. 17։ Գործ. ա. 9։ Եփես. գ. 8։ (45) Ումբ. խգ. 9. 17։ (46) Գործ. բ. 46։ ե. 42։

Digitized by Google

ԵՒԹՏԸՐԸՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Վերնասեան Աստուածաբանութեանն մարդկութեանն և պաշտօնին : 15 Յովհաննէսի վկայութիւնը : 39 Ընդբեսի և պետրոսի կանչելին :

1 Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն :

2 Նա էր ի սկզբանէ առ Աստուած :

3 Ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղեն :

4 Նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդկան.

5 Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև ընդունել :

6 Եղև այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս :

7 Սա եկն ի վկայութիւն՝ զի

1 Սկզբովն էր Բանն[1], և Բանն Աստուծոյ մօտ էր[2], և Բանն Աստուած էր[3] :

2 Նա սկզբումն Աստուծոյ մօտ էր[4] :

3 Ամէն ինչ նորանով էլաւ, և առանց նորան իսկի ոչ ինչ չէլաւ, ինչ որ էլաւ[5] :

4 Նորանով կեանքն էր[6], և կեանքն մարդկանց լոյսն էր[7] :

5 Եւ լոյսն խաւարումն լոյս էր տալիս, և խաւարն՝ չիմացաւ նորան[8] :

6 Մի մարդ էլաւ Աստուածանից ուղարկված, որ նորա անունն Յովհաննէս (էր)[9] :

7 Սա վկայութեան համար եկաւ,

(1) Աւետ. ը. 23, 23, Եսայի. պզ. ա. 17 : ա Յովհ. ա. 1 : Յայտ. ա. 2 : ժբ. 13 : (2) Աւետ. ը. 30 : Յովհ. ժէ. 5 : ա Յովհ. ա. 2 : (3) Փիլիպ. բ. 6 : ա Յովհ. է. 7 : (4) Ննջեց. ա. 1 : (5) Սաղմ. լգ. 6 : վայր. 10 : պզ. ա. 16 : Եփես. գ. 9 : Եբր. ա. 2 : Յայտ. դ. 11 : (6) Յովհ. է. 26 : ա Յովհ. է. 11 : (7) Յովհ. ը. 12 : բ. 5 : ժբ. 35. 36 : (8) Յովհ. գ. 19 : (9) Մտթ. գ. 1 : Մարկ. գ. 1 : Ղուկ. գ. 2 : վայր. 33 :

Digitized by Google

զԱստուածէ վասն Լուսոյն · զի ամենեքին հաւատասցեն նովաւ ։

8 Ոչ էր նա Լոյսն · այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն ։

9 Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գայ ի յաշխարհս ։

10 Յաշխարհի էր, և աշխարհս նովաւ եղեւ. և աշխարհս զնա ոչ ծանեաւ ։

11 Յիւրոն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան ։

12 Որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել՝ հաւատասցեալ յանուն նորա ։

13 Որք ոչ յարենէ և ոչ ի կամս մարմնոյ և ոչ ի կամս առն, այլ յԱստուծոյ ծնան ։

14 Եւ Բանն մարմին եղեւ՝ և բնակեաց ի մեզ. և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև միածնի առ ի Հօրէ, լի շնորհօք և ճշմարտութեամբ ։

15 Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց և ասէ. Այս է զորմէ ասէի, Որ զկնի իմ գալոցն էր՝ առաջի իմ եղեւ. զի նախ քան զիս էր ։

16 Զի ի լրութենէ անտի նորա՝ մեք ամենեքեան առաք շնորհս փոխանակ շնորհաց ։

որ Լուսոյ հաւատաք վկայէ. որ ամենեքեան նորաւնով հաւատասցեն[10] ։

8 Նա չէր Լոյսն, բայց որ Լուսոյն համար վկայէ ։

9 (Նա) էր ճշմարիտ Լոյսն, որ ամէն մարդոյն լուսաւորէ ի անուամբ որ էս աշխարհքս գալու է[11] ։

10 Աշխարհքումն էր, և աշխարհքն նորանով եղաւ[12], և աշխարհքն չընճանաչեց նորան ։

11 Իրանեարին մէջ եկաւ, և իրաններն չընդունեցին նորան[13] ։

12 Այլ նորանք՝ որ նորան ընդունեցին՝ իշխանութիւն տուաւ նոքանց՝ որ Աստուծոյ որդիք լինին[14]. նորանց որ նորա անունին հաւատումն ։

13 Որ նորանք ոչ արիւնից և ոչ մարմնոյ կամքից, և ոչ մարդոյ կամքից, բայց Աստուածանից ծնանին[15] ։

14 Եւ Բանն[16] մարմին[17] էլաւ՝ և մեր միջումն բնակվեցաւ[18]. և նորա փառքն տեսինք ինչպէս Հօրիցն էլած միածին Որդոյ փառքն[19]. շնորհքով՝ և ճշմարտութեամբ լիքն[20] ։

15 Յովհաննէս վկայումէ նորա համար[21]. աղաղակեց և ասաց, Այս է՝ որ սորա համար ասումէի, թէ Նա որ ինձանից եաւս գալու էր[22], ինձանից առաջ էլաւ. ինչու որ՝ նա ինձանից առաջ էր[23] ։

16 Ինչու որ՝ նորա լիութենիցն մենք ամենքս շընորհք առինք՝ շընորհքի տեղ[24] ։

(10) Գործ · ԺԶ · 4 ։ (11) Վէր · 4 ։ Նոյ · խԶ · 6 ։ ա Յովհ · բ · 8 ։ (12) Վէր · 3 ։ Նբէ · ա · 2 ։ ժա · 3 ։ (13) Ղուկ · ԺԶ · 14 ։ Գործ · գ · 26 ։ ԺԳ · 46 ։ (14) Նոյ · ծզ · 5 ։ Հռովմ · ը · 15 ։ Գաղ · գ · 26 ։ բ Պետր · ա · 4 ։ ա Յովհ · գ · 1 ։ (15) Յովհ · գ · 5 ։ Յովհ · ա · 13 ։ ա Պետր · ա · 23 ։ (16) Մատթ · ա · 16 · 20 ։ Ղուկ · ա · 31 · 35 ։ բ · 7 ։ ա Տիմ · գ · 16 ։ (17) Նբէ · բ · 11 · 14 · 16 · 17 ։ (18) Հռովմ · ա · 3 ; Նոյն ։ (19) Նոյ · խ · 5 ։ Մատթ · ԺԷ · 2 ։ Յովհ · բ · 11 · ժա · 40 ։ բ Պետր · ա · 17 ։ (20) Կող · ա · 19 ։ բ · 3 · 9 ։ (21) Վէր · 33 ։ Յովհ · գ · 33 · ե · 33 ։ (22) Մատթ · գ · 11 ։ Մարկ · ա · 7 ։ Ղուկ · գ · 16 ։ Վէր · 27 · 30 ։ Յովհ · գ · 31 ։ (23) Յովհ · բ · 58 ։ Կող · ա · 17 ։ (24) Յովհ · գ · 34 ։ Նբէ · ա · 6—8 ։ Կող · ա · 19 ։ բ · 9, 10 ։

Digitized by Google

17 Օ՚ի օրէնքն ՚ի ձեռն Մ՚ովսէսի տուան . շնորհքն և ճշմարտութիւն ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն :
18 Ոչ ոք եառնս երբեք , բայց միածինն Որդի որ է ՚ի ծոց Հօր , նա պատմեաց :

19 Եւ այս է վկայութիւնն Յովհաննու , յորժամ առաքեցին առ նա Հրէայքն Երուսաղէմէ քահանայս և Ղեւտացիս , զի հարցցեն ցնա՝ Թէ Դու ո՞ ես :

20 Եւ խոստովան եղև , և ոչ ուրացաւ . խոստովան եղև , եթէ Ես ոչ եմ Քրիստոսն :
21 Եւ հարցին ցնա . Իսկ ոմն ես դու , Եղիա՞ ես . և ասէ . Ոչ եմ . Իսկ մարգարէն ես դու . պատասխանի ետ՝ Թէ Ոչ :

22 Իսկ ասա մեզ՝ Դու ոմն ես , զի պատասխանի տարցուք՝ որոց առաքեցինն զմեզ . զի՞նչ ասես վասն քո :
23 Ասէ . Ես՝ ձայն բարբառոյ յանապատի . ուղիղ արարէք զճանապարհս Տեառն , որպէս ասաց Եսայի մարգարէ :

24 Եւ որք առաքեցանն՝ ՚ի փարիսեցւոց անտի էին :
25 Հարցին ցնա՝ և ասեն . Իսկ զի՞ մկրտես՝ Եթէ դու չես Քրիստոսն , և ոչ Եղիա , և ոչ մարգարէն :
26 Պատասխանի ետ նոցա Յովհաննէս և ասէ . Ես մկրտեմ զջրով

17 Պատճառն որ՝ օրէնքն Մ՚ովսէսի տրվաւ[25] . շնորհքն[26] և ճշմարտութիւնն Յիսուսի Քրիստոսի ձեռնվէ էլաւ[27] :
18 Ո՚չ ով չէ տեսաւ Աստուծոյն իսկի միւս ժամանակ[28] , բայց միածին Որդին՝ որ Հօր ծոցումն է՝ նա պատմեց[29] :

19 Եւ էս է Յօհաննէսի վկայութիւնն , երբոր Հրէաներն (Քհոպնէքն) Երուսաղէմիցն քահանաներ և Ղեւտացիներ ուղարկեցին նորա մօտ՝ որ հարցնեն նորան՝ Թէ Դու ովվ ես[30] :
20 Եւ (նա) խոստովանեցաւ՝ և չէ ուրացաւ . և խոստովանեցաւ՝ Թէ Ես չեմ Քրիստոսն[31] :
21 Եւ նորան հարցրին . Ո՚պա դու ովվ ես . միթէ Եղիա՞ն ես[32] . և ասաց . Չեմ . Ո՚պա մարգարէն ես դու[33] . պատասխան առաւ՝ Թէ Չէ :
22 Ո՚պա ասա մեզ , Դու ովվ ես , որ պատասխան տանենք նորանց , որ մեզ ուղարկեցին . ի՞նչ ես ասում քեզ համար :
23 Ո՚ասց . Ես եմ՝ ձայն կանչօղի անապատումն (չէօլըմ)՝ Թէ չիտակեցէք Տէրի ճանապարհն[34] , ինչպէս որ Եսայի մարգարէն ասաց[35] :
24 Եւ նորանք՝ որ ուղարկվեցան , փարիսեցիներից էին :
25 Նորան հարցրին և ասացին . Ո՚պա ինչու՞ ես մկրտում , եթէ դու ոչ Քրիստոսն ես , և ոչ Եղիան , և ոչ էլ մարգարէն :
26 Յօհաննէս պատասխան առաւ նորանց և ասաց . Ես ջրով եմ

(25) Նէ · բ · 1 , Լաւկ · բ Օրին · գ · 44 · ե · 1 · լգ · 4 : (26) Հովհ · գ · 24 · ե · 21 · չ · 14 : (27) Յովհ · ը · 32 · ժգ · 6 : (28) Նէ · լգ · 20 · բ Օրին · գ · 12 : Մաթ · ժա · 27 : Ղ՚ևտ · ժ · 22 : Յովհ · չ · 46 · ա Տիմ · ա · 17 · չ · 16 : ա Յովհ · դ · 12 · 20 : (29) Աիր · 14 : Յովհ · գ · 16 · 18 : ա Յովհ · դ · 9 : (30) Յովհ · ե · 33 : (31) Ղ՚ևտ · դ · 15 : Յովհ · գ · 28 : Գործ · ժգ · 25 : (32) Մտ · դ · 5 : Մաթ · ժե · 10 : (33) բ Օրին · ժը · 15 · 18 : (34) Մաթ · գ · 3 : Մրկ · ա · 3 : Ղ՚ևտ · գ · 4 : Յովհ · գ · 28 : (35) Նոռյ · ի · 3 :

Digitized by Google

ջրով · ՚ի միջի ձերում կայ , զոր գուբն ոչ գիտէք ։

27 Որ զկնի իմ գալոցն է , որ առաջի իմ եղև · որում չեմ արժանի՝ եթէ լուծից զկօշկացս նորա ։

28 Ա՛յս ՚ի Ներթաբրայ եղև յայնկոյս Յորդանանու , ուր էրն Յովհաննէս՝ և մկրտէր ։

29 ՚ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս՝ զի գայր առ նա , և ասէ · Ա՛հաւասիկ Գառնն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի ։

30 Այս է՝ վասն որոյ ես ասէի , զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղև , զի յառաջ իսկ էր քան զիս ։

31 Եւ ես ոչ գիտէի զնա · այլ զի յայտնի լինիցի Իսրայէլի , վասն այնորիկ եկի ես ջրով մկրտել ։

32 Վկայեաց Յովհաննէս և ասէ , թէ Տեսանէի զՅոգին՝ զի իջանէր իբրև զաղաւնի յերկնից , և հանգչէր ՚ի վերայ նորա ։

33 Եւ ես ոչ գիտէի զնա · այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս · Յոր վերայ տեսանիցես զՅոգին , զի իջանիցէ և հանգչիցի ՚ի վերայ նորա , նա է՝ որ մկրտէ Յոգւովն Սրբով ։

34 Եւ ես տեսի և վկայեցի՝ եթէ Այս է Որդին Աստուծոյ ։

35 ՚Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս , և յաշակերտաց անտի նորա երկուս ։

մկրտում ձեզ[36] · ձեր միջումն կայ (մինն)՝ որ դուք նորան չէք գիտում[37] ։

27 Որ նա ինձանից եւս գալոց է , որ ինձանից առաջ էլաւ[38] · որ ես արժանի չեմ՝ որ նորա կօշկակապերի կապանքըն արձակեմ ։

28 Այս Ներթաբրայումն էլաւ ; Յորդանանի էն կողմն · որ աեղ որ Յովհաննէսն էր՝ և մկրտում էր[39] ։

29 Յետևի օրումն (Յովհաննէս) տեսաւ Յիսուսին՝ որ իրան մօտ էր գալիս , և ասաց · Ա՛հա Աստուծոյ Գառնն[40] որ աշխարհի մեղքըն վեր է առնում[41] ։

30 Այս է՝ որ որոց համար ես ասում էի՝ թէ ինձանից եւս մարդ կըգայ՝ որ ինձանից առաջ էլաւ · ինչուր՝ նա հենց ինձանից առաջ էր[42] ։

31 Եւ ես նորան չէի գիտում · բայց որ յայտնի լինի Իսրայէլին՝ նրա համար ես եկի որ ջրով մկրտեմ[43] ։

32 Յովհաննէսն վկայեց և ասաց · թէ Տեսնում էի Հոգին՝ որ աղաւնոյ պէս վեր էր գալիս երկնքիցն՝ և նորա վերայ մնում[44] ։

33 Եւ ես չէի գիտում նորան · բայց նա որ ինձ ուղարկեց՝ որ ջրով մկրտեմ , նա ասաց ինձ · Թէ Ում վերայ տեսնես որ Հոգին վեր գայ և նորա վերայ մնայ՝ նա է որ Սուրբ Հոգովն կրմկրտէ[45] ։

34 Եւ ես տեսի և վկայեցի՝ թէ Այս է Աստուծոյ Որդին ։

35 Յետևի օրումն Յովհաննէսն կանգնած էր՝ և երկու հոգի էլ նորա աշակերտներից ։

(36) Մարկ · գ · 11 ։ (37) Մաղ · գ · 1 ։ (38) Ա՛ր · 15 ։ Ա՛այր · 30 ։ Գործ · ԺԳ · 4 ։ (39) Ղուկ · է · 24 ։ Յովհ · ժ · 40 ։ (40) Ես՛ · ԺԸ · 3 ։ Ես՛այ · ԾԳ · 7 ։ Ա՛այր · 36 ։ Գործ · ը · 32 ։ ա Պետր · ա · 19 ։ Յայտ · է · 6 , Ս՛այլն ։ (41) Ես՛այ · ԾԳ · 11 , ա Կորնթ · ԺԵ · 3 ։ Գաղ · ա · 4 ։ Եբր · ա · 3 ։ բ · 17 ։ ԺԲ · 28 ։ ա Պետր · բ · 24 ։ գ · 18 ։ ա Յովհ · բ · 2 ։ գ · 5 ։ դ · 10 ։ Յայտ · ա · 5 ։ (42) Վ՛էր · 15 · 27 ։ (43) Մաղ · գ · 1 ։ Մարկ · գ · 6 ։ Ղ՛ուկ · ա · 17 · 76 , 77 ։ գ · 3 , 4 ։ (44) Մարկ · գ · 16 ։ Մատ · ա · 10 ։ Ղ՛ուկ · գ · 22 ։ Յովհ · է · 32 ։ (45) Մարկ · գ · 11 ։ Գործ · ա · 5 ։ բ · 4 ։ ժ · 44 ։ ԺԲ · 6 ։

Digitized by Google

36 Եւ նայեցեալ ընդ Յիսուսի՝ զի գընայր, ասէ. Ահա՛ տիկ Աստուածոյ։
37 Լուան՝ ի նմանէ երկու աշակերտացն՝ զի խօսէր, և գնացին ընդ Յիսուսի։
38 Իրրև դարձաւ Յիսուս և եւտես զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ ցնոսա. Ո՞ի՛նչ խնդրէք. Նոքա ասեն ցնա. Վարդի, որ թարգմանեալ կոչի վարդապետ, ո՞ւր են օթևանք քո։

39 Ասէ ցնոսա. Եկա՛յք և տեսէք. եկին և տեսին՝ ուր էին օթևանք նորա. և առ նմա մնան այն օր, զի ժամ էր իրրև տասներորդ։

40 Էր Անդրէաս եղբայր Սիմոնի Պետրոսի, մի յերկուց անտի, որ լուան ի Յովհաննէ՝ և գնացին զկնի նորա։
41 Գտանէ՛ նա նախ զեղբայրն իւր զՍիմոն, և ասէ ցնա. Գտաք զՄեսիա՝ որ թարգմանի Քրիստոս։

42 Ած զնա առ Յիսուս. Հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ. Դու ես Սիմոն որդի Յովնանայ, դու կոչեցիս Կեփա, որ թարգմանի Պետրոս։
43 Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ի Գալիլեա. գտանէ զՓիլիպպոս, և ասէ ցնա Յիսուս. Ե՛կ զկնի իմ։
44 Եւ էր Փիլիպպոս ի Հեղափիթեայ, ի քաղաքէ Անդրէայ և Պետրոսի։
45 Գտանէ Փիլիպպոս զՆաթանայէլ, և ասէ ցնա. Օրէնքն գրեաց Մովսէս յօրէնսն՝ և մարգարէքն. գտաք զՅիսուս զորդի

36 Եւ մտիկ տուաւ Յիսուսին՝ որ մանէր գալիս, և ըսաւ. Ահա՛ (էհե) Գրիսաոան Աստուծոյ Գառն[46]։
37 Եւ եղկու աշակերտներն լսեցին ընդրանից՝ որ խօսուէր, և Յիսուսի երթէն գնացին։
38 Երբոր Յիսուս դարձաւ և նայեցաւ տեսաւ՝ որ գինուածին իրեան երթան եւ ուզեն՝ ուրանց ասաց. Ի՞նչ էք ուզում. Ուրանք ատացին ուրան. Ռաբբի՝ (որ թարգմանուած ասուածի՝ վարդապետ.) քա գինակոնն գիրեղ է։
39 Ուրանց ատաց. Եկէք և տեսէք. եկին և տեսին՝ որ տեղ որ նստա բնակարանն էր. և կն օրն նստա մօտ մնացին, ինչա՝ որ՝ տասն ժամի (սահմէն) մօտ էր։
40 Ընդրեան վէմ Սիմոնի եղբայրն էն երկուսիցն մինն էր՝ որ Յոհաննէսիցն լսեցին և նորա հետէն գնացին[47]։
41 Սա առաջ իրան Սիմոն եղբօրն գտաւ և ուրան ասաց. Գտանք՝ որ կըթարգմանի Քրիստոս։
42 Սա նորան բերաւ Յիսուսի մօտ. Յիսուս նորան մտիկ տուաւ և ասաց. Դու Սիմոնն ես Յոնանի որգին. դու պիտի կոչուիս Կեփա, որ կըթարգմանուի Պետրոս[48]։
43 Յետևի օրուանն կամեցաւ, որ գուրա գնայ Գալիլեայ. Փիլիպպոսին գտաւ, և Յիսուս նորան ասաց. Իմ եթէրէս եկ։
44 Եւ Փիլիպպոս Յեթսայիմացին էր, Անդրէասի և Պետրոսի քաղքիցն[49]։
45 Փիլիպպոսն գտաւ Նաթանայէլին՝ և նորան ասաց[50]. Գա որ նա բուա Հասար Գ՝ օսէսն օրէնքուանն գրեց[51] և մարգարէներն[52], գտինք

(46) Գէր · 29 : (47) Մատթ · դ · 18 : (48) Մատթ · ժգ · 18 : (49) Յովհ · ժբ · 21 : (50) Յովհ · ի · 3 : (51) Ղեւտ · գ · 15 : Թիւ · 10 : բ Օրին · ժբ · 18 : Գաղատ · իգ · 27 : (52) Նաւղ · դ · 3 : է · 14 : բ · 6 : ծգ · 3 : Ամո · ե · 2 : Օսէ · գ · 12 : բ · 9 ·

Digitized by Google

Յաջնեփակս ՚ի ՚Ասղաբելեմ ։

46 Ա՛րե ցնա ՚Ասթանայել . Վակ ՚ի ՚Ասղաբելեմ մոգքի ի՞նչ իցե բարուդ իմիք լինել . ասէ ցնա Փիլիպպոս . Եկ և տես ։

47 Իսկզև եհաս Յիսուս զ՚Ասթանայել զի գայր առ նա , ասէ վասն նորա . Ա՛հա արդարև Իսրայելացի՝ յորում նենգութիւն չէ գոյ ։

48 Ա՛րե ցնա ՚Ասթանայել . Ո՞րպէս ճանաչես զիս . Պատասխանի եհա Յիսուս և ասէ ցնա . Ա՛յն ժամանակ էր փիլիպպոսի կոչեցնել զքեզ՝ զի եկիր ՚ի ներքոյ թզենւոյ , տեսի զքեզ ։

49 Պատասխանի եհա նմա ՚Ասթանայել և ասէ . Ուսո՛ւցի՛ դու ես Վարդի Յաւուծոյ , Դու ես Թագաւորն Իսրայէլի ։

50 Պատասխանի եհա նմա Յիսուս և ասէ . փոխանակ զի ասացի քեզ՝ Թէ տեսի ՚ի ներքոյ թզենւոյն , Տեսանես , մեծամեծս ևս քան զայս տեսցես ։

51 Եւ ասէ ցնա . Ա՛մէն ամէն ասեմ ձեզ . տեսանիցէք զերկինս բացեալ՝ և զՀրեշտակս Յաւուծոյ՝ զի ելանիցեն և իջանիցեն ՚ի վերայ Մարդոյ Որդւոյ ։

Յիսուսին Նազարէի որդւոյն ՚Ասղաբէթիցն[53] ։

46 ՚Ասթանայելն ետուն ասաց . Միթէ կարելի՞ է որ ՚Ասղաբէթիցն բարի բան լինի՝ փիլիպպոս նորան ասաց . Եկ և տես[54] ։

47 Երբոր Յիսուս տեսաւ ՚Ասթանայէլին՝ որ իրան մոտ էր գալիս՝ ասաց նորա համար . Ա՛հա ուղղդ Իսրայելացի[55] . որ նորանում խաբեութիւն չկայ ։

48 ՚Ասթանայէլն ասաց նորան . Ո՞նց տեղից ես ճանաչում ինձ . Յիսուս պատասխան տուաւ և նորան ասաց . Մեռ որ փիլիպպոս քեզ չէր կանչել՝ որ թզի ծառի տակն էիր՝ քեզ տեսի ։

49 ՚Ասթանայէլն պատասխան տուաւ նորան և ասաց . Ո՛ւսո՛ւցի՛ դու ես Յաւուծոյ Որդին[56] , Դու ես Իսրայէլի Թագաւորն[57] ։

50 Յիսուս պատասխան տուաւ նորան և ասաց . Որովհետև ասացի քեզ՝ Թէ թզի ծառի տակն տեսի քեզ՝ հաւատում ես . սրանից էլ աւելի մեծ բաներ կըտեսանես ։

51 Եւ նորանից ասաց . Ա՛մէն ամէն ձեզ ասում եմ՝ Թէ (արանից ետև) երկինքն բացված կըտեսնէք , և Յաւուծոյ հրեշտակները՝ որ վեր կելլին և վեր կըգան Որդի մարդոյ վերայ[58] ։

ԿԱ · Ր

1 Երբեմն լուրն գինի կանէ ; 12 Պափառնայում և Երուսաղէմ կըգնայ ; 14 Նա ծախողներն և գնողներն տաճարից կըհանէ ։ 19 Իրան մահ և յարութիւն առնելն առաջուց կասէ ։ 23 Շատ մարդիք իրան հրաշքներին համար կըհաւատան նորան , բայց ինքն իրան անոքն չէր հաւատալ նորանց ։

1 Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ՚ի Կանա Գալիլեացւոց . և անգ էր մայրն Յիսուսի ։

1 Եւ եղբորդ օրումն հարսանիք էր Գալիլեացոց Կանայումն . և Յիսուսի մայրն էնտեղ էր՝ ։

(53) Մատթ . բ . 23 ։ Ղուկ . բ . 4 ։ (54) Յովհ . ի . 41 , 42 . 58 ։ (55) Իսմ . լբ . 2 ։ հգ . 1 ։ Յովհ . բ . 30 ։ Հռոմ . բ . 28 , 29 ։ բ . 6 ։ (56) Մատթ . ժգ . 33 ։ (52) Մատթ . իա . 5 ։ իե . 11 . 42 ։ Յովհ . ժբ . 37 ։ ժբ . 3 ։ (58) Դնիէլ . իը . 12 ։ Մատթ . գ . 11 ։ Ղուկ . բ . 9 . 13 ։ իբ . 43 ։ իգ . 4 ։ Գործ . ա . 16 ։ (1) Յով . ժբ . 28 ։

Digitized by Google

2 կաչեցաւ և Յիսուս և աշա-
կերտքն նորա ՚ի հարսանիսն :
3 Եւ ՚ի պակասել գինւոյն , ասէ
մայրն ցՅիսուս . Գինի ոչ ունին :

4 Եւ ասէ ցնա Յիսուս . Ո՞ՀԻ
կայ իմ և քո՝ կին դու , չէ՛ է
հասեալ ժամանակ իմ :

5 Լ՚սէ մայրն նորա ցպատասուո-
սըն . Որ զինչ ասիցէ ձեզ՝ արասջիք :
6 Լ՚նդ էին քահոյկք կճեայք վեց՝
ըստ սրբուՔեան ՚Իրէից . տանէին
մի մի ՚ի նոցանէ մարս երկուս կամ
երիս :

7 Լ՚սէ ցնոսա Յիսուս . Լ ցՀՔք զը-
Քահոյկսդ ջրով . և լցին զնոսա
մինչև ՚ի վեր :
8 Եւ ասէ ցնոսա . Լ՚րդ՝ առէք
և բերէք առաՃարապետիս . և նորա
բերին :
9 Եւ իբրև Ճաշակեաց առաՃա-
բապետն զջուրն գինի եղեալ , և ոչ
գիտէր ուստի իցէ . բայց պատաս-
ւորքն գիտէին՝ որք արկին զջուրն .
խօսի ընդ փեսային առաՃարապետն .

10 Եւ ասէ . Լ՚մենայն մարդ զա-
նոյշ գինին յառաջագոյն պաշտէ .
և յորժամ արբենան , յայնժամ
զյոռին . դու պահեցեր զանոյշ գի-
նիդ մինչև ցայժմ :
11 Ա՚յս սրաբ սկիզբն նշանաց
Յիսուս ՚ի Կանա Կ՚ալիլեացւոց ,
և յայտնեաց զփառս իւր . և հա-
ւատացին ՚ի նա աշակերտքն նորա :
12 Ետս այսորիկ էջ Յիսուս ՚ի
Կափառնաում , ինքն և մայր իւր
և եղբարք իւր . և անդ լինէր ոչ
բազում ինչ աւուրս :
13 Եւ էր մերձ զատիկն Ի՚րէից ,
և ել Յիսուս Յերուսաղէմ :

2 Յիսուս էլ և նորա աշակերտ-
ներն կանչվեցան էն հարսանիքն :
3 Եւ գինին որ պակսեցաւ՝ մայ-
րըն ասաց Յիսուսին . Գինի չու-
նին :

4 Եւ Յիսուս նորան ասաց .
Ա՚վ կին[2] դու՝ քեզ ի՞նչ բան կայ
ինձ հետ[3] . իմ ժամանակս դեռ
չի հասել[4] :

5 Նորա մայրն սպասաւորներին
ասաց . Ինչ որ ասէ ձեզ՝ արէք :
6 Էն տեղ վեց քարե կարաս
կային՝ Հրէաների լուացմունքին
համար՝ որ նորանցից ամէն մէկն
երկու կամ երեք մար (չափ) էին
առնում[5] :

7 Յիսուս նորանց ասաց . Լցէք
կարասներըդ ջրով լցէք . նորանց
լցրին մինչև բերանն :

8 Եւ նորանց ասաց . Հիմի ա-
ռէք և բերէք (սեղանի) վերակա-
ցուին համար . և նորանք բերին :

9 Եւ երբոր վերակացուն էն
ջրի համըն առաւ[6] որ գինի էր է-
լած՝ և չէր գիտում թէ ինչ տե-
ղից է . բայց սպասաւորներն գի-
տում էին՝ որ ջուրն լցրել էին . վե-
րակացուն փեսային հետ խօսեց .

10 Եւ ասաց . Լ՚մեն մարդ ա-
նոյշ գինին առաջ է տալիս . և
երբոր կըհարբենան՝ էն ժամանա-
կըն վատն . (բայց) դու էդ ա-
նոյշ գինիդ մինչև հիմիկ պահեցիր :
11 Հրաշանների սկիզբն Յիսուս էս
արաւ Գալիլեացոց Կանայում՝ և
իրան փառքըն յայտնեց[7] . և նորա
աշակերտներն հաւատացին նորան :
12 Սրանից հետև Յիսուս վէր ե-
կաւ Կափառնայում , ինքն և ի-
րան մայրն և իրան եղբարներն[8] .
և շատ օր չըմնացին էն տեղ :
13 Եւ Հրէից զատիկն մօտիկ
էր , և Յիսուս վեր էլաւ Երու-
սաղէմ[9] :

(2) Յովհ . ժԲ . 26 : (3) բ Թագ . ժգ . 10 : ԺԲ . 23 : (4) Յովհ . է . 6 : (5) Մարկ . է . 3 : (6) Յովհ . դ . 46 : (7) Յովհ . ա . 14 : (8) Մատթ . ԺԲ . 46 : (9) Ելք . ԺԲ . 14 : բ Օրին . ԺԶ . 1 . 16 : Ա՚ղբ . 23 : Յովհ . է . 1 : Ղ . է : ԺԱ . 55 :

Digitized by Google

14 Եւ եգիտ ՚ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս և զոչխարս և զաղաւնիս , և զլումայփոխան՝ որ նըստէին :

15 Եւ արար խարազան չուանեայ , և եհան զամենեսին ՚ի տաճարէն , զոչխարան և զարջառս , և զպըղինձս հատավաճառացն ցրուեաց , և զսեղանսն կործանեաց :

16 Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա . Ա՛ռէք զայդ աստ , և մի՛ առնէք զտուն ՚օր իմ՝ առն վաճառի :

17 Ա՛պա յիշեցին աշակերտքն նորա , թէ գրեալ է . Նախանձ տան քո կերիցէ զիս :

18 Պատասխանի ետուն ՚իւդայքն և ասեն ցնա . Ո՞ր նշան ցուցանես դու մեզ՝ զի զայդ առնես :

19 Պատասխանի նա Յիսուս և ասէ ցնոսա . Ջակեցէք զտաճարդ զայդ , և զերիս աւուրս կանգնեցից զդա :

20 Ա՛սեն ցնա ՚իւդայքն . Ո՞ք տասուն և վեց ամ շինեցաւ տաճարս , և դու զերիս աւուրս կանգնես զնա :

21 Ա՛յլ նա ասէր վասն տաճարի մարմնոյն իւրոյ :

22 Ա՛րդ յորժամ յարեաւն ՚ի մեռելոց , յիշեցին աշակերտքն նորա , թէ այս է՝ զոր ասացն . և հաւատացին գրոյն , և բանին՝ զոր ասաց Յիսուս :

23 Եւ իբրև էր ՚ի Երուսաղէմ ՚ի զատկին ՚ի տօնի , բազումք հաւատացին յանուն նորա . զի տեսանէին զնշանս՝ զոր առնէր :

24 Ա՛յլ ինքն Յիսուս ո՛չ հաւա-

14 Եւ տաճարումն գտաւ նորանց՝ որ ծախեն և ոչխարներ և աղաւնիներ էին ծախեալ , և փող փոխողներին էլ որ նստած էին[10] :

15 Եւ չուանէ խարազան (ըխփ) շինեց , և ամէնին տաճարիցն հանեց , ոչխարներին և եզներին՝ և (փող) փոխողների պղինձներըն ցրուեց և տախտակներըն կործանեց :

16 Եւ նորանք որ աղաւնի էին ծախում , նորանց ասաց . Դրան վերառէք էստեղից՝ և իմ ՚օրս տունըն մի՛ անէք առեւտրի տուն[11] :

17 Յն ժամանակն նորա աշակերտներն յիշեցին թէ գրված է՝ Ջտան նախանձն ուտում ինձ[12] :

18 ՚Իւդաներն պատասխան տուին և ասացին նորան . Ո՞ր ինչ նըշան ես ցույց տալիս մեզ՝ որ առնում ես դ[13] :

19 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց . Ջանդեցէք էդ տաճարըդ , և երեք օրումն կըկանգնացնեմ դորան[14] :

20 ՚Իւդաներն ասացին նորան . Յս տաճարս քառասուն և վեց տարումն շինվեցաւ՝ և դու երեք օրումն կըկանգնացնես դորան :

21 Ա՛յլ նա իրան մարմնոյ տաճարին համար էր ասում[15] :

22 Ա՛պա երբոր նա մեռելների միջից յարութիւն առաւ՝ նորա աշակերտներն յիշեցին թէ էս էն է՝ որ նա ասաց . և հաւատացին գրքին՝ և էն խօսքին որ Յիսուսն ասաց[16] :

23 Եւ երբոր Երուսաղէմումն էր զատկի տօնումն՝ շատ մարդիք հաւատացին նորա անունին . ինչու որ տեսնում էին նշաններըն՝ որ նա անում էր :

24 Ա՛յլ ինքն Յիսուս իրան ան-

(10) Մատ . իա . 12 : Մարկ . ժա . 15 : Ղուկ . ԺԹ . 45 : (11) Ղուկ . բ . 49 : (12) Ցաղմ . կԹ . 9 : (13) Մատ . ԺԶ . 38 : Ցովհ . զ . 30 : (14) Մատ . իզ . 61 : է . 40 : Մարկ . ժգ . 58 : ժԶ . 29 : (15) ա Կորնթ . գ . 16 : զ . 19 : բ Կորնթ . զ . 16 : Կող . բ . 9 : Նէր . ը . 3 : (16) Ղուկ . իգ . 8 :

Digitized by Google

ասայր զանձն նոցա. քանզի ինքն գիտէր զամենայն։

25 Եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ. զի ինքն իսկ գիտեր՝ զինչ կրէր ի մարդն։

ձրն չէր հաւատում նորանց. պատճառն որ՝ ինքն ամէն բան գիտում էր։

25 Եւ պէտք չէր որ մինն վկայէր մարդոյ համար. ինչու որ՝ ինքն գիտում էր՝ թէ ինչ կայ մարդոյ ներսումն։

ԿԻ. Գ

1 Քրիստոս կրկնօրէն Նիկոդիմոսի հետ ծնվելոյ հարկաւորը լինելն, 16 Իւրոյ մահուան վերայ պէտք է որ հաւատանք, 18 Հաւատացեալ մեծ օգուտ ունի աշխարհին վերայ. 19 Ընդ հաւատներին դատապարտութիւն պիտի տրվի։ 23 Յովհաննէսի մկրտելն և Քրիստոսի հանդէպ ապառն վկայութիւնն և վարդապետութիւնն։

1 Եւ էր այր մի ի փարիսեցւոց անաւր՝ Նիկոդեմոս անուն նորա՝ իշխան Հրէից։

2 Այս եկն առ նա գիշերի՝ և ասէ ցնա. Ռաբբի՝ գիտեմք եթէ ի Աստուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ նշանսդ առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա։

3 Պատասխանի եւ Յիսուս և ասէ ցնա. Ամէն ամէն ասեմ քեզ, Եթէ ոչ ոք ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ։

4 Ասէ ցնա Նիկոդեմոս. Որպիսդ կարէ մարդ ծնանիլ՝ որ ծեր իցէ. միթէ մարթ ինչ իցէ անդրէն յորովայն մօր իւրոյ կրկին մտանել և ծնանիլ։

5 Պատասխանի եւ Յիսուս և ասէ. Ամէն ամէն ասեմ քեզ, Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւնն Աստուծոյ։

6 Որ ի ծննդենէ՝ մարմնոյ՝ մարմին է, և որ ծնանի ի հոգւոյ՝ հոգի է։

1 Ան փարիսեցիներից մին մարդ կար՝ անունն Նիկոդիմոս՝ հրէաների իշխան։

2 Այս գիշերուայ նորա մօտ եկաւ և նորան ասաց. Ռաբբի՝ գիտենք որ Աստուածանից վարդապետ ես եկել. ինչու որ՝ ոչ ով չկարողը էդ նշանները անել՝ որ դու անում[2], թէ որ Աստուած նորա հետ չը լինի[3]։

3 Յիսուս պատասխան տուաւ և նորան ասաց. Ճշմարիտն ճշմարիտը ասում եմ քեզ. Թէ որ մինն նոր չը ծնվի՝ կարող չէ Աստուծոյ արքայութիւնը տեսանել[4]։

4 Նիկոդիմոս նորան ասաց. Արդ ի՞նչպէս կարող է ծնվիլ՝ որ ծեր է. միթէ կարելի է՝ որ մինել երկրորդ անգամ իրան մօր փորն մտնէ և ծնվի։

5 Յիսուս պատասխան տուաւ և ասաց. Ճշմարիտն ճշմարիտը ասում եմ քեզ. Թէ որ մինն ջրից և հոգուց չը ծնվի[5], նա կարող չէ Աստուծոյ արքայութիւնն մտնել։

6 Պատճառն որ՝ մարմնուց ծնը-

(17) ա Յհաղ. ժգ. 7։ ա Մնաց. իը. 9։ Մտթ. ք. 4։ Մրկ. բ. 8։ Ղուկ. գ. 34։ ժգ. 30։ Գործ. ա. 24։ Յայտ. բ. 23։ (1) Յովհ. է. 50։ ժբ. 39։ (2) Յովհ. ք. 16. 33։ Գործ. բ. 22։ (3) Գործ. ժ. 38։ (4) Յովհ. ա. 13։ Գործ. գ. 15։ Տիտ. գ. 5։ Յով. ա. 18։ ա Պետր. ա. 23։ ա Յովհ. գ. 2։ (5) Մրկ. ժգ. 16։ Գործ. բ. 38։

Digitized by Google

մին է, և ծնեալն ի Հոգւոյ հոգի է։

7 Ոչ մի՛ զարմանար, թէ ասացի քեզ՝ Պարտ է ձեզ ծնանել վերըստին։

8 Հովի՛ւ ուր կամի՝ շնչէ. և զձայն նորա լսես. այլ ոչ գիտես՝ուստի՛ գայ, կամ յո՞ երթայ. այնպէս և ամենայն ծնեալն ի Հոգւոյն։

9 Պատասխանի եւս Նիկոդեմոս և ասէ ցնա. Որի՞պիսի մարթի այդմ լինել։

10 Պատասխանի եւս Յիսուս և ասէ ցնա. Ոչ ես վարդապետ Իսրայէլի՝ և զայդ ոչ գիտես։

11 Ամէն ամէն ասեմ քեզ. զի զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, և զոր տեսաք՝ վկայեմք. և զվկայութիւն մեր ոչ ընդունիք։

12 Եթէ արդ՝ եթէ զերկրաւորս ասացի ձեզ՝ և ոչ հաւատայք. զի՞նչ եթէ զերկնաւորսն ասացից հաւատայիցէք։

13 Եւ ոչ ոք եղ յերկինս, եթէ ոչ՝ որ էջն յերկնից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս։

14 Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է, Որդւոյ մարդոյ.

15 Որի՛ ամենայն որ հաւատայ՝ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենականս։

16 Որի՛ այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զՈրդին իւր միածին եառ. զի ամենայն որ հաւատայ վաճն՝ մարմին է. և Հոգուց ծընեալն՝ հոգի է։

7 Ոչ մի՛ զարմանար՝ որ ասացի քեզ, թէ պէտք է ձեզ՝ որ նոր ծնիլք։

8 Հնչէ ուր՝ քամին որ ուզումն՝ փչումն, և նորա ձայնըն լսումես. բայց չես գիտեր՝ թէ ի՞նչ տեղից է գալիս կամ ո՞ւր տեղ է գընում. հենց էլ էապէս (է) ամէն Հոգուց ծնվածն[6]։

9 Նիկոդիմոս պատասխան տըւաւ և նորան ասաց. Ի՞նդ ի՞նչպէս կարօղ է լինիլ[7]։

10 Յիսուս պատասխան տուաւ և նորան ասաց. Դու ես Իսրայէլի վարդապետ՝ և էդ բանըդ չի՞ գիտում։

11 Ճշմարիտըն ճշմարիտըն ասումեմ քեզ՝ թէ ինչ որ գիտումենք՝ էն ենք խօսում, և ինչ որ տեսինք՝ էն ենք վկայում[8]. և մեր վկայութիւնըն չէք ընդունում[9]։

12 Եթէ որ երկրաւոր բաներըն ասացի ձեզ և չէք հաւատում. ապա ի՞նչպէս կըհաւատաք թէ որ երկնաւոր բաներըն ասեմ։

13 Եւ ոչ ոք վեր չէլաւ երկինքըն, եթէ ոչ Որդին մարդոյ՝ որ երկնքիցն վէր եկաւ՝ նա որ երկընքումն է[10]։

14 Եւ ինչպէս որ Մովսէն օձը բարձրացրուց անապատումն[11]՝ հենց էնպէս էլ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ[12].

15 Որ ամէն ով որ հաւատայ նորան՝ չի կորչի, այլ յաւիտենական կեանքըն ընդունի[13]։

16 Պատճառն որ՝ Աստուած էնպէս սիրեց աշխարհքին՝ մինչև որ իրան միածին Որդին տուաւ. որ

(6) Ժող. ժա. 5։ ա Կորնթ. բ. 11։ (7) Հովհ. գ. 53. 61։ (8) Մատթ. ժա. 27։ Հովհ. ա. 18։ է. 16։ ը. 28։ ժբ. 49։ ժդ. 24։ (9) Ա՝այր. 32։ (10) Բ՝ած. ե. 4։ Հովհ. գ. 33. 38. 51. 63։ ժգ. 28։ Փորձ. բ. 34։ ա Կորնթ. ժե. 47։ Եփես. դ. 9, 10։ (11) Թուոց. խա. 9։ (12) Հովհ. ը. 28։ ժբ. 32։ (13) Ա՝այր. 36։ Հովհ. գ. 47։

Digitized by Google

'ի նա՝ մի՛ կորիցէ , այլ ընկալցի ըստ կեանսն յաւիտենականս ։

17 Օ՛ի ոչ առաքեաց Աստուած զՈրդի իւր յաշխարհ լմէ դատեսցի զաշխարհ , այլ զի փրկեսցի աշխարհ նովաւ ։

18 Որ հաւատայ 'ի նա , ոչ դատապարտեսցի . և որ ոչ հաւատայ 'ի նա՝ արդէն իսկ դատապարտեալ է . զի ոչ հաւատաց յանուն միածնի Որդւոյն Աստուծոյ ։

19 Եւ այս իսկ է դատաստան . զի լոյս եկն յաշխարհ՝ և սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս . զի էին գործք իւրեանց չարութեան ։

20 Օ՛ի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ լուսոյ . և ոչ գայ առ լոյսն , զի մի՛ յանդիմանեսցին գործք նորա ։

21 Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ առ լոյսն , զի յայտնի լիցին գործք նորա , թէ Աստուծով գործեցան ։

22 Ետ այսորիկ եկն Յիսուս և աշակերտքն նորա յերկիրն Հրէաստանի . և անդ շրջէր ընդ նոքօք և մկրտէր ։

23 Ա՛կրտէր և Յովհաննէս 'ի Հ՛նէնոն մերձ առ Սաղիմ , զի ջուրք բազում էին անդ . և գային և մկրտէին ։

24 Օ՛ի չէր եւս արկեալ Յովհաննէս 'ի բանտ ։

25 Եւ եղև խնդիր յաշակերտացն Յովհաննու ընդ Հրէից վասն սրբութեան ։

ամէն ով որ հաւատայ նորան՝ չկորչի , այլ յաւիտենական կեանքն ընդունի[14] ։

17 Ինչու որ՝ Աստուած իրան Որդին չուղարկեց աշխարհքա՝ որ աշխարհքին դատէ՝ հապա որ աշխարհքն նորանով փրկվի[15] ։

18 Ով որ հաւատաւմ նորան՝ չի դատապարտվիլ և ով որ չհաւատաւմ նորան՝ հենց հիմիկ դատապարտված է . ինչու որ՝ չհաւատացց Աստուծոյ միածնին Որդոյ անունին[16] ։

19 Եւ հենց էս է դատաստանն՝ որ լոյսն եկաւ աշխարհքա՝ և մարդիք խաւարըն աւելի սիրեցին քան թէ լոյսն , ինչու որ՝ նորանց գործքըն չար էին[17] ։

20 Պատճառն որ՝ ամէն ով որ չար է գործում՝ լոյսըն ատում է , և դէպի լոյսն չի գալիս , որ նորա գործքերն չի յանդիմանվին[18] ։

21 Իսկ ով նա՝ որ ճշմարտութիւն է գործում՝ դէպի լոյսն է գալիս , որ նորա գործքերն յայտնի լինին , թէ Աստուծով գործվեցան ։

22 Սրանից նաև Յիսուս եկաւ Հրէաստանի երկիրն , և նորա աշակերտներն էլ . և էնտեղ նորանց հետ մնան էր գալիս և մկրտում էր[19] ։

23 Յօհաննէսն էլ Հ՛նէնոնում էր մկրտում՝ Սաղեմայ մօտ[20] . ինչու որ՝ շատ ջուր կար էնտեղ . և (մարդիք) գալիս էին և մկրտվում էին[21] ։

24 Պատճառն որ՝ Յօհաննէսն դեռ բանտի մէջ չէր դրած[22] ։

25 Եւ Յօհաննէսի աշակերտներն Հրէաներին հետ հակառակեցին սրբութեան համար ։

(14) Հովհ . ե . 8 ։ ա Յովհ . գ . 9 ։ (15) Ղուկ . բ . 56 ։ Յովհ . ե . 45 ։ բ . 15 ։ ժբ . 47 ։ ա Յովհ . գ . 14 ։ (16) Յովհ . ե . 24 ։ զ . 40 . 47 ։ ի . 31 ։ (17) Յովհ . ա . 4 . 9 , 10 , 11 ։ բ . 12 ։ (18) Յոբ . խդ . 13 . 17 ։ Նփս . ե . 19 ։ (19) Յովհ . գ . 2 ։ (20) ա Թագ . բ . 4 ։ (21) Մատթ . գ . 5 , 6 ։ (22) Մատթ . ժգ . 3 ։

Digitized by Google

26 Եկին առ Յովհաննէս և ասեն ցնա . Ռաբբի՝ որ էրն ընդ քեզ յայնկոյս Յորդանանու , որում դուն վկայեցեր , ահաւասիկ նա մկրտէ՝ և ամենեքին գան առ նա :

27 Պատասխանի եւս Յովհաննէս և ասէ . Ոչ կարէ մարդ առնուլ յանձնէ և ոչինչ , եթէ ոչ իցէ առեալ նմա յերկնից ՚ի վերուստ :

28 Դուք ձեզէն վկայէք ինձ , զի ասացի ձեզ՝ թէ Ես ՚Քրիստոսն , այլ թէ առաքեալ եմ առաջի նորա :

29 Որ ունի հարսն՝ նա է փեսայ . իսկ բարեկամ փեսային՝ որ կայ և լսէ նմա , ուրախութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային . արդ՝ այս ուրախութիւն որ իմ է , լցեալ է :

30 ՚Նմա պարտ է աճել , և՞ ինձ պղտմանալ :

31 Որ ՚ի վերուստն գայ՝ ՚ի վերոյ է քան զամենայն . որ յերկրէ ասէ է , յերկրէ է՝ և յերկրէ խօսի :

32 Որ յերկնից գայ , զոր ինչ եսաս և զոր լուաւ՝ վկայէ . և ըզ-վկայութիւն նորա ոչ ոք ընդունի :

33 Որ ընդունի զվկայութիւն նո-քա՝ կնքեաց , թէ Ճշմարիտ է :

34 Զի զոր Աստուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի . զի ոչ եթէ չափով տայ Աստուած զՀոգին :

26 Յովհաննէսի ժող եկին և նո-րան ասացին . Ռաբբի՝ նա որ Յոր-դանանի էն կողմն էր քեզ հետ՝ որ դու նորա համար վկայեցիր[23] , ահա նա մկրտուէ , և ամենքն նո-րա մօտ են գալիս :

27 Յովհաննէս պատասխան ետ-ւաւ և ասաց . Մարդ իսկի կա-րօղ չէ ինքն իրանից մին բան առ-նել , թէ որ վերևիցըն երկնքից տրվված չըլինի նորան[24] :

28 Դուք ձեզանից վկայումիք ինձ համար՝ որ ասացի ձեզ՝ թէ Ես ՚Քրիստոսն չեմ[25]՝ բայց թէ նորա առաջին ուղարկված եմ[26] :

29 Ով որ հարսըն ունի՝ նա է փեսան[27] . բայց փեսայի բարեկամն՝ որ կայ և լսումէ նորան , փեսայի ձայնին համար ուրախութեամբ ու-րախանումէ[28] . ուրեմն էս իմ ու-րախութիւնս լցված է :

30 ՚Նորան պէտք է որ աճի (մե-ծանայ) , և ես ցածանամ :

31 ՚Նա որ վերևիցն է գալիս[29] , ամենիցն վերև է[30] . նա որ էս երկրիցս է՝ երկրիցն է և երկրիցն է խօսում[31] :

32 ՚Նա որ երկնքիցն է գալիս[32]՝ ինչ որ տեսաւ և ինչ որ լսեց՝ վկայումէ . և նորա վկայութիւնքն իսկի մինն էլ ընդունում[33] :

33 Ով որ նորա վկայութիւնքն ընդունումէ՝ կընքով (ստորագրով) հաս-տատեց թէ Ճշմարիտ է[34] :

34 Պատճառն որ՝ նա որ Աստ-ուած ուղարկեց նորան , Աստ-ծոյ բանըն է խօսում[35] . ինչու որ՝ Աստուած Հոգին չափով չի տալիս[36] :

(23) Յովհ . ա . 7 . 15 . 27 . 34 : (24) ա կորնթ . գ . 7 : Նեեմ . է . է : Յովհ . ա . 17 : (25) Յովհ . ա . 20 . 27 : (26) Մաղ . գ . 1 : Մատթ . ա . 2 : Ղուկ . ա . 17 : (27) Մատթ . իբ . 2 : բ կորնթ . ժա . 2 : Նէեմ . է . 25 . 27 : Յայտ . իա . 9 : (28) Նէեմ . է . 1 : (29) Ղուկ . 13 : Յովհ . ը . 28 : (30) Մատթ . իբ . 18 : Յովհ . ա . 15 . 27 : Հռոմ . թ . 5 : (31) ա կորնթ . ժբ . 47 : (32) Յովհ . գ . 33 : ա կո-րնթ . ժբ . 47 : Նէեմ . ա . 21 : Փիլիպ . բ . 9 : (33) Ղուկ . 11 : Յովհ . ը . 26 : ժբ . 15 : (34) Հռոմ . գ . է . ա Յովհ . է . 10 : (35) Յովհ . է , 16 : (36) Յովհ . ա . 16 :

Digitized by Google

35 Հայրն սիրէ զՈրդին, և զամենայն ինչ ետ ի ձեռս նորա :
36 Որ հաւատայ ՅՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս. և որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս, այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա :

35 Հայրն սիրում է Որդուն՝ և ամեն բան նորա ձեռքն տուաւ[37] :
36 Ով որ հաւատում է Որդուն՝ յաւիտենական կեանքն ընդունում է. և ով որ չի հնազանդվում Որդուն՝ կեանքն չի տեսնիլ, բայց Աստուծոյ բարկութիւնն է մնում նորա վերայ[38] :

ԿԱ • Գ

Ե Վրիաստոս Սամարացի մին կնկան հետ կը խօսի և իրան անձն կը յայտնէ նորան : 27 Իրան աշակերտներուն զարմանալն որ էին կնկան հետ խօսուելը : 31 Նա իմոց կերակուր է թէ Աստուծոյ փառաց համար արուեստ փափաք ունի : 39 Շատ Սամարացիք նորան կը հաւատան : 43 Ինքն Գալիլեա կերթայ և նախանձայուզի մէջ թագաւորական մին մարդոյ հիւանդ որդին կը բժշկէ :

1 Իբրև գիտաց Յիսուս՝ եթէ լուան փարիսեցիքն՝ եթէ Յիսուս զաւրում աշակերտս առնէ և մկրտէ քան զՅովհաննէս.
2 (Դանդի ոչ եթէ Յիսուս ինքն մկրտէր՝ այլ աշակերտքն նորա :
3 Թողոյ զՅուդէական երկիրն և եկն միւսանգամ ի Գալիլեա :

4 Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա :
5 Գայ նա ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւքար. մերձ ի գեաղն՝ զոր ետ Յակովբ Որդւոյ իւրում Յովսեփայ :
6 Եւ անդ էր աղբիւր մի Յակոբայ. և Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն, նստեր ի վերայ աղբերին. և էր ժամ իբրև վեցերորդ :

7 Գայ կին մի ի Սամարիայ հանել ջուր. ասէ ցնա Յիսուս. Տուր ինձ ըմպել :

1 Երբոր Յիսուս գիտաց՝ թէ փարիսեցիներն լսեցին՝ թէ Յիսուս շատ աշակերտներ է անում և Յովհաննէսից էլ աւելի է մկրտում[1].
2 Ինչու որ՝ չէ թէ Յիսուսն ինքը էր մկրտում՝ բայց նորա աշակերտներն :
3 Հրէաստանի (Ըհրէաստանէ) երկիրը թողեց և մինել եկաւ Գալիլեա :
4 Եւ պէտք էր նորան՝ որ Սամարիայի միջովն անցկենայ :
5 Ուստի նա Սամարացոց մին քաղաք եկաւ՝ որ նորա անունն Սիւքար էր. էն գիւղին մօտ՝ որ Յակօբ տուաւ իրան որդի Յովսէփին[2] :
6 Եւ Յակօբի մին աղբիւր կար էնտեղ. և Յիսուս ճանապարհից վաստակել էր՝ և էն աղբիւրին վերայ նստել էր. և վեց ժամին (սահմանին) դեմ էր :
7 Սամարիացին մին կին եկաւ՝ որ ջուր հանէ. Յիսուս նորան ասաց. Ինձ տուր որ խմեմ :

(37) Մատթ. ժա • 27 : Լուկ. ժ • 22 : Յովհ. ե • 20, 22 : Գծ. գ • 3 : Ժէ • 2 : Ա Թես. բ • 8 : (38) Ա Թես. բ • 4 : Յովհ. ա • 12 : ղ • 47 : Ա Յհ • 15, 16 : Հռոմ. ա • 17 : ա Յովհ. ե • 10 : (1) Յովհ. գ • 22, 26 : (2) Ծննդ. լե • 19 : խը • 22 : Յեր. խգ • 31 :

Digitized by Google

8 Ոչ աշակերտքն նորա երթ-
եալ էին ի քաղաք անդր, զի կե-
րակուր գնեսցեն։

9 Ասէ ցնա կինն Սամարացի.
Դու որ Հրեայդ ես, զիա՞րդ յինէն
ըմպել խնդրես ի կնոջէ Սամարաց-
ւոյ, զի ոչ երբեք խառնակին Հրե-
այք ընդ Սամարացիս։

10 Պատասխանի եւ նմա Յիսուս
եւ ասէ. Եթէ գիտէիր դու զպար-
գեւն Աստուծոյ, եւ որ՞ է որ ասէդ
քեզ թէ Տո՛ւր ինձ ըմպել, դու
արդեօք խնդրէիր ի նմանէ՝ եւ տայր
քեզ ջուր կենդանի։

11 Ասէ ցնա կինն. Տէր դու
քանզի եւ դոյլ իսկ ոչ ունիս, եւ
ջրհորս խոր է. իսկ որդ՝ ուստի՞
ունիցիս ջուրն կենդանի։

12 Միթէ դու մեծ ինչ ոք իցես՝
քան զՀայրն մեր Յակովբ՝ որ զայս
ջրհոր ետ մեզ. եւ ինքն ասաի արբ,
եւ որդիք նորա եւ խաշինք նորա։

13 Պատասխանի ետ նմա Յիսուս
եւ ասէ. Ամենայն որ ըմպէ ի ջրոյ
յայդմանէ՝ միւսանգամ ծարաւէ.
բայց որ ըմպէ ի ջրոյն, զոր ես
տաց նմա՝ մի՛ ծարաւեսցի յաւիտե-
ան։

14 Այլ ջուրն զոր ես տաց նմա,
եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ի
կեանսն յաւիտենականս։

15 Ասէ ցնա կինն. Տէր՝ տո՛ւր ինձ
զջուրն զայն, զի մի՛ ծարաւեցից.
եւ մի՛ եկից այսր հանել ջուր։

16 Ասէ ցնա Յիսուս. Երթ կոչ-
եա զայր քո՝ եւ եկ այսր։

17 Պատասխանի ետ նմա կինն եւ
ասէ. Ո՛չիք իմ այր. ասէ ցնա Յի-

8 Պատճառն որ՝ նորա աշակերտ-
ներն քաղաքն էին գնացել՝ որ կե-
րակուր գնեն։

9 Սամարացի կինն ասաց նորան.
Դու որ Հրեայ ես՝ ինչպէս ես ու-
զում ջուր խմել ինձանից՝ մին
Սամարացի կնկանից. ինչու որ՝
Հրեաներն իսկի չեն խառնվում
Սամարացոց հետ[3]։

10 Յիսուս պատասխան առաւ նո-
րան եւ ասաց՝ Թէ որ դու Աստու-
ծոյ պարգեւըն գիտենայիր, եւ թէ
ո՛վ է նա՝ որ քեզ ասում՝ թէ Տո՛ւր
ինձ խմել, ապա դու նորանից կը-
խնդրէիր՝ եւ նա կենդանի ջուր կը-
տար քեզ[4]։

11 Կինն նորան ասաց. Տէր՝ դու
իսկի ջուր քաշելոյ տանն էլ չունիս՝
եւ հորս խոր է. ապա ի՞նչ տեղից
պիտի ունենաս կենդանի ջուրըն։

12 Միթէ դուն մին ասելի՞ մեծ
մարդ ես քան մեր Հայր Յակոբն՝
որ ես հորըս տուաւ մեզ. եւ ինքն
ծորանից խմեց, եւ նորա որդիքն եւ
նորա անասուններն։

13 Յիսուս պատասխան տուաւ նո-
րան եւ ասաց. Ամեն ով որ էդ ջրից
խմում՝ միևնէլ կըծարաւի. բայց ով
որ էն ջրից խմէ՝ որ ես կըտամ
նորան՝ նա յաւիտեան չի ծարաւ-
ի[5]։

14 Նայց էն ջուրն՝ որ ես կըտամ
նորան՝ ջրի աղբիւր կըլինի նորա-
նում, որ յաւիտենական կենաց մէջ
կը բղխի[6]։

15 Կինն նորան ասաց. Տէր՝ տո՛ւր
ինձ էն ջուրըն, որ չը ծարաւիմ,
եւ չըգամ էս տեղ ջուր հանելոյ[7]։

16 Յիսուս նորան ասաց. Գնա
կանչէր քո մարդոյն՝ եւ եկ էստեղ։

17 Կինն պատասխան առաւ նո-
րան եւ ասաց. Ես մարդ չունիմ.

(3) ԳՒՒ. ԺԱ. 24։ Ղեւի. Բ. 53, 53։ Գործ. Ժ. 28։ (4) Նայ. Ժբ. 3։ Ելք. 3։ Երե. Բ. 13։ Ովս. Ժգ. 1։ Ժգ. 8։ (5) Յովհ. Զ. 35. 58։ (6) Յովհ. է. 38։ (7) Յովհ. Զ. 34։ Հռոմ. Զ. 23։ ա Յովհ. Ե. 20։

Digitized by Google

սուս · Խարուեաք ասացեալ՝ թէ Ձէք իմ այր ·
18 Օ՛ի հինգ այր փոխեալ է քո, և զոր այժմ ունիս՝ չէ քո այր · զայդ արդար ասացեր ։
19 Ա՛սէ ցնա կինն · Տէր՝ թուի ինձ, թէ մարգարէ իցես դու ։
20 Հարքն մեր ՚ի լերինս յայսմիկ երկիրպագին · և դուք ասէք՝ եթէ Յերուսաղէմ և եթէ տեղի, ուր արժան իցէ երկիրպագանել ։

21 Ա՛սէ ցնա Յիսուս · Կին դու՝ հաւատա ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ՚ի լերինս յայսմիկ և ոչ Յերուսաղէմ երկիրպագանիցեն Հօր ։
22 Դուք երկիրպագանէք՝ որում ոչն գիտէք, մեք երկիրպագանեմք որում գիտեմքն · զի փրկութիւն ՚ի Հրէից է ։

23 Ա՛յլ եկեսցէ ժամանակ՝ և այժըմ իսկ է · յորժամ ճշմարիտքն երկրպագուք՝ երկիրպագանիցեն Հօր հոգւով և ճշմարտութեամբ · քանզի և Հայր այնպիսի երկրպագուս իւր խնդրէ ։
24 Հոգի է Ա՛ստուած, և երկրպագուց նորա՝ հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիրպագանել ։
25 Ա՛սէ ցնա կինն · Դիտեմ՝ զի Ա՛եսիա գայ՝ անուանեալն Քրիստոս · յորժամ եկեսցէ նա, պատմեսցէ մեզ զամենայն ։
26 Ա՛սէ ցնա Յիսուս · Ես եմ՝ որ խօսիմ ընդ քեզ ։
27 Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, և զարմանային՝ զի ընդ

Յիսուս նորան ասաց · Լաւ ասացեր՝ թէ Ես մարդ չունիմ ։
18 Զի հինգ մարդ ես փոխել, և նա որ հիմիկ ունիս, քո մարդդ չէ · եդ շիտակ ասացեր ։
19 Կինն նորան ասաց · Տէր՝ երևում ինձ՝ թէ դու մարգարէ ես[9] ։
20 Ա՛ր հարքն ես սարումն երկրպագութիւն արին[9] · և դուք ասում՝ թէ Երուսաղէմումն մէնակ է ենաեղն՝ որ պէտք է երկրպագութիւն անել[10] ։
21 Յիսուս նորան ասաց · Ո՛վ կին · հաւատա ինձ՝ որ ժամանակ կըգայ, որ ոչ ես սարումն երկրպագութիւն կանեն Հօրն, և ոչ էլ Երուսաղէմումն[11] ։
22 Դուք երկրպագութիւն էք անում նորան՝ որ դուք չէք գիտում[12] · մենք երկրպագութիւն ենք անում նորան՝ որ գիտումենք · ինչու որ՝ փրկութիւնն Հրէաներից է[13] ։
23 Ա՛յց ժամանակ կըգայ՝ և հենց հիմիկ է, որ ճշմարիտ երկրպագողներն հոգով[14] և ճշմարտութեամբ երկրպագութիւն կանեն Հօրն[15], պատճառն որ՝ հենց Հայրն էլ էնպէս իրան երկրպագողներ է ուզում ։
24 Ա՛ստուած Հոգի է, և նորան երկրպագողներն էլ պէտք է՝ որ հոգով և ճշմարտութեամբ երկրպագութիւն անեն (նորան)[16] ։
25 Կինն ասաց նորան · Գիտեմ՝ որ Ա՛եսիան պիտի գայ՝ որ Քրիստոս է կոչվում · երբոր կըգայ՝ նա ամէն բան կըպատմէ մեզ[17] ։
26 Յիսուս նորան ասաց · (Ա՛յս) ես եմ՝ որ քեզ հետ խօսումեմ[18] ։
27 Եւ էս խօսքիս վերայ նորա աշակերտներն եկին, և զարմանա-

(8) Ա՛սէ · է · 16 : իդ · 19 : Յովհ · զ · 14 : է · 30 : (9) Գոտ · ք · 7 : (10) ք Օբդի · ժբ · 5 · 11 : դ Թագ · ք · 8 : բ Մնաց · է · 13 : (11) Մաղ · ա · 11 : ա Տիմ · բ · 8 : (12) դ Թագ · ժէ · 29 : (13) Ելոյ · բ · 3 : Ա՛սէ · իդ · 47 : Հռոմ · ք · 4, 5 : (14) Փիլիպ · գ · 3 : (15) Յովհ · ա · 17 : (16) բ Կորնթ · գ · 17 : (17) Ա՛յր · 29 · 30 : (18) Յովհ · ք · 37 : Մատթ · իգ · 63, 64 : Մարկ · ժգ · 61, 62 :

Digitized by Google

կնոջն խօսէր . բայց ո՛չ ոք ասաց ՚ի նըմանէ , թէ ՚Ո՞ւինչ խնդրես , կամ զի՞նչ խօսիս ընդ դմա ։

28 ԵԹող կինն զսափօրն իւր՝ և էջաւ ՚ի քաղաքն , և ասէ ցմարդիկն .

29 Եկէ՛ք տեսէք զայր մի , որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գործեալ է . միթէ նա՞ իցէ ՚Քրիստոսն ։

30 Ելին ՚ի քաղաքէն՝ և գային առ նա ։

31 Եւ մինչէվ եկեալ էին նոքա , աղաչէին զնա աշակերտքն և ասէին . Ուսո՛ւցի՛ր հա՛ց կեր ։

32 Նա ասէ ցնոսա . Ես կերակուր ունիմ ուտել , զոր դուքն ո՛չ գիտէք ։

33 Ասէին աշակերտքն ընդ միմեանս . Միթէ երբո՞ր ինչ ոք դմա ուտել ։

34 Ասէ ցնոսա Յիսուս . Իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս , և կատարեցից զգործն նորա ։

35 Ոչ դուք ասէք՝ եթէ Ամի՛ս ևս չորք ունիք են , և հունձք գան . ահաւասիկ ես ասեմ ձեզ . Ա՛մբարձէք զաչս ձեր , և տեսէք զերտութեան , զի սպիտակացեալ են՝ և ՚ի հունձս հասեալ ։

36 Եւ որ հնձէն՝ վարձս առնու , և ժողովէ զպտուղ ՚ի կեանս յաւիտենականս . զի որ սերմանէն , և որ հնձէ՝ հաւասարապէս ցնծասցեն ։

37 Յայսմ իսկ է բանն ճշմարիտ . զի այլ է՝ որ սերմանէ , և այլ է՝ որ հնձէ ։

38 Ես առաքեցի զձեզ հնձել զոր ոչ դուք վաստակեցէք . այլք վաստակեցին , և դուք ՚ի վաստակս նոցա մտէք ։

39 Եւ ՚ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց էին քաղաքին՝ որ էն կնկան հետ խօսեալ էր . բայց նորանցից իսկի մինն չասաց՝ թէ Ո՞ւր է ուզում կամ ի՞նչ ես խօսում դորա հետ ։

28 Կինն իրան կաժըն թողեց՝ և գնաց քաղաքն , և մարդկանց ասաց .

29 Եկէք տեսէք մին մարդ՝ որ ինձ ասաց էն ամէնքն՝ ինչ որ գործել եմ . միթէ նա՞ է ՚Քրիստոսն[19] ։

30 Ոտքս ելան քաղաքիցն՝ և նորա մօտ էին գալիս ։

31 Եւ դեռ որ նորանք չէին և կածՙ աշակերտներն ազաչում էին նորան և ասում . Ուսո՛ւցի՛ր հա՛ց կե՛ր ։

32 Նա նորանց ասաց . Ես կերակուր ունիմ ուտելոյ , որ դուք չէք գիտում նորան ։

33 Աշակերտներն իրար ասում էին . Միթէ մին մարդ դորան բան բերա՞ւ ուտելու ։

34 Յիսուս նորանց ասաց . Իմ կերակուրս էն է՝ որ նորա կամքըն անեմ , որ ուղարկեց ինձ , և նորա գործըն կատարեմ[20] ։

35 Միթէ դուք չէք ասում՝ թէ Ձորս ամիս էլ կայ՝ և հունձքն կըգայ . ահա ես ասում եմ ձեզ . Ոտքձ բացրէք ձեր աչքերըն՝ և տեսէք արտերըն՝ որ սպիտակացել են՝ և հընձին հասել[21] ։

36 Եւ նա որ հնձում՝ վարձք է առնում , և յաւիտենական կենաց մէջ պտուղ է ժողովում . որ նա որ սերմանում՝ և նա որ հնձում՝ իրար հետ ուրախանան[22] ։

37 Սրանով ճշմարիտ է էն խօսքըն՝ թէ ուրիշ է՝ որ սերմանում , և ուրիշ է՝ որ հնձում ։

38 Ես ուղարկեցի ձեզ հնձել էն՝ որ դուք չըսպրմեցիք . ուրիշներն աշխատեցին , և դուք նորանց աշխատանքի մէջն մտիք ։

39 Եւ Սամարացոց էն քաղաքիցն

(19) Ա՛յր . 25 ։ (20) Յով . դ . 12 ։ Յովհ . ը . 28 ։ ժէ . ե ։ ժը . 36 ։ (21) Մատթ . թ . 37 ։ Ղուկ . ժ . 2 ։ (22) Ղան . ժբ . 3 ։

Digitized by Google

մարացւոց բազումք հաւատացին ՚ի նա վասն բանի կնոջն վկայելոյ՝ եթէ Աստց զամենայն , որ ինչ իմ գործեաալ էր :

40 Իսկ իբրև եկին առ նա Այմարացիքն , աղաչէին զնա լինել առ նոսա . և եղև անդ աւուրս երկուս :

41 Եւ ևս բազումք հաւատացին ՚ի նա վասն բանին նորա :

42 Եւ ասէին ցկինն՝ թէ Ո՛չ այսուհետև վասն քո խօսիմք հաւատամք , զի մեզէն իսկ լուաք ՚ի դմանէ . և գիտեմք՝ եթէ դա է Ճրշմարտիւ փրկիչ աշխարհաց :

43 Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց ՚ի Գալիլեա :

44 Ո՛ի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ Մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի :

45 Այլ յորժամ եկն նա ՚ի Գալիլեա , ընկալան զնա Գալիլեացիքն . զի տեսեալ ևս էր զամենայն նշանան , զոր արար Երուսաղէմ ՚ի տօնին . քանզի և նոքա եկեալ էին ՚ի տօնն :

46 Եկն դարձեալ ՚ի Կանա Գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի . և անդ էր թագաւորազն մի , որոյ որդի նորա հիւանդ կայր ՚ի Կափառնայում :

47 Լսա իբրև լուաւ , եթէ Յիսուս եկեալ է ՚ի Հրէաստանէ ՚ի Գալիլեա . եկն առ նա և աղաչէր՝ զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա . քանզի մերձ էր ՚ի մեռանել :

48 Այսր ցնա . Եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք :

49 Այսէ ցնա թագաւորազն . Տէր՝ շատ մարդիք հաւատացին նորան էն կնկան խօսքին համար՝ որ վկայաւմեր՝ թէ Աստց ինձ ամենըն՝ ինչ որ գործեալ էի[23] :

40 Այսպա երբոր Այմարացիներն նորա մօտ եկին , նորան աղաչեցին որ իրանց հետ մնայ . և երկու օր մնաց հետեղ :

41 Եւ էլ շատ մարդիք հաւատացին նորան՝ նորա խօսքին համար :

42 Եւ էն կնկան ասումէին՝ թէ Արանից ետև ոչ թէ քո խօսքերիդ համար ենք հաւատում . ինչու որ՝ հետց մենք ինքներս լսեցինք դորանից . և գիտումենք ճշմարտապէս՝ որ դա է աշխարհքի փրկիչն[24] :

43 Եւ երկու օրից ետև հետեղից դուրս եկաւ և գնաց Գալիլեա :

44 Պատճառն որ՝ հետց Ի՛րքասոս ինքն վկայեց՝ թէ Ո՛րգարէ իրան գաւառումն պատիւ չունի[25] :

45 Ասց երբոր նա Գալիլեա եկաւ , Գալիլեացիներն ընդունեցին նորան . ինչու որ՝ տեսել էին էն ամեն նշաններըն[26] , որ ասնի ժամանակումն արաւ Երուսաղէմի մէջն . պատճառն որ՝ նորանք էլ եկել էին էն տոնն[27] :

46 Ա՛ինել Գալիլեացւոց Կանան եկաւ՝ հետեղ որ ջուրըն գինի արաւ[28] . և հետեղ մին թագաւորացեղ մարդ կար , որ նորա որդին Կափառնայումի մէջն հիւանդ էր :

47 Լսա երբոր լսեց , թէ Յիսուս Հրէաստանիցն եկել է Գալիլեա . նորա մօտ եկաւ և աղաչումէր՝ որ վէր գայ և իրան որդին բժշկէ . ինչու որ՝ մեռնելոյ մօտ էր :

48 Յիսուս նորան ասաց , Ավ որ նշաններ և հրաշքներ չըտեսանէք՝ չէք հաւատալ[29] :

49 Թագաւորացեղն նորան ասաց .

(23) Ա Յհ . 29 : (24) Յովհ . ժէ . 8 : ա Յովհ . դ . 14 . (25) Մտթ . ժգ . 57 : Մրկ . զ . 4 : Ղկս . դ . 24 : (26) Յովհ . բ . 23 : գ . 2 : (27) բ Օրին . ժգ . 16 : (28) Յովհ . բ . 1 . 11 : (29) ա Կորնթ . ա . 22 :

Digitized by Google

էջ մինչև մեռնել իմ մանուկն իմ։

50 Ո՛չ ցնա Յիսուս. Երթ որ դին քո կենդանի է. և հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, և գնաց։

51 Եւ մինչդեռ իջանէր՝ ընդ առաջ եկին նմա ծառայքն նորա, աւետիս եասան և ասեն, թէ Ո՝որդին նորա կենդանի է։

52 Հարցանէր ցնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա. Երէկ յեօթներորդ ժամու՝ ետաղ զնա ջերմն։

53 Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա Յիսուս՝ թէ Որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տունն իւր։

54 Այս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս՝ եկեալ ի Գալիլեա։

ՏԷր՝ վէր եկ գեռ քանի որ չի մեռել իմ աղջա։

50 Յիսուս ներան ասաց. Գնա՛ քո որդիդ կենդանի է. և մարդն հաւատաց էն խօսքին՝ որ Յիսուս ներան ասաց՝ և գնաց։

51 Եւ գեռ որ վէր էր գալիս՝ ներա ծառաներն ներա առաջն եկին, աւետիս առին և ասացին, թէ Որ աղան կենդանի է։

52 Ներանց հարցնումէր էն ժամին (սահլէթն) համար՝ որ ներա նում ողջացաւ. և ներան ասացին. Երեկ եօթն ժամուճն առնան թողեց ներան։

53 Ներա հայրն իմացաւ՝ թէ հենց էն ժամուճն (է)՝ որ Յիսուս ներան ասաց՝ թէ Որդիդ կենդանի է. և հաւատաց ինքն և ներա բոլոր տունն։

54 Սա մինել երկրորդ նշան արաւ Յիսուս՝ երբոր Ղրհաստանիցն եկաւ Գալիլեա։

ԳԼ. Ե

1 Ճեռնադրութիւն և ուխտ տասնաւոր հիւանդ մարդոյն շաբաթ օրումն կը բժշկէ։ 10 Հրեայքն Ճեռնադրեալին կը հալածեն։ 17 Որ հօրմէ իւրմէ համար կը վկայէ և նորանց կը սասանէ, և իւրն Հօրըն, 32 Յովհաննէսէն, 36 Իւրն գործքերէն, 39 Եւ Սուրբ Գրքերուն վկայութիւններովն իւրն մեղ լինելն ցոյց կ'ասէ։

1 Յետ այսորիկ ասն էր Հրեից. և ել Յիսուս Յերուսաղէմ։

2 Եւ էր Յերուսաղէմ ի Պրոբատիկէ աւազանին, որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդա՝ հինգ սրահ։

3 Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց, կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակնանայէին ջրոցն յուզելոյ։

4 Եւ հրեշտակ Տեառն իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ ի շարժ

1 Ասանից ետև ասն էր Հրէանների. և Յիսուս վերելաւ Երուսաղէմ։

2 Եւ Երուսաղէմի մէջն Պրոպատիկէ աւազանումն, որ Եբրայեցերէն Բեթհեզդա էր կոչվում՝ հինգ սրահ կար։

3 Ի ներանցում խիստ շատ հիւանդներ կային վէր ընկած՝ կուրներ, կաղեր, չարացածներ, որ ջրերի շարժվելոյն էին սպասում։

4 Եւ Տէրի հրեշտակն ժամանակով վէր էր գալիս էն աւազանն՝ և ջրերըն շարժումէր. և ով որ

(1) Ղկ. խդ. 3։ բ Օրին. ժգ. 1։ Ծէզ. բ. 13։ (2) Նեհ. գ. 1։ ժբ. 30։

Digitized by Google

ժամն չէր եկեր իմանալ, բժշկեր՝ նշ
ունելով նշան հիւանդութեան։

5 Եւ անդ էր այր մի, որոյ ևթ
տարի էր ի հիւան-
դութեան իւրում։

6 Զնա իբրև եհաս Յիսուս զկ
նիկեալ դնէր, և գիտաց՝ թէ բա-
զում ժամանակք են այնուհետև,
ասէ ցնա. կամիս ողջ լինել։

7 Պատասխանի եւ նմա հիւան-
դըն. Տէր՝ ոչ ունիմ, թէ յոր-
ժամ շարժիցի ջուրն՝ արկցէ զիս
յաւազանն. և մինչ ես դանդա-
զիմ, այլ ոք քան զիս յառաջա-
գոյն իջանէ։

8 Ասէ ցնա Յիսուս. Ար
զամահիճս քո՝ և գնա։

9 Եւ ողջացաւ այրն, և յոր-
եաւ՝ առ զամահիճս իւր՝ և շրջէր,
և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։

10 Ասեն Հրեայքն ցբժշկեալն.
Շաբաթ է՝ և ոչ է արժան քեզ
առնուլ զամահիճս քո։

11 Պատասխանի նա նոցա և ա-
սէ. Որ բժշկեացն զիս, նա ասաց
ցիս, Ա՛ռ զամահիճս քո՝ և գնա։

12 Հարցին ցնա և ասեն. Որ է
այրն՝ որ ասաց ցքեզ, Ա՛ռ զամահիճ
քո՝ և շրջեաց։

13 Եւ բժշկեալն ոչ գիտէր՝ թէ
որ իցէ. քանզի Յիսուս խոյս եհ
ւան ամբոխին՝ի սեղոտէն անտի։

14 Ետս այսորիկ գտանէ զնա Յի-
սուս՝ի տաճարին, և ասէ ցնա.
Ահաւադիկ ողջացար, մի՛ ևս մե-
ռանիր վերստին գոլիք են չարժվան
ջրերի մէջն բժշկուէր՝ որ խոնի
հիւանդութեան նշան էջը ինուն։

5 Այս էնտեղ մին մարդ կար,
որ հիսուն և ութ տարի էր իրան
հիւանդութեան մէջ։

6 Երբոր Յիսուս նորան տեսաւ՝
որ վեր ընկած էր, և գիտաց՝ թէ
շատ ժամանակ է ինացել, նորան
ասաց. կամենում՞ս, որ ողջ լի-
նիս։

7 Հիւանդն պատասխան տուաւ
նորան. Տէր՝ իսկի մին մարդ չու-
նիմ՝ որ երբոր ջրերն շարժվին՝
ինձ աւազանի մէջն գցէ. և մին-
չև որ ես շարժվումիմ, մին ու-
րիշ ինձանից առաջ (էնառել) վեր
է գալիս։

8 Յիսուս նորան ասաց. Վե՛ր
կաց, քո մահիճըդ (փոշխոտ) առ
և գնա՛։

9 Եւ մարդն ողջացաւ և վեր-
կացաւ՝ իրան մահիճըն առաւ և
սան էր գալիս. և էն օրն շաբաթ
էր։

10 Հրեաներն ասացին բժշկված
ծին. Շաբաթ է, և արժան չէ
քեզ, որ քո մահիճըդ (փոշխոտ)
վեր առնես։

11 Նա պատասխան տուաւ նո-
րանց՝ և ասաց. Նա՝ որ ինձ բը-
ժշկեց՝ նա ասաց ինձ՝ թէ Առ
մահիճըդ առ և գնա։

12 Հարցրին նորան և ասացին.
Ով է էն մարդն՝ որ քեզ ասաց՝
թէ Առ մահիճըդ առ և սան եկ։

13 Եւ բժշկվածն չէր գիտեում
թէ ով է. ինչուս որ՝ Յիսուս ամ-
բոխի (խալխի) պատճառութիւն էնաե-
ղիցն քաշվեցաւ։

14 Յետոյ նորան Յիսուս նորից
գտաւ տաճարումն՝ և նորան ա-
սաց. Նայ ողջացար՝ մինել չէ

(3) Ասղ. բ. 6։ Ասղ. բ. 11։ Գործ. է. 24։ (4) Գաղ. բ. 14։ (5) Նեղ.
ի. 10։ Գնիմ. ժգ. 19։ Երիմ. ժէ. 21, Հայն։ Ասղ. ժբ. 2։ Ասղ. բ.
24։ գ. է։ Գործ. գ. 2։ ժգ. 14։

Digitized by Google

զանձերը՝ զի մի՛ չար ևս ինչ ինիցի քեզ։

15 Այնուհետև այրն՝ և պատմեաց իմ-
քեան, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեաց
զնա զկնի։

16 Եւ վասն այնորիկ հալածեին
զՅիսուս Հրեայքն, զի զգային առ-
նել ի չարութիւն։

17 Եւ Յիսուս պատասխանի ետ
նոցա. Հայրս իմ մինչև ցայժմ
գործէ, և ես գործեմ։

18 Վասն այնորիկ առաւել խնդր-
էին Հրեայքն սպանանել զնա. զի
ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ
և Հայր իւր կոչէր զԱստուած, և
հաւասար առնէր զանձն Աստ-
ծոյ։

19 Պատասխանի ետ Յիսուս և ա-
սէ ցնոսա. Ամէն ամէն ասեմ ձեզ.
ոչ կարէ Որդի մերձոյ առնել յանձ-
նէ և ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ
Հայրն զի առնէ. զի զոր նայն
առնէ, զնոյն և Որդին նմին նման
գործէ։

20 Զի Հայր սիրէ զՈրդի, և
զամենայն ինչ ցուցանէ նմա՝ զոր
ինքն առնէ. և մեծամեծս ևս քան
զայնս ցուցանէ նմա գործս, զնդ
որ զարմացջ զարմանայք։

21 Զի որպէս Հայր յարուցանէ
զմեռեալս և կենդանի առնէ, նոյն-
պէս և Որդի զորս կամի կենդանի
առնէ։

22 Եւ ոչ եթէ Հայր դատի զոք,
այլ զամենայն դատաստան ետ
Որդւոյ իւրոյ։

մեղանչեսցես՝ որ ևս աւելի չար բան
ընկնիցի քեզ։

15 Այրդն գնաց և Հրեաներուն
պատմեց թէ Յիսուան էր որ ինծ
բժշկեց։

16 Եւ նրա համար Հրեաներն Յի-
սուսին հալածողութիւն որ շաբաթի օ-
րեան էն (բանըն) էր անում։

17 Եւ Յիսուս պատասխան ար-
ար նորանց. Թէ Իմ Հայրս մին-
չև հիմիկ գործում է և ես էլ գոր-
ծում եմ[7]։

18 Որ համար Հրեաներն էլ ա-
ւելի հետևումին որ սպանեն նո-
րան[8] • որ ոչ թէ միևնակ շաբաթի
օրերն էր քանդում[9] բայց Աստ-
ծոյն էլ իրան Հայր կոչում[10],
և իրան անձն Աստուծոյն հաւա-
սար էր անում[11]։

19 Յիսուս պատասխան ետ ար
ասաց նորանց. Ճշմարիտն ճըշ-
մարիտ ասում եմ ձեզ. Թէ Որ-
դին ոչինչ իրանից կարող չէ մին
բան անել, թէ որ չըտեսանէ Հօ-
րըն որ անում[12]. ինչու որ՝ ինչ-
որ նա անում, հենց Որդին էլ
էն բանըն է նորա նման անում։

20 Պատճառն որ Հայրն սիրում
Որդուն[13], և ցոյց է տալիս նորան
էն ամէն բանըն, որ ինքն անու-
մ, և սորանից էլ աւելի մեծ մեծ
գործքեր ցոյց է տալիս նորան, որ
դուք նորա համար զարմանում եք։

21 Պատճառն որ՝ ինչպես որ Հայ-
րըն մեռելներըն յարուցանում և
կենդանի անում, հենց էնպես էլ
Որդին՝ ում որ կամենում՝ կեն-
դանի է անում[14]։

22 Եւ չէ թէ Հայրն մինըն դա-
տում, բայց ամէն դատաստանըն
տուաւ իրան Որդուն[15]։

(6) Ա Պետ. ժբ. 45։ Յովհ. բ. 11։ (7) Յովհ. բ. 4։ ժգ. 10։ (8) Յովհ. է. 9։ (9) Յովհ. ժ. 30. 33։ Փիլիպ. բ. 6։ (10) Ա Յայր. 30։ Յովհ. բ. 38։ բ. 4։ ժբ. 49։ ժգ. 10։ (11) Ա Պետ. գ. 17։ Յովհ. գ. 35։ բ Պետր. ա. 17։ (12) Ա Յով. է. 14։ բ. 56։ Յովհ. ծա. 25. 33։ (13) Ա Պետ. ա. 27։ իբ. 16։ Ա Յայր. 27։ Յովհ. գ. 35։ ժե. 3, Պետր. ժե. 31։ ա Պետր. գ. 5։

Digitized by Google

23 Օ՛ն ամենեքեան պատուեսցեն զՈրդի՝ որպէս պատուեն զՀայրն. որ ո՛չ պատուէ զՈրդին՝ ո՛չ պատուէ զՀայրն զառաքիչն նորա։

24 Ա՛մէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ, և հաւատայ յառնողն զիս, ընդունի զկեանան յաւիտենական. և ի դատաստան ո՛չ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս։

25 Ա՛մէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և արդէն իսկ է, յորժամ մեռեալք լսիցեն ձայնի Որդւոյն Աստուծոյ. և որք լսիցեն՝ կեցցեն։

26 Օ՛ր որպէս Հայր ունի կեանս յանձին իւրում, նոյնպէս եհա և Որդոյ ունել կեանս յանձին իւրում։

27 Եւ իշխանութիւն եհա նմա դատաստան առնել. և զի Որդի մարդոյ է։

28 Մի՛ զարմանայք զայդ. զի եկեսցէ ժամանակ՝ յորում ամենեքեան՝ որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա,

29 Եւ ելեսցեն արտաքս. որք բարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, և որք զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց։

30 Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել և ո՛չինչ. այլ որպէս լսեմ՝ դատեմ, և դատաստանն իմ արդար է. զի ո՛չ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

23 Որ ամենքեան պատուեն Որդւոյն, ինչպէս որ Հօրըն պատուեն. ամէն որ Որդւոյն չէ պատուում՝ Հօրն էլ չէ պատուում, որ ուղարկեց նորան[14]։

24 Ճշմարիտը ճշմարիտըն ասեմ ձեզ. թէ լսա որ իմ խօսքիս ականջ է դնում, և հաւատում նորան՝ որ ինձ ուղարկեց[15], յաւիտենական կեանքըն կընդունի. և դատաստան չի՛ մտնիլ, բայց մահիցըն փոխվեցաւ դէպի կեանք[16]։

25 Ճշմարիտը ճշմարիտըն ասեմ ձեզ. թէ ժամանակ է գալիս՝ և հենց հիմիկ է, երբոր մեռելներն Աստուծոյ Որդոյ ձայնըն կլսեն[17], և նորանք, որ կլսեն՝ կապրին։

26 Պատճառն որ՝ ինչպէս որ Հայրըն իրան անձնաւոր կեանք ունի, հենց էնպէս էլ Որդոյն տուաւ՝ որ իրան անձնաւոր կեանք ունենայ։

27 Եւ նորան իշխանութիւն տուաւ[18], որ դատաստան անէ. քանզի որ՝ Որդի մարդոյ է[19]։

28 Մի՛ զարմանայք սրանից. որովհետև ժամանակ կգայ, որ ամենքն՝ որ գերեզմաններումն են, նորա ձայնըն կլսեն,

29 Եւ դուրս կըգան նորանք[20]. որ բարի են գործել դէպի կենաց յարութիւնն, և նորանք՝ որ չար են արել՝ դէպի դատաստանի յարութիւնն[21]։

30 Ես ինձանից չեմ կարօղ խոկի մի՛ն բան անել[22], բայց ինչպէս որ լսումեմ՝ էնպէս եմ դատում, և իմ դատաստանն արդար է. պատճառն որ՝ իմ կամքըս չեմ խնդրում, այլ նորա կամքըն՝ որ ինձ ուղարկեց[23]։

(14) ա Յովհ. բ · 23։ (15) Յովհ. գ · 16 · 18։ ե · 40 · 47։ ը · 51 · ժ · 31։ (16) ա Յովհ. գ · 14։ (17) Ա՛յսր · 28։ Լուկ. բ · 1 · 5։ ժ · 14։ Կող. բ · 13։ (18) Ա՛յսր · 22։ Դանիէլ · ժ · 12։ ժէ, 31։ (19) Դան. է · 13, 14։ (20) Աստ. իգ · 19։ ա Կորնթ. ժե · 52։ ա Թես. դ · 15։ (21) Դան. ժբ · 2։ Մատթ. ԻԵ · 33, 33 · 46։ (22) Ա՛յր · 19։ (23) Մատթ. իգ · 39։ Յովհ. դ · 34։ ե · 38։

Digitized by Google

31 Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւն իմ չէ ճշմարիտ։

32 Ա՛յլ է՝ որ վկայէ վասն իմ. և գիտեմ, եթէ ճշմարիտ է վկայութիւնն՝ զոր վկայեաց վասն իմ։

33 Դուք առաքեցիք առ Յովհաննէս՝ և վկայեաց ճշմարտութեանն։

34 Ա՛յլ ես ոչ ընդունիմ մարդկանէ առնուն վկայութիւն. այլ զայս ասեմ՝ զի դուք ապրեսջիք։

35 Նա էր ճրագն՝ որ լուցեալ եր և ծագէր. և դուք կամեցարուք ցնծալ առ ժամանակ մի՝ ի լոյս նորա։

36 Ա՛յլ ես ունիմ վկայութիւն մեծ քան զՅովհաննու. զգործս զոր ետ ինձ Հայր՝ զի կատարեցից զնոսա. նոքին իսկ գործքն՝ զոր գործեմ, վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս։

37 Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկայեաց վասն իմ։ Դուք ոչ ձայն նորա երբեք լսեսջիք. և ոչ զտեսիլ նորա տեսէք։

38 Եւ ոչ զբան նորա ունիք ի ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ հաւատայք։

39 Քննեցէք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանսն յաւիտենական. և նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ, որովք համարիք ունել կեանս։

31 Եթէ որ ես ինձ համար վկայումեմ՝ իմ վկայութիւնս ճշմարիտ չէ[24]։

32 Այրիշ է՝ որ ինձ համար վկայէ. և գիտեմ՝ թէ ճշմարիտ է վկայութիւնն՝ որ ինձ համար վկայէ[25]։

33 Դուք առաքեցիք Յովհաննէսի մօտ՝ և վկայեաց առաջի ճշմարտութեանն[26]։

34 Այլ ես ոչ ընդունիմ մարդկանցից իմ առնուն վկայութիւն. բայց էս առաջիս՝ որ դուք ապրիք։

35 Նա ճրագ էր՝ որ վառվռէր և լոյս էր տալիս[27]. և դուք կամեցաք միայն քիչ ժամանակ ուրախանալ նորա լուսովն[28]։

36 Այլ ես Յովհաննէսիցն էլ աւելի մեծ վկայութիւն ունիմ[29]. էն գործքերըն՝ որ Հայրն ինձ տուաւ, որ կատարեմ նորանց[30]. հենց էն գործքերն՝ որ գործում եմ, ինձ համար վկայումեն, թէ Հայրն առաքեց ինձ։

37 Եւ Հայրն որ ինձ ուղարկեց՝ նա ինձ համար վկայեց. դուք խլի մին ժամանակ ոչ նորա ձայնըն լսեցիք[31], և ոչ նորա կերպարանքն տեսիք[32]։

38 Եւ ոչ էլ նորա խօսքըն ձեզանում բնակված ունիք. պատճառն որ՝ էն որ նա ուղարկեց՝ դուք չէք հաւատում նորան։

39 Քննեցէք գրքերըն. որ դուք կարծումէք թէ նորանցով ունիք յաւիտենական կեանքն[33] և հենց նորանք են, որ ինձ համար վկայումեն՝ որ նորանցով կարծումէք թէ կեանքըն ունիք[34]։

(24) Յով. ը. 15։ Յայտ. գ. 14։ (25) Ա՛ռաք. գ. 17։ ժէ. 5։ Յովհ. ը. 18։ — Յովհ. ե. 6, 7. 9։ (26) Յովհ. ա. 15. 19. 27. 32։ (27) ը Պետր. ա. 19։ (28) Մատթ. ժգ. 20։ խա. 26։ Մարկ. գ. 29։ (29) — Յովհ. ե. 9։ (30) Յովհ. գ. 2։ ժ. 25։ ժե. 24։ (31) Մատթ. գ. 17։ ժե. 5։ Յովհ. գ. 27։ ը. 18։ (32) ը Օրին. գ. 12։ Յովհ. ա. 18։ — Տիմ. ա. 17։ — Յովհ. գ. 12։ (33) Խոշ. ը. 20։ ըբ. 15։ Դ՚Թագ. ժդ. 29։ Դ՚Տար. 10։ Գործ. ժե. 11։ (34) ը Օրին. ժը. 15. 18։ Դ՚Թագ. խգ. 27։

40 Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի կեանսն ունիցիք :
41 Ես փառս ՚ի մարդկանէ ոչ առնում :
42 Այլ գիտեմ զձեզ՝ թէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յանձինս :

43 Ես եկի յանուն Հօր իմոյ՝ և ոչ ընդունիք զիս . եթէ այլ ոք եկեսցէ յիւրում անուն, զնա ընդունիջիք :
44 Օ՞րինդ կարէք դուք հաւատալ . զի փառս ՚ի միմեանց առնում , և զփառս զոր ՚ի միոյն Աստուծոյ ոչ խնդրէք :
45 Այլ՝ ի՛ համարիջ՝ եթէ ես չարտաքս հանից ինչ իցեմ զձէնջ առ Հօր . գոյ ոմն չարտաքս կայ զձէնջ Այն՝ որում դուք յուսացեալ էք :

46 Օ՞ր եթէ հաւատայիք դուք Այ՝ ինձ , հաւատայիք արգիւօք և ինձ . զի նա վասն իմ խոկ գրեաց :

47 Օ՞ր եթէ նորա գրոցն ոչ հաւատայք , զիա՞րդ իմոց բանիցս հաւատայցէք :

40 Եւ դուք չէք կամենում գալ առ իս զի կեանքն առնիցէք[35] :
41 Ես մարդկանից փառք չեմ առնում[36] :
42 Այլ ճանաչեալեմ զձեզ՝ զի զսէրն Աստուծոյ չունիք ձեզ առ ձեզ :

43 Ես իմ Հօր անուանիւն եկի՝ և ինձ չէք ընդունում . ՚ի թէ զոր միւն ուրիշ կըգայ իւրոյն անուանիւն , նորան կընդունիք :
44 Ի՞նչպէս կարող էք դուք հաւատալ՝ որ իրարից էք փառք առնում[37] , և ձեր փառքըն ոչ միւն Աստուածմանիցն է՝ չէք խնդրում[38] :
45 Այ՝ ի կարծիք՝ որ ես Հօր մեր չարտաքս եմ ձեզանից . կայ միւն որ ձեզանից չարտաքսում է , ես Այ՝ օրէսն՝ որ դուք ձեր յոյսըն նորա վերայ էք գրել[39] :
46 Ինչու որ՝ եթէ դուք Այ՝ ամէն միւն հաւատայիք , ապա ինձ էլ կըհաւատայիք . պատճառն որ՝ նա ինձ համար գրեց[40] :
47 Այլ ՚ի թէ որ նորա գրքերին չէք հաւատում , ի՞նչպէս իմ խօսքերիս կըհաւատաք :

ԳԼ. Ը.

1 Երթեալ հինգ հայրապետ և երկու եւսիով հինգ հազար մարդկանց կերակրեցին : 15 Որոց համար ժողովուրդքն նոցա թագաւոր անել են ուզում : 16 Որոյ նա կըգնայ և ծովի վերայ գնալով ալեկոծանքին կըգնայ : 20 Որոյ հաւատն շատ բազմութիւն կըգնայ ՚ի թէ որ նորան հաւատան՝ բայց որ են հայրեցն կերին , որ նորան Երկիսոս նորանց սըվմեռ , և սըբահամար նորանց կըսատակ . 32 Ցոյց կըտայ թէ՝ ինքն իրան հաւատացեալներին կենդանի հայր է : 60 Նորա աշակերտաներիցն շատքն նորանից յետս կըգնան : 68 Պետրոսի դառնութիւնն : 70 Յուդայի Սատանայ լինելն :

1 Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծովուն Գալիլեացւոց Տիբերիայ :
2 Եւ զհետ երթայր նորա ժո-

1 Սրանից եաև գնաց Յիսուս Գալիլեացոց Տիբերիա ծովի մէկէլ կողմն[1] :
2 Եւ շատ ժողովուրդ էր գը-

(35) Յովհ . ա . 11 : գ . 19 : (36) Այ՝ . 34 : ա Գիտ . բ . 6 : (37) Յովհ . ժբ . 43 : (38) Հռոմ . բ . 29 : (39) Հռոմ . բ . 13 : (40) Կրնթ . գ . 15 : ժբ . 3 : ժբ . 18 : իբ . 18 : իթ . 10 : բ Օրին . ժբ . 15 . 18 : Յովհ . ա . 45 : Գործ . իգ . 22 : (1) Մատ . ժգ . 13 : Մարկ . ղ . 33 : Լուկ . թ . 10 . 12 :

Digitized by Google

զնովքրդ բանզուամ· զի տեսանէին զնշանսն՝ զոր առնէր ի վերայ հիւանդացդ ։

3 Եւ ի լեառն Յիսուս, և անդ նստէր աշակերտօքն հանդերձ ։

4 Եւ էր մերձ զատիկ տօնն Հրէից ։

5 Ամբարձ ի վեր զաչս իւր Յիսուս և տեսս, զի ժողովուրդ բազում գայր առ նա· ասէ ցփիլիպպոս· Ուստի գնեսցուք հաց՝ զի կերիցեն դոքա ։

6 Այս ասէր փորձելով զնա· այլ ինքն գիտէր՝ զինչ առնելոցն էր ։

7 Պատասխանի ետ նմա փիլիպպոս· Երկերիւր դահեկանի հաց չէ դոցա բաւական՝ թէպէտ և իւրաքանչիւր աք սակաւ ինչ առնուցաս ։

8 Ասէ ցնա մի յաշակերտացն նորա Անդրէաս՝ եղբայր Սիմոնի Պետրի·

9 Է սաս պատանեակ մի, որ ունի հինգ նկանակ գարեղէն՝ և երկուս ձկունս· այլ այն զինչ է առ այդչափ մարդիկ ։

10 Ասէ Յիսուս· Խոզեցուցէք զմարդիկդ· և էր խոտ յոյժ ի տեղւոջին· և բազմեցան մարդիկն թուով իբրև հինգ հազար ։

11 Եւ առ զհացն Յիսուս և գոհացաւ և բաշխեաց բազմականացն· նոյնպէս և ի ձկանցն որչափ և կամեցան ։

12 Եւ իբրև յագեցան, ասէ ցաշակերտան· Ժողովեցէք զնշխարքն կտորաց՝ զի մի՛ ինչ կորիցէ ։

13 Ժողովեցին և լցին երկոտասան սակաւի զնշխարացն ի հինգ գարեղէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերուղացն ։

նաւմ նորա եաւէն· ինքնաւ օր՝ անցնաւէին էն նշաններըն՝ որ անտուէք հիւանդներին վերայ ։

3 Յիսուս վեր էլաւ տարն, և աշակերտներին հետ նստաւէր էնտեղ ։

4 Եւ Հրէաներուն զատիկ տօնն մօտիկ էր[2] ։

5 Յիսուս իրան աչքերըն բարձրացրուց և տեսաւ, որ շատ ժողովուրդ էր գալիս իրան մօտ[3]· Փիլիպպոսին ասաւ· Ինչէ տեղից հաց գնենք՝ որ ուտան տան ։

6 Ասա բանըս փորձելոյ համար էր ասում· բայց ինքն գիտէաւէր՝ թէ ինչ պիտի անէր ։

7 Փիլիպպոսն պատասխան տուաւ նորան· Երկու հարիւր դահեկանի հաց բաւական չէ դրանց համար՝ ինպէս որ ամէն մէկն մի քիչ առնէ[4] ։

8 Նորա աշակերտներուն միւնն (այսինքն) Անդրեասն վէմ Սիմոնի եղբայրն՝ ասաց նորան ։

9 Տեղ մին տղայ կայ, որ հինգ գարէ հաց ունի և երկու ձուկ· բայց էն ինչ է ե էդչափ մարդկանց համար[5] ։

10 Յիսուս ասաց· Նդ մարդկանցըդ նստացրէք· և շատ խոտ կար էն տեղն· և մարդիկն նստեցին համարով իբր հինգ հազար ։

11 Եւ Յիսուս հացըն առաւ և գոհացաւ և բաժանեց նստաւղներին· էնպէս էլ ձըկներից որչափ որ կամեցան ։

12 Եւ երբոր կըշտացան, աշակերտներին ասաց· Ժողովեցէք էդ աւելցած կտորներըն՝ որ բան չըկորչի ։

13 Ժողովեցին և կտորներից ասաղն երկու քոռց լցրին էն հինգ գարե հացից՝ որ ուտաղներից աւելացաւ ։

(2) Ա Եփ· խգ· 5· 7· բ Օրէն· ժգ· 1· Ջուխ· բ· 13· ե· 1· (3) Մարկ· ժգ· 16· Մարկ· գ· 31· Ա Թագ· ք· 11· (4) Ջեռ· ժա· 21, 22· (5) գ Թագ· ք· 43·

Digitized by Google

14 Իսկ մարդիկն իբրև տեսին զնշանսն զոր արար՝ ասէին . եւ ի՛մ է ճշմարիտ մարգարէն , որ գալոց էր յաշխարհ :
15 Յիսուս իբրև գիտաց՝ եթէ գալոց են յափշտակել զնա , զի արասցեն զնա թագաւոր , գնաց դարձեալ ՚ի լեռն միայն :
16 Եւ իբրև երեկոյ եղև , իջին աշակերտքն նորա ՚ի ծովեզրն :

17 Եւ մտեալ ՚ի նաւ՝ գային յայնկոյս ծովուն ՚ի Կափառնաում . և իբրև նսեմացաւ , և չէ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս :
18 Եւ ծովն ՚ի սաստիկ հողմոյ շընչէրոյ յուզէր :
19 Եւ վարեալ իբրև ասպարէզս քսան և հինգ կամ երեսուն , տեսանէին զՅիսուս՝ զի գնայր ՚ի վերայ ծովուն՝ և մերձ էր ՚ի նաւն , զարհուրեցան յոժ :

20 Նա ասէ ցնոսա . Ես եմ՝ մի՛ երկնչիք :
21 Եւ կամէին ընդունել զնա ՚ի նաւն . և վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝ յոր երթային :

22 Յաւուրսն անդր ժողովուրդն՝ որ կայր յայնկոյս ծովուն , տեսանէր՝ թէ այլ նաւ ոչ գոյր անդ բայց միայն ՚ի միոյն , յոր մտին աշակերտքն Յիսուսի . և զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ՚ի նաւն , բայց միայն աշակերտքն նորա գնացին :
23 Իբրև այլ նաւք գային ՚ի Տիբերեայ մօտ յայն տեղին՝ ուր ջհացն կերան :
24 Իսկ իբրև ետես ժողովուրդն եթէ Յիսուս ոչ է անդ՝ և ոչ աշակերտքն նորա , առին նոքա ըզնաւսն , և եկին ՚ի Կափառնաում խնդրել զՅիսուս :

14 Այլք մարդիքն երբոր տեսին էն նշանըն որ արաւ , ասումէին՝ թէ էս էն ճշմարիտ մարգարէն է՝ որ պէտք էր աշխարհս գայ՝ :
15 Յիսուս երբոր գիտաց՝ թէ գալու են իրան յափշտակելոյ՝ որ թագաւոր տանեն իրան՝ միայն գընաց սարն ինքնակ :
16 Եւ երբոր իրիկուն էլաւ՝ նորա աշակերտանեն վէր եկին ծովի եզրն (ղսալը)՝ :
17 Եւ մտին նաւն և գնացին ծովի էն կողմն Կափառնայում . և երբոր մըթնացաւ՝ Յիսուս դեռ չէր եկել նորանց մօտն :
18 Եւ ծովն՝ սաստիկ քամոյ փըչելուն շարժվումէր :
19 Եւ երբոր քսան և հինգ կամ երեսուն ասպարէզի (ֆանկէլէյ) չափ առաջ գնացին՝ Յիսուսին տեսին՝ որ ծովի վերայ գալիս էր՝ և նաւին մօտիկ էր՝ և շատ ահավ լըցվան :
20 Եւ նա ասաց նորանց . Ես եմ՝ մի՛ վախենաք :
21 Եւ կամենումէին նորան ընդունել նաւի մէջն . և նաւն շատով հասաւ էն երկիրն՝ որ գնումէին :
22 Յետևի օրումն էն ժողովուրդն՝ որ ծովի էն կողմն էր՝ տեսաւ որ ուրիշ նաւ չըկար էնտեղ էն մընիցն չոկ՝ որ Յիսուսի աշակերտներն նորա մէջ մտին . և որ Յիսուս աշակերտներին հետ նաւն չէր մտած , բայց միայնակ նորա աշակերտներն գնացին :
23 Այլք Տիբերիայից ուրիշ նաւեր եկին էն տեղին մօտ՝ որ հացըն կերին :
24 Ապա երբոր ժողովուրդն տեսաւ՝ թէ ոչ Յիսուսն էնտեղ է և ոչ նորա աշակերտներն , նորանք էն նաւերըն առին և եկին Կափառնայում՝ , որ Յիսուսին մանգան :

(6) Ննդ . խե . 10 : բ Օրին . ժբ . 15 . 18 : Մոպս . ժա . 3 : Յովհ . ա . 21 : գ . 19 . 25 : ե . 40 : (7) Մոպս . ժգ . 33 : Մոպ . ղ . 47 :

Digitized by Google

25 Եւ իբրեւ գաին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. Ռաբբի՝ ե՞րբ եկիր այսր:

26 Պատասխանի եւ նոցա Յիսուս եւ ասէ. Ամէն ամէն ասեմ ձեզ. Խնդրէք զիս, իբր ոչ երեք զի ըզնշանս ինչ տեսէք, այլ զի կերայք ի հացէ անտի՝ եւ յագեցարուք:

27 Երթայք գործեցէք ոչ զկորըստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ ի կեանն յաւիտենական, զոր Որդին մարդոյ տացէ ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած:

28 Ասեն ցնա. Ո՞ի՞նչ առնիցեմք՝ զի զգործան Աստուծոյ գործեսցուք:

29 Պատասխանի Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. Այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն որ առաքեացն զնա:

30 Ասեն ցնա. Ո՞ի՞նչ նշան առնիցես՝ զի տեսցուք եւ հաւատասցուք, զի՞նչ գործիցես:

31 Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ՝ որպէս եւ գրեալ է. Հաց յերկնից եւ նոցա ուտել:

32 Ասէ ցնոսա Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ Մովսէս եւ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ:

33 Որ հաց Աստուծոյ է, որ իջանէ յերկնից՝ եւ կեանս տայ աշխարհի:

34 Ասեն ցնա. Տէր՝ յամենայն ժամ տուր մեզ զհացն զայն:

25 Եւ երբոր նորան ծովի էն կուզտեն գտին՝ նորան ասացին. Ռաբբի՝ ե՞րբ եկիր հասեղ:

26 Յիսուս պատասխան տուաւ նորանց եւ ասաց. Ա՛շմարիտը ձըշմարիտըն ասում եմ ձեզ. Դուք ինձ ման էք գալիս՝ չէ թէ նրա համար՝ որ մին նշան տեսիք, բայց որ էն հացիցն կերիք՝ եւ կշտացաք:

27 Գնացէք ոչ թէ կորչելու կերակուրըն գործեցէք, բայց էն կերակուրըն, որ յաւիտենական կեանքին մէջ կըմնայ, որ նորան Որդին մարդոյ կըտայ ձեզ[8]. պատճառն որ՝ Աստուած Հայրն կնքով (ձօհրով) հաստատեց նորան[9]:

28 Նորան ասացին. Ի՞նչ պիտի անենք՝ որ Աստուծոյ գործքերըն գործենք:

29 Յիսուս պատասխան տուաւ եւ նորանց ասաց. Գա է Աստուծոյ գործըն՝ որ հաւատաք նորան՝ որ նա ուղարկեց[10]:

30 Նորան ասացին. Ի՞նչ նշան կանես՝ որ տեսնենք եւ հաւատանք, ի՞նչ կը գործես[11]:

31 Մեր հարքն անապատի (էօլի) մէջն մանանայ կերին[12]. ինչպէս որ գրված է թէ՝ Երկնքիցն հաց տուաւ նորանց ուտել[13]:

32 Յիսուս նորանց ասաց. Ա՛շմարիտն ձշմարիտըն ասում եմ ձեզ. թէ Մովսէս չըտուաւ ձեզ էն հացը երկնքիցն, բայց իմ Հայրս երկնքիցն ձշմարիտ հացըն կըտայ ձեզ:

33 Պատճառն որ՝ Աստուածանից հացն էն է՝ որ երկնքիցն վէր է գալիս՝ եւ աշխարհքին կեանք է տալիս:

34 Նորան ասացին. Տէր՝ ամէն ժամանակ տուր մեզ էն հացըն[14]:

(8) Ա՛ր. 54 · Ովհ. գ. 14: (9) Մատ. գ. 17 · Ժէ. 5 · Մարկ. ա. 11 · Ը. 7 · Լուկ. գ. 22 · Ը. 35 · Ովհ. ա. 33 · ե. 37 · Ը. 18 · Գործ. բ. 22 · Բ Պետր. ա. 17: (10) ա Ովհ. գ. 23: (11) Մատ. ԻԶ. 38 · ԻԷ. 1 · Մարկ. Ը. 11 · ա Կորնթ. ա. 22: (12) Նէհ. ԻԷ. 15 · Ամպար. ԻՁ. 7 · Ղեւմ. Բ. 15 · ա Կորնթ. ժ. 3: (13) Սաղ. ՀԸ. 24, 25: (14) Ովհ. գ. 15:

Digitized by Google

35 Ա՛սէ ցնոսա Յիսուս . Ես եմ Հացն կենաց . որ գայ առ իս՝ ո՛չ քաղցիցէ , և որ Հաւատայ յիս՝ ո՛չ երբէք ծարաւեսցի :

36 Ա՛յլ ասացի ձեզ՝ թէ տեսէք զիս , և ո՛չ Հաւատայք :

37 Ո՛րամենայն՝ զոր տայ ինձ Հայրն , առ իս եկեսցէ . և որ գայ առ իս՝ ո՛չ Հանից արտաքս :

38 Ո՛չ իջի ես յերկնից՝ ո՛չ զի զկամս իմ արարից , այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս :

39 Ա՛յս են կամք Հօր իմոյ , որ առաքեացն զիս . զի զամենայն՝ զոր ետ ցիս Հայր՝ ո՛չ կորուսից ի՛ նմանէ , այլ յարուցից զնա յաւուրն յետնում :

40 Ա՛յս են կամք Հօր իմոյ , զի ամենայն որ տեսանիցէ զՈրդի և Հաւատայցէ ի՛ նա , ընկալցի զկեանսն յաւիտենական . և ես յարուցից զնա յաւուրն յետնում :

41 Տրտնջէին զնմանէ Հրէայքն , զի ասաց՝ Թէ Ես եմ Հացն իջեալ յերկնից :

42 Եւ ասէին . Ո՞չ սա է Յիսուս որդին Յովսեփու , զորոյ մեք գիտեմք զՀայրն և զՄայր . իսկ արդ՝ զիա՞րդ ասէ՝ Թէ Ես յերկնից իջի :

43 Պատասխանի ետ Յիսուս , և ասէ ցնոսա . Ա՛ռ զրթմնջէք ընդ միմեանս :

44 Ո՛չ ոք կարէ գալ առ իս , եթէ ո՛չ Հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա . և ես յարուցից զնա յաւուրն յետնում :

45 Գրեալ է ի մարգարէս , Եւ

35 Յիսուս ետուն ասաց . Ես եմ կեանց Հացն[15] . ով որ ինձ մօտ է գալիս՝ չի սովիլ , և ով որ ինձ Հաւատումէ՝ իսկի մին ժամանակ չի ծարաւիլ[16] :

36 Այց ասացի ձեզ՝ Թէ տեսիք ինձ՝ և չէք Հաւատում[17] :

37 Ա՛մէն՝ ում որ Հայրն ինձ է տալիս[18] , ինձ մօտ կըգայ . և նա որ ինձ մօտ է գալիս՝ դուրս չեմ Հանիլ նորան[19] :

38 Պատճառն որ՝ ես վեր չեկի երկնքիցն՝ որ իմ կամքըս անեմ[20] , քայց նորա կամքըն՝ որ ինձ ուղարկեց[21] :

39 Այս է իմ Հօրս կամքն , որ ինձ ուղարկեց . որ էն ամէնըն՝ որ Հայրն ինձ առաւ՝ նորանից չըկորցնեմ[22] . այլ յետին օրումն յարուցանեմ նորան :

40 Այս է իմ Հօրս կամքն . որ ամէն ով որ տեսնէ Որդուն և Հաւատայ նորան , յաւիտենական կեանքըն ընդունի . և ես յետին օրումն կըյարուցանեմ նորան[23] :

41 Հրէաներն տրտնջումէին նորանից՝ որ ասաց , Թէ Ես եմ երկընքիցն վեր եկած հացն :

42 Եւ ասումէին . Չէ՞ որ սա Յոսեփի որդին է՝ որ մենք գիտումենք նորա հօրըն և մօրը . ապա ի՞նչպէս է ասում՝ Թէ Ես երկնքիցն վեր եկի[24] :

43 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց . Ա՛ռ տրտնջիք իրար հետ :

44 Ո՛չ ով կարող չէ ինձ մօտ գալ , եթէ Հայրն՝ որ ինձ ուղարկեց՝ չը՛ քաշէ նորան . և ես յետին օրումն կըյարուցանեմ նորա[25] :

45 Գրված է մարգարէների մէջն

(15) Ա Ի՛ · 48 · 59 : (16) Յովհ · գ · 14 : է · 37 : (17) Ա Ի՛ · 20 : Ա՛յլ · 65 : (18) Ա՛յլ · 45 : (19) Մատթ · իգ · 24 : Յովհ · ժ · 28 , 29 : բ Տի՛մ · բ · 19 : ա Յովհ · բ · 19 : (20) Մատթ · իզ · 39 : Յովհ · է · 30 : (21) Յովհ · գ · 34 : (22) Յովհ · ժ · 28 : ժէ · 12 : ժը · 6 : (23) Ա Ի՛ · 27 : Ա՛յլ · 47 · 55 : գ · 15 , 16 : գ · 14 : (24) Մատթ · ժգ · 55 : Մտթ · գ · 3 : Ղ՛ուկ · գ · 22 : (25) Նրկ · ա · 4 : Ա՛յլ · 60 :

Digitized by Google

եղբեցին ամենեքեան ուսեալք Աստուծոյ · ամենայն որ լսէ ի Հօրէ՝ և ուսանի , գայ առ իս ։

46 Ոչ եթէ զՀայրն ուրուք տեսեալ իցէ , եթէ ոչ՝ որ էն Աստուծոյ , նա տեսեալ զՀայրն ։

47 Ամէն ամէն ասեմ ձեզ · զի Որ հաւատայ իս , ընդունի զկեանսն յաւիտենականս ։

48 Ես եմ հացն կենաց ։
49 Հարքն ձեր կերան զմանանայն յանապատին , և մեռան ։

50 Այս է հացն , որ յերկնից իջեալ է · զի որ ուտիցէ ոք ի նմանէ՝ մի՛ մեռանիցի ։
51 Ես եմ հացն կենդանի , որ յերկնից իջեալ ։
52 Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ ի յաւիտեան · և հացն զոր ես տաց՝ մարմին իմ է , զոր ես տաց վասն կենաց աշխարհի ։

53 Ասարանչէին ընդ միմեանս Հրէայքն և ասէին · Օ՞րիդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր ուտել ։
54 Յսէ ցնոսա Յիսուս · Ամէն ամէն ասեմ ձեզ , Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ և արբջիք զարիւն նորա , ոչ ունիք կեանս յանձինս ։
55 Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ , ունի զկեանսն յաւիտենականս · և ես յարուցից զնա յաւուրն յետնում ։
56 Օրի մարմին իմ ճշմարիտ կեթ՝ և արիւնք Աստուածանից տալորած կըլինին[26] · ամեն ոլոր Հօրիցն է լսում և սովորում՝ գալիս է ինձ մօտ[27] ։

46 Իբր չէ թէ մինն տեսել է Հօրն[28] · բայց միայն նա՝ որ ինքն Աստուածանից է · նա տեսաւ Հօրըն[29] ։
47 Ա՛շխարհիրն ճշմարիտըն ասումեմ ձեզ · Թէ Ով որ ինձ հաւատումէ՝ յաւիտենական կեանքըն ընդունումէ[30] ։
48 Ես եմ կենաց Հացն[31] ։
49 Ձեր հարքն մանանան կերին անապատումն (չՀօլօմ) , և մեռան[32] ։
50 Այս է (էն) հացն , որ երկընքիցն է վէրնկել՝ որ եթէ մինն տրանից ուտէ՝ չէ մեռնիլ[33] ։
51 Ես եմ կենդանի Հացն , որ երկնքիցն է վէր եկել[34] ։
52 Ով որ մինն էս Հացիցս ուտէ՝ յաւիտեան կապրի · և (էն) Հացն՝ որ ես կըտամ՝ իմ մարմինս է , որ ես նորան աշխարհքի կենաց Համար կըտամ[35] ։

53 Հրէաներն իրար հետ կռվումեին և ասում[36] · Այս ինչպէս կարօղ է իրան մարմինըն տալ մեզ ուտելոյ[37] ։
54 Յիսուս նորանց ասաց · Ա՛մէն ամէն ասումեմ ձեզ , Ով որ Որդոյ մարդոյ մարմինըն չուտէք և նորա արիւնըն չըխմէք , կեանք չունիք ձեր անձին մէջն[38] ։
55 Ով որ իմ մարմինըս ուտումէ և իմ արիւնըս խմումէ , յաւիտենական կեանքըն ունի · և ես յետին օրումն կըյարուցանեմ նորան[39] ։
56 Ինչու որ՝ իմ մարմինս ճշմա-

(26) Նոյ · ծգ · 13 ։ Նբեմ · լա · 34 ։ Ա՛ե · գ · 2 ։ Նբբ · ը · 10 ։ ժ · 16 ։ (27) Ա՛նբ · 37 ։ (28) Յովհ · ա · 18 ։ ե · 37 ։ (29) Ա՛ռաք · ժա · 27 ։ Ղ՛ուկ · ժ · 22 ։ Յովհ · ա · 18 ։ ե · 29 · ը · 19 ։ (30) Յովհ · գ · 16 · 18 · 36 ։ Ա՛նբ · 40 ։ (31) Ա՛նբ · 33 · 35 ։ (32) Ա՛նբ · 31 ։ (33) Ա՛ռյբ · 51 · 59 ։ (34) Յովհ · գ · 13 ։ (35) Նբբ · ժ · 5 · 10 ։ (36) Յովհ · ե · 43 ։ թ · 16 · ժ · 19 ։ (37) Յովհ · գ · 9 ։ (38) Ա՛ռաք · ի՛ը · 26 ։ 28 ։ (39) Ա՛նբ · 37 · 40 ։ Ա՛ռյբ · 64 ։ Յովհ · գ · 14 ։

Digitized by Google

բակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։

57 Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ՝ յիս բնակեսցէ, և ես՝ ի նմա։

58 Որպէս առաքեաց զիս կենդանին Հայր, և ես կենդանի եմ վասն Հօր, և որ ուտէն զիս, և նա կեցցէ վասն իմ։

59 Այս է հացն՝ որ յերկնից իջեալ՝ ոչ որպէս կերան հարքն ձեր զմանանային՝ և մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւիտեան։

60 Զայս ասաց ի ժողովրդեանն՝ յաւետացանելն ի Կափառնաւում։

61 Եւ բազումք յաշակերտացն իւրեանց լուան՝ ասեն. Խիստ է բանդ այդ, ո՞ կարէ լսել դմա։

62 Իրեւ գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրտնջեն վասն այնորիկ աշակերտքն, ասէ ցնոսա. Սիդ գայթակղեցուցանէ զձեզ։

63 Եւ եթէ տեսանիցէք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն։

64 Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն՝ զոր ես խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է և կեանք։

65 Այլ են ոմանք ի ձէնջ՝ որ ոչ հաւատան, քանզի գիտէր Յիսուս ի սկզբանէ, ով են այնորիկ՝ որ ոչն հաւատան, և ով է այն՝ որ մատնելոցն է զնա. և ասէր.

66 Վասն այնորիկ ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ

րիտ կերակուր է, և իմ արիւնս ճշմարիտ խմելիք է։

57 Որ իմ մարմինըս ուտուի և իմ արիւնըս խմուի՝ ինձանուն կըբնակվի, և ես նորանուն[40]։

58 Ինչպէս որ կենդանի Հայրն ինձ ուղարկեց, և ես կենդանի եմ Հօր համար, էնպէս էլ նա՝ որ ինձ ուտուի, կենդանի կըլինի ինձ համար։

59 Ահա էն հացըն՝ որ երկընքիցն վեր է եկել, չէ թէ ինչպես որ ձեր հարքն մանանան կերին և մեռան. (բայց) ով որ էս հացըս ուտուի՝ յաւիտեան կապրի[41]։

60 Ասս բանըս ժողովարանի մէջն ասաց՝ երբոր Կափառնայումի միջումն սովորցնում էր։

61 Եւ աշակերտներիցն շատերն երբոր (էս) լսեցին՝ ասացին. Կըժուար է էդ բանդ, ով կարօղ է լսել դորան[42]։

62 Երբոր Յիսուս գիտաց իրան անձնուն՝ թէ աշակերտներն ըրտնջումին նորա համար, նորանց ասաց. Սիդ է գայթակղեցնում ձեզ։

63 Ապա (ինչ) եթէ Որդոյն մարդոյ տեսնէք, որ վեր էլլի (էնտեղն)՝ որ առաջ էր[43]։

64 Հոգին է կենդանացնօղ, մարմինն մին օգուտ չիտալիս. էն բանըն՝ որ ես ձեզ հետ խօսեցի՝ հոգի է և կեանք[44]։

65 Այց ձեզանից մին քանիսն կան, որ չեն հաւատում[45], պատճառն որ՝ Յիսուս սկըզբից գիտումէր, ով են նորանք՝ որ չեն հաւատում, և ով է նա՝ որ պիտի մատնէր իրան. և ասումէր[46]։

66 Նրա համար ասացի ձեզ՝ թէ ոչ ով կարօղ չէ ինձ մօտ գալ,

(40) = Յով. գ. 24։ դ. 15, 16։ (41) Ել. 19, 50, 51։ (42) Ամբ. 67։ Մատթ. ժա. 6։ (43) Յով. գ. 13։ Մարկ. ժգ. 19։ Գործ. ա. 9։ Եբր. գ. 8։ (44) Բ Կորնթ. դ. 6։ (45) Ել. 36։ (46) Յով. բ. 24, 25։ ժգ. 11։

Digitized by Google

թէ ուշ ինչ առնեալ նմա ի ձօրեն իմմէ :

67 Այսմանէ բազումք յաշակերտացն նորա չեքան յետս , և ոչ ևս գնային ընդ նմա :

68 Ասէ Յիսուս ցերկոտասանսն ասէ ցնոսա . Միթէ և դուք կամիք երթալ :

69 Պատասխանի ետ նմա Սիմոն Պետրոս . Տէր՝ առ ո՞վ երթիցուք . բանս կենաց յաւիտենականաց ունիս :

70 Եւ մեք հաւատացաք և ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոս Որդի Աստուծոյ :

71 Պատասխանի ետ նոցա Յիսուս . Ոչ ես զձեզ զերկոտասանսդ ընտրեցի , և մի՞ ի ձէնջ Սատանայ է :

72 Եւ ասէր զՅիմովնեան Յուդայէ Սկարիովտացւոյ . զի նա իսկ մատնելոց էր զնա . և մի էր յերկոտասանից :

եթէ իմ ձօրիցն ելովսած չելնի (նորան)[47] :

67 Յրանից ետև նորա աշակերտներից շատերն յետ գնացին , և էլ յետ չէին գալիս նորա հետ[48] :

68 Յիսուս ասեց երկուսի աշակերտներին ասաց . Միթէ դուք էլ կամենում գնալ :

69 Սիմոն Պետրոսն պատասխան տուաւ նորան . Տէր՝ ե՞մ ինչ գնանք . (դու) յաւիտենական կենաց խօսքեր ունիս[49] :

70 Եւ մենք հաւատացինք և ճանաչեցինք՝ թէ դու ես Քրիստոսն Աստուծոյ Որդին[50] :

71 Յիսուս պատասխան տուաւ նորանց . Չէ՞ որ ես ձեզ տասներկուսիդ ընտրեցի[51] , և ձեզանից մինն Սատանայ է[52] :

72 Եւ (էս) Իսկարիոտացի Սիմոնեան Յուդայի հետևար էր ասում . ինչու որ՝ հենց նա պիտի մատնէր նորան . և ինքն տասներկուսից մինն էր :

ԿՒ · Ն

1 Ցնոսա իրան ազգականներին փառաբանութիւնն և համբաւականութիւնն կըստեղ : 10 Տուէրտեղն տօնին կըտօնէրնէ : 14 Յտաճարի մէջն կըսովորէնէ : 40 Յտովտածութի մէջն իրան հետը եղած ուրիշ ուրիշ կարծիքներըն : 45 Փարիսեացոց բարկութիւնն իրանց ոտաստաքն նրին դէմ որ Աքիսուին չին բանիլ և նորանց տանիլ , և Նիկոդիմոսն նորա կողմից խօսելուն հետևը նորանք կըստանին նորան :

1 Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլեա . քանզի ոչ կամէր ի Հրէաստանի շրջիլ , զի խնդրէին զնա Հրեայքն սպանանել :

2 Եւ էր մերձ տօնն Հրէից տաղաւարահարաց :

3 Ասեն ցնա եղբարքն նորա . Կնա աստի և երիթ ի Հրէաստան ,

1 Եւ սրանից ետև Յիսուս ժամ էր գալիս Գալիլեայի միջումն . ինչու որ՝ չէր կամենում Հրեաստանումն (Ջհուդաստանումն) ժամգալ , պատճառն որ՝ Հրեաներն խնդրում էին սպանել նորան[1] :

2 Եւ Հրեաների տաղաւարահարաց տօնն մօտիկ էր[2] :

3 Նորա եղբարներն ասացին նորան . Ելատեղից դուրս եկ և գնա՝

(47) Ա Թես . 44 , 45 : (48) Ա Թես . 61 : (49) Դուբ . ե . 20 : (50) Մատթ . ժգ . 16 : Մարկ . ը . 29 : Ղուկ . ք . 20 : Յովհ . ա . 49 : ժա . 27 : (51) Ղուկ . զ . 13 : (52) Յովհ . ժգ . 27 : (1) Յովհ . ե . 16 . 18 : (2) Ղեւտ . իգ . 34 :

Digitized by Google

զի և աշակերտքն քո տեսցեն զգործս որդ քո՝ զոր գործես :

4 Ոչ ոք զի՝ որ ի ծածուկ ինչ գործէ, և խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ զայդ գործես, յայտնեա՛ զանձն քո աշխարհի :

5 Քանզի և եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա :

6 Ասէ ցնոսա Յիսուս. Ժամանակ իմ չէ՛ է հասեալ, բայց ձեր ժամանակ յամենայն ժամու պատրաստ է :

7 Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց զիս ատեայ, զի ես վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն իւր չարութեան են :

8 Դուք երթայք ի տօնն յայն, ես ոչ երթամ ի տօնն յայն. զի իմ ժամանակ չէ՛ է լցեալ :

9 Այս իրբև ասաց՝ ինքն մնաց անդէն ի Գալիլեա :

10 Իրբև ելին եղբարքն նորա, ապա և ինքն ել ի տօնն. ոչ յայտնի, այլ իբրև ի ծածուկ :

11 Եւ Հրեայքն խնդրէին զնա ի տօնի անդ՝ և ասէին, Ո՞ր իցէ նա :

12 Եւ քրթմնջիւն էր զնմանէ ի ժողովուրդն. կէսքն ասէին՝ թէ Նա՛ւաստ է. այլքն ասէին՝ Ո՛չ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն :

13 Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն երկիւղին Հրէից :

14 Իբրև տօնն կէսքն եղեալ էր, ել Յիսուս յտաճարն, ուր ի ուսուցանէր :

4 Ոչ ոք ինչ ուսուցանէ ի ծածուկ, և ինքն ուզէ յայտնի լինել. եթէ զայդ առնես, յայտնեա՛ զանձն քո աշխարհի :

5 Զի ոչ հաւատային նմա եղբարքն նորա :

6 Ասէ ցնոսա Յիսուս. Ժամանակ իմ դեռ չէ հասեալ, բայց ձեր ժամանակ միշտ պատրաստ է :

7 Ոչ կարէ աշխարհս ատել զձեզ. բայց զիս ատէ, զի վկայեմ վասն նորա՝ եթէ գործքն իւր չարութեան են :

8 Դուք ելէ՛ք ի տօնն յայն, ես ոչ ելանեմ ի տօնն յայն. զի իմ ժամանակ դեռ լցեալ չէ :

9 Այս ասաց՝ և մնաց ի Գալիլեա :

10 Իբրև ելին եղբարքն նորա, ապա և ինքն ել ի տօնն, ոչ յայտնի, այլ իբրև ի ծածուկ :

11 Հրեայքն խնդրէին զնա յտաճարին և ասէին, Ո՞ր իցէ նա :

12 Եւ քրթմնջիւն էր ի բազումս ի ժողովրդենէ վասն նորա. ոմանք ասէին՝ Բարի է նա. այլք ասէին՝ Ո՛չ, այլ մոլորեցուցանէ զժողովուրդն :

13 Եւ ոչ ոք յայտնի խօսէր վասն նորա՝ երկիւղ ունելով զՀրեայսն :

14 Եւ յորժամ կէսքն եղեալ էր, ել Յիսուս յտաճարն և ուսուցանէր :

(3) Ասոր. ժբ. 46 : Ասբ. գ. 31 : Պոլթ. ա. 14 : (4) Ասբ. գ. 21 : (5) Յովհ. բ. 6 : ը. 20 : ա՛այր. 8. 30 : (6) Յովհ. ժէ. 19 : (7) Յովհ. գ. 19 : (8) Յովհ. ը. 20 : ա՛իր. 6 : (9) Յովհ. ժա. 56 : (10) Յովհ. թ. 16 : ժ. 19 : (11) Ասոր. խ. 46 : Գ՛ոխ. է. 16 : Յովհ. է. 14 : ա՛այր. 40 : (12) Յովհ. թ. 22 : ժբ. 42 : ժթ. 38 :

Digitized by Google

Յիսուս ՝ի տաճարն՝ և ուսուցանէր :

15 Զարմանային Հրեայքն և ասէին . Իմիրդ գիտէ սա , զի ուսեալ բնաւ չէ :

16 Պատասխանի եւ նոցա Յիսուս և ասէ . Իմ վարդապետութիւնս չէ իմ , այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս :

17 Եթէ ոք կամի զկամն նորա առնել՝ գիտասցէ վասն վարդապետութեանս , յԱստուծոյ իցէ արդեօք , եթէ ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ :

18 Որ յանձէ իւրմէ խօսի , փառս զանձին իւրում խնդրէ . իսկ որ խնդրէ զփառս այնորիկ՝ որ առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է , և անիրաւութիւն ոչ գոյ ՝ի նմա :

19 Ոչ Մովսէս եւ ձեզ զօրէնսդն , և ոչ ոք ՝ի ձէնջ առնէ զօրէնսն :

20 Զի խնդրէք զիս սպանանել . պատասխանի եւ ժողովուրդն և ասէ . Դեւ քո ՝ի քեզ . ով խնդրէ զքեզ սպանանել :

21 Պատասխանի եւ նոցա Յիսուս և ասէ . Գործ մի գործեցի , և ամենեքին զարմացեալ էք :

22 Վասն այնորիկ Մովսէս եւ ձեղ թլփատութիւն , զի ոչ եթէ ՝ի Մովսիսէ էր , այլ ՝ի հարց առաքն . և ՝ի շաբաթու թլփատէք զմարդ :

23 Իսկ արդ՝ եթէ թլփատութիւն առնու մարդ ՝ի շաբաթու , զի մի՛ օրէնքն Մովսիսի լուծցին . ընդ ես ցասուցանեմ էք՝ զի ողջոյն իսկ մարդ վերս էլաւ առաքն՝ և առողջացուաք :

15 Հրեայքն զարմանուքին և ասեմ . Այս ինչպէս է գիտեմ գրքերըն , որ իսկի սովորած չէ[13] :

16 Յիսուս պատասխան տուաւ նոցանց և ասաց . Իմ վարդապետութիւնս իմն չէ , այլ նորանն է՝ որ ինձ ուղարկեց[14] :

17 Ով որ մինն կամենուի նորա կամքըն անել՝ նա կիմանայ իմ վարդապետութեան համար , եթէ Աստուածանից է , կամ եթէ ես իմ անձինցն եմ խօսում[15] :

18 Ով որ իրան անձինցն է խօսում , իրան անձին փառքըն է խնդրում . բայց նա՝ որ նորա փառքըն է խնդրում՝ որ ուղարկեց նորան՝ նա ճշմարիտ է , և անիրաւութիւն չըկայ նորանում[16] :

19 Չէ՞ որ Մովսէս տուաւ ձեզ օրէնքըն , և ձեզանից ոչ ով չի կատարում օրէնքն[17] :

20 Ինչու էք ուզում ինձ սպանել . ժողովուրդն պատասխան տուաւ և ասաց[18] . Դեւ կայ քեզանում . ով է ուզում՝ որ քեզ ըսպանէ[19] :

21 Յիսուս պատասխան տուաւ նորանց և ասաց . Մի՝ն գործ գործեցի , և ամենդ զարմացել էք :

22 Դրա համար Մովսէս ձեզ տուաւ թլփատութիւնըն , չէ թէ որ Մովսէսին էր[20] , բայց էն հին հարնցին[21] . և շաբաթի օրումն մարդ էք թլփատում :

23 Ապա եթէ մարդ շաբաթ օրումն թլփատութիւն է առնում՝ որ Մովսէսի օրէնքըն չըքանդվի , ինձ վերայ բարկացած էք՝ որ ես

(13) Մատթ . ժգ . 54 : Մարկ . ը . 2 : Լուսկ . դ . 22 : Գործ . բ . 7 : (14) Յովհ . գ . 11 : ը . 28 : ժբ . 49 : ժդ . 10 . 24 : (15) Յովհ . ը . 43 : (16) Յովհ . է . 41 : ը . 50 : (17) Նէե . խդ . 3 : բ Օրին . լգ . 4 : Յովհ . ա . 17 : Գործ . է . 38 : (18) Մատթ . ժբ . 14 : Մարկ . գ . 6 : Յովհ . է . 19 . 18 . ժ . 31 . 39 : ժա . 53 : (19) Յովհ . ը . 48 . 52 . ժ . 20 : (20) Ղեւ . ժբ . 3 : (21) Ծննդ . ԻԷ . 10 :

Digitized by Google

մարդ բժշկեցի ի շաբաթու ։

24 Ա՛ի ըստ աչս գաւառք , այլ ուղիղ դատաստան արարէք ։
25 Ի՛սկին ամանք ՅԵրուսաղէմացւոց անտի . Ոչ նա է սա՝ զոր խնդրէին սպանանել ։
26 Եւ ահաւասիկ յայտնապէս խօսի , և չասեն ինչ ընդ դմա . գուցէ արդեօք և իշխանքն գիտացին՝ թէ սա իցէ Քրիստոս ։
27 Ի՛սկ զսա գիտեմք աւստի է . իսկ Քրիստոս յորժամ գայցէ , ոչ ոք գիտէ ուստի է ։

28 Ի՛ղաղակեաց Յիսուս ի տաճարին , ուսուցանէր՝ և ասէր . Եւ զիս գիտէք , և ուստի եմ գիտէք . և յանձնէ իմմէ ոչ եմ եկեալ , այլ է ճշմարիտ՝ որ առաքեացն զիս՝ զոր դուքն ոչ գիտէք ։

29 Ես գիտեմ զնա , զի ի նմանէ իսկ եմ , և նա առաքեաց զիս ։

30 Ի՛նդրէին զնա ունել , և ել ի ձեռաց նոցա . և ոչ ոք արկ ի նա ձեռն , զի չէ՛ր հասեալ ժամ նորա ։

31 Եւ բազումք ի ժողովրդենէն հաւատացին ի նա՝ և ասէին . Քրիստոս յորժամ գայցէ՝ միթէ աւելի՞ նշանս առնիցէ , քան զոր սոյա առնէ ։

32 Եւ լուան փարիսեցիքն զրմրտունջ ժողովրդեանն զնմանէ . և առաքեցին քահանայապետքն և փարիսեցիք սպասաւորս՝ զի կալցին զնա ։

ամբողջ մարդ բժշկեցի շաբաթ օրուանն[23] ։

24 Ի՛նչքի երևութիւ մի՛ դատէք , քայց շիտակ դատաստան արէք[23] ։
25 Երուսաղէմացիներից մին քանիսն ասում էին . Չէ՞ որ սա էն է որ ուզում էին նորան սպանել ։
26 Եւ ահա յայտնի խօսում է , և բան չեն ասում դորան . չըլինի՞ որ իշխաններն էլ իմացան՝ որ սա է Քրիստոսն[24] ։
27 Քայց սորան գիտում ենք թէ որտեղից է[25] . և Քրիստոսն երբոր կըգայ , իսկի մինն չի գիտենալ թէ որտեղից է ։
28 Յիսուս աղաղակեց տաճարում , սովորցնում էր և ասում էր . Թէ ինձ գիտում էք , և թէ ինչ տեղից եմ եկել գիտում էք[26] . և իմ անձնիցըս չեմ եկել[27] . քայց նա ճշմարիտ է՝ որ ինձ ուղարկեց[28] . որ դուք նորան չէք գիտում[29] ։
29 Ես գիտում եմ նորան , ինչու որ՝ հենց նորանից եմ , և նա ուղարկեց ինձ[30] ։
30 Եւ ուզում էին բռնել նորան[31] , և նորանց ձեռներից դուրս գնաց . և ոչ ոք ձեռք չը ձգեց նորան[32] . ինչու որ՝ նորա ժամանակն գեռ չէր հասել ։
31 Եւ ժողովրդից շատ մարդիք հաւատացին նորան՝ և ասում էին . Քրիստոսն երբոր կըգայ՝ միթէ աւելի՞ նշաններ կանէ , քան էն՝ որ սա անում է[33] ։
32 Եւ փարիսեցիներն լսեցին ժողովրդի էն տրտունջն՝ որ նորա համար արել էին . և քահանայապետներն և փարիսեցիներն սպասաւորներ ուղարկեցին՝ որ բռնեն նորան ։

(22) Ղեւի . ե . 3 , 9 . 16 ։ (23) բ Օրին . ա . 16 , 17 ։ Ելից . իգ . 23 ։ Ղեւի . ը . 15 ։ Ղեւ . բ . 1 ։ (24) Պայր . 48 ։ (25) Մատթ . ժգ . 55 ։ Պարկ . գ . 3 ։ Ղեւ . գ . 22 ։ (26) Ղեւի . ը . 14 ։ (27) Ղեւի . է . 43 ։ ը . 43 ։ (28) Ղեւի . է . 33 ։ ը . 26 ։ Ձեռվ . գ . 4 ։ (29) Ղեւի . ա . 18 ։ ը . 55 ։ (30) Մատթ . ժա . 27 ։ Ղեւի . ժ . 15 ։ (31) Մարկ . ժա . 18 ։ Ղեւ . ժբ . 47 ։ ի . 19 ։ Գործ . 20 ։ ը . 37 ։ (32) Պայր . 44 ։ ը . 30 ։ (33) Մատթ . ժբ . 23 ։ Ղեւի . գ . 2 ։ ը . 30 ։

Digitized by Google

33 Ա՛ստ Յիսուս . փոքր մի ևս ժամանակ ընդ ձեզ եմ . և երթամ առ այն՝ որ առաքեացն զիս :

34 Ւնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք . և ուր եան երթամ , դուք ոչ կարէք գալ :

35 Ա՛սեն Հրեայքն ընդ միմեանս . Ւոկ յո՞ երթայցէ դա , զի մեք ոչ գտանիցումք զդա . միթէ ՚ի սփիւռս հեթանոսաց երթայցէ՝ և ուսուցանիցէ զհեթանոսս :

36 Ո՞ի՛նչ է բանն այն՝ զոր ասաց . Ւնդրիցէք զիս՝ և ոչ գտանիցէք . և ուր եան երթամ , դուք ոչ կարէք գալ :

37 ՚Ի վերջնում աւուր մեծի տոնին կայր Յիսուս՝ աղաղակէր և ասէր . Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս , և արբցէ :

38 Որ հաւատայ յիս՝ որպէս և ասեն գիրք , Վետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան :

39 Ո՛չայս ասէր վասն Հոգւոյն՝ զոր ընդունելոց էին , որ հաւատային ՚ի նա . զի չէ՛ր Հոգի , քանզի Յիսուս չէ՛ր փառաւորեալ :

40 Ոմանք ՚ի ժողովրդենէն խրթև լսէին զբանս զայս , ասէին . Այս է ճշմարիտ մարգարէն :

41 Ա՛յլքն ասէին՝ Այս է Քրիստոս . իսկ կէսքն ասէին՝ Ո՞րպէս ՚ի Գալիլեայ գայցէ Քրիստոս :

42 Ոչ գիրք ասեն , եթէ ՚ի զա-

33 Յիսուս ասաց . Ո՞րչափ ժամանակ էլ ձեզ հետ եմ՝ և գնում եմ նորա մօտ որ ուղարկեց ինձ[34] :

34 Ինձ մանն կըգաք և չէք գըտնիլ , և որտեղ որ ես գնում եմ , դուք չէք կարօղ գալ[35] :

35 Հրեաներն իրար ասացին . Ո՞պա դա ո՞ր տեղ պիտի գնայ , որ մենք չըգտանենք դորան . միթէ հեթանոսների մէջ ցրված ժողովուրդների մօտն կըգնայ և հեթանոսներին կըսովորցնէ[36] :

36 Ի՞նչ է էն խօսքն՝ որ ասաց . թէ Ինձ մանն կըգաք՝ և չէք գըտնիլ՝ և որտեղ որ ես գնում եմ , դուք չէք կարօղ գալ :

37 Տօնին վերջին մեծ օրումն Յիսուս կանգնած էր՝ աղաղակում էր և ասում[37] . Ով որ մինն ծարաւ է՝ թող ինձ մօտ գայ , և խմէ[38] :

38 Ինչպէս որ գիրքն էլ ասում է[39] , Գետեր կենդանի ջրերի կըբղխին[40] :

39 Էս բանըս ասում էր Հոգուն՝ որ պիտի ընդունէին նորանք , որ հաւատում էին նորան[41] , ինչու որ՝ դեռ Հոգին չըկար , որովհետև Յիսուս դեռ չէր փառաւորված[42] :

40 Ժողովըրդից մին քանիան երբ որ էս խօսքըս լսում էին , ասում էին . Այս ճշմարիտ մարգարէն է[43] :

41 Ուրիշներն ասում էին . Այ Քրիստոսն է[44] . բայց կէսն ասում էին՝ Միթէ Քրիստոս Գալիլեայից կըգայ[45] :

42 Չէ՞ որ գրքերն ասում են , թէ

(34) Յովհ . ժգ . 33 : ժզ . 16 : (35) Ովսե . է . 9 : Յովհ . ը . 21 : ժգ . 33 : (36) Նոյ . ժա . 12 : Յով . ա . 1 : ա Պետր . ա . 1 : (37) Ղևտ . իգ . 36 : (38) Նոյ . ծե . 1 : Յովհ . գ . 35 : Յայտ . իբ . 17 : (39) բ Օրին . ժը . 15 : (40) Ըսա . ժը . 4 : Նոյ . ժբ . 3 : խդ . 3 : Յովհ . դ . 14 : (41) Նոյ . խդ . 3 : Յովհ . բ . 28 : Յովհ . ժգ . 7 : Գործ . բ . 17 . 33 . 38 : (42) Յովհ . ժբ . 16 : ժգ . 7 : (43) բ Օրին . ժը . 15 . 18 : Յովհ . ա . 21 : գ . 14 : (44) Յովհ . դ . 42 . գ . 70 : (45) Ղ՛սար . 52 : Յովհ . ա . 46 :

Digitized by Google

ւակէ Պաւթի , և ՚ի Յեթղէհէմ գեղջէ՝ ուր Պաւիթն էր , գալոց է ՚Յրիստոս :

43 Եւ եղև հերձուած ՚ի մէջ ժողովրդեանն վասն նորա :

44 Եւ ոմանք ՚ի նոցանէ կամեցան ունել զնա . այլ ոչ ոք մխեաց ՚ի նա ձեռս :

45 Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քահանայապետսն և փարիսեցիս , և ասեն սոքա ցնոսա . Ընդէր ոչ ածէք զնա այսր :

46 Պատասխանի ետուն սպասաւորքն և ասեն . Ոչ երբէք այնպէս խօսեցաւ մարդ՝ որպէս այրն այն :

47 Պատասխանի ետուն փարիսեցիքն՝ և ասեն . Ա՞յլեւ և դուք մոլորեցարուք :

48 Ա՞յլեւ ոք յիշխանացն հաւատաց ՚ի նա՝ կամ ՚ի փարիսեցւոց .

49 Այլ այն խաժամուժ ամբոխ՝ որ ոչ գիտէ զօրէնս , և նզովեալ են :

50 Ասէ Նիկոդեմոս ցնոսա՝ որ եկեալն էր առ նա գիշերի յառաջագոյն՝ և մի էր ՚ի նոցանէ :

51 Ա՞յլեւ օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ եթէ ոչ լսեն ինչ նախ ՚ի նմանէ , կամ գիտեն զինչ գործէ :

52 Պատասխանի ետուն նմա և ասեն . Ա՞յլեւ և դու ևս ՚ի Գալիլեայ՞ իցես . քննեա և տես՝ զի մարգարէ ՚ի Գալիլեայ ոչ յառնէ :

53 Եւ գնացին իւրաքանչիւրք ՚ի տեղի իւր :

Յրիստոսն Պաւթի զաւակից[46] , և Յեթղէհէմ գիւղէն պիտի գայ՝ որտեղ որ Պաւիթն էր[47] :

43 Եւ տարաձայնութիւն ելաւ ժողովրդի միջումն նորա համար[48] :

44 Եւ նորանից մին քանիցն կամեցան բռնել նորան[49] . բայց իսկի մինն ձեռք չընգեց նորա վերայ :

45 Եւ սպասաւորներն յետ եկին քահանայապետների և փարիսեցիների մօտն . և սորանք ասացին նոցանց . Ո՞նչու համար նորան չբերիք էաւեղ :

46 Սպասաւորներն պատասխանեցին և ասացին . Իսկի մին մարդ (էնպէս) չըխօսեց՝ ինչպէս որ էն մարդն[50] :

47 Փարիսեցիքն պատասխան արին և ասացին . Ա՞յլեւ դուք էլ մոլորվեցաք :

48 Ա՞յլեւ իշխաններիցն կամ փարիսեցիներից մինն հաւատաց նորան[51] :

49 Այլ էն ամբիկ ժողովուրդն՝ որ օրէնքը չի գիտէ՝ անիծված են :

50 Նիկոդիմոսն՝ որ առաջ գիշերուայ նորա մօտ էր եկել՝ և նրանցից մինն էր , ասաց նորանց[52] .

51 Ա՞յլեւ մեր օրէնքն մին մարդ դատում՝ թէ որ առաջ բան չըլսեն նորանից կամ գիտենան՝ թէ ինչ է գործում[53] :

52 Պատասխան տուին նորան և ասացին . Ա՞յլեւ դո՛ւ էլ Գալիլեացի՞ն ես , քննիր և տես՝ որ Գալիլեայից մարգարէ դուրս չի գալ[54] :

53 Եւ ամէն մէկն գնացին իրանց տեղն :

(46) Պատ . ձէր . 11 : Ներս . իգ . 5 : Պետէ . է . 2 : Պատ . բ . 5 : Գոթ . բ . 4 : (47) ա Թագ . ժգ . 1 . 4 : (48) Գէր . 12 : Հովհ . բ . 16 : ժ . 19 : (49) Գէր . 30 : (50) Պատ . է . 29 : (51) Հովհ . ժբ . 42 : Գործ . գ . 7 : ա Կորնթ . ա . 20 . 26 : բ . 8 : (52) Հովհ . գ . 2 : (53) բ Օրին . ա . 17 : ժէ . 8 , Եսայն . ժբ . 15 : (54) Նաում . բ . 1 , 2 : Պատ . գ . 15 : Հովհ . ա . 46 : Գէր . 41 :

Digitized by Google

ԳԻ · Ը

1 Վրբիատոս ընթերան մէջ բանըլուած կինն կազատէ : 12 Ներքարոզէ թէ ինքն աչխարհքի լոյն է , և իրան անուին վկայութիւնն կըհաստատէ : 33 Ընդդահամով պարծանք անող Հրէաներուն պատասխան կըտայ · 59 Ինքն իրան անուն նորանց չարութիւնէն կըպահէ :

1 Եւ կոչ Յիսուս գնաց ՚ի լեառն Ձիթենեաց :

2 Եւ ընդ առաւօտն դարձեալ եկն ՚ի տաճարն , և զայր առ նա ամենայն ժողովուրդն . և նստեալ ուսուցանէր զնոսա :

3 Բ՚ծին առ նա դպիրքն և քահանայապետքն և փարիսեցիք՝ կին մի ըմբռնեալ ՚ի շնութեան , և կացուցեալ զնա առաջի ,

4 Բ՚սեն ցնա . Վ՚արդապետ , կինս այս ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս շնացեալ է :

5 Եւ յօրէնս Վ՚ովսէս մեզ պատուիրեաց զայսպիսիս քարկոծել . արդ՝ դու զի՞նչ ասես վասն դորա :

6 Ա՚յս ասէին փորձելով զնա , զի ունիցին ամբաստանութիւն ըզնմանէ . իսկ Յիսուս ՚ի խոնարհ նայելով՝ գրէր մատամբն յերկրի :

7 Իակ իբրև ստիպեցին հարցանելով ցնա , հայեցեալ ՚ի վեր՝ ասէ ցնոսա . Բ՚նդունդն ՚ի ձէնջ՝ նախ նա ընկեցէ քար ՚ի վերայ դորա :

8 Եւ դարձեալ ՚ի խոնարհ նայելով՝ գրէր յերկրի :

9 Եւ լուեալ ելանէին մի ըստ միոջէ , սկսեալ յառաջնոցն մինչև ՚ի վերջինս . և մնաց միայն Յիսուս , և կինն կայր առաջի նորա :

10 Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցնա . Կին դու՝ ո՞ւր են , ո՛չ ոք զքեզ դատապարտեաց :

11 Եւ ասէ . Վ՚՛չ Տ՛էր . և ասէ

1 Եայց Յիսուս գնաց Ձիթենեաց սարն :

2 Եւ առաւօտանց միւն էլ եկաւ տաճարն , և ամէն ժողովուրդն նորա մօտ էր գալիս . և նստած սովորնումէր նորանց :

3 Կարդացօղներն , քահանայապետներն և փարիսեցիներն մէն կին բերին շնութեան մէջ բռնըված , և կանգնացրին նորա առաջին .

4 Նորան ասացին . Վ՚արդապետ՝ էս կինս որ բըռնել ենք՝ ինքն յայտնապէս շնացած է :

5 Եւ օրէնքումն Վ՚օսէս պատուիրեց մեզ , որ էսպէսի երն քարկոծվին . ապա՝ դու ի՞նչ ես ասում դորա համար[1] :

6 Նա բանըս նորան փորձելոյ համար էին ասում , որ չարախոսութիւն ունենան նրանից . բայց Յիսուս ցած նայելով մատովն գըրում էր երկրի վերայ :

7 Եայց երբոր զօռ արին հարցնելով նորան , վեր նայեց և ասաց . Ձեզանից ով որ անմեղ է՝ թող առաջ նա քար քցէ դորա վերայ[2] :

8 Եւ միևել ցած նայելով գըրում էր երկրի վերայ :

9 Եւ էս որ լսեցին միևն մընից ետև դուրս էին գնում , առաջինները սկսած մինչև յետիններն[3] . և Յիսուս մենակ մնաց , և կինն կանգնած էր նորա առաջին :

10 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորան . Վ՚՛վ կին՝ ո՞ւր են , ո՛չ ով քեզ չդատապարտեց :

11 Եւ ասաց . Ձ՛՛ Տ՛էր . և

(1) Վ՚՛ոփ · ի · 10 : բ Օրին · իբ · 22 : (2) բ Օրին · ժէ · 7 : Ա՚ովմ · բ · 1 : (3) Ա՚ովմ · բ · 22 :

Digitized by Google

Յիսուս . Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ . երթ՝ յայսմհետէ մի՛ մեղանչեր :

12 Ապա խօսեցաւ ընդ նոսա Յիսուս և ասէ . Ես եմ լոյս աշխարհի . որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի՛ գնասցէ , այլ ընկալցի լոյսն կենաց :

13 Ասեն ցնա փարիսեցիքն . Դու վասն անձին քո վկայես՝ և վկայութիւն քո չէ ճշմարիտ :

14 Պատասխանի եառ Յիսուս և ասէ ցնոսա . Թէպէտ և ես վկայեմ վասն անձին իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է , զի գիտեմ ուստի եկի՝ և յո՛ երթամ . բայց դուք ոչ գիտէք ուստի գամ , կամ յո՛ երթամ :

15 Դուք ըստ մարմնոյ դատիք . ես ոչ դատիմ և ոչ ոք :

16 Թէպէտ և դատիմ ևս զոք՝ դատաստանն իմ ճշմարիտ է . զի չեմ միայն , այլ ես՝ և որ առաքեացն զիս Հայր :

17 Եւ յօրէնսն իսկ ձեր գրեալ է՝ թէ երկուց մարդոց վկայութիւն ճշմարիտ է :

18 Ես եմ որ վկայեմ վասն իմ , և վկայէ վասն իմ՝ որ առաքեացն զիս Հայր :

19 Ասէին ցնա . Որ է Հայր քո . պատասխանի եառ Յիսուս և ասէ ցնոսա . Ոչ զիս գիտէք՝ և ոչ զՀայրն իմ . եթէ զիս գիտէիք , և զՀայրն իմ թերևս գիտէիք :

20 Զայս բան խօսեցաւ ՚ի տան Յիսուս ասաց . Ես էլ քեզ չեմ դատապարտում[4] . գնա՛ սրանից և ևս մեղք մի՛ գործե՛ր[5] :

12 Յիսուս մինէլ խօսեց նորանց հետ և ասաց . Ես եմ աշխարհքի լոյսն[6] . ով որ իմ ետևէս գայ՝ նա խաւարով չի գնալ , բայց կենաց լոյսն կընդունի :

13 Փարիսեցիներն ասացին նորան . Դո՛ւ քո անձիդ համար ես վկայում՝ և քո վկայութիւնդ ճշմարիտ չէ[7] :

14 Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց . Թէև իմ անձիս համար վկայում՝ իմ վկայութիւնս ճշմարիտ է . ինչու որ՝ գիտումեմ՝ թէ որտեղից եկի և որտեղ եմ գնում . բայց դուք չէք գիտում՝ թէ որ տեղից եմ գալիս , և որ տեղ եմ գնում[8] :

15 Դուք մարմնոյ վերայ նայելով էք դատաստան անում[9] . ես չեմ դատում ոչ մէնին էլ[10] :

16 Թէ և դատեմ էլ մէնին , իմ դատաստանս ճշմարիտ է . ինչու որ՝ (ես) մէնակ չեմ՝ բայց ես և Հայրն՝ որ ինձ ուղարկեց[11] :

17 Եւ հենց ձեր օրէնքումն էլ գրած է՝ թէ երկու մարդկանց վկայութիւնն ճշմարիտ է[12] :

18 Ես եմ՝ որ ինձ համար վկայումեմ , և Հայրն էլ՝ որ ինձ ուղարկեց՝ ինձ համար վկայումէ[13] :

19 Ասումէին նորա . Որ տեղ է քո Հայրդ . Յիսուս պատասխան տուաւ և ասաց նորանց . Ոչ ինձ էք գիտում՝ և ոչ իմ Հօրըս[14] . թէ որ ինձ գիտենայիք՝ լինի որ իմ Հօրըս էլ գիտենայիք[15] :

20 Այս բանըս Յիսուս դանձատան

(4) Ղուկ . թ . 56 : Ժբ . 11 : Յովհ . գ . 17 : (5) Յովհ . է . 14 : (6) Յովհ . ա . 4 , 5 . 9 : գ . 19 : թ . 5 : Ժբ . 35 , 36 . 46 : (7) Յովհ . է . 31 : (8) Յովհ . է . 28 : թ . 29 : (9) Յովհ . է . 24 : (10) Յովհ . գ . 17 : Ժբ . 47 : Ժը . 36 : (11) Ղուկ . 29 : Յովհ . Ժգ . 32 : (12) Բ Օրին . Ժէ . 6 : ԺԹ . 15 : Մատթ . Ժը . 16 : Բ Կորնթ . Ժգ . 1 : Նէր . Ժ . 28 : (13) Յովհ . է . 37 : (14) Ղուկ . 55 : Յովհ . Ժգ . 3 : (15) Յովհ . Ժգ . 7 :

Digitized by Google

գանձին՝ յորժամ ուսուցանէր ի տաճարի անդ . և ոչ ոք կալաւ զնա , զի չէ և՛ս հասեալ էր ժամ նո- րա :

21 Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս . Ես երթամ և խնդրիցէք զիս . և ի մեղս ձեր մեռանիցիք . զի ուր ես երթամ , դուք ոչ կարէք գալ :

22 Ասէին Հրեայքն . Միթէ զիւ- րովին երթայցէ , զի ասէ՝ Թէ ուր ես երթամ՝ դուք ոչ կարէք գալ :

23 Եւ ասէ ցնոսա . Դուք ի ներ- քուստ աստի էք , և ես ի վերուստ անտի եմ . դուք յաշխարհէ աստի էք , ես չեմ յայսմ աշխարհէ :

24 Ասացի ձեզ՝ Թէ ի մեղս ձեր մեռանիցիք . զի Թէ ոչ հաւա- ապայցէք Թէ ես եմ , մեռանիցիք ի մեղս ձեր :

25 Ասեն ցնա . Դու ո՞վ ես . ասէ ցնոսա Յիսուս . Նախ զի և խօսիմ իսկ ընդ ձեզ :

26 Շատ ինչ ունիմ վասն ձեր խօսել և դատել . այլ որ առաք- եացն զիս՝ ճշմարիտ է . և ես զոր լուայ ի նմանէ , զայն խօսիմ յաշ- խարհի :

27 Եւ ոչ գիտացին՝ Թէ զՀօրէ ասէր ցնոսա :

28 Ասէ ցնոսա Յիսուս . Յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ՝ յայնժամ գիտասջիք՝ Թէ ես եմ . և յանձնէ իմմէ ինչ ոչ առնեմ , այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ , զայն խօսիմ :

29 Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս է . ոչ եթող զիս միայն , զի ես ըզ- միշտ խօսեց նորանց Հեռ՝ երբոր առաջարումն սովորցնումիր[16] . և ոչ ով չերբընեց նորան[17] . պատճառն որ՝ դեռ նորա ժամն (սահմանն) չէր հասել[18] :

21 Յիսուս միւնէլ ասաց նորանց . Ես գնումիմ և ինձ ման կըգաք[19] . և ձեր մեղաց միջն կըմեռնիք[20] . ինչու որ՝ որտեղ որ ես եմ գը- նում , դուք չէք կարող գալ :

22 Հրեաներն ասումէին . Մի- թէ ինքն իրան կըսպանէ , որ ա- սումէ՝ Թէ Որտեղ որ ես եմ գը- նում՝ դուք չէք կարող գալ :

23 Եւ ասաց նորանց . Դուք էս- տեղից ներքևից էք , և ես էն- տեղից վերևից եմ[21] . դուք էս աշխարհքից էք՝ ես չեմ էս աշ- խարհքից[22] :

24 Ասացի ձեզ՝ Թէ Ձեր մեղաց միջն կըմեռնիք[23] . ինչու որ՝ եթէ չըհաւատաք՝ Թէ էն ես եմ , ձեր մեղաց միջն կըմեռնիք[24] :

25 Ասացին նորան . Դու ո՞վ ես . Յիսուս ասաց նորանց . Նոյն էն՝ որ հենց ձեզ հետ խոսումէմ :

26 Շատ բան ունիմ ձեզ հա- մար խօսիլ և դատել . բայց նա որ ինձ ուղարկեց՝ ճշմարիտ է[25] . և ես ինչ որ նորանից լսեցի՝ էն եմ խոսում աշխարհումի[26] :

27 Եւ չէմացան՝ Թէ Հօր հա- մար էր ասում նորանց :

28 Յիսուս ասաց նորանց . Երբ- որ Որդին մարդոյ կըբարձրացը- նէք[27]՝ էն ժամանակն կիմանաք՝ Թէ ես եմ[28] . և իմ անձնիցս բան չեմ անում[29] . բայց ինչպէս իմ Հայրս սովորցրուց ինձ , էն եմ խոսում[30] :

29 Եւ նա՝ որ ինձ ուղարկեց՝ ինձ հետ է . ինձ մենակ չըթողեց[32] ,

(16) Մարկ . ժբ . 41 : (17) Յովհ . է . 30 : (18) Յովհ . է . 8 : (19) Յովհ . է . 34 : ժգ . 33 : (20) Այլ . 24 : (21) Յովհ . գ . 31 : (22) Յովհ . ժէ . 19 : ժէ . 16 : ա Յովհ . գ . 5 : (23) Այլ . 21 : (24) Մարկ . ժգ . 16 : (25) Յովհ . է . 28 : (26) Յովհ . գ . 32 : ժէ . 15 : (27) Յովհ . գ . 14 : ժբ . 32 : (28) Հռոմ . ա . 4 : (29) Յովհ . է . 18 . 30 : (30) Յովհ . գ . 11 : (31) Յովհ . ժգ . 10 , 11 : (32) Այլ . 16 :

Digitized by Google

համձայս նորա առնեմ հանապազ :

30 Իբրև զայս խօսեցաւ՝ բազումք հաւատացին ՚ի նա :

31 Եւ ասէր Յիսուս առ Հրէայն հաւատացեալս . Եթէ դուք կացջիք ՚ի բանի իմում , ճշմարիտ աշակերտք իմ էք .

32 Եւ ծանիջիք զճշմարտութիւն , եւ ճշմարտութիւնն ազատեսցէ զձեզ :

33 Պատասխանի եաուն նմա եւ ասեն . Զաւակ Աբրահամու եմք , եւ ոչ ումեք երբէք ծառայեցաք . զիա՞րդասես թէ Ազատք լինիջիք :

34 Պատասխանի ետ նոցա Յիսուս . Ամէն ամէն ասեմ ձեզ . եթէ Ամենայն որ առնէ զմեղս , ծառայ է մեղաց :

35 Եւ ծառայն ոչ յաւիտեան կայ ՚ի տան , իսկ որդին յաւիտեան կայ :

36 Իսկ արդ՝ եթէ Որդին զձեզ ազատեցուսցէ , ճշմարիտ ազատք լինիջիք :

37 Գիտեմ զի զաւակ Աբրահամու էք . այլ խնդրէք սպանանել զիս , զի բանին իմոյ չէիք տեղի ՚ի ձեզ :

38 Ես՝ զոր տեսի առ Հօր իմում՝ խօսիմ . և դուք՝ զոր լսեարուք ՚ի Հօրէն ձերմէ՝ առնէք :

39 Պատասխանի եաուն նմա եւ ասեն . Հայր մեր Աբրահամ է . ասէ ցնոսա Յիսուս . Եթէ որդիք Աբրահամու էիք՝ զգործսն Աբրահամու գործէիք :

40 Ամէն այժմիկ խնդրէք սպանանել զիս , զայր մի՝ որ ձեզ զճշմարտութիւն զոր լուայ ՚ի Հօրէ՝ խօսեցայ . զայս Աբրահամ ոչ արար :

41 Դուք գործէք զգործս Հարցն ձերոց . ասեն ցնա . Մեք ոչ ի պոռնկութենէ ծնեալ եմք , մի Հայր ունիմք զԱստուած :

42 Ասէ ցնոսա Յիսուս . Եթէ Աստուած Հայր ձեր էր , սիրէիք զիս . զի ես յԱստուծոյ ելի եւ եկի . զի ոչ եկի յանձնէ , այլ նա առաքեաց զիս :

43 Ընդէ՞ր զբանս իմ ոչ ծանանէք . զի ոչ կարէք լսել զբանս իմ :

44 Դուք յաստուածոյ հարցն սատանայի էք , եւ զցանկութիւնս հարցն ձերոց կամիք առնել . նա մարդասպան էր յսկզբանէ , եւ ի ճշմարտութեան ոչ կայ , զի չիք ճշմարտութիւն ՚ի նմա . յորժամ խօսի սուտ՝ յինքենէ խօսի , զի սուտ է եւ հայր սուտոյ :

45 Եւ ես զի ճշմարտութիւն խօսիմ՝ ոչ հաւատայք ինձ :

46 Ո՞վ յձէնջ զիս յանդիմանէ վասն մեղաց . եթէ ճշմարտութիւն խօսիմ՝ ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ :

47 Որ յԱստուծոյ է՝ զբանս Աստուծոյ լսէ . վասն այնորիկ դուք ոչ լսէք , զի ոչ էք յԱստուծոյ :

48 Պատասխանի ետուն Հրեայքն եւ ասեն ցնա . Ոչ բարւոք ասեմք մեք , եթէ Սամարացի ես դու եւ դեւ ունիս :

49 Պատասխանի ետ Յիսուս . Ես դեւ ոչ ունիմ , այլ պատուեմ զՀայր իմ , եւ դուք անարգէք զիս :

50 Ես ոչ խնդրեմ զփառս իմ . է որ խնդրէ եւ դատէ :

51 Ամէն ամէն ասեմ ձեզ . եթէ Ամենայն որ պահեսցէ զբանս իմ՝ մահ ոչ տեսցէ յաւիտեան :

52 Ասեն Հրեայքն ցնա . Արդ գիտեմք զի դեւ ունիս . Աբրահամ մեռաւ եւ մարգարէքն , եւ դու ասես Եթէ Ամենայն որ պահեսցէ զբանս իմ՝ մահ ոչ համտեսցէ յաւիտեան :

53 Միթէ դու մեծ իսկ իցես քան զհայրն մեր Աբրահամ , որ մեռաւ , եւ մարգարէքն մեռան . զո՞վ զանձն քո առնես դու :

54 Պատասխանի ետ Յիսուս . Եթէ ես փառաւորեցից զանձն իմ , փառք իմ ոչ իցեն ինչ . Հայր իմ է որ փառաւորէ զիս , զոր դուք ասէք թէ Մեր Աստուած է :

55 Եւ ոչ ծանանէք զնա , ես գիտեմ զնա . եւ եթէ ասիցեմ թէ Ոչ գիտեմ զնա՝ նման եղէց ձեզ սուտ . այլ գիտեմ զնա եւ զբանս նորա առնեմ :

56 Աբրահամ հայր ձեր ցնծացաւ զի տեսցէ զաւր իմ , եւ ետես եւ ուրախ եղեւ :

57 Ասեն Հրեայքն ցնա . Հազարդ ամ ոչ ունիս եւ Աբրահամ տեսեր :

58 Ասէ ցնոսա Յիսուս . Ամէն ամէն ասեմ ձեզ . մինչ չեւ Աբրահամ եղեւ՝ Ես եմ :

59 Առին քարս Հրեայքն զի արկցեն ՚ի նա . Յիսուս ծածկեցաւ եւ ել ՚ի տաճարէն , անցեալ ընդ մէջ նոցա , եւ գնաց այնպէս :

(32) Յովհ . դ . 24 : է . 30 : զ . 38 : (34) Յովհ . է . 31 : ժ . 42 : ժա . 45 : (35) Ա՛մոս . զ . 14 . 18 . 23 : ը . 2 : Յով . ա . 25 : բ . 12 : (36) Ղ՚ևտ . ի՛ե . 42 : Ա՛մոս . դ . 9 : վայր . 39 : (37) Ա՛մոս . զ . 16 . 20 : ը Պետր . բ . 19 : (38) Գաղ . դ . 30 : (39) Ա՛մոս . ը . 2 : Գաղ . է . 1 : (40) Յովհ . է . 20 : վայր . 50 : (41) Յովհ . գ . 32 : է . 19 . 30 : ժդ . 10 . 24 : (42) Ա՛մոս . դ . 9 : վէր . 38 : (43) Ա՛մոս . ը . 28 : ի՛ . 7 : Գաղ . գ . 7 . 29 :

Digitized by Google

ատութիւն խօսեցայ , զոր լուայ ՚ի Հօրէ իմմէ · զայդ Աբրահամ ոչ արար :

41 Դուք առնէք զգործս հօրն ձերոյ · ասեն ցնա · Ոչ՝ եք ՚ի պոռնկութենէ չեմք ծնեալ · մի է Հայր մեր Աստուած :

42 Ասէ ցնոսա Յիսուս · Եթէ Աստուած էր Հայր ձեր , սիրէիք արդեօք զիս · զի ես ՚ի Աստուծոյ ելի՝ և եկի · և ոչ եթէ յանձնէ ինչ եկի , այլ նա առաքեաց զիս :

43 Ընդէր զխօսս իմ ոչ գիտէք դուք · վասն զի ոչ կարէք լսել ըզբանն իմ :

44 Դուք ՚ի Հօրէ ՚ի Սատանայէ էք · և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առնել · զի նա մարդասպան էր ՚ի սկզբանէ , և ՚ի ճշմարտութեան ոչ եկաց , զի ոչ գոյ ճշմարտութիւն ՚ի նմա · յորժամ խօսիցի սուտ՝ յիւրոց անտի խօսի · զի սուտ է և Հայր նորա :

45 Իսկ ես՝ զի զճշմարտութիւն խօսիմ , ոչ հաւատայք ինձ :

46 Ո՞ ՚ի ձէնջ յադիմանէ զիս վասն մեղաց · եթէ զճշմարիտն ասեմ ձեզ՝ ընդէր ոչ հաւատայք ինձ :

47 Որ էն Աստուծոյ՝ զբանս Աստուծոյ լսէ · և դուք վասն այնորիկ ոչ լսէք , զի չէք Աստուծոյ :

48 Պատասխանի եառն Հրէայքն՝ և ասեն ցնա · Ոչ բարւոք ասեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու , և դև գոյ ՚ի քեզ :

49 Պատասխանի ետ Յիսուս և ասէ · Ես դև ոչ գոյ՝ այլ պատիւ ետուն ինձ Հայրն իմ , և դուք անարգէք զիս :

50 Ես ոչ խնդրեմ զփառս իմ · գոյ որ խնդրէ և դատէ :

51 Ամէն ամէն ասեմ ձեզ · եթէ ոք զբանս իմ պահեսցէ , մահ մի՛ տեսցէ յաւիտեան :

52 Ասեն Հրեայքն ցնա · Արդ գիտեմք եթէ դև գոյ ՚ի քեզ · Աբրահամ մեռաւ և մարգարէքն , և դու ասես՝ եթէ զբանս իմ պահեսցէ , մահ մի՛ տեսցէ յաւիտեան :

53 Միթէ դու մեծ իցես քան զհայրն մեր Աբրահամ , որ մեռաւ · և մարգարէքն մեռան · զո՞ դնես զքեզ :

54 Պատասխանի ետ Յիսուս · Եթէ ես փառաւորեցից զանձն իմ , փառք իմ ոչ իցեն զոչինչ · Հայր իմ է որ փառաւորէ զիս , զոր դուք ասէք եթէ Աստուած մեր է :

55 Եւ ոչ ծանեայք զնա · ես գիտեմ զնա · և եթէ ասիցեմ եթէ ոչ գիտեմ զնա , եղէց ես նման ձեզ սուտ · այլ գիտեմ զնա , և զբանն նորա պահեմ :

56 Աբրահամ հայր ձեր ցնծացաւ , զի տեսցէ զաւուր իմ · և ետես և ուրախ եղև :

57 Ասեն Հրեայքն ցնա · Զկնի ոչ հասեալ ես հազարապետի , և Աբրահամ տեսեր ես :

58 Ասէ ցնոսա Յիսուս · Ամէն ամէն ասեմ ձեզ · յորժամ Աբրահամ ոչ էր , ես եմ :

59 Առին քարս Հրեայքն՝ զի արկցեն ՚ի նա · Յիսուս ոչ երեւեցաւ , և ելանէր ՚ի տաճարէն :

(44) Ա՚Յո · 3 · 8 : (45) Ա՚Յո · 3 · 11 : (46) Եսա · 53 · 10 : 53 · 8 : Ա՚Պէտ · ա · 2 : (47) ա Յովհ · 4 · 1 : (48) Յովհ · 7 · 20 : 8 · 52 : (49) Յովհ · 5 · 23 : 7 · 28 , 29 : (50) Յովհ · 5 · 41 : (51) Ա՚Կոր · 15 · 22 : ա Յովհ · 2 · 5 : (52) Յոան · 8 : (53) Յովհ · 4 · 12 : (54) Յովհ · 5 · 20 · 8 · 26 · Ա՚Պար · 53 :

Digitized by Google

ումեմ զ՚ապր իմ , և դուք անարգեք զիս ։

50 Ես ոչ խնդրեմ զփառս իմ . է որ խնդրէն՝ և դատի ։

51 Ա՚մէն ամէն ասեմ ձեզ . Եթէ՝ ոք զբանն իմ պահեսցէ՝ զմահ մի տեսցէ՚ի յաւիտեան ։

52 Ա՚սեն ցնա Հրէայքն . Ա՚րդ գիտացաք թէ դեւ գոյ՚ի քեզ . Ա՚բրահամ մեռաւ և մարգարէքն . և դու ասես՝ Եթէ ոք զբանն իմ պահեսցէ՝ մի՛ ճաշակեսցէ զմահ՚ի յաւիտեան ։

53 Ա՚յթէ դու մեծ ինչ ո՞ք իցես քան զհայր մեր Ա՚բրահամ , որ մեռաւ և մարգարէքն մեռան . արդ՝ դու զո՞ առնես զքեզ ։

54 Պատասխանիետ Յիսուս . Եթէ ես փառաւորեմ զանձն իմ , փառք իմ ոչինչ են . է Հայր՝ որ փառաւորէ զիս , զորմէ դուքն ասէք՝ թէ Ա՚ստուած մեր է ։

55 Եւ ոչ ճանաչէք զնա . բայց ես գիտեմ զնա . և Եթէ ասեմ՝ թէ ոչ գիտեմ զնա , ձեզ նման սուտ լինիմ . այլ գիտեմ զնա , և զբանն նորա պահեմ ։

56 Ա՚բրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ , եւտես և ուրախ եղև ։

57 Ա՚սեն ցնա Հրէայքն . Յիսուն ամ չեւս՚ն է քո , և զԱ՚բրահամ տեսեր ։

58 Ա՚ած ցնոսա Յիսուս . Ա՚մէն ամէն ասեմ ձեզ . յառաջ քան զլինելն Ա՚բրահամու եմ ես ։

իմ Հօրըս պատուումեմ , և դուք անարգեք զիս ։

50 Ես իմ փառքըս չեմ խընդրում . կայ մինն՝ որ խնդրումէ և դատումէ[55] ։

51 Ա՚մէն ամէն ասեմ ձեզ . Եթէ ոք զբանն իմ պահէ՝ նա մահ չի տեսնիլ յաւիտեան[56] ։

52 Հրէաներն ասացին նորան . Հիմիկ իմացանք՝ որ դև կայ քեզ նում . Ա՚բրահամն մեռաւ և մարգարէներն[57] . և դու ասումես՝ Եթէ ոք զբանն իմ պահէ՝ նա յաւիտեան մահ չի տեսնիլ ։

53 Ա՚յթէ դու մին ասելի մե՞ծ ես քան մեր հայր Ա՚բրահամն , որ մեռաւ և մարգարէներն մեռան . ապա դու քեզ ո՞վ ես անում ։

54 Յիսուս պատասխան տուաւ . Եթէ ես իմ անձըս փառաւորեմ , իմ փառքս ոչինչ է[58] . Հայրն է՝ որ ինձ փառաւորումէ , որ դուք նորա համար ասումէք՝ Թէ Ա՚ստուածն է[59] ։

55 Եւ չէք ճանաչում նորան[60] . բայց ես գիտումեմ նորան . և Եթէ որ ասեմ՝ Թէ չեմ գիտում նորան , ձեզ նման սուտ կըլինիմ . բայց գիտումեմ նորան , և նորա խօսքըն պահումեմ ։

56 Ա՚բրահամ ձեր հայրն ցանկացաւ իմ օրըս տեսանել[61] , տեսաւ և ուրախ եղաւ[62] ։

57 Հրէաներն նորան ասացին . Դու դեռ հիսուն տարեկան չես , և Ա՚բրահամին ըզ տեսեր ։

58 Յիսուս նորանց ասաց . Ա՚մէն ամէն ասեմ ձեզ . ես Ա՚բրահամի լինելուցն էլ առաջ եմ[63] ։

(55) Յովհ . է . 31 ։ ը . 18 ։ (56) Յովհ . ը . 24 ։ ժա . 26 ։ (57) Հնաւ . ա . 5 ։ Ներ . ժա . 13 ։ (58) Յովհ . ը . 31 ։ (59) Յովհ . ը . 41 ։ ժգ . 14 ։ ժե . 1 ։ Գործ . գ . 13 ։ (60) Յովհ . է . 28 , 29 ։ (61) Ղուկ . ժ . 24 ։ (62) Ներ . ժա . 13 ։ (63) Նէփ . գ . 14 ։ Նոյ . խգ . 18 ։ Յովհ . ժե . 5 . 24 ։ Կող . ա . 17 ։ Հայտ . ա . 8 ։

Digitized by Google

59 Ալ էմս ասին, զի արկցեն ՚ի վերայ նորա. և Յիսուս խոյս եաս, և եղ գնաց ՚ի սաճարէ անտի։

59 Հրեաներն քարեր վերկալան, որ նորա վերայ ձգեն[64]. և Յիսուս մինկոյնմն քաշվեցաւ, և դուրս ելաւ գնաց տաճարիցն[65]։

ԿՒ • Թ

1 Ննջեցեալն կույր աչքերն բացվին։ 18 Նա փարիսեացոց առնուանն։ 28 Նորանք ես հետ բանի վերայ շատ կրբարկանան, և կույրն ժպտվարանիցն դուրս կհանեն։ 35 Յիսուսի ին կույր մարդոյ ընդունելն, և նորա դաւանութիւնն։ 39 Վրիպասէ դատաստանով նորանք՝ որ չին տեսնում՝ կըտեսանեն, և նորանք՝ որ տեսնում՝ կրկուրանան։

1 Եւ մինչդեռ անցանէր՝ տեսա այր մի կոյր ՚ի ծնէ։

2 Եւ հարցին զնա աշակերտքն նորա՝ և ասեն. Ռաբբի՝ ո՞վր վնաս է, արդ՝ թէ հօր և մօր իւրոյ, զի կոյր ծնեալ։

3 Պատասխանի եաս Յիսուս. Ո՛չ գործա վնաս է, և ո՛չ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին գործքըն Աստուծոյ ՚ի դմա։

4 Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ. գայ գիշեր՝ յորժամ ո՛չոք կարէ գործել։

5 Որ՝ ինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։

6 Այլս իբրև ասաց, եթուք ՚ի գետին՝ և արար կաւ ՚ի թքոյն, և ծեփեաց զկաւն ՚ի վերայ աչաց կուրին։

7 Եւ ասէ ցնա. Երթ՝ լուա յաւազանին Սելովմայ. որ թարգմանի Առաքեալ. չորքաւ լուացաւ, եկն և տեսանէր։

8 Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալն էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին. Ո՞չ սա էր՝ որ

1 Եւ երբոր անց էր կենաւմ՝ մին մարդ տեսաւ ծնընդիցն կոյր։

2 Եւ նորա աշակերտներն հարցընին նորան և ասացին. Ռաբբի՝ ո՞վ մեղք է, սորա՝ թէ իրան հօրն և մօրն, որ սա կոյր ծնվաւ[1]։

3 Յիսուս պատասխան տուաւ. Ո՛չ դորան մեղք է, և ո՛չ էլ իրան հօրն և ո՛չ մօրն. բայց որ Աստուծոյ գործքերն յայտնի լինին դորանում[2]։

4 Եւ ինձ պէտք է՝ որ նորա գործքերըն գործեմ, որ ինձ ուղարկեց՝ դեռ քանի որ օր կայ. գիշերն գալիս է՝ որ էն ժամանակըն ո՛չ ով կարօղ չէ գործել[3]։

5 Ինանի որ աշխարհքի միջումըն եմ՝ աշխարհքի լոյսն եմ[4].

6 Երբոր էս ասաց՝ թքեց գետինն՝ և էն թըքքիցն ցեխ շինեց՝ և էն ցեխըն ծեփեց կուրի աչքերին վերայ[5]։

7 Եւ նորան ասաց. Գնա՝ լուացի Սելօամայ աւազանումն[6]. որ թարգմանվումէ՝ Առաքեալ. գնաց լուացաւ՝ եկաւ և տեսնում էր[7]։

8 Հայց դրացիներն (հարևանները) և նորանք՝ որ առաջուց տեսել էին նրան՝ որ մուրացական

(64) Ղեւի • ժ • 31 • 39 • ժա • 8։ (65) Ղուկ • գ • 30։ (1) Վեր • 34։ (2) Ղեւի • ժա • 4։ (3) Ղեւի • գ • 34։ ե • 10 • 36 • ժա • 9 • ժբ • 35 • ժե • 4։ (4) Ղեւի • ա • 5 • 6 • գ • 19 • բ • 12 • ժբ • 35 • 36։ (5) Մարկ • ե • 33 • ը ։ 23։ (6) Նեհ • Ի • գ ։ 15։ (7) գ Թագ • ե • 14։

Digitized by Google

նստէրն և մուրանայր . կէսքն ա-սէին . Ոչ է :

9 Այլքն ասէին . Այ է . այլ նմանն է նմա . և ինքն ասէր՝ Թէ Ես եմ :

10 Ասեն ցնա . Ուստ զիարդ բացան աչք քո :

11 Ոչ ես պատասխանի . Այր մի՝ որում Յիսուն ասեն , կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ , և ասէ ցիս . Երթ՝ ի Սելովամ , և լուա . չոքայ լուացայ՝ և տեսանեմ :

12 Ասեն ցնա . Որ է նա . ասէ ցնոսա . Ոչ գիտեմ :

13 Ածին առ փարիսեցիսն զնա , որ երբեմն կոյր էր :

14 Եւ էր շաբաթ՝ յորժամ զըզկաւն արար Յիսուս , և եբաց զաչս կուրին :

15 Կարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն , Թէ զիա՞րդ տեսանես . և նա ասէ ցնոսա . Կաւ եդ՝ ի վերայ աչաց իմոց , և լուացայ՝ և տեսանեմ :

16 Ասեն ոմանք ի փարիսեցւոցն . Ոչ է այրն այն յԱստուծոյ , զի զշաբաթն ոչ պահէ . կէսքն ասէին . Իսկ զիարդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել . և էին հերձուածք ի մէջ նոցա :

17 Ասեն դարձեալ ցկոյրն . Դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբաց զաչս քո . և նա ասէ՝ Թէ Մարգարէ է :

18 Եւ ոչ հաւատային Հրէայքն զնմանէ՝ Թէ կոյր էր՝ և բացաւ . մինչև կոչեցին զծնօղս բացելոյն :

19 Հարցին ցնոսա և ասեն . Այո՞ է որդին ձեր , զոր դուք ասէիք , Նստէր և մուրանայր . կէսքն ասէին , Ոչ է . այլ նման է նմա . և ինքն ասէր՝ Թէ Ես եմ :

10 Ուրեմն ասացին . Ապա ո՞ր աչքերդ բացան :

11 Նա պատասխան տուեալ . Այն մարդ՝ որ Յիսուս են ասում , ցեխ շինեց և իմ աչքերիս ծեփեց , և ինձ ասաց[8] . Գնա Սելովամ , և լուա՛ց . գնացի լուացայ և տեսնում եմ :

12 Ուրեմն ասացին . Նա որտե՞ղ է . Նորանց ասաց . Չեմ գիտում :

13 Փարիսեցիների մօտ տարան նորան , որ մին ժամանակ կոյր էր :

14 Եւ շաբաթ օր էր՝ երբոր Յիսուս ցեխըն շինեց և կուրի աչքերն բաց արաւ :

15 Ինքել փարիսեցիներն էին հարցնում նորան՝ Թէ ինչպես նա տեսնում . և նա նորանց ասաց . Ցեխ դրաւ իմ աչքերիս վերայ և լուացայ և տեսնումեմ :

16 Ոչ փարիսեցիներից մինքանիսն ասացին . Այն մարդն Աստուածանից չէ՝ ինչու որ՝ շաբաթ օրերըն չի պահում . կէսն ասում էին՝ Ապա ինչպես կարող է մեղաւոր մարդն նշաններ անել . և տարաձայնութիւն էր նորանց մէջում[10] :

17 Ինքել ասացին կուրին . Դու ինչ ես ասում նորա համար՝ որ քո աչքերըդ բաց արաւ . և նա ասաց Թէ Մարգարէ է[11] :

18 Եւ Հրէաներն չէին հաւատում նորա համար՝ Թէ կոյր էր և բացվաւ . մինչև որ աչքը բացարածի ծնօղքըն կանչեցին :

19 Ուրանց հարցրին և ասացին . Այ է ձեր որդին՝ որ դուք նորա

(8) Վեր . 6 , 7 . (9) Վայր . 33 : Ցովհ . ե . 2 : (10) Ցովհ . 4 . 12 . 43 . ե . 19 . (11) Ցովհ . ե . 19 . ը . 14 :

Digitized by Google

եթէ կոյր ծնաւ . ասդ՝ զիմդդ տե-
սանէ :

20 Պատասխանի ետուն նոցա ծը-
նողքն նորա՝ և ասեն . Գիտեմք զի
սա է որդին մեր , և զի կոյր ծնաւ .

21 Եւայց զիարդ այժմդ տեսանէ՝
ոչ գիտեմք . կամ թէ՝ ո՞վ բացաց զաչս
դորա՝ մեք ոչ գիտեմք . ցդա իսկ
հարցէք , ինքնին Գի չափ հասեալ է՝
ինքն իսկ խօսեսցի վասն իւր :

22 Այս ասացին ծնողքն նորա ,
զի երկնչէին Գի Հրէից . քանզի
ուխտ եդեալ էր Հրէից , եթէ ոք
խոստովանեսցի զնա Գիրիստոս Գի
բաց կացցէ Գի ժողովրդենէն :

23 Վասն այնորիկ ասացին ծը-
նողքն նորա , եթէ Գնքին Գի չափ
հասեալ է՝ ցնա իսկ հարցէք :

24 Կարձեալ կրկին անդամ կո-
չեցին զայրն՝ որ կոյրն էր , և ասեն
ցնա . Տուր փառս Աստուծոյ . մեք
գիտեմք՝ զի այրն այն մեղաւոր է :

25 Եւ նա ասէ . Եթէ մեղաւոր իցէ՝
ես ոչ գիտեմ . բայց զայս գիտեմ ,
զի կոյր էի՝ և արդ տեսանեմ :

26 Կարձեալ ասեն ցնա . Ո՛րինչ
արար քեզ , զիա՞րդ բացաց զաչս քո :

27 Պատասխանի ետ նոցա . Ասա-
ցի ձեզ և ոչ լուարուք . զի՞
կամիք միւսանգամ լսել . միթէ
և դուք կամիք աշակերտել նմա :

28 Նզրքա հայհոյէին զնա՝ և ա-
սէին . Նդու լինիր նորա աշակերտ .
մեք Ասովսէի աշակերտ եմք :

29 Մեք գիտեմք՝ զի ընդ Մով-

համար ասուածք՝ թէ կոյր ծնեալ .
ապա Ինչպէս է տեսնում :

20 Նոյնս ծնողքն պատասխան տո-
ւին և ասացին . Գիտեմք որ
սա մեր որդին է , և թէ կոյր
ծնեալ .

21 Նայց թէ հիմիկ Ինչպէս է
տեսնում՝ էն չենք գիտում . կամ
թէ ում աչս բաց արաւ նորա աչքերըն՝
մենք չենք գիտում . Հենց իրան
հարցրէք . ինքն չափին հասած է՝
թող հենց ինքն խօսի իւրան հա-
մար :

22 Նորա ծնողքն էս ասացին .
պատճառն որ՝ Գրէաներից վա-
խենում էին[12] . ինչու որ՝ Գրէանե-
րըն ուխտ էին դրել որ՝ եթէ մի-
նրան Գիրիստոս դաւանէ նորան՝ ժո-
ղովարանից դուրս լինի[13] :

23 Նրա համար նորա ծնողքն ա-
սացին՝ թէ Գնքն չափին հասած է՝
հենց իրանից հարցրէք :

24 Գնհել երկրորդ անգամ կան-
չեցին էն մարդուն՝ որ կոյր էր , և
նորան ասացին . Գստուծոյ փառք
տուր[14] . մենք գիտեմենք՝ որ էն
մարդն մեղաւոր է[15] :

25 Եւ նա ասաց . Եթէ մեղաւոր
է՝ ես չեմ գիտում , միայն թէ էս
եմ գիտում , որ կոյր էի՝ և հիմիկ
տեսնումեմ :

26 Գնհել ասացին նորան . ԳՈրնչ
արաւ քեզ . Ինչպէս բաց արաւ
քո աչքերդ :

27 Նրանց պատասխան տուաւ .
Գիմիկ ձեզ ասացի և չլսեսցիք .
Ինչու էք միդել կամենում լսել .
միթէ դուք էլ կամենումէք նորան
աշակերտ լինել :

28 Նրանք հայհոյումէին նորան
և ասում . Նդու լինիր նորան աշ-
շակերտ . մենք Մովսէսի աշակերտ-
ներն ենք :

29 Մենք գիտեմենք՝ որ Աստ-

(12) Հովհ . 4 · 18 : 9բ . 43 : 9բ . 33 : Գործ . 5 · 13 : (13) Վար . 34 : 9ղ . 2 :
(14) Յես . 4 · 19 : ա Թագ . ը . 5 : (15) Վիր . 16 :

Digitized by Google

աչքի խօսեցաւ Ա՛ստուածծ . զսա ոչ գիտեմք ուստի իցէ :
30 Պատասխանի եաս այրն և ասէ ցնոսա . Ա՛յդ իսկ են սքանչելիք . զի դուք ոչ գիտէք՝ ուստի իցէ , և ղմի զաչս եբաց :

31 Գիտեմք՝ զի Ա՛ստուածծ մեղաւորաց ոչ լսէ . բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ և զկամս նորա առնիցէ , նմա լսէ :

32 Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ :
33 Եթէ ոչ Ա՛ստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ :

34 Պատասխանի եաւն և ասեն ցնա . Ի մեղս իսկ ծնեալ ես ամենևին , և դու վարդապետ լինիս մեր . և հանին զնա արտաքս :

35 Լուաւ Յիսուս , եթէ հանին զնա արտաքս , և իբրև եգիտ զնա՝ ասէ ցնա . Դու հաւատաս Որդւոյ Ա՛ստուծոյ :
36 Ա՛յս պատասխանի եաս և ասէ . Տէր՝ ո՞վ է՝ զի հաւատացից ի նա :

37 Ա՛սէ ցնա Յիսուս . Եւ տեսեր զնա , և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է :

38 Եւ նա ասէ . Հաւատամ Տէր , և երկիր եպագ նմա :

39 Եւ ասէ Յիսուս . Ի դատաստան եկի յաշխարհս այս , զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն , և որք տեսանեն՝ կուրացին :

ուած Ա՛օսէսի հկա խօսեց . սորան չենք գիտում՝ (թէ) ո՞ր տեղից է[14] :
30 Նա մարդն պատասխան տուաւ և նորանց ասաց . Հենց էդ է զարմանալի բան՝ որ դուք չէք գիտում՝ թէ սա ո՞ր տեղից է՝ և իմ աչքերըս բաց արաւ[17] :
31 Գիտումենք՝ որ Ա՛ստուածծ մեղաւորներին չի լսում[18] . բայց թէ որ մինն աստուածապաշտ է՝ և նորա կամքըն կատարում՝ նորան լսում է :
32 Յաւիտենից մին մարդ չլսեց՝ թէ միննն ծնընդից կոյր ծնուածի աչքերըն բաց արաւ :
33 Թէ որ էն մարդն Ա՛ստուածանից չէր՝ (ապա) մին բան չէր կարող անել[19] :
34 Պատասխան տուին՝ և նորան ասացին . Դու խապտ մեղքի մէջըն ես ծնուել , և դու վարդապետ լինում մեզ[20] . և դուրս հանեցին նորան :
35 Յիսուս լսեց՝ որ նորան դուրս հանեցին , և երբոր նորան գտաւ՝ նորան ասաց . Դու հաւատում Ա՛ստուածոյ Որդուն[21] :
36 Նա պատասխան տուաւ և ասաց . Տէր՝ ո՞վ է նա՝ որ հաւատամ նորան :
37 Յիսուս նորան ասաց . Հենց տեսիր նորան . և հենց նա է , որ քեզ հետ խօսումէ[25] :
38 Եւ նա ասաց . Հաւատում եմ Տէր՝ և երկրպագութիւն արաւ նորան :
39 Եւ Յիսուս ասաց . (Ես) դատաստանի համար եկի ես աշխարհքըս[23] որ նորանք՝ որ չեն տեսնում՝ տեսնեն , և նորանք՝ որ տեսնումեն՝ կուրանան[24] :

(16) Յովհ . ը . 14 : (17) Յովհ . գ . 10 : (18) Յոբ . իե . 9 : լե . 12 : Սալմ . ժը . 41 : կզ . 18 : Ըսալ . ա . 28 : ժե . 29 : իը . 9 : Նաում . ա . 15 : Նեհ . ժա . 11 : ժգ . 12 : Նովհ . ը . 18 : Մատ . գ . 4 : Հռոմ . է . 13 : (19) Վէր . 16 : (20) Վէր . 2 : (21) Մատ . ժգ . 33 : ժզ . 16 : Մարկ . ա . 1 : Յովհ . ժ . 36 : ա Յովհ . ե . 12 : (22) Յովհ . գ . 20 : (23) Յովհ . ե . 22 . 27 . գ . 17 . ժե . 47 : (24) Մատ . ժգ . 13 :

Digitized by Google

40 Լուան ամենք՝ ի փարիսեցւոցն՝ որք ընդ նմա էին, և ասեն ցնա. Միթէ և մեք կմլոք իցեմք:

41 Ասէ ցնոսա Յիսուս. Եթէ կոյրք էիք՝ ոչ էր ձեր մեղ. բայց արդ ասէք՝ եթէ Տեսանեմք, և մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են:

40 փարիսեցիներից մին քանիան՝ որ նորա հետ էին՝ լսեցին և նրան ասացին. Մի՞թէ մենք էլ կոյր ենք[35]:

41 Յիսուս նորանց ասաց. Եթէ որ կոյր լինէիք՝ մեղք չէիք ունենայ[36]. բայց հիմիկ ասում եք՝ Տեսնում ենք, և (նրա համար) ձեր մեղքերն հաստատված են ձեզանում:

ԿԻ · Ժ

1 Արքիսատն դատ է և բարի հովիւ: 19 Իրան համար էլած կերպ կերպ կարծիքները ժողովուրդումն: 24 Իրան դարձերովը կըվկայէ թէ ինքն է Արքիսատն Աստուծոյ Որդին. 39 Հրէաներից ձեռքից դուրս կըգնայ, 40 և մինել Յորդանանի մէկել կողմն կըգնայ, և էն տեղ շատ մարդիք իրան կըհաւատան:

1 Ամէն ամէն ասեմ ձեզ. Որ ոչ մտանէ ընդ դուռն ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ՝ նա գող է, և աւազակ:

2 Իսկ որ մտանէ ընդ դուռն, հովիւ է ոչխարաց:

3 Նմա դռնապանն բանայ, և ոչխարքն ձայնի նորա լսեն. և զիւր ոչխարսն կոչէ յանուանէ, և հանէ զնոսա:

4 Եւ յորժամ զիւրն զամենայն հանիցէ, առաջի նոցա երթայ, և ոչխարքն զնա հետ նորա երթան. զի ճանաչեն զձայն նորա:

5 Օտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց:

6 Այս առակ ասաց նոցա Յիսուս, և նոքա ոչ գիտէին, եթէ զինչ էր՝ որ խօսէրն ընդ նոսա:

1 Ճշմարիտըն ճշմարիտըն ասում ձեզ. Ով որ դրունովն չէ մտնում ոչխարների գաւիթն (պըտնան)՝ բայց ուրիշ կողմից է վեր էլնում՝ էնտեղ՝ նա գող և աւազակ է:

2 Բայց նա որ դրունովն է մըտնում, ոչխարների հովիւն (չոպանն) է:

3 Դրունապանն նորա համար բաց է անում. և ոչխարներն նորա ձայնին լսում են, և իրան ոչխարներըն իրանց անունովն կանչում, և նորանց դուրս է հանում:

4 Եւ երբոր իրաններն ամենըն հանում, նորանց առաջին գնում, և ոչխարներն նորա ետևէն գնում են. ինչուր՝ նորա ձայնըն ճանաչում են:

5 Օտարի ետևէն չեն գնում. բայց նորանից փախչում են, ինչուր՝ օտարներուի ձայնըն չեն ճանաչում:

6 Այս առակըս Յիսուս ասաց նրանց. և նորանք չէին գիտում, թէ ինչ էր էն՝ որ խօսում էր նրանց հետ:

(25) Հոով. բ · 18: (26) Հոհ. ժե · 22 · 24:

Digitized by Google

7 Վարձեալ ասէ զնոսա Հիսուս. Լմնան ամէն ասեմ ձեզ, զի Ես եմ դուռն ոչխարաց:

8 Լմենիքեան՝ որ յառաջ քան զիս եկին, գողք էին և աւազակք. այլ ոչ լուան նոցա ոչխարքն:
9 Ես եմ դուռն. ընդ իս եթէ ոք մտանիցէ, կեցցէ՝ մտցէ և ելցէ, և ճարակ գտցէ:

10 Գող ոչ գայ, եթէ ոչ՝ զի գողասցի և սպանցէ և կորուսցէ. ես եկի զի կեանս ունիցին, և առաւել եւս ունիցին:
11 Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն իւր դնէ ՚ի վերայ ոչխարաց:
12 Իսկ վարձկանն՝ որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն. իւրև տեսանէ զգայլն զի գայ, թողու զոչխարան և փախչի, և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ:

13 Վասնզի վարձկան է, և չէ փոյթ նմա վասն ոչխարացն:
14 Ես եմ հովիւն քաջ, և ճանաչեմ զիմն և ճանաչիմ յիմոցն:

15 Իւպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր. և զանձն իմ դնեմ ՚ի վերայ ոչխարաց:

16 Եւ՝ այլ ևս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր. և ձայնի իմում լուիցեն, և եղիցին մի հօտ և մի հովիւ:

17 Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես դնեմ զանձն իմ. զի միւսանգամ առից զնա:

7 Ասէր էր ևս Յիսուս. Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ Ես եմ ոչխարաց դուռն:

8 Ամենքն՝ որ ինձանէից առաջ եկին, գողեր և աւազակներ էին. ոչ խաւներն էլ նորանց չլսեցին:
9 Ես եմ դուռն. ինձ որ միջնէն ինձանով ներս մտնէ՝ նա կապրի. կըմտնէ և դուրս կըգայ, և արօտ կըգտնէ:

10 Գողն չի գալիս, բայց միայն որ գողանայ և սպանէ և կորցնէ. ես եկի որ կեանք ունենան, և էլ աւելի ունենան:

11 Ես եմ բարի հովիւն (չօպանն). բարի հովիւն իրան անձըն դնում ոչխարներին վերայ:
12 Ոչ թէ վարձկանն՝ որ հովիւ չէ, որ ոչխարներն իրանն չեն. երբոր տեսնում՝ որ գայլն գալիս է, ոչխարներն թողում և փախչում. և գայլն յափշտակում նորանց և ցրվում:

13 Պատճառն որ՝ վարձկան է, և ոչխարներին համար հոգս չունի:
14 Ես եմ բարի հովիւն (չօպանն), և իմոնքներին ճանաչվում և իմոնքներիցն էլ ճանաչվում:

15 Ինչպես որ Հայրն ինձ գիտէ, ես էլ Հօրըն գիտեմ, և իմ անձըս դնում ոչխարներին վերայ:

16 Ես դեռ ուրիշ ոչխարներ էլ ունիմ, որ էս գաւթիցս (պէտ չէին) չեն, և նորանց էլ պէտք է, որ ես էս տեղ բերեմ. և իմ ձայնիս կըլսեն, և մին հօտ (պէտ) և մին հովիւ (չօպան) կըլինին:

17 Հրա համար իմ Հայրս սիրում ինձ, պատճառն որ իմ անձըս դնում՝ որ մին էլ առնեմ նորան:

(1) Հովհ. ժդ. 6: Ղեւտ. ը. 18: (2) Նոյ. խ. 11: Նեղեմ. ղ. 13. 23: ըե. 24: Նեղեմ. ժգ. 20: ա Պետր. բ. 25: ե. 4: (5) Հոբ. ժա. 16, 17: (4) բ Տիմ. բ. 19: (5) Մատթ. ժա. 27: (6) Հովհ. ժե. 13: (7) Նոյ. ծգ. 8: (8) Նեղեմ. ըե. 22: Ղեւտ. ը. 14: ա Պետր. բ. 25: (9) Նոյ. ծգ. 7, 8. 12: Նեղեմ. բ. 8:

18 Ո՛չ ոք հանէ զնա յինէն . այլ
ես դնեմ զնա ես անձամբ իմով . իշ-
խանութիւն ունիմ դնել զնա , և
իշխանութիւն ունիմ միւսանգամ
առնուլ զնա . զայս պատուէր առի
՚ի Հօրէ իմմէ :

19 Վարձեալ հերձուած լինէր ՚ի
մէջ Հրէից վասն բանիցս այսո-
ցիկ :
20 Եւ ասէին բազումք ՚ի նոցանէ .
Դև գոյ ՚ի նմա և մոլեգնի . զի՞
բնաւ լսէք նմա :

21 Այլք ասէին . Այսպիսի բանք
ոչ գիւահարի են . միթէ դև կարէ
զաչս կուրի բանալ :
22 Եղեն յայնժամ նաւակատիքն
Երուսաղէմ , և ձմեռն էր :

23 Եւ շրջէր Յիսուս ՚ի սաճա-
րին՝ ՚ի սրահին Սողոմոնի :

24 Շուրջ եղեն զնովաւ Հրէայքն
և ասեն . Մինչև յերբ թափես զո-
գիս մեր , եթէ դու ես Քրիստոս՝
ասա մեզ համարձակ :

25 Պատասխանի ետ նոցա Յիսուս
և ասէ . Ասացի ձեզ՝ և ոչ հաւա-
տայք դուք . գործքն՝ զոր ես գոր-
ծեմ յանուն Հօր իմոյ՝ նոքին իսկ
վկայեն վասն իմ :

26 Այլ դուք ոչ հաւատայք , զի
չէք յոչխարաց անտի իմոց :
27 Ականջք իմ ձայնի իմում լսեն ,
և ես ճանաչեմ զնոսա , և զկնի իմ
գան :
28 Եւ ես տամ նոցա զկեանն
յաւիտենական . և մի՛ կորիցեն յա-

18 Ոչ ով նորան չի՛ հանում ին-
ձանից . բայց ես ինքս իմ անձնուէռ
եմ դնում նորան . իշխանութիւն
ունիմ նորան դնելոյ և իշխանու-
թիւն ունիմ նորան միմեանց առնե-
լոյ[10] . էս պատուէրն առի իմ Հօ-
րիցըս[11] :
19 Ի՛նչել տարաձայնութիւն էր
լինում Հրէաների միջումն՝ էս բա-
ներիս համար[12] :
20 Եւ նորանցից շատերն ասու-
մէին՝ Թէ Դև կայ նորանում և
գժվում[13] . ինչու՞ համար խոպատ-
ականջ էք դնում նորան :
21 Էնան ասումէին . Նապէսի
խօսքեր դիւահարի չեն . միթէ դևն
կարո՞ղ[14] է կուրի աչքերըն բանալ[15] :
22 Էն ժամանակն Երուսաղէմու-
մըն նաւակատիք տօն էլաւ՝ և ձը-
մեռն էր :
23 Եւ Յիսուս մէն էր գալիս
սաճարումն Սողոմոնի սրահին մէ-
ջըն[16] :
24 Հրէաներն նորան չորս կող-
մովն պատեցին և ասացին . Ի՛նչ-
չև ճ՚ըլ մեր հոգիներըս հանես .
թէ որ դու ես Քրիստոսն՝ համար-
ձակ ասա մեզ :
25 Յիսուս պատասխան տուաւ
նորանց և ասաց . Ասացի ձեզ և
ինձ չէք հաւատում . էն գործքե-
րըն՝ որ իմ Հօրս անունովն գոր-
ծումեմ՝ հենց նորանք վկայումեն
ինձ համար[17] :
26 Նայց դուք չէք հաւատում[18] ,
ինչու որ՝ իմ ոչխարներիցս չէք :
27 Իմ ոչխարներս իմ ձայնիս լը-
սումեն և ես ճանաչումեմ նորանց ,
և իմ եաւէս գալիս են[19] :
28 Եւ ես յաւիտենական կեանքն
եմ տալիս նորանց , և յաւիտեան

(10) Յովհ . ը . 19 : (11) Յովհ . գ . 35 : ժե . 10 : Կօր . բ . 24 . 33 : (12) Յովհ . է . 43 : բ . 16 : (13) Յովհ . է . 20 . ը . 48 . 52 : (14) Նէե . գ . 11 : Ասմ . 22 . 9 : Ճշմ . 8 : (15) Յովհ . բ . 6 , 7 . 32 , 33 : (16) Կօր . գ . 11 . է . 12 . (17) Ասմ . 38 : Յովհ . գ , 2 : է . 36 : (18) Յովհ . ը . 47 : ա Յովհ . գ . 6 : (19) Ա՚ր . է . 15 :

Digitized by Google

ւիտեան . և մի՛ ոք յափշտակեսցէ զնոսա ՚ի ձեռաց իմոց :

29 Հայրն իմ՝ որ եա ինձ զնոսա , մեծ է քան զամենայն , և ոչ ոք կարէ յափշտակել ՚ի ձեռաց Հօր իմոյ :

30 Ես և Հայր իմ մի եմք :

31 Ող էմս առին Հրէայքն՝ զի քարկոծ արասցեն զնա :

32 Պատասխանի ետ նոցա Յիսուս . Հազում գործս բարիս ցուցի ձեզ ՚ի Հօրէ իմմէ . վասն՝ որոյ գործոյ ՚ի նոցանէ քարկոծ առնէք զիս :

33 Պատասխանի ետուն նմա Հրէայքն . Ող ասն բարւոյ գործոյ ոչ առնեմք զքեզ քարկոծ , այլ վասն հայհոյութեան . և զի դու մարդ ես , և զանձն քո Աստուած առնես :

34 Պատասխանի ետ նոցա Յիսուս . Ոչ օրէնս ձեր գրեալ է . Ես ասացի Թէ աստուածք իցէք :

35 Խոկ եթէ զնոսա աստուածս ասէ , առ որս բանն Աստուծոյ եղև . և չէ մարթի եղծանել գրոյն :

36 Խոկ զոր Հայր սրբեաց՝ և առաքեաց յաշխարհ , դուք ասէք՝ Թէ Հայհոյես . զի ասացի՝ Թէ Որդի Աստուծոյ եմ :

37 Եթէ ոչ գործեմ զգործս Հօր իմոյ , մի՛ հաւատայք ինձ :

38 Այլ եթէ գործեմ , Թեև ինձ ոչ հաւատայք , սակայն գործոցն հաւատացէք . զի գիտասջիք և ծանիջիք՝ եթէ Հայր յիս է և ես ՚ի Հայր :

չեն կարէին՝ և ոչ ավ չէ յափշտակիլ նորանց իմ ձեռքիցս[30] :

24 Իմ Հայրս[31] որ նորանց առաւ ինձ , ամենիցն մեծ է , և ոչ ով կարօղ չէ իմ Հօրս ձեռքիցն յափշտակել նորանց[32] :

30 Ես և իմ Հայրս մին ենք[33] :

31 Հրէաներն քարեր վեր առին՝ որ նորան քարկոծ անեն[34] :

32 Յիսուս նորանց պատասխան տուաւ . Հա բարի գործքեր ցոյց տուի ձեզ իմ Հօրիցս . նորանցից ո՞ր գործի համար էք ինձ քարկոծ անում :

33 Հրէաներն պատասխան աբերին . Ոչ բարի գործքի համար քեզ չենք քարկոծ անում , բայց հայհոյութեան համար . և որ դու մարդ ես , և քս անձդ Աստուած ես անում[35] :

34 Յիսուս նորանց պատասխան տուաւ . Չէ՞ որ ձեր օրէնքումն գրված է՝ Թէ Ես ասացի՝ Թէ աստուածներ էք[36] :

35 Այս Թէ որ նորանց աստուածներ է ասաւ՝ որ (անոնք) Աստուծոյ խօսքն էլաւ նորանց վրայ[37] . և կարելի չէ որ գիրքն քանդվի :

36 Այս նորան որ Հայրն սրբեց[38] և ուղարկեց աշխարհք[39] , դուք ասումէք Թէ հայհոյումես . պատճառն որ ասացի՝[40] Թէ Աստուծոյ Որդի եմ[41] :

37 Թէ որ իմ Հօրս գործքըն չեմ գործում , մի՛ հաւատայք ինձ[42] :

38 Այս Թէ որ գործումեմ , Թէ և ինձ չը հաւատայք , բայց գոնեա գործքերուին հաւատացէք[43] . որ գիտենաք և ճանաչէք , Թէ Հայրն ինձանում է և ես Հօր միջումն[44] :

(20) Յովհ . ը . 37 : ժէ . 11 , 12 : ժը . 9 : (21) Յովհ . ժդ . 28 : (22) Յովհ . ժէ . 2 . 6 , Նայն : (23) Յովհ . ժէ . 11 . 22 : (24) Յովհ . ը . 59 : (25) Յովհ . է . 18 : (26) Ովս . ձբ . 6 : (27) Հոգէ . ժգ . 1 : (28) Յովհ . ը . 27 : (29) Յովհ . գ . 17 : է . 36 , 37 : ը . 42 : (30) Յովհ . է . 17 , 18 : Ղ Իր . 30 : (31) Ղ . Ա . ա . 35 : Յովհ . բ . 35 . 37 : (32) Յովհ . ժէ . 24 : (33) Յովհ . է . 36 : ժգ . 10 , 11 : (34) Յովհ . ժգ . 10 , 11 : ժէ . 21 :

Digitized by Google

39 Պարձեալ խնդրեին զնա ու-
նել , և ել ՚ի ձեռաց նոցա :

40 Եւ գնաց միւսանգամ յայն-
կոյս Յորդանանու՝ ՚ի տեղին , ուր
էր Յովհաննէս զառաջինն՝ և մկրտ-
եր , և անդ լինէր :
41 Եկին բազումք առ նա՝ և ա-
սեն . զի Յովհաննէս նշան ինչ ոչ
արար :
42 Այլ զամենայն , զոր ասաց
Յովհաննէս վասն նորա , ճշմարիտ
էր . և բազումք հաւատացին ՚ի նա
անդ :

39 Ա՛ինէլ ուզուսիին որ նորան
բռնեն , և նորանց ձեռքիցն դուրս
եկաւ[35] :
40 Եւ մինէլ գնաց Յորդանանի
էն կողմն էնաեղն , որ Յոհաննէսան
առաջուց կար և մկրտաւիքը[36] . և
էնաեղ էր լինում :
41 Շատ մարդիք նորա մօտ ե-
կին՝ և ասացին . Թէ Յոհաննէսան
մին նշան չըգործեց :
42 Այլ ամէն ինչ որ Յոհան-
նէսան նորա համար ասաց[37] , ճըշ-
մարիտ էր . և էնաեղ շատ մարդիք հաւատացին նորան[38] :

ԿԻ · ԺԸ

1 Ջրհեղեղ չորս օրինակ ՚ի ազարոսին յարութիւն առնել կըսայ : Շատ ՃՃեանը էրան կըհաւատան : 17 Քահանայապետներն և փարիսեցիներն ու իվլանն Ջրհեղեղի վերայ խորհուրդ անելայ կըժողովին : 49 Կայիափայի մարգարէութիւնն : 54 Ցիսուս էրան անձն կըպահէ : 55 Օշտին ատենին մեն կըգան նորան , և քահանայապետներն և փարիսեցիներն հրաման կըտան մարդկանց որ բռնեն նորան :

1 Եւ էր ոմն հիւանդ ՚ի ազարոս
՚ի Բեթանիա , ՚ի գեղջէ Մարիա-
մայ և Մարթայի քեռ նորա :

2 Այս այն Մարիամ էր՝ որ օծ
զՏէրն իւղով՝ և ընդհաց զոտս նո-
րա հերով իւրով . որոյ եղբայրն
՚ի ազարոս հիւանդ էր :
3 Առաքեցին առ նա քորքն նորա՝
և ասեն . Տէր՝ ահաւասիկ՝ զոր դուն
սիրէիր՝ հիւանդացեալ է :

4 Իբրև լուաւ Յիսուս , ասէ .
Այդ հիւանդութիւն չէ ՚ի մահ ,
այլ վասն փառացն Աստուծոյ . զի
փառաւորը լիցի Որդի Աստուծոյ
այնուիկ :
5 Եւ սիրէր Յիսուս զՄարթա
և զքոյրն նորա զՄարիամ և զե-
ղբայր նորա :

1 Եւ մին ազարոս մարդ կար
հիւանդ՝ Բեթանիայիցն , Մարիա-
մի և նորա քոյր Մարթայի գիւ-
ղիցն[1] :
2 Այս էն Մարիամն էր՝ որ Տէ-
րին իւղով օծեց և նորա ոտներըն
սրբեց իրան մազերումն . որ նորա
ազարոս եղբայրն հիւանդ էր[2] :
3 Նորա քրվերքն ուղարկեցին
նորա մօտ և ասացին . Տէր՝ ահա
նա՝ որ դու սիրուսիր՝ հիւանդա-
ցել է :
4 Յիսուս երբոր լսեց՝ ասաց .
Ին հիւանդութիւնն մեռնելայ հա-
մար չէ՝ այլ Աստուծոյ փառաց հա-
մար . որ Որդին Աստուծոյ նո-
րանով փառաւորվի[3] :
5 Եւ Յիսուս սիրուսիր Մար-
թային և նորա քոյր Մարթային և
ազարին :

(35) Յովհ . ե . 30 . 44 . ը . 59 . (36) Յովհ . ա . 28 . (37) Յովհ . գ . 30 . (38) Յովհ . ը . 30 . ժա . 45 . (1) Ղուկ . ժ . 38 , 39 . (2) Մատթ . իգ . 7 . Մարկ . ժգ . 3 . Յովհ . ժբ . 3 . (3) Յովհ . բ . 3 . վեր . 40 .

Digitized by Google

6 Իբրև լուաւ թէ հիւանդացեալ է, զաղեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս։

7 Ապա յետ այնորիկ ասէ ցնոսա. Եկայք երթիցուք Հրէաստան։

8 Ասեն ցնա աշակերտքն. Ռաբբի՝ այժմ ևս խնդրէին զքեզ հրէայքն քարկոծ առնել. և դարձեալ երթաս անդրէն։

9 Պատասխանի եա Յիսուս. Ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք գնայ ի տուք ջեան՝ ոչ գայթակղի. զի զլոյս աշխարհիս այսորիկ տեսանէ։

10 Ապա թէ ոք գնայ գիշերի՝ գայթակղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա։

11 Զայս ինքն ասաց. յետ այսորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ մեր ննջեաց, այլ երթամ զի զարթուցից զնա։

12 Ասեն ցնա աշակերտքն. Տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի։

13 Ասէր Յիսուս վասն մահուան նորա ասէր. Նոցա այսպէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ։

14 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. Ղազարոս մեռաւ։

15 Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւատասջիք ինձ, զի ես չէի անդ. այլ արդ՝ եկայք երթիցուք առ նա։

16 Ասէ Թովմաս՝ անուանեալն Երկուորեակ՝ ցաշակերտակիցսն. Ընդ եկայք և մեք՝ զի ընդ նմա մեռցուք։

17 Եկն Յիսուս՝ եգիտ զնա չորեքօրեայ ի գերեզմանի։

6 Երբոր լսեց՝ թէ նա հիւանդացել է, երկու օր մնաց հնաւանդն՝ որ էր։

7 Ապա ներանից եւս ասաց նոցա. Եկէք մինչ գնանք Հրէաստան։

8 Աշակերտներն նորան ասացին. Ռաբբի՝ հենց հիմիկ Հրէաներն ուզում էին քեզ քարկոծ անել, և մինչ հնտեղ ես գնում։

9 Յիսուս պատասխան առաւ. Չէ որ օրն տասներկու ժամ (ա. հալ) ունի. թէ որ մինն ցերեկն կըգնայ, նա չի գայթակղվիլ. քանզի որ՝ էս աշխարհքիս լոյսըն տեսնում։

10 Ապա թէ որ մինն գիշերուն կըգնայ՝ կըգայթակղվի. ինչու որ՝ լոյս չըկայ նորա հետ։

11 Երբոր էս ասաց, ետևից եւս ասաց նորանց. Որ՝ Ղազարոս բարեկամն քուն էլաւ. բայց կըգնամ՝ որ զարթնացնեմ նորան։

12 Աշակերտներն նորան ասացին. Տէր՝ թէ որ քուն էլաւ՝ ապա կառողջանայ։

13 Այց Յիսուս նորա մեռնելոյն համար էր ասում. Նորանց էնպէս երևեցաւ թէ քընի թեքընկած լինելոյ համար ասում էր։

14 Ին ժամանակն Յիսուս յայտնի ասաց նորանց. Ղազարոսն մեռաւ։

15 Եւ ես ուրախ եմ ձեզ համար՝ որ դուք հաւատաք ինձ, որ ես էնտեղ չէի. բայց հիմիկ եկէք գնանք նորա մօտ։

16 (Ապա) Թոմաս Երկուորեակ (ջուղտակ) կոչվածն (իրան) ընկեր աշակերտներին ասաց. Ապա եկէք՝ որ մենք էլ նորա հետ մեռնինք։

17 Յիսուս եկաւ՝ նորան չորս օր գերեզմանի մէջ (դրած) գտաւ։

(4) Գոլ. ժ. 40։ (5) Գոլ. ժ. 31։ (6) Գոլ. ք. 3։ (7) Գոլ. ժբ. 35։ (8) ք Օրէն. ք. 16։ Ղեսի. ժբ. 3։ Պսակ. ք. 34։ Ելից. է. 50։ ա Կորնթ. ժե. 18. 51։

Digitized by Google

18 Եւ էր Լնթեանիա մերձ յԲեթսաղէմ՝ իբրեւ ասպարիզօք հինգ ասպատ :

19 Հաշտումք՝ ի հրէից անտի եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ, զի մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն :

20 Մարթա իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս գայ, ընդ առաջ գնաց նորա. բայց Մարիամ նստէր անդէն ի տան :

21 Ասէ Մարթա ցՅիսուս . Տէր՝ եթէ աստ լեալ էիր՝ եղբայրն իմ չէր մեռեալ :

22 Այլ և արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրեսցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած :

23 Ասէ ցնա Յիսուս . Յարիցէ եղբայրն քո :

24 Ասէ ցնա Մարթա . Գիտեմ զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում :

25 Ասէ ցնա Յիսուս . Ես իմ եմ յարութիւն և կեանք . որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանիցէ կեցցէ :

26 Եւ ամենայն որ կենդանի է և հաւատայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան . հաւատա՞ս այսմիկ :

27 Ասէ ցնա . Այո՛ Տէր՝ ես հաւատացի , եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ , որ յաշխարհ գայր :

28 Եւ զայս իբրեւ ասաց , գնաց և կոչեաց զՄարիամ քոյր իւր լռելեայն՝ և ասէ . Ուսուցիչն եկեալ է և կոչէ զքեզ :

29 Նա իբրեւ լուաւ՝ յարեաւ վազվազակի , և եկն առ նա :

30 Զի եւս էր եկեալ Յիսուս ի գեղն . այլ էր անդէն ի տեղւոջն՝ ուր ընդ առաջ եղեւ նմա Մարթա :

18 Եւ Լնթեանիա մօտ էր Երուսաղէմին ասան հինգ ասպարէզի (մանկլով) չափով :

19 Հրեաներից շատեր եկել էին Մարթայի և Մարիամի մօտ , որ եղբօր կողմանէ մխիթարեն նորանց :

20 Երբոր Մարթա լսեց՝ թէ Յիսուս գալիս է , գնաց նորա առաջը . բայց Մարիամն նստած էր :

21 Մարթա Յիսուսին ասաց . Տէր՝ թէ որ դու հաւեղ եղած լինէիր՝ իմ եղբայրս չէր մեռել :

22 Այլ հիմիկ էլ գիտեմ , թէ ինչ որ Աստուածանից խընդրես՝ Աստուած կըտայ քեզ՝ :

23 Յիսուս նորան ասաց . Քո եղբայրդ յարութիւն կառնէ :

24 Մարթան նորան ասաց . Գիտեմ որ յարութիւն կառնէ յարութենումն՝ յետին օրումն[10] :

25 Յիսուս նորան ասաց . Ես եմ յարութիւն[11] և կեանք[12] . ով որ ինձ հաւատումէ՝ թէ և մեռանի՝ կապրի[13] :

26 Եւ ամէն ով որ կենդանի է և ինձ հաւատումէ , նա յաւիտեան չի մեռնիլ . հաւատումես սրան :

27 Նորան ասաց . Այո՛ Տէր , ես հաւատացի՝ թէ դու ես Քրիստոսն Որդին[14] , որ պէտք է աշխարհք գայիր :

28 Եւ երբոր էս ասաց , գնաց թաքուն կանչեց քրոջն Մարիամ քրվորըն և ասաց . Ուսուցիչն եկել է և քեզ կանչումէ :

29 Նա երբոր լսեց՝ շուտով վեր կացաւ , և եկաւ Յիսուսի մօտ :

30 Յիսուս դեռ չէր եկել գիւղն՝ բայց հանդիպեցաւ նորան՝ որտեղ որ Մարթան եկաւ նորա առաջն :

(9) Ովհ . թ . 31 : (10) Դան . ժդ . 13 : Ովհ . ե . 29 : (11) Ովհ . ե . 21 : զ . 39 , 40 , 44 : (12) Ովհ . ա . 4 : զ . 35 : ժդ . 6 : Ղուկ . գ . 4 : ա Ովհ . ա . 1 , 2 : 4 : 11 : (13) Ովհ . գ . 36 : ա Ովհ . ե . 19 , 24 : (14) Ասպ . ժգ . 18 . Ովհ . գ . 13 . զ . 14 . 70 .

Digitized by Google

31 Իսկ Հրեայքն՝ որ էին ընդ նմա՝ ասեն ցնա. Ուսո՛ւցիչ, մի՛ ասեն անդ՝ և մխիթարեցին զնա, իբրև տեսին զի՝ արիամ՝ թէ յարեաւ վաղվաղակի և գնաց, գնացին և նոքա զհետ նորա. համարէին թէ՝ ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ։

32 Իսկ՝ արիամ իբրև եկն ուր էր Յիսուս՝ և տեսանելով զնա, անկաւ առ ոտս նորա և ասէ. Տէր՝ եթէ աստ էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ։

33 Յիսուս իբրև տեսանէ զնա լալ, և որ ընդ նմա էին Հրեայքն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրև զայրացեալ։

34 Եւ ասէ. Ո՞ւր եդիք զնա. ասեն ցնա. Տէր՝ ե՛կ և տե՛ս։

35 Եւ արտասուեաց Յիսուս։

36 Եւ՝ասէին Հրեայքն. Տեսէք որչափ սիրէր զնա։

37 Եւ ոմանք ի նոցանէ ասէին. Ո՞չ կարէր սա, որ երաց զաչս կուրին, առնել՝ զի և սա մի՛ մեռցի։

38 Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ միտս իւր, գայ ի գերեզմանն. և էր այր մի, և վէմ մի եդեալ ի վերայ նորա։

39 Եւ ասէ Յիսուս. Ի բա՛ց արարէք զվէմդ. ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէր՝ արդ հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է։

40 Եւ՝ասէ ցնա Յիսուս. Ո՞չ ասացի քեզ, եթէ հաւատասցես՝ տեսցես զփառսն Աստուծոյ։

41 Եւ իբրև ի վեր առին զվէմն, Յիսուս ամբարձ զաչս իւր ի վեր, 31 Հայց Հրեայքն՝ որ գնային ընդ նմա ի տունն՝ մխիթարելով զնա, իբրև տեսին զարիամ՝ թէ շուտով վերկացաւ և գնաց՝ նորանք էլ նոքա եւեթ գնացին. կարծեալ թէ գերեզմանն է գնում՝ որ լացցէ անդ[15]։

32 Հայց արիամ երբոր եկաւ էն տեղն՝ որ Յիսուսն էր՝ և նորան տեսաւ, նորա ոտներըն ընկաւ և ասաց. Տէր՝ թէ որ էստեղ պատահած լինէիր՝ իմ եղբայրս չէր մեռնի[16]։

33 Յիսուս երբոր նորան տեսաւ՝ որ լաց էր լինում և Հրեաներն էլ՝ որ նորա հետ էին՝ լաց էին լինում, իրան հոգով մէջն դժուարացաւ շատ տրտմածի նման։

34 Եւ ասաց. Ո՞ւր տեղ դրիք նորան. նորան ասացին. Տէր՝ ե՛կ և տե՛ս։

35 Եւ Յիսուս արտասուեց[17]։

36 Հրեաներն ասում էին. Տեսէք՝ թէ որքան սիրում էր նորան։

37 Ոմանցից կէսն ասում էին. Մի՞թէ սա որ կուրի աչքերըն բաց արաւ՝ չէր կարող անել՝ որ սա էլ չըմեռնի[18]։

38 (Ուպա) Յիսուս միևնէլ իրան մեջըումն տրտմած՝ եկաւ գերեզմանըն. և էն միև այր (խոշոչ) էր՝ և միև քար նորա վերայ դրած։

39 Եւ Յիսուս ասաց. Առէք քարըդ դէն քցեցէք. մեռելի քոյրն՝ Մարթան նորան ասաց. Տէր՝ հիմիկ հոտած կըլինի. ինչու որ՝ չորս օրվան է։

40 Յիսուս նորան ասաց. Չէ՞ որ քեզ ասացի. եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքըն կըտեսանես[19]։

41 Եւ երբոր քարըն վերառին, Յիսուս իրան աչքերըն դէպի վեր

(15) Կդ. 19։ (16) Կէ. 21։ (17) Յովհ. ժբ. 35։ (18) Յովհ. թ. 6։ (19) Կէ. 4. 23։

և ասէ . Հայր՝ գոհանամ զքէն , զի լուար ինձ ։
42 Եւ ես գիտէի՝ զի յամենայն ժամ լսես ինձ . այլ վասն ժողովրդեանս , որ շուրջ կան՝ առնեմ , զի հաւատասցեն՝ թէ դու առաքեցեր զիս ։
43 Օ՛այս իբրև ասաց , ՚ի ձայն մեծ աղաղակեաց և ասէ . Ղ՛ազարէ՝ արի ել արտաքս ։
44 Եւ ել մեռեալն տուք կապեալվք , և ձեռօքն երիվարդօք , և երեսօքն վարշամակապատօք , և ասէ ցնոսա Յիսուս . Լուծէ՛ք զնա և թողէք երթալ ։

45 Ո՛ստումբ ՚ի հրէից՝ որ եկեալ էին առ Մարիամն , իբրև տեսին զոր արարն , հաւատացին ՚ի նա ։
46 Եւ ոմանք ՚ի նոցանէ գնացին առ փարիսեցիան , և պատմեցին նոցա՝ զոր արարն Յիսուս ։

47 Ժողովեցին քահանայապետքն և փարիսեցիք առեան , և ասեն . Ո՞ի՞նչ արասցուք , զի այրն այն բազում նշանս առնէ ։
48 Եթէ թողումք զնա այնպէս , ամենքին հաւատասցեն ՚ի նա . և գայցեն հռոմք՝ և բառնայցեն զտեղիս մեր՝ և զազգն ։
49 Մի՝ ՚ի նմա ՚ի նոցանէ անուն Կայիափա , որ քահանայապետ էր տարւոյն այնորիկ , ասէ ցնոսա . Դուք ոչինչ գիտէք ,
50 Եւ ոչ բնաւ խորհիլ իսկ , թէ լաւ է մեզ զի այր մի մեռանիցի ՚ի վերայ ժողովրդեանս , և մի՛ ամենայն ազգս կորիցէ ։
51 Օ՛այս ոչ յանձնէ ինչ ասաց . այլ զի քահանայապետ էր տարւոյն այնորիկ , մարգարէացաւ և ասաց . Հայր՝ գոհանամ քեզանից , որ լսեցիր ։
42 Եւ ես գիտէի՝ որ ամէն ժամանակ լսես ինձ . բայց ես ժողովրդիս համար եմ անում՝ որ հաւատան թէ դու ուղարկեցիր ինձ[20] ։
43 Երբոր ես ասաց , մեծ ձայնով աղաղակեց և ասաց . Ղ՛ազարէ՝ վեր կաց՝ դուրս եկ ։
44 Եւ մեռեալն դուրս եկաւ կապած ոտներով , և ձեռները շորթով պատած , և երեսն վարշամակներով (խաւով) պատած[21] . և Յիսուս նորանց ասաց . Լուծէ՛ք դորան և թողէք որ գնայ ։
45 Հրէաներիցն շատերն՝ որ Մարիամների մօտն էին եկել՝ երբոր տեսին էն՝ որ նա արաւ , հաւատացին նորան[22] ։
46 Եւ նորանցից մին քահանան գրնացին փարիսեցիներին մօտ , և նորանց պատմեցին ինչ որ Յիսուսն արաւ ։
47 Քահանայապետներն և փարիսեցիներն տիվան ժողովեցին[23] , և ասացին . Ի՞նչ անենք , ի՞նչու որ՝ էն մարդն շատ նշաններ է անում[24] ։
48 Եթէ որ նորան էսպէս թողնենք՝ ամենքն կը հաւատան նորան , և հռոմայեցիքն կուգան և մեր ազգըն և տեղն վեր կառնեն ։
49 Նորանցից մինն Կայիափա անունով՝ որ էն տարվան քահանայապետն էր՝ նորանց ասաց[25] . Դուք իսկի բան չէք գիտում ,
50 Եւ իսկի էլ չէք մտածում , թէ լաւ է մեզ համար՝ որ մին մարդ մեռնի ժողովրդիս վերայ՝ և ամէն ազգըս չկորչի[26] ։
51 Էս բանըս ոչ թէ իրանից ասաց . բայց որովհետև էն տարվան

(20) Յովհ . ժբ . 30 ։ (21) Յովհ . ի . 7 ։ (22) Յովհ . բ . 23 ։ ժ . 42 ։ ժբ . 11 . 18 ։ (23) Սաղ . բ . 2 ։ Մատթ . իզ . 3 ։ Մարկ . ժդ . 1 ։ Ղուկ . իբ . 2 ։ (24) Յովհ . ժբ . 19 ։ Գործ . դ . 16 ։ (25) Ղուկ . գ . 2 ։ Յովհ . ժբ . 14 ։ Գործ . դ . 6 ։ (26) Յովհ . ժբ . 14 ։

Digitized by Google

ւոյն այնարիկ , մարգարէացաւ՝ եթէ մեռանելոց էր Յիսուս ՚ի վերայ ազգին :

52 Եւ ոչ ՚ի վերայ ազգին միայն , այլ զի և զորդիսն Աստուծոյ զցրուեալսն ժողովեսցէ ՚ի մի :

53 Ապա յայնմ օրէ խորհուրդ արարին՝ զի սպանցեն զնա :

54 Եւ Յիսուս այնուհետև ոչ ե֊թէ համարձակ շրջէր ՚ի մէջ Հրէից . այլ գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր յանապատ , ՚ի քաղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ՝ և անդ լինէր աշակերտօքն հանդերձ :

55 Եւ էր մերձ զատիկն Հրէից , և բազումք ելին յԵրուսաղէմ ՚ի գնաւոյ անտի յառաջագոյն քան զզատիկն , զի սրբեսցեն զանձինս իւրեանց :

56 Խնդրէին զՅիսուս , և ասէին ընդ միմեանս մինչ կային ՚ի տաճարին . Ո՞րպէս թուի ձեզ՝ եթէ ոչ գայցէ ՚ի տօն այսր . պատուէր առեալ էր քահանայապետին և փարիսեցւոց , զի թէ ոք գիտասցէ՝ թէ ուր է , գուշակեսցէ զնմանէ՝ զի կալցին զնա :

քահանայապետն էր , մարգարէացաւ՝ թէ Յիսուս պիտի մեռանէր ազգին վերայ :

52 Եւ ոչ թէ միանակ ազգին վերայ[27] , բայց որ Աստուծոյ ցրուած որդիքներն էլ միանեղ ժողովէ[28] :

53 Ապա էն օրից եռե խորհուրդ արին՝ որ նորան սպանեն :

54 Եւ Յիսուս նրանից եռե էլ համարձակ չէր մանգալիս Հրէաների մէջն[29] . բայց էնտեղից գնաց մին երկիր , որ անապատին մօտ էր , մին քաղաքի մէջ՝ որ նորա անունն Եփրայիմ էր[30] . և էնտեղ էր կեռնում աշակերտների հետ :

55 Եւ Հրէաների զատիկն մօտ էր , և էն գաւառից շատ մարդիք առաջ վեր էլան Երուսաղէմ , որ իրանց անձներըն սրբեն[31] :

56 Ա՞ն էին գալիս Յիսուսին , և իրար առումին[32]՝ երբոր տաճարումն էին . Ի՞նչպէս է երեւում ձեզ . միթէ էս տօնիս չի՞ գալ նա էտեղ . (բայց) քահանայապետներըն և փարիսեցիներն հրամայ էին առնել , որ եթէ մինն գիտենայ՝ թէ ինչ տեղ է , նորա հասկը իմաց տայ՝ որ բռնեն նորան :

ԻԱ · ԺՒ

3 Յիսուս Մարիամին կը֊ղովէ որ իրան ոտներըն օծէց : 9 Շատ ժողովուրդ կը֊գան ի տեղը Ղազարոսին էլ տեսնեն : 10 Քահանայապետներն խորհուրդ կանեն՝ որ նորան էլ սպանեն : Ուրիսաոս հեղի Երուսաղէմ կը֊գնայ : 20 Հեթանոսներն փափաքեսին որ Յիսուսին տեսնեն : 23 Իրան մահին համար առաջուց իմաց կ֊ուտայ : 27 Հրէաներին մեծ կռիւ-բռնութիւն . 42 Շատ իշխաններից կը֊հաւատան նորան : բայց յայտնի չէն գաւառնում . 44 Ուրիսաոս ցոյց կ֊ուտայ որ իրան հաւատացողներն Աստուծոյն էլ կը֊հաւատան : 47 Ուրիսաոսի խօսքն կը֊պատէ յիսին օրումն :

1 Յետ Յիսուս զսակիցն վեց օր առաջ եկաւ Յեթանիա , ուրանէր

1 Ութ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզատիկն եկն ՚ի Յեթա֊

(27) Նախ . խԲ . 6 : ա Յովհ . բ . 2 : (28) Յովհ . ժ . 16 : Եփես . բ . 14—17 : (29) Յովհ . ե . 1 . 3 : է . 1 : (30) բ Պնոյ . ժգ . 19 : (31) Յովհ . բ . 13 : է . 1 : ը . 6 : (32) Վէր . 7 :

Digitized by Google

նախ , ՚ուր էր ՚ի սազար մեռեալն , զոր յարոյցն ՚ի մեռելոց :

2 Եւ արարին անդ նմա ընթրիս . և ՚ի սպասու կայր Մարթա , և ՚ի սազար մի էր ՚ի բազմելոց ընդ նմա :

3 Իսկ Մարեմայ առեալ լիտր մի իւղոյ նարդեան ազնուի՝ մեծագնոյ , օծ զոտն Յիսուսի , և հերձ իւրովի մազիւքն զոտս նորա . և առնն լի եղև ՚ի հոտոյ իւղոյն :

4 Ասէ մի ոմն յաշակերտաց նորա՝ Յուդա Իսկարիովտացի , որ մատնելոցն էր զնա :

5 Ընդէր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի , և տուաւ աղքատաց :

6 Այս ասաց՝ ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր նմա . այլ զի գող էր՝ և զարկղն ինքն ունէր . և որ ինչ անկանէր՝ նա կրէր :

7 Ասէ Յիսուս . Թո՛ղ տուր դմա , զի յօրն պատանաց իմոց պահեացե զայդ :

8 Զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք . զիս ոչ յանապազ ընդ ձեզ ունիք :

9 Իբրև գիտաց ժողովուրդ բազում ՚ի Հրէից թէ անդ է՝ եկին , ոչ միայն վասն Յիսուսի , այլ զի և զ՚ի սազար տեսցեն , զոր յարոյցն ՚ի մեռելոց :

10 Խորհուրդ արարին քահանայապետքն՝ զի և զ՚ի սազար սպանցեն :

11 Վասնզի բազումք ՚ի Հրէից երթային և հաւատային ՚ի Յիսուս :

12 ՚Ի վաղիւ անդր ժողովուրդ

որ մեռած ՚ի սազարոն էր՝ որ նորան մեռելներն յարոյց[1] :

2 Եւ հնտեղ հացկերոյթ եղեւ նմա , և Մարթա ծառայէր սեղանին , և ՚ի սազարէն նորա հետ նստօղներից մինն էր :

3 Այլ Մարիամ մին լիտր նարդոսի ազնիւ մեծագին իւղ առաւ[3] . և Յիսուսի ոտներքն օծեց , և իւրեան մազերովն սրբեաց նորա ոտներն . և տունն լցաւ էն իւղի հոտովն :

4 Ուսակերտներից մինն՝ Յուդա Իսկարիովտացին , որ նորան մատնելու էր՝ ասաց .

5 Ինչու՞ համար էգ իւղդ երեք հարիւր դենարի չծախվեցաւ , և աղքատներին տրվվաւ :

6 Այս ասաց՝ ոչ թէ որ նա աղքատների համար հոգս ունէր . բայց նրա համար որ գող էր՝ և քսակըն ինքն ունէր . և ինչ որ ընկնաւէր՝ նա էր պահում[4] :

7 Յիսուս ասաց . Թո՛ղ տուր դորան , որ մինչև իմ պատանքիս օրն պահէ էգ :

8 Աղքատներըն ամէն ժամանակ ձեզ հետ ունիք . (բայց) ինձ ամէն ժամանակ ձեզ հետ չունիք[5] :

9 Երամբ Հրեաներից շատ ժողովուրդ գիտաց՝ թէ (նա) հնտեղ է՝ եկին , ոչ թէ ինոակ Յիսուսի համար , բայց որ ՚ի սազարին էլ տեսնեն , որ նորան մեռելներից մինչ յարոյց[6] :

10 Քահանայապետներն խորհուրդ արին՝ որ ՚ի սազարն էլ սպանեն[7] :

11 Պատճառն որ՝ Հրեաներից շատ մարդիք գնումէին և հաւատումէին Յիսուսին[8] :

12 Սրա յետևի օրումն շատ ժո-

(1) Յովհ . ժա . 1 . 43 : (2) Մարկ . իգ . 6 : Մատթ . ժգ . 3 : (3) Ղուկ . ժ . 38 , 39 : Յովհ . ժա . 2 : (4) Յովհ . ժգ . 29 : (5) Մատթ . իգ . 11 : Մարկ . ժգ . 7 : (6) Յովհ . ժա . 43 , 44 : (7) Ղուկ . ժգ . 34 : (8) Յովհ . ժա . 45 . պայթ . 18 :

Digitized by Google

բազում՝ որ եկեալ էր ի տօնն, իբրեւ լուան՝ թէ գայ Յիսուս յԵրուսաղէմ,

13 Առին ոստս արմաւենեաց, և ելին ընդառաջ նորա՝ աղաղակէին և ասէին. Ովսաննայ, օրհնեալ որ գայդ յանուն Տեառն՝ Թագաւոր Իսրայէլի:

14 Եւ գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա. որպէս և գրեալ է.

15 Մի՛ երկնչիր դուստր Սիովնի՛ ահա թագաւորդ քո գայ նըստեալ ի վերայ յատանակի իշոյ:

16 Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառաջինն, այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայնժամ յիշեցին, եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նորա. և զայն արարին նմա:

17 Եւ ժողովուրդն վկայէր՝ որ էր ընդ նմա, թէ զԼազար կոչեաց և եթ ի գերեզմանէն, և յարոյց զնա ի մեռելոց:

18 Եւ վասն այնորիկ ընդառաջ եղև նմա ժողովուրդն, զի լուան եւ թէ զայն նշանս արարեալ էր նորա:

19 Իսկ փարիսեցիքն ասէին ընդ միմեանս. Տեսանէք՝ զի ոչինչ օգաք. ահաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց:

20 Էին անդ ոմանք և Հեթանոսք յելելոցն անդր, զի երկրպագուս նիցեն ի տօնին:

21 Եկեալ մատեան առ Փիլիպպոս՝ որ ի Բեթսայիդա Գալիլեացւոցն էր, աղաչէին զնա և ասէին. Տէր՝

ղովուրդ՝ որ եկելէին տօնն, եթէպէտ լսեցին՝ թէ Յիսուս գալիս է Երուսաղէմ.

13 Առմաւի ծառի ճղներ առին, և դուրս գնացին նորա առաջի, աղաղակուէին և ասում. Ովսաննայ, օրհնեալ (ես) որ Տէրի անուամբ գալիս ես՝ դու Իսրայէլի Թագաւորդ:

14 Եւ Յիսուս մին էշ գտաւ, և նորա վերայ նստեց. ինչպէս որ գըրված է՝ (թէ):

15 Մի՛ վախենար Սիօնի աղջիկ, ահա քո Թագաւորդ գալիս է՝ իշի քուռակի վերայ նստած:

16 Եւ աշակերտներն առաջ չիմացան էն բանըն. բայց երբոր Յիսուս փառաւորվեցաւ էն ժամանակն մտքներն բերին՝ թէ էն էր՝ որ նորա համար գրված էր. և էն բանըն արին նորան:

17 Եւ ժողովուրդն՝ որ նորա հետ էր՝ վկայուէր, թէ Լազարին գերեզմանիցն մէնակ դուրս կանչեց. և էնպես մեռելներն մէջեցն յարոյց նորան:

18 Եւ նորա համար ժողովուրդն գնաց նորա առաջն, ինչու որ լըսեցին թէ նա էն նշանըն արել էր:

19 Ասյց փարիսեցիներն իրար մէջ ասում էին. Տեսնում էք՝ որ իսկի հնար չէք գտնում. ահա ամեն աշխարհ նորա հետէն գնաց:

20 Էնտեղ մին քանի Հեթանոսներ էլ կային նորանց միջումն. որ եկել էին էնտեղ, որ երկրպագութիւն անեն էն տօնումն:

21 Նորանք եկին Փիլիպպոսի մօտըն՝ որ Գալիլեացւոց Բեթսայիդայից էր, նորան աղաչում էն

(9) Մատթ. ԻԱ. 8: Մարկ. Ժա. 8: Ղուկ. ԺԹ. 35, 36, Հայելն: (10) Ղուկ. ԺԹ. 35, 38: (11) Մատթ. ԻԱ. 7: (12) Ծննդ. Բ. 9: (13) Ղուկ. Ժը. 38: (14) Ծովհ. Ե. 39: (15) Ծովհ. Ժգ. 20: (16) Վէպ. 11: (17) Ծովհ. Ժա. 37, 43: (18) Կատթ. Ժե. 4: (19) գ Յովհ. ը. 41, 43: Կատթ. ը. 37:

Digitized by Google

կաթիվք զՅիսուս տեսանել :

22 Գայ փիլիպպոս և ասէ ցՆդրէաս . Նդրէաս և փիլիպպոս ասեն ցՅիսուս :

23 Եւ Յիսուս պատասխանի եառ նոցա՝ և ասէ . Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ :

24 Ճշմն ամէն ասեմ ձեզ . Եթէ ոչ հատանի ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի ,

25 Ինքն միայն կայ . ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ : Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա . և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ , ի կեանսն յաւիտենական պահեսցէ զնա :

26 Եթէ ոք զիս պաշտիցէ՝ զկնի իմ եկեսցէ , և ուր եմն եմ՝ անդ և պաշտօնեայն իմ եղիցի . եթէ ոք զիս պաշտիցէ , պատուեսցէ զնա Հայրն իմ :

27 Հայց այժմ անձն իմ խռովեալ է . և զինչ ասացից . Եհայր՝ ապրեցո զիս ի ժամէ աստի յայսմանէ , այլ վասն այնորիկ եկի ի ժամս յայս :

28 Հայր՝ փառաւորեա զանուն քո . եկն բարբառ յերկնից . Եւ փառաւորեցի , և դարձեալ փառաւորեմ :

29 Եւ ժողովուրդն՝ որ կայր և լուեր՝ ասէին . Որոտումն լինել . կէսքն ասէին . Հրեշտակ խօսեցաւ ընդ նմա :

30 Պատասխանի եառ Յիսուս՝ և ասէ . Ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս , այլ վասն ձեր :

31 Դատ՝ կամենումն Յիսուսին տեսանել[20] :

22 Փիլիպպոսն եկաւ և Նդրէասին ասաց . Նդրէասն և փիլիպպոսն ասացին Յիսուսին :

23 Եւ Յիսուս պատասխան տուեալ նորանց՝ և ասաց . Հասաւ (ատ. հաւն) հասաւ՝ որ Որդին մարդոյ փառաւորվի[21] :

24 Ամէն ամէն ասեմ ձեզ . Եթէ ոչ ցորենի հատն հողի մէջ ընկնի և մեռնի[22] ,

25 Ինքն մենակ կըմնայ . բայց եթէ որ մեռնի՝ շատ պտուղ կըբերէ . ով որ իրան անձըն սիրումէ՝ կըկորցընէ նորան . և ով որ իրան անձըն ատումէ էս աշխարհքումս , յաւիտենական կենաց մէջ կըպահէ նորան[23] :

26 Եթէ ոք ինձ ծառայէ՝ թող նա իմ ետևէս գայ . և որտեղ որ ես եմ՝ էնտեղ էլ իմ պաշտօնեայս կըլինի . եթէ որ ինձ ծառայէ ինձ , իմ Հայրս կըպատուէ նորան[24] :

27 Հայց հիմիկ իմ անձս տրտմած է[25] . և ի՞նչ ասեմ . Հայր՝ ապրեցրու ինձ էս ժամիցս (ատ. Ես) . բայց հենց նրա համար եկի էս ժամիս մէջն[26] :

28 Հայր՝ փառաւորիր քո Որդդ . երկնքից ձայն եկաւ , (թէ) փառաւորեցի և մինէլ կըփառաւորեմ[27] :

29 Եւ ժողովուրդն՝ որ կանգնած էր և լսումէր՝ ասումէին , թէ Որոտմունք է լինում . և էնտ ասումէին՝ թէ Հրեշտակ խօսեց նորա հետ :

30 Յիսուս պատասխան տուաւ և ասաց . Ես ձայնս ոչ թէ ինձ համար եկաւ , բայց ձեզ համար[28] :

(20) Յովհ . ա . 44 : (21) Յովհ . ժգ . 32 : ժէ . 1 : (22) ա Կորնթ . ժե . 36 : (23) Մտթ . ժ . 39 : ժզ . 25 : Մրկ . ը . 35 : Ղկս . թ . 24 : ժէ . 33 : (24) Յովհ . ժգ . 8 : ժէ . 21 : ա Թես . գ . 16 : (25) Մտթ . իզ . 38 , 39 : Ղկս . ժբ . 50 : Յովհ . ժգ . 21 : (26) Ղկս . իր . 53 : Յովհ . ժը . 37 : (27) Մտթ . գ . 17 , (28) Յովհ . ժա . 42 :

Digitized by Google

31 Ա՛յժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ . այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեցի արտաքս :

32 Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ , զամենեսին ձգեցից առ իս :

33 Այս ասէր , նշանակեալ՝ թէ որով մահու մեռանելոց իցէ :

34 Պատասխանի եւս նմա ժողովուրդն . Մե՛ք լուաք յօրինացն՝ եթէ Քրիստոսն յաւիտեան կայ , և դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ . ո՞վ է այն Որդին մարդոյ :

35 Ա՛սէ ցնոսա Յիսուս . Փոքր միւս ևս ժամանակ լոյս ընդ ձեզ է . գնացէ՛ք մինչդեռ լոյսն ունիք , զի մի՛ խաւար ձեզ հասցէ . զի որ գնայ՝ի խաւարի , ո՛չ գիտէ յո՞ երթայ :

36 Մինչդեռ լոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւատացէ՛ք՝ի լոյսն , զի որդիք լուսոյ եղիջիք . զայս խօսեցաւ Յիսուս , և չորաւ՝ թաքեաւ՝ի նոցանէ :

37 Եւ այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա . և նոքա ո՛չ հաւատային՝ի նա :

38 Զի լցցի բանն Եսայեայ մարգարէի՝ զոր ասաց . Տէր՝ ո՞ հաւատաց՝ի լուր մեր , և բազուկ Տեառն ո՞մ յայտնեցաւ :

39 Վասն այնորիկ ո՛չ կարէին

31 Հիմիկ է էս աշխարհքիս դատաստանն . հիմիկ էս աշխարհքիս իշխանն դուրս կը քցվի[29] :

32 Եւ ես երբոր կըբարձրանամ երկրիցս[30] , ամէնին կը քաշեմ ինձ մօտ[31] :

33 Ասա բանըս սաուսէր՝ որ ցոյց տայ թէ ինչ մահով պիտի մեռնի[32] :

34 Ժողովուրդն պատասխան տուաւ նորան . Մենք օրէնքիցն լսեցինք՝ թէ Քրիստոսն յաւիտեան կըկենայ . և դու ի՞նչպէս ես ասում՝ թէ պէտք է՝ որ Որդին մարդոյ բարձրանայ . ո՞վ է էն Որդին մարդոյ[33] :

35 Յիսուս նորանց ասաց . Մի՛ քիչ ժամանակ դեռ լոյսն ձեզ հետ է[34] . գնացէ՛ք , քանի որ լոյսըն ունիք՝ որ խաւարն ձեզ չըհասնէ[35] . պատճառն որ՝ ով որ խաւարումն է գնում , չի գիտում (թէ) ո՛ւր է գնում[36] :

2 Գիտեր և Յուդա՝ որ զնա մատնեցց էր , զտեղին . զի բազում անգամ ժողովեալ էր անդր Յիսուսի աշակերտօքն հանդերձ :

3 Եւ Յուդայի առեալ ընդ իւր զգունդն , և 'ի քահանայապետին և 'ի փարիսեցւոց սպասաւորս , գայ անդր ջահիւք և լապտերօք և զինուք :

4 Իսկ Յիսուս իբրև ետես զայն ամենայն եկեալ 'ի վերայ նորա , ել և ասէ ցնոսա . Օ՞ւմ խնդրէք :

5 Պատասխանի ետուն նմա . Օ Յիսուս 'Նազովրեցի . ասէ ցնոսա Յիսուս . Ես եմ . կայր ընդ նոսա և Յուդա , որ մատնէրն զնա :

6 Իբրև ասաց՝ թէ Ես եմ , յետս յետս չոգան , և գայլկան գետինի :

7 Կարձեալ եհարց զնոսա . Օ՞ւմ խնդրէք . և նոքա ասեն , Օ Յիսուս 'Նազովրեցի :

8 Պատասխանի ետ նոցա Յիսուս . Ասացի ձեզ թէ Ես եմ . արդ՝ եթէ զիս խնդրէք՝ թոյլ տուք դոցա երթալ :

1 Յիսուս երբոր էս ասաց , աշակերտներին հետ գնաց՝ Կեդրոնի ձորի ակկէ կողմն , որտեղ որ պարտէզ (պօստան) կար[2] . որ նորա մէջ մտաւ ինքն և իրան աշակերտներն :

2 Յուդա էլ՝ որ սիրտ մատներ նորան , գիտուէր էնտեղը . ինչու որ՝ Յիսուս շատ անգամ ժողովվել էր էնտեղն աշակերտներին հետ[3] :

3 Եւ Յուդան զինուորների գունդը (պէօլօւքը) և քահանայապետներից և փարիսեցիներից սպասաւորներ առաւ իրան հետ , և եկաւ էնտեղ ջահերով և լապտերներով (ֆանառներով) և զէնքերով[4] :

4 Ասց Յիսուս երբոր տեսաւ էն ամէնըն , որ իրան վերայ էր եկել , դուրս եկաւ և նորանց ասաց . Ո՞ւմ էք ուզում :

5 Պատասխան տուին նորան թէ՝ Յիսուս 'Նազօրեցոյն . Յիսուս նորանց ասաց . Ես եմ . Յուդան էլ՝ որ նորան մատնուէր՝ կանգնած էր նորանց հետ :

6 Երբոր (Յիսուս) ասաց թէ Ես եմ , (նորանք) յետ գնացին , և գետնի վերայ զարկվեցան :

7 Ա՛ինել չարցրուց նորանց՝ թէ Ո՞ւմ էք ուզում . և նորանք ասացին . Յիսուս 'Նազօրեցոյն :

8 Յիսուս նորանց պատասխան տուաւ . Ձեզ ասացի թէ Ես եմ . ուրեմն թէ որ ինձ էք ուզում , թող տուէք գորանց , որ գնան :

(1) Մատթ · իզ · 30 : Մարկ · ժգ · 32 : Ղուկ · իբ · 39 : (2) բ Թագ · ժե · 23 : (3) Ղուկ · իա · 37 : իբ · 39 : (4) Մատթ · իզ · 47 : Մարկ · ժգ · 43 : Ղուկ · իբ · 47 : Գործ · ա · 16 :

Digitized by Google

9 Ոչ լցեր քանն , զոր ասաց · թէ Ոչ եաուրն ցիս , ոչ կորուսից ի նոցանէ և ոչ զոք :

10 Իսկ Սիմոն Պետրոս՝ քանզի ունէր սուր՝ ձգեաց զնա և եհար զքահանայապետին ծառայ , և ի բաց առ զունկն նորա զաջոյ · և էր անուն ծառային Մաղքոս :

11 Ասէ Յիսուս ցՊետրոս · Դիրկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր · զբաժակն՝ զոր ետ ինձ Հայր՝ ոչ ըմպիցեմ զնա :

12 Իսկ գունդն և հազարապետն և սպասաւորք Հրէիցն կալան ըզ Յիսուս , և կապեցին ·

13 Եւ ածին զնա նախ առ Հնանա , որ էր աներ Կայիափայի · որ քահանայապետն էր տարուոյն այնորիկ :

14 Էր այս այն Կայիափա էր՝ որ խրատն ետ Հրէիցն , եթէ Լաւ է առն միում մեռանել ի վերայ ժողովրդեանն :

15 Եւ երթայրն զՅիսուսի Սիմոն Պետրոս , և միւս աշակերտն : Եւ աշակերտն այն՝ քանզի ծանօթ էր քահանայապետին՝ եմուտ ընդ Յիսուսի ի գաւիթ քահանայապետին :

16 Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ · ել միւս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին , և ասաց ցդռնապանն , և եմոյծ ի ներքս զՊետրոս :

17 Ասէ աղջիկն՝ որ դռնապանն էր , ցՊետրոս · Այիթէ և դու յաշակերտաց առնն այնորիկ իցես · և նա ասէ՝ Ոչ եմ :

9 Որ կատարվէր էն բանն՝ որ ասաց , թէ Զորանց՝ որ ինձ տուիր , ներացից իսկի մինըն էլ չեմ կորցնիլ :

10 Այց Սիմոն Պետրոսն՝ որովհետև սուր ունէր՝ քաշեց էնե քահանայապետի ծառային զարկեց , և նորա աջ ականջըն կարեց · և էն ծառայի անունն Մաղքոս էր :

11 Յիսուս Պետրոսին ասաց · Սուրդ դարձրու քցիր իրան պատենքի (պէնէ) մէջն · էն բաժակըն (ըճամըն) որ իմ Հայրս տուաւ ինձ , էն չըխմեմ :

12 Այց զինուորների գունդըն (պէօլիւքըն) և հազարապետն և Հրէաների սպասաւորներն բռնեցին Յիսուսին , և կապեցին :

13 Եւ տարան նորան Հննայի մօտ , որ Կայիափայի աներն էր · որ էն տարվան քահանայապետն էր :

14 Այս էն Կայիափան էր , որ Հրէաներին խրատ տուաւ՝ թէ Լաւ է , մին մարդ մեռնի ժողովրդի վերայ :

15 Եւ Սիմոն Պետրոսն և մէկել աշակերտն գնում էին Յիսուսի ետևէն : Էն աշակերտն՝ որովհետև ճանաչէ էր քահանայապետին , Յիսուսի հետ մտաւ քահանայապետի սրտնը :

16 Եւ Պետրոսն դուռն մօտ կանգնած էր դրսումն . էն մէկել աշակերտն , որ քահանայապետին ճանէչ էր , դուրս եկաւ և դռնապանին ասաց , և Պետրոսին ներս մտցրուց :

17 Էն աղջիկն՝ որ դռնապան էր՝ Պետրոսին ասաց · Այիթէ դու էլ էն մարդոյ աշակերտներից ես · և նա ասաց՝ Թէ չեմ :

(5) Հովհ · ժէ · 12 : (6) Մատթ · իզ · 51 : Մարկ · ժդ · 47 : Լուկ · իբ · 49 , 50 : (7) Մատթ · ի · 22 : իզ · 39 · 42 : (8) Մատթ · իզ · 57 : (9) Լուկ · դ · 2 : (10) Հովհ · ժա · 50 : (11) Մատթ · իզ · 58 · Մարկ · ժդ · 54 : Ղուկ · իբ · 54 : (12) Մատթ · իզ · 59 : Մարկ · ժզ · 55 : Ղուկ · իբ · 54 :

Digitized by Google

18 Այլին անդ ծառայքն և սպասաւորքն խարոյկ արկեալ . քանզի ցուրտ էր , և կեռնուին . կայր ընդ նոսա և Պետրոս՝ և կեռնոյր :

19 Եւ քահանայապետն եհարց զՅիսուս վասն աշակերտացն՝ և վասն վարդապետութեան նորա :

20 Պատասխանի ետ նմա Յիսուս . Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի . ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովրդեանն , և ի ասճարի անդ՝ ուր ամենայն ՚ի հաւաք ժողովիքն էին , և ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ :

21 Զի՞ հարցանես զիս . հարց զլսունսիկ՝ որ լսեան , թէ զինչ խօսեցայ ընդ նոսա . ահաւանիկ նոքա գիտեն զինչ ասացի ես :

22 Երբեմն նա զայն ասաց , մի ոմն ի սպասաւորացն , որ անդ կայր , ած սպասակ Յիսուսի՝ և ասէ . Այդպէ՞ պատասխանի տաս քահանայապետի :

23 Եւ Յիսուս ասէ ցնա . Եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն չարին . իսկ եթէ բարւոյ , ընդէր հարկանես զիս :

24 Եւ առաքեաց զնա Աննա կապեալ առ Կայիափա քահանայապետ :

25 Եւ Սիմովն Պետրոս կայր անդ՝ և կեռնոյր . ասեն ցնա՝ Ո՞րթէ և դու յաշակերտաց անտի նորա իցես . Նա ուրացաւ և ասէ՝ Թէ ՚Չեմ :

26 Եւ ասէ մի ոմն ի ծառայից քահանայապետին՝ ազգական այնոքիկ , զորմէ զտանէն եհատ Պետրոս . Ո՞չ ես իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ նմա :

18 Ծառաներն և սպասաւորներն կանգնած էին , կրակը վառած , (ինչու որ՝ ցուրտ էր՝ և տաքանում էին . Պետրոսն էլ նրանց հետ կանգնած էր և տաքանում էր :

19 Եւ քահանայապետն Յիսուսին հարցրուց (իրան) աշակերտների համար՝ և իրան վարդապետութեան համար :

20 Յիսուս պատասխան տուաւ նորան . Ես յայտնի խօսեցի աշխարհքի մէջն[13] . ես ամէն ժամանակ ուսուցի ժողովարանում , և հինց տաճարում , որտեղ որ ամէն հրեաներն ժողովված էին ; և խոյի մէջն ծածուկ բան չեմ խօսեցի :

21 Ինչո՞ւ ես ինձ հարցնում . Նորանց հարցրու՝ որ լսեցին , թէ ինչ խօսեցի նորանց հետ . տէմ նորանք գիտումեն՝ ինչ որ խօսեցի :

22 Երբոր նա էս ասաց , սպասաւորներից մինն , որ էնտեղ կանգնած էր , Յիսուսին ապտակ (տվեց) տուաւ՝ և ասաց[14] . Այդպէս ես պատասխան տալիս քահանայապետին :

23 Եւ Յիսուս նորան ասաց . Թէ որ չար բան խօսեցի՝ վկայիր էն չարին տէմեր . բայց թէ որ բարի (ասացի) , ինչու՞ ես զարկում ինձ :

24 Եւ Աննա նորան կապած ուղարկեց Կայիափա քահանայապետի մօտն[15] :

25 Եւ Սիմոն Պետրոսն էնտեղ կանգնած էր՝ և տաքանում էր . նորան ասացին[16] , Մի՞թէ դու էլ նորա աշակերտներից ես . Նա ուրացաւ և ասաց՝ Թէ ՚Չեմ :

26 Եւ քահանայապետի ծառաներից մինն՝ որ ազգական էր նորան , որ Պետրոս նրա ականջն կտրեց , ասաց . Չէ՞ որ հինց ես տեսի քեզ էն պարտէզումն (պօռտանումն) նորա հետ :

(13) Մատթ . իգ . 55 : Ղուկ . գ . 15 : Յովհ . է . 14 . 26 . 30 : ը . 2 : (14) Գործ . ե . 2 : գ . 2 : Պետր . Ա . 2 : (15) Մատթ . իգ . 57 : (16) Մատթ . իզ . 69 . 71 : Մարկ . ժգ . 69 : Ղուկ . իբ . 58 :

Digitized by Google

27 Պետրոն մինչէ ուրացաւ . և շուտով հաւն խօսեց[17] :
28 Եւ Յիսուսին կայիափայի տանէն տարան դատաւորի պալատն[18] . և առաւօտ էր . և նորանք չմտան պալատի մէջն , որ չպղծուին , բայց որ զատիկը ուտեն[19] :
29 Պիղատոս դուրս եկաւ նորանց մօտ և ասաց . Ո՞ն մարդոյ համար ինչ չարախօսութիւն կը առնուս :
30 Պատասխան տուին և նորան ասացին . Եթէ որ էն մարդն չարագործ չըլինէր , ապա նորան չէինք մատնել քեզ :
31 Պիղատոս նորանց ասաց . Դուք առէք նորան , և ձեր օրէնքին պէս դատեցէք . Հրէաներն նորան ասացին . Մեզ արժան չէ որ մէն (մարդ) սպանենք :
32 Որ Յիսուսի խօսքն կատարվի՝ որ ասաց , ցոյց տալով՝ թէ ինչ մահով պիտի մեռնի[20] :
33 Պիղատոս մինչէ մտաւ պալատն , Յիսուսին կանչեց և նորան ասաց . Դո՞ւ ես Հրէաների թագաւորն[21] :
34 Յիսուս պատասխան տուաւ . Ինձէ՞նից ես ասում էդ , թէ ուրիշներն ասացին քեզ ինձ համար :
35 Պիղատոս պատասխան տուաւ . Մի՞թէ ես էլ Հրէայ եմ . քո ազգդ և քահանայապետներն քեզ մատնեցին ինձ , դու ի՞նչ բան ես արել :
36 Յիսուս պատասխան տուաւ[22] . Իմ թագաւորութիւնս էս աշխարհքիցս չէ[23] . թէ որ իմ թագաւորութիւնս էս աշխարհքիցս լինէր , ապա իմ ծառաներս կռիւ կանէին՝

27 Վարձեալ ուրացաւ Պետրոս . և ի վաղվաղակի հաւ խօսեցաւ :
28 Եւ ածեն զՅիսուս ի վանացն կայիափայ յապարանս դատաւորին . և էր այգուց . և նոքա ոչ մտին յապարանս , զի մի՛ պղծեցին , այլ զի ուտիցեն զզատիկն :
29 Ել առ նոսա Պիղատոս արտաքս՝ և ասէ . Ո՞րինչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ :
30 Պատասխանի եւուն և ասեն ցնա . Եթէ չէր չարագործ այրն այն , ապա ոչ մատնէաք զնա քեզ :

31 Ա՛ռ ցնոսա Պիղատոս . Ա՛ռէք զնա դուք , և ըստ ձերոց օրինացն դատեցարո՛ւք . ասեն ցնա Հրեայքն . Ա՛նզ ոչ է արժան սպանանել զոք :
32 Որ լցցի բանն Յիսուսի՝ զոր ասաց , նշանակեալ՝ թէ որով մահ մեռանելոց էջէ :
33 Եմուտ միւսանգամ յապարանսն Պիղատոս , կոչեաց զՅիսուս՝ և ասէ ցնա . Դո՞ւ ես թագաւորն Հրէից :
34 Պատասխանի եւ Յիսուս . Ի քէն ասես զայդ , եթէ այլք ասացին քեզ զինէն :

35 Պատասխանի եւ Պիղատոս . Ա՞ի՛թէ և ես Հրէա՞յ իցեմ . ազգդն քո և քահանայապետքն մատնեցին զքեզ ինձ , զի՞նչ գործ գործեալ է քո :
36 Պատասխանի եւ Յիսուս . Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ . եթէ յաշխարհէ այսմ էր արքայութիւնն իմ , սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի՛ մատնեալ

(17) Մատթ . իզ . 74 : Մարկ . ժդ . 72 : Ղուկ . իբ . 60 : Հովհ . ժգ . 38 : (18) Մատթ . իե . 2 : Մարկ . ժե . 1 : Ղուկ . իգ . 1 : Գործ . գ . 13 : Մատթ . իե . 27 : (19) Գործ . ժ . 28 : ժա . 3 : (20) Մատթ . ի . 19 : Հովհ . ժբ . 32 , 33 : (21) Մատթ . իե . 11 : (22) ա Տիմ . գ . 13 : (23) Դան . բ . 44 : է . 14 : Ղուկ . ժբ . 14 : Հովհ . գ . 15 : ը . 15 :

Digitized by Google

ներցայց Հրէից · բայց արդ՝ թագաւորութիւնն իմ չէ աստի :

37 Ասէ ցնա Պիղատոս · Ապա թէ այդպէս իցէ , թագաւոր ումն ես դու · պատասխանի ետ Յիսուս · Դու ասես՝ թէ թագաւոր իմեմ · քանզի ես յայդ իսկ ծնեալ եմ , և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ , զի վկայեցից ճշմարտութեանն · ամենայն՝ որ ի ճշմարտութենէ է լսէ բարբառոյ իմոյ :

38 Ասէ ցնա Պիղատոս · Ո՞ր ինչ է ճշմարտութիւն · զայս իբրև ասաց , դարձեալ եւս առ Հրեայսն և ասէ ցնոսա · Ես և ոչ մի ինչ պատճառս գտանեմ ի նմա :

39 Այլ է ձեր սովորութիւն , զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս · արդ կամիք՝ զի արձակեցից ձեզ զթագաւորն Հրէից :

40 Ղազակեցին ամենեքեան՝ և ասէին · Ոչ զդա , այլ զԱրաբբա · և էր Արաբբայն այն աւազակ :

որ չըմաանըվիմ Հրեաների ձեռքըն · բայց հիմիկ իմ թագաւորութիւնս էստեղից չէ :

37 Պիղատոս ասաց նորան · Ապա թէ որ էդպէս է , դու մին թագաւոր ես · Յիսուս պատասխան տուաւ · Դու ես ասում՝ որ ես թագաւոր եմ · բայց ես հենց դրա համար եմ ծնված , և հենց դրա համար եմ եկել աշխարհք , որ ճշմարտութեանն վկայեմ · ամէն ով որ ճշմարտութենից է՝ իմ խօսքիս լսում[24] :

38 Պիղատոս նորան ասաց · Ի՞նչ է ճշմարտութիւն · երբոր էս ասաց , միևել դուրս գնաց Հրեանի մօտ և նրանց ասաց · Ես իսկի մին պատճառ չեմ գտնում նրանում[25] :

39 Այլ ձեր սովորութիւն է՝ որ զատկի ժամանակումն մին մարդ արձակեմ ձեզ համար · ուրեմն կամենո՞ւմք՝ որ Հրեաների թագաւորն արձակեմ ձեզ համար[26] :

40 Ամէնքն աղաղակեցին՝ և ասում էին[27] · Նորան չէ , բայց Արաբբային · և էն Արաբբան (մին) աւազակ էր[28] :

ԿԻ · ՅՒՆ

1 Յայնժամ առ Պիղատոս զԸզՅիսուս և գան եհար :

2 Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց , եդին ի գլուխ նորա , և զգեցուցին նմա հանդերձ ծիրանի :

1 Էն ժամանակն Պիղատոս Յիսուսին առաւ և ծեծեց[1] :

2 Եւ զինուորներն փշերից մին պսակ շինեցին , նորան գլուխն դրին , և ծիրանի շոր հագցրին նրան :

(24) Յովհ · ը · 47 : ա Յովհ · գ · 19 · դ · 6 : (25) Մատթ · խե · 24 : Ղուկ · խե · 4 : Յովհ · ժբ · 4 · 6 : (26) Մատթ · խե · 15 : Մարկ · ժե · 6 : Ղուկ · խդ · 17 : (27) Գործ · գ · 14 : (28) Ղուկ · խդ · 19 : (1) Անգր · բ · 19 : խե · 26 : Մարկ · ժե · 15 : Ղուկ · ժը · 33 :

Digitized by Google

3 Եւ գայիր առ նա , և ասէիր . Ո՛ղջ եր արքայ Հրէից . և հանէին նմա ապտակս :

4 Եւ դարձեալ Պիղատոս արտաքս և ասէ ցնոսա . Ո՛չ ածեմ զնա արտաքս առ ձեզ , զի գիտասջիք՝ թէ մի՛ւս ինչ ի նմա ոչ գտանեմ :

5 Եւ Յիսուս արտաքս և ունէր պսակ ի փշոց , և հանդերձ ծիրանի . և ասէ ցնոսա . Ո՛չ այրդ ցձեզ :

6 Իբրև տեսին զնա քահանայապետքն և սպասաւորք , զաղաղակ բարձին՝ և ասեն . Ի խա՛չ հան՝ ի խա՛չ հան զդա . ասէ ցնոսա Պիղատոս . Ո՛ւրեք զդա ի ձեզ , և ձեզէն հանեք ի խաչ . զի ես ի դմա միւս ինչ ոչ գտանեմ :

7 Պատասխանի ետուն նմա Հրէայքն . Մ՚եք օրէնս ունիմք , և ըստ օրինացս մերոց պարտի մեռանել . զի զանձն իւր Որդի Աստուծոյ արար :

8 Իբրև լուաւ զբանս զայս Պիղատոս , առաւել ևս երկեաւ :

9 Եմուտ դարձեալ անդրէն յապարանն , և ասէ ցՅիսուս . ուստի՞ ես դու . և Յիսուս ոչ ետ նմա պատասխանի :

10 Ո՛ւստ ցնա Պիղատոս . Ընդ իս ոչ խօսիս , ոչ գիտես եթէ իշխանութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ , և իշխանութիւն ունիմ արձակել զքեզ :

11 Պատասխանի ետ Յիսուս . Ո՛չ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ և ոչ մի , եթէ ոչ եր տուեալ քեզ ի վերուստ . վասն այնորիկ՝ որ մատնեացն զիս քեզ , նորա մեծ մեղք են :

3 Եւ գային էին նորա մօտ , և ասէին . Ո՛ղջ կաց Հրէից թագաւոր . և ապտակներ (անլեզու) էին տալիս նորան :

4 Պիղատոս մինչ դուրս գնաց և նորանց ասաց . Ո՛չ նորան դուրս եմ բերում ձեզ մօտ , որ գիտենաք թէ՝ ես իսկի մին յիշատ չեմ գտնում նորանում[2] :

5 Յիսուս դուրս եկաւ և փշէից պսակ ունէր , և ծիրանի հագուստ . և նորանց ասաց . Ո՛չ էդ մարդդ ձեր առաջիդ :

6 Երբոր քահանայապետներն և սպասաւորներն նորան տեսին , աղաղակեցին՝ և ասացին[3] . Խա՛չ հանիր դորան . Պիղատոս նորանց ասաց . Ձեզ մօտ առէք դորան , և հենց ձեզանից խա՛չ հանեցէք . ինչու որ՝ ես իսկի միւս չեմ գտնում դորանում :

7 Հրէաներն պատասխան տուին նորան . Մ՚ենք օրէնք ունինք , և մեր օրէնքին պէս պէտք է մեռնի[4] . ինչու որ՝ իրան անձըն Աստուծոյ Որդի արաւ[5] :

8 Երբոր Պիղատոս էս բանս լսեց , էլ աւելի վախեցաւ :

9 Մ՚ինէլ մտաւ պալատի մէջ , և Յիսուսին ասաց . Դու ի՞նչ տեղից ես . և Յիսուս պատասխան չըտուաւ նորան[6] :

10 Պիղատոս ասաց նորան . Ինձ հետ չես խօսում . մի՞թէ չես գիտում , որ իշխանութիւն ունիմ քեզ խաչ հանելու , և իշխանութիւն ունիմ քեզ արձակելու :

11 Յիսուս պատասխան տուաւ . Դու իշխանութիւն չունէիր ինձ վերայ , թէ որ վերևից չէր տըւված քեզ . նրա համար՝ նա որ ինձ մատնեց քեզ , նորա մեղքն՝ (աւելի) մեծ է :

(2) Յովհ . ԺԸ . 38 : Ա այր . 6 : (3) Գործ . գ . 13 : (4) Ղեւ . իգ . 16 : (5) Մատթ . իշ . 65 : Յովհ . ե . 18 : Ժ . 33 : (6) Ես . նգ . 7 : Մատթ . իե . 12 . 14 : (7) Ղեւ . իե . 53 : Յովհ . է . 30 :

Digitized by Google

12 Եւ յայնմանէ Պիղատոս խընդրեր արձակել զնա . և Հրեայքն աղաղակէին և ասէին , Եթէ զդա արձակես՝ չես բարեկամ կայսեր . ամենայն ոք , որ թագաւոր կոչէ զանձն իւր , հակառակ է կայսեր :

12 Եւ ներանից եաև Պիղատոս ուզուէր՝ որ նորան արձակէ . և Հրեաներն աղաղակուէին և ասուէ . Թէ որ դորան արձակես՝ կայսերի բարեկամ չես[8] . ամեն ով որ իրան անձըն թագաւոր է կոչուի , նա կայսերին հակառակ է[9] :

13 Լակ Պիղատոս իբրև լուաւ զբանս զայսոսիկ , ած զՅիսուս արտաքս , և նստաւ ՚ի վերայ բեմին ; ՚ի տեղւոջն որ կոչէր Քարայատակ , և Եբրայեցերէն Կապպաթա :

13 Պիղատոս երբոր էս բաներըս լսեց , Յիսուսին դուրս բերաւ , և բեմին վերայ նստեց , Հնաեղն՝ որ Քարայատակ էր կոչվուի՝ , և Եբրայեցերէն Կապպաթա :

14 Էր ուրբաթն զատկի՝ և էր ժամ իբրև վեցերորդ , և ասէ ցՀրեայսն . Ահա թագաւորդ ձեր ցձեզ :

14 Օստկի ուրբաթն էր՝ իրը վեց ժամն (սահլին) էր , և Հրեաներին ասաց . Ահա ձեր թագաւորն ձեր առաջին (է)[10] :

15 Եւ նոքա աղաղակէին . Կորձ՚ի վերջ , բարձ ՚ի վերջ և Հան զդա ՚ի խաչ . ասէ ցնոսա Պիղատոս . Ես զթագաւորդ ձեր ՚ի խաչ Հանիցեմ . պատասխանի եռուն քահանայապետքն . Չունք մեր թագաւոր բաց ՚ի կայսերէ :

15 Եւ նորանք աղաղակուէին , Ա՛եզանից վեր առ , մեզանից վեր առ՝ և խաչ Հանիր դորան . Պիղատոս նորանց ասաց . Ես ձեր թագաւորն խաչ Հանեմ՝ . քահանայապետներն պատասխան տուին . Ա՛նունք թագաւոր չունինք կայսերից զատ (սովսէ)[11] :

16 Յայնժամ եաև զնա ՚ի ձեռս նոցա , զի ՚ի խաչ ելանիցէ :

16 Էն ժամանակն նորան տուաւ նորանց ձեռքն , որ խաչ Հանվի[12] :

17 Եւ նոքա առեալ տանէին զնա . և բարձեալ էք ինքնին զխաչափայտն , և ելանէր ՚ի տեղին որ անուանեալ էր Վաքաթան , և կոչէր Եբրայեցերէն Գողգոթա :

17 Եւ նորանք տանի տորան նորան . և խաչափայտն ինքն էր վերկալել[13] , և դուրս էր գնում էն տեղն՝ որ Վաքաթան էր ասվում՝ , և Եբրայեցերէն Գողգոթա էր կոչվում[14] :

18 Ուր և ՚ի խաչն իսկ Հանին զնա . և ընդ նմա երկուս ևս այլոս աստի և անտի , և ՚ի մէջ զՅիսուս :

18 Էնտեղ խաչ Հանեցին նորան . և նորա Հետ երկու ուրիշ մարդ էլ նորա էս կողմն և էն կողմն , և Յիսուսին մէջ տեղն :

19 Գրեաց և տախտակ մի Պիղատոս , և եդ ՚ի վերայ խաչին . և էր գրեալ . ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՐԵԱՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԵԱՅՑ :

19 Պիղատոս էլ մին տախտակ գրեց , և խաչի վերայ դրաւ . և գրած էր . ՅԻՍՈՒՍ ՆԱԶՈՐԵՑԻ ԹԱԳԱՒՈՐ ՀՐԵԱՅՑ[15] :

(8) Ղ. ի · 3 : (9) Գործ . ժե . 7 : (10) Մարկ . ի · 62 : (11) Կանդ . խթ . 10 : (12) Մարկ . ի · 26 . 31 : Մատ . ժե . 15 : Ղ. ի · 24 : (13) Մարկ . ի · 31 . 33 : Մատ . ժե . 21 , 22 : Ղ. ի · 26 . 33 : (14) Հնաս . ժե . 36 : Եբր . ժգ . 12 : (15) Մարկ . ի · 37 : Մատ . ժե . 26 : Ղ. ի · 36 :

Digitized by Google

20 Այն ասխտակ ընթերցան քաղուածք ի Հրէից, զի մօտ էր ի քաղաք անդր անկեալն՝ ուր խաչեցաւն Յիսուս. և էր գրեալ եբրայեցերէն, Յաղմատերէն և Յունարէն:

21 Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից. Մի գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ Թագաւոր եմ Հրէից:

22 Պատասխանի ետ Պիղատոս. Որ ինչ գրեցի՝ գրեցի:

23 Իսկ զինուորքն իբրև հանին ի խաչ զՅիսուս, առին զհանդերձս նորա՝ և արարին չորս մասանս, իւրաքանչիւր զինուորի մասն. իսկ զպատմուճանն՝ քանզի էր առանց կարի՝ ի վերուստ փորանկեալ ամենևին.

24 Ասեն ցմիմեանս. Մի պատառեսցուք զայդ, այլ արկցուք վիճակ ի վերայ դորա՝ ումի և ելցէ. զի լցցի գիրն՝ որ ասէ. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանց, և ի վերայ պատմուճանի իմոյ վիճակ արկին. զինուորքն զայս ինչ գործեցին:

25 Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նորա, և քոյր մօր նորա Մարիամ Կղէովպէ, և Մարիամ Մագդաղենացի:

26 Յիսուս իբրև տեսանէ զմայրն և զաշակերտն՝ զոր սիրէր, զի կայր մօտ, ասէ ցմայրն. Կին դու՝ ահա որդի քո:

27 Ապա ասէ ցաշակերտն. Ահա մայր քո. և յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա առ իւր:

28 Յետ այսորիկ իբրև գիտաց Յիսուս, եթէ ահա ամենայն ինչ

20 Այն տախտակն Հրէաներից շատ ծարդիք կարդացին. ինչու որ քաղաքին մօտ էր հետեղն՝ որ Յիսուս խաչվեցաւ. և էն գրված էր Եբրայեցերէն, Լատիներէն և Յունարէն (գրով):

21 Հրէաների քահանայապետներն ասացին Պիղատոսին. Մի գրեր Թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ թէ Թագաւոր եմ Հրէից:

22 Պիղատոս պատասխան առաւ. Ինչ որ գրեցի՝ գրեցի:

23 Ապայ զինուորներն երբոր Յիսուսին խաչ հանեցին, նորա շորերն առին՝ և չորս բաժին արին, ամեն մէկ զինուորի համար մին բաժին[16]. բայց կապան՝ որովհետև առանց կարի էր՝ վերևից (մինչև ցածն) բոլորն մին հիւսված.

24 Իրար ասացին. Պորան չըպատառնենք, բայց վիճակ քցենք դորա վերայ՝ ումի որ դուրս գայ. որ գիրքն կատարվի, որ ասում. Թէ Իմ շորերըս իրանց մէջ բաժանեցին և իմ կապախս վերայ վիճակ քցեցին[17]. զինուորներն էն բանըն արին:

25 Եւ Յիսուսի խաչին մօտ կանգնած էին նորա մայրն[18], և նորա մօր քոյրն Մարիամ Կղէոպան[19] և Մարիամ Մագդաղենացին:

26 Յիսուս երբոր տեսաւ իրան մօրըն և էն աշակերտին՝ որ սիրում[20], որ մօտիկ կանգնած էր, մօրըն ասաց. Մվ կին՝ ահա քո որդի[21]:

27 Յետոյ աշակերտին ասաց. Ահա քո մայրդ. և էն ժամանակիցն՝ էն աշակերտն իրան մօտ առաւ նորան[22]:

28 Ապանից ետև երբոր Յիսուս գիտաց, թէ ամէն բան կատար-

(16) Մատթ. իէ. 35: Մարկ. ժե. 24: Ղուկ. իգ. 34: (17) Սաղ. իբ. 18: (18) Մատթ. իէ. 55: Մարկ. ժե. 40: Ղուկ. իգ. 49: (19) Ղուկ. իդ. 18: (20) Յովհ. ժգ. 23: ի. 3: իա. 7. 20. 24: (21) Յովհ. բ. 4: (22) Յովհ. ա. 11: ժգ. 33:

Digitized by Google

կատարեալ է , զի կատարեցի գիրըն , ասէ · Ծարաւի եմ :
29 Եւ անդ կայր աման լի քացախով · և նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղոյ՝ շուրջ եդեալ զշտկաւ զոսպայի՝ մատուցին ի բերան նորա :

30 Իբրև առ Յիսուս զքացախան հանդերձ լեղուովն՝ ասէ · Լինայն ինչ կատարեալ է · և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին :

31 Իսկ Հրէայքն՝ քանզի ուրբաթ էր , զի մի՛ անդէն ի խաչին գանիցին մարմինքն մինչև ցշաբաթըն , զի էր օր մեծ շաբաթուն այնորիկ · աղաչեցին զՊիղատոս , զի խորտակեցեն զբարձս նոցա՝ և բարձցին :

32 Եկին զինուորքն , և զառաջնոյն խորտակեցին զբարձս , նոյնպէս և զմիւսոյն՝ որ ընդ նմա ի խաչն ելեալ էր :

33 Իսկ իբրև եկին առ Յիսուս՝ և տեսին , զի այն ինչ մեռեալ էր , ոչ խորտակեցին զբարձս նորա :

34 Այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա · և ել վաղվաղակի արիւն և ջուր :

35 Եւ որ եռեան՝ վկայեաց , և ճշմարիտ է վկայութիւն նորա · և նա գիտէ թէ ճշմարիտ ասէ , զի և դուք հաւատասջիք :

36 Զի՛ այս եղև՝ զի լցցի գիրն , եթէ Ոսկր նորա մի՛ փշրեսցի :

37 Եւ դարձեալ միւս գիր ասէ , եթէ Հայեսցին ի նա՝ յոր խոցեցինն :

վաճ է , որ գիրքն կատարվի՝ ասաց · Ծարաւ եմ [23] :
29 Եւ հնտեղ մին աման կար քացախով լիքն · և նորանք մին սպունգ (ախնկէբ) լցրին քացախով լեղոյ հետ՝ և զոսպայի մշտիկի (ֆընջէ) վերայ պատած նորա բերանին մօտացրին [24] :
30 Երբոր Յիսուս էն քացախըն լեղոյ հետ առաւ՝ ասաց · Լմնեն բան կատարված է [25] · և գլուխըն խոնարհացրուց և հոգին աւանդեց :

31 Ասյց Հրէաներն՝ որովհետև ուրբաթ օրն էր [26] , որ մարմիններն չըմնան խաչի վերայ մինչև շաբաթ օրն , ինչու որ՝ էն շաբաթի օրն մեծ էր [27] · Պիղատոսին աղաչեցին , որ նորա՛ց ծընկներըն ջարդեն · և վեր առնվին :

32 Զինուորներն եկին և առաջնի ծընկներըն ջարդեցին , էնպէս էլ մէկէլին՝ որ նորա հետ խաչված էր :

33 Ասյց երբոր Յիսուսի մօտ եկին և տեսին , որ նա մեռած էր , նորա ծընկներըն չըջարդեցին :

34 Ասյց զինուորներից մինն գեղարդով (խպախով) նորա կողըն խոցեց · և շուտով արիւն և ջուր դուրս եկաւ [28] :
35 Եւ նա որ էն տեսաւ՝ վկայեց · և վկայութիւնն ճշմարիտ է · և նա գիտէ թէ ճշմարիտըն է ասում՝ որ դուք էլ հաւատաք :
36 Այս էլաւ՝ որ գիրքն կատարվի , թէ Նորա ոսկրն չըպիտի փշրվի [29] :
37 Եւ մինէլ ուրիշ գիրք ասաւ , թէ Նայիկ կըտան նորան՝ որ խոցեցին [30] :

(23) Այլ . կբ . 21 : (24) Առակ . խե . 18 : (25) Հովհ . ժէ . 4 : (26) Ելից . 12 . Մարկ . ժե . 42 : (27) ը Օրին . իա . 23 : (28) ա Հովհ . ե . 6 . 8 : (29) Ելք . ժբ . 46 : Թուոց . թ . 12 : Այլ . լբ . 20 : (30) Այլ . իբ . 16 , 17 : Զաք . ժբ . 10 : Հայտ . ա . 7 :

Digitized by Google

38 Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ , որ յԱրիմաթեայ էր աշակերտ Յիսուսի ՝ի ծածուկ՝ վասն ահին Հրէից , զի բարձցէ զմարմինն Յիսուսի . և հրամայեաց Պիղատոս . եկն և եբարձ զնա :

39 Եկն և Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ՝ի գիշերի զառաջինն . և եբեր զմուռս խառն ընդ հալուխ՝ իբրև լտեաս հարիւր :

40 Ուրուն զմարմինն Յիսուսի , և պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ , որպէս օրէն էր Հրէից պատել :

41 Եւ էր ՝ի տեղւոջն , յորում խաչեցաւ՝ պարտէզ , և ՝ի պարտիզի անդ գերեզման նոր , յորում ոչ ոք երբէք էր եդեալ :

42 Ընդ վասն ուրբաթուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅիսուս :

38 Արանից եւս Պիղատոսին աղաչեց Յովսէփն , որ Արիմաթեայիցն էր[31] Հրէաներուն վախճան ծածուկ աշակերտ (էլած) Յիսուսին , որ Յիսուսի մարմինը վեր առնէ[32] . և Պիղատոս հրաման առաւ . և ապա եկաւ և վերկալաւ նորան :

39 Նիկոդիմոսն էլ եկաւ՝ որ առաջ Յիսուսի մօտն էր եկել գիշերուընէ[33] . և զմուռ հալուխի հետ խառնած մերաւ՝ հարիւր լըտրի չափ :

40 Յիսուսի մարմինը առին , և էն խընկերին հետ կտաւներով պատեցին , ինչպես որ Հրէաներուն օրէնք էր պատել[34] :

41 Եւ էն տեղումն , որ խաչվեցաւ՝ մին պարտէզ (պօսպան) կար , և էն պարտէզումն մին նոր գերեզման , որ նորանում իակի մին ժամանակ մին մարդ չէր դրված :

42 Նետեղն դրին Յիսուսին[35] Հրէաներուն ուրբաթին համար . պատճառն որ՝ գերեզմանն մօտ էր[36] :

ԿԻ · Ի

1 Մարիամ գերեզմանն կըգնայ , 3 Պետրոս և Յովհաննէսն էլ Քրիստոսի Յարութիւն առնելն չգիտնալով են տեղ կըգնան : 11 Քրիստոս Մարիամ Մագդաղենացուն , 19 և իրան աշակերտներին կերևանայ : 24 Թովմասի անհաւատութիւնն և դատանութիւնն : 30 Ասելը Գիրքն հնգան գրվեցաւ որ հաւատան թէ Քրիստոս է Քրիստոս . և յաւիտենական կեանքն ընդունին :

1 Եւ ՝ի միաշաբաթուն Մարիամ Մագդաղենացի գայ առաւօտուն ընդ արշալոյսն ՝ի գերեզմանն անդր , և տեսանէ զվէմն բարձեալ ՝ի դրաց գերեզմանին :

2 Ապա ընթանայ և գայ առ Սիմոնն Պետրոս և առ միւս աշակերտն՝ զոր սիրէրն Յիսուս , և ասէ ցնոսա . Ետարձն զՏէր ՝ի գերեզմանէ , և ոչ գիտեմ զուր եդին զնա :

1 Եւ մէկ շաբթի օրումն Մարիամ Մագդաղենացին առաւօտանց լուսանալուց ժամանակումն եկաւ գերեզմանն , և տեսաւ որ քարն գերեզմանի դրանիցն վերէր առած[1] :

2 Ապա վազեց և եկաւ Սիմոն Պետրոսի մօտն և մէկել աշակերտի մօտն՝ որ Յիսուս սիրումէր նուան[2] , և ասաց նորանց . Տէրին վերա-

(31) Մատ . իէ . 57 : Մարկ . ժե . 42 : Ղուկ . իգ . 50 : (32) Յովհ . ի . 22 : ժբ . 42 : (33) Յովհ . գ . 1 , 2 : է . 50 : (34) Դուրձ . է . 6 : (35) Նոյ . ծգ . 9 , (36) Ա Յր . 31 : (1) Մատ . իբ . 1 : Մարկ . ժգ . 1 : Ղուկ . իգ . 1 : (2) Յովհ . ժգ . 23 : ժի . 26 : ի . 7 . 20 . 24 :

Digitized by Google

րեզմանէ անտի , և ուչ գիտեմ՝ ուր եդին զնա :

3 Եւ Պետրոս և միւս աշակերտն՝ և գային ի գերեզմանն :

4 Ի նմանային երկոքեան ի միասին . և միւս աշակերտն յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս , և եկն նախ ի գերեզմանն :

5 Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի կային անդ կտաւքն , բայց ի ներքս ուչ եմուտ :

6 Եկն և Սիմովն Պետրոս՝ որ գայրն զկնի նորա , և եմուտ ի գերեզմանն , և տեսանէ զկտաւն՝ զի կային անդ :

7 Եւ վարշամակն որ էր ի գլուխ նորա՝ ուչ ընդ այլ կտաւն կայր , այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն :

8 Յայնժամ եմուտ և միւս աշակերտն , որ եկեալն էր յառաջագոյն ի գերեզմանն , տես և հաւատաց :

9 Զի չէւ'ս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա ի մեռելոց յառնել :

10 Դարձեալ առ միմեանս աշակերտքն :

11 Մարիամ՝ արիամ կայր արտաքոյ գերեզմանին՝ և լայր . և մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզմանն ,

12 Եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս , զի նստէին մի ի սընաւերից և մի յանուսից՝ ուր կայր մարմինն Յիսուսի :

13 Եւ նոքա ասեն ցնա . Կի՛ն դա՝ զի՞ լայ . ասէ ցնոսա . Զի բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ

ուն էն գերեզմանիցն , և չենք գիտում՝ թէ որտեղ դրին նորան :

3 Ելաւ ուրեմն Պետրոսն և միւս աշակերտն՝ և գալիս էին գերեզմանն :

4 Երկուքն միասեղ վազում էին . և մեկել աշակերտն չուտով անցկացաւ Պետրոսից , և առաջ եկաւ գերեզմանն :

5 Եւ վեր խոնարհված տեսաւ՝ որ կտաւներն էնտեղ կային , բայց ներս չմտաւ :

6 Սիմոն Պետրոսն էլ եկաւ՝ որ նորա ետևէն գալիս էր , և մտաւ գերեզմանի մէջն , և կտաւներըն տեսաւ՝ որ էն տեղ կային :

7 Եւ վարշամակն՝ որ նորա գլխումն էր՝ ուրիշ կտաւներին հետ չէր կար , բայց ջոկ ծալած մեկ կողմըն դրած էր :

8 Էն ժամանակն մեկել աշակերտն էլ ներս մտաւ , նա որ առաջ գերեզմանն էր եկել , տեսաւ և հաւատաց :

9 Ինչու որ՝ դեռ չէին գիտում գրքերըն՝ թէ պէտք է որ նա մեռելների միջից յարութիւն առնէ :

10 Պա աշակերտներն մինէլ գնացին իրար մոտ :

11 Մարիամ՝ արիամն գերեզմանի դուրսն կանգնած էր՝ և լաց էր լինում . և լաց լինելով ժամանակն՝ խոնարհվեցաւ (մտիկ առաւ) գերեզմանի մէջ :

12 Եւ երկու հրեշտակ տեսաւ սպիտակ շորերով , որ նստած էին՝ մինն գլխի կողմն և մեկելն ոտների կողմն , որտեղ որ Յիսուսի մարմինն կար :

13 Եւ նորանք ասացին նորան . Մարիամ կին՝ ինչու լաց ես լինում . նորանց ասաց . Տիրացեալ՝ որ իմ

(3) Ղուկ . իգ . 12 : (4) Ճովհ . ժբ . 10 : (5) Ճովհ . ժա . 44 : (6) Մատ . ժչ . 10 : Պսլմ . ը . 25—31 : ժգ . 34 , 35 : (7) Մարկ . ժչ . 8 :

Digitized by Google

ասէր ; և ոչ գիտեմ՝ ուր եղիր ինձ :

14 Ելից իբրև ասաց , դարձաւ ի թիկունս կոյս , և տեսանէ ըզՅիսուս զի կայր . և ոչ գիտէր՝ թէ Յիսուս իցէ :

15 Ասէ ցնա Յիսուս . Կին դու՝ զի՞ լաս , զո՞ խնդրես . նմա այսպէս թուեցաւ թէ պարտիզպանն իցէ , առէ ցնա . Տէր՝ եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ՝ ուր եդիր զնա , զի ես առից զնա :

16 Ասէ ցնա Յիսուս . Մարիամ . և նա դարձաւ , և ասէ ցնա Եբրայեցերէն . Ռաբբունի , որ թարգմանի՝ Վարդապետ :

17 Ասէ ցնա Յիսուս . Մի՛ մերձենար յիս , զի չեւ՛ս ելեալ եմ առ Հայր իմ . այլ երթ դու առ եղբարս իմ , և ասա ցնոսա . Ելանեմ ես առ Հայրն իմ՝ և առ Հայր ձեր , և Աստուածն իմ՝ և Աստուած ձեր :

18 Գայ Մարիամ Magdաղենացի՝ և պատմէ աշակերտացն , եթէ եաես նա զՏէր , և զայս ինչ ասաց ցնա :

19 Եւ էր երեկոյ ի միաշաբաթուոջ աւուրն . և դրօք փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ վասն ահին Հրէից , եկն Յիսուս՝ և եկաց ի միջի նոցա , և ասէ ցնոսա . Ողջոյն ընդ ձեզ :

20 Իբրև զայս ասաց՝ ետես նոցա զձեռնն և զկողս իւր . և խնդացին աշակերտքն իբրև տեսին զՏէր :

Տէրիս վեր առին էս գերեզմանից , և չեմ գիտում՝ թէ որտեղ դրին նորան :

14 Երբոր էս ասաց , դարձաւ իրան յետին կողմն , և Յիսուսին տեսաւ՝ որ կանգնած էր[8] . և չէր գիտում՝ թէ Յիսուսն է՝ :

15 Յիսուս նորան ասաց . Կին դու՝ ինչո՞ւ ես լաց լինում՝ , ո՞ւմ ես մանգալիս . նորան էնպէս երևեցաւ՝ թէ նա պարտէզպանն (պատուիրակն) է , նորան ասաց . Տէր՝ թէ որ դու վերառիր նորան՝ ասա ինձ՝ որտեղ ես դրել նորան , որ ես վերառնեմ նորան :

16 Յիսուս նորան ասաց . Մարիամ . և նա յետ դարձաւ , և նորան ասաց՝ Եբրայեցերէն . Ռաբբունի , որ կրթարգմանվի՝ Վարդապետ :

17 Յիսուս նորան ասաց . Մի՛ մօտենար ինձ , ինչու որ՝ դեռ չեմ վեր էլել իմ Հօր մօտն . բայց դու գնա իմ եղբարներիս մօտ[10] , և նորանց ասա . Ես վեր եմ էլում իմ Հօր մօտ՝ և ձեր Հօր մօտ[11] , իմ Աստուծոյ մօտ՝ և ձեր Աստուծոյ մօտ[12] :

18 Մարիամ Magդաղենացին եկաւ՝ և աշակերտներին պատմեց , թէ նա տեսաւ Տէրին , և էս բաները իրան ասաց[13] :

19 Եւ մի՛շ շաբթի օրումն , երբոր իրիկուն էր՝ և դռներն փակված , էն տեղն որ աշակերտներն ժողովված էին Հրեաների վախից , Յիսուս եկաւ՝ և նորանց միջումն կանգնեց , և նորանց ասաց . Ողջոյն ձեզ[14] :

20 Երբոր էս ասաց՝ իրան ձեռներն և իրան կողքն ցոյց տուաւ նորանց . և աշակերտներն ուրախացան՝ երբոր Տէրին տեսին[15] :

(8) Մարկ . խը . 9 : Մարկ . ժգ . 9 : (9) Ղուկ . իդ . 16 · 31 : Յովհ . իա . 5 : (10) Մատ . իը . 28 : Մարկ . խը . 10 : Հռոմ . ը . 29 : Եբր . բ . 11 : (11) Յովհ . ժգ . 28 : (12) Եփես . ա . 17 : (13) Մարկ . խը . 10 : Ղուկ . իդ . 10 : (14) Մարկ . ժգ . 14 : Ղուկ . իդ . 36 : ա Պետ . ժբ . 8 : (15) Յովհ . ժզ . 20 :

Digitized by Google

21 Ա՛ռ ցնաս դաբաձել. Ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ, և ես առաքեմ զձեզ:

22 Եւ զայս իբրև ասաց՝ փչեաց ՚ի նոսա և ասէ. Ա՛ռէք Հոգի Սուրբ:

23 Եթէ ումեք թեղուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա. եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի:

24 Իսկ Թովմաս՝ մի յերկոտասան նիցն՝ անուանեալն Երկուորեակ, ոչ էր ընդ նոսա՝ յորժամ եկն Յիսուս:

25 Ա՛սէին ցնա այլ աշակերտքն, եթէ Տեսաք զՏէր. և նա ասէ ցնաս. Եթէ ոչ տեսից ՚ի ձեռս նորա զնշան բևեռացն, և արկից զմատունս իմ ՚ի տեղիս բևեռացն, և մխեցից զձեռս իմ ՚ի կողս նորա, ոչ հաւատամ:

26 Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ՚ի ներքս աշակերտքն, և Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փակելովք, և եկաց ՚ի մէջ և ասէ. Ողջոյն ընդ ձեզ:

27 Ա՛պա ասէ ցԹովմաս. Երկր զմատունս քո և ար զձեռս իմ, և բեր զձեռն քո՝ և մխեա ՚ի կողս իմ, և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ:

28 Պատասխանի ետ Թովմաս՝ և ասէ ցնա. Տէր իմ՝ և Աստուածս իմ:

29 Ա՛սէ ցնա Յիսուս. Ա՛յդ զի տեսեր զիս՝ և հաւատացեր. երանի՛ որոց ոչ իցէ տեսեալ և հաւատացեն:

30 Նշոլում և այլ նշանս արար

21 Ո՛րպէս առաքեաց զիս Հայր՝ ողջոյն ձեզ. ինչպէս որ իմ Հայրս ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում[16]:

22 Եւ երբոր էս ասաց՝ փչեց դէպի նորանց և ասաց. Ա՛ռէք Սուրբ Հոգին:

23 Ով որ մէնի մեղքեն թողէք՝ թողված կըլինի նորանց. Թէ որ մէնին բանէք՝ բանըված կըլինի[17]:

24 Նայց Թովմասն տասներկուսից մինն՝ Երկուորեակ (Լաֆոյ) կոչվածն, նորանց հետ չէր՝ երբոր Յիսուս եկաւ[18]:

25 Ո՛չխէլ աշակերտներն ասումէին նորան, Թէ Տէրին տեսանք. և նա ասաց նորանց, Թէ որ նըրա ձեռներումն բևեռներէն (Հնամոլ նէրէլ) նշանըն չըտեսնեմ, և իմ մատներըս չըդնեմ բևեռներէն տեղըն, և իմ ձեռներըս չըմտցնեմ նորա կողն՝ չեմ հաւատալ:

26 Եւ ութ օրից եաև աշակերտներն մինէլ ներսումն էին, և Թովմասն (էլ) նորանց հետ. Յիսուս դրուներըն փակված լինելով՝ եկաւ և նորանց միջումն կանգնեց և ասաց. Ողջոյն ձեզ:

27 Յետոյ Թովմասին ասաց. Երկր քո մատներըդ և հասել դիր, և իմ ձեռներըս տես, և քո ձեռնըդ բեր՝ և իմ կողս մտցըրու, և մի՛ լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ[19]:

28 Թովմասն պատասխան առաւ և նորան ասաց. Իմ Տէրս և իմ Աստուածս:

29 Յիսուս նորան ասաց. Ա՛յդ որ տեսիր ինձ՝ հաւատացիր. երանի՛ նորանց՝ որ չեն տեսել և հաւատումեն[20]:

30 Յիսուս ուրիշ էլ շատ նշան-

(16) Մատթ. իբ. 18: Ցովհ. ժէ. 18, 19: Նէե. գ. 1: ը Տիմ. բ. 2: (17) Մատթ. ժգ. 19: ժը. 18: (18) Ցովհ. ժա. 16: (19) ա Ցովհ. ա. 1: (20) ր Պսալմ. և. 3 ը ա Պետր. ա. 8:

Digitized by Google

Յիսուս առաջի աշակերտաց իւրոց՝ որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ :

31 Եալ սոյս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատասցիք , եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ . և զի հաւատասցիք , և կենդանի յաւիտենական կեանս ընդունիցիք յանուն նորա :

ներ առաւ իրան աշակերտների առաջին՝ որ չեն գրված էս գրքումս[21] :

35 Բայց էս ինքան գրվեցաւ՝ որ հաւատաք[22] , թէ Յիսուս է Քրիստոսը Աստուծոյ Որդին . և որ հաւատալով , և յաւիտենական կեանքըն ընդունիք նորա անունովը[23] :

ԻԱ · ԻԸ

1 Երբոսոս մինէլ իրան աշակերտներին երևանալով չատ ձևկըն բռնել տալը հրաշքովը իրան անձըն կըհանեացնէ : 12 Նորանք հետ հաց կուտէ : 15 Պետրոսի պատուէր կըտայ որ իրան գառներըն և ոչխարներըն արածացնէ : 18 Նորա մեռնելոյ կերպն առաջուց իմաց կըտայ նորան : 22 Նորա Յովհաննէսի համար ինչ պիտի լինի հարցնելն կըսառնէ : 25 Վերջի խօսքն :

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերքն Տիբերեայ . և յայտնեաց այսպէս :

2 Էին ի միասին Սիմոն Պետրոս , և Թովմաս անուանեալն Երկուորեակ , և Նաթանայէլ որ ի Կանայ Գալիլեացւոց , և որդիքն Զեբեդեայ , և այլք յաշակերտաց անտի երկու :

3 Ասէ ցնոսա Սիմոն Պետրոս . Երթամ ձուկն որսալ . ասեն ցնա . Ամք և մեք ընդ քեզ . գնացին և մտին ի նաւ , և յայնմ գիշերի կալան և ոչինչ :

4 Իբրև այգ եղև՝ կայր Յիսուս ի ծովեզերն , բայց ոչ ծանեան աշակերտքն , թէ Յիսուս իցէ :

5 Ասէ ցնոսա Յիսուս . Այո՛ն կունք՝ միթէ ունիք ինչ ուտելոյ . պատասխանի ետուն և ասեն ցնա . Ոչ :

1 Յետոյ էտև Յիսուս միևնէլ իրան անձըն յայտնեց իրան աշակերտներին Տիբերեայ ծովի եզերին (ղեզին) մօտ . և էս կերպովս յայտնեց :

2 Որ՝ հինտեղ էին Սիմօն Պետրոսըն , և Թօմասն Երկուորեակ (զոյգ) անուանվածն , և Նաթանայէլն[1] որ Գալիլեացոց Կանայիցն էր , և Զեբեդիայի որդիքներն , և էն աշակերտներիցն ուրիշ երկու հոգի էլ[2] :

3 Սիմօն Պետրոսն նորանց ասաց . Ես գնումեմ ձուկըն բռնելոյ . նորան ասացին . Որ՝ենք էլ կըգանք քեզ հետ . գնացին և մտին նաւըն , և էն գիշերն իսկի բան չըբռնեցին :

4 Երբոր առաւօտ էլաւ՝ Յիսուս ծովի եզրումն (ղեզումն) կանգնած էր , բայց աշակերտներն չըճանաչեցին[3] , թէ Յիսուսն է :

5 Յիսուս նորանց ասաց . Որ՝ոնկունք՝ իսկի ուտելոյ բան ունիք[4] . պատասխան տուին և նորան ասացին . Չէ :

(21) Յովհ · իա · 25 : (22) Ղուկ · ա · 4 : (23) Յովհ · գ · 15 , 16 : ե · 24 : ա Պետր · ա · 9 : (1) Յովհ · ա · 45 : (2) Մատթ · դ · 21 : (3) Յովհ · ի · 14 : (4) Ղուկ · իե · 41 :

Digitized by Google

6 Ասէ ցնոսա • Ածկէք յաջակողմն նաւին զուարկանդ , և գտանիցէք • արկին , և ոչ կարէին ձգել ՚ի բազմութենէ անտի ձկանցըն :

7 Ասէ աշակերտն այն , զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս • Տէր է այն • Սիմոն Պետրոս իբրև լուաւ թէ Տէր է , արկաւ զհանրև զսպատծանելին՝ քանզի մերկ էր , և ընկէց զինքն ՚ի ծովն :

8 Եւ այլ աշակերտքն նաւուն իսկ գային , քանզի չէին հեռի ՚ի ցամաքէն • այլ իբրև երկերիւր կանգնաւ , քարշէին զգործին հանդերձ ձկամբն :

9 Իբրև ելին ՚ի ցամաք , տեսանեն կրակեաղ կայծականց , և ձուկն մի ՚ի վերայ , և հաց :

10 Ասէ ցնոսա Յիսուս • Բերէք ՚ի ձկանց այսմ՝ զոր դուքդ կալերուք այժմիկ :

11 Եմուտ Սիմոն Պետրոս և ձգեր զգործին ՚ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք , հարիւր յիսուն և երիք • և այնչափ ինչ կայր , և ոչ պատառեցաւ գործին :

12 Ասէ ցնոսա Յիսուս • Եկէք ճաշեցէք • և ոչ ոք յաշակերտացն իշխեր հարցանել թէ Դու ո՞վ ես • զի գիտէին թէ Տէրն է :

13 Գայ Յիսուս՝ և առնու զհացըն՝ և տայ նոցա , նոյնպէս և զձուկնն :

14 Այս երրիցս անգամ երևեցաւ Յիսուս աշակերտացն , յարուցեալ ՚ի մեռելոց :

15 Եւ իբրև ճաշեցին , ասէ Յիսուն Պետրոս Յիսուս • Սիմոն Յովնանու սիրես զիս առաւել քան զդոսա • ասէ ցնա • Այո՛ Տէր , և

6 Ասէ նորանց առաջ • Ձախակողմն (Ղօսն) աջի կողմն քցեցէք , և կըգտանէք • նորանք քցեցին , և չէին կարում քաշել՝ ձկնաբազմութեան պատճառովն :

7 Այն աշակերտն՝ որ Յիսուս սիրումէր նորան՝ Պետրոսին ասաց • Տէրն է • Սիմոն Պետրոս երբոր լսեց՝ թէ Տէրն է , շորըն իրան վերայ առաւ , (ինչու որ՝ մերկ էր , և ինքն իրան քցեց ծովի մէջն :

8 Եւ մէկէլ աշակերտներն նաւովն էին գալիս • (ինչու որ ցամաքէն հեռու չէին • բայց երկու հարիւր գաղջ չափ (էր) , և ուրականն (Ղօսն) ձկներովն քաշուռէին :

9 Երբոր դուրս եկին ցամաքն , տեսին անծուխ կրակ վառած , և նորա վերայ մին ձուկ և հաց :

10 Յիսուս նորանց ասաց • Բերէք ինձ էդ ձկներիցն՝ որ դուք հիմիկ բռնեցիք :

11 Սիմոն Պետրոսն մաւ և ուռկանըն քաշուռէր դէպի ցամաքն՝ մեծ մեծ ձկներով լիքն , հարիւր յիսուն և երեք հատ • և էնքան բան կար՝ և գործիքն չըպատռուեցաւ :

12 Յիսուս նորանց ասաց • Եկէք ճաշ կերէք՝ • և աշակերտներիցն ոչ ով չէր համարձակվում հարցնել՝ թէ Դու ո՞վ ես • ինչու որ՝ գիտումէին թէ Տէրն է :

13 Յիսուս եկաւ՝ և հացըն առաւ՝ և նորանց տուաւ , և էնպէս էլ ձուկը :

14 Այս երեք անգամն Յիսուս աշակերտներին երևեցաւ , մեռելների միջիցն յարութիւն առնելուցն եաւ :

15 Եւ երբոր ճաշըն կերին , Յիսուս ասաց Սիմոն Պետրոսին • Սիմոն Յովնանի (որդի՝) դուռանցից աւելի սիրումես ինձ • նորան ասաց •

(5) Ղօս • ե • ե • 6 , 7 : (6) Ծն • ժգ • 33 : ե • 2 : (7) Գործ • ժ • 41 : (8) Ծն • ե • 19 • 26 :

Digitized by Google

դու գիտես՝ զի սիրեմ զքեզ · ասէ ցնա՝ Ընդունիմ զգաւնիս իմ :

16 Պարձեալ ասէ ցնա · Սիմոն Յովհաննու սիրես զիս · ասէ ցնա · Այո՛ Տէր , և դու գիտես՝ զի սիրեմ զքեզ · ասէ ցնա՝ Ընդունիմ զոչխարս իմ :

17 Ասէ ցնա երրիցս անգամ · Սիմոն Յովհաննու սիրես զիս · տրտմեցաւ Պետրոս , զի ասացն ցնա երիցս՝ Թէ Սիրես զիս · և ասէ ցնա · Տէր՝ դու զամենայն գիտես · և դու իսկ զամենայն ճանաչես , և թէ սիրեմ զքեզ · ասէ ցնա Յիսուս · Ընդունիմ զոչխարս իմ :

18 Ամէն ամէն ասեմ քեզ · զի մինչ մանուկն էիր , անձամբ անձին գօտի ածէիր՝ և երթայիր յո՛ր կամէիր · և յորժամ ծերասցիս , ձեռս ի վեր կացես և այլք ածցեն քեզ գօտի , և տարցեն՝ ուր ոչն կամիցիս :

19 Այս ասաց՝ նշանակեալ թէ որով մահու փառաւորս առնիցէ զԱստուած · և զայս իբրև ասաց , ասէ ցնա · Ես զկնի իմ :

20 Դարձեալ Պետրոս՝ և տեսանէ զաշակերտն , զոր սիրէր Յիսուս , զի երթայր զկնի , որ և անկաւ զկանչօքն նորա և ասէ , Տէր՝ ո՞վ է՝ որ մատնելոցն է զքեզ :

21 Զնա տեսեալ Պետրոսի , ասէ ցՅիսուս · Տէր՝ իսկ սա զի՞ :

22 Ասէ ցնա Յիսուս · Եթէ կամիմ , զի կացցէ դա՝ մինչև ես գամ ·

Ա՛յ Տէր , դու էլ գիտուիմ՝ որ քեզ սիրումեմ · Նորան ասաց · Ընդունիր զգաւնիս իմ :

16 Ա՛ինէլ ասաց Նորան · Սիմօն Յովհանի (որդի՛) սիրումես ինձ · Նորան ասաց · Այո՛ Տէր՝ դու էլ գիտուիմես՝ որ քեզ սիրումեմ · Նորան ասաց · Ընդունիր զոչխարներըս[9] :

17 Ա՛ինէլ երեք անգամ ասաց Նորան · Սիմօն Յովհանի (որդի՛) սիրումես ինձ · Պետրոսն տրտմեցաւ · որովհետև երեք անգամ Նորան ասաց՝ Թէ Սիրումես ինձ · և Նորան ասաց · Տէր՝ դու ամէն բան գիտուիմես , և ամէն բան ճանաչուիմես[10] , և որ սիրումեմ քեզ · Յիսուս Նորան ասաց · Ընդունիր իմ ոչխարներըս :

18 Ա՛շմարիտըն ճշմարիտըն ասումեմ քեզ , Թէ դեռ քանի որ տղայ էիր՝ ինքդ քո գօտիկըդ կապումէիր՝ և որ տեղ որ ուզումէիր՝ գնումէիր · և երբոր կըծերանաս , ձեռներըդ վերկանուես · և ուրիշներն գօտիկ կըկապեն քեզ , և կըտանեն՝ որտեղ որ չես ուզիլ[11] :

19 Նա ասաց՝ ցոյց տալով Թէ նա ի՞նչ մահով պիտի փառաւորէ Աստուծոյն · և էս երբոր ասաց , Նորան ասաց · Իմ ետևէս ե՛կ[12] :

20 Պետրոսն յետ դարձաւ՝ և տեսաւ էն աշակերտին , որ Յիսուս սիրումէր[13] Նորան , որ ետևէն գալիս էր , նա՝ որ էլ Նորա լանջքին (գոչէն) ընկաւ և ասաց · Տէր՝ ո՞վ է նա՝ որ քեզ պիտի մատնէ :

21 Պետրոսն երբոր տեսաւ Նորան , Յիսուսին ասաց · Տէր՝ ապա սա ի՞նչ (կըլինի) :

22 Յիսուս Նորան ասաց · Թէ որ կամենուիմեմ , որ դա կենայ , մին-

(9) Ի՛ոան · ի · 28 : Նէր · ժգ · 20 : ա Պետր · բ · 25 : ե · 2 · 4 : (10) Յովհ · բ · 24 , 25 : ժգ · 30 : (11) Յովհ · ժգ · 36 : Գործ · ժբ · 3 , 4 : (12) բ Պետր · ա · 14 : (13) Յովհ · ժգ · 23 · 25 : ի · 2 :

Digitized by Google

քեզ զի փոյթ է՝ դու ես զկնի իմ :

23 Եւ ել բանս այս յեղբարս՝ և համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի . և ոչ ասաց նմա Յիսուս եթէ ոչ մեռանիցի . այլ թէ կամիմ ես՝ թէ կացցէ դա՝ մինչև ես գամ :

24 Ա՛յս աշակերտս է՝ որ վկայէ վասն ա՛յսոցիկ . որ և գրեացն իսկ զայսոսիկ , և գիտեմք , եթէ ճշմարիտ է վկայութիւն նորա :

25 Կայ է և այլ ինչ բազում , զոր արար Յիսուս , զոր եթէ գրեսցին զբեալ էր ի ըստ միոջէ , կարծեմ թէ և ոչ աշխարհս բաւական էր առնել զգիրսն , որ թէ գրեալ էին :

չև որ ես գամ . դու ինչ հոգս ունիս , դու իմ եահաէս ե՛կ[14] :

23 Եւ էս բանս դուրս եկաւ եղբարանցի միջումն՝ և կարծեցին թէ էն աշակերտն չիմեռնիլ . և Յիսուս չասաց նորան՝ թէ չիմեռնիլ . բայց թէ՝ որ կամենումեմ որ դա կենայ մինչև որ ես գամ , (դու ինչ հոգս ունիս) :

24 Այս աշակերտս է , որ էս բանիս համար վկայումէ . որ էլ էս բաներըս գրեց , և գիտումենք որ նորա վկայութիւնըն ճշմարիտ է[15] :

25 Կայց ուրիշ էլ շատ բաներ կան[16] որ Յիսուս արաւ , որ եթէ նորանք մին մին գրվածք լինէին , կարծումեմ թէ աշխարհքս էլ բաւական չէր լինիլ էն գրքերըն առնելց , թէ որ գրվածք լինէին[17] :

(14) Մատթ . ժգ . 27 , 28 ; ի . 31 ։ ա Կորնթ . գ . 5 ; ժա . 26 ։ Յայտ . բ . 25 ։ գ . 11 ։ իբ . 7 . 20 ։ (15) Յովհ . ժթ . 35 ։ գ Յովհ . 12 ։ (16) Յովհ . ի . 30 ։ (17) Ա՛մոս . է . 10 ։

ՎԱԽՃԱՆ ՍՐԲՈՑ ԵՒ ԱՌԱՔԵԼԱՑ

Digitized by Google

ԳՈՐԾՔ

ԱՌԱՔԵԼԱՑ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Զբնտաս առաքեալներին իրան վերանալն ասելով՝ համար՝ ընթերնաց սարքն կրկնի. և պատրաստ կրկայ նորանց որ Երուսաղէմի մէջումն Սուրբ Հոգին գալոյն սպասեն՝ որ մին քանի օրից ուղարկելոյ խոստ կրկայ. որ նորա զօրութիւնովը վկայեն երկրի ծայրերն Քրիստոսի համար վկաները լինին: 9 Երբան վերանալուն վերջն երկու հրեշտակներ նորանց խրատ կրկան որ էն սեղուցն գնան, և նորանց ասելիք կրկան Քրիստոսի գալոյն համար: 12 Նորանք էլ յետ կրդառնան, և մինչ ազօթք անելով Ձեռգայի սեղն Մատթիայն առաքեալ կընտրեն:

1 Զ՚ԱՌԱՋԻՆՍ, խօսքըն արի՛ ինձ Թէոփիլէ[1] ամէն բանի համար. որ Յիսուս սկսեց անել և սովորցնել:

2 Մինչև էն օրն՝ որ Սուրբ Հոգոյ ձեռովն պատուէր տուաւ առաքեալներին[2]. (նորանց)՝ որ ընտրեց, և վերացաւ[3]:

3 Որ իրան չարչարանքին ետև իրան կենդանի կանգնացրուց նորանց առաջին՝ շատ հրաշքներով՝ որ քառասուն օր երևեցաւ նորանց՝ և Աստուծոյ արքայութեան համար խօսեց[4]:

4 Եւ նորանց հետ հացով հա-

1 Զ՚ԱՌԱՋԻՆ՝ զոր ա-

բարի վրան ամենայնի, ո՛ Թէոփիլէ. զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել:

2 Մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն՝ ի Հոգւոյն Սրբոյ. զորս ընտրեացն, և վերացաւ:

3 Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ չարչարանացն իւրոց՝ ի բազում արուեստս՝ յաւուրս քառասուն երևեալ նոցա՝ և ասել վասն արքայութեանն Աստուծոյ:

4 Եւ՝ ի հաղորդել ընդ նոսա

(1) Լուկ. ա. 3: (2) Մատթ. ժգ. 19: Յովհ. ի. 51: իգ. 51: Մարկ. 9: ա Տիմ. գ. 16: (3) Մատթ. իբ. 19: Մատթ. ժգ. 15: Յովհ. ի. 21: Գործ. ժ. 41, 42: (4) Մատթ. ժգ. 14: Լուկ. իգ. 36: Յովհ. ի. 19. 26: ի. 1. 15: ա Պետր. ժե. 5:

Digitized by Google

հացիւ, պատուէր տայր նոցա՝ յԵրուսաղէմ մի՛ մեկնել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուր քըն լինէն :

5 Ովի Յովհաննէս մկրտեաց՝ ի ջուր. այլ դուք մկրտիցիք՝ ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում՝ քան զայս աւուրցս այսոցիկ :

6 Եւ նոքա մատուցեալ հարցանէին զնա՝ և ասէին. Տէր՝ եթէ ի ժամանակի աստ յայսմիկ հաստուցանես[ց] իցես զարքայութիւն Իսրայէլի :

7 Ասէ ցնոսա. Ոչ է ձեզ գիտել զժամս և զժամանակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան :

8 Այլ առջիք զօրութիւն՝ ի հասանել Հոգւոյն Սրբոյ՝ ի վերայ ձեր. և եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ և յամենայն Հրէաստանի և ի Սամարիա, մինչև ի ծագս երկրի :

9 Եւ զայս իբրև ասաց՝ մինչդեռ հայէին նոքա՝ վերացաւ. և ամպն կալաւ զնա յաչաց նոցա :

10 Եւ մինչդեռ պշուցեալ էին ընդ երկինս երթալոյ նորա, և ահա հասանեն առ նոսա երկու երևեցան նոցա՝ ի հանդերձս սպիտակս :

11 Որք և ասացին. Արք Գալիլեացիք՝ զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս. այս Յիսուս՝ որ վերացաւն՝ ի ձէնջ յերկինս, այնպէս գայցէ, պատուէր տայր նոցա՝ որ Երուսաղէմից չըՀեռանան[b], այլ սպասեն Հօր աւետիքին՝ որ (ասաց) ինձանից լսեցիք[c] :

5 Ինչու որ՝ Յովհաննէս ջրով մկրտեց՝ . բայց դուք Սուրբ Հոգով պիտի կըմկրտիք[d], ոչ թէ շատ օրերից եւս :

6 Եւ նորանք մօտ եկին հարցնում էին նորան՝ և ասում էին. Տէր[a] միթէ հիմիկ էս ժամանակումս պիտի հաստատես Իսրայէլի թագաւորութիւնն[10] :

7 Ասաց նորանց. Ձեզ (պէտք) չէ որ գիտենաք ժամերըն (ամսաթիւ) և ժամանակներըն, որ Հայրըն իրան իշխանութեանումն դրաւ (պահեց)[11] :

8 Այլ երբոր Հոգին ձեզ վերայ կըՀասնի[12], դուք զօրութիւն կառնէք[13]. և ինձ վկայ կըլինիք Երուսաղէմում և ամէն Հրէաստանի և Սամարիայի և մինչև երկրի ծայրերն[14] :

9 Եւ երբոր էս ասաց, դեռ քանի որ նորանք նայում էին[15] վերացաւ. և ամպն վերկալաւ նորան նորանց աչքերիցն[16] :

10 Եւ դեռ որ խիստ մտիկ տալով նայում էին նորա դէպի երկինքըն գնալուն, և ահա երկու մարդիկ երևեցան նորանց սպիտակ շորերով[17] :

11 Որ էլ ասացին. Ովք Գալիլեացի մարդիք՝ ինչ էք կանգնած և մտիկ էք տալիս դէպի երկինքն[18], էս Յիսուսն՝ որ ձեզանից վերա-

(5) Ղուկ. խդ. 13. 49 : (6) Ղուկ. խդ. 49 : Յովհ. ժդ. 16. 26, 27 : ԺԱ. 28 : ԺԶ. 7 : Գործ. բ. 33 : (7) Մարկ. գ. 11 : Գործ. ժա. 18 : ԺԲ. 4 : (8) Ծննդ. ի. 18 : Գործ. բ. 4 : ժա. 15 : (9) Մարկ. խէ. 3 : (10) Ենսդ. ա. 26 : Դան. է. 27 : Ընծա. բ. 11 : (11) Մարկ. խդ. 36 : Մարկ. ժգ. 32 : ա Թես. ե. 1 : (12) Ղուկ. խդ. 49 : (13) Գործ. բ. 1. 8 : (14) Ղուկ. խդ. 48 : Ծալմ. ԺԱ. 27 : Ես. ԽԲ. 22 : Գործ. բ. 32 : (15) Ղուկ. խդ. 51 : Յովհ. ղ. 62 : (16) Ա Թես. գ. 3 : (17) Մարկ. խը. 3 : Մարկ. ժգ. 5 : Ղուկ. խդ. 4 : Յովհ. բ. 12 : Գործ. ժ. 3. 30 : (18) Գործ. բ. 7 : ժգ. 31 :

Digitized by Google

եկեալջ՝ զոր օրինակ տեսիք զնա երթալ յերկինս ։

12 Ապա դարձան Երուսաղէմ յանուանեալ լեռնէն Ձիթենեաց . որ է մերձ Երուսաղէմ ըստ շաբաթու ճանապարհի ։

13 Եւ իբրեւ մտին , ելին ՚ի վերնատունն՝ ուր վանքն իսկ էին . Պետրոս և Յակոբոս , Յովհաննէս և Անդրէաս , Փիլիպպոս և Թովմաս , Բարթողոմէոս և Մատթէոս , Յակոբոս Ալփեան և Շմաւոն Նախանձայոյզ և Յուդա Յակոբեան ։

14 Որք ամենեքեան էին հանապազորդեալ միաբան յաղօթս հանդերձ կանանբք , և Մարիամ մարդն Յիսուսի՝ և եղբարբք նորա ։

15 Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ . և էր անդ բազմութիւն անուանց իբրեւ հարիւր և քսանից ։

16 Ընդ եղբարբք՝ պարտ էր կատարել գրոյն . զոր յառաջագոյն ասաց Հոգին Սուրբ ՚ի բերանոյ Դաւթի՝ վասն Յուդայի , որ եղև առաջնորդ ունելեացն Յիսուսի ։

17 Զի ՚ի թիւս մեր էր ընդ մեզ . և չափեալ էք նմա վիճակ պաշտամանս այսորիկ ։

18 Այս ստացաւ գեօղ ՚ի վարձուց անիրաւութեան . և ուռուցեալ հերձաւ ընդ մէջ և հեղաւ ամենայն փոր նորա ։

19 Եւ յայտնի եղև ամենեցուն՝ որ ցաւ երկինքն , հենց էսպէս կըզայ՝ ինչպէս որ նորան տեսիք գնալ դէպի երկինքն[19] ։

12 Ապա էն Ձիթենեաց անուանված սարիցն յետ դարձան Երուսաղէմ . որ մօտ էր Երուսաղէմին՝ (մին) շաբաթի օրի ճանապարհի չափ[20] ։

13 Եւ երբոր մտին , վերէլան վերնատունն՝ որտեղ որ բնակված էին[21] . Պետրոսն և Յակոբոսն , Յովհաննէսն և Անդրէասն , Փիլիպպոսն և Թովմասն , Բարթողիմէոսն և Մատթէոսն[22] , Յակոբոս Ալփեանն և Շմաւոն Նախանձայոյզն[23] և Յուդա Յակոբեանն[24] ։

14 Որոնք ամէնքն միշտ միաբան աղօթք էին անում[25] կանանց հետ[26] , և Յիսուսի մայր Մարիամի՝ և նորա եղբարներին հետ[27] ։

15 Եւ էն օրերում Պետրոսն վերկացաւ եղբարների մէջն՝ և ասաց . և էնտեղ հարիւր և քսան հոգիների չափ բազմութիւն կային[28] ։

16 Մարդիկ եղբարք՝ պէտք էր որ էն գրված կատարվէր . որ առաջուց ասաց Սուրբ Հոգին Դաւթի բերանովն Յուդայի համար[29] , որ Յիսուսի բռնողներին առաջնորդ էլաւ[30] .

17 Պատճառն որ՝ նա մեզ հետ մեր համարումն էր[31] . և էս պաշտոնիս վիճակն՝ նորան (էլ) հասած էր[32] ։

18 Այ անիրաւութեան վարձքովն[33] մին գիւղ ստացաւ[34] . և ուռաւ միջից ճղվեցաւ , և նորա ամէն փորն դուրս թափվեցաւ ։

19 Եւ յայտնի էլաւ ամէնին՝ որ

(19) Գործ . ե . 12 ։ Մատթ . իգ . 30 ։ Մարկ . ժգ . 26 ։ Ղուկ . իա . 27 ։ Յովհ . ժգ . 3 ։ ա Թես . ա . 10 ։ գ . 16 ։ բ Թես . ա . 10 ։ Հայոց . ա . 7 ։ (20) Ղուկ . իգ . 52 ։ (21) Գործ . բ . 37 . 39 ։ ի . 8 ։ (22) Մատթ . ժ . 2 , 3 , 4 ։ (23) Ղուկ . զ . 15 ։ (24) Յակոբ . 1 ։ (25) Գործ . բ . 1 . 46 ։ (26) Ղուկ . իգ . 49 . 55 ։ իգ . 10 ։ (27) Մատթ . ժգ . 55 ։ (28) Հայոց . գ . 4 ։ (29) Սաղմ . խա . 9 ։ Յովհ . ժգ . 18 ։ (30) Ղուկ . իբ . 47 ։ Յովհ . ժը . 3 ։ (31) Մատթ . ժ . 4 ։ Ղուկ . զ . 16 ։ (32) Պաշ . 25 ։ Գործ . ժը . 25 ։ ի . 24 ։ իա . 19 ։ (33) Մատթ . իզ . 15 ։ բ Պետր . բ . 15 ։ (34) Մատթ . իե . 5 . 7 , 8 ։

Digitized by Google

բնակեալ են Յերուսաղէմ. մինչեւ կոչել գեղջն այնմիկ բաբբատուին իւրեանց Ա՛կեղդամայ. այսինքն է՝ Դաշտ արեան:

20 Որ գրեալ է՝ի գիրս Սաղմոսաց. Եղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ մի՛ ոք իցէ՝ որ բնակիցէ՝ի նմա. եւ զկարգ նորա առցէ այլ:

21 Արդ՝ պարտ է յորանցս այսցանէ՛ եկելոցս ընդ մեզ յամենայն ժամանակի, յորում մուտ եւ ել առ մեզ Տէր Յիսուս:

22 Սկսեալ՝ի մկրտութենէն Յովհաննու մինչեւ յօրն՝ յորում վեր բացաւ՝ի մէնջ. վկայ յարութեան նորա ընդ մեզ լինել միում՝ի սոցանէ:

23 Եւ կացուցին երկուս. զՅովսէփ՝ որում Նարսաբայն կոչէին, որ անուանեցաւն Յուստոս, եւ զՄաթթիա:

24 Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. Դո՛ւ Տէր՝ սրտագէտ ամենայնի՛, յայտնեա՛ զմի ոք՝ զոր ընտրեցեր՝ի սոցանէ յերկոցունց:

25 Առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ՝ եւ զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ՝ի տեղի իւր:

26 Եւ ետուն վիճակս նոցա, եւ եւլանէր վիճակն Մաթթիայ. եւ համարեցաւ ընդ մեսսեան առաքեալսն:

Երուսաղէմ. ինչեւ որ էն գիւղի անունն իրանց լեզուն Ա՛կեղդամայ կոչվեցաւ. որ է ասել՝ Արիւնի գիւղ:

20 Ինչու որ՝ Սաղմոս գրքուն գրված է՝ (Թէ) Դորա բնակութիւնըն աւերակ (խոպան) պիտի լինի, եւ մինն էլ չըլինի՝ որ նորանում բնակվի[35]. եւ նորա կարգըն (գին) ուրիշն պիտի առնէ[36]:

21 Հիմիկ պէտք է՝ որ էս մարդկացիցս որ մեզ հետ եկել են էն ամէն ժամանակն՝ որ Տէր Յիսուսն մեզ հետ ներս մտաւ եւ դուրս էլաւ.

22 Յովհաննէսի մկրտութենիցն ըսկըսած մինչեւ էն օրն[37]՝ որ մեզնից վերացաւ[38]. որ սորանցից մինն մեզ հետ վկայ լինի նորա յարութեանն[39]:

23 Եւ երկու (մարդ) կանգնացրին. Յոսէփին՝ որ Նարսաբա էին կոչում՝ որ Յուստոս անուանվեցաւ՝ եւ Մաթթիային[40]:

24 Եւ աղօթք անելով ասացին. Դո՛ւ Տէր՝ որ ամէնի սիրտըն գիտուս՝ էս երկուսիցս մինըն յայտնէր՝ որն որ ընտրեցիր[41]:

25 Որ էս պաշտօնին՝ եւ առաքելութեանն՝ որից Յուդան վեր ընկաւ՝ որ գնայ իրան տեղն[42]:

26 Եւ նորանց վերայ վիճակ քցեցին, եւ վիճակն ընկաւ Մաթթիային վերայ, եւ նա առանուանն առաքեալներին հետ համարվեցաւ:

(35) Սաղ. կթ. 25: (36) Սաղ. ճթ. 8: (37) Մարկ. ա. 1: (38) Ա՛ր. 9: (39) Յովհ. իե. 27: Ա՛ր. 8: Դուբ. գ. 33: (40) Դուբ. իե. 22: (41) ա Թագ. իգ. 7: ա Նոյ. իբ. 9: իթ. 17: Երէմ. իա. 20: իէ. 10: Դուբ. իե. 8: Ծայո. բ. 23: (42) Ա՛ր. 17:

Digitized by Google

ԳԼ · Ր

1 Ընտիրներին Սուրբ Հոգով լրվելոյն և ուրիշ լեզուներով խօսելոյն համար մին քանի մարդիք կըզրպմանան , և մին քանիներն ել ծաղր կանեն : 14 Պետրոս վեր կըկենայ և կըսատակէ նորանց թէ նորանք Սուրբ Հոգով զբօսնելնին կըխօսին , թէ Հիսուս մեռնելնէրից յարութիւն առած է , և երկինքն վերացած և ես Սուրբ Հոգին ուղարկեց , և են ե Մեսիան Յառաջածանից նորանց ցոյց ըրվված մին մարդ զբօսնելնով և նշաններով և հըրաշքներով . և Յառաջեղ խորհրդոյն և կանուխ գիտութենոյն փայտի վերայ սպանելնին : 37 Պետրոս զղջացողներից մին շատ մարդիք կըմկրտէ . 41 Ու նորանք միշտ առաքելոց վարդապետութեանն էին հետևում . շատ հրաշքներ գործվելն առաքելոց ձեռքովն , և ամեն օր Նկեղեցին աւելանալն Տէրից :

1 Եւ ՚ի կատարել աւուրցն Պենտեկոստէից՝ էին ամենեքեան միաբան ՚ի միասին :

2 Եւ եղև յանկարծակի ՚ի նոցին յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հողմոյ . և ելից զամենայն առունն՝ յորում նստէին :

3 Եւ երևեցան նոցա բաժանեալ լեզուք իբրև ՚ի հրոյ . և նստաւ իւրաքանչիւր ՚ի վերայ նոցա :

4 Եւ լցան ամենեքեան Հոգւովն Սրբով , և սկսան խօսել յայլ և այլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա :

5 Եւ էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք՝ արք երկիւղածք յամենայն ազգաց՝ որ ՚ի ներքոյ երկնից :

6 Եւ իբրև եղև բարբառս այս՝ եկն միաբան բազմութիւնն և խըռնեցաւ . զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա :

7 Ապա՛ն էին ամենեքեան , և զարմանային՝ և ասէին ընդ միմեանս . Ո՞չ աւասիկ ամենեքեան սոքա որք խօսին՝ Գալիլեացիք են :

8 Եւ զիա՞րդ լսեմք մեք իւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք :

9 Պարթևք և Մարք և Ելա-

1 Եւ երբոր պէնտեկոստէի օրերն կատարվումին[1] , ամենքն միաբան միևն տեղ էին[2] :

2 Եւ յանկարծակի երկնքիցն սաստիկ ձայն էլաւ՝ սաստիկ քամու պէս եկած . և լցուց (էն) ամեն առներն՝ որ նորանում նստած էին[3] :

3 Եւ երևեցան նորանց՝ բաժանված լեզուներ ինչպես կրակից . և նստեց նորանց ամեն մէկին վերայ :

4 Եւ ամենքն Սուրբ Հոգով լցվան[4] , և սկսեցին ուրիշ լեզուներով խօսել՝ ինչպէս որ Հոգին նորանց խօսել էր տալիս[5] :

5 Եւ Երուսաղէմումն բնակված էին Հրեաներ (ըզհուդինէք)՝ Աստուածավախ մարդիք՝ երկնքի ներքև (էլած) ամեն ազգերիցն :

6 Եւ երբոր էս ձայնս էլաւ՝ բազմութիւնն եկաւ միևտեղ և կիսվեցաւ . պատճառն որ՝ լսումին նորանց՝ որ ամեն մէկի լեզուներովն խօսումին :

7 Հիանումին ամենքն և զարմանում՝ և միևն մրնին ասումին . Չէ՞ որ ասոնք ամենքն՝ որ խօսումեն , Գալիլեացի են[6] :

8 Եւ ի՞նչպես (է՞) որ մենք ամեն մէկս մեր լեզուներովս լսումենք՝ որ նորանում ծնված ենք :

9 Պարթևներ և Մարք և Ե-

(1) Ղկ · իգ · 15 : բ Օրին · ժզ · 9 : Գործ · բ · 16 : (2) Գործ · ա · 14 : (3) Գործ · դ · 31 : (4) Գործ · ա · 5 : (5) Մարկ · ժգ · 17 : Գործ · ժ · 46 : ժբ · 6 : = Գործ , ժբ · 10 · 28 · 36 : ժգ · 1 : ժգ · 2 , Նայէ : (6) Գործ · ա · 11 :

Digitized by Google

մացիք՝ և որ բնակեալ են ՚ի Ա՛ֆջագետա , ՚ի Հ՛րէաստանի , և ՚ի Վաստիրս , ՚ի Պոնտոս , և Ա՛սիա՝ ս :

10 ՚ի փռիւգիայ , և ՚ի Պամփիլիայ , Եգիպտոս , և ՚ի կողմանս Լիբացւոց , որ ընդ Կիւրենացիս , և որ եկք Հռովմայեցիք :

11 Հրեայք՝ և եկք նոցուն , Կրետացիք և Ա՛րաբացիք՝ լսեմք խօսից նոցա ՚ի մեր լեզուս զմեծամեծս Ա՛ստուծոյ :

12 Ալանչահային ամենեքեան զարմացեալք , և ասէին ցմիմեանս . Ո՛ինչ կամիցի այս լինել :

13 Եւ կէսքն ընդ խաղ արկեալ ասէին , Թէ Վաղցուալից իցեն :

14 Յարուցեալ Պետրոս հանդերձ մեռատանիւքն՝ ամբարձ զձայն իւր՝ և խօսեցաւ ընդ նոսա . Ո՛րք Հրէաստանեայք՝ և որ բնակեալ էք Երուսաղէմ ամենեքին , այս ձեզ յայտնի լիցի՝ և ունկն դիք բանից իմոց :

15 Ո՛չ որպէս դուքդ կարծէք , Թէ սոքա արբեալ իցեն . զի դեռ երեք ժամք են աւուրս :

16 Ա՛յլ այս է՝ որ ասացաւ ՚ի ձեռն մարգարէին Յովելեայ :

17 Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յետինս՝ ասէ Ա՛ստուած , հեղից յՈգւոյ իմմէ ՚ի վերայ ամենայն մարմնոյ . և մարգարէասցին ուստերք ձեր , և դստերք ձեր . և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն , և ծերք ձեր երազովք երազեսցին :

18 Եւ ՚ի վերայ ծառայից իմոց՝ և ՚ի վերայ աղախնայից իմոց՝ յաւուրս յայնցիկ , և նոքանք՝ որ բնակեալ են Ա՛ֆջագետաւմբ , Հրէաստանեայք , և Վաստիրքն , Պոնտոսն , և Ա՛սիան :

10 Փռիւգիայի և Պամփիլիայի քէն , Եգիպտոսայ , և Լիբացւոց հնոյ կողմերացն , նորանք՝ որ Կիւրենացոց հետ (են) , և նոր եկած Հռոմայեցիքն :

11 Հրէայքն՝ և նորանց մեծ դարձածներն , Կրետացիք և Ա՛րաբացիք , լսեմք զնոսա խօսիլ զմեծամեծ բաներըն Աստուծոյ մեծամեծ բաներէն խօսելն :

12 Հիանումէին ամենքն և զարմանում՝ և միմեանց ասումէին . Այս ի՞նչ (բան) պիտի լինի :

13 Եւ կէսերն ծաղր անելով ասումէին , Թէ (Անոքանք) քաղցուով (հնոյով) հարբած են :

14 Ալ երկացաւ Պետրոս էն տասնումէնին հետ՝ իրան ձայնըն բարձրացուց և նորանց հետ խօսեց . Ա՛վ Հրէասանցի մարդիք , և ամենքդ՝ որ բնակված էք Երուսաղէմումն , էս ձեզ յայտնի լինի՝ և իմ խօսքերս ականջ դրէք :

15 Դէ թէ ինչպես որ դուք կարծումէք , Թէ սորանք հարբած են . ինչու որ՝ դեռ օրիս երեք ժամն (սահմանն) է՞ :

16 Այլ էս է՝ որ Յովել մարգարէի ձեռովն ասվեցաւ :

17 Եւ կըլինի սրանից եաւս յետին օրերումն՝ Ա՛ստուած ասումէ՝ որ իմ Հոգուցս կըլթափեմ ամէն մարմնոյ վերայ՝ . և ձեր որդիքըն ու դուստրերը , և ձեր պատանիներն կըմարգարէանան[10] . և ձեր երիտասարդներն տեսիլքներ կըտեսնեն , և ձեր ծերերն երազներով երազ կըտեսնեն :

18 Եւ իմ ծառաներին վրայ՝ և իմ աղախիններուն (պատասխանելին)

(7) ա Թես . ե . 7 : (8) Նայ . խգ . 3 : Եսթ . ժա . 19 : Լզ . 37 : Յովհ . բ . 28 , 29 : Օտ . ժբ . 10 : Յովհ . է . 38 : (9) Գործ . ժ . 45 : (10) Գործ . խ . 9 ։

յայնսոիկ հեղից յԱգեայ իմմէ , և մարգարէացին ։

19 Եւ ասաց Նշանս յերկինս ՚ի վեր, և նշանս յերկիր ՚ի խոնարհ, արիւն և հուր և մրրիկ ծխոյ ։

20 Արեգակն դարձցի ՚ի խաւար , և լուսին յարիւն՝ մինչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ և երեւելի ։

21 Եւ եղիցի ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ ։

22 Արք Իսրայէլացիք՝ լուարուք զբանս զայսոսիկ. զՅիսուս Նազովրեցի , զայր ցուցեալ Աստուծոյ ՚ի ձեզ զօրութեամբ և նշանօք և արուեստիւք , զոր արար նովաւ Աստուած ՚ի միջի ձերում . օրպէս և դուք իսկ գիտէք ։

23 Զնա նկատեալ խորհրդով և կանխագիտութեամբն Աստուծոյ՝ մատնեալ ՚ի ձեռս անօրինաց , բեւեռեալ ՚ի փայտի սպանիք ։

24 Զոր Աստուած յարոյց լուծեալ զերկունս մահու . քանզի ոչ էր ՚ի վեր ըմբռնել նմա ՚ի նմանէ ։

25 Դաւիթ իսկ ասէ զնմանէ . Նախագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ , զի ընդ աջմէ իմում է , զի մի՛ սասանեցայց ։

26 Ուստի այսորիկ ուրախ եղև սիրտ իմ , և ցնծացաւ լեզու իմ , եւս և մարմին իմ բնակեսցէ յուսով ։

27 Զի ոչ թողցես զանձն իմ ՚ի վերայ՝ էն օրերումն իմ Հոգւոցս կրթափեմ , և կրմարգարէանան[11] ։

19 Եւ նշաններ կրտամ վերև երկնքումն , և նշաններ ներքև երկրումն , արիւն և կրակ և ծխոյ մրրիկ (քլքլոց)[12] ։

20 Արեգակն խաւար կըդառնայ , և լուսինն արիւն՝ դեռ որ Տէրի մեծ և երեւելի օրն չհկած[13] ։

21 Եւ կըլինի ամէն՝ ով որ Տէրի անունէն կրկանչէ՝ կապրի[14] ։

22 Իմ Իսրայէլացի մարդիք՝ էս բաներըս լսեցէք . Յիսուս Նազորեցին՝ էն մարդն՝ որ Աստուածանից ցոյց արվվաւ ձեզանում զօրութիւնով և նշաններով և հրաշքներով , որ Աստուած նորանով արաւ ձեր միջումն[15] . ինչպէս որ հենց դուք էլ գիտումիք ։

23 Նորան՝ որ Աստուծոյ սահմանված խորհրդովն և կանուխ գիտութիւնովն մատնըված էր[16] անօրէններուն ձեռքովն , փայտի վերայ բեւեռած սպանեցիք[17] ։

24 Որ նորան Աստուած յարոյց մահի ցաւերըն խափանելով[18] . ինչու որ՝ կարելի չէր , որ նա բըռնըվի նորանից ։

25 Հենց Դաւիթն էլ ասումէ նորա համար . Նրաջուց տեսնումէի Տէրըն ամէն ժամ (առհասե) իմ առաջիս[19] . ինչու որ՝ իմ աջ կողմն էր , որ չըսասրսափիմ ։

26 Սրահամար իմ սիրտս ուրախ էլաւ , և իմ լեզուս ցնծացաւ , և իմ մարմինս էլ յուսով կըբնակվի ։

27 Պատճառն որ՝ իմ անձս չես

(11) Ղուկ . ի . 4 . 9 , 10 ։ ա Կորնթ . ժբ . 10 . 28 ։ ժգ . 1 , Եսայի ։ (12) Հոել . բ . 30 , 31 ։ (13) Մատթ . իդ . 29 ։ Մարկ . ժգ . 24 ։ Ղուկ . ի . 25 ։ (14) Հռոմ . ժ . 13 ։ (15) Գործ . գ . 2 ։ ժգ . 10 , 11 ։ Գործ . ժ . 38 ։ Ներք . բ . 4 ։ (16) Մատթ . իգ . 24 ։ Ղուկ . իբ . 22 ։ իդ . 44 ։ Գործ . գ . 18 ։ գ . 28 ։ (17) Գործ . ե . 30 ։ (18) Սաղմ . 32 ։ Գործ . գ . 15 ։ դ . 10 ։ ժ . 40 ։ ժգ . 30 . 34 ։ ժե . 31 ։ Հռոմ . դ . 24 ։ ը . 11 ։ ա Կորնթ . գ . 14 ։ ժե . 15 ։ բ Կորնթ . դ . 14 ։ Գաղ . ա . 1 ։ Եփես . ա . 20 ։ Կող . բ . 12 ։ ա Թես . ա . 10 ։ Ներ . ժգ . 20 ։ ա Պետ . ա . 21 ։ (19) Սաղմ . ժգ . 8 ։

Digitized by Google

դժոխս՝ և ոչ ասցես Երբայ քումմ տեսանել զապականութիւն ։

28 Ծանուցեր ինձ զճանապարհս կենաց · լցուցեր զիս ուրախութեամբ յերեսաց քոց ՝ի քաղցրութենէ ։

29 Ընդ եղբարք՝ պատ է համարձակութեամբ ասել վասն նահապետին Դաւթի · զի մեռաւ և թաղեցաւ · և գերեզման նորա կայ ՝ի մէջ մեզ մինչև ցայսօր ։

30 Այլ մարգարէ էր , և գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ նմա Աստուած , ՝ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել յաթոռ նորա ։

31 Կանաչագոյն ծանուցեալ լսեցաւ վասն յարութեան Քրիստոսի · զի ոչ թողաւ ոգի նորա ՝ի դժոխս՝ և ոչ մարմին նորա երես զապականութիւն ։

32 Այս Յիսուս յարոյց Աստուած՝ որում ամենեքին մեք վկայեմք ։

33 Ընդունի Աստուծոյ բարձրացեալ , զաւետիս Հոգւոյն Երբայ ընկալեալ ՝ի օրէ՝ սփռեաց զայս , զոր դուք իսկ տեսանէք և լսէք ։

34 Այլ ոչ եթէ Դաւիթ եղ յերկինս · ասէ իսկ ինքն՝ Ասաց Տէր Տէր իմ · Նիստ ընդ աջմէ իմմէ ,

35 Մինչև եդից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց ։

36 Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ամենայն տունն Իսրայէլի , զի և Տէր զնա և Օծեալ Աստուած արար · զայն Յիսուս՝ զոր դուքն խաչեցէք ։

թողիլ գժոխքումն՝ և քո Երբայն չտես տալ ապականութիւն տեսանել ։

29 Կենաքի ճանապարհներըն ճանաչացուր ինձ · (և) քո երեսիդ ուրախութիւնովն լցուր ինձ ։

29 Այրդիք եղբարք՝ պէտք է որ համարձակութենով ասեմ Դաւիթ նահապետին համար[20] · լեզ նա մեռաւ և թաղվեցաւ · և նորա գերեզմանն մինչև ցայս օր մեր մէջումն կայ ։

30 Իրավ հետև (նա) մարգարէ էր , և գիտաւէր՝ որ Աստուած երդուաւ նմա երդվամբ նորան , որ նորա փորի պտղեն նորա աթոռին վերայ նստուցանէ[21] ։

31 Նա առաջագոյն տեսանելով խօսեցաւ Ի յարութեան Քրիստոսի համար · որ նորա հոգին դժոխքումն չընթողվաւ՝ և նորա մարմինն ապականութիւն չըտեսաւ[22] ։

32 Այս Յիսուսին Աստուած յարոյց[23] որ նորան մենք ամենքս վկայութիւնք[24] ։

33 Աստուծոյ աջովն բարձրացած[25] · և Հուրբ Հոգոյ աւետիքըն օրհնըն առած[26] (նա) փուեց էս[27] , որ դուք տեսնումէք և լսումէք ։

34 Պատճառն որ՝ ոչ լեզ Դաւիթըն վերելաւ երկինքն · բայց հենց ինքն ասումէ՝ Տէրն իմ Տէրին ասաց · Նստ աջ կողմս նստիր[28] ,

35 Մինչև քո թշնամիներըդ քո ոտացդ կոխելիք դնեմ ։

36 Հիմիկ լծոր ճշմարտութենով գիտեսցայ Իսրայէլի ամեն տունն , որ Աստուած նորան Տէր և Օծեալ արաւ · էն Յիսուսին՝ որ դուք խաչեցիք[29] ։

(20) գ Նահ · բ · 10 : Գործ · ժգ · 36 : (21) բ Նահ · է · 12 , 13 : Սաղմ · ճկբ · 11 : Գործ · ա · 32 · 69 : Հռովմ · ա · 3 : բ Տիմ · բ · 8 : (22) Սաղ · ժգ · 10 : Գործ · ժգ · 35 : (23) Ակր · 24 : (24) Գործ · ա · 8 : (25) Գործ · է · 31 : Փիլիպ · բ · 9 : Եբր · ժ · 12 : (26) Հովհ · ժգ · 26 : ժե · 26 : ժգ · 7 · 13 : Գործ · ա · 4 : (27) Գործ · ժ · 45 : Եփես · գ · 8 : (28) Սաղմ · ճժ · 1 : Մատթ · իբ · 44 · ա Կորնթ · ժե · 25 : Եբր · ա · 20 : Եբր · ա · 13 : (29) Գործ · է · 31 :

Digitized by Google

37 Եւ լուեալ զայս զղջացան ՚ի
սիրտս իւրեանց · և ասեն ցՊետ-
րոս՝ և ցայլ առաքեալսն · Ո՞ինչ
գործեսցուք՝ արք եղբարք :

38 Ա՛ռ ցնոսա Պետրոս · Ա՛պա-
շաւեցէք՝ և մկրտեսցի իւրաքան-
չիւրդ ՚ի ձէնջ յանուն Տեառն
Յիսուսի Քրիստոսի ՚ի թողուԹիւն
մեղաց , և ընկալջիք զաւետիս
Հոգւոյն Սրբոյ :
39 Ո՛ւր ձեզ են աւետիքս՝ և որդ-
ւոց ձերոց , և ամենայն հեռաւո-
րաց՝ զորս կոչեսցէ Տէր Ա՛ստուած
մեր :

40 Եւ այլովք բազմօք վկայուԹիւն դնէր , և մխիԹարէր
զնոսա և ասէր · Ա՛պրեցարո՛ւք յազ-
գէ ասի խոտորելոյ յայսմանէ :
41 Ոմանց յօժարուԹեամբ ընկալ-
եալ զբան նորա մկրտեցան · և յա-
ւելան յաւուր յայնմիկ ոգիք իբ-
րև երեք հազարք :
42 Եւ էին հանապազորդեալք վար-
դապետուԹեան առաքելոցն , և հա-
ղորդուԹեան՝ և բեկանելոյ հացին
և աղօԹից :
43 Եւ լինէր ամենայն անձին ահ
և երկիւղ · բազում նշանք և սո-
ւտեալք ՚ի ձեռս առաքելոցն գոր-
ծէին :
44 Ա՛մենայն հաւատացեալքն էին
՚ի միասին , և ունէին զամենայն
ինչ հասարակաց :
45 Եւ զստացուածս և զինչս վա-
ճառէին , և բաշխէին զայն ամե-
նեցուն՝ ո՛ւմ զիարդ պիտոյ ինչ լի-
նէր :
46 Հանապազօր կանխեալ միա-

47 Եւ երբեմն էս լսեցին , իրանց
սրտերումն զղջացան[30] · և ասացին
Պետրոսին և մեկել առաքեալներին ·
Ո՞նչ պիտի գործենք՝ մարդիք եղ-
բարք :
38 Պետրոն նորանց ասաց · Ա-
պաշխարեցէք՝ և ձեզանից ամեն մե-
կըն թող մկրտվի Տէր Յիսուսի
Քրիստոսի անունովն՝ մեղաց թո-
ղութեան համար , և Սուրբ Հո-
գոյ աւետիքըն կընդունիք[31] :
39 Ինչու որ՝ ձեզ և ձեր որդոց
համար է էս աւետիքս[32] , և էն ա-
մեն հեռաւորներին համար՝ որ նո-
րանց մեր Տէր Ա՛ստուածն կըկան-
չէ[33] :
40 Եւ ուրիշ շատ խօսքերով վը-
կայութիւն էր դնում , և յորդո-
րումեր նորանց՝ և ասում · Ա-
զատվեցէք էս ծուռ ազգիցս :
41 Ա՛յն քանիսն նորա խօսքն յօ-
ժարութինով ընդունեցին և մը-
կըրտվեցան · և էն օրն երեք հա-
զարի չափ հոգիք աւելացան :
42 Եւ միշտ առաքելոց վարդա-
պետութեանն և հաղորդութեանն ,
և հացի կորելոյն՝ և աղօթքին է-
ին հետևում[34] :
43 Եւ ամեն անձին վերայ ահ և
վախ էր լինում · շատ նշաններ և
հրաշքներ գործվում էին առաքելոց
ձեռքովն[35] :
44 Ա՛մեն հաւատացեալներն իրար
հետ միևտեղ էին , և ամեն բան
հասարակաց ունէին[36] :
45 Եւ ապրանքներըն և ամեն բա-
ներըն ծախում էին , և բաշխում-
ին էն ամենին , ում որ մին բան
պէտք էր լինում[37] :
46 Ա՛յլ և ամեն օր միաբանու-

(30) Օրէ · ժբ · 10 : Գործ · ե · 8 : ժգ · 30 : (31) Գործ · իդ · 47 : Գործ · գ · 19 : (32) Յովէլ · բ · 28 : Գործ · գ · 25 : (33) Գործ · ժ · 45 : ժա · 15 · 18 : ժդ · 20 : ժե · 3 · 8 · 14 : Եփես · բ · 13 · 17 : (34) Ա՛ղբ · 46 : Գործ · ա 14 : Հռոմ · ժբ · 12 : Եփես · գ · 18 : Կող · գ · 2 : Եբր · ժ · 25 : (35) Մարկ · ժգ · 17 : Գործ · գ · 33 · ե · 12 : (36) Գործ · գ · 32 · 34 : (37) Նա-
ա · ծգ · 7 :

Digitized by Google

բանութեամբ ի սաճարն , և սաքնին՝ բեկանէին զՀացն , և առնուին կերակուր ուրախութեամբ և միամտութեամբ սրտիւ :

47 Օրհնէին զԱստուած՝ և ունէին շնորհս առ ամենայն ժողովուրդն . և Տէր յաւելոյր ի փրկեալսն հանապազօր ի նոյն :

թենով[38] սաճարն էին գնում[39] , և հացըն սրնկերուքն էին կարում , և ուրախութենով և սրտի պարզութենով կերակուր էին առնում[40] :

47 Աստուծոյն օրհնում էին , և ամէն ժողովրդի առաջին շնորհք տալիս էին[41] . և Տէրն ամէն օր փրկվածներ էր աւելցնում նորանից հետ[42] :

ԿԻ . Կ

1 Պետրոս առքերն հասասաված կաղ մարդն անունլոյ վազել ժողովրդեան քարոզելով ; 12 ընդոստավանի թե էն բժշկութիւնն հնից իրան կամ թե Յիսուսեան զօրութենով և քաղութենով եղե էր , բայց Աստուածանից և իրան Ողդոյն Յիսուսից , և Յիսուս անունի հաւատքըն , 18 և մեղադրուած նորանց Յիսուսին խաչելոյ համար : 17 և պարկեշտ էս անգիտութենով արին , բայց Աստուած որ մարգարէներին բերանովն պատմեց իրան Քրիստոսի չարչարվիլըն՝ ենպէս էլ կատարեց , 19 ընդհամար կը յորդորի նորանց որ զղջանան՝ որ իրանց մեղքերըն ջնջվին , և էն Յիսուսից օրհնութիւն առնին :

1 Պետրոս և Յովհաննէս ելանէին ի սաճար անդր յիններորդ ժամու աղօթիցն :

2 Եւ էր այր մի կաղ յորովայնէ մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին հանապազ առ դրան սաճարին՝ որ կոչէր Գեղեցիկ , խնդրել ողորմութիւն յայնցանէ՝ որ մտանէին ի սաճարն :

3 Որոյ տեսեալ զՊետրոս և զՅովհաննէս՝ զի մտանէին ի սաճարն , աղաչէր ողորմութիւն առնել :

4 Հայեցաւ ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ , և ասէ . Հայեաց ի մեզ :

5 Նա դարձաւ ի նոսա , և սկրն ունէր առնուլ ինչ ի նոցանէ :

6 Եւ ասէ Պետրոս . Արծաթ և ոսկի չունիմ . բայց զոր ունիմ՝ զայս տամ քեզ . յանուն Յիսուսի

1 Պետրոսն և Յոհաննէսն գնում էին տաճարն[1] աղօթքի ինն ժամումն (սահլ[2]ում)[3] :

2 Եւ մին մարդ կար իրան մօր փորից կաղ (ծնված)՝ որ նորան ամէն օր վերկալած դնում էին տաճարի (էն) դուռն մտան՝ որ Գեղեցիկ էր կոչվում[5] , որ ողորմութիւն խնդրէ նրանցից՝ որ տաճարն էին մտնում[6] :

3 Երբոր տեսաւ Պետրոսին և Յոհաննէսին՝ որ տաճարն էին մրցնում , աղաչում էր՝ որ ողորմութիւն առնէ նորանցից :

4 Պետրոսն Յոհաննէսին հետ մրսիկ արաւ նորան՝ և ասաց . Վէպի մեզ նայիր :

5 Նա դարձաւ դէպի նորանց , և յոյս ունէր՝ որ մին բան առնէ նորանցից :

6 Եւ Պետրոսն ասաց . Արծաթ և ոսկի չունիմ . բայց ինչ որ ունիմ , էն քեզ կըտամ . Յիսուսի

(38) Գործ . ա . 14 : (39) Լսել . իգ . 53 : Գործ . ե . 42 : (40) Գործ . ե . 2 : (41) Լսել . բ . 52 : Գործ . գ . 38 : Ժողով . ժգ . 18 : (42) Գործ . ե . 14 ; ժա . 24 : (1) Գործ . բ . 46 : (2) Ժողով . ծե . 17 : (3) Գործ . ժգ . 7 : (4) Ջակի . բ . 8 :

Digitized by Google

սի Վրիտասի Ղազվերեցւոյ տրէ՛ և գնա՛ ։

7 Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նո-
ա՝ յարոյց զնա . և անդէն հաս-
տատեցան քարձք նորա՝ և սրունք ։

8 Ի վեր վազեաց և սկսաւ գը-
նալ , և եմուտ ընդ նոսա ի տա-
ճարն . գնայր և վազվազէր՝ և օրհ-
նէր զԱստուած ։

9 Եւ ետես ամենայն ժողովուրդ-
դն զնա , զի գնայր՝ և օրհնէր
զԱստուած ։

10 Եւ գիտէին զնա՝ զի սա էր ,
որ նստէր վասն ողորմութեան առ
Գեղեցիկ դրան տաճարին , և լը-
ան զարմանալեօք ի վերայ նշանին՝
որ եղեւ ։

11 Եւ մինչ նա ունէր զՊետրոս
և զՅովհաննէս , ընթացաւ ամենայն
ժողովուրդն առ նոսա ի սրահն՝ որ
կոչէր Սողոմոնի՝ զարմացեալք ։

12 Իւրեւ ետես Պետրոս , պա-
տասխանի ետ ժողովրդեանն . Ա՛րք
Իսրայէլացիք՝ զի՞ զարմացեալ էք ի
վերայ այսորիկ , կամ ընդ մեզ զի՞
էք պշուցեալ , իբրու թէ անձին
զօրութեամբ ինչ՝ կամ քաջութեամբ
թողեալ իցէ գնալդ դմա ։

13 Աստուած Աբրահամու՝ և Աս-
ուած Սահակայ՝ և Աստուած Յա-
կովբայ , Աստուած հարցն մերոց
փառաւորեաց զՎրդի իւր զՅիսուս .
զոր դուքն մատնեցիք՝ և ուրացայք
առաջի Պիղատոսի , ի դատել նորա
արձակել ։

14 Եւ դուք զՍուրբն և զԱրդա-

Վրիտասի Ղազօրեցւոյ անուանեալ
վէր կաց՝ և գնա՛ ։

7 Եւ նորա աչ ձեռին բռնեց՝
և վերկացուց նորան . և շուտով
հաստատուեցան նորա բարձքն (ոտ-
քերն)՝ և ոտից սրունքն (կօփուլ-
ներքն) ։

8 Ել եր վազեց՝ և սկսեց գնալ ,
և նորանց հետ մտաւ տաճարն[6] . և
գնումէր և վազ էր տալիս՝ և Աս-
տուծոյն օրհնումէր ։

9 Եւ ամէն ժողովուրդն տեսաւ
նորան , որ գնումէր՝ և Աստուծոյն
օրհնումէր[7] ։

10 Եւ գիտումէին նորան՝ որ սա
էն էր , որ ողորմութեան համար
նստումէր տաճարի Վեղեցիկ դրա-
նըն , և զարմանքով լցված էն նը-
շանին համար՝ որ էլաւ[8] ։

11 Եւ դեռ որ նա Պետրոսին և
Յօհաննէսին բռնած էր , ամէն ժո-
ղովուրդն վազեց նորանց մօտ (էն)
սրահն՝ որ Սաղոմոնի էր կոչվում ,
և զարմացան[9] ։

12 Երբոր Պետրոսն տեսաւ , պա-
տասխան տուաւ ժողովրդին . Ի՛վ
Իսրայէլացի մարդիկ՝ ինչո՞ էք զար-
մացել սրա վերայ՝ կամ մեզ վերայ
ինչո՞ էք սաստիկ նայում՝ , իբր
թէ՝ մենք մեր զօրութենով և քա-
ջութենով տուած լինինք դորան
գնալն ։

13 Աբրահամու Աստուածն՝ Սա-
հակայ Աստուածն՝ և Յակոբայ
Աստուածն , մեր հարանց Աստուա-
ծըն[10] փառաւորեց իրան Որդի Յի-
սուսին[11] . նորան՝ որ դուք մատ-
նեցիք[12] , և ուրացաք Պիղատոսի
առաջին , երբոր նա դատումէր՝ որ
արձակէ (նորան)[13] ։

14 Եւ էն Սրբին[14] և Արդարին

(5) Գործ . գ . 10 ։ (6) Նոյն . ւէ . 6 ։ (7) Գործ . գ . 16 . 21 ։ (8) Յովհ . թ . 8 ։ (9) Յովհ . ժ . 23 ։ Գործ . ե . 12 ։ (10) Գործ . ե . 30 ։ (11) Յովհ . է . 39 ։ ժբ . 10 . ժէ . 1 ։ (12) Մատթ . իե . 2 ։ (13) Մատթ . իե . 20 ։ Մատթ . ժհ . 11 ։ Ղուկ . թէ . 18 . 20 . 21 ։ Յովհ . ժբ . 40 ։ ամբ . 15 ։ Գործ . ժգ . 28 ։ (14) Սաղմ . ժգ . 10 ։ Մատթ . ա . 24 ։ Ղուկ . ա . 35 ։ Գործ . բ . 14 . 27 . գ . 22 ։

Digitized by Google

րըն ուրացայք , և խնդրեցիք այր մի մահապարտ շնորհել ձեզ :
15 Եւ զԱռաջնորդ կենացն սպա-
նիք , զոր Աստուած յարոյց ի մեռելոց . որում մեք իսկ վկայ եմք :

16 Եւ հաւատովք անուան նորա զայս՝ զոր տեսանէք և գիտէք , հաստատեաց անուն նորա . և հաւատքն որ նովաւ՝ եռուն դմա զառողջութիւնս զայս յանդիման ձեր ամենեցուն :
17 Եւ արդ եղբարք՝ գիտեմ՝ զի անգիտութեամբ արարիք՝ որպէս և իշխանքն ձեր :
18 Այլ Աստուած՝ որպէս յառաջագոյն պատմեաց ի բերանոյ ամենայն մարգարէից զչարչարելն Քրիստոսի իւրոյ՝ նոյնպէս և կատարեաց :
19 Արդ՝ ապաշաւեցէք և դարձարուք ի ջնջել զմեղս ձեր :
20 Որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան յերեսաց Տեառն . և առաքեսցէ զ յառաջագոյն նկատեալն ձեզ՝ զՅիսուս Քրիստոս :

21 Որ պարտ է երկնից ընդունել մինչև ի ժամանակս ամենեցուն հաստատութեան . զորոց խօսեցաւ Աստուած ի բերանոյ սրբոց մարգարէից :

22 Մովսէս ասաց ցհարսն մեր , թէ Մարգարէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց՝ իբրև զիս , նմա լուիջիք ըստ ամենայնի՝ որ զինչ և խօսեսցի առ ձեզ :
23 Եւ եղիցի ամենայն անձն՝ որ

ուրացաք , և խնդրեցիք՝ որ (նա) մին մահապարտ մարդ շնորհէ ձեզ[15] :
15 Եւ կենաց Առաջնորդին սպա-
նեցիք , որ Աստուած մեռելներէ միջէն յարոյց[16] , որ նորան հինգ մենք վկայութիւնք[17] :
16 Եւ նորա անունի հաւատքովն որան՝ որ տեսնումէք և գիտէք , նորա անունն հաստատեց[18] . և հաւատքն՝ որ նորանով է՝ էս առողջութիւնս առաւ դորան ձեր ամենդ առջին :
17 Եւ հիմի՝ եղբարք , գիտեմ , որ անգիտութենով արիք՝ ինչպէս որ ձեր իշխաններն էլ[19] :
18 Այց Աստուած՝ ինչպէս որ առաջուց[20] ամէն մարգարէներու բերանովն պատմեց իրան Քրիստոսի չարչարվիլը , էնպէս էլ կատարեց[21] :
19 Ուրեմն՝ զղջացէք և յիւր դարձէք , որ ձեր մեղքերն ջնջվին[22] :
20 Որ Տէրէ երեսին հանգստանալու ժամանակներն գան . և Յիսուսին Քրիստոսին ուղարկէ , որ առաջուց ձեզ համար սահմանված է :
21 Որ նորան երկինքն պէտք է ընդունի[23] մինչև էն ամէն բաներուն հաստատվելոյ ժամանակներն[24] . որ նորանց համար խօսեց Աստուած իրան սուրբ մարգարէներուն բերանովն[25] :
22 Մօսէս մեր հարանցն ասաց , թէ Ձեր Տէր Աստուածն մարգարէ վերկըկացնէ ձեզ համար ձեր եղբարներուն միջիցն՝ ինձ նման , նորան լսեցէք ամէն բանի համար՝ ինչ որ կըխօսի ձեզ[26] :
23 Եւ կըլինի , որ ամէն անձն՝

(15) Գործ . է . 52 : իբ . 14 : (16) Գործ . բ . 24 : (17) Գործ . բ . 32 : (18) Մատթ . բ . 23 : Գործ . գ . 16 : ժգ . 9 : (19) Ղուկ . իգ . 34 : Յովհ . ժշ . 3 : Գործ . ժգ . 27 : ա Կորնթ . բ . 8 : ա Տիմ . ա . 13 : (20) Ղուկ . իգ . 44 : Գործ . իշ . 23 : (21) Մատ . իբ : Նաայ . ծ . 6 : ծգ . 5 , Լսայեայ : Գործ . բ . 26 : ա Պետր . ա . 10 , 11 : (22) Գործ . բ . 38 : (23) Գործ . ա . 11 : (24) Մատթ . ժգ . 11 : (25) Ղուկ . ա . 70 : (26) Բ Օրին . ժգ . 15 . 18 , 19 : Գործ . ծ . 37 :

Digitized by Google

հէ լուիցէ մարգարէին այնմիկ , սատակեսցի ի ժողովրդենէն ։
24 Եւ ամենայն մարգարէք՝ որ ի Սամուէլէ և այսր խօսեցան , և պատմեցին զաւուրս զայսոսիկ ։

25 Դուք էք որդիք մարգարէիցն՝ և ուխտին , զոր ուխտեաց Աստուած ընդ հարս ձեր , և ասէ ցԱբրահամ . Ի զաւակի քումմ օրհնեսցին ամենայն ազգք երկրի ։

26 Ձեզ նախ յարոյց Աստուած զՈրդի իւր , և առաքեաց զնա օրհնել զձեզ՝ ի դառնալ ձեզ իւրաքանչիւր ի չարեաց ձերոց ։

որ էն մարգարէին չլսէ , նա ժողովրդի միջից թնդ սատակվի ։
24 Եւ ամէն մարգարէներն՝ որ Սամուէլից մինչև հիմիկ մարգարեցան , հենց էս օրերս պատմեցին ։

25 Դուք էք էն մարգարէների որդիքն՝ և էն ուխտին , որ Աստուած մեր հարանց հետ հաստատեց , և Աբրահամին ասաց[27] . Ի քո զաւակովդ պիտի օրհնվին երկրի ամէն ազգերն[28] ։
26 Աստուած առաջ ձեզ հաներ[29] վերկացրուց իրան Որդին , և նորան ուղարկեց՝ որ ձեզ օրհնէ[30] , որ ձեր ամէն մէկդ յետ դառնաք ձեր չարութենից[31] ։

ԻԱ · Դ

1 Քահանայապետներն և իշխաններն Պետրոսի քարոզութեանն համար տասնիկ բարկանալ՝ բռնեն և Օրհանեան բանտի մէջ կը դնեն , 5 և խօսքն լսողներից շատերն կը հաւատան ։ 6 Երբ որ նորանք դատաստանի կը հանեն՝ Պետրոս համարձակութեամբ կը հաստատէ թէ են խաղ մարդն Յիսուսի անունով ոչնացաւ , և թէ միայն Յիսուսի անունովն փրկութիւն կայ երկնքի ներքեն ։ 13 Նորանք ահ տալով պատուէր կ՚ուտեն նորանց որ խնի չքարոզեն և չսովորցնեն Յիսուսի անունովն , 23 Որանց համար եկեղեցին աղօթք կանէ ։ 31 Յաւուած նորանց ժողովված տեղն շարժելով Սուրբ Հոգովն ցոյց կ՚ուտայ թէ իրանց աղօթքն լսեց . և նկեղեցին կը հաստատէ Սուրբ Հոգին պարգևներովն , նորանց բազմութիւնն միս սիրտ անելով և աղբմութեամբ ։

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն , հասին ի վերայ նոցա քահանայապետքն և իշխանք տաճարին՝ և սադուկեցիքն ,

2 Այրացանելք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն՝ և պատմելոյ ՅԻսուսիս զյարութիւն մեռելոց ։

3 Եւ՝ խեցին ի նոսա զձեռս իւրեանց . և եդին զնոսա ի բանտի՝

1 Եւ դեռ քանի որ նորանք ժողովրդին հետ խօսումէին , քահանայապետներն և տաճարի իշխաններն և սադուկեցիքն նորանց վերայ հասին

2 Աստիկ բարկացած նրանից՝ որ նորանք ժողովրդին սովորցնումէին , և Յիսուսի ձեռնից մեռելներն յարութիւն առնելն պատմումէին ։

3 Իրանց ձեռներն ձգեցին նորանց , և բանտի (պահպանի) մէջ

(27) Գործ . բ . 39 : Հռոմ . թ . 4 . 8 : ԺԸ . 8 : Գաղ . գ . 26 : (28) Ծննդ . ԻԲ . 3 : ԻԶ . 18 : ԽԲ . 18 : ԽԶ . 4 : ԽԸ . 14 : Գաղ . գ . 8 : (29) Մատթ . Ճ . 5 : ԺԸ . 24 : Ղուկ . ԽԴ . 47 : Գործ . ԺԳ . 33 , 33 . 46 : (30) Ա՚այ . 23 : (31) Մատթ . ՈՄ . 21 : (1) Մատթ . ԽԲ . 23 : Գործ . ԽԴ . 8 :

Digitized by Google

մինչև ի վաղիւն , զի էր ընդ ե-
րեկս :

4 Իսկ բազումք ի լսողաց բանին հաւատացին • և եղև թիւ մարդկան իբրև հազարաց վեցից :

5 Եւ եղև ի վազիւ անդր՝ ժողովել նոցա զիշխանսն և զերիցու-
նըս և զդպիրսն Յերուսաղէմ ,

6 Եւ զԱննա քահանայապետ՝ և զԿայիափա , և զՅովհաննէս և զԱղէքսանդրոս , և որք միանգամ էին յազգէ քահանայութեանն :

7 Եւ կացուցեալ զնոսա ի մէջ՝ հարցանէին • Ի որիվ զօրութեամբ կամ որիվ անուամբ արարէք դուք զայս :

8 Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով Սրբով՝ ասէ ցնոսա • Իշխանք ժողովրդեան՝ և երիցունք Իսրայէլի •

9 Եթէ արժանի ինչ իցէ դատել զմեզ այսօր վասն երախտաց առն մերոյ տկարի , որով սա բժշկեցաւ :

10 Ցայտնի լիցի ամենեցուն ձեզ՝ և ամենայն ժողովրդեանդ Իսրա-
յէլի • զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք՝ զոր Յարուցած յարոյց ի մեռելոց , նովաւ սա կայ առաջիկ առաջի ձեր ողջացեալ :

11 Նա է վէմն՝ անարգեալ ի ձէնջ շինողաց , որ եղև գլուխ անկեան :

12 Եւ չիք այլով իւիք փրկու-
թիւն • զի և ոչ անուն այլ գոյ ի ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ :

13 Հայեցեալ ի համարձակու-
դրին մինչև առաւօտն • քանզի արդէն մինչև երիկուն դէմ էր :

4 Բայց են խօսքը լսողներից շատերն հաւատացին • և մարդկանց համարն հինգ հազարի չափ էլաւ :

5 Եւ յետոյ օրուանն էլաւ՝ որ նորանք իշխաններին և էլեցիներին և կարդացողներին ժողովեցին Երուսաղէմ ,

6 Եւ Աննա քահանայապետին՝ և Կայիափային , և Յովհաննէսին և Աղէքսանդրոսին , և էն ամէնին՝ որ քահանայական ցեղից էին[2] :

7 Եւ նորանց կանգնացրին մէջ տեղն՝ (և) նորանց հարցնում էին • (թէ) Ինչ զօրութեամբ կամ ի անունով դուք արիք էս[3] :

8 Յն ժամանակն Պետրոսն Սուրբ Հոգով լցված՝ նորանց ասաց՝ • Ա՛վ ժողովրդի իշխաններ՝ և Իսրայէլի էրեցներ •

9 Թէ արժանն է՝ որ մեզ էս օր դատէք մին տկար մարդոյ երախ-
տիք անելոյ համար , թէ ում ձեռնից սա բժշկվեցաւ :

10 Թող յայտնի լինի ձեզ ամէնի՛ դ՝ և ամէն Իսրայէլի ժողովրդի՛ դ՝ որ Յիսուսի Քրիստոսի Նազովրեցոյ անունովն՝ որ նորան դուք խաչեցիք՝ որ նորան Յառուած յարոյց մեռելների միջիցն , հենց նորանով սա հիմիկ ձեր առաջիդ ողջացած կայ[4] :

11 Նա է ձեզանից շինօղներիցդ անարգված քարն , որ անկիւնի գլուխ էլաւ[5] :

12 Եւ էլ մին ուրիշ բանով փըր-
կութիւն չըկայ • ինչու որ՝ էլ ուրիշ անուն չըկայ երկնքի ներքևն մարդկանց տրվված՝ որ նորանով կարելի լինի մեզ ապրիլ[6] :

13 Պետրոսի և Յովհաննէսի հա-

(2) Ղուկ • գ • 2 : Յովհ • ժա • 49 : ԺԲ • 13 : (3) Նէ • բ • 14 : Մատթ • իա • 23 : Գործ • է • 27 : (4) Ղուկ • ԺԲ • 11 , 12 : (5) Գործ • գ • 6 • 16 : (6) Գործ • բ • 24 : (7) Սաղ • ՃԺԸ • 22 : Նեռ • իԸ • 16 : Մատթ • իա • 42 : (8) Մատթ • ա • 21 : Գործ • ժ • 43 : ա Տիմ • բ • 5 , 6 :

Digitized by Google

Թիւն Պետրոսի և Յովհաննու , և ՚ի վերայ հասեալ՝ թէ արք տգէտք և առանց դպրութեան են , զարմանային . զի ճանաչէին զնոսա՝ թէ ընդ Յիսուսի էին :

14 Եւ զայրն ևս տեսանէին ըզբժշկեալն՝ զի կայր ընդ նոսա . և ոչինչ կարէին տալ պատասխանի :

15 Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զառաքեալն ելանել , խորհեցան ընդ միմեանս :

16 Եւ ասեն . Ո՞ի՞նչ արասցուք արանցս այսոցիկ՝ զի երևելի նշան եղև ՚ի ձեռն նոցա . ամենայն իսկ բնակչաց Երուսաղէմի յայտ է , և ոչ կարեմք ուրանալ :

17 Այլ զի մի՛ առաւել ճարտարեսցի ՚ի ժողովուրդն , սպառնասցուք նոցա՝ մի՛ ևս խօսել յանունն յայն՝ մի՛ ումեք ՚ի մարդկանէ :

18 Եւ կոչեցեալ զնոսա պատուիրեցին ամենևին մի՛ խօսել՝ և մի՛ ուսուցանել յանուն Յիսուսի :

19 Իսկ Պետրոս և Յովհաննէս պատասխանի եառն՝ և ասեն ցնոսա , Եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ , ընտրեցէք :

20 Այլ մեք ոչ կարեմք զոր տեսաքն և լուաք՝ չխօսել :

21 Եւ նոքա սպառնացեալ արձակեցին զնոսա , և ոչինչ գտեալ՝ թէ պատճէս պատուհասեսցեն զնոսա՝ վասն ժողովրդեանն . զի ամենեքեան փառաւոր առնէին զԱստուած վասն իրացն եղելոց :

22 Ամաց էր այրն՝ ասելի մարձակութիւնն տեսանելով , և դիտելով թէ տգէտ և առանց ուսմունքի մարդիք են , զարմանային . պատճառն որ՝ ճանաչէին նորանց՝ որ Յիսուսի հետ էին :

14 Եւ են բժշկված մարդոյն էլ տեսնում՝ որ նորանց հետ կար . և իսկի չէին կարող միև պատասխան տալ[10] :

15 Եւ հրամայեցին նորանց՝ որ սիվանիցն դուրս գնան , և իրար հետ խորհուրդ արին :

16 Եւ ասացին . Ի՞նչ անենք էս մարդկանցս՝ որ երևելի նշան էլաւ նորանց ձեռովն[11] . որ հենց ամէն Երուսաղէմի մէջ բնակօղներին յայտնի է , և կարօղ չենք ուրանալ[12] :

17 Այլ՝ նայն թէ՝ որ աւելի չըտարածվի ժողովըրդի մէջն՝ ահ տանք նորանց , որ միևէլ էն անունովն չըխօսին մարդկանց մէնի հետ :

18 Եւ նորանց կանչեցին և պատուէր տուին՝ որ իսկի չըխօսին , և միևէլ չըսովորցնեն Յիսուսի անունովն[13] :

19 Պայց Պետրոսն և Յօհաննէսն պատասխան տուին՝ և նորանց ասացին . Այ ձեռ կարեցէք , եթէ արժանն է Աստուծոյ առաջին՝ որ ձեզ աւելի ականջ դնենք՝ քան թէ Աստուծոյն[14] :

20 Ինչու որ՝ մենք չենք կարօղ չըխօսիլ էն[15] որ աչքինք և լսեցինք[16] :

21 Նորանք ահ ասլով արձակեցին նորանց , և ոչ ինչ բան չըգտին՝ թէ ինչպէս պատիժ տան նորանց՝ ժողովըրդի պատճառովն[17] . ինչու որ՝ ամէնքն էլ էն էլած բանների համար փառք էին տալիս Աստուծոյն[18] :

22 Պատճառն որ՝ էն մարդըն՝ քա-

(9) Մատթ . ժա . 25 : ա Կորնթ . ա . 27 : (10) Գործ . գ . 11 : (11) Յովհ . ժա . 47 : (12) Գործ . գ . 9 , 10 : (13) Գործ . ե . 40 : (14) Գործ . ե . 29 : (15) Գործ . ա . 8 : դ . 32 : (16) Գործ . իբ . 15 : ա Յովհ . ա . 1 . 3 : (17) Մատթ . խա . 26 : Ղուկ . ի . 6 . 19 : իբ . 3 : Գործ . ե . 26 : (18) Գործ . գ . 7 ; 8 :

Digitized by Google

քան զքաւասուն , յորոյ վերայ եղև նշանս այս բժշկութեան :

23 Եւ անտի արձակեալ՝ եկին առ իւրեանցն , և պատմեցին՝ որչափ ինչ ասացին ցնոսա քահանայապետքն և երիցունքն :

24 Եւ նոցա լուեալ ամբարձին զձայնս իւրեանց առ Ա՛ստուածՙ և ասեն . Տի՛ր Տէր Ա՛ստուածՙ որ արարեր զերկինս և զերկիր՝ զծով և զամենայն՝ որ ի նոսա .

25 Որ ի բերանոյ հօր մերոյ Դաւթի ծառայի քո՝ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ասացեր . Ո՞վ խռովեցան հեթանոսք՝ և ժողովուրդք խորհեցան ի սնոտիս :

26 Յանդիման եղեն թագաւորք երկրի , և իշխանք ժողովեցան ի միասին վասն Տեառն և վասն Օծելոյ նորա :

27 Ժողովեցան արդարև ի քաղաքիս յայսմիկ ի վերայ սրբոյ Որդւոյ քո Յիսուսի՝ զոր օծերն , Հերովդէս և Պոնտոս Պիղատոս՝ ազգօք և ժողովրդովք Իսրայէլի ,

28 Ա՛նել՝ որչափ ձեռն քո և կամք յառաջագոյն սահմանեցին լինել :

29 Եւ արդ՝ Տէր , հայեաց ի սպառնալիս նոցա , և տուր ծառայից քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն քո :

30 Ի ձգել զձեռն քո ի բժշկութիւն , և նշանս և արուեստս՝ լինել անուամբ սրբոյ Որդւոյ քո Յիսուսի :

ռաստն առաքեաց էլ աւելի էր , որ նորա վերայ էս բժշկութեան նշանս էլաւ :

23 Եւ էնտեղից՝ որ արձակվեցան՝ եկին իրանցներու մօտը , և պատմեցին որքան բան որ քահանայապետներն և էրեցներն ասացին նորանց[19] :

24 Եւ նորանք երբոր լսեցին , իրանց ձայներն բարձրացրին դէպի Ա՛ստուածՙ և ասացին . Տի՛ր Տէր Ա՛ստուածՙ որ արիր երկինքըն և երկիրըս՝ ծովըն և ամէն բան՝ որ նորանցում է[20] .

25 Որ մեր հայր Դաւթի՝ քո ծառայի բերանովն խօսեցիր և ասացիր Սուրբ Հոգով ձեռովն . Ինչու համար հեթանոսներն խռովվեցան՝ և ժողովուրդներն ունայն բաներ մտածեցին[21] :

26 Երկրի թագաւորներն վերկացան , և իշխաններն միևնեղ հաւաքվեցան Տէրին համար՝ և նորա Օծեալին համար :

27 Իրաւի որ հաւաքվեցան էս քաղաքումս[22] քո սուրբ Որդի Յիսուսին վերայ[23] , որ նորան օծեցիր[24] . Հերովդէսն և Պոնտոս Պիղատոսն՝ հեթանոսներովն և Իսրայէլի ժողովուրդներովն ,

28 Որ անեն՝ որչափ որ քո ձեռքն և կամքն առաջուց սահմանեց որ լինի[25] :

29 Եւ հիմի՝ Տէր , նայիր նորանց ահ ասելուն , և տուր քո ծառաներին՝ որ ամէն համարձակութեամբ քո բանըդ խօսին[26] :

30 Որանով որ քո ձեռքն մեկնես , որ բժշկութիւն , և նշաններ և հրաշքներ լինին[27] , որ սուրբ Որդի Յիսուսի[28] անունովն[29] :

(19) Ղուկ . ժբ . 12 : (20) Դ Թագ . ժբ . 15 : (21) Սաղմ . բ . 1 : (22) Մատթ . իգ . 3 : Ղուկ . իբ . 2 : իգ . 1 . 3 : (23) Ղուկ . ա . 35 : (24) Ղուկ . գ . 18 : Ցուկ . ժ . 38 : (25) Գործ . բ . 23 : գ . 18 : (26) Ա Յհ . 18 : Ա Տես . 31 : Գործ . բ . 27 : ժգ . 46 : ժգ . 3 : ժբ . 8 : իգ . 26 : իբ . 31 : Եփես . գ . 19 : (27) Գործ . բ . 43 : ե . 12 : (28) Ա Յհ . 27 : (29) Գործ . գ . 6 . 16 :

Digitized by Google

31 Եւ մինչ կային նոքա յաղօթսն՝ շարժեցաւ տեղին՝ յորում էին ժողովեալ, և լցան ամենեքին Հոգւով Սրբով. և խօսէին զբանն Աստուծոյ համարձակութեամբ:

32 Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ և անձն մի. և ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից իւրոց, թէ իւր իցէ. այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց:

33 Եւ զօրութեամբ բազմաւ առաքեալքն ըզյարութեանն Տեառն Յիսուսի Քրիստոսի. և շնորհք մեծամեծք էին ի վերայ ամենեցուն նոցա:

34 Եւ ոչ ոք կարօտէր ի նմա. զի որ միանգամ տեարքն էին գեղից կամ ապարանից՝ վաճառէին և բերէին զգինս վաճառելոցն:

35 Կենէին առ ոտս առաքելոցն. և բաշխէին իւրաքանչիւր՝ որպէս ումք պիտոյ ինչ լինէր:

36 Յովսէփ՝ որ կոչեցաւ Նաւնաբաս յառաքելոց անտի, որ թարգմանի՝ Որդի մխիթարութեան. Կղեւտացի՝ յազգէ Կիպրացի.

37 Էր նորա գիւղ, վաճառեաց՝ և բերեր զգինն՝ եդ առ ոտս առաքելոցն:

31 Եւ դեռ քանի ոմն նորանք աղօթք էին անում՝ շարժվեցաւ էն տեղն՝ ուր ժողովված էին, և ամենքըն Սուրբ Հոգով լցվան[30]. և Աստուծոյ բանըն համարձակութեամբ խօսում էին[31]:

32 Եւ էն հաւատացելոց բազմութիւնն մին սիրտ՝ և մին անձն էր[32]. և նորանցից իսկի մինն էլ չէր ասում իրան ապրանքների համար՝ թէ իրանն են[33]. բայց նորանց ամէն բաներն հասարակաց էր:

33 Եւ առաքեալներն շատ զօրութեամբ[34] վկայութիւն էին տալիս Տէր Յիսուսի Քրիստոսի յարութիւն առնելոյն համար[35]. և մեծ մեծ շնորհքներ կային նորանց ամէնին վերայ[36]:

34 Եւ նորանց մէջն իսկի մինն կարօտութիւն չունէր. պատճառն որ՝ նորանք ամենքըն՝ որ գեղերի կամ տըների տէր էին՝ ծախում էին, և ծախվածի գինըն բերում էին[37]:

35 Առաքելոց ոտներին մօտըն էին դնում[38]. և ամէնին բաժանում էին՝ ինչպէս որ մըտին մին բան պէտք էր լինում[39]:

36 Յովսէփն՝ որ առաքեալներից Նաւնաբաս կոչվեցաւ, որ Մխիթարութեան որդի կասվի. Կղեւտացի ցեղից՝ Կիպրոսեցի.

37 Իւր մին գիւղ ունէր, (և) ծախեց՝ և գինըն բերաւ առաքելոց ոտների մօտն դրաւ[40]:

(30) Գործ · բ · 2 · 4 : ժղ · 26 : (31) Վ Էր · 29 : (32) Գործ · ե · 12 : Հռովմ · ժե · 5, 6 : ա Կորնթ · ժգ · 11 : Փիլիպ · ա · 27 : բ · 2 : ա Պետր · գ · 8 : (33) Գործ · ե · 4 : (34) Գործ · ա · 8 : (35) Գործ · ա · 22 : (36) Գործ · բ · 47 : (37) Գործ · ե · 45 : (38) Մայր · 27 : Գործ · ե · 2 : (39) Գործ · բ · 45 : (40) Վ Էր · 34, 35 : Գործ · ե · 1, 2 :

Digitized by Google

ԻԼ • Ն

1 Ընտիկան և նորա կինն Սափիրան իրանց տուա տալլոյն համար պետրսից տատվելով վերըկնան և իրանց հոգիներն հանեցին , 12 Ընտաքեալներէ մեռալին նշաններ և շատ հրաշ-ներ կըլլիներն , 14 Հատատացեալներըն չատանալու համար : 17 Սկիզբ մեռք կըձգին ա-ռաքեալներուն , և նորանց կըդնեն բանտի (զնփան) մէջն , 19 Սկն հրեշտակ Տեռանց կա-զատէ և պատուէր կըտայ նորանց որ համարձակ ամէնին քարոզեն . 21 Նորանք էլ երթալ առաւոտին մէջն , 29 Նա ուխտանի առաջին քարոզչին , 33 Ընտանիներըն մտածումէն որ նորանք սպանեն , վերջն մին Գամալիէլ օրէնք սովորցնող Հրէայի խորհրդոյն 40 Սէնակ կըծեծեն և կար ձակեն նորանց . որ նրահամար Ըստուած կըփառաւորուին և ամէն օր ջին գա-դաթամ սովորցնելուցն՝ և աւետարանելուցն :

1 Իսկ այր ոմն Ընանիա անուն , հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ վաճառեաց ագարակ .

2 Եւ խորհեաց ՚ի գնոց անտի՝ գիտելով և կնոջն . և եբեր մա-սըն ինչ՝ եդ առ ոտս առաքելոցն :

3 ՙսէ Պետրոս . Ընանիա՝ ընդ-դէր եղիւ Սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն Սրբոյ , և խորհել ՚ի գնոց գեղջն :

4 Մի՞ ապաքէն մինչ կայրն՝ քո էր , և ՚ի վաճառելն՝ ընդ քո իշ-խանութեամբ էր . զի՞ զի եդիր ՚ի սրտի քում զիրս զայս . ո՛չ սը-տեցեր մարդկան , այլ Ստուծոյ :

5 Եւ լուեալ Ընանիա զբանս զայսոսիկ , անկաւ՝ և եհան զոգի . և եղև ահ մեծ ՚ի վերայ ամենե-ցուն՝ որ լուանն զայն :

6 Յոտն կացին երիտասարդքն՝ և ամփոփեցին զնա , և տարան թա-ղեցին :

7 Եւ եղև իբրև ժամք երեք անցին , և կին նորա ո՛չ գիտէր զինչ եղեալն էր , եմուտ ՚ի ներ-քըս :

8 Պատասխանի ետ նմա Պետրոս և ասէ . ՙսա՛ դու ինձ՝ թէ այն-չափ գնոց զդեօղն վաճառեցիք . և

1 Բայց մին Ընանիա անուն մարդ , իւան Սափիրա կնկան հետ՝ (մին) ագարակ (ղէչլը) ծախեց :

2 Եւ նորա գնիցն գաղեց որ կի-նըն էլ գիտուէր . և մինչ բա-ժին բերաւ առաքելոց ոտներն մո-տըն դրաւ[1] :

3 Պետրոսն ասաց . Ընանիա՝ ինչո՞ւ համար[2] Սատանան քո սիր-ըդ լցրուց՝ որ դու տուա խօտո Սուրբ Հոգոյն , և ագարակի (ղէչ-լըղէ) գնիցն գաղեա[3] :

4 Ձէ որ դեռ քանի որ կար՝ քո-նըն էր , և երբոր ծախուէիր՝ քո իշխանութեանդ տակն էր . ի՞նչ է՝ որ էս բանըս դրիր քո սրտիդ մէ-ջըն . ո՛չ թէ մարդկանց տուա ա-սացիր , բայց Ստուծոյն :

5 Եւ Ընանիան երբոր էս բա-նըս լսեց , վերընկաւ և հոգին հա-նեց[4] . և մեծ վախ էլաւ ամէնին վերայ՝ որ էն լսեցին :

6 Երիտասարդներն վերկացան՝ պատանեցին նորան , և տարան թաղեցին[5] :

7 Եւ էլաւ երբոր երեք ժամ (սահաթ) անցկացան , և նորա կինն (որ) չէր գիտում ինչ որ էլած էր՝ ներս մտաւ :

8 Պետրոսն պատասխան տուաւ նորան՝ և ասաց . Ասա ինձ տա՛ թէ ձ՞նչափ գնով ծախեցիք էն ա-

(1) Գործ • դ • 37 : (2) Հաւտ • Լ • 3 : բ Օրին • իդ • 21 : Ժող • ե • 4 : (3) Գործ • ը • 3 : (4) Ալայ • 10 , 11 : (5) Յոբ • ԺԲ • 10 :

Digitized by Google

նա ասէ . Ա՛յո՞ այնչափ :

9 Եւ ասէ ցնա Պետրոս . Ոչ՛ ե՛ զի միաբանեցաք դուք փորձել զՀոգին Տեառն . ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո՝ ի դրան , հանեն և զքեզ :

10 Եւ անկաւ անդրէն առ ոտս նորա՝ և եհան զոգի . մտին երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ , և հանին թաղեցին առ առն իւրում :

11 Եւ եղև երկիւղ մեծ՝ ի վերայ ամենայն եկեղեցւոյն , և՝ ի վերայ ամենեցուն՝ որ լուան զայն :

12 Եւ՝ ի ձեռս առաքելոց լինէին նշանք և արուեստք բազումք՝ ի ժողովրդեանն . և էին միաբան ամենքեան՝ ի սրահին Սողովմանի :

13 Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա . այլ ժողովուրդն զնոսա ժողովուրդն :

14 Եւ առաւել ևս յաւելուին հաւատացեալքն՝ ի Տէր , բազմութիւն արանց և կանանց :

15 Մինչև՝ ի հրապարակն հանել զհիւանդս , և դնել պատգարակօք և մահճօք իւրեանց . զի ընդ անցանելն Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ ումեք՝ ի նոցանէ :

16 Եւ ժողովէր բազմութիւն շուրջ՝ ի քաղաքաց անտի Երուսաղէմ . բերէին զհիւանդս և ըզնեղեալս յայսց պղծոց . որք և բժշկէին ամենեքեան :

17 Յարուցեալ քահանայապետն , գարակըն . և նա ասաց . Այո՛ էնչափ :

9 Եւ Պետրոսն ասաց Նորան . Ինչ է՛ որ միաբանվեցաք դուք , որ Տէրն Հոգին փորձէք[6] . ահա (Նորանց) ոտներն՝ որ քո մարդըն թաղեցին , դուռն մօտն (են)՝ քեզ էլ կը հանեն :

10 Եւ շուտով վէրընկաւ Նորա ոտներն առաջին՝ և հոգին հանեց . երիտասարդներն ներս մտին՝ Նորան մեռած գտին , և հանեցին իրան մարդոյ մօտն թաղեցին[7] :

11 Եւ մեծ ահ էլաւ ամէն եկեղեցոյն վերայ , և ամէնին վերայ՝ որ էս լսեցին[8] :

12 Եւ առաքեալների ձեռովն նըշաններ և հրաշքներ էին լինում ժողովրդի մէջն[9] . և ամէնքն միաբան Սաղոմոնի սրահումն էին[10] :

13 Եւ էն ուրիշներից իսկի մինըն չէր համարձակվում մօտենալ Նորանց[11] . բայց ժողովուրդն պատիւ էր տալիս Նորանց[12] :

14 Եւ էլ աւելի շատանում էին Տէրի հաւատացեալներըն . մարդկանց և կանանց բազմութիւնն :

15 Մինչև որ հիւանդներըն հանում էին քաց փողոցներըն , և իրանց տակներումն և մահիճներումն (պէօշէնէրումն) էնտեղ էին դնում . որ երբոր Պետրոսն անցկենայ , լինի թէ Նորա շուաքն Նորանցից մինին հասնէ[13] :

16 Եւ էն չորս կողմի քաղաքներից բազմութիւն էին հաւաքվում Երուսաղէմ , բերում էին հիւանդներն և պիղծ դևերից չարչարվածներըն . որ ամէնքն էլ բժշկվում էին[14] :

17 Վերկացաւ քահանայապետն և

(6) Գործ . ե . 3 : (7) Գործ . ե . 7 : (8) Գործ . ե . 5 : (9) Գործ . բ . 43 : Ժբ . 17 : (10) Գործ . բ . 43 : Ժդ . 3 : Ժբ . 11 : Հռոմ . ժ . 10 : ա Կորնթ . ժբ . 12 : Նէեմ . բ . 8 : (11) Գործ . գ . 11 : դ . 32 : (12) Հռոմ . ի . 23 : Ժբ . 42 : Ժբ . 38 : (13) Գործ . բ . 47 : դ . 21 : (14) Մատթ . ի . 21 : Ժդ . 36 : Գործ . Ժբ . 13 : (15) Մատթ . Ժչ . 17 , 18 : Հռոմ . Ժդ . 13 :

Digitized by Google

և ամենքին որ ընդ նմա՝ և առ-
ղանդ սադուկեցւոց՝ լցան նախան-
ձու ։

18 Եւ արկին զձեռս յառաքեալ-
սըն, և եդին զնոսա հրապարակաւ
՚ի բանտի ։

19 Այլ հրեշտակ Տեառն գիշերի
եբաց զդուրս բանտին, և հան-
եալ զնոսա՝ ասէ .

20 Կայնացէք՝ կացէք ՚ի տաճարին,
և խօսեցարուք ընդ ժողովրդեանն
զամենայն պատգամս կենացս այս-
ցիկ ։

21 Եւ իբրև լուան, մտին ընդ
առաւօտն ՚ի տաճարն՝ և ուսուցա-
նէին . եկն քահանայապետն՝ և որ
ընդ նմա, կոչեցին միաբան զատ-
եանն՝ և զամենայն ծերակոյտ որդ-
ւոցն Իսրայէլի, և առաքեցին ՚ի
բանտն տածել զնոսա ։

22 Եւ իբրև եկին սպասաւորքն՝
ոչ գտին զնոսա ՚ի բանտին . դարձ-
եալ անդրէն պատմեցին ,

23 Եւ ասեն . Թէ Զբանտն գըտ-
տաք փակեալ ամենայն զգուշու-
թեամբ, և զպահապանսն՝ զի կա-
յին առ դրանն . բացաք՝ և ՚ի ներ-
քոյս զոք ոչ գտաք ։

24 Իբրև լուան զբանս զայս իշ-
խանք տաճարին՝ և քահանայապետ-
քըն՝ հիանային վասն նոցա , թէ
զինչ արդեօք լինիցի այն ։

25 Եւ եկն ոմն պատմեաց նոցա՝
թէ Ահա արքն՝ զորս եդիք ՚ի բան-
տի՝ կան ՚ի տաճարին , և ուսուցա-
նեն զժողովուրդն ։

26 Յայնժամ երթեալ իշխանն
սպասաւորօքն հանդերձ՝ ած զնոսա
ոչ բռնութեամբ . քանզի երկնչէին

ամենքն՝ որ նորան հետ էին , և
սադուկեցւոց աղանդն՝ նախանձով
լցվան[15] ։

18 Եւ ձեռք ձգեցին առաքեալնե-
րին , և նորանց յայտնի դրին բան-
տի (պնդոնքի) մէջն[16] ։

19 Այլ հետոյ Տէրի հրեշտակն
գիշերով բանտի դռներըն բաց ա-
րաւ , նորանց հանեց՝ և ասաց[17] .

20 Կայնացէք տաճարի մէջն կանգ-
նեցէք , և էս կեանքիս ամեն հը-
րամաններըն խօսեցէք ժողովրդի
հետ[18] ։

21 Եւ երբոր լսեցին , առաւօ-
տանց մտին տաճարի մէջն՝ և ա-
վորնուվին . եկաւ քահանայա-
պետն՝ և նորանք՝ որ նորա հետ է-
ին , ու ժողովն , և Իսրայէլի որդոց
ամեն ծերակոյտն կանչեցին մին-
տեղ , և ուղարկեցին բանտն՝ որ
բերեն նորանց[19] ։

22 Այլ երբոր սպասաւորներն ե-
կին՝ նորանց չըգտին բանտի մէջն .
յետ դարձան և պատմեցին ,

23 Եւ ասացին . Թէ Բանտըն
ամեն զգուշութենով փակված գը-
տինք , և պահապաններըն էլ՝ որ
դռան մօտն կանգնած էին . բաց
արինք՝ և ներսումն իսկի մարդ չը-
գտինք ։

24 Երբոր տաճարի իշխաններն և
քահանայապետներն էս բանըս լը-
սեցին , զարմանութեին նորանց հա-
մար , թէ էն ինչ պիտի լինի[20] ։

25 Եւ մինն եկաւ նորանց պատ-
մեց՝ թէ Ահա էն մարդիկն՝ որ բան-
տի մէջ դրիք , տաճարումն կանգ-
նած են՝ և սովորցնումեն ժողովըր-
դին ։

26 Այն ժամանակն իշխանն ապա-
սաւորներին հետ գնաց՝ նորանց
բերին առանց բռնութեան . պատ-

(15) Գործ . գ . 1 , 2 . 6 ։ (16) Ղուկ . խ . 12 ։ (17) Գործ . ժբ . 7 ։ ժգ . 26 ։
(18) Յովհ . գ . 69 ։ ժե . 3 ։ ա Յովհ . բ . 11 ։ (19) Գործ . գ . 5 , 16 ։ (20) Ղուկ .
իբ . 6 ։ Գործ . գ . 21 ։

Digitized by Google

'ի ժողովրդենէն՝ զի մի՛ քարկոծեսցին ։

27 Եւ ածեալ զնոսա՝ կացուցին յաթոռն . եհայ՛ց զնոսա քահանայապետն ,

28 Եւ ասէ . Ո՞չ պատուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ուսուցանել յանունն յայն . և արդ՝ ահաւասիկ լցիք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով , և կամիք ածել 'ի վերայ մեր զարիւն զառն զայնորիկ ։

29 Պատասխանի եառ Պետրոս և այլ առաքեալքն , և ասեն . Հարկ նաղանդել պարտ է Աստուծոյ առաւել՝ քան մարդկան ։

30 Աստուած հարցն մերոց յարոյց զՅիսուս՝ զոր դուք սպանիք կախեալ զփայտէ ։

31 Զնա Աստուած Առաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջովն իւրով տալ ապաշխարութիւն Իսրայէլի՝ և թողութիւն մեղաց ։

32 Եւ մեք եմք վկայք բանիցս այսոցիկ , և Հոգին Սուրբ՝ զոր ետ Աստուած հնազանդելոց իւրոց ։

33 Եւ նոքա իբրև լուան , առաւ տանային՝ և խորհէին սպանանել զնոսա ։

34 Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փարիսեցի՝ որում անուն էր Գամաղիէլ . օրէնսուսոյց՝ պատուական ամենայն ժողովրդեանն . հրամայեաց սակաւիկ մի զարսն արտաքս առնել ,

35 Եւ ասէ ցնոսա . Այրք Իսրայէլացիք՝ հայեցարո՛ւք 'ի ձեզ վասն պատուոյ այսոցիկ՝ զինչ արժան իցէ գործել ։

ձառն որ՝ ժողովրդիցն վախենային՝ որ չընդարկոծվին[21] ։

27 Եւ (երբոր) բերին նորանց՝ կանգնացուին տիվանի առաջին . քահանայապետն հարցուց նորանց ,

28 Եւ ասաց . Ձեզ որ պատուիրելով պատուիրեցինք ձեզ՝ որ չըստվորցնէք էն անունովը[22] . և հիմիկ՝ ահա Երուսաղէմըն լցրիք ձեր ուսմունքովդ , և կամենումէք էն մարդոյ արունըն[23] մեզ վերայ բերել[24] ։

29 Պատասխան տուաւ Պետրոսն և առաքեալներն , և ասացին . Աստուծոյ պէտք է աւելի հնազանդվիլ՝ քան մարդկանց[25] ։

30 Ա՛եր հարանց Աստուածն յարոյց էն Յիսուսին[26] որ դուք փայտից կախած սպանեցիք[27] ։

31 Աստուած նորան[28] Առաջնորդ[29] և փրկիչ բարձրացրուց իրան աջովը[30] որ Իսրայէլին ապաշխարութիւն տայ և մեղաց թողութիւն[31] ։

32 Եւ մենք ենք նորա վկաներ էս խօսքերիս համար[32] , և Ա՛ուրբ Հոգին՝ որ Աստուած իրան հնազանդ լինողներին տուաւ նորան[33] ։

33 Եւ նորանք երբոր լսեցին , բարկանումէին . և մտածումէին , որ նորանց սպանեն[34] ։

31 Ա՛ին փարիսեցի վերկացաւ տիվանի միջումն , որ նորա անունն Գամաղիէլ էր[35] . օրէնք սովորցնող՝ ամէն ժողովրդի առաջին պատուական . հրամայեց տուաւ որ էն մարդկանց մինչիչ դուրս տանեն ,

35 Եւ նորանց ասաց . Իսրայէլացի մարդիկ՝ ձեզ վերայ նայեցէք էս մարդկանցս համար , թէ ի՞նչ պէտք է անել ։

(21) Պաւլ . բա . 26 ։ (22) Գործ . դ . 18 ։ (23) Պաւլ . բգ . 35 ։ բէ . 25 ։ (24) Գործ . բ . 23 . 36 ։ գ . 15 ։ է . 52 ։ (25) Գործ . դ . 19 ։ (26) Գործ . գ . 13 . 15 ։ իբ . 14 ։ (27) Գործ . ժ . 39 ։ ժգ . 29 ։ Գազ . գ . 13 ։ ա Պետր . բ . 24 ։ (28) Գործ . բ . 33 . 36 ։ Եփես . ա . 9 ։ Հբր . բ . 10 ։ ժբ . 2 ։ (29) Գործ . գ . 15 ։ (30) Պաւլ . ա . 21 ։ (31) Ղուկ . իդ . 47 ։ Գործ . գ . 26 ։ ժգ . 38 ։ Հփես . ա . 7 ։ Կող . ա . 14 ։ (32) Հովհ . ժե . 26 , 27 ։ (33) Գործ . բ . 4 ։ ժ . 44 ։ (34) Գործ . բ . 37 ։ է . 54 ։ (35) Գործ . իբ . 3 ։

Digitized by Google

36 Յառաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ Թևդաս՝ ասել զանձինէ, թէ իցէ ոմն, յոր անկան արք թուով իբրև չորեքհարիւր. որ սպանաւ՝ և ամենեքեան՝ որ միաբան էին ընդ նմա, քակտեցան՝ և եղեն յոչինչ։

37 Յետ նորա յարեաւ Յուդա Գաղիլեացի՝ յաւուրս աշխարհագրին. և ապստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի իւր. և նա կորեաւ՝ և ամենեքեան որ նմայն հաւանեալ էին, ցրուեցան։

38 Եւ զարդիա ասեմ ձեզ. Ի բաց կացէք յարանցդ յայդցանէ՝ և թո՛ղ տուք դոցա. զի թէ ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործդ, քակտեսցի.

39 Ա՛պա թէ յԱստուծոյ է՝ ո՛չ կարէք քակտել զդոսա. գուցէ և աստուածամարտք գտանիցիք։

40 Հաւանեցան նմա. և կոչեցեալ զառաքեալսն՝ գան հարին, և պատուիրեցին՝ մի՛ ևս խօսել յանուն Յիսուսի. և արձակեցին ըղձնոսա։

41 Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան Տեառն արժանի եղեն անարգելոյ։

42 Եւ զամենայն օր ի տաճարին և առանձին ո՛չ դադարէին ուսուցանել և աւետարանել զՅիսուս Քրիստոս։

36 *Նա օրերիցս առաջ Թևդասն վերկացաւ՝ իբրեն համար ասելով՝ թէ ինքն մին մեծ բան է. որ չորս հարիւրի չափ մարդիք նորա եռեւէն ընկան. որ (ինքն) սպանվեցաւ՝ և ամէնքն էլ՝ որ նորա հետ միաբանված էին, քանդվեցան՝ և ոչինչ էլան։

37 Նրանից ետև Գալիլեացի Յուդան վերկացաւ աշխարհագրի օրերումն. և շատ ժողովուրդ ապստամբացուց իրան հետ. նա էլ կորաւ՝ և (էն) ամէնքն էլ՝ որ նորան հաւանել էին՝ ցրվեցան։

38 Եւ հիմիկ ասումեմ ձեզ. Ձեռի կացէք էդ մարդկանցից՝ և թողէք դորանց. պատճառն որ՝ եթէ էդ խորհուրդդ կամ էդ գործդ մարդկանցից է՝ կըքանդվի[36].

39 Այլ թէ որ Աստուածոնից է՝ չէք կարող քանդել դորանց[37]. չըլինի որ Աստուծոյ դէմ կռիւ ասնող էլ գտնըվիք[38]։

40 Հաւան կացան նորան. և առաքեալներին կանչեցին[39], ծեծեցին, և պատուէր տուին՝ որ էլ չըխօսեն Յիսուսի անունովն. և արձակեցին նորանց[40]։

41 Եւ նորանք ուրախանալով գնացին տիվանի երեսից. ինչու որ՝ արժանի էլան Տէրի անունին համար անարգվելու[41]։

42 Եւ ամէն օր չէին դադարում[42] տաճարումն և տներումն սովորցնել՝ և Յիսուսի Քրիստոսի համար աւետարանել[43]։

* Երբորդ Մ նախ քան դհասարակ Թուականն Քրիստոսի։ (6) Նոյ. իա. 30։ Նոյ. ը. 10։ Ասպր. իե. 13։ (37) Նոյ. իա. 15։ ա Կորնթ. ա. 25։ (38) Ասպր. է. 51։ Բ. 5։ իգ. 9։ (39) Ասպր. գ. 18։ (40) Ասպր. ժ. 17։ իգ. 34։ Ասպր. ժգ. 9։ (41) Ասպր. ե. 12։ Հռով. ե. 3։ ը Կորնթ. ժբ. 10։ Փիլիպ. ա. 29։ Նբր. ժ. 34։ (հա. ա. 2։ ա Պետր. դ. 13. 16։ (42) Ասպր. գ. 20. 29։ (43) Ասպր. բ. 46։

Digitized by Google

ԳԼ · Ջ

1 Բաղնեաներին հանձոյ չէ երևումն որ Ն՚ասուածոյ խօսքն թողուն՝ և ազգականերին համար հոգս տանին , 3 Ն՚երհամար եօթըն մարդիք կընտրուին՝ որ նորանք սարկաւագութեան պաշտօնն անեն . 5 Որ նորանց մինն Ստեփաննոս էր՝ Սուրբ Հոգով և հաւատքով լցված մին մարդ : 12 Ն՚որա հետ վեճաբանութիւն անողներն կը բռնեն նորան , 13 Ն՚ե սուրբ տեղին և օրէնքին դէմ՝ հայհոյութիւն արաւ ըսելով՝ նորա վերայ առած վկայութիւն կանեն :

1 Ն՚ե յաւուրսն յայնոսիկ՝ ի բազմանալ աշակերտացն , եղև տրո-
ւունջ Հունաց առ Հ՚ebրայեցիսն . զի արհամարհեալ լինէին ի պաշտա-
մանն հանապազորդ այրիք նոցա :

2 Կոչեցին երկոտասանքն զբազ-
մութիւն աշակերտացն՝ և ասեն . Ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն Ն՚ասուծոյ՝ և պաշտել զսեղանս :

3 Ն՚ընտրեցէք՝ եղբարք , վկայ-
եալս ի ձէնջ արս եօթն , (լիս Հոգւով Սրբով և իմաստութեամբ ,) զոր կացուսցուք ի վերայ պիտո-
յիցս այսոցիկ :

4 Ե՚ւ մեք աղօթից և պաշտա-
մանն և բանին հպատակ լիցուք :

5 Ե՚ւ հաճոյ թուեցաւ բանն ա-
ռաջի ամենայն բազմութեանն . և ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հա-
ւատով և Հոգւով Սրբով , և զՓիլիպպոս և զՊրոքորոն և զՆի-
կանովրա և զՏիմոնէա և զՊարմե-
նա , և զՆիկողայոս՝ զեկն Հ՚ան-
տիոքացի :

6 Զորս կացուցին առաջի առա-
քելոցն . և աղօթս արարեալ եդին ի վերայ նոցա զձեռս :

7 Ե՚ւ բանն Ն՚ասուծոյ աճէր . և բազմանայր թիւ աշակերտացն

1 Ն՚ե էն օրերումն՝ երբոր ա-
շակերտներն շատացան[1] , Հունաց տրտունջ էլաւ Եբրայեցոց դէմ[2] . ինչու որ՝ նորանց որբևէրի կանայ-
քըն ամէն օրվան պաշտամունքի մէջն անարգվումէին[3] :

2 Տասներկուքն կանչեցին աշա-
կերտներուն բազմութիւնըն և ասա-
ցին . Ո՚չ հաճոյ չէ՝ որ Ն՚ասուա-
ծոյ խօսքըն թողնք՝ և սեղանին ծառայենք[4] :

3 Եղբարք՝ եօթըն մարդ ընտ-
րեցէք , որ ձեզանից բարի վկայու-
թիւն ունին , և Սուրբ Հոգով և իմաստութենով լցված են , որ նո-
րանց էս պէտքական բաներիս վե-
րայ կանգնացնենք[5] :

4 Ե՚ւ մենք աղօթքին և բանի և պաշտամունքին հետևենք[6] :

5 Ե՚ւ էն խօսքն ամէն բազմու-
թեան առաջին հաւանելի երևե-
ցաւ . և ընտրեցին Ստեփաննոսին՝ որ Սուրբ Հոգով և հաւատքով լցված մարդ էր[7] , և Փիլիպպոսին և Պրօխորոնին և Նիկանորային և Տիմոնային և Պարմենային[8] , և Ն՚ի-
տիոքացի նոր դարձած Նիկողայո-
սին[9] :

6 Նորանց կանգնացրին առաք-
եալների առաջին . և աղօթք ա-
նելով[10] ձեռք դրին նորանց վերայ[11] :

7 Ե՚ւ Ն՚ասուծոյ խօսքըն մեծա-
նում՝ և աշակերտների համարն

(1 Գործ · բ · 41 ; դ · 4 ; ե · 14 : Ալայր · 7 : (2) Գործ · ք · 29 : ժա · 20 : (3) Գործ · դ · 35 : (4) Ղկ · ժբ · 17 : (5) բ Օրին · ա · 13 : Գործ · ա · 21 : ժգ · 2 : ա Տիմ · գ · 7 : (6) Գործ · բ · 42 : (7) Գործ · ժա · 24 : (8) Գործ · ը · 5 · 26 : ի · 8 : (9) Հայտ · բ · 6 · 15 : (10) Գործ · ա · 24 : (11) Գործ · ը · 17 : ք · 17 : ժգ · 3 : ա Տիմ · դ · 14 ; ե · 22 ; բ Տիմ · ա · 6 :

Digitized by Google

Յոյժ յԵրուսաղէմ , և բազում ժողովք ՚ի քահանայիցն անսային հաւատոցն :

8 Ստեփաննոս , այր լի շնորհօք և զօրութեամբ , առնէր արուեստս և նշանս մեծամեծս ՚ի ժողովրդեանն :

9 Յարեան ոմանք ՚ի ժողովրդենէն , որ կոչէր Լիբեացւոց , և Կիւրենացւոց՝ և Ալեքսանդրացւոց՝ և որ ՚ի Կիւղիկեցւոց՝ և Ասիայ , վիճել ընդ Ստեփաննոսի :

10 Եւ ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն և զՀոգւոյն , որով խօսէր :

11 Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ասել , թէ Լուաք զդորա խօսել բանս հայհոյութեան ՚ի Մովսէս և յԱստուած :

12 Եւ խռովեցին զժողովուրդն , և զերիցունս և զդպիրսն . և հասեալ ՚ի վերայ , յափշտակեցին զնա , և ածին յատեան :

13 Եւ կացուցին վկայս ստուս՝ որ ասէին . Այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ՝ և զօրինացն :

14 Լուաք ՚ի դմանէ , զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի՝ նա քակեսցէ զտեղիս զայս , և փոխեսցէ զօրէնսն՝ զոր եհաս մեզ Մովսէս :

15 Եւ հայեցեալ ՚ի նա ամենեքեան՝ որ նստէին յատենին , տեսին զերեսս նորա իբրև զերեսս հրեշտակի :

ասելի շատանալովք երուսաղէմացիքն[12] , և քահանայիցն շատ բազմութիւն լսազանդվուածին հաւատքին[13] :

8 Ստեփաննոս մարդն՝ շնորհքով և զօրութենով լցեալ , մեծ մեծ նշաններ և հրաշքներ էր անում ժողովրդի մէջն :

9 Ի՛ն քանի մարդիք՝ էն ժողովարանից՝ որ Լիբէացոց էր կոչվում , և Կիւրենացոց և Նէքսանդրացոց՝ և նորանց՝ որ Կիւղիկիայից և Ասիայից էին , վերկացան , որ Ստեփաննոսի հետ վիճաբանութիւն անեն :

10 Եւ չէին կարում հակառակ կենալ էն իմաստութեանն՝ և էն հոգւոյն , որ նորանով խօսում նա[14] :

11 Ն՛ն ժամանակն մին քանի մարդկանց սովորցրին՝ որ նորանց ասեն , թէ Ի՛նք լսեցինք դորանից՝ որ հայհոյութեան բաներ էր խօսում՝ Մօսէսին և Աստուծոյն հակառակ[15] ,

12 Եւ ժողովրդին և էրէցներին և կարդացողներին խռովացրին . և վերայ հասին յափշտակեցին նորան՝ և տարան ատեանն :

13 Եւ սուտ վկաներ կանգնացրին՝ որ ասում էին . Այս մարդս չէ դադարում սուրբ տեղոյն՝ և օրէնքին դէմ հայհոյութեան բաներ խօսելուցն :

14 Ի՛նք լսեցինք դորանից՝ որ ասում է[16] , թէ Յիսուս Նազովրեցին՝ նա էս տեղը կը քանդէ , և էն օրէնքը՝ որ Մովսէս տուաւ մեզ , կը փոխէ[17] :

15 Եւ ամէնքն՝ որ էն ատեանում նստած էին , մտիկ տուին նորան , և նորա երեսը հրեշտակի երեսի նման տեսին :

(12) Գործ . ժբ . 24 : ժբ . 20 : Կող . ա . 6 : (13) Ելհ . ժբ . 32 : (14) Ղուկ . իա . 15 : Գործ . է . 30 : Նէ . գ . 12 : Լուսա . ծգ . 17 : (15) գ Թագ . ա . 10 . 13 : Մատթ . իգ . 59 , 60 : (16) Գործ . իե . 8 : (17) Գան . բ . 26 .

Digitized by Google

ԳԼ · Ւ

1 Աստիճանների հրաման կըտայ Ռահանայապետն որ իրան հայհոյութիւն անելուցն սուտ վկայութեան համար պատասխան տայ . 2 Նա եւ ցոյց կըտայ թէ Աբրահամ ինչպէս աջող մարգարէնով Աստուծոյ երկրպագութիւն արաւ , և թէ Աստուած Հայրեցն ինչպէս ընտրեց , 30 Մօսէսի ծնվելուցն և խորանի և տաճարի չինվելուցն առաջ . 37 Ինչ Մօսես ինքն էլ Իսրհաէլի համար վկայեց , 44 Մինչև թէ ամէն դրսի արարողութիւններն երկնքի օրինակի համար մենակ Աստուած պատուէր տըվվաւ մին քիչ ժամանակի համար . 51 Նորանց ապստամբութիւնն երեսներնին կըթակէ և իրանց հարքն որ մարգարէներին հալածնցին՝ որ նորանք առաջուց պատմեցին էն արդարի գալստի համար , որ նորանք մատնիչ և սպանեցին նորան՝ էս ամէնին համար կըտառապ նորանք : 54 Սրահամար ամէն Հրեաներն նորան կը քարկոծեն , որ են էլ իրան Հոգին Ս[իոնի] կըյանձնէ և ամէն սրտանէն նորանց համար աղօթք կանէ :

1 Ասէ քահանայապետն՝ Թէ Արդարև այդ այդպէս իցէ :

2 Եւ նա ասէ . Արք եղբարք և հարք՝ լուարուք ինձ . Աստուած փառաց երևեցաւ Հօր մերում Աբրահամու մինչդեռ ի Միջագետս էր , մինչչև բնակեցաւ ի Խառան . և ասէ ցնա .

3 Ել յերկրէ քումմէ և յազգէ քումմէ , և եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ :

4 Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդէացւոց բնակեցաւ ի Խառան . և անտի յետ մեռանելոյ Հօր նորա փոխեաց , և պանդխտեցոյց զնա յերկրիս յայսմիկ , յորում դուք այժմ բնակեալ էք :

5 Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա , և ոչ քայլ մի ոտին . և խոստացաւ տալ նմա ըզսա ի բնակութիւն , և զաւակի նորա յետ նորա , մինչ ոչ գոյր նորա որդի :

6 Խօսեցաւ Աստուած այսպէս . Թէ Եղիցի զաւակ նորա պանդխտական յօտար երկրի . և ծառայեցուսցեն

1 Ն[ե] քահանայապետն ասաց . Թէ Հիտակ որ էդ բանդ էդպէս է ?

2 Եւ նա ասաց , Ա՛րդիք եղբարք և հա՛րք՝ ինձ լսեցէք . Փառաց Աստուածն երևեցաւ մեր Հայր Աբրահամին՝ դեռ որ Միջագետքումն էր , դեռ որ նորան Խառանի մէջն չէր բնակացրել . և ասաց նորան[1] .

3 Ա՛ուրս եկ քո երկրիցն և քո ազգիցն , և եկ էն երկիրն՝ որ ես ցոյց կրտամ քեզ[2] :

4 Յն ժամանակին Քաղդեացոց երկրիցն դուրս եկաւ՝ Խառանումն բնակվեցաւ[3] . և նորա Հօր մեռնելուցն ետև՝ նորան էնտեղիցն փոխեց , և պանդխտացրուց էս երկրումս , որ սորանում Հիմիկ դուք բնակված էք :

5 Եւ սորանում ժառանգութիւն չըտուաւ նորան , և ոչ (էլ) մին ոտի քայլի չափ (տեղ) . և խոստացաւ՝ որ էս տեղըս բնակութիւն ասյ նորան[4] . և նորանից ետև՝ նորա զաւակին , դեռ որ նա որդի չուներ :

6 Աստուած էսպէս խօսեց . Թէ Նորա զաւակն պանդխտի կըլինի օտար երկրի մէջ[5] . և ծառայու-

(1) Գոյն . իբ . 1 : (2) Նննդ . ժբ . 1 : (3) Նննդ . ժա . 31 : ժբ . 4 , 5 : (4) Նրբնդ . ժբ . 7 : ժգ . 15 : ժե . 8 . 18 : ժզ . 8 : իգ . 8 : (5) Նննդ . ժե . 13 . 16 :

Digitized by Google

զնա՝ և չարչարեցան ամն չորեք-
հարիւր :

7 Եւ զազգն՝ որում ծառայեսցեն՝ դատեցայց ես , ասէ Աստուած . և յետ այսորիկ ելցեն՝ և պաշտեսցեն զիս ՚ի տեղւոջս յայսմիկ :

8 Եւ ետ նմա ուխտ թլփատութեան . և ապա ծնաւ զԻսահակ , և թլփատեաց զնա յաւուր ութերորդի . և Իսահակ զՅակովբ . և Յակովբ զերկոտասան նահապետսն :

9 Եւ նահապետքն նախանձեալ ընդ Յովսեփայ՝ վաճառեցին յԵգիպտոս . և էր Աստուած ընդ նմա :

10 Եւ փրկեաց զնա յամենայն նեղութեանց նորա . և ետ նմա շնորհս և իմաստութիւն առաջի փարաւոնի արքային Եգիպտացւոց . և կացոյց զնա իշխան Եգիպտացւոցն՝ և ամենայն տան նորա :

11 Եւ եկն սով յամենայն երկիրն Եգիպտոսի , և ՚ի Քանան նեղութիւն մեծ . և ոչ գտանէին կերակուր հարքն մեր :

12 Եւ լուեալ Յակովբայ , թէ գտանի կերակուր յԵգիպտոս՝ առաքեաց զՀարսն մեր յառաջագոյն :

13 Եւ յերկրորդումն ետ ծանօթս Յովսէփ եղբարց իւրոց . և յայտնի եղև ազգն նորա փարաւոնի :

14 Առաքեաց Յովսէփ՝ և կոչեաց զՅակովբ զՀայր իւր , և զամենայն ազգատոհմն՝ ոգիս եօթանասուն և հինգ :

15 Եւ իջին Յակովբ յԵգիպտոս , և վախճանեցաւ նա և հարքն մեր :

16 Եւ փոխեցան յՍիւքեմ , և եդին զգերեզմանսն՝ զոր գնեաց Աբրահամ արծաթով ՚ի որդւոցն Եմմորայ որդւոյ Սիւքեմայ :

17 Եւ որչափ մերձեցաւ ժամանակ խոստմանն՝ զոր երդուաւ Աստուած Աբրահամու , աճեցաւ ազգն մեր և բազմացաւ յԵգիպտոս ,

18 մինչև յարոյց թագաւոր նոր յԵգիպտոս՝ որ ոչ ծանեաւ զՅովսէփ :

19 Նա խորհրդական եղև ազգիս մերոյ , և չարչարեաց զհարսն մեր՝ դնել զմանկունս նոցա արտաքս՝ մինչև կեցուցանել զկենդանիսն :

20 Յայնմ ժամանակի ծնաւ Մովսէս , և էր հաճոյ Աստուծոյ . և սնաւ ամիսս երիս ՚ի տան հօրն :

21 Եւ յորժամ արտաքսեցաւ , առ զնա դուստր փարաւոնի՝ և սնոյց զնա իբրև զորդի իւր :

22 Եւ ուսոյց Մովսէս զամենայն իմաստութիւն Եգիպտացւոց . և էր զօրաւոր ՚ի բանս և ՚ի գործս :

23 Եւ յորժամ լցան նմա քառասուն ամք , եկն ՚ի սիրտ նորա՝ տեսանել զեղբարսն իւր զորդիսն Իսրայէլի :

24 Եւ տեսեալ զոմն ՚ի նոցանէ՝ որ կրէր զանիրաւութիւն , պաշտպանեաց և վրէժ հատոյց ճնշելոյն՝ զարկեալ զԵգիպտացին :

25 Եւ կարծէր զի գիտասցեն եղբարքն՝ թէ Աստուած տայ նոցա զփրկութիւն ձեռամբ նորա . և նոքա ոչ գիտացին :

26 Եւ յաջորդումն աւուր երևեցաւ նոցա՝ և կռուեցուցանէր զնոսա ՚ի խաղաղութիւն՝ և ասէր . Այրեր , եղբարք էք դուք , ընդէ՞ր զարհամարհէք զմիմեանս :

27 Եւ որ զարհամարհէր զընկերն՝ հրեցին զնա՝ և ասեն . Ո՞վ կարգեաց զքեզ իշխան և դատաւոր ՚ի վերայ մեր :

28 Միթէ սպանանել դու զիս կամիս , որպէս սպան զԵգիպտացին երէկ :

29 Եւ լուեալ զբանդ Մովսէսի՝ փախեաւ Մովսէս յաւուրսն յայնոսիկ՝ և եղև պանդուխտ յերկրին Մադիամ , ուր ծնաւ որդիս երկուս :

30 Եւ յորժամ լցան ամք քառասուն , երևեցաւ նմա հրեշտակ Տեառն յանապատի լերինն Սինայ ՚ի բոցի հրոյ մորենւոյ :

31 Եւ տեսեալ Մովսէսի՝ զարհուրեցաւ ՚ի տեսլեանն . և մերձենալ նմա՝ լսել ձայնի Տեառն՝ որ ասէ .

5 Եւ Պետրոն բանտի մէջումն պահված էր . և նորա համար անդադար աղօթք էր լինում եկեղեցուն դէպի Աստուած ։

6 Երբոր Հերովդէս կամեցաւ՝ որ նորան դուրս բերէ . էն գիշերումն Պետրոս քնած էր երկու զինուորների մէջ՝ երկու շղթայով (պընճկով) կապած . և պահապաններըն դուռն առաջին բանտըն պահում էին ։

7 Եւ ահա Տէրի հրեշտակն եկաւ կանգնեց նորա վերայ՝ , և տան մէջն լոյս ծագեց , և խթեց Պետրոսի կողերին՝ և նորան զարթնացրուց՝ և ասաց . Արի կաց շուտով . և շղթաներն (պընճկներն) վեր ընկան նորա ձեռներից ։

8 Եւ հրեշտակն ասաց նորան . Հագի գօտիկըդ կապիր՝ և հագած թաւիներըդ քցիր ոտներդ , և էնպէս առաւ . և ասաց նորան . Հետևիր քեզ վերայ քցիր՝ և իմ ետևէս ել ։

9 Եւ դուրս եկաւ գնումէր նորա ետևէն , և չէր գիտում՝ թէ ճշմարիտ է էն բանն՝ որ հրեշտակից էլաւ . ինչու որ կարծումէր՝ թէ երազ է տեսնում ։

10 Եւ երբոր նորանք անցկացան առաջին պահապաններուն և երկրորդ պահապաններուն , եկին մինչև երկաթի դուռն՝ որ դէպի քաղաքն էր տանում . որ ինքն իրանից բաց ելաւ նորանց համար , և

(1) Կր · վց · 18 , 15 · խդ · 15 ։ (2) Ծոմ · բ · 18 ։ (3) Գործ · 4 · 19 ։ (5) Սաղ · ղգ · 1 ։ (6) Եզեկ · ժ · 8 · 17 · ժբ · 5 ։

Digitized by Google

նէ հրեշտակն :

11 Եւ Պետրոս իբրև ՚ի միտս եղև, ասէ. Արդ գիտեմ ճշմարիտ, եթէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր. և փրկեաց զիս ՚ի ձեռաց Հերովդի, և յամենայն ակնկալութենէ ժողովրդեանն Հրէից :

12 Եւ լեալ ՚ի միտս՝ եկն ՚ի տուն Մարեմու մօր Յովհաննու, որ կոչեցաւն Մարկոս. ուր էին բազումք ժողովեալ՝ և աղօթս առնէին :

13 Եւ ՚ի բաղխել զդուրս դրանն՝ մատեաւ աղախին մի՝ ունկն դնէր, որում անունն էր Հռոդէ :

14 Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի՝ ՚ի խնդալոյն ոչ եբաց զդուռն. ՚ի ներքս ընթացեալ պատմեաց, թէ Պետրոս առ դրանն կայ :

15 Եւ նոքա ասեն ցնա՝ Մոլիս. և նա ևս պնդէր՝ թէ այսպէս է. և նոքա ասէին՝ Հրեշտակ նորա իցէ :

16 Եւ Պետրոս առէպ բաղխէր. իբրև բացին, տեսին զնա՝ և զարմացան :

17 Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել. և պատմեաց՝ որպէս Տէր եհան զնա ՚ի բանտէն. և ասէ. Պատմեջիք Յակովբայ և եղբարց զայս. և ել գնաց յայլ տեղի :

18 Այլ իբրև այգ եղև՝ էր խռովութիւն մեծ ՚ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղև :

19 Իսկ Հերովդէս իբրև խնդրեմտին մին փողոց անցկացան, և շուտով հրեշտակն նորանից հեռացաւ[7] :

11 Եւ Պետրոսի միտքն երբեմն իրան վերայ եկաւ, ասաց. Ի՛սկ շիտակ իմացայ, որ Տէրն իրան հրեշտակը ուղարկեց[8] և փրկեց ինձ Հերովդէսի ձեռքիցն, և էն ամէն բաներիցն՝ որ Հրէաների ժողովուրդն սպասումէր[9] :

12 Եւ երբեմն միտք արաւ՝ եկաւ Յոհաննէսի մայր Մարեմայ[10] տունն, որ Մարկոս կոչվեցաւ[11]. որ էնտեղ շատեր կային ժողովված՝ և աղօթք էին անում[12] :

13 Եւ դուռն որ թակեց, մին աղախին (պարսաւ)՝ որ նորա անունն Հոդէ էր՝ ժնա եկաւ, որ ականջ դնէ :

14 Եւ Պետրոսի ձայնն որ ճանաչեց՝ ուրախութենից դուռն բաց չարաւ. ներս վազեց և պատմեց, թէ Պետրոսն դռանն կանգնած է :

15 Որոնք ասացին նորան՝ Խմորվել ես. և նա էլ աւելի տատումէր՝ թէ էսպէս է. և նորանք ասումէին՝ թէ Որա հրեշտակն կըլինի[13] :

16 Եւ Պետրոսն շատ շատ դուռն թակումէր. երբեմն բաց արին, տեսին նորան՝ և զարմացան :

17 Եւ նա ձեռով ցոյց էր տալիս նորանց որ լուռ կենան[14]. և պատմեց՝ թէ ինչպես Տէրն բանտից իրան հանեց. և ասաց, Նա բերնս պատմեցէք Յակոբին և եղբայրներին. և դուրս եկաւ գնաց ուրիշ տեղ :

18 Եւ երբեմն առաւօտ էլաւ՝ մեծ խռովութիւն էր էն զինուորների մէջն, (թէ) Պետրոսն ի՞նչ էլաւ :

19 Հայց Հերովդէսն երբեմն նորան

(7) Գործ. ժգ. 26 : (8) Ասմ. լգ. 7 : Դան. գ. 28 : զ. 22 : Եբր. ա. 14 : (9) Ճոբ. ե. 19 : Ասմ. լգ. 18, 19 : լգ. 23 : խա. 2 : ղե. 10 : բ Պետր. ա. 19 : բ Պետր. բ. 9 : (10) Գործ. ժե. 37 : (11) Գործ. գ. 23 : (12) Ա՚ր. 5 : (13) Ծննդ. խը. 10 : Մատթ. ժը. 10 : (14) Գործ. ժգ. 16 : ժը. 33 : ըա. 30

Digitized by Google

հաց ջնա՝ և ոչ եգիտ , հարցեալ զպահապանն՝ հրամայեաց սպանանել . և իջեալ ՚ի Երեսատանէ ՚ի կեսարիա՝ և անդ լինէր :

20 Եւ էր Երովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդոնիացիս . և նոքա առ հասարակ եկին առ նա . և ՚ի բանի արարեալ ըզ Ղազառոս սենեկապետն արքայի , խնդրէին զհաշտութիւն վասն կերակրելոյ երկիրն նոցա յարքունեաւտ :

21 Յաւուր միում յերևելոջ Երեվդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւորութեան՝ և նստէր յատենի , և խօսէր ընդ նոսա հրապարակաւ :

22 Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ Աստուծոյ բառբառ է , և ոչ մարդոյ :

23 Եւ անդէն եհար զնա հրեշտակ Տեառն , փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ . և եղեալ որդնեալ՝ ապաակեցաւ :

24 Եւ բանն Աստուծոյ աճէր և բազմանայր :

25 Բառնաբաս և Սողոս դարձան յԵրուսաղեմ՝ իբրև կատարեցին զպաշաւնն . առեալ էր ընդ իւրեանս և զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս :

ուղեց՝ և չըգտաւ , պահապանեբին հարցուց՝ և հրաման տուաւ՝ որ սպանեն նորանց . և Երեսատանէն էջ վեր եկաւ կեսարիա՝ և հնտեղ էր լինուտ :

20 Եւ Երոդէսն շատ բարկացած էր Տիւրացոց և Սիդոնացոց վերայ . և նորանք ամենքն միաբան եկին նորա մօտ . և Ղազաստոսին թագաւորի ներսի տան վերակացուին հաւանացնելով՝ խաղաղութիւն էին խնդրուտ . ինչու որ՝ նորանց երկիրն՝ թագաւորի երկրին էր կերակրվուտ[15] :

21 Մ՚ին հանդիսաւոր օր՝ Երոդէսն թագաւորական շոր էր հագել և տիվանուտն նստած էր , և ամենի առաջին խօսուտը նորանց հետ :

22 Եւ ամբոխն (խալքն) աղաղակուտը՝ թէ Աստուծոյ ձայն է , և ոչ մարդոյ (ձայն) :

23 Եւ շուտով Տէրի հրեշտակն զարկեց նորան[16] , ինչու որ՝ Աստուծոյն փառք չըտուաւ . և որդունքն ներով լցվաւ՝ և սատակվեցաւ[17] :

24 Եւ Աստուծոյ խօսքն աճտուտը և շատանուտ[18] :

25 Բառնաբասն և Սողոն երբոր պաշտամունքն կատարեցին՝ Երուսաղէմիցն չետ դարձան . և Յոհաննէսին էլ[19] իրանց հետ էին առել[20] որ Մարկոս էր կոչված :

ԳԼ . ԺԴ

1 Սողոն և Բառնաբասն Երեանուներին գնալոյ կըլուկվին : 7 Սերգէ Պօղոսէ և Նլիմաս կախարդէ պատմուբինն : 14 Պօղոսն Պիսիդիայէ Ընտիոքումն կըքարոզէ Հիսուսին թէ Քրիստոսն է : 43 Երեանուներն հաւատքի կըգան . 45 Բայց Երեանուներ նորանց խօսքերին հակառակ կինալով կըհայհոյեն , 46 Սրահամար նորանք եվ հեթանոսներին կըդըներն : 48 Դեպի յաւիտենական կեանքն կարգվածներն կըհաւատան :

1 Եղեւ ոմանք Ընտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք և վարդա-

1 Ընտիոքումն՝ հնտեղ լինող եկեղեցոյ միջումն կային մին քանի

(15) գ Թագ . է . 9 . 11 : Նովմ . թե . 17 : (16) ա Թագ . թե . 38 : բ Թագ . իգ . 17 : (17) Մակ . ջմե . 1 : (18) Նաում . ծե . 11 : Գործ . գ . 7 : ժբ . 20 : Նոլ . ա : 6 : Գործ . ժա . 26 , 30 : (19) Ելբ . 12 : (20) Գործ . ժգ . 5 . 13 : գմ . 37 :

Digitized by Google

պետք . Յառնաբաս՝ և Շմաւոնն կոչեցեալն Նիւգեր , և Պուղիոս Կիւրենացի , և Մանայեն դայեակորդի Հերովդի չորրորդապետի , և Սողոս :

2 Մինչդեռ ի պաշտամանն Տեառն կային՝ և պահէին , ասէ Հոգին Սուրբ . Որոշեցէք ինձ զՅառնաբաս և զՍողոս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զնոսա :

3 Յայնժամ պահեալ՝ և աղօթեալ արարեալ՝ եդին ձեռն ի վերայ նոցա՝ և արձակեցին :

4 Եւ նոքա առաքեալք ի Հոգւոյն Սրբոյ՝ իջին ի Սելևկիա , և անտի նաւեցին ի Կիպրոս :

5 Եւ հասեալ ի Սալամինա՝ պատմէին զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէից . ունէին և զՅովհաննէս պաշտօնեայ :

6 Շրջեալ ընդ ամենայն կղզին մինչև ի Պափոս , գտին անդ զայր ոմն մոգ սուտ մարգարէ՝ Հրէայ , որում անուն էր Յարէհյեսու :

7 Որ էր ընդ փոխանակի բռնշխին Սերգեայ Պօղոսի՝ առն իմաստնոյ . նորա աղաչեալ զՅառնաբաս և զՍողոս խնդրէր լսել զբանն Աստուծոյ .

8 Ընդդէմ եկաց նոցա Եղիմաս մոգ՝ քանզի այսպէս թարգմանի անունն նորա . խնդրէր շրջել զփոխանակ բռնշխին ի հաւատոց :

9 Իսկ Սողոս , որ և Պօղոսն՝ լցեալ Հոգւով Սրբով հայեցաւ ի նա ,

մարգարէներ և վարդապետներ[1] . Յառնաբասն՝ և Նիւգեր ասեցին Շմաւօնն[2] , և Պուղիոս Կիւրենացին , և Հերովդէս չորրորդապետ ծծմոր որդի Մանայինն , և Սողոսն[3] :

2 Մինչ քանի որ Տէրն պաշտօնի մէջն կային՝ և պաս էին ասաց Հոգին Սուրբ . Ինձ հաստ՝ զՍողոս և զՅառնաբասին և Մանայինն՝ էն գործին համար[4] , որ ես զնոսա կանչել եմ[5] :

3 Ին ժամանակին պաս պահեցին՝ և աղօթք արին , նոցանց վերայ ձեռն դրին՝ և արձակեցին[6] :

4 Եւ նորանք Հոգւոյ Հոգուն ուղարկված՝ վէր եկին Սելևկիա , և էնտեղից նաւով գնացին Կիպրոս[7] :

5 Եւ Սողոսին որ հասին՝ Հրէաստուծոյ խօսքըն պատմելին Հրէաների ժողովարաններուն[8] . Յոհաննէսին էլ պաշտօնեայ ունէին[9] :

6 Մինչև եկին ամէն կղզուն (պոյսն) մինչև Պափոս , և էնտեղ մին կախարդ մարդ գտին՝ սուտ մարգարէ՝ Հրէայ (Քահոտ) , որ նորա անունն Յարէհյեսու էր[10] :

7 Որ փոխանակ բռնշխ Սերգիոս Պօղոսի իմաստուն մարդոյ հետ էր . նա Յառնաբասին և Սողոսին աղաչելով՝ խնդրեցին որ Հաստուծոյ խօսքըն լսէ :

8 Որոնց հակառակ կացաւ Եղիմաս կախարդն[11] . ինչու որ՝ էսպէս է թարգմանվում նորա անունն . ուզում էր փոխանակ բռնշխին հաւատքից փոխել :

9 Նայեց Սողոսն , որ էլ Պօղոս (է կոչվում)՝ Սուրբ Հոգով լցված մարկ տուաւ նորան[12] ,

(1) Գործ . ժա . 27 : ժգ . 26 : ժե . 35 : (2) Գործ . ժա . 22—26 : (3) Հովհ . ժգ . 21 : (4) Յհաւ . ը . 14 : Գործ . ք . 15 : խբ . 21 : Հռովհ . ա . 1 : Գաղ . ա . 15 : բ . 9 : (5) Մատթ . ք . 38 : Գործ . ժգ . 25 : Հռովհ . ժ . 15 : Եփես . գ . 7 , 8 : ա Տիմ . բ . 7 : բ Տիմ . ա . 11 : Նիբ . ե . 4 : (6) Գործ . գ . 6 : (7) Գործ . գ . 36 : (8) Ալյտ . 16 : (9) Գործ . ժգ . 25 : ժե , 37 : (10) Գործ . ը . 9 : (11) Նյ . 4 . 11 : բ Տիմ . գ . 8 : (12) Գործ . գ . 3 :

Digitized by Google

10 Եւ ասէ · Ո՛վ կին ամենայն նեն-
գութեամբ և խորամանկութեամբ՝
որդի Սատանայի՝ թշնամի ամենայն
արդարութեան , ոչ լռես ՚ի թիւր-
բելոց զճանապարհս Տեառն ղուղ-
ղես :

11 Եւ արդ՝ ահա ձեռն Տեառն
՚ի վերայ քո , և եղիցիս կոյր չտես-
անել զարեւ մինչև ՚ի ժամա-
նակ մի . և անդէն անկաւ ՚ի վե-
րայ նորա մէգ և խաւար , և շըրջ-
եալ խնդրէր առաջնորդս :

12 Այնժամ տեսեալ փոխանակի
բդեշխին զլուրն՝ որ եղեն , հաւա-
ատաց , զարմացեալ ընդ վարդապե-
տութիւնն Տեառն :

13 Եւ ամբարձեալ ՚ի Պափեայ
Պօղոսեանց՝ եկին ՚ի Պերգէ Պամ-
փիւլեայ . Յովհաննէս մնինեալ ՚ի
Նոյանէ՝ գաղձաւ յԵրուսաղէմ :

14 Եւ նոքա գնացեալ ՚ի Պերգ-
եայ՝ եկին ՚ի Պիսիդեայ . և
մտեալ ՚ի ժողովուրդն յաւուր շա-
բաթու՝ նստան :

15 Եւ յետ ընթեռնելոյ զօրէնսն և
զմարգարէս , առաքեցին առ նոսա
ժողովրդապետքն և ասեն . Ա՛րք
եղբարք՝ եթէ իցեն ՚ի ձեզ բան
մխիթարութեան առ ժողովուրդ՝
խօսեցարուք :

16 Յառն եկաց Պօղոս՝ շարժեաց
զձեռն և ասէ . Ա՛րք Իսրայէլա-
ցիք՝ և որք երկնչիք յԱստուծոյ՝
լուարուք :

17 Ազգիս ժողովրդեանս այս-
րիկ Իսրայէլի ընտրեաց զհարսն մեր .

10 Եւ ասաց · Ո՛վ դու՝ որ ա-
մէն խաբեբայութեամբ և խորա-
մանկութեամբ լցեալ ես , Սատա-
նայի որդի և ամէն արդարութեան
թշնամի . (էլ) չես դադարում Տէ-
րի ուղիղ ճանապարհները ծռե-
լուց[13] :

11 Եւ հիմիկ՝ ահա Տէրի ձեռք
քեզ վերայ (է)[14] , և կոյր կըլինիս՝
որ չըտեսնես արեգակը՝ մինչև մին
ժամանակ . և շուտով մէգ և
խաւար ընկաւ նորա վերայ , և
մանր էր գալիս ձեռք բռնող մար-
դիք էր ուզում :

12 Յն ժամանակն փոխանակ բը-
դեշխին երբոր տեսաւ էն բաները՝
որ էլան , հաւատաց , և Տէրի
վարդապետութեանն վերայ զարմա-
ցաւ :

13 Եւ Պօղոսն և (նորա) հետ լի-
նող մարդիքն Պափեայից դուրս
էլան՝ եկին Պամփիւլիայի Պերգէ
քաղաքն . (բայց) Յօհաննէս նո-
րանցից հեռացաւ՝ և յետ դարձաւ
Երուսաղէմ[15] :

14 Եւ նորանք Պերգեայից գը-
նացին՝ եկին Պիսիդիայի Անտիոք ,
և շաբաթի օրուանն ժողովարանին
մէջ մտին՝ նստեցին[16] :

15 Եւ օրէնքըն և մարգարէնե-
րըն կարդալուցն ետև , ժողովը-
դապետներն նորանց մօտ ուղարկե-
ցին և ասացին[17] . Ա՛րդիք եղբարք՝
թէ որ դուք էդ ժողովրդիդ հա-
մար մխիթարութեան խօսքեր ու-
նիք՝ խօսեցէք[18] :

16 Պօղոսն վերկացաւ՝ իրան ձե-
ռըն շարժեց և ասաց[19] . Ա՛վ Իս-
րայէլացի մարդիք , և դուք որ
Աստուածանից վախումիք՝ լսեցէք[20] :

17 Այս Իսրայէլացի ժողովրդիս
Աստուածն՝ մեր հարանցըն ընտ-

(13) Առաք . ժգ . 38 : Յովհ . ը . 44 : ա Յովհ . գ . 8 : (14) Նէ . բ . 3 : ա Գործ .
ե . 9 : (15) Գործ . սէ . 38 : (16) Գործ . ժգ . 13 : ժէ . 2 : ժը . 4 : (17) Ղեւ .
գ . 16 : Ելից . 27 : (18) Եբր . ժգ . 22 : (19) Գործ . ժը . 17 : (20) Ելից . 20 .
42 , 43 : Գործ . ժ . 35 :

Digitized by Google

և զժողովուրդն բարձրացոյց ՚ի պանդխտութեան յերկրին Եգիպտացւոց · և ՚ի բազուկ բարձր ե-հան զնոսա անտի :

18 Եւ իբրև քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանապատի :

19 Եւ քակեալ ազգս եօթն յերկրին ՚Քանանու՝ ժառանգեցոյց նոցա զերկիրն նոցա՝

20 իբրև ամս չորեքհարիւր և յիսուն · և յետ այսորիկ ետ նոցա դատաւորս մինչև ՚ի Սամուէլ մարգարէ :

21 Եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր , և ետ նոցա Ս՚ստուածՙ զՍաւուղ որդի Կիսեայ՝ այր յազգե Բենիամինի , ամս քառասուն :

22 Եւ իբրև փոխեաց զնա , յարոյց նոցա զԴաւիթ թագաւոր , ոբուամ և ասաց վկայութեամբ . ՚Իրի զԴաւիթ որդի Յեսսեայ այր ըստ սրտի իմում՝ որ արասցէ զամենայն զկամս իմ :

23 ՚Ի սորա զաւակէ Ս՚ստուածՙ ըստ աւետեացն յարոյց Իսրայէլի զփրկիչն Յիսուս :

24 Ի՚ստ յառաջագոյն քարոզութեան Յովհաննու , առաջի երեսաց մտի նորա մկրտութիւն ապաշխարութեան՝ ամենայն ժողովրդեան Իսրայէլի :

25 Եւ ժամանակ լնոյր Յովհաննու , ասէր՝ զոմ կարծէք զիս ոչ եմ , այլ ահա գայ յետ իմ , զոր չեմ արժան լուծանել զկօշիկս ոտից նորա :

26 Յովհաննէս ասէր՝ ես մկրտեմ զձեզ ջրով , յորում ոչ գիտէք զնա :

27 Նա է որ յետ իմ գայ , որ առաջի իմ եղեւ , զոր ես ոչ եմ արժան լուծանել զկօշիկս ոտից նորա :

28 Զայս ամենայն ՚ի Բեթանիա յայնկոյս Յորդանանայ , ուր էր Յովհաննէս մկրտեալ :

29 Ի վաղիւն տեսանէ Յովհաննէս զՅիսուս գալ առ ինքն , և ասէ՝ ահա Գառն Աստուծոյ որ առնու զմեղս աշխարհի :

30 Սա է զոր ասացի ես՝ թէ ՚Ի ետեւ իմ գայ այր , որ առաջի իմ եղեւ , զոր ես ոչ եմ արժան լուծանել զկօշիկս ոտից նորա :

31 Եւ ես ոչ գիտէի զնա , այլ զի յայտնեսցի յԻսրայէլ՝ վասն այնորիկ եկի ես մկրտել ջրով :

32 Եւ վկայեաց Յովհաննէս՝ եթէ տեսի զհոգին իջանել իբրև զաղաւնի յերկնից , և հանգեաւ ՚ի նմա :

33 Եւ ես ոչ գիտէի զնա , այլ որ առաքեաց զիս մկրտել ջրով , նա ասաց ցիս՝ ուր տեսանիցես զհոգին իջանել և հանգչել ՚ի նմա , նա է որ մկրտէ զՍուրբ Հոգին :

34 Եւ ես տեսի , և վկայեցի եթէ նա է Որդի Աստուծոյ :

35 Յաջորդի օրն կայր Յովհաննէս և երկու ՚ի աշակերտաց իւրոց :

36 Եւ հայեցեալ ՚ի Յիսուս որ գնայր , ասէ՝ ահա Գառն Աստուծոյ :

37 Եւ լուան երկու աշակերտքն նորա զբանն զոր ասաց , և գնացին զհետ Յիսուսի :

38 Դարձեալ Յիսուս հայեցեալ ՚ի նոսա որ գային զհետ նորա , ասէ ցնոսա՝ զի՞ խնդրէք : Եւ նոքա ասեն ցնա՝ Ռաբբի , որ թարգմանի Վարդապետ , ո՞ւր բնակեալ ես :

39 Ասէ ցնոսա՝ եկայք և տեսէք : Եկին և տեսին զուր բնակեալ էր , և մնացին առ նմա յաւուրն յայնմ . ժամ մօտ էր տասներորդի :

40 Էր Անդրէաս եղբայր Սիմոն Պետրոսի , մի ՚ի երկուց աշակերտացն որ լուան ՚ի Յովհաննու և գնացին զհետ նորա :

41 Նա գտանէ զեղբայր իւր զՍիմոն , և ասէ ցնա՝ գտաք զՄեսիա , որ է թարգմանեալ Քրիստոս :

42 Եւ տարեալ զնա առ Յիսուս , հայեցեալ Յիսուս ՚ի նա ասէ՝ դու ես Սիմոն որդի Յովնանու , դու կոչեսցիս Կեփաս , որ է թարգմանեալ Պետրոս :

43 Յաջորդի օրն կամեցաւ երթալ յԳալիլեա , և գտանէ զՓիլիպպոս , և ասէ ցնա Յիսուս՝ հետեւեա ինձ :

44 Էր Փիլիպպոս ՚ի Բեթսայիդա , ՚ի քաղաքէ Անդրէասի և Պետրոսի :

45 Փիլիպպոս գտանէ զՆաթանայէլ , և ասէ ցնա՝ զոր գրեաց Մովսէս ՚ի Հրէից և մարգարէքն , գտաք զՅիսուս որդի Յովսեփայ ՚ի Նազարեթէ :

46 Եւ ասէ ցնա Նաթանայէլ՝ ՚ի Նազարեթէ կարէ՞ լինել ինչ բարի : Ասէ ցնա Փիլիպպոս՝ եկ և տես :

47 Տեսանէ Յիսուս զՆաթանայէլ եկեալ առ ինքն , և ասէ ցնա՝ ահա իսրայէլացի ճշմարիտ , յորում նենգութիւն ոչ է :

48 Ասէ ցնա Նաթանայէլ՝ ՚ի ո՞րմէ զիս ճանաչես : Պատասխանի Յիսուս և ասէ ցնա՝ յորժամ էիր ՚ի ներքոյ թզենւոյն , տեսի զքեզ :

49 Պատասխանի Նաթանայէլ և ասէ ցնա՝ Ռաբբի , դու ես Որդի Աստուծոյ , դու ես Թագաւոր Իսրայէլի :

50 Պատասխանի Յիսուս և ասէ ցնա՝ զի ասացի ցքեզ՝ տեսի զքեզ ՚ի ներքոյ թզենւոյն , հաւատայ դարձեալ ՚ի նա , զոր

25 Եւ իբրև լսեցին Յովհաննէս զընթացսն , ասէր .Ո՞վ ոք կարծէք զինէն՝ թէ իցեմ . չեմ ես այն . այլ ահա գայ զկնի իմ , որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լուծանել :

26 Ա՛րք եղբարք՝ որդիք Աբրահամեան առհասին , և որ ՚ի ձեզ երկիւղածք իցեն Աստուծոյ . ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ :

27 Որպէս որ բնակեալ են յԵրուսաղէմ , և իշխանք նոցա՝ անծանօթ եզեն ՚ի նմանէ . և ըստ բարբառոյ մարգարէիցն , որ զամենայն շաբաթին ընթեռնուին՝ դատեալ կատարեցին :

28 Եւ ոչ մի ինչ պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին ՚ի Պիղատոսէ սպանանել զնա :

29 Եւ իբրև կատարեցին զամենայն՝ որ վասն նորա գրեալ էր , իջուցեալ ՚ի փայտէն՝ եդին ՚ի գերեզմանի :

30 Այլ Աստուած յարոյց զնա ՚ի մեռելոց . որ երևեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ ,

31 Որ ելեալ էին ընդ նմա ՚ի Գալիլեէ յԵրուսաղէմ . որք և արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն :

32 Եւ մեք ձեզ աւետարանեմք

25 Եւ երբոր Յովհաննէսն վերջացընէր ընթացքը իրան գնալըն՝ ասէր . Ինչ համար ինձ էք կարծում՝ որ ընդիմ . ես էն չեմ[38] . բայց ահա իմ ետևէս գալիս է նա , որ ես չեմ արժանի նորա ոտաց կօշիկները արձակելոյ :

26 Ա՛րդիք եղբարք՝ Աբրահամի ցեղի որդիքներ , և ով որ ձեզանում աստուածավախ են . ձեզ ուղարկվեցաւ էս փրկութեան խօսքը[39] :

27 Որպէս նորանք որ բնակված են Երուսաղէմումն , և նորանց իշխաններն՝ նորան չըճանաչեցին[40] . և մարգարէների խօսքերին պէս , որ ամէն շաբաթներումն կարդվումեն[41] դատապարտելով կատարեցին[42] :

28 Եւ թէպէտ նորա վերայ մեռնելոյ պատճառ չգտին[43] , Պիղատոսից ուզեցին՝ որ նորան սպանէ[44] :

29 Եւ երբոր էն ամէնքն՝ որ նորա համար գրված էր կատարեցին[45] , փայտից վեր բերին՝ և գերեզմանի մէջ դրին[46] :

30 Որպէս Աստուած նորան մեռելների միջից յարոյց[47] . որ շատ օրերով երևեցաւ նորանց[48] ,

31 Որ նորա հետ Գալիլեայից վեր էին էկել Երուսաղէմ[49] . որ նորանք հենց հիմիկ էլ նորա համար վկաներ են ժողովրդի առաջին[50] :

32 Եւ մենք աւետարանումենք ձեզ

(38) Մատթ . գ . 11 : Մարկ . ա . 7 : Ղուկ . գ . 16 : Յովհ . ա . 20 . 27 : (39) Մատթ . ժ . 6 : Ղուկ . իգ . 47 : Գործ . ե . 31 : (40) Ղուկ . իգ . 34 : Գործ . գ . 17 : ա Կորնթ . բ . 8 : (41) Ա՛յր . 14 , 15 : Գործ . ժե . 21 : (42) Ղուկ . իգ . 20 . 44 : Գործ . իգ . 22 : իը . 23 : (43) Մատթ . իե . 22 : Մարկ . ժե . 13 , 14 : Ղուկ . իգ . 21 , 22 : Յովհ . ժբ . 6 . 15 : (44) Գործ . գ . 13 , 14 : (45) Ղուկ . ժը . 31 : իգ . 44 : Յովհ . ժբ . 28 . 30 . 36 , 37 : (46) Մատթ . իե . 59 : Մարկ . ժե . 46 : Ղուկ . իգ . 53 : Յովհ . ժբ . 38 : (47) Մատթ . իը . 6 : Գործ . բ . 24 : գ . 13 . 15 . 26 : ե . 30 : (48) Մատթ . իը . 16 : Գործ . ա . 3 : ա Կորնթ . ժե . 5 , 6 , 7 : (49) Գործ . ա . 11 : (50) Գործ . ա . 8 : բ . 32 : գ . 15 : ե . 32 :

Digitized by Google

զնոսաւանձն՝ որ առ Հարան եղեալ էր ։

33 Ոչ զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յարուցեալ զՅիսուս . որպէս և ի սաղմոսին գրեալ է յերկրորդում . Որդի իմ ես դու . և ես այսօր ծնեալ զքեզ ։

34 Եւ զի յարոյց զնա ի մեռելոց , և ոչ ևս դառնալոց է յապականութիւն . այսպէս ասէ . եթէ Տաց ձեզ զսրբութիւնսն Դաւթի ճշմարտարիմս ։

35 Վասն որոյ և ի միւսում ասէ . Ոչ տացես Սրբոյդ քում տեսանել զապականութիւն ։

36 Զի Դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց . և ի կամս Աստուծոյ ննջեաց , և յաւելաւ առ հարս իւր՝ և ետես զապականութիւն ։

37 Այլ զոր Աստուածն յարոյց՝ ոչ ետես զապականութիւն ։

38 Հայտնի լեցի ձեզ՝ արք եղբարք , զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց աւետարանի . և յամենայնէ՝ յորմէ ոչ կարացիք օրինօքն Մովսէսի արդարանալ ։

39 Սովաւ ամենայն որ հաւատայ՝ արդարանայ ։

40 Զգոյշ կացէք՝ գուցէ եկեսցէ ի վերայ ձեր ասացեալն ի մարգարէս ։

41 Տեսէք՝ արհամարհոտք , և զարմացարուք և եղծարուք . զի գործ մի գործեմ ես յաւուրս ձեր . գործ՝ որում՝ ոչ հաւատայցէք , եթէ ոք պատմեցէ ձեզ ։

էին խոստմունքն՝ որ հարցն էլած էր[51] ։

33 Ինչու որ՝ Աստուած էն կատարեց մեզանում՝ որ նորանց որդիքն ենք , Յիսուսին յարուցանելով . ինչպես որ երկրորդ սաղմոսումն գրված է . Դու իմ Որդին ես . ես էս օր ծնայ քեզ[52] ։

34 Եւ էն որ մեռելների միջից յարոյց նորան , և որ էլ չըպիտի դառնայ ապականութեան մէջ՝ էսպես ասաց . Թէ Ձեզ կըտամ Դաւթի հաւատարիմ սրբութիւնները[53] ։

35 Ինչու որ՝ (նա) ուրիշ տեղումըն էլ ասումէ . Դու Սրբոյն չես տալ որ ապականութիւն տեսնէ[54] ։

36 Որայց Դաւիթն էն իրան ազգումն ծառայեց Աստուծոյ կամքին , և ննջեց , և գնաց աւելացաւ իրանց հարանց հետն՝ և ապականութիւն տեսաւ[55] ։

37 Որայց Նորան՝ որ Աստուած յարոյց , նա ապականութիւն չըտեսաւ ։

38 Ուստի յայտնի լինի ձեզ մարդիք եղբարք , որ սորանով մեզաց թողութիւն է աւետարանվամ ձեզ[56] . և էն ամէն բաներիցն՝ որ Մովսէսի օրէնքովն չըկարացիք արդարանալ ։

39 Որանով ամէն ով որ հաւատայ՝ կարդարանայ[57] ։

40 Զգոյշ կացէք՝ որ չըլինի թէ ձեզ վերայ գայ էն՝ որ մարգարէներիցն ասված է (թէ)[58] .

41 Տեսէք անարգողներ , և զարմացէք և փչացէք . ինչու որ՝ ես մին գործ եմ գործում ձեր օրերումն . (էնպէսի) գործ , որ Նորան չէք հաւատալ՝ թէ որ մինն պատմէ ձեզ ։

(51) Ծննդ . ը . 15 . ժբ . 8 . իբ . 18 . Գործ . իգ . 6 . Հռոմ . դ . 13 . Գաղ . դ . 16 . (52) Սաղ . բ . 7 . Եբր . ա . 5 . ե . 5 . (53) Եսայ . ղե . 3 . (54) Սաղ . ժգ . 10 . Գործ . բ . 31 . (55) ԳԹագ . բ . 10 . Գործ . բ . 29 . (56) Եբրայ . ժ . 24 . Գաղ . բ . 21 . Գործ . ժգ . 38 . (57) Եսայ . ծգ . 11 . Հռոմ . գ . 28 . ը . 8 . Եբր . է . 19 . (58) Եսայ . խբ . 14 . Ամբ . ա . 5 .

Digitized by Google

42 Եւ երբեմն եղեւն անտի , ազատէին ի միւսում շաբաթու խօսել նոցա զնոյն բանս ։

43 Երբեմն արձակեցաւ ժողովուրդն , ղհնա երթային բազումք ի Հրէից անտի և ի պաշտօնէից եւ կամէից զՊօղոսի և զԲառնաբայ . որք խօսէին ընդ նոսա , և հաստատնեցուցանէին զնոսա կալ ՚ի շնորհն Աստուծոյ ։

44 Եւ ի գալ միւսոյ շաբաթուն , գրեթէ ամենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ ։

45 Երբեմն տեսին Հրեայքն զամբոխն՝ լցան նախանձու . և ընդդէմ դարձեալ ասացելոցն ի Պօղոսէ՝ հայհոյէին ։

46 Համարձակեալ Պօղոսի և Բառնաբայ՝ ասէին . Ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ . և քանզի դուք մերժեցէք զնա , և ոչ արժանի համարիք զձեզ կենացըն յաւիտենականաց , ահաւասիկ դառնամք ի հեթանոսս ։

47 Զի այսպէս պատուիրեաց մեզ Տէր . Եդի զքեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ ի փրկութիւն մինչև ի ծագս երկրի ։

48 Զայս լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին , և փառաւորէին զբանն Տեառն . և հաւատացին որք էին կարգեալ ի կեանն յաւիտենական ։

49 Եւ շրջէր բանն Աստուծոյ ընդ ամենայն գաւառն ։

42 Եւ երբեմն հեռանային դուրս եկին , աղաչեալին որ մեկնել շաբաթումն էլ էն բանըն խօսին իրանց համար ։

43 Երբեմն ժողովուրդն արձակվեցաւ , էն Հրէաներին և նոր դարձած աստուածապաշտ մարդկանցըն շատերն՝ գնումէին Պօղոսի և Բառնաբասի եռևէն . որ էլ նորանց հետ խօսումէին , և նորանց հաւանացնումէին որ Աստուծոյ շնորհքի մէջն կենան միշտ ։

44 Եւ երբեմն մեկնել շաբաթըն եկաւ , համարեա թէ բոլոր քաղաքըն հաւաքվեցաւ՝ որ Աստուծոյ խօսքըն լսեն ։

45 Երբեմն Հրէաներն էն ամբոխն (խռնվածն) տեսին՝ նախանձով լցվան . և Պօղոսիկն ասվածն խօսքերին հակառակ կենալով՝ հայհոյումէին ։

46 Պօղոսն և Բառնաբասն համարձակութեամով ասումէին . Նոքա պէտք էր Աստուծոյ բանըն ձեզ խօսել . և որովհետև դուք դուրս էք անում նորան , և արժան չէք համարում ձեզ յաւիտենական կենացն , ահա դէպի հեթանոսներն ենք դառնում ։

47 Պատճառն որ՝ Տէրն էսպէս պատուիրեց մեզ . (թէ) Քեզ հեթանոսներին լոյս դրի՝ որ դու փրկութիւն լինիս մինչև երկրի ծայրերն ։

48 Երբեմն հեթանոսներն էս լսումէին՝ ուրախանումէին , և Տէրի խօսքըն փառաւորումէին . և հաւատացին նորանք որ կարգված էին դէպի յաւիտենական կեանքն ։

49 Եւ Աստուծոյ խօսքն փռվում էր ամէն գաւառն ։

(59) Գործ . ժա . 29 ։ ժգ . 23 ։ (60) Ձէթ . բ . 11 ։ Նէր . ժբ . 15 ։ ա Պետ . ե . 13 ։ (61) Գործ . ժբ . 6 ։ ա Պետ . գ . 1 ։ Յոան . 19 ։ (62) Մատթ . ժ . 6 ։ Գործ . գ . 26 ։ Պէտ . 28 ։ Հռով . ա . 16 ։ (63) Նէե . ղբ . 10 ։ բ Օրին . ի . 31 ։ Եսայ . 56 . 8 ։ Մատթ . բա . 36 ։ Հռով . ժ . 19 ։ (64) Գործ . ժբ . 6 ։ ի՛բ . 28 ։ (65) Նաում . ի՛բ . 6 ։ ի՛բ . 6 ։ Գ՚ոռ . բ . 32 ։ (66) Գործ . կ . 17 ։

Digitized by Google

50 Այլ Հրեայքն գրգռեցին զպաշտօնեայ կանայս զգաստս՝ եւ զգլխաւորս քաղաքին, եւ յարուցեալ հալածանս՝ ի վերայ Պօղոսի եւ Բառնաբայ՝ հանին զնոսա ի սահմանացն իւրեանց:

51 Եւ նոքա թօթափեալ զփոշին ոտից՝ ի վերայ նոցա, եկին Իկոնիոն:

52 Եւ աշակերտքն լնուին խնդութեամբ՝ եւ Հոգւով Սրբով:

50 Այլ Հրէանքն դրդեցին զասուածապաշտ պարկեշտ կանայսն՝ եւ քաղաքի գլխաւորներին, եւ հալածանք վերկացնելով Պօղոսին եւ Բառնաբասին վերայ՝ նորանց դուրս հանեցին իրանց սահմաններեն[ց]:

51 Եւ նորանք իրանց ոտներէն փոշին թափ տուին նորանց վերայ, եւ եկին Իկոնիոն[ա]:

52 Եւ աշակերտներն լցվուէին ուրախութենով՝ եւ Հոգւով[բ]:

ԿԻ. ԺԴ

1 Պօղոս եւ Բառնաբաս Իկոնիոնէն հալածանք քաշելով էն ուղից կըփախչին: 7 Պօղոս Լիւստրայի մէջ մին կաղ մարդ կըբժշկէ, որ նորա համար ժողովուրդն նորանք Աստուածներ համարուելին: 18 Պօղոսի քարկոծվելը. 21 Նորանք ամէն քաղաքներն ման գալով աշակերտանէն հաստատ եւ համբերութեան մէջն կենալոյ համար կըհաստատեն: 26 Մինչ Ընտիոք կըգառնան եւ կըզրուսանին ինչ որ Աստուած արաւ իրանց հետ:

1 Եւ եղև յԻկոնիոն՝ ի միասին մտանել նոցա՝ ի ժողովուրդ Հրէից, եւ խօսել նոյնպէս. մինչեւ հաւատալ Հրէից եւ Հեղնաց բազմաց յոյժ:

2 Այլ անհաւատ Հրէայքն յարուցին եւ չարացուցին զանձինս հեթանոսացն՝ ի վերայ եղբարց:

3 Յապաղեմ ժամանակս շրջէին հաստատակեալք Տեառն վկայութեամբ, բանիւ շնորհաց իւրոց. և տալ նշանս և արուեստս լինելոյ՝ ի ձեռս նոցա:

4 Եւ եղեն երկաւուածք՝ ի բազմութենէն քաղաքին. ոմանք էին՝ ի Հրեայսն, և ոմանք յառաքեալսն:

5 Իբրև եղև դիմել հեթանոսացն և Հրէից իշխանօքն իւրեանց՝

1 Եւ եղաւ Իկոնիոնումն որ նոքանք իրար հետ մտնումէին Հրէաներուն ժողովարանի մէջ, և էնպէս խօսումէին. մինչև որ Հրէից՝ և Հեղնաց խիստ շատ հոգի հաւատաց կացան:

2 Այլ անհաւատ Հրէաներն հեթանոսներուն անձներըն վերկացրին՝ և չարաչար դրդեցին եղբայրներին վերայ:

3 Հ՚ատ ժամանակ մտն էին գալիս համարձակված Տէրի վկայութենովն՝ որ շնորհաց խօսքովն. և նշաններ և հրաշքներ առաւ լինել նորանց ձեռովն[ե]:

4 Եւ տարաձայնութիւն էլաւ քաղաքի բազմութեան մէջն. որ մին քանիսն Հրէաներուն կողմն էին, և մին քանիսն առաքեալներուն կողմն[զ]:

5 Երբոր էլաւ որ հեթանոսներն և Հրէաներն իրանց իշխաններովն

(67) բ Ա՚. գ. 11. (68) Մարկ. ժ. 14. Մատ. զ. 11. Ղուկ. թ. 5. Գործ. ժգ. 6. (69) Մատ. ժ. 12. Յովհ. ժգ. 23. Գործ. գ. 10. (1) Մատ. ժգ. 20. Նեեմ. գ. 8. (2) Գործ ը ժգ. 8.

Digitized by Google

'ի թշնամանել և 'ի քարկոծել ըզնոսա ,

6 Ըզգեղեալ նոցա՝ փախեան 'ի քաղաքս Լիկայոնացւոց 'ի Լիւստրա և 'ի Դերբէ՝ և շուրջ զգաւառն , և անդ աւետարանէին ։

7 Եւ այր մի Լիւստրացի տկար յոտից նստեր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ , որոյ երբէք չէր գնացեալ ։

8 Սա լուաւ զխօսեան Պօղոսի . որ յայնժամ հայեցեալ 'ի նա , և տեսեալ՝ թէ ունի հաւատս փրկուելոյ ,

9 Ասէ մեծաձայն . Կրնձ ասեմ յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յոտն կաց 'ի վերայ ոտից քոց ուղիղ . և վազվազէր՝ և գնայր ։

10 Եւ ժողովրդոցն տեսեալ զոր արարն Պօղոս , բարձին զձայնս իւրեանց Լիկայոնարէն , և ասեն . Աստուածք նմանեալք մարդկան իջին առ մեզ ։

11 Եւ կոչէին զՆաւնաբաս Դիոս , և զՊօղոս Երմէս . քանզի նա էր առաջնորդ բանին ։

12 Իսկ քուրմն Դիոյ՝ որ կայր առաջի քաղաքին , ցուլս և պսակս հասուցեալ 'ի դուռնն՝ հանդերձ բազմութեամբքն՝ կամէր զոհել ։

13 Եւ լուեալ առաքելոցն Նաւնաբայ և Պօղոսի , պատառեալ զհանդերձս իւրեանց՝ այսպէս վազեցին յամբոխն . աղաղակէին ,

14 Եւ ասէին . Ո՛րք՝ զի՞նչ գործէք զայդ . մեք ձեզ նմանօրք կարեօք մարդիկ եմք . աւետարանել ձեզ յայսպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կենդանի . որ վերայ վազեցին՝ որ նորանց նախատինք տան և քարկոծ անեն[3] ,

6 Նորանք իմացան՝ և փախան (գնացին) Լիկայոնացոց Լիւստրա և Դերբէ քաղաքներն[4] և գաւառի չորս կողմերն , և հնաեղ աւետարանուէին ։

7 Եւ մին Լիւստրացի մարդ ոտներով տկար նստած էր՝ որ իրան մօր փորից կաղ էր ծընված , և իսկի չէր մանեկած[5] ։

8 Սա լսեց Պօղոսի խօսքերըն . նա էլ նորա վերայ նայեց , և տեսաւ՝ որ հաւատք ունի փրկվելոյ[6] ,

9 Ա՛նծ ձայնով ասաց . Կրնեզ եմ ասում՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն՝ քո ոտներիդ վերայ շիտակ կանգնիր . և նա վազուկեր և գնուկեր[7] ։

10 Եւ ժողովուրդն որ տեսաւ էն՝ որ Պօղոսն արաւ , իրանց ձայնքն բարձրացրին Լիկայոներէն՝ և ասացին . Լաստուածներն մարդկանց նման էլած վեր եկին մեզ մօտ[8] ։

11 Եւ Նաւնաբասին Դիոս էին կոչում , և Պօղոսին Երմէս . ինչու որ՝ նա էր խօսքի առաջնորդն ։

12 Քահայ Դիոս (կռքի) քահանան՝ որ քաղաքի առաջին կար , արջառներ և պսակներ հասցրուց դուռն՝ և էն բազմութեանն հետ կամենուկեր մատաղ անել[9] ։

13 Եւ երբոր Նաւնաբաս և Պօղոս առաքեալներն լսեցին , իրանց շորերըն պատառած՝ ամբոխի (խուճի) միջից դուրս վազեցին . մեծ ձայնով կանչուկին[10] ,

14 Եւ ասուկին . Ա՛րդիք՝ էդ ինչ էք անում[11] . մենք էլ ձեզ նման կարօտութիւն ունող մարդիք ենք[12] . որ աւետարանուկենք ձեզ՝ որ էդպէսի ոչ ինչ բաներից յայս

(3) Բ Տիմ . գ . 11 : (4) Գործ . ժ . 23 : (5) Գործ . գ . 2 : (6) Գործ . ը . 10 . Բ . 28 , 29 : (7) Ղուկ . է . 8 : (8) Գործ . ը . 10 : իբ . 6 : (9) Գան . բ . 46 : (10) Գործ . իգ . 65 : (11) Գործ . ժ . 26 : (12) Յակ . ե . 17 : Հռոմ . ժբ . 10 :

Digitized by Google

զբաք զերկինս և զերկիր և զծով՝ և զամենայն որ ՚ի նոսա :

15 Որ յանցեալ ազգան՝ թոյլ եա ամենայն հեթանոսաց գնալ ՚ի ճանապարհս իւրեանց :

16 Եւ սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող բարերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրեւս՝ և ժամանակս պաղպաղեալս, լնուլ կերակրովք և ուրախութեամբ զսիրտս ձեր :

17 Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն ՚ի չզոհելոյ նոցա . այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս :

18 Եւ ՚ի հրկիզն նոցա և յուսուցանել՝ եկին հասին Անտիոքէ և Իկոնիէ Լիւստրէ . և ՚ի վիճել նոցա համարձակութեամբ՝ պատրեցին զժողովուրդսն՝ ՚ի բաց կալ ՚ի նոցանէ , և սպանին՝ թէ Ոչ ինչ ճշմարտութիւն ասեն , այլ զամենայն սուտ . և քարկոծեալ զՊօղոս՝ քաշեցին արտաքս քան զքաղաքն , և համարեցին զնա մեռեալ :

19 Եւ ՚ի պատել զնովաւ աշակերտացն՝ յարեաւ եմուտ ՚ի քաղաքն . և ՚ի վաղիւ անդր ել Բառնաբասու հանդերձ ՚ի Դերբէ :

20 Աւետարանեալ ՚ի քաղաքին յայնմիկ՝ և աշակերտեալ զառազու-

15 Որ անցեալ ազգաց թոյլ տուաւ ամէն հեթանոսներին՝ որ իրանց ճանապարհներուն գնան[16] :

16 Այսպէս թէ ինքն իրան առանց վկայութեան չթողուց[17] . ինչու որ բարերարութիւնով երկնքէն տուաւ ձեզ անձրեւներ՝ և պաղաբեր ժամանակներ , որ կերակուրնեով և ուրախութիւնով ձեր սրտերն լեցնէ[18] :

17 Եւ էս ասելով՝ դժուար թէ ժողովուրդները զդարպասեանէն՝ որ մատաղ չանեն իրանց համար . բայց գըլան ամէն մէկն իրանց տեղն :

18 Եւ երբոր նորանք ման էին գալիս և սովորցնում էին , Լիւստրներ եկին հասին Իկոնիոնէն և Անտիոքէն[19] . և նորանք որ համարձակութենով վիճմունք էին անում , ժողովուրդներն խաբեցին՝ որ յետ կենան նորանցից , և սուտումին՝ թէ (Պօղոսը) խելի ճըշմարտութիւն չէն ասում , բայց ամէնն սուտ են խօսում . և Պօղոսին քարկոծ անելով՝ քաղաքէն դուրս քաշեցին , և նորան մեռած էին համարում[20] :

19 Եւ երբոր աշակերտներն նորա չորս կողմին պատվեցան , վերկացաւ մտաւ քաղաքն . և առաւօտն Բառնաբասին հետ գուրս եկաւ գնաց Դերբէ :

20 Յն քաղաքումն աւետարանեցին , և շատերին աշակերտ շինե-

(12) ա Թագ . ժբ . 21 : գ Թագ . ժգ . 13 : Նեհ . ժգ . 22 : Ընդհ . բ . 4 : ա Պտրգ . ը . 4 : (15) ա Թագ . ա . 9 : (15) Ղեւտ . ա . 1 : Սալ . լէ . 6 : Հեթ . 6 : Հայտ . ժգ . 7 : (16) Սալ . ճա . 12 : Գործ . ժէ . 30 : ա Պետր . գ . 3 : (17) Գործ . ժէ . 27 : Ածոփ . ա . 20 : (18) Լաթ . Իա . 4 : բ Օրին . ժա . 14 . իբ . 12 : Հոբ . ը . 16 : Սալ . կէ . 19 : հը . 9 : Հեթ . 6 : Նեհ . ժգ . 22 : Սոփ . է . 45 : (19) Գործ . ժգ . 45 : (20) բ Պօղիկ . ժա . 25 : բ Տիմ . գ . 11 :

Digitized by Google

մըն, դաթձան՝ ի Լեւատրայ՝ եւ ի Կեթիան՝ եւ ի Նիսոքիայ :

21 Հաստատել զանձինս աշակերտելոցն եւ մխիթարել կալ հաստատուն՝ ի հաւատսն . եւ թէ բազում նեղութեամբք պարտ է մեզ մտանել յարքայութիւնն Աստուծոյ :

22 Ձեռնադրեցին նոցա ըստ եւ կեղեցւոյ՝ երիցուս . աղօթս արարեալ՝ հանգիպեմ պահօք , յանձն արարին զնոսա Տեառն՝ յոր հաւատացեալ էին :

23 Եւ շրջեալ ընդ Պիսիդայ՝ եկին ի Պամփիւլիայ :

24 Եւ խօսեցեալ ի Պերգէ զբանն Տեառն , իջին ի Աթալիայ :

25 Եւ անտի նաւարկեալ՝ գնացին ի Նիոքիա , ուստի էին յանձնարարեալ շնորհացն Աստուծոյ ի գործն՝ զոր կատարեցին :

26 Եկեալ և ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար Աստուած ընդ նոսա . և զի եբաց հեթանոսաց դուռն հաւատոց :

27 Շրջէին ժամանակս ոչ սակաւ ընդ աշակերտսն :

ցին . Հապա յետ դարձան Լեւտրա՝ Իկոնիան՝ և Անտիոքիա[21] :

21 Աշակերտներն անձներըն հաստատեցին և մխիթարեցին[22] որ հաստատուն կենան հաւատքի մէջն . և թէ շատ նեղութիւններով պէտք է մեզ մտնել Աստուծոյ արքայութիւնն[23] :

23 Որանց ամէն մէկ եկեղեցիներին համար էրեցներ ձեռնադրեցին . աղօթք արին պահք պահելով , և յանձնեցին նոքանց Տէրին՝ որ հաւատացել էին նորան[24] :

24 Եւ Պիսիդիայի մէջն մտան եւ կ՚գան Պամփիլիայի մէջ եկին :

25 Եւ երբոր Պերգէի մէջն Տէրի բանըն խօսեցին , վէր եկին Աթալիա :

26 Եւ հնաոեղից նաւով գնացին Անտիոք , որ հնաոեղից[25] Աստուծոյ շնորհքին յանձնըված էին՝ հն գործոյ համար՝ որ կատարեցին[26] :

27 Եւ եկին մինաոեղ ժողովեցին եկեղեցին՝ պատմեցին ինչ որ Աստուած արաւ իրանց հետ[27] . և թէ նահեթանոսներին համար հաւատքիդռանը բացարաւ[28] :

28 (Եւ) քիչ ժամանակ չէլաւ՝ որ աշկերտաներին հետ մտին եկին[29] :

ԳԼ. Ժ

1 Թլփատութեան համար հակառակութիւն և վիճունք կըլինի , 6 Ածաքելներն և Նրեցիներն ազահամար խորհուրդ կանին , 22 Եւ իրենց հաստատած խօսքըն մին թագրիլ և մին քանի մարդիկներով Անթիոքիներին կուղարկի : 36 Պօղոս և Բառնաբաս միմեանց հետ բարկանըլն հետեւոց համար խորհուրդ անելով իրարմէ մին կուռ կանին և ջոկվին իրարից :

1 Եւ ոմանք իջեալ ի Հրէաստանէ՝ ուսուցանէին զեղբարս . եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն Մովսէսի՝ ոչ կարէք ապրիլ :

Եւ մին քանիսն որ Հրէաստանիցն վէր էին եկեալ՝ եղբարունեւրյ սովորցնում էին[1] , Թէ որ չըթլատվիք[2] Մօսէսի օրէնքին պէս՝ չէ կարօղ ապրիլ[3] :

(21) Պատ. խբ . 19 : (22) Պօղոս . ժա . 23 : գ . 43 : (23) Պատ. ժ . 38 : ժգ . 24 : Ղ.ա. : խբ . 28 , 29 : Հռոմ . ը . 17 բ Տիմ . բ . 11 , 12 : գ . 12 : (24) Տիտ . ա . 5 : (25) Պատ. ժգ . 1 . 3 . (26) Պատ . ժ . 40 . (27) Պատ . ժ . 4 . 12 . խ . 19 . (28) ա Կորնթ . ժգ . 9 : բ Կոր . բ . 12 : Կող . գ . 3 : Հայտ . գ . 8 . (1) Պատ . բ . 12 . (2) Հոմ . է . 23 : այտ . 5 : Գաղ . է . 2 : Փիլիպ . գ . 3 : Կող . բ . 8 . 11 . 16 . (3) Հեբրայ . ժէ 10 : Ղ.ա. ժգ . 3 .

Digitized by Google

2 Եւ ի լինել ոչ սակաւ հա-
կառակութեան և խնդրոյ՝ Պղոսի
և Նաւնաբայ ընդ նոսա, եդին ե-
լանել Պօղոսի և Նաւնաբայ, ո-
մանց ի նոցանէ՝ առ առաքեալն և
երիցունս յԵրուսաղէմ վասն խնդ-
րոյն այնորիկ:

3 Եւ նոքա յուղարկեալք յեկե-
ղեցւոյն, շրջեցան ընդ Փիւնիկ,
և ընդ Սամարիայ, պատմեին զ-
դարձն հեթանոսաց, և առնէին
ուրախութիւն մեծ ամենայն ե-
ղբարց:

4 Եւ հասեալ յԵրուսաղէմ ի-
կալեալք յեկեղեցւոյն և յառաք-
ելոցն և յերիցանց, պատմեցին ո-
չ̈ափ ինչ սիւր ընդ նոսա Աստ-
ուած:

5 Եայրեան ոմանք ի հերձուա-
ծոյն փարիսեցւոց հաւատացեալ,
և ասեն՝ թէ պարտ է թլփատել
զդոսա, և պատուիրել պահել օ-
րէնսն Մովսէսի:

6 Եւ ժողովեցան առաքեալք և
երիցունք տեսանել վասն բանիս-
սորիկ:

7 Եւ յետ բազում խնդիր լին-
ելոյ՝ յոտն եկաց Պետրոս՝ և ա-
ցէնոսա. Արք եղբարք դուք ի-
նեն գիտէք, զի յաւուրցն առա-
նց ի միջի ձերում ընտրեաց Ա-
ստուած բերանով իմով լսել հեթա-
նոսաց բանին աւետարանի, և ի-
ւսանել:

8 Եւ սրտագէտն Աստուած վ-
կայեաց նոցա, տալով նոցա զՀ-
գին Սուրբ որպէս և մեզ.

9 Եւ ոչինչ ընտրութիւն արա
ի մէջ նոցա և մեր, հաւատովք
սրբեալ զսիրտս նոցա:

2 Եւ (երբոր) Պօղոսի և Բառ-
նաբասի հակառակութիւն և վիճ-
մունք քիչ չէր՝ որ նորանց հետ ա-
րին, խօսք դրին որ Պօղոսն և
Բառնաբասն՝ և նորանցից միւն քա-
նիսն էն խնդիրքին համար գնան
Երուսաղէմ առաքեալների և է-
լդերների մօտն[4]:

3 Նորանք ժողովքդիցն ճանա-
պարհ բռվեցան, և փիւնիկէի և
Սամարիայի մէջն մանկիկ պատ-
մումին հեթանոսների դառնալն,
և մեծ ուրախութիւն էին անում
ամէն եղբարներին[5]:

4 Եւ երբոր հասին Երուսաղէմ,
եկեղեցուցն և առաքեալներից և
էլդերներից ընդունվեցան, և պատ-
մեցին որչափ բան որ Աստուած ի-
րանց հետ արաւ[7]:

5 Փարիսեցոց հերձուածիքն միւն
քանի հաւատացեալներ վերկացան,
և ասումին թէ պէտք է թլփա-
տել դորանց, և պատուէր տալ որ
Օսէսի օրէնքըն պահեն[8]:

6 Եւ առաքեալներն և էլդեններն
ժողովվեցան՝ որ տեսնեն էս բանիս
համար:

7 Եւ շատ քննութիւն լինելուցն
ետև՝ Պետրոսն վերկացաւ և նո-
րանց ասաց. Արդիք եղբայրք
դուք ինքներդ գիտումէք, որ ա-
ռաջին օրերիցն ձեր միջումդ Աս-
տուած ընտրեց՝ որ իմ բերանովս
հեթանոսներն աւետարանի խօսքըն
լսեն, և հաւատան[9]:

8 Եւ սիրտ գիտող Աստուածն
վկայութիւն տուաւ նորանց[10], Սուրբ
Հոգին տալով նորանց ինչպէս որ
էլ մեզ[11]:

9 Եւ ոչ ինչ զոկութիւն չարաւ
նորանց և մեր մէջն[12], որ հաւատ-
քովս սրբեց նորանց սրտերն[13]:

(4) Գործ. ը. 1: (5) Ածաւմ. ժե. 24 ա Կորնթ. ժգ. 8. 11: (6) Գործ. ժգ. 26: (7) Ա Թես. 13: Գործ. ժգ. 26 :ԽՀ. 19: (8) Ա Թես. 1: (9) Գործ. ժ. 20: ժա. 12: (10) ա Պետ. խը. 9: Գործ. ա. 24: (11) Գործ. ժ. 44: (12) Ածաւմ. ժ. 12: (13) Գործ. ժ. 15. 21. 43: ա Կորնթ. ա. 2: ա Պետ. ա. 22:

Digitized by Google

10 Գնդ՝ ընդէր փորձէք զԱստուած, դնել լուծ ի վերայ պարանոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր՝ եւ ոչ մեք կարացաք բառնել:

11 Այլ շնորհօքն Տեառն Յիսուսի Քրիստոսի հաւատամք ապրել, զորօրինակ եւ նոքա:

12 Լռեաց ամենայն ժողովուրդն, եւ լսէին Բառնաբայ եւ Պօղոսի պատմելոյն. որչափ արար Աստուած նշանս եւ արուեստս ի հեթանոսս ի ձեռն նոցա:

13 Եւ յետ լռելոյն նոցա՝ պատասխանի ետ Յակովբոս՝ եւ ասէ. Արք եղբարք՝ լուարուք ինձ:

14 Հմաւն պատմեաց՝ որպէս յառաջագոյն Աստուած այց արար՝ առնուլ ժողովուրդ ի հեթանոսաց անուան իւրոյ:

15 Եւ ընդ այնմ միաբանին բանք մարգարէիցն. որպէս եւ գրեալ է.

16 Ետ այսորիկ դարձայց՝ եւ շինեցից զյարկն Դաւթի՝ զանկեալն եւ զկործանեալն նորա վերստին շինեցից՝ եւ կանգնեցից զնա:

17 Որպէս զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏէր. եւ ամենայն հեթանոսք՝ յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ Տէր. որ առնէ զայս ամենայն,

18 Յայտնի է ի յաւիտեանց (Տեառն գործ իւր):

19 Վասն որոյ եւ ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝ որք ի հեթանոսացն դառնան առ Աստուած:

20 Այլ ասել թուղթ առ նոսա, խորշել ի կերակրոց կռոց՝ եւ ի

10 Ելիմիկ՝ ինչո՞ւ էք Աստուծոյն փորձում, որ լուծ էք դնում աշակերտների վզերին վերայ, որ (էն) ոչ ժր հարքն՝ եւ ոչ էլ մենք չկարացինք վեր առնել[14]:

11 Այլ Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքովն հաւատումենք ապրիլ, ինչպէս որ էլ նորանք[15]:

12 Ամէն ժողովուրդն լուռ կացաւ, եւ Բառնաբասին եւ Պօղոսի պատմելոյն լսումէին. թէ Աստուած որչափ նշաններ եւ հրաշքներ արաւ նորանց ձեռովն հեթանոսների միջումն[16]:

13 Եւ երբոր նորանք լուռ կացան, Յակոբոսն պատասխան ասաւ՝ եւ ասաց. Ա՛րդիք եղբարք՝ ինձ լսեցէք[17]:

14 Հմաւնն պատմեց՝ թէ ինչպէս Աստուած առաջուց տեսաբերեաւ՝ որ հեթանոսներիցն ժողովուրդ առնէ իրան անունին համար[18]:

15 Եւ նորա հետ միաբանվումեն մարգարէների խօսքերըն. ինչպէս որ էլ գրված է.

16 Յետոյ կդառնամ՝ եւ Դաւթի քանակարանն կըշինեմ, եւ նորա վէր ընկածըն եւ քանդվածըն նոր կըշինեմ՝ եւ կըկանգնեցնեմ նորան[19]:

17 Որ մարդկանց մնացածներն Տէրին խնդրեն. եւ ամէն հեթանոսներն՝ որ նորանց վերայ իմ անունըս կոչված է, ասումէ Տէրն. (նա) որ էս ամէնըս անումէ,

18 Որ յաւիտենիցն հետէ յայտնի է Տէրին իրան գործըն:

19 Ուրեմն համար ես էլ իրաւունք եմ համարում, որ նեղութիւն չըտանն նորանց՝ որ հեթանոսներիցն[20] յետ են դառնում դէպի Աստուած[21]:

20 Այլ որ թուղթ գրվվի նորանց, որ յետ քաշվին կուռքերի

(14) Պետր. բ. 1. 1: (15) Հռոմ. գ. 24: Եփես. բ. 8: Ցիս. բ. 11: գ. 4, 5: (16) Գործ. ժգ. 26: (17) Գործ. ժբ. 17: (18) Ակ. 7: (19) Ամովս. թ. 11, 12: (20) Այլ. 26: (21) ա Թես. ա. 9:

Digitized by Google

պատանկուքիմնէ և ՚ի մեռելոտոյ՝ և յարկնէ :

21 Ո՛ւր Պ՝ոմէս յաղագսն առաջնոց քաղաքաց զբարոզիչսն իւրոցն՝ ՚ի ժողովսն ըստ ամենայն շաբաթուց ընթերցանել :

22 Այնժամ՝ հաճոյ թուեցաւ առաքելոցն և երիցանցն ամենայն եկեղեցւոյն , արս ընտրեալս ՚ի նոցանէ առաքել Յ՝ունիոք ընդ Պօղոսի և ընդ Յ՝առնաբասյ , զՅուդա՝ զկոչեցեալն Յ՝արսաբասյ , և զՊ՝ղիա՝ արս գլխաւորս :

23 Գրեալ առ եղբարս ՚ի Հեռն նոցա զայս ինչ . առաքեալք և երիցունք և եղբարք , Յ՝ունիոք և ՚ի Սիւրիա և ՚ի Կիւղիկիայ եղբարցըդ՝ որ ՚ի հեթանոսացդ էք , ուրջայն :

24 Վասնզի լուաք՝ թէ ոմանք ելբրև ՚ի մէնջ խռովեցուցին զձեզ բանիւք , խախտել զանձինս ձեր . ասեն թլփատել և պահել զօրէնսն՝ որոց ոչ ետուաք պատուէր :

25 Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս , արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառնաբայ և ընդ Պօղոսի :

26 Ա՛րք՝ որ մատնեցին զանձինս խրնանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի Ք՝րիստոսի :

27 Ա՛րք՝ առաքեցաք զՅուդա և զՊ՝ղիա . և նոցա ՚ի բանից ըզնոյն պատմել :

կերտկուրներից[22] , և պոռնկութենից[23] , և մեռած բաներից՝ և տրիւնից[24] :

21 Ինչուա՛ր՝ Պ՝օսէս առաջին պարտաւորից ետև՝ ամէն քաղաքներումն իրան քարոզիչներն ունի . որովհետև ժողովարանների մէջն ամէն շաբաթ օրերումն կարդացուի[25] :

22 Ն՚ն ժամանակն հաճեց երևելացաւ առաքեալներին և էրէցներին և ամէն եկեղեցոյն , որ իրանցից ընտրուած մարդիկ ուղարկեն Յ՝անիոք՝ Պօղոսի և Յ՝առնաբասի հետ , էն Յ՝ուդասի կոչուած Յ՝ուդային՝ և Շ՝իղասին՝ գլխաւոր մարդկանցն[26] :

23 Ցորանց ձեռքն եղբարներին գրեցին էս բանս . առաքեալներս և էրէցներս և եղբարներս , Յ՝անիոքի և Սիւրիայի և Կիւլիկիայի մէջ (լինող) եղբարներիդ՝ որ հեթանոսներից էք , ողջոյն (լինի) :

24 Որովհետև լսեցինք՝ թէ մեր քանիսն իբր թէ մեր կողմանէ քարոզացրին ձեզ խօսքերով , որ ձեր անձերն տեղահան անեն[27] . համաձայն թէ պէտք է թլփատուիլ և օրէնքըն պահել . որ նորանց մենք չենք հրաման տուել :

25 Ո՛ւղ միաբան ժողովուածներիս հաճոյ երևեցաւ՝ որ մեր սիրելի Յ՝առնաբասի և Պօղոսի հետ ընտրեալ մարդիկ ուղարկենք ձեզ մօտ :

26 (Յ՝նպէսի) մարդիկ՝ որ իրանց անձերն մատնեցին մեր Տէր Յիսուսի Ք՝րիստոսի անունին համար[28] :

27 Որ համաձայն Յուդասին և Շ՝իղասին ուղարկեցինք . որ նորանք էլ խօսքով հենց էն բանըն պատմեն :

(22) Նախ . լե . 2 : Նշ . ի . 3 . 23 : Նպի . ի . 30 : ա Կորնթ . ը . 1 : Յայտ . բ . 12 . 20 : ժ . 20 . 26 : (23) ա Կորնթ . զ . 9 . 18 : Գաղ . ե . 19 : Նիւս . ե . 3 : Կող . գ . 5 : ա Թես . գ . 3 : ա Պետր . գ . 3 : (24) Ծննդ . թ . 4 : Ղևտ . գ . 17 : բ Օրին . ժբ . 16 . 23 : (25) Գործ . ժե . 15 . 27 : (26) Գործ . ա . 23 : (27) Գաղ . ա . 7 . գ . 1 . Գործ . բ . 4 . ե . 12 : Յիս . ժ . 10 , 11 : (28) Գործ . ժե . 50 : ժբ . 18 : ա Կորնթ . ժե . 20 : բ Պետր . ա . 22 . 23 :

Digitized by Google

28 Ո՛չ հաճոյ թուեցաւ Հոգւոյն Սրբոյ և մեզ, մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ, բայց միայն ի կարևորացս յայսոցիկ.

29 ի բաց կալ ի զոհելոց կռոց՝ և յարենէ՛ և ի հեղձուցելոյ՝ և ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք գործէք. ողջ լերուք։

30 Եւ նոքա արձակեալք՝ իջին ի Նախիոք, և ժողովեալ զժողովուրդն՝ եհան զնուիրեն։

31 Եւ ընթերցեալ՝ ուրախ եղեն ի վերայ մխիթարութեանն։

32 Յուդա և Հ Խղա՝ զի և ինքա մարգարէք էին, քանիոք բազմօք մխիթարեցին զեղբարս՝ և հաստատեցին։

33 Եւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան խաղաղութեամբ յեղբարց առ առաքեալսն։

34 Եւ հաճոյ թուեցաւ Հ Խղայի ձեզ անդէն։

35 Պայց Պօղոս և Բառնաբաս չդիմեին ի Նախիոք, ուսուցանել և աւետարանել՝ և այլովք բազմօք զբանն Տեառն։

36 Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պօղոս ցԲառնաբաս, Դարձցուք և չդիմացուք զեղբարսդ քան ամենայն քաղաքաց՝ յորս քարոզեցաք զբանն Տեառն՝ թէ որպէս ունիցին։

37 Բառնաբաս կամէր առնուլ և զՅովհաննէս՝ զկոչեցեալն Մարկոս։

38 Պայց Պօղոս պղտչէր՝ թէ ըզձեռնհասն՝ ի նոցանէ ի Պամփիւլիայ, և զչհակաւն ընդ նոսա՝ ի գործն, մի՛ առնուլ ընդ ինքեանս։

28 Ինչու որ՝ Սուրբ Հոգին և մեզ էլ հաճոյ երևեցաւ, որ խիզի աւելի բեռըն չդնենք ձեզ վերայ, բայց միայն էս հարկաւոր բաներըս.

29 Որ հեռու կենաք կռոցի մսատաղ արածիցն[29] և արիւնից՝ և խեղդվածից՝ և պոռնկութիւնից[30]. սորանցից որ պահէք (ձեր) անձներն՝ լաւ կանէք. ողջ կացէք։

30 Եւ նորանք՝ որ արձակվեցան՝ վէրկին Նախիոք, և ժողովուրդն հաւաքեցին՝ և էն թուղթըն տուին։

31 Եւ երբոր կարդացին, ուրախ էլան էն մխիթարութեանն վերայ։

32 Յուդան և Հ Խղան՝ որովհետև նորանք էլ մարգարէք էին՝ շատ խօսքերով մխիթարեցին և հաստատեցին եղբարներին[31]։

33 Եւ երբոր մին ժամանակ էնտեղ էլան, եղբարներից խաղաղութեամբ արձակվեցան գնալ գէպի առաքեալներն[32]։

34 Եւ Հ Խղային հաճոյ երևեցաւ՝ որ էնտեղ մնայ։

35 Պայց Պօղոսն և Բառնաբասն Նախիոքի մէջ մնան էին գալիս[33], որ Տէրի խօսքըն շատ ուրիշներէն հետ սովորցնեն և աւետարանեն։

36 Պայց մին քանի օրից ետև Պօղոսն ասաց Բառնաբասին. Դառնանք և մանք եղբարներին մօտ՝ էն ամէն քաղաքներն, որ նորանցում Տէրի խօսքըն քարոզեցինք[34], (տեսնենք) թէ ինչպէս կան։

37 Բառնաբասն կամենում էր Մարկոս կոչված Յովհաննէսին էլ վեր առնել[35]։

38 Պայց Պօղոսն աղաչում՝ որ էն Պամփիւլիայի մէջ իրանցից ջոկվածըն, և նորանց հետ գործի մէջ չկպածըն իրանց հետ չառնեին[36]։

(29) Գործ · ԺԵ · 20։ Գործ · ԺԵ · 25։ Յայտ · Բ · 14, 20։ (30) Ղեւ · Ժէ · 14։ (31) Գործ · ԺԳ · 21։ ԺԸ · 28։ (32) Ա Պետր։ Ժգ · 11։ Եբր · Ժ · 31։ (33) Գործ · ԺԳ · 1։ (34) Գործ · ԺԳ · 4։ 13, 14, 51։ ԺԴ · 1։ 6։ 24, 25։ (35) Գործ · ԺԲ · 12։ 25։ ԺԳ · 5։ Կող · Գ · 10։ Բ Տիմ · Դ · 11։ Փլմ · 24։ (36) Գործ · ԺԵ · 38։

Digitized by Google

39 Եւ եղեւ գժտութիւն՝ մինչեւ մեկնիլ նոցա ի միմեանց, [Առաւելապայման առնուլ զՅարկոս նաւել ի Կիպրոս.

40 Եւ Պօղոսի ընտրեալ զՀիղա՝ եւ, յանձն արարեալ շնորհացըն Աստուծոյ յեղբարց անտի:

41 Եւ շրջէր ի կողմանս Սորւոց եւ Կիւղիկեցւոց, և հաստատէր զեկեղեցիսն:

39 Եւ կռիւ էլաւ նորանց միջեւ մըն. մինչեւ որ նորանք զոկվեցան իրարից. [Առանաբատան Յարկոսին առաւ որ նաւով գնայ Կիպրոս:

40 Եւ Պօղոսն Հիղային ընտրեց, և էն եղբարներից Աստուծոյ շնորհքին յանձնված դուրս եկաւ[37]:

41 Եւ Սորոց և Կիւղիկեցոց կողմերն մտն էր գալիս, և եկեղեցիներն հաստատում էր[38]:

ԿԻ· ԺՈՂ

1 Պօղոս Տիմոթէոսն կը Լիւստրա, 7 և նորանք Տերի Հոգին չի թողուր որ քարոզեն Ասիոյ մէջ, 14 Լիդիոյ կը հաւատան. 16 Պօղոս մի դև (կռապաշտութիւն) կը հանէ մի աղջկանից. 19 Որ համար ինքն և Շ իղան կը ծեծվին և բանտում (ղնդխանոցում) կը ցցվին. 26 Կանաչ գետնի բացվիլը, 31 Կառավարչի գառնալն և հաւատալը, 37 ԵՒ իրանց ազատվիլը:

1 Այլն եկաւ ի Դերբէ եւ ի Լիւստրա. և ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս, որդի կնոջ Հրէի հաւատացելոյ՝ և հօր Հեթանոսի,

2 Որ վկայեալ էր ի Լիւստրացւոց և Իկոնացւոց եղբարց:

3 Ողա կամեցաւ Պօղոս ընդ իւր առնել. և առեալ թլփատեաց զնա վասն Հրէիցն, որ էին ի տեղիսն յայնոսիկ. քանզի փիտէին ամենեքին զհայր նորա՝ թէ Հեթանոս էր:

4 Իբրև անցանէին ընդ քաղաքսն՝ աւանդէին նոցա պահել զհրամանան պատուիրեալս յառաքելոցն և յերիցանցն՝ որք ՅԵրուսաղէմ:

5 Եւ եկեղեցիքն հաստատէին ի

1 Ե եկաւ հասաւ Դերբէ և Լիւստրա[1]. և ահա մին աշակերտ կար էնտեղ՝ Տիմոթէոս անուն[2]. որ Հրէայ հաւատացեալ կնկան՝ և Հեթանոս հոյ որդի էր[3],

2 Որ բարի վկայութիւն ունէր Լիւստրացի և Իկոնիացի եղբարներից[4]:

3 Պօղոսն կամեցաւ որ տորան տանի իրան հետ. և առաւ թլփատեց նորան՝ Հրեաների պատճառվըն, որ էնտեղուանից էին[5], քանի որ ամենքն գիտումին որ նորա հայրն Հեթանոս էր:

4 Երբոր անց էին կենում էն քաղաքներումն՝ ասածները պահել էն Հրամաններըն, որ Երուսաղէմումն լինող առաքեալներից և էլդեռներից պատուիրած էին[6]:

5 Եւ եկեղեցիներն հաւատքի մէջ

(37) Գործ · ժդ · 25: (38) Գործ · ժգ · 5: (1) Գործ · ժդ · 6: (2) Գործ · ժբ · 22: Հռոմ · ժգ · 21: ա Կորնթ. դ · 17: Փիլիպ · բ · 19: ա Թիմոթ · գ · 2: ա Տիմ · ա · 2: բ Տիմ · ա · 2: (3) բ Տիմ · ա · 5: (4) Գործ · ջ · 3: (5) ա Կորնթ. թ · 20: Գաղ · բ · 3: դ · 2: (6) Գործ · ժե · 28, 29:

Digitized by Google

հաւատա , և յաւելուին ՚ի թիւն հանապազօր ։

6 Եւ շրջեցան ընդ փռիւգիա և ընդ կողմանս Գաղատացւոց , արգելեալք ՚ի Հոգւոյն Սրբոյ խօսել զբանն յԱսիա ։

7 Գայք եկեալ առ Այիսեաւ՝ թևակոխէին երթալ ՚ի Բիւթանիա, և ոչ համարձակեաց նոցա Հոգին Յիսուսի ։

8 Եւ անցեալ ըստ Այիսիա՝ ՚ի ծին ՚ի Տրովադա ։

9 Եւ տեսիլ երևեցաւ ՚ի գիշերի Պօղոսի · այր ոմն Այակեդովնացի կայր , աղաչէր զնա և ասէր · Ընցեալ ՚ի Այակեդոնիա՝ օգնեացես մեզ ։

10 Եւ իբրև զտեսիլն ետես , վաղվաղակի խնդրեցաք ելանել ՚ի Այակեդոնիա · տեղեկացեալ՝ թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա ։

11 Եւ ելեալ ՚ի Տրովադայ՝ դէպ ուղիղ գնացաք ՚ի Սամոթրակէ , և ՚ի վաղիւ անդր ՚ի Նէոպոլիս ։

12 Եւ անտի ՚ի փիլիպպուս , որ է առաջին վիճակ Այակեդոնացւոց քաղաք Կղոնիա · և անդ ՚ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ ,

13 Հաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին առ գետափն՝ ուր համարէր աղօթս մատուցանել · և նստեալ խօսեաք ընդ ժողովեալ կանայսն ։

14 Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրանավաճառ՝ ՚ի քաղաքէ՝ երկիւղած Աստուծոյ լուաւ · զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն անսալ խօսիցն Պօղոսի ։

15 Եւ իբրև մկրտեցաւ ինքն և տուն իւր , աղաչէր և ասէր · Եթէ համարիցիք զիս հաւատացեալ Տեառնով՝ մտէք յտունս իմ , և կացէք անդ ։ Եւ բռնադատեաց զմեզ ։

16 Եւ եղև երթալ մեզ յաղօթս՝ աղախին ոմն կայր ունելով հոգի վհուկութեան , որ մեծ շահ կուտէր տիրոջ իւրոյ գուշակութեամբ ։

17 Որ զհետ Պօղոսի եկեալ և մեզ՝ գոչէր և ասէր · Մարդիկ սոքա ծառայք Աստուծոյ Բարձրելոյ են , որ քարոզեն մեզ զճանապարհ փրկութեան ։

18 Եւ այս արարեալ բազում աւուրս՝ ցաւեցաւ Պօղոս , և դարձեալ ասէ ցհոգին · Պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի՝ ելանել յնմանէ ։ Եւ ելանէր նոյն ժամուն ։

19 Եւ տեսեալ տիրոջ նորա զի ելանէր յոյս շահ գործոյ նոցա՝ կալեալ զՊօղոս և զՍիղաս՝ քարշեցին զնոսա յատեան առ իշխանսն ։

20 Եւ մատուցեալ առ հազարապետսն՝ ասեն · Մարդիկ սոքա խռովեն զքաղաքս մեր , իբրև հրեայք են ,

21 Եւ քարոզեն սովորութիւնս զոր ոչ է մեզ առնուլ և կատարել , զի հռովմայեցիք եմք ։

22 Եւ յարուցին ամբոխք ՚ի վերայ նոցա , և հազարապետքն պատառեալ զհանդերձս նոցա՝ հրամայեցին հարկանել զնոսա գաւազանաւ ։

23 Եւ բազում հարուածս տուեալ նոցա՝ արկին ՚ի բանտ , պատուիրեալ դահճապետին պահել զնոսա ամենայն ապահովութեամբ ։

24 Որ ընկալեալ զպատուէր այսպիսի՝ արկ զնոսա ՚ի ներքին բանտն , և զոտս նոցա ՚ի գերանդի ամրացոյց ։

25 Իսկ կէս գիշերի Պօղոս և Սիղաս աղօթս առնէին , և օրհնէին զԱստուած երգովք ։ Եւ լսէին զնոսա կալեալքն ։

26 Եւ յանկարծ երկրաշարժ եղև մեծ , որպէս զի սասանեցան հիմունք բանտին , և ամենայն դռունք բացան անդէն , և ամենեցուն կապանքն արձակեցան ։

27 Եւ զարթեալ դահճապետն ՚ի քնոյ՝ և տեսեալ զդռունս բանտին բացեալս՝ հանեալ զսուր իւր՝ կամէր սպանանել զանձն իւր , կարծելով թէ փախեան կալեալքն ։

28 Եւ կոչեաց Պօղոս մեծաձայն՝ ասելով · Մի՛ արկաներ զանձն քո չարեաց , զի ամենեքեան աստ եմք ։

29 Եւ խնդրեալ լոյս՝ մտանէր ՚ի ներքս , և դողալով անկանէր առ Պօղոս և առ Սիղաս ։

30 Եւ հանեալ զնոսա արտաքս՝ ասէ · Տեարք , զի՞նչ արարից զի փրկեալ լիցիմ ։

31 Եւ նոքա ասեն · Հաւատա ՚ի Տէր Յիսուս Քրիստոս , և կեցցես դու և տունդ քո ։

32 Եւ խօսեցան նմա զբանն Աստուծոյ և ամենեցուն որ ՚ի տանն նորա ։

33 Եւ առեալ զնոսա ՚ի նմին ժամու գիշերի՝ լուաց զհարուածս նոցա , և մկրտեցաւ ինքն և ամենայն տունն իւր անդէն ։

34 Եւ տարեալ զնոսա ՚ի տունն իւր՝ սեղան եդ առաջի նոցա , և ուրախացաւ ամենայն տունն իւր հաւատալով Աստուծոյ ։

35 Եւ ընդ լուսանալն առաքեցին հազարապետքն զհարկանողսն՝ ասելով · Արձակեցէք զմարդիկն զայնոսիկ ։

36 Եւ պատմեաց դահճապետն զբանս զայս Պօղոսի , եթէ առաքեցին հազարապետքն զի արձակեսցին ։ Արդ ելէք այժմ , գնացէք ՚ի խաղաղութեան ։

37 Եւ Պօղոս ասէ ցնոսա · Զմեզ հռովմայեցիս առանց դատաստանի հարեալ ՚ի հրապարակի՝ արկին ՚ի բանտ , և այժմ ծածուկ հանեն զմեզ ։ Ո՛չ այդպէս , այլ եկեալ իջուսցեն զմեզ ինքեանք ։

38 Եւ պատմեցին զբանս զայս հազարապետացն , և երկեան լուեալ զի հռովմայեցիք են ։

39 Եւ եկեալ աղաչեցին զնոսա , և հանեալ արտաքս՝ խնդրէին ելանել ՚ի քաղաքէն ։

40 Եւ ելեալ ՚ի բանտէն՝ մտանէին առ Լիդիա , և տեսեալ զեղբարսն՝ մխիթարեցին զնոսա , և գնացին ։

17 Եւ անցեալ զԱմփիպողիս և զԱպողոնիա՝ եկին ՚ի Թեսաղոնիկէ , ուր էր ժողովարան Հրեայից ։

2 Եւ ըստ սովորութեան իւրոյ Պօղոս մտանէր առ նոսա , և երից շաբաթուց խօսէր ընդ նոսա ՚ի գրոց ,

3 Բանայ և ցուցանէ նոցա , եթէ Քրիստոս պարտ էր չարչարել և յարիլ ՚ի մեռելոց , և եթէ Յիսուս Քրիստոս , զոր ես քարոզեմ ձեզ , նա է Քրիստոս ։

4 Եւ ոմանք ՚ի նոցանէ հաւատացին , և միացան Պօղոսի և Սիղասի , և ՚ի յոյն երկիր պաշտեցելոց բազում բազմութիւն , և կանայք ազնուականք ոչ սակաւք ։

5 Եւ նախանձեալ Հրեայքն՝ առեալ ընդ իւրեանս ոմանս ՚ի չարագործ այրոց՝ և ժողովեալ ամբոխ՝ խռովեցուցանէին զքաղաքն , և կայսէին ՚ի տան Յասոնի՝ խնդրելով զնոսա հանել առ ժողովուրդն ։

6 Եւ փնտռեալ զնոսա և չգտեալ՝ քարշեցին զՅասոն և զեղբարսն մանս եկին , Այուրբ Հոգուցն արգելուած՝ որ Ասիայի մէջն Աստուծոյ բանն չքարոզեն ։

7 Գայք երբոր եկին Այասիայի կողմերն , ջանք էին անուամբ որ գըներան Բիւթանիա , և Յիսուսի Հոգին թոյլ չտուաւ նոցանց ։

8 Եւ Այասիայէն որ անցեալ՝ վեր եկին Տրովադա[8] ։

9 Եւ Պօղոսին գիշերուան տեսիլ երևեցաւ · մին Այակեդոնացի մարդ կանգնած էր , աղաչէր զնա և ասէր · Նաւեցիր և օգնեա մեզ ։

10 Եւ երբոր տեսաւ էն տեսիլքն՝ շուտով խնդրեցինք որ դուրս գանք Այակեդոնիա[10] · ինչու որ՝ իմացանք՝ որ Տէրն հրաւիրեց մեզ , որ աւետարանենք նորանց ։

11 Եւ Տրոադայիցն դուրս եկած՝ շիտակ գնացինք Սամոթրակէ · և յետևի օրումն Նէոպոլիս քաղաքն ։

12 Եւ էնտեղէցն Փիլիպպուսն , որ Այակեդոնացոց առաջին բաժինն է՝ Կողոնիա քաղաք[11] · և մենք՝ որ էնտեղ քաղաքումն մինքանի օր դադարեցինք մնացինք ,

13 Շաբաթ օրումն քաղաքիցն դուրս ելանք դէպի գետի ափին՝ որ էնտեղ սովոր էին աղօթք անել · և նստած խօսումէինք ժողովուած կանանց հետն ։

14 Եւ մին կին Լիդիա անուն՝ ծիրանի ծախող՝ որ Փիւաթիր քաղաքին էր՝ Աստուածանից վախող՝ լսեց · որ հենց Տէրն նորա սիրտը բաց արաւ , որ Պօղոսի խօսքերին մարկ անէ[12] ։

15 Եւ երբոր ինքն և իրան տունն մկրտվեցաւ , աղաչումէր և ասումէր · Եթէ որ ինձ Տէրին հա-

(7) Գործ · ԻԶ · 31 · (8) Բ Կորնթ · Բ · 12 · Բ Տիմ · Գ · 12 · (9) Գործ · Ժ · 30 ·
(10) Բ Կորնթ · Բ · 13 · (11) Փիլիպ · Ա · 1 · (12) Ղուկ · ԻԳ · 45 ·

Digitized by Google

Տիտան , մեռնել ՚ի տուն իմ առ-
գերուք . և բանագնացաց տարան
զնոսա ։
16 Եւ եղև մինչ երթայաք մեք
յաղօթիս , պատահեաց մեզ աղա-
խին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ .
որ շահս բազումս տայր տերանց
խրոց մոլելովք ։

17 Սա զՀետ եղեալ Պօղոսի և
մեր՝ աղաղակէր և ասէր . Այդքա-
սայս՝ ծառայք Աստուծոյ բարձրելոյ
են , որ պատմեն ձեզ զճանապարհ-
հաս փրկութեան ։
18 Եւ զայս առնէր ՚ի բազում
աւուրս . զայրացեալ Պօղոս՝ գար-
ձաւ և ասէ ցոյն . Պատուիրեմ
քեզ յանուն Յիսուսի Քրիստոսի .
Ել ՚ի դմանէ . և ել ՚ի նմին ժա-
մու ։

19 Իբրև տեսին տերքն նորա՝
եթէ հատաւ յոյժ շահի նոցա , առ-
եալ զՊօղոս և զՀետ՝ ձգեցին
՚ի հրապարակ առ իշխանսն ։
20 Եւ ածեալ զնոսա առ զօրա-
գլուխսն՝ ասէին . Այդքա այս խռ-
ովեցուցանեն զքաղաքս մեր՝ հրէ-
ականք ՚ըղեալք են ,
21 Եւ պատմեն մեզ օրէնս՝ զոր
չէ արժան մեզ ընդունել , և ոչ
առնել . զի Հռովմայեցիք եմք ։

22 Եւ կուտեցաւ ամբոխն ՚ի մի-
րայ նոցա . և զօրագլուխքն պա-
տառեցին զհանդերձս իւրեանց . հր-
քամայեցին գան հարկանել ։

23 Եւ բազում վէրս եդեալ ՚ի
վերայ նոցա՝ արկին ՚ի բանտ .
ասացեալ հսկմանրիկ , մաճէք իմ տու-
նոյս , հնտեզ ճեացիք . և զօա ա-
րեալ ատրաւ մեզ[13] ։

16 Եւ էլաւ դեռքանի որ մեր
գնուհիւնք աղօթք անել , մեր ա-
ղախին (զաքաւոշ) պատահեց մեզ՝
որ կախարդութեան դև (ջոքա-
ւ) ունէր[14] . որ կախարդութենովն ի-
բան տէրերին շատ շահ էր բե-
րում[15] ։

17 Սա Պօղոսի և մեր եաւէն ըն-
կած՝ աղաղակումբ և ասումբ .
Սա մարդիքս բարձրեալ Աստուծոյ
ծառաներն են , որ ձեզ պատմո-
ղին փրկութեան ճանապարհներն ։
18 Եւ շատ օրեր էս բանըս անու-
մեր . Պօղոսին դժուար եկաւ՝ յետ
դարձաւ և դէմին ասաց[16] . Հիսու-
սի Քրիստոսի անունովն պատուի-
րումեմ քեզ՝ դուրս ել դորանից .
և դէմն հենց էն ժամումն (ասհա-
նաւն) դուրս եկաւ[17] ։

19 Երբոր նորա տէրերն տեսին՝
թէ իրանց շահի յոյսն կորվեցաւ[18] ,
Պօղոսին և Հետին առին[19] քա-
շեցին մինչեան իշխանների մօտն[20] ։
20 Եւ նորանց տարան զօրապե-
տներուն մօտն և ասացին . Այս
մարդիքս խռովացնումեն մեր քա-
ղաքս՝ իրանք Հրեաներ են[21] ,
21 Եւ մեզ էնպէսի օրէնք են
պատմում՝ որ մեզ արժան չէ՝ ոչ
ընդունել , և ոչ անել . ինչու որ
մենք Հռոմայեցի ենք ։
22 Եւ ամբոխն (խալկն) կիսամե-
ցաւ նորանց վերայ . և զօրապե-
տներն իրանց շորերն պատառե-
ցին , և հրաման տուին որ ծե-
ծեն[22] ։

23 Եւ երբոր շատ խոցեր նորանց
վերայ դրին՝ բանտին (պնդանքին)

(12) Հնար . ԺԲ . 3 : ԼԲ . 11 : Գոր . ԺԲ . 21 : Լ՚ուկ . ԽԲ . 29 : Ներ . Ժգ . 3 :
(14) ա Կոր . ԽԸ . 7 : (15) Գործ . ԺԲ . 24 : (16) Մարկ . ա . 25 . 26 : (17) Մարկ .
Ժգ . 17 : (18) Գործ . ԺԲ . 25 , 26 : (19) բ Կորնթ . գ . 5 : (20) Մարկ . ժ . 18 :
(21) գ Կոր . Ժգ . 17 : Գործ . ԺԷ . 6 : (22) բ Կորնթ . գ . 5 : ժա . 23 . 25 . ա
Թես . բ . 2 :

Digitized by Google

պատուիրեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա :

24 Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներքին բանսն . և զոտս նոցա պնդեաց ի կոճղս :

25 Եւ ի մէջ գիշերոյն Պօղոս և Հ իղա կային յաղօթս՝ և օրհնէին զ Աստուած . և ունկն դնէին նոցա կալանաւորքն :

26 Եւ եղև յանկարծակի շարժումն մեծ՝ մինչև ի շարժել հիմունս բանտին . և բացան անդրէն դրունքն ամենայն , և ամենեցուն կապանք լուծան :

27 Իբրև զարթեաւ բանտապետն՝ և եաես բացեալ զդուրս բանտին , ձգեաց զսուսեր՝ և կամէր երթալ զիւրովին . կարծէր փախուցեալ զկապեալսն :

28 Եւ գոչեաց ի ձայն մեծ Պօղոս՝ և ասէ . Մի՛ ինչ գործեր ընդ անձն քո չար , քանզի ամենեքին աստ եմք :

29 Խնդրեաց լոյս՝ և դիմեաց ի ներքս . և զարհի հարեալ անկաւ առաջի Պօղոսի և Հ իղայի :

30 Եւ ածեալ զնոսա արտաքս՝ ասէ . Տնտոր՝ զի՞նչ պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց :

31 Եւ նոքա ասեն . Հաւատա՛ ի Տէր Յիսուս Քրիստոս , և ապրեսցիս դու՝ և ամենայն տունդ քո :

32 Եւ խօսեցան նմա զբանն Տեառնէ՝ և ամենեցուն որ էին ի տան նորա :

33 Եւ առեալ զնոսա ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ի վիրաց անտի . և մկրտեցաւ ինքն և իւրքն ամենեքեան անդէն վաղվաղակի :

34 Եւ ածեալ զնոսա ի տուն մէջ քցեցին . և բանտապետին պատուիրեցին , որ նորանց զգուշութեամբ պահէ :

24 Նա էլ որ էսպէսի պատուէր առաւ , նորանց ներսի բանտն քըցեց . և նորանց ոտներըն կոճղուըմըն (բէօլիքնո՞ւն) պնդացրուց :

25 Եւ մէջ գիշերուայն Պօղոսն և Հ իղան աղօթք էին անում , և օրհնութիւն էին տալիս Աստուծոյ . և (ուրիշ) բանըվածներն նորանց ականջ էին դնում :

26 Եւ յանկարծակի մեծ շարժմունք էլաւ՝ մինչև որ բանտի հիմունքներն էլ շարժվումէին[23] . և շուտով ամէն դռներն բացվան , և ամէնի կապանքներն արձակվեցան[24] :

27 Երբոր բանտապետն զարթնաց , և տեսաւ որ բանտի դռնեըրըն բացված էին , սուրըն քաշեց՝ և կամենումէր ինքն իրան սպանել . ինչու որ՝ կարծումէր՝ թէ կապածներն փախել են :

28 Եւ Պօղոսն մեծ ձայնով կանչեց՝ և ասաց . Չո անձիդ չար բան մի՛ գործեր , ինչու որ՝ մենք ամենքս էստեղ ենք :

29 Ա՛րագ ուզեց՝ և ներս վազեց . և շատ վախով բռնըված Պօղոսի և Հ իղայի առաջին վէրըն կաւ :

30 Եւ նորանց դուրս հանեց և ասաց . Տէրե՛ր՝ ես ինչ պէտք է անեմ որ ապրիմ[25] :

31 Եւ նորանք ասացին . Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին , և կապրիս դու՝ և քո ամէն տունդ[26] :

32 Եւ Տէրի բանըն խօսեցին նորան՝ և էն ամէնին , որ նորա տունըն կային :

33 Եւ նորանց վեր արաւ գիշերի էն ժամումն (սահմա՞ն) էն խոցերիցն լուացաւ . և շուտով մըկրտվեցաւ ինքն և նորա ամէն ընտանիքն :

34 Եւ նորանց տարաւ իրան տուն

(23) Գործ · ե · 31 : (24) Գործ · է · 19 : ժբ · 7 : 10 : (25) Լուկ · ե · 10 : Գործ · ը · 37 : բ · 6 : (26) Յովհ · ե · 16 · 36 : ղ · 47 : ա Յովհ · է · 16 :

Digitized by Google

իւր , եդ առաջի նոցա սեղան . և ուրախ եղև ամենայն ատմբն հաւատացեալ յՀ՚ստուած :

35 Եւ իբրև այգ եղև՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրականՙ և ասեն . Լ՚ձակեա զարսդ զայդոսիկ :

36 Եւ պատմեաց բանտապետն զբանան Պօղոսի , եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք . արդ ելէք և երթայք խաղաղութեամբ :

37 Ւսկ Պօղոս ասէ ցնոսա . Վասն հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս անմեղս Հռովմայեցիս արկին ՚ի բանտ , և արդ լռելեաւն հանեն զմեզ . ո՛չ այդպէս , այլ եկեսցեն՝ ինքեանք իսկ հանցեն զմեզ :

38 Եւ պատմեցին զօրագլխացն նըւիրակքն զբանան . զահի հարան իբրև լուան թէ Հռովմայեցիք են . և եկեալ աղաչեցին զնոսա :

39 Եւ իբրև հանին , աղաչէին գնալ ՚ի քաղաքէն :

40 Եւ ելեալ ՚ի բանտէն՝ մտին առ Լ՚իդիա . և տեսեալ զեղբարսՙ մխիթարեցին զնոսա և գնացին :

35 Եւ երբոր լուսացաւ , զօրագլուխներն ուղարկեցին տիվանի պաշտօնեաներին՝ և ասացին . Լ՚ձակկեր էդ մարդկանցդ :

36 Եւ բանտապետն էն խօսքերըն Պօղոսին պատմեց , թէ զօրագլուխներն ուղարկեցին՝ որ արձակվիք . ուրեմն դուրս եկէք , և գնացէք խաղաղութենով :

37 Ւսայց Պօղոսն ասաց նորանց . Լ՚մէնի առաջին ծեծեցին մեզ՝ որ անմեղ Հռովմայեցի մարդիք ենք , և բանտի մէջ քցեցին[28] . և հիմիկ մեզ թաքուն են հանում . էդպէս չէ , բայց թող հենց իրանք գան մեզ հանեն :

38 Եւ տիվանի պաշտօնեաներն էն խօսքերըն զօրագլուխներին պատմեցին . շատ վախեցան՝ երբոր լսեցին թէ Հռովմայեցիք են . և եկին աղաչեցին նորանց :

39 Եւ երբոր հանեցին , աղաչեցին՝ որ էն քաղաքիցն գնան[29] :

40 Եւ բանտիցն դուրս եկին՝ մտին Լ՚իդիայի մօտ[30] . և եղբարներն որ տեսին՝ նորանց մխիթարեցին և գնացին :

ԳԼ · ԻԶ :

1 Պօղոս հնազանդիկէի մէջն կըթուէր , և որ էն տեղ մին քահան կըհաւատար և մի քահան նորան կըհալածեն : 10 Նշարունէն Պօղոսին և Հ՚իւսիյին Լուկիա հաւլորին , և հնտով կըթարգըն , 18 Նա հնազանդկեցնելովներին հալածվելով , 15 Պօղոս Ը՚ինչ կըգնայ . էն տեղ վիճաբանութիւն կանի և նորանց չկանալած Ը՚ստուածն կըթարգի , 31 Ը՚յնտով շատ մարդիք Ը՚րիստոսի կըգառնան :

1 Եւ Լ՚մփիպօլիսի և Լ՚պօղոնիայի միջն մանգալով՝ եկին հնտա ղօնիկէ , որ էնտեղ Հրէաների ժողովարան կար :

2 Եւ Պօղոսն (իրան) սովորու-

1 Եւ շրջեալ ընդ Լ՚մփիպօլիս և ընդ Լ՚պողոնիա , եկին ՚ի Հնտասաղոնիկէ , ուր էր ժողովուրդ Հրէից :

2 Եւ ըստ սովորութեանն Պօ-

(27) Ղուկ . ե . 29 : ԺԲ . 6 : (28) Գործ . իբ . 25 : (29) Մատթ . ը . 34 : (30) ԱՀբ . 16 :

Digitized by Google

ղա եմուտ առ նոսա , և ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա ի գրոց :

3 Կանգնայր՝ և դնէր առաջի , եթէ պարտ էր Քրիստոսի չարչարիլ և յառնել ի մեռելոց , և թէ նա է Քրիստոսն Յիսուս՝ զոր ես պատմեմ ձեզ :

4 Եւ ոմանք ի նոցանէ հաւանեցան , և վիճակեցան Պօղոսի և Հիլային , բայց պաշտօնէիցն Ա֊թեանոսաց էր բազմութիւն յոյժ , և ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք :

5 Եւ նախանձեցան Ա֊րէայքն , և առեալ արս ոմանս գռեհիկս անօրէնս՝ ամբոխս արարեալ խռովեցին զքաղաքն . և կուտեալ առ յարպարանն Յասոնի , խնդրեցին զնոսա ածել ի հրապարակ :

6 Եւ իբրև ոչ գտին զնոսա՝ քարշէին զՅասոնն և զոմանս եղբարս առ քաղաքապետսն . բողոք բարձեալ թէ որք զաշխարհս խռովեցին՝ սոքա և այսր հասին :

7 Զորս ընկալեալ է Յասոնի . և սոքա ամենեքեան հակառակ հրամանացն կայսեր գործեն . թագաւոր զոմն ասեն զՅիսուս :

8 Եւ խռովեցուցին զժողովուրդսն և զքաղաքապետսն , որ լսէին զայս :

9 Եւ առեալ երաշխաւորութիւն առ ի Յասոնէայ և յայլոցն՝ արձակեցին զնոսա :

10 Նայց եղբարք վաղվաղակի գիշերայն յուղարկեցին զՊօղոս և զՀիլաս ի Ներիա . որք իբրև հասթեան պէս մտաւ նորանց մտ , և երթք շաբաթ (օրերումն) նորանց հետ խօսեց գրքերից[1] :

3 Նաց էր անուամ՝ և առաջի դնուամ , թէ պէտք էր՝ որ Քրիստոսն չարչարվի՝ և մեռելների միջից յարութիւն առնէ[2] . և թէ՝ նա էն Յիսուս Քրիստոսն է , որ ես պատմումեմ ձեզ :

4 Եւ նորանցից մին քանիսն հաւան կացան[3] , և Պօղոսի և Հիլայի[4] հետ միաւորվեցան . բայց աստուածապաշտ Ա֊թեանոսների շատ բազմութիւն կար , և գլխաւոր կանանցից էլ քիչ չէ :

5 Եւ Ա֊րէանները նախանձվեցան , և մինքանի ոամիկ անօրէն մարդիք առին՝ ամբոխ (խուռն) արին , քաղաքի մէջն շփոթութիւն չինեցին . և Յասոնի տան մօտ հասաքված՝ ուզումէին , որ նորանց տանեն դատաստանատունն[5] :

6 Եւ երբոր չըգտին նորանց՝ Յասոնին և մին քանի եղբարներին քաշումէին քաղաքապետների մօտ . և աստիկ աղաղակումն՝ թէ սորանք՝ որ աշխարհըդրն շփոթացրին , էստեղ էլ հասին[6] :

7 Որ Յասոնն ընդունել է նրանց . և սորանք ամէնքն կայսերի հրամաններին հակառակ են գործում . որ մին Յիսուս թագաւոր են ասում[7] :

8 Եւ շփոթացրին ժողովուրդներին և քաղաքապետներին՝ որ էս լսումէին :

9 Եւ Յասոնից և ուրիշներից երաշխաւորութիւն (պատնէշ) առին՝ և նորանց արձակեցին :

10 Նայց եղբարներին Պօղոսին և Հիլային շուտով գիշերումն ճանապարհ քցեցին դէպի Ներիա . որ

(1) Ղուկ . գ . 16 : Գործ . ը . 20 : ժգ . 5 . 16 : ժգ . 1 . ժգ . 13 : ժը . 8 : (2) Ղուկ . խդ . 26 . 46 : Գործ . ժը . 28 : Գործ . գ . 1 : (3) Գործ . իը . 24 : (4) Գործ . ժե . 22 . 27 . 32 . 40 : (5) Հռով . ժգ . 21 : (6) Գործ . ժգ . 20 : (7) Ղուկ . իգ . 2 : Յով . ժը . 15 : ա Պետր . բ . 15 :

Digitized by Google

սին անդր՝ ի ժողովուրդն Երէից գնացին :

11 Որ սոքա էին ազնուականագոյնք՝ քան որ ի Թեսաղոնիկին էին . որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ . հանապազ քննէին զգիրս , եթէ իցէ այս այսպէս :

12 Եւ բազումք ի նոցանէ հաւատացին . և ի Յունաց կանանց զգաստից և յարանց ոչ սակաւք :

13 Որպէս իբրև գիտացին՝ որ ի Թեսաղոնիկէ Երէայքն էին , եթէ և ի Բերիայ պատմեցաւ ի Պօղոսէ բանն Աստուծոյ , եկին և անդր՝ շարժել և խռովեցուցանել զժողովուրդսն :

14 Յայնժամ վաղվաղակի զՊօղոս առաքեցին եղբարքն գնալ մինչև ի ծովեզը . և Թեսագին Երէ Յիւղա և Տիմոթէոս անդէն :

15 Եւ որք տանէին զՊօղոս , ածին զնա մինչև Աթենս . և առեալ պատուէր ի նմանէ առ Երիղա և Տիմոթէոս , զի վաղվաղակի եկեսցեն առ նա , և գնացին :

16 Եւ Աթենս ի մնալ նոցա Պօղոսի , զայրանայր հոգի նորա ի նմա . զի տեսանէր ի կուապաշտութեան զքաղաքն :

17 Եւ խօսէր ի ժողովրդեանն ընդ Երէայս և ընդ պաշտօնեայսն՝ և ի հրապարակն զամենայն օր՝ որոց և պատահէին :

18 Իմանք Էպիկուրեանցն և ի Ստայիկեանց փիլիսոփայից հակառակեին ընդ նմա . և ոմանք ասէին , Ո՞րչափ կամիցի սերմանաքաղս այս խօսել . իսկ այլք , թէ Օ-

նորանք երբեմն հնաեղ հաւին , զԵսուին Երէաների ժողովարանն՝ :

11 Ինչու որ՝ սորանք աւելի ազնիւ անձինք էին՝ քան նորանք՝ որ Թեսաղոնիկեացւոյն էին . որ (Աստուծոյ) խօսքըն ամեն յօժարութեամբ ընդունեցին . միշտ գրքերըն քննուէին , թէ էս (բանս) էպէս լինի՞ :

12 Եւ նորանցից շատերըն հաւատացին . և Յոյն պարկեշտ կանանցից և մարդկանցից էլ քիչ չէ :

13 Իսպէս էն Երէաներն՝ որ Թեսաղոնիկեացւոյն էին , երբոր գիտացին՝ թէ Բերիայի մէջն էլ Աստուծոյ խօսքըն պատմվեցաւ Պօղոսիցըն , էնտեղ էլ եկին՝ որ ժողովրդներըն շարժեն և չխռովացնեն :

14 Իսն ժամանակն եղբարներն Պօղոսին շուտով ուղարկեցին՝ որ մինչև ծովի եզրն գնայ[10] . և Երիղան և Տիմոթէոսն էնտեղ մնացին :

15 Եւ նորանք՝ որ Պօղոսին առնուէին , նորան մինչև Աթէնքն տարան . և որ պատուէր առին նորանից Երիղային և Տիմոթէոսին համար[11] , որ շուտով գան նորա մօտ . գնացին :

16 Եւ Պօղոսն երբոր Աթէնքումըն նորանց սպասումէր , նորա հոգին սաստիկ դժուարանումէր նորա ներսումն . ինչու որ՝ էն քաղաքըն կուապաշտութեան մէջ էր տեսնում[12] :

17 Եւ ժողովարանումն Երէաներին հետ և աստուածապաշտներին հետ խօսումէր՝ և փողոցներումն ամեն օր նորանց հետ՝ որ պատահումէին :

18 Եպիկուրեան և Ստոյիկեան փիլիսոփաներից մին քանիսն նորա հետ հակառակումէին . և մին քանիսն ասումէին . Ինչ (դատարկախօս) սերմ քաղօղս ըսինչ է կամ-

(8) Գործ . ք . 25 . վ պար . 14 . (9) Նոյ . ղէ . 16 . Ղեւ . ժգ . 29 . Ծնվ . ի . 39 . (10) Սաքր . ժ . 33 . (11) Գործ . ժը . 5 . (12) ք պիար . ք . 3 .

Digitized by Google

աթոռի իմի դից՝ թագի պատուիչ լինել. քանզի զՅիսուս և զյարուցիչն մեռելոց :

19 Եւ առեալ զնա ածին յԱրիսպագոն, և ասէին. Կարասցո՞ւք իմանալ՝ թէ զինչ է նոր վարդապետութիւնդ՝ որ ի քէն պատմի :

20 Օտարացուցիչ իմն բերես ի լսելիս մեր. կամիմք գիտել՝ թէ զի՞նչ կամիցի այս լինել :

21 Ոչ ի Աթենացիք ամենեքին՝ և եկեալն օտարք ոչ յայլ ինչ պարապէին, բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս :

22 Եկաց Պօղոս ի մէջ Արիսպագին՝ և ասէ. Արք Աթենացիք, ըստ ամենայնի իբրև պաշտօնասէրս տեսանեմ զձեզ.

23 Վասնզի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ էր, ԱՆԾԱՆՕՒԹԻ ԱՍՏՈՒԾՈՅ. զոր դուք յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ :

24 Աստուած՝ որ արար զաշխարհս և զամենայն՝ որ ի նմա, նա երկնից և երկրի է Տէր. ոչ ի ձեռագործ տաճարս բնակէ,

25 Եւ ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրև կարօտ իմիք. նա ապ ամենայնի կեանս և շունչ և զամենայն ինչ :

26 Արար ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնակեալ ի վերայ ամենայն երեսաց երկրի. Հաստատեաց կարգեալ ժամանակս և

նում խոսիլ. բայց ուրիշներն էլ (աստուածին) թէ երեսում, որ մին օտար կոչի համար պատմում. պատճառն որ՝ Յիսուսին և յարութիւնին էր աւետարանում :

19 Եւ առին տարան նորան Արիսպագոն՝ և ասում էին. Կարօղ ենք իմանալ՝ թէ ի՞նչ է էդ նոր վարդապետութիւնդ՝ որ դու պատմում ես :

20 Ի՝նչ նոր օտար բան ես բերում մեր ականջներին. կամենում ենք իմանալ՝ թէ ես ի՞նչ բան պիտի լինի :

21 Ինչու որ՝ ամէն Աթենացիքն՝ և հնտեղ եկած օտարներն՝ էլ ուրիշ բանի չէին հետևում՝ բայց մինակ որ նոր բան ասեն կամ լսեն :

22 Պօղոսն կանգնեց Արիսպագի մէջն՝ և ասաց. Ով Աթենացի մարդիք, ես ձեզ ամէն կողմանէ կրօնասէր եմ տեսնում.

23 Պատճառն որ՝ ես մանեկի և ձեր պաշտամունքներն տեսի, մին սեղան գտի՝ որ նորա վերայ գրած էր, ՁԻՄԱՆԵԱՆՑ ԱՍՏՈՒԾՈՅՆ. էն որ դուք առանց ճանաչելոյ էք պաշտում, հենց էն ես եմ պատմում ձեզ :

24 Աստուած՝ որ էս աշխարհքըս և ամէն բան՝ որ նորանում կայ[13], արաւ, նա երկնքի և երկրիս Տէրն է[14]. նա ձեռքով շինած տաճարների մէջն չի բնակվում[15],

25 Եւ մարդկանց ձեռքով չի պաշտվում՝ իբրև մին բանի կարօտ լինի[16]. նա ամէնին կեանք և շունչ՝ և ամէն բան տալիս է[17] :

26 Նա մին արիւնից մարդկանց ամէն ազգերն արաւ՝ որ երկրի ամէն երեսին վերայ բնակվին. կարգված ժամանակներ և սահմաններ

(13) գործ. ժգ. 14 : (14) Մատթ. ժա. 25 : (15) գործ. է. 48 : (16) Սալմ. ծ. 16—18 : (17) Ննդ. բ. 7 : Յոբ. ժգ. 22 : Հով. ժբ. 10 : իե. 3 : կ. 4 : Նոյ. իգ. 5 : ծե. 18 : Ովսէ. ժբ. 1 :

Digitized by Google

սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զԱստուած ։

27 Օ՛ի թերևս զննիցեն զնա՝ և գտանիցեն . նաև ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեք ի մէնջ ։

28 Օ՛ի նովաւ կեամք և շարժիմք և եմք , որպէս և ոմանք ի ձերոց ճարտարացս ասացին , թէ Նորա և ազգ իսկ եմք ։

29 Եւ արդ՝ որովհետև ազգ եմք Աստուծոյ , ոչ պարտիմք համարել ոսկւոյ կամ արծաթոյ՝ կամ քարի , որ ի ճարտարութենէ և ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ , զԱստուածականն լինել նմանօղ ։

30 Նայց զժամանակս անգիտութեան անտես արարեալ Աստուծոյ , արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ումեք ապաշխարել ։

31 Վասնզի հաստատեաց օր՝ յորում պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ . ի ձեռն առն՝ որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարուցեալ զնա ի մեռելոց ։

32 Իբրև լուան զյարութիւն մեռելոց , ոմանք ծաղր առնէին . կէսքըն ասէին՝ Լուիցուք ի քէն վասն այդորիկ միւսանգամ ։

33 Եւ ապա Պօղոս ել գնաց ի միջոյ նոցա ։

34 Եւ ոմանք արք անկեալք ի նա , հաւատացին . ընդ որս էր և Դիոնէսիոս Արիսպագացի , և կին մի անուն Դամարիս՝ և այլք ընդ նոսա ։

հաստատեց նորանց բնակութեան համար[18] որ Աստուծոյն խնդրեն[19] .

27 Որ լինի թէ քննեն նորան և գտնեն . և ինքն հեռու չէ հենց մեր ամեն մէկիցս[20] ։

28 Ինչու որ՝ մենք նորանով ենք ապրում և շարժվում՝ և կանք[21] . ինչպէս որ ձեր իմաստուններիցն մին քանիան էլ ասացին . Թէ (Ի՝ենք) հենց նորա ազգիցն էլ ենք[22] ։

29 Եւ հիմիկ՝ որովհետև Աստուծոյ ազգիցն ենք , պէտք չէ՝ որ մենք համարինք՝ թէ Աստուածութիւնն նման լինի ոսկոյ՝ կամ արծաթի կամ քարի , որ մարդոյ վարպետութենով և մտքով փորված չինած է[23] ։

30 Նայց Աստուած՝ որ անգիտութեան ժամանակներըն անտես արաւ[24] , հիմիկ մարդկանց էս է պատուիրում , որ ամեն մէկն ապաշխարէ[25] ։

31 Պատճառն որ՝ (մին) օր հաստատեց՝ որ նորանով արդարութեան աշխարհքըս պիտի դատէ էն մարդոյ ձեռովն՝ որ սահմանեց նորանով ամենին հաւատք տալ[26] որ նորան մեռելների միջիցն յարոյց[27] ։

32 Երբոր լսեցին մեռելների յարութիւն առնելըն , մին քանիան ծաղր էին անում . կէսերն ասում էին՝ Դեռ քանիդ (համար) քեզանից միևել պիտի լսենք ։

33 Եւ յետոյ Պօղոսն նորանց միջիցն դուրս եկաւ գնաց ։

34 Եւ մին քանի մարդիք նորա կողմն ընկան , և հաւատացին . որ նորանց հետն էր Դիոնէսիոս Արիսպագացին , և մին Դամարիս անուն կին՝ և ուրիշներ էլ նորանց հետ ։

(18) բ Օրին . ա . 8 ։ (19) Հռով . ա . 20 ։ (20) Գործ . ժգ . 16 ։ (21) Կող . ա . 17 ։ Նբէ . ա . 3 ։ (22) Տիտ . ա . 12 ։ (23) Նաում . բ . 18 ։ (24) Գործ . ժգ . 15 ։ Հռով . գ . 25 ։ (25) Ղուկ . իգ . 47 ։ Տիտ . բ . 11 , 12 ։ ա Պետր . ա . 14 ։ գ . 3 ։ (26) Գործ . ժ . 42 ։ Հռով . բ . 16 ։ ժգ . 10 ։ (27) Գործ . բ . 24 ։

Digitized by Google

ԻԱ · ԺՐ

3 Պօղոս իբրեւ արուեստն կանճ , և նոքիմաստուն Հրէաներէն և Հեթանոսներէն ամէն շաբաթ օր կբնաւսկ ։ 9 Տէրն անսխլաւմն Պօղոսին կըզօրացնէ ։ 12 Ինպիոս փոխանակ բազմելի առաջին նորա համար պղպատուելիքն կանէն , բայց նա նորանց են գաւառականին գուբս կբհանէ ։ 18 Պօղոս քաղաքէք քաղաք ման գալով աշակերտներըն կբհաստատէ ։ 31 Ընդհանն Ընիւղոսէք և Պրիսկիլլայէ աւելի Ըստուծոյ Հանապարհի ուղղութեամբ 28 Հատ զօրութեամբ Հրէաստին կբգաթոզէ ։

1 Յետ այսորիկ մեկնեալ Պօղոս Աթենացւոց անտի՝ եկն ի Կորնթոս ։

2 Եւ եգիտ Հրէայ զոմն անուն Ակիւղաս՝ յազգէ Պոնտացի , այն ինչ նկեալ յԻտալիայ . և զԲրիսկիղլա կին նորա , վասն հրամանին Կղօդեայ՝ որ յոշնել զամենայն Հրեայս ի Հռովմայ . և յարեցաւ ի նոսա ։

3 Եւ վասն զի համարուեստ էր , եղև առ նոսա՝ և գործէր . քանզի էին խարանակարք արուեստիւ ։

4 Եւ խօսէր ի ժողովրդեանն ըստ ամենայն շաբաթուց և հաւանեցուցանէր զՀրէայս և զԵթնացուսներ ։

5 Իբրև իջին ի Մակեդոնիա՝ Հիղա և Տիմոթէոս , տուպէր հոգւովն Պօղոս դնել վկայութիւն Հրէից՝ թէ Յիսուս է Քրիստոսն ։

6 Եւ յընդդէմ դառնալ նոցա՝ և ի հայհոյել , թօթափեաց զձորձըս և ասէ ցնոսա . Հրուն ձեր ի գլուխս ձեր , քաւեալ եմ ես . յայսմ հետէ ի Հեթանոսս երթամ ։

1 Ապանիկ եւս Պօղոսն էն Հրթենացիներէն հեռացաւ՝ եկաւ Կորընթոս ։

2 Եւ մին Հրէայ գտաւ Պոնտացոյ ազգիցն՝ Ակիւղաս անուն , որ Իտալիայէն նոր եկել էր , և նորա Պրիսկիղա կինն էլ , Կղօդիայի հրամանին համար՝ որ ամէն Հրէաներն Հռոմիցն դուրս գնան . և նոքանց մօտ մտաւ ։

3 Եւ որովհետև հենց միեւ արուեստիցն էր , (նորանց հետ) մնաց նորանց մօտ՝ և բան էր անում . պատճառն որ՝ արուեստով խորանակար (չոփոր կոփոլ) էին ։

4 Եւ Ժողովարանի մէջն ամէն շաբաթի օր խօսում էր և Հրէաներին և Հեթանոսներին հաւանացնում ։

5 Երբոր Հիղան և Տիմոթէոսն վերեկին Մակեդոնիայից Պօղոս հոգովն վառվում՝ որ վկայութիւն դնէ Հրէաներին՝ թէ Յիսուսն է Քրիստոսն ։

6 Եւ երբոր նորանք ներհակ էին դառնում և հայհոյում , շորընդն թափ տաւաւ՝ և նորանց ասաց . Ձեր արիւնն ձեր գլխներիդ վրայ (լինի) , ես անպարտ եմ . հիմիկուց եւս Հեթանոսների մօտն եմ գնում ։

(1) Հռով . ժգ . 3 : ա Կորնթ . ժգ . 19 : բ Տիմ . գ . 19 : (2) Գործ . ի . 34 : ա Կորնթ . գ . 12 : ա Գնխ . բ . 9 : բ Գնխ . գ . 8 : (3) Գործ . ժե . 2 : (4) Գործ . ժե . 14 , 15 : (5) Ցբ . լբ . 18 : Գործ . ժե . 8 : Ա Ղար . 28 : (6) Գործ . ժգ . 45 : ա Գնխ . գ . 4 : (7) Նեհ . ե . 13 : Մատթ . ժ . 14 : Գործ . ժգ . 51 : (8) Ղնտ . ի . 9 . 11 , 12 : բ Գնտ . ա . 16 : Եփես . ժբ . 13 . լգ . 4 : (9) Եփես . գ . 18 , 19 : լգ . 9 : Գործ . ի . 26 : (10) Գործ . ժգ . 46 : ի . 28 :

Digitized by Google

7 Եւ գնացեալ անտի՝ եմուտ ՚ի տուն ուրուքեմն , որում անուն էր Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Ա՛ստուածոյ . որոյ ապարանքն էին միրձ ՚ի ժողովեղն :

8 Կրիսպոս ժողովրդապետք հաւատաց ՚ի Տէր զամենայն տունսն իւրով . և բազումք ՚ի կորնթացւոցն լուեալ՝ հաւատացին և մկրտեցան :

9 Եւ ասէ Տէր ՚ի գիշերին տեսլեամբ ցՊօղոս . Ա՛ռ եթկնչիր՝ այլ խօսեաց և մի՛ լռեր :

10 Վասնզի ես ընդ քեզ եմ , և ո՛չ ոք ընդդէմ դարձցի քո ՚ի չարչարել զքեզ . քանզի ժողովուրդ է իմ բազում ՚ի քաղաքիս յայսմիկ :

11 Եւ նստաւ անդ ամիս մի և ամիսս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Ա՛ստուծոյ :

12 Ի՛ Գաղիոնէ՝ փոխանակաւ բդեշխին Ա՛քայիոյ , յարեան միաբան Հրէայք ՚ի վերայ Պօղոսի , և տծին զնա յատեան .

13 Եւ ասէին , եթէ Ա՛ռաքոյ օրինաց պատուէ սա զմարդիկ՝ պաշտել զԱ՛ստուած :

14 Եւ իբրև մերձ էր Պօղոս բանալ զբերան իւր , ասէ Գաղիոն ցՀրէայսն . եթէ էր ինչ անիրաւութիւն կամ խարդախութիւն չարեաց՝ ով Հրէայք , ՚ի դէպ էք ինձ անսալ ձեզ :

15 Ա՛յլ եթէ խնդիրք ինչ են վասն բանի և անուանց և օրինաց ձերոց՝ տեսէք ձեզեն . քանզի դատաւոր այգպիսի իրաց չկամիմ լինել :

16 Եւ մերժեաց զնոսա յաթոռէ անտի :

17 Եւ առեալ ամենեցուն Հելլենացն զՍոսթենէս ժողովրդապետն՝ հարկանէին առաջի աթոռին . և ոչ

7 Եւ հեռանալոց գնաց մասն մարդոյն՝ որ նորա անունն Տիտոս Յուստոս էր , ումն Ա՛ստուածապաշտ մարդ , որ նորա տունն ժողովարանն մեծ էր :

8 Կրիսպոս ժողովրդապետն հաւատաց Տեառն զամենայն տունսն իւրով . և Կորնթացոց շատերն եթէ լսեցին՝ հաւատացին և մկրտեցան[11] :

9 Եւ Տէրն գիշերամբ տեսլեամբ Պօղոսին ասաց . Ա՛ռ վախենալ քոյդ խօսեաց՝ և լուռ մի՛ կենար[12] :

10 Ընդեւ որ՝ ես քեզ հետ եմ , և ո՛չ ոք քեզ նեղհակ չի գալ նալ՝ որ քեզ չարչարէ . պատճառն որ ես շատ ժողովուրդ ունիմ էս քաղաքեսս[13] :

11 Եւ հետեզ մին տարի և վեց ամիս նստեց՝ և նորանց Ա՛ստուծոյ խօսքըն սովորցնէր :

12 Ա՛քայեցոց Գաղիոս փոխանակ բդեշխի ժամանակէն , Հրէաներն միաբան վերկացան Պօղոսին վերայ , և նորան քաշեցին գատաստան .

13 Եւ ասէին , թէ Սա մարդ կանց խաբէութիւ՝ որ օրինաց հակառակ Ա՛ստուած պաշտեն :

14 Եւ երբոր Պօղոսն մտ էր որ իրան բերանն բանայ , Գաղիոնն Հրէաներին ասաց . Ո՛վ Հրէաներ , թէ որ մին անիրաւութիւն կամ մին չար նենգութիւն լինէք , ինձ արժան էր որ լսէի[14] :

15 Հապց թէ որ ձեր օրէնքին և խօսքի և անուններուն համար խնդիք կան , դուք ինքն տեսէք . ինչու որ՝ էդպէսի բաներուն գատաւոր չեմ կամենում լինիլ :

16 Եւ նորանց էն դատաստանէն դուրս հանեց :

17 Եւ ամէն Հելլէնք Սոսթենէս ժողովրդապետին բռնեցին՝ և առջևանի առաջին ծեծումէին[15] . և Գա-

(11) ա Կորնթ . ա . 14 : (12) Գործ . իզ . 11 : (13) Եսայ . ա . 18 , 19 : Մատթ . իբ . 20 : (14) Գործ . իզ . 29 : իս . 11 . 19 : (15) ա Կորնթ . ա . 1 :

Digitized by Google

ինչ զպնանդեն Փաղիմոնի վասն լինելոցն ։

18 Ասացեալ Պողոսի տակաւին ճեպազնալ ուսուցս քարոզմանն , յեղբարցն հրաժարեալ՝ նաւեր յԱսորիս . և ընդ նմա Պրիսկիղա և Ակիւղա , փոքրիկ զգուշ ի ձենքրեայ . քանզի ուխտագիր էր ։

19 Եւ հասեալ Եփեսոս՝ զնաստ եթող անդ , և ինքն մտեալ ի ժողովարանն խօսեր ընդ Հրէայսն ։

20 Եւ աղաչեցին զնա՝ զարգումն ժամանակս լինել անդ . և ոչ առ յանձն ։

21 Այլ հրաժարեաց ի նոցանէ , և ասէ . Կարձիալ շրջեցայց առ ձեզ Աստուծոյ կամաց , ասպարձաւ յԵփեսոսէ ,

22 Եւ իջեալ ի Կեսարիա՝ ել և ետ ողջոյն եկեղեցւոյն . էջ յԱնտիոք ։

23 Եւ եղեալ անդ ժամանակ ինչ , ել շրջել կարգաւ ընդ Գաղատացւոց աշխարհն և ընդ Փռիւգիա , հաստատել զամենայն աշակերտեալսն ։

24 Հրէայ ոմն Ապեղէս անուն՝ Հղէքսանդրացի յազգէ , այր ճարտարախրաման եկն եչաս յԵփեսոս . զօրաւոր էր գրովք ։

25 Այս էր սեղեկացեալ ճանապարհին Տեառն , և եռայր հոգւով . խօսէր՝ և ուսուցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի . գիտէր միայն զմկրտութիւնն Յովհաննու ։

26 Այս սկսաւ համարձակել ի ժողովարանին . և լուեալ ի նմանէ Ակիւղայ և Պրիսկիղայ , առին զնա առ իւրեանս , և ճշմարտագոյն ղեկն նորա համար ոչ ինչ հոգս չունէր ։

18 Ասացեալ Պողոս դեռ շատ օրեր մնալուցն եաև , եղբարսն երիցն հրաժարեց , և նաւով գնումէր դէպի Ասորիքն . և Պրիսկիղան և Ակիւղան նորա հետ , կենքրայումն[16] գլուխքն խուզեց[17] . ինչու որ՝ ուխտ դրած էր ։

19 Եւ երբոր հասին Եփեսոս , նորանց էնտեղ թողեց , և ինքն մտաւ ժողովարանն՝ և հրէաներին հետ խօսումէր ։

20 Եւ աղաչումէին նորան՝ որ շատ ժամանակ էնտեղ մնայ , և չկատնեցաւ ։

21 Ասացից նորանցից հրաժարեց և ասաց . Աստուծոյ կամքովն մինել ձեզ մօտ յետ կրդառնամ[18] , և փեսոսիցն վերկացաւ ,

22 Եւ վէրեկաւ կեսարիա , վերէլաւ՝ և ողջոյն տուաւ եկեղեցոյն . վէրեկաւ Անտիոք ։

23 Եւ էնտեղ որ մին ժամանակ մնաց , դուրս եկաւ՝ որ Գաղատացոց աշխարհքումն և փռիւգիայի մէջն կարգով մանգայ[19] , ամէն աշակերտներն հաստատելով[20] ։

24 Ա՛ին Ապեղէս անուն Հրէայ[21]՝ ազգով Հղէքսանդրացի , ճարտար խօսող մարդ՝ եկաւ հասաւ Եփեսոս . նա գրքերովն զօրաւոր էր ։

25 Այս Տէրի ճանապարհին սեղակացած էր , հոգով վառվումէր[22] . Յիսուսին համար խօսումէր՝ և ճշմարտութենով սովորցնումէր . և (ինքն) մենակ Յօհաննէսի մկրտութիւնն էր գիտում[23] ։

26 Այս սկսեց ժողովարանի մէջն համարձակ խօսիլ . և երբոր Ակիւղան և Պրիսկիղան նորանից լսեցին , նորան իրանց մօտ առին ,

(16) Համ . ժգ . 1 ։ (17) Ա . Տ . գ . 18 ։ Գործ . իա . 24 ։ (18) ա Կորնթ . դ . 19 ։ Եբր . գ . 3 ։ Յակ . դ . 15 ։ (19) Գաղ . ա . 2 ։ դ . 14 . (20) Գործ . ժգ . 21 ։ ԺԵ . 32 . 41 ։ (21) ա Կորնթ . ա . 12 ։ գ . 5 , 6 ։ դ . 6 ։ Տիտ . գ . 13 ։ (22) Համ . ժբ . 11 ։ (23) Գործ . ժԲ . 3 ։

նրա պատմեցին նմա զճանապարհն Աստուծոյ :

27 Իբրև կամեցաւ նա գնալ Աքայիա , յօժարեալ եղբարք՝ գրեցին առ աշակերտան ընդունել զնա . որ իբրև եհաս անդր՝ բազում նպաստ լինէր հաւատացելոցն ի ձեռն շնորհացն :

28 Վասնզի պնդագոյն զՀրէայսն յանդիմանէր հրապարակաւ . ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոս է Յիսուս :

և էլ աւելի ճշմարտութեամբ Աստուծոյ ճանապարհըն պատմեցին նորան :

27 Երբոր նա կամեցաւ գնալ Աքայիա , եղբարքն յօժար էլան և գրեցին աշակերտներին՝ որ նորան ընդունեն . երբոր նա հնանել հասաւ , հաւատացեալներին շատ օգնութիւն էր տալիս շնորհքի ձեռովն[24] :

28 Ինչու որ՝ խիստ պնդութեամբ յանդիմանութիւր Հրէաներին ամենի առաջին . գրքերն ցոյց տալով՝ թէ Յիսուս է Քրիստոսն[25] :

ԳԼ· ԺԹ

6 Պօղոսի ձեռով Սուրբ Հոգին գալն մարդաբներին վերայ : 9 Հրէաներն իրան վատաբանութիւնն կըսմրանան , որ նորան Աստուծոյ զօրութենովն և հրաշքներով հաստատեր . 13 Հրէաներից երդում ուսողներըն , 16 Շատ դէմից կընճռվին : 19 Սխորդութեան գրքերին այրուիլն : 24 Դիմադիրնոս իրան շահի համար Պօղոսի դէմ՝ մին մեծ շինարութիւն կըբռնէ քաղաքումն , 35 Եւ քաղաքի կարգացուցիչներն գլխաւորն կըդադարցնեն :

1 Եւ եղև մինչդեռ Ապողոս ի Կորնթոս էր , Պօղոսի շրջեալ զվերին կողմամբքն՝ և իջեալ Եփեսոս , և գտեալ զմանս զաշակերտս ,

2 Ասէ ցնոսա . եթէ Հոգի Սուրբ ընկալարո՞ւք ի հաւատալն . Նոքա ասեն ցնա . Ոչ ալ և ոչ թէ Հոգի Սուրբ գոյցէ՝ լուեալ է մեր :

3 Եւ ասէ , Ուրեմն յո՞րնէ մկրտեցարուք . Նոքա ասեն . Ի Յովհաննու մկրտութիւնն :

4 Եւ ասէ Պօղոս . Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ամենայն ժողովրդեանն . և ասէր , զի որ գալոցն է յետ նորա՝ ի նա հաւատասցեն . այսինքն է ի Յիսուս Քրիստոս :

1 Եւ էլաւ դեռ քանի որ Ապողոսն Կորնթոս էր , Պօղոսն որ վերի կողմերումն մանր էր եկել՝ վերեկաւ Եփեսոս . և մին քանի աշակերտներ գտաւ[1] :

2 Ասաց նորանց . Ո՞թէ Սուրբ Հոգին ընդունեցիք երբոր հաւատացիք . Նորանք ասացին նորան . Ո՞նինք էլ իսկի չենք լսել՝ եթէ Սուրբ Հոգի կայ[2] :

3 Եւ ասաց . Ո՞պա ինչով մըկըրտվեցաք . Նորանք ասացին . Յոհաննէսի մկրտութեամբն[3] :

4 Եւ Պօղոսն ասաց . Յոհաննէսն ամէն ժողովրդին ապաշխարութեան մկրտութիւնըն քարոզեց՝ և ասումէր . թէ նա՝ որ նորա եւ էն պիտի գայ , նորան հաւատան . այսինքն է՝ Յիսուս Քրիստոսին :

(24) ա կորնթ . գ . 6 : (25) Պսղմ . ք . 22 : Հբ . 3 : Ալէք . 5 : (1) ա կորնթ . ա . 12 : գ . 5 , 6 : (2) ա Թեսաղ . գ . 7 : Պսղմ . ը . 16 : (3) Պսղմ . Հը . 25 : (4) Մատթ . գ . 11 : Ցովհ . ա . 15 , 27 , 30 : Պսղմ . ա . 5 : Հա . 16 : Հգ . 24 , 25 :

Digitized by Google

5 Եւ իբրեւ լուան , մկրտեցան յանուն Տեառն Յիսուսի :

6 Եւ ի դնել ի վերայ նոցա Պօղոսի զձեռն , եկն Հոգին Սուրբ ի վերայ նոցա . խօսէին լեզուս՝ և մարգարէանային :

7 Եւ էին ամենեքեան արք իբրեւ երկոտասան :

8 Եւ մտեալ ի ժողովուրդն՝ համարձակէր ամիսս երիս . խօսէր՝ և հաւանեցուցանէր վասն արքայութեանն Աստուծոյ :

9 Իբրեւ ոմանք խստանային՝ և ընդդէմ դառնային բամբասել ըզճանապարհն առաջի բազմութեանն , մեկնեալ ի նոցանէ՝ որոշեաց զաշակերտսն . հանապազօր խօսէր ի դիւանին Տիւրաննեայ ուրումն :

10 Եւ այս եղև զերկեամ մի , մինչեւ ամենայն բնակիչքն Ասիացւոց լսել զբան Տեառն՝ Հրէից և Հեթանոսաց :

11 Եւ զօրութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած ի ձեռն Պօղոսի :

12 Մինչ զի և ի հիւանդս առնել ի քրտանէ նորա թաշկինակս կամ վարշամակս , և մերժել ի նոցանէ ախտիցն , և այսոց չարաց ելանել :

13 Եանդգնեցան ոմանք ի շրջող Հրէիցն՝ որ երդմնեցուցիչքն էին , անուանեալ ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այսս չարս , զանուն Տեառն Յիսուսի , և ասէին . Երդմնեցուցանեմ զձեզ ի Յիսուս՝ զոր Պօղոսն քարոզէ :

14 Էին ուրումն Սկեւեայ Հրէի

5 Եւ երբոր լսեցին , Տէր Յիսուսի անունովն մկրտվեցան[5] :

6 Եւ երբոր Պօղոս ձեռն դրաւ նորանց վերայ , Սուրբ Հոգին եկաւ նորանց վերայ[6] . լեզուներ էին խօսում՝ և մարգարէանում[7] :

7 Եւ ամէնքն տասներկու մարդոյ չափ էին :

8 Եւ ժողովարանին մէջ մտած՝ երեք ամիս համարձակ խօսում էր[8] . և Աստուծոյ արքայութեանն համոզում[9] :

9 Երբոր մին քանիսն պնդում էին՝ և ներհակ էին դառնում[10] էն ճանապարհը բամբասելով բազմութեան առաջին , նա հեռացաւ նորանցից՝ և աշակերտներըն ջոկեց[11] . ամէն օր մին Տիւրան (մարդոյ) ժողովարանում էր խօսում :

10 Եւ էս էլաւ մին երկու տարի , մինչև որ Ասիայի ամէն բնակիչներն՝ Հրեաներն և Հեթանոսներն Տէրի խօսքը լսեցին[12] :

11 Եւ Աստուած էնքան զօրութիւններ էր անում Պօղոսի ձեռովն[13] :

12 Մինչև որ նորա քրտինքից թաշկինակներ (մանրամանէք) և վարշամակներ (ֆեշտոններ) տանում էին դնում հիւանդների վերայ , և ցաւերն հեռանում էին նորանցից , և չար դևերն դուրս էին գալիս[14] :

13 Մին քանիսն էն մանեկօղ Հրեաներից՝ որ երդում տուող էին՝ համարձակվեցան Տէր Յիսուսի անունն ասել նորանց վերայ՝ որ չար դևեր ունէին , և ասում էին . Երդում եմ տալիս ձեզ էն Յիսուսովն՝ որ Պօղոսն քարոզում[15] :

14 Մին Սկևի Հրեայ քահանա-

(5) Գործ . Բ . 38 : (6) Գործ . Ը . 6 : Բ . 17 : (7) Գործ . Բ . 4 : Ժ . 46 : (8) Գործ . Ժէ . 2 : ԺԸ . 4 : (9) Գործ . ա . 3 : ԽԸ . 23 : (10) Ր Տիմ . ա . 15 : Ր Պետր . Բ . 2 : Յովհ . 10 : (11) Գործ . Բ . 2 : ԽԲ . 4 : ԽԳ 14 : Ալյոր . 23 : (12) Գործ . ԺԹ . 31 : (13) Մարկ . Ժգ . 20 : Գործ . Ժգ . 3 : (14) Գործ . Ե . 15 : գ Թագ . գ . 29 , (15) Մարկ . Ժբ . 27 : (16) Մարկ . Բ . 38 : Ղուկ . Բ . 40 :

Digitized by Google

քահանայապետի եօթին որդիքը , որ զայս առնէին ։

15 Պատասխանի ետ այն չար՝ և ասէ ցնոսա . ԶՅիսուս գիտեմ և զՊօղոս ճանաչեմ , բայց դուք ո՞վ էք ։

16 Եւ վազեաց այրն՝ յորում էր այն չար՝ ըմբռնեալ զերկոսեան յաղթահարեաց զնոսա , մինչև մերկս և վիրաւորս փախչիլ ՚ի տանէ անտի ։

17 Եւ յայտնի եղև ամենայն Հրէից և Հեթանոսաց՝ որ ՚բնակեալ էին Եփեսոս . և անկաւ երկիւղ յամենեսեան ՚ի նոսա . և մեծացեալ էր անուն Տեառն Յիսուսի ։

18 Եւ (այլ) բազումք ՚ի հաւատացելոցն գային , և խոստովանեալ լինէին՝ և պատմէին զգործս իւրեանց ։

19 Եւ բազումք ՚ի կախարդասացն բերէին զգիրսն , այրէին առաջի ամենեցուն . և համարեցան զգինս նոցա՝ և գտանէին արծաթոյ բիւրս հինգ ։

20 Այսպէս բանն Աստուծոյ աճէր՝ և զօրանայր ։

21 Եւ իբրև կատարեցաւ այս , եդ Պօղոս ՚ի մտի շրջել ընդ Մակեդոնիա և ընդ Աքայիա՝ և գալ Երուսաղէմ . ասէ՝ եթէ Յետ երթալոյն իմ անդր , պարտ է ինձ և զՌոմ տեսանել ։

22 Առաքեաց ՚ի Մակեդոնիա երկուս ՚ի պաշտօնէից իւրոց զՏիմոթէոս և զԵրաստոս , և ինքն մնաց ժամանակ ինչ Ասիայ ։

23 Եւ եղև ՚ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ ՚ի վերայ ճանապարհին ։

յապետի եօթին որդիք կային՝ որ էս անուանէին ։

15 Ոգի չար դէմն պատասխան առաւ և ասաց նորանց . ԶՅիսուսին գիտեմ՝ և Պօղոսին ճանաչեալ եմ , բայց դուք ո՞վ էք ։

16 Եւ էն մարդն՝ որ նորանում չար դև կար՝ վազեց էն երկուսին բռնեց , նորանց տակն քցեց , մինչև որ մերկ և խոցոտած էն տանից փախան ։

17 Եւ էն յայտնի էղաւ ամէն Հրէաներին և Հեթանոսներին՝ որ Եփեսոսումն բնակված էին . և ահ ընկաւ նորանց ամէնքին վերայ[17] . և Տէր Յիսուսի անունն մեծանում էր ։

18 Եւ հաւատացեալներից շատերն գալիս էին՝ խոստովանում էին , և իրանց գործքերըն պատմում էին[18] ։

19 Եւ կախարդութեան չեռուզներից շատերն գրքերըն բերում էին , և ամէնի առաջին այրում էին . և նորանց գինըն համարեցին՝ և գտնում էին յիսուն հազար արծաթի (դահեկան) ։

20 Եւ էսպէս Աստուծոյ խօսքն սաձում էր՝ և զօրանում[19] ։

21 Եւ երբոր էս կատարվեցաւ , Պօղոսն մտքն դրաւ[20] , որ Մակեդոնիայի և Աքայիայի միջովն անցկենայ գնայ Երուսաղէմ[21] . ասաց թէ՝ Ես էնտեղ գնալուց յետև , պէտք է ինձ՝ որ Հռոմ էլ տեսնեմ[22] ։

22 Իրան պաշտօնեաներից երկուսին[20] Տիմոթէոսին և Երաստոսին ուղարկեց Մակեդոնիա , և ինքն մի ժամանակ մնաց Ասիայում[24] ։

23 Եւ էն ժամանակումն շատ խռովութիւն էլաւ[25] էն ճանապարհին համար[26] ։

(17) Լուկ . ա . 65 : է . 16 : Գործ . բ . 43 : դ . 5 . 11 : (18) Մատթ . գ . 6 : (19) Գործ . զ . 7 : ժբ . 24 : (20) Հռոմ . ժե . 25 : Գաղ . բ . 1 : (21) Գործ . ի . 22 : (22) Գործ . ժբ . 21 : ԺԹ . 11 : Հռոմ . ժե . 24—28 : (23) Գործ . ժգ . 5 : (24) Հռոմ . ժգ . 28 : բ Տիմ . գ . 20 : (25) բ Կորնթ . ա . 8 : (26) Գործ . ի . 2 :

Digitized by Google

24 Իսկ Գեմեարիա ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս Արտեմի դից. և ապրը ճարտարացն լինել ոչ սակաւ շահ։

25 Որ ժողովեաց իսկ զնեւսագէսս արուեստին, և ասէ. Ա՛րք՝ դուք ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ գործոյ է շահ մեզ։

26 Եւ տեսանէք և լսէք՝ եթէ ոչ միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ զամենայն իսկ Ասիացւոց՝ Պօղոս այս հաւանեցուցեալ շրջեաց բազում ժողով՝ ասել, թէ Ոչ են աստուածք ձեռագործք։

27 Եւ ոչ միայն այս ճգնէ զմեք կողմս գալ՝ ի յանդիմանութիւն, այլ և զմեծին աստուծոյ Արտեմ եպ զմեհեանն յոչինչ համարել. նաև քակելոց և այ ինչ մեծութիւն նորա, զոր ամենայն Ասիա՝ և տիեզերք պաշտեն։

28 Եւ զայս իբրև լուան, լի եղեն բարկութեամբ. աղաղակէին և ասէին, Մեծ է Արտեմիս Եփեսացւոց։

29 Եւ լցաւ քաղաքն խռովութեամբ. դիմեցին առ հասարակ ի թէատրոնն. յափշտակէին զՄակեդոնացիսն՝ զԳայիոսիւ և զԱրիստարքոս Սակեդոնացի՝ ընկերս Պօղոսի։

30 Ուստ Պօղոս իբրև կամեցաւ մտանել ժամբոխն, ոչ թոյլն ընդնա աշակերտքն։

31 Իսկ և ոմանք ի մեծամեծացն՝ որ էին նմա բարեկամք, յղէին առ նա՝ և աղաչէին, մի՛ տալ զանձն ի թէատրոնն։

32 Ոմք այլ ինչ աղաղակէին, զի էր ժողովն նոցա խռովեալ. և

24 Ընդ որ՝ մին արծաթագործ՝ (պրպլոպ) Դեմետրիոս անուն, Արտեմիս կրօքի արծաթեայ տաճարներ էր շինուած. և քիչ շահ չէր՝ որ տալիս էր վարպետներին[27]։

25 Որ էն արուեստի բանվորներըն էլ ժողովեց՝ և ասաց. Ա՛վ մարդիք՝ դուք ինքներդ գիտուիք, որ էս գործիցս մենք շահ ունինք։

26 Եւ տեսնուիք և լսուիք՝ որ էս Պօղոսն չէ թէ մենակ Եփեսացոց, բայց համարեա թէ՝ ամեն Ասիացոց շատ ժողովուրդ հալածնացնելով՝ էն կողմն գարձրուց. որ ասուած՝ թէ Ձեռքով շինած բաներն աստուած չեն[28]։

27 Եւ չէ թէ մենակ մեր բանս ջանք է անուած որ անարգվի, բայց էլ մեծ աստուծոյ Արտեմեայի տաճարն ոչ ինչէ տեղ է համարվուած. և նորա մեծութիւնն էլ կըքանգվի, որ բոլոր Ասիան՝ և աշխարհք են պաշտում նորան։

28 Եւ երբոր էս լսեցին, բարկութենով լցվան, աղաղակուվին՝ և ասում՝ Մեծ է Եփեսացոց Արտեմիսն։

29 Եւ քաղաքն շփոթութենով լցվաւ. ամենքն էլ միտեղ վազեցին թէատրոնն. և առին քաշեցին Գայոսին[29] և Արիստարքոս Մակեդոնացին՝ Պօղոսի ճանապարհի ընկերներին[30]։

30 Ասց Պօղոսն երբոր կամեցաւ ամբոխի (խալխ) մէջ մտնել, աշակերտներն չըձողին նորան։

31 Ասիայի գլխաւորներից մին քանիսն էլ՝ որ նորա բարեկամներն էին, ուղարկեցին նորա մօտ՝ և աղաչուվին, որ իրան անձնը չըտայ թէատրոնի մէջ։

32 Ոն ամբոխում (խալխում) ա-մեն մէկերն ուրիշ բան էին աղա-

(27) Գործ · ժգ · 19 · 29։ (28) Ψալմ · ճժե · 5 · Եսայ · խդ · 19—20 · Երեմ · ժ · 3 · (29) Գործ · ժգ · 29 · ա Կորնթ · ա · 14։ (30) Գործ · ի · 4 · իե · 2 · Կող · դ · 10 · փիլմ · 24 ·

Digitized by Google

բազումք՝ ի նոցանէ ոչ գիտէին , թէ վասն այր ժողովեալ իցեն :

33 Եւ յամբոխէն բազմութեանէ յառաջ կալան զԱղէքսանդրոս . և իբրև ածին զնա հրէայքն յառաջ , Ալէքսանդրոս շարժեաց զձեռն՝ և կամէր պատասխանի առնել ամբոխին :

34 Իբրև գիտացին՝ եթէ այրն հրէայ է , միաբարբառ եղեալ յաճեցուն՝ իբրև ժամս երկուս աղաղակել , եթէ Մեծ է Արտեմիս Եփեսացւոց :

35 Հռեցոյց դպրապետն զամբոխն՝ և ասէ . Արք Եփեսացիք՝ իսկ ո՞ է ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զԵփեսացւոց քաղաքս մեհենազարդ մեծին Արտեմեայ դիցն , և Կիոպետեայ :

36 Եւ զի այդ այդպէս է անշուշտ՝ ձեզ պարտ է հանդարտել , և մի՛ ինչ յանգգնութեամբ գործել :

37 Արք զարսդ զայդոսիկ այսր , ոչ մեհենակապուստս՝ և ոչ հայհոյիչս աստուածոյ մերոյ :

38 Այլ եթէ Դեմետրիոս և որք ընդ նմա ճալատարք՝ ունիցին ինչ ընդ ումեք բանս , յատեան երթիցեն , և դատաւորք գոն , և ամբաստանեսցին զմիմեանց :

39 Այլ եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւուր ժողովն վճռեսցեն :

40 Վասնզի և մեզ վիշտ վտանգի է ընդ կուտոյս այսր աւուր՝ առանց իրիք յանցանաց լինելոյ , զորմէ ոչ կարասցուք պատասխանի տալ վասն ժողովոյս այսորիկ . և զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն :

33 Եւ էն շատ ամբոխի միջից Ալէքսանդրոսին բռնեցին դուրս քաշեցին . և երբոր հրէաներն Ալէքսանդրոսն[31] ձեռն շարժեց՝ և կամենում էր ամբոխին (խօսքին) պատասխան տալ[32] :

34 Երբոր գիտացին՝ թէ էն մարդն հրէայ է , ամէնքն էլ միձայնով երկու ժամ (սահմն.) չափ աղաղակում էին , թէ Մեծ է Եփեսացոց Արտեմիսն :

35 Կարդացողների գլխաւորն էն ամբոխին դադարացրուց՝ և ասաց . Այվ Եփեսացի մարդիք՝ ովի է էն մարդն՝ որ չի գիտում թէ էս Եփեսացոց քաղաքս մեծ Արտեմիս կրօքի և Կիոպետի կրօքների սաճարներումն զարդարված է :

36 Եւ որովհետև էդ շինած էդպէս է , պէտք է ձեզ որ հանդարտիք , և չսփիրն դուրս բան չըգործէք :

37 Էդ մարդկանցըդ բերիք էստեղ , ոչ թէ որ կրօքի սուն են կողոպտել՝ և ոչ մեր աստուծոյն հայհոյանք են ասել :

38 Ուրեմն՝ թէ որ Դեմետրիոսն և նորա հետ լինող վարպետներն՝ մէնին հետ բան ունենան , թող գընան տիվանն և դատաւորներ կան , և թող միմեանց գանգատ անեն :

39 Այլ թէ որ ուրիշ բանի համար խնդիր լինի , թող օրինաւոր ժողովքի մէջն կատարեն :

40 Ինչու որ՝ մեզ էլ մեծ վտանգ կայ էսօրվան կռվիս համար . որովհետև յանցանք (պատճ.) չըկայ , որ էս ժողովքիս համար չենք կարող պատասխան տալ . և էս ասելով՝ ժողովուրդըն արձակեց :

(31) ա Ցխ . ա . 29 : բ Ցխ . գ . 15 : (32) Գործ . ժբ . 17 :

Digitized by Google

ԳԼ · Ի

1 Պօղոս Մակեդոնիա գնալը : 7 Տէրի ընթրիքն կանխ և քարոզ կըլլայ : 9 Նաւթոս վէրկնկին տանից և վեր կըկուլի մեռած . 10 Նա նորան Պօղոսի ձեռօքը բժըշկին կենդանի : 17 Մեկնաբերքն նփհասս մարդ կաղաչեկ . և եկեղեցոյ երեցներըն կըկանչ , և իրան ինչ անելը և ինչ լինելն նորանց կըպատմեկ , 28 Տէրի հօտն (ոխ-բ-ն) նորանց կըյանձնէ , 29 նորանք սաստ վարդապետներից ղեյշ կանէ , 33 Ու նորանք Ըստուծոյ կըյանձնէ , 36 նորանց ամէնին հետ աղօթք կանէ , և նորանցից կըկակէ՝ կըհնայ :

1 Ու յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պօղոս զաշակերտան , և մխիթարեաց . ողջոյն ետ՝ և ել գնաց ՚ի Մ՝ակեդոնիա :

2 Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ՝ և մխիթարեալ զնոսա բանիւք բազմօք , եկն Հելլադայ :

3 Ի բրև արար անդ ամիսս եբրիս , եղև նմա դաւ ՚ի Հրէից , մինչդեռ կամէր ելանել Ա՝սորիս . խորհուրդ կալաւ դառնալ ընդ Մ՝ակեդոնիայ :

4 Եւ երթայր ընդ նմա մինչև Ա՝սիայ՝ Սոսիպատրոս Պիւռա Ներիացի , և ՚ի Թեսաղոնիկեացւոց՝ Ա՝րիստարքոս և Սեկունդոս՝ և Գա՝յիոս Դերբացի և Տիմոթէոս , և Ա՝սիացիք՝ Տիւքիկոս և Տրոփիմոս :

5 Սոքա յառաջ երթեալ մնային մեզ ՚ի Տրովադայ :

6 Եւ մեք նաւեցաք յետ աւուրց բաղարջակերաց ՚ի Փիլիպպեայ՝ և եկաք առ նոսա ՚ի Տրովադա՝ մինչև յաւուրս հինգ . անդ դադարեցաք աւուրս եօթն :

7 Եւ յաւուրն շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ էաք բեկանել ըզհացն , Պօղոս խօսէր ընդ նոսա՝ զի

1 Ու ամբոխի (խ-լէ) դադարելուցն ետև՝ Պօղոսն աշակերտներին կանչեց , և մխիթարեց . ողջոյն տուաւ՝ և դուրս եկաւ գնաց Մ՝ակեդոնիա՝ :

2 Եւ էն կողմերն որ ման եկաւ՝ և շատ խօսքերով մխիթարեց նորանց , եկաւ Հելլադա :

3 Երբոր էնտեղ երեք ամիս կացաւ , Հրէաներն ՚որոգայթ (ըլլէ) քցեցին նորան՝ , դեռքանի որ կամենումեր դուրս գալ Ա՝սորից երկիրն . խորհուրդ արաւ՝ որ Մ՝ակեդոնիայի միջոմն յետ դառնայ :

4 Եւ մինչև Ա՝սիա նորա հետ գնումեր Սոսիպատրոս Ներիացին՝ Պիւռոսի որդին . և Թեսաղոնիկեցիներից Ա՝րիստարքոսն և Սեկունդոսն՝ և Գայիոս Դերբացին և Տիմոթէոսն՝ , և Ա՝սիացիներից՝ Տիւքիկոսն և Տրոփիմոսն՝ :

5 Սորանք առաջ գնացին՝ սպասումէին մեզ Տրոադայի մէջն :

6 Եւ մենք բաղարջակերաց օրերին ետև նաւով գնացինք Փիլիպպիայից , և մինչև հինգ օրումն եկինք Տրոադա նորանց մօտ . էնտեղ եօթն օր դադարեցինք՝ :

7 Եւ շաբաթի օրումն՝ դեռ որ ժողովված էինք հաց կարելոյ հաւմար՝ , Պօղոսն նորանց հետ խօ-

(1) = Կորնթ . ժգ . 5 : = Տիմ . ա . 3 : (2) Գործ . թ . 23 : իգ . 12 : իե . 3 : բ Կորնթ . ժա . 26 : (3) Գործ . ժթ . 29 : իե . 2 : Կող . դ . 10 : (4) Գործ . ժթ . 29 : (5) Գործ . ժգ . 1 : (6) Նէհ . գ . 21 : Կող . դ . 7 : բ Տիմ . դ . 12 : Տիտ . դ . 17 : (7) Գործ . իա . 29 : բ Տիմ . դ . 20 : (8) Նէհ . ժբ . 14 , 15 : իգ . 15 : (9) Գործ . ժգ . 8 : բ Կորնթ . բ . 12 : բ Տիմ . դ . 13 : (10) Գործ . բ . 32. 46 : = Կորնթ . ժ . 16 : ժա . 20 , Համբ :

Digitized by Google

գնալոց էր ի վաղիւ անդր . և երկայնեաց զբանն մինչև ի միջ գիշերոյն :

8 Լինին լապտերք բազումք ի վերնատանն , ուր էաքն ժողովեալ :

9 Եւ նստեր ոմն երիտասարդ անուն Եւտիքոս՝ ի վերպ պատուհանին , նիրհէր ի քուն թանձրութեան՝ ի խօսելն Պօղոսի յաճախ , ընկղմեալ ի քնոյ անդի՝ անկաւ յերրորդ դասիկոնեն ի վայր , և բարձաւ մեռեալ :

10 Եւ իջեալ Պօղոսի անկանէր զնովաւ , առնոյր զնա ընդ գիրկս և ասէր . Ա՛ի խռովիք , քանզի հոգի սորա ի նմին է :

11 Եւ ել երեկ զՀացն՝ և ճաշակեաց . և բազում ևս խօսեցաւ մինչև յառաւօտ , և ապա ել գընաց :

12 Եւ ածին զպատանին կենդանի , և մխիթարեցան ոչ սակաւ :

13 Եւ մեք մեաք ՝ի նաւն՝ առաքեաք Ա՛սոն . անտի ակն ունէաք ընդունել զՊօղոս . զի այնպէս պատուիրեալ էր՝ զինչ ինքն զգամաքառն երթալոց էր :

14 Եւ իբրև պիտեցաւ մեզ ՝ի Ա՛սոն , առեալ զնա եկաք ՝ի Ա՛նտիլենէ :

15 Եւ անտի նաւեալ ՝ի վաղիւ անդր հասաք հանդէպ Քիոյ . և ՝ի միւս օրն հասաք ՝ի Սամոս . և ՝ի վաղիւ անդր եկաք ՝ի Տ՛ռղիոն :

16 Օ՛ն ՝ի մտի եդեալ էր Պօղոս աւր նաւել առ Եփեսոս՝ որպէս զի մի՛ լիցի նմա ժամանակ ինչ յատել Ա՛սիոյ . քանզի փութայր եթէ կարր ինչ լիցէ նմա՝ զօրն Պենտեկոստէ՝ լինել սր՝ յերեւի օրուանն պէտք էր գնալ . և խօսքն երկարացուց մինչև կէս գիշերն :

8 Եւ շատ լապտերներ (ջահեր) կային էն վերնատանն՝ որ մեք ժողովված էինք[11] :

9 Եւ մին Եւտիքոս անուն երիտասարդ (մանչ տղայ) պատուհանին վերայ նստած էր . Պօղոսի երկար խօսելոյ ժամանակին , քնանձը քնի մէջն ննջեցեր . և որ խոր քնով բռնըվճած էր՝ ատեն ատեն երրորդ դասիկոնէյն (պլինդն) վէր ընկաւ , և վերկացաւ մեռած :

10 Եւ Պօղոսն վէրնեկաւ նորա վրայ ընկաւ[12] . և նորան՝ գիրկն էր առնուած և ասաւ . Ա՛ի շփոթիք[13] , ինչու որ՝ սորա հոգին սորանաւ է :

11 Եւ վեր ելաւ հացըն կարեց՝ և կերաւ . և էլ շատ խօսեց մինչև առաւօտն , և յետոյ դուրս եկաւ և գնաց :

12 Եւ էն տղային բերին կենդանի , և շատ միխիթարվեցան :

13 Եւ մենք նաւն մտինք՝ գնացինք Ա՛սոն . էնտեղից յոյս ունէինք՝ որ մինակ Պօղոսին մեզ հետ առնենք . ինչու որ՝ էնպես էր պատուիրել դեռ որ ինքն ցամաքումն գընալու էր :

14 Եւ երբոր Ա՛սոնումն հանդիպեցաւ մեզ , վեր առինք նորան և կինք Ա՛նտիլենէ :

15 Եւ էնտեղից նաւով գնացինք յետևի օրումն հասինք Ք՛իոյի դիմացն . և մէկէլ օրումն հասինք Սամոսն . և յետևի օրումն եկինք Տ՛ռղիոն :

16 Լինչու որ՝ Պօղոսն իրան միտքի մէջն դրել էր՝ որ Եփեսոսի մոտովն նաւով անցկենայ՝ որ չըլինի թէ նա Ա՛սիայի մէջն մին ժամանակ յետ մնայ . պատճառն որ՝ վը-

(11) Գործ . ա . 13 : (12) գ Թագ . ժէ . 21 : գ Թագ . է . 35 : (13) Մատթ . թ . 24 :

Digitized by Google

տեկաւեից եգիտաղ յԵրուսաղէմ ։

17 Եւ ՚ի ՝ելիտեայ յղեալ յԵփեսոս՝ կոչեաց զԵրիցունս եկեղեցւոյն ։

18 Եւ իբրեւ եկին առ նա, ասէ ցնոսա. Դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ՝ յորմէ եկի ՚ի Ասիա. որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակն եղէ ։

19 Ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ և թաղումբ արտասուօք և փորձութեամբք՝ որ պատահեան ինձ ՚ի նենգութեանց Հրէից ։

20 Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ՝ և ուսուցանել զձեզ հրապարակաւ և առանձին.

21 Վկայութիւն տալ Հրէից և Հեթանոսաց զապաշխարութեանն՝ որ առ Աստուած, և զհաւատացն՝ որ ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս ։

22 Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ հոգւով երթամ Երուսաղէմ. և որ ինչ անգ ընդ իս անցանելոց իցէ՝ չգիտեմ ։

23 Բայց զի Հոգին Սուրբ ըստ քաղաքաց վկայէ ինձ՝ և ասէ, եթէ կապանք և նեղութիւնք ինձ կան ։

24 Այլև ոչ իւիք համարիմ զանձն իմ պատուական՝ որպէս զկատարել զընթացս իմ ուրախութեամբ, և զպաշտօնն՝ զոր առի ՚ի Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել աւետարանի շնորհացն Աստուծոյ ։

ոտզուածք[14], որ եթէ կարելի լիցի նորան՝ Պենտեկոստէի օրուանն գնալոյ Երուսաղէմ[16] ։

17 Եւ Հղիտէյին ուղարկեաց Եփեսոս՝ եկեղեցոյ երէցներըն կանչեց ։

18 Եւ երբոր եկին նորա մօտ, նորանց ասաց. Դուք ինքներդ գիտուիք՝ եթէ էն առաջին օրէյն եւ որ Ասիա եկի՝ ինչպէս էյայ ամէն ժամանակներն ձեզ հետ[17] ։

19 Ամէն խոնարհութեամբ Տէրին ծառայեցի, և շատ արտասուքով և փորձութիւններով որ Հրէակաների մարքներէյն պատահեցին ինձ[18] ։

20 Ինչպէս որ իսկի մին օգտակար բան վախով չըծածկեցի, որ չգպատմեմ և սովրցնեմ ձեզ՝ թէ փողոցումն և թէ տան մէջն[19] ։

21 Հրէաներին և Հեթանոսներին վկայութիւն տուբ[20] էն ապաշխարութեան համար՝ որ դէպի Աստուած է, և մեր Տէր Քհսուս Քրիստոսին հաւատալոյն համար[21] ։

22 Եւ հիմիկ՝ ահա ես հոգւոյն կապված գնումիմ Երուսաղէմ. և չեմ գիտում՝ թէ ինծեղ ինչ պիտի անձկնոյ ինձ վերայ[22] ։

23 Միայն թէ Սուրբ Հոգին քաղաքից քաղաք ինձ վկայումի՝ և ասումի, թէ կապանքներ և նեղութիւններ սպասումին քեզ[23] ։

24 Բայց ես իսկի մին բանով էլ իմ անձըս պատուական չեմ համարում[24] որ ուրախութենով կատարեմ իմ վազելքն[25], և էն պաշտօնըն[26] որ Տէր Քհսուս Քրիստոսէն առի, որ Աստուծոյ շնորհաց աւետարանին վկայ լինիմ[27] ։

(15) Գործ · ժը · 21 : ժբ · 21 : ի · ե · 13 : (15) Գործ · բ · 1 : ա Կորնթ · ժգ · 8 : (16) Գործ · ի · 17 : (17) Գործ · ժը · 19 : ժբ · 1 · 10 : (18) Ղ·Իր · 3 : (19) Ղ·Իր · 27 : (20) Գործ · ժը · 5 : (21) Մարկ · ա · 15 : Ղ·Հով · ի · 47 : Գործ · բ · 38 : (20) Գործ · ժբ · 21 : (23) Գործ · ի · 11 : ա Թես · գ · 3 : (24) Գործ · ի · 13 : Հռոմ · ը · 35 · բ Կորնթ · գ · 16 : (25) բ Տիմ · գ · 7 : (26) Գործ · ա · 17 : բ Կորնթ · գ · 1 : (27) Գաղ · ա · 1 : Ցիտ · ա · 3 ։

Digitized by Google

25 Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, թէ ոչ ևս տեսանիցէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ քարոզել զարքայութիւնն։

26 Վասն որոյ վկայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ եմ յարենէ ամենեցուն։

27 Վասնզի ոչ խորշեցայ՝ ի պատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ։

28 Զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն, զոր ապրեցոյց արեամբ իւրով։

29 Վասնզի գիտեմ ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակօղք ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտին։

30 Եւ ի ձէնջ յարիցեն արք՝ որք խօսիցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց։

31 Վասն այսորիկ արթուն կացէք, և յիշեցէք՝ զի զերկեամ մի զգոյգ և զցերեկ ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի ի իւրաքանչիւր։

32 Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ՝ և բանի շնորհաց նորա, որ կարօղն է շինել՝ և տալ ձեզ ժառանգութիւն ընդ սուրբսն ամենայն։

33 Ընծաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կամ հանդերձից ոչ ուրուք ի ձէնջ ցանկացայ։

25 Եւ հիմի՝ ահա ես գիտումեմ, որ էլ իմ երեսըս չէք տեսնիլ դուք ամէնքդ[29], որ ձեր մէջն մանեմ Աստուծոյ արքայութիւնըն քարոզելոյ համար։

26 Վրա համար՝ էս օր վկայութիւն եմ դնում ձեզ՝ որ ձեր ամէնից արիւնից անմեղ եմ[30]։

27 Ինչու որ՝ յետ չըքաշվեցայ[31] Աստուծոյ ամէն կամքըն ձեզ պատմելուց[32]։

28 Զգոյշ կացէք անձներիդ՝ և ամէն հօտիդ (անբիծ)[33], որ Ուրբ Հոգին ձեզ վերակացու դրաւ նորանում[34], որ արածացնէք Տէրի ժողովուրդըն. նորան՝ որ իրան արիւնովն[35] ապրեցրուց[36]։

29 Պատճառն որ՝ ես գիտումեմ, որ իմ հեռանալուցն ետև՝ յափշտակող գայլեր կըգան ձեր մէջն, որ հօտիդ (անբիծ) չեն խնայիլ[37]։

30 Եւ ձեզանից էլ մարդիք վերկըկենան՝ որ ծուռ բաներ կըխօսին, որ աշակերտներին իրանց ետևէն քաշեն[38]։

31 Վրա համար արթուն կացէք, և մտքներդ բերէք՝ որ երկու տարի գիշեր և ցերեկ չդադարեցի ամէն մէկիդ արտասուքով խրատելէ[39]։

32 Եւ հիմի՝ ձեզ Աստուծոյ եմ յանձնում՝ և նորա շնորհաց խօսքին[40], որ նա կարող է շինել[41] և ամէն սրբերին հետ ձեզ ժառանգութիւն տալ[42]։

33 Ձեզանից մէնի արծաթին կամ ոսկոյն կամ շորերին չըցանկացայ[43]։

(28) Ա՝այլ · 38 : Ընտիր · ժե · 28 : (29) Խոթ · ժբ · 6 : բ կորնթ · է · 2 : (30) Ա՝էր · 20 : (31) Ա՝ոխ · է · 30 : Հավհ · ժե · 15 : Նէեմ · ա · 11 : (32) ա Տիմ · գ · 16 : ա Պետր · է · 2 : (33) ա կորնթ · ժբ · 28 : (34) Նէեմ · ը · 14 : (35) Նէեմ · ա · 7 · 14 : կող · ա · 14 : Նէեմ · ը · 12 : ա Պետր · ա · 19 : Հայոց · է · 9 : (36) Աթոռ · է · 15 : բ Պետր · բ · 1 : (37) ա Տիմ · ա · 20 : ա Հավհ · բ · 19 : (38) Խոթ · ժբ · 10 : (39) Նէեմ · ժգ · 9 : (40) Խոթ · ը · 31 : (41) Խոթ · իզ · 18 : Նէեմ · ա · 16 : կող · ա · 13 : գ · 24 : Նէեմ · ը · 15 : ա Պետր · ա · է : (42) ա Թեսա · ժբ · 3 : ա կորնթ · ը · 13 : բ կորնթ · է · 2 : փա · 0 : ժբ · 17 :

Digitized by Google

34 Դուք ինքներին գիտէք՝ զի ըզպահան իմ և որոց ընդ իս էին՝ պաշտէին ձեռք այս ։

35 Եւ զամենայն ինչ ցուցի ձեզ . զի այսպէս պարտ է վաստակել , և դարմանել զհիւանդս . և յիշել զբանն Տեառն Յիսուսի , զոր ինքն իսկ ասաց . Երանելի է մանաւանդ տալ՝ քան առնուլ ։

36 Եւ զայս իբրև ասաց , եդեալ ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս ։

37 Հազիւ լալիւն եղև ամենեցուն . և անկեալ զպարանոցսն Պօղոսի՝ համբուրէին զնա ։

38 Այ՝որմոքէին մանաւանդ ՚ի վերայ բանին՝ զոր ասէր , թէ ոչ ևս տեսանելոց են զերեսս նորա . և յուղարկեցին զնա ՚ի նաւ անդր ։

34 Դուք ձեզանից գիտեմք՝ որ էս ձեռներս վաստակեցին իմ պէտքըս , և նորանցն էլ որ ինձ հետ էին[43] ։

35 Եւ ամէն ինչ ցոյց տուի ձեզ՝ որ էպէս պէտք է աշխատիլ , և հիւանդներին հոգս տանել , և Տէր Յիսուսի խօսքըն յիշել , որ հենց ինքն ասաց[44] . Լաւլի երանելի է տալն՝ քան թէ առնելն ։

36 Եւ երբոր էս ասաց , ծունր դրաւ ամէնին հետ՝ և աղօթք արաւ[45] ։

37 Լմինքն էլ շատ լաց էին լինում . և Պօղոսի վըզովն ընկած՝ նորան համբուրում էին[46] ։

38 Սրտերն էլ մանաւանդ կսկիծ ածումէին էն խօսքի համար՝ որ ասումէր , թէ նորա երեսըն էլ չըպիտի տեսնեն . և նորան ճանապարհ քցեցին դէպի նաւն[47] ։

ԿԻ · ԻԸ

1 Պօղոս խոկի չքնաղանդիքն՝ որ նըստապէմ գնալուցն յետ կենայ ։ 9 Փիլիպպոսի մարդարէ աղջիկներն , 17 Պօղոսի նըստապէմ գնալը , 27 Ու էն տեղ ձեռք կըթթվի և շատ մեծ վտանգէ մէջ կըլինի , 31 Ասյց հազարապետն նորանց ձեռներից կառնէ և հրամայի կըտայ նորան՝ որ ժողովուրդի հետն խօսի ։

1 Եւ իբրև եղև ելանել մեզ և ձգնել ՚ի նոցանէ , հանդէպ գրնացեալ եկաք ՚ի Կով . և ՚ի վաղիւ անդր ՚ի Հռոդն , և անտի ՚ի Պատարայ ։

2 Եւ գտեալ նաւ մի՝ զի երթայր ՚ի փիւնիկէ , և ելեալ ՚ի նա գնացաք ։

3 Եւ յայտ եղեալ կիպրեայ՝ թողաք զնա ՚ի ձախակողմն , նաւեցաք ՚ի Սորիս , և իջաք ՚ի Տիւրոս . քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինս ։

1 Եւ երբոր էլաւ՝ որ մենք դուրս եկինք և նորանցից ջոկվեցանք , շիտակ գնալով եկինք Կով . և յետևի օրումն (եկինք) Հռոդն , և էնտեղից Պատարայ ։

2 Եւ մեն նաւ որ գտինք՝ որ փիւնիկէն էր գնում , նորա մէջն մտինք գնացինք ։

3 Եւ երբոր կիպրոսն երևեցաւ՝ նորան մեր ձախ կողմն թողինք , նաւն շիտակեցինք դէպի Սորիքն , և վէր եկինք Տիւրոս . ինչու որ նաւն (իրան) բեռներըն էնտեղ պիտի թափէր ։

(43) Գործ . ժը . 3 : ա կորնթ . գ . 12 : ա Թես . բ . 9 : բ Թես . գ . 8 : (44) Հռոդ . ժե . 1 : ա կորնթ . բ . 12 : բ կորնթ . ժա . 9 . 12 : ժբ . 13 : Եփես . գ . 13 : ա Թես . գ . 11 : ե . 14 : բ Թես . գ . 8 : (45) Գործ . է . 59 : իա . 5 : (46) Ծննդ . խե . 14 : խզ . 29 : (47) Վէր . 35 :

Digitized by Google

4 Եւ գտեալ զաշակերտան՝ կացաք անդ աւուրս եօթն. որք ասէին ցՊօղոս ի հոգւոյն՝ մի՛ երթանել Երուսաղէմ։

5 Եւ իբրեւ եղեւ մեզ կատարել զաւուրսն՝ երթեալ գնայաք, յորժամ ելանել զմեզ ամենեցուն հանդերձ կանամբք եւ որդւովք մինչեւ արտաքոյ քաղաքին. և եդեալ ծունր ի ծովեզերին՝ կացաք յաղօթս։

6 Եւ հրաժարեցաք ի միմեանց՝ և եղաք ի նաւն. և նորա դարձան յիւրեանց տեղիս։

7 Եւ մեր զնաւն առնեմեալ ի Տիւրոսէ՝ հասաք ի Պտողեմայիդա. և ազդեալ առեալ եղբարցն՝ եղաք օր մի առ նոսա։

8 Եւ ի վաղիւ անդր ելեալ անաւ՝ եկաք ի Կեսարիա. և մտեալ յատենարանն փիլիպպոսի աւետարանչի, որ էր յեօթանց անտի, ագաք առ նմա։

9 Եւ նմա էին դստերք չորք՝ կոյսք մարգարէք։

10 Եւ ի լինելն մեզ անդ աւուրս բազումս, էջ ոմն ի Հրէաստանէ մարգարէ՝ անուն Ագաբոս։

11 Եւ եկեալ առ մեզ, առեալ զգօտին Պօղոսի՝ կապեաց զոտս և զձեռս իւր, և ասէ. Այսպէս ասէ Հոգին Սուրբ. Զայրն որոյ գօտիս այս է՝ այսպէս կապեսցեն Երուսաղէմ Հրեայք, և մատնեսցեն ի ձեռս հեթանոսաց։

12 Եւ իբրեւ լուաք զայն՝ աղաչեաք մեք, և որ ի տեղւոյն էին՝ չելանել նմա Երուսաղէմ։

13 Յայնժամ պատասխանեաւ ես Պա-

4 Եւ աշակերտներին որ գտինք՝ հնացաք եօթն օր ընդունիլ. որ նոքա Սուրբ Հոգւոյ ձեռնէն Պօղոսին ասացին, որ վեր չելլէ Երուսաղէմ[1]։

5 Եւ երբոր մենք էն օրերը կատարեցինք, գուրս եկինք գնացինք. ամէնքն՝ մեզ կառնացով և որդիքներով ճանապարհ ջրեցին մինչեւ քաղաքի գուրս կողմն. և ծովի եզերն (ղսալն) մեծ ծանր դրինք և աղօթք արինք[2]։

6 Եւ իրարից բաժանվեցանք և վերկեանք նաւն. և նորանք յեա դարձան իրանց տեղերն։

7 Եւ մենք նաւն Տիւրոսէն առաջ քցեցինք՝ հասինք Պտողեմայիդա. և եղբայրներին ողջոյն տալինք՝ նորանց մօտ մին օր ձեացինք։

8 Եւ յետևի օրս ելնելով դուրս էլանք՝ եկինք Կեսարիա. և փիլիպպոս աւետարանչի առանն մտինք՝ որ նա էն եօթնիցն էր, և նորա մօտ ձեացինք[3]։

9 Այս չորս կոյս աղջիկներ աւետարանչ՝ որ մարգարէ էին[4]։

10 Եւ երբոր մենք երեսել շատ օրեր ձեւացինք, մին Ագաբոս անուն մարգարէ վերեկաւ Հրէաստանիցն[5]։

11 Եւ մեզ մօտ որ եկաւ, Պողոսի գօտիկըն առաւ՝ իրան տանջրըն և ձեռներըն կապեց և ասաց. Սուրբ Հոգին էսպէս է ասում. Այն մարդն՝ որ էս գօտիկս նորան է, Հրեանները Երուսաղէմումն էսպէս կըկապեն՝ և նորան հեթանոսների ձեռք կըմատնեն։

12 Եւ երբոր էն լսեցինք՝ մենք ազաչումինք, և նորանք ևս՝ որ էնտեղ էին՝ որ նա վերչելլի Երուսաղէմ։

13 Այն ժամանակն Պօղոսն պա-

(1) Ալ. ոչ. 12։ Գոր. ի. 33։ (2) Գոր. ի. 36։ (3) Եփես. գ. 11։ ի. 21։ գ. 5։ (4) Գոր. զ. 5։ ը. 26. 30։ (5) Ովհ. ի. 26։ Գոր. ի. 27։ (6) Գոր. ժա. 28։ (7) Ալ. ոչ. 38։ Գոր. ի. 23։

Digitized by Google

զոս . Ո՞ՀՆԷ գործէք , զի լայքդ և ձվիցուցանէք զսիրտ իմ . քանզի ես ոչ միայն կապելոյ՝ այլև մեռանելոյ յԵրուսաղէմ պատրաստ եմ վասն անուանն Տեառն Յիսուսի Քրիստոսի :

14 Եւ ՚ի չանսալն նորա՝ լռեցաք , և ասեմք . Տեառն կամք լիցին :

15 Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ ելանէաք յԵրուսաղէմ :

16 Եկին ընդ մեզ և յաշակերտաց անտի Կեսարացւոց , և տանէին զմեզ առ որում վանս ունէինք եաք՝ Նասոնէի ումեմն Կիպրացւոյ՝ առաջին աշակերտի :

17 Եւ ՚ի մտանելն մեր յԵրուսաղէմ , խնդրեցաւմբ ընկալան զմեզ եղբարք :

18 ՚Ի վաղիւ անդր եմուտ Պօղոս ընդ մեզ առ Յակովբոս , և եկին ամենայն երիցունքն :

19 Եւ ողջոյն առեալ նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ զոր արար Աստուած ՚ի հեթանոսս ՚ի ձեռն պաշտաման նորա :

20 Եւ նոցա լուեալ՝ փառաւորէին զԱստուած . և ասեն ցնա . Տեսանես՝ եղբայր , քանի բիւրք են հաւատացելոցն ՚ի Հրէից , և ամենեքեան նախանձաւոր օրինացըն են :

21 Այլ իրազեկ եղեն վասն քո՝ թէ ապստամբութիւն ուսուցանես ՚ի Մովսիսէ՝ որոց ՚ի հեթանոս ամենայն ՚ի րէալք են . ասես՝ մի՛ թլփատել զորդիս նոցա , և մի ըստ տոսխան առաւել և ասաց . (Թէ) Ինչ էք անում , ինչու՞ համար էք լաց լինում և իմ սիրտը կսկծացնում՞ . ինչու որ՝ ես ոչ թէ միայն կապվելո՞ց՝ այլև մեռնելոց յԵրուսաղէմ մեռնելոյ պատրաստ եմ Տէր Յիսուսի Քրիստոսի անունին համար :

14 Եւ երբոր նա ականջ չդրաւ , լուռ կացանք՝ և ասացինք . Թո՛ղ Տէրի կամքն լինի՛ :

15 Եւ էն օրերից ետև՝ պատրաստվեցանք՝ վերէինք երթալու Երուսաղէմ :

16 Էն Կեսարացի աշակերտներիցն էլ մեզ հետ եկին , և տանեցին մեզ մին Նասոն անուն կիպրացի մարդո՝ առաջին աշակերտի մօտ , որ նորա մօտ պէտք էր կենայինք :

17 Եւ երբոր մենք Երուսաղէմ մտինք , եղբարքն մեզ ուրախութեամբ ընդունեցին[10] :

18 Հայց յետևի օրումն Պօղոսն մեզ հետ մտաւ Յակոբի[11] մօտն . և բոլոր երէցներն եկին :

19 Եւ ողջոյն առաւ նորանց՝ մին մին պատմուձեր ինչ որ Աստուած հեթանոսների մէջն արաւ[12] իրան ծառայութեամբը[13] :

33 Ինչպէս որ եւ գրված է · Ընտրեմ Սիօնի մէջն գայթակղութեան քար[49] և գլորելոյ վէմ եմ դնում[50], և ամէն ով որ կը հաւատասցայ նորան՝ նա չի ամաչիլ ։

ԿԱ · Ա

5 Ստէպ Գրքերըն օրէնքից և հաւատքից արդարանալոյն ցնծութիւնն ցոյց կըտայ ; 11 Թէ ամէն հաւատացողներն թէ Հրեայ և թէ հեթանոս չը պիտի ամաչեն , 18 Աւրհնութիւն առ շնորհքներին Հոգւոյն և խօսքն գուրս գնաց ամէն երկիրն և մինչև աշխարհի ծայրերն հեթանոսներին ։ 19 Խորհուրդն եւ լսեց՝ բայց չհաւատաց նորանց ։

1 Եղբարք՝ իմ կամք սրտի և աղօթք առ Աստուած , վասն նոցա են ՚ի փրկութիւն ։

2 Վկայեմ նոցա՝ թէ ըզնախանձն Աստուծոյ ունին , այլ ո՛չ գիտութեամբ ։

3 Զի անգէտ են Աստուծոյ արդարութեան , և զիւրեանցն խնդրեն կացուցանել · զի արդարութեանն Աստուծոյ ո՛չ հնազանդեցան ։

4 Վասնզի կատարած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց ։

5 Մովսէս գրէ զարդարութիւնն՝ որ յօրինաց անտի է , թէ՝ Ով արասցէ զայն մարդ՝ կեցցէ նովին ։

6 Իսկ զհաւատոցն արդարութենէ այսպէս ասէ · Մի՝ ասիցես ՚ի սրտի քումմ , Ո՛վ ելանիցէ յերկինս նոքա , այսինքն է՝ զՔրիստոս իջուցանել ։

1 Եղբայրք՝ իմ սրտի կամքըն և դէպի Աստուած աղօթքն նորանց համար էն է , որ փրկվին ։

2 Ինչու որ՝ վկայումէմ նորանց՝ որ Աստուծոյ համար նախանձ ունին՝ բայց գիտութեամբ չէ ։

3 Պատճառն որ՝ Աստուծոյ արդարութիւնըն չեն գիտում[3] և ինքեանց իրաւցըն են կամենում կանգնացնել[3] · նրա համար որ Աստուծոյ արդարութեանն չըմխազանդվեցան ։

4 Ինչու որ՝ Քրիստոսն է օրէնքի վախճանն՝ որ արդար լինի ամէն ով որ հաւատում նորան[4] ։

5 Մովսէն գրում էն արդարութեան համար՝ որ օրէնքիցն է , թէ՝ որ մին մարդ էն անէ՝ կապրի նորանով[5] ։

6 Հայց հաւատքի արդարութեանն համար էսպէս է ասում · Չը ասես քո սրտումդ , Ո՛վ վերկելի երկինքն՝ այսինքն՝ Քրիստոսին վէր բերելոյ համար[6] ։

(48) Գաղ · բ · 34 · ա Կորնթ · ա · 23 · (49) Մատ · ԻԷ · 23 · Նոյ · ը · 14 · Ի · 16 · Մատթ · ի · 42 · ա Պետր · բ · 6 , 7 , 8 · (50) Հռոմ · ժ · 11 · (1) Գործ · ի · 20 · ի · 3 · Գաղ · ա · 14 · գ · 17 · Հռոմ · թ · 31 · (2) Հռոմ · ա · 17 · թ · 30 · (3) Փիլ · գ · 9 · (4) Մատթ · ե · 17 · Գաղ · գ · 24 · (5) Ղեւտ · ԺԸ · 5 · Նեհ · բ · 29 · Նախ · թ · 11 · 13 · 21 · Գաղ · գ · 12 · (6) ը Օրին · Հ · 12 , 13

Digitized by Google

7 կամ ոմն իմանիցէ յանդունդս, այսինքն է ընկրիսասն հանել ի մեռելոց ։

8 Այլ զինչ ասէ գիր . Մերձ է բանն ի բերան քո , և ի սրտի քում է . այսինքն է՝ բանն հաւատոց զոր քարոզեմք ։

9 Զի եթէ խոստովանեսցես բերանով քով Տէր զՅիսուս , և հաւատայցես ի սրտի քում , թէ Յարուցեալ զնա ի մեռելոց , կեցցես ։

10 Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն , և բերանով խոստովանիք ի փրկութիւն ։

11 Գրանցի ասէ գիր . Ամենայն՝ որ հաւատացէ ի նա , ոչ ամաչեսցէ ։

12 Զի ոչ է գոյ խարիր Հրէի և Հեթանոսի . քանզի նոյն Տէր է ամենեցուն , բաւական յամենեսին՝ զոր կարդան առ նա ։

13 Զի ամենայն՝ որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ ։

14 Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին . կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչ լուան . կամ զիա՞րդ լուիցեն առանց ուրուք քարոզելոյ .

15 Կամ զիա՞րդ քարոզեսցեն , եթէ ոչ առաքեսցին . որպէս և գրեալ է . Իբրև զի գեղեցիկ են ոտք աւետարանչաց խաղաղութեան և աւետարանչաց բարութեան ։

16 Այլ ոչ ամենեքեան ընդունդ եղեն աւետարանին . Եսայի ասէ . Տէր՝ ո՞ հաւատաց լսելոյ մերում ։

7 կամ թէ՝ ոմն վերկըցայ անդունդն՝ այսինքն՝ Քրիստոսին ի մեռելոցն հանելոյ համար ։

8 Այլ գիրքն ի՞նչ է ասեմ . Նն խօսքն մօտիկ է քո բերանիդ , և քո սրտումն է . այսինքն , հաւատքի խօսքն՝ որ քարոզումեմք ։

9 Զի եթէ քո բերանով Յիսուսին Տէր դաւանեես , և քո սրտումդ հաւատասցես՝ թէ Յարուցեալ յարոյց նորան մեռելոցն՝ դու կայցիս[9] ։

10 Ինչու որ՝ սրտով հաւատումիք արդարանալոյ համար , և բերանով դաւանութիւնք փրկվելոյ համար ։

11 Գրացուն ասէ՝ գիրքն ասումն . Ամեն ով որ կը հաւատայ նորան՝ չի ամաչիլ[9] ։

12 Ինչու որ՝ չկայ[10] Հրէայի և Հեթանոսի մէջ . ընդհանրապէս որ՝ ամենին Տէրն մին է[11] , որ բաւական է ամենին համար՝ որ կանչումն նորան[12] ։

13 Ինչու որ՝ ամեն ով որ Տէրի անունը[13] (իրան) կըկանչէ՝ կազատի[14] ։

14 Այսպա ի՞նչպէս կանչեն նորան , որ չըհաւատացին . կամ ի՞նչպէս հաւատան նորան , որ չըլսեցին . կամ ի՞նչպէս լսեն , թէ որ միեն չըքարոզէ[15] ։

15 կամ ի՞նչպէս քարոզեն , թէ որ չուղարկվին . ինչպէս որ էլ գրված է . Թէ ինչպէս գեղեցիկ են նորանց ոտներն՝ որ խաղաղութիւն են քարոզում և բարի բաներն աւետիք են տալիս[16] ։

16 Այլ ամենքն ընդունդ չէլան աւետարանին . (որ) Եսային ասաւ[17] . Տէր՝ ո՞վ հաւատաց մեր խոսքին[18] ։

(7) բ Օրին · Լ · 14 : (8) Պսալմ · ժ · 33 : Ղևտ · ժբ · 8 : Գործ · ը · 37 : (9) Նոայ · իը · 10 : Իմ · 28 : Երեմ · ժէ · 7 : Հռովմ · բ · 33 · (10) Հռովմ · գ · 33, Գործ · ժէ · 9 : Գալ · գ · 28 : (11) Գործ · ժ · 36 : Հռովմ · գ · 29 : ա Տիմ · բ · 5 : (12) Նահ · ա · 7 : բ · 4 · 7 : (13) Գործ · բ · 14 : (14) Յովիլ · բ · 32 : Գործ · բ · 21 : (15) Ֆիլ · ա · 3 : (16) Նոայ · ծբ · 7 : Նաւում · ա · 15 · (17) Հռովմ · գ · 8 : Խիր · գ · 3 : (18) Նոայ · ծգ · 4 · Յովհ · ժբ · 38 ·

Digitized by Google

17 Ապա ուրեմն՝ հաւատաք՝ ի լսելոյ են, և լուր՝ ի բանէն Քրիստոսի ։

18 Այլ ասեմ, Միթէ ոչ լուան · մանաւանդ զի ընդ ամենայն երկիր ել բարբառ նոցա, և ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա ։

19 Այլ ասեմ, Միթէ Իսրայէլ ոչ լուաւ · նախ Մովսէս ասէ, Ես նախանձեցուցից զձեզ ոչ ինչ ժողովրդեամբ, և ազգաւ անմտաւ զկծեցուցից զձեզ ։

20 Եսայի համարձակի իսկ՝ և ասէ · Գտայ այնոցիկ՝ որ զիս ոչ խնդրէին · յայտնի եղէ այնոցիկ՝ որ զիս՝ ոչ հարցանէին ։

21 Այլ առ Իսրայէլ ասէ · Ամենայն աւուր ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհնազանդ և հակառակօղ ։

17 Ուրեմն հաւատքն լսելութեա՛ն է, և լսելն՝ Քրիստոսի խօսքիցն ։

18 Այլ ասեմ. Միթէ չլսե՞ցին. իրաւի է որ նորանց ձայնն դուրս գնաց ամէն երկիրն[19], և նորանց խօսքն մինչև աշխարհքի ծայրերն[20] ։

19 Այլ ասեմ. Միթէ Իսրայէլն չգիտցե՞ր. առաջ Մովսէս է ասում. Ես ձեզ նախանձաւոր կըընեմ մի՛ն ո՛չ ինչ ժողովրդով[21], և մի՛ն անմիտ ազգով կըկսկծացնեմ ձեզ[22] ։

20 Այլ Եսային էլ աւելի համարձակուե՛ւ և ասում. Ես գտայ նորանցից՝ որ ինձ չէին խընդրում[23]. յայտնի էլայ նորանց՝ որ ինձ համար չէին հարցնում ։

21 Այլ Իսրայէլին ասում է. Ամէն օր իմ ձեռքս մեկնեցի գէպի անհաւատ և հակառակօղ ժողովուրդն[24] ։

ԳԼ · ԺԸ

1 Ընտուած դէն չէ՛ցցեց աստ իրան ժողովուրդն ։ 7 Մին քանի ընտրեալներն հասին և մնացեալներն կուրացան · 16 Այլ նորանց համար մինչև ընտրելոյ յոյս կայ ։ 18 Հեթանոսներին պակաս չե՛ որ նորանց դէմ պարծենան, 26 Ինչու որ նորանց ամէնին համար ապրելոյ ուխտը կայ ։ 33 Ընտրեալ գատաստաններն անքննելի և նորա ճանապարհներն անհասկանալի են ։

1 Ասի արդ ասեմ, Միթէ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր · քա՛ւ լիցի · քանզի և ես Իսրայէլացի եմ, ի զաւակէ Աբրահամու, յազգէ Բենիամինի ։

2 Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր, զոր յառաջն ծանեաւ · Թէ ոչ գիտէք յԵղիա զինչ ասէ գիր · որպէս ամբաստանէ լինի

1 Ասա ասում եմ. Միթէ Աստուած դէն քցեց իրան ժողովուրդն[1]. քա՛ւ լիցի. ինչու որ՝ ես էլ Իսրայէլացի եմ՝ Աբրահամի զաւակից, Բենիամինի ցեղից[2] ։

2 Աստուած դէն չըքցեց իրան ժողովուրդն՝ որ նորան առաջուց ճանաչեց[3]. կամ թէ չէք գիտում թէ գիրքն ի՞նչ է ասում Եղիայի հա-

19) Ասմ. ԺԲ. 4 · Ասրխ. ԿԴ. 18 · ԽԲ. 19 · Մարկ. ԺԲ. 15 · Կող. ա. 6. 23 ։ (20) գ Նախ. ԺԲ. 18 · Ասրխ. գ. 8 ։ (21) բ Օրէն. լբ. 21 · Հռոմ. ժա. 11 ։ (22) Տիտ. գ. 3 ։ (23) Նոյ. կե. 1 · Հռոմ. Բ. 30 ։ (24) Նոյ. կե. 2 ։ (1) Ա Նախ. ԺԲ. 23 ։ Նեհ. լ. 37 ։ (2) բ Պետ. ժա. 22 ։ Փիլիպ. գ. 5 ։ (3) Հռոմ. Բ. 29 ։

Digitized by Google

Աստուծոյ գնարայելէ :

3 Տէր՝ զմարգարէս քո կոտորեցին, և զսեղանս քո կործանեցին. ես մնացի միայն, և խնդրեն զանձն իմ :

4 Ասէ ցնէնչ ասէ Նմա պատասխանին. Իմողի ինձ՝ ասէ, հօթին հազար այր, որ ոչ կրկնեցին ծունր Բահաղու :

5 Այնպէս և յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ ընտրութեան շնորհացն եղեն :

6 Իսկ եթէ շնորհօք՝ ոչ ևս՝ ի գործոց. ապա թէ ոչ՝ շնորհքն ոչ ևս շնորհք լինին :

7 Իսկ արդ՝ զոր խնդրէրն Իսրայէլ, այնմ ոչ եհաս. բայց ընտրութեանն եհաս, և այլքն կուրացան.

8 Որպէս գրեալ է. Ետ նոցա Աստուած հոգի յիմարութեան, աչս՝ որովք ոչ տեսանիցեն, և ականջս՝ որովք ոչ լսիցեն, մինչև ցայսօր ժամանակի :

9 Եւ Դաւիթ ասէ. Եղիցին սեղանք նոցա յորոգայթ և ի որս և ի գայթակղութիւն՝ և ի հատուցումն նոցին :

10 Խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տեսցեն. և զթիկունս նոցա Հանապազ կորացո՛ :

11 Իսկ արդ ասեմ. Ո՞յթէ վասն այնորիկ յանցեան՝ զի կործանեսցին. քաւ լիցի. այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթանոսաց. զի նախանձ արկցէ նոցա :

մար. թէ ի՞նչպէս նա Իսրայէլին դէմ ամբաստանուի Աստուծոյ առաջին :

3 Տէր՝ զմարգարէներիդ կոտորեցին և զսեղաններիդ կործանեցին. ես միայնակ մնացի, և իմ անձիս են մահ գալիս[4] :

4 Այլ պատասխանն ի՞նչ է առ նորան. Եօթն հազար մարդ՝ ասուած, ինձ համար, որ Բահաղին ծունր չդրին[5] :

5 Ընդ նոյնս էլ ես ժամանակումս շնորհքի ընտրութեան պէս մնացածներ էլան[6] :

6 Այլ թէ որ շնորհքով է՝ էլ գործքերից չէ. ապա թէ չէ՝ շնորհքն էլ շնորհք չի լինիլ[7] :

7 Ապա ուրեմն՝ ինչ որ Իսրայէլն խնդրում՝ նորան չգտաւ. բայց ընտրուածներն գտին, և միւսներն կուրացան[8] :

8 Ինչպէս որ էլ գրուած է. Թէ Աստուած առաւ նորանց թմրութեան հոգի[9]. աչքեր՝ որ նորանով չտեսնեն, և ականջներ՝ որ նորանով չլսեն[10], մինչև էս օրվան ժամանակս :

9 Եւ Դաւիթն ասաւ. Նորանց սեղանները թակ որոգայթ (խալխ) լինին նորանց, և ակնատ և գայթակղութիւն՝ և նորանց հատոյց հատուցումն[11] :

10 Թո՛ղ նորանց աչքերն խաւարվին՝ որ չտեսանեն. և նորանց թիկունքներն միշտ ծռացրո՛[12] :

11 Այրեմն ասեմ. Ո՞յթէ նրբահամար գլորվեցան՝ որ կործանվին. քաւ լիցի. բայց նորանց գլորվելովն հեթանոսների փրկութիւնն եկաւ՝ որ նախանձ քցէ նորանց սիրտն[13] :

(4) գ Թագ. ԺԹ. 10. 14 : (5) գ Թագ. ԺԹ. 18 : (6) Հռով. ԺԱ. 27 : (7) Հռով. գ. 4, 5 : Գաղ. ե. 4 : բ Օրին. Ը. 4, 5 : (8) Հռով. ԺԱ. 31 : Ժ. 3 : (9) Նոյ. ԽԹ. 10 : (10) բ Օրին. ԼԹ. 4 : Նոյ. Ղ. 9 : Երէմ. ե. 21 : Եզեկ. Ժբ. 2 : Մարկ. Ժգ. 14 : Հովհ. Ժբ. 40 : Գործ. ԻԸ. 26, 27 : (11) Մատ. ԿԲ. 22 : (12) Մատ. ԿԲ. 23 : (13) Գործ. Ժգ. 46 : Ժբ. 9 : ԻԸ. 18 : 21 : ԻԸ. 24. 28 : Հռով. Ժ. 19 :

Digitized by Google

12 Իսկ եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի, և պարտութիւնն նոցա մեծութիւն հեթանոսաց. ո՞րչափ ևս առաւել լուծիւն նոցա :

13 Ասէ ձեզ ասեմ հեթանոսաց՝ ցորչափ ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ :

14 Օ՛ի թերևս նախանձ արկից նոցա մարմնով իմով՝ և ապրեցուցից զոմանս ի նոցանէ :

15 Օ՛ի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի է. իսկ ընդունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ո՛չ կենդանութիւն ի մեռելոց :

16 Իսկ եթէ սկիզբն սուրբ է՝ և զանգուածն. և եթէ արմատն՝ ապա և ոստքն :

17 Եթէ յօստոց անտի ոմանք փշրեցան, և դու որ ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաստեցար ի նոսա, և բաժանորդ եղեր արմատին՝ և պարարտութեան ձիթենւոյն.

18 Մի՛ պարծիր առ ոստովքն. ապա եթէ պարծիցիս՝ ո՛չ եթէ դու զարմատն ի վեր ունիս, այլ արմատն զքեզ :

19 Իսկ արդ՝ ասիցես, Ոստքն փշրեցան՝ զի ես պատուաստեցայց :

20 Ճարտուք է. անհաւատութեամբ բնն փշրեցան, և դու հաւատովք հաստատեցար. մի՛ հպարտանար, այլ երկիր :

21 Օ՛ի եթէ Աստուած ի բնէն

12 Ուստի թէ որ նորանց ընկնելին աշխարհքի մեծութիւն էլաւ, և նորանց առակ քցվիլին՝ հեթանոսների մեծութիւն. էլ ո՞րքան աւելի նորանց լիութիւնն :

13 Ասէ ձեզ հեթանոսներիդ ասումեմ. քանի ժամանակ որ հեթանոսների առաքեալ եմ՝ իմ պաշտօնս փառաւոր կանեմ[14] :

14 Ուր լինի թէ՝ իմ մարմնովս նախանձ քցեմ նորանց սիրտն, և նորանցից մինքանին ապրեցնեմ[15] :

15 Պատճառն որ՝ թէ որ նորանց երեսից քցվիլին՝ աշխարհքի հաշտութիւն է. ապա նորանց ընդրութիւնն ինչ է, եթէ ո՛չ կենդանի լինիլ մեռելներեցն :

16 Եւ թէ որ սկիզբն սուրբ է՝ ապա հունցվածն էլ. և թէ որ արմատն (ֆէօփն)՝ ապա ճղերն էլ[16] :

17 Թէ որ ճղերից մին քանիսն փշրըվեցան[17], և դու որ վայրի ձիթենի էիր՝ նորանց վերայ պատրուաստվեցար, և հաղորդ էլար արմատին՝ և ձիթենոյ պարարտութեանն[18] .

18 Մի՛ պարծենար էն ճղերին դէմ. ապա թէ որ պարծենաս՝ (իմացիր որ) ո՛չ դու ես արմատն (ֆէօփն) վերատնում, այլ արմատն՝ քեզ[19] .

19 Ուրեմն կըսիլին որ ասես, Ճղերն փշրըվեցան՝ որ ես պատրուստվիմ :

20 Լա՛ւ է. նորանք անհաւատութենով փշրըվեցան, և դու հաւատովդ հաստատվեցար. մի՛ լինիր ամբարտաւան[20], այլ վախիր[21] :

21 Ինչու որ՝ եթէ Աստուած բը-

(14) Կորնթ. ա. 15 : ժգ. 2 : իբ. 31 : Հռոմ. ժե. 16 : Գաղ. ա. 16 : բ. 2, 7, 8, 9 : Եփես. գ. 8 : ա Տիմ. բ. 7 : բ Տիմ. ա. 11 : (15) ա Կորնթ. է. 10 : բ. 22 : ա Տիմ. գ. 16 : Յովհ. է. 20 : (16) Ղևտ. իգ. 10 : Ծննա. ժե. 18, 19, 20, 21 : (17) Երեմ. ժա. 16 : (18) Գործ. բ. 39 : Եփես. բ. 12, 13 : (19) ա Պետր. ժ. 13 : (20) Հռոմ. ժբ. 16 : (21) Ամոս. իբ. 14 : Նաում. զգ. 3 : Փիլիպ. բ. 12 :

Digitized by Google

ոտան ոչ խնայեաց , գուցե երբէք և ՚ի քեզ ոչ խնայիցէ ։

22 Լ՚րդ տէս զքաղցրութիւն՝ և զսաստկութիւնն Լ՚ստուծոյ . ՚ի վերայ կործանելոցն սաստկութիւն , և ՚ի վերայ քո քաղցրութիւնն Լ՚ստուծոյ , եթէ կացցես ՚ի նմին քաղցրութեան . ապա թէ ոչ՝ և դու կոճռեսցիս ։

23 Եւ նոքա եթէ ոչ ՚ի նմին անհաւատութեան կացեն , պատուաստեսցին . զի կարող է Լ՚ստուածմիւսանգամ պատուաստել զնոսա ։

24 Օ՚ի եթէ դու ՚ի բուն ՚ի վայրենի ձիթենւոյ անտի հատար՝ և յայլ բուն ՚ի բարի ձիթենւոջն պատուաստեցար , որչափ ևս առաւել նոքա՝ որ բունքն իսկ են՝ պատուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն ։

25 Լ՚չ կամիմ եղբարք՝ եթէ տգիտեք իցէք խորհրդոյս այսմիկ , զի մի՛ յանձինս ձեր իցէք իմաստունք . զի կուրութիւն փոքր ՚ի շատէ եղեւ Իսրայէլի . մինչև լրումն հեթանոսացս մտցէ ։

26 Եւ ապա ամենայն Իսրայէլ կեցցէ . որպէս և գրեալ է . Եկեսցէ ՚ի Սիովնէ փրկիչ՝ և դարձուսցէ զամբարշտութիւնսն ՚ի Յակովբայ ։

27 Եւ այս նոցա՝ որ յինէն ուխտ , յորժամ բարձից զմեղս նոցա ։

28 Ըստ աւետարանին թշնամիք են վասն ձեր , ըստ ընտրութեանն սիրելիք վասն հարցն ։

29 Ա՚նզի անզեղջ են շնորհք՝ և կոչումն Լ՚ստուծոյ ։

նական ճղներին չխնայեց , կըլլի՛ որ քեզ էլ չխնայէ ։

22 Ուրեմն տես Լ՚ստուծոյ քաղցրութիւնը՝ և սաստկութիւնը . կործանվածներուն վերայ սաստկութիւնը , և քեզ վերայ Լ՚ստուծոյ քաղցրութիւնը , թէ որ դուն հենց էն քաղցրութեանը մէջ կենաս[22] . ապա թէ չէ՝ դուն էլ կըկտրըվիս[23] ։

23 Եւ նորանք թէ որ էն անհաւատութեանը մէջ չըկենան՝ կըպատրուսվին . ինչու որ՝ Լ՚ստուած կարող է մինէլ պատրուսել նորանց[24] ։

24 Պատճառն որ՝ եթէ դուն բնական վայրի ձիթենւոյն կըտրըվեցար՝ և բնութեան դէմ բարի ձիթենւոյ վերայ պատրուսվեցար , էլ որքան աւելի նորանք՝ որ բնական են՝ կըպատրուսվին իրանց (յաւուկ) ձիթենւոյն վերայ ։

25 Ղեմ կամենուս եղբարք՝ որ չըգիտենաք էս խորհուրդս , որ ձեր անձերուդի ձեզ իմաստուն չըհամարիք[25] . էն որ փոքր ՚ի շատէ Իսրայէլին կուրութիւն էլաւ[26] , մինչև որ հեթանոսներուն լիութիւնն մըտնէ[27] ։

26 Եւ նրանից ետև ամէն Իսրայէլն կապրի . ինչպես որ էլ գըրվածէ , թէ Սիոնին փրկիչ կըգայ՝ և ամբարշտութիւնները կըդնի Յակոբին[28] ։

27 Եւ էս է ուխտս որ ես նորանց հետ կըդնեմ՝ երբոր նորանց մեղքերն վերկառնեմ[29] ։

28 Լ՚ւետարանին մտիկ տալով՝ նորանք թշնամի են ձեր պատճառվըն , ընտրութեան մտիկ տալով՝ սիրելի են հարցանց համար[30] ։

29 Պատճառն որ՝ Լ՚ստուծոյ շնորհքն և կոչումն զղջանալ չըներ[31] ։

(22) ա Կորնթ . ժե . 2 ։ Նէեր . գ . 6 . 14 ։ (23) Հռով . ե . 2 ։ (24) բ Կորնթ . գ . 16 ։ (25) Հռով . ժբ . 16 ։ (26) Ա՚ր . 7 ։ բ Կորնթ . գ . 14 ։ (27) Ղ՚ուկ . խ . 24 ։ Հայտ . ե . 9 ։ (28) Նայ . ծթ . 20 ։ Սաղ . ժգ . 7 ։ (29) Նայ . իբ . 9 ։ Նէեմ . ե . 31 ։ Եսայ . Նէեր . ը . 8 ։ ժ . 16 ։ (30) բ Օրին . է . 8 ։ բ . 5 ։ ժ . 15 ։ (31) Յոե . իգ . 19 ։

Digitized by Google

30 Ո՞վ արպէս և դուք երբեմն ապստամբ էիք Յ՝ստուծոյ՝ և արդ ողորմութիւն գտիք առ նոցա ապըստամբութեամբն :

31 Սոյնպէս և նոքա այժմ ապըստամբ եղեն առ ձերով ողորմութեամդ . զի և նոքա ողորմութիւն գտցեն :

32 Վասնզի արգել Յ՝ստուած զամենեսին յանհաւանութեան , զի ամենեցուն ողորմեցի :

33 Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեան Յ՝ստուծոյ . որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա , և առանց գննելոյ են ճանապարհք նորա :

34 Ո՞վ ոմ գիտաց զմիտս Տեառն , կամ ո՞վ խորհրդակից եղև նմա :

35 Կամ ո՞վ եթ նմա փոխ , և առնու զփոխարէն ՚ի նմանէ :

36 Ո՞վ ՚ի նմանէ՝ և նովաւ՝ և ՚ի նոյն ամենայն . նմա փառք յաւիտեանս . ամէն :

30 Ինչու որ՝ ինչպէս որ դուք էլ մին ժամանակ ապստամբած էիք Յ՝ստուածանից՝ և հիմիկ ողորմութիւն գտիք նորանց ապստամբութեննէն[32] .

31 Ձեզ էնպէս էլ նորանք հիմիկ ապստամբ էլան ձեր ողորմութեննուն . որ նորանք էլ ողորմութիւն գտնեն :

32 Պատճառն որ՝ Յ՝ստուած ամենին անհաւատութեան մէջ արգելեց՝ որ ամենին ողորմի[33] :

33 Ո՛վ (քանի է) Յ՝ստուծոյ մեծութեան և իմաստութեան խորութիւնն . ինչպես անքննելի են նորա դատաստաններն[34] , և անհասկանելի են նորա ճանապարհներն[35] :

34 Պատճառն որ՝ ո՞վ գիտաց Տէրի միտքն[36] , կամ ո՞վ խորհուրդի ընկեր կըլինի նորան[37] :

35 Կամ ո՞վ նորան փոխ տուաւ , որ նորա հատուցումն առնէ նորանից[38] :

36 Պատճառն որ՝ նորանից և նորանով և նորանում է ամէն բան[39] . նորան փառք յաւիտեանս . ամէն[40] :

ԿԼ · ԺՈ

1 Յ՝ստուծոյ ողորմութիւնովն պիտք է՝ որ՝ մեր մարմիններն պատրաստենք կենդանի՝ սուրբ և Յ՝ստուծոյ ընդունելի պատարագ : 2 Խոկի մեր բան չըմատնենք նրանից աւելի , քանիկ են որ արժան է մտածելոյ . բայց պարկեշտ կենալով մատնենք : 5 Մենք չատեր մեր մարմին ունք Քրիստոսումն՝ բայց ամեն մէկն իւրաք հատ անդամ ունք , 6 և քէ կէրպ կէրպ շնորհքներ ունինք : 9 Պատրաստ ունք որ սէր՝ առանց կեղծաւորութեան ունենանք և մեր ամեն ուրիշ պատրաստութիւններն էլ կատարենք : 12 Մեր անձնէրին համար մրմնջողութիւն չը՛ պիտի անենք , բայց բարկութեան տեղ տանք :

1 Ես աղաչեմ զձեզ եղբարք՝ գըթութեամբքն Յ՝ստուծոյ՝ պատարաստուծոյ ողորմութենովն[1] , որ ձեր[2]

1 Ես աղաչումեմ ձեզ եղբարք՝ Յ՝ստուծոյ ողորմութեննուն[1] , որ ձեր[2]

(32) Գաղ . բ . 2 : Ռոմ . պ . 7 : (33) Հռոմ . գ . 9 : Գաղ . գ . 22 : (34) Ռոմ . ԺԱ . 6 : (35) Յոբ . ժա . 7 : Սամ . զբ . 5 : (36) Յոբ . ժե . 8 : Իսայ . խ . 13 : Երեմ . իգ . 18 : ա Կորնթ . բ . 16 : (37) Յոբ . ԼԱ . 22 : (38) Յոբ . լե . 7 : Քառ . 11 : (39) ա Կորնթ . ը . 6 : Ռոմ . ա . 16 : (40) Գաղ . ա . 5 : ա Տիմ . ա . 17 : բ Տիմ . գ . 18 : Երբր . ժգ . 21 : ա Պետր . ե . 11 : բ Պետր . գ . 18 : Յուդ . 25 : Հայտ . ա . 6 : (1) բ Կորնթ . ժ . 1 : (2) ա Պետր . բ . 5 :

Digitized by Google

սել զմարմինս ձեր պատարագ կենդանի՝ սուրբ՝ հաճոյ Աստուծոյ ըզխոհսուն պաշտօնդ ձեր ։

2 Եւ մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ . այլ նորոգեցարո՛ւք ի նորոգութիւն մտաց ձերոց , առ ի քննել ձեզ զկամն , և եթէ զինչ են կամք Աստուծոյ՝ բարին և հաճոյն և կատարեալն ։

3 Ասեմ շնորհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ , ամենայնի՝ որ է ի ձեզ , մի՛ առաւել ինչ խորհիլ քան զարժանն խորհելոյ . այլ խորհիլ ի զգաստանալ իւրաքանչիւր՝ որպէս և բաժանեաց Աստուած չափ հաւատոց ։

4 Որպէս ի միում մարմնի անդամս բազումս ունիմք . և անդամքն ամենայն ոչ զնոյն գործ ունին ։

5 Նոյնպէս և բազումքս մի մարմին եմք ի Քրիստոս , այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք ։

6 Այլ ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն , որ տուեալ են մեզ ազգս ազգս . եթէ մարգարէութիւն՝ ըստ չափուն հաւատոց ,

7 եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն՝ եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն ,

8 եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն . որ առատն է մարմինն[1] պատարագեսցէ՝ կենդանի սուրբ և Աստուծոյ ընդունելի պատարագ , որ էն ձեր բանաւոր պաշտօն լինի[2] ։

2 Եւ մի՛ կերպարանիլիք էս աշխարհքիս կերպարանքիվ[3] . այլ նորոգվիցէք ձեր մտքի նորոգութեամբ[4] , որ դուք քննէք էն՝ որ լաւն է[5] . և թէ ինչ է Աստուծոյ կամքն՝ էն բարին և հաճելին և կատարեալն ։

3 Աստուծոյ շնորհքովն՝ որ ինձ տրվված է[6] էս եմ ասում ամենին , որ ձեր միջումն է , որ խելք մին բան չըմտածէք նրանից աւելի , քանթէ էն որ արժան է մտածելու[7] . բայց որ մտածելումն պարկեշտ կենաք էնպէս՝ ինչպէս որ Աստուած ամէն մէկին հաւատքի չափըն բաժանեց[8] ։

4 Ինչպէս որ մին մարմնոյ մէջ շատ անդամներ ունինք , և էն ամէն անդամներն մին գործ չունին[9] ։

5 Նոպէս էլ մենք շատերս մին մարմին ենք Քրիստոսումն , բայց ամէն մէկն իրար հետ անդամ ենք[10] ։

6 Այսպէս թէ կերպ կերպ շնորհքներ ունինք[11] էն շնորհքին պէս՝ որ մեզ տրվված է[12] . եթէ մարգարէութիւն հաւատքի չափովն[13] ։

7 Եթէ պաշտօն՝ պաշտամունքի չափովն . եթէ նա՝ որ սովորցնում՝ վարդապետութեան չափովն[14] .

8 Եթէ նա՝ որ մխիթարում՝ մխիթարութեան չափովն[15] . նա որ

(3) Պաղ . ե . 18 , 14 : Հռոմ . գ . 13 . 16 . 19 : ա Կորնթ . գ . 13 . 20 : (4) Եփես . ժ . 20 : (5) ա Պետր . ա . 14 : ա Յովհ . բ . 15 : (6) Նէոս . ա . 18 : գ . 23 : Կող . ա . 21 , 22 : գ . 10 : (7) Նէոս . ե . 10 . 17 : ա Թես . գ . 3 : (8) Հռոմ . ա . 5 : ժե . 15 : ա Կորնթ . գ . 10 : ժե . 10 : Գող . բ . 9 : Նէոս . գ . 2 . 7 : 8 : (9) Ղուկ . կե . 27 : Յովզ . է . 16 : Հռոմ . ժա . 20 : (10) ա Կորնթ . ժբ . 7 . 11½ Նէոս . գ . 7 : (11) ա Կորնթ . ժբ . 12 : Նէոս . գ . 16 : (12) ա Կորնթ . ժ . 17 : ժբ . 20 . 27 : Նէոս . ա . 23 : գ . 25 : (13) ա Կորնթ . ժբ . 4 : ա Պետր . գ . 10 , 11 : (14) Ա Թես . 3 : (15) Գործ . ժա . 27 : ա Կորնթ . ժբ . 10 . 28 : ժգ . 2 : ժգ . 1 . 6 . 20 . 31 : (16) Գործ . ժգ . 1 : Նէոս . գ . 11 : Գաղ . գ . 6 : ա Տիմ . ե . 17 : (17) Գործ . ժե . 32 : ա Կորնթ . ժգ . 3 :

Digitized by Google

զուարթութեամբ , որ վերակացուն
է փուխով , որ աղօտին՝ լըցմտու-
թեամբ :

9 Այր առանց կեղծաւորութեան .
առեալ զչար . զհետ երթալ բար-
եաց :
10 Հեղբայրասիրութեան առ միմ-
եանս գթածք . ի պատիւ զմիմեանս
ելանել :
11 Ի փոյթ՝ մի՛ վհտիրոտք . հոգ-
ւով եռացեալք , Տեառն ծառայեցէք ,

12 Հաւսով խնդացէք , նեղութեան
համբերեցէք , աղօթից սաեպ կա-
ցէք :
13 Ի պէտս սրբոց հաղորդեցա-
րուք . զհիւրասիրութեան զհետ եր-
թայք :
14 Օրհնեցէք զհալածիչս ձեր ,
օրհնեցէք և մի՛ անիծանէք :
15 Խնդալ ընդ խնդացօղս , լալ
ընդ լացօղս :

16 Զնոյն միմեանց խորհիլք . մի՛
ամբարտաւանէք , այլ ընդ խոնար-
հըս զիջանիցիք . մի՛ լինիք իմաս-
առուք յանձինս ձեր :

17 Ա՛ի ումեք չարի չար հատու-
ցանել , որ վերակացու է՝ հոգս տանել
լինի . նա որ ողորմութիւն է ա-
նում[19] ուրախ սրտով[20] :

9 Այր՝ առանց կեղծաւորութեան
(լինի)[21] . չարըն ատեցէք , բարոյն
հետևեցէք[22] :
10 Եղբայրասիրութեամբ իրար
վերայ գթած (էք)[23] . պատիւ տա-
լով իրար առաջ անցկացէք[24] :
11 Ջանք անելովն՝ թոյլ չըլի-
նիք . հոգովն ջերմեռանդ էքէք , Տէ-
րին ծառայեցէք .
12 Հաւսով ուրախացէք[25] , նե-
ղութեան համբերեցէք[26] , աղօթքին
խիստ հետևեցէք[27] :
13 Սրբոց հարկաւոր լինօղ բանին
հաղորդ էքէք[28] . օտարասիրութեան
հետևեցէք[29] :
14 Ձեզ անիծօղներին օրհնեցէք ,
օրհնեցէք և մի՛ անիծէք[30] :
15 Ուրախացօղներին հետ ուրա-
խացէք , և լաց լինօղներին հետ
լաց էքէք[31] :
16 Իրար հետ հենց մին խորհուրդ
ունենաք[32] . ամբարտաւան մի՛ լի-
նիք[33] , բայց խոնարհներին հետ խո-
նարհվեցէք . ձեր անձներումդ ձեզ
իմաստուն մի՛ համարիք[34] :
17 Ա՛ընին չարի տեղ չար մի՛ հա-

(18) Մ՚ոմի . գ . 1 , 2 , 3 : բ Կորնի . է . 2 : (19) Պսղմ . ի . 28 : ա Տիմ . ե . 17 ,
Նէր . ժգ . 7 . 24 : ա Պետր . ե . 2 : (20) բ Կորնի . թ . 7 : (21) ա Տիմ . ա . 5 :
ա Պետր . ա . 22 : (22) Պաւլ . լդ . 14 : Լզ . 4 : ղէ . 10 : Ի՛ովղ . ե . 15 : (23)
Նէր . ժգ . 1 : ա Պետր . ա . 22 : բ . 17 : գ . 8 : բ Պետր . ա . 7 : (24) Փիլիպ .
բ . 3 : ա Պետր . ե . 5 : (25) Ղ՚ուկ . ժ . 20 : Հռովմ . ե . 2 : ժե . 13 : Փիլիպ .
գ . 1 : դ . 4 : ա Յովհ . ե . 16 : Նէր . դ . 6 : ա Պետր . դ . 13 : (26) Ղ՚ուկ . իա .
19 : ա Տիմ . զ . 11 : Նէր . ժ . 36 : ժբ . 1 : Յակ . ա . 4 : ե . 7 : ա Պետր . բ .
19 , 20 : (27) Ղ՚ուկ . ժբ . 1 : Գործ . բ . 42 : ժբ . 5 : Կող . գ . 2 : Եփես . զ .
18 : ա Յովհ . ա . 17 : (28) ա Կորնի . ժգ . 1 : բ Կորնի . ը . 1 . 12 : Նէր . զ .
10 : ժգ . 16 : ա Հռովմ . դ . 17 : (29) ա Տիմ . գ . 2 : Տիտ . ա . 8 : Նէր . ժգ .
2 : ա Պետր . գ . 9 : (30) Մատթ . ե . 44 : Ղ՚ուկ . զ . 28 : իգ . 34 : Գործ . է .
59 : ա Կորնի . դ . 12 : ա Պետր . բ . 23 : գ . 9 : (31) ա Կորնի . ժբ . 26 : (32)
Հռովմ . ժե . 5 : ա Կորնի . ա . 10 : Փիլիպ . բ . 2 : դ . 16 : ա Պետր . գ . 8 ,
(33) Մատ . ԺԶ . 1 , 2 : Նէր . իե . 5 : (34) Ես . է . 7 : իզ . 12 : Կատ . ե .
21 : Հռովմ . ժա . 25 :

Digitized by Google

ցանէք • խոր հեցարմուք զբաթիս ա-
ռաջի ամենայն մարդկան :
18 Եթէ ինչ ինչ ի ձեզ՝ ընդ
ամենայն մարդկան զխաղաղութիւն
կալջիք :
19 Ո՛չ զանձանց վրէժխնդրէք սի-
րելիք , այլ տուք տեղի բարկու-
թեան • քանզի գրեալ է • Իմ է
վրէժխնդրութիւն , և ես հատու-
ցից՝ ասէ Տէր :

20 Ա՛յլ եթէ քաղցեալ ի՛ք թշնա-
մի քո՝ հա՛ց տուր նմա , և եթէ
ծարաւի՝ ջո՛ւր տուր նմա • զայս ա-
րարեալ՝ կայծակունս հրոյ կուտես
ցես ի գլուխ նորա :
21 Ո՛չ ի յաղթիր ի չարէն • այլ
յաղթեա՛ բարեաւն չարին :

տուցանէք[35] • ամէն մարգկանց ա-
ռաջին բարի խորհուրդ ունեցէ՛ք[36] :
18 Եթէ կարելի լինի ձեզ՝ ամէն
մարդկանց հետ խաղաղութիւն ու-
նենա՛ք[37] :
19 Ձեր անձ՝ սիրելի՛ համար վրէժ-
խնդրութիւն մի՛ անէք սիրելինե՛ր[38] ,
բայց բարկութեան տե՛ղ տուէք •
ինչպես որ՝ գրված է՝ Թէ Ա՛յ վրէժ-
խնդրութիւն անելն իմն է[39] • և ես
հատուցեմ՛ն կըսեմ՝ , ասաւ՚ Տէրն :
20 Ա՛նպէ Թէ որ քո թշնամին ա-
վաճ լինի՝ հա՛ց տուր նորան • և Թէ
որ ծարաւ լինի՝ ջո՛ւր տուր նորան[40] •
էս անելով կրակի կայծակներ կը-
ժողովես նորա գլխին վերայ :
21 Ա՛չ յաղթվիր չարիքն , այլ
բարիո՛վ յաղթիր չարին :

ԻԴ · ԺՂ

1 Պէտք է որ մենք ամէն իշխանութիւններին հնազանդ լինինք և ուրիշ մեր ամէն պարտականութիւններն կատարինք : 8 Խոկի մէնին պարտական չը՛մնանք՝ էրա սիրելուն մէջ ; քանզու ով՝ օրէնքի բոլորվին՝ ակռն է : 11 Ժամանակ՝ որ Քրիստոսի Հարութեան և նորա Թագաւորութեանն մէջ մեն կըգան , չը՛լինիր որ նորանք՝ անուսումնութեամբ և հոգևորական Թնով և պղծութիւններով ժամանակ կորչնին , բայց քընկեր զարԹնելով հետս անեն խաչի գործքերը :

1 Ա՛մէն անձն՝ որ իշխանութեան
նկատմամբ իւր՝ ի վերագանդութեան
կացցէ • քանզի ո՛չ ուսանիք է իշխա-
նութիւն , եթէ ո՛չ Ա՛ստուածոյ • և
որ կան , Ա՛ստուծոյ կարգեալ են :

2 Ա՛յստ հետև որ հակառակ կայ
իշխանութեանն , Ա՛ստուծոյ հրա-
մանին հակառակ կայ • և որք հա-
կառակին կան , անձանց դատաստա-
նըս ընդունին :

1 Ա՛մէն անձն՝ որ իշխանութեան
նկատմամբ է՝ Թող վերագանդութենով
կենայ՝ • պատճառն որ՝ իշխանու-
թիւնն իսկի մըմից չէ , եթէ ո՛չ
Ա՛ստուածմանից՝ • և նորանք որ կան՝
Ա՛ստուածմանից են կարգվածք :
2 Ա՛պա ուրեմն՝ նա որ իշխանու-
թեանն հակառակ է կենում՝ Ա՛ս-
տուծոյ հրամանին է հակառակ կե-
նում՝ • և նորանք՝ որ հակառակ
են կենում՝ իրանց անձներին հա-
մար դատաստան կընդունին :

(35) Ա՛ռակ . բ . 22 : Մարկ . ե . 39 : ա Կոր . ե . 15 : ա Պետր . գ . 9 : (36) Հռո-
մայ . ժգ . 16 : բ Կորնթ . ը . 21 : (37) Մատթ . ի . 49 : Հռոմայ . ժգ . 18 : Եբր .
ժբ . 14 : (38) Գործ . ժը . 18 : Ա՛ռակ . իդ . 29 : Հռոմայ . ժբ . 17 : (39) բ Օրին .
ի . 35 : Եբր . ժ . 30 : (40) Սուղ . իգ . 4 , 5 : Ա՛ռակ . իե . 21 , 22 : Մատթ . ե .
44 : (1) Տիտ . գ . 1 : ա Պետր . բ . 13 : (2) Ա՛ռակ . ը . 15 , 16 : Դան . բ . 21 ,
գ . 28 : Հովհ . ժը . 11 : (3) Տիտ . գ . 1 :

Digitized by Google

3 Ոչ իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց. կամիս՞ չերկնչել յիշխանութենէ անտի. զբարիս գործեա, և ընկալ յնմ զգովութիւն ի նմանէ։

4 Ոչ ի զուտ պաշտօնեայ է քեզ ի բարիս. ապա եթէ չար գործիցես, երկիր. զի ոչ եթէ վայրապար սուսեր ընդ ձեզ ի կապել է աստուծոյ սպասաւոր է՝ վրէժխնդիր ի բարկութիւն, այնմ՝ որ զչարն գործիցէ։

5 Վասն որոյ հարկ է ենթադնդ լինել ոչ միայն վասն բարկութեանն զի, այլև վասն մտացն խղճի։

6 Վասն այնորիկ և հարկս հարկանէք, զի ի զուտ պաշտօնեայք են՝ ի նոյն կանխեալք։

7 Տուր զհատուցեալսն իւրաքանչիւր զպարտս. որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն։

8 Եւ մի՛ ումեք պարտական գըլանիցիք, բայց զիմեանս սիրելոյ. զի որ սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ։

9 Զի՝ ընայցեան, և ի՝ սպանանիցես, և ի՝ գողանայցես, և ի՝ ոտւտ վկայիցես, և ի՝ բանկանայցես, և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն բան բովանդակի, եթէ Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։

10 Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն սէր է։

3 Անդեա որ՝ իշխանները բարի գործքերին վախի պատճառ չեն, բայց չար գործքերին. կամենո՞ւմ որ են իշխանութենէդն չըվախենաս, բարի գործք արա՝ և նորանից գովասանք կընդունես[4]։

4 Պատճառն որ՝ նա աստուծոյ պաշտօնեայ է քեզ համար դէպի բարին. ապա թէ որ չարադործ լինիս՝ վախը. ինչու որ՝ նա զուր աեղն սուրըն չի կապել մէջքումն. նա աստուծոյ սպասաւոր է՝ բարկութենով վրէժխնդրութիւն անելոյ նորան՝ որ չարըն է գործում։

5 Ուրեմն պէտք է ենթադնդ լինել՝ ոչ թէ մէնակ յարկութեան համար, բայց էլ խղճմտանքին համար[5]։

6 Ուրեմն հարկ էլ վճարուսք. ինչու որ՝ նորանք աստուծոյ սպասաւորներ են՝ հենց էն բանին պարապվելոյ համար։

7 Ուրեմն ամենին վճարեցեք ինչ պարտք որ կայ՝ ում որ հարկ՝ հարկը. ում որ մաքս (Ա՞ղբատ) մաքսը. ում որ վախ՝ վախը. ում որ պատիւ՝ պատիւը։

8 Եւ իսկի մըրնին պարտական չըմնաք՝ նորանից զոկ (սուլայէ)՝ որ իրար սիրէք. ինչու որ՝ նա որ ընկերքն սիրուսմ՝ նա օրէնքըն կատարուսմ[6]։

9 Ինչ որ՝ չի չնարն, և որ՝ չի գողանարն, և որ՝ չի սուտ վկայըն, և որ՝ չի ցանկանարն[7], և էլ ինչ որ ուրիշ պատուիրանք կայ, էն խօսքումն ժողովված բոլորվումեն, թէ Դու ընկերիդ քո անձիդ պէս սիրիր[8]։

10 Սէրն իրան ընկերին չար չի անիլ. օրէնքին բոլորվիլն՝ սէրն է[9]։

(1) ա պետ. բ. 14։ գ. 13։ (2) յհ. ը. 2։ (3) ա պետ. բ. 19։ (4) Մատթ. իբ. 21։ Մարկ. ժբ. 17։ Ղուկ. ի. 25։ (5) Աւետ. 10։ Գաղ. ե. 14։ Կող. գ. 14։ ա Տիմ. ա. 5։ Ցհ. բ. 8։ (6) Նկտ. ի. 13, Հռովմ. բ Օրէն. ե. 17, Հռովմ. Մատթ. ժբ. 18։ (10) Ղուկ. ժբ. 18։ Մատթ. իբ. 39։ Մարկ. ժբ. 31։ գաղ. բ. 14։ Ցհ. բ. 8։ (11) Մատթ. իբ. 40։ Ռնի. 8։

Digitized by Google

11 Եւ զայս գիտասջիք վասն ժամանակիս . զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթնուլ . զի այժմ մերձ է մեզ փրկութիւն . քան յորժամ հաւատացաք :

12 Գիշերն մերժեցաւ՝ և ցիւն մերձեցաւ . ի բաց արասցուք այսուհետեւ զգործս խաւարի , և ըզգեցցուք զզէնն լուսոյ :

13 Իբրև ի տունջեան զգաստացեալք շրջեսցուք . մի՛ անառակութեամբք՝ և արբեցութեամբք , և մի՛ խառն անկողնովք՝ և պղծութեամբք , և մի՛ նախանձու՝ և հակառակութեամբ .

14 Այլ զտեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս . և մարմնոյ խընամ մի՛ առնիք ի ցանկութիւնս :

11 Այս ժամանակիս համար էս էլ գիտացէք . որ հընց հիմիկ ժամանակն է՝ որ քնից զարթնանք[11] . պատճառն որ՝ հիմիկ մեզ աւելի մօտ է փրկութիւնն՝ քան թէ էն ժամանակն՝ որ հաւատացինք :

12 Գիշերն հեռացաւ և ցերեկն մօտեցաւ . ուրեմն հեռու անենք խաւարի գործքերըն[13] , և լուսոյ զէնքըն հագնենք[14] :

13 Ինչպէս ցերեկուայ պարկեշտ էլած մանգանք[15] . չըլինի որ անառակութեամբ[16] և հարբեցութեամբ և խառն պարկվածներով[17] և պղծութիւններով , և չըլինի որ նախանձով[18] և հակառակութեամբ :

14 Այլ Տէր Յիսուս Քրիստոսին հագէք[19] . և մարմնոյ համար հոգս մի՛ անէք դէպի ցանկութիւն[20] :

ԳԼ · ԻԴ

1 Ընդդիմք պիտք չէ որ՝ ուրիշներին անարգեն և դատեն , նորանց խղճմտանքին գէմ չէլսծ անելով բաներին համար , 13 Ասյց զգոյշ լինեն որ՝ էն բաներին մէջ նորանց գայթակղութիւն չ՚գտնեն , 15 Միւսներուն և ուրիշ բաներուն համար Քրիստոսի չաս պատճառներով կըշտասցուի թէ խոխ մեն մարդ գայթակղութիւն չ՚գտնէ և չ՚գտասէ քան եղբօրն :

1 Ասյց զակարացեալն ի հաւատս ընկալարուք՝ մի՛ խղճիւ երկմըտութեանց :

2 Ումն հաւատայ ուտել զամենայն . և որ հիւանդն է , բանջար կերիցէ :

3 Որ ուտէն , զայն՝ որ ոչն ուտէ՝ մի՛ անգոնանացէ . և որ ոչն ուտէ , զայն՝ որ ուտէն , մի՛ դատեսցի . քանզի Աստուած զնա ընկալաւ :

4 Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ

1 Ասյց հաւատքի մէջ տկարացածներին ընդունեցէք առանց տրտակրտանք անելոյ խղճմտանքին[1] :

2 Մինն հաւատայ՝ թէ ամէն բան կարօղ է ուտել[2] . և նա որ հիւանդ է՝ բանջար կուտէ :

3 Այս՝ որ ուտողն է , թող չարհամարհէ նորան՝ որ չի ուտում . և նա՝ որ չի ուտում , թող չդատէ նորան՝ որ ուտում[3] , ինչու որ Աստուած ընդունեց նորան .

4 Դու ո՞վ ես՝ որ ուրիշի ծա-

(12) ա Կորնթ . ժե . 31 : Եփես . ե . 14 : ա Թես . ե . 8 , 6 : (13) Եփես . ե . 11 : Կող . գ . 8 : (14) Եփես . զ . 13 : ա Թես . ե . 8 : (15) Փիլպ . գ . 8 : ա Թես . գ . 11 : ա Պետր . բ . 12 : (16) Ընսի . խգ . 20 : Ղևտ . ի . 31 : ա Պետր . գ . 3 : (17) ա Կորնթ . զ . 9 : Եփես . ե . 5 : (18) Յակ . գ . 14 : (19) Գաղ . գ . 27 : Եփես . գ . 24 : Կող . գ . 10 : (20) Գաղ . ե . 16 : ա Պետր . բ . 11 : (1) Հռով . ժե . 1 . 7 : ա Կորնթ . բ . 9 . 11 : բ . 22 : (2) Ա Տիմ . 14 : ա Կորնթ . ժ . 25 : ա Տիմ . գ . 4 : Ցիտ . ա . 15 : (3) Կող . բ . 16 :

Digitized by Google

ծառայ . իւրում Տեառն կոյ՝ կամ անկան . բայց կացցէ՝ զի կարօղ է Տէր հաստատել զնա :

5 Այլ պահէ օր ըստ օրէ՝ և ոմն պահէ զօրհնեալսդ . իւրաքանչիւրք զիւր միտս համբեսցէ :

6 Որ խորհի զօրն՝ Տեառն խորհի . և որ ոչն խորհի զօրն, Տեառնն չխորհի . և որ ուտէ, Տեառն ուտէ, և գոհանայ զԱստուծոյ . և որ ոչն ուտէ, Տեառն չուտէ, և գոհանայ զԱստուծոյ :

7 Զի ոչ ոք ի մէնջ անձամբ կեայ, և ոչ անձամբ մեռանի :

8 Եթէ կեամք՝ Տեառն կեամք, և եթէ մեռանիմք՝ Տեառն մեռանիմք . և արդ՝ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ Տեառն եմք :

9 Վասնզի ի նոյն իսկ և Քրիստոս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և կենդանեաց առ հասարակ տիրեսցէ :

10 Դու զի՞ դատիս զեղբայր քո . կամ ընդէր անգոսնես զեղբայր քո . քանզի ամենեքեան կալցուք եմք առաջի աթոռոյն Քրիստոսի :

11 Զի գրեալ է . կենդանի եմ ես՝ ասէ Տէր, զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր՝ և ամենայն լեզու խոստովանի լիցի Աստուծոյ :

12 Ապա ուրեմն՝ իւրաքանչիւրք

ոսկին դաւաճա՞ . իբրեւ Տիրոջն է կենալ՝ կամ ընկնուլ . բայց կը-կենայ , ինչու որ Տէրն կարօղ է հաստատել նորան :

5 Ոմ՝ինն պահումն օր օրի վերայ , և մէկէն պահումն ամէն օր՝ . ա-մէն մէկն թո՛ղ իւրան մտքի ուզա-ծըն անե :

6 Ո՛ւր՝ որ օրին մտիկ է անում , Տէրին համար է մտիկ անում . և ո՛ւ՝ որ օրին մտիկ չի անում , Տէ-րին համար մտիկ չի անում[6] . և ո՛ւ՝ որ ուտումն , Տէրին համար է ուտում , և Աստուածանից գոհա-նում . և ո՛ւ՝ որ չի ուտում , Տէ-րին համար չի ուտում , և Աստ-ուածանից գոհանումն[7] :

7 Պատճառն որ՝ մեզանից մին չըկայ՝ որ ինքն իրան համար ապրի և ինքն իրան համար մեռնի[8] :

8 Եվ որ ապրինք՝ Տէրին ենք ապրում , և թէ որ մեռնինք՝ Տէ-րին ենք մեռնում . ուրեմն թէ ապ-րինք և թէ մեռնինք՝ Տէրին ենք :

9 Պատճառն որ՝ հենց նորահամար էլ Քրիստոսն մեռաւ և կենդանա-ցաւ[9] որ մեռելներին և կենդանինե-րին վերայ աւհասարակ տիրապե-տէ[10] :

10 Դու ինչո՞ւ համար ես եղբօ-րըդ դատում , կամ ինչո՞ւ ես քո եղբօրըդ անարգում . ինչու որ՝ (մենք) ամենքս Քրիստոսի դատաս-տանի աթոռի առաջին պիտի կե-նանք[11] :

11 Պատճառն որ՝ գրված է՝ թէ Ես կենդանի եմ , ասումն Տէրն . որ ամէն ծունր ինձ պիտի չոքվի , և ամէն լեզու պիտի խոստովան լի-նի Աստուծոյն[12] :

12 Ուրեմն մեզանից ամէն մէկն ի-

(6) Ցհ. գ · 12 : (5) Գաղ. գ · 10 : Պաղ. բ · 16 : (6) Գաղ. գ · 10 : (7) ա Պե-տրն. ժ · 31 : ա Յհ՛. գ · 3 : (8) ա Պետրն. զ · 19 , 20 : Գաղ. բ · 20 : ա Թես-ս. ե , 10 : ա Գեսր . գ · 2 : (9) բ Պետրն. ե · 15 : (10) Գործ · ժ · 36 : (11) Պսալ. ք · 31 , 32 : Գործ · ժ · 42 : ժե · 31 : բ Պետրն. ե · 10 : Յուդ · 14 , 15 : (12) Եսայ . խե · 23 : Փիլիպ . բ · 10 :

Digitized by Google

ի մէնջ ընդ առնէին Համարս տացեն Աստուծոյ ։

13 Այսուհետեւ՝ ա՛ղբիւրանս գաւառացուք . այլ առաւել ըսպաս դիջք ի մարդ՝ չգնել գայթագղութիւն եղբօրն ։

14 Օ՛այս գիտեմ , եւ Համոզուած եմ ի Տիրոջմէ Յիսուս , զի ոչ ինչ է պիղծ ինքնին . բայց ոմանց Համար , որ Համարիցի ոք ինչ պիղծ՝ նոցա է պիղծ ։

15 Օ՛ի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո տրտմի , ոչ ևս սիրով գնացեր . մի՛ կերակրովն քով ըղձա կորուսաներ , վասն որոյ Քրիստոս մեռաւ ։

16 Այ՛ն Հայհոյեսցի բարին ձեր ։

17 Օ՛ի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր եւ ըմպելի , այլ արդարութիւն եւ խնդութիւն եւ խաղաղութիւն ի Հոգին Սուրբ ։

18 Օ՛ի որ յայսմ ծառայէ Քրիստոսի , Հաճոյ է Աստուծոյ՝ եւ ընտիր մարդկան ։

19 Այսպա այսուհետեւ զՏ՛ն եր. թիցուք զհաղագուածեան , եւ զշինուածեան՝ որ առ միմեանս ։

20 Այ՛ն վասն կերակրոյ քակեր ըզգործ Աստուծոյ . ամենայն ինչ սուրբ է . այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ուտիցէ ։

21 Լաւ է ոչ ուտել միգ , եւ ոչ ըմպել գինի . եւ ոչ՝ որով եղբայրն քո գայթագղի կամ գՀնէ կամ տրտ-

ման անձին կորնչանէ պիտի Համարք տալ Աստուծոյ[13] ։

13 Արդհետեւ իրարու չդատենք . բայց աւելի էս դրէք ձեր միտքդ , որ եղբօրն իսկի գայթակղութիւն չտրնէք[14] ։

14 Ես գիտեմ , և Համոզուած եմ Տ՛ն Յիսուս Քրիստոսմէ՝ որ իսկի մին բան պիղծ չէ իրանով[15] . բայց ով որ մին բան պիղծ կը Համարի՝ նորա Համար է պիղծ[16] ։

15 Ասյց թէ որ կերակուրի պատճառով քո եղբայրդ տրտմեցնի , էլ դու նորա հետ սիրով չըվարվիցար . քո կերակուրովն մի՛ կորցներ նորան , որ Քրիստոս մեռաւ[17] ։

16 Ձըլէնի որ ձեր բարի բանն Հայհոյվի[18] ։

17 Պատճառն որ՝ Աստուծոյ արքայութիւնն ուտելիք և խմելիք չէ[19] . բայց արդարութիւն և խաղաղութիւն և ուրախութիւն Սուրբ Հոգովն ։

18 Ինչու որ՝ նա որ ծառայում Քրիստոսին ծառայումէ , Աստուծոյն Հաճոյ է , և մարդկանց պատուելի[20] ։

19 Այսպա ուրեմն խաղաղութեան եանէն գնանք[21] , և էն շինուածքեան՝ որ իրար մէջ է[22] ։

20 Կերակուրի պատճառովն մի՛ քանդեր Աստուծոյ գործըն[23] . ամէն բան սուրբ է[24] . բայց չար էն մարդոյ Համար՝ որ խըղճմտանքով է ուտում նորան[25] ։

21 Լաւ է՝ ոչ միս ուտել և ոչ գինի խմել , և ոչ էն բանըն (անել) որ նորամոլ քո եղբայրդ

(13) Կորն . ժբ . 36 : Գաղ . գ . 5 : ա պետր . գ . 8 : (14) ա կորնթ . ը . 9 . 13 : ժ . 32 : (15) Գործ . ժ . 15 : Ա կորնթ . 2 , ե Ա տիմ . 20 : ա կորնթ . ժ . 25 : ա Տի . գ . 4 : Տիտ . ա . 15 : (16) ա կորնթ . ը . 7 . 10 : (17) ա կորնթ . ը . 11 : (18) Ռոմ . ժբ . 17 : (19) ա կորնթ . ը . 8 : (20) բ կորնթ . ը . 21 : (21) Կոմ . ըգ . 19 : Ռոմ . ժբ . 18 : (22) Ռոմ . ժե . 2 : ա կորնթ . ժգ . 12 : ա թես . ե . 11 : (23) Ա Կոր . 15 : (24) Կոմ . ժե . 11 : Գործ . ժ . 15 : Ա Կոր . 14 : Տիտ . ա . 15 : (25) ա կորնթ . ը . 8—13 ։

Digitized by Google

կծպանայ ։

22 Դուռ ապրքէն հաւատաս ունիս, կոչ առանձինն առաջի Աստուծոյ. երանի՛ որ ոչ դատիցի զանձն, զոր զընկերն փոքրձիցէ ։

23 Խոյց զքեզ խղճիցէն, թէպէտև առաքինի՝ գտանիցիս առ Աստուած՝ զի ոչ ըստ հաւատոց. զի ամենայն ինչ՝ որ ոչ ի հաւատոց է՝ մեղք են ։

24 Ի՛մ ոչնմ, որ կարօղն ես հաստատել զձեզ ըստ աւետարանիս եւ քարոզութեան Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան խորհրդոյն՝ ժամանակօքն յաւիտենից լուեցելոյ,

25 եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոս ծանուցելոյ՝

26 Աստուծոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. ո՛րում փառք յաւիտեանս. ամէն ։

գոյթակղուածք կամ գլուխ կամ սկսպրանաւանք[36] ։

22 Ի հարկէ դու հաւատաք առնիս. ապա քեզ առանձին բնիկըր Աստուծոյ առաջին. երանի՛ է նորան՝ որ իրան անձըն չըզատապարտէ նորանով՝ որ ընկերին փոքրձաւ[37] ։

23 Խոյց նա՝ որ խղճմտանք է առնում, թէ որ ուտէ՝ դատապարտուած է. ինչու որ հաւատքիցն չէ. բայց ամէն ինչ որ հաւատքիցն չէ, մեղք է[38] ։

24 Խոյց նորան որ կարօղ է ձեզ հաստատ պահել իմ աւետարանիս պէս, և Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պէս, են խորհրդոյ յայտնութեան պէս՝ որ յաւիտենից ժամանակներն լուռ ազատված էր,

25 եւ հիմիկ մարգարէից գրքերովքն յայտնըվեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին պէս, և հաւատքի ՚նազանդութիւնըն (գործելոյ համար)՝ ամէն հեթանոսների միջումն խնացում տըվված ։

26 Ի՛ն միայն իմաստուն Աստուծոյն՝ նորան փառք յաւիտեանս Յիսուսի Քրիստոսի ձեռովն. ամէն ։

ԿՈՂ · ԺԱՐ

1 Կարօղ հոգւոյնէն պէտք է որ՝ սխալանքի սկսաւթիւնքն վերսանենք · 3 Նա ամէն մէկին Քրիստ հաճոյ լինի քնկերին · 8 Պատմանան որ՝ Քրիստոս եղ էի իրան անձին հաճոյ ես լաս · 7 Քրիստոսնեանքն պէտք է որ՝ իրար ընդունին ինչպէս որ Քրիստոս եղ նորանք ընդունաց, 8 Ինի Հրէից լինի, 9 Նա Քրիստոս · 15 Պօղոս ներսէս խնդրուածի համարձակութիւնով գրելն համար Հռոմայեցոց, 28 Նա նորանց փիլիմն տանիկնալուն համար խոսք կըսայ · 30 Նա նորանցից աղօթք խնդրուաւ ։

1 Պարտ է մեզ՝ որ կարօղս եմք՝ զտկարութիւն ակարացն բառնալ · և մի՛ զանձանց և եթ հաճոյ լինել ։

2 Ի՛ւր իւրաքանչիւրոք ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ի բարիս՝ վասն շինուածոյ ։

1 Ա՛նէք որ կարօղ էնք՝ պէտք է որ սխալներն սկսաւթիւնքն վերսանենք[2], և մենակ մեր անձներին հաճոյ չըլինինք ։

2 Ա՛յլ մեզանից ամէն մէկն թող հաճոյ լինի ընկերին դէպի բարին[3] շինուածեան համար[4] ։

(36) ա կորնթ · գ · 13 ։ (37) ա Կոռ · դ · 21 ։ (38) Տիտ · ա · 15 ։ (1) Գաղ · գ · 1 ։ (2) Հռոմ · ժդ · 1 ։ (3) ա կորնթ · թ · 19 · 22 ։ ժ · 24 · 33 ։ ժգ · 5 ։ փիլիպ · բ · 4 ։ 8 ։ (4) Հռոմ · ժգ · 19 ։

Digitized by Google

3 Վասնզի և Քրիստոս ոչ երբէք անձին հաճոյ եղև , այլ որպէս և գրեալ է · Նախատինք նախատողացդ քոց անկան ի վերայ իմ :

4 Որոյ որ ինչ գրեցաւն՝ ի մեր վարդապետութիւն գրեցաւ · զի համբերութեամբ և միխիթարութեամբ գրոց զյոյսն ընկալցուք :

5 Իսկ Աստուած համբերութեան և ամենայն միխիթարութեան , տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիստոսի ·

6 Օի միաբանութեամբ ի մի բերան փառաւոր առնիցէք զԱստուած , և զհայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

7 Վասն որոյ ընկալարուք զմիմեանս , որպէս և Քրիստոս ընկալաւ զձեզ ի փառս Աստուծոյ :

8 Ասեմ , թէ Քրիստոսի սպասաւոր թլփատութեանն լինել՝ վասն ճշմարտութեանն Աստուծոյ էր , առ ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն :

9 Իսկ հեթանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱստուած , որպէս և գրեալ է · Վասն այսորիկ գոհացայց զքէն ի հեթանոս , և անուանի քումդ սաղմոս ասացից :

10 Եւ դարձեալ ասէ · Ուրա՛խ լերուք հեթանոսք ընդ ժողովրդեանն Նորա :

11 Եւ դարձեալ թէ , Օրհնեցէք ամենայն հեթանոսք զՏէր , և գովեցէք զնա ամենայն ժողովուրդք :

3 Պատճառն որ՝ Քրիստոս իւր չէ թէ իրան անձին հաճոյ էլաւ[5] , բայց ինչպէս որ իւր գրված է , թէ Քեզ նախատինք առաջնորդի նախատինքներն ինձ վերայ ընկան[6] :

4 Որոյ ինչ որ գրվեցաւ՝ մեր վարդապետութեան համար գրվեցաւ[7] , որ համբերութենով և գըրքերի միխիթարութենովն յոյսն ընդունինք :

5 Որոյ համբերութեան և միխիթարութեան Աստուածն տայ ձեզ՝ որ հինց միմեանց ընդ նինաք իրար հետ[8] Յիսուսի Քրիստոսի (կամաց) պէս :

6 Որ միաբան միով բերանով փառաւոր անէք Աստուծոյն , և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօրըն[9] :

7 Վորահամար իրար ընդունեցէք[10] , ինչպէս որ Քրիստոս էլ ձեզ ընդունեց Աստուծոյ փառաց համար[11] :

8 Այսայն թէ ասումեմ ձեզ . թէ էն որ Քրիստոս թլփատութեան ըսպասաւոր էլաւ՝ Աստուծոյ ճշմարտութեան համար եր[12] , որ հարանց էլած սուտքերըն հաստատէ[13] :

9 Որոյ հեթանոսներն ողորմութեան համար փառաւորումեն Աստուծոյն[14] , ինչպէս որ էլ գրված է . թէ Այսահամար կըդոհանամ քեզանից հեթանոսների մէջն , և քո անունդի սաղմոս կասեմ[15] :

10 Եւ միևնէլ թէ Ուրախացէք ո՛վ հեթանոսներ նորա ժողովրդի հետ[16] :

11 Եւ միևնէլ՝ թէ Օրհնեցէք Տէրին ամէն հեթանոսներ , և գովեցէք նորան ամէն ժողովուրդներ[17] :

(5) Պատր · ԺԵ · 3 : Հռվ · ե · 30 : ղ · 38 : (6) Պատմ · ԿԲ · 9 : (7) Հռվ · ե · 23 , 24 : ա Կորնթ · Բ · 9 , 10 : ժ · 11 : բ Տիմ · գ · 16 , 17 : (8) Հռվ · ժբ · 10 : ա Կորնթ · ա · 10 : Փիլիպ · գ · 16 : (9) Գործ · գ · 24 · 32 : (10) Հռվ · ժգ · 1 · 3 : (11) Հռվ · ե · 2 : (12) Պատր . ժե · 24 : Հռվ · ա · 11 · Գործ · գ · 25 , 26 : ժգ · 10 : (13) Հռվ · գ · 3 : բ Կորնթ · ա · 20 : (14) Հռվ · ժ · 10 : Հռվ · Բ · 24 : (15) Պատմ · ժբ · 49 : (16) բ Օրին · ԼԲ · 43 : (17) Պատմ · ԿԱԲ · Ի

12 եւ դարձեալ Եսայի ասէ· Եթէ
զիջի արմատն Յեսսեայ · և որ
կանգնելոցն ի իշխան հեթանոսաց,
ի նա հեթանոսք յուսացին :

13 Ա՛յլ Աստուած յուսոյ՝ լի ա-
րասցէ զձեզ ամենայն ինդութեամբ
և խաղաղութեամբ , առաւելուլ
ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն
Սրբոյ :

14 Հաստատեալ եմ և ես ինքնին
եղբարք իմ՝ վասն ձեր , զի և դուք
լի էք բարութեամբ , լի էք ամե-
նայն գիտութեամբ , կարող էք և
զմիմեանս խրատել :

15 Ա՛յլ համարձակագոյնս գրեցի
առ ձեզ եղբայրք իմ՝ փոքր ի շա-
տէ , իբրև յիշեցուցանելով ձեզ
վասն շնորհացն՝ որ տուեալ են ինձ
յԱստուծոյ ·

16 լինել ինձ սպասաւոր Յիսու-
սի Քրիստոսի ի հեթանոսս · ըղ-
ձակեալս առնել զաւետարանն Ա-
ստուծոյ , զի եղիցի պատարագն հե-
թանոսաց ընդունելի՝ սրբեալ Հոգ-
ւովն Սրբով :

17 Ունիմ այսուհետև պարծանս
ի Քրիստոս Յիսուս առ Աստուած :

18 Քանզի ոչ իշխեմ խօսել ինչ
զոր ոչ գործեաց Քրիստոս ինև ի
հնազանդութիւն հեթանոսաց՝ բան-
իւք և արդեամբք ,

19 զօրութեամբ նշանաց և սր-
ութեանց , զօրութեամբ Հոգւոյն
Սրբոյ · որպէս ինձ յԵրուսաղէմ
և շուրջ մինչև ի կողմանս Իլի-
րիկացւոց լնուլ զաւետարանն Քրի-
ստոսի :

12 Եւ միւնիլ Եսայիա ասումն ·
Յէսսէիցն արմատ կըլինի , և նա
որ հեթանոսներուն համար իշխան
կըկանգնի · նորան յոյս կըդնեն
հեթանոսներն[18] :

13 Հայց յուսոյ Աստուածն՝ լիքն
անէ ձեզ ամէն ուրախութենով և
խաղաղութենով , որ յուսալ ա-
ւելանաք Սուրբ Հոգոյ զօրութենո-
վըն[19] :

14 Եւ ինքս էլ՝ իմ եղբայրք՝ ձեզ
համար համոստա եմ[20] , որ դուք
լիքն էք բարութենով · լիքն էք
ամէն գիտութենով[21] , (որ) կարօղ
էք իրար խրատել :

15 Հայց համարձակվեցայ եղբարք՝
և փոքր ի շատէ գրեցի ձեզ · իբր
թէ ձեր մտքներդ բերելով էն շը-
նորհքըն՝ որ ինձ տըվված է Աստ-
ուածմէ[22] :

16 Որ ես Յիսուսի Քրիստոսի
սպասաւոր լինիմ հեթանոսներուն մի-
ջումն[23] · Աստուծոյ աւետարանըն
ցանկալի անելոյ , որ հեթանոսներուն
պատարագըն ընդունելի լինի՝ Սուրբ
Հոգւովն սրբված[24] :

17 Որոհամար պարծանք ունինք
Յիսուս Քրիստոսմէ Աստուծոյ
առաջին :

18 Ինչու որ՝ չեմ համարձակվում
մէն բան խօսիլ որ նորան Քրիստ-
ոս չըգործեց ինձմով[25] հեթա-
նոսներն հնազանդացնելոյ համար՝
խօսքերով և գործքերով[26] ,

19 նշաններուն և հրաշքներուն զօ-
րութենով[27] · Սուրբ Հոգոյ զօրու-
թենով · ինչպես որ ես Երուսա-
զէմիցն մինչև Իլլիւրիկացոց կողմերն
Քրիստոսի աւետարանըն լցուր :

(18) Եսայ · ԺԱ · 1 · 10 : Հայր · Ե · 5 : Բր · 16 : (19) Հռով · ԺԲ · 13 : ԺԳ · 17 :
(20) Բ Պետր · Ա · 12 : Ա Յովհ · Բ · 21 : (21) Ա Կորնթ · Ը · 1 · 7 · 10 : (22) Հռո-
մայ · Ա · 5 : ԺԲ · 3 : Գաղ · Ա · 15 : Եփես · Գ · 7 , 8 : (23) Հռովմ · ԺԱ · 13 :
Գաղ · Բ · 7 , 8 , 9 : Ա Տիմ · Բ · 7 : Բ Տիմ · Ա · 11 : Փիլիպ · Բ · 17 : (24) Եսայ ·
ԿԶ · 20 : Փիլիպ · Բ · 17 : (25) Գործ · ԺԱ · 19 : Գաղ · Բ · 8 : (26) Հռովմ · Ա ·
5 : ԺԵ · 18 : (27) Գործ · ԺԳ · 11 : Բ Կորնթ · ԺԲ · 12 :

Digitized by Google

20 Ընդէ՞ր առաւաջիկաւ յաւետա-
նել, ոչ ես ամուսնացաւ Երու-
սաղէմ, զի մի՛ իբրև յայլոյ հիմանէ
վերայ շինիցեմ, այլ որպէս և
գրեալ է,

21 ՈՎ որոց ոչ պատմեցաւ վասն
նորա՝ տեսցեն, և որոց ոչ լուան
լուիցեն։

22 Այն որոյ շատ խափանեցայ
գալ առ ձեզ։

23 Այլ արդ՝ ոչ ևս գոյ ինձ
տեղի ի հողմանս յայսոսիկ և ան-
ձկակ յոյժ ունիմ ի քաղցումն ամաց
գալ առ ձեզ։

24 Յորժամ անցանիցեմ ի Սպա-
նիա, ակն ունիմ յանցանելն առ
ձեզ և ի ձէնջ
յուղարկիլ անդր, եթէ նախ իակ
փոքր ի շատէ ձեզ լցայց։

25 Այլ այժմ երթամ Երու-
սաղէմ պաշտել զսուրբսն։

26 Հաճեցաւ Թուեցաւ Մա-
կեդոնացւոցն և Աքայեցւոցն հա-
դորդութիւն ինչ առնել ընդ աղ-
քատս սրբոցն՝ որ են Երուսա-
ղէմ։

27 Հաճեցաւ, քանզի և
պարտապան իսկ էին նոցա. զի եթէ
հոգևորացն նոցա հաղորդ եղեն
ազգն հեթանոսք, պարտին և մարմ-
նաւորացն նոցա ծառայել նոցա։

28 Ընդ զայս կատարեալ և կնքեալ
զպտուղ նոցա, անցից առ
ձեզ ի Սպանիա։

29 Գիտեմ, զի ի գալն

20 Ընդէ՞ս զանգ առի ասելոյ
նոցն քարոզել, չէ թէ որպէս որ
Երիասեան անուանվիցաւ՝
որ չըլինի թէ իբր ուրիշի հիմանքի
վերայ շինեմ[28]. բայց ինչպէս որ
եւ գրված է.

21 Ով նորանք որ նորանց չիպատ-
մըված նորա համար՝ կըտեսանեն, և
նորանք որ չեն լսել միաք կառնեն[29]։

22 Որհամար շատ անգամ խո-
փանվեցայ ձեզ մօտ գալուց[30]։

23 Այլ հիմիկ ես էս կողմերումն
եւ տեղ չունիմ. և շատ տարուց
ենաև սպասիկ փափաք ունիմ՝ որ
ձեզ մօտ գամ[31]։

24 Երբոր անցկրկենամ Սպանիա,
յոյս ունիմ որ ղէպի նորանց անց-
կենալոյ ժամանակն տեսնեմ ձեզ[32].
և ձեզմանից ճանապարհ քցվիմ կե-
ռեղ՝ եթէ առաջ փոքր ի շատ
ձեզանով կըշտանամ[33]։

25 Այլ հիմիկ Երուսաղէմ եմ
գնում որ սըրբերուն ծառայութիւն
կատարեմ[34]։

26 Պատճառն որ՝ Մակեդոնացոց
և Աքայեցոց հաճոյ երևեցաւ՝ որ
մին հաղորդութիւն անեն տղքա-
սըրբերուն հետ՝ որ Երուսաղէմումն
են[35]։

27 Հաճոյ երևեցաւ, ինչպես որ
հենց պարտական էլ են նորանց.
պատճառն որ՝ եթէ հեթանոսներն
նորանց հոգևոր (բարիքներուն) մաս-
նակից եղան[36], պէտք է որ մարմ-
նական (բաներուն) էլ մտնեակից ա-
նեն նորանք[37]։

28 Ուրեմն ես որ կատարեմ՝ և
նորանց պտուղնէ իրան տեղն դը-
նեմ[38], անկից կենամ Սպանիա ձեր
միջումն։

29 Ես գիտեմումն՝ որ երբոր ձեզ

(28) ը կորնթ. ժ. 13, 15, 16։ (29) Եսայ. նբ. 15։ (30) Հռոմ. ա. 13։ (31) Գործ. ժբ. 21։ Ա Տես. 33։ Հռոմ. ա. 11։ (32) Գործ. ժբ. 3։ Ա Տես. 32։ (33) Գործ. ժբ. 21։ ի. 32։ իգ. 17։ (34) ա կորնթ. ղ. 1, 2։ ը կորնթ. ը. 1։ ի. 2։ իգ. 19։ (35) Հռոմ. ժա. 17։ (36) ա կորնթ. ի. 11։ Գաղ. ը. 6։ (37) Փիլիպ. գ. 17։

առ ձեզ , լրութեամբ օրինութեան առաքեալին Քրիստոսի եկից ։

30 Ունելեմ զձեզ երեսաւք՝ ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և սիրով Հոգւոյն , պատերազմիկ լինել ինձ յաղօթիս վասն իմ առ Աստուած ։

31 Զի ապրեցայց յապստամբացն՝ որ ի Հրէաստանի են . և պաշաւնն իմ՝ որ ԵրուսաղեմՀ , ընդունելի լիցի սրբոցն ։

32 Զի խնդութեամբ եկեսցէ առ ձեզ ի կամս Աստուծոյ , հանգեսցից ընդ ձեզ ։

33 Եւ Աստուած խաղաղութեան ելիցի ընդ ձեզ ամենեսին . ամէն ։

մեռ գամ , Քրիստոսի աւետարանի առատ օրհնութեամբն կըգամ[38] ։

30 Աղաչեմ ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ձեռնվէ և Հոգւոյ սիրովն[39] , որ ինձ պատերազմի ընկեր լինիք՝ ինձ համար աղօթք անելով դէպի Աստուած[40] ։

31 Որ փրկվիմ էն ապստամբներէ ձեռքիցն՝ որ Հրէաստանումն են[41] . և իմ ծառայութիւնս՝ որ Երուսաղէմի մէջ (եմ տանում)՝ սրբերին ընդունելի լինի[42] ։

32 Որ ուրախութեամբով ձեզ մեռ գամ[43] Աստուծոյ կամքովն[44] , և ձեզ հետ հանգիստ առնեմ[45] ։

33 Եւ Հաղաղութեան Աստուածն ձեզ ամենիդ հետ լինի[46] . ամէն ։

ԿՈ · ՀՈՎ

3 Պօղոս գրուելէ եղբայրներին որ իրան յիշած մարդկանց ողջոյն տան , 17 և եթէ յորդոր որ հերձուածներէ և գայթակղութիւններ չհնօղներէն զգոյշ լինին , 21 և ուրիշ մարդկանցից ողջոյն տալուցի ետև Աստուծոյ պատիւ և փառք տալով վերջ կանի ։

1 Ցանձն առնեմ ձեզ զփիլեք զքոյր մեր , որ է պատասուր եկեղեցւոյն կենքրացւոց ։

2 Զի զնա ընկալջիք ի Տէր՝ արժանի սրբոց , և վերակացու լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց և կոչեսցէք զձեզ . քանզի և նա վերակացու եղև բազմաց , և ինձ իսկ գլխովին ։

3 Ողջոյն տաջիք Պրիսկեայ և Աքիւղայ՝ գործակցաց իմոց ի Քրիստոս Յիսուս ։

4 Որք ընդ անձին իմոյ զկնւրեանց պատճառեցան մատուցին . զորոց ոչ

1 Ցանձնումեմ ձեզ մեր փիլեք քոյրըն , որ կենքրացոց եկեղեցւոյն սպասաւոր է[1] ։

2 Որ նորան ընդունիք Տէրով[2] , ինչպէս որ սրբերին արժան է . և նորան ձեռն տուօղ էլէք՝ ինչ հարկաւոր բանի համար որ կանչէ ձեզ . պատճառն որ՝ նա էլ շատ մարդկանց ձեռն տուաւ , և յատուկ ինձ էլ ։

3 Ողջոյն տուէք Պրիսկային և Աքիւղային՝ իմ գործընկերներիս Քրիստոս Յիսուսումն[3] ։

4 Որ իմ անձիս տեղակ իւրանց վզերըն առաջ դրին , որ նորանից

(38) Հռովմ . ա . 11 : (39) Փիլիպ . բ . 1 : (40) բ Կորնթ . ա . 11 : Կող . դ . 12 : (41) բ Թես . գ . 2 : (42) բ Կորնթ . ը . 4 : (43) Հռովմ . ա . 10 : (44) Կորնթ . ժը . 21 : ա Կորնթ . դ . 19 : Յով . գ . 15 : (45) ա Կորնթ . ժգ . 18 : բ Կորնթ . է . 13 : բ Տիմ . ա . 18 : Փիլիմ . 7 . 20 : (46) Հռովմ . ժգ . 20 : ա Կորնթ . ժդ . 33 : բ Կորնթ . ժգ . 11 : Փիլիպ . գ . 9 : ա Թես . ե . 23 : բ Թես . գ . 16 : Սբր . ժգ . 20 : (1) Գործ . ժը . 18 : (2) Փիլիպ . բ . 29 : գ Ղեւի . 5 , 6 : (3) Գործ . ժը . 2 . 18 . 26 : բ Տիմ . գ . 19 ։

Digitized by Google

եա վիայն գոհանամ , այլ և ամենայն եկեղեցիք հեթանոսաց .

5 Եւ առանին եկեղեցւոյն նոցա· ողջոյն առաքիք Եպենետոս սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ Ասիացւոց ՚ի ՚Քրիստոս :

6 Ողջոյն տաքիք Մարիամ՝ որ բազում վաստակս վաստակեաց ՚ի ձեզ :

7 Ողջոյն տաքիք Անդրոնիկեայ և Յունեայ ազգականաց իմոց՝ և գերեկցաց , որք երևելիքն իսկ են յառաքեալս . որք և յառաջ իսկ քան զիս եղեն ՚ի ՚Քրիստոս :

8 Ողջոյն տաքիք Ամպղեայ սիրելւոյ իմոյ ՚ի Տէր :

9 Ողջոյն տաքիք Ուրբանեայ գործակցի իմոյ ՚ի Տէր , և Ստաքեայ սիրելւոյ իմոյ :

10 Ողջոյն տաքիք Ապելեայ՝ որ ընտիրն է ՚ի Տէր :

11 Ողջոյն տաքիք նոցա , որ յԱրիստոբուղեայ տանէ անտի են . ողջոյն տաքիք Հերովդիոնեայ ազգականի իմոյ . ողջոյն տաքիք այնոցիկ՝ որք ՚ի Նարկիսեայ տանէն իցեն ՚ի Տէր :

12 Ողջոյն տաքիք Տրիփոնեայ և Տրիփոսեայ վաստակաւորաց ՚ի Տէր . ողջոյն տաքիք Պերսիդեայ սիրելւոյ , որ բազում վաստակս վաստակեաց ՚ի Տէր :

13 Ողջոյն տաքիք Ռուփեայ ընտրելոյ ՚ի Տէր , և մօր նորա և իմոյ :

14 Ողջոյն տաքիք Ասինկրիտեայ՝ փլեգոնտեայ՝ Երմեայ՝ Պատրոբեայ՝ Երմայ , և որ ընդ նոսա եղբարք իցեն :

15 Ողջոյն տաքիք Փիղղոգեայ՝ Յուղեայ՝ Նէրեայ՝ և քեռւ նորա . և Ուղիմպեայ , և որ ընդ նոսա սուրբք ամենեքին իցեն :

ցից սէր թէ ամենակ ես եմ շնորհակալ՝ քայց հեթանոսաների ամէն եկեղեցիներն էլ ,

5 Եւ նորանց տանն լինող եկեղեցին էլ (ողջոյն առէք) . ողջոյն առէք Եպենետին՝ իմ սիրելոյս՝ որ Ասիացոց պտուղն է ՚Քրիստոսում :

6 Ողջոյն առէք Մարիամին՝ որ շատ աշխատանքով աշխատեց ձեր միջումն :

7 Ողջոյն առէք Անդրոնիկեին և Յունեին՝ իմ ազգականներիս , և գերուեծեան ընկերներիս . որ առաքեալների մէջն երևելի են՝ որ նորանք հինց ինձանից առաջ ՚Քրիստոսումն էլան՝ :

8 Ողջոյն տուէք Ամպղեային իմ սիրելոյս Տէրով :

9 Ողջոյն տուէք Ուրբանէին՝ իմ գործընկերիս Տէրով , և Ստաքէին իմ սիրելոյս :

10 Ողջոյն տուէք Ապելէին՝ որ ազնիւ է Տէրով :

11 Ողջոյն տուէք նորանց՝ որ Արիստաբուլի տանիցն են . ողջոյն տուէք Հերօդիոնին՝ իմ ազգականիս . ողջոյն տուէք նորանց , որ Նարկիսեի տանիցն են՝ Տէրով :

12 Ողջոյն տուէք Տրիփոնին և Տրիփոսին՝ աշխատաւորներին Տէրով . ողջոյն տուէք Պերսիդէին սիրելոյն՝ որ շատ աշխատանքով աշխատեց Տէրով :

13 Ողջոյն տուէք Ռուփոսին՝ որ ազնիւ է՝ Տէրով . և նորա և իմ մօրն :

14 Ողջոյն տուէք Ասինկրիտին , փլեգոնտին , Երմին , Պատրոբին , Երմին , և եղբարներին՝ որ նորանց հետ են :

15 Ողջոյն տուէք Փիղղոգին և Յուղիային և Նէրէային և նորա Ողիմպիա քրվոջն և ամէն սրբերին՝ որ նորանց հետ են :

(1) = Պօղ . ժգ . 19 · Դտ . դ . 15 · Փիլմ . 2 · (5) = Պօղ . ժգ . 15 · (6) Գտ . ա . 22 · (7) ր Ցահ . 1 ·

Digitized by Google

16 Ընդէր՝ տալիք միմեանց՝ ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ ամենայն եկեղեցիք Քրիստոսի:

17 Աղաչեմ զձեզ եղբարք՝ գիտել զպայպիսին, որ հերձուածս և գայթակղութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսաք. և խոյս եցարուք ի նոցանէ:

18 Զի այնպիսիքն Տեառն մերում Յիսուսի Քրիստոսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնի. և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց:

19 Զի ձեր հնազանդութիւնն առ ամենեսեան հասեալ է. և արդ ի ձեզ ուրախ եմ. բայց կամիմ զձեզ իմաստուն լինել ի բարիս՝ և անմեղս ի չարիս:

20 Եւ Աստուած խաղաղութեան խորտակեսցէ զՍատանայ ընդ ոտս ձեր ովք ընդ մերձ. շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ:

21 Ողջոյն տայ ձեզ Տիմոթէոս եղբայր և գործակից իմ, և Ղուկիոս, և Յասոնի, և Սոսիպատրոս ազգականք իմ:

22 Ողջոյն տամ ձեզ՝ և ես Տերտիոս, որ զթուղթս գրեցի ի Տէր:

23 Ողջոյն տայ ձեզ Գայիոս ասպընջական իմ, և ամենայն եկեղեցւոյն. ողջոյն տայ ձեզ Երաստոս

16 Ողջոյն տուէք իրար սուրբ համբուրուքն. ողջոյն են տալիս ձեզ Քրիստոսի ամէն եկեղեցիներն:

17 Աղաչում եմ ձեզ եղբարք, որ մտիկ տաք նորանց՝ որ հերձուածներ և գայթակղութիւններ են չինում էն վարդապետութենիդն դուրս՝ որ դուք սովորեցիք[9] և հեռու քաշվեցէք նորանցից[10]:

18 Պատճառն որ՝ էնպէսիներն մեր Տէր Քրիստոսին չեն ծառայում, բայց իրանց փորին[11]. և քաղցր խօսքերով և օրհնութենով խաբում են անմեղների սրտերն[12]:

19 Ինչու որ՝ ձեր հնազանդութիւնըն ամէնի (ականջն) հասաւ[13]. և սրա համար ուրախ եմ ձեզ համար. միայն թէ ուզում եմ՝ որ դուք իմաստուն լինիք դէպի բարին՝ և անմեղ չարի կողմանէ[14]:

20 Եւ խաղաղութեան Աստուածըն[15] կըճտրտակէ Սատանային ձեր ոտաց ներքևն շուտով[16]. մեր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն լինի ձեզ հետ[17]:

21 Ողջոյն է տալիս ձեզ Տիմոթէոս եղբայրն և իմ գործընկերս[18], և Ղուկիոս[19] և Յասոն[20] և Սոսիպատրոս[21] իմ ազգականներս:

22 Ողջոյն եմ տալիս ձեզ ես Տերտիոսս էլ՝ որ էս թուղթըս գրեցի Տէրոմն:

23 Ողջոյն է տալիս ձեզ Գայիոս[22] որ իմ և ամէն եկեղեցոյ ընդունողն է. ողջոյն է տալիս ձեզ Ե-

(8) ա կորնթ. ժգ. 29: բ կորնթ. ժգ. 12: ա թես. ե. 26: ա պետր. ե. 14: (9) գործ. ժե. 1. 5. 24: ա Տիմ. գ. 8: (10) ա կորնթ. ե. 9. 11: բ թես. գ. 6. 14: բ Տիմ. գ. 5: Տիտ. գ. 10: բ Յովհ. 10: (11) փիլիպ. գ. 19: ա Տիմ. գ. 5: (12) կող. բ. 4: բ Տիմ. գ. 6: Տիտ. ա. 10: բ պետր. բ. 3: (13) հռոմ. ա. 8: (14) Մատթ. ժ. 16: ա կորնթ. ժգ. 20: (15) հռոմ. ժե. 33: (16) Հռնգ. գ. 15: (17) վայր. 24: ա կորնթ. ժգ. 23: բ կորնթ. ժգ. 13: փիլիպ. գ. 24: ա թես. ե. 28: բ թես. գ. 18: Հայտ. իբ. 21: (18) գործ. ժգ. 1: կող. ա. 1: փիլիպ. բ. 19: ա թես. գ. 2: ա Տիմ. ա. 2: նբր. ժգ. 23: (21) գործ. ժգ. 1: (20) գործ. ժե. 5: (21) գործ. բ. 4: (22) ա կորնթ. ա. 14

Digitized by Google

առաջ չհասած քաղաքիս , և կատարած եղբայրն :

24 Հարցք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսին . ամէն :

25 Վասն այնմ , որ կարօտն է հասանելոյ զձեզ ըստ աւետարանին իմում , և ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի , ըստ յայտնութեան խորհրդոյս այսպիսիկ՝ ժամանակաւք յաւիտենից լռեցելոյս ,

26 Եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի միանի մշտնջենաւորին Աստուծոյ , ի հնազանդութիւն հաւատոց . յամենայն հեթանոսս ծանուցելոյ ,

27 Այնոցիկ իմաստնոյն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի . նմա պատիւ և փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

բաւական[23] քաղաքիս հոգեւորդն , և կատարած եղբայրն :

24 Այր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն (լինի) ձեզ ամենեցուն հետ[24] . ամէն :

25 Հասց նորան՝ որ կարօղ է ձեզ հաստատ պահել[25] իմ աւետարանիս պէս[26] և Յիսուսի Քրիստոսի քարոզութեան պէս , ըստ յայտնութեան խորհրդոյ յաւիտենից պէս[27] որ յաւիտենից ժամանակից լուռ պահված էր[28] :

26 Հասց հիմիկ մարգարէից գրքերովք յայտնեցաւ՝ յաւիտենական Աստուծոյ հրամանին պէս[29] , և հաւատոյ հնազանդութիւնըն (գործելոյ համար) ամէն հեթանոսներից ճշտութեամբ տեղեկաց[30] .

27 Նմա միայն իմաստուն Աստուծոյ[31] , նորան պատիւ և փառք յաւիտեանս յաւիտենից Յիսուս Քրիստոսի ձեռնէն . ամէն :

(33) Գործ . ժբ . 22 : բ Տիմ . գ . 20 : (34) Ա Կոր . 20 : ա Թես . ե . 28 : (25) Ներ . գ . 20 : ա Թես . գ . 13 : բ Թես . բ . 16 : գ . 3 : Յուդ . 24 : (26) Հռով . բ . 16 : (27) Ներ . ա . 9 : գ . 3 , 4 , 5 : Կող . ա . 27 : (28) ա Կորնթ . բ . 7 : Ներ . գ . 5 . 9 : Կող . ա . 26 : (29) Ներ . ա . 9 : բ Տիմ . ա . 10 : Տիտ . ա . 3 , 3 : ա Պետր . ա . 20 : (30) Գործ . գ . 7 : Հռով . ա . 5 : ժե . 18 : (31) ա Տիմ . ա . 17 : գ . 15 : Յուդ . 25 :

(Հոմոյեցոց վերջոյ գրվեցաւ Կոստանդա գաղտնի , ինչե ասլան-ագի չհասաւ :)

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԻՑ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

1 Առաքեալն իւր բարեւն և գոհութիւն տալոյն եաւ, 10 ընդդէմ ընդհարածներն որ մին խօսք ունիցան, 12 Իւրանց մէջ եղած հակառակութիւններն երեսներին կըթաթխէ: 18 Ցայց կըտայ Թէ Աստուած իմաստութիւնն իմաստութիւնն կըկործանէ, 21 Նիմոր քարոզութիւնովը կապրեցնէ հաւատացեալներն, 26 Զէ Թէ իմաստուններն և զօրաւորներն և ազնուականներն կըկոչէ, բայց 27, 28 Նիմարներըն, ախտաներըն և անարգվածներըն ընտրեց:

1 ՊՕՂՈՍ կոչեցեալ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամօքն Աստուծոյ, և Սոսթենէս եղբայր.

2 Եկեղեցւոյդ Աստուծոյ՝ որ է՛ի Կորնթոս՝ նուիրելոց՝ ի Քրիստոս Յիսուս, կոչեցելոց սրբոյ՝ ամենեքեան՝ որք կարգան զանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յամենայն տեղիս նոցա՝ և մեր:

3 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ՝ և՛ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի կանչուած առաքեալ[1] Աստուծոյ կամքովն[2], և Սոսթենէս եղբայր[3].

2 Աստուծոյ եկեղեցւոյդ՝ որ կորընթոսումն է[4], Յիսուս Քրիստոսումն սրբացածներիդ[5]՝ կանչուած սրբերիդ[6]՝ են ամէնքին հետ որ մեր Տէր՝ Յիսուսի Քրիստոսի անունըն (իրանց) կանչուածն[7] ամէն տեղացի և մեր տեղերուանց[8]:

3 Շնորհք (լինի) ձեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրմէն և Տէր Յիսուս Քրիստոսից[10]:

(1) Հռոմ. ա. 1: (2) բ Կորնթ. ա. 1: Եփես. ա. 1: Կող. ա. 1: (3) Գործ. ԺԸ. 17: (4) Յոան. 1: (5) Ծամ. ԺԹ. 10: Գործ. ԺԹ. 9: (6) Հռոմ. ա. 7: բ Տիմ. ա. 9: (7) ա Կորնթ. Ը. 6: (8) Գործ. Թ. 14. 21: Ի՛Ը. 16: բ Տիմ. բ. 22: (9) Հռոմ. գ. 22: Ժ. 12: (10) Հռոմ. ա. 7: բ Կորնթ. ա. 2: Եփես. ա. 2: ա Պետր. ա. 2:

Digitized by Google

4 Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն ձեր՝ ի վերայ շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են ձեզ ի Քրիստոս Յիսուս ։

5 Զի յամենայնի մեծացարուք դուք նովաւ՝ ամենայն բանիւ և ամենայն գիտութեամբ ։

6 Որպէս վկայութիւնն իսկ Աստուծոյ հաստատեցաւ ի ձեզ ։

7 Զի դուք մի՛ նուազիցիք՝ և մի՛ իւիք շնորհօք , ակնկալեալ յայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

8 Որ և հաստատեսցէ զձեզ մինչև ի կատարած՝ անարատս՝ յօր Տեառնն մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

9 Հաւատարիմ է Աստուած , որով կոչեցարուք ի հաղորդութիւն Որդւոյ Նորա Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ ։

10 Աղաչեմ զձեզ եղբարք՝ անուամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . զի զնոյն բան ունիցիք ամենեքեան , և մի՛ իցեն ի ձեզ հերձուածք . քանզի էիք հաստատեալք ի նոյն միտս և ի նոյն հանճար ։

11 Աղդ եղև ինձ վասն ձեր եղբարք՝ ի Քլուայեայ անտի , թէ հակառակութիւնք են ի ձեզ ։

12 Եւ արդ ասեմ իսկ , եթէ իւրաքանչիւրդ ի ձէնջ ասէ . Ես Պօղոսեան եմ , և միւսն՝ եթէ Ես Ապողոսեան , և միւսն՝ եթէ Ես

4 Միշտ ես շնորհակալ եմ Աստուծոյ համար ձեզ՝ շնորհքի Աստուծոյ որ տրուեցաւ ձեզ Յիսուս Քրիստոսով ։

5 Որովհետև ամէն բանի մէջ հարստացաք նորանով՝ ամէն խօսքով և ամէն գիտութեամբ ։

6 Ինչպէս որ հինց Աստուծոյ վկայութիւնն հաստատուեցաւ ձեր մէջ ։

7 Որ դուք չզլանաք իսկի մի շնորհքով էլ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի յայտնութեանն սպասէք ։

8 Որ նա էլ հաստատ կըպահէ ձեզ մինչև վերջն՝ որ անմեղ լինիք մինչև մեր Տէր Յիսուսի Քրիստոսի օրն ։

9 Հաւատարիմ է Աստուած՝ որ դուք նորանով կանչուեցաք դէպի նորա Որդոյ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հաղորդութիւնն ։

10 Աղաչում ձեզ եղբարք՝ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունովն , որ ամէնքդ հինց միեն խօսք ունենաք , և հերձուածք չըլինի ձեր միջումդ . ինչու որ՝ հինց միտքի և միեն կարծիքի մէջ հաստատուած էիք ։

11 Եղբարք՝ ես էն Քլուայեանները թիթն իմացայ ձեզ համար՝ որ հակառակութիւններ կան ձեզանում ։

12 Ուրեմն էս եմ ասում՝ որ ձեզանից ամէն մէկն ասում՝ թէ Ես Պօղոսեան եմ , և մէկէլն՝ թէ Ես Ապողոսեան , և մէկէլն՝ թէ

(11) Հռով. ա . 8 : (12) ա Կորնթ . ժբ . 8 : բ Կորնթ . ը . 7 : (13) ա Կորնթ . բ . 1 : բ Տիմ . ա . 8 : Հայտ . ա . 2 : (14) Փիլիպ . գ . 20 : Տիտ . բ . 13 : բ Պետր . ե . 13 : Կող . գ . 4 : (15) ա Յովհ . գ . 13 : (16) Կող . ա . 22 : ա Յովհ . ե . 23 : (17) Նռոմ . խթ . 7 : ա Կորնթ . ժ . 13 : ա Յովհ . ե . 24 : բ Յովհ . գ . 8 : Նէր . ժ . 23 : (18) Յովհ . ժե . 4 : ժե . 21 : ա Հովհ . ա . 3 : գ . 13 : (19) Հռով . ժբ . 16 : ժե . 5 : բ Կորնթ . ժգ . 11 : Փիլիպ . բ . 2 : գ . 16 : ա Պետր . գ . 8 : ա Կորնթ . ժա . 18 : (20) ա Կորնթ . գ . 4 : (21) Գործ . ժը . 24 : ժբ . 1 : ա Կորնթ . ժգ . 12 :

Digitized by Google

կեփայեան . և մուն՝ եթէ Ես
Քրիստոսեան ։

13 Իսկ արդ՝ բաժանեալ ի՞նչ ի-
ցէ Քրիստոս . միթէ Պօղոս՝ ի
խաչ եղեալ իցէ վասն ձեր , կամ
յանուն Պօղոսի՞ մկրտեցարուք ։

14 Գոհանամ զԱստուծոյ իմոյ՝
զի ոչ ոք ի ձէնջ մկրտեցի՝ բայց
միայն զԿրիսպոս և զԳայիոս . զի
մի՛ ոք ասիցէ ,

15 թէ յիմ անուն մկրտեցարուք ։

16 Տաղ եւս կնիք և սանն Ստե-
փաննայ . և զայլ ոք ոչ գիտեմ
եմեևին՝ թէ մկրտեցի ։

17 Ոչի ոչ առաքեաց զիս Քրիս-
տոս մկրտել՝ այլ աւետարանել . ոչ
ճարտարութեամբ բանից , զի մի՛
ընդունայն լիցի խաչն Քրիստոսի ։

18 Ոչի ճառ խաչին , կորուսեալ-
ցըն յիմարութիւն է . այլ փրկե-
լոցս մեզ՝ զօրութիւն Աստուծոյ ։

19 Ոչի գրեալ է . կորուսից զի-
մաստութիւն իմաստնոց , և զխոր-
հուրդս խորհրդականաց արհամար-
հեցից ։

20 Ո՞ւր իմաստուն , ուր դպիր ,
ուր քննիչ աշխարհիս այսորիկ . ոչ
ապաքէն յիմարեցոյց Աստուած զի-
մաստութիւն աշխարհիս այսորիկ ։

21 Քանզի իմաստութեամբն Ա-
ստուծոյ ոչ ծանեաւ աշխարհ իմաս-
տութեամբն զԱստուած . հաճեցաւ
Աստուած յիմարութեամբ քարոզու-
թեանն ապրեցուցանել զհաւատացե-
ալս ։

Ես կիսիաեան[23] , և մկկէլն՝ թէ
Ես Քրիստոսեան ։

13 Ասպա ուրեմն , բաժանվա՞ծ է
Քրիստոս[25] . միթէ Պօղոս խաչե-
ցաւ ձեզ համար՝ կամ Պօղոսի
անունովը մկրտվեցաք ։

14 Գոհանում եմ իմ Աստուածա-
նից՝ որ ձեզանից մէնին չըմկրտե-
ցի . բայց միայն Կրիսպոսին[24] և
Գայիոսին[25] . որ մինն չասէ ,

15 թէ ես դուք իմ անունովս մը-
կըրտվեցաք ։

16 Ստեփանի տունըն էլ մկրտե-
ցի[26] . մին ուրիշը իսկի չեմ գիտում ,
թէ մկրտեցի ։

17 Պատճառն որ՝ Քրիստոս չու-
ղարկեց ինձ մկրտելոյ , բայց աւե-
տարանըն քարոզելոյ . (և էն) ոչ
թէ վարպետական խօսքերով[27] , որ
ունայն չըլինի Քրիստոսի խաչն ։

18 Քանզու որ՝ խաչի խօսքն կորած-
նըրին համար[28] յիմարութիւն է[29] ,
բայց մեզ փրկվածներիս համար[30]
Աստուծոյ զօրութիւն (է)[31] ։

19 Քանզու որ՝ գրված է . թէ Ք-
մաստուններուն իմաստութիւնն կը-
կորցնեմ , և խելացիների խորհուրդ-
ներըն կանարգեմ[32] ։

20 Ըն՞դ ո՞րտեղ կայ իմաստուն , ո՞ր-
տեղ կարդացօղ , ո՞րտեղ էս աշ-
խարհքիս քննօղ[33] . չէ՞ որ Աստուած
էս աշխարհքիս իմաստութիւնըն յի-
մարացրուց[34] ։

21 Ընդհամար որ՝ Աստուծոյ ի-
մաստութենովն աշխարհք իմաստու-
թենով չըճանաչեց Աստուծոյն[35] .
Աստուած կամեցաւ որ յիմար քա-
րոզութենով ապրեցնէ հաւատաց-
եալներին ։

(22) Գաղ . ա . 12 : (23) բ կորնթ . ժա . 4 : Եփես . գ . 5 : (24) Գործ . ժը . 8 ,
(25) Հռոմ . ժգ . 23 : (26) ա կորնթ . ժգ . 15 . 17 : (27) ա կորնթ . բ . 1 . 4 . 13 :
բ Պետր . ա . 16 . (28) բ կորնթ . բ . 15 : (29) Գործ . ժէ . 18 : ա կորնթ . բ . 14 :
(30) ա կորնթ . ժէ . 2 : (31) Հռոմ . ա . 16 : ա կորնթ . ա . 24 : (32) Գաղ . ե . 12 ,
13 : Եսայ . խԹ . 14 : Երեմ . ը . 9 : (33) Եսայ . լԳ . 18 : (34) Գաղ . ժը . 17 ,
20 . 24 : Եսայ . խգ . 25 : Հռոմ . ա . 22 : (35) Հռոմ . ա . 20 , 21 . 28 : Մատթ .
ժա . 25 : Ղուկ . ժ . 21 :

Digitized by Google

22 Նոյնպէս որովհետեւ Հրեայքն նշան կ՚ուզեն, եւ Յունաստանեայք զիմաստութիւն խնդրեն.

23 Մեք քարոզեցուք զխաչեալն Քրիստոս, Հրէից գայթակղութիւն, եւ Հեթանոսաց յիմարութիւն:

24 Նոցին իսկ կոչեցելոցն Հրէից եւ Հեթանոսաց, զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն՝ եւ Աստուծոյ իմաստութիւն:

25 Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմարդիկ. եւ տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ:

26 Քանզի տեսէք եւ զձեր իսկ կոչումն եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ, եւ ոչ բազում հզօրք, եւ ոչ բազում ազնուականք.

27 Այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց Աստուած՝ զի յամօթ առցէ զիմաստունս. եւ զտկարս աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ զհզօրս.

28 Եւ զանառնմն աշխարհի եւ զարհամարհելս ընտրեաց Աստուած՝ եւ զոչինչսն, զի զենան իմն խափանեսցէ:

29 Որպէս զի մի՛ պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ:

30 Ոչ՝ ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղեւ մեզ իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն եւ սրբութիւն եւ փրկութիւն:

22 Հայց որովհետեւ Հրեայքն նշան են ուզում[36], եւ Յունաստանեայք իմաստութիւն են խնդրում.

23 Մենք կը քարոզենք խաչված Քրիստոսին, Հրեաներին համար գայթակղութիւն[37] եւ Հեթանոսներին համար յիմարութիւն[38]:

24 Հայց հէնց էն Հրեաներին եւ Հեթանոսներին համար, որ կանչված են, Քրիստոսին (քարոզում ենք) Աստուծոյ զօրութիւն[39] եւ Աստուծոյ իմաստութիւն[40]:

25 Պատճառն որ՝ Աստուծոյ յիմարն աւելի իմաստուն է քան թէ մարդիկ. եւ Աստուծոյ տկարն աւելի զօրաւոր է քան թէ մարդիկ:

26 Նէ հենց ձեր կոչումըն տեսէք եղբայրք, որ (չգիան) ոչ շատ իմաստուններ մարմնոյ կողմանէ, եւ ոչ շատ զօրաւորներ, եւ ոչ շատ ազնուականներ[41]:

27 Հայց էս աշխարհքիս յիմարներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ իմաստուններին. եւ աշխարհքիս տկարներին Աստուած ընտրեց՝ որ ամօթ անէ զօրաւորներին:

28 Եւ աշխարհքիս ցած մտքգկանց եւ անարգվածներին Աստուած ընտրեց[42], եւ ոչինչներին[43] որ միւնան լինողներին ոչինչացնէ[44]:

29 Որ իսկի մին մարդին չգոռոզանայ Աստուծոյ առաջին[45]:

30 Ինչու որ՝ նորանից դուք էք Յիսուս Քրիստոսումն որ Աստուածանից մեզ համար էլաւ իմաստութիւն[46], արդարութիւն[47] եւ սրբութիւն[48] եւ փրկութիւն[49]:

(36) Ա Կոր. ժբ. 38 : ժգ. 1 : Մատ. ը. 11 : Ղուկ. ժա. 16 : Յովհ. գ. 18 : (37) Նոյն. ը. 14 : Ա Կոր. ժա. 6 : ժգ. 57 : Ղուկ. բ. 34 : Յովհ. զ. 61. 67, Հռոմ. թ. 32 : Գաղ. ե. 11 : ա Պետր. բ. 8 : (38) Ա Կոր. 18 : ա Կորնթ. բ. 14 : (39) Հռոմ. ա. ե. 16 : Ա Կոր. 18 : (40) Կող. բ. 3 : (41) Յովհ. է. 48: (42) Ա Կոր. ժա. 25 : Յակ. բ. 5 : Ա Պետր. ը. 3 : (43) Հռոմ. գ. 17 : (44) ա Կորնթ. բ. 6 : (45) Հռոմ. գ. 27 : Եփես. բ. 9 : (46) Ա Կոր. 24 : (47) Նոյն. ե. 5 ; 6 : Հռոմ. գ. 25 : բ Կորնթ. ե. 21 : Փիլիպ. գ. 9 : (48) Յովհ. ժե. 19 : (49) Եփես. ա. 7 :

Digitized by Google

31 Ո՛չ որպէս և գրեալ է . Որ պարծին՝ ի Տէր պարծեսցի :

31 Որ ինչպէս որ էլ գրված է . Ա՛յս որ պարծենում՝ Թող Տէրով պարծենայ[30] :

ԿԻ · Ր

1 Պօղոս ցոյց կըտայ իրան քարոզութիւնն չէ թէ խնամատարեան բարէր և խրատեալ լինել , 5 Ասոյց Աստուծոյ զօրութենովն . և այնքան բարէր է 8 Հերքիմ խնամատարեանցն , և 9 Մարդոյ կարողութենէն , որ 14 Սարսափաւոր մարդն չի'կարող ընդունել նոցան և դիտել :

1 Եւ ես թէպէտև և եկի առ ձեզ եղբայրք՝ ոչ բան առաւելութեան ինչ բանից խնամատարեան պատմել ձեզ զվկայութիւնն Աստուծոյ :

2 Ո՛չ ի՛ բեթէ ի մէի եմի գիտել ինչ ի ձեզ բայց միայն զՅիսուս Քրիստոս՝ զնոյն ի խաչ եղեալ :

3 Եւ ես տկարութեամբ՝ և երկիւղիւ և դողմամբ բազում եղէ առ ձեզ :

4 Եւ բանն իմ և քարոզութիւն , ոչ պատիր բանիւք խնամատարեան՝ այլ ապացուցմամբ Հոգւոյն և զօրութեամբ :

5 Ո՛չ հաւատք ձեր մի՛ եղեն ի մնամատարեամբ մարդկան , այլ զօրութեամբ Աստուծոյ :

6 Ո՛չ խնամատարութիւն խօսիմք ընդ կատարեալս . զխնամատարութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ , և ոչ զիշխանացն աշխարհիս այսորիկ զնաւատնեղեացս .

7 Այլ խօսիմք զԱստուծոյ խնամատարութիւնն ծածուկ խորհրդով , զոր յառաջ քան զյաւիտեանս սահմանեաց

1 Եւ ես ձէլ եղբայրք՝ ձեզ մօտ եկի , ոչ թէ խնամատարեան բարէր խօսքերով[1] Աստուծոյ վկայութիւնը ձեզ պատմելու[2] :

2 Պատճառն որ՝ միտքս չէի դրած՝ մէն ուրիշ բան գիտել ձեր միջումդ՝ բացի միայն Յիսուս Քրիստոսին՝ և նորան խաչված[3] :

3 Եւ ես տկարութիւնով և շատ վախով և դողութիւնով[4] եղայ ձեզ մօտ[5] :

4 Եւ իմ խօսքս և քարոզութիւնս ոչ թէ խնամատարեան [6]խաբեայ խօսքերով եղաւ , այլ Հոգւոյ նեղործութենովն և զօրութենովն[7] :

5 Որ ձեր հաւատքն մարդկանց խնամատարութենովն չըլինի՝ բայց Աստուծոյ զօրութենովն[8] :

6 Խնամատարութիւն ենք խօսում կատարեալներին հետ[9] , չէ թէ էս աշխարհքիս խնամատարութիւնը[10] ; և ոչ էլ էս աշխարհքիս իշխանների՝ որ պիտի խափանվին[11] :

7 Հապա Աստուծոյ խնամատարութիւնը ենք խօսում ծածուկ խորհրդով , որ Աստուած յաւիտենից

(50) Ա թիմ . Բ . 23 , 24 : բ կորնթ . ժ . 17 : (1) ա կորնթ . ա . 17 : Ա՛այր . 4 . 13 : բ կորնթ . ժ . 10 : ժա . 6 : (2) ա կորնթ . ա . 6 : (3) Ի՛սայ . ղ . 14 : Փիլիպ . է . 8 : (4) բ կորնթ . գ . 7 : ժ . 1 . 10 : ժա . 30 : ժբ . 5 . 9 : Գործ . գ . 13 : (5) Գործ . ժբ . 1 . 6 . 13 : (6) Ա՛ղթ . 1 : ա կորնթ . ա . 17 : բ Պետր . ա . 16 : (7) Հռոմ . ժէ . 19 : ա Յովհ . ա . 5 : (8) բ կորնթ . գ . 7 : զ . 7 : (9) ա կորնթ . ժբ . 20 : է . 12 : փիլիպ . է . 15 : Նբէր . ե . 14 : (10) ա կորնթ . ա . 20 : է . 19 : Ա՛ղթ . 1 : Ա՛այր . 15 : բ Պետր . ա . 12 : Յով . է . 15 : (11) ա կորնթ . ա . 28 :

Digitized by Google

հաց Աստուած՝ ի փառս մեր :

8 Զոր ոչ ոք յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ . զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զՏէրն փառաց՝ ի խաչ հանէին :

9 Այլ որպէս և գրեալ է . Զոր աչն ոչ եհաս , և ունկն ոչ լուաւ, և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց :

10 Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն իւրով . զի Հոգին զամենայն քննէ՝ և զխորս Աստուծոյ :

11 Զի ո՞ ոք գիտէ մարդկանէ գիտել զինչ զմարդոյն , եթէ ոչ հոգի մարդոյն՝ որ ի նմա . նոյնպէս և ոչ զԱստուծոյն ոք գիտէ՝ եթէ ոչ Հոգին Աստուծոյ :

12 Այլ մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս առաք՝ այլ զՀոգին որ յԱստուծոյ . զի ծանիցուք զայն՝ որ յԱստուածոյն շնորհեցաւ մեզ :

13 Եւ զոր խօսիմք՝ ոչ եթէ մարդկեղէն ուսմամբ ճարտարութեամբ բանից , այլ վարդապետութեամբ Հոգւոյն ընդ հոգևորս զհոգևորսն համեմատեմք :

14 Մանկի շնչաւոր մարդ ոչ ընդունի զԱստուծոյ՝ զի յիմարութիւն է նմա . և ոչ կարէ գիտել՝ եթէ հոգեպէս քննի :

առաջ սահմանեաց նորան մեր փառաց համար[12] :

8 Որ նորան էս աշխարհքի իշխանաներից ոչ ոք չըճանաչեց[13] . ինչու որ՝ եթէ ճանաչած լինէին՝ էլ փառաց Տէրն իսկի խաչ չէին հանել[14] :

9 Հայց ինչպէս որ էլ գրված է . (թէ) Ինչ որ աչք չըտեսաւ՝ և ականջ չըլսեց՝ և մարդոյ սիրտն չըկաւ՝ էն պատրաստեց Աստուած իրան սիրողներին համար[15] :

10 Հայց մեզ Աստուած յայտնեց իրան Հոգովն[16] . ինչու որ՝ Հոգին ամէն բան քննում է , և Աստուծոյ խոր բաներըն էլ :

11 Պատճառն որ՝ մարդկանցից ով է նա՝ որ մարդոյ բանըն գիտենայ՝ եթէ ոչ մարդոյ հոգին , որ նորա նում է[17] . էնպէս էլ Աստուծոյ բանն ոչ ով չիգիտուի , եթէ ոչ Աստուծոյ Հոգին[18] :

12 Հայց մենք ոչ թէ էս աշխարհքիս հոգին առինք , այլ էն Հոգին՝ որ Աստուածանից է[19] . որ ճանաչենք էն շնորհքըն՝ որ Աստուածանից տըվված մեզ :

13 Որ էս էլ խոսումենք՝ չէ թէ մարդկանցից սովորած վարպետական խոսքերով[20] , բայց (Աւուրբ) Հոգոյ վարդապետութենովն՝ (և) հոգևորներըն հոգևորներին հետ համեմատումենք :

14 Պատճառն որ՝ մարմնաւոր մարդըն Աստուծոյ Հոգոյ բաներըն չի ընդունում[21] . ինչու որ՝ յիմարութիւն է նորա առաջին[22] . և չի կարող գիտել՝ որ հոգևոր կերպով պէտք է քննվի[23] :

12) Հռով . ժգ . 25 , 26 : Եփես . գ . 5 . 9 : Կող . ա . 26 : բ Տիմ . ա . 9 : (13) Մատթ . ժա . 25 : Յովհ . ի . 18 : Գործ . ժգ . 27 : բ Կորնթ . գ . 14 : (15) Դ Թագ . ին . 24 : Գործ . գ . 17 : Յովհ . ժգ . 3 : (15) Եսայ . կգ . 4 : (16) Մատթ . ժգ . 11 : ժգ . 17 : Յովհ . ժգ . 26 : ժգ . 13 : ա Յովհ . բ . 27 : (17) Աւետ . ի . 27 : ին . 19 : Եփես . ժի . 9 : (18) Հռով . ժա . 33 , 34 : (19) Հռով . գ . 15 : (20) Որ Գործ . ա . 16 : ա Կորնթ . ա . 17 : Ալ . ի . (21) Մատթ . ժգ . 23 : (22) ա Կորնթ . ա . 18 : 23 : (23) Հռով . գ . 5 , 6 , 7 : Յուդ . 19 :

Digitized by Google

15 Իսկ հոգևորն քննէ զամենայն, և ինքն յոմանէ ոչ քննի ։

16 Իսկ արդ՝ ո՞վ գիտաց զմիտս Տեառն , որ և խրատուս լինիցի նմա . այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք ։

15 Այլ հոգևոր մարդն ամեն բան քննուի[24] և ինքն իսկի մընից էլ չի քննըվուի ։

16 Պա ո՞վ է որ Տէրի միտքըն գիտաց , որ բան սովորցնէ նորան[25] . բայց մենք Քրիստոսի միտքըն ունինք[26] ։

ԳԼ · Գ

2 Տղաքներըն կաթ ուզ պէտք է , չէ թէ կերակուր ։ 3 Ընտիելն ցայց կըսայ թէ կռիւն և նախանձն մին նշան է մարմնաւոր լինելոյն . Տնկողն և ջուր ուսողն մին բան չին . 9 Պաշտօնեանքն Աստուծոյ գործընկերներ են ։ 11 Ո՛չ ով Քրիստոսից ուրիշ հիմն ի կոչել դնել . 16 Հաւատացեալներն Աստուծոյ ուռնար են , 17 Նորանք որ՝ Աստուծոյ ուռնար են պէտք է որ սուրբ լինին ։ 19 Իմ աշխարհքիս իմաստութիւնն յիմարութիւն է Աստուծոյ առաջին ։

1 Եւ ես եղբարք՝ ոչ կարացի խօսել ընդ ձեզ իբրև ընդ հոգեւորս՝ այլ իբրև ընդ մարմնաւորս ։

2 Իբրև տղայոց ՚ի Քրիստոս , կաթն ջամբեցի ձեզ՝ և ոչ կերակուր , զի ոչ ևս կարէիք . նաև արդ իսկ ոչ կարէք . քանզի դեռ մարմնաւոր էք ։

3 Ուր և արդ են իսկ ՚ի ձեզ հեռ և նախանձ . ոչ ապաքէն մարմնաւոր էք՝ և ըստ մարդկան գընայք ։

4 Զորժամ ասէ ոք ՚ի ձէնջ՝ Ես Պօղոսեան եմ , և միւսն՝ Թէ Ես Ապողոսեան , ոչ մարդիկ էք . իսկ արդ՝ ո՞վ է Պօղոս , կամ ո՞վ է Ապողոս ։

5 Պաշտօնեայք՝ որովք հաւատացէք , և իւրաքանչիւր որպէս և Տէր ետ ։

1 Եւ ես եղբարք՝ չըկարացի ձեզ հետ խօսել ինչպէս հոգևորների հետ[1] , այլ ինչպէս մարմնաւորների հետ[2] ։

2 Ինչպէս տղաներին Քրիստոսումն՝ կաթը տուի ձեզ ուսել և չէ թէ կերակուր[4] . ինչու որ՝ դեռ չէիք կարող , և հենց հիմիկ էլ կարող չէք[5] . Նրա համար որ դեռ մարմնաւոր էք ։

3 Որովհետև դեռ հիմիկ կռիւ և նախանձ կայ ձեզանումն[6] . չէ՞ որ մարմնաւոր էք՝ և մարդկանց կերպով էք վարվում ։

4 Երբոր ձեզանից մինն ասումն՝ Թէ Ես Պօղոսեան եմ , և մեկելն՝ Թէ Ես Ապողոսեան[7] . չէ՞ որ դուք մարդիկ էք . ապա ո՞վ է Պօղոսն կամ ո՞վ է Ապողոսն ։

5 Պաշտօնեաներն (են)՝ որ նորանց ձեռովն հաւատացիք[8] . և ամեն մէկըն՝ ինչպէս որ Տէրն տուաւ[9] ։

(24) Ա՛ոմ . խը . 5 : ա Թես . ե . 21 : ա Յովհ . գ . 1 : (25) Ա՛ռ . ժե . 8 : Եսայ . խ . 13 : Նրեմ . իգ . 18 : Հ՛ռովմ . ժա . 34 : (26) Յովհ . ժե . 15 : (1) ա Կորնթ . բ . 15 : (2) ա Կորնթ . բ . 14 : (3) Նրեմ . ե . 13 : (4) ա Պետր . բ . 2 : (5) Յովհ . ժգ . 12 : (6) ա Կորնթ . ա . 11 : ժա . 18 : Գաղ . ե . 20 , 21 : Յակ . գ . 16 : (7) ա Կորնթ . ա . 12 : (8) ա Կորնթ . գ . 1 : բ Կորնթ . գ . 3 : (9) Հ՛ռովմ . ժբ . 3 . 6 : ա Պետր . գ . 11 :

Digitized by Google

6 Եա անկեցի , Ա՛պողոս ջուր ետ , այլ Ա՛ստուած աճեցոյց ։

7 Ա՛յսուհետեւ՝ ո՛չ այն ոք ինչ է՝ որ տնկեացն , եւ ո՛չ այն՝ որ ջուրն ետ . այլ որ աճեցոյցն Ա՛ստուած ։

8 Որ տնկեացն եւ որ ջուրն ետ՝ մի են . բայց իւրաքանչիւրոք զիւր վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց ։

9 Օ՛ի Ա՛ստուծոյ գործակից եմք , Ա՛ստուծոյ արդիւն էք , Ա՛ստուծոյ շինած էք ։

10 Ի՛սա շնորհացն Ա՛ստուծոյ՝ որ տուեալ են ինձ , իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն եդի . բայց այլ է՝ որ շինէն . այլ իւրաքանչիւրոք զգոյշ լեցի՝ թէ որպէս շինիցէ ։

11 Օ՛ի հիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեդեալն՝ որ է Յիսուս Քրիստոս ։

12 Եթէ ոք շինէ ի վերայ հիմանն այսորիկ ոսկի , արծաթ , ականս պատուականս , փայտ , խոտ , եղէգն ,

13 Իւրաքանչիւր գործն յայտնի լեցի է . զի օրն բնարեսցէ , զի հրով յայտնեցի է ։

14 Եւ զիւրաքանչիւր գործն զի՝ արդ եւ իցէ՝ հուրն փորձեսցէ ։

15 Եթէ ուրուք գործն՝ զոր շինեաց , կացցէ , վարձս առցէ . և եթէ ուրուք գործն այրեսցի՝ տուժ

6 Եա անկեցի[10] , Ա՛պողոս ջուր առուաւ[11] , բայց Ա՛ստուած մեծացրուց[12] ։

7 Ուրեմն ո՛չ նա՝ որ անկեց , մին բան է[13] . և ո՛չ նա՝ որ ջուր առուաւ . բայց Ա՛ստուած որ մեծացրուց ։

8 Ա՛յս՝ որ անկեց և նա՝ որ ջուր առուաւ , մին (բան) են . բայց ամէն մէկն իրան վարձքն կառնէ ի րան աշխատանքի չափովը[14] ։

9 Ինչու որ մենք Ա՛ստուծոյ գործընակից ենք[15] . դուք Ա՛ստուծոյ գործըն էք , Ա՛ստուծոյ շինվածն էք[16] ։

10 Ա՛նատնոյ շնորհքի չափովը՝ որ ինձ տրվված է[17] , իմաստուն ճարտարապետի պէս հիմըն դրի[18] . բայց ուրիշն է՝ որ շինումն . պիտի թէ ամէն մէկն լաւ մտիկ տայ՝ թէ ինչպէս շինէ[19] ։

11 Ինչու որ՝ ո՛չ ոք ուրիշ հիմունք չըկարող դնել քան թէ էն որ դրուած է[20] , որ է Յիսուս Քրիստոսն[21] ։

12 Իսկ որ միևն էս հիմունքիս վրայ շինէ ոսկի , արծաթ , թանկագին ակունքներ , փայտ , խոտ , եղեգն (պոխրչ) ,

13 Ա՛մեն մէկի գործքն պիտի յայտնվի[22] . ինչու որ՝ օրն կերևացնէ[23] . ինչու որ՝ կրակով պիտի յայտնվի[24] ։

14 Եւ ամէն մէկի գործքըն թէ ինչպէս է՝ կրակն կըփորձէ ։

15 Իսկ որ մրնի գործքն՝ որ շինեց , Հաստատ կենայ՝ վարձք կառնէ[25] . և թէ որ մրնի գործքն այր-

(10) Գործ . ժբ . 4 . 8 . 11 : ա Կորնթ . գ . 15 : բ . 1 : ժէ . 1 : բ Կորնթ . ժ . 14 , 15 . (11) Գործ . ժբ . 24 . 27 : ժԹ . 1 : (12) ա Կորնթ . ա . 30 : ժէ . 10 : բ Կորնթ . գ . 5 : (13) բ Կորնթ . ժբ . 11 : Գաղ . գ . 3 : (14) Յակ . կբ . 13 : Հռոմ . բ . 6 : ա Կորնթ . գ . 5 : Գաղ . գ . 4 , 5 : Հայոց . բ . 23 : իբ . 12 : (15) Գործ . ժէ . 4 : բ Կորնթ . գ . 1 : (16) Եփես . բ . 20 : Կող . բ . 7 : Նբէտ . գ . 2 , 4 : ա Թեսա . բ . 5 : (17) Հռոմ . ա . 5 : ժբ . 3 : (18) Հռոմ . ժէ . 20 : ա Կորնթ . գ . 15 : Հայոց . իա . 14 : (19) ա Պետր . գ . 11 : (20) Նաւղ . իբ . 10 : Մատթ . ժգ . 18 : բ Կորնթ ժա . 4 : Գաղ . ա . 7 : (21) Եփես . բ . 20 : (22) ա Կորնթ . գ . 5 : (23) ա Պետր . ա . 7 : գ . 12 : (24) Գ՛ոհ . բ . 35 : (25) ա Կորնթ . գ . 5 :

Digitized by Google

ժեսցի , բայց ինքն կեցցէ · պէս այնպէս՝ որպէս թէ ՚ի հուր ։

16 Ո՛չ գիտէք՝ եթէ տաճկաց էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է ՚ի ձեզ ։

17 Եթէ ոք զտաճարն Աստուծոյ ապականէ , ապականեսցէ զնա Աստուած · զի տաճարն Աստուծոյ սո՛ւրբ է , որ էք դուք ։

18 Ա՛ի ոք զանձն խաբեսցէ · եթէ ոք կամիցի ՚ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ , յիմար լիցի՝ զի եղիցի իմաստուն ։

19 Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմարութիւն է առաջի Աստուծոյ · քանզի գրեալ է՝ թէ Որ ըմբռնէ զիմաստունս ՚ի խորագիտութեան իւրեանց ։

20 Եւ դարձեալ՝ թէ Տէր ճանաչէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդունայն ։

21 Ա՛րդեհետև մի՛ ոք պարծեսցի ՚ի մարդկանէ ։

22 Զի ամենայն ինչ ձեր է · եւ թէ Պօղոս , եթէ Ապողոս , եթէ Կեփաս , եթէ աշխարհ , եթէ կեանք , եթէ մահ , եթէ որ կանս , եթէ հանդերձեալքն · ամենայն ինչ ձեր է ։

23 Դուք Քրիստոսի , Քրիստոս Աստուծոյ ։

վի՝ ինձս կըքաշէ , բայց ինքն կապրի · բայց հնարէս՝ ինչպէս որ կրակով[26] ։

16 Ընդ գիտեա՛ք՝ որ դուք Աստուծոյ տաճար էք , և Աստղծոյ Հոգին բնակված է ձեզանո՛ւմ[27] ։

17 Եւ որ մինն Աստուծոյ տաճարը ապականէ , նորան էլ Աստուած կապականէ · ինչու որ՝ Աստուծոյ տաճարն սուրբ է՝ որ էն դուք էք ։

18 Ոչ՛ ոք զանձն խաբեսցէ · եթէ ոք ՚ի ձեզանից մինն կամ մեծոյ իմաստուն լինիլ էս աշխարհքումս , թա՛ղ նա յիմար լինի՝ որ իմաստուն լինի[28] ։

19 Զի այս աշխարհքիս իմաստութիւնն յիմարութիւն է Աստուծոյ առաջին[29] · ինչու որ՝ գըրված է՝ (թէ) Ի՛մաստուններին կըբռնէ իրանց խորագիտութեան մէջն[30] ։

20 Եւ մին էլ թէ Տէրն ճանաչումէ իմաստուններուն մտածմունքները , որ ունայն են[31] ։

21 Ուրեմն՝ չըլինի՛ որ մարդկանցից մինն պարծենայ[32] ։

22 Զի ամէն բան ձեր է · թէ Պօղոս , թէ Ապողոս , թէ Կեփաս , թէ աշխարհք , թէ կեանք , թէ մահ , թէ հիմիկինօղ և թէ նոր գալու բաներն · ամէն բան ձերն է[33] ։

23 Դուք Քրիստոսին (էք)՝ և Քրիստոսն Աստուծոյն[34] ։

(26) Հնդ · 33 ։ (29) ա կորնթ · գ · 19 ։ բ կորնթ · գ · 16 ։ Եփես · բ · 21 , 22 ։ Նբր · գ · 6 ։ ա Պետր · բ · 5 ։ (28) Ա՛ռակ · ե · 7 ։ Նռոյ · ե · 21 ։ (29) ա կորնթ · ա · 20 ։ բ · 6 ։ (30) Հոբ · ե · 13 ։ (31) Սաղմ · ղդ · 11 ։ (32) ա կորնթ · ա · 12 ։ գ · 6 ։ Սիր · ե , 5 , 6 ։ (33) բ կորնթ · գ · 5 · 15 ։ (34) Հռովմ · ժգ · 8 ։ ա կորնթ · ժա · 3 ։ բ կորնթ · ժ · 7 ։ Գաղ · գ · 29 ։

Digitized by Google

ԳԼ · Դ

1 Ընտրեալներն Քրիստոսի պաշտօնեաներ և Աստուծոյ խորհուրդներուն տնտեսները պէտք է որ համարուին : 2 Քրիստոսնեաներէն մին բան չի'կայ որ չին առներ : 3 Ընտրեալներն տառապան եղան էին աչքառերքին , հրեշտակներուն և մարդիկներուն , 10 Աչքառերքի տալի խոհիք և խայտառակ . 15 Ուայ Քրիստոսով մեռ հայրեր են , 16 Որ նորան հետ պէտք է որ գնանք :

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ , իբրև զպաշտօնեայս Քրիստոսի՝ և հազարապետս խորհրդոցն Աստուծոյ :

2 Այդ՝ ինդիր է ի մէջ հազարապետաց՝ եթէ ոք հաւատարիմ գտցի :

3 Ասէ ինձ և այս անարգանք են , եթէ ի ձէնջ դատեցայց՝ կամ բնաւ իսկ ի մարդկանէ . նաև զանձն իմ ո՛չ քննեմ :

4 Ոչի ո՛չինչ գիտեմ զանձին իմոյ . այլ ո՛չ եթէ այսու արդարացեալ եմ , զի որ քննէն զիս՝ Տէր է :

5 Այսուհետև մի' յառաջքան ըզժամանակն դատիք . մինչև եկեսցէ Տէր , որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի , և յայտնիցէ զխորհուրդս սրտից . և ապա իւրաքանչիւր գովութիւն եղիցի Աստուծոյ :

6 Այս եղբարք՝ առակեցի յանձն իմ և Ապողոս վասն ձեր . զի ի մէնջ ուսջիք՝ մի' ինչ առաւել քան զգրեալն իմանալ . զի մի' այր քան զընկեր հպարտանայցէք ի վերայ ընկերին :

7 Ոսկ արդ մի՞ է՝ որ քննիցէ զքեզ . զինչ ունիս՝ զոր ո՛չ իցէ

1 Ոչ՝ մարդիք էապէս համարեն մեզ՝ ինչպէս Քրիստոսի պաշտօնեաներըն՝ և Աստուծոյ խորհուրդներուն անտեսները :

2 Հիմիկ անտեսներէ միջնաձեռ են խնդրուած՝ որ մինն հաւատարիմ գտնըվի :

3 Ասոյց ինձ համար էս էլ չնչին բան է՝ որ ձեզմանից դատվիմ՝ կամ իմէն մին մարդուց . էլ ես իմ անձըս չեմ քննում :

4 Ինչու որ՝ իմ անձիս համար բան չեմ գիտում . բայց ա'չ թէ սրբանով արդարանում եմ . պատճառըն որ՝ նա՝ որ ինձ քննում է , Տէրըն է :

5 Սրանամար՝ ժամանակից առաջ մի' դատէք . մինչև որ Տէրն կըգայ՝ որ խաւարի ծածուկ բաներըն կըբերէ լուսոյ մէջ , և սրտերի խորհուրդներըն կըյայտնէ . և ապա ամէն մէկին գովասանք կըլինի Աստուածանից :

6 Ես բանըս եղբայրք՝ իմ անձիս և Ապողոսին վերայ առակով ասացի՝ ձեզ համար . որ մեզանից սովորիք գրվածքիցն աւելի բան չիմանալ . որ չըլինի թէ մարդ ընկերի վերայ հպարտանայ ընկերի պատճառով :

7 Ապա ո՞վ է՝ որ քեզ կըքննէ . ի՞նչ ունիս դու՝ որ էն չես առել .

(1) Պարթ · խգ · 45 : ա Կորնթ · գ · 5 : բ · 17 : բ Կորնթ · գ · 6 : Կող · ա · 25 : (2) Ղուկ · ժբ · 42 : Տիտ · ա · 7 : ա Պետր · գ · 10 : (3) Յոբ · բ · 2 : Պսալմ · ճ · 3 : Ջնգ · 2 : Ընտ · թա · 3 : Հռով · գ · 20 : դ · 2 : (4) Պարթ · է · 1 : Հռով · բ · 1 · 16 : ժգ · է · 10 · 12 : Յակոբ · ի · 12 : (5) ա Կորնթ · դ · 18 : (6) Հռով · բ · 29 · բ Կորնթ · է · 19 : (7) ա Կորնթ · ա · 12 : գ · է : (8) Հռով · ժբ · 3 : (9) ա Կորնթ · գ · 21 : է · 2 · 6 : (10) Յովհ · գ · 27 : Յով · ա · 17 : ա Պետր · գ · 16 :

Digitized by Google

առեալ · և եթէ առեր՝ զի պարծիս իբրև զչառեալ :

8 Արդէն իսկ յագեալ իցէք՝ և արդէն մեծացարուք , առանց մեր թագաւորեցիք · և երանի թէ թագաւորէիք՝ զի և մեք ընդ ձեզ թագաւորեաք :

9 Ինձ այսպէս թուի՝ եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար Աստուած՝ իբրև զմահապարտս · զի տեսիլ եղեաք աշխարհի , և հրեշտակաց և մարդկան :

10 Ա՛նք յիմարք վասն Քրիստոսի , և դուք խմաստունք՝ ի Քրիստոս · մեք տկարք՝ և դուք հզօրք · դուք փառաւորեալք՝ և մեք անարգեալք :

11 Ա՛րդ ինչ ցայսօր ժամանակի՝ և քաղցեալք և ծարաւեցաք և մերկ գնացաք և կռփահարեցաք և անհանգիստ եղեաք :

12 Եւ աշխատեցաք ձեռօք մերովք · բամբասեին զմեզ՝ օրհնեաք · հալածէին՝ յանձն առնուաք :

13 Ասյհոյեին՝ աղաչեաք · իբրև առակ նշաւակի եղեալք ամենայն աշխարհի · ամենեցուն փարեալ լինել մինչև ցայժմ :

14 Ա՛յլ եթէ ամօթ ինչ առնելով զձեզ՝ գրեմ զայս , այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ :

15 Ջի՛ապէտ և բիւր դաստիարակս ունիցիք ի Քրիստոս՝ այլ ո՛չ եթէ բազում հարս · զի ի Քրիստոս Յիսուս զձեզ ծնայ ես աւետարանաւ :

16 Ա՛ռ ի ձէնջ զհետևողութիւն իմ եղերուք :

17 Վասն այսորիկ առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս , որ է ինձ որդի սիրելի և հաւատարիմ ի Տէր , որ զձեր զճանապարհս յիշեցուսցէ զիս ի Քրիստոս Յիսուս , որպէս ամենայն տեղի ուսուցանեմ ի ամենայն եկեղեցիս :

18 Իբրև ոչ եկայի առ ձեզ՝ ամբարտաւանացան ոմանք :

19 Եկայց առ ձեզ վաղվաղակի , հաւանեցուցանիցէ Տէր , և գիտասցեմ ոչ զբանս ամբարտաւանացելոցն , այլ զզօրութիւն :

20 Ոչ է բան Աստուծոյ ի բանի , այլ ի զօրութեան :

21 Զի՞նչ կամիք . ընդ գաւազանի եկից առ ձեզ , կամ ընդ սիրոյ և հոգւոյ հեզութեան :

8 Ընդէ՞նց հիմիկ կըշտացեալք՝ և հընց հիմիկ հարստացաք[11] , առանց մեզ թագաւորեցիք · և երանի թէ թագաւորէիք , որ մենք էլ ձեզ հետ թագաւորէինք :

9 Ինձ էապէս է երևեալ՝ թէ Աստուած մեզ առաքեալներիս շատ յետին առաւ՝ մահապարտներուն պէս[12] · ինչու որ աշխարհքի տեսարան եղանք , հրեշտակաց էլ՝ մարդկանց էլ[13] :

10 Ա՛նք[14] յիմար (էլանք) Քրիստոսի համար[15] , և դուք՝ իմաստուն Քրիստոսմէ · մենք տկար՝ և դուք զօրաւոր[16] · դուք փառաւորվածք և մենք անարգվածք :

11 Ա՛րդ ինչէ ես օրվան ժամանակս սովեցինք և ծարաւեցինք[17] , և մերկ գնացինք[18] և գլխներս զարկվեցաւ[19] և հանգստութիւն չըգտինք :

12 Եւ աշխատեցինք մեր ձեռներովս[20] · բամբասուելին մեզ՝ և մենք օրհնուելինք · հալածուելին՝ և մենք սիրով համբերուելինք[21] :

13 Ասյհոյուելին՝ և մենք (նորանց համար) աղաչանք էինք անուշ · ինչպես խայտառակութեան օրինակ էլանք ամէն աշխարհքին՝ մինչև հիմիկ ջնջոց լինելով ամէն մարդկանց առաջին[22] :

14 Ձեզ թէ ձեզ ամօթ անելոյ համար եմ էս գրում · բայց ինչպես իմ սիրելի որդիքներս խրատուելմամ[23] :

15 Թէև և հազարաւոր վարդապետներ ունենաք Քրիստոսմէ՝ բայց ո՛չ եթէ շատ հարք · ինչու որ

(11) Յայտ · գ · 17 : (12) Ա՛ղմ · խգ · 23 : Հռոմ · ը · 36 : ա Կորնթ · ժե · 30 , 31 : բ Կորնթ · գ · 11 : ը · 9 : (13) Եբր · ժ · 33 : (14) ա Կորնթ · բ · 3 : (15) Գործ · ժե · 18 : իզ · 28 : ա Կորնթ · ա · 18 , Եսայի · բ · 14 : գ · 18 : դ Թեսաղ · բ · 11 : (16) բ Կորնթ · ժգ · 9 : (17) բ Կորնթ · գ · 8 : ժա · 23—27 : Փիլիպ · գ · 12 : (18) Ցաք · իբ · 6 : Հռոմ · ը · 35 : (19) Գործ · ժգ · 18 : իգ · 2 : (20) Գործ · ժը · 3 : ի · 34 : ա Թես · բ · 9 : բ Թես · գ · 8 : ա Տիմ · գ · 10 : (21) Մատթ · ե · 44 : Ղուկ · ը · 28 : իգ · 34 : Գործ · ե · 59 : Հռոմ · ժը · 14 : 36 : ա Պետր · բ · 23 : գ · 9 : (22) Ողբ · գ · 45 : (23) Ա Թես · բ · 11 :

Digitized by Google

Յիսուս աւետարանաւն ես ծնայ զձեզ :

16 Ա՛րդ՝ աղաչեմ զձեզ նմանօղք ինձ եղիջիք՝ որպէս և ես Ի՛րիստոս :

17 Վասն այնորիկ առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս , որ է իմ որդի սիրելի՝ և հաւատարիմ ի Տէր . որ յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ , որ ի Ի՛րիստոս Յիսուս . որպէս և ամենայն ուրեք՝ յամենայն եկեղեցիս ուսուցանեմ :

18 Իբրպէս թէ ես չիցեմ գալոց առ ձեզ՝ ոմանք հպարտացան :

19 Ա՛րագ եկից հուպ ընդ հուպ՝ եթէ Տէր կամեսցի . և ի միտ առից ոչ զբանս հպարտացելոցն , այլ զզօրութիւն :

20 Զի ոչ եթէ բանիւք է արքայութիւն Աստուծոյ , այլ զօրութեամբ :

21 Ա՛րդ՝ որպէս կամիք գաւազա՞նաւ եկից առ ձեզ , եթէ սիրով հոգւոյն՝ հեզութեան և արդարութեան և խոնարհութեան :

Յիսուս Ի՛րիստոսում ես աւետարանեցի ծնայ ձեզ[24] :

16 Ուրեմն աղաչում եմ ձեզ՝ որ ինձ նմանօղ լինէք , ինչպէս որ ես էլ Ի՛րիստոսի[25] :

17 Ուրախամար Տիմոթէոսին ուղարկեցի ձեզ մօտ[26] , որ իմ սիրելի և հաւատարիմ որդի է Տէրով[27] . որ ձեր մտքներդ բերէ իմ ճանապարհները՝ որ Յիսուս Ի՛րիստոսումն են[28] . ինչպէս որ ամէն տեղ ամէն եկեղեցիներում[29] սովորցնում եմ[30] :

18 Ո՝չինչ թանիան համարատանութեննով պարծենումն՝ իբր թէ ես չըպիտի գամ ձեզ մօտ[31] :

19 Ա՛յց կըգամ էս մօտիկ ժամանակներումն[32] թէ որ Տէրն կամենայ[33] . և միաքս կառնեմ ոչ թէ դառոզացածների խօսքերըն՝ այլ զօրութիւնըն :

20 Ինչու որ Աստուծոյ արքայութիւնն ոչ թէ խօսքերով է՝ այլ զօրութեններով[34] :

21 Ա՛պա ի՞նչպէս էք կամենում , գաւազանով գամ ձեզ մօտ[35] , թէ սիրով և հեզութեան և արդարութեան և խոնարհութեան հոգով՞ :

Գ Լ · Ե

1 Յման հոր կինըն անեցող մարդն , Աւստրեալն յանդիմանութեն նորանց պարծանքին համար , 7 պիտի է որ գեն քրմի հին խմորըն . 9 Զաւրագործութիւն անող եղբայրս անուանվածներին հետ պիտի չէ խառնըվիլ :

1 Լսեաւ և անուանի իսկ ՚ի ձեզ ընդհէր պոռնկութիւն , և այնպիսի պոռնկութիւն՝ որ ո՛չ և ՚ի հեթա-

1 Լսկի ձեր միջումդ ինչքա՞ն պոռնկութեն է անուանվում , և էնպէսի պոռնկութիւն՝ որ հեթա-

(24) Գործ · ԺԸ · 11 : Հռոմ · Ժե · 20 : ա Կորնթ · գ · 6 : Գաղ · դ · 19 : Փիլիպ · 10 : Կող · ա · 18 : (25) ա Կորնթ · ժա · 1 : Փիլիպ · գ · 17 : ա Թես · ա · 6 : բ Թես · գ · 9 : (26) Գործ · ԺԲ · 22 : ա Կորնթ · Ժգ · 10 : Փիլիպ · բ · 19 : ա Թես · գ · 2 : (27) ա Տի՛մ · ա · 2 : բ Տի՛մ · ա · 2 : (28) ա Կորնթ · Ժ · 2 : (29) ա Կորնթ · Ժգ · 33 : (30) ա Կորնթ · է · 17 : (31) ա Կորնթ · է · 2 : (32) Գործ · ԺԲ · 21 : ա Կորնթ · Ժգ · 5 : բ Կորնթ · ա · 15 · 23 : (33) Գործ · Ժբ · 21 : Հռոմ · Ժե · 32 : Եբր · գ · 3 : Յակ · դ · 15 : (34) ա Կորնթ · բ · 4 : ա Թես · ա · 5 : (35) բ Կորնթ · Ժ · 2 : Ժգ · 10 :

Digitized by Google

նոսա , որպէս թէ զնին հօր իւրոյ առնել :

2 Եւ դուք հպարտացեալ էք . և ո՛չ առաւել սգացարուք , զի բարձցի ի միջոյ ձերմէ՝ որ զգործն զայն գործեաց :

3 Օ՛ի ես թէպէտ մարմնով մեկնուի եմ , սակայն հոգւով մերձ եմ . բայց արդէն իսկ իբրև ի մօտոյ ընտրեցի զայն՝ որ այնպէսն գործեաց .

4 Յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , ժողովել ձեզ ի միասին՝ և իմով հոգւոյս՝ զօրութեամբն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ,

5 Մատնել զայնպիսին Սատանայի ի սատակումն մարմնոյ . զի ոգին ապրեսցի յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :

6 Ո՛չ բարւոք են պարծանքդ ձեր . ո՞չ գիտէք՝ եթէ փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ :

7 Սրբեցէք ի բաց զհին զխմորն՝ զի եղիջիք նոր զանգուած , որպէս էքդ անխմորք . քանզի զառիկ մեր զեննաւ Քրիստոս :

8 Տ՛ոնեհեաւ արասցո՛ւք սովնս . ո՛չ ի խմորն հին , և ո՛չ ի խմորն չարութեան և անզգամութեան . այլ յանխմոր սուրգութեան և ճշմարտութեան :

9 Գրեցի ձեզ ի թղթի այդր չըխառնակել ընդ պոռնիկս :

10 Եւ ո՛չ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս նոսին կամ ընդ հրապուրիչս կամ ընդ կռապաշտս , զի ապա պարտ էր ձեզ ելանել յաշխարհէ :

11 Այլ արդ գրեցի ձեզ՝ զի մի՛ խառնիք ընդ նմա՝ եթէ ոք կոչեսցի եղբայր , և իցէ պոռնիկ կամ հրապուրիչ կամ կռապաշտ կամ հայհոյիչ կամ արբեցող կամ յափշտակող , ընդ այնպիսւոյ և հաց մի՛ ուտել :

12 Զի զիա՞րդ ինձ է դատել զարտաքինսն . ո՞չ զնոսա որ ներքինքն էք դատիք .

13 Զարտաքինսն Աստուած դատէ . հանէք զչարն ի միջոյ ձերմէ :

6 1 Համարձակի՞ իցէ ոք ի ձեզ՝ ունելով զդատ ընդ ընկերի , դատել առաջի անիրաւացն , և ո՛չ առաջի սրբոցն :

2 Կամ ո՞չ գիտէք՝ եթէ սրբոցն աշխարհիս դատել , և եթէ ի ձեզ դատի աշխարհս , անարժանք էք դատաստանաց սակաւուց :

3 Ո՞չ գիտէք՝ եթէ զհրեշտակսն դատելոց եմք , որչափ եւս զկենցաղականսն :

4 Եթէ զկենցաղականսն դատաստանս ունիցիք , զայնոսիկ՝ որ նուաստ են ի սուրբ ժողովրդեանն , զայնոսիկ նստուցանէք դատաւորս :

5 Ամաչանաց ձեր խօսիմ . ո՞չ իցէ ոք ի ձեզ իմաստուն , որ կարասցէ դատել ընդ եղբարս իւր ,

6 Այլ եղբայր ընդ եղբարս դատի , և այն առաջի անհաւատից :

7 Արդ ամենևին պակասութիւն է ձեզ , զի դատաստանս ունիցիք ընդ միմեանս . ընդէ՞ր ոչ առաւել զրկիք , ընդէ՞ր ոչ առաւել կորուսանիք :

8 Այլ դուք զրկէք և կորուսանէք , և զայն՝ եղբարս :

9 Կամ ո՞չ գիտէք՝ եթէ անիրաւքն զԱստուծոյ արքայութիւն ոչ ժառանգեսցեն . մի՛ խաբիք . ո՛չ պոռնիկք և ո՛չ կռապաշտք և ո՛չ շնացողք և ո՛չ արուագործք

10 և ո՛չ գողք և ո՛չ ագահք և ո՛չ արբեցողք և ո՛չ հայհոյիչք և ո՛չ յափշտակողք զԱստուծոյ արքայութիւն ոչ ժառանգեսցեն :

11 Եւ զայսպիսիսն էիք ոմանք . այլ լուացարուք , այլ սրբեցարուք , այլ արդարացարուք յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և ի Հոգւոյ Աստուծոյ մերոյ :

12 Ամենայն ինչ ինձ է արժան , այլ ոչ ամենայն ինչ օգտակար . ամենայն ինչ ինձ է արժան , այլ ես ոչ ամենայնի ենթակայ լինիմ :

13 Կերակուրք փորոյ և փորն կերակրոց , և զամենեսեան Աստուած ապականեսցէ . այլ մարմինն ոչ պոռնկութեան , այլ Տեառն , և Տէրն մարմնոյ :

14 Եւ Աստուած զՏէրն յարոյց , և զմեզ յարուցանիցէ զօրութեամբ իւրով :

15 Ո՞չ գիտէք՝ եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի . արդ առցէ՞ ես զանդամս Քրիստոսի , և արասցէ՞ զնոսա անդամս պոռնկի . մի՛ եղիցի :

16 Կամ ո՞չ գիտէք՝ եթէ որ միանայ պոռնկի , մարմին մի է նա . կայ՞ , ասէ , երկոքեան մարմին մի :

17 Իսկ որ միանայ Տեառն , հոգի մի է նա :

18 Փախարուք ի պոռնկութենէ . զամենայն մեղս զոր գործիցէ մարդ , արտաքոյ մարմնոյ է . իսկ որ պոռնկանայ , զմարմինն իւր մեղուցանէ :

19 Կամ ո՞չ գիտէք՝ եթէ մարմինք ձեր տաճար են սրբոյ Հոգւոյն որ ի ձեզ է , զոր ունիք յԱստուծոյ , և ո՛չ էք ձերդ անձինք :

20 Զի գնովն էք պատուականաւ . փառաւորեցէք զԱստուած ի մարմինս ձեր և ի հոգիս ձեր , որ են Աստուծոյ :

7 1 Եւ զոր գրեցէք ինձ . բարւոք է մարդոյ կնոջ չմերձենալ :

2 Բայց զպոռնկութիւնն զի՞ մի լիցի , իւրաքանչիւր կին զիւր առնու առն , և իւրաքանչիւր առն զիւր կին առնու :

3 Կին առն իւրում պարտ է հատուցանել զպարտիսն , նոյնպէս և առն կնոջ :

4 Կին ոչ իշխէ զմարմնոյ իւրոյ , այլ առն . նոյնպէս և առն ոչ իշխէ զմարմնոյ իւրոյ , այլ կնոջ :

5 Մի՛ զրկէք զմիմեանս , եթէ ոչ գուցէ ի կամաց ինչ ի ժամանակս , զի պարապ լիցուք աղաւթից , և դարձեալ ի միասին լիցուք , զի մի՛ փորձեսցէ զձեզ Սատանայ ի պատճառս անհամբերութեան ձերոյ :

6 Այլ զայս ասեմ ըստ զիջման , և ո՛չ ըստ հրամանի :

7 Կամիմ զի ամենեքեան իբրև զիս լիցին . այլ իւրաքանչիւր ոք ունի պարգև յԱստուծոյ , մին այսպէս և մին այնպէս :

8 Ասեմ ես անպատուականացն և այրեաց , թէ բարւոք է նոցա եթէ մնասցեն իբրև զիս :

9 Այլ եթէ ոչ կարեն զսրտմտութիւն , ամուսնասցին . զի բարւոք է ամուսնանալ , քան թէ սրտմտել :

10 Ամուսնացելոցն պատուիրեմ ես , ոչ ես այլ Տէր , զի կին յառնէ յառնէ իւրմէ մի՛ բաժանեսցի :

11 Եթէ ոչ բաժանեսցի , մնասցէ անամուսին , կամ հաշտեսցի առնն իւրում . և առն կին մի՛ թողցէ :

12 Եւ զայլսն ես ասեմ , և ոչ Տէր . եթէ եղբայր կին ունիցի անհաւատ , և նա հաճի բնակել ընդ նմա , մի՛ թողցէ զնա :

13 Եւ կին որ ունիցի առն անհաւատ , և նա հաճի բնակել ընդ նմա , մի՛ թողցէ զառնն :

14 Զի սրբեցաւ անհաւատն ի կնոջն , և սրբեցաւ անհաւատ կինն ի հաւատացեալ առնէն . զի եթէ ոչ այդպէս , ապա որդիքդ ձեր պղծեալք էին , և արդ սուրբ են :

15 Եթէ անհաւատն բաժանի , բաժանեսցի . ո՛չ ծառայ է եղբայր կամ քոյր ի նոսա . այլ ի խաղաղութիւն կոչեաց զձեզ Աստուած :

16 Զի՞ գիտես կին՝ եթէ զառն կեցուցանիցես , կամ զի՞ գիտես առն՝ եթէ զկին կեցուցանիցես :

17 Այլ որպէս բաժանեաց Տէր իւրաքանչիւր ոք , որպէս կոչեաց Աստուած զիւրաքանչիւր ոք , այնպէս գնասցէ . և այսպէս ես ի բոլոր եկեղեցիսն կարգեմ :

18 Կոչեցեալ է ոք թլփատեալ , մի՛ ծածկեսցէ զթլփատութիւնն . կոչեցեալ է ոք անթլփատ , մի՛ թլփատեսցի :

19 Թլփատութիւն ոչ է ինչ , և անթլփատութիւն ոչ է ինչ , այլ պահպանութիւն պատուիրանացն Աստուծոյ :

20 Իւրաքանչիւր ոք ի կոչմանն յորում կոչեցաւ , ի նմին կեցցէ :

21 Ծառայ կոչեցեալ է , մի՛ ցաւեսցի . այլ եթէ և կարող իցես ազատ լինել , աւելի՛ ևս գործեա :

22 Զի որ կոչեցաւ ի Տեառնէ ծառայ , ազատ է Տեառն . նոյնպէս և որ կոչեցաւ ազատ , ծառայ է Քրիստոսի :

23 Գնով էք պատուականաւ , մի՛ լերուք ծառայք մարդկան :

24 Եղբարք , իւրաքանչիւր ոք ի կոչմանն յորում կոչեցաւ , ի նմին կեցցէ առ Աստուծոյ :

25 Եւ զկուսանացն պատուիրանս Տեառնէ չունիմ , այլ խրատ տամ իբրև ողորմեալ ի Տեառնէ հաւատարիմ լինել :

26 Կարծեմ զայս բարւոք լինել ի պատճառս ներկայ նեղութեան , զի բարւոք է մարդոյ այնպէս լինել :

27 Կապեալ ես կնոջ , մի՛ խնդրեր զարձուցանել . արձակեալ ես կնոջ , մի՛ խնդրեր կին :

28 Եւ եթէ կնացեր , ոչ մեղաւ . և եթէ կոյսն ամուսնացաւ , ոչ մեղաւ . այլ նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն . և ես զձեզ խնայեմ :

29 Այլ զայս ասեմ , եղբարք , զի ժամանակ կարճ է . արդ մնացեալ է , զի և որ կանայս ունին , իբրև ոչ ունիցին եղիցին :

30 Եւ որ լան , իբրև ոչ լային . և որ ուրախանան , իբրև ոչ ուրախանային . և որ գնեն , իբրև ոչ տիրասցին :

31 Եւ որ գործեն զաշխարհս , իբրև ոչ գործեսցեն . զի անցանէ կերպարանք աշխարհիս այսորիկ :

32 Եւ կամիմ զձեզ անհոգս լինել . անամուսինն զիա՞րդ հոգայ զՏեառնէ , զի հաճեսցի Տեառն :

33 Իսկ ամուսնացեալն զիա՞րդ հոգայ զաշխարհէ , զի հաճեսցի կնոջ :

34 Եւ բաժանեալ է կին և կոյս . անամուսինն հոգայ զՏեառնէ , զի սուրբ լիցի և մարմնով և հոգւով . իսկ ամուսնացեալն հոգայ զաշխարհէ , զի հաճեսցի առն :

35 Եւ զայս ասեմ ձեզ ի շահ ձեր , ոչ զի որոգայթ արկից ձեզ , այլ վասն պատշաճի և անշարժ աղաւթից առ Տէր :

36 Եւ եթէ ոք կարծիցէ զիւր կոյսն անպատշաճ լինել , եթէ ընդ ծաղկեալ է , և պարտ է այնպէս լինել , զոր կամիցի՝ արասցէ , մի՛ մեղանչեսցէ . ամուսնասցին :

37 Եւ որ կայցէ հաստատուն ի սրտի իւրում , և ոչ ունիցի պարտաւորութիւն , այլ իշխանութիւն ունիցի զկամս իւր , և զայս դատեսցէ ի սրտի իւրում , զի պահեսցէ զկոյսն իւր , բարւոք առնիցէ :

38 Ուստի և որ ամուսնացուցանէ զկոյսն իւր , բարւոք առնէ . և որ ոչ ամուսնացուցանէ , աւելի՛ ևս բարւոք առնէ :

39 Կին կապեալ է որչափ ժամանակ կենդանի է առն իւր . և եթէ մեռանի առն իւր , ազատ է զոր կամիցի ամուսնանալ , միայն թէ ի Տէր :

40 Բայց երանելի է եթէ այնպէս մնասցէ , ըստ խրատուս իմոյ . և կարծեմ ես զի և ես Հոգի Աստուծոյ ունիմ :

8 1 Եւ զկուռս պատարագեալ կերակրոցն գիտեմք , զի ամենեքեան գիտութիւն ունիմք . գիտութիւն փքացուցանէ , իսկ սէր շինէ :

2 Եթէ ոք կարծիցէ զիւր թէ գիտէ ինչ , ոչ գիտէ զոր պարտ է գիտել :

3 Իսկ եթէ ոք սիրէ զԱստուած , նա գիտի :

4 Ուստի զկուռս պատարագեալ կերակրոցն գիտեմք , զի ոչ է կուռք ինչ յաշխարհի , և զի ոչ է Աստուած այլ բայց միայն մի :

5 Զի և եթէ իցեն որ կոչեսցին աստուածք կամ յերկինս կամ յերկրի , որպէս իցեն աստուածք բազումք և տէրք բազումք ,

6 Այլ մեզ մի Աստուած Հայր , յորմէ ամենայն ինչ , և մեք նովաւ . և մի Տէր Յիսուս Քրիստոս , որով ամենայն ինչ , և մեք նովաւ :

7 Այլ ոչ ամենեցուն է գիտութիւն այդ . զի ոմանք ցայժմ սովորութեամբ կռոցն իբրև զկուռս պատարագեալ կերակուր ուտեն , և խղճմտանք նոցա տկարք պղծին :

8 Եւ կերակուրն զմեզ ոչ մատուցանէ Աստուծոյ . զի եթէ ուտիցեմք՝ ոչ առաւել ունիցիմք , և եթէ ոչ ուտիցեմք՝ ոչ պակասեսցուք :

9 Տեսէ՛ք զի մի՛ գուցէ այս իշխանութիւն ձեր պատճառ լիցի տկարացելոցն :

10 Զի եթէ ոք տեսցէ զքեզ որ գիտութիւն ունիս , նստեալ ի տանի կռոցն , ոչ խղճմտանքն նորա տկարք շինեսցին ուտել զկուռս պատարագեալ կերակրոցն :

11 Եւ կորնչի՞ տկարն ի գիտութենէ քումմէ , եղբայրն որ վասն նորա Քրիստոս մեռաւ :

12 Եւ այսպէս մեղանչելով ընդ եղբարս , և զխղճմտանս նոցա տկարս զարնուլ , զՔրիստոս մեղանչէք :

13 Վասն որոյ եթէ կերակուր զեղբայր իմ գայթակղեցուցանէ , մինչև յաւիտեան մի՛ ուտիցեմ միս , զի մի՛ զեղբայր իմ գայթակղեցուցից :

9 1 Ո՞չ իցեմ ազատ . ո՞չ իցեմ առաքեալ . ո՞չ տեսի զՅիսուս Քրիստոս Տէր մեր . ո՞չ դուք էք գործ իմ ի Տէր :

2 Եթէ այլոց ոչ իցեմ առաքեալ , այլ գոնէ ձեզ իցեմ . զի դուք էք կնիք առաքելութեան իմոյ ի Տէր :

3 Պատասխանի իմ ընդ այնոսիկ որ զիս քննեն , այս է :

4 Ո՞չ իշխանութիւն ունիմ ուտել և ըմպել :

5 Ո՞չ իշխանութիւն ունիմ քոյր կին առնել , որպէս և այլ առաքեալքն , և եղբարքն Տեառն , և Կեփաս :

6 Կամ ես միայն և Բառնաբաս ո՞չ իշխանութիւն ունիմք չգործել :

7 Ո՞ զինուորէ ինչ իւրով ծախիւք . ո՞ տնկէ զայգի , և ոչ ուտէ զպտուղ նորա . կամ ո՞ արածէ զհօտ , և ոչ ի կաթանէ հօտին ուտէ :

8 Ո՞չ ըստ մարդկան զայս ասեմ , կամ ոչ և օրէնքն զայս ոչ ասեն :

9 Զի ի Մովսիսի օրէնսդրութեան գրի՝ թէ մի՛ կապեսցես զերան ցորենոյ ի կոխել նորա . ո՞չ հոգայ Աստուած զեզանց :

10 Կամ ամենայնիւ վասն մերոց ասէ . զի մերոց գրեցաւ , զի որ հերկէ պարտ է հերկել յոյսով , և որ կոխէ յոյսով պարտ է հասանել :

11 Եթէ մեք ձեզ հոգեւոր զաւրութիւն սերմանեցաք , մեծ բան է եթէ մեք զձեր մարմնաւոր կերակուրս հնձեսցուք :

12 Եթէ այլք իշխանութեան ձերոյ մասնակից լինին , ո՞չ առաւել մեք . այլ ոչ զիշխանութեանս մերոյ գործածեցաք , այլ զամենայն ինչ համբերեմք , զի մի՛ զիա՛ր ինչ արգելցուք աւետարանին Քրիստոսի :

13 Ո՞չ գիտէք՝ եթէ որ զսրբութիւնսն գործեն , ի տանէ սրբութեանն ուտեն . և որ զպատարագին սպասաւորեն , ընդ պատարագին բաժին առնուն :

14 Նոյնպէս և Տէր հրամայեաց նոցա որ զաւետարանէն կեցուցանեն , ի նմանէ կեցցեն :

15 Այլ ես ոչ գործածեցի ինչ ի սոցանէ . և ոչ գրեցի զայս զի այսպէս եղիցի ինձ , զի բարւոք է ինձ քան զի զպարծանս իմ ոք ունայնասցէ :

16 Զի եթէ աւետարանեմ , ոչ է ինձ պարծանք , զի պարտ է ինձ . և վա՛յ ինձ եթէ ոչ աւետարանեցից :

17 Զի եթէ կամաւ զայս գործեմ , վարձս ունիմ . և եթէ ակամայ , պաշտօն աւետարանին ինձ է :

18 Զի՞ է ուրեմն վարձս իմ . զի աւետարանելով անվնաս զաւետարանն Քրիստոսի դիցեմ , զի մի՛ չարչարեսցի զաւրութիւն իմ ի նմա որ է աւետարանին :

19 Զի ազատ ի մարդկանէ ամենեցուն , զամենեսեան ինձ ծառայ արարի , զի զբազումս շահեցուցից :

20 Եւ եղէ հրեայից իբրև հրեայ , զի զհրեայսն շահեցուցից . որ ընդ օրինաւք են , իբրև ընդ օրինաւք , զի զնոսա որ ընդ օրինաւք են շահեցուցից :

21 Որ առանց օրինացն , իբրև առանց օրինացն , զի զնոսա որ առանց օրինացն են շահեցուցից , ոչ առանց օրինացն Աստուծոյ , այլ ընդ օրինաւք Քրիստոսի :

22 Եղէ տկարաց իբրև տկար , զի զտկարսն շահեցուցից . ամենայնի եղէ ամենայնիւք , զի ամենայնիւ զոմանս ապրեցուցից :

23 Եւ զայս ամենայն ինչ վասն աւետարանին առնեմ , զի ես նորա մասնակից լինիցիմ :

24 Ո՞չ գիտէք՝ եթէ որ ընթանան ի մարտի , ամենեքեան ընթանան , բայց մի՛ ոք առնու զհանդերձ . ընթացարուք այնպէս զի զհանդերձն առնուցուք :

25 Եւ ամենայն մարտնչող ամենայնիւ զսակաւամբ ինքն զանձն զսանձէ . նոքա զի զապականելի պսակ առնուցուն , և մեք զանապական :

26 Ուստի ես ոչ իբրև զանորոշ ընթանամ , ոչ իբրև զոք զդատարկ զէնս ածեմ :

27 Այլ զանձն իմ պատուհասեմ և ի ծառայութիւն կեցուցանեմ , զի մի՛ գուցէ այլոց քարոզեցեալ , ես ինքն անարժան գտանիցիմ :

10 1 Ո՞չ կամիմ զձեզ անգէտ լինել , եղբարք , զի հարքն մեր ամենեքեան ի տակ ամպոյն էին , և ամենեքեան ընդ ծովն անցին :

2 Եւ ամենեքեան ի Մովսէս մկրտեցան ի ամպն և ի ծովն :

3 Եւ ամենեքեան զհոգեւոր նոյն կերակուրն կերան :

4 Եւ ամենեքեան զհոգեւոր նոյն ըմպելին արբին . զի ըմպէին յետ նոցա հոգեւոր վիմէն , և վէմն էր Քրիստոս :

5 Այլ ոչ ամենեցունց հաճեցաւ Աստուած , զի անկան ի տունկ անապատին :

6 Եւ այս ամենայն ինչ ի նշանակս եղեն մեզ , զի մի՛ լիցուք ցանկասէրք չարեաց , որպէս և նոքա ցանկացան :

7 Եւ մի՛ կռապաշտք լինիցիք , որպէս ոմանք նոցանէ , որպէս գրեալ է . նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել , և յարուցին խաղալ :

8 Եւ մի՛ պոռնկասցուք , որպէս ոմանք նոցանէ պոռնկացան , և անկան ի մի աւուր քսան և երեք հազարք :

9 Եւ մի՛ փորձեսցուք զՔրիստոս , որպէս ոմանք նոցանէ փորձեցին , և ի վիշապացն կորեան :

10 Եւ մի՛ տրտնջեսցուք , որպէս ոմանք նոցանէ տրտնջեցին , և կորեան ի կորստենէ :

11 Եւ այս ամենայն ինչ նոցա ի նշանակս եղեն , և գրեցան ի յանդիմանութիւն մեր , որ զկատարածս աշխարհի հասաք :

12 Ուստի որ կարծիցէ զիւր թէ կայ , տեսցէ զի մի՛ անկցի :

13 Զի ոչ զձեզ փորձութիւն ինչ ոչ ունկնդրեաց , բայց հաւատարիմ է Աստուած , որ ոչ տացէ զձեզ փորձել վերագոյն քան զկարողութիւն ձեր , այլ արասցէ ընդ փորձութեանն և զելս , զի կարասջիք համբերել :

14 Վասն որոյ , սիրելիք իմ , փախարուք ի կռապաշտութենէ :

15 Իբրև ընդ իմաստունս խօսիմ . դուք դատեցէք զոր ասեմ :

16 Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք , ո՞չ հաղորդութիւն արեան Քրիստոսի է . հացն զոր կատարեմք , ո՞չ հաղորդութիւն մարմնոյ Քրիստոսի է :

17 Զի մի հաց է , մի մարմին բազումք եմք . զի ամենեքեան ի հացէ միոջէ հաղորդիմք :

18 Տեսէ՛ք զԻսրայէլ ըստ մարմնոյ . ո՞չ որ զոհս ուտեն հաղորդք սեղանոյն են :

19 Զի՞ ասեմ ուրեմն՝ եթէ կուռք ինչ է , կամ զի՞ կուռք ինչ է պատարագեալ կերակուրն :

20 Այլ զոր ասեմ՝ եթէ զոհս զոր զոհեն հեթանոսք , դիւաց զոհեն և ոչ Աստուծոյ . և ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել :

21 Ոչ կարէք ըմպել զբաժակ Տեառն և զբաժակ դիւաց . ոչ կարէք հաղորդել սեղանոյ Տեառն և սեղանոյ դիւաց :

22 Կամ զՏէր գրգռեմք . ո՞չ զաւրագոյն քան զնա եմք :

23 Ամենայն ինչ ինձ է արժան , այլ ոչ ամենայն ինչ օգտակար . ամենայն ինչ ինձ է արժան , այլ ոչ ամենայն ինչ շինէ :

24 Ոչ ոք զիւրն խնդրեսցէ , այլ զայլոցն իւրաքանչիւր ոք :

25 Զամենայն ինչ որ ի մսավաճառանոցի վաճառի , կերէք , և ոչ հարցանէք վասն խղճի :

26 Զի Տեառն է երկիր և լիութիւն նորա :

27 Եթէ կոչեսցէ զձեզ ոք ի հաւատացելոցն և կամիցիք երթալ , զամենայն ինչ որ դիցի առաջի ձեր կերէք , և ոչ հարցանէք վասն խղճի :

28 Եթէ ոք ասիցէ ցձեզ թէ զայս կուռս պատարագեալ կերակուր է , մի՛ կերէք վասն նորա որ ասաց , և վասն խղճի . զի Տեառն է երկիր և լիութիւն նորա :

29 Խիղճ ասեմ ոչ անձին քում , այլ նորա . զի ընդէ՞ր դատի ազատութիւն իմ յայլոյ խղճէ :

30 Եթէ ես շնորհօք կերայց , զի՞ հայհոյիմ վասն որոյ ես գոհանամ :

31 Եթէ ուրեմն ուտէք կամ ըմպէք , կամ զինչ և գործէք , ամենայն ինչ ի փառս Աստուծոյ արարէք :

32 Անվնաս եղերուք և հրեայից և հեթանոսաց և եկեղեցւոյ Աստուծոյ :

33 Որպէս և ես ամենայն ինչ ամենեցուն հաճոյանամ , ոչ զիմ շահ խնդրելով , այլ զբազմաց , զի կեցցեն :

11 1 Նմանողք իմ եղերուք , որպէս և ես Քրիստոսի :

2 Եւ գովեմ զձեզ , եղբարք , զի զամենայն ինչ յիշէք զիս , և զաւանդսն զոր ես աւանդեցի ձեզ , ունիք :

3 Եւ կամիմ զձեզ գիտել , զի ամենայն արու գլուխ Քրիստոս է , և կին առն գլուխ է , և Աստուած Քրիստոսի գլուխ է :

4 Ամենայն արու որ աղաւթս կամ մարգարէութիւն ասիցէ , գլուխ իւր ամաչեցուցանէ :

5 Եւ ամենայն կին որ աղաւթս կամ մարգարէութիւն ասիցէ , ոչ ծածկեալ գլխով , գլուխ իւր ամաչեցուցանէ . զի նոյն է և ածեալ զգլուխ :

6 Զի եթէ ոչ ծածկի կին , կտրեսցի և մազ . և եթէ ամաչելի է կնոջ կտրել կամ ածել զմազ , ծածկեսցի :

7 Արու ոչ պարտ է ծածկել զգլուխ , զի պատկեր և փառք Աստուծոյ է . իսկ կին փառք առնի է :

8 Զի ոչ է արու յորմէ կին , այլ կին յորմէ արու :

9 Եւ ոչ արու ստեղծաւ վասն կնոջ , այլ կին վասն առնի :

10 Վասն որոյ պարտ է կնոջ իշխանութիւն ունել ի գլուխ իւր , վասն հրեշտակացն :

11 Այլ ոչ առանց կնոջ առն է , և ոչ առանց առնի կին է ի Տէր :

12 Զի որպէս կին յառնէ , նոյնպէս և արու կնոջմէ . և ամենայն ինչ յԱստուծոյ :

13 Դատեցէ՛ք ինքեանք ի ձեզ , պարտ է կնոջ աղաւթս առ Աստուած ածել ոչ ծածկեալ գլխով :

14 Ո՞չ ինքն բնութիւն ուսուցանէ ձեզ , եթէ արու եթէ մազ երկարեցուցանէ , անարգանք է նմա :

15 Եւ կին եթէ մազ երկարեցուցանէ , պատիւ է նմա . զի մազ փոխանակ ծածկոյթի տրեալ է նմա :

16 Եւ եթէ ոք կամիցի հակառակել , մեք ոչ այդպիսի սովորութիւն ունիմք , և ոչ եկեղեցիք Աստուծոյ :

17 Եւ զայս պատուիրելով ոչ գովեմ զձեզ , զի ոչ ի լաւ այլ ի չար ժողովէք :

18 Նախ զի ժողովելոյ ձերոյ ի եկեղեցի լսեմ զբաժանմունս ի ձեզ , և մասամբ հաւատամ :

19 Զի պարտ է և հերձուածս ի ձեզ լինել , զի որք հաւանութեամբ են յայտնի լիցին ի ձեզ :

20 Ուստի ժողովելոյ ձերոյ ի միասին , ոչ է Տեառն ընթրիս ուտել :

21 Զի ամենեքեան զիւրեանց ընթրիսն առաջի առնուն ուտել , և մին քաղցի և մին արբենայ :

22 Ո՞չ տուն ունիք ուտել և ըմպել , կամ զեկեղեցի Աստուծոյ արհամարհէք , և ամաչեցուցանէք զոչ ունելիսն . զինչ ասիցեմ ձեզ , գովեսցե՞մ զձեզ . ոչ գովեմ :

23 Զի ես ի Տեառնէ ընկալայ զոր և աւանդեցի ձեզ , եթէ Տէր Յիսուս Քրիստոս յորում գիշերի մատնեցաւ , առ հաց մի ,

24 Եւ շնորհակալ եղեալ , կատարեաց և ասէ . առէ՛ք կերէ՛ք , այս է մարմին իմ որ վասն ձեր կատարի . զայս արարէ՛ք ի յիշատակ իմ :

25 Նոյնպէս և զբաժակն յետ ընթրելոյ , և ասէ . այս բաժակ նոր ուխտ է յարեան իմում . զայս արարէ՛ք որչափ և ըմպիցէք ի յիշատակ իմ :

26 Զի որչափ և ուտիցէք զհացս զայս և զբաժակս զայս արբիցէք , զմահ Տեառն աւետարանէք մինչև եկեսցէ :

27 Ուստի որ ուտիցէ զհացս զայս կամ արբիցէ զբաժակ Տեառն անարժանաւ , պարտական լինիցի մարմնոյ և արեան Տեառն :

28 Եւ փորձեսցէ մարդ զանձն իւր , և ապա ի հացէն ուտիցէ և ի բաժակէն արբիցէ :

29 Զի որ ուտէ և արբնայ , դատաստան իւր ուտէ և արբնայ , եթէ չիմանայ զմարմին Տեառն :

30 Վասն որոյ ի ձեզ բազումք տկարք և հիւանդք , և բազումք քնացան :

31 Եթէ զանձինս մեր դատեսցուք , ոչ դատիցիմք :

32 Իսկ դատեալք Տեառնէ խրատիմք , զի մի՛ դատապարտեսցուք ընդ աշխարհիս :

33 Ուստի եղբարք իմ , ժողովելոյ ձերոյ ի ճաշ , միմեանց սպասեցէ՛ք :

34 Եթէ ոք քաղցի , ի տան կերիցէ , զի մի՛ ի դատաստան ժողովիցէք . և զայլսն յորժամ եկից , կարգեցից :

12 1 Եւ զհոգեւորացն , եղբարք , ոչ կամիմ զձեզ անգէտ լինել :

2 Գիտէք զի հեթանոս էիք , զկուռսն համր զոր կամէիք տանիմէք և տարուբերէիք :

3 Ուստի գիտելի առնեմ ձեզ , զի ոչ ոք ի Հոգւոյ Աստուծոյ խօսեալ ասէ զՅիսուս նզովեալ , և ոչ ոք կարէ ասել զՅիսուս Տէր , բայց ի Հոգւոյ Սրբոյ :

4 Եւ պարգևք շնորհաց են , այլ նոյն Հոգի :

5 Եւ պաշտօնք են , այլ նոյն Տէր :

6 Եւ զաւրութիւնք են , այլ նոյն Աստուած որ զամենայն ինչ ամենայնիւ զաւրացուցանէ :

7 Եւ տրի ամենեցուն յայտնութիւն Հոգւոյն ի շահ :

8 Զի ոմանց տրի ի Հոգւոյն խօսք իմաստութեան , և ուրեմն խօսք գիտութեան ըստ նոյն Հոգւոյ :

9 Եւ ուրեմն հաւատ ի նոյն Հոգի , և ուրեմն պարգևք բժշկութեանց ի նոյն Հոգի :

10 Եւ ուրեմն զաւրութիւնք գործոց , և ուրեմն մարգարէութիւն , և ուրեմն խտրութիւն հոգեաց , և ուրեմն տեսակք լեզուաց , և ուրեմն թարգմանութիւն լեզուաց :

11 Այլ զայս ամենայն ինչ գործէ նոյն Հոգի , բաժանելով իւրաքանչիւր ոք որպէս կամի :

12 Զի որպէս մարմին մի է , և անդամս բազումս ունի , և ամենայն անդամք մարմնոյ մի մարմին բազումք եղեալ , նոյնպէս և Քրիստոս :

13 Զի և ամենեքեան ի մի Հոգւոյ մի մարմին մկրտեցաք , կամ հրեայք և կամ հեթանոսք , կամ ծառայք և կամ ազատք , և ամենեքեան մի Հոգի արբուցաք :

14 Զի և մարմինն ոչ է մի անդամ , այլ բազումք :

15 Եթէ ասիցէ ոտն թէ զի ոչ եմ ձեռն , ոչ է յայսմանէ ոչ մարմնոյ անդամ :

16 Եւ եթէ ասիցէ ականջն թէ զի ոչ եմ աչք , ոչ է յայսմանէ ոչ մարմնոյ անդամ :

17 Եթէ ամենայն մարմին աչք իցէ , ուր լսելիք . եթէ ամենայն լսելիք իցէ , ուր հոտոտիցիք :

18 Այլ արդ Աստուած զանդամսն դրեաց զիւրաքանչիւր ոք ի մարմնի , որպէս կամեցաւ :

19 Եւ եթէ ամենայն անդամք մի անդամ իցեն , ուր մարմին :

20 Այլ արդ բազումք անդամք են , և մարմին մի :

21 Ոչ կարէ աչքն ասել ձեռին թէ ոչ պիտոյ ես ինձ , կամ գլուխն ոտիցն թէ ոչ պիտոյ էք ինձ :

22 Այլ բազում եւս որ անդամք մարմնոյ թուին տկարագոյնք լինել , պիտոյք են :

23 Եւ զորս կարծիմք անարգագոյնս լինել մարմնոյ , զայնոսիկ պատուականագոյն զգեցուցանեմք , և զանշնորհսն մերոց աւելի՛ շնորհս ունին :

24 Զի զպատուականսն մերոց ոչ պիտոյ է . այլ Աստուած խառնեաց զմարմինն , տուեալ աւելի պատիւ անդամոյն անպակասի :

25 Զի մի՛ լիցի պատառումն ի մարմնի , այլ զհոգս նոյն ունիցին անդամք միմեանց :

26 Եւ եթէ տանջի անդամ մի , ընդ նմին տանջին անդամք ամենայնք . եթէ պատուի անդամ մի , ընդ նմին ուրախանան անդամք ամենայնք :

27 Դուք էք մարմին Քրիստոսի , և անդամք ի մասնաւորի :

28 Եւ զոմանս դրեաց Աստուած ի եկեղեցի , նախ առաքեալս , երկրորդ մարգարէս , երրորդ վարդապետս , ապա զաւրութիւնս , ապա շնորհս բժշկութեանց , օգնականութիւնս , կառավարութիւնս , տեսակս լեզուաց , թարգմանութիւնս լեզուաց :

29 Զի ամենեքեան առաքեալք են , ամենեքեան մարգարէք են , ամենեքեան վարդապետք են , ամենեքեան զաւրութիւնք են ,

30 Ամենեքեան շնորհս ունին բժշկութեանց , ամենեքեան տեսակս լեզուաց ունին , ամենեքեան թարգմանեն :

31 Եւ դուք նախանձիք զպատուականագոյնսն շնորհս . և ես ցուցանեմ ձեզ ճանապարհ աւելի՛ պատուականագոյն :

13 1 Եթէ լեզուաւք մարդկան խօսիցիմ և հրեշտակաց , և սէր ոչ ունիցիմ , եղէ իբրև պղինձ հնչեցուցանող կամ զիլ զնգացուցանող :

2 Եւ եթէ ունիցիմ զմարգարէութիւն , և գիտիցիմ զամենայն խորհուրդս և զամենայն գիտութիւն , և եթէ ունիցիմ զամենայն հաւատս , մինչև զլերինս տեղի՛ փոխել , և սէր ոչ ունիցիմ , ոչինչ եմ :

3 Եւ եթէ բաժանեցից զամենայն ինչ իմ , և եթէ մարմին իմ մատնեցից , զի պարծեսցի , և սէր ոչ ունիցիմ , ոչ ինչ օգտի ինձ :

4 Սէր երկայնամիտ է , քաղցրանայ , սէր ոչ նախանձի , սէր ոչ պարծի , ոչ հպարտանայ ,

5 Ոչ անպատշաճանայ , ոչ խնդրէ զիւրն , ոչ բարկանայ , ոչ մտանայ զչարն ,

6 Ոչ ուրախանայ ի գործ անիրաւութեան , այլ ուրախանայ ի ճշմարտութեան ,

7 Ամենայն ինչ ծածկէ , ամենայն ինչ հաւատայ , ամենայն ինչ յուսայ , ամենայն ինչ համբերէ :

8 Սէր ոչ անկանի երբէք , թէ և մարգարէութիւ

խարհիս այսորիկ՝ կամ ընդ ագահս և ընդ յափշտակողս կամ ընդ կըռապարիշտս . ապա թէ ոչ՝ պարտ էիք և յաշխարհէ իսկ ելանել :

11 Այլ արդ՝ գրեցի ձեզ չխառնակիլ . եթէ ոք եղբայր անուանեալ՝ կամ պոռնիկ իցէ կամ կռապարիշտ կամ ագահ կամ բամբասող՝ կամ արբեցող կամ յափշտակող՝ ընդ այնպիսւոյն և հաց մի՛ ուտել :

12 Զի՞ կայ իմ և զարտաքինան դատակոյ . ոչ ապաքէն դուք զներքինդ դատիցիք :

13 Եւ զարտաքինան Աստուած դատեսցի . բարձէք զչարն ի միջոյ ձերմէ :

քիս[18] պոռնիկներին հետ , կամ ագահներուն հետ , կամ յափշտակողներուն հետ , կամ կռապաշտներուն հետ[19] . ապա թէ չէ՝ պէտք էր ձեզ՝ որ հենց աշխարհքիցս դուրս գնայիք[20] :

11 Այսց հիմիկ գրեցի ձեզ՝ որ չխառնըվիք . թէ որ մինն որ եղբայր է անուանվածՙ[21] , կամ պոռնիկ լինի , կամ ագահ , կամ բամբասող կամ հարբեցող կամ յափրշտակող , էնպիսւոյն հետ հաց էլ մի՛ ուտէք[22] :

12 Ինձ ի՞նչ պէտք է՝ որ դրըսինները դատեմ[23] . չէ՞ որ դուք ներսիններըն պիտի դատէք[24] :

13 Եւ դրըսինները Աստուած կը դատե . (դուք) հարըն ձեր միջիցն վեր առէք[25] :

Կ Ղ . Ը .

1 Ամբիծ ասելովն պիտի իրաւնց եղայրներն՝ նոյնպէս անբիծներն առաքին դատելու համար , 6 Լս. են եւ անճառասներն մէջ . 9 Ընդրուներն Բառաւոց սրբագործելուն չեն կարող ժառանգիլ : 15 Հրեշտակներն մարմիններն Հրեշտակ անդամներ են , 19 Ն. Սուրբ Հոգւոյ տաճար են , 16 , 17 Անտհամար պէտք է նզովք չ'տպակռնել փոխանց մարմիններն բոյց սրբագործել :

1 Համբէ ոք ի ձէնջ՝ երբէք իրք ինչ իցէ ընդ ընկերի իւրում դատիկ առաջի անիրաւացն և ոչ առաջի սրբոցն :

2 Եթէ ոչ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին . և եթէ ձեզ դատի աշխարհ՝ ապա ոչ էք արժանի անարդ պտենից :

3 Այլ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք , թո՛ղ թէ զերկրաւորս :

1 Ձեզանից մինն՝ թէ որ բան ունենայ իրան ընկերին հետ , համարձակվումՙ որ անիրաւներն առաջին դատաստան գնե և ոչ թէ սըրբերի առաջին :

2 Կամ թէ չէք գիտում՝ որ սրբերն աշխարհքս կըդատվին . և թէ որ ձեզանով աշխարհքն կըդատվի՝ ապա էք պրծան՝ որ ցած բաների մերայ դատաստան անէք :

3 Ձէք գիտում՝ որ մենք հրեշտակներն կըդատենք[3] . էլ ո՛րքան աւելի երկրաւոր բաներըն :

(18) ա կորնթ . ա . 20 : (19) ա կորնթ . ժ . 27 : (20) Ղեւտ . ժե . 15 : բ Ղեւտ . է . 19 : (21) Առակ . ժբ . 17 : Հռոմ . ժգ . 17 : բ Թես . գ . 6 . 14 : բ Ղեւտ . 19 , 22 . 24 : (1) Ղեւտ . խբ . 14 : Ելս . է . 22 : Առակ . ժբ . 28 : Ղեւտ . խգ . 10 : Ելս . բ . 26 : է . 21 : ի . 2 : (2) բ Պետ . բ . 4 : Ցուդ . 6 :

Digitized by Google

(3) Ա. Ընդ. ի. 12։ (4) Ա. Ոսկ. ի. 22։ Մատթ. ի. 39, 40։ Ղուկ. ը. 29, 30։ Գործ. ժբ. 17, 19։ ա Կոր. ի. 15։ (5) ա Կոր. գ. 6։ (6) ա Պետր. ժբ. 50, Գործ. ի. 21։ Լեւտ. ի. 5։ ա Տես. ա. 9։ Ներ. ժբ. 14։ ժդ. 8։ Օպտ. իբ. 15։ (7) ա Պետր. ժբ. 2։ Լեւտ. բ. 3։ գ. 22։ ի. 8։ Պղ. գ. 7։ Տես. գ. 8։ (8) ա Պետր. ա. 30։ Ներ. ժ. 22։ (9) ա Պետր. ժ. 28։

4 Երկրաւոր բաների համար թէ որ դատաստան ունիք՝ եկեղեցոյ ցած մարդկանցն ձեզ համար դատաւոր նստեցրէք[3]։

5 Ձեր ամօթի համար եմ ասում. էլ էնքան մին իմաստուն մարդ չըկայ ձեր միջումդ՝ որ կարող լինի իրաւունք անել իրան եղբարների մէջն։

6 Այլ եղբայր եղբօր հետ դատաստան է գնում. և էն էլ անհաւատների մէջ։

7 Ես հիմիկ՝ հենց իսպառ վատ բան է՝ որ ձեր միջումդ դատաստան կայ. ինչու՞ դուք չէք զրկիւմ. և աւելի դուք չէք նեղն մեռնում[4]։

8 Այլ դուք զրկումէք և նեղացնումէք՝ և էն էլ ձեր եղբայրներին[5]։

9 Կամ թէ չէք գիտում՝ որ անիրաւներն Աստուծոյ արքայութիւնն չեն ժառանգիլ. մի՛ խաբուիք. ո՛չ պոռնիկներն, ո՛չ կռապաշտներն, ո՛չ շնացողներն,

10 Ո՛չ իգի տեղ անցնողներն, ո՛չ արուագէտներն, ո՛չ գողերն, ո՛չ ագահներն, ո՛չ հարբեցողներն, ո՛չ բամբասողներն, և ո՛չ յափշտակողներն՝ Աստուծոյ արքայութիւնն չեն ժառանգիլ[6]։

11 Եւ դուք միւն քաղաքներ էնպէսներ էիք[7]. բայց լուացուեցաք՝ բայց սրբուեցաք՝ բայց արդարացաք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի անունով և մեր Աստուծոյ Հոգովն[8]։

12 Ամէն բան կարելի է ինձ, բայց ամէն բան օգուտ չէ. ամէն բան կարելի է ինձ, բայց չըլինի որ ես մին բանի իշխանութեան տակն լինիմ[9]։

(1) Ա. Կոր. ժբ. 1։ (2) Ա. Կոր. ե. 1։ Մատթ. ժը. 15։ Ղուկ. ժէ. 3։ (3) Ա. Կոր. զ. 4։ (4) Ա. Կոր. զ. 7։ (5) Ա. Կոր. զ. 8։ (6) Ա. Կոր. զ. 9։ Գաղ. ե. 21։ Եփես. ե. 5։ Ա. Տիմ. ա. 10։ (7) Ա. Կոր. զ. 11։ Տիտ. գ. 5։ (8) Ա. Կոր. զ. 11։ (9) Ա. Կոր. զ. 12։

Digitized by Google

13 Կերակուր սրտիկին, և արտ-
վային կերակրոյ. այլ Յաւուած ըզ-
սա և զնոսա խափանեսցէ. քանզի
մարդին ոչ պատկառեան՝ այլ Տնա-
ւքն, և Տէր մարգոյ։

13 Կերակուրն փորին Համար (է),
և փորն կերակուրին Համար[10]. բայց
Յաւուած սրան և նոքան կքակտե-
նէ. մինչ թէ մարդոյն պատկա-
ռեան Համար չէ, քանզի Տէրն
Համար[11], և Տէրն մարգոյն Հա-
մար[12]։

14 Այլ Յաւուած՝ որ և զՏէրն
յարոյց, և զձեզ յարուսցէ զո-
րութեամբ իւրով։

14 Եւայց Յաւուած՝ որ մեր Տէրն
յարոյց[13], ձեզ էլ կը յարուցանէ ի-
րան զօրութենովն[14]։

15 Ոչ գիտէք՝ եթէ մարմինք ձեր
անդամք են Քրիստոսի. արդ՝ ա-
ռեալ զանդամս Քրիստոսի, ա-
նիցեմք անդամս պոռնկի. քան լի-
ցի։

15 Ըզէք գիտաւմ՝ որ ձեր մար-
միններն Քրիստոսի անդամներ են[15].
ապա Քրիստոսի անդամներըն ա-
ռնեմք՝ և պոռնիկի անդամ չինեմք,
քան լիցի։

16 Եթէ ոչ գիտէք՝ զի որ միրձե-
նայ ի պոռնիկ՝ մի մարմին է. Ե-
ղիցին, ասէ, երկոքին ի մարմին
մի։

16 կամ թէ չէք գիտաւմ՝ որ նա՝
որ պոռնիկին մօտենուսի, մին մար-
մին է (նորա Հետ). Երկուսն՝ ա-
սաւսի, մին մարմին կըլինին[16]։

17 Եւ որ միրձենայ ի Տէր՝ մի
հոգի է։

17 Եւ նա՝ որ Տէրին մօտենուսի՝
մին հոգի է (նորա Հետ)[17]։

18 Փախերուք ի պոռնկութենէ. զ-
ամենայն մեղս՝ զոր և գործէ մարդ՝
արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ
պոռնկին՝ յիւր մարմինն մեղանչէ։

18 Փախէք պոռնկութենիցն[18]. ա-
մէն մեղք՝ ինչ որ մարդ գործուսի,
իրան մարմնիցն դուրս է. քանզի նա՝
որ պոռնկութիւն է անուսի, իրան
մարմնոյն գէմ մեղանչուսի[19]։

19 Եթէ ոչ գիտէք՝ զի մարմինք
ձեր տաճար են Հոգւոյն Սրբոյ՝ որ
է ի ձեզ՝ զոր ունիք յԱստուծոյ.
և չէք անձինց ձեր։

19 կամ թէ չէք գիտաւմ, որ ձեր
մարմիններն Սուրբ Հոգոյ տաճար
են՝ որ ձեզանուսի է, զոր ունիք
Յաւուածանիցն[20]. և ձեր ան-
ձին ձեր չէք[21]։

20 Վասն գնոյ գնեցարուք. փա-
ռաւորեցարուք զԱստուած ի մար-
մինս ձեր և յոգիս, որ է Աստու-
ծոյ։

20 Պատճառն որ՝ մեծ գին տարուվ
գընևեցարք[22]. էլ փառք տուէք Ա-
ստուծոյն ձեր մարմնուսի և ձեր հո-
գուսի՝ (որ են Աստուծոյն)։

(10) Ա կոր. ժե. 17։ Հռով. ժդ. 17։ կող. բ. 22, 23։ (11) Ա յայր. 15. 19, 20։ ա թես. գ. 3. 7։ (12) Ելից. է. 23։ (13) Հռով. գ. 5. 8։ ը. 11։ բ կորնթ. դ. 14։ (14) Ելից. ա. 19, 20։ (15) Հռով. ժբ. 5։ ա կորնթ. ժբ. 27։ Ելից. գ. 13. 15, 16։ է. 30։ (16) Ծննդ. բ. 24։ Ա կոր. ժբ. 5։ Ելից. է. 31։ (17) Ղևտ. ժե. 21—23։ Ելից. գ. 4։ է. 30։ (18) Հռով. ւգ. 13, 13։ Ելիր. ժգ. 4։ (19) Հռով. ա. 24։ ա թես. գ. 4։ (20) ա կորնթ. գ. 16։ բ կորնթ. գ. 16։ (21) Հռով. ժգ. 7, 8։ (22) Գործ. բ. 23։ ա կորնթ. է. 23։ գաղ. գ. 13։ Ելիր. ի. 13։ ա պետր. ա. 18, 19։ բ պետր. բ. 1։ Հայտ. է. 9։

Digitized by Google

ԳԼ · Ի:

3 Պօղոս պատկիլըլ համար խօսուածի , 4 Ցոյց տալով որ նա պատկուելեան համար մին չափ է , 10 Նախ յիշելով որ են պատին մին բան ջ'համարելով մինն ընկեր նման : 18 · 20 Ընդդէմ մարդ իրան կռնատի մէջն թող կ'ինայ՝ թէ Քրիստոսէ և անկէ կատ , թէ ծառայ և պատուհասի , 25 Պօղոս իրան է տալիս կռատանդներէն համար , 35 Նա ինչ պատասխան համար կարող ինք պատկիլ կամ չպատկիլ :

1 Ոայց են բանի համար՝ որ ինձ գրեցիք , (ասուելիք) թէ լաւ է մարդոյ համար՝ որ կնկան չդպօռնայ[1] :

2 Այլ թէ՝ պոռնկութեան պատճառովն ըստ ոմն ամէն մէկ մարդ իրան կնկանն բանէ . և ամէն մէկ կին ըստ իրան մարդն բանէ :

3 Կնկանն իրան մարդն ըստ պարտքն վճարէ . և ենպէս էլ կին՝ նոյնպէս և կինն՝ առն իւրում[2] :

4 Պատճառն որ՝ կինն իրան մարմնոյն վերայ իշխանութիւն չունի՝ բայց մարդն . ենպէս էլ մարդն իրան մարմնոյն վերայ իշխանութիւն չունի՝ բայց կինն :

5 Ընդհինի որ իրար զրկէք . բայց եթէ իրար հետ միաբանվիք մին քիչ ժամանակ , որ աղօթքի պարապվիք . և միևնոյն դարձէք[3] , որ Սատանան չգրգռէ ձեզ՝ ձեր անժուժկալութեան պատճառովն[4] :

6 Այս ներելով եմ ասեմ , և ո'չ թէ հրաման տալով[5] :

7 Պատճառն որ կամենամ[6] որ ամէն մարդ[7] ինձ պէս լինէր[8] . բայց ամէն մարդ իրան (յատուկ) շնորհքն ունի Աստուծմէ[9] . մինն ենպէս և մինն էնպէս :

8 Ասոյց կին չամուսնացողներուն և այրեաց ասեմ , լաւ է նոցա՝ եթէ կացցեն իրրև ինձ :

9 Այլ թէ ո'չ ունիցին ժուժ՝ ամուսնանային . զի լաւ է ամուսնանալ քան զչբռնուիլ :

1 Կայլ վասն որոյ գրեցիքն առ իս , Բարւոք է մարդոյ՝ ի կին մերձ չմերձենալ :

2 Այլ վասն պոռնկութեան իւրաքանչիւրք զիւր կին կալցի . և իւրաքանչիւրք կին զիւր այր կալցի :

3 Կնոջ՝ այր իւր զպարտսն հատուցանէ . նոյնպէս և կինն՝ առն իւրում :

4 Ոչ կին մարմնոյ իւրում՝ ինչ իշխէ՝ այլ այրն . նոյնպէս և այրն իւրում մարմնոյ ո'չ իշխէ՝ այլ կինն :

5 Մի՛ զրկէք զմիմեանս . բայց եթէ ինչ՝ ի միաբանութենէ առ ժամանակ մի , զի ազատիցն պարապիցէք . և դարձեալ՝ ի նոյն դարձջիք , զի մի՛ փորձեսցէ զձեզ Սատանայ վասն անհամառաւելութեան ձերոյ :

6 Ոչ այս ասեմ ներելով՝ և ո'չ հրաման տալով :

7 Այլ կամիմ եթէ ամենայն մարդ լինէր իբրև զիս . այլ իւրաքանչիւրք զիւր շնորհս ունի Աստուծոյ՝ ոմն այսպէս և ոմն այնպէս :

8 Ասոյց ամուրեացն և այրեացն ասեմ , լաւ է նոցա՝ եթէ կացցեն իբրև զիս :

9 Այլ թէ ո'չ ունիցին ժուժ՝ ամուսնասցին . զի լաւ է ամուսնանալ քան զչբռնուիլ :

(1) Ա Կոր . է . 26 . (2) Ներ . իա . 19 : ա Պետ . գ . 7 . (3) Յովհ . բ . 16 : Ա Կոր . է . 3 : Ներ . ԺԲ . 15 : ա Յակոբ . իա . 4 , 5 : (4) ա Թես . գ . 5 : (5) Ա Կոր . 12 . 25 : բ Պօղոս . ը . 8 : ժա . 17 : (6) Գործ . իգ . 29 . (7) ա Պօղոս . Բ . 5 : (8) Մատթ . ԺԲ . 12 : ա Պօղոս . ԺԲ . 11 : (9) Ա Կոր . է . 7 : Ա Կոր . 26 : (10) ա Յովհ . 6 . 11 :

Digitized by Google

10 Ասէ կանանմբեացն պատասխանեմ , ոչ ես՝ այլ Տէր. կնոջ յառնէ մի՛ նեղիել :

11 Ուստա եթէ մեկնեսցի , անայր ձեռացէ՛ կամ անդրկէս ընդ առն իւրում հաշտեսցի . և առն՝ զկին իւր մի՛ թողուլ :

12 Իսկ այլոց ես պատասխանեմ , ոչ եթէ Տէր. Եթէ որ եղբայր կին ունիցի անհաւատ , և նմա հաճոյ իցէ բնակիլ ընդ նմա՝ մի՛ թողցէ զնա :

13 Եւ կին , որ ունիցի զայր անհաւատ՝ և նմա կամ իցէ բնակիլ ընդ նմա՝ մի՛ թողցէ զայրն :

14 Որպէս սուրբ է այրն անհաւատս կինեամն , և սուրբ է կինն անհաւատ առաքելոյն . ապա թէ ոչ՝ արդիւք ձեր պիղծ են . բայց այժմ սուրբ են :

15 Ուստա եթէ անհաւատն մեկնեսցի , մեկնեսցի . զի ոչ է ինչ հարկ ի վերայ կալ եղբօրն կամ քեռն՝ յայնպիսի իրս . քանզի ի խաղաղութիւն կոչեաց զմեզ Աստուած :

16 Որպէս գիտես կին դու՝ եթէ զայրն քո սուրբացուսցես . կամ զի գիտես այր դու՝ եթէ զկին քո սուրբացուսցես :

17 Եթէ ոչ՝ իւրաքանչիւր ումեք որպէս և բաժանեաց Տէր , զնորա քանչիւրսն որպէս և կոչեաց Աստուած՝ այնպէս գնասցէ . և այսպէս ընդ ամենայն եկեղեցիս պատուիրեմ ես :

18 Ումեք որ կոչեցաւ մի՛ թլփատեալ , մի՛ ջանկասցի անթլփատութեան . յանթլփատութենէ որ կոչեցաւ՝ մի՛

10 Ինձ պատուիրեմ , ոչ ես[11] այլ Տէրն . որ կինն չըլքանիվի իրեն մարդուն[12] :

11 Այդպէս թէ որ լքանիվի՝ մո՛ղ առանց մարդոյ մնայ՝ կամ հինել իրեն մարդուն հետ հաշտվի . և որ մարդն էլ իրեն կինն թող չըլքանէ :

12 Ինձ ուրիշներին ես պատուիրում , չէ թէ Տէրն[13] . որ եթէ մին եղբայր անհաւատ կին ունենայ , և նորան հաճոյ լինի նորա հետ բնակվիլ՝ թո՛ղ թող չըլքանէ նորան :

13 Եւ կինն՝ որ անհաւատ մարդ ունենայ , և նա կամենայ նորա հետ բնակվիլ՝ նա թո՛ղ մարդին չըլքանէ :

14 Որովհետև որ՝ անհաւատ մարդն՝ սրբված է կնկանովը , և անհաւատ կինն սրբված է մարդովը . ապա թէ չէ՝ ձեր որդիքն պիղծ կըլինէին[14] . բայց հիմիկ սուրբ են :

15 Ինձ թէ որ անհաւատն չակվելու լինի , թո՛ղ չակվի . ինչպէս որ՝ եղբայր քաղերի մէջ չըլինի կամ եղբայր վիրայ հարկաւորութիւն չըկայ . նպատակաւոր որ՝ Աստուած կանչեց մեզ խաղաղութեան մէջն[15] :

16 Ինչ նա գիտես ո՛վ կինն՝ որ քո մարդը կապրեցնէ[16] . և ինչ ես գիտես ո՛վ մարդ՝ որ քո կինը կապրեցնես :

17 Այսպէս թէ՝ ամեն մէկին ինչպէս որ Տէրն բաժանեց նորան , ամեն մէկն ինչպէս որ Աստուած կանչեց նորան , էնպես գնայ . և էնպես ամեն եկեղեցիներուն պատուիրէ եմ ասլիս[17] :

18 Որ՝ որ թլփատված կանչվեցաւ , թո՛ղ անթլփատութեան չըջանկանայ . մինչ որ անթլփատու-

(11) Ասար . 12 . 25 . 10 : (12) Մատ . բ . 14 . 16 : Մարկ . ե . 32 : ժբ . 6 . 9 : Մատ . ժ . 11 , 12 : Ղուկ . ժգ . 18 : (13) Կոր . 6 : (14) Մագ . բ . 15 : (15) Ռոմի . ժբ . 18 : ժդ . 19 : ա Կորնթ . ժդ . 33 : եբէր . ժբ . 14 : (16) ա Պետր . գ . 1 : (17) ա Կորնթ . է . 17 : բ Կորնթ . ժա . 28 :

Digitized by Google

Թլփատեցի ։

19 Օ՛ի Թլփատութիւն ո՛չինչ է՝ և անթլփատութիւն ո՛չինչ ։ այլ պահպանութիւն Աստուծոյ պատուիրանացն ։

20 Կայց իւրաքանչիւրոք յոր կոչումն կոչեցաւ՝ ՚ի նմին կացցէ ։

21 Ծառայ կոչեցար՝ մի՛ փոյթ լիցի քեզ ։ այլ թէ և կարիցես ազատ լինել՝ քեզ այնպէս լաւ իցէ ։

22 Օ՛ի որ ՚ի Տէր կոչեցեալ է ծառայն՝ ազատ Տեառն է ։ նոյնպէս և որ ազատն կոչեցեալ է՝ ծառայ Քրիստոսի է ։

23 Վնոյ գնեցարուք՝ մի՛ լինիք ծառայք մարդկան ։

24 Իւրաքանչիւրոք՝ յոր կոչումն կոչեցաւ՝ եղբարք՝ ՚ի նմին կացցէ առաջի Աստուծոյ ։

25 Վ՛ասն կուսանացն՝ հրամանս ինչ ՚ի Տեառնէ ո՛չ ունիմ ։ բայց խրատ տամ՝ որպէս ողորմեալ ուրուք ՚ի Տեառնէ ՝ հաւատարիմ լինել ։

26 Համարիմ՝ թէ այնպէս լաւ իցէ ։ զայդ վասն վտանգին՝ որ ՚ի վերոյ կայ, բարւոք է մարդոյ թէ այնպէս իցէ ։

27 Կապեա՞ց ես ՚ի կին, մի՛ խնդրեր բեռ արձակել ։ արձակեա՞լ ես ՚ի կնոջէ, մի՛ խնդրեր կին ։

28 Այլ եթէ ամուսնանայցես՝ ո՛չ մեղաս ։ և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ո՛չ մեղաս, բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն ։ այլ ես խնայեմ ՚ի ձեզ ։

29 Կայց զայս ասեմ եղբարք՝ ժամանակս թևակից վանչվեցաւ՝ զի՛ չքթեղ ինչ լիցի ։

19 Քանզի որ՝ թլփատութիւնն ո՛չ ինչ է, և անթլփատութիւնն ո՛չ ինչ է ։ այլ Աստուծոյ պատուիրանքներուն պահպանութիւնն ։

20 Կայց ամեն մէկն՝ ո՛ր կոչումի մէջն որ կանչվեցաւ, թո՛ղ նորանո՛ւմ կենայ ։

21 Ծառայ կանչվեցար՝ թո՛ղ հոգըս մի՛ աներ ։ բայց թէ ոլ կարենաս ազատ էլ լինել՝ քեզ համար էնպէս էլ լաւ է ։

22 Վատճառն որ՝ ծառան որ Տէրովն կանչվածՔ է՝ նա Տէրի ազատն է ։ հենց էնպէս էլ ազատն որ, կանչվածՔ է՝ Քրիստոսի ծառայ է ։

23 (Ա՛նՔ) գնով գնվեցաք՝ մարդկանց ծառայ մի՛ լինիք ։

24 Ամեն մէկն ինչ կոչումի մէջն որ կանչվեցաւ՝ եղբարք, թո՛ղ նորանո՛ւմ կենայ Աստուծոյ առաջին ։

25 Կայց կուսանքներին համար մին հրաման չունիմ Տէրից ։ մի՛այն Թէ խրատ եմ ասիս՝ ինչպէս մինն որ Տէրից ողորմութիւն գըտաւ՝ հաւատարիմ լինելոյ ։

26 Ես համարումմ՝ Թէ էնպէս լաւ է ։ բայց վտանգին համար՝ որ մօտիկ է, լաւ է մարդոյն՝ որ էնպէս լինի ։

27 Կնկան հետ որ կապվածՔ ես՝ մի՛ հետևիր արձակվելոյ ։ կնկանիցն որ արձակվածՔ ես՝ կին մի՛ ուզեր ։

28 Կայց Թէ որ պսակվիս՝ չըմեղանչեցիր ։ և Թէ որ մին կոյս պըսակվի չըմեղանչեց ։ միայն Թէ էնպէսներն մարմնոյ նեղութիւն կունենան ։ բայց ես խնայումմ ձեզ ։

29 Կայց էս եմ ասում՝ եղբարք՝

(18) Գործ · ԻԶ · 1 · ՚ի · 19 · 24 · 28 ։ Գաղ · ե · 2 ։ (19) Գաղ · ե · 6 ։ գ · 15 ։ (20) Ելհ · ԻԶ · 14 ։ ա Ելհ · ը · 3 · 24 ։ (21) Ելհ · ա · 36 · Ղեւտ · գ · 18 · 22 ։ Փիլմ · 16 ։ (22) ա Կորնթ · Բ · 21 ։ Գաղ · ե · 13 ։ Կթէս · գ · 6 ։ ա Պետ · բ · 16 ։ (23) ա Կորնթ · գ · 20 ։ ա Պետ · ա · 18, 19 ։ Ելհ · ԻԶ · 43 ։ (24) Ա՛նք 30 ։ (25) Ա՛ր · 6 · 10 · Աստ · 10 ։ ը Կորնթ · գ · 8, 10 ։ (26) ա Տիմ · ե · 16 ։ (27) ա Կորնթ · է · 2 ։ ա Տիմ · ը · 12 ։ (28) Ա՛ր · 1 · 8 ։

Digitized by Google

թէ ժամանակս կարճեալ է այսուհետեւ . զի որ ունիցին կանայս՝ որպէս թէ չունիցին ։

30 Եւ որ լացեն՝ որպէս թէ ո՛չ լացեն . և որ խնդանն՝ որպէս թէ չխնդացեն . և որ գնեն՝ որպէս թէ չունիցին ։

31 Եւ որ վարեն զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն . զի անցեալ է վայելչութիւն աշխարհիս այսորիկ ։

32 Կամիմ զձեզ անհոգս լինել . զի որ անկինն է՝ հոգայ Տեառնն , թէ ո՛րպէս հաճոյ լիցի Տեառն ։

33 Եւ որ կանամբին է , հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւրում ։

34 Եւ ահա մեկնեցան ի միմեանց առնականինն և կոյսն . զի կոյսն հոգայ զՏեառն՝ զի իցէ սուրբ հոգւով և մարմնով , և առնականինն հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի առն իւրում ։

35 Կամիմ զայս վասն ձերոյ օգտի ասեմ . ո՛չ եղեմ խեղդ ինչ արկանել ձեզ , այլ վասն պարկեշտութեան՝ և հպատակութեան Տեառն առանց զբաղանաց ։

36 Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն կուսին իւրոյ՝ եղիցի եթէ եւս անցեալ քան չափ , և այնպէս ինչ պարտ իցէ լինել . զոր կամեսցի արասցէ , ո՛չ մեղանչէ՝ ամուսնասցին ։

37 Իսկ որ հաստատեալ է ի սրտի թէ ժամանակս կարճ է արանից եւս[29] , որ ներանիք որ կին ունին՝ ինչպէս թէ չունենային ։

30 Եւ ներանիք՝ որ լաց են լինեսցեն , ինչպէս թէ լաց չըլինէին . և ներանիք՝ որ ուրախանասցին , ինչպէս թէ չուրախանային . և ներանիք որ ծախեսցեն առնուսցին , ինչպէս թէ չունենային ։

31 Եւ ներանիք՝ որ էս աշխարհքս վայելեսցին , ինչպէս թէ չըվայելէին[30] . ինչու որ՝ էս աշխարհքիս գեղեցկութիւնն անցել է[31] ։

32 Կայց կամենամ որ դուք հոգսի մէջ չըլինիք . պատճառն որ նա՝ որ կին չունի՝ Տէրի բաներին համար է հոգս անում , թէ ինչպէս հաճոյ լինի Տէրին[32] ։

33 Եւ նա՝ որ կին ունի , աշխարհքի բաներին համար է հոգս անում , թէ ինչպէս հաճոյ լինի իւրան կնկանն ։

34 Եւ էապէս էլ իրարից ջոկված են պակկած կինն և կոյսն . ինչու որ՝ կոյսն Տէրի բաներին համար է հոգս անում՝ որ սուրբ լինի մարմնով և հոգով[33] , և պակկած կինն աշխարհքի կողմանէ հոգս է անում՝ թէ ինչպէս հաճոյ լինի իւրան մարդոյն ։

35 Այդ թէ՝ էս (բանըս) ձեր շահի համար եմ ասում . և չէ թէ ձեր վըզբերին խեղդելոյ չուան եմ քցում . բայց պարկեշտութեան համար՝ և առանց զբաղմունքի Տէրին հետևելոյ համար ։

36 Ապա թէ որ մինն ամօթ համարէ իւրան կուսին համար՝ որ սուրբի չափից դուրս է ելել , և էնպէսի բան պէտք է լինիլ . նա ինչպէս որ կամենում թող անէ . չէ մեղանչում՝ թո՛ղ պսակվի ։

37 Կայց նա՝ որ իրան սրտի մէջ

(29) Հռով . ժգ . 11 : ա Պետ . գ . 7 : բ Պետ . ը . 8 ; 9 : (30) ա Կորնթ . բ . 15 : (31) Սալմ . լբ . 6 : Յակ . ա . 10 : գ . 15 : ա Պետ . ա . 24 : գ . 7 : ա Յովհ . բ . 17 : (32) ա Յհ . ե . 5 : (33) Ղևտ . ժ . 10 , Խոյլն ։

Digitized by Google

ակ իւրում , և վասնզ ինչ ո՛չ իցե նմա , իշխանութիւն ունի ՚ի վերայ կամաց իւրոց . և զայն ընտրեաց ՚ի սրտի իւրում՝ պահել զկոյս իւր , բարւոք առնէ ։

38 Եւ որ ամուսնացուցանէ զկոյս իւր՝ բարւոք առնէ . և որ ո՛չ ամուսնացուցանէ՝ լաւ և առնէ ։

39 Կին կապեալ է՝ ցորքան ժամանակս կենդանի է այր նորա . ապա եթէ ննջեցէ այր նորա , ազատ է՝ ում կամիցի ամուսնանալ . այլ միայն Տերամբ ։

40 Նայց երանելի ևս է՝ թէ այնպէս կացցէ քան իմում խրատու . ես այսպէս համարիմ , եթէ և կիս ինչ Հոգի Աստուծոյ ։

Հատասաեալ է՝ և մին վասնզ ջնկայ նորա համար , էլ իրան կամքին վերայ իշխանութիւն ունի . և էն ընտրեց իրան սրտումն՝ որ իրան կոյսըն պահէ , նա լաւ է անում ։

38 Եւ նա՝ որ իրան կոյսըն մարդոյ է տալիս , լաւ է անում[34] , և նա՝ որ մարդոյ չի տալիս , էլ աւելի լաւ է անում ։

39 Կինն կապված է՝ քանի ժամանակ որ նորա մարդն կենդանի է . բայց թէ որ նորա մարդն ննջէ , ապա ազատ է պսակվելով ում հետ որ կամենայ[35] , միայն թէ Տէրով[36] ։

40 Նայց էլ աւելի երանելի է . թէ որ էնպէս կենայ՝ իմ տըվածի խրատին պէս[37] . (բայց) ես էսպէս եմ համարում , թէ ինձանում էլ Աստուծոյ Հոգին կայ[38] ։

Գլ · Ը

1 Կռչի զուհվածն պետք չէ որ ուտենք . 8 , 9 Ուրիշանեանցն պղտիզ կենան՝ որ իրանց ազատութիւնն գայթակղութիւն չլինի ամեն եղբայրներին համար , 11 Նա մեր գիտութիւնովը ամեն եղբայրն չեփոքի՝ որ նորա համար Քրիստոս մեռաւ ։

1 Բայց կըռչքերի մասինը[1] համար գիտումնենք , որ ամէնքս գիտութիւն ունինք[2] . գիտութիւնն հպարտացնում է , բայց սէրն շինում[3] ։

2 Եվ որ մինն մտքի մէջ դնէ թէ բան գիտէ , նա դեռ բան չըգիտաց՝ ինչպէս որ պէտք է գիտել[4] ։

3 Նայց նա՝ որ Աստուծոյն սիրում , նա ճանաչված է նորանից[5] ։

4 Ուրեմն զուհված կերակուրնեըրին համար գիտումնենք որ կըռչքերն ոչ ինչ են աշխարհքումն . պատճառն որ՝ իսկի մին Աստուած չըկայ էն մըրնիցն զոկ[7] (սուտ) ։

1 Այլ վասն զոհից կռոցն գիտեմք՝ եթէ ամենեքին գիտութիւն ունիմք . գիտութիւն հպարտացուցանէ , այլ սէր շինէ ։

2 Եթէ ոք կամիցի գիտել ինչ , չևևս գիտաց՝ օրպէս արժանն էր գիտել ։

3 Նայց որ սիրէ զԱստուած , նա է տեղեկացեալ ՚ի նմանէ ։

4 Այլ վասն կերակրոցն զոհելոց՝ գիտեմք եթէ ո՛չինչ իսկ կուռքդ են յաշխարհի . զի չկայ ոք Աստուածդ բայց ՚ի միոյն ։

(34) Եբր . ժգ . 4 ։ (35) Հռովմ . է . 2 ։ (36) ա Կորնթ . գ . 14 ։ (37) Կէր . 25 ։ (38) ա Յովհ . գ . 8 ։ (1) Գործ . ժԲ . 20 . 29 ։ ա Կորնթ . ժ . 19 ։ (2) Հռովմ . ժգ . 14 . 23 ։ (3) Հռովմ . ժգ . 3 . 10 ։ (4) ա Կորնթ . ժգ . 8 , 9 . 12 ։ Գաղ . գ . 3 ։ ա Տիմ . գ . 4 ։ (5) Նէմ . ԼԳ . 13 . 17 ։ Նահ . ա . 7 ։ Մաղաք . 4 . 23 ։ Գաղ . գ . 9 ։ բ Տիմ . բ . 19 ։ (6) Նաում . խա . 24 ։ ա Կորնթ . ժ . 19 ։ (7) բ Օրին . դ . 39 ։ գ . 4 ։ Նաում . խգ . 8 ։ Մաղաք . ժբ . 29 ։ Վայր . 6 ։ Նէհ . դ . 6 ։ ա Տիմ . բ . 5 ։

Digitized by Google

5 Ոչ թէպէտ և իցեն անուանեալ աստուածք՝ եթէ յերկինս և եթէ յերկրի · որպէս և են աստուածք բազումք՝ և տէարք բազումք։
6 Այլ մեզ մի է Աստուած Հայր՝ յորմէ ամենայն, և մեք ի նա · և մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն, և մեք նովաւ ։

7 Այլ ո՛չ յամենեսին գիտութիւն է · ոմանք առ խղճի մտաց մինչև ցայժմ զկուռսն իբրև զզոհեալ ուտեն · և խիղճ մտացն նոցա՝ քանզի ակար է, պղծի ։

8 Այլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ ո՛չ կացուցանէ · ո՛չ եթէ չուտեմք՝ պակասիմք ինչ, և ո՛չ եթէ ուտեմք՝ առաւելեմք ինչ ։

9 Նայց զգոյշ լերուք, գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթագղութիւն լինիցի ակարացն ։

10 Եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ ի մեհենի, ոչ ապա խիղճ մտաց նորա՝ որ ակարութեամբ զգածեալ է՝ անդրէն չինիցի ուտել զզոհեալն ։

11 Եւ կորնչիցի ակար եղբայրն ի քում գիտութեանն, վասն որոյ Քրիստոս մեռաւ ։
12 Այս այնպէս յանցուցեալ յեղբարս, և զխիղճ մտաց ակարացն զայրացուցեալ, ի Քրիստոս մեղանչէ ։
13 Վասն որոյ՝ եթէ կերակուր

5 Որ թէ և կոչի՝ որ Աստուածներ անուանվին՝ թէ երկնքումն և թէ երկրիս վերայ · ինչպէս որ շատ աստուածներ կան և շատ տէրեր[9] ։
6 Նայց մեզ մին Աստուած ունինք՝ Հայրն[9], որ նոյանից ամէն բան է, և մենք նորա համար[10] · և մին Տէր Յիսուս Քրիստոս[11]՝ որ նորանով է ամէն բան, և մենք նորանով[12] ։

7 Այսպէս թէ ամէնքն գիտութիւն չունին · ինչու որ՝ մին քանիսն մինչև հիմիկ կրոքի բանըն զոհված բանի պէս խղճմտանքով են ուտում[13], և նորանց խղճմտանքն՝ որ սկար է, պղծվում[14] ։
8 Նայց կերակուրն էն չէ՝ որ մեզ ընդունելի է անում Աստուծոյ առաջին[15] · որ եթէ չուտենք՝ մեն բանով չենք պակսվիլ, և եթէ ուտենք՝ մին բանով չենք աւելանալ ։
9 Այսպէս թէ զգոյշ կացէք՝ որ էդ ձեր ազատութիւնդ[16] գայթակղութիւն չըլինի տըկարներին համար[17] ։
10 Ինչ որ մինն քեզ՝ որ էդ գիտութիւնդ ունիս՝ կրոքի տան մէջ տեսնէ տեղան նստած, չէ որ նորա խղճմտանքն՝ որ տըկարութեանով բռնըված է՝ մինել կրոքովի որ զոհված բանըն ուտէ[18] ։
11 Եւ էն տկար եղբայրն կըկորչի քո գիտութենովդ, էն՝ որ նորա համար Քրիստոս մեռաւ[19] ։
12 Եւ էսպէս եղբարներին դէմ մեղանչելով, և տկարների խղճմտանքըն դրդելով՝ Քրիստոսին դէմ մեղք կը գործում[20] ։
13 Ուրեմն՝ որ թէ որ կերակուր

(8) Ելից. ժ. 34 ։ (9) Սաղ. բ. 10 ։ Երէմ. գ. 6 ։ (10) Գործ. ժէ. 28. Հռով. ժա. 36 ։ (11) Ելից. ժգ. 13 ։ Գործ. բ. 36 ։ ա Կորնթ. ժբ. 3 ։ Երէմ. գ. 5 ։ Փիլիպ. բ. 11 ։ (12) Ելից. ա. 3 ։ Սաղ. ա. 6 ։ Նէեր. ա. 3 ։ (13) ա Կորնթ. ժ. 28, 29 ։ (14) Հռով. ժգ. 14. 23 ։ (15) Հռով. ժգ. 17 ։ (16) Գաղ. ե. 13 ։ (17) Հռով. ժգ. 13. 21 ։ (18) ա Կորնթ. ժ. 28. 32 ։ (19) Հռով. ժգ. 15. 21 ։ (20) Մատթ. ժե. 46. 45 ։

Digitized by Google

գայթագղեցուցանէ զեղբայրն իմ , ոչ կերայց միս յաւիտեան , զի մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից ։

իմ եղբօրըս գայթակղացնուսի , ես յաւիտեան միս չեմ ուտիլ , որ իմ եղբօրըս չգայթակղացնեմ[31] ։

ԿԻ · Թ

1 Պօղոս իրան ազատութիւնն ցոյց կըտայ , 7 Նա մին լաւ վկայութիւն տալուցն եաւ , 14 Պատուէր է տալիս՝ որ Քրիստոսի պաշտօնեանքն Ընտաքանչքն տպրին Տէրի Հրամանա- ցին , 15 Ասյց նա ինքն սրանցից խոկի մինըն էլ չգրաւեցուց · 18 Որ մինն լաւ թէ իրան համար մին բան առնլ է , 23 Նա թէ փառք բաների մէջ մըրկին գայթակղութիւն առնլ է ։ 24 Քրիստոնեանէրին պէտք է որ Քրիստոսի Ընտաքանի համար ասպարեզի (դիպոնի) մէջ վազելոյ պես ջանք անեն ։

1 Ա՞չ ազատ եմ , ոչ ապաքէն առաքեալ եմ , ոչ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս աչօք իմովք տեսի , ոչ ապաքէն գործ իմ դուք էք ի Տէր ։

2 Թէպէտ և այլոց չիցեմ առաքեալ , այլ դէպ ձեզ եմ . զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք էք ի Տէր ։

3 Իմ պատասխանի՛ ուր զիս հարցանիցեն , այս է ։

4 Ա՞յրէթ ոչ ունիցիմք իշխանութիւն ուտել և ըմպել ։

5 Ա՞յրէթ ոչ ունիցիմք իշխանութիւն զքոյր կանայս շրջեցուցանել ընդ մեզ . որպէս և այլ առաքեալքն , և եղբարքն Տեառն , և Կեփաս ։

6 Եթէ միայն ես և Յաւնաբաս ոչ ունիցիմք իշխանութիւն չդործել զայս ։

7 Ո՞ր երբէք զինուորիցի իւրովք թոշակօք . ո՞ր տնկիցէ այգի՛ և ի պտղոյ նորա ոչ ուտիցէ . ո՞ր արածիցէ խաշն՝ և ի կաթից

1 Ազ որ ազատ եմ , չէ՞ որ առաքեալ եմ[1] , չէ՞ որ մեր Տէր Յիսուսին Քրիստոսին իմ աչքովս տեսի[2] , չէ՞ որ դուք իմ գործս էք Տէրով[3] ։

2 Թէ և ուրիշներուն համար առաքեալ չըլլինիմ , բայց դէպի ձեզ եմ . ինչու որ իմ առաքելութեան կնիքն (ջօհրն) դուք էք Տէրով[4] ։

3 Որոնք որ ինձ հարցնեն , իմ պատասխանս էս է ։

4 Ա՞յրէթ (մենք) իշխանութիւն չունի՞նք ուտելոյ և խմելոյ՞ ։

5 Ա՞յրէթ իշխանութիւն չունի՞նք քրովորներ՝ կանայք մանածելոյ մեզ հետ , ինչպէս որ ուրիշ առաքեալներն և Տէրի եղբարքն էլ[5] , և Կեփասն էլ[7] ։

6 Ա՞յրէթ միևնակ ես և Յաւնաբաս իշխանութիւն չունինք որ բան չըգործենք[8] ։

7 Ի՞նկի ով է որ հենց ի՞ւան պատերազմ զինուորութիւն անէ[9] . ո՞վ է որ այգի (քաղ) անկէ՝ և նորա պտղէն չուտէ[10] . ո՞վ է որ հօտ

(31) Հռով . ժդ . 21 ։ ա Կորնթ . ժա . 29 ։ (1) Գործ . թ . 15 ։ ժգ . 2 ։ իգ . 17 ։ բ Կորնթ . ժբ . 13 ։ Գաղ . բ . 7 , 8 ։ ա Տիմ . բ . 7 ։ բ Տիմ . ա . 11 ։ (2) Գործ . թ . 3 . 17 ։ ժբ . 9 ։ իբ . 14 . 18 ։ իգ . 11 ։ ա Կորնթ . ժե . 8 ։ (3) ա Կորնթ . գ . 6 ։ գ . 15 ։ (4) բ Կորնթ . գ . 2 ։ ժբ . 12 ։ (5) Ա՛ծր . 18 ։ ա Թես . բ . 7 ։ բ Թես . գ . 9 ։ (6) Մատթ . ժգ . 55 ։ Մարկ . զ . 3 ։ Ղուկ . զ . 14 ։ Գաղ . ա . 19 ։ (7) Մատթ . ը . 14 ։ (8) բ Թես . գ . 8 , 9 ։ (9) բ Կորնթ . ժ . 4 ։ ա Տիմ . ա . 18 ։ զ . 12 ։ բ Տիմ . բ . 3 ։ գ . 7 ։ (10) բ Օրին . ք . 6 ։ Ես . ե . 18 ։ ա Կորնթ . գ . 6 , 7 , 8 ։

Digitized by Google

նէ խաչինն ոչ ուսիցէ ։

8 Այիթէ ըստ մարդկութեանն խօսիցիմ զայս . կամ թէ և օրէնքըն զոյն ոչ ասիցեն ։

9 Ցի Այավէսի իակ յօրէնան գըրեալ է , Այ կապեացես զցուուկ եզինն կալուսոյ . միթէ զեզինց ինչ փոյթ էր Աստուծոյ ։

10 Այ ապաքէն վասն մեր ասէ . քանզի վասն մեր գրեցաւ . զի յուսով պարտի , որ սերմանէն՝ սերմանել . և որ կասուն՝ յուսով վասիլել ։

11 Եթէ մեք ի ձեզ զՀոգևաորն սերմանեցաք՝ մեծ իւնչ է , եթէ ի ձէնջ զմարմնաւորսդ ընձիցեմք ։

12 Եթէ պյլք ձերով իշխանութեամբդ վայելեն , ոչ աւաւել և մեք . այլ ոչ ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս . քայց ամենայնի համբերեմք . զի մի՛ խափան ինչ լինիցիմք աւետարանին Քրիստոսի ։

13 Այչ գիտէք եթէ որ ի սաճարին գործեն , ի սաճարէ անտի ուտեն . և որ սեղանոյն պաշտօնեալք են , ի սեղանոյ անտի վասիլեն ։

14 Նոյնպէս և Տէր հրամայեաց , որոց զաւետարանն աւետարանեն , յաւետարանէ անտի կեալ ։

15 Այայց ես և ոչ զմի ինչ յայցեանէ արկի ի գործ , և ոչ գրեցի զայդ՝ զի ինձ այնպէս ինչ լինիցի . (սխալ) արածացնէ՝ և չառի կթիւնից չուսաէ[11] ։

8 Այիթէ ես բանըս մարդոյ կերպով եմ ասում , կամ չէ օրէնքն էլ էս բանըս ասում ։

9 Ընց Այ՝ օսէսի օրէնքում գըրված է՝ թէ կալի մէջ աշխատօղ եզան դունչըն մի՛ կապիր[12] . միթէ Աստուած եզներուն համար էր հոգս անում ,

10 Այէ որ մեզ համար է ասում . պատճառն որ՝ մեզ համար գրվեցաւ , որ նա որ ցանում է , պէտք է յուսով ցանել . և նա՝ որ կոսում է , յուսով վայելել[13] ։

11 Այե որ մենք ձեզանում հոգևորներըն սերմանիք՝ էլ մեծ բան է՝ որ ձեզանից մարմնաւորներըն վնձենք[14] ։

12 Այե որ ուրիշներն էդ ձեզ վերայ իշխանութիւնըն կը վայելեն , էլ աւելի ինչո՞ւ մենք չէ . մեկայն թէ մենք էս իշխանութիւնըս չըբանացրինք[15] . քայց ամեն բանի համբերում ենք , որ խոչ խոչտանում չըդնենք վ՛րիստոսի աւետարանին[16] ։

13 Այէ՞ք գիտում թէ նորանք՝ որ սաճարումն գործումն են , էն սաճարիցն են ուտում . և նորանք՝ որ սեղանի պաշտօնեաներ են , էն սեղանիցն են վայելում[17] ։

14 Ինչպէս էլ Տէրն հրամայեց աւետաւ[18] , որ նորանք որ աւետարանըն քարոզումն են , էն աւետարանիցըն ապրին[19] ։

15 Այայց ես սրանցից խոչ մէկըն էլ չըբանացրի . և հէ բանըդ չըգրեցի նրա համար որ՝ ինձ էլ էդ

(11) Ղեվ . քա . 15 : ա Պետր . ե . 2 : (12) բ Օրին . քե . 4 : ա Տիմ . ե . 18 : (13) բ Տիմ . բ . 6 : (14) Հռով . ժե . 27 : Գաղ . գ . 6 : (15) Գործ . ի . 33 : Ա Կոր . 15 . 16 : բ Կորնթ . ժա . 7 . 9 : ժբ . 13 : ա Թես . բ . 7 : (16) բ Կորնթ . ժա . 12 : (17) Ղևտ . գ . 16 . 26 : ե . 6 , Նայե՛ք Գաղատ . ե . 9 , 10 : ժբ . 8—30 : բ Օրին . ժ . 9 : ժբ . 1 : (18) Մատթ . ժ . 10 : Ղուկ . ժ . 7 : (19) Գաղ . գ . 6 : ա Տիմ . ե . 17 :

Digitized by Google

լաւ է ինձ մանաւանդ մեռանիլ , և ոչ զի զպարծանն իմ ոք ընդունայն Համարիցի :

16 Օ՛ի եթէ աւետարանեմ , ոչ ինչ ևս ինձ պարծանք , քանզի Հարկ ՚ի վերայ կայ . քայց վայ է ինձ , եթէ ոչ աւետարանեմ :

17 Եթէ կամաւ զայն առնեմ , վարձք են ինձ . և եթէ ակամայ՝ տնտեսութիւն յանձն է ինձ :

18 Ե՛ւ արդ՝ զինչ վարձք իցեն ինձ , եթէ յաւետարանելն Ջրի տաց զաւետարանն , զի մի՛ զիղծիցիմ ինչ իշխանութեամբս իմով յաւետարանի անդ :

19 Ո՛ւանզի ազատ էի յամենեցունց՝ և ամենեցուն զանձն ՚ի ծառայութեան կացուցի . զի զբազումս շահեցայց :

20 Եղէ ընդ Հրեայն իբրև ըզՀրեայ , զի զՀրեայն շահեցայց :

21 Եղէ ընդ օրինօք իբրև զանօրինսիկ՝ որ ընդ օրինօքն էին . իբր ոչ եթէ ընդ օրինօքն էի , այլ զի որ ընդ օրինօքն Ք֊ին՝ և զնոսա շահեցայց ։ ընդ անօրէնս եղէ իբրև զանօրէն . իբր ոչ եթէ անօրէն ինչ էի Ո՛ստուծոյ , այլ ընդ օրինօք Ո՛Հրիստոսի . զի շահեցայց զանօրէնսն :

22 Եղէ ընդ ակարս իբրև զակար՝ զի զակարսն շահեցայց . ընդ ամենայնի ամենայն եղէ , զի թերևս ապրեցուցից զոմանս :

պէտի բան լինի[20] . Հլ աւելի լաւ է ինձ՝ որ մեռանիմ , քանեթէ՝ որ մինչեն իմ պարծանքըս ունայն Համարիցի[21] :

16 Պատճառն որ՝ եթէ որ աւետարանըն քարոզեմ , էն պարծանք չէ ինձ Համար . ինչու որ՝ էն Հարկ է ինձ վերայ[22] . քայց վայ է ինձ՝ եթէ որ չաւետարանեմ :

17 Եթէ որ յօժար կամքով ըն ա֊նեմ , վարձ կըլինի ինձ[23] . և եթէ որ ակամայ (անեմ)՝ էլ անտնտեսութիւնն յանձնուած է ինձ[24] :

18 Ո՛պա ես ինչ վարձք ունիմ , էն ոյ՝ աւետարանելոյ ժամանակին Ջրի (ճաշիս) տալ աւետարանըն[25] , որ իմ իշխանութիւնըս վատ չըգործեցնեմ՝ որ էն աւետարանուածն է[26] :

19 Պատճառն որ՝ ամէն (մարդուց) ազատ էի[27] , և իմ անձըս ամէնուն ծառայ արի[28] , որ շատ մարդիկանց շահեմ[29] :

20 Հրեաներուն Հետ Հրեայի պէս էլայ , որ Հրեաներըն շահեմ[30] :

21 Օրէնքին ներքև լինողներուն Հետ նորանց պէս էլայ , որ օրէնքի ներքևն չէին . իբր թէ չէ որ ես օրէնքի ներքևն էի , քայց որ նորանց Հետ շահեմ՝ որ օրէնքի ներքևն են . անօրէններուն Հետ անօրէնի պէս էլայ[31] . իբր չէ թէ ես Ո՛ստուծոյ առաջին մին անօրէնն էի , քայց Ո՛Հրիստոսի օրէնքի ներքևն[32] , որ անօրէններուն շահեմ[33] :

22 Տկարներուն Հետ տկարի պէս էլայ[34] որ տկարներուն շահեմ . ամէնուն Հետ ամէն քան էլայ[35] , որ լինի թէ մին քանիան ապրեցնեմ[36] :

(20) Ա՛իր . 12 : Ղուկ . ԺԸ . 8 : Բ . 3Ե : ա Կորնթ . գ . 12 : ա Թես . բ . 9 : բ Թես . գ . 8 : (21) բ Կորնթ . ժա . 10 : (22) Ընդհ . ա . 14 : (23) ա Կորնթ . գ . 8 . 18 : (24) ա Կորնթ . գ . 1 : Կող . բ . 7 : Փիլիպ . ա . 16 : Կող . ա . 25 : (25) ա Կորնթ . Ժ . 33 : բ Կորնթ . դ . 5 : Ժա . 7 : (26) ա Կորնթ . է . 31 : (27) Ա՛իր . 1 : (28) Գաղ . ե . 13 : (30) Ա՛ռաքհ . ԺԸ . 15 : ա Պետր . գ . 1 : (30) Գաղ . Ժգ . 3 : ԺԸ . 18 : Բ . 23 , Եսայի : (31) Ընդհ . բ . 12 . 14 : Կող . գ . 2 : (32) ա Կորնթ . ե . 22 . (33) Ընդհ . ԺԵ . 1 : բ Կորնթ . Ժա . 29 : (35) ա Կորնթ . Ժ . 32 : (35) Ընդհ . Ժա . 14 : ա Կորնթ . ե . 18 :

Digitized by Google

23 Ոչ այս ամենայն առնեմ վասն աւետարանին, զի կցորդ եղեց ըստմա։

24 Ոչ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ընթանան, ընդհանալ ամենքին ընթանան. բայց մի ոք առնու զպաղատութիւնն. այնպէս ընթացարո՛ք զի հասանիցէք։

25 Ամենայն՝ որ պատերազմի, ամենայնի. ժուժկալ լինի. նորա զի զերծանելոյ պսակն առնուցուն՝ և մեք զանեղծութեան։

26 Արդ՝ ես իսկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յանորոշութիւն. այնպէս մռճիմ, որպէս ոչ թէ զհոդմըս ինչ կոծելով։

27 Այլ ճնշեմ զմարմինս իմ և ծառայեցուցանեմ. զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ։

23 Եւ ամէն բանիերքս ասեմ բանին համար եմ անում, որ բաժին ունենամ նորա հետ։

24 Ձէք գիտում թէ նորանք՝ որ ասպարէզին (հիպոդրոմ) մէջն վազումն, վազելով ամէնքն են վազում. բայց միևն է՝ որ յաղթութեան պըսակըն առնում. դուք էնպէս վազեցէք՝ որ հասնիք[36]։

25 Ամէն՝ ով որ պատերազմ է անում, ամէն բանից ժուժկալ է կենում[37]. նորանք՝ որ մին ապականելի պսակ առնեն, և մենք՝ էն որ չէ ապականվիլ[38]։

26 Ուրեմն հենց ես էնպէս եմ վազում, չէ թէ ինչպես անորևայի բանի համար[39]. էնպէս եմ կըռվում, չէ թէ ինչպես քամին ծեծկելով։

27 Հայց իմ մարմինըս ներքև եմ քցում[40], և ծառայացնում[41], որ չըլինի թէ ես՝ որ ուրիշներին քարոզեցի, ինքս անպիտան գտնըվիմ[42]։

ԳԼ. Ժ

1 Ըրեաներին հետ բաներըն՝ իրանց, 6 Ու մեզ օրինակներ էին լինում, 7 Ու նորանց տարած պատիժներն էլ, 11 Օրինակի համար էր նորանց. բայց մեզ խրատի համար գըրվեցաւ։ 14 Պիտք է կռապաշտութենից փախչել. 21 Ընդ կարօղ Տէրի սեղանին և դևերի սեղանին վայելել, 24 Ու խղճմտանքի ՚ընտրութեան բաների մէջ չէ՛ինի որ մեր եղբայրներին գայթակղութիւն տանք։

1 Ոչ կամիմ եթէ տգիտաք ի ցեք եղբարք, զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին. և ամենեքին ընդ ծովն անցին։

2 Եւ ամենեքին ՚ի Այ՝ովսէս մկրտեցան յամպն և ՚ի ծովն։

1 Ձէմ կամենում եղբայրք՝ որ չըգիտենաք՝ թէ մեր հարքն ամենքըն էլ ամպի տակն էին[1]. և ամէնքն ծովի միջովն անցկացան[2]։

2 Եւ ամէնքն Այ՝օսէսի ձեռքն մկրտվեցան՝ էն ամպի և ծովի միջըն։

(36) Գաղ. բ. 2։ ե. 7։ փիլիպ. բ. 16։ գ. 14։ բ Տիմ. գ. 7։ Եբր. ժբ. 1։ (37) Եփես. գ. 12։ ա Տիմ. գ. 13։ բ Տիմ. բ. 5։ գ. 7։ (38) բ Տիմ. գ. 8։ Յակ. ա. 12։ ա Պետր. ա. 4։ ե. 4։ Յայտ. բ. 10։ գ. 11։ (39) բ Տիմ. բ. 5։ (40) Հռովմ. ը. 13։ Կող. գ. 5։ (41) Հռովմ. գ. 16, 19։ (42) Ներմ. ե. 36։ բ Կորնթ. ժգ. 5, 6։ (1) Ելք. ժգ. 21. Նեհ. 34։ Թուոց. թ. 16։ ժգ. 14։ բ Օրին. ա. 33։ Նեհ. բ. 12, 19։ Ողմ. հը. 14։ ճե. 39։ (2) Ելք. ժգ. 23։ Թուոց. կգ. 3։ Յես. գ. 33։ Ողմ. հը. 19։

Digitized by Google

3 Եւ ամենեքին զնոյն հոգեւոր
կերակուրն կերան :
4 Եւ ամենեքին զնոյն հոգեւոր
ըմպելին արբին , զի ըմպէին ի հո-
գեւոր վիմէն՝ որ երթայր զՀետ նո-
ցա . և վէմն էր ինքն Քրիստոս :

5 Այլ ոչ եթէ ընդ բազումս ի
նոցանէ հաճեցաւ Աստուած . քան-
զի տապաստ անկան յանապատի
անդ :
6 Եւ այն օրինակաւ լինէր վասն
մեր . զի մի՛ լիցուք ցանկացօղք
չարեաց , որպէս և նոքայն ցանկա-
ցան :
7 Եւ մի՛ կռապաշտիչ լինիլ՝ որ-
պէս ոմանք ի նոցանէ , որպէս և
գրեալ է . Նստաւ ժողովուրդն ու-
տել և ըմպել՝ և յարեան ի խա-
ղալ :
8 Եւ մի՛ պոռնկեսցուք . որպէս
ոմանք ի նոցանէ պոռնկեցան , և
անկան ի միում աւուր քսան և
երիք հազարք :

9 Եւ մի՛ փորձեսցուք զՏէր . որ-
պէս ոմանք ի նոցանէ փորձեցին ,
և յօձից անտի սատակեցան :

10 Եւ մի՛ տրտնջեսցուք . որպէս
ոմանք ի նոցանէ տրտնջեցին , և
կորեան ի սատակչէ անտի :
11 Այլ այն ամենայն օրինակաւ
անցանէր ընդ նոսա . բայց գրեցաւ
վասն մերոյ խրատու , յորս վախ-
ճան յաւիտեանցն եհաս :

3 Եւ ամէնքն էլ էն հոգեւոր
կերակուրըն կերին[3] :
4 Եւ ամէնքն էլ էն հոգեւոր խը-
մելիքըն խմեցին[4] . ինչու որ՝ էն
հոգեւոր վէմից էին խմում՝ որ գը-
նում էր նորանց հետ . և էն վէմն
հենց ինքն Քրիստոս էր :
5 Բայց Աստուած նորանցից շա-
տերին չըհաւան կացաւ . ինչու որ՝
էն անապատի մէջն՝ գետինն ըրց-
ված փուված վէրըներն[5] :
6 Եւ էն էլաւ՝ որ մեզ օրինակ
լինի . որ չար բաներու ցանկացող
չըլինինք , ինչպես որ նորանք ցան-
կացան[6] :
7 Եւ կռապաշտ չըլինինք[7] ինչ-
պես որ նորանցից մին քանիան (ե-
լան) . ինչպես որ գրված է , թէ
Ժողովուրդն նստեց ուտէ ուտէ և
խմէ՝ և վերկացան որ խաղ անեն[8] :
8 Եւ պոռնկութիւն չանենք[9] ,
ինչպես որ նորանցից մին քանիան
պոռնկութիւն արին , և մին օրում
քսան և չորս հազար մարդ վէր ըն-
կան[10] :
9 Եւ Տէրըն չըփորձենք , ինչ-
պես որ նորանցից մին քանիան փոր-
ձեցին[11] , և էն օձերից սատակ-
վեցան[12] :
10 Եւ չըտրտնջենք , ինչպես որ
նորանցից մին քանիան տրտնջեցին[13] ,
և էն սատակօղի ձեռովն[14] կորան[15] :
11 Բայց էն ամէնն օրինակի հա-
մար էր նորանց վերայ անցնում . բայց
մեզ խրատի համար գրվե-
ցաւ[16] , որ ժամանակների վերջն
հասաւ մեզ[17] :

(3) Ել · ժզ · 15 · 35 : Նեհեմ · թ · 15 · 20 : Ասղ · հը · 24 : (4) Ել · ժէ · 6 : Թուոց · ք · 11 : Ասղ · հը · 15 : (5) Թուոց · ժգ · 29 · 32 · 35 : խզ · 64 , 65 : Ասղ · ճզ · 26 : Երբ · գ · 17 : Յուդ · 5 : (6) Թուոց · ժա · 4 · 33 , 34 : Ասղ · ճզ · 14 : (7) Ա Յոյն · 14 : (8) Ել · լբ · 6 : (9) ա Կորնթ · զ · 18 : Յայտ · բ · 14 : (10) Թուոց · խե · 1 · 9 : Ասղ · ճզ · 29 : (11) Ել · ժէ · 2 · 7 : Թուոց · խա · 5 : բ Օրին · զ · 16 : Ասղ · հը · 18 · 56 : զե · 9 : ճզ · 14 : (12) Թուոց · խա · 6 : (13) Ել · ժզ · 2 : ժէ · 2 : Թուոց · ժգ · 2 · 29 : ժզ · 41 : (14) Ել · ժբ · 23 : բ Թագ · իգ · 16 : ա Կորնթ · խ · 15 : (15) Թուոց · ժգ · 37 : ժզ · 49 : (16) Հռով · ժե · 4 : ա Կորնթ · բ · 10 : (17) ա Կորնթ · է · 29 : Փիլիպ · գ · 5 : Երբ · ժ · 25 · 37 : ա Յովհ · բ · 18 :

Digitized by Google

12 Ո՞չ յաւէտհեաւ որ համարիցի հաս-
տատուն կալ՝ զգոյշ լիցի , գուցէ
անկանիցի :

13 փորձութիւն ՚ի ձեր վերագոյ ոչ
է եկեալ բաց ՚ի մարդկանէ . զոյլ
հաւատարիմ է Ի՞ստուած՝ որ ոչ
արկցէ զձեզ ՚ի փորձութիւն առա-
ւել քան զկարր ձեր , այլ արասցէ
ընդ փորձութեանն և զելս՝ զի համ
բերել կարասջիք :

14 Վա՛ռ ոտից սիրելեաց իմ , փա-
խեարո՛ք ՚ի կուապաշտութենէ :
15 Իբրև ընդ իմաստունս խօսիմ .
ընարեցէք ձեզէն՝ զոր ասեմս :

16 Հաժակն օրհնութեան՝ զոր օրհ-
նեմք , ոչ ապաքէն հաղորդութիւն
է արեանն Ի՛րիստոսի . հացն՝ զոր
բեկանեմք , ոչ ապաքէն հաղորդու-
թիւն է մարմնոյն Ի՛րիստոսի :

17 Ո՞չ մի հաց՝ մի մարմին եմք
բազումքս . զի ամենեքին ՚ի միոջէ
հացէ անտի վայելեմք :

18 Տեսէք զԻսրայէլն ըստ մարմ-
նոյ . ոչ ապաքէն որ ուտեն ՚ի զո-
հիցն՝ հաղորդ են սեղանոյն :

19 Եւսկ ասդ զինչ ասեմ , թէ
զոհեալն իցէ ինչ . և կամ թէ կուռ-
քըն իսկ իցի՞ն ինչ :

20 Այլ զոր զոհեն հեթանոսք ,
դիւաց՝ և ոչ Ի՞ստուծոյ զոհեն . ո՛չ
կամիմ զձեզ հաղորդս դիւաց լի-
նել . քանզի ո՛չ կարէք զբաժակն

12 Ապրեցա՛ ասէ որ կամարէ՝ թէ
հաստատ է կանգնած , թէպէ ըն-
գոյշ լինի , որ վէր չընկնի[18] :

13 Ուրիշ փորձութիւն ձեզ վե-
րայ չէ եկել բայց միայն մարդկան-
ցից . բայց Ի՞ստուած հաւատարիմ
է[19] որ չի քցիլ ձեզ փորձութեան
մէջ ձեր կարօղութենից աւելի[20] ,
բայց են փորձութեան հետ դուրս
գալըն եղ կանէ՝ որ կարնաք համ
բերել[21] :

14 Սիրատեարը իմ սիրելիքս՝ փա-
խիքը կուապաշտութենից[22] :

15 Ինչպէս իմաստուններուն հետ
եմ խօսում[23] , դուք ինքզ գաան-
ցիք էն՝ որ ասում եմ :

16 Օրհնութեան բաժակն՝ (որ
օրհնում) որ օրհնում ենք , չէ՞ որ նա հա-
ղորդութիւն է Ի՛րիստոսի արիւ-
նին[24] . հացն՝ որ կարուսնենք , չէ՞ որ
նա հաղորդութիւն է Ի՛րիստոսի
մարմնին[25] :

17 Որովհետև մին հաց (է) , մենք
շատերս մին մարմին ենք[26] . ինչը-
որ՝ ամենքս էն մին հացիցն ենք
վայելում[27] :

18 Տեսէք Իսրայէլին[27] մարմնով
կողմանէ[28] . չէ՞ որ նորանք՝ որ մա-
սաղներիցն են ուտում , մասնակից
են սեղանին[29] :

19 Ի՞նչ ես ասում , միթէ զոհ-
ածն մին բան է , և կամ թէ կըռ-
քերն էլ մին բան են[30] :

20 Հայց էն , որ հեթանոսներն
մատաղ են անում , դեւերին են
մատաղ անում[31] , և ոչ թէ Ի՞ս-
տուծոյն . (ես) չեմ կամենում՝ որ

(18) Հռով. ժա . 20 : (19) ա Կորնթ . ա . 9 : (20) Կող. գլխ . 3 : բ Պետր . բ . 9 :
(21) Եբր . ի . 11 : (22) Ա Յհ . 7 : բ Կորնթ . գ . 17 : ա Գործ . ե . 21 : (23) ա
Կորնթ . բ . 1 : (24) Մատթ . իզ . 26 , 27 , 28 : (25) Գործ . բ . 42 . 46 : ա Կորնթ .
ժա . 23 , 24 : (26) Հռով. ժբ . 5 : ա Կորնթ . ժբ . 27 : (27) Հռով. գ . 12 :
Գաղ . գ . 16 : (28) Հռով. գ . 1 : բ . 3 . 5 : բ Կորնթ . ժա . 18 : (29) Ղևտ .
գ . 3 : 4 . 15 : (30) ա Կորնթ . բ . 4 : (31) Ղևտ . ժէ . 7 : բ Օրին . լբ . 17 : Սաղմ .
ճզ . 37 : Յեսու . բ . 29 :

Digitized by Google

Տեառն ըմպել՝ և զաւժակն դիւաց ։

[21 Եւ ո՛չ կարէք ՚ի սեղանոյ Տեառն վայելել՝ և ՚ի սեղանոյ դիւաց ։

22 Եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տեառն . միթէ զօրագո՞յնք իցեմք քան զնա . ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ո՛չ ամենայն ինչ օգտա է ։

23 Ամենայն ինչ ինձ մարթ է , այլ ո՛չ ամենայն ինչ շինէ ։

24 Ոչ ոք զանձին եւ եթէ խըղնդրիցէ՝ այլ և զընկերին ։

25 Ամենայն ինչ՝ որ ՚ի սպանդանոցի վաճառի , կերայք՝ և մի խըտրէք վասն խղճի մտաց ։՝

26 Զի Տեառն է երկիր լրիւ իւրով ։

27 Եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատացից՝ և կամիցիք երթալ . զամենայն ինչ՝ որ առաջի դնիցի , կերայք՝ և մի խարէք վասն խղճի մտաց ։

28 Ապա եթէ ոք ասասցէ ձեզ՝ թէ Զոհեալ է , մի ուտիցէք վասն նորա՝ որ գուշակն եղև , և վասն խղճի մտացն ։

29 Այլ զխղճմտացն ասեմ ո՛չ զիւրն , այլ զընկերին . իսկ ընդէր քննաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոյ խղճէն մտաց ։

30 Եթէ ես շնորհօք վայելեմ , ընդէր հայհոյիցիմ , վասն որոյ եան գոհանամ ։

դուք ՚դևերին մասնակից լինիք . պատճառն որ՝ չէք կարող Տէրի բաժակըն (ըսուրն) խմել[32] և դևերի բաժակըն էլ[33] ։

21 Եւ չէք կարող Տէրի սեղանէն վայելել և դևերի սեղանին էլ ։

22 Կամ թէ Տէրըն նախանձ չարժենք[34] . միթէ (մենք) նորանից աւելի զօրաւո՞ր ենք[35] . ամէն բան կարելի է ինձ . բայց ամէն բան օգուտ չէ ։

23 Ամէն բան կարելի է ինձ , բայց ամէն բան շինուածիւն չի տալիս[36] ։

24 Ոչ ոք իրան անձին բանին մէնակ հետևի , բայց նորան էլ որ ընկերինն է[37] ։

25 Ամէն ինչ բան՝ որ սպանդանոցումն (պատսպեռնում) ծախվում է , կերէք՝ և չը՛քննէք խըղճմտանքի պատճառովն[38] ։

26 Պատճառն որ՝ երկիրն Տէրին է իրան ամէն լիութեննովն[39] ։

27 Ահ որ անհաւատներից մինն կանչէ ձեզ՝ և դուք կամենաք գընալ , ամէն բան որ ձեր առաջին դնվի՝ կերէք , և չը՛քննէք խըղճմըտանքի պատճառովն[40] ։

28 Ապա թէ որ մինն առ ձեզ՝ թէ Այդ զոհված բան է , մի՛ ուտէք՝ նորա պատճառովն՝ որ իմացուած առաւ , և խըղճմտանքի պատճառովն[41] ։

29 Այլ խըղճմտանք եմ ասում ոչ թէ իրանըն , այլ ընկերինը . էլ իսկի ինչո՞ւ իմ ազատութիւնս պիտի դատվի ուրիշի խըղճմտանքից ։

30 Ահ որ ես շնորհակալութեննով վայելումեմ , ինչո՞ւ հայհոյվիմ էն բանի համար[42] որ ես նորա համար (Աստուածանից) գոհանում եմ[43] ։

(32) ա Կորնթ · չ · 15 , 16 ։ (33) ա Օրին · լբ · 38 · (34) ա Օրին · լբ · 21 ։ (35) Նահ · խբ · 14 ։ (36) ա Կորնթ · չ · 12 ։ (37) Փոխ · ժե · 1 , 2 ։ Պայր · 33 ։ ա Կորնթ · ժգ · 5 ։ փնլիպ · բ · ե · 21 · (38) ա Ցիմ · դ · ե ։ (39) Նախ · ժբ · 5 ։ բ Օրին · ժ · 14 ։ Պասմ · խգ · 1 ։ ե · 12 ։ Պայր · 28 ։ (40) Գ՚թես · ժ · 7 ։ (41) ա Կորնթ · չ · 10 , 12 ։ (42) Փոխ , ժգ · 16 ։ (43) Փոխ , ժգ · 6 ։ ա Ցիմ · գ · 5 , 6 ։

Digitized by Google

31 Եւ որ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ եթէ զինչ և առնիցէք, զա-
մենայն ինչ ի փառս Աստուծոյ ա-
րարէք։
32 Առանց գայթագղութիւն դնել-
լոյ Հրէից և Հեթանոսաց և Եկե-
ղեցւոյն Աստուծոյ։
33 Իւրաքանչիւր և ես ամենեւին ա-
մենայնից հաճոյ լինիմ. ո՛չ խնդրեմ
զանձին օգուտ, այլ զբազումաց՝ զի
ապրեսցին։

31 Ուրեմն թէ ուտէք՝ թէ խըմ-
էք՝ թէ ինչ գործ էլ որ անէք,
ամեն բան Աստուծոյ փառաց հա-
մար արէք[44]։
32 Առանց գայթակղութիւն տալոյ
Հրեաներին և Հեթանոսանե-
րին[45] և Աստուծոյ եկեղեցոյն[46]։
33 Ինչպէս որ ես էլ ամեն բանով
ամենուն հաճոյ եմ լինում[47]. իմ
անձիս օգուտը չեմ խնդրում,
բայց շատերինը՝ որ փրկվին[48]։

ԻԱ. ՀԱՒ

Ի գլուխ սկզբնաւորին խրատ ի տալն որ իրանց նկուղեցոյ մէջ ամեն մարդ պըսպըր ծածկած ապրիլ կամ մարդաբնութիւն չանել։ 5 Նա ամէն կին ևս իրաց գլխով ապրիլ կամ մարդաբնութիւն չանել։ 17 Նա տղամարդ որ իրանց պինառէ ժողովրդին ու-
րիշ գեղի լուսն՝ այլ գեղի վրայն դնացողին, 21 Այն էլ որ իրանց ընկերքացին ձեր ընկերքին ու ինչ ձեր հաճոյքն է։ 26 Ուրիշներու հաղորդութեան սերմնի առնուլն գտա-
տարած կերպին նպատակն տալոյ։

1 Հայմանեցք ինձ եղերա՛ք, որ-
պէս և ես Քրիստոսի։
2 Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ
զիս յիշէք. և որպէս աւանդեցի
ձեզ՝ զաւանդութիւնս ունիցիք։

3 Կամիմ զի գիտիցէք դուք. զի
քան առն ամենայնի գլուխ Քրիստոս
է, և գլուխ կնոջ այր, և գլուխ
Քրիստոսի Աստուած։

4 Ամենայն այր՝ յորժամ յաղօ-
թըս կայցէ՝ կամ մարգարէանայցէ
և զգլուխն ծածկեալ ունիցի, յա-
մօթ առնէ զգլուխն իւր։
5 Եւ ամենայն կին՝ յորժամ յա-
ղօթս կայցէ՝ կամ մարգարէանայցէ

1 Ինձ նմանուող եղէք, ինչպէս
որ ես էլ Քրիստոսի[1]։
2 Գովում ձեզ՝ որ իմ ամեն
բաներըս յիշում[2], և ինչպէս որ
պատուիրեցի ձեզ՝ են պատուիրանք-
ներըն պահում[3]։
3 Կամենում՝ որ դուք գիտե-
նաք, թէ ամեն մարդոյ գլուխն
Քրիստոս է[4], և կնոջն գլուխն
մարդն (է)[5], և Քրիստոսի գլու-
խըն՝ Աստուած[6]։
4 Ամեն մարդ՝ երբոր աղօթք ա-
նէ՝ կամ մարգարէանայ[7] և գլու-
խըն ծածկած ունենայ, ամօթ է
անոնց իրան գլուխները։
5 Եւ ամեն կին՝ երբոր աղօթք
անէ՝ կամ մարգարէանայ քաղ գլխ-

(44) Կոր. ա · 17 : ա Պետր. գ · 11 : (45) Հռոմ. ժգ · 13 : ա Կորնթ. ը · 13 · ժ Կորնթ. ա · 8 : (46) Գործ · ի · 28 : ա Կորնթ. ժա · 22 : ա Տիմ. գ · 5 : (47) Հռոմ. ժե · 2 : ա Կորնթ. ՚ՃԲ · 19 · 22 : (48) Ա Իւ · 24 : (1) ա Կորնթ. գ · 16 · Եփես. ե · 1 · Փիլիպ. գ · 17 : ա Թես. ա · 6 : բ Թես. գ · 9 : (2) ա Կորնթ. գ · 17 : (3) ա Կորնթ. է · 17 : բ Հռոմ. ը · 14 : գ · 8 : (4) Եփես. ե · 23 : (5) Ծն-
ընդ. գ · 16 : ա Ցիմ. բ · 11, 12 : ա Պետր. գ · 1 · 5, 6 : (6) Յովհ. ժգ · 28 : ա Կորնթ. գ · 23 : ժե · 27, 28 : Փիլիպ. բ · 7—9 : (7) ա Կորնթ. ժբ · 10 · Ա Պետր. գ · 1, Նշան։

Digitized by Google

բայց ոտք փլուզուի՝ յամօթ առնէ զգալ խելն խոր , զի ոչ ոք հանդարտ թէ գերեսնաչ իցէ ։

6 Օ՛ի երէկ ո՛չ աքօղեսցի կին , փեսացեալ զՏէրս իւր . ապա երէկ անպատահ է կնոջ փոքրել կամ գերծուլ , աքօղեսցի ։

7 Ո՛ման մարդոյ չէ պարտ ծածկիլ զգլուխ իւր , զի պատկեր և փառք Աստուծոյ է . իսկ կին փառք ոման իւրոյ է ։

8 Օ՛ի ոչ երէկ արր՝ ի կնոջէ է , այլ կին յոման ։

9 Վ՛ասնէն ոչ իսկ հաստատեցաւ արք վասն կնոջ , այլ կին վասն արանն ։

10 Ս՛ոման պետութիւն պարտի կինն շուք դնել գլխոյն վասն հրեշտակաց կոց ։

11 Վ՛ասց ոչ կին առանց արանն , և ոչ արր առանց կնոջ ՝ի Տէր ։

12 Օ՛ի որպէս կին յոմանէ նոյնպէս և արր ՝ի կնոջէ , բայց ոմանքն յԱստուծոյ ։

13 Ա՛յլ դուք ձեզէն առէք զնիստ աղօթից . արժա՞ն է կնոջ մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի Աստուծոյ ։

14 Եւ ոչ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ . զի այր երէկ գիսաւոր է՝ անարգանք են նմա ։

15 Վ՛ասց կին երէկ գիսաւոր է՝ փառք են նմա . զի գէսք փոխանակ ընդեստու տուաւեալ են նմա ։

16 Ա՛պա թէ ոք կամի հակասող կոզ լինել , մեք չունիմք այնպիսի սովորութիւն , և ոչ եկեղեցիքն Աստուծոյ ։

խելոյ , ոմանք է անուամ իրան գըլուխըն . ինչուա որ էնպես է հաստատուած՝ թէ վերարած է ։

6 Որ երէկ կին քօղ չըքցէ՝ թող իրան մազերըն էլ կտրէ . ապա թէ որ կնկան անպատչաճ է մազերըն կտրել կամ վերանել՝ թող քօղ քցէ ։

7 Որ մարդոյ պէտք չէ որ իրան գլուխըն ծածկէ , պատճառն որ՝ նա Աստուծոյ պատկեր և փառք է՝ բայց կինն իրան մարդոյ փառքն է ։

8 Ինչուա որ՝ ոչ թէ մարդն կընկանիցն է , բայց կինն մարդուցն ։

9 Պատճառն որ՝ ոչ թէ մարդն կնկան համար ստեղծուեցաւ՝ բայց կինն մարդոյ համար ։

10 Այրս պէտք է , որ կինըն մեծարանքի նշան դնէ գլխի վերայ հրեշտակներուն համար ։

11 Այնպէս թէ՝ ոչ կինն առանց մարդոյ է , և ոչ մարդն առանց կնկան Տէրուածն ։

12 Ինչուա որ՝ ինչպէս որ կինն մարդուցն (էլաւ) , էնպէս էլ մարդն կնկանիցն (է) . բայց ամէնն Աստուածմէ (է) ։

13 Ձեր դուք ինքնիերդ իրաւունք դատեցէք . միթէ կնկան արժանի է՝ որ բաց գլխով աղօթք անէ Աստուծոյ առաջին ։

14 Ընդ բնութիւնն էլ չի՞ սովորցնում ձեզ . պատճառն որ՝ թէ որ մարդն (երկար) մազեր ունի՝ էն անարգանք է նորան ։

15 Ձեր կինն թէ որ երկար մազեր ունի՝ էն փառք է նորան . ինչուա որ՝ երկար մազերն հագուստի տեղ է տրվուած նորան ։

16 Ձեր թէ որ մինն կամենում հակառակիլ , մենք էնպէսի սովորութիւն չունինք՝ և ոչ էլ Աստուծոյ եկեղեցիքն ։

(3) Կոր. ա. 3 ։ (9) ը Ծն. բ. 18 ։ (10) Ցոբ. ե. 18 ։ ը Ծն. իբ. 5 ։ (11) Կոր. ա. 26, 27 ։ ե. 1 ։ ը. 6 ։ (12) Կոր. ը. 21, 23 ։ (13) Կոր. ը. 18. 21. 26 ։ (14) Կոր. իգ. 65 ։ (15) Յով. ե. 6 ։ (16) Կոր. ը. 38 ։ (17) Ղեւտ. ժա. 36 ։ (18) ա Յովհ. գ. 5 ։ (19) ա Յովհ. ե. 17 ։ ժգ. 38 ։

17 Լ՚ոյզ զայս պատուիրեմ , ոչ որպէս թէ գովիցեմ , զի ոչ ի լաւ անդր՝ այլ ի վատթարն նկրտիք ։

18 Նախ՝ յորժամ ի մի վայր ժողովիցիք յեկեղեցին , լսեմ եթէ հերձուածք գոն ի ձեզ . և սակաւ ինչ հաւատացի ։

19 Պայց և հերձուածք լինելոց են ի ձեզ . զի որ ընտիրն իցեն ի ձեզ՝ երեւեցին ։

20 Եւ արդ՝ ի ժողովելն ձեզ ի միասին՝ ոչ է տուն Տեառն ձեզ առնել հաց ուտելոյ ։

21 Օ՚ի իւրաքանչիւրոք զնւր ընթրիս յառաջանայ ուտել , և ոմն քաղցեալ՝ և ոմն արբեալ ։

22 Պ՚իթէ տուն ոչ ունիցիք ուտելոյ կամ ըմպելոյ . եթէ զեկեղեցեան Լ՚աստուծոյ արհամարհիցէք , և յամօթ առնէք զչքաւորան . զինչ ասացից . գովեցից զձեզ . յայդմ ոչ գովեմ ։

23 Օ՚ի ես ընկալայ ի Տեառնէ՝ զոր և ձեզն աւանդեցի , եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մատներ , առ հաց ,

24 Պ՚ւշակաւ եբեկ և ասէ . Լ՚ուռք՝ և կերայք . այս է մարմին իմ , որ վասն ձեր բաշխի , զայս արարէք առ իմոյ յիշատակի ։

25 Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեացն առ և ասէ . Լ՚այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ . զայս արարէք քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝ առ իմոյ յիշատակի ։

26 Պ՚անիցս անգամ թէ ուտիցէք զհաց զայս , և զբաժակս ըմպիցէք ,

17 Խայց էս էլ պատուիրեմ՝ և չեմ գովում ձեզ , որ գալք ոչ թէ դէպի լաւն՝ այլ դէպի վատն ընկած վազումէք ։

18 Լ՚ուսոյ՝ երբոր միեանեղ ժողովվումէք եկեղեցոյ մէջն , լսումեմ որ հերձուածներ կան ձեր միջումդ[30] . և մին քիչ էլ հաւատացի ։

19 Խայց հերձուածներ էլ պիտի լինին ձեր միջումդ[31] , որ նորանք՝ որ ձեզանումդ ընտիր են՝ յայտնի լինին[32] ։

20 Ուրեմն երբոր միեանեղ ժողովվումէք՝ Տէրի տունն ձեզ հաստոր հաց ուտելոյ տեղ չէ ։

21 Պատճառն որ՝ ամէն մէկն վերազումէ իրան ընթրիքըն ուտելոյ . և միեանն սոված է , և միեանն հարբած[33] ։

22 Պ՚իթէ տուն չունէք ուտելոյ և խմելոյ . կամ թէ Լ՚աստուծոյ եկեղեցին ոչ բ՚նչ էք համարում[34] , և չքաւորներին ամօթ՚էք քցում[35] . բ՚նչ ասեմ . գովեմ՚ ձեզ . էգ բանումդ չեմ գովում ։

23 Պատճառն որ՝ ես Տէրից ընդունեցի էն՝ որ ձեզ էլ ասե՚[36] . որ Տէր Յիսուսն էն գիշերումն որ մատնըվումեր , հաց առաւ ,

24 Պ՚ւշացաւ , կարեց և ասաց . Լ՚ուքը , կերէք . էս է իմ մարմինն՝ որ ձեզ համար տրվումէ . էս արէք իմ յիշատակիս համար[37] ։

25 Նմանպէս էլ՝ ընթրիք ուտելուցն ետև բաժակըն (Լուսցն) առաւ և ասաց . Լ՚ս բաժակս նոր ուխտ ա պայմանն է իմ արիւնովս . էս արէք՝ քանի անգամ որ խմէք , իմ յիշատակիս համար ։

26 Պ՚անի անգամ որ էս հաց ուտէք , և էս բաժակըս խմէք ,

(20) ա կորնթ · ա · 10—12 : գ · 3 : (21) Մատթ · ժը · 7 : Ղուկ · ժէ · 1 : Պսլմ · ք · 30 : ա Յհ՚ · գ · 1 : բ Պետր · բ · 1 , 2 : (23) Ղուկ · բ · 25 : ա Յովհ՚ · բ · 19 : բ Օրին · ժգ · 3 : (23) բ Պետր · բ · 13 : Յուդ · 12 : (24) ա կորնթ · ժ · 32 : (25) Յուկ · բ · 6 : (26) ա կորնթ · ժե · 3 : Ղկտ · ա · 1 · 11՝ 12 : (27) Մատթ · Ի · 26 : Մարկ · ժգ · 22 : Ղուկ · ԻԲ · 19 :

Digitized by Google

զմեզ Տեառն պատմեցէք , մինչև եկեսցէ նա ։

27 Եթէ ասէ՝ որ ուտիցէ զՀացըս , կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանու թեամբ , պարտական եղիցի մարմնոյ և արեան Տեառն ։

28 փորձեսցէ մարդ զանձն իւր , և ապա ՚ի հացէ անտի կերիցէ , և ՚ի բաժակէն արբցէ ։

29 Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ · զի ոչ խըտրէ զմարմինն Տեառն ։

30 Վասն այնորիկ իսկ են ՚ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք · և շատ ևս այն են , որ և ննջեցեալք իսկ իցեն ։

31 Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք ։

32 Եւ եթէ դատիմք՝ ՚ի Տեառնէ խրատիմք · զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք ։

33 Եղբարք՝ յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք ուտել՝ միմեանց ՚սպասջիք ։

34 Եպա թէ ոք քաղցեալ իցէ՝ ՚ի տան իւրում կերիցէ · զի մի՛ ՚ի դատապարտութիւն ժողովիցիք · բայց զայլ ինչ յորժամ եկից՝ յայնժամ պատուիրեցից ։

Տէրի մահըն պատմեցէք՝ մինչև որ նա կըգայ[29] ։

27 Որեմն ով որ էս հացըս ուտէ՝ կամ Տէրի բաժակըն խմէ անարժանութենով , նա պարտական կըլինի Տէրի մարմնոյն և արիւնին[29] ։

28 Իմէղ մարդն փորձէ իրան անձըն , և ապա էն հացիցն ուտէ՝ և էն բաժակիցն խմէ[30] ։

29 Պատճառն որ՝ նա որ անարժանութենով է ուտում և խմում , իրան անձին համար դատաստան է ուտում և խմում · ինչու որ՝ նա չի ըմկում Տէրի մարմինըն ։

30 Էնց նրա համար էլ ձեր միջումդ շատ հիւանդներ և ցաւագալներ կան · և շատ էլ նորանք են՝ որ ննջած են ։

31 Ինչու որ՝ եթէ մեր անձներըս կըքննէինք , ապա չէինք դատապարտվիլ[31] ։

32 Եւ թէ որ դատվինք՝ Տէրից խրատվումենք[32] , որ աշխարհքի հետ չըդատապարտվինք ։

33 Որեմն եղբարք՝ երբոր ժողվվիք ուտելոյ համար , իրար սպասեցէք ։

34 Եպա թէ որ միևն սոված է[33]՝ թող իրան տանն ուտէ[34] · որ դատապարտութենան համար չըժողովվիք · բայց ուրիշ բաներըն՝ երբոր կըգամ[35]՝ էն ժամանակն կըպատուիրեմ[36] ։

(28) Հովհ · ժգ · 3 ։ ի · 23 ։ Գործ · ա · 11 ։ ա Կորնթ · գ · 5 ։ ժե · 23 ։ ա Թես · գ · 15 ։ բ Թես · ա · 10 ։ Հռոմ · 14 ։ Յայտ · ա · 7 ։ (29) Մատ · ի · 10 · 13 ։ Հովհ · զ · 51 · 63 , 64 ։ ժգ · 27 ։ ա Կորնթ · ժ · 21 ։ (30) բ Կորնթ · ժգ · 5 ։ Գաղ · գ · 1 ։ (31) Կողմ · լբ · 5 ։ ա Հովհ · ա · 9 ։ (32) Կողմ · ղէ · 12 , 13 ։ Նէեր · ժբ · 5-11 ։ (33) Ա Ի · 21 ։ (34) Ա Ի · 22 ։ (35) ա Կորնթ · գ · 10 ։ (36) ա Կորնթ · է · 17 ։ Տիտ · ա · 5 ։

Digitized by Google

ԿՒ · ԺՒ

շեցուք . զոր և ես փութացայ ըզ-
նոյն առնել :

11 Եւ յորժամ եկն Կեփաս ՚ի Ան-
տիոք , ընդդէմ դարձայ նորա .
քանզի գոգ իբրև ատգաեալ էին էր :

12 Զի մինչչև եկեալ էին ա-
մենք առ ՚ի Յակովբայ , ընդ հե-
թանոսս ուտէր անխտիր . իսկ իբ-
րև եկին , զատանէր և որոշէր զան-
ձն . երկուցեալ յայնցանէ՝ որ ՚ի
թլփատութենէ անտի էին :

13 Եւ կեղծաւորեցան ընդ նմա
և այլ Հրէայքն . մինչև Առնա-
բաս անգամ խոնաքհեցաւ ՚ի նոցա
կեղծաւորութիւնն :

14 Եւ իբրև տեսի թէ ոչ ո-
ւղիղ ճարտկանց երեսին չի նայու՞ն .
ինչու որ էն կարծվածներն էնպէսի
բան չի՞մացրին ինձ[20] :

7 Հապա նրա հակառակն՝ երբոր
տեսին թէ անթլփատութեան ա-
ւետարանն[21] ինձ հաւատացված է[22] ,
ինչպէս որ Պետրոսին թլփատու-
թեան (աւետարանն) .

8 Պատճառն որ՝ նա որ Պետրո-
սի առաքելութիւնը յաջողեց թլը-
փատութեան մէջն , ինձ էլ[23] յա-
ջողեց հեթանոսների մէջն[24] :

9 Երբոր իմացան էն շնորհքն
որ ինձ տըվված էր[25] , Յակօպոսն և
Կեփասն և Յօհաննէսն , որ նո-
րանք էին կարծված սիւներն[26] , ինձ
և Բառնաբասին ձեռք տուին և հա-
ւանեցան . որ մենք հեթանոսների
մէջն (լինինք) , և նորանք թլփատ-
վածների (մէջն) :

10 Հապա միայն որ աղքատներըն
յիշե՛նք . որ ես էլ ջանք արի էն
անելոյ[27] :

11 Հապա երբոր Կեփաս եկաւ Ան-
տիոք , ես հակառակ կացայ նորան[28] .
պատճառն որ՝ իբր մեղադրելի էր :

12 Ինչու որ՝ դեռ որ Յին քանի
մարդիկ էին եկած Յակօբից , ա-
ռանց ջոկելոյ հեթանոսներին հետ
ուտում էր[29] . բայց երբոր եկին ,
իրան անձըն ջոկում էր և բաժան-
վում , վախենալով նորանից՝ որ
թլփատութենից էին :

13 Եւ նորա հետ ուրիշ Հրէա-
ներ էլ կեղծաւորութիւն արին .
մինչև որ Առնաբասն էլ ծրտվե-
ցաւ գէպի նորանց կեղծաւորութիւ-
նըն :

14 Հապա երբոր տեսի որ ուղիղ-

(9) Գործ . ժ . 34 : Հռոմ . բ . 11 : (10) բ կորնթ . ժբ . 11 : (11) Գործ . ժգ . 46 : Հռոմ . ա . ի : ժ . 13 : ա Տիմ . բ . 7 : բ Տիմ . ա . 11 : (12) ա Յհ . բ . ի : (13) Գործ . ի . 15 : ժգ . 2 : ԺԲ . 21 : ԺԶ . 17 , 18 : ա կորնթ . ժե . 10 : Գաղ . ա . 16 : նոմ . ա . 20 : (14) Գաղ . գ . 5 : (15) Հռոմ . ա . 5 : ժբ . 3 . 6 : ժե . 15 : ա կորնթ . ժե , 10 : Եփես . գ . 8 : (16) Մատթ . ժգ . 18 : Եփես . բ . 20 : Հայտ . իա . 14 : (17) Գործ . ժա . 30 : ԺԶ . 17 : Հռոմ . ժե . 25 . ա կորնթ . ժգ . 1 : բ կորնթ . գ . ե . ի : (18) Գործ . ժե . 65 : (19) Գործ . փ . 33 : ժա . 3 .

Digitized by Google

ղիղ գնան ՚ի ճշմարտութիւն ա-
ւետարանին , ասեմ զկիսիաս առա-
ջի ամենեցուն , Եթէ դու որ ՚ի-
րեայ ես՝ հեթանոսաբար՝ և ոչ
՚իրեայաբար կեաս , զինչո՞ւ ստիպես
հեթանոսաց լինել ՚իրեայնեն :

15 Մ՚ի մեք բուն ՚իրեայք եմք ,
և ոչ ՚ի հեթանոսաց մեղաւորք :

16 Մ՚այս գիտեմք՝ եթէ ոչ ար-
դարանայ մարդ ՚ի գործոց օրինաց ,
եթէ ոչ՝ ՚ի հաւատոցն Յիսուսի
Քրիստոսի . և մեք ՚ի Քրիստոս
Յիսուս հաւատացաք , զի արդա-
րասցուք ՚ի հաւատոցն Քրիստոսի ,
և ոչ ՚ի գործոց օրինաց . զի ՚ի
գործոց օրինաց ոչ արդարասցի ա-
մենայն մարմին :

17 Եւակ եթէ մինչ խնդրիցեմք ար-
դարանալ ՚ի Քրիստոս , և գտա-
նիցիմք մեղաւորք . ապա ուրեմն՝
Քրիստոս մեղաց պաշտօնեայ եղից .
քա՛ւ լիցի :

18 Մ՚ի եթէ զոր քակեցին՝ զը-
նոյն միւսանգամ շինիցեմ . ապա
յանցաւոր զանձն իմ ես ինձէն ե-
ղեւեցուցանեմ :

19 Մ՚ի ես օրինօք օրինացն մե-
ռայ , զի Ա՚ստուծոյ կեցից , և ընդ
Քրիստոսի ՚ի խաչ ելից :

20 Եւ կենդանի եմ այսուհետև ,
ոչ՝ ես՝ այլ կենդանի է յիս Քրի-
տոս . այլ որ այժմ կեամ մարմ-
նով , հաւատովք Որդւոյն Ա՚ստու-
ծոյ կեամ . որ սիրեացն զիս և

րանի ճշմարտութեան մէջ շիտակ
չեն գնում[30] , ամէնին առաջին ա-
սացի Կեփասին[31] . Եթէ դու որ
՚իրեայ ես , հեթանոսի պէս ես
վարվում՝ և ոչ թէ ՚իրեայի պէս ,
էլ ինչո՞ւ համար ես բռնադատում
հեթանոսներին՝ որ ՚իրեայի պէս
վարվին[32] :

15 Ինչու որ մենք բուն ՚իրեա-
ներ ենք[33] , և ոչ թէ հեթանոս-
ների մեղաւորներն[34] :

16 Նա գիտենք՝ որ մարդն ա-
րէնքի գործքերից չէ արդարա-
նում[35] , բայց միայն Յիսուսի Քր-
իստոսի հաւատքից . և մենք Յի-
սուս Քրիստոսի հաւատացինք , որ
Քրիստոսի հաւատքից արդարա-
նանք , և ոչ թէ օրէնքի գործք-
երից[36] . պատճառն որ՝ օրէնքի գործ-
քերից իսկի մին մարմին չի ար-
դարանալ[37] :

17 Ա՚պա թէ որ մենք՝ երբեմն ու-
զում ենք Քրիստոսովն արդարանալ ,
էլ մեղաւոր գտնըվինք[38] . ուրեմն
Քրիստոս մեղքի պաշտօնեայ է՞ լե-
ւ՞ քա՛ւ լիցի :

18 Պատճառն որ՝ եթէ էն՝ որ քան-
դեցի , հենց նրան միևնոյ շինեմ ,
ապա ես ինքն իմ անձս մեղաւոր
եմ երևացնում :

19 Ինչու որ ես օրէնքովն[39] մե-
ռայ օրէնքին[40] , որ ապրիմ Ա՚ստու-
ծոյն[41] , և ես Քրիստոսի հետ խաչ
վիմ[42] :

20 Եւ արդեօք եւս կենդանի եմ ,
չէ թէ ես՝ բայց Քրիստոսն կեն-
դանի է ինձանում . բայց ինչ որ
հիմիկ կենդանի եմ մարմնովս՝ Որ-
դոյ Ա՚ստուծոյ հաւատքովն եմ կեն-

(20) Ա՚ր . 5 : (21) ա Յիս . 6 . 20 : (22) Գաղ . ժ . 28 : ժա . 3 : (23) Գաղ . ժե . 19 , 11 : (24) Մատթ . թ . 11 : Եփես . բ . 3 . 12 : (25) Գաղ . ժգ . 38 , 39 : (26) Հռով . ա . 17 : գ . 22 . 28 : ը . 3 : Գաղ . գ . 24 : Եբր . 6 . 18 , 19 : (27) Սալ . Հին . 3 : Հռով . գ . 20 : Գաղ . գ . 11 : (28) ա Կորնթ . գ . 8 , 9 : (29) Հռով . ը . 3 : (30) Հռով . ղ . 14 . 6 . 4 . 6 : (31) Հռով . ղ . 11 : բ Պետ . 6 . 15 : (32) Հռով . ղ . 6 : Գաղ . 6 . 24 : ը . 14 :

Digitized by Google

մասնեաց զանձն վասն իմ ։

21 Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն Աստուծոյ , զի եթէ յօրինաց անաի էր արդարութիւն , ապա Քրիստոս զուր մեռաւ ։

դանի[33] . որ ինձ սիրեց և իւրան անձրն ինձ համար մատնեց[34] ։

21 Եւ ես Աստուծոյ շնորհքրն չեմ անարգում , ինչու որ՝ եթէ արդարութիւնն օրէնքիցն էր , ապա Քրիստոս զուր մեռաւ[35] ։

ԿՂ · Գ

1 Յանգիտելն կըշարունէ նորանց , թէ ոչ նախանձով լսուց նորանք որ հաւատքն քրսն և օրէնքի ապաւինվին ։ 6 Հաւատացեալներն մինակ՝ կ'արդարանան , 9 նշ նորանք Աբրահամի հետ կ'օրհնվին , 10 նշ էս հաւատքից տպրելն շատ վնասութիւններով հատատաւոլ ։

1 Ո՛ անմիտ Գաղատացիք , ո՞ նախանձ արար զձեզ (ոչ ճշմարտութեան) . որոց գրեթէ առաջի աչաց Յիսուս Քրիստոս գրեցաւ ՚ի խաչ ելեալ ։

2 Զայս միայն կամիմ ուսանել ՚ի ձէնջ . ՚ի գործոց օրինացն լսելոցն հաւատոց ։

3 Այդպէսի անմիտ էք . սկսեալ հոգւով՝ և արդ մարմնով վախճանիք ։

4 Եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ զուր՝ եթէ իցէ զուր ։

5 Որ արդ՝ որ բաշխեաց ՚ի ձեզ զՀոգին՝ և յայտնեաց ՚ի ձեզ զգործութիւնս . ՚ի գործոց օրինացն է՝ եթէ ՚ի լսոյ հաւատոց ։

6 Որպէս Աբրահամ հաւատաց յԱստուած՝ և համարեցաւ նմա յարդարութիւն ։

7 Վասն որոյ գիտասջիք , զի որք ՚ի հաւատոց անտի են , նոքա են որդիք Աբրահամու ։

1 Ո՛վ անմիտ Գաղատացիք , ո՞վ նախանձով լցուց ձեզ՝ որ ճշմարտութեանն չըհնազանդվիք[3] . որ յաչս մարեալ թէ ձեր աչքերիդ առաջին գրվեցաւ Յիսուս Քրիստոս խաչ հանված ։

2 Այս մինակ կամենում սովորիլ ձեզանից . Ո՞րեմն օրէնքի գործքերիցն ընդունեցիք Հոգին[3] թէ հաւատքի քարոզութենից[4] ։

3 Ո՞րեթէ էդքան անմիտ էք . հոգով սկսեցիք[5] , և հիմիկ մարմնով էք վերջանում[6] ։

4 Ո՞րեթէ էնքան նեղութիւններն ձեր գլխովն զուր տեղն անցկացան՝ թէ որ (էն) զուր լինի[7] ։

5 Ապա նա՝ որ Հոգին բաժանեց ձեզ՝ և ձեր միջումն զօրութիւններ յայտնեց[8] , միթէ նա օրէնքի գործքերիցն է՝ թէ հաւատքի քարոզութենից ։

6 Ինչպէս որ Աբրահամն հաւատաց Աստուծոյն՝ և (էն) համարվեցաւ նորա արդարութիւն[9] ։

7 Ուրեմն գիտացէք . թէ նորանք՝ որ հաւատքից են , նորանք են Աբրահամի որդիք[10] ։

(33) բ կորնթ . ե . 15 ։ ա Թես . ե . 10 ։ ա Պետր . գ . 2 ։ (34) Գաղ . ա . 4 ։ Եփես . ե . 2 ։ Տիտ . բ . 14 ։ (35) Գաղ . գ . 21 ։ Նբր . է . 11 ։ Հռովմ . ժա . 6 ։ Գաղ . ե . 4 ։ (1) Գաղ . ե . 7 ։ (2) Գաղ . բ . 14 ։ ե . 7 ։ (3) Գործ . բ . 38 ։ բ . 15 ։ ժ . 17 ։ ժե . 8 ։ Ա՛ղար . 14 ։ Նեէմ . ա . 13 ։ Նբր . զ . 4 ։ (4) Հռովմ . ժ . 16 , 17 ։ (5) Գաղ . գ . 3 ։ (6) Նբր . է . 16 ։ թ . 10 ։ (7) Նբր . ժ . 35 , 36 ։ բ Կորնթ . 6 ։ (8) բ կորնթ . գ . 5 ։ (9) Ծննդ . ժե . 6 ։ Հռովմ . գ . 3 . 6 . 21 , 22 ։ Հակ . բ . 23 ։ (10) Ղուկ . ը . 39 ։ Հռովմ . գ . 11 , 12 . 16 ։

Digitized by Google

8 Յառաջագոյն գիտեր գիր , եւ թէ՝ ի հաւատոց անտի արդարացուցանէ Աստուած զհեթանոսս , յառաջագոյն խոստացաւ Աբրահամու . թէ՝ ի քեզ օրհնեսցին ամենայն ազգք :

9 Այսուհետեւ որք՝ ի հաւատոց անտի են՝ օրհնին ընդ հաւատացեալն Աբրահամու :

10 Ո՛ր որ միանգամ՝ ի գործոց օրինացն են , ընդ անիծիւք են . քանզի գրեալ է . թէ Անիծեալ ամենայն մարդ՝ որ ոչ կայցէ յամենայն գրեալսն՝ ի գիրս օրինացն առնել զամենայն :

11 Ո՛ր օրինօքն ոչ ոք արդարանայ առաջի Աստուծոյ , այն յայտ իսկ է . զի Արդարն՝ ասէ , ի հաւատոց կեցցէ :

12 Այլ օրէնքն չեն ի հաւատոց , այլ որ արասցէ զայն՝ կեցցէ ի նոսին :

13 Քրիստոս գնեաց զմեզ յանիծից օրինացն , եղեալ վասն մեր անէծք . զի գրեալ է . թէ Անիծեալ ամենայն , որ կախեալ կայցէ զփայտէ :

14 Ո՛ր՝ ի հեթանոսս օրհնութիւն Աբրահամու եղիցի՝ ի Քրիստոս Յիսուս , զի մեք զաւետիս Հոգւոյն Սրբոյ առցուք հաւատովք :

15 Ըստ մարդկութեան ասեմ եղբարք . ապաքէն զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել . եւ ոչ այլ հրամայն՝ ի վերայ այնր տալ :

8 Կանխագիտութիւնն՝ առաջուց գիտնալովը , թէ Աստուած հաւատքիւն կարդարացնէ հեթանոսներին , (և նրա համար)[11] առաջուց Աբրահամին խոստացաւ , թէ Աշխարհում պիտի ամէն ազգերն օրհնվին[12] :

9 Աւրեմն նորանք՝ որ էն հաւատքից են՝ օրհնված Աբրահամի հետ կըօրհնվին :

10 Պատճառն որ նորանք ամէնքն՝ որ օրէնքի գործքերից են , անէծքի տակ են . ինչու որ գրված է . թէ Անիծեալ լինի ամէն մարդ՝ որ չըկենայ օրէնքի գրքի միջի ամէն գրվածներումն , որ ամէնքն անէ[13] :

11 Պատճառն որ՝ օրէնքովիւ ոչ ով էի արդարանում Աստուծոյ առաջին[14] , էն յայտնի է . ինչու որ Արդարն՝ ասում հաւատքիցն պիտի ապրի[15] :

12 Այլ օրէնքն հաւատքիցն չէ[16] , բայց ով որ նորան կըկատարէ՝ նա կապրի նորանով[17] :

13 Քրիստոս գնեց մեզ օրէնքի անէծքիցն , (ինքն) մեզ համար անէծք լինելով[18] . ինչու որ՝ գրվածէ . թէ Անիծեալ լինի ամէն , ով որ փայտիցն կախված լինի[19] :

14 Որ Աբրահամի օրհնութիւնն հեթանոսների մէջն լինի Յիսուս Քրիստոսումն[20] , որ մենք Աստըծոյ ասեփքըն ընդունինք հաւատքով[21] :

15 Ա՛րդեանց սովորութեան պէս եմ ասում եղբայրք . չիսազ ոք աչն մարդոյ հաստատվաձ կտակըն խափի մինն չի կարօղ անարգել . և ոչ էլ նորա վերայ ուրիշ հրամայն աւելացնել[22] :

(11) Հաբ . բ . 17 : Գալ . բ . 21 : (12) Ծննդ . ԺԲ . 3 : ԺԸ . 18 : (13) Բ Օրին . ԻԷ . 26 : Նեհ . ժ . 3 : (14) Գործ . բ . 16 : (15) Ղեւ . բ . 5 : Հռոմ . ա . 17 : Նեեմ . ժ . 38 : (16) Հռոմ . գ . 5 , 6 : ժ . 5 , 6 : ժա . 6 : (17) Ղեւ . ԺԸ . 5 : Նեհ . ք . 29 : Նգ . ի . 11 : Հռոմ . ժ . 5 : (18) Հռոմ . ը . 3 : Բ Կոր . է . 21 : Գործ . գ . 5 : (19) Բ Օրին . ԻՈ . 23 : (20) Հռոմ . գ . 9 . 16 : (21) Նոյ . ւբ . 15 : Իգ . 3 : Նեհ . ւա . 32 : ւբ . 40 : Նգ . ժա . 19 : ԼՂ . 27 : Գնհ . բ . 28 , 29 : Ա՛ստ . ԺԸ . 10 : Յովհ . է . 39 : Գործ . բ . 33 : (22) Նեեմ . ք . 17 :

Digitized by Google

16 Իսկ Ա՛բրահամու խոստացան աւետիքն , և զաւակի նորա · և ոչ ասէ՝ Ո՛ւսակաց իբրև զբազմաց , այլ իբրև զմիոյ , թէ՝ Եւ զաւակի քումմ , որ է Ք՛րիստոս :

17 Այլ զայս ասեմ , Օ՛կտակն յառաջագոյն հաստատեալ Ա՛ստուծոյ ՚ի Ք՛րիստոս · օրէնքն որ յետ չորեքհարիւր և երեսուն ամի եղեալ , ոչ կարեն խափանել առ ՚ի խափանելոյ զաւետիսն :

18 Եթէ յօրինաց անտի է ժառանգութիւնն , ապա ոչ ևս յաւետեացն . բայց Ա՛բրահամու աւետեօք շնորհեաց Ա՛ստուած :

19 Իսկ ընդ ի՞նչ էցեն օրէնքն . յանցուածոց վասն յաւելաւ . մինչև եկեսցէ զաւակն , որում խոստացեալն է՝ կարգեալ հրեշտակօք ՚ի ձեռն միջնորդի :

20 Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է՝ բայց Ա՛ստուած մի է :

21 Իսկ արդ օրէնքն հակառակ ինչ էցեն աւետեացն Ա՛ստուծոյ . քաւ լիցի . զի եթէ աուեալ էին օրէնքն՝ որ կարօղ էին կենդանի առնել , ապա հաստատ յօրինաց անտի էր արդարութիւն :

22 Ա՛յլ փակեցին գիրք զամենեսին ընդ մեղս , զի աւետիքն ՚ի հաւատոյ անտի Յիսուսի Ք՛րիստոսի տացին հաւատացելոց :

23 Ա՛յլ ինչ՚ էր հաւատքն եկեալ է՝ ընդ օրինօքն փակեալ պահէաք

16 Ա՛պա Ա՛բրահամին խոստացվեցան էն աւետիքներն , և նորա զաւակին . և չի ասում՝ Օ՛ւսականերին՝ ինչպես շատերին , բայց ինչպես մէկին՝ թէ՝ Եւ քո զաւակիդ[23] , որ է Ք՛րիստոսն[24] :

17 Այս էս եմ ասում . Յն կտակին , որ առաջուց Ա՛ստուածանից հաստատված էր Ք՛րիստոսի վերայ · օրէնքն որ չորս հարիւր և երեսուն տարուցն եկաւ դրվաս[25] , չի կարող քանդել՝ էնպէս որ աւետիքն խափանվի[26] :

18 (Ինչու որ) եթէ ժառանգութիւնն օրէնքիցն լինէր[27] , ապա աւետիքիցն չէր[28] · բայց Ա՛ստուած՝ Ա՛բրահամին (էն) շնորհեց աւետիքով :

19 Ա՛պա օրէնքն ի՞նչ է . (նա) յանցանքների պատճառովն աւելացաւ[29] . մինչև որ գայ (էն) զաւակն , որ խոստմունքն նորա համար էլան[30] (և) հրեշտակներով կարգվեցաւ[31] միջնորդի ձեռովն[32] :

20 Այս միջնորդ մէնին չէ՝ բայց Ա՛ստուած մին է[33] :

21 Ա՛պա ուրեմն օրէնքն Ա՛ստուծոյ աւետիքնե՞րին հակառակ է · քաւ լիցի · պատճառն որ՝ եթէ օրէնք արվված լինէր՝ որ կարօղ էր (մինքըն) կենդանի անել , ապա հաստատ էն օրէնքիցն էր արդարութիւնն[34] :

22 Այս գիրքն[35] ամենին մեղքի ներքև փակեց[36] , որ աւետիքն Յիսուսի Ք՛րիստոսի հաւատքիցն արվվի հաւատացեալներին[37] :

23 Դնե որ հաւատքն չէր եկել՝ օրէնքի ներքևն փակված պահվեւ-

(23) Ծննդ . ԻԲ . 3 . 7 : ԻԶ . 7 : Ա Թագ . 8 : (24) ա Կորնթ . ԺԲ . 12 : (25) Նե՛ . ԺԲ . 10 , 11 : (26) Հռոմ . գ . 13 , 14 : Ա՛մոս . 21 : (27) Հռոմ . Բ . 17 : (28) Հռոմ . դ . 14 : (29) Հռոմ . ԻԲ . 23 : Հռոմ . գ . 15 : ե . 20 : է . 8 . 13 : ա Տիմ . ա . 9 : (30) Ա՛մոս . 10 : (31) Գործ . է . 53 : Նեեմ . բ . 2 : (32) Նե՛ . ի . 19 . 21 , 22 : բ Օրին . ժ . 5 . 22 , 23 . 27 . 31 : Հռոմ . ա . 17 : Գործ . է . 38 : ա Տիմ . բ . 5 : (33) Հռոմ . գ . 29 , 30 : (34) Գաղ . բ . 21 : (35) Ա՛մոս . 8 : (36) Հռոմ . գ . 9 . 19 . 23 : ԺՈ . 32 : (37) Հռոմ . գ . 11 , 12 . 16 :

Digitized by Google

'ի հանդերձեալ հաւատան, որ յոյս նելոց էին 'ի մեզ։

24 Ա՛պա օրէնքն դաստիարակ եղեն մեզ 'ի Ք՛րիստոս Յիսուս, զի 'ի հաւատոյն արդարացուք։

25 Ա՛յլ իբրև եկին հաւատքն, ո՛չ ևս ընդ դաստիարակաւ եմք։

26 Ք՛անզի ամենեքին որդիք Ա՛ստուծոյ էք հաւատովք 'ի Յիսուս Ք՛րիստոս։

27 Որք միանգամ 'ի Ք՛րիստոս մկրտեցարուք, զՔ՛րիստոս զգեցեալ էք. չկ խարէ,

28 Ո՛չ Հրէի և ո՛չ Հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի, և ո՛չ իգի. զի ամենեքեան դուք մի էք 'ի Ք՛րիստոս Յիսուս։

29 Ա՛պա եթէ դուք Ք՛րիստոսի էք, ուրեմն Ա՛բրահամու զաւակ էք՝ ըստ աւետեացն ժառանգք։

մեինք՝ դէպի էն նոր գալուստն, որ մեզանում պէտք էր յայտնըվի։

24 Ուրեմն օրէնքն մեզ համար տղայի վարպետ էլաւ՝ դէպի Յիսուս Ք՛րիստոս (տանելու)[38], որ հաւատքից արդարանանք[39]։

25 Ք՛այց երբոր հաւատքն եկաւ, էլ (մենք) էն վարպետի հրամանի տակն չենք։

26 Ք՛ունչու որ ամենքդ Ա՛ստուծոյ որդիք էք՝ Յիսուսի Ք՛րիստոսի հաւատքովն[40]։

27 Ք՛ոլուդ ամենքդ՝ որ Ք՛րիստոսումն մկրտվեցաք[41], Ք՛րիստոսին հագած էք[42]. չկ ուրիշ չընկայ[43],

28 Ո՛չ Հրէայի (չընկոպէ)՝ և ո՛չ Հեթանոսի, ո՛չ ծառայի՝ և ո՛չ ազատի, ո՛չ արձի և ո՛չ էգի. պատճառն որ՝ դուք ամենքդ մին էք Ք՛րիստոս Յիսուսումն[44]։

29 Ա՛պա թէ որ դուք Ք՛րիստոսին էք, ուրեմն Ա՛բրահամի զաւակներն էք[45] աւետիքին պէս ժառանգներ[46]։

Գ Լ · Գ

1 Ինչպէս որ ժառանգն վերակացուների ներքևն է՝ մինչև որ նա մեծանայ, էնպէս էլ մենք օրէնքի ներքևն էինք մինչև որ Ք՛րիստոս եկաւ, 5 Ն՛ւ մեզ գնեց օրէնքից՝ ? Ուրեմն էլ օրէնքի ծառայ չենք։ 14 Պատարագոց նորան ընդունելն և ինքը էլ նորանք ընդունելն հէյտէ, 22 Ն՛ւ ցոյց կըտայ թէ մենք Ա՛բրահամի սպառ կինախից էլած պտուղ ինք։

1 Ա՛յս եմ ասում. (թէ) դեռ քանի ժամանակ որ ժառանգն տղայ է՝ նա իսկի աւելի չէ քան թէ ծառան. թէև ամէն բանի տէր է։

2 Հայց վերակացուների և մըն-

1 Ա՛յս ասեմ. ցորքան ժամանակս ժառանգն տղայ է՝ չէ ինչ առաւել քան զծառայն. թէպէտ և տէր իցէ ամենեցուն։

2 Ա՛յլ ընդ հազարապետաք է՝ և

(38) Ա՛ստի. ե · 17 : Ա՛ստ. ժ · 4 : Կող. բ · 17 : Ն՛էր. բ · 9, 10 : (39) Պօր. ժգ · 30 : Գող. բ · 16 : (40) Հովհ. ա · 12 : Ա՛ստ. բ · 14, 15, 16 : Գող. գ · 5 : ա Հովհ. գ · 1, 2 : (41) Ա՛ստ. դ · 3 : (42) Ա՛ստ. ժգ · 14 : (43) Ա՛ստ. ժ · 13 : ա Կորնթ. ժբ · 13 : Կող. ե · 6 : Կող. գ · 11 : (44) Հովհ. ժ · 16 : ժե · 20, 21 : Լ՛ուկ. բ · 14, 15, 16 : գ · 1 · 15, 16 : (45) Ծննդ. ի · 10 · 12 : Ա՛ստ. բ · 7 : Ն՛էր. ժա · 18 : (46) Ա՛ստ. բ · 17 : Գող. գ · 7 · 28 : Լ՛ուկ. գ · 8 :

Digitized by Google

ընդ գաւառապետօք՝ մինչև ի ժա-
մանակակէս հօրն ։

3 Նոյնպէս և մեք՝ մինչ տղայ-
քըն էաք՝ ընդ տարերսք աշխարհիս
ի ծառայութեան կայաք ։

4 Այլ իբրև եկն լրումն ժամա-
նակին, առաքեաց Աստուած զՈր-
դին իւր՝ որ եղև ի կնոջէ, և ե-
մուա ընդ օրինօք ։

5 Զի զնասա՝ որ ընդ օրինօքն
էին, գնեացէ, զի մեք զորդեգ-
րութիւնն ընկալցուք ։

6 Եւ զի էք դուք որդիք, ա-
ռաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն
իւրոյ ի սիրտս մեր՝ որ աղաղակէ
Աբբա՝ Հայր ։

7 Այսուհետև չէս ծառայ, այլ
որդի. եթէ որդի՝ և ժառանգ
Աստուծոյ ։

8 Այլ յայնժամ մինչ ոչն գի-
տէիք զԱստուած՝ ծառայէիք այնո-
ցիկ՝ որ ոչն էին ի քնէ Աստ-
ուածք ։

9 Այլ այժմիկ ծանեալք զԱս-
ուած, մանաւանդ թէ ծանուցեալք
իսկ յԱստուծոյ, զիարդ դառնայք
միւսանգամ անդրէն ի տարերսն՝
ի տկարս և յաղքատս, որոց միւս-
անգամ զանձինս ծառայեցուցանել
կամիք ։

10 Օրս ուրս խարէք՝ և զամիս՝
և զժամանակս՝ և զտարիս ։

11 Երկնչիմ զձեզ, մի՛ գուցէ
ապաշխարեցի ի ձեզ զգործ ։

12 Լերուք ես որպէս և ես, զի
և ես որպէս դուք, եղբարք, աղ-
աչեմ զձեզ ։ Զոչինչ մեզ վնաս
արարէք ։

13 Գիտէք զի տկարութեամբ
մարմնոյ աւետարանեցի ձեզ զա-
ռաջինն ։

14 Եւ զփորձ իմ որ էր ի մար-
մնի իմում՝ ոչ արհամարհեցէք,
և ոչ անարգեցէք, այլ իբրև զհրե-
շտակ Աստուծոյ ընկալարուք զիս,
իբրև զՔրիստոս Յիսուս ։

15 Ուր գնէ երանութիւն ձե-
րոյ. զի վկայեմ ձեզ, զի եթէ
հնարաւոր լիցի, զաչսն ձեր հա-
նեալ տայիք ինձ ։

16 Ուրեմն թշնամի եղէ ձեզ
ճշմարտութիւն ասելով ձեզ ։

17 Նախանձին ի ձեզ ոչ բա-
րեաբար, այլ կամին զձեզ ի բաց
խափանել, զի զնոսա նախանձիցի
դուք ։

18 Բարի է նախանձիլ ի բա-
րին միշտ, և ոչ միայն ի ներկա
իմում ի ձեզ ։

19 Զաւակունք իմ, որոց զա-
ւուրս կրկին ունիմ ցաւս մինչև
կազմեսցի Քրիստոս ի ձեզ ։

20 Կամիմ ես ի ներկայ լինել
առ ձեզ այժմ, և փոխել զձայն
իմ, զի տագնապիմ ի ձեզ ։

21 Ասացէք ինձ, որ կամիք
օրինաց ներքև լինել, զօրէնսն ոչ
լսէք ։

22 Զի գրեալ է, թէ Աբրահամ
երկու որդիս ունէր, մի՝ յաղախ-
նէ, և մի՝ յազատէ ։

23 Այլ որ յաղախնէ՝ մարմնա-
ւորապէս ծնաւ, և որ յազատէ՝
խոստմամբ ։

24 Որ ինչ առակ են, զի այս-
քանքս են ուխտք, մի՝ ի լերինն
Սինա, որ ծնանի ի ստրկութիւն,
որ է Ագար ։

25 Զի Ագար լեառն է Սինա
յԱրաբիա, և նմանի Երուսաղէմի
որ այժմ է, և ստրկանայ ընդ որ-
դիս իւրովք ։

26 Իսկ Երուսաղէմ որ վերին
է, ազատ է, որ է մայր մեր ։

27 Զի գրեալ է, ցնծա՛ ամուլ
որ ոչ ծնանիս, բարբաջեա՛ և աղ-
աղակեա՛ որ ոչ երկնչիս, զի բազ-
մագաւակ է ամուլն քան զկին
որ ունի զարս ։

28 Դուք, եղբարք, որպէս Իսա-
հակ, որդիք էք խոստմանն ։

29 Այլ որպէս յայնժամ որ
ծնեալ էր ըստ մարմնոյ հալածէր
զորդին որ ծնեալ էր ըստ հոգւոյ,
նոյնպէս և այժմ ։

30 Այլ զի՞ ասէ գիրն. Արձակ
զաղախինն և զորդի նորա, զի մի՛
ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ
որդւոյ ազատին ։

31 Վասն որոյ, եղբարք, ոչ
եմք աղախնոյ որդիք, այլ ազատ-
ին, որով ազատութեամբ Քրիստոս
զմեզ ազատեաց ։

(1) Ա՚այր • 9 : Ի՚ոզ • 6 • 1 : Ի՚ոզ • բ • 8 • 20 : Նէէ • Բ • 10 : (2) Ն՚ննէ • Խբ • 10 : Գ՚ան • Բ • 24 : Մ՚ոբ՚ • ա • 15 : Նէէ՚ • ա • 10 : (3) Ն՚ննէ • գ • 15 : Ն՚ոյ • 6 • 14 : Մ՚ոբ՚ • 6 • 2 : Մ՚ոբ՚ • ա • 23 : Գ՚ոբ՚ • ա • 31 : բ • 7 : (4) Հ՚ոլ՚ • ա • 14 : Ե՚ոա՚ • ա • 3 : Փիլ՚ • բ • 7 : Նէէ • բ • 14 : (5) Մ՚ոբ՚ • 6 • 17 : Գ՚ոբ՚ • բ • 27 : (6) Հ՚ոլ՚ • ա • 12 : գ • 26 : Նէէ՚ • ա • 5 : (7) Մ՚ոբ՚ • ի • 28 : Ի՚ոզ • գ • 13 : Տ՚իա • բ • 14 : Նէէ • Բ • 12 : Նէէ՚ • ա • 7 : ա Պ՚ոբ՚ • ա • 18 , 19 : (8) Ե՚ոա՚ • 6 • 5 : ը • 15 : (9) Ե՚ոա՚ • ը • 16 , 17 : (10) Նէէ՚ • բ • 12 : ա Թ՚ես • գ • 3 : (11) Ե՚ոա՚ • ա • 35 : ա Կ՚որն • ժբ • 3 : Նէէ՚ • բ • 11 , 12 : ա Թ՚ես • ա • 9 : (12) ա Կ՚որն • ը • 3 : ժգ • 12 : բ Տ՚իմ • բ • 19 : (13) Ի՚ոզ • գ • 3 : Կ՚ոդ • բ • 20 : (14) Ե՚ոա՚ • ը • 3 : Նէէ • 6 • 18 : Ա՚իր • 3 : (15) Ե՚ոա՚ • ժգ • 5 : Կ՚ոզ • բ • 16 :

Digitized by Google

11 Երկնչեմ՝ ի ձէնջ , զուցէ թէ ՝ի զուր ինչ վաստակեցի ՝ի ձեզ :

12 Եղերուք իբրև զիս , քանզի և ես իբրև զձեզ էի . եղբարք՝ աղաչեմ զձեզ , չէիք ինչ ձեր մեզացեալ առ իս :

13 Գիտէք զուք՝ զի ակարու- թեամբ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն . և զփորձանան՝ որ ՝ի մարմնի իմում էին ,

14 Ո՛չ անարգեցիք՝ և ո՛չ անգոս- նեցիք . այլ իբրև զՀրեշտակ Աս- տուծոյ ընկալայք զիս՝ իբրև զՔրիստոս Յիսուս :

15 Ուր արդ ո՞ւր է երանութիւ- նըն ձեր . վկայեմ ձեզ , եթէ հնա- րաւոր ինչ էր՝ զաչս ձեր հանէիք և տայիք ինձ :

16 Արդ՝ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ , զի ճշմարտեմ ձեզ :

17 Ասէ նախանձեցուցանեն զձեզ ո՛չ ՝ի բարի . և ապգելուլ կամին զձեզ՝ զի նոցա նախանձուրք լի- նիցիք :

18 Լաւ է նախանձաւոր լի- նել ՝ի բարիս յամենայն ժամ , և ո՛չ միայն յորժամ ՝ի ձերում միջի իցեմ :

19 Որդեակք իմ , զորս դարձեալ վերստին երկնեմ , մինչև նկարես- ցի Քրիստոս ՝ի ձեզ :

20 Կամէի այժմ գալ առ ձեզ՝ և փոխել զձայրաց իմ . զի տարա- կուսեալ եմ ես վասն ձեր :

21 Ասացէք ինձ դուք՝ որ ընդ օրինա- քըն կամիք լինել , չիցէ՞ ընթերց- եալ ձեր զօրէնս :

11 Ա մեռանիմ ձեղանից՝ որ չգ- լինի թէ զուր տեղն աշխատեցի ձեզ միջոցին[16] :

12 Ինձ նման էլէք , ինչու որ ես էլ ձեզ նման էի . եղբարք՝ աղա- չում եմ ձեզ , դուք ինձ դէմ ոչ մեղք չէք արել[17] :

13 Գուք գիտուքիք՝ որ մարմնոյ տկարութենով[18] առաջին անգամ աւետարանեցի ձեզ[19] . և էն փոր- ձանքներըն՝ որ իմ մարմնումս էին ,

14 Չանարգեցիք՝ և երեսից չդ- ձգեցիք . բայց ինչպէս Աստուծոյ հրեշտակ ընդունեցիք ինձ[20] ինչպէս Քրիստոսն[21] :

15 Պա որտեղ է էն ձեր երա- նութիւնն . վկայում եմ ձեզ համար , որ եթէ կարելի էր՝ ձեր աչքերըն (էլ) կըհանէիք և ինձ կըտայիք :

16 Ուրեմն՝ միթէ թշնամի՞ էլայ ձեզ , ներհամար որ ճշմարիտն ասացի[22] :

17 Նայց (նորանք) ձեզ նախան- ձով են շարժում՝ չէ թէ բարի բանի համար . և կամենում են ար- գելել ձեզ՝ որ նորանց համար նա- խանձաւոր լինիք[23] :

18 Նայց լաւ է բարի բանների հա- մար ամեն ժամանակ նախանձաւոր լինելն , և չէ թէ միանակ երբոր ձեր միջումն լինիմ :

19 Իմ որդեակներս , որ ձեզ միև- էլ ցաւով ծնումեմ , մինչև որ Քրիստոս կերպարանվի ձեզանում[24] :

20 կամենումի որ հիմիկ ձեզ մօ գամ՝ և իմ ձայներս փոխեմ . ին- չու որ՝ տարակուսանքի մէջ եմ ձեզ համար :

21 Ասացէք ինձ դուք՝ որ կամ- նում օրէնքի ներքևն լինել , մի- թէ դուք օրէնքըն չէք կարդացել :

(16) Գաղ . բ . 2 : ե . 2 . 4 : ա հին . գ . 5 : (17) բ կորնթ . բ . 5 : (18) ա կո- րնթ . բ . 3 : բ կորնթ . ժա . 30 : ժբ . 7 . 9 : (19) Գաղ . ա . 6 : (20) բ թես . ժբ . 27 : Մաղ . բ . 7 : Ղուկ . ժբ . 8 : (21) Մատթ . ժ . 40 : Ղուկ . ժ . 16 : Յովհ . ժգ . 20 : ա հին . բ . 13 : (22) Գաղ . բ . 5 . 14 : (23) Հռովմ . ժ . 2 . 6 կորնթ . ժ . 3 : (24) ա կորնթ . գ . 15 : փիլիպ . 10 : Յով . ա . 16 :

Digitized by Google

22 Ո՛չ գրեալ է թէ Աբրահամ երկու որդիք էին , մի յազախնոյ անտի , և մի յազատէն :

23 Այլ որ յազախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր , և որ յազատէն՝ ըստ աւետեաց :

24 Որ է առակ օրինակի . զի այս ինքն են երկու կտակարանք , մի՝ ի Լեռնէ Սինայ՝ ի ծառայութիւն ծնեալ՝ որ է Հագար :

25 Հագարն՝ Լեառն Սինայ է յԱրաբիա , հաւասար է այսմ Երուսաղէմի . զի ծառայէ որդւովք իւրովք հանդերձ :

26 Այլ վերինն Երուսաղէմ ազատ է , որ է մայր մեր ամենեցուն :

27 Ո՛չ գրեալ է . Ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ծնանէիր , գոչեա՛ և աղաղակեա՛ որ ոչդ երկնէիր . զի բազում են որդիք սկնդկիդ առեալ քան զարամբուին :

28 Այլ մեք եղբարք՝ ըստ Իսահակայ աւետեացն որդիք եմք :

29 Այլ որպէս յայնժամ , որ ըստ մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զոգին որ ըստ հոգւոյն , նոյնպէս և այժմ :

30 Այլ զի՞նչ ասէ գիր . Ի բաց հան զաղախնիդ և զորգի դորա . զի մի՛ ժառանգեսցէ որդի աղախնոյն ընդ որդւոյն ազատի :

31 Վասն որոյ եղբարք՝ չեմք որդիք աղախնոյն , այլ ազատին . ա-

22 Որ գրված է՝ թէ Աբրահամ երկու որդիք ունէր , մինէն աղախնից (պրօսէլեան)[25] , և մէկէլէն ազատից[26] :

23 Այլ նա՝ որ աղախնից էր՝ մարմնոյ կողմանէն էր ծնված[27] , և նա՝ որ ազատից՝ աւետիքին պէս[28] :

24 Որ էս օրինակի առակ է . ինչու որ՝ էնոնց էս երկու կտակարանն են , մինն Սինայ սարից ծառայութեան մէջ ծնված՝ որ Հագարն էր[29] :

25 Պատճառն որ՝ Հագարն Սինա սարն է՝ Արաբիայումն , և հասած է էս Երուսաղէմիս . որ իրան որդիքներովն ծառայ է :

26 Այլ վերին Երուսաղէմն ազատ է , որ մեր ամէնի մայրն է[30] :

27 Պատճառն որ գրված է թէ , Ուրախ կաց ամլ ամուլդ՝ (չբերդ) որ չէիր ծընում , կանչիր և աղաղակիր դու՝ որ երեխայ բերելդ ցաւ չէիր քաշում . ինչու որ դու բազմաթոռվածդ աւելի որդիք ունիս՝ քան թէ մարդ ունօղն[31] :

28 Այլ մենք եղբարք՝ Իսահակին պէս աւետիքի որդիքն ենք[32] :

29 Այլ ինչպէս որ էն ժամանակումն նա՝ որ մարմնոյ կողմանէ ծընված էր , հալածումէր նորան՝ որ հոգոյ կողմանէն էր[33] , էնպէս էլ հիմիկ[34] :

30 Այլ գիրքն ի՞նչ է ասում[35] . Ածուրս հանիր աղախինն (պօսէլ) և նորա որդին[36] . որ աղախնի որդին ժառանգութիւն չըստանայ ազատի որդոյն հետ[37] :

31 Արդեամար եղբարք՝ մենք աղախնի որդիք չենք , բայց ազատին[38] ,

(25) Գաղատ . ժգ . 15 : (26) Գաղատ . բ . 3 : (27) Հռոմ . բ . 7 , 8 : (28) Գաղատ . ժգ . 10 . 15 : բ . 1 , 2 : Եբր . ժ . 11 : (29) բ Օրին . լդ . 2 : (30) Նոյ . բ . 3 : Եբր . ժբ . 22 : Հայտ . գ . 12 : բ . 2 . 10 : (31) Նոյ . ծգ . 1 : (32) Գործ . գ . 25 : Հռոմ . բ . 8 : Գաղ . գ . 29 . (33) Գաղատ . բ . 9 : (34) Գաղ . ե . 11 : գ . 13 : (35) Գաղ . գ . 8 . 22 . (36) Գաղատ . բ . 16 . 12 : (37) Հռոմ . ը . 35 . (38) Հռոմ . ը . 36 : Գաղ . ե . 1 . 13 :

Digitized by Google

զաւուրքեամբն , որով Քրիստոս էն ազատութենովն՝ որ Քրիստոս զմեզ ազատեցոյց ։ նորանուվ մեզ ազատ արաւ[20] ։

Գլ. Ե

1 Հորդորանքն նորանք՝ որ իրանց ազատութեան մէջն հաստատ կենան , 3 և թլփատութեան ծառայ չըլլնին , 13 Հայց սիրով ծառայեն իրար , ինչու որ օրէնքի կատարվիլն սիրէն է ։ 19 Մարմնոյ գործքերն , 22 և հոգւոյ պտուղներն ։ 25 Հոգւով ապրելոյ մի յորդորանք ։

1 Պինդ կացէք այսու հետև , և մի՛ միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանէք ։

2 Ահաւասիկ ես Պօղոս ասեմ ձեզ . զի եթէ թլփատիք , Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ ։

3 Վկայեմ ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի , թէ պարտական է զամենայն օրէնսն կատարել ։

4 Ապրհանեալ էք ի Քրիստոսէ՝ որ օրինօքն արդարանայք . և անկեալ էք ի շնորհաց անտի ։

5 Մեք Հոգւոյն՝ ի հաւատոց յուսոյն արդարութեան ակն ունիմք ։

6 Մի ի Քրիստոս Յիսուս՝ ոչ թլփատութիւն ինչ կարող է և ոչ անթլփատութիւն . այլ հաւատք սիրով յաջողեալք ։

7 Խարուք ընթանայիք . ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել ։

8 Մի այն հրապոյրք՝ ոչ յայնմանէ են՝ որ կոչեացն զձեզ ։

9 փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ ։

10 Վստահ եմ յուսացեալ եմ ի ձեզ Տերամբ՝ թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք ։ Իսկ որ խռովէ զձեզ՝ կրիցէ զդատաստանն՝ որ իցէ ։

1 Արեմն հաստատ կացէք՝ և մինչ ծառայութեան լծոյն ներքեւն մի՛ մտնէք[1] ։

2 Ահա ես Պօղոս ասեմ ձեզ. որ եթէ թլփատվիք , Քրիստոսն իսկի ձեզ օգնութիւն չի անի[2] ։

3 Վկայեմ ամէն մարդոյ հաստատ՝ որ թլփատվուած , թէ նա պարտական է ամէն օրէնքըն կատարել[3] ։

4 Քրիստոսիցն հեռացած էք՝ (դուք) որ օրէնքովն էք կամենում արդարանալ[4] . և շնորհքիցն վերընկած էք[5] ։

5 Վասն զի՝ մենք Հոգովն հաւատքիցն ենք սպասում արդարութեան յուսոյն[6] ։

6 Պատճառն որ Քրիստոս Յիսուսումն՝ ոչ թլփատութիւնն մի բան կարող է՝ և ոչ անթլփատութիւնն[7] . բայց հաւատք որ սիրով յաջողված է[8] ։

7 Լաւ էիք վազում[9] , ձեզ ով յետ կանգնացրուց՝ որ չըհաւանիք ճշմարտութեանն[10] ։

8 Համոզումն որ էն հաւանացնելն՝ նորանից չէ՝ որ կանչեց ձեզ[11] ։

9 Մի՝ինքիչ խմոր բոլոր շաղախվածըն խմորացնում[12] ։

10 Վստահ եմ ձեզ վերայ յՏէրումն՝ որ ուրիշ բան չըմըն-

(20) Հմմ . ը . 22 ։ Հռոմ . գ . 18 ։ ա Պետր . բ . 16 ։ (1) Գործ . ժե . 10 ։ Գաղ . բ . 4 ։ գ . 9 ։ (2) Գործ . ժե . 1 ։ Գործ . ժզ . 3 ։ (3) Գաղ . գ . 10 ։ (4) Հռոմ . բ . 31 , 32 ։ Գաղ . բ . 21 ։ (5) Ղեբ . ժբ . 15 ։ (6) Հռոմ . ը . 24 , 25 ։ բ Տիմ . գ . 8 ։ (7) ա Կորնթ . է . 19 ։ Գաղ . գ . 28 ։ գ . 15 ։ կազ . գ . 11 ։ (8) ա Թես . ա . 3 ։ Հով . բ . 18 . 20 . 23 ։ (9) ա Կորնթ . թ . 24 ։ (10) Գաղ . գ . 1 , (11) Գաղ . ա . 6 ։ (12) ա Կորնթ . է . 6 ։ ժե . 33 ։

Digitized by Google

հիցիք · և որ խռովեցուցանէ զը-
ձեզ՝ կրեսցէ դատաստան՝ ո՛ր ոք և
իցէ ։

11 Ա՛յլ ես եղբարք՝ եթէ թլփա-
տութիւն քարոզէի՝ ընդէ՞ր տակա-
ւին հալածիմ · ապա ուրեմն խա-
փանեալ իցէ գայթագղութիւն խա-
չին ։

12 Երանի՛ թէ մնասկատուր իսկ
լինէին՝ որ զձեզն խռովեցուցանեն ։

13 Ո՛վ դուք յազատութիւն կո-
չեցեալ էք՝ եղբարք · միայն զի ա-
զատութիւն ձեր ո՛չ լինիցի ՚ի պատ-
ճառս մարմնոյ · այլ սիրով ծառա-
յեցէք միմեանց ։

14 Ո՛վ ամենայն օրէնք ՚ի մի բան
կատարին · ՚ի սիրեսցեան զընկեր
քո իբրև զանձն քո ։

15 Ա՛պա եթէ զմիմեանս խածա-
տիցէք՝ և ուտիցէք · զգո՛յշ լերուք՝
գուցէ ՚ի միմեանց սատակիցիք ։

16 Ա՛յլ զայս ասեմ · Ո՛գւովն
գնացէք , և զցանկութիւն մարմ-
նոյ մի՛ կատարէք ։

17 Ո՛վ մարմին ցանկայ հակառակ
հոգւոյ , և հոգի հակառակ մարմ-
նոյ · և զի սոքա միմեանց հակա-
ռակ են · մի՛ զոր կամիցիք՝ զայն
առնիցէք ։

18 Ապա եթէ Ո՛գւովն վարիք ,
ապա չէք ընդ օրինօք ։

19 Ո՛վ յայտնի են գործք մարմ-
նոյ , այսինքն են՝ շնութիւն , պո-

ածէք[13] · և նա՝ որ խռովացնէ ձեզ[14] դատաստան կրքաշէ՝ ով որ
լինի[15] ։

11 Ա՛յլ ես եղբարք՝ թէ որ թլփա-
տութիւն քարոզեի[16] էլ ինչու
համար իմ դեռ հալածվում[17] · ա-
պա ուրեմն խաչի գայթակղութիւնն
խափանված լինէր[18] ։

12 Երանի՛ թէ (ձեր միջից) կըտ-
րվէին նորանք[19] որ խռովացնում
ձեզ[20] ։

13 Ինչու որ՝ դուք ազատութեան
մէջ էք կանչվել եղբարք · միայն
թէ ձեր ազատութիւնն պատճառ
չըտայ մարմնոյն[21] · այլ սիրով ծա-
ռայեցէք իրար[22] ։

14 Պատճառն որ՝ ամէն օրէնքն էն
մի՛ն խօքում է կատարվում[23] · (թէ)
Կո ընկերըդ քո անձիդ պէս սի-
րիր[24] ։

15 Ա՛յլ թէ որ իրար կծէք՝ և ու-
տէք , զգո՛յշ կացէք՝ որ չըլինի թէ
իրարից սատակվիք ։

16 Ա՛յլ էս եմ ասում · Ո՛գովն
գնացէք , և մարմնոյ ցանկութիւնըն
մի՛ կատարէք[25] ։

17 Պատճառն որ՝ մարմինն ցան-
կանում հոգոյն հակառակ , և հո-
գին մարմնոյն հակառակ[26] · և ի-
րարվհեռև սորանք իրար հակառակ
են , չըլինի թէ էն որ դուք կա-
մենաք՝ (էն) անէք[27] ։

18 Ա՛յլ թէ որ Ո՛գովն վարվիք՝
ապա օրէնքի տակ չէք[28] ։

19 Պատճառն որ՝ յայտնի են մարմ-
նոյ գործքերըն , որ սորանք են[29]

(13) ը կորնթ · բ · 3 · ը · 23 ։ (14) Գաղ · ա · 7 ։ (15) ը կորնթ · ժ · 6 ։ (16) Գաղ · գ · 12 ։ (17) ա կորնթ · ժե · 30 ։ Գաղ · գ · 29 · գ · 17 ։ (18) ա կորնթ · ա · 23 ։ (19) Հնա · է · 25 ։ ա կորնթ · ե · 18 ։ Գաղ · ա · 9 ։ (20) Գործ · ժե · 1 , 2 · 24 ։ (21) ա կորնթ · ը · 9 · ա Պետ · բ · 16 · բ Պետ · բ · 19 ։ Հռոմ · ե ։ (22) ա կո-
րնթ · թ · 19 ։ Գաղ · գ · 2 ։ (23) Լևտ · ե · 12 · իբ · 40 ։ Հռ · բ · 8 ։ (24) Ղևտ · ժթ · 18 ։ Մատ · իբ · 39 ։ Ա՛ռավ · ժգ · 8 · 9 ։ (25) Ա՛ռավ · գ · 12 · ը · 1 · ե · 13 · ժգ · 14 ։ Ա՛յր · 25 · ա Պետ · բ · 11 ։ (26) Ա՛ռավ · է · 23 · ը · 6 , 7 ։ (27) Ա՛ռավ · է · 15 · 19 ։ (28) Ա՛ռավ · գ · 14 · ը · 2 ։ (29) ա կորնթ · գ · 3 ։ Նէհ · ե · 3 ։ Ես · գ · 5 ։ Հռ · գ · 14 , 15 ։

Digitized by Google

ազնկութիւն , պղծութիւն , գիջու-
թիւն ,
20 կռապաշտութիւն , կախարդու-
թիւն , թշնամութիւն , հեռ , նա-
խանձ , բարկութիւն , հակառակու-
թիւնք , երկպառակութիւնք , հերձ-
ուածք ,
21 ՀԱրբակնութիւնք , սպանու-
թիւնք , արբեցութիւնք , անառա-
կութիւնք , և որ ինչ սոցին նման
են . զոր յառաջագոյն իսկ ասեմ
ձեզ , որպէս կանխաւն ասէի , թէ
որ զայսպիսի ինչ գործեն՝ զարքա-
յութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն :

22 Իսկ պտուղ Հոգւոյն այս է .
սէր , խնդութիւն , խաղաղութիւն ,
երկայնմտութիւն ,
23 Քաղցրութիւն , բարութիւն ,
հաւատք , հեզութիւն , ժուժկա-
լութիւն . զայսպիսեաց ոչ ասի օ-
րէնքն չեն հակառակ :
24 Իսկ որ Քրիստոսեանքն են ,
զմարմինս իւրեանց Ի խաչ հանին
կարեօքն և ցանկութեամբքն հան-
դերձ :
25 Եթէ կեամք Հոգւով՝ ընդ
Հոգւոյն և միաբանեցո՛ւք :
26 Եւ մի՛ լիցուք անապարծք՝ մի-
մեանց ձայն տալով , և ընդ միմեանս
նախանձելով :

շնութիւն , պոռնկութիւն , պըղ-
ծութիւն , գիջութիւն ,
20 կռապաշտութիւն , կախարդու-
թիւն , թշնամութիւն , կռիւ , նա-
խանձ , բարկութիւն , հակառակու-
թիւններ , երկպառակութիւններ ,
բաժանմունքներ ,
21 ՀԱր աչքով նայիլն , սպա-
նութիւններ , հարբեցութիւններ ,
անառակութիւններ , և (էլ) ինչ
որ սրանց նման են . էս որ առա-
ջուց ասում եմ ձեզ , ինչպես որ էլ
սկիզբն ասում էի , թէ (նորանք) որ
էսպէսի բան են գործում՝ Աստու-
ծոյ արքայութիւնըն չեն ժառան-
գիլ[30] :

22 Հայց Հոգոյ պտուղն էս է[31] .
սէր , ուրախութիւն , խաղաղու-
թիւն , երկայնմտութիւն ,
23 Քաղցրութիւն[32] , բարութիւն[33] ,
հաւատք[34] , հեզութիւն , ժուժկա-
լութիւն . էսպէսիներին օրէնքն հա-
կառակ չէ[35] :
24 Հայց նորանք՝ որ Քրիստոսին
են , իրա՛ց մարմիններն խաչ հա-
նեցին ախտերին և ցանկութիւննե-
րին հետ[36] :
25 Մնե որ Հոգով ենք ապրում ,
էլ Հոգոյն հետ միաբան լինինք[37] :
26 Եւ ունայն պարծանքին չըհե-
ւևինք՝ իրար դրդելով , և իրար
վերայ նախանձելով[38] :

ԳԼ · Ը

1 Ընտրեալն յորդորումն նորանք որ սխալմունքով բռնվածներին հեզութեան հոգովը հա-
ստատեն , 2 և իրար բեռքն վերառնեն . 3 Քանից վերդպռեաններին հոգդգութիւն ա-
նեն , 9 Ասրի գործելոցն չգանդրտեան : 13 Ցոյց կըտայ թէ Քրիստոսիչն քարոզել-
ներն ինչ փոք ունեն . 14 ԵՒ քեզըն ուրիշ մի բանով չպարծենալ՝ բայց միայն Աստ-
ծոյ խաչովն :

1 Ա՛ղբարք՝ եթէ յանկարծ ըմ-
բռնեսցի ոք ՚ի ձէնջ յինչ և իցէ
նըն յանկարծ բռնվի ինչ սխալ-

1 Ա՛ղբարք՝ թէ որ ձեզանից մի-
նչ յանկարծ բռնվի ինչ սխալ-

(30) = Կորնթ . գ . 9 : Գաղ . ե . 5 : Կող . գ . 6 : Հայտ . իբ . 15 : (31) Հովհ . ժե .
2 : Գաղ . ե . 9 : (32) Կող . գ . 12 : Հռ . գ . 17 : (33) Հռով . ժե . 14 : (34)
= Կորնթ . ժգ . 7 : (35) = Տիմ . ա . 9 : (36) Հռով . գ . 6 : ժգ . 14 : Գաղ . բ .
19 : = Գնտր . բ . 11 : (37) Հռով . ը . 4 , 5 : Գաղ . 16 : (38) Փիլպ . բ . 3 :

Digitized by Google

յանցանս , դուք որ հոգևորքդ էք՝ հասատատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան . զգոյշ լինիցիք անձանց՝ զի մի՛ և դուք փորձիցիք ։

2 Զմիմեանց բեռն բարձէք , և այնպէս կատարեցէք զօրէնսն Քրիստոսի ։

3 Եթէ համարիցի ոք լինել ինչ՝ և չէցե , զանձն իւր խաբէ ։

4 Զգործ իւր կշռեսցէ իւրաքանչիւրոք , և ապա անձին իւրում միայն պարծանս տացէ , և ոչ՝ առ ընկերասն ։

5 Զի իւրաքանչիւրոք զիւր բեռն բառնալոց է ։

6 Աղաղրդութիւն արասցէ աշակերտն վարդապետին՝ յամենայն բարութիւնս ։

7 Մի՛ խաբիք . Աստուած ոչ արհամարհի ։

8 Զի զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և ընդեսցէ . որ սերմանէ ի մարմին իւր , ի մարմնոյ անտի հընձեսցէ զապականութիւն . և որ սերմանէ ի հոգին՝ ի հոգւոյ անտի ընձեսցէ զկեանն յաւիտենից ։

9 Եւ զբարիս գործել մի՛ ձանձրասցուք , զի ի ժամանակի իւրում ընձեսցուք առանց լքանելոյ ։

10 Ընդ սուս հետև մինչդեռ ժամանակս ի ձեռս է՝ գործեսցուք զբարին առ ամենեսեան , մանաւանդ որ լինին , դուք որ հոգեւորք էք[21] հնազհսինեարին հասատատեցէք հեզութեան հոգւովն[3] . զգոյշ կացէք ձեր անձնեարիդ՝ որ դուք էլ չըմփորձվիք[4] ։

2 Իրար բեռըն վերատէք[5] , և եպէս կատարեցէք[6] ։

3 Զի որ միևն համարի (իրան) թէ միև բան է[7] և չըլինի , նա իրան անձըն խաբուսէ[8] ։

4 Իւրաքանչիւր իրան գործըն կշռէ , և ապա միևնակ իրան անձին պարծանք ասյ[9] , և չէ թէ իրան ընկերին մօ[10] ։

5 Ինչու որ՝ ամեն մէկն իրան բեռըն պիտի վերատնէ[11] ։

6 Ուշակերտան Քրիստ հաղորդութիւն անէ վարդապետին՝ ամեն բարի բաներով[12] ։

7 Մի՛ խաբվիք[13] . Աստուած չի անարգվիլ[14] ։

8 Զի ինչ որ՝ ինչ որ մարդն սերմուսէ՝ հենց էն կըընձէ[15] . նա՝ որ իրան մարմնոյ մէջն է սերմուսէ , էն մարմնիցն ապականութիւնն կըհընձէ[16] . և նա՝ որ Հոգոյ մէջն է սերմուսէ , էն Հոգուցն էլ յաւիտենական կեանքըն կըընձէ ։

9 Հապա չընանձկանանք բարի գործելուցն[17] , ինչու որ՝ իրան ժամանակումն կըընձենք առանց պակասելոյ[18] ։

10 Մերթեմն քանի որ ժամանակն ձեռներումս է[19] բարի գործենք ա-

(1) Հռոմ . ժգ . 1 : ժե . 1 : Նբր . ժբ . 13 : Յակ . ե . 19 : (2) ա Կորնթ . բ . 15 : գ . 1 : (3) ա Կորնթ . գ . 21 : բ Թես . գ . 15 : բ Տիմ . բ . 25 : (4) ա Կորնթ . ե . 5 : ժ . 12 : (5) Հռոմ . ժե . 1 : Գաղ . ե . 13 : ա Թես . ե . 14 : (6) Յովհ . ժգ . 14 , 15 . 34 : ժե . 12 : Յակ . բ . 8 : ա Յովհ . գ . 21 : (7) Հռոմ . ժբ . 3 : ա Կորնթ . ը . 2 : Գաղ . բ . 6 : (8) բ Կորնթ . գ . 5 : ժբ . 11 : (9) ա Կորնթ . ժա . 28 : բ Կորնթ . ժգ . 5 : (10) Ղուկ . ժը . 11 : (11) Հռոմ . բ . 6 : ա Կորնթ . գ . 8 : (12) Հռոմ . ժե . 27 : ա Կորնթ . ք . 11 . 14 : (13) ա Կորնթ . ջ . 9 : ժե . 33 : (14) Յակ . ժգ . 9 : (15) Ղուկ . ժչ . 25 : Հռոմ . ե . 6 : բ Կորնթ . ք . 6 : (16) Յակ . գ . 6 : Ղուկ . ժա . 18 : Բր . 8 : Ովս . ը . 7 : ժ . 12 : Հռոմ . ը . 13 : Յակ . գ . 18 : (17) բ Թես . գ . 13 : ա Կորնթ . ժե . 58 : (18) Մատ . ի . 13 : Նբր . գ . 6 . 14 : ժ . 36 : ժբ . 3 . 5 : Յայտ . բ . 10 : (19) Յովհ . ք . 4 : ժբ . 35 :

Digitized by Google

բիս առ ամենեսեան , մանաւանդ առ ընտանիսն հաւատոց :

11 Տեսէք՝ արդիսն գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ :

12 Օ՛ի որ միանգամ կամին բա- բեմարգիկ լինել մարմնով , նոքա սարսին զձեզ թլփատել . միայն զի մի՛ զխաչին Քրիստոսի զհետ երթիցեն :

13 Վասզի որ թլփատեալքն իսկ են , նոքա զօրէնսն ոչ պահեն . այլ կամին՝ զի դուք թլփատեսջիք , զի ձերով մարմնով պարծեսցին :

14 Այլ ինձ քան լեցի պարծել բայց միայն ՚ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի . որով ինձ աշխարհ ՚ի խաչ ելեալ է՝ և ես աշխարհի :

15 Օ՛ի (՚ի Քրիստոս Յիսուս) , ոչ թլփատութիւն ինչ է՝ և ոչ անթլփատութիւն , այլ նոր արարած :

16 Եւ որ միանգամ այսմ կանոնի միաբան լինին , խաղաղութիւն ՚ի վերայ նոցա և ողորմութիւն՝ և ՚ի վերայ Իսրայէլին Աստուծոյ :

17 Այսուհետև աշխատս ոք զիս մի՛ արասցէ . զի ես զչարչարանս Քրիստոսի ՚ի մարմնի իմում կրեմ :

18 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում՝ եղբարք . ամէն :

մինին Համար[20] , մանաւանդ հաւատքի ընտանիքներին[21] :

11 Տեսէք թէ ինչպէսի գրերով գրեցի ձեզ (չինց) իմ ձեռովս :

12 Այն ամենքն՝ որ կամենուսին հաճոյ երևիլ մարմնոյ կողմանէ , նորանք են ստիպում ձեզ՝ որ թլփատվիք[23] . միայն որպէսզի[24] որ Քրիստոսի խաչի համար չհալածին[24] :

13 Ինչու որ հենց նոքաներ էլ՝ որ թլփատված են , նորանք օրէնքը չեն պահում . բայց կամենում՝ որ դուք թլփատվիք , որ ձեր մարմնովը պարծենան :

14 Այլ ինձ քան լիցի պարծել , բայց միայն մեր Տէր Յիսուսի Քրիստոսի խաչովն[25] . որ նորա նով աշխարհքն ինձ համար խաչ- ված է , և ես էլ աշխարհքին (համար)[26] :

15 Պատճառն որ՝ Յիսուս Քրիստոսում՝ ոչ թլփատութիւնն մին բան է՝ և ոչ անթլփատութիւնն[27] , բայց նոր ստեղծված[28] :

16 Եւ ամենքն՝ որ էս կանոնիս միաբան են[29] , նորանց վերայ (լինի) խաղաղութիւն և ողորմութիւն՝ և էլ Աստծոյ Իսրայէլին վերայ[30] :

17 Այրանից հետև թող մինն չանշխատացնէ ինձ . ինչու որ ես Քրիստոսի չարչարանքներըն իմ մարմնի մէջն եմ առնում[31] :

18 Աւ՛եր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն հոգեյին հետ լինի . ամէն[32] :

Գաղատացոց վերայ Հռոմ գաղութքին գրվեցաւ :

(20) ա Թես . ե . 15 : ա Տիմ . գ . 15 : Տիտ . գ . 8 : (21) Հռով . բ . 10 : Հբր . գ . 6 : (22) Գաղ . բ . 3 . 14 : (23) Փիլիպ . գ . 18 : (24) Գաղ . ե . 11 : (25) Փիլիպ . գ . 3 . 7 , 8 : (26) Հռով . գ . 6 : Գաղ . բ . 19 : (27) ա Կորնթ . է . 19 : Գաղ . ե . 6 : Գաղ . գ . 11 : (28) բ Կորնթ . ե . 17 : (29) Փիլիպ . գ . 16 . (30) Ղուկ . ԺԸ . 5 : Հռով . բ . 29 : գ . 12 : Բ . 6 , 7 , 8 : Գաղ . գ . 7 . 9 . 29 : Փիլիպ . գ . 3 : (31) բ Կորնթ . ա . 5 : գ . 10 : ժա . 23 : Գաղ . ե . 11 : Կող . ա . 24 : (32) բ Տիմ . գ . 22 : Փիլիմ . 25 :

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

2 Պօղոս՝ Աստուծոյ կնդրկքն և խաղաղութիւնն քեզի տեսլուքն, 3 Եւ կիմացեալ համար գոհութիւն տալուքն եւս, և ի ԱՀքիստոնեաներէն ընտրըվելն, 6 Եւ կնդրկով ոգեկիքը լինելն կըպատմէ, 11 Որ նա մարգոյն փրկվելոյն հիմարիա և մինակ հաճապարհքին։ 13 Ինքըն վկայումէ՝ որ նորանք երբոր հիմարութեան խօսքին հաւատացին և Սուրբ Հոգովն կնքվեցան, 16 Հրահամար գոհութիւն կըտայ և աղօթք կանէ, 17 Որ Աստուած նորանց տայ իմաստութեան և գիտութեան հոգին, որ գիտենան՝ իրանց կոչումի յոյսն, 20 Որ նորան Քրիստոսումն յարեցոց, և նորան յաջոյց մեռելներէն վերէն և նստացուց նա իրան աջ կողմն և ամեն բաներէն վերայ և եկեղեցոյ գլուխ գրաւ։

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ՝ Աստուծոյ կամքովն[1] սըրբերին որ Եփեսոսումն են[2], և Քրիստոսումն (կենօղ) հաւատացեալներին[3]։

2 Շնորհք (կենի) քեզ հետ և խաղաղութիւն Աստուած մեր Հօրիցն՝ և Տէր Յիսուս Քրիստոսիցըն[4]։

3 Օրհնեալ է Աստուած՝ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հայրն՝, որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհ-

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ կամօքն Աստուծոյ՝ սրբոց որ են Եփեսոս, և հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս։

2 Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն Այ Աստուծոյ Հօրէ մերմէ՝ և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ։

3 Օրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. որ օրհնեաց զմեզ ամենայն հոգևոր

(1) բ կորնթ. ա. 1։ (2) Հռոմ. ա. 7։ բ կորնթ. ա. 1։ (3) կող. ա. 2։ (4) Գաղ. ա. 3։ Տիտ. ա. 4։ (5) բ կորնթ. ա. 3։ ա պետր. ա. 3։

Digitized by Google

օրինութեամբ յերկնաւորս ՚ի ՎԻՐԻՍՏՈՍ ։

4 Որպէս ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զկենալն աշխարհի , լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով ։

5 Որ յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ՚ի ձեռն Յիսուսի ՎԻՐԻՍՏՈՍԻ ՚ի նոյն՝ ըստ հաճութեան կամաց իւրոց ,

6 ՚ի գովեստ փառաց շնորհաց իւրոց · որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն ։

7 Որով ունիմք զփրկութիւն ՚ի ձեռն արեան նորա , զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց իւրոց ·

8 Որ առաւելաւ ՚ի մեզ ամենայն իմաստութեամբ և գիտութեամբ ։

9 Եցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութեան իւրում · զոր յառաջագոյն եդ նովաւ ,

10 ՚ի տնտեսութիւն լրման ժամանակաց , բովանդակել զամենայն ՎԻՐԻՍՏՈՍԻ , որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի՝ ՚ի նոյն ։

11 Որով և վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք՝ ըստ յառաջադրութեանն Ա՛ստուծոյ · որ զամենայն յաջողէ ըստ խորհրդոց կամս

նութեամբ երկնաւոր բաներուն ՎԻՐԻՍՏՈՍՈՎ ։

4 Ինչպէս որ ընտրեց[6] մեզ նոյնով աշխարհքի լինելուցն առաջ[7] , որ մենք սուրբ և անարատ լինինք նորա առջեւն սիրով[8] ։

5 Ա՛ռաջուց սահմանեց մեզ[9] , որ հենց իրան որդեգիր լինինք Յիսուսի ՎԻՐԻՍՏՈՍի ձեռովն[10] իրան կամքի հաճութեան պէս[11] ,

6 Իրան փառաւոր շնորհաց գովեստին համար · որ որոնով ուրախացուց մեզ[12] էն սիրելիովն[13] ։

7 Որ նորանով ունինք փրկութիւն նորա արիւնովն , մեղաց թողութիւնըն[14] իրան շնորհաց մեծութեան չափովն[15] ·

8 Որ էն աւելցաւ մեզանում ամէն իմաստութենով և գիտութենով ։

9 Ճոյց տուաւ մեզ իրան կամքի խորհուրդներըն՝ իրան հաճոյութեան պէս[16] · էն որ առաջուց դրաւ նորանով[17] ,

10 Ժամանակների լրվելոյ անտեսութեան համար[18] , որ ամէն բան[19] բոլորվի ՎԻՐԻՍՏՈՍովն , ինչ որ երկրումն էն և ինչ որ երկրումն հենց նորանո՛վ[20] ։

11 Որ նորանով էլ սաղցանք ժառանգութիւնըն մենք[21] որ առաջուց հրաւիրվեցանք , Ա՛ստուծոյ առաջադրութեան պէս[22] · որ ամէն բան

(6) ա Պետր · ա · 2 , 3 ։ (7) Ա՛ռաջ · ը · 28 · բ Թես · բ · 13 · բ Տի՛մ · ա · 9 · Հով· բ · 5 · ա Պետր · ա · 2 · բ՚ · 9 · (8) Ա՛ռաջ · ա · 75 · Եփես · բ · 10 · ե · 27 · (9) Ա՛ռաջ · ը · 29 , 30 · Ա՛մոս · 11 · (10) Հովհ · ա · 12 · Ա՛ռաջ · ը · 15 · բ Կորնթ · գ · 18 · Գաղ · դ · 5 · ա Հովհ · գ · 1 · (11) Մարկ · ժա · 26 · Ա՛ռաջ · ժբ · 32 · ա Կորնթ · ա · 21 · Ա՛մոս · 9 · (12) Ա՛ռաջ · դ · 24 · ե · 15 · (13) Մարկ · գ · 17 · ժե · 5 · Հովհ · գ · 35 · ժ · 17 · (14) Կոլոս · բ · 28 · Ա՛ռաջ · գ · 21 · Գաղ · ա · 14 · Եբր · բ · 12 · ա Պետր · ա · 18 , 19 · Հայտ · ե · 9 · (15) Ա՛ռաջ · բ · 4 · գ · 24 · բ · 23 · Եփես · բ · 7 · գ · 8 · 16 · Փիլիպ · գ · 19 · (16) Ա՛ռաջ · ժգ · 25 · Եփես · գ · 4 · 9 · Գաղ · ա · 26 · (17) Եփես · գ · 11 · բ Տի՛մ · ա · 9 · (18) Գաղ · գ · 4 · Եբր · ա · 2 · բ՚ · 19 · ա Պետր · ա · 20 · (19) ա Կորնթ · գ · 22 , 23 · ժա · 3 · Եփես · բ · 15 · գ · 15 · (20) Փիլիպ · բ · 9 , 10 · Կող · ա · 29 · (21) Գործ · ի · 32 · իգ · 18 · Ա՛ռաջ · ը · 17 · Գող · ա · 13 · գ · 24 · Տիտ · գ · 7 · Հով · բ · 5 · ա Պետր · ա · 4 · (22) Գլխ · 5 ։

Digitized by Google

մաց իւրոց ։

12 Լինել մեզ ՚ի գովեստ փառաց նորա յառաջագոյն յուսացելոցս ՚ի Քրիստոս ։

13 Որով և դուք իբրև լուարուք զբանն ճշմարտութեան , զաւետարանին փրկութեան ձերոյ , որով և հաւատացեալ կնքեցայք Հոգւովն Սրբով աւետեաց ։

14 Որ է առհաւատեայ ժառանգութեան մերոյ , ՚ի փրկութիւն նաւաճութեան , ՚ի գովեստ փառաց նորա ։

15 Վասն այնորիկ և ես իբրև լուայ զհաւատան զձեր՝ որ ՚ի Տէր Յիսուս , և զսէրն որ ընդ ամենայն սուրբս ,

16 Ոչ դադարեմ ՚ի գոհանալոյ վասն ձեր՝ յիշել զձեզ յաղօթս ։

17 Զի Աստուած Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Հայրն փառաց՝ տացէ ձեզ զՀոգին իմաստութեան և յայտնութեան՝ գիտութեամբն իւրով ։

18 Լուսաւոր առնել զաչս սրտից՝ առ ՚ի գիտելոյ մեզ՝ զինչ է յոյս կոչման նորա , և զինչ մեծութիւն փառաց ժառանգութեան նորա ՚ի սուրբս ։

19 Եւ զի՞նչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նորա ՚ի մեզ հաւատացեալս . ըստ յաջողութեան կարողութեան զօրութեան իւրոյ ։

20 Զոր յաջողեաց ՚ի Քրիստոս . զի յարոյց զնա ՚ի մեռելոց՝ և նըս-

յաջողութիւն իրան կամքի խորհուրդ-ներին պէս[23] ։

12 Որ մենք գովասանք լինինք նորա փառացն[24] , որ առաջուց մեր յոյսն Քրիստոսի վերայ ենք դրել[25] ։

13 Որ նորանով դուք էլ երբոր ճշմարտութեան խօսքըն լսեցիք՝ ձեր փրկութեան աւետարանն[26] , որ նորան էլ երբոր հաւատացիք՝ աւետիքի Սուրբ Հոգովն կնքվեցաք[27] ։

14 Որ նա մեր ժառանգութեան գրաւն է[28] , մինչև (իւան) ատացվածի[29] փրկութիւնըն[30] , որ նորա փառացն գովասանք լինի[31] ։

15 Վարդաման ես էլ երբոր լսեցի ձեր հաւատքն՝ որ (ունիք) Տէր Յիսուսին վերայ , և էն սէրըն որ դէպի ամէն սըրբերն ունիք[32] ,

16 Չեմ դադարում ձեզ համար գոհութիւն տալուց՝ և յիշումեմ ձեզ աղօթքումս[33] ։

17 Որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Աստուածն[34] փառաց Հայրն՝ տայ ձեզ իմաստութեան և յայտնութեան հոգին՝ իրան գիտութեանովն[35] ։

18 Որ լուսաւոր անէ (մեր) սրտերի աչքերըն[36] , որ մենք գիտենանք՝ թէ ի՞նչ է էն մեր կոչումի յոյսն[37] , և ի՞նչ է իրան ժառանգութեան փառաւոր մեծութիւնն , որ է սրբերումն[38] ։

19 Եւ ի՞նչ է նորա զօրութեան գերազանց մեծութիւնըն մեզանում՝ որ հաւատացինք , իրան կայօղ զօրութեան յաջողութեան պէս[39] ,

20 Որ Քրիստոսումն յաջողեց . ինչու որ յարոյց նորան մեռելներէ

(23) Նաւ . խգ . 19 , 11 ։ (24) Վեր . 6 ։ Պայր . 18 ։ բ Թես . բ . 13 ։ (25) Յով . ա . 18 ։ (26) Յովհ . ա . 17 ։ բ Պետր . գ . 7 ։ (27) բ Պետր . ա . 22 ։ Եփես . գ . 30 ։ (28) բ Պետր . ա . 23 ։ ե . 5 ։ (29) Գործ . ի . 28 ։ (30) Ղուկ . իա . 28 ։ Հռովմ . ը . 23 ։ Եփես . գ . 30 ։ (31) Վեր . 6 . 12 ։ (32) Պղ . ա . 4 ։ Փիլիմ . 5 ։ (33) Հռովմ . ա . 9 ։ Փիլպ . ա . 3 ։ 4 ։ Պղ . ա . 3 ։ ա Թես . ա . 2 ։ բ Թես . ա . 3 ։ (34) Յովհ . ի . 17 ։ (35) Պղ . ա . 9 ։ բ . 3 ։ (36) Գործ . իգ . 18 ։ (37) Եփես . բ . 12 ։ գ . 4 ։ (38) Վեր . 11 ։ (39) Եփես . գ . 7 ։ Պղ . ա . 29 ։ բ . 12 .

Digitized by Google

տղայ ընդ աջմէ իւրմէ յերկնաւորս :

21 'Ի վերայ ամենայն իշխանութեան և պետութեան և զօրութեան և աէրութեան և ամենայն անուան անուանելոյ , ո՛չ միայն յաշխարհիս յայսմիկ՝ այլ և 'ի հանդերձելումն :

22 Եւ զամենայն ինչ ՚ևնազանդ առեր 'ի ներքոյ ոտից նորա , և զնա եդ գլուխ 'ի վերայ ամենայն իրիք եկեղեցւոյ ,

23 Որ է մարմին նորա , լրումն՝ որ զամենայն յամենայնի լնու :

միջինն[40] , և իրան աջ կոզմն նըստացրուց երկնքումն[41] :

21 Ըմէն[42] իշխանութեան և պետութեան և զօրութեան և աէրութեան վերայ՝ և ամէն անուններին վերայ՝ որ անուանվումեն , ո՛չ թէ միայն այս աշխարհքումն՝ բայց էլ էն նոր եկողի մէջն[43] :

22 Եւ ամէն բան ՚ևազանգացրուց նորա ոտաց ներքևն[44] , և նորան գլուխ դրաւ եկեղեցոյ ամէն բաներին վերայ[45] :

23 Որ էն նորա մարմինն է[46] , (նորա) լիութիւնն[47] որ ամէնըն ամէնի մէջն լցնում[48] :

ԿՈԼ • Ա

1 Ըստացեալը հաստատում թէ մենք ամէնքս էլ ինչ էինք մին ժամանակ բնութիւնով , և հաւիք ինչպես կենդանի ենք , 5 Շնորհով , 10 Նշ թէ բարի գործքեր անելոյ համար ստեղծված ենք , 11 Զարհամարը պետք չէ որ հեթանոսներին պես ապրինք , 12 Որ մեր ժամանակ առանց Քրիստոսի և առանց Ըստուծոյ էինք աշխարհքումս , 13 Այլ հաւիք մեռաւոր եղանք Քրիստոսի արիւնովը , 19 Նշ սրբերին հետ քաղաքացիներ և Ըստուծոյ ընտանիքներ :

1 Եւ դուք՝ որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր և յանցանս .

2 Յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենից աշխարհիս այսորիկ՝ ըստ իշխանին իշխանութեան օդոյն այսոյ , որ այժմ ընդմեսամէ է յորդիսն ապստամբութեան :

3 Յորս և մեք ամենեքեան շըրջեցաք երբեմն 'ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ , և առնէաք զկամս մարմնոյ

1 Եւ դուք[1] որ մեռած էիք ձեր մեղքերումն և յանցանքներումն[2] .

2 Որ նորանցում մին ժամանակ գնում էիք աշխարհքիս սովորութեան պէս[3] էն իշխանին պէս՝ որ էս օդիս (հաւոյնս) մէջն իշխանութիւն է անում[4] , էն չար հոգւոյն պէս՝ որ հիմիկ մտել է ապստամբութեանն որդիքների մէջ[5] :

3 Որ նորանց միջումն մենք ամէնքըս էլ մին ժամանակ մեռն էինք գալիս[6] մեր մարմնոյ ցանկութիւն-

(40) Կող . բ . 24 . 32 : (41) Սաղ . ճժ . 1 : Գործ . է . 55 : Կող . գ . 1 : Եբր . ա . 3 : ժ . 12 : (42) Փիլիպ . բ . 9 , 10 : Կող . բ . 10 : Եբր . ա . 4 : (43) Ես-այի . ը . 38 : Կող . ա . 16 : բ . 15 : (44) Սաղ . ը . 6 : Մատթ . իը . 18 : ա Կորնթ . ժե . 27 : Եբր . բ . 8 : (45) Եփես . գ . 15 , 16 : Կող . ա . 18 : Եբր . բ . 7 : (46) Ես-այի . ժբ . 5 : ա Կորնթ . ժբ . 12 . 27 : Եփես . գ . 12 : է . 23 . 30 : Կող . ա . 18 . 24 : (47) Կող . բ . 9 , 10 : (48) ա Կորնթ . ժբ . 6 : Եփես . գ . 19 : Կող . գ . 11 : (1) Հովհ . է . 24 : Կող . բ . 13 : (2) Ա . Պետ . 5 . Եփես . ը . 18 : (3) ա Կորնթ . ը . 11 : Եփես . գ . 22 : Կող . ա . 21 . գ . 7 : ա Հովհ . է . 19 : (4) Եփես . ը . 12 : (5) Եփես . է . 6 : Կող . գ . 6 : (6) Յհ . գ . 3 : ա Պետր . գ . 3 :

Digitized by Google

նոյ՝ և զմեռց , և էաք արդարև պտղիք բարկութեան իբրև այլքն ։

4 Եայլ Աստուածն՝ որ մեծն է ողորմութեամբ , վասն բազում սիրոյն իւրոյ՝ զոր սիրեացն զմեզ ,
5 Ոյնչդեռ մեռեալն էաք ի մեղս մեր , կենդանիս արար զմեզ ի Քրիստոս . քանզի շնորհօք ապրեցաք ։
6 Եւ նմին յարոյց , և ընդ նմին նստոյց յերկնաւորս ի Քրիստոս Յիսուս ։
7 Զի ցուցցէ ի յաւիտեանան որ գալոցն են՝ զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց՝ քաղցրութեամբ ի մեզ ի Քրիստոս Յիսուս ։

8 Զի շնորհօք նորա էք փրկեալք ի ձեռն հաւատոցն . և այս ոչ ի ձէնջ , այլ Աստուծոյ պարգև է ։
9 Ոչ ի գործոց , զի մի՛ ոք պարծեսցի ։
10 Զի նորա արարածք եմք՝ հաստատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ ի գործս բարութեան , յորս յառաջագոյն պատրաստեաց Աստուած , զի ի նոսին գնասցուք ։

11 Վասն որոյ և դուք յիշեցէք՝ զի երբեմն հեթանոսք էիք մարմնով . որ կոչեցեալն են անթլփատութիւն՝ յանուանեալ թլփատու-

նեղուսն , և մարմնոյ և մաքի կամքըն կատարումիւնք՝ , և իրաւի բարկութեան որդիք էինք՝ ինչպէս ուրիշներն[8] ։
4 Բայց Աստուածն՝ որ մեծ է ողորմութենով , իրան շատ սիրոյն համար՝ որ սիրեց մեզ[9] ,
5 Երբոր մեռած էինք (մեր) մեղքերուն[10] , մեզ կենդանի արաւ Քրիստոսաւն[11] . ինչու որ շնորհքով ապրեցանք[12] ։
6 Նորա հետ (մեզ) յարոյց , և նորա հետ երկնքուն նստացուց՝ Քրիստոս Յիսուսաւն[13] ։
7 Որ նոր եկող ժամանակներուն յայտ տայ՝ իրան շնորհաց գերազանց մեծութիւնըն , էն քաղցրութենովն՝ որ մեզ վերայ էլաւ Քրիստոս Յիսուսաւն[14] ։
8 Պատճառն որ՝ նորա շնորհքովն փրկված էք[15] հաւատքի ձեռովն[16] . և էս ոչ թէ ձեզանից է , այլ Աստուծոյ պարգևն է[17] ։
9 Ոչ թէ գործքերուցն , որ իւրի մինն չըպարծենայ[18] ։
10 Ինչու որ՝ նորա ստեղծվածն ենք[19] Քրիստոսով Յիսուսով հաստատված բարի գործքերուն համար . որ Աստուած նորանց համար առաջուց պատրաստեց մեզ , որ նորանցումի վարվինք[20] ։
11 Ուրեմն դուք էլ մանչներդ բերքէք՝ որ ժամանակով հեթանոս էիք մարմնոյ կողմանէ[21] , որ անթլփատութիւն են կոչված էն մարմ-

(7) Իսայ . ե . 16 ։ (8) Կաղմ . ծա . 5 ։ Հռովմ . ե . 12 . 14 ։ (9) Հռովմ . ժ . 12 ։ Եփես . ա . 7 ։ Կայր . 7 ։ (10) Հռովմ . ե . 6 . 8 . 10 ։ Կիր . 1 ։ (11) Հռովմ . գ . 4 , 5 ։ Կող . բ . 12 , 13 ։ գ . 1 . 3 ։ (12) Պորձ . ժե . 11 ։ Կայր . 8 ։ Տիտ . գ . 5 ։ (13) Եփես . ա . 20 ։ (14 Տիտ . գ . 4 ։ (15) Կիր . 5 ։ Հռովմ . գ . 24 ։ բ Տիմ . ա . 9 ։ (16) Հռովմ . գ . 16 ։ (17) Մարկ . ժգ . 17 ։ Յովհ . գ . 44 . 66 ։ Հռովմ . ժ . 14 , 15 . 17 ։ Եփես . ա . 19 ։ Փիլիպ . ա . 29 ։ (18) Հռովմ . գ . 20 . 27 , 28 ։ դ . 2 ։ բ . 11 ։ ժա . 6 ։ ա Կորնթ . ա . 29 , 30 , 31 ։ բ Տիմ . ա . 9 ։ Տիտ . գ . 5 ։ (19) բ Օրին . ը . 6 ։ Աստ . ա . 8 ։ Նաում . ժբ . 25 ։ խբ . 23 ։ խգ . 21 ։ Յովհ . գ . 3 . 5 ։ ա Կորնթ . գ . 9 ։ բ Կորնթ . ե . 5 . 17 ։ Եփես . գ . 24 ։ Տիտ . բ . 14 ։ (20) Եփես . ա . 4 ։ (21) ա Կորնթ . ժբ . 2 ։ Եփես . ե . 8 ։ Կող . ա . 21 ։ բ . 13 ։

Digitized by Google

թենէ անոի մարգեաւոր ձեռագործին ։

12 Օ՛ի էիք ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի , (և օտարացեալ յաւանդութենէն Իսրայէլի ,) և աստգիրք յուխտից աւետեացն , և յոյս ինչ ոչ ունէիք՝ և անաստուածք էիք յաշխարհի ։

13 Իակ այժմիկ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի , դուք՝ որ երբեմն հեռաւորքն էիք՝ մերձաւորք եղեր ուք արեամբն Քրիստոսի ։

14 Օ՛ի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զերկուսեան մի . և զմիջնորմն ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւն ի մարմնի իւրում ։

15 Եւ զօրէնս պատուիրանացն հրամանաւքն խափանեաց . զի զերկուսին հաստատեսցէ ինքեամբ ի մի նոր մարդ , և արասցէ խաղաղութիւն ։

16 Եւ հաշտեցուսցէ զերկոսին միով մարմնով ընդ Աստուծոյ՝ խաչին իւրով , քանզի սպան զթշնամութիւն յանձին իւրում ։

17 Եւ եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց՝ և խաղաղութիւն մերձաւորաց ։

18 Օ՛ի նովաւ ունիմք զնուաճութիւն երկոքին՝ միով Հոգւով առ Հայր ։

19 Ո՛պա այսուհետև ոչ էք օտարք և պանդուխտք , այլ քաղաքակիցք

նաւոր ձեռքով արած թլփատութենէն[23] ։

12 Որ էն ժամանակումն էիք առանց Քրիստոսի[23] , և օտարացած Իսրայէլի քաղաքավարութենից[24] . և դուրս արած աւետիքի ախտապայմանից[25] , իակի յոյս չունէիք[26] , և առանց Աստուծոյ էիք աշխարհքումս[27] ։

13 Այց հիմիկ Յիսուսի Քրիստոսի ձեռնէն , դուք[28] որ ժամանակով հեռաւոր էիք՝ մօտաւոր եղաք Քրիստոսի արիւնովն[29] ։

14 Պատճառն որ՝ նա է մեր խաղաղութիւնն[30] որ երկուսին մին արաւ[31] . և մէջտեղ դրած պատն (պսակն) թշնամութիւնըն քանդեց[32] իրան մարմնովն[33] ։

15 Եւ հրամանքներով դրած պատուիրանքներուն օրէնքն խափանեց . որ հենց իրանով երկուսին մին նոր մարդ (շինէ) հաստատէ[34] , և խաղաղութիւն անէ ։

16 Եւ երկուսին մին մարմնով հաշտացնէ Աստուծոյ հետ՝ իրան խաչովն[34] . ինչու որ՝ թշնամութիւնըն սպաննեց իրան անձնաւն[36] ։

17 Եւ եկաւ աւետարանեց խաղաղութիւն ձեզ հեռաւորներիդ[37] և խաղաղութիւն մօտաւորներին[38] ։

18 Պատճառն որ՝ նորանով երկուքս[39] մին Հոգով ունինք մօտենալն Հօր (Աստուծոյ) մօտ[40] ։

19 Ա՛պա այսուհետև օտար և պանդխտ (պտիկ) չէք , բայց պրպ-

(22) Հռով . բ · 28 , 29 ։ Կող . բ · 11 ։ (23) Եփես . գ · 18 · Կող . ա · 21 ։ (24) Եփես . ժգ · 9 ։ Յովհ . ժ · 16 ։ (25) Հռով . բ · 4 · 8 ։ (26) ա Թես . գ · 12 ։ (27) Կող . գ · 8 ։ ա Թես . գ · 5 ։ (28) Կող . գ · 28 ։ (29) Կոր . բ · 39 · Գործ . 17 ։ (30) Միխ . ե · 5 ։ Յովհ . ժգ · 33 ։ Կոր . ժ · 36 · Հռով . ե · 1 · Կող . ա · 20 ։ (31) Յովհ . ժ · 16 · Կող . գ · 28 ։ (32) Կող . բ · 14 · 20 ։ (33) Կող . ա · 22 ։ (34) բ Կորնթ . ե · 17 · Գաղ . գ · 15 · Եփես . գ · 24 ։ (35) Կող . ա · 20 , 21 , 22 ։ (36) Հռով . գ · 6 · բ · 3 · Կող . բ · 14 ։ (37) Եսայ . ծե · 19 · Ղուկ . թ · 10 · Գործ . բ · 39 · ժ · 36 · Հռով . ե · 1 · Գէր . 13 , 14 ։ (38) Գործ . ԺԲ · 14 ։ (39) Յովհ . ժ · 9 · ժգ · 6 · Հռով . ե · 2 · Եփես . գ · 12 · Եբր . գ · 16 · ժ · 19 , 20 · ա Պետր . գ · 18 ։ (40) ա Կորնթ . ժբ · 18 · Եփես . գ · 4 ։

Digitized by Google

սրբոց և ընտանիք Աստուծոյ ։

20 Ո՞վ ինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից . որոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս ։

նրա՝ ի պարծանս ինձ յաւուրն Քրիստոսի. զի ոչ ընդունայն ինչ ընթացայ՝ և ոչ ընդունայն վաստակեցի ։

17 Այլ թէպէտ և նուիրիմ ի վերայ պատարագի և պաշտաման հաւատոց ձերոց, խնդամ և ուրախակից եմ ամենեցուն ձեր ։

18 Նոյնպէս և դուք խնդացէք՝ և ուրախակից եղերուք ինձ ։

19 Այլ յուսամ ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վաղվաղակի արձակել առ ձեզ. զի և ինձ սրտի դիւրը լինիցի, յորժամ գիտիցեմ ինչ ըզձենջ ։

20 Զի ոչ զոք ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր ։

21 Զի ամենեքին զանձանց խրնդրեն, և ոչ զՅիսուսի Քրիստոսի ։

22 Այլ զփորձ նորա գիտէք և դուք, զի իբրև որդի հօր ծառայեաց ընդ իս յաւետարանին ։

23 Զոր՝ զսա ակնունիմ արձակել, որպէս նոյնհետայն զանձնէ սուտգեցից ։

24 Այլ յուսացեալ եմ ի Տէր՝ թէ և ես իսկ ընդ հուպ եկից ։

25 Այլ լաւ համարեցայ զԵպափրոդիտոս զեղբայր՝ և գործակից և զգինուորակից իմ, զձեր առաքեալ, և զպաշտօնեայ իմոց պիտոյից՝ առաքել առ ձեզ ։

26 Քանզի և ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենեսին ըզձանձերութիւնդ՝ որ էն պարծանք լինի ինձ Քրիստոսի օրուանն[28]. որ զուր աեղն չըվազեցի՝ և զուր չաշխատեցի[29] ։

17 Այլ թէ և մատաղ լինիմ ձեր հաւատքի պատարագին[30] և պաշտամունքին վերայ[31]՝ էլ ուրախ եմ, և ձեզ ամենիդ հետ ուրախանամ[32] ։

18 Նոյնպէս էլ դուք ուրախ էլէք՝ և ինձ հետ ուրախացէք ։

19 Այլ յոյս ունիմ Տէր Յիսուսում, որ Տիմոթէոսին շուտով ուղարկեմ ձեզ մօտ[33], որ իմ սիրտը էլ հանգիստ լինի, երբոր ձեզ վերայ մին բան իմանամ ։

20 Պատճառն որ չունիմ մինն ինձ հետ միասիրտ, որ ընտանեայ պէս հոգս տանի ձեզ համար[34] ։

21 Ինչու որ ամենքն իրանց բաներուն են մանգալիս, և չէ թէ Յիսուսի Քրիստոսի բաներուն[35] ։

22 Այլ դուք էլ փորձելէք գիտումէք նորան, որ ինչպէս որդի (իրան) հօրն՝ էնպէս ինձ հետ ծառայեց աւետարանին[36] ։

23 Ուրեմն յոյս ունիմ, որ սորան ուղարկեմ շուտով հենց էն ժամը նակումն՝ որ իմ անձիս համար կըտեղեկանամ ։

24 Այլ յոյս ունիմ Տէրուն, որ հենց ես էլ շուտով գամ[37] ։

25 Այլ լաւ համարեցի՝ որ Եպափրոդիտոս եղբօրըն՝ իմ գործոյ[38] և զինուորութեան ընկերըն[39], էն ձեր առաքեալըն[40], և իմ պէտք լինող բաներն պաշտօնեան՝ ուղարկեմ ձեզ մօտ[41] ։

26 Ինչու որ հենց ինքն էլ խիստ փափագ ունի, որ ձեզ ամենիդ

(28) բ կոր. ա. 14։ ա խոս. բ. 10։ (29) Գաղ. բ. 2։ ա Թես. գ. 5։ (30) բ Տիմ. գ. 6։ (31) Հռոմ. ժե. 16։ (32) բ կորնթ. է. 6։ կող. ա. 24։ (33) Հռոմ. ժզ. 21։ ա խոս. գ. 2։ (34) Ղուկ. ըե. 13։ (35) ա կորնթ. ժ. 24. 33։ ժգ. 5։ բ Տիմ. գ. 2. 15։ (36) ա կորնթ. գ. 17։ ա Տիմ. ա. 2։ բ Տիմ. ա. 2։ (37) Փիլիպ. ա. 25։ Փիլիմ. 22։ (38) Փիլիպ. գ. 18։ (39) Փիլիմ. 2։ (40) բ կորնթ. ը. 23։ (41) բ կորնթ. ժա. 9։ Փիլիպ. գ. 18։

Digitized by Google

ձեզ . և հոգայր՝ զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ ։

27 Եւ արդարև խօթացաւ մերձ ի մահ , այլ Աստուած ողորմեցաւ նմա , ոչ եմա միայն , այլև ինձ՝ զի մի՛ արամութիւն ի վերայ արամութեան կրիցեմ ։

28 Արդ՝ փութապէս յղեցի զնա , զի տեսեալ զնա միւսանգամ ուրախ լինիցիք . և ես առանց արամութեան եղէց ։

29 Ընդունելիք զնա ի Տէր ամենայն ինդութեամբ , և զայնպիսիսն առ պատուականան ունիջիք ։

30 Ոչ վասն գործոյ Տեառն մինչ եւ ի մահ մերձեցաւ , գուն գործեալ ոգւովք չափ , զի լցցէ զձեր պակասութիւնն իմոյ ապաստաւորութեան ։

ատեանէ[43] . և հոգա էք քաշուա՞ որ դուք լսել էիք՝ թէ նա հիւանդացաւ ։

27 Եւ իրաւի որ հիւանդացաւ մինչեւ մահի մօտ , բայց Աստուած ողորմեցաւ նորան . չէ թէ միայն նորան , բայց ինձ էլ , որ արամութիւն արամութեան վերայ չըքաշեմ ։

28 Աւրեմն վառազոյ ուղարկեցի նորան , որ տեսնելով նորան միւնէ ուրախ լինիք , և ես առանց ապրամութեան լինիմ ։

29 Ընդունեցէք նորան Տէրուն ամէն ուրախութեամբ , և էնպէսի՛ներին պատուական համարեցէք[44] ։

30 Վնչու որ Տէրի գործոյ համար մինչև ի մեռնիլն մօտեցաւ . հոգայ չէաի ջանք անելով , որ լցնէ ինչ որ ձեզ պակասվածքը իմ ծառայութեանս կողմանէ[44] ։

ԿԻ · Գ

2 Պատուէր կըտայ նորանց որ զգոյշ կենան էն չար մշակներից որ թլփատութիւն են ուսուցանում , 4 և նա ցոյց կըտայ թէ ինքն էլ ունի համարձակութիւն ասելու ըրքեանց վերայ քան թէ նորանք ։ 7 Ասյց էն ընաս և տալը է համարում որ Քրիստոսին ասածայ և նորա արդարութիւնն ունենայ որ նորա հաւատքից է , 12 Աքեսաւորելով թէ ոչ թէ հինց հնդիկ ինքն կատարեալ էլած է , բայց հնազանդ որ հասնի նորան , 15 Հորդորանք նորանց ամէնին՝ որ էս մասնին , 17 Նա իրան նմանող լինին , և նորանք քան երբոյ գնացողներին օրինակ ունենան , 18 Աստքանչ լսելով է տալս նորանց , որ Քրիստոսի խաչի թշնամիներից չըվախին՝ որ նորանց վերջն կորուստ է , և ինհակ երկրաւոր բաներն են մտածում ։

1 Աւյսուհետև եղբայրք իմ , տուրայ լերուք ի Տէր . զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչինչ դանդաղելի է , և ձեզ կարի զգուշալի ։

2 Օգնէք եղերուք ի շանց անօք . զգոյշ եղերուք ի չար մշակս

1 Աւյսուհետև իմ եղբարք , տուրայ եղէք Տէրուն՝ , հինց միևն բան գրելն ձեզ՝ ինձ համար ձանձրացութիւն չէ և ձեզ շատ զգուշութեան է տալիս ։

2 Օգնէք կատէք էն շներից[2] . զգոյշ կացէք էն չար մշակներից[2] .

(1) ա Կորնթ . ժգ . 11 ։ փիլիպ . գ . 1 ։ (2) ա Կորնթ . ժգ . 13 ։ ա Յովհ . ե . 12 ։ ա Յիմ . ե . 17 ։ ա Յովհ . ե . 16 ։ (3) Նաեւ . ժգ . 16 ։ Գաղ . ե . 10 ։ (4) ա Կորնթ . ժգ . 13 ։ ա Յովհ . ե . 12 ։ ա Յիմ . ե . 17 ։ ա Յովհ . ե . 16 ։ (5) ա Կորնթ . ժգ . 13 ։ փիլիպ . ե . 2 ։ ա Կորնթ . ժգ . 8 ։

Digitized by Google

կաց անտի · զգոյշ եղերուք ՚ի կըր-
ճատութենէ անտի ։

3 Օ,ի թլփատութիւն մեք եմք ,
որ հոգւովն Ա՛ստուծոյ պաշտեմք , և
պարծիմք ՚ի ՚Ի֊րիստոս Յիսուս , և
ոչ ՚ի մարմին պանծացեալ եմք ։

4 Թէպէտ և ես իսկ ունիմ վստա-
հութիւն ունիմ ՚ի մարմին , եթէ ոք համարիցի այլազգ վստահ լի-
նել ՚ի մարմին , առաւել ևս ես ։

5 Ի֊ութօրնեայ ընթօրնայ · յազգէ Իսրայէլի ՚ի ցեղէ Ա֊ննիա-
մինի · Եբրայեցի Յ֊Եբրայեցւոյ · ըստ օրինացն փարիսեցի ։

6 Ա՛ստ նախանձայոյզն լինելոյ հա-
լածէի զեկեղեցին · ըստ արդարու-
թեան օրինացն լեալ անարատ ։

7 Ա՛յլ որ ինչ ինձ շահ էր զայն
վնաս համարիմ վասն ՚Ի֊րիստոսի ։

8 Ա՛յլ և համարիմ իսկ զամե-
նայն վնաս՝ վասն առաւել գիտու-
թեանն Յիսուսի ՚Ի֊րիստոսի Տեա-
ռըն մերոյ · վասն որոյ զամենայնէ
զրկեցայ՝ և համարիմ կղկղանս , զի
զ՚Ի֊քիստոս շահեցայց ։

9 Եւ գտայց ՚ի նմա · իբրև ոչ
եթէ զիմ ինչ արդարութիւն՝ որ
յօրինացս անտի է՝ ունիցիմ , այլ
զՀաւատացն ՚Ի֊րիստոսի , որ յԱ֊-
ստուծոյ արդարութիւն է ։

10 Ճանաչել զնա՝ և

զզօրն կացեք էն ծայրի կարածնեա-
րիցն[4] ։

3 Ինչու որ թլփատութիւնն մենք
ենք[5] , որ Ա՛ստուծոյ հոգովն պաշ-
տումենք[6] , և ՚Ի֊րիստոս Յիսուսովն
պարծենումենք , և մարմնով պար-
ծանք չենք անում[7] ։

4 Թէ և հենց ես էլ էն համար-
ձակութիւն ունիմ մարմնոյ կողմա-
նէ · թէ որ մին ուրիշ մարդ կար-
ծէ որ մարմնով համարձակ լինի՝ էլ
ասելն ևս[8] ։

5 Ի֊ր ութօրումն թլփատվեցայ[9] ·
Իսրայէլի ազգիցն[10] Ա֊ննիամինի ցե-
ղիցն[11] · Եբրայեցի Եբրայեցուց
(ծնված)[12] · օրինաց կողմանէ՝ փա-
րիսեցի[13] ։

6 Ջ֊ըմեռանդութեան կողմանէ[14]
հալածումի եկեղեցւոյն[15] · օրէնքի
արդարութեանն մոխկ աղտով[16] ան-
արատ էի[17] ։

7 Ինձ ինչ բան որ ինձ շահ
էր , էն ամեն եմ համարում ՚Ի֊ր-
իստոսի համար[18] ։

8 Եւ հենց ամեն բան էլ ամեն
եմ համարում էն մեր Տէր Յիսու-
սի ՚Ի֊րիստոսի գերազանց գիտու-
թեանն համար[19] , որ նորա համար
ամեն բանից զրկվեցայ՝ և (նորանց)
աղբ եմ համարում , որ ՚Ի֊րիստո-
սին ստանամ ։

9 Եւ նորանում գտնըվիմ · չէ
որ իրրեն իմ արդարութիւնըս ու-
նենամ՝ որ օրէնքից է[20] , քանի էն
որ ՚Ի֊րիստոսի հաւատքիցն է · որ
էն արդարութիւնն Ա՛ստուածանից
է[21] ։

10 Որ հաւատքով ճանաչեմ նո-

(1) Ծնունդ · բ · 28 ։ Գործ · ե · 2 ։ (2) բ Օրին · ժ · 16 ։ Հ · 6 ։ Երէմ · գ · 4 ։ Ե֊ր-
եմիա · բ · 29 ։ գ · 11 , 12 ։ Ղեւ · բ · 11 ։ (3) Հռոմ · գ · 23 , 24 ։ Ծնունդ · է · 6 ։
Գործ · զ · 14 ։ (4) բ Կորնթ · ժա · 18 · 21 ։ (5) Ընկնդ · ժէ · 12 ։ (10) բ Կորնթ ·
ԺԱ · 22 ։ (11) Ծնունդ · ժա · 1 ։ (12) բ Կորնթ · ժա · 22 ։ (13) Գործ · իգ · 6 ։ իգ ·
3 , 5 ։ (14) Գործ · իբ · 3 ։ Գործ · ա · 13 , 14 ։ (15) Գործ · ը · 3 ։ բ · 1 ։ (16)
Ծնունդ · ժ · 5 ։ (17) Դանի · ա · 8 ։ (18) Ղուկ · ժգ · 44 ։ (19) Նաում · ծգ · 11 ։
Երէմ · բ · 28 , 24 ։ Հռոմ · ժէ · 3 ։ ա Կորնթ · բ · 2 ։ Նոր · բ · 2 ։ (20) Ծնունդ ·
է · 3 · 5 ։ (21) Ծնունդ · ա · 17 ։ գ · 21 , 22 ։ բ · 30 ։ ժ · 3 · 6 ։ Գործ · բ · 16 ։

Digitized by Google

զգօրութիւն յարութեան նորա՝ և զհաղորդութիւն չարչարանաց նորա , կերպարանակից լինել մահու նորա ։

11 թէ ուրպէս հասից ՚ի վեռելոցն յարութիւն ։

12 Ւբր ոչ եթէ արդէն առեալ իցեմ, կամ արդէն կատարեալ իցեմ. զհետ մտանել եմ թէ հասից , մանաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ ՚ի Ւհրիստոսէ Ցիսուսէ ։

13 Ելբարք՝ ես ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ իցեմ . բայց մի ինչ է՝ զի զառ ՚ի յետոյն մոռացեալ եմ, և ՚ի յառաջադէմսն ընկըրտեալ եմ ։

14 Ւշ եդեալ ընթանամ ՚ի կէս կոչմանն Ա՛ստուծոյ ՚ի Ւհրիստոս Ցիսուս ։

15 Ա՛յսուհետև՝ որ միանգամ կատարեալդ էք՝ զայս խորհեցարուք . և եթէ այլ ազգ ինչ խորհիցէք՝ սակայն և զայն Ա՛ստուած ձեզ յայտնեսցէ ։

16 Ւնայց յոր ժամանեցաքա՝ զոյն խորհել և միոյն կանոնի միաբան լինել ։

17 Ընմանօղք ինձ եղիջիք եղբարք՝ և դիտասջիք զայնպիսիսն , որ այնպէսն գնայցեն , որպէս ունիքդ ըզմեզ ձեզ օրինակ ։

18 Օ՚ի բազումք գնան՝ զորոց բազում անգամ ասէի ձեզ . բայց արդ և լալով իսկ ասեմ , զթշնամեաց խաչին Ւհրիստոսի ։

բան՝ և նորա յարութեան զօրութիւնն՝ և նորա չարչարանքին մասնակից լինելն , որ նորա մահին նմանի կերպարանակիմ[23] ։

11 Ւր լինի թէ վեռելոցն յարութեանն հասանիմ[23] ։

12 Ըէ որ՝ իբրեթէ հինց հիմիկ առած լինիմ[24] , կամ թէ հինց հիմիկ կատարեալ եղած լինիմ[25] . հնարաւորեմ որ հասանեմ նրան , որ նորա համար էլ հինց Ւհրիստոս Ցիսուսից բռնըված եմ ։

13 Ելբարք՝ ես իմ անձը չեմ համարում՝ որ հասած լինիմ . բայց մին բան է՝ էն որ յետևի բաները մոռացել եմ[26] , և գէպի առաջ լինօղներն հասնելով ջանք եմ անում[27] ։

14 Ի՚նչ դնելով վազում[28] գէպի Ա՛ստուծոյ (երկնաւոր) կոչումի նպատակն՝ Ւհրիստոս Ցիսուսում[29] ։

15 Ւսրահամար դուք ամէնքդ՝ որ կատարեալ էք[30] , էս մտածեցէք[31] . և թէ որ մին ուրիշ բան մտածէք՝ էն էլ Ա՛ստուած կը յայտնէ ձեզ ։

16 Ի՚նչն թէ նորանում որ մենք հասինք[32]՝ հինց մին կերպով մտածենք[33] և հինց մին կանոնում միաբան լինինք[34] ։

17 Ընձ նմանօղ եղէք եղբարք[35] , և դիտացէք էնպէսիներին , որ էն կերպով են գնում ինչպէս որ մեզ օրինակ ունիք ձեզ համար[36] ։

18 Պատճառն որ շատեր են գնում՝ որ նորանց համար շատ անգամ ասում էի ձեզ . և հիմիկ էլ լալով եմ ասում , Ւհրիստոսի խաչի թշնամիներին համար[37] ։

22) Հռոմ . գ . 3—5 : ը . 17 : բ Կորնթ . գ . 10 , 11 : բ Տիմ . բ . 11 , 12 : 23) Փիլիպ . գ . 12 : (24) Գործ . իգ . 7 : (25) ա Տիմ . գ . 12 : (26) Ղուկ . իե . 10 : Ղուկ . թ . 62 : բ Կորնթ . ե . 16 : (27) ա Կորնթ . բ . 21 . 26 : Նբէր . գ . 1 : (28) բ Տիմ . գ . 7 , 8 : Նբէր . ժբ . 1 : (29) Նբէր . գ . 1 : (30) ա Կորնթ . բ . 6 : ժգ . 20 : (31) Գաղ . ե . 10 : (32) Հռոմ . ժբ . 16 : ժե . 5 : (33) Փիլիպ . բ . 2 : (34) Գաղ . գ . 16 : (35) ա Կորնթ . գ . 16 : ժա . 1 : Փիլիպ . գ . 9 : ա Թես . ա . 6 : (36) ա Պետր . ե . 3 : (37) Գաղ . ա . 7 : բ . 21 : գ . 13 : Փիլիպ . ա . 15 . 17 :

Digitized by Google

19 Որոց կատարած կորուստ է. որոց աստուած որովայնն իւրեանց է. և փառք ամօթին իւրեանց, որք զերկրաւորս և եթ խորհին:

20 Մեր մեր առաքինութիւն յերկինս է, ուստի և փրկչին ակն ունիմք Տեառն Յիսուսի Քրիստոսի:

21 Որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ փառաց իւրոց, ըստ զօրութեան՝ առ ի կարօղ լինելոյ ենթազանդեցուցանել ընդ իւրև զամենայն:

19 Որ նորանց վերջն կորուստ է[38], որ նորանց աստուածն իրանց փորն է[39]. և փառքն իրանց ամօթին է[40], որ միտք երկրաւոր բաներըն են մտածում[41]:

20 Մեր քաղաքավարութիւնն երկնքումն է[42], որ էնտեղից[43] մեք սպասում փրկչին՝ Տէր Յիսուս Քրիստոսին[44]:

21 Որ մեր խոնարհ մարմինըն կը նորոգէ՝ որ իրան փառաւոր մարմնոյ կերպարանքին նման լինի[45], էն զօրութեան չափովը[46], որ կարող է ամէն բան ենթազանդացնել իրան ներքևն[47]:

Գ Լ. Դ

1 Գլխատոր խրատներ տալոյն համ, և ընդհ. յորդորութիւներ էլ կլսուայ, նա ցոյց կը տայ թէ ինչն լաւ ուզածնաւ՝ նրա համար որ փիլիպպեցիքն հաղորդ եւան նորա՝ իրան նեղութեանումն. երբ որ բանտի մէջումն էր, ա՛ւ թէ նրահամար որ իրան պահպանութիւնն լսաւ՝ բայց Աստուծոյ ընտրեալին համար որ նա նորանց մէջումն տնաւ. 19 Ընդհանրով և ապրելոյն նրանով վերջ կ՚անէ իրան խօսելն:

1 Ուստի հետև եղբարք իմ սիրելիք և անձկալիք, ուրախութիւն իմ և պսակ. այսպէս հաստատուն կացէք ի Տէր՝ սիրելիք:

2 Օդնութիւն աղաչեմ և զՍինտիքէ աղաչեմ, զնոյն խորհել ի Տէր:

3 Այո՛ աղաչեմ և զքեզ՝ մտերիմ իմ և լծակից, և դու օգնական լինէ նոցին որք յաւետարանին նա հատակեցան ընդ իս ընդ Կղեմսէ հանդերձ և այլովք գործակցօք իմովք, որոց անունքն են ի դպրութեան կենաց:

1 Ուրեմն իմ սիրելի և ցանկալի եղբարք[1], իմ ուրախութիւնս և պսակ[2]. էսպէս հաստատ կացէք Տէրումն՝ սիրելիներ[3]:

2 Օդնութեային աղաչումեմ, և Սինտիքին էլ աղաչումեմ, որ հենց մին միտք ունենան Տէրումն[4]:

3 Հիատակ դո՛ քեզ էլ եմ աղաչեմ՝ իմ լծի հարազատ ընկերս, դու էլ օգնիր նորանց՝ որ աւետարանումն ինձ հետ մինաեղ պատերազմեցին՝ Կղեմսի և իմ գործակից ուրիշ ընկերներին հետ[5], որ նորանց անուններն կենաց գրքումն են[6]:

(38) բ Կորնթ. ժա. 15: բ Պետր. բ. 1: (39) Հռոմ. ժգ. 18: Տիտ. ա. 11: (40) Ովսե. գ. 7: բ Կորնթ. ժա. 12: Փիլտ. գ. 19: (41) Հռոմ. բ. 5: (42) Նիմ. բ. 9. 19: Կող. գ. 1. 3: (43) Գործ. ա. 11: (44) ա Կորնթ. ա. 7: ա Թես. ա. 10: Տիտ. բ. 13: (45) ա Կորնթ. ժե. 43. 48, 49: Կող. գ. 4: ա Հովհ. գ. 2: (46) Նիմ. ա. 19: (47) ա Կորնթ. ժե. 26, 27: (1) Փիլիպ. ա. 8: (2) բ Կորնթ. ա. 14: Փիլիպ. բ. 16: ա Թես. բ. 19, 20: (3) Փիլիպ. ա. 27: (4) Փիլիպ. բ. 2: գ. 16: (5) Հռոմ. ժգ. 3: Փիլիպ. ա. 27: (6) Նէ. լբ. 32: Սաղմ. կթ. 28: Կան. ...ժբ. 1: Ղուկ. ժ. 20: Յայտ. գ. 5: ժգ. 8: բ. 12: քա. 27:

Digitized by Google

4 Արթո՛ւք էլէք Տիրոջմէ առէն ժա-
մանակ . մինէլ ասուսմ՝ արթո՛ւք
էլէք[7] :

5 Ձեր հեզահոգի լինելն թող
յայտնի լինի ամէն մարդկանց . Տէ-
րըն մօտ է[8] :

6 Ո՛չ մի՛ անհէք մի՛ բանի հա-
մար . բայց ամէն ազօթքով և ա-
ղաչանքով և գոհութենով՝ ձեր
խնդրվածքներն թող յայտնի լինին
Աստուծոյ առաջին[9] :

7 Եւ Աստուծոյ խաղաղութիւն՝
որ ամէն մտքից վերև է , պահպա-
նի՛ ձեր սրտերըն և մտքներըն Ի-
րիստոս Յիսուսումն[10] :

8 Վերջին՝ եղբարք՝ որ ինչ ճըշ-
մարտութենով է , ինչ որ պատկե-
ստութենով , ինչ որ արդարութե-
նով , ինչ որ սրբութենով , ինչ որ
սիրով , ինչ որ լաւ անուանով[11] ,
ինչ որ քարեգործութենով , ինչ
որ գովութենով՝ էն մտածեցէք :

9 Ինչ որ սովորեցիք՝ և ընդու-
նեցիք՝ և լսեցիք՝ և ինձանումն տե-
սիք , էն արէք[12] . և խաղաղութեան
Աստուածն ձեզ հետ կըլինի[13] :

10 Ես շատ ուրախացայ Տէրութի-
ւն որ դուք էլ մտքներդ բերիք հոգս
տանել ինձ համար , ինչպէս որ էլ
հոգս էիք անում . բայց պատշաճ
ժամանակ չէիք գտնում[14] :

11 Ոչ թէ կարօտութեան պատ-
ճառով եմ ասում էս . ինչու որ
ես սովորեցի բաւական լինել ներա-
նում՝ որ ունիմ[15] :

12 Գիտեմ նուազել , գիտեմ ա-
ռատելուլ . յամենայնի ամենայնի խոհ-
լամուտ եմ , և յագել և քաղցնալ .

4 Ուրախ եղէք Տիրոջմէ միշտ . մի-
նէլ կրկնում՝ ուրախ եղէք :

5 Ձեր հեզահոգի լինելն թող
յայտնի լինի ամէն մարդկանց . Տէ-
րըն մօտ է :

6 Ոչ մի՛ անհէք մի՛ բանի հա-
մար . բայց ամէն ազօթքով և ա-
ղաչանքով և գոհութենով՝ ձեր
խնդրվածքներն թող յայտնի լինին
Աստուծոյ առաջին :

7 Եւ Աստուծոյ խաղաղութիւն՝
որ ամէն մտքից վերև է , պահպա-
նի՛ ձեր սրտերըն և մտքներըն Ի-
րիստոս Յիսուսումն :

8 Վերջին եղբարք՝ ինչ որ ճըշ-
մարտութենով է , ինչ որ պատկե-
ստութենով , ինչ որ արդարութե-
նով , ինչ որ սրբութենով , ինչ որ
սիրով , ինչ որ լաւ անուանով , ,
ինչ որ քարեգործութենով , ինչ
որ գովութենով՝ էն մտածեցէք :

9 Ինչ որ սովորեցիք՝ և ընդու-
նեցիք՝ և լսեցիք՝ և ինձանումն տե-
սիք , էն արէք . և խաղաղութեան
Աստուածն ձեզ հետ կըլինի :

10 Ես շատ ուրախացայ Տէրութի-
ւն որ դուք էլ մտքներդ բերիք հոգս
տանել ինձ համար , ինչպէս որ էլ
հոգս էիք անում . բայց պատշաճ
ժամանակ չէիք գտնում :

11 Ոչ թէ կարօտութեան պատ-
ճառով եմ ասում էս . ինչու որ
ես սովորեցի բաւական լինել ներա-
նում՝ որ ունիմ :

12 Գիտեմ պակասութիւն քա-
շել , և առելութենով լինել . ամէն
բանի մէջ ամէնին լաւ սովրեկացած

(7) Ֆոռմ . ժբ . 12 : Փիլիպ . գ . 1 : ա Յովհ . դ . 16 : ա Պետր . գ . 13 : (8) Իմ .
ժ . 25 : Յով . ե . 8 , 9 : ա Պետր . գ . 7 : բ Պետր . գ . 8 , 9 : բ Յովհ . բ . 2 :
(9) Կաղ . ծե . 22 : Ներսէ . ժգ . 3 : Յոարմ . գ . 25 : Ղուկ . ժբ . 22 : ա Պետր . ե .
7 : (10) Յովհ . ժգ . 27 : Ֆոռմ . ե . 1 : Կող . գ . 15 : (11) ա Յովհ . ե . 32 : (12)
Փիլիպ . գ . 17 : (13) Ֆոռմ . ժե , 33 : ժգ . 20 : ա Կորնթ . ժգ . 33 : բ Կորնթ .
ժգ . 11 : ա Յովհ . ե . 23 : Նբր . ժգ . 20 : (14) բ Կորնթ . ը . 9 : (15) ա Տիմ .
գ . 6 , 8 :

Digitized by Google

և առաւելուլ և նուազել ։

13 Յամենայնի կարող եմ զինքն՝ որ զօրացոյցն զիս ։

14 Նայց բարւոք արարէք՝ զի կըցորդ եղերուք ինձ ՚ի նեղութեանս։

15 Գիտէք և դուք փիլիպեցիք, զի ՚ի սկզբան աւետարանին իրրև ելի ես ՚ի Մակեդոնիա, և ոչ մի եկեղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ և առնլոյ, բայց միայն դուք ։

16 Զի և ՚ի Թեսաղոնիկ միանգամ և երկիցս զպէտս իմ եառուք բերել ։

17 Ւրը ոչ կթէ խնդրեմ զտուրան, այլ խնդրեմ զպտուղն, որ յաճախէ ՚ի բան ձեր ։

18 Ունիմ իմ առեալ զամենայն, և առաւելեալ եմ. ընկալայ՝ և լի եմ ՚ի ձեռն Եպափրոդիտեայ, որ ՚ի ձէնջ հոտ անուշից՝ պատարագ ընդունելի՝ հաճոյ Աստուծոյ ։

19 Եւ Աստուած իմ լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութեանն՝ փառօք ՚ի Քրիստոս Յիսուս ։

20 Ասի Աստուծոյ և Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

21 Ողջոյն տացէք ամենայն սրբոց՝ ՚ի Քրիստոս Յիսուս ։

22 Ողջոյն տան ձեզ՝ որ ընդ իս են եղբարք ։

23 Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք. մանաւանդ որ ՚ի տանէ կայսեր են ։

24 Շնորհք Տեառն Յիսուսի Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն ։

եմ. կրշտանալըն էլ՝ սովելըն էլ. աւելութենով լինելըն էլ՝ պակասութիւն քաշելըն էլ[16] ։

13 Զինն ես կարող եմ ընուա ձեռնէն՝ որ ինձ զօրացրուց[17] ։

14 Նայց լաւ արիք, որ հաղորդ էլաք ինձ իմ նեղութենուս[18] ։

15 Ուռւ էլ գիտուռէք փիլիպեցիք, որ աւետարանելոյ սկզբուն՝ երբոր Մակեդոնիայից դուրս եկի, իսկի մին եկեղեցի էլ հաղորդութիւն չարաւ ինձ տալու և առնելոյ համարոյն, մայց միանակ դուք[19] ։

16 Ինչու որ Թեսաղոնիկէի մէջ էլ միներկու անգամ բերել տուիք ինձ պէտք եկած բաներ ։

17 Ոչ թէ էնպէս՝ որ տուրքն եմ ուզում, այլ պտուղն եմ ուզում, որ աւելանայ ձեր համարուն[20] ։

18 Նայց ես ամէն բան առել եմ, և աւելութիւն ունիմ. լիքն եմ, որ Եպափրոդիտոսի ձեռուէն ընդունեցի էն[21], որ ձեզանից է՝ անուշ հոտ[22], ընդունելի պատարագ՝ Աստուծոյ հաճոյ[23] ։

19 Եւ իմ Աստուածս լցնէ ձեր ամէն կարօտութիւնըն[24] իրան հարստութեան չափովն՝ փառքով Քրիստոս Յիսուսուն[25] ։

20 Նայց Աստուծոյ մեր Հօրն փառք (լինի) յաւիտեանս յաւիտենից[26]. ամէն ։

21 Ողջոյն տուէք ամէն սրբերին՝ Քրիստոս Յիսուսումն ։

22 Ողջոյն են տալիս ձեզ եղբարներն՝ որ ինձ հետ են[27] ։

23 Ողջոյն են տալիս ձեզ ամէն սրբերն. մանաւանդ նորանք՝ որ կայսերի տանիցն են[28] ։

24 Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն ձեր հոգոյն հետ (լինի)[29]. ամէն ։

փիլիպեցւոց վերայ երկրորդ նամակ առաքելոյն Պաւղոսի յետոն ։

(16) ա կորնթ. գ · 11 · բ կորնթ. գ · 10 · ժա · 37 · (17) Յովհ. ժե · 5 · բ կորնթ. ժբ · 9 · (18) փիլիպ. ա · 7 · (19) բ կորնթ. ժա · 8, 9 · (20) Հռոմ. ժե · 28 · Տիտ · գ · 14 · (21) փիլիպ. դ · 25 · (22) Եբր · ժգ · 16 · (23) բ կորնթ · բ · 12 · (24) Հռոմ · իգ · 1 · բ կորնթ · բ · 8 · (25) Եփես · ա · 7 · գ · 16 · (26) Հռոմ · ժգ · 27 · Գաղ · ա · 5 · (27) Խորհ · ա · 2 (28) փիլիպ · դ · 13 · (29) Հռոմ · ժգ · 24 ·

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Պօղոս Ցէբէի չնորհքն և խաղաղութիւնն կոչեցեալներուն սուրբ եւեսոս՝ գոհանալէ
Ը.առաւաձանից նորանց հաւատքի համար . 7 Նպատըրան և իրան վարդապետութեան գո-
վեստը ; 9 Նւ նորանց համար շատ աղօթք է անում՝ որ լրվին նորա կամաց գիտութիւնքը .
18 Հաստատուելէ Քրիստոսի ձեռքէն էլած փրկութիւնն և մեղաց թողութիւնն . 21 Որ-
դեդրուելէ նորանց շատ կերոց խրատներով և Քրիստոսի սրած հաշտութիւնն քարոզելէ ; ի-
րան պաշտօնն էլ ցոյց տալով :

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսու-
սի Քրիստոսի կամօքն Ը.ստուծոյ ,
և Տիմոթէոս եղբայրը :

2 Ը.ր կողոսացիս սուրբ և հա-
ւատացեալ եղբարս ի Քրիստոս :

3 Շ.նորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԸ.ստուծոյ Հօրէ մերմէ՝
(և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ) . գոհանամք զԸ.ստուծոյ և Հօրէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , յամենայն ժամ վասն ձեր աղօթս առնեմ :

4 Իբրև լուաք զհաւատսն ձեր՝ որ ի Քրիստոս Յիսուս Տէր մեր , և զսէրն՝ որ ընդ ամենայն սուրբս ունիք :

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիս-
տոսի առաքեալ Ը.ստուծոյ կամքեվքն՝ , և Տիմոթէոս եղբայրն :

2 կողոսացի սըրբերիդ և հաւատացեալ եղբարներիդ Քրիստոսումն :

3 Շ.նորհք (լինի) ձեզ հետ՝ և խաղաղութիւն Ը.ստուած մեր Հօրմէն և Տէր Յիսուս Քրիստոսէն[2] . գոհանումեմք Ը.ստուածոյ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի Հօրմէն . (և) ամէն ժամանակ աղօթք եմ անում ձեզ համար[3] :

4 Երբոր լսեցինք ձեր հաւատքն՝ որ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի վերայ է[4], և սէրըն՝ որ ամէն սըրբերին հետ ունիք[5] :

(1) Եփես . ա . 1 : (2) Գաղ . ա . 3 : (3) ա Կորնթ . ա . 4 : Եփես . ա . 16 : Փիլիպ . ա . 3 : գ . 1 : (4) Ա.յր . 6 : Եփես . ա . 15 : Փիլմ . 5 : (5) Եբր . գ . 19 :

Digitized by Google

5 Վասն յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս . զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան աւետարանին ,

6 Որ եհաս առ ձեզ . որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ՝ և պտղաբերէ . ոյպէս և ՚ի ձերում միջի . յօրէ յորմէ լուարուք՝ և ծանեայք զշնորհն Աստուծոյ ճշմարտութեամբ :

7 Որպէս և ուսարուք Եպափրասայ սիրելւոյ ծառայակից մերոյ , որ է հաւատարիմ վասն ձեր՝ պաշտօնեայ Յիսուսի :

8 Որ և պատմեաց մեզ զձեր սէրն հոգւով :

9 Վասն այնորիկ և մեք՝ յօրէ յորմէ լուաք՝ ոչ դադարեմք վասն ձեր աղօթս առնել և խնդրուածս մատուցանել . զի լնուցուք գիտութիւն կամացն նորա , ամենայն իմաստութեամբ և հոգևոր հանճարով :

10 Վարել ձեզ արժանի Տեառն յամենայն հաճութեան , յամենայն գործս բարութեան պտղաբերք և աճեցուցանք գիտութեամբն Աստուծոյ :

11 Զօրանալ զամենայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փառաց նորա . յամենայն համբերութիւն և երկայնմտութիւն ուրախութեամբ .

12 Գոհանալ զԱստուծոյ Հօրէ՝ որ կոչեցաւ զձեզ ՚ի մասն վիճակի սրբոցն ՚ի լոյս :

5 Յիւն յուսոյն համար՝ որ պահ-վում ձեզ համար երկինքում . որ նորա համար լսեցիք աւետարանի ճշմարիտ խօսքովն :

6 Որ էն հասաւ ձեզ , ինչպէս որ ամէն աշխարհքի մէջ , և մեծանում և պտուղ է բերում . ինչպէս որ ձեր միջումն էլ . էն օրից հետէ՝ որ լսեցիք և ՚ճանաչեցիք ճշմարտութիւնով :

7 Ինչպէս որ էլ սովորեցիք սիրելի Եպափրասից , մեր ծառայութեան ընկերից , որ ձեզ համար Յիսուս Հաւատարիմ պաշտօնեայ է :

8 Որ էլ պատմեց մեզ ձեր սէրն հոգով :

9 Նրա համար մենք էլ էն օրից հետէ որ լսեցինք՝ չենք դադարում ձեզ համար աղօթք անել , և խնդրվածք մատուցանել , որ լցվիք նորա կամաց գիտութիւնով , ամէն իմաստութիւնով և հոգևոր իւրքով :

10 Որ դուք գնաք ինչպէս որ արժանի է Տէրին , ամէն բանի մէջ հաճոյ լինելով (նորան) , ամէն բարի գործքերով պտղաբեր լինիք և ՚Աստուծոյ գիտութեանում մեծանաք .

11 Եւ ամէն զօրութիւնով զօրանաք իրան փառքի զօրութեան չափով . ամէն համբերութիւնով և երկայնմտութիւնով ուրախութիւնով .

12 Եւ գոհութիւն տաք Հօրն՝ որ մեզ կանչեց մասնակից լինելոյ սրբերի վիճակին լուսումն :

(6) բ Տիմ . գ . 8 : ա Պետր . ա . 1 : (7) Պատմ . իգ . 14 : Պետ . ժգ . 15 : Հռոմ . ժ . 18 : Ա Յովհ . 23 : (8) Պատմ . գ . 8 : Յովհ . ժե . 16 : Փիլիպ . ա . 11 : (9) բ Կորնթ . գ . 1 : Կիս . գ . 2 : Տիտ . բ . 11 : ա Պետր . ե . 12 : (10) Կող . գ . 12 : Փիլիպ . 23 : (11) բ Կորնթ . ժա . 23 : ա Տիմ . գ . 6 : (12) Հռոմ . ժե . 30 : (13) Կիս . ա . 15 , 16 : Ա Յոհ . 3 , 4 : (14) ա Կորնթ . ա . 5 : (15) Հռոմ . ժբ . 2 : Կիս . ե . 10 . 17 : (16) Կիս . ա . 8 : (17) Կիս . գ . 1 : Փիլիպ . ա . 27 : ա Թես . բ . 12 : (18) ա Թես . գ . 1 : (19) Յովհ . ժե . 16 : բ Կորնթ . բ . 6 : Փիլիպ . ա . 11 : Տիտ . գ . 1 : Նբր . ժգ . 21 : (20) Կիս . գ . 16 : դ . 16 : (21) Կիս . գ . 2 : (22) Պետր . ե . 11 : Հռոմ . ե . 3 : (23) Կիս . ե . 20 : Կող . գ . 5 : (24) Պետր . իգ . 16 : Կիս . ա . 11 :

Digitized by Google

13 Իր փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի , և փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սիրելւոյ :

14 Որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա , և զթողութիւն մեղաց մարմնովն նորա :

15 Իր է պատկեր աներեւութին Աստուծոյ , անդրանիկ ամենայն արարածոց :

16 Զի նովաւ հաստատեցաւ ամենայն , որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի , որ երեւին՝ և որ ոչն երեւին . եթէ աթոռք , եթէ տէրութիւնք , եթէ պետութիւնք , եթէ իշխանութիւնք . ամենայն ինչ նովաւ՝ և ի նոյն հաստատեցաւ :

17 Եւ նա է յառաջ քան զամենայն , և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ :

18 Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ . որ է սկիզբն , անդրանիկ ի մեռելոց . զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ :

19 Զի ի նմա հաճեցաւ ամենայն լրումն Աստուածութեանն բնակել :

20 Եւ նովաւ հաշտեցուցանել զամենայն ի նմին . արար խաղաղութիւն արեամբ խաչին իւրոյ , որ ինչ յերկրի՝ և որ ինչ յերկինս :

21 Եւ զձեզ՝ որ երբեմն օտարացեալն էիք , և թշնամիք խորհրդովք ի գործսն չարութեան ,

13 Իր փրկեց մեզ խաւարի իշխանութենէն[25] , և փոխեց տարաւ մեզ իրան սիրելի Որդոյ արքայութեան մէջ[26] :

14 Իր նորա ձեռնովն ունինք փրկութիւն՝ նորա արիւնովն , և մեղաց թողութիւն նորա մարմնովն[27] :

15 Իր նա անեռւոյթ Աստուծոյ պատկերն է[28] ամէն ստեղծուածներուն առաջինեկն[29] :

16 Վասն որ՝ նորանով ամէն բան ստեղծուեցաւ , ինչ որ երկնքումն՝ և ինչ որ երկրումս . էն որ երեւութ՝ և էն որ չի երեւում[30] . թէ աթոռներն , թէ տէրութիւններն , թէ պետութիւններն , թէ իշխանութիւններն[31] . ամէն բան նորանով՝ և նորա համար ստեղծուեցաւ[32] :

17 Եւ նա ամէնից առաջ է , և ամէն բան նորանով բովանդակ է[33] :

18 Եւ նա մարմնոյ (այսինքն) եկեղեցւոյ գլուխն է[34] . որ նա է բակիզբն , մեռելներից առաջինեկն[35] . նորահամար որ նա ամէն բանի մէջ առաջինն լինի :

19 Պատճառն որ հաճոյ էլաւ (Աստուծոյն) , որ նորանում Աստուածութեան ամէն լիութիւնն բնակվի[36] :

20 Եւ նորանով ամէնքն[37] հենց իրան հետ հաշտացնէ[38] . նա խաղաղութիւն արաւ իրան խաչի արիւնովն , էն որ երկրումս է՝ և էն որ երկրնքումն է[39] :

21 Եւ ձեզ էլ՝ որ ժամանակով օտարացած էիք[40] , և թշնամի մտքով չար գործքերումն[41] ,

(25) Կոլ. ա. 12 : Կոբ . բ . 14 : ա Պետր . բ . 9 : (26) ա Յհ. ա . 12 : բ Պետր . ա . 11 : Մատթ . գ . 17 : Կոլ. ա . 6 : (27) Կոլ. ա . 7 : (28) բ Կորնթ . գ . 4 : Կոբ . ա . 3 : (29) Յայտ . գ . 14 : (30) Հովհ . ա . 3 : ա Կորնթ . բ . 6 : Կոլ. ա . 9 : Կոբ . ա . 2 : (31) Էֆես . բ . 38 : Կոլ. ա . 21 : Կող . բ . 10 . 15 : ա Պետր . գ . 22 : (32) Էֆես . ժա . 36 : Կոբ . բ . 10 : (33) Հովհ . ա . 1 . 3 : ժե. 5 : ա Կորնթ . բ . 6 : (34) Կոլ. ա . 10 . 22 . գ . 15 . բ . 23 : ա Կորնթ . ժա . 3 : (35) Գործ . խգ . 23 : ա Կորնթ . ժե . 20 . 23 : Յայտ . ա . 5 : (36) Հովհ . ա . 16 : գ . 34 : Կող . բ . 9 : գ . 11 : (37) Կոլ. ա . 19 : (38) բ Կորնթ . ե . 18 : (39) Կոլ. բ . 14 , 15 , 16 : (40) Կոլ. բ . 1 , 2 . 12 . 13 . գ . 16 : (41) Տիտ . ա . 15 , 16 :

Digitized by Google

22 Ի՞մ ասպիկ հաշտեցոյց ամենայն մարդոյ իւրոյ՝ ի ձեռն մահուն իւրոյ, յանդիման կացուցանել զձեզ տուրբս՝ և անբիծ՝ և անբասս առաջի նորա ։

23 Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք և հաստատեալք . և անշարժք ի յուսոյ աւետարանին՝ զոր լուարուք , քարոզելոյ ընդ ամենայն արարածս ի ներքոյ երկնից. որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ ։

24 Եւ արդ՝ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն ձեր . և լնումն զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա՝ որ է եկեղեցի ։

25 Որոյ եղէ ես Պօղոս պաշտօնեայ՝ ըստ անտեսութեանն Աստուծոյ , որ տուեալ է ինձ ի ձեզ կատարել զբանն Աստուծոյ ։

26 Զխորհուրդն՝ որ ծածկեալն էր ի յաւիտեանցն և յազգաց . որ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց ։

27 Որոց կամեցաւ Աստուած ցուցանել , թէ զինչ է մեծութիւն փառաց խորհրդոյ նորա ի հեթանոսս , որ է Քրիստոս ի ձեզ՝ յոյսն փառաց ։

28 Զոր մեք քարոզեմք և խրատեմք զամենայն մարդ , և ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգևոր իմաստութեամբ , զի կացուսա-

22 Իսկ հաշտացուց իրան մարմնոյ անգամներովն՝ իրան մահովն[43] , որ ձեզ սուրբ՝ և անբիծ՝ և անարատ կանգնացնէ նորա առաջիւն[43] ։

23 Ովսիկ որ հաստատի մէջ արմատ քցած կենաք և հաստատուած[44] . և առանց շարժուելոյ էն աւետարանի յուսէն՝ որ լսեցիք[45] , որ երկնքի տակ լինող ամէն տակղծուածներին[46] քարոզուեցաւ[47] . որ ես Պօղոս նորա պաշտօնեայ եղայ[48] ։

24 Եւ հիմիկ ուրախ եմ իմ[49] չարչարանքներումս ձեզ համար[50] . և Քրիստոսի նեղութիւնների պակասը լցնումեմ իմ մարմնումս[51] նորա մարմնոյն համար՝ որ եկեղեցին է[52] ։

25 Որ ես Պօղոս նորա պաշտօնեայ եղայ՝ Աստուծոյ էն տնտեսութեան պէս , որ ինձ տրուած է ձեզանում[53] որ Աստուծոյ խօսքն կատարեմ[54] ։

26 Այն խորհուրդն՝ որ ծածկուած էր յաւիտեններից և պորտերից[55] . որ հիմիկ յայտնուեցաւ իրան սրբերին[56] ։

27 Որ Աստուած կամեցաւ ցոյց տալ նորանց[57] , թէ ինչ է իրան խորհրդոյ փառաւոր մեծութիւնն հեթանոսներումն[58] , որ էն Քրիստոսն է ձեզանում՝ փառաց յոյսն[59] ։

28 Որ մենք քարոզումենք նորան , և ամէն մարդ խրատումենք՝ և ամէն մարդ սովորցնումենք ամէն հոգևոր իմաստութիւնով[60] , որ ամէն

(42) Կին · բ · 15 , 16 ։ (43) Ղուկ · ա · 75 ։ Կին · ա · է · 6 · 27 · ա Թես · գ · 7 ։ Տիտ · բ · 14 ։ Ես · ղ · 6 ։ (44) Կին · գ · 17 ։ Կող · բ · 7 ։ (45) Ովհ · ժե · 6 ։ (46) Ա Յհ · 6 ։ (47) Հռով · ժ · 18 ։ (48) Կող · ա · 17 ։ բ Կորնթ · գ · 6 · գ · 1 · է · 18 ։ Կին · գ · 7 ։ Ա Յհ · 25 ։ ա Տիմ · բ · 7 ։ (49) Հռով · է · 3 ։ բ Կորնթ · է · 4 ։ (50) Կին · գ · 1 · 13 ։ (51) բ Կորնթ · ա · 5 , 6 ։ Փիլիպ · գ · 10 ։ բ Տիմ · ա · 6 ։ բ · 10 ։ (52) Կին · ա · 23 ։ (53) ա Կորնթ · թ · 17 ։ Գող · բ · 7 ։ Կին · գ · 2 ։ Ա Յհ · 23 ։ (54) Հռով · ժե · 19 ։ (55) Հռով · ժգ · 25 ։ ա Կորնթ · բ · 7 ։ Կին · գ · 9 ։ (56) Մատթ · ժգ · 11 ։ բ Տիմ · ա · 10 ։ (57) բ Կորնթ · բ · 14 ։ (58) Հռով · ը · 33 ։ Կին · ա · 7 · գ · 8 ։ (59) ա Յհ · ա · 1 ։ (60) Կող · բ · 26 · 27 · 28 ։

Digitized by Google

ցուք զամենայն մարդ կատարեալ ՚ի ՎՐիստոս Յիսուս ։

29 Յոր և աշխատիմ պատերազմեալ ըստ յաջողութեան նորա , որ յաջողեալ ե յիս զօրութեամբ ։

մարդ կատարեալ կանգնացինք ՎՐիստոս Յիսուսումե[61] ։

29 Որոյ համար էլ աշխատութեամբ[62] պատերազմ անելով[63] նորա յաջողութեան չափովն՝ որ ինձանում յաջողված ե զօրութեամբ[64] ։

ԿԻ · Ո

1 Մինել յորդորանքն նորանց որ իմանան Ը.տուածոյ խորհուրդըն ՎՐիստոս Յիսուսումե · 8 Ընդդուշացնե նորանք որ չգլխի թե միևն Թաւլանե նորանք փիլիսոփայութեամբ և ունայն խաբերայութեամբ, 18 Նւ չգլխի որ միևն խաբե նորանք խոնարհութեամբ և հրեշտակներուն պաշտամանքով , 20 Նւ օրինքի և մարդկանց պատուիրանքներին պաշտամանքով որ նորանք ՎՐիստոսի մեռոնին ազատված են ։

1 Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ծգնութիւն ունիմ յանձին վասն ձեր՝ և վասն Լաւտիկիացւոցըն , և որոց չիցե տեսեալ զերեսս իմ մարմնով ։

2 Ո՛չի միխիթարեսցին սիրտք նոցա տեղեկացեալք սիրով . և յամենայն մեծութիւն լրութեան իմաստութեան՝ ՚ի գիտութիւն խորհրդոցն Ը.ստուծոյ Հօր ՚ի ՎՐիստոս Յիսուս ։

3 Յորում ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան ծածկեալ կան ։

4 Այլ զայս ասեմ , զի մի՛ ոք զձեզ զատանցուսցէ պատիր բանիւք ։

5 Ո՛չի թէպէտ և մարմնով հեռի եմ , այլ հոգւով ընդ ձեզ եմ . խնդամ իբրև տեսանեմ զկարգն ձեր՝ և զհաստատութիւն հաւատոցն ձերոց որ ՚ի ՎՐիստոս Յիսուս ։

6 Ընդ՝ որպէս ընկալարուք զՔ.ս

1 Կամենումե որ գիտենաք դուք՝ թէ ինչպէսի պատերազմ ունիմ իմ անձնումն՝ ձեզ համար և Լաւդիկեցոց համար , և որոնց համար որ իմ երեսըս մարմնով չեն տեսել ։

2 Որ նուանց սրտերն միխիթարվինե և տեղեկանան սիրով . և կատարեալ իմաստութեան ամեն մեծութեներով[3] , որ իմանան Ը.ստուծոյ խորհուրդըն ՎՐիստոս Յիսուսումն[4] ։

3 Որ նորանումե ծածկրվածե կան իմաստութեան և գիտութեան ամեն գանձերն (խոպանևրն)[5] ։

4 Ասյց էս եմ ասում , չգլխի թե միևն մոլորացնե ձեզ խաբեքայ խօսքերով[6] ։

5 Ինչու որ՝ թե և մարմնով հեռու եմ[7] , բայց հոգով ձեզ հետ եմ . ուրախանումեմ՝ երբոր ձեր կարգըն տեսնումեմ[8] , և ձեր հաստատութիւնըն՝ որ ՎՐիստոս Յիսուսումե է[9] ։

6 Որպես ինչպէս որ (դուք) ՎՐ-

(61) բ կորնի . ժա . 2 : Եփես . ե . 27 : Ա Եր . 22 : (62) ա կորնի . ժե . 10 : (63) Կող . բ . 1 : (64) Եփես . ա . 19 : գ . 7 . 20 : (1) Կող . ա . 29 : Փիլիպ . ա . 30 : ա Թես . բ . 2 . (2) բ կորնի . ա . 8 : (3) Կող . գ . 14 : (4) Փիլիպ . գ . 8 : Կող . ա . 9 : (5) ա կորնի . ա . 24 : բ . 6 , 7 : Եփես . ա . 8 : Կող . ա . 9 : (6) Հռով. ժգ . 18 : բ կորնի . ժա . 13 : Եփես . գ . 14 : ե . 6 : Վայր . 8 . 16 : (7) ա կորնի . ե . 3 : ա Թես . բ . 17 : (8) ա կորնի . ժգ . 16 : (9) ա Պետր . ե . 9 :

Digitized by Google

Քրիստոս Յիսուս զՏէր , նովին գնացէ՛ք ։

7 Լ՚րմատացեա՛լք և շինեա՛լք ՚ի նա , և հաստատեա՛լք ՚ի հաւատս , որպէս ուսարուք՝ առատեալ՛ք ՚ի նմին գոհութեամբ ։

8 Զգո՛յշ լերուք՝ մի՛ ոք իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ ճարտարմտութեամբ՝ և սնոտի խաբէութեամբ , որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարերց աշխարհի՝ և ո՛չ ըստ Յիսուսի Քրիստոսի ։

9 Զի ՚ի նմա բնակէ ամենայն լրումն Լ՚աստուածութեանն մարմնապէս ։

10 Եւ էք դուք նովաւ լցեալք , որ է գլուխ ամենայն իշխանութեան և պետութեան ։

11 Որով թլփատեցարուք հաւասովք զանձեռագործ թլփատութիւնըն՝ ՚ի մերկանալ զանգամս մարմնոյ թլփատութեամբն Քրիստոսի ։

12 Թաղեալք ընդ նմին ՚ի մկրտութեանն , որով և ընդ նմին յարեա՛լք հաւատովք Լ՚աստուծոյ ազդեցութեանն , որ յարոյց զնա ՚ի մեռելոց ։

13 Եւ զձեզ՝ որ երբեմն մեռեալն էի՛ք ՚ի մեղս և յանթլփատութեան մարմնոյ ձերոյ , կենդանացոյց յանձէն իւրում ։ շնո՛րհեաց մեզ զամենայն յանցանս մեր ։

14 Եւ ջնջեաց զձեռագիրս մերոյ հակառակութեանն հրամանօքն իւրովք ։ որ կայր մեզ հակառա՛կ՝ եւ

րիստոս Յիսուս Տէրըն ընդունեցէք , հենց նորանով գնացէ՛ք[10] ։

7 Լ՚րմատ քցած՝ և նորանում շինված , և հաւատքումն հաստատված[11] , ինչպէս որ սովորեցիք՝ և առաջացէ՛ք նորանում գոհութենով ։

8 Զգո՛յշ կացէ՛ք՝ որ չըլինի թէ մինն թալանէ ձեզ փիլիսոփայութենով՝ և ունայն խաբեպայութենով[12] , որ մարդկանց աւանդութեան պէս[13] և աշխարհքիս սկզբունքին պէս է[14] և չէ թէ Յիսուս Քրիստոսին պէս ։

9 Ինչու որ նորանում բնակված է Լ՚աստուածութեան ամէն լիութիւնըն մարմնապէս[15] ։

10 Եւ դուք նորանով լցված էք[16] , որ նա ամէն իշխանութիւնների և պետութիւնների[17] գլուխն է[18] ։

11 Որ նորանով դուք թլփատվեցաք հաւատքով՝ էն առանց ձեռքի էլած թլփատութենովն[19] , մարմնոյ անդամներըն (ձեզանից) հանելովն՝ Քրիստոսի թլփատութենովն[20] ։

12 Որ թաղվեցաք նորա հետ մկրտութենովն[21] , որ նորանով էլ յարութիւն առիք նորա հետ[22] էն հաւատքովն՝ որ Լ՚աստուած գործեց[23] , որ յարոյց Նորան մեռելների միջից[24] ։

13 Եւ ձեզ՝ որ մին ժամանակ մեռած էիք մեղքումն՝ և ձեր մարմնոյ անթլփատութենումն , իրան անձնովն կենդանացրուց ։ մեր ամէն մեղքերըն բաշխեց մեզ[25] ։

14 Եւ ջնջեց էն ձեռագիրըն՝ որ մեզ հակառակ էր՝ իրան հրամաններ ։ որ էն մեզ հակառակ կար՝

(10) ա Թես . գ · 1 : Ղուկ . 8 : (11) Սիմ . բ . 21 , 22 : գ · 17 : Պղ · ա · 33 : (12) Սրմ . ԽԲ . 8 : Ժողմ . ԺԶ . 17 : Սիմ . ե . 6 : Պ՚յտ . 18 : Սիր . ԺԳ . 9 : (13) Մատ . ԺԵ . 2 : Գաղ . ա . 14 : Պ՚յտ . 22 : (14) Գաղ . գ · 3 · 9 : Պ՚յտ . 20 : (15) Հովհ . ա . 14 : Հռղ . ա . 19 : (16) Հովհ . ա . 16 : (17) Պղ . ա . 16 , 18 : Սիմ . ա . 20 , 21 : ա Պետր . գ . 22 : (19) բ Օրին . ժ . 16 : Լ . 6 : Սիր . բ . 4 : Ժողմ . բ . 20 : Փիլիպ . գ . 3 : (20) Ժողմ . ը . 6 : Սիմ . գ . 22 : Պղ . բ . 8 , 9 : (21) Ժողմ . ը . 4 : (22) Պղ . գ . 1 : (23) Սիմ . ա . 19 : գ . 7 : (24) Պետր . բ . 24 : (25) Սիմ . բ . 1 · 5 , 6 · 11 ։

Digitized by Google

բարձ զայն ՚ի միջոյ՝ և բեւեռաց ընդ խաչափայտին ։

15 Ո՛երկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս • յայս յանդիման խայտառակեաց՝ նշուլակեալ զնոսա յանձին իւրում ՚ի յարութեան իւրում ։

16 Ո՛ք ոք այսու հետեւ զձեզ դատեցի՝ ուսանելով կամ ըմպելով, կամ մասամբք ուրից կամ ամսամսիւք կամ շաբաթիւք ։

17 Որ են տուերք հանգերձելոցն • այլ մարմին ՚Ի քրիստոս է ։

18 Ո՛ք ոք զձեզ խաբեսցէ , որ կամիցի խոնարհութեամբ և կրօնութիւք հրեշտակաց , զոր չիցէ տեսեալ զրահեա վարել՝ առաւպարտ հպարտացեալ ՚ի մտաց մարմնոյ իւրոյ •

19 Եւ ոչ ունիցի զգլուխն ՚Ի քրիստոս , ուստի ամենայն մարմինն յօդ եւ կապ և խաղաղութիւք տարաբերեալ և խառնեալ՝ աճէ զաճումն Ա՛ստուծոյ ։

20 Եթէ մեռարուք ընդ ՚Ի քրիստոսի ՚ի տարերց աշխարհի՝ զի՞ ևս իբրև զկենդանիս ապրիք ՚ի աշխարհի կրօնաւորիք ։

21 Ո՛ք ձերձենար , մի՛ ճաշակեր , մի՛ հատուց լինիր ։

22 Որ է ամենայն ինչ ՚ի պէտս ապականութեան , ըստ պատուիրանաց և վարդապետութեան մարդկան ։

23 Որ յիմաստութիւն ինչ հաստրէ , ինքնակամ կրօնիւք և խոնարհ

Նոքան վիրկեալս մեզ տեղիցն՝ և խաչափայտին վերայ բեւեռեց[26] ։

15 Իշխանութիւնսն և պետութիւնսն[27] մերկացուց • յոյնիք նորանց խայտառակեց և (իրան) յաղթութեան նշան տարաւ իրան անձնոցին իրան յարութենեանն[28] ։

16 Արեսցի ծոյլ մինն չըզգաստ ձեզ[29] ուսանելոյ կամ խմելոյ հասարք[30] , կամ տօներուն կամ ամսագլուխներուն կամ շաբաթներուն կազմանն[31] ։

17 Որ սորաներք նոր գալոց բանից շուքերն են • բայց մարմինն Ա՛ստուած է[32] ։

18 Ղբ՛լինի որ մինն խաբէ ձեզ , որ կամեսայ խոնարհութենով և հրեշտակներուն պաշտամանքով[33] զուր տեղն հետևիլ էն բանին՝ որ չէ տեսած՝ և զուր տեղն գոռոզացած լինի իրան մարմնաւոր մտքովն[34] ։

19 Եւ չունենայ Ա՛ստուած գլուխըն[35] , որ նորանից ամէն մարմինն յօդվածներով և խաղերով ջոկված և խառնըված՝ մեծանումն Ա՛ստուծոյ աճմունքովն ։

20 Ի՞նչ որ Ա՛ստուածի հետ մեռաք[36] էս աշխարհքին սկզբունքներուն[37] էլ ինչո՞ւ էք էս աշխարհքիս մէջ կենդանիներին պէս հետևում օրէնքին[38] ։

21 Ո՛չ մօտեննար , հետ մի՛ առներ , մի՛ դիպչիր[39] ։

22 Որ էս ամէն ապականութեան գործածութենով , և մարդկանց պատուիրանքներին և վարդապետութեան պէս է[40] ։

23 Որ մին իմաստութիւն է հետմտրվում[41] , իրան կամքով հպատաստ

(26) Ի՛նէս • բ • 15 , 16 ։ (27) Ի՛նէս • գ • 13 ։ (28) Ե՛ննդ • գ • 15 ։ Ա՛ստ • կբ • 18 ։ Ե՛սայ • ժգ • 12 ։ Մատթ • ժբ • 29 ։ Ի՛ովհ • ժ • 18 ։ ժա • 22 ։ Հռովհ • ժբ • 31 • ժգ • 11 ։ Ի՛նէս • գ • 8 ։ Ի՛նբ • բ • 14 ։ (29) Հ՛ռովմ • ժգ • 3 • 10 • 13 ։ (30) Հ՛ռովմ • ժգ • 2 • 17 ։ ա Կորնթ • ը • 8 ։ (31) Հ՛ռովմ • ժգ • 5 ։ Գաղ • գ • 10 ։ (32) Ի՛նբ • ը • 5 ։ Բ • 9 • ժ • 1 ։ (33) Ա՛ստ • 4 ։ Ա՛ստ • 23 ։ (34) Ի՛նչ • ժգ • 3 • ա Տի՛մ • ա • 7 ։ (35) Ի՛նէս • գ • 15 , 16 ։ (36) Հ՛ռովմ • ը • 3 • 5 ։ ֆ • 4 • 6 ։ Գաղ • բ • 19 ։ Ի՛նէս • բ • 15 ։ (37) Ա՛ստ • 3 ։ (38) Գաղ • գ • 3 • 9 ։ (39) ա Տի՛մ • գ • 3 ։ (40) Ի՛սայ • կԲ • 13 ։ Մատթ • ժե • 9 ։ Տիտ • ա • 14 ։ (41) ա Տի՛մ • գ • 8 ։

Digitized by Google

հանեմամբ՝ և անխոցոտելեմբ մարմինս նոյ , և ոչ ի պատիւ ինչ լրտեսելեան մարմնոյ ։

վասն պաշտամունքով և խնամարհուեստ ենով՝ և մարմնոյն չքնաղութեամբ , և մարմնոյն պատիւ չգաւսլով՝ ոք կշտացնեն նուան[42] ։

ԿԻ · Գ ·

1 Բառնեալն խրատուեն հատուցանելոցն որ՝ էն վերջին ենգեղն՝ որոնց ոք Քրիստոսն է նատուտ· 8 Նա ոտանեն իրանց երիցսուր անդամներըն , 10 Որ իրանցից հանեն հին մարդն իրան գործերովը , և նոր մարդին (Քրիստոս) հագնեն , 12 Որ իրանց Քրիստոնէական ամեն պատուհասըն կատարեն և իրար ներեն և ուրիշ շատ խրատներ ի տալ նորանց ։

1 Ընթէ յարերուք ընդ Քրիստոսի ։ ապա զվերինն խնդրեցէք , ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ ։

2 Զվերինն խորհեցարուք , մի՛ զայս՝ որ յերկրի աստ է ։

3 Վասնզի մեռարուք՝ և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած ։

4 Յորժամ Քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր , յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք ։

5 Պանէք այսուհեւ զանդամս ձեր զերկրաւորս ։ ի բաց ընկեցէք զպոռնկութիւն՝ զպղծութիւն՝ զիծ՝ զցանկութիւն չարեաց , և զագահութիւն՝ որ է կռապաշտութիւն ։

6 Վասն որոյ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն անհնազանդութեան ։

7 Որովք և դուք երբեմն գնացիք՝ մինչ կենդանիք էիք ի նոսա ։

8 Այդ ի բաց թօթափեցէք և

1 Թէ որ Քրիստոսի հետ յարութիւն առիք[1] , ապա խնդրեցէք էն վերինըն՝ որտեղ որ Քրիստոսն է նստում Աստուծոյ աջ կողմն[2] ։

2 Էն վերինըն մտածեցէք , էն թէ էն՝ որ էս երկրաւսն է ։

3 Պատճառն որ դուք մեռաք[3] և ձեր կեանքն Քրիստոսի հետ ծածկված է Աստուծոյ մէջն[4] ։

4 Հայց երբոր Քրիստոս[5] ձեր կեանքն կը յայտնվի[6] , էն ժամանակն դուք էլ նորա հետ կը յայտնեք փառքով[7] ։

5 Սրբեցէք սպանեցէք[8] ձեր երկրաւոր անդամներըն[9] ։ դէն քցեցէք պոռնկութիւնըն՝ պղծութիւնըն[10] կեղտոտութիւնըն՝ չար ցանկութիւննըն , և ագահութիւնըն[11] որ կը ռապաշտութիւն է[12] ։

6 Որ որոա համար Աստուծոյ բարկութիւնն[13] գալիս է անհնազանդութեան որդիքներին վերայ[14] ։

7 Որ նորանցով դուք էլ մին ժամանակ գնում էիք , երբոր կեանք դանի էիք նորանցում[15] ։

8 Հայց հիմիկ դուք էլ դէն թափ

(42) Կ Ի · 8 ։ (1) Հռով · գ · 5 ։ Եփես · բ · 6 ։ Կող · բ · 12 ։ (2) Հռով · ը · 34 ։ Եփես · ա · 20 ։ (3) Հռով · գ · 2 ։ Կող · բ · 20 ։ Կող · բ · 20 ։ (4) բ Կորնթ · ե · 7 ։ Կող · ա · 5 ։ (5) ա Կորնթ · գ · 2 ։ (6) Հռով · ժա · 25 ։ Ժգ · 6 ։ (7) ա Կորնթ · ժե · 43 ։ Փիլիպ · գ · 21 ։ (8) Հռով · գ · 12 ։ (9) Հռով · ը · 13 ։ Կող · ե · 24 ։ (10) Եփես · ե · 3 ։ (11) ա Թես · դ · 5 ։ (12) Եփես · ե · 5 ։ (13) Հռով · ա · 18 ։ Եփես · ե · 6 ։ Կողոս · ը · 15 ։ (14) Եփես · բ · 2 ։ (15) Հռով · գ · 19 , 20 ։ ե · 5 ։ ա Կորնթ · գ · 11 ։ Եփես · դ · 2 ։ Տիտ · գ · 3 ։ . . . .

Digitized by Google

դաք զմին առնային , զբարկութիւն զորամաւթիւն՝ զչարութիւն՝ զխայտխօսութիւն՝ զխեղկատակութիւն ՚ի բերանոց ձերոց ։

9 Մի՛ սուտ միմեանց . մերկացարո՛ւք զհին մարդն գործովքն իւրովք ։

10 Եւ զգեցարո՛ւք զնորն նորոգեալ ՚ի գիտութիւն ըստ պատկերի Ստեղծողին իւրոյ ։

11 Ուր ո՛չ է Հրեայ՝ և ո՛չ Հեթանոս , խլփատութիւն՝ և անթլփատութիւն , խուժ՝ գուժ՝ Սկիւթացի՝ ծառայ՝ ազատ . այլ ամենայն և յամենայնի Քրիստոս ։

12 Ողգեցարո՛ւք այսուհետև իբրև ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք և սիրեցեալք , զգութ՝ զողորմութիւն՝ զքաղցրութիւն՝ զխոնարհութիւն՝ զհեզութիւն՝ զերկայնմտութիւն ։

13 Տերիք միմեանց , շնորհել ի բերաց . եթէ ուրուք զսմիքէ սպրառունջ ինչ իցէ , որպէս Աստուած Քրիստոսիս շնորհեաց ձեզ՝ նոյնպէս և դուք ։

14 Եւ ՚ի վերայ այսր ամենայնի զսէրն , որ է զօդ կատարմանն ։

15 Եւ խաղաղութիւն Քրիստոսի հաստատեսցի ՚ի սիրտս ձեր , յոր և կոչեցարուք միով մարմնով . և գոհացողք լինիջիք ։

16 Որ բանն Քրիստոսի բնակեսցէ ՚ի ձեզ առատապէս . ամենայն առումբք են ամենքն . բարկութիւնքն՝ սրամաւթիւնքն՝ չարութիւնքն՝ հայհոյութիւնքն[16] ծաղրաբանութիւնքն ձեր բերանից[17] ։

9 Այսուհանդերձ մի՛ խօսիք իրար հետ[18] . ձեզանից հանեցէք հին մարդն ի բան գործքերովն[19] ։

10 Եւ նոր մարդոյն հագէք՝ որ նորոգվածէ գիտութենով[20] ի նմա ստեղծողի[21] պատկերին պէս[22] ։

11 Որ հնաձև ոչ Հրեայ կայ՝ և ոչ Հեթանոս , ոչ թլփատութիւն՝ և ոչ անթլփատութիւն , խուժ՝ գուժ՝ Սկիւթացի՝ ծառայ՝ ազատ[23] . բայց ամենն և ամենի մէջն Քրիստոսն է[24] ։

12 Ուրեմն ինչպէս Աստուծոյ ընտրվածներ՝ սըրբեր և սիրելիներ[25] , հագէք գիածութիւնըն՝ ազնվմութիւնըն՝ քաղցրութիւնըն՝ խոնարհութիւնըն՝ հեզութիւնըն՝ երկայնմըտութիւնըն[27] ։

13 Իրար նեղութեցէք , և իրար թողեցէք , թէ որ մինն ունկէնիցն սըրընդմէնք ունենայ , ինչպէս որ Աստուած Քրիստոսն ձեզ թողութիւն արաւ՝ էնպէս էլ դուք[28] ։

14 Եւ ամենի վերայ[29] (հագէք) սէրըն[30] որ կատարելութեան կապն է[31] ։

15 Եւ Քրիստոսի խաղաղութիւնըն թող հաստատվի ձեր սրտերումըն[32] , որ նորա մէջ էլ կանչվեցաք[33] մին մարմնով[34] . և գոհացող էլէք[35] ։

16 Որ Քրիստոսի խօսքն լիութենով բնակվի ձեր մէջումն . որ ա-

(16) Կգլ . գ · 22 : ա Պետր . բ · 1 : Կդբ · ժբ · 1 : Հով · ա · 21 : (17) Կգլ · գ · 29 : ե · 4 : (18) Ղևտ . ժբ · 11 : Կգլ · գ · 25 : (19) Կգլ · գ · 22 . 24 : (20) Ածով . ժբ . 3 : (21) Կգլ · բ · 10 : (22) Կգլ · գ · 23 , 24 : (23) Ածով . ժ · 12 : ա Կորնթ . ժբ . 13 : Գաղ . գ · 28 : ե · 6 : Կգլ · զ · 5 : (24) Կգլ · ա · 23 : (25) ա Թես . ա · 4 : ա Պետր . ա · 2 : բ Պետր . ա · 10 : (26) Կգլ · գ · 14 : (27) Գաղ . ե · 22 : Փիլիպ · բ · 1 : Կգլ · գ · 2 . 32 : (28) Մատթ · ժ · 25 : Կգլ · գ · 2 . 32 : (29) ա Պետր . գ · 8 : (30) Հովհ . ժգ · 34 : Ածով . ժգ · 8 : ա Կորնթ . ժգ : Կգլ · ե · 2 : Կազ . բ · 2 : ա Թես . գ · 9 : ա Տիմ . ա · 5 : ա Հովհ · գ · 23 : գ · 21 : (31) Կգլ · գ · 3 : (32) Ածով . ժգ · 17 : Փիլիպ · գ · 7 : (33) ա Կորնթ . ե · 15 : (34) Կգլ · բ · 16 , 17 : գ · 4 : (35) Կազ . բ · 7 : Ալայ · 17 ։

Digitized by Google

նայն իմաստութեամբ ուսուցանել և խրատել զմիմեանս . սաղմոսիւք և օրհնութեամբք և երգովք հոգևորօք՝ և շնորհօք օրհնել ՚ի սիրտս ձեր զ՚Տառած :

17 Եւ զամենայն զոր և առնիցէք բանիւք և արդեամբք , զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք . գոհացօղք լինիջիք զ՚Տառծոյ և ՚Հօրն նովաւ :

18 Կանայք՝ ՚ենազանդ լերուք առանց ձերոց , որպէս և վայել է ՚ի Տէր :

19 Ա՛րք՝ սիրեցէք զկանայս ձեր , և մի՛ դառնացուցանէք զնոսա :

20 Որդիք՝ ՚ենազանդ լերուք ծնողաց ձերոց յամենայնի՝ զի այն է հաճոյ առաջի Տեառն :

21 Հա՛րք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր . զի մի՛ տրտմեսին :

22 Ծա՛ռայք՝ ՚ենազանդ լերուք տերանց ձերոց յամենայնի . մի՛ առականէ ծառայութեամբ՝ իբրև մարդահաճոյք . այլ միամտութեամբ սրտի երկնչել ՚ի Տեառնէ :

23 Ո՛րչափ ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք իբրև Տեառն , և ոչ իբրև մարդկան :

24 Գիտասջիք՝ զի ՚ի Տեառնէ առնուցուք զՀատուցումն ժառանգութեան ձերոյ . քանզի Տեառն Քրիստոսի ծառայէք :

25 Խակ ապիրատն ընկալցի ըստ իւրում՝ ապիրատութեանն . զի չէք ակնառութիւն առաջի Աստուծոյ :

մէն իմաստութեամբ իրաբ սովորցէք և խրատէք , սաղմոսիւք և օրհնութիւններով և հոգևոր երգերով[36] և շնորհքով Աստուծոյ օրհնէք ձեր սրտերումն[37] :

17 Եւ ամէն ինչ՝ որ անէք խօսքով և գործով , էն ամէնն Տէր Յիսուսի անունովն արէք[38] . և նրա ձեռովն գոհութիւն առէք Աստուծոյն և Հօրն[39] :

18 Կանայք՝ ենազանդ էղէք ձեր մարդկանց[40] , ինչպէս որ կը վայելէ Տէրումն[41] :

19 Ա՛րդիք՝ սիրեցէք ձեր կանայքն[42] , և մի՛ դառնացնէք նրանց[43] :

20 Որդիք[44] ենազանդ էղէք ձեր ծնօղներին ամէն բանի մէջ[45] , որ էն հաճոյ է Տէրին :

21 Հարք՝ մի՛ կսկիծացնէք ձեր որդոց սիրտըն , որ չըտրտմին[46] :

22 Ծառաներ[47] ենազանդ էղէք ձեր տէրերին[48] ամէն բանի մէջ[49] . չէ թէ աչքի առաջին ծառայութիւն անելով՝ երեսպաշաններին պէս . բայց սրտի միամտութեով՝ Տէրից վախենալով :

23 Ինչ որ անէք՝ յօժար սրտով արէք՝ ինչպէս Տէրին , և չէ թէ ինչպէս մարդկանց[50] :

24 Գիտացէք որ Տէրից կառնէք ձեր ժառանգութեան հատուցումն[51] . ինչու որ Տէր Քրիստոսին էք ծառայում[52] :

25 Նայց անօրէնն իրան անիրաւութեան չափովն կընդունի . պատճառն որ երեսպաշտութիւն չըկայ Աստուծոյ առաջին[53] :

(36) ա Կորնթ . ժդ . 26 · Կիս . ե . 19 : (37) Կող . գ . 6 : (38) ա Կորնթ . ժ . 31 : (39) Հռով . ա . 8 : Կիս . ե . 20 : Կող . ա . 12 : բ . 7 : ա Թես . ե . 18 : Եբր . ժգ . 15 : (40) Կիս . ե . 22 : Տիտ . բ . 5 : ա Պետր . գ . 1 : (41) Կիս . ե . 8 : (42) Կիս . ե . 25 . 28 . 33 : ա Պետր . գ . 7 : (43) Կիս . գ . 21 : (44) Կիս . զ . 1 : (45) Կիս . ե . 24 : Տիտ . բ . 9 : (46) Կիս . զ . 4 : (47) Կիս . զ . 5 , և այլն : ա Տիմ . զ . 1 : Տիտ . բ . 9 : ա Պետր . բ . 18 : (48) Փիլիմ . 16 : (49) Ա՚ե . 20 : (50) Կիս . զ . 6 , 7 : (51) Կիս . զ . 8 : (52) ա Կորնթ . ե . 23 : (53) բ Օրին . ժ . 17 : Հռով . բ . 11 : Կիս . զ . 9 : ա Պետր . ա . 17 :

Digitized by Google

Գլ. Գ

1 ընդդէմ օր ազօթքին մերոյ հեանէին , (Դիմեսցուք գիտութեանն լուսաղերիւք) հետ : քրիստոնեաներից :

5 Որ խոստացեալ վարձին զըգացեալներն 10 Ոչընդ կատարիչ նորանց՝ քան մեռ եւ

1 Տեառք՝ զիրաւացնա և զհաւատարմութիւն ծառայից ձերոց շնորհեցէք . գիտացէք զի և ձեր Տէր գոյ յերկինս :

2 Ազօթից սաեզ կացէք . աքնել ի նմին գոհութեամբ :

3 Աղէթս արարէք միանգամայն և վասն մեր . զի Բառուած բացցէ մեզ դուռն բանին , խօսել զըխորհուրդն Քրիստոսի , վասն որոյ և կապեալս կամ :

4 Օ՛ի յայտնի արարից զնա որպէս արժան իցէ ինձ խօսել :

5 Իմաստութեամբ գնացէք առ արտաքինան , գնոյ առեալ ժամայնակս :

6 Եւ բանն ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն իքաւ աղիւ համեմեալ լիցի , գիտել զոպես պատասխանի իցէ ձեզ իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի :

7 Ամէ որ ինչ զինէն իցէ ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ , և ծառայակից ի Տէր :

8 Օ՛որ առաքեցի առ ձեզ դմին իրի , զի գիտասջիք վասն մեր . և մխիթարեսցէ զսիրտս ձեր .

9 Ընեսիմաս հանգերձ եղբարբ հաւատարմաս և սիրելեաս՝ որ է ի ձէնջ . զամենայն ինչ ցուցցեն ձեզ՝ որ ինչ աստ է :

1 Պ՛ուք եղ աչերս՝ ինչ որ խրատուեաք և հաւատար է շնորհեցէք ձեր ծառանեարին . գիտացէք՝ որ գուք էլ Տէր ունիք երկնքաւն[1] :

2 Ազօթքին միշտ հետևեցէք[2] . և արթուն կացէք նորանաւտ գոհութեննով[3] :

3 Ա՛եզ համար էլ ազօթք առջէք[4] , որ Բառուած խօսքի դուռըն բանայ մեզ համար[5] որ Քրիստոսի խորհուրդըն խօսինք[6] , որ նորա համարել էլ ես կապված եմ[7] :

4 Որ յայտնեսմ նորան՝ ինչպես որ ինձ արժան է խօսիլ :

5 Իմաստութենով վարվեցէք գըրսինների հետ[8] , և ժամանակըն գնեցէք[9] :

6 Եւ ձեր խօսքն թող ամէն ժամանակ Տէրի շնորհովն լինի[10] իբր աղով համեղացած լինի[11] , որ գիտենաք թէ ինչպես արժան է ձեզ ամէն մէկին պատասխան տալ[12] :

7 Ինչ որ ինձ համար է՝ ամէնըն ցոյց կըտայ ձեզ Տիւքիկոս սիրելի եղբայրն՝ և հաւատարիմ պաշտօնեան , և ծառայութեանս ընկերն Տէրուն[13] :

8 Որ նորան հենց դրա համար առաղարկեցի ձեզ մօտ , որ մեզ համար գիտենաք , և ձեր սրտերն մխիթարվին[14] .

9 Ընեսիմոս հաւատարիմ և սիրելի եղբօրն հետ , որ նա ձեզանից է[15] . նորանք ամէն բան ցոյց կըտան ձեզ՝ ինչ որ էստեղ լինում է :

(1) Եփես . գ . 9 : (2) Կող . ժբ . 1 : Հռով . ժբ . 12 : Եփես . գ . 18 : ա Խոս . ե . 17 , 18 : (3) Կող . բ . 7 : գ . 15 : (4) Եփես . գ . 19 : բ Հռով . գ . 1 : (5) ա Կորնթ . ժգ . 9 : բ Կորնթ . բ . 12 : (6) Մատթ . ժգ . 11 : ա Կորնթ . գ . 1 : Եփես . գ . 10 : Կող . ա . 26 : բ . 2 : (7) Եփես . գ . 20 : Փիլիպ . ա . 7 : (8) Եփես . ե . 15 : ա Թես . գ . 11 : (9) Եփես . ե . 16 : (10) Յով . ժ . 12 : Կող . գ . 18 : (11) Մատթ . բ . 30 : (12) ա Պետր . գ . 15 : (13) Եփես . գ . 21 (14) Եփես . գ . 22 : (15) Փիլիմ . 10 :

Digitized by Google

[10 Ողջոյն տայ ձեզ Ա՛րիստարքոս գերեվից իմ, և Մ՝արկոս եղբօրորդի Բառնաբայ. վասն որոյ առէք պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ ընկալէք զնա ։

11 Եւ Յիսուս՝ որ անուանեալն է Յուստոս, որք են ի թլփատութենէ անտի. զի դոքա միայն գործակից եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք և եղեն իբրև մխիթարութիւն ։

12 Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝ որ ի ձէնջ ծառայ Յ՛Իսուսի Քրիստոսի Ջհոռոմի է. յամենայն ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայցէք կատարեալք և լցեալք յամենայն կամս Աստուծոյ ։

13 Մ՝կայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի վասն ձեր, և վասն Լաւոդիկեացւոցն և վասն այնոցիկ՝ որ յԵրապօլիսն են ։

14 Ողջոյն տայ ձեզ Ղուկաս բժիշկ և սիրելի, և Դեմաս ։

15 Ողջոյն տուջիք եղբարց՝ որ են ի Լաւոդիկիայ և Նիմփայ, և որ առանին եկեղեցին է նորա ։

16 Եւ յորժամ ընթեռնուցուք առ ձեզ թուղթդ՝ արասջիք զի և ի Լաւոդիկեացւոց եկեղեցւոյն ընթերցցի. և զառ ի Լաւոդիկեացոցն՝ զի և գուք ընթեռնուցուք ։

17 Եւ ասասջիք ցԱ՛րքիպպոս. Զգոյշ լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկալար ի Տէր, զի զայդ կատարեսցես ։

18 Ողջոյնդ ձեռին իմոյ Պօղոսի է. յիշ լինին ձեզ կապանքս իմ. շնորհք ընդ ձեզ, ամէն ։

10 Ողջոյն են տալիս ձեզ Ա՛րիստարքոսն՝ իմ գերուԹեան ընկերս[16], և Յ՝արկոս Բառնաբասի եղբօր որդին[17]. որ նորա համար պատուիրանք առիք՝ որ եթէ ձեզ մօտ գայ՝ ընդունիք նորան ։

11 Եւ Յիսուսն՝ որ Յուստոս անուանված է, որ նորանք Թլփատութենից են, որ միայնակ գործակիցներ իմ գործոյս ընկերք էլան Աստուծոյ արքայուԹեանումն, որ ինձ համար էլ մխիԹարուԹիւն էլան ։

12 Ողջոյն է տալիս ձեզ Եպափրասն՝ Յիսուսի Քրիստոսի ծառան, որ ձեղանից է[18]. որ ամէն ժամանակ ձեզ համար պատերազմում աղօԹքումն[19], որ կատարեալ և լցված լինիք Աստուծոյ ամէն կամքումն[20] ։

13 Ա կսկսւմամ նորան՝ որ շատ աշխատանք է քաշում ձեզ համար, և Լաւոդիկեցոց համար, և նորանց համար էլ՝ որ Յերապօլիսումն են ։

14 Ողջոյն է տալիս ձեզ Ղուկաս բժիշկն և սիրելին[21], և Դեմանաս[22] ։

15 Ողջոյն առէք եղբարներին՝ որ Լաւոդիկեայումն են և Նիմփային, և եկեղեցոյն՝ որ նորա տանն է[23] ։

16 Եւ երբոր էս ԹուղԹս ձեզ մօտ կարդացված լինի[24], արէք որ Լաւոդիկեցոց եկեղեցոյ միջումն էլ կարդացվի. և էն որ Լաւոդիկեցոցն է՝ որ դուք էլ կարդաք ։

17 Եւ Ա՛րքիպպոսին ասացէք[25]. Զգոյշ կաց քո սպասաւորուԹեանդ՝ որ ընդունեցիր Տէրումն, որ դրան կատարես[26] ։

18 Ողջոյնդ իմ Պօղոսիս ձեռին է[27]. իմ կապանքս ԹՀղ ձեր մտքներումդ լինին[28]. շնորհքն (լինի) ձեզ հետ, ամէն[29] ։

Լաւոդիկեացոց վերայ գրելոյս՝ Ասօր յաղագս Տէրունական Հանդիսի ։

16) Գործ · ԻԳ · 29 · ԻԹ · 4 · ԻԼ · 3 · Փիլմ · 24 · (17) Գործ · ԻԲ · 37 · Բ Տիմ · 4 · 11 · (18) Ղուկ · ա · 7 · Փիլմ · 23 · (19) Հռով · ԻԲ · 30 · (20) Մատթ · 5 · 8 · ա Կորնթ · բ · 6 · Ջգ · 29 · Փիլպ · գ · 15 · Նբր · 5 · 14 · (21) Բ Տիմ · գ · 11 · (22) Բ Տիմ · գ · 9 · Փիլմ · 24 · (23) Հռով · Ջգ · 5 · ա Կորնթ · Ջգ · 19 · (24) · Յհ · 20 · 21 · (25) Փիլմ · 2 · (26) ա Տիմ · գ · 6 · (27) ա Կորնթ · Ջգ · 21 · Բ Թես · գ · 17 · (28) Նբր · Ջգ · 3 · (29) Նբր · Ջգ · 25 ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԻՑ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Առաքեալն խնդիր կ՚ընդունի նախապատիւներով իւր ծանուցանել զհաստատութիւն եւ զաճումն իւրեանց հաւատոյ եւ ընդ նոսա զհաստատութիւն եւ զճշմարտութիւն աւետարանին Քրիստոսի։ 3 Նաեւ իւր հաստատութիւնն ցուցանէ ի նշանս եւ ի հրաշս։ 4 Եւ զհրամանն տալոյ նոցա զհաստատութեան։

1 ՊՕՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ Ա՚ստուած Հ՚այր մեր եւ Տէր Յիսուս Ք՚րիստոս ։

2 Շ՚նորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն • գոհանամք զ�ա՚ստուծոյ յամենայն ժամ վասն ձեր ամենեցուն՝ յիշատակ առնել յաղօթս մեր անդադար ։

3 Յիշել զձեր գործն հաւատոյ՝ եւ զվաստակ սիրոյ՝ եւ զհամբերութիւն յուսոյ Տեառն մերոյ Յիսուսի Ք՚րիստոսի՝ առաջի Ա՚ստուծոյ եւ Հ՚օր մերոյ ։

4 Գիտեմք եղբարք սիրեցեալք Ա՚ստուծոյ՝ զընտրութիւնն ձեր ։

1 ՊՕՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս[1] Եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց եկեղեցւոյդ Ա՚ստուած մեր Հ՚օրումբ եւ Տէր Յիսուս Ք՚րիստոսումբ ։

2 Շ՚նորհք (լինի՛) ձեզ եւ խաղաղութիւն[2] • ամէն ժամ՚անակ գոհանումն՚ք Ա՚ստուածմ՚նից ձեզ ամէնիդ համար՚[3] որ անդադար յիշատակ ենք առնում՚ մեր աղօթքումն՚[4] ։

3 Եւ յիշումն՚ք ձեր հաւատքի գործըն՚[5] եւ սիրոյ աշխատանքըն, եւ էն յուսոյ համբերութիւնըն՚[6] որ մեր Տէր Յիսուսի Ք՚րիստոսի վերայ առնիք Ա՚ստուծոյ եւ մեր Հ՚օր առաջին՚[7]։

4 Ա՚ստուածմ՚նից սիրուած եղբարք, գիտումն՚ք ձեր ընտրութիւնըն՚[8] ։

(1) ը կոչի • ա • 19 • բ Յիս • ա • 1 • ա Պետր • ե • 12 • (2) Նէեմ • ա • 2 • (3) Հռոմ • ա • 8 • Նէեմ • ա • 10 • փիլիպ • ե • (4) ա Յիս • բ • 13 • (5) Յովհ • զ • 29 • Կոլ • ե • 6 • ա Յիս • գ • 6 • բ Յիս • ա • 3 • 11 • Յով • բ • 17 • (6) Հռոմ • ժգ • 6 • Նէեմ • զ • 10 • (7) Կոլ • գ • 13 • բ Յիս • բ • 13 •

Digitized by Google

5 Զի աւետարանն մեր ոչ եղև առ ձեզ միայն բանիւ , այլ և զօրութեամբ՝ և Հոգւով Սրբով՝ և լրութեամբ բազմաց . որպէս և գիտէք իսկ՝ թէ որպիսիք եղեաք ՚ի միջի ձերում վասն ձեր ։

6 Եւ դուք նմանեալք մեզ՝ և Տեառն , ընկալայք զբանն ՚ի բազում նեղութեան՝ խնդութեամբ Հոգւոյն Սրբոյ ·

7 Լինել ձեզ օրինակ ամենայն հաւատացելոց , որ են ՚ի Մակեդոնիա և ՅԱքայիա ։

8 Զի ՚ի ձէնջ ՚ի բաց բանն Լսառաւծոյ · ոչ միայն ՚ի Մակեդոնիա և ՅԱքայիա , այլ յամենայն տեղիս հաւատքն ձեր՝ որ առ Լսառաւած են , սփռեցան · զի այսուհետև հեռև ոչինչ է պիտոյ մեզ և խօսել ինչ ։

(12) Գէս · գ · 7 , 8 · բ Տիմ · ա · 11 : (13) Հռով · բ · 1 : (14) Հռով · ժա · 13 : ժե · 16 : Կոր · ա · 16 : (15) Կոր · ա · 11 : Գաղ · գ · 21 : (16) Կոր · Ճգ · 2 : Եփես · ա · 15 : (17) ա Պետր · գ · 3 : (18) ա Պետր · գ · 4 : (19) ա Տիմոթ · ժգ · 34 : (20) Հփես · ե · 24 : (21) Ծննդ · ա · 27 · բ · 18 · 23 : ա Կորնթ · ժա · 8 , 9 : (22) Ծննդ · գ · 6 : բ Կորնթ · ժա · 3 :

Digitized by Google

ԳԼ · Գ

2 Եպիսկոպոսն եւ սարկաւագն եւ նորանց կանայքն ինչպէս պէտք է որ լինին , 14 նմա ինչ բանք համար Պօղոս էս բաներըն Տիմոթէոսին գրում է : 15 Հոգեւորականի նման թէ ինչպէս պէտք է վարվիլ Աստուծոյ տան մէջն՝ որ էն կենդանի Աստուծոյ եկեղեցին է , ճշմարտութեան սիւն և հաստատութիւն :

1 Հաւատարիմ է բանս . եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ :

2 Պարտ է եպիսկոպոսին անբասիր լինել , միոյ կնոջ այր , հեզ՝ ցած՝ պարկեշտ՝ հիւրասէր՝ ուսուցիչ .

3 ոչ՝ թիշնամանօղ , մի՛ հարկանօղ , այլ հանդարտ . մի՛ կռուօղ , մի՛ արծաթասէր :

4 Օ՛ի իւրում տանն իսկ բարւոյն վերակացու լեալ իցէ . որդեակս ունիցի , որ՝ի ՚ընազանդութեան կացցեն ամենայն պարկեշտութեամբ :

5 Ա՛պա եթէ ոք իւրում տանն վերակացու չգիտիցէ լինել , զիւորդ եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լինիցի ?

6 ոչ՝ մատաղատունկ , զի մի՛ հպարտացեալ՝ի դատաստանս Սատանայի անկանիցի :

7 Աւյլ պարտ է նմա վկայութիւն բարի և յարտաքինոցն ունել . զի մի՛ ՚ի նախատինս անկանիցի՝ և որոգայթս Սատանայի :

8 Սպասեալս և զսարկաւագունս պարկեշտս . մի՛ երկլեզուս , մի՛ գինեսէրս , մի՛ զօշաքաղս .

1 Հաւատարիմ է էս խօսքս[1] . թէ որ մէնն եպիսկոպոսութեան ցանկանայ[2] մէն բարի գործոյ է ցանկանում[3] :

2 Եպիսկոպոսին պէտք է որ անարատ լինի[4] , մէն կնկան մարդ[5] , հեզասիրտ՝ խոնարհ՝ պարկեշտ՝ օտարասէր՝ սովորցնօղ .

3 Չէ թէ նախասինք տուօղ[7] , և ոչ զարկօղ[8] , բայց հանդարտ[9] . չէ թէ կռիւ անօղ , և ոչ արծաթասէր[10] :

4 Որ հենց իրան տանն բարի վերակացու էլած լինի . որ որդիքներ ունենայ՝ որ հնազանդ են ամէն պարկեշտութենով[11] :

5 Որայց թէ որ մէնն չգիտանայ իրան տանն վերակացու լինիլ , ինչպէս նա Աստուծոյ եկեղեցւոյն հոգաբարձու կըլինի :

6 Ոչ թէ հաւատքն նոր եկած , որ չըլինի թէ գոռոզանայ և Սատանայի դատաստանի մէջն ընկնի[13] :

7 Որայց պէտք է նորան , որ դրսի սիներիցն էլ բարի վկայութիւն առնեայ[15] . որ նախատինքի և Սատանայի որոգայթին (ընկալչին) մէջ չընկնի[14] :

8 Նոյնպէս էլ սարկաւագներն (պէտք է) պարկեշտ լինին[15] . ոչ երկու կերպ խօսող , ոչ գինեսէր , ոչ պիղծ շահ սիրօղ[16] .

(1) ա Տիմ . ա . 15 : (2) Կորնթ . ի . 26 : Փիլիպ . ա . 1 : (3) Եփես . գ . 12 : (4) Տիտ . ա . 6 , Լուկ : (5) ա Տիմ . ե . 9 : (6) բ Տիմ . բ . 24 : (7) Ա՛ստ . 8 : Տիտ . ա . 7 : (8) բ Տիմ . բ . 24 : (9) բ Տիմ . բ . 25 : (10) ա Պետր . ե . 2 : (11) Տիտ . ա . 6 : (12) Նաւմ . մգ . 12 : (13) Կորնթ . իբ . 12 : ա Յովհ . ե . 12 : ա Թես . գ . 11 : (14) ա Տիմ . զ . 9 : բ Տիմ . բ . 26 : (15) Կորնթ . գ . 8 : (16) Ղևտ . ժ . 9 : Նաւմ . խգ . 21 : Ա՛ստ . 8 :

Digitized by Google

9 Ա՛ղէ ունիցին զխորհուրդ հաւատոցն առաքելք մեռօք ։

10 Ինքեանք նախ փորձեսցին , և ապա ՚ի պաշտօնն մատիցեն , զի անարատք իցեն ։

11 ՚Նոյնպէս և կանայքն նոցա պարկեշտք . մի՛ չարախօսք , հեզք՝ հաւատարիմք յամենայնի ։

12 Այրկաւագք լինիցին միոյ կնոջ արք . որք որդւոց իւրեանց բարւոք վերակացու լեալ իցեն , և տանց իւրեանց ։

13 Զի որ բարւոքն պաշտիցեն , աշտիճան բարի անձանց իւրեանց չահին , և բազում համարձակութիւն ՚ի հաւատսն՝ որ ՚ի Քրիստոս Յիսուս ։

14 Զայս գրեմ առ քեզ՝ զի ակնունիմ ՚ի մօտոյ գալ ։

15 Ապա թէ յապեցից՝ զի գիտասցես , թէ որպէս պարտ իցէ քեզ ՚ի տան Աստուծոյ շրջել . որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ , սիւն և հաստատութիւն ճշմարտութեան ։

16 Եւ յայտնի իսկ մեծ է խորհուրդն աստուածպաշտութեան . որ երևեցաւ մարմնով՝ արդարացաւ ՚ի հոգւով՝ յայտնեցաւ հրեշտակաց՝ քարոզեցաւ ՚ի հեթանոսս՝ հաւատարիմ եղև յաշխարհի և վերացաւ փառօք ։

9 Խոյց հաւատքի խորհուրդքն սուրբ մաքով ունենան[17] ։

10 Իրանք առաջ թող փորձվին , և յետոյ էն պաշտօնի մէջ մտնեն , որ անարատ լինին ։

11 Ինչպէս էլ նորանց կանայքըն՝ (պէտք է) պարկեշտ (լինին) . չէ թէ չարախօս , հեզահոգի՝ ամէն բանի մէջ հաւատարիմ[18] ։

12 Այրկաւագներն (պէտք է) մին կնկան մարդիք լինին . որ իրանց որդոցն բարի վերակացու էլած լինին , և իրանց տըներին ։

13 Ինչու որ նորանք՝ որ պաշտօնըն լաւ են կատարում , իրանց անձներին համար բարի աստիճան են շահվում , և շատ համարձակութիւն են հաւատքումն՝ որ Քրիստոս Յիսուսումն է[19] ։

14 Ես գրում քեզ՝ որ էլ յոյս ունիմ որ մօտիկ ժամանակումս գամ ։

15 Խայց թէ որ ուշանամ՝ որ գիտենաս թէ ինչպէս պէտք է վարվիլ Աստուծոյ տան մէջն[20] . որ էն կենդանի Աստուծոյ եկեղեցին է , ճշմարտութեան սիւն և հաստատութիւն ։

16 Եւ յայտնի էլ մեծ է Աստուածապաշտութեան խորհուրդն . որ նա երևեցաւ մարմնով[21] արդարացաւ հոգով[22] , յայտնըվեցաւ հրեշտակներին[23] քարոզվեցաւ հեթանոսներին[24] հաւատացվեցաւ աշխարհքումս[25] և վերացաւ փառքով[26] ։

(17) ա Տիմ . ա . 19 ։ (18) Տիտ . բ . 3 ։ (19) Մատթ . իե . 21 ։ (20) Ղեւտ . բ . 21 , 32 ։ բ Տիմ . բ . 20 ։ (21) Հովհ . ա . 14 ։ ա Հովհ . ա . 2 ։ (22) Մատթ . գ . 16 ։ Հովհ . ա . 32 , 33 ։ ժե . 26 ։ ժզ . 8 , 9 ։ Հռոմ . ա . 4 ։ ա Պետր . գ . 18 ։ ա Հովհ . ե . 6 , Հայն ։ (23) Մատթ . իբ . 3 ։ Մարկ . ժգ . 5 ։ Ղուկ . բ . 13 ։ իգ . 4 ։ Հովհ . բ . 12 ։ Ղեւտ . գ . 10 ։ ա Պետր . ա . 12 ։ (24) Գործ . ժ . 34 ։ ժգ . 46 . 48 ։ գործ . բ . 8 ։ Ղեւտ . գ . 5 , 6 . 8 ։ Հռոմ . ժ . 18 ։ Կող . ա . 27 , 28 ։ ա Տիմ . բ . 7 ։ (25) Ես . ա . 6 . 23 ։ (26) Ղուկ . իգ . 51 ։ Գործ . ա . 9 ։ ա Պետր . գ . 22 ։

Digitized by Google

ԳԼՈՒԽ Գ

1 Պօղոս առաքեալ իմաց կըտայ Սուրբ Հոգւով թէ յետին ժամանակներուն մինչեւ հաւատքին կըքակուին · 6 Ու Տիմոթէոսին իրեն պարտքերը կատարելուն յիշատակ համար նորա կերպ կերպ յորդորանքներ կըտայ ։

1 Բայց Սուրբ Հոգին յայտնապէս ասէ[1], թէ յետին ժամանակներուն մինչեւ հաւատքին կըհեռանան[2] · և մոլորութեան հոգիներուն[3] և դեւերի վարդապետութիւններուն մտիկ կըտան[4] ,

2 ստոյգ՝ որ կեղծաւորութենով սուտ են խօսում[5], և իրենց խղճմըտանքովն տաղտկած են[6] ։

3 Որ պատկվելուցն կարգելեն[7], և կըհրաժարեն էն կերակուրներից[8] որ Աստուած ստեղծեց՝ որ նորանց վայելեն[9] հաւատացեալներն , և նորա՛ք որ ճշմարտութիւնը ճանաչել են[10] ,

4 Զատճառն որ՝ Աստուծոյ ամէն ստեղծուածներն բարի են , և իսկ մին բան անարգելի չէ · մանաւանդ էն որ գոհութենով ընդունվում[11] ։

5 Ինչու որ՝ Աստուծոյ խօսքովն և աղօթքով սրբվում ։

6 Այս խրատս որ եղբայներին տաս՝ Յիսուսի Քրիստոսի բարի պաշտօնեայ կըլինիս , կըմեծանաս և կապրիս հաւատքի խօսքերովն , և էն բարի վարդապետութենովն՝ որ նոյան հետևեցիր[12] ։

7 Բայց պիղծ խօսքերից և պառաւների առասպելներից չեմ կաց[13] · բայց վարժացրու քո անձդ աստուածապաշտութենում ։

1 Ոգին Սուրբ յայտնապէս ասէ , թէ ի ժամանակս վերջին՝ քակեսցին ոմանք ի հաւատոցն , և հայեսցին յոգիս մոլորութեան , և ի վարդապետութիւնս դիւաց ,

2 կեղծաւորութեամբ ստապանք , խարեալք իւրեանց խղճիւն մատաց ։

3 Որ արգելուցուն յամուսնանալոյ , և ունկնիցեն ի կերակրոց՝ զոր Աստուած հաստատեաց ի վայելել հաւատացելոց , և ոչք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ ։

4 Զի ամենայն արարած Աստուծոյ բարի են , և չիք ինչ խոտան · մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին ։

5 Զի սրբի բանիւն Աստուծոյ՝ և աղօթիւք ։

6 Զայս խրատ տուեալ եղբարց՝ բարւոք պաշտօնեայ լինիցիս Ի՛ր Յիսուսի Քրիստոսի Հիսուսի · սնանիցիս բանիւք հաւատոց , և բարւոք վարդապետութեամբն՝ զորոյ զհետն իսկ եղեր ։

7 Այլ ի պիղծ բանից՝ և յառասպելաց պառաւանց հրաժարեսջիր · բայց կրթեա զանձն քո յաստուածապաշտութիւն ։

(1) Յովհ · ժգ · 13 ։ բ Ինթ · բ · 3 ։ բ Տիմ · դ · 1 ։ Լուկ ։ բ Պետր · գ · 3 ։ ա Յովհ · բ · 18 ։ Յուդ · 4 · 18 ։ (2) ա Պետր · ա · 20 ։ (3) բ Տիմ · գ · 13 ։ բ Պետր · բ · 1 ։ Յայտ · ժգ · 14 ։ (4) Գաղ · ժա · 35 · 37 , 38 ։ Յայտ · թ · 20 ։ (5) Մատթ · է · 15 ։ Հռոմ · ժգ · 18 ։ բ Պետր · բ · 3 ։ (6) Եփես · գ · 19 ։ ա Կորնթ · է · 28 · 36 · 38 ։ Գաղ · բ · 20 , 21 ։ Եբր · ժգ · 4 ։ (8) Հռոմ · ժգ · 3 , 17 ։ ա Կորնթ · ը · 8 ։ (9) Ծննդ · ա · 29 ։ թ · 3 ։ (10) Հռոմ · ժգ · 1 ։ ա Կորնթ · ժ · 30 ։ (11) Հռոմ · ժգ · 14 · 20 ։ ա Կորնթ · ժ · 25 ։ Տիտ · ա · 15 ։ (12) բ Տիմ · գ · 14 , 15 ։ (13) ա Տիմ · ա · 4 ։ Ղ · 20 ։ բ Տիմ · բ · 16 , 23 ։ գ · 4 ։ Տիտ · ա · 14 ։

Digitized by Google

8 Օ՛ի մարմնոյ կրթութիւն առ՝ սակաւ ինչ օգտակար է · իսկ աստուածապաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է · և զաւետիս կենաց ունի զարդիս և զհանդերձելոցն ։

9 Հաւատարիմ է բանս՝ և ամենայն ընդունելութեան արժանի է ։

10 Օ՛ի ՚ի սոյն իսկ վաստակեմք՝ և նախատինս յանձն առնումք · զի յուսացեալ եմք յ՚Աստուած կենդանի , որ է փրկիչ ամենայն մարդկան , մանաւանդ հաւատացելոց ։

11 Պատգէր տայիր զայդ՝ և ուսուցանիջիր ։

12 Օ՛ի մի՛ ոք զքո մանկութիւնդ արհամարհիցէ · այլ օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բանիւք՝ գնացիւք՝ սիրով՝ հաւատովք՝ սրբութեամբ ։

13 Մ՚ինչև գամ ես , մի՛ա դիր ընթերցուածոց միխիթարութեան՝ վարդապետութեան ։

14 Մ՚ի անփոյթ առներ զշնորհացդ՝ որ ՚ի քեզ են , որ տուաւ քեզ մարգարէութեամբ ՚ի ձեռնադրութենէ երիցութեան ։

15 Զայդ խորհեաց՝ և ՚ի դմին կանխասջիր · զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն յայտնի լիցի ։

16 Օգոյշ լինիջիր անձին և վարդապետութեանդ՝ և ՚ի դմի՚ն յամեսջիր · զայդ եթէ առնիցես՝ և զանձն ապրեցուցես , և զայնոսիկ՝ որ քեզն լսիցեն ։

Ե Ինչու որ՝ մարմնոյ վարժութիւնն քիչ բանի համար օգուտ ունի[14] · բայց աստուածապաշտութիւնն ամէն բանի համար օգուտ ունի[15] · և հիմկվան և նոր գալու կենաց աւետիքըն ունի[16] ։

9 Հաւատարիմ է բանս՝ և ամէն կողմանէ արժանի է ընդունվելոյ[17] ։

10 Ինչու որ հենց սրա համար աշխատութենք և նախատինք ենք քաշում[18] · որ կենդանի Աստուծոյ վրայ յոյսըն ենք դրել[19] , որ նա փրկիչ է ամէն մարդկանց , և մանաւանդ հաւատացեալներին[20] ։

11 Այդ քանըդ պատուիրիր և ուսուցանել[21] ։

12 Ձըլխին որ մինն քո տղայութիւնըդ անարգէ[22] · բայց օրինակ լինիր հաւատացեալներին խօսքերով , վարքով , սիրով , հաւատքով , սրբութենով[23] ։

13 Մ՚ինչև որ գամ՝ միտք դիր կարդացմունքին , յորդորմունքին և վարդապետութեանն ։

14 Ինհոգ մի լինիր էն շնորհքին համար՝ որ քեզ տուաւ էն[24] · որ տրվաւ քեզ մարգարէութենով[25] էրէցների ձեռնադրութենիցն[26] ։

15 Այդ մտածիր՝ դորանում ջանք արա · որ քո առաջանալն ամէնին յայտնի լինի ։

16 Օգոյշ կաց անձիդ և վարդապետութեանդ՝ և դորանում մնա[27] · էդ թէ որ անես՝ քո անձըդ կապրեցնես[28] , և նորանց էլ՝ որ քեզ կըլսեն[29] ։

(14) ա Կորնթ · ը · 8 ։ Կող · բ · 23 ։ (15) ա Տիմ · գ · 8 ։ (16) Կող · լե · 4 ։ Եգ · 14 · Ամբ · 2 , 3 ։ Ամա · 19 ։ Սաքա · գ · 33 ։ Ժբ · 29 ։ Մատ · ժ · 30 ։ Հռոմ · ը · 28 ։ (17) ա Տիմ · ա · 15 ։ (18) ա Կորնթ · գ · 11 , 12 ։ (19) ա Տիմ · գ · 17 ։ (20) Կող · լդ · 6 ։ Հէ · 2 · 6 , Լայն ։ (21) ա Տիմ · գ · 2 ։ (22) ա Կորնթ · ժգ · 11 ։ Տիտ · բ · 15 ։ (23) Տիտ · բ · 7 ։ ա Պետր · ե · 3 ։ (24) բ Տիմ · ա · 6 ։ (25) ա Տիմ · ա · 18 ։ (26) Գործ · գ · 6 ։ ը · 17 ։ Ժգ · 3 ։ Ժբ · 6 ։ ա Տիմ · ե · 22 ։ բ Տիմ · ա · 6 ։ (27) Գործ · ի · 28 ։ (28) Եզի · լգ · 9 ։ (29) Հռոմ · ժա · 14 ։ ա Կորնթ · բ · 22 ։ Գաղ · ե · 26 ։

Digitized by Google

ԳԼ · Ն

1 Ոմն (մարդոյն) և երիտասարդներին յոգնութեայ համար կանանձիր կըսայ · 3 Ընկերներէն համար · 17 Լչեցներէն համար · 23 Նա Ցնծութեան առաջնորդեան համար կանանձիր · 24 Սպրդիանոս անդերին համար խօսում է , Թե յայտնի են և գտատատանի հատած քիչ անխան , և փիչ անխին էլ հաւէն կըգնան ։

1 Ոմն ՚ի գործս մի՛ պատուհասեացես , այլ մխիթարեսջիր իբրև զհայր , զերիտասարդս իբրև զեղբարս ։

2 Պատառաւնս իբրև զմարս , զմանկամարդս իբրև զքոյր՝ ամենայն սրբութեամբ ։

3 Այրիս պատուեա , որ առեալ այրիքն իցեն ։

4 Եթե ոք այրի՝ որդիս և թոռունս ունիցի , ուսանիցին նախ իւրեանց առնց բարի տունել՝ և ըզփոխարէնս հատուցանել ծնողացն ։ զի այն է բարի՝ և ընդունելի առաջի Աստուծոյ ։

5 Իսկ որ ճշմարտիւ այրին իցէ և մենացեալ յուսացեալ յԱստուած , և կանխեալ յաղօթս և ՚ի խընդրուածս զցայգ և զցերեկ ։

6 Իսկ գիրգ այրին՝ կենդանւոյն մեռեալ է ։

7 Այս պատուիրեա՝ զի անառարտք իցեն ։

8 Իսկ եթէ ոք իւրոց՝ և մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի , ՚ի հաւատոցն ուրացեալ է՝ և չար ևս քան զանհաւատն է ։

9 Աղրի ընդ այրիս անուանեսցի , որ չիցէ պակաս ՚ի վաթսնամենից , միոյ առն կին լեալ ·

10 Եւ ՚ի գործս բարիս վկայեալ ,

1 Ումն (մարդոյն) առաքիկ մի՛ յանգիմաներ , բայց յորդորեցը նըրան ինչպէս հօր[1] · երիտասարդներին՝ ինչպէս եղբարներին ·

2 Պառաւներին՝ ինչպէս մարք · մեռալաշ կանանց ինչպէս քըվերք՝ ամեն սրբութենով ։

3 Իրեւէրիներին պատուեր՝ նըրանց որ ճշմարիտ որեւէրի են[2] ։

4 Այց թէ որ մին որեւէրի՝ որդիք և թոռներ ունենայ , թող (նըրանք) առաջ սովորին իրանց առն բարի անել՝ և ծնողաց փոխ հատուցանել[3] · ինչու որ էն է բարի՝ և Աստուծոյ առաջին ընդունելի[4] ։

5 Այց նա՝ որ ճշմարիտ որեւէրի է , և մենակ կացած՝ յոյսն Աստուծոյ վերայ է դնում[5] , և գիշեր և ցերեկ[6] աղօթքին և աղաչանքին է հետևում[7] ։

6 Այց փափկասէր որեւէրին՝ հենց կենդանի մեռած է[8] ։

7 Այս պատուիրիր՝ որ անպատճառ լինին[9] ։

8 Այց թէ որ մինն իրաններին՝ և մանաւանդ ընտանիքներին հոգ չունենայ[10] , նա հաւատքին ուրացած է[11] և անհաւատներին էլ չար է[12] ։

9 Այն որեւէրին որեւէրիների կարգին մէջ դասվի՝ որ վաթսուն տարուց պակաս չէ՝ և մին մարդոյ կին եղած է[13] ·

10 Եւ բարի գործքերով վկայված

(1) Ա Տիմ · ժբ · 32 : (2) Ա Յայտ · 5 · 16 : (3) Ա Տիմ · ե · 10 , 11 : Սպրդ · ժ · 4 : Եփես · գ · 1 , 2 : (4) ա Տիմ · բ · 3 : (5) ա Կորնթ · է · 32 : (6) Գործ · իգ · 7 : (7) Ա Յովհ · բ · 27 : ժգ · 1 : (8) Ճակ · ե · 5 : (9) ա Տիմ · ա · 3 : գ · 11 : գ · 17 : (10) Ա Տիմ · ծգ · 7 : Գաղ · գ · 10 : (11) բ Տիմ · գ · 5 : Տիտ · ա · 16 : (12) Սպրդ · ժգ · 17 : (13) Ա Յովհ · բ · 30 : ա Տիմ · ե · 2 :

Digitized by Google

եթէ մանկունս անուշեալ իցէ, եւ
եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ
զօրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ
նեղելոց բաւական լեալ իցէ, եթէ
զամենայն գործոց բարեաց զհետ
երթեալ իցէ :

11 Ա՛յլ՝ի մանկամարդաց այրեա-
ցըն հրաժարեա՛, զի յորժամ խայ-
տան զՔրիստոսէ՝ ամուսնանալ կա-
մին :

12 Իսկ զդատաստանս ընդունին,
զի զառաջինն հաւատան արհամար-
հեցին :

13 Ա՛յնգամայն և դատարկան-
ձունք ուսանին՝ շրջօղք տանէ՛ի
տուն. և ո՛չ միայն դատարկք՝ այլ
և փսաքուսք և հետաքրքիրք. և
խօսին՝ որ ինչ ո՛չ է պիտոյ :

14 կամիմ զմանկամարդացդ ա-
մուսնանալ, որդիս ծնանել, տնա-
րարս լինել, և մի՛ ինչ պատճառս
առնել՛ի հակառակորդին՛ի հայհո-
յութեան աղագս :

15 Ո՛յ արդէն իսկ ոմանք խոտո-
րեցան զկնի Սատանայի :

16 Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս
ունիցի՛ բաւական լիցի նոցա, և մի՛
ծանրասցի եկեղեցւոյն. զի ճշմա-
րիտ այրեացն բաւական լինիցի :

17 Որ բարւոք վերակացու լինին
երիցունք՝ կրկին պատուոյ արժանի
դղիցին. մանաւանդ որ աշխատիցին
ւանին և վարդապետութեամբ :

18 Գ՛րանզի ասէ գիր. Մ՛ի կա-
պեացես զբերուկ եզին կալոտոյ. և
է՝ որ երեխաներ մեծացրած լինի,
որ օտարներին ընդունած լինի[14], որ
սըրբերի ոտներըն լուացած լինի[15],
որ նեղացածներին ձեռնտուած լի-
նի, որ ամէն բարի գործքերին հե-
ռւաած լինի :

11 Նայց մատղաշ որբևէրիներից
լեա կաց. ինչու որ երբոր ուրա-
խութենով աւելանումն՝ Քրիստո-
սին հակառակ՝ կամենումն պսակ-
վիլ :

12 Եւ դատաստան են ընդունում
իրանց վերայ՝ որ առաջին հաւատա-
քըն դէն քցեցին :

13 Այրավերայ էլ գործքից դատարկ
մնալ են սովորում՝ տանից տուն
մանգալով. և չէ թէ մէնակ դա-
տարկ՝ բայց էլ շատախօս և հետա-
քրքիր. և խօսումն՝ ինչ որ պէտք
չէ[16] :

14 կամենումեմ որ մատղաշ որ-
բևէրիներն պսակվին, որդիք ծնին,
տընաշէն լինին[17]. և հակառակօղին
իսկի պատճառ չըտան՝ հայհոյանք
անելոյ[18] :

15 Ինչու որ՝ հենց հիմիկ մեքա-
նիսն ճանապարհից դուրս գնացին
Սատանային եւաէն :

16 Եթէ որ մին հաւատացեալ՝ որ-
բևէրիներ ունենայ՝ նա թոյղ հոգա
անէ նորանց համար, և եկեղեցին
ծանրութիւն չըտայ. որ ճշմարիտ
որբևէրիներին բաւական լինի[19] :

17 Լրէցներն որ լաւ վերակացու-
թիւն են անում[20] թոյղ երկապա-
տիկ պատուոյ արժանի լինին. և
մանաւանդ նորանք՝ որ խօսքով և
վարդապետութենով են աշխատում[21]:

18 Պատճառն որ գիրքն ասումէ.
(թէ) կալէ մէջն աշխատօղ եզին

(14) Ժող. 15 : Եբր. ժգ. 2 : ա Պետ. գ. 9 : (15) Հովհ. ժբ. 4 : ժբ
: : Ղուկ. է. 38 : 44 : Գործ. ժգ. 5. 14 : (16) բ Կորնթ. գ. 11 : (17) ա Տի-
մոթ. ե. 9 : (18) ա Տիտ. գ. 1 : Տիտ. բ. 8 : (19) Ղուկ. 3. 5 : (20) Հռոմ.
բ. 8 : ա Կորնթ. թ. 10. 14 : Գաղ. գ. 6 : Փիլիպ. բ. 29 : ա Թես. ե. 12
8 : Եբր. ժգ. 7. 17 : (21) Ժող. ժբ. 16 :

Digitized by Google

Ընժանի է մշակն վարձու իւրոյ :

19 Օ՛երիցուէ չարաչօսութիւն մի՛ ընդունիցիս . թայց եթէ երկուք՝ և երիւք վկայիւք :
20 Խակ որ մեղանչեն՝ առաջի ամենեցուն յանդիմանեա , զի և այլքն երկիցեն :

21 Ի կայսութիւն դնեմ առաջի Ա՛ստուծոյ և Յիսուսի Ք՛րիստոսի՝ և ընտրելոց հրեշտակաց , զի զայգ պահեսցես առանց մտաչաճութեան . մի՛ ինչ առնել աչառանաք :

22 Ձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի՛ դնիցես , և մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց . զանձն քո սուրբ պահեսջիր :
23 Ա՛յսուհետեւ մի՛ ջուր և եթ ըմպիցես՝ այլ սակաւիկ մի և գինի խառնեսջիր վասն ստամոքսի և ստէպ հիւանդութեանց :
24 Ընն մարդք՝ որոց մեղքն յայտնի են՝ և յառաջագոյն հասեալ՝ ի դատաստան , և են՝ որոց զկնի երթան :
25 Ա՛յնպէս և բարի գործքն յայտնի են . և որ այլ ազգ ևս ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն :

դունչըն մի կապիր[23] . և թէ Ո՛չ՝ չակըն արժանի է իրան վարձքին[24] :
19 Ի՛րիցու վերայ չարաչօսութիւն մի ընդունիր . բայց միայն երկու կամ երեք վկայով[25] :
20 Ո՛յց նորանք՝ որ մեղք են գործում , ամենի առաջին յանդիմանիր[26] , որ ուրիշներն էլ վախենան[27] :
21 Ի կայսութիւն եմ դնում Ա՛ստուծոյ և Յիսուսի Ք՛րիստոսի և ընտրված հրեշտակների առաջին , որ էդ պահես առանց քո մտքի հաճոյութեան նայելոյ . իսկի մին բան չանես երեսպաշտութենով[28] :
22 Ձեռըն շուտով մի դներ մէնի վերայ[29] , և ուրիշների մեղացն մասնակից մի լինիր . քո անձըդ սուրբ պահիր[30] :
23 Ի՛սուհետև մէնակ ջուր չը՛խմես , բայց մինքիչ գինի էլ խառնիր քո ստամոքսի և շուտ շուտ հիւանդութիւնների համար[31] :
24 Կան մարդիք՝ որ նորանց մեղքերն յայտնի են , և առաջ դատաստանի մէջ հասած[32] . և կան էլ՝ որ ետևէն գալիս են (յայտնըվում են) :
25 Ի՛նպես էլ բարի գործքերն յայտնի են . և ուրիշ կերպ էլ՝ որ լինին՝ չեն կարող ծածուկ կենալ :

Գ Լ . Ը .

1 Ձգատանեաց իւրանց աէրերին ծառայութիւն անելոյն սովորեցնէլոյ համար պատուէր կըտայ Ցիմոթէոսին . 3 Ուրիշ կերպով սովորցնողներին ինչպես մարդիք լինելն ցոյց կըտայ . 6 Ի՛սուսծասպաշտութեան մեծ չահ . 10 Ի՛նչ արժանի սէրն ամեն չարի արմատ լինելն . 11 Ցիմոթէոսին պատուէր կըտայ որ նորանցից փախի , և էն բաներին հետևի որ իրան պատուիրուած . 17 Հարուստներին ինչպես պատուէր տալն ասած . 20 Ցորդորուած Ցիմոթէոսին որ՝ չըմարիտ գիտութիւնն պահէ և յիտ կայ պիղծ և նորահնչ խօսքերից :

1 Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն , զիւրաքանչիւր

1 Ձորանք որ ծառայութեան լըծի տակն են՝ ամեն մէկն թող իրանց

(22) բ Օրին . ի . 4 : ա Կորնթ . ը . 9 : (23) Ղևտ . ժը . 13 : բ Օրին . իգ . 14 , 15 : Մատթ . ժ . 10 : Ղուկ . ժ . 7 : (24) բ Օրին . ժը . 15 : (25) Գործ . բ . 11 . 14 : Տիտ . ա . 13 : (26) բ Օրին . ժգ . 11 : (27) ա Տիմ . ե . 13 : բ Տիմ . բ . 14 : գ . 1 : (28) Գործ . ը . 6 : ժգ . 3 : ա Տիմ . գ . 14 : բ Տիմ . ա . 6 : (29) բ Կռնթ . 11 . (30) Յակ . ճգ . 15 : (31) Գործ . ե . 10 :

Digitized by Google

ահաբա պատուի այժանի համարեա-
ցին . զի մի՛ անուն Աստուծոյ և
վարդապետութիւնն հայհոյեսցի :

2 Իսկ որ հաւատացեալ տէրս
ունիցին՝ մի՛ արհամարհեսցեն , զի
եղբարք են . այլ առաւել ծառա-
յեսցեն՝ զի հաւատացեալքն են և
սիրելք . որք զբարերարութիւն
յանձինս ունիցին . զայս ուսուցա-
նիջիր՝ և մխիթարեսջիր :

3 Իսկ եթէ ոք այլազգ ինչ ու-
սուցանիցէ , և ոչ անայցէ ողջմը-
տութեան բանից Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի , և ըստ աստ-
ուածպաշտութեան վարդապետու-
թեանն :

4 Ընդպիղծ հպարտացեալ է , և
ոչինչ ոչ գիտէ . այլ ապուշ ի բանդիրս և ի բանս հակառակու-
թեան . ուստի լինին նախանձ՝ հեռ՝ հայհոյութիւն՝ կարծիք չարեաց ,

5 խարդախութիւնք ապականելոց մտաց մարդկան՝ և օտարացելոց ի ճշմարտութենէ անտի , որ շահ-
ագաստ համարին զաստուածպաշ-
տութիւնն . բայց դու մերժեսջիր յայնպիսեացն :

6 Այլ շահագաստ մեծ ստա-
ուածպաշտութիւն է՝ բաւականու-
թեամբ հանդերձ :

7 Ոչի ոչ բերաք ինչ յաշխար-
հըս՝ և ոչ տանել ինչ կարացուք :

8 Այլ ունիմք կերակուր և հան-

աերբերին պատուոյ արժանի համա-
րեն[1] . որ Աստուծոյ անուն[1] և վար-
դապետութիւնն չըհայհոյվի[2] :

2 Նայց նորանք որ հաւատացեալ
տէրեր ունին՝ չըվնեին որ անարգեն ,
նրահամար որ եղբարք են[3] . բայց
էլ աւելի ծառայութիւն անեն , նը-
րահամար՝ որ հաւատացեալ և սի-
ելի են , որ բարերարութեանն
մասնակից են . էս սովորցուր և յոր-
դորիր[4] :

3 Նայց թէ որ միևն ուրիշ կեր-
պով սովորցնէ[5] և մտիկ չըգայ մեր
Տէր Յիսուսի Քրիստոսի ողջախո-
խօսքերին[6] , և էն վարդապետու-
թեանն՝ որ աստուածպաշտութեանն
կըվայելէ[7] :

4 Ընպէսի մարդն գոռոզացած է ,
և իսկի բան չի գիտէ[8] . բայց
այրվուռ վիճաբանութիւններով և
հակառակութեան խօսքերով , որ
նորանից լինում նախանձութիւն ,
կուիւ , հայհոյութիւններ , չար կար-
ծիքներ[9] ,

5 կարդախութիւններ[10] մարդ-
կանց՝ որ մտքով ապականված և
ճշմարտութենից օտարացած են[11] .
որ աստուածպաշտութիւնըն շա-
հեկան արհեստ են համարում[12] .
բայց դու չի՛ք քաշվիր էնպէսիներ-
ից[13] :

6 Նայց մեծ շահ է աստուածա-
պաշտութիւնն՝ բաւականութեան
հետ[14] :

7 Պատճառն որ՝ իսկի բան չենք
բերել էս աշխարհքս՝ և էլ չենք
կարենալ մին բան դուրս տանիլ[15] :

8 Նայց թէ որ կերակուր և շո-

(1) Ա Տիմ . գ . 5 : Սուղ . ք . 22 : Տիտ . բ . 9 : ա Պետր . բ . 18 . (2) Նաում . ծբ . 5 :
Հռոմ . բ . 24 : Տիտ . բ . 5 . 8 : (3) Սուղ . ք . 1 : (4) ա Տիմ . գ . 11 : (5) ա Տիմ .
ա . 3 : (6) ա Տիմ . ա . 10 : բ Տիմ . ա . 13 : գ . 3 : Տիտ . ա . 9 : (7) Տիտ . ա .
1 : (8) ա Կորնթ . ը . 2 : ա Տիմ . ա . 7 : (9) ա Տիմ . ա . 4 : բ Տիմ . բ . 23 : Տիտ .
գ . 9 : (10) ա Տիմ . ա . 6 : (11) բ Տիմ . գ . 8 : (12) Տիտ . ա . 11 : բ Պետր . բ .
3 : (13) Հռոմ . ժգ . 17 : բ Տիմ . գ . 5 : (14) Սաղմ . լե . 16 : Նաում . ժե . 16 :
ժգ . 8 : Նէեր . ժգ . 5 : (15) Յոբ . ա . 21 : Սաղմ . խթ . 17 : Նաում . իե . 24 :
Ժող . ե . 15 :

Digitized by Google

գերձա , և այնու շատացուք ։

9 Եւկ սրք կամին մեծանալ՝ անկանին ի փորձութիւն և յորոգայթ , և ի բազում ցանկութիւնս անիմաստ և վնասակար . որք ընկղմեն զմարդիկ ի ապականութիւն և ի կորուստ ։

10 Օ‸ արմատ ամենայն չարեաց արծաթասիրութիւն է . որում ոմանք ցանկացեալ՝ վրիպեցան ի հաւատացն , և զանձինս սրկին ընդ բազում ցաւովք ։

11 Իսկ դու ով մարդ Աստուծոյ՝ փախիր յայնցանէ , և ՚երթ զհետ արդարութեան՝ զաստուածպաշտութեան՝ զհաւատոյ՝ զսիրոյ՝ զհամբերութեան՝ զհեզութեան ։

12 Եւ մաքառիր զբարւոք մարտն հաւատոյ , և բռնա՛ր հար զկենացն յաւիտենականաց՝ յոր կոչեցար՝ և դաւանեցեր զբարւոք դաւանութիւնն առաջի բազում վկայից ։

13 Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի առնէ զամենայն , և Յիսուսի Քրիստոսի՝ որ վկայեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանութիւնն .

14 Պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անարատ , մինչև ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի .

15 Զոր ի ժամանակս ցուցցէ Երանելին՝ և միայն Հզօր , Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց ։

16 Որ միայն ունի անմահութիւն , և լոյս բնակեալ անմատչելի , զոր ոչ ետես ոք ի մարդկանէ , և ոչ կարէ տեսանել . որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

17 Զհարուստսն յաշխարհիս պատուիրեա՛ , մի՛ ամբարձանել , և մի՛ յուսալ ի հարստութեան անհաստատ , այլ յԱստուած կենդանի , որ պարգևէ մեզ ամենայն առատութեամբ ի վայելումն ։

18 Բարեգործել նոցա , հարստանալ գործովք բարեաց , առատ լինել ընծայիւք , հաղորդ լինել ամենեցուն ։

19 Ժողովել նոցա գանձս բարի ինքեանց ի հիմն գալոց ժամանակի , զի կալցեն զկեանսն յաւիտենականս ։

20 Ո՛ Տիմոթէոս , զաւանդն պահեա՛ , և զանարգաբանութիւնս սրբոց և զհակառակութիւնս զանաստուածս գիտութեան զոր ոմանք խոստովանեալ՝ ի հաւատոյն վրիպեցան ։ Շնորհք ընդ քեզ ։ Ամէն ։

(16) Տիմ · ա · 17 · Եբր · ժգ · 5 · (17) Ա‸ա · ժե · 27 · ի · 21 · իբ · 26 · Մատթ · ժգ · ժգ · 23 · Յակ · ե · 1 · (18) ա Տիմ · դ · 7 · (19) ա Տիմ · ա · 19 · (20) Ա‸ · իդ · 3 · բ Օրին · ժգ · 19 · (21) բ Տիմ · բ · 23 · (32) բ Օրին · լդ · 1 · բ Տիմ · դ · 17 · (33) ա Կորնթ · բ · 25 , 26 · ա Տիմ · ա · 18 · բ Տիմ · դ · 7 · (24) Փիլիպ · դ · 13 · 14 · Վ‸ա · 19 · (25) Նբր · ժ · 23 · (26) ա Տիմ · ե · 21 · (27) բ Օրին · իբ · 33 · ա Յհան · բ · 6 · Հռով · ե · 21 · (28) Մատթ · իե · 11 · Հռով · ժգ · 27 · Հայտ · ա · 5 · գ · 14 · (29) Փիլիպ · ա · 6 · 10 · ա Կոր · գ · 13 · ե · 28 · (30) ա Տիմ · ա · 11 · 17 · (31) Հայտ · ժե · 14 · ժբ · 16 ·

Digitized by Google

16 Իր միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ՝ ի լոյս անմատոյց · զոր ոչ ոք ետես՝ ի մարդկանէ՝ և ոչ տեսանել կարօղ է · որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս , ամէն ։

17 Ա՛ծաստանգ՝ որ են յայսմ աշխարհի՝ պատուէր տայջիր՝ մի՛ հըպարտանալ և մի՛ յուսալ՝ ի մեծութիւն անառի , այլ յԱստուածն՝ որ տայ մեզ զամենայն առատապէս՝ ի վայելել ։

18 Օգուտս գործել , մեծանալ գործովք բարութեան , առատս , սիրուն , հաղորդս լինել ։

19 Կանձել անձանց հիմն բարի՝ ի հանդերձեալս · զի բուռն հարկանիցեն զճշմարիտ կենացն ։

20 Ո՛վ Տիմոթէէ պահեա զաւանդըն՝ խոտորեալ՝ ի պղծոց և՝ ի նոռաձայն բանից և՝ ի հակառակութենէ և՝ ի մոլորանուն գիտութենէ ։

21 Որ ոմանց յանձն առեալ՝ լրիզեցան՝ ի հաւատոց անաք · շնորհք ընդ քեզ · ամէն ։

16 Որ նա միայնակ անմահութիւն ունի՝ անմատեանալի լուսով մէջ բնակվածՙ[32] · որ մարդկանցից իսկի մին չէտեսաւ նորան՝ և ոչ էլ կարօղ է տեսանելՙ[33] · նորան (լինի) պատիւ և զօրութիւն յաւիտեանս , ամէն[34] ։

17 Ասուսաններին՝ որ էս աշխարհքումն են՝ պատուիրիր որ չըգոռոզանան՝ և ունայն մեծութեան վերայ[35] յոյսըն չըդնեն[36] , բայց Աստուծոյ վերայ[37] որ ամէն բան առատ լիս է մեզ լինութենով որ վայելենք[38] ։

18 Որ բարի գործեն , բարի գործքերով հարստանան[39] , առատաձեռք[40] , սիրելի , հաղորդօղ լինին[41] ։

19 Իրանց անձներին համար բարի հիմըն դիզեն նոր եկօղներումն[42] · որ ճշմարիտ կեանքըն ձեռք բերեն[43] ։

20 Ո՛վ Տիմոթէէ պահիր (քեզ ասըվածՙ) աւանդըն[44] · և յիւր կաց պիղծ և նորաձայն խօսքերիցն և առանուն ունօղ գիտութեան հակառակութիւններիցն[45] ։

21 Որ նորան մինչքանիսն քնդռնեցին՝ և հաւատքիցն թեքվեցան[46] · շնորհքն քեզ հետ լինի · ամէն ։

Տիմոթէոսի վերայ առաջին նամակըն գրվեցաւ Լաոդիկիայ քաղաքին՝ որ Պակատիանոսոց հայրապետարանն է ։

---

(32) ա Տիմ · ա · 17 ։ (33) Ելք · իգ · 20 ։ Յովհ · ե · 46 ։ (34) Ներս · գ · 21 ։ Փիլ · գ · 20 ։ Կող · գ · 25 ։ Հայր · ա · 6 ։ գ · 11 ։ է · 21 ։ (35) Ա՛ռակ · իգ · 5 ։ (36) Յոբ · լա · 24 ։ Սաղմ · ծբ · 7 ։ կբ · 10 ։ Սաղմ · ժ · 24 ։ Ղևտ · ծբ · 21 ։ (37) Յոհ · ա · 9 ։ ա Տիմ · գ · 15 ։ գ · 10 ։ (38) Գործ · ժգ · 16 ։ ժէ · 25 ։ (39) Ղևտ · ժբ · 21 ։ ա Տիմ · ե · 15 ։ Տիտ · գ · 8 ։ Կող · բ · 5 ։ (40) Ա՛ռակ · ժբ · 8 ։ (41) Գաղ · գ · 6 ։ Նեեմ · ժգ · 16 ։ (42) Մատթ · գ · 20 ։ ժԲ · 21 ։ Ղևտ · ժբ · 8 ։ ժգ · 9 ։ (43) Ա Էսր · ա · 12 ։ (44) բ Տիմ · ա · 14 ։ Տիտ · ա · 9 ։ Կողոս · գ · 3 ։ (45) ա Տիմ · ա · 4 · 6 ։ գ · 7 ։ բ Տիմ · բ · 14 · 16 · 23 ։ Տիտ · ա · 14 ։ գ · 9 ։ (46) Տիմ · ա · 6 · 19 ։ բ Տիմ · բ · 18 ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼԻ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Պօղոս յոյժ կըսայ իբրեն սէրն որ Յիսուսիով վերայ ունիմ . 6 Յիսուսիով սատ֊ բին անկնդ հաւատքըն : 7 Ընաքեալն նորա մեռքին է բնրում որ զարթնացնէ Աստուծոյ էն շնորհքըն որ նորանում է , 8 Նչ որ մանակից լինի Ավետարանի չարչարանքին համար , 18 Նչ իրանից սովորած առջաքին խօսքերի օրինակըն իբրան ունենայ . 15 Փիգելոսի և Հերմոգինէսի և նորանց պես մարդկանց ղսկվիլն առաքեալներից , Ոնեսիփորի տունըն շատ դովելովն :

1 ՊՕՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի կամքն Աստուծոյ , ըստ աւետեաց կենացն՝ որ ի Քրիստոս Յիսուս :

2 Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհք ողորմութիւն և խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ՝ և ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ :

3 Շնորհս ունիմ Աստուծոյ՝ զոր պաշտեմ ի նախնեաց մօտ սրբըբովք , իբրև զի անպակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ գիշայգ և զցերեկ :

4 Յանկացեալ եմ տեսանել զք֊

1 ՊՕՂՈՍ Յիսուսի Քրիստոսի առաքեալ Աստուծոյ կամքովն՝ , կենացն աւետիքին որ է՝ որ Քրիստոս Յիսուսումն է՝ :

2 Տիմոթէոսի սիրելի որդւոյ՝ շնորհք , ողորմութիւն և խաղաղութիւն լինի Աստուծոյ Հօրիցն և մեր Տէր Յիսուս Քրիստոսիցն՝ :

3 Շնորհակալ եմ Աստուածոյ՝ որ իմ առաջին հարանցիցս (սկսած) նորան պաշտումիմ սուրբ մտքով՝ , որ անպակաս քեզանից յիշատակ եմ անում իմ աղօթքներումն՝ գիշեր և ցերեկ՝ :

4 Յանկանումիմ քեզ տեսանել՝ ի֊

(1) բ Կորնթ . ա . 1 : (2) Գործ . գ . 6 : Տիտ . ա . 2 : Եբր . բ . 15 : (3) ա Տիմ . ա . 2 : (4) Հռոմ . ա . 8 : Գործ . ա . 16 : (5) Գործ . իբ . 3 : իգ . 1 : իե . 11 : իե . 28 : Հռոմ . ա . 9 : Գործ . ա . 14 : (6) ա Գործ . ա . 2 : գ . 10 :

Digitized by Google

քեզ ի յիշատակեալ զարտասուսն քո՝ զի լցայց ուրախութեամբ :

5 Յիշեալ ածեալ զանխիղճ հաւատոյն՝ որ են ի քեզ . որ յառաջագոյն բնակեցաւ ի հանդէս քումմ Լաւոդեայ , և մօր քումմ Եւնիկեայ . հաստատեալ եմ՝ թէ և ի քեզ է :

6 Վասն որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աստուծոյ՝ որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ :

7 Օի ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան , այլ զօրութեան և սիրոյ՝ և զգաստութեան :

8 Մի այսուհետև ամօթ համարիցիս վկայութիւն Տեառն մերոյ՝ և ինձ զկապեալ նորա . այլ կիցդ լեր չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեանն Աստուծոյ :

9 Որ փրկեաց զմեզ , և կոչեաց ի կոչումն սուրբ ոչ ըստ գործոց մերոց՝ այլ ըստ իւրում յաւիտենից շնորհաց . որ տուաւ մեզ ի Քրիստոս Յիսուս յառաջ քան զժամանակսն յաւիտենից :

10 Այլ յայտնեցաւ այժմիկ յերեւել փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի . որ խափանեաց զմահ՝ և լուսաւորեաց զարար զկեանս և զանեղծութիւն ի ձեռն աւետարանին :

11 Որոյ եդայ ես քարոզ և առաքեալ՝ և վարդապետ հեթանոսաց :

շնորհով քո արտասուացդ՝ որ ուրախասեցեսցուք[7] :

5 Յիշելով զանկեղծ հաւատսդ՝ որ քեզ անկեղծ հաւատոյդն՝ որ քեզանում է[8] . որ առաջ քան զԼաւդիա տատումդ և քո Եւնիկէ մօրումդ բնակվեցաւ[9] . հաստատ գիտումիմ որ էլ քեզանում է :

6 Վասն որոյ պատճառի քո միտդ եմ բերում որ զարթնացնես զՍտուծոյ էն շնորհսդքն որ քեզանում է[10] իմ ձեռնադրութենէնիցն :

7 Զի ոչ ետ Աստուած մեզ վախկոտութեան հոգի[11] , այլ զօրութեան՝ և սիրոյ՝ և պարկեշտութեան[12] :

8 Ուրեմն ամօթ մի համարիր[13] մեր Տէրդ վկայութիւնէն[14] և ոչ ինձ էլ՝ որ նորա կապվածն եմ[15] . բայց մասնակից լինիր չարչարանքին՝ աւետարանի համար՝ Աստուծոյ զօրութենովն[16] :

9 Որ փրկեց մեզ[17] , և տուրբ կոչումով կանչեց[18] . ոչ թէ մեր գործքերին համար[19] այլ իրան առաջադրութեան և շնորհքին պէս[20] . որ տրվեալ մեզ Քրիստոս Յիսուսմն յաւիտենականժամանակներից առաջ[21] :

10 Այլ յայտնըվեցաւ հիմիկ՝ երբոր փրկիչ Յիսուս Քրիստոսն երևեցաւ[22] . որ խափանեց մահին և լուսոյ մէջ բերաւ կեանքն և անմահութիւնը իրան աւետարանովն[23] :

11 Որ ես նորա քարոզիչ և առաքեալ կարգվեցայ , և հեթանոսներուն վարդապետ[24] :

(7) բ Տիմ . դ . 9 . 21 : (8) ա Տիմ . ա . 5 : դ . 6 : (9) Գործ . ժգ . 1 : (10) ա Թես . բ . 19 : ա Տիմ . գ . 14 : (11) Հռոմ . ը . 15 : (12) Ղևտ . խդ . 49 : Գործ . ա . 8 : (13) Հռոմ . ա . 16 : (14) ա Տիմ . բ . 8 : Յայտ . ա . 2 : (15) Եփես . գ . 1 : փիլէմ . ա . 7 : (16) Կող . ա . 24 : բ Տիմ . դ . 5 : (17) ա Տիմ . ա . 1 : Տիտ . գ . 4 : (18) ա Թես . դ . 7 : Եբր . դ . 1 : (19) Հռոմ . գ . 20 : բ . 11 : Տիտ . գ . 5 : (20) Հռոմ . ը . 28 : (21) Հռոմ . ժգ . 25 : Եփես . ա . 4 : դ . 11 : Տիտ . ա . 2 : ա Պետր . ա . 20 : (22) Հռոմ . ժգ . 26 : Եփես . ա . 9 : Կող . ա . 26 : Տիտ . ա . 3 : ա Պետր . ա . 20 : (23) ա Կորնթ . ժե . 54 , 55 : Եբր . բ . 14 : (24) Գործ . թ . 15 : Եփես . գ . 7 , 8 : ա Տիմ . բ . 7 : բ Տիմ . գ . 17 :

Digitized by Google

12 Ա՝ ասի սրտի և զայս չարչարանս կրեմ, այլ ոչինչ ամօթ հատմտիմ. քանզի գիտեմ՝ յո՛ հաւատացեալն եմ. և հաստատեալ եմ, թէ կարօղ է զաւանդն իմ պահել յօրն յայն։

13 Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն, զորս յինէն լուար՝ հաւատովք և սիրով որ ՚ի Քրիստոս Յիսուս։

14 Զքաջութիւնդ աւանդն պահեսջի՛ր՝ ՚ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ՚ի մեզ բնակելոյ։

15 Գիտասջի՛ր՝ զի միկինեցան ՚ի ինձ ամենեքեան՝ որ էին յԱսիա, որոց առի են փիգեղոս և Հերմոգենէս։

16 Տացէ Տ՛ստուած ողորմութիւն տանն Ընեսիփորայ. զի բազում անգամ հանգոյց զիս, և զկապանն իմ ոչ ամօթ համարեցաւ։

17 Այլ իբրև եկն ՚ի Հռոմ, պնդագոյնս խնդրեաց զիս՝ և եգիտ։

18 Տացէ նմա Տէր՝ ողորմութիւն գտանել ՚ի Տեառնէ յաւուրն յայնմիկ. և որչափ ինչ միանգամ յԵփեսոս սպաս կալաւ ինձ, զայն դու ինքդին քաջ գիտես։

12 Որոյ համար եւ զայս չարչարանքս կրեմ իմ քաշում, բայց խակի ամօթ չեմ համարում[35]. պատճառն որ՝ գիտեմ[36] թէ ո՛ւմ եմ հաւատացել[37]. և հաստատ եմ՝ թէ կարող է իմ աւանդը պահել[38] մինչև էն օրն[39]։

13 Ողջամիտ խօսքերի[40] օրինակն[41] (քեզ) ունենա[42], որ ինձանից լսեցիր[43]՝ հաւատքով և սիրով՝ որ Քրիստոս Յիսուսումն է[44]։

14 Յն բարի քեզ պահ տրուածը պահիր՝ Սուրբ Հոգով ձեռնին[45] որ մեզանում բնակուած է[46]։

15 Նա գիտենաս՝ որ մեզանից դարձուածքն[47] են ամենքն՝ որ Ասիայի մէջն էին. որ նորանց միջումն են փիգելոս և Հերմոգինէս[48]։

16 Ողորմութիւն տայ[49] Ընեսիփորի տանն[50]. ինչու որ շատ անգամ հանգստացրուց ինձ[51], և իմ կապանքներըն[52] ամօթ չըհամարեց[53]։

17 Ասյց երբոր եկաւ Հռոմ, շատ ջանքով մանն եկաւ ինձ՝ և գտաւ։

18 Տէրն տայ նորան՝ որ ողորմութիւն գտնէ Տէրոջն[54] էն օրումն[55]. և որքան որ Եփեսոսումն ծառայութիւն տուաւ ինձ՝ էն դու ինքդ լաւ գիտումես[56]։

(33) Նփե. · գ · 1։ բ Տիմ. բ. 9։ (35) ա պիտոբ · գ · 19։ (37) ա Տիմ · գ. 20։ (38) ա Տիմ · ա. 12։ (39) բ Տիմ · գ · 13։ (40) ա Տիմ · ա · 10։ գ. 3։ (41) Հռոմ · բ. 20։ (42) Տիմ · գ · 14։ Տիտ · ա · 9։ Նբր · ժ · 23։ (43) Կող · բ. 25։ (44) բ Տիմ · բ · 2։ (45) ա Տիմ · ա · 14։ (46) ա Տիմ · գ. 20։ (47) Հռոմ · ը. 11։ (48) բ Տիմ · գ · 9։ 16։ (49) Գործ · ԻԳ · 19։ (50) Մատթ · ե · 7։ (51) բ Տիմ · գ · 19։ (52) Փիլիմ · 7։ (53) Գործ · ԻԸ · 20։ Նփե · գ. 20։ (54) Սիր · 8։ (55) Մատթ · իե · 34—10։ (56) բ Թես · ա · 10։ Սիր · 13։ (57) Նբր · գ. 10։

Digitized by Google

ԳԼ · Ա

1 Ընտրեալն Պետրոս առաքեալ Յիսուսի Քրիստոսի՝ որ ընդրուածք են պանդխտութեան ցրուման Պոնտոսի, Գաղատացւոյ, Կապադովկացւոյ, Ասիոյ եւ Բիւթանացւոյ,

2 ըստ գիտութեան Աստուծոյ Հօրն՝ որ նախասահմանեաց զձեզ ի սրբութիւն Հոգւոյն, ի հնազանդութիւն եւ ի սրբութիւն արեան Յիսուսի Քրիստոսի. շնորհք ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի։

3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ ըստ առատութեան իւրոյ ողորմածութեան ծնաւ զմեզ յանդրանիկ յարութեամբ Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց,

4 ի յոյս կենդանի, ի ժառանգութիւն անապական եւ անարատ եւ անթառամ, որ պահեալ է ձեզ յերկինս,

5 որ զօրութեամբ Աստուծոյ պահիմ ի հաւատս ի փրկութիւն, որ պատրաստ է յայտնել յամենայն ժամանակի։

6 Որում ուրախ լինիք, սակայն ի սակաւ ինչ ժամանակի, եթէ պարտ իցէ, տրտմեալ ի բազում փորձութիւնս,

7 զի փորձութիւն հաւատոյ ձերոյ, որ պատուականագոյն է քան զոսկի որ կորնչի, եւ որ հրով փորձի, գտցի ի գովութիւն եւ ի պատիւ եւ ի փառս յայտնութեան Յիսուսի Քրիստոսի։

8 Զոր ոչ տեսեալ սիրէք, յորում ոչ տեսանելով հաւատայք, բայց հաւատալով ցնծայք անպատմելի եւ փառաւորեալ ուրախութեամբ,

9 ընդունելով զվախճան հաւատոցդ, զփրկութիւն անձանց ձերոց։

10 Զոր փրկութեան մարգարէք որոնեցին եւ քննեցին, որ մարգարէացան զշնորհսն որ ի ձեզ գալոց էր,

11 քննելով զինչ եւ զկամ ժամանակ ցուցանէր Հոգի Քրիստոսի որ ի նոսա, նախատեսեալ զչարչարանսն որ ի Քրիստոս եւ զփառսն որ յետ նոցա։

12 Եւ յայտնեցաւ նոցա, զի ոչ իւրեանց միայն ձեզ ծառայէին զայնոսիկ, զոր այժմ աւետարանեցան ձեզ ի Հոգւոյն սրբոյ առաքելոյ յերկնից, յորում ցանկան հրեշտակք հայել։

13 Վասն որոյ ընդունայնեցուցէք զմտս ձեր, զգաստացարուք, եւ կատարեալ յուսով լերուք ի շնորհսն որ մատուցանի ձեզ ի յայտնութեան Յիսուսի Քրիստոսի։

14 Իբրեւ զորդիս հնազանդութեան, մի համակերպիք ցանկութեանցն որ յառաջ քան զձեզ էին յանգիտութեան ձերում,

15 այլ որպէս սուրբ է կոչեցեալն զձեզ, եւ դուք սուրբ լերուք ի ձեր ամենայն գնացս,

16 վասն զի գրեալ է. Սուրբ լերուք, զի սուրբ եմ ես։

17 Եւ եթէ զհայր կոչէք զոր անդէն դատի ըստ գործոց իւրաքանչիւրոց, ի վախմամբ ժամանեցէք զժամանակ ձեր պանդխտութեան,

18 գիտելով զի ոչ ապականելեաւք արծաթով կամ ոսկով փրկեցարուք ի սնոտի գնացից ձերոց ի հարանց աւանդութենէ,

19 այլ արեամբ պատուական Քրիստոսի, իբրեւ զգառին անարատի եւ անարգի,

20 որ նախ քան զկազմումն աշխարհի ծանեալ էր, այլ յայտնեցաւ յետ կատարման ժամանակաց վասն ձեր,

21 որ ընդ նմա հաւատացեալք ի Աստուած, որ յարոյց զնա ի մեռելոց եւ փառս ետ նմա, զի հաւատք ձեր եւ յոյս ի Աստուած լիցի։

22 Զանձինս ձեր սրբեալ հնազանդութեամբ ճշմարտութեանն ի սէր անկեղծ, ընդ միմեանս սիրով սիրեցէք ի սրտէ զոյժ,

23 ծնեալ ոչ ի սերմանէ ապականելոյ, այլ անապականելոյ, Հոգւով Աստուծոյ կենդանւոյ եւ բնակեալ յաւիտենից։

24 Վասն զի ամենայն մարմին իբրեւ զխոտ, եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. չորացաւ խոտն, եւ ծաղիկն անկաւ,

25 բայց բան Տեառն մնայ յաւիտեան։ Եւ սա է բանն որ աւետարանեցաւ ձեզ։

ԳԼ · Բ

1 Ապա զամենայն չարութիւն, եւ զամենայն նենգութիւն, եւ զկեղծաւորութիւն, եւ զնախանձս, եւ զամենայն զրպարտութիւն,

2 իբրեւ զնորածին մանկունս կենդանի կաթին բանին անմոլորելոյ ցանկացարուք, զի ընդ նմա աճեսջիք ի փրկութիւն,

3 եթէ համտեսէք զի քաղցր է Տէր։

4 Առ որ մատեալ քարի կենդանւոյ, զոր ոչ ընդունէին մարդիկ, այլ ընտրեալ առ Աստուծոյ պատուական,

5 եւ դուք իբրեւ զքարինս կենդանիս շինիք տուն հոգեւոր, քահանայութիւն սուրբ, մատուցանել զպատարագս հոգեւորս ընդունելի Աստուծոյ Յիսուսիւ Քրիստոսիւ։

6 Վասն որոյ եւ ասէ գրութիւն. Ահա դնեմ ի Սիոն զքար անկիւնագլուխ ընտրեալ պատուական, եւ որ հաւատայ ի նա ոչ ամաչեսցէ։

7 Ձեզ ուրեմն պատուական հաւատացելոց, իսկ անհնազանդից քարն զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան,

8 եւ քար գայթակղութեան եւ վէմ սկանդաղոյ, որ գայթակղին անհնազանդք բանին, յորում եւ դրուեցան։

9 Ձեզ ազգ ընտրեալ, թագաւորական քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ ի գերութիւն, զի զառաքինութիւնս աւետարանեսջիք նորա որ զձեզ կոչեաց ի լոյս իւր սքանչելի,

10 որ ոչ ժողովուրդ էիք, այժմ ժողովուրդ Աստուծոյ, որ ոչ ողորմեալ էիք, այժմ ողորմեալ։

11 Սիրելիք, աղաչեմ զձեզ իբրեւ զպանդուխտս եւ զգերիս, ի պարտ առնուլ ձեզ ի մարմնաւոր ցանկութեանցն որ պատերազմին ընդ հոգւոյ,

12 զգեղեցիկ ունելով զգնացս ձեր ի մէջ հեթանոսաց, զի յորում չարագործս ասեն զձեզ, ի բարի գործոցդ տեսեալ, փառաւորեսցեն զԱստուած յաւուր այցելութեան։

13 Հնազանդ լերուք ամենայն մարդկային հնազանդութեան վասն Տեառն, եթէ թագաւորին իբրեւ գերազանցի,

14 եթէ իշխանացն իբրեւ առ նա առաքելոց ի վրէժխնդրութիւն չարագործաց, ի գովութիւն բարեգործաց։

15 Զի այսպէս է կամք Աստուծոյ, զի բարեգործութեամբ ձերով զանգիտութիւն անմտաց մարդկան կասեցուցանիցէք,

16 իբրեւ ազատք, եւ ոչ իբրեւ զազատութիւն ունելով զչարութիւն ծածկոյթ, այլ իբրեւ ծառայք Աստուծոյ։

17 Զամենեսեան պատուեցէք, զեղբարութիւն սիրեցէք, զԱստուած երկնչիք, զթագաւորն պատուեցէք։

18 Ծառայք հնազանդեալ լերուք ամենայն երկիւղիւ տեարանց, ոչ միայն բարեաց եւ հեզաց, այլ եւ ամրոխոտից։

19 Զի այս է շնորհք, եթէ վասն խղճի Աստուծոյ տանիցէ զտրտմութիւնս, տառապելով անիրաւաբար։

20 Զի ո՞ւր է փառք, եթէ մեղանչելով եւ հարկանելով համբերիցէք. այլ եթէ բարի գործելով եւ տառապելով համբերիցէք, այս է շնորհք առ Աստուծոյ։

21 Զի ի սմա կոչեցարուք, զի եւ Քրիստոս չարչարեցաւ վասն մեր, ձեզ թողեալ օրինակ, զի հետեւեսջիք հետքոց նորա,

22 որ մեղս ոչ արար, եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերանի նորա,

23 որ ոչ հայհոյէր հայհոյեալ, ոչ տառապեալ սպառնայր, այլ ընծայէր դատողի արդարութեամբ,

24 որ զմեղս մեր ինքն տարաւ մարմնով իւրով ի վերայ փայտին, զի մեղաց մերոց մեռեալ՝ արդարութեան կենդանասցուք. որոյ վէրքն ձեր բժշկեցան։

25 Զի էիք իբրեւ զխոտորեալ ոչխարս, այլ դարձարուք այժմ առ հովիւն եւ առ տեսուչն անձանց ձերոց։

(1) ա Տիմ · ա · 2 : բ Տիմ · ա · 2 : (2) Եփես · գ · 10 : (3) բ Տիմ · ա · 13 · գ · 10 · 14 : (4) ա Տիմ · ա · 18 : (5) ա Տիմ · գ · 2 : Տիտ · ա · 9 : (6) բ Տիմ · ա · 8 · գ · 5 : (7) ա Տիմ · ա · 18 : (8) ա Կորնթ · բ · 25 : (9) ա Կորնթ · բ · 26 , 26 : (10) ա Կորնթ · բ · 10 : (11) ա Կորնթ · ժե · 1 · է · 20 : (12) Հռոմ · ա · 8 , է · Պետր · բ · 36 · ժգ · 22 : (13) Հռոմ · բ · 16 : (14) Պետր · բ · 16 : բ Տիմ · ա · 18 : (15) Եփես · գ · 1 : Փիլիպ · ա · 7 : Կող · գ · 3 · 18 : (16) Պետր · իբ · 31 : Եփես · գ · 19 , 20 : Փիլիպ · ա · 13 , 14 :

Digitized by Google

10 Վ[ասն այնորիկ ամենայնի համ-
բերեմ վասն ընտրելոցն, զի և նո-
քա փրկութեամբն հասանիցեն որ ի
Քրիստոս Յիսուս երկնաւոր փա-
ռաքն հանդերձ։

11 Հաւատարիմ է բանս. զի ե-
թէ ընդ նմա մեռաք՝ ընդ նմին և
կեցցուք։

12 Եւ եթէ համբերեմք, ընդ
նմին և թագաւորեսցուք, և եթէ
ուրանամք՝ և նա ուրանայ զմեզ։

13 Եւ եթէ չհաւատամք նա հա-
ւատարիմ մնայ, ուրանալ զանձն
իւր ոչ կարէ։

14 Զայս յուշ արասջիր վկայու-
թիւն եդեալ առաջի Աստուծոյ. մի
բանակռիւ լինել յոչինչ պետս ի
կործանումն լսողաց։

15 Փութասջիր զանձն քո ընտիր
կացուցանել առաջի Աստուծոյ,
մշակ առանց ամօթոյ, ուղիղ հա-
մառօտել զբանն ճշմարտութեան։

16 Այլ ի պղծոց և ի սնոտի խո-
սից մերժեսջիր. զի առաւել յա-
ռաջ գայցեն յամբարշտութիւնս։

17 Եւ բանք նոցա իբրև գբաղց-
կեղ ճարակ գտանիցեն. որոց սակի
են Հիմենոս և Փիղետոս։

18 Որք զքնախեցան ի ճշմարտու-
թենէ, և ասեն՝ եթէ Յարութիւն
մեռելոց արդէն իսկ եղեալ է. և
կործանեն զհաւատս ոմանց։

19 Այլ հաստատուն հիմն Աստու-
ծոյ կայ՝ և ունի զկնիքս զայս, Ե-

10 Այսահամար ամէն բանի համ-
բերութեամբ ընտրուածներուն պատճառ-
վընի[17] որ ասոնք ալ հասնին են
փրկութեանն որ ՚Ի Քրիստոս Յիսու-
սումն է՝ երկնաւոր փառքին հետ[18]։

11 Ո՛չմարիտ է կեա խօսքս[19]. որ
եթէ նորա հետ մեռանք՝ նորա հետ
ալ կապրինք[20]։

12 Եթէ որ համբերենք, նորա
հետ ալ կըթագաւորենք[21]. և եթէ
որ ուրանանք՝ նա ալ կուրանայ
մեզ[22]։

13 Եւ թէ որ չըհաւատանք, նա
հաւատարիմ կըմնայ[23]. իրան ան-
ձըն չի կարող ուրանալ[24]։

14 Ասոնք բաներս յիշեցուր և Ա-
ստուծոյ առաջին վկայութիւն դիր[25],
որ խօսքերով կռիւ չանեն՝ որ են
անպիտան է և լսողներուն կործա-
նումի[26]։

15 Ջանք արա որ քո անձըդ ըն-
տիր կանգնացնես Աստուծոյ առա-
ջին՝ (իբր) մշակ առանց ամօթոյ,
որ ճշմարտութեան խօսքըն շիտակ
կարճատօա քարոզէ։

16 Հայց պիղծ և ունայն խօսքե-
րից յետ քաշվիր[27]. ինչու որ՝ ա-
ւելի առաջ են գնում ամբարշտու-
թիւնների մէջ։

17 Եւ նորանց խօսքերն կերցաւի
պէս ուռելով առաջանալին. որ
նորանց միջումն են Հիմենան և
Փիլետոս[28]։

18 Որ նորանք ճշմարտութենէն
թեքվեցան[29], և ասելին՝ թէ Յա-
րութիւնն հնուց հիմիկ
եղած է[30]. և մինչեւ որ հաւատ-
քըն կործանուելին։

19 Այլ Աստուծոյ հաստատ հիմն
կանգնած կայ՝ և էս կնիքըս (Տէր

(17) Եփես. գ. 13։ Կող. ա. 24։ (18) բ Կորնթ. ա. 6։ (19) ա Տիմ. ա. 15։ (20) Հռոմ. ը. 5. 8։ բ Կորնթ. դ. 10։ (21) Հռոմ. ը. 17։ ա Պետր. գ. 18։ (22) Մատթ. ժ. 33։ Մարկ. ը. 38։ Ղուկ. ժ. 9։ (23) Հռոմ. գ. 3։ բ. 6։ (24) Թուոց. իգ. 19։ (25) ա Տիմ. ե. 21։ զ. 13։ բ Տիմ. դ. 1։ (26) ա Տիմ. ա. 4։ զ. 4։ Տիտ. գ. 9. 11։ (27) ա Տիմ. գ. 7։ զ. 20։ Տիտ. ա. 14։ (28) ա Տիմ. ա. 20։ (29) ա Տիմ. զ. 21։ (30) ա Կորնթ. ժե. 12։

Digitized by Google

թէ ծանեալ Տէր զայնոսիկ՝ որ իւրն են . և՝ի բաց լինի յանիրաւութենէ ամենայն՝ որ անուանէ զանուն Տեառն :

20 Եւ՝ի տան մեծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք և արծաթեղէնք , այլ և փայտեղէնք և խեցեղէնք , են՝ որ՝ի պատուի են , և են՝ որ յանարգութիւն :

21 Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայնպիսեաց անաւ , եղիցի անօթ պատուական՝ սրբեալ և պիտանի Տեառն իւրաւ՝ յամենայն գործս բարութեան պատրաստեալ :

22 Եւ՝ի յերիտասարդական ցանկութենից փախիր . և երիթ զՀետ արդարութեան՝ զՀաւատոց՝ զսիրոյ՝ զխաղաղութեան՝ զողբութեան , ընդ այնոսիկ՝ որ կարդան զանուն Տեառն սուրբ սրտիւք :

23 Եւ՝ի՛ հիմար և յանխրատ խնդրոց Հրաժարեա՛ . գիտասջիր՝ թէ անաի ծնանին կռիւք :

24 Եւ՝ծառայի Տեառն ոչ է պարտ կռուիլ , այլ Հեզ լինել առ ամենեսին , ուսուցիչ , անոխակալ ,

25 Հանդարտութեամբ խրատել Հակառակողսն . թերևս տացէ նոա Աստուած ապաշխարութիւն՝ի հաւատ ճշմարտութեան :

26 Եւ սթափեսցին յորոգայթից Սատանայի , որսացեալք՝ի նմանէ՝ի նորա կամս :

թէ Տէրն ճանաչէ զնորանց՝ որ իրանն են . և թէ Հեռու լինի անիրաւութենից էն ամենեքին՝ որ Տէրի անունըն անուանեն զանձինս :

20 Եւ՝այլ մին մեծ տան մէջ չէ թէ միայն ոսկէ և արծաթէ ամաններ կան , բայց եւ փայտէ և Հողէ (ամաններ) . կան՝ որ պատուական բանի Համար են , և կան՝ որ անարգ բանի Համար են :

21 Եւ՝ով որ մինն իրան անձըն սրբէ (մարդկանցից) , նա պատուական աման կըլինի՝ սրբած և իրան տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործքերի Համար պատրաստած :

22 Եւ՝այլ երիտասարդական ցանկութիւններից փախիր . և Հետեւիր արդարութեան՝ Հաւատքին՝ սիրոյն՝ խաղաղութեան՝ սրբութեան , Հետ միասին՝ որ Տէրի անունըն (իրանց) կանչումեն սուրբ սրտով :

23 Եւ՝այլ հիմար և անխրատ վիճաբանութիւններից յետ քաշվիր . գիտացիր որ նորանցից են կռիւներ առաջ գալիս :

24 Եւ՝այլ Տէրի ծառային պէտք չէ՝ որ կռիւ անէ , բայց որ աներին Հետ Հեզ Հոգի լինի , սովորցնող՝ ով չըպահող ,

25 Հակառակողներին Հանդարտութեամբ խրատէ . որ լինի թէ Աստուած նորանց ապաշխարութիւն տայ՝ որ ճշմարտութիւնն իմանան :

26 Եւ զգաստանան Սատանայի որոգայթներից (ըռնկնէրից) , որ նորանից Հորացվել են՝ նորա կամքն անելոյ Համար :

11) Մարկ . իդ . 24 : Ա-ովմ . ը . 35 : ա Ովհ . բ . 19 : (32) Ինա . ժգ . 5 : Նա-մ . ա . 7 : Ովհ . ժ . 14 . 27 : (33) ա Տիմ . գ . 15 : (34) Ա-ովմ . թ . 21 : (35) ...ոյ . ծբ . 11 : (36) Տիմ . գ . 17 : Տիտ . գ . 1 : (37) ա Տիմ . զ . 11 : (38) ...ործ . թ . 14 : ա Կորնթ . ա . 2 : (39) ա Տիմ . ա . 5 : գ . 12 : (40) ա Տիմ . ա . 4 . գ . 7 : զ . 4 : Ա Իր . 16 : Տիտ . գ . 9 : (41) Տիտ . գ . 2 : (42) ա Տիմ . գ . 2 , 3 : Տիտ . ա . 9 : (43) Պետ . զ . 1 : ա Տիմ . զ . 11 : ա Պետր . գ . 15 : (44) Գործ . 22 : (45) ա Տիմ . բ . 4 : բ Տիմ . գ . 7 : Տիտ . ա . 1 : (46) ա Տիմ . գ . 7 :

Digitized by Google

ԳԼ · Գ

1 Ընաքեան Տիմոթէոսին իմաց է տալիս թէ յետ ժամանակների ինչպէս մարդիք կըգան, 6 Ա՛ղաչատութեան թշնամիներին պատմութիւն. 10 Պօղոս իրան վարդապետութեան և իրան գործքերն օրինակ է տալիս Տիմոթէոսին, 16 Ու Սուրբ Գրքերն գովաբ։

1 Այս գիտացիր՝ որ յետին օրերում չար ժամանակներ կըգան[1]։

2 Ինչու որ մարդիք կըլինին անձնասէրք[2], արծաթասէրք[3], հպարտ[4], ամբարտաւան[5], հայհոյող[6], ծնողաց չըլսողանօղ[7], երախտամոռ, չարաչարժ,

3 Անմտդիմ[8], անգութ[9], խռովութիւն սերմանօղ[10], անժաւժկալ[11], կատաղած, բարին չըսիրօղ,

4 Մատնիչ[12], յանդուգն, գռեհ, ջինկութիւն աւելի սիրող՝ քանըմէ Աստուածոյն սիրօղ[13]։

5 Որ աստուածապաշտութեան կերպարանքըն ունին, և նորա զօրութիւնեից ուրացած են[14]. և յետ քաշվիր նորանցից[15]։

6 Ինչու որ նոքանց միջէջն են՝ որ տանից տուն են մանում, և գերի են առնում էն կանանցըն՝ որ մեղքերով լցված կիսված են՝ և կերպ կերպ ցանկութիւններով վարված[16]։

7 Որ ամէն ժամանակ ստվորում են, և գէպի ճշմարտութեան գիտութիւնն իսկի մին ժամանակ չեն հասնում[17]։

8 Որպես Յանէսն և Յամբրէսն Մովսէսի հակառակ կացին, նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք ապականեալք մտօք՝ անպիտանք ի հաւատս։

1 Այս գիտացիր՝ որ յետին օրերումն չար ժամանակներ կըգան[1]։

2 Ինչու որ մարդիք կըլինին անձնասէրք[2], արծաթասէրք[3], հպարտ[4], ամբարտաւան[5], հայհոյող[6], ծնողաց չըլսողանօղ[7], երախտամոռ, չարաչարժ,

3 Անմտդիմ[8], անգութ[9], խռովութիւն սերմանօղ[10], անժաւժկալ[11], կատաղած, բարին չըսիրօղ,

4 Մատնիչ[12], յանդուգն, գռեհ, ջինկութիւն աւելի սիրող՝ քանըմէ Աստուածոյն սիրօղ[13]։

5 Որ աստուածապաշտութեան կերպարանքըն ունին, և նորա զօրութիւնեից ուրացած են[14]. և յետ քաշվիր նորանցից[15]։

6 Ինչու որ նոքանց միջէջն են՝ որ տանից տուն են մանում, և գերի են առնում էն կանանցըն՝ որ մեղքերով լցված կիսված են՝ և կերպ կերպ ցանկութիւններով վարված[16]։

7 Որ ամէն ժամանակ ստվորում են, և գէպի ճշմարտութեան գիտութիւնն իսկի մին ժամանակ չեն հասնում[17]։

8 Ինչպէս որ Յանէսն և Յամբրէսն Մովսէսի հակառակ կացան. էնպէս էլ սորանք հակառակ են կենում ճշմարտութեանն[18]. մարդիք մարդով ապականված[19] և անպիտան հաւատքի համար[20]։

(1) ա Տիմ. գ · 1 · բ Տիմ. դ · 3 · բ պիտր. գ · 3 · ա Յովհ. բ · 18 · Յուդ. 18 · (2) փիլիպ. բ · 21 · (3) բ պիտր. բ · 3 · (4) ա Տիմ. գ · է · (5) Յուդ. 16 · (6) ա Տիմ. ա · 20 · բ պիտր. բ · 12 · Յուդ. 10 · (7) Հռոմ. ա · 30 · (8) Հռոմ. ա · 31 · (9) Հռոմ. ա · 31 · (10) Տիտ. բ · 3 · (11) բ պիտր. գ · 3 · (12) բ պիտր. բ · 10 · (13) փիլիպ. գ · 19 · բ պիտր. բ · 13 · Յուդ. 4 · (14) ա Տիմ. ե · 3 · Տիտ. ա · 16 · (15) բ Յովհ. գ · 6 · (16) Մատթ. ին · 24 · (17) ա Տիմ. բ · է · (18) Նյե. է · 11 · (19) ա Տիմ. գ · 5 · (20) Հռոմ. ա · 28 · բ պետ. ժգ · 5 · Տիտ. ա · 16 ·

Digitized by Google

9 Այլ ոչ երթիք գայցեն յառաջ
ի լաւ անդր . քանզի անմտութիւնն
սոցա յայտնի լինիցի ամենեցուն ,
որպէս և նոցայն իսկ եղև :

10 Այլ դու զկնի եկիր վարդա-
պետութեան իմոյ՝ առաջնորդութեան՝
ժողովրդեան՝ հաւատոց՝ երկայն-
մտութեան՝ սիրոյ՝ համբերութեան՝

11 հալածանաց՝ չարչարանաց .
որպիսիք եղեն ինձ Անտիոք և Ի-
կոնիոն և ի Լիւստրոս , որպիսի
հալածանաց համբերի . և յամե-
նայնէ փրկեաց զիս Տէր :

12 Եւ ամենեքին՝ որ կամիցին պատ-
ուածպաշտութեամբ կեալ ի Քրի-
ստոս Յիսուս , ի հալածանս
կացցեն :

13 Այլ մարդք չարք և կախարդք
յառաջ եկեսցեն ի չար անդր .
մոլորեալք և մոլորեցուցանիցեն :

14 Այլ դու հաստատուն կաց՝ յոր
ուսարդ , և հաւատարիմ եղեր .
գիտեա ուսոփ ուսար :

15 Զի ի մանկութենէ զգիրս
սուրբս գիտես , որ կարօղ են ի-
մաստուն առնել զքեզ ի փրկու-
թիւն՝ ի ձեռն հաւատոցն որ ի
Քրիստոս Յիսուս :

16 Ամենայն Գիրք Աստուածա-
շունչ է և օգտակար , ի վարդա-
պետութիւն են՝ և յանդիմանու-
թիւն և յուղղութիւն և ի խրատս
արդարութեան :

17 Զի կատարեալ իցէ մարդն

9 Այլ իսկի աւելի չեն առա-
ջանալ լաւութեան մէջ . ինչու որ
նորանց անմտութիւնն ամենին յայտ-
նի կըլինի . ինչպէս որ էլ նորանցն
էլաւ[21] :

10 Այլ դու հետևեցիր իմ վար-
դապետութեան , առաջնորդութեան ,
ժողովրդութեան , հաւատքի , երկայն-
մտութեան , սիրոյ , համբեր-
թեան ,

11 հալածմունքներիս , չարչա-
րանքներիս[22] . ինչպես որ էլան ինձ
վերայ Անտիոքումն[23] և Իկոնիոնում
մըն[24] և Լուստրայումն[25] . ինչպէս
որ էն հալածմունքներին համբերե-
ցի . և էն ամենեցն Տէրն ինձ ա-
զատեց[26] :

12 Եւ ամենքն՝ որ կամենուն
աստուածապաշտութենով ապրիլ
Քրիստոս Յիսուսումն , հալած-
մունքների մէջ պիտի կենան[27] :

13 Այլ չար և կախարդ մարդիք
աւելի առաջ կըգնան չարութեան
մէջ . մոլորվածք են և մոլորացնու-
մեն[28] :

14 Այլ դու հաստատ կաց ներա-
նուտ , որ սովորեցիր և հաւատա-
ցիր . գիտեալես (թէ) ումից սովո-
րեցիր[29] :

15 Որ տղայութենիդ սուրբ գրու-
քերըն գիտես , որ նորանք կա-
րօղ են քեզ իմաստուն անել փրկու-
թեան համար՝ էն հաւատքի ձե-
ռովն՝ որ Քրիստոս Յիսուսումն է[30] :

16 Ամէն Գիրքերն Աստուածա-
շունչ[31] և օգտակար են վարդապե-
տութեան , և յանդիմանութեան ,
և շիտակելոյ և արդարութեան խը-
րատ տալոյ համար[32] :

17 Որ Աստուծոյ մարդն կատար-

(21) Նտ · ե · 12 · ը · 18 · ժ · 11 : (22) Փիլպ · բ · 22 · ա Տիմ · գ · 6 : (23) Գործ · ժգ · 45 · 50 : (24) Գործ · ժգ · 1 · 5 : (25) Գործ · ժգ · 20 , Համայն : (26) Սաղմ · ղգ · 19 : բ Կորնթ · ա · 10 · բ Տիմ · գ · 7 : (27) Հիւ · ժե · 14 : Սաղմ · ղէ · 19 , Գաղատ · ժգ · 21 : Սաղմ · ժգ · 24 : ա Պետ · ժե · 19 : ա Յովհ · գ · 3 : (28) բ Յովհ · բ · 11 · ա Տիմ · գ · 1 · բ Տիմ · բ · 18 : (29) բ Տիմ · ա · 13 · բ · 2 : (30) Ծովէ · ե · 39 : (31) բ Պետր · ա · 20 , 21 : (32) Հռովմ · ժե · 4 :

Digitized by Google

Ա՛սուածոյ յամենայն գործս բարեաց եալ լինի[ա], ասէ Տէր զօրութիւնք՝ ի գործս իւր[34] :

ԳԼՈՒԽ Գ

1 Պատգամ յորդորումն Տիմոթէոսի որ պատուիրեալ է քանզի Տէրն քարոզի և ի բան պատրաստիլն կատարէ · 6 Իւրան մնալն հաստատ լինելն իմաց կ'ընայ · 9 Ընդդէմ որ Տիմոթէոսն չուառալ իւրան մնալ պայ , և Պարկոսին և այն քանի բաներին իւրան հետ բերել · 14 Յորդորումն նորան որ դարձին Աղէքսանդրոսից իւրան անէնն հետաւ պահէ , 16 Մինչ թէ առաջին տիվանի մէջն իւրան ինչ ելաւ , 18 Եւ պատուով վերջ է անում :

1 Այս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ՝ և Յիսուսի Քրիստոսի , որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս՝ ի յայտնութեան իւրում և յարքայութեան :

2 Եւ դու քարոզեա զբանն , հաս ի վերայ ժամու և տարաժամու , յանդիմանեա՝ սաստեա՝ մխիթարեա ամենայն երկայնմտութեամբ և վարդապետութեամբ :

3 Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդապետութեանն ոչ անասցեն . այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մաւմանջելոյ լսելեաց իւրեանց :

4 Եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս՝ և յառասպելս կործանեսցին :

5 Այլ դու զուարթ կաց յամենայնի , ճգնեա՛ց , զգործս աւետարանչի գործեա . զպաշտօնդ քո կատարեա՛լ կալ :

6 Քանզի ես այսուհետև նուիրեալ եմ , և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ :

1 Ես վկայութիւնըս դնեմ Աստուծոյ և Յիսուսի Քրիստոսի առաջին[31] որ կենդանիներին և մեռելներին պիտի դատէ՝ իւրան յայտնութենովն և թագաւորութենովն[32] :

2 Դու բանըն քարոզիր . պատշաճ ժամանակ լինի թէ չլինի՝ վերայ հասիր , յանդիմանիր , սաստիր[3] , մխիթարիր ամէն երկայնմտութենով և վարդապետութենով[4] :

3 Պատճառն որ ժամանակ կըգայ[5] որ ողջմիտ վարդապետութեանն չեն հանդուրժիլ[6] . բայց իրանց յաւուկ ցանկութիւններին պէս՝ վարդապետներ կըդիզեն իրանց վերայ , ինչպէս որ իրանց ականջներն եուելոյն յարմար է[7] :

4 Եւ ականջներըն ճշմարտութենէն կըդարձնեն և առասպել բաներու մէջ կըննկնին[8] :

5 Դայց դու սրթիռն կաց ամէն բանի մէջ , չանք տար[9] , աւետարանչին քարոզոզի գործըն գործիր[10] . քո պաշտօնըդ կատարեալ բռնիր[11] :

6 Ինչու որ ես այսուհետև նուիրուած եմ[12] , և իմ դարձ անելոյ ժամանակն հասած է[13] :

(33) ա Տիմ · գ · 11 : (34) բ Տիմ · բ · 21 : (1) ա Տիմ · ե · 21 · գ · 13 · բ Տիմ · բ · 14 : (3) Գործ · ժ · 42 : (3) ա Տիմ · ե · 20 : Տիտ · ա · 13 · բ · 15 : (4) ա Տիմ · գ · 13 : (5) բ Տիմ · գ · 1 : (6) ա Տիմ · ա · 10 : (7) բ Տիմ · գ · 6 : (8) ա Տիմ · ա · ե · գ · 7 : Տիտ · ա · 14 : (9) բ Տիմ · ա · 8 : բ · 3 : (10) Գործ · խ · 8 : Եփես · գ · 11 : (11) Հռոմ · ժե · 19 : Գող · ա · 25 · գ · 17 : (12) Փիլիպ · բ · 17 : (13) Փիլիպ · ա · 23 : բ Պետր · ա · 14 :

Digitized by Google

7 Օգնական պատերազմ պատեհ-
րազմեցայ, զքնթացն կատարեցի,
զհաւատսն պահեցի։
8 Այսուհետև կայ ինձ պսա-
կ արդարութեան պսակն, զոր հատուս-
ցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ ար-
դար դատաւոր. ոչ միայն ինձ,
այլև ամենեցուն՝ որ սիրեցին զյայտ-
նութիւն նորա։

9 Փութասջիր գալ առ իս վաղ-
վաղակի. զի Դեմաս եթող զիս՝ և
սիրեաց զաշխարհս, և գնաց ի Թես-
սաղոնիկէ։
10 Կրեսկէս՝ ի Գաղատիա, Տիտոս
ի Դաղմատիա։
11 Ղուկաս միայն է ընդ իս. ըզ-
Մարկոս առեալ ընդ քեզ ածիցես՝
զի է ինձ պիտանի ի սպասաւորու-
թիւն։
12 Զտիւքիկոս առաքեցի Եփե-
սոս։
13 Զփիլոնն թողի ի Տրովադայ
առ Կարպոսի. յորժամ գայցես՝ բեր-
ցիր և զգիրսն, մանաւանդ զմա-
տեանսն։
14 Ալէքսանդրոս (դարբին) բազում
չարչարանս եցոյց ինձ. Հատուսցէ
նմա Տէր ըստ գործս նորա։

15 Զոր մ և դու անձնապահ լի-
նիջիր. զի շատ հակառակ եկաց
բանից մերոց։
16 Առաջնումն ատենին ոչ ոք
ինձ ի թիկունս եկաց, այլ ամեն-
քին թողին զիս. մի համարեսցի
նոցա այն։
17 Այլ Տէր օգնեաց ինձ, և զո-
րացոյց զիս, զի ինև քարոզեալիւ

7 Ես բարի պատերազմեցի պա-
տերազմեցի, վազեցի հատարեցի,
հաւատքըս պահեցի[14]։
8 Այսուհետև պատրաստված մը-
նում ինձ արդարութեան պսակն[15]
(6) Պաղ . խե . 13 : Ֆռովմ . բ . 29 . է . 22 : բ կորնթ . գ . 16 : (7) Ծննդ . ժբ . 13 : (8) ա կորնթ . է . 3 : Ղեվ . է . 25 : կող . գ . 18 : (9) ա կորնթ . ժբ . 23 : ա Թես . դ . 4 : (10) Հով . խբ . 8 : Մատթ . է . 23 , 24 : ժբ . 18 : Ֆռովմ . ժբ . 18 : ժե . 5 : Փիլիպ . գ . 16 : (12) Ֆռովմ . ժբ . 10 : Ներ . ժգ . 1 : ա Պետր . բ . 17 : (13) կող . գ . 12 : Ղեվ . դ . 32 : (14) Ընտ . ժէ . 13 : բ . 22 : Մատթ . է . 39 : Ֆռովմ . ժբ . 14 . 17 : ա կորնթ . գ . 12 : ա Թես . է . 15 : (15) Մատթ . խե . 34 : (16) Պաղ . լգ . 13 : (17) Հով . ա . 26 : ա Պետր . բ . 1 . 22 : Յայտ . ժգ . 5 :

Digitized by Google

րասցէ զբարի . խնդրեսցէ զխաղաղութիւն , և երթիցէ զկնա նորա ։
12 Ոչի աչք Տեառն ՚ի վերայ արդարոց , և ականջք նորա յաղօթս նոցա . երեսք Տեառն ՚ի վերայ չարագործաց ։

13 Եւ ո՞վ իցէ որ չարչարիցէ զձեզ , եթէ գուք բարւոյն նախանձաւորք լինիցիք ։
14 Այլ թէ և չարչարիցիք ևս յաղագս արդարութեան , երանելի էք . բայց յերկիւղէ նոցա մի երկնչիցիք և մի խռովիսջիք ։
15 Այլ զՏէր զնոյն զՔրիստոս՝ սրբեալ առնիջիք ՚ի սիրտս ձեր , պատրաստ իցէք ամէն պատասխանի առնել որ խնդրիցէ զբանն . որ է վասն յուսոյն ձերոյ ։
16 Այլ հեզութեամբ և երկիւղիւ ունիջիք բարս քաղցունս . զի որով չարախօսիցեն զձեզնջ՝ յամօթ լիցին՝ որք բամբասանս զձեր բարւոյդ գնացս ՚ի Քրիստոս ։

17 Ոչի լաւ է բարեգործաց , եթէ կամիցին ըստ Աստուծոյ կամացն չարչարիլ՝ քան չարագործաց ։
18 Ոչի և Քրիստոս միանգամ վասն մեղաց ՚ի վերայ ձեր մեռաւ , Արդարն ՚ի վերայ անարդարոց . զի զձեզ մերձեցուսցէ առ Աստուած . թէպէտ և մեռաւ մարմնով , այլ կենդանի է հոգւով ։
19 Որով և ոգւոցն՝ որ էին ՚ի բանտին , երթեալ քարոզեաց .

րի անէ[17] . խաղաղութեան մտն գայ , և նորա եւեթէն գնայ[19] ։
12 Քանզի որ Տէրի աչքերն արդարներուն վերայ են , և նորա ականջներն դէպի նորանց աղօթքն[20] . Տէրի երեսն չարագործներուն վերայ (է) ։
13 Եւ ով է նա՝ որ չարչարէ ձեզ , թէ որ դուք բարւոյն նախանձաւոր լինիք[21] ։
14 Այլ թէ և չարչարվիք էլ արդարութեան համար , երանելի էք[22] . մարդոյն թէ նորանց ահ տաղտուկն մի վախնաք և մի շփոթվիք[23] ։
15 Այլ էն մին Տէրին Քրիստոսին ձեր սրտի մէջն սրբութիւն պահեցէք . պատրաստ էլէք պատասխան տալ ամէնուն որ համար է խնդրում են ձեր յուսոյ կոպմանէ[24] ։
16 Այսպէս թէ խոնարհութեանով և վախով քաղցր վարք ունենաք[25] . որ նորանով որ չար են խօսում ձեզանից , ամօթով ըլան նորանք՝ որ բամբասում են ձեր բարի վարմունքը Քրիստոսումն[26] ։
17 Պատճառն որ՝ աւելի լաւ է՝ եթէ Աստուծոյ կամքն կամենայ՝ բարեգործութեան համար չարչարվիլ , քան թէ չարագործութեան համար ։
18 Քանզի որ Քրիստոս էլ մինանգամ մեղաց համար ձեզ վերայ մեռաւ , Արդարն անարդարներուն վերայ[27] . որ ձեզ մօտացնէ Աստուծոյն . որ թէ և մարմնով[28] մեռաւ[29] , բայց հոգովն կենդանի է[30] ։
19 Որ նորանով գնաց էն հոգիներուն էլ քարոզեց[31] որ բանտումն (պահպանուած) էին[32] ։

(16) Պետ . ա . 27 ։ Նոյ . ա . 18 , 17 ։ գ Յովհ . 11 ։ (19) Հռով . ժբ . 18 ։ ժգ . 19 ։ Եբր . ժբ . 14 ։ (20) Յովհ . բ . 31 ։ Յով . ե . 16 ։ (21) Ընթ . ժգ . 7 ։ Հռով . ը . 28 ։ (22) Ա Պետ . ե . 10 , 11 , 13 ։ ա Պետ . բ . 19 ։ գ . 14 ։ Յով . ա . 13 ։ (23) Նոյ . ը . 13 , 18 ։ Եբր . ա . 8 ։ Յովհ . ժգ . 1 . 27 ։ (24) Պետ . ա Ժբ . 10 ։ Փոթ . գ . 6 ։ Պղ . գ . 6 ։ բ Տիմ . բ . 25 ։ (25) Եբր . ժգ . 18 ։ (26) Յակ . բ . 8 ։ ա Պետ . բ . 12 ։ (27) Հռով . ե . 6 ։ Եբր . բ . 26 . 28 ։ ա Պետ . բ . 21 ։ գ . 1 ։ (28) Պղ . ա . 21 , 23 ։ (29) բ Կորնթ . ժգ . 4 ։ (30) Հռով . ա . 4 ։ ը . 11 ։ (31) ա Պետ . ա . 12 ։ գ . 6 ։ (32) Նոյ . խբ . 7 ։ խբ . 9 ։ կա . 1 ։

20 Երբեմն ապաւաժձելոցն , յորժամ ներէր նոցա Աստուծոյ երկայնմտութիւն յաւուրս Նոյի , յորում տապանն կազմէր . յոր նուազունք՝ այսինքն ոգիք իրրև ութ ապրեցան ի ջրոցն ։

21 Որ և զձեզ ըստ նմին օրինակի կնքուսցէ մկրտութիւնն . ոչ զմարմնոյ աղան ի բաց ընկենլով՝ այլ զբարւոք մտացն հանդէս առ Աստուած ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի .

22 Որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս , ի ներքոյ նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց ։

20 Որ ներանք ժամանակով ապրեցուամբած էին՝ երբոր Աստուծոյ երկայնմտութիւն համբերութեամբ նոքա ընդ Նոյի օրերումն[23], երբոր տապանն պատրաստվումբ[24] . որ նոքա նով քիչ՝ այսինքն՝ ութ հոգի ջրիցն պրծան[25] ։

21 Որ ձեզ էլ էն օրինակին պէս կազատէ մկրտութիւնն[26] . (չէ թէ մարմնոյ աղտըն դէն քցելով[27]՝ բայց բարի խըղճմտանաց հաստատութիւնըն դէպի Աստուած) . Յիսուսի Քրիստոսի յարութեանովն[28] ։

22 Որ գնացել է երկինքն , և Աստուծոյ աջ կողմն է[29] . հրեշտակներն և իշխանութիւններն և զօրութիւններն ընազանդվելով նորան[30] ։

ԳԼ · Գ

1 Հորդորումն նորանց որ մեղք անելուցն գադարին , Քրիստոսի օրինակին ցոյց տալով , և ամէն բանի վերջն մօտենալուն վերայ հոգս տանէն , 12 Սիրեցուսանէ նոցանք նեղութիւնեբրն և չարչարանքներին համար ։

1 Քրիստոս՝ որ մարմնով մեզ համար չարչարվեցաւ , դուք էլ էն մտքովն զէնք կապեցէք ձեզ[1] . պատճառն որ՝ ով որ մարմնով չարչարվումէ , մեղք անելուցն դադարումէ[2] ։

2 Որ էլ ոչ թէ մարդկանց ցանկութիւնների պէս[3] բայց Աստուծոյ կամաց պէս[4] ապրի իրան մնացած ժամանակն[5] ։

3 Պատճառն որ բաւական է որ էն անցկացած ժամանակըն[6] հեթանոսաց կամքին պէս անցկացրիք , որ նորանք վարվումէին գիճութիւններով՝ ցանկութիւններով , գինովա-

(33) Նահ . գ . 3 . 5 . 13 ։ (34) Նբէ . ժա . 7 ։ (35) Նահ . է . 7 ։ ը . 18 ։ թ Պետ . բ . 5 ։ (36) Նէհ . ե . 26 ։ (37) Տիտ . գ . 5 ։ (38) ա Պետ . ա . 3 ։ (39) Սաղմ . ԿԶ . 1 ։ Հռով . ը . 34 ։ Նէհ . ա . 20 ։ Կող . գ . 1 ։ Նբէ . ա . 3 ։ (40) Հռով . ը . 38 ։ ա Կորնթ . ժե . 24 ։ Նէհ . ա . 21 ։ (1) ա Պետ . գ . 18 ։ (2) Հռով . գ . 2 . 7 ։ Գաղ . ե . 24 ։ Կող . գ . 3 . 5 ։ (3) Հռով . ժգ . 7 ։ ա Պետ . բ . 1 ։ (4) Հովհ . ա . 13 ։ Հռով . գ . 11 ։ ե Կորնթ . ե . 15 ։ Հով . ա . 18 ։ (5) ա Պետ . ա . 14 ։ (6) Նախ . խգ . 6 ։ խե . 9 ։ Գործ . ժե . 30 ։

Digitized by Google

անօրէն կատարչութեամբք ։

4 Որով օտարացեալք՝ ոչ ընդ ձեզ վարին ի նոյն անկարգութեան զեղուռիթիւն , և հայհոյեն՝

5 Որ ապագեն պատասխանի այնմ , որ ի պատրաստին ունի դատել զկենդանիս և զմեռեալս ։

6 Ո՛ի ի սոյն իսկ և մեռելոց խոստացեալ է , զի դատեսցին ըստ մարդկան մարմնով՝ և կենդանի լինիցին ըստ Աստուծոյ հոգւով ։

7 Ա՛մենեցուն վախճան մերձեալ է • զգաստացարո՛ւք այսուհետև՝ և լերո՛ւք զուարթունք յաղօթս ։

8 Այսր քան զամենայն սէր սիրա ունել ընդ միմեանս . զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց ։

9 Ողորասէրք լինել ընդ միմեանս առանց տրտնջելոյ ։

10 Որպէս եւ ընկալաւ շնորհս ինչ՝ ի միմեանս ըզնոյն մատակարարել , իբրև զբարո՛ւոք հաղորդապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ ։

11 Եթէ ոք խօսեցի՝ իբրև զԱստուծոյ պատգամս . եթէ ոք մատակարարիցէ՝ իբրև ի զօրութենէ՝ զոր շնորհէ Աստուած . զի յամենայնի փառաւորեսցի Աստուած ի

նալով՝ անառակաբիւններով՝ հարբեցութիւններով՝ անօրէն կատարչութիւններով[7] ։

4 Որ նորա համար զարմանալն որ դուք չէք վարվում իրանց հետ են անառակ կեանքի անկարգութեան մէջ , և հայհոյումն[8] ,

5 Որ նորանք պիտի պատասխան տան նորան՝ որ պատրաստված է՝ դատաստան անել կենդանիներին և մեռելներին[9] ։

6 Որ հենց սրա համար՝ մեռելներին էլ խոստմունք տրվված է , որ մարդոյ կողմանէ մարմնով պիտի դատվին , բայց հոգով կենդանի լինին Աստուծոյ կողմանէ[10] ։

7 Ա՛մէն բանի վերջն մօտացել է[11]. ուրեմն պարկե՛շտ կացէք՝ և արթնո՛ւն էլէք աղօթքով[12] ։

8 Ա՛մենից առաջ՝ պինա սէր ունենաք իրար հետ[13] . պատճառն որ սէրն ծածկումն մեղաց շատութիւնն է[14] ։

9 Ողորասէր էլէք իրար հետ[15] առանց տրտնջելոյ[16] ։

10 Ա՛մէն մէկդ ինչպէս որ մին շնորհք է ընդունել՝ էն իրար (մէջ) հաղորդեցէք , տուէք[17] • ինչպէս Աստուծոյ կեպ կերպ շնորհաց[18] լաւ անտեսաներ[19] ։

11 Եթէ մինն խօսի՝ թո՛ղ ինչպէս Աստուծոյ հրամանն (խօսի)[20] . եթէ մինն ընծայէ՝ (թո՛ղ լինի) ինչպէս էն զօրութենիցն որ Աստուած է շնորհում՝ (տալիս)[21] . որ ամէն բանի մէջ

(7) Կեփ . բ . 2 : գ . 17 : ա Յովհ . գ . 5 : Տիտ . գ . 3 : ա Պետր . ա . 14 : (8) Գործ . ժգ . 45 : ժբ . 6 : ա Պետր . գ . 16 : (9) Գործ . ժ . 42 : ժե . 31 : Հռով. ժգ . 10 . 12 : ա Կորնթ . ժե . 51 , 53 : բ Տիմ . գ . 1 : Յայտ . ե . 9 : (10) ա Պետր . գ . 19 : (11) Մատթ . իգ . 13 , 14 : Հռով . ժգ . 12 : Փիլիպ . գ . 5 : Նբր . ժ . 25 : Յայտ . ե . 8 : բ Պետր . գ . 9 . 11 : ա Յովհ . բ . 18 : (12) Մատթ . իզ . 41 : Ղուկ . իա . 34 : Կող . գ . 2 : ա Պետր . ա . 13 : ե . 8 : (13) Նբր . ժգ . 1 : Կող . գ . 14 : (14) Առակ . ժ . 12 : ա Կորնթ . ժգ . 7 : Յայտ . ե . 20 : (15) Հռով . ժբ . 13 : Նբր . ժգ . 2 : (16) բ Կորնթ . իբ . 7 : Փիլիպ . բ . 14 : Փիլմ . 14 : (17) Հռով . ժբ . 6 : ա Կորնթ . գ . 7 : (18) ա Կորնթ . ժբ . 4 : Եփես . գ . 11 : (19) Մատթ . իգ . 45 : իե . 14 . 21 : Ղուկ . ժբ . 42 : ա Կորնթ . գ . 1 , 2 : Տիտ . ա . 7 : (20) Նեհ . իգ . 22 : (21) Հռով . ժբ . 6 , 7 , 8 : ա Կորնթ . գ . 10 ։

Digitized by Google

ձեռն Քիստոսի Յիսուսի, որում փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն։

12 Սիրելիք՝ մի օտարոտի համարիլ զեռանդն ինչ որ ի փորձութիւն ձեզ լինիցի, որպես թէ օտար ինչ իրք ձեզ դիպիցին։

13 Այլ իբրև հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն՝ ուրախ լինելիք, զի ի յայտնութեան փառացն նորա ցնծացեալք բերկրեսջիք։

14 Եթէ նախատիցիք ևս վասն անուանն Քրիստոսի, երանելի էք. զի փառացն՝ և զօրութեան անուն է, և Աստուծոյ Հոգին ի վերայ ձեր հանգուցեալ է։

15 Այլ ոք ի ձէնջ չարչարեսցի իբրև զսպանող, կամ իբրև զգող, կամ իբրև զչարագործ, կամ իբրև զօտարատեսուչ։

16 Այլ եթէ իբրև զքրիստոնեայ՝ մի ինչ ամաչեսցէ. այլ փառաւորեսցէ զԱստուած անուամբ այսուիկ։

17 Զի ժամանակ է սկիզբն լինել դատաստանին ի տանէն Աստուծոյ. զի եթէ նախ ի մէնջ, իսկ զվերջ կատարած այնոցիկ իցէ՝ որ ոչ հնազանդեցան Աստուծոյ աւետարանին։

18 Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն և մեղաւորն ո՞ւր գտանիցի։

Աստուած փառաւորվի Յիսուսի Քրիստոսի ձեռնվ[23]. որ նորան (լինի) փառք և զօրութիւն յաւիտեանս. ամէն[22]։

12 Սիրելիներ՝ օտար բան մի հարմարէք էն բորբոքված նեղութիւնն՝ որ ձեզ փորձելոյ համար կըլինի[24], իբրեթէ մին օտար բան պատահի ձեզ։

13 Այլ ուրախ եղէք[25] ինչպէս Քրիստոսի չարչարանացն մասնակից եղածներ[26], որ նորա փառքի յայտնութեան ժամանակումն ցընծալով ուրախանաք[27]։

14 Այլ եթէ նախատվիք էլ Քրիստոսի անունին համար, երանելի էք. պատճառն որ փառաց և զօրութեան անունն և Աստուծոյ Հոգին հանգչումէ (մնումէ) ձեզ վերայ[28]։

15 Ընդ լինի թէ ձեզանից մինն չարչարվի ինչպէս (մարդ) սպանօղ, կամ ինչպէս գող, կամ ինչպէս չարագործ[29], կամ ինչպէս ուրիշի ապրանքի աչք դնօղ[30]։

16 Այլ թէ ինչպէս քրիստոնեայ (չարչարվի)՝ թող չամաչէ, բայց փառք տայ Աստուծոյն էս անունովքս[31]։

17 Ինչու որ ժամանակն է՝ (որ) դատաստան սկսի Աստուծոյ տանից[32]. բայց թէ որ առաջ մեզանից (է սկսում)[33], ապա ի՞նչ պիտի լինի նորանց վերջն՝ որ Աստուծոյ աւետարանին հնազանդ չըկացան[34]։

18 Եւ թէ որ արդարն դժուար կապրի, ապա ամբարիշտն և մեղաւորն ո՞րտեղ պիտի գանըվի[35]։

(22) Նէե. ե. 20. ա Պետ. բ. 5. (23) ա Տիմ. գ. 16. ա Պետ. ե. 11. Յով. ա. 6. (24) ա Կորնթ. գ. 13. ա Պետ. ա. 7. (25) Գործ. ե. 41. Յակ. ա. 2. (26) Հռոմ. ը. 17. բ Կորնթ. ա. 7. գ. 10. Փիլիպ. գ. 10. Կող. ա. 24. բ Տիմ. բ. 12. ա Պետ. ե. 1. 10. Յով. ա. 9. (27) ա Պետ. ա. 5 6. (28) Մատթ. ե. 11. բ Կորնթ. ժբ. 10. Յակ. ա. 12. ա Պետ. բ. 19, 20. գ. 14. (29) ա Պետ. բ. 20. (30) ա Ելից. գ. 11. ա Տիմ. ե. 13. (31) Գործ. ե. 41. (32) Եսայ. ժ. 12. Երեմ. ըե. 29. Եզեկ. թ. 6. Մաղ. գ. 5. (33) Ղուկ. իգ. 31. (34) Ղուկ. ը. 12. 13. (35) Հռոմ. ժա. 31. Ղուկ. իգ. 31.

Digitized by Google

19 Որպէս զի որ չարչարիցին ըստ Աստուծոյ կամացն, հաւատարիմ Ստեղծողին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բարերարութեամբք։

19 Որ համաձայն Աստուծոյ կամաց պէս չարչարուելին, թող հաւատարիմ Ստեղծողին պահ տան իրանց հոգիները բարեգործութիւններ անելով[36]։

ԳԼՈՒԽ Ե

1 Երէցներին զգուշանալ որ Աստուծոյ հօտն արածեցնեն, 5 նրիատարերները պէտք է որ հնազանդ լինին ծերերին, 8 և սակայն պատուէր է տալիս որ արհամարհ լինին հաւատացեալ մէկ հոգու անգամ, որ առաջնի պէս Աստուածային հակառակ կենան։

1 Զերիցսն եւս զայսոցիկ հետեւ ազաչեմ՝ իբրեւ երիցակից՝ եւ վկայ չարչարանացն Քրիստոսի, որ եւ հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ.

2 Հրաժեցէք՝ որ ի ձեզ հօտ է Աստուծոյ. վերակացու լինել՝ մի իբրեւ ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ.

3 Ոչ՝ իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին։

4 Օի յերեւել Հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ։

5 Այնպէս և երիտասարդք՝ հրնազանդ լերուք ծերոց. ամենեքեան ընդ միմեանս զխոնարհութիւն առնիջիք. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, ապա շնորհս խոնարհաց։

6 Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ. զի զձեզ յարձրացուսցէ ի ժամանակի։

1 Երեցներին աղաչեմ՝ ինչպէս մին երեցընկեր՝ և Քրիստոսի չարչարանքներին վկայ[1]. և էլ էն նոր գալու (և) յայտնըվելու փառքին մասնակից[2]։

2 Հրածայրէք Աստուծոյ հօտին (խնամեան) որ ձեզ մնա է[3]. որ վերակացու լինիք՝ ոչ թէ ակամայ, այլ յօժար կամքով՝ Աստուծոյ կամքին պէս[4], ոչ թէ պիղծ շահասիրութենով՝ այլ յօժարութենով[5]։

3 Ոչ թէ ինչպէս թեմերին վրայ[6] տիրապետելով՝ այլ հօտին օրինակ լինելով[7]։

4 Որ երբոր Հովուապետն կերևի[8], էն անթառամ[10] փառաց պըսակըն ընդունիք[11]։

5 Նոյպէս էլ դուք երիտասարդներ՝ հնազանդ էլէք ծերերին. ամէնքն իրար հետ խոնարհութիւն առնենան[12]. պատճառն որ Աստուած ամբարտաւաններին հակառակ կայ[13], (և) խոնարհներին շնորհք է տալիս[14]։

6 Խոնարհվեցէք Աստուծոյ հզօր ձեռի տակն, որ ձեզ բարձրացնէ ժամանակով[15]։

(38) Պաղ. լ · 5 · Գաղ. խդ · 16 · բ Տիմ. ա · 12 · (1) Գաղ. խգ · 18 · Գործ. ա · 8. 22 · ե. 32 · ժ · 39 · (2) Հռոմ. ը · 17, 18 · Կայս · ա · 9 · (3) Հովհ. իա · 15, 16, 17 · Գործ · ի · 28 · (4) ա Կորնթ · թ · 17 · (5) ա Տիմ · գ · 3, 8 · Տիտ · ա · 7 · (6) Պաղ. լգ · 12 · հգ · 2 · (7) Նախ · լգ · 4 · Ասորւ · ի · 25, 26 · բ Կորնթ · ա · 24 · (8) Փիլիպ · գ · 17 · բ Թես · գ · 9 · ա Տիմ · գ · 12 · Տիտ · բ · 7 · (9) Նէր · ժգ · 20 · (10) ա Պետր · ա · 4 · (11) ա Կորնթ · թ · 25 · բ Տիմ · գ · 8 · Հով · ա · 12 · (12) Հռոմ. ժբ · 10 · Նախ · ե · 21 · Փիլիպ · բ · 3 · (13) Հով · գ · 6 · (14) Նայ · ծի · 15 · կղ · 2 · (15) Հով · գ · 10 ·

Digitized by Google

7 Ո՛չ ամենայն հոգս ձեր ընկեցէք ՚ի նա , զի նա է՝ որ հոգայ վասն ձեր ։

8 Ո՛րթուն լերուք՝ հսկեցէք , զի սոսկն ձեր Սատանայ իբրև զառիւծ գոչէ , շրջի և խնդրէ թէ զո՞ կըլանիցէ ։

9 Որում ՚ի դիմի հարկանիցէք հաստատեալք հաւատովք · գիտացէք զնոյն անցս չարչարանաց եղբայրութեան ձերոյ՝ յաշխարհի յանձինս կատարել ։

10 Եւ Ո՛ստուած ամենայն շնորհաց՝ որ կոչեաց զձեզ յիւր ՚ի յաւիտենական փառան Ի՛րիստոսիս Յիսուսիս , որում փոքր մի եղերուք չարչարակիցք , նա կազդուրեցուսցէ կատարեալս ցէ , հաստատիմն արասցէ ։

11 Ո՛րմա իշխանութիւն և փառք յաւիտեանս · ամէն ։

12 ՚Ի ձեռն Սիղուիանոսի հաւատարիմ եղբօր , որպէս կարծեմ՝ փոքր ՚ի շատէ գրեցի առ ձեզ մըխիթարել · և ՚ի վերայ սորին վըկայել · զի և այս ճշմարիտ շնորհք Ո՛ստուծոյ են՝ յոր հաստատեալ կայցէք ։

13 Ողջոյն տայ ձեզ՝ որ ՚ի Բաբելոն ընտրեալիւ եկեղեցին է · և Մա՛րկոս որդին իմ ։

14 Ողջոյն տալջիք միմեանց ՚ի համբոյր սրբութեան · խաղաղութիւն ընդ ձեզ ամենեսին , որ էք ՚ի Ի՛րիստոս Յիսուս · ամէն ։

7 Ձեր բոլոր հոգսըն նորա վերայ քցեցէք , ինչու որ՝ նա է որ հոգս է անում ձեզ համար[16] ։

8 Ո՛րթուն էլէք՝ հսկում արէք[17] · ինչու որ ձեր ոսոխ Թշնամին՝ Սատանան առիւծի պէս գոռում՝ ման է գալիս և պըղտոում թէ ո՛րին կուլ տայ[18] ։

9 Ուր հաւատքով հաստատուած՝ հակառակ կենաք նորան[19] · գիտացէք որ էդ չարչարանքներըդ ձեր եղբարներն էլ իրանց անձներումն քաշելին էս աշխարհքիս մէջն[20] ։

10 Եւ ամէն շնորհքի Ո՛ստուածն , որ ձեզ կանչեց իրան յաւիտենական փառքի մէջ Ի՛րիստոսով Յիսուսով[21] , որ մին քիչ նորա չարչարանքին մնանակից էլաք[22] , նա (ձեզ) զօրացնէ , կատարէ[23] , հաստատ անէ[24] ։

11 Ո՛րան (լինի) իշխանութիւն և փառք յաւիտեանս · (ամէն)[25] ։

12 Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռովն՝ ինչպէս որ կարծում[26] փոքր ՚ի շատէ գրեցի ձեզ , որ յորդորեմ և էս բանիս համար վկայութիւն տամ[27] թէ հենց էս Ո՛ստուծոյ ճշմարիտ շնորհքն է , որ դուք նորանում հաստատուած կանգնած էք[28] ։

13 Ողջոյն է տալիս ձեզ՝ ձեզ հետ ընտրուած եկեղեցին՝ որ Բաբիլոնումն է · և իմ որդի Մա՛րկոսն[29] ։

14 Իրար ողջոյն տուէք սիրով համբուրով[30] · խաղաղութիւն (լինի) ձեզ ամէնիդ հետ՝ որ ՚Ի՛րիստոս Յիսուսումն էք[31] · ամէն ։

(16) Պետ · է · 5 : 7 · 23 : Մատթ · գ · 25 : Ղուկ · ժբ · 11 · 22 : Փիլպ · գ · 6 : Նէբ · ժգ · 5 : (17) Ղուկ · ի · 34 · 36 : ա Յհն · է · 5 , 6 : ա Պետր · գ · 7 : (18) Յոբ · ա · 7 : բ · 2 : Ղուկ · իբ · 31 : Յայտ · ժբ · 12 : (19) Նէեմ · գ · 11 : 13 : Յով · գ · 7 : (20) Պետր · ժգ · 21 : ա Յհն · գ · 3 : բ Տի՛մ · գ · 12 : ա Պիտր · բ · 21 : (21) ա Պետր · ա · 9 : ա Տի՛մ · գ · 12 : (22) բ Պետր · գ · 17 : ա Պիտր · ա · 6 : (23) Յոբ · 24 : (24) բ Յհն · բ · 16 : գ · 3 : (25) ա Պիտր · գ · 11 : Յայտ · ա · 6 : (26) բ Պետր · ա · 19 : (27) Նէբ · ժգ · 22 : (28) Գործ · ի · 24 : ա Պետր · ժե · 1 : բ Պիտր · ա · 12 : (29) Գործ · ժբ · 12 · 25 : (30) Հռով · ժգ · 16 : ա Պետր · ժգ · 20 : բ Պետր · ժգ · 13 : ա Յհն · ե · 20 : (31) Նէեմ : գ · 38 ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵԱՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Աւաքեալն հաստատելով քրիստոնեաներին Աստուծոյ շնորհքի մէջ շռայլելը յայտնելէն ։ 5 Յորդորուելն նոյնպէս որ հաւատքով և բարի գործերով իրենց կոչմանին հաստատ պահեն ։ 13 Որ ինքն հոգւոյ անուանի նոյնպէս յիշատակելը աշխարհաբնակութիւնն , ցոյց տալով որ իրեն մահուն մօտ է ։ 16 Խրատուելն որ հաստատ լինին Քրիստոսի հաւատքին մէջ , գիտնալով թէ նոյնն Աստուծոյ աչքարիւ Որդին է , պատմեան որ Աւաքեալներէն նոյնպէս մեծ վկայութիւնն տեսանելով կ՚ըսեն . և Հայրն և մարգարէներէն էլ նոյնպէս համոզելով կ՚ըսէ ։

1 Ես Սիմո՛ն, Պետրոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ և առաքեալ , ձեզ որ մեզ հետ հաւատքի պատուականութեամբ հաւասարութիւն հասիք՝ մեր Աստուծոյ և Փրկիչ Յիսուսի Քրիստոսի արդարութեամբնուն[1] ,

2 Շնորհք և խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութեամբնով[2] ,

3 Ինչպէս որ նորա աստուածային զօրութիւնն շնորհեց մեզ ինչ որ է մեզի կեանքին և աստուածապաշտութեան համար (պէտք է) . նորա գիտութեամբնուն[3] , որ մեզ կանչեց դէ-

1 Ես Սիմո՛ն, Պետրոս՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ և առաքեալ , ձեզ որ մեզ հետ հաւատքի պատուականութեամբ հաւասարութիւն հասիք՝ մեր Աստուծոյ և Փրկիչ Յիսուսի Քրիստոսի արդարութեամբնուն[1] ,

2 Շնորհք և խաղաղութիւն շատանայ ձեզ վերայ Աստուծոյ և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութեամբնով[2] ,

3 Ինչպէս որ նորա աստուածային զօրութիւնն շնորհեց մեզ ինչ որ է մեզի կեանքին և աստուածապաշտութեան համար (պէտք է) . նորա գիտութեամբնուն[3] , որ մեզ կանչեց դէ-

(1) Հռով . ա . 17 : բ . կորնթ . գ . 13 : Եփես . գ . 5 : Տիտ . ա . 4 : (2) Դան . բ . 1 : ը . 25 : Ա Պետ . ա . 2 : Ա Յովհ . 2 : (3) Ղուկ . ժէ . 8 :

Digitized by Google

փառան և ի վայելուԹիւն :

4 Որով մեծամեծքն և պատուականն առեալք պարգեւեալ են մեզ · զի նոքիմբք աստուածեղէն բնուԹեանն լինիցիմք հազորդակիցք , փախեալք ի ցանկուԹեանց աշխարհիս և յապականուԹեանց :

5 Եւ ամեն այսմիկ զամենայն փոյԹ ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարարեսջիք զառաքինուԹիւն , և առաքինուԹեամն զգիտուԹիւն ,

6 Եւ գիտուԹեամն զժուժկալուԹիւն , և ժուժկալուԹեամն զհամբերուԹիւն , և համբերուԹեամբն զաստուածպաշտուԹիւն ,

7 Եւ աստուածպաշտուԹեամն զեղբայրասիրուԹիւն , և եղբայրասիրուԹեամն զսէր :

8 Զայսոսիկ ձեր յանձին կալեալ՝ և ի այն յաճախեալ , ոչ դատարկս և անպատս զձեզ հաստատիցեն ի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտուԹիւնն :

9 Իսկ որ ոչն իցեն սոքա մերձ , կոյր է և զաչացուս . ի մոռացօնս գարձուցեալ զսրբուԹիւն առաջնոց իւրոցն յանցանաց :

10 Վասն որոյ եղբարք՝ առաւել փութայջիք՝ զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն , և զընտրուԹիւն պահիցէք . զայս առնելով՝ ոչ երբեք յանցանիցէք .

11 Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ ի յաւիտենական արքայուԹիւն Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի :

պի (իրան) փոխքն և վայելուԹիւնն[4] :

4 Որ նորանցով շատ մեծ և պատուական աւետիքներս են տրուեալ մեզ[5] . որ նորանցով մասնակից լինիք աստուածային բնուԹեանն[6] (հաւատքով) աշխարհքի ցանկուԹիւններից և ապականուԹիւններից յետ փախչելով[7] :

5 Եւ հենց սրա համար՝ ամեն ջանք արէք[8] , որ ձեր հաւատքին ընծայէք առաքինուԹիւն , և առաքինուԹեան գիտուԹիւն ,

6 Եւ գիտուԹեանն ժուժկալուԹիւն , և ժուժկալուԹեանն համբերուԹիւն , և համբերուԹեանն աստուածպաշտուԹիւն ,

7 Եւ աստուածպաշտուԹեանն եղբայրասիրուԹիւն , և եղբայրասիրուԹեանն սէր[9] :

8 Եթէ էս բաները ձեր անձնուրուԹիւմ պահէք՝ և միշտ սրանց հետ լինիք , (սրանք) դատարկ և անպտուղ չեն թողիլ ձեզ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի գիտուԹեանը[10] :

9 Որովհետև՝ որ էս բաներս իրան հետ չունի , կոյր է և կարճատես[11] . (և) մոռացել է իրան առաջին մեղքերից սրբվիլը[12] :

10 Սրա համար եղբարք՝ աւելի ջանք արէք որ ձեր կոչումն և ընտրուԹիւնը հաստատ պահէք բարի գործքերով[13] . պատճառն որ՝ էսպես անելով իհի մին ժամանակ չէք մեղանչիլ[14] :

11 Ինչու որ էսպես առատուԹեամբ կըտրվի ձեզ՝ որ մանէք մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի յաւիտենական արքայուԹիւնն :

(1) ա ՅԽԲ · բ · 12 · գ · 7 · բ ՅԽԲ · բ · 13 · բ ՅԻՀ · ա · 9 · ա Պետ · բ · 9 · գ · 9 · (5) բ Պետ · ե · 1 · (6) բ Պետ · գ · 16 · Նախ · գ · 34 · Եբր · ժբ · 10 · բ Յակ · գ · 2 · (7) բ Պետ · բ · 16 · 20 · (8) բ Պետ · գ · 15 · (9) Պետ · գ · 10 · ա ՅԽԲ · գ · 13 · ե · 15 · ա Յակ · գ · 21 · (10) Յակ · ժբ · 2 · ՅԻՀ · գ · 14 · (11) ա Յակ · բ · 9 · 11 · (12) Նախ · ե · 26 · Եբր · ի · 11 · ա Յակ · ա · 2 · (13) ա Յակ · գ · 19 · (14) բ Պետ · գ · 17 ·

Digitized by Google

12 Լրով պատրաստիցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վասն սոցին առաւել և գիտակցին և հաստատելոցն՝ եւ կեալ հաստել ճշմարտութեանն ։

13 Վասնզի իրաւունս համարիմ մինչդեռ եմ ի մարմնի սոսկ՝ զարթուցանել զձեզ յիշատակօք ։

14 Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս . որպէս և Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ ։

15 Եւ փութամ ճեպիմ միշտ ըզձեզ յորդորել . զի և յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք ըզյիշատակս այսոցիկ ։

16 Վասնզի ոչ եթէ պատճառեալ ինչ առասպելաց գՀետ երթեալ ցուցաք ձեր զՏեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զզօրութիւնն և զգալուստն . այլ մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն ։

17 Վասնզի առեալ յԱստուծոյ և ի Հօրէ զփառս և զպատիւ . եւ կեալ յայնպիսի բարբառոյ՝ ի մեծ վայելչութեան փառաց անտի . եթէ Դա է Որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ ։

18 Եւ զայս բարբառ մեք իսկ լսեաք երկնից՝ որ ընդ նմա իսկ էաք ի սուրբ լերինն ։

19 Եւ աւելիմք հաստատագոյն ըզբանն մարգարէական . ոյում եթէ անուշադիր՝ բարւոք առնէք . իբրեւ ճրագի՝ որ ապչէ լոյս ի խաւարչին տեղւոջ , մինչեւ արշն լուսաւ

12 Ուրախամար միշտ պատրաստ եմ որ ձեզ յիշեցնեմ սորանց համար[15] (Թէև) լաւ գիտուածք և հաստատուած էք՝ (էս) եկած ճշմարտութեանս[16] ։

13 Պատճառն որ իրաւունք եմ համարում , որ դեռ քանի որ մարմնոյս մէջն եմ[17] յիշեցնելով զարթնացնեմ ձեզ[18] ։

14 Գիտուեմ որ շուտով պիտի ինձանից հանեմ իմ մարմինըս[19] . ինչպէս որ մեր Տէր Յիսուս Քրիստոսն ցոյց տուաւ ինձ[20] ։

15 Եւ ջանք եմ անուսմ և վաստակեմ միշտ յորդորել ձեզ , որ իմ աշխարհքից դուրս գալուցն եսան՝ էս բաներըս յիշէք ։

16 Պատճառն որ՝ մենք ոչ թէ սուտասմուտ ընարուած բաներով հետևելով ցոյց տուինք ձեզ մեր Տէր Յիսուսի Քրիստոսի զօրութիւնըն և գալըն[21] . բայց հենց մենք ինքներս աչքով տեսինք նորա մեծութիւնըն[22] ։

17 Որ Աստուածանից և Հօրից փառք և պատիւ առաւ , երբոր էն մեծվայելչութեան փառքից էնպէսի ձայն եկաւ . Թէ Դա է իմ սիրելի Որդին՝ որ դորան հաւանեալ եմ[23] ։

18 Եւ էս ձայնս՝ որ երկնքից եկաւ՝ մենք ինքներս լսեցինք . որ հենց նորա հետ էն սուրբ սարըմըն էինք[24] ։

19 Եւ մարգարէական շատ հաստատ խօսքերըն էլ ունինք . որ եթէ նորանց մտիկ անէք՝ լաւ կանէք . ինչպէս մին ճրագի՝ որ լոյս տայ մութ տեղի մէջն[25] , մինչեւ որ

(15) Հռով . ժե . 14 , 15 : Փիլիպ . գ . 1 : բ Պետր . գ . 1 : ա Կորնթ . բ . 21 : Ծոփ . 5 : (16) ա Պետր . ե . 12 : բ Պետր . գ . 17 : (17) բ Կորնթ . ե . 1 . 4 : (18) բ Պետր . գ . 1 : (19) բ Օրին . գ . 31 , 32 : Լս . 12 : բ Տիմ . գ . 6 : (20) Կորնթ . բա . 18 , 19 : (21) ա Կորնթ . ա . 17 : բ . 1 . 4 : բ Կորնթ . բ . 17 , գ . 3 : (22) Մատթ . ժե , 1 , 2 : Մարկ . թ . 2 : Կորնթ . ա . 15 : ա Կորնթ . ա . 1 : գ . 14 : (23) Մատթ . գ . 17 : ժե . 5 : Մարկ . ա . 11 : թ . 6 : Ղուկ . գ . 22 : բ . 35 : (24) Եփ . գ . 5 : Կող . բ . 19 : 12 : Մատթ , ժե , 6 : (25) Պետր . ՌԺԲ . 105 : Կորնթ : ե . 35 :

Digitized by Google

ւաքեսցէք , և արուսեակն ծագեսցէ ՚ի սիրտս ձեր ։

20 Այլ նախ այսմ գիտակ լինիջիք • զի ամենայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի ։

21 Վասնզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան առաւ մարգարէութիւն երբէք , այլ ՚ի Հոգւոյն Սրբոյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յԱստուծոյ։

գերեկն լուսանայ , և արուսեակ (աստղն) ծագի ձեր սրտերումն[28] ։

20 Այլ առաջ էս զիտեսջիք • որ ամեն մարգարէութիւն իրան գրվածքի մեկնութիւնըն չէ։ նի[*,27] ։

21 Պատճառն որ՝ ոչ ի մարդկանց կամքին պէտ իսկի մին ժամանակ տրվվաւ մարգարէութիւն[28] , բայց Սուրբ Հոգուըն շարժվածՙ խօսեցին Աստուծոյ մարդիքն[29] ։

ԳԼ · Ր

1 Մարգարէութիւն է անուամ Քի՝ առաւ վարդապետներ պիտի լինին եկեղեցոյ մէջն , և գոյց կըռայ՝ Քի Տրոնց և Քի Տրոնց հետևօղներին անառակութիւններըն և Տրոնց պատիժըն , 7 ևր Տրոնից Տէրն կըփրկէ առաւելապաշտներին • ինչպես որ Ղովտ Սոդոմից փրկվեցաւ ։ 10 Յա անառակ և հայհոյութիւն անօր խաբեբաներին վարքերըն աւելի տեղՙի տալ խօսւմ • որ լինի Քի՝ մարդիք տեսնելով չուտ ճանչան Տրոնք , և Տրոնցից հետու կան ։

1 ԵՒնչէին և առաւ մարգարէք ՚ի ժողովրդեանն՝ որպէս և այժմ ՚ի ձեզ լինիցին առաւ վարդապետք • որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան , և զտրս Տէրն գնեաց ընտաւ ուրացեալՙ ածեն ՚ի վերայ անձանց զարագահան կորուստ ։

2 Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ նոցա անառակութեանցն • վասըն որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյիցի ։

3 Եւ ագահութեամբ մտացածին բանիւք առնիցեն զձեզ վաճառանդի , որոց դատաստանն ՚ի բնէ ոչ գաւառականայ , և կորուստն նոցա ոչ

1 ԵՒրուա մարգարէք էլ կային էն ժողովրդի մէջն[1] , ինչպես որ ձեր մէջն էլ պիտի առաւ վարդապետներ լինին • որ ներս պրծած՝ կորստական հերձուածողութիւններ կըմտացընեն[2] • ուրանալովն[3] էն Տէրն որ իրանց գնեց[4] (և) իրանց վերայ շատ հասյաս կորուստ են բերում[5] ։

2 Եւ շատ մարդիք կըհետևին Տրոնց անառակութիւններին • որ Տրուա համար ճշմարտութեան ճանապարհըն կըհայհոյվի ։

3 Եւ ագահութենով իրանց մըտքից Ճարված խօսքերով[6] ձեզ կըխախտեն (ձեր տեղից)[7] • որ Տրոնց դատաստանին իսկի մին ժամանակ

(26) Յայտ • բ • 28 ։ իբ • 16 ։ բ կորնթ • գ • ե • 6 ։ (*) Հռոմայեցւն • որ գրքի ասէն մարգարէութիւն յատուկ մեկնութենով չի լինիլ։ (27) Հռոմ • ժբ • 6 ։ (28) բ Տիմ • գ • 16 ։ ա Պետր • ա • 11 ։ (29) բ Թագ • իգ • 2 ։ Ղուկ • ա • 70 ։ Գործ • ա • 16 ։ գ • 18 ։ (1) բ Օրէն • ժգ • 1 ։ (2) Մատթ • իդ • 11 ։ Գործ • բ • 30 ։ ա կորնթ • ժա • 19 ։ ա Տիմ • գ • 1 ։ բ Տիմ • գ • 1 • 5 ։ ա Հովհ • դ • 1 ։ Յուդ • 18 ։ (3) ա կորնթ • զ • 20 ։ Գործ • գ • 18 ։ Եփես • ա • 7 ։ Նիւթ • ժ • 20 ։ ա Պետր • ա • 18 ։ Յայտ • ե • 9 ։ (4) Յուդ • ե ։ (5) փիլիպ • գ • 19 ։ (6) Հռոմ • ժգ • 18 ։ բ կորնթ • ժբ • 17 , 18 ։ ա Տիմ • զ • 5 ։ Տիտ • ա • 11 ։ (7) բ կորնթ • բ • 17 ։ բ Պետր ։ ա ։ 20 ։

Ներհակ :

4 Ո՛վ որ ի Հրեշտակէն յանդուգնեալ Ա՛ստուած ոչ խնայեաց, այլ խաւարին կապանօք արկեալ՝ ի տարտարոսն՝ եւ պահել՝ ի դատաստան :

5 Ոյա և ոչ՝ ի սկզբանն աշխարհին խնայեաց • բայց զուԹերորդն զՆոյ՝ զարդարութեանն քարոզ պահեաց՝ ի ջրհեղեղ աշխարհի՝ ամբարշտացն ածեալ :

6 Եւ զքաղաքս Սոդոմացւոցն և Գոմորացւոց զարձուցեալ յածիւն՝ դատեցաւ , օրինակ առ յապա ամբարշտացն կացուցանէր :

7 Եւ զարդարն զԼովա ձանձրացեալ յանկարգ գիջութեանն գըձեացից փրկեաց :

8 Քանզի ականատես և ականջալուր արդարն բնակեալ՝ ի մէջ նոցա , օր ըստ օրէ զիւր առաքինի ոգին նոցա անօրէն գործիւքն տանջէր :

9 Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել՝ ի փորձութենէ , և զանիրաւս պահել՝ ի տանջանս աւուրն դատաստանի :

10 Մանաւանդ՝ որ զՀետ մարմնոյ պղծալից ցանկութեանց իցեն երթեալ • արհամարհօղք տէրութեանն, ժպիրք , յանդգնաւք , չզանգիտեն զգաստան տալ :

11 Մինչ հրեշտակք զօրութեամբ և կարողութեամբ քան զնոսա մեծագոյնք՝ չածեն զնոքօք՝ ի Տեառնէ դատաստան չի կինալ , և նորանց հարուստ զուր չի հանիլ[1] :

4 Ինչու որ եթէ Ա՛ստուած մեղանչողաց հրեշտակներուն չխնայեց[10], հապա խաւարի կապանքով քցեց տարտարոսն՝ և պահել առաւ զանոնք վէրն[11] :

5 Եւ առաջին աշխարհքին ալ չխնայեց • հապա միայն Նոյին որ ութերորդն էր[12] են արդարութեան քարոզչին պահեց աշխարհքի ջրհեղեղին[13] , որ ամբարիշտներուն վերայ ածեց[14] :

6 Եւ Սոդոմացոց և Գոմորացոց քաղաքները մոխիր դարձնելով դատապարտեց արաւ[15] , (որ նորանով) յետոյ եկող ամբարիշտներուն օրինակ էր դնուած[16] :

7 Եւ փրկեց արդար Ղովտին՝ որ անկարգ գիջութեան վարմունքներուն ձանձրացել էր[17] :

8 Ինչու որ են արդարն նորանց մէջ բնակվելով որ աչքովին տեսաւ և ականջովին լսեց , օրէցօր իրան տուրք հոգին առնջուածներ նորանց անօրէն գործքերովին[18] :

9 Տէրն գիտուած աստուածապաշտներին փրկել փորձանքից , և անօրէններուն պահել դէպի դատաստանի օրն՝ որ տանջվին[19] :

10 Մանաւանդ նորանց՝ որ մարմնոյ պղծ ցանկութիւններու ետևէն են գնացած[20] . (որ) աւերութիւնքն անարգուածն , անամօթներ , յանդուգներ , որ չեն վախուած փառքն հայհոյել[21] :

11 Մինչ և հրեշտակներն որ զօրութիւնով և կարողութիւնով աւելի մեծ են նորանցից , հայհոյանքի դատաս-

(1) ը Օրին • լը • 35 : Յոբ • ե • 15 : (2) Յովհ • ը • 44 : ա Յովհ • գ • 8 : (10) Յհ • գ • 18 : Յոբ • գ • 8 : (11) Ա՛ռակ • ը • 34 : Յոբ • ի • 2 , 3 : (12) Ընդհ • փ • 1 • 7 • 20 : Նիէ • ժա • 7 • ա պիտր • գ • 20 : (13) ա պիտր • գ • 10 : (14) բ պիտր • գ • 6 : (15) Ընդհ • ժԹ • 24 : բ Օրին • ԼԹ • 23 : Յոբ • 7 : (16) Յհ • ԺԹ , 10 : (17) Ընդհ • ժԹ • 16 : (18) Սաղ • ՃԺԹ • 139 , 158 : Նախ • ը • ե • (19) Սաղ • ՀԾ • 17 , 18 : բ Նախ • ժ • 18 : (20) Յոբ , ե ; 7 , 8 , 10 , 19 : (21) Յոբ , 6 :

Digitized by Google

զՀայհոյութեանն դատաստան :

12 Ա՛յլ սոքա իբրև զանխօս անասունս ըստ բնածին բարուցն յեղծուածք և յապականութիւն՝ որոց չեն գիտակ , Հայհոյեն յապականութեան իւրեանց , և ապականանցին ,

13 Տանջեալք ՚ի վարձուց անիրաւութեան . որ ցանկութիւն զաւուրն փափկութիւն համարին . բծկանք արատաւորք՝ փափկացեալք ՚ի պատիրս իւրեանց . լեալ ձեզ խըրթնաճանակիքք :

14 Ունին հանգոյնս պոռնկաց՝ անդադարս ՚ի մեղաց , պատրեն զանձինս յոդղոդեաց . որ ունին սիրտ հարեալ զգահութեան , մանկունք անիծից :

15 Թողեալ զուղղորդ ճանապարհն՝ մոլորեցան . գՀետ երթեալ ճանապարհին Աղաւամայ Աէովրեան՝ որ զվարձս անիրաւութեան սիրեցին :

16 Իր կշտամբանս իւրոյ անօրէնութեանն ստացաւ զէշն անխօսուն . մարդկեղէն բարբառովն բարբառեալ՝ արգել զմարգարէին զանօրէնութիւն :

17 Ա՛յսպիսիքն են աղբիւրք անջուրք՝ և մէգք վարեալք ՚ի մրրկէ . որոց աղջամուղջք խաւարին յաւիտեան պահեալ կան :

18 Վասն զի մեծաբանս անտեաց բարբառեալ պատրեն գիշերութեամբք ցանկութեամբք մարմնոյ զայնոսիկ՝ որ սակաւս փախչեցին յայնցանէ՝ որ ՚ի մոլորութեանն շրջին .

19 Ելոցա ազատութիւն խոստանան , և ինքեանք ապականութեանն

ծառայք են բերում նորանց վերայ Տէրի տաւաջինն[23] :

12 Այլք սորանք ինչպէս անխօս անասունք՝ որ իրանց բնութեան պէս աւերվելոյ և ապականվելոյ համար են ծընված , հայհոյումն էն բաներըն որ չեն գիտում , և իրանց ապականութենովն կապականվին[23] ,

13 Անիրաւութեան վարձքովն տանջված[24] . որ նորանք ցանկութիւն են համարում էս օրվան փափկութիւնն[25] . որ պղծութեան հետևօղ պղտոր , և իրանց խաբեբայութեանովն փափկացած են[26] , և ձեր հացկերութեան ընկեր են լինում[27] :

14 Պոռնիկների նման աչքեր ունին , որ մեղքին չեն դադարիլ . խարուսվեն թեթևամիտների անձնեըրն . որ սրտեր ունին ագահութեանով բռնվված[28] անէծքի որդիք :

15 Իր շիտակ ճանապարհըն թողած՝ մոլորվեցան . Աեօրեան Աղաւամի ճանապարհին հետևելով անիրաւութեան վարձքըն սիրեցին[29] :

16 Իր իրան անօրէնութեանն յանդիմանող ստացաւ էշն անխօս եչին . որ մարդոյ ձայնովն խօսելով արգելց էն մարգարէի անօրէնութիւնըն :

17 Ասպէսիներն անջուր աղբիւրներ են , և մրրիկ քամուց քշված ամպեր . որ խաւարի թանձր մթութիւնն նորանց համար պահված կայ յաւիտեան[30] :

18 (Ինչու որ) մեծ մեծ դատարկ բաներ խօսելով գիՀութիւններով մարմնոյ անառակ ցանկութիւններով խաբուսին նորանց[31] , որ ճշմարտապէս փախչուսին նորանցից . որ մոլորութեան մէջն են մեռ գալիս[32] :

19 Նորանց ազատութիւն են խոստանում[33] , և իրանք ապականու-

(22) Հոռ . 9 : (23) Նբ՚ւ . ժբ . 3 : Հոռ . 10 : (24) Փիլ . գ . 19 : (25) Հբռ . ժգ . 13 : (26) Հոռ . 12 : (27) ա Կորնթ . ժա . 20 , 21 : (28) Հոռ . 11 : (29) Ելս . իբ . 5 . 7 . 21 . 23 . 26 : Հոռ . 11 : (30) Հոռ . 12 , 13 : (31) Հոռ . 16 : (32) Գործ . բ . 40 : բ Պետր . ա . 4 : Ա՚այր . 20 : (33) Պետ . ե . 18 : ա Պետր . բ . 18 :

Digitized by Google

ծառայք են . զի որով իւիք յաղթիցի ոք , նորին և ծառայ է :

20 Այլ եթէ փախուցեալք ի պղծութեանց աշխարհի գիտութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի , և դարձեալ ընդ նոյնս շաղեալք պատիցին՝ եղև նոցա վախճանն չար քան զառաջինն :

21 Այլ լաւ էր նոցա եթէ ըննաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեանն ճանապարհ . քանզի ծանեան՝ և յետս կացին ի սուրբ պատուիրանէն որ նոցա աւանդեցաւ :

22 Եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօնութեան , եթէ Ճուն դարձեալ անդրէն ի փսխածն իւր , և խոզ լուացեալ՝ ընդ տիղմ թաւալեալ :

թեան ծառանալ են . քանզի որ ինչ բանով որ մին (մարդ) յաղթվի , հենց նորան էլ ծառայ է[34] :

20 Պատճառն որ՝ եթէ աշխարհքի պղծութիւններից[35] փախան[36] միջ Տէր Յիսուսի Քրիստոսի գիտութեան , և միևել նորանում շաղախված պատատվին , նորանց վերջն չար կըլինի քան թէ առաջինըն[37] :

21 Ինչու որ լաւ էր նորանց՝ որ իսկի չըճանաչէին արդարութեան ճանապարհըն , քան թէ որ ճանաչեցին՝ և յետ քաշվեցան էն սուրբ պատուիրանքից որ տրվվաւ նորանց[38] :

22 Ուր նորանց լաւ յարմար է գալիս իսկաւտութեան էն ճշմարիտ առակն , թէ Ճուն միևել գառնալ գէպի իրան փսխածն , և լուացված խոզն ցեխի մէջն թաւալուլ[39] :

Գ Ի · Գ

1 Ա ստատուն Քրիստոսի դատաստան գալոյն Ճշմարիտ լինելն էն ծաղրանօք մարգիկ դէմ . 8 Ուրախաւէտ Աստուածապաշտներին որ Աստուծոյ երկայնամիտ լինելն յիշելով ապաշխարեն . 10 Յայտ կըտայ թէ ինչ կերպով աշխարհս վերջ պիտի լինի . 11 Ընդդրդոխ նորանք՝ որ էս բանիս սուրբ և անարատ կարգով ապառնին , 15 Այս խրատվին թէ Տէրի երկայնամիտ լինելն իրանց փրկութեան համար է , ինչպես որ պօղոս էլ գրել էր նորանց՝ իրան Թուղթերումն :

1 Այս ձեզ սիրելիք՝ երկրորդ Թուղթն է՝ որ գրեալեմ ձեզ , որ առանով ձեր հաստատ մաքներդ զարթնացնեմ յիշելոյ համար[1] :

2 Որ յիշէք էն խօսքերըն որ առաջուց ասված են սուրբ մարգարէներից՝ և ձեր առաքեալներից՝ էն Տէրի և փրկչի պատուիրանքներըն[2] :

3 Նայց առաջ էս գիտացէք , որ յետին օրերումն՝ բանի ասող չքաղ-

(34) Յովհ · ը · 34 : Հռոմ · գ · 16 : (35) ը Պետր · ա · 4 : Ա Յհ · 18 : (36) Մատթ · ժբ · 45 : Ա Յոհ · ժա · 26 : Եբր · գ · 4 : ժ · 26 , 27 : (37) ը Պետր · ա · 2 : (38) Ա Յոհ · ժբ · 17 , 18 : Յովհ · թ · 41 : ժե · 22 : (39) Ա Յոհ · ին · 11 : (1)ր Պետր · ա · 13 : (2) Յուդ · 17 :

Digitized by Google

մարհօղք՝ այսպանօղք, որ ըստ իւրեանց ցանկութեանց գնայցեն :

4 Եւ ասիցեն՝ Ո՞ր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ ձեայ 'ի սկզբանէ արարածոց :

5 Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որ զայն կամին. եթէ երկինք եղեն 'ի սկզբանէ՝ և երկիր 'ի ջրոց, և ջրովք հաստատեալ բանիւն Աստուծոյ.

6 ով ասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղեաւ սպանեալ կորեաւ :

7 Եւ այժմ երկինք և երկիր նովին բանիւ գանձեալ են. հրոյ պահեալք յօրն դատաստանի՝ և կորըստեան մարդկան :

8 Եւ այս ևս մի լիցի 'ի ձէնջ ծածկեալ՝ սիրելիք, զի մի օր Տեառն իբրև զհազար ամ է, և հազար ամ իբրև զմի օր :

9 Ո՛չ յապաղուացէ Տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր համարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յապաշխարութիւն :

10 Ո՛այլ եկեսցէ օր Տեառն իբրև զգող. յորում՝ երկինք ահագնապատառանցցեն, և քնութիւնք հրով կիզեալ լուծցին, և երկիր՝ և որ 'ի նմ, ծաղրանօղ (մարդիք) կըգան[2], որ իրանց ցանկութեանց (ուզածին) պէս կըվարվին[4] :

4 Եւ կասեն՝ Ո՞ր է նորա գալստեան աւետիքն. ինչու որ ներանից եւ տև որ հարքն վախճանվեցան՝ ամէն բան հենց էնպէս կենումէ մըննումէ աշխարհքի ստեղծագործութեան սկզբից եւս[5] :

5 Ասյց նորանք՝ որ էս են ուզում՝ էն բանըն մոռացել են, թէ երկինքն սկըզբից էլաւ, և երկիրս ջրից, և ջրով հաստատվեցաւ[6] Աստուծոյ խօսքովն[7].

6 Որոհամար էն հին աշխարհքըն՝ մին ժամանակ ջրհեղեղով ապականված կորաւ[8] :

7 Եւ հիմիկ երկինքն և երկիրս հենց էն խօսքովն կացած ամբարվածՙ են. կրակի համար պահվածՙ մինչև դատաստանի օրն, և ամբարիշտ մարդկանց կորուստն[10] :

8 Եւ էս էլ ձեզանից ծածուկ չըլինի՝ սիրելիներ, թէ Տէրի (առաջին) մին օր հազար տարոյ պէս է, և հազար տարի մին օր[11] :

9 Տէրն չի ուշացնիլ (իրան) աւետիքըն՝ ինչպէս որ մինքանիան ուշ են կարծում[12], բայց երկայնամիտ է լինում ձեզ վերայ[13]. պատճառն որ չի կամենում որ մինն կորչի[14], բայց որ ամէնքն ապաշխարութեան հասնեն[15] :

10 Ասյց Տէրի օրն գողի պէս կըգայ[16]. որ նորանում երկինքն սսսաիկ ձայնով անցկըկենայ, և տարրերքն կրակով վառվածՙ կըհալվին,

(3) ա Տիմ. գ. 1 : բ Տիմ. գ. 1 : Հուդ. 18 : (4) բ Պետր. բ. 10 : (5) Նայ. ճ. 19 : Ներս. ժէ. 15 : Նեղեմ. ժբ. 23. 27 : Ասպր. խգ. 48 : Ղուկ. ժբ. 45 : (6) Ասպր. խգ. 2 : Ածղ. 6 : Կած. ա. 17 : (7) Ննսնդ. ա. 6. 9 : Կասպ. ղբ. 6 : Նեբր. ժա. 3 : (8) Ննսնդ. է. 11. 21, 22, 23 : բ Պետր. բ. 5 : (9) Ալայր. 10 : (10) Ասպր. խե. 41 : բ Յովհ. ա. 8 : (11) Ասպր. ղ. 4 : (12) Ըզթաւ. բ. 3 : Եբր. փ. 37 : (13) Նայ. Լ. 18 : ա Պետր. գ. 20 : Ալայր. 15 : (14) Նեղեմ. ժբ. 23. 33 : ղբ. 11 : (15) Հռովմ. բ. 4 : (16) Ասպր. խգ. 43 : Ղուկ. ժբ. 39 : ա Յովհ. է. 8 : Հայտ. գ. 3 : ժգ. 15 :

Digitized by Google

նմա գործք գտանիցին ։

11 Եւ ի լուծանել այսպէս այսր
ամենայնի, որպիսի ինչ պարտ իցէ
ձեզ գտանել. այլ սուրբ և ա-
ստուածապաշտ կարգաւ ակնունել,
12 Եւ փութալ հասանել գալըս-
տեան աւուրն Տեառն. յորում եր-
կինք հրայրեացք լուծանիցին, և
բնութիւնք հրդեհեալ հալեցին ։
13 Այլ նորոյ երկնից՝ և նորոյ երկրի
ըստ աւետեացն հայեցեալ սպասի-
ցեմք, յորս արդարութիւնն բնա-
կէ ։
14 Վասն որոյ սիրելիք՝ այսոցիկ
սպասեալ, փոյթ յանձին ունիջիք՝
անբիծք և անարատք գտանել նմա
ի խաղաղութիւնն ։
15 Եւ զՏեառն երկայնմտութիւ-
նըն՝ փրկութիւն համարիջիք. զոր
օրինակ և սիրելի եղբայրն մեր Պօ-
ղոս՝ ըստ շնորհելոյ իմաստութեանն
նմա յԱստուծոյ՝ գրեաց ձեզ ։
16 Որպէս և յամենայն իսկ թուղթ-
սըն խօսի վասն այնոցիկ. յորս գը-
տանի ինչ ինչ դժուարիմաց, զոր
անուսմունքն և յոզոզողքն կամա-
կորեն. որպէս և զամենայն իսկ
գիրս առ լրութեանց անձանցն կո-
րուսան ։

17 Դուք այսու հետեւ սիրելիք՝ իբ-
րեւ զկանխագիտս զգուշասջիք, զի
մի անառակ մոլորութեամբն զգա-
ծեալք՝ անկանիջիք յաստեաց հաս-
տատութեանն ։

և երկիրն էլ և ամէն բանքն էլ՝
որ ներանում գտնըվին[17] ։
11 Որովհետև երբոր էս ամէնս էս-
պէս կըհալվին, ի՛նչպէսի պէտք է
գտնըվիք դուք՝ որ սուրբ և աս-
տուածապաշտ կարգով[18] սպասէք[19],
12 Եւ ջանք անէք հասնիք Տէրի
գալուս օրին, որ ներանում երկինքն
կրակով այրված կըքանդվին[20]. և
տարրերքն կրակ ընկած կըհալվին[21] ։
13 Մենք նորա խոստմունքին պէս,
նոր երկնքի և նոր երկրի մասին աս-
լով սպասումնք. որ ներանցում
արդարութիւն է բնակվում[22] ։
14 Վրա՛համար սիրելիներ՝ տարա՛ծ
սպասելով ջանք արէք՝ որ առանց
պղծութեան և անարատ գտնըվիք
նորա առաջին խաղաղութեան մէջ[23] ։
15 Եւ Տէրի երկայնամիտ լինելըն
փրկութիւն համարեցէք. ինչպէս ո-
մեր սիրելի եղբայր Պօղոսն էլ՝ էն
Աստուածանից իրան արվված իմաս-
տութեան պէս՝ գրեց ձեզ[24] ։
16 Ինչպէս որ հենց ամէն թղթե-
րումն էլ խօսում է այ բաներիս հա-
մար[25]. որ ներանցում մին քանի
դժուար հասկանալու բաներ կան.
որ ուսմունք չըգիտօղներն, և թե-
թևամտիներն նորանց կամքով ծը-
ռումն, ինչպէս որ հենց ամէն
գրքերն էլ՝ իրանց անձներըն կոր-
ցնելոյ համար ։
17 Սիրելիներ՝ դուք բա-
նը (առաջուց) հասկացօղների պէս[26]
զգոյշ կացէք[27]. որ չըլինի թէ ա-
նառակ մոլորութենով շաղազված՝
վեր ընկնիք էդ ձեր հաստատութե-
նից ։

(17) Պտմ. ՀԱ. 26 : Նահ. ծա. 6 : Պատմ. իդ. 35 : Պարթ. ժգ. 31 : Նբէ. ա. 11 : Հայտ. բ. 11 : իա. 1 : (18) ա Պետր. ա. 15 : (19) ա Պետր. ա. 7 : Տիտ. բ. 13 : (20) Պտմ. ծ. 3 : Նահ. լէ. 4 : (21) Պետ. ա. 4 : Ալէք. 10 : (22) Նահ. կե. 17 : կզ. 22 : Հայտ. իա. 1. 27 : (23) ա Պետր. ա. 8 : ժե. 53 : Փիլիպ. ա. 10 : ա Թես. գ. 13 : ե. 23 : (24) Հռոմ. բ. 4 : ա Պետր. ե գ. 20 : Ալէք. 9 : (25) Հռոմ. ը. 18 : ա Պետր. ժե. 24 : ա Թես. գ. 14 : (26) Պարթ. ժգ. 23 : բ Պետր. ա. 12 : (27) Նեհ. գ. 14 : բ Պետր. ա. 10, 11 : բ. 18 :

Digitized by Google

18 Ընձեցէք շնորհօք և գիտու-
թեամբն Տեառն մերոյ և փրկչին
Յիսուսի Քրիստոսի . նմա փառք՝
և այժմ , և յօրն յաւիտենից . ա-
մէն :

18 Ընձեցէք մեր Տէր և Փրկիչ
Յիսուսի Քրիստոսի շնորհքովն և
գիտութեանովն[29]. նորան (լինի) փառք՝
հիմիկ էլ՝ և մինչև յաւիտենական
օրն էլ . ամէն[29] :

(28) Նէե · գ · 15 : ա Պետր · բ · 3 : (29) բ Տիմ · գ · 18 : Յայտ · ա · 6 :

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Ազաքեալն կըսովրցնէ Ջրհատոյ անէքն՝ որ նորանով յաւիտենական կեանք և Աստուծոյ մեծ հաղորդութիւն ունինք • 5 Աստուած որ սրանով սուրբ վարք կ՚ունենանք , և թոյլ տանք թէ մեր հաւատքն չնչաբիա է , և հաստատ լինինք թէ Ջրհատոյ մահուանէ մեր մեզ թողութիւն կըլինի ։

1 Որ էրն ՚ի սկզբանէ . զորմէ լուաքն՝ որում՝ տեսանատեսն իսկ եղեաք • ընդ որ հայեցաքն , և ձեռք մեր շօշափեցին ՚ի վերայ բանին կենաց ։

2 Եւ կեանքն յայտնեցան , և տեսաք՝ և վկայեմք և պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն , որ էր առ Հօր՝ և երևեցաւ մեզ ։

3 Զոր տեսաքն և լուաք՝ պատմեմք և ձեզ , զի և դուք հաղորդութիւն ունիցիք ընդ մեզ • և մեր հաղորդութիւնն իցէ ընդ Հօր՝ և ընդ Որդւոյ իւրոյում Յիսուսի ՚Ջրհատոյ ։

1 Յո՛ր , որ սկզբանէն էր[1] , որ նորանցից լսեցինք , որ նորան հետ մեր աչքերովս տեսինք • որ նորա վերայ մտիկ առինք[2] , և մեր ձեռքն ներն դիպան կենաց բանին վերայ[3] ։

2 Եւ կեանքն[4] յայտնեցաւ մեզ , և տեսինք[5] , և վկայումինք[6] , և պատմումինք ձեզ (էն) յաւիտենական կենաց հետմէ[7] , որ Հօր մոտն էր՝ և երևեցաւ մեզ[8] ։

3 Յո՛ն որ տեսինք և լսեցինք՝ պատմումինք ձեզ , որ դուք էլ հաղորդութիւն ունենաք մեզ հետ[9] • և մեր հաղորդութիւնն լինի Հօր հետ՝ և նորա Որդոյ Յիսուսի ՚Ջրհատոյ հետ[10] ։

(1) Յովհ • ա • 1 • ա Յովհ • բ • 13 • (2) Յովհ • ա • 14 • բ Պետր • ա • 16 • ա Յովհ • գ • 18 • (3) Ղուկ • ի • 39 • Յովհ • ի • 27 • (4) Յովհ • ա • 4 • ժա • 25 • ժգ • 6 • (5) Հռովմ • ժգ • 20 • ա Տիմ • գ • 16 • ա Յովհ • գ • 5 • (6) Յովհ • իա • 24 • Պետր • բ • 32 • (7) ա Յովհ • ե • 20 • (8) Յովհ • ա • 1 , 2 • (9) Պետր • գ • 20 • (10) Յովհ • ժէ • 21 • ա Կորնթ • ա • 9 • ա Յովհ • բ • 24 •

Digitized by Google

4 Եւ զայս գրեմք ձեզ , զի ձեր ուրախութիւնն կատարեալ լիցի ։
5 Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ ՚ի նմանէ՝ և պատմեմք ձեզ . զի Աստուած լոյս է , և խաւար ՚ի նմա չկայ և ոչ մի ։
6 Եթէ ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն ունիմք ընդ նմա՝ և ՚ի խաւարի շրջիցիմք , սուտ եմք՝ և ոչ առնեմք զճշմարտութիւնն ։

7 Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք՝ որպէս և նա լոյս է , հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս . և արիւնն Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց ։

8 Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք , զանձինս խաբեմք . և ճշմարտութիւն ՚ի մեզ ոչ գոյ ։
9 Եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր , հաւատարիմ է նա՝ և արդար առ ՚ի թողուլ զմեղս մեր , և սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ ։
10 Եւ եթէ ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեղաք , սուտ առնեմք զնա , և բան նորա ոչ է ՚ի մեզ ։

4 Եւ էս գրումենք ձեզ , որ ձեր ուրախութիւնն կատարեալ լինի[11] ։
5 Եւ էս է էն աւետիքն՝ որ նորանից լսեցինք՝ և պատմումենք ձեզ[12] . թէ Աստուած լոյս է , և իսկի մին խաւար չկայ նորանում[13] ։
6 Եթէ ասենք՝ թէ հաղորդութիւն ունինք նորա հետ , և խաւարի մէջ մանգանք , սուտ ենք ասում՝ և ճշմարտութիւնըն չենք անում[14] ։

7 Այլ եթէ լուսոյ մէջ մանգանք՝ ինչպես որ նա լոյս է , (ապա) հաղորդութիւն ունինք իրար հետ . և նորա Որդոյ Յիսուսի Քրիստոսի արիւնն մեզ սրբում է ամէն մեղքից[15] ։
8 Եթէ ասենք՝ թէ մեղք չունինք , մեր անձներըս ենք խաբում[16] . և ճշմարտութիւն չկայ մեզանում[17] ։
9 Այլ եթէ մեր մեղքերն խոստովանվինք , նա հաւատարիմ է և արդար՝ որ մեր մեղքերն թողէ մեզ[18] , և մեզ ամէն անիրաւութիւնից սրբում է[19] ։
10 Եթէ ասենք՝ թէ մեղք չունինք , սուտ ենք անում նորան , և նորա խօսքն մեզանում չէ ։

ԳԼ · Ե

1 Մէն մեկիմատութիւն կըսայ ակուսութինով մեզ անօղներին . 3 Ընտիրներնե թէ չմոռատացիս Աստուած Ճանաչելն՝ նորա պատուիրանքներին պահելն է , 9 Ն· մեր եղբայրներին սիրելն , 15 Ն· աշխարհս չսիրելն է . 18 Պէտք է որ մնդրցնօղներից հեռու կանք , 20 Որ նորան մնդրտութիննցն Քրիստոսնեանները ազատ կըլինին՝ հաւատաց հաւատքով և սուրբ վարքով պահվածն ։

1 Որդեակք իմ , զայս գրեմ ձեզ՝ զի մի մեղիցէք , և եթէ ոք

1 Ի՛մ որդեակներս , էս եմ գրում ձեզ՝ որ չըմեղանչէք , և եթէ

(11) Յովհ . ժե . 11 : ժզ . 24 : բ Յովհ . 12 : (12) ա Յովհ . գ . 11 : (13) Յովհ . ա . 9 : բ . 13 : Բ . 5 : ժբ . 35 , 36 : (14) բ Կորնթ . գ . 14 : ա Յովհ . բ . 1 : (15) ա Կորնթ . գ . 11 : Լբ՚ին . ա . 7 : Լբ՚ը . Բ . 14 : ա Պետր . ա . 19 : ա Յովհ . բ . 2 : Հայոց . ա . 5 : (16) գ Թագաւ . ը . 46 : բ Մ՚նաց . գ . 36 : Յոբ . Բ . 3 : ժբ . 14 : ՔՀ . 4 : Ես՚այ . ք . 9 : Յ՚ով . է . 20 : Յով՚ . գ . 3 : (17) ա Յովհ . բ . 4 : (18) Սաղ . ղբ . 5 : Ես՚այ . խը . 13 : (19) Ա՚ք . 7 : Սաղ . ծա . 3 :

Digitized by Google

ղիցե զք , ունիմք բարեխօս առ Ք֊ս առաւծ զՅիսուս Քրիստոս զարդարն՝ և զանարատս ։

2 Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց · և ոչ եթէ մերոցն միայն՝ այլ և ամենայն աշխարհի ։

3 Եւ յայսմիկ գիտեմք՝ եթէ ծանեաք զնա , եթէ զպատուիրանս նորա պահիցեմք ։

4 Որ ասիցէ՝ եթէ Ես ճանաչեմ զնա և զպատուիրանս նորա ոչ պահիցէ , սուտ է՝ և ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ ։

5 Իսկ որ պահիցէ զբան նորա , արդարև ի նմա կատարեալ է սէրն Ք֊ս առաւծոյ · այսմիկ ճանաչեմք՝ եթէ ի նմա եմք ։

6 Որ ասիցէ ի նմա բնակել , պարտ է նմանապէս գնալ՝ որպէս և նա գնաց ։

7 Սիրելիք՝ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ ձեզ , այլ զհին պատուիրանն՝ զոր ի սկզբանէ ունէիք · և հին պատուիրան՝ բանն է զոր լսեցուք ։

8 Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարիտ ի նմա և ի ձեզ · զի խաւարն անցանէ , և լոյսն ճշմարիտ արդէն իսկ երևի ։

9 Որ ասէ եթէ ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր ատիցէ , սուտ է՝ և ի խաւարի է տակաւին ։

10 Որ սիրէ զեղբայր իւր , ի լոյս բնակէ՝ և գայթագղութիւն ի նմա չիք ։

որ միանգամ մեղանչէ , քարեխօս ունիմք Ք֊ս առաւծոյ մեռ Յիսուս Քրիստոսն՝ էն արդարն և անարատն ։

2 Եւ նա է մեր մեղաց քաւութիւնն · և ոչ թէ միայն մերոյն՝ այլ էլ ամէն աշխարհքիցն ։

3 Եւ սորանով ենք գիտեմ՝ որ ճանաչեցինք նորան , թէ որ նորա պատուիրանքներըն պահենք ։

4 Որ ասէ՝ թէ Ճանաչեցի նորան՝ և նորա պատուիրանքներըն չըպահէ , սուտ է՝ և ճշմարտութիւն չըկայ նորանում ։

5 Որոյ նա՝ որ նորա խօսքըն պահումէ , շիտակ է՝ որ Ք֊ս առաւծոյ սէրըն նորանում կատարեալ է · սորանով ճանաչումենք որ նորանում ենք ։

6 Որ ասում թէ նորանում եմ բնակվում · էնպէս պէտք է գնայ , ինչպէս որ նա գնաց ։

7 Սիրելիներ՝ չէ թէ մին նոր պատուիրանք եմ գրում ձեզ , բայց էն հին պատուիրանքըն՝ որ սկըզբիցն ունէիք · և հին պատուիրանքն էն խօսքն է՝ որ լսեցիք ։

8 Դարձեալ նոր պատուիրանք եմ գրում ձեզ՝ որ ճշմարիտ է նորա նում և ձեզանում · ինչու որ խաւարըն անցկացաւ , և ճշմարիտ լոյսն հենց հիմիկ երևում ։

9 Որ ասէ թէ լուսոյ մէջն է՝ և իրան եղբօրն ատէ , սուտ է՝ և դեռ հիմիկ խաւարի մէջն է ։

10 Որ սիրէ զեղբայր իւր , լուսոյ մէջն է բնակվում , և գայթագղութիւն չըկայ նորանում ։

(1) Հռով · ը · 34 : ա Յհ · բ · 8 : Նէբ · է · 25 : թ · 24 : (2) Հռով · գ · 25 : բ Կորնթ · է · 18 : ա Յովհ · ա · 7 : գ · 10 : (3) Յովհ · ա · 29 · գ · 42 : ժա · 51 52 : ա Յովհ · գ · 14 : (4) ա Յովհ · ա · 6 : գ · 20 : (5) ա Յովհ · ա · 8 : (6) Յովհ · ժգ · 21 · 23 : (7) ա Յովհ · գ · 12 : (8) ա Յովհ · գ · 12 : (9) Յովհ · ժբ · 8 , 5 : (10) Պսաղ · ժա · 29 : Յովհ · ժգ · 15 : ա Պետր · բ · 21 : (11) բ Յովհ · 5 : (12) ա Յովհ · գ · 11 : բ Յովհ · 5 : (13) Յովհ · ժգ · 24 : ժբ · 12 : (14) Հռով · ժգ · 12 : Նփես · ե · 8 : ա Թես · ե · 5 · 8 : (15) Յովհ · ա · 9 : բ · 12 : ժբ · 35 : (16) ա Կօրնթ · ժգ · 2 : բ Պետր · ա · 9 : ա Յովհ · դ · 14 , 15 : (17) ա Յովհ · գ · 16 : (18) բ Պետր · ա · 19 :

Digitized by Google

11 Իսկ որ առեալ զեզբայրս իւր՝ ՚ի խաւարի է, և ընդ խաւար շրջի. և ոչ գիտէ յո՛ երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա ։

12 Գրեմ ձեզ որդեակք՝ զի թողեալ են ձեզ մեղքն ձեր վասն անուան նորա ։

13 Գրեմ ձեզ հարք՝ զի ծանեայք զսկիզբնէն զայն՝ որ ՚ի սկզբանէն է. գրեմ ձեզ երիտասարդք՝ զի յաղթեցիք զչարն ։

14 Գրեցի ձեզ մանկունք՝ զի ծանեայք զհայրն. գրեցի ձեզ հարք՝ զի ծանեայք զայն որ ՚ի սկզբանէն է. գրեցի ձեզ երիտասարդք՝ զի զօրաւոր էք, և բանն Աստուծոյ ՚ի ձեզ բնակէ, և յաղթեցիք զչարն ։

15 Մի՛ սիրէք զաշխարհ և զոր ինչ յաշխարհի է ։

16 Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է ՚ի նմա սէր հօր. զի ամենայն որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն մարմնոյ, և ցանկութիւն աչաց, և ամբարտաւանութիւն մարդկան, որ ոչ է ՚ի հօրէ՝ այլ յաշխարհէ ասեի է ։

17 Եւ աշխարհս անցանէ, և ցանկութիւն նորա. իսկ որ առնէ զկամս Աստուծոյ՝ մնայ յաւիտեան ։

18 Մանկտիկք՝ յետին ժամանակ է, և որպէս լուարուք՝ եթէ Անտեառն գալոց է, և արդէն իսկ նեռինք բազումք եկեալ են, որով մարթեմք իմանալ՝ եթէ յետին ժամանակ է ։

11 Քանզի նա՝ որ իրաւն եղբօրըն ատումն, խաւարումն է, և խաւարի մէջ է մինն գալիս, և չի գիտումն թէ ուր է գնումն. ինչու որ խաւարն կուրացրուց նորա աչքերըն[19] ։

12 Գրումիմ ձեզ որդեակներ՝ պատճառն որ ձեր մեղքերն թողված են ձեզ՝ նորա անունի համար[20] ։

13 Գրումիմ ձեզ հարք՝ ինչու որ դուք ճանաչեցիք նորան՝ որ սկզբիցն է[21]. գրումիմ ձեզ երիտասարդներ՝ ինչու որ դուք յաղթեցիք չարին ։

14 Գրեցի ձեզ մանկունք՝ պատճառն որ դուք ճանաչեցիք Հօրըն. գրեցի ձեզ հարք՝ պատճառն որ դուք ճանաչեցիք նորան՝ որ սկզբիցն (է). գրեցի ձեզ երիտասարդներ՝ ինչու որ դուք զօրացել էք, և Աստուծոյ խօսքն բնակվումէ ձեզով, և դուք յաղթեցիք չարին[22] ։

15 Մի՛ սիրէք աշխարհըս, և ոչ էլ են ամէնըն՝ որ աշխարհիս մէջն է[23] ։

16 Քանի որ մինն աշխարհքին սիրէ Հօր սէրն նորանումէ չէ[24]. պատճառն որ ամէն ինչ որ աշխարհքումըս է՝ մարմնոյ ցանկութիւն է, և աչքերի ցանկութիւն է[25], և էս կեանքիս ամբարտաւանութիւն. որ Հօրիցն չէ բայց էս աշխարհքիցս է ։

17 Եւ աշխարհքս անց է կենումն, և (նորա) ցանկութիւնըն էլ[26]. բայց նա՝ որ Աստուծոյ կամքըն անումէ, յաւիտեան ճնումէ ։

18 Մանրդեակներ[27]՝ յետին ժամանակն է, և ինչպէս որ լսեցիք[28] թէ Անտեն գալու է[29], և հիմիկ շատ նեռեր եկել են[30], որ սորանով կարօղ ենք իմանալ՝ թէ յետին ժամանակն է[31] ։

(19) Յովհ · ժբ · 25 ։ (20) Ղուկ · ի · 47 ։ Գործ · ժ · 43 ։ ժգ · 38 ։ ա Յովհ · ա · 7 ։ (21) ա Յովհ · ա · 1 ։ (22) Ա Յովհ · գ · 10 ։ (23) Հռով · ժբ · 3 ։ (24) Պաւլ · գ · 24 ։ Գործ · ա · 10 ։ Յով · ի · 4 ։ (25) Ժող · ե · 11 ։ (26) ա Կորնթ · ե · 31 ։ Յով · ա · 10 ։ գ · 14 ։ ա Պետր · ա · 24 ։ (27) Յովհ · իա · 5, (28) Նիւ · ա · 3 ։ (29) բ Թես · բ · 3 ։ բ Պետր · բ · 1 ։ ա Յովհ · դ · 3 ։ (30) Մատ · իդ · 5 · 24 ։ բ Յովհ · 7 ։ (31) ա Տիմ · դ · 1 ։ բ Տիմ · գ · 1 ։

Digitized by Google

19 Ա՛ւա ՛ի ինձ եւիւն , այլ ոչ էին ՛ի մեզ . զի եթէ ՛ի մեզ էին՝ ապա առ մեզ մնային . այլ զի յայտնի լինիցին՝ եթէ ոչ էին ամենեքին ՛ի մեզ :

20 Եւ դուք օծութիւն ունիք առ ՛ի Սրբոյն , և գիտէք ամենեքին :

21 Ո՛չ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն , այլ թէ գիտէք զնա . և թէ՝ զի ամենայն սուտ ոչ է ՛ի ճշմարտութենէ անտի :

22 Ո՞րկ ո՞իցէ սուտ , եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ Յիսուս չէ Քրիստոսն . նա իսկ է հակառակն , որ ուրանայ զՀայր և զՈրդի :

23 Ամենայն որ ուրանայ զՈրդի , և ոչ զՀայր ընդունի . իսկ որ խոստովանի զՈրդի՝ նա և զՀայր ընդունի :

24 Դուք՝ զոր լուարուքն ՛ի սկզբանէ՝ ՛ի ձեզ բնակեսցէ . զի եթէ ՛ի ձեզ բնակեսցէ՝ զոր ՛ի սկզբանէն լուարուք , և դուք յՈրդի և ՛ի Հայր բնակեսջիք :

25 Եւ այս են աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկեանս յաւիտենական :

26 Գրեցի ձեզ , զի մի ոք զձեզ մոլորեցուցանիցէ :

27 Եւ դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք ՛ի նմանէ՝ բնակեսցէ ՛ի ձեզ . և չէ ինչ պիտոյ՝ թէ ոք ըզձեզ ուսուսցէ , այլ որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ զձեզ վասն ամենայնի . և ճշմարիտ է՝ և չէ սուտ . և որպէս ուսոյցն զձեզ , կայք ՛ի նմա :

19 Ի՝նչպանից դուրս գնացին , բայց մեզանից չէին[32] . որպէսզեան որ՝ եթէ մեզանից լինէին , ապա մեզ հետ կրնային[33] . բայց որ յայտնի լինէին՝ թէ նորանք ամենքն մեզանից չէին[34] :

20 Եւ դուք օծութիւն ունիք[35] (էն) Սրբից[36] , և ամէն (բան) գիտաւ-մէք[37] :

21 Ձի գրեցի ձեզ՝ իբր թէ ճըշմարտութիւնըն չէք գիտում , բայց որ գիտաւմէք նորան . և որ ամէն ստութիւն էն ճշմարտութենից չէ :

22 Ո՞վայ ինի է սուտ , եթէ ոչ նա՝ որ ուրանաւմէ թէ Յիսուսն չէ Քրիստոսն . հենց նա է հակառն , որ ուրանաւմէ Հօրըն և Որդին[38] :

23 Ամէն ով որ Որդին ուրանաւմէ , Հօրըն էլ չի ընդունում[39] . նա որ Որդին դաւանաւմէ , Հօրն էլ ընդունաւմէ[40] :

24 Դուք՝ էն որ լսեցիք սկըզբից , թող բնակվի ձեզանում[41] . պատճառն որ՝ թէ որ բնակվի ձեզանում էն՝ որ սկըզբից լսեցիք , դուք էլ կըբնակվիք Որդով և Հօր մէջն[42] :

25 Եւ էս է (էն) աւետիքն՝ որ նա աւետարանեց մեզ՝ (այսինքն) յաւիտենական կեանքըն[43] :

26 Ես գրեցի ձեզ՝ որ չըլլնեն թէ մինն մոլորացնէ ձեզ[44] :

27 Եւ դուք էն օծութիւնըն , որ նորանից ընդունեցիք՝ կըբնակվի ձեզանում[45] . և պէտք չէ որ մինն սովորցնէ ձեզ[46] . բայց ինչպես որ նորա օծութիւնն սովորցնում ձեզ ամէն (բանի) համար . էապես էլ ճշմարիտ է՝ և սուտ չէ . և ինչպես որ նա սովորցրուց ձեզ՝ կացէք նորանում[47] :

(32) բ Օրին . ժգ . 13 : Ա՝ռաք . բա . 9 : Գործ . բ . 30 : (33) Ա՝ռաք . բգ . 24 : Յովհ . գ . 37 : ժ . 28 , 29 : բ Տիմ . բ . 19 : (34) ա Կորնթ . ժա . 19 : (35) բ Կորնթ . ա . 21 : Եբր . ա . 9 : Ա՝ռաք . 27 : (36) Ա՝ռաք . ա . 24 : Գործ . գ . 14 : (37) Յովհ . ժ . 4 , 5 : ժգ . 26 : ժգ . 13 : Ա՝ռաք . 27 : (38) ա Յովհ . գ . 3 : բ Յովհ . 7 : (39) Յովհ . ժե . 23 : բ Յովհ . 9 : (40) Յովհ . ժգ . 7 . 9 , 10 : ա Յովհ . գ . 15 : (41) բ Յովհ . 6 : (42) Յովհ . ժգ . 23 : ա Յովհ . ա . 3 : (43) Յովհ . ժե . 3 : ա Յովհ ա . 2 : ե . 11 : (44) ա Յովհ . գ . 7 : բ Յովհ . 7 : (45) Ա՝ռ . 20 , (46) Եփես . լ . 33 , 34 : Եբր . ը . 10 , 11 : (47) Յովհ , ժգ . 26 : ժգ . 13 : Ա՝ռ . 20 :

Digitized by Google

28 Եւ այժմ՝ որդեակք՝ կացէք՝ ի նմին · զի եթէ յայտնեսցի , ունիցիք համարձակութիւն , և մի ամաչեսցուք ՝ի նմանէ ՝ի գալստեանն նորա ։

29 Եթէ գիտիցէք՝ եթէ արդար է նա , իմասջիք՝ եթէ ամենայն՝ որ առնէ զարդարութիւն՝ առ ՝ի նմանէ է ծնեալ ։

28 Եւ հիմիկ որդեակներ՝ կացէք նորանում · որ երբոր (նա) կը յայտնուի , համարձակութիւն ունենանք[48], և չամաչենք նորանից՝ նորա գալստեան ժամանակումն[49] ։

29 Եթէ գիտեալ էք՝ որ նա արդար է[50] , կիմանաք թէ ամէն ով որ արդարութիւն կանէ՝ նորանից է ծնեալ[51] ։

ԳԼ · Գ

1 Պատճառ մեզ չնորհած զարմանալի սէրը՝ որ նորանով մեզ իրան որդիք արաւ , 3 Ընդունելի յորդորանք մեզ որ ֆալանգութենով նորա պատուիրանները պահենք , 11 Եւ սիրել եղբայրներն պէս իրար սիրունք ։

1 Տեսէք՝ ինչպիսի սէր չնորհեաց մեզ Հայր · զի որդիք Աստուծոյ կոչեսցուք և մեք · վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի ոչ ծանեաւ զնա ։

2 Սիրելիք՝ այժմ որդիք Աստուծոյ եմք , և չեւևա՛ս է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք · գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք , զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն ։

3 Եւ ամենայն՝ որ ունի զայս յոյս յանձին , սրբէ զանձն իւր՝ որպէս և նայն սուրբ է ։

4 Ամենայն՝ որ զմեղս գործէ , նա և զանօրէնութիւն առնէ , և ինքն իսկ մեղքն անօրէնութիւն է ։

5 Եւ գիտեմք՝ զի նա յայն սակս յայտնեցաւ՝ զի զմեղս բարձցէ , և ՝ի նմա մեղք ոչ են ։

1 Տեսէք՝ թէ Հայրն ինչպէսի սէր չնորհեց մեզ · ու Աստուծոյ որդիք կոչվինք[1] · սրահամար աշխարհքն չէի ճանաչում մեզ , պատճառն որ նորան (էլ) չըճանաչեց[2] ։

2 Սիրելիներ՝ հիմիկ Աստուծոյ որդիք ենք[3] , և դեռ յայտնի չէ՝ թէ ինչ պիտի լինինք[4] · գիտումենք՝ թէ երբոր նա կըյայտնվի՝ նորան նըման կըլինինք[5] , ինչու որ կըտեսնենք նորան՝ ինչպէս որ է[6] ։

3 Եւ ամէն ով որ էս յոյսս ունի իրանում , սրբումէ իրան անձըն՝ ինչպէս որ նա սուրբ է[7] ։

4 Ամէն ով որ մեղք է գործում , նա անօրէնութիւն էլ է անում , և հենց ինքն մեղքն անօրէնութիւն է[8] ։

5 Եւ գիտումենք՝ թէ նա նրա համար յայտնվեցաւ[9] որ (մեր) մեղքերըն վերառնէ[10] · և նորանում մեղք չըկայ[11] ։

(48) ա Հովհ · գ · 2 ։ (49) ա Հովհ · գ · 17 ։ (50) Գործ · իբ · 14 ։ (51) ա Հովհ · գ · 7 · 10 ։ (1) Հովհ · ա · 12 ։ (2) Հովհ · ժե · 18 , 19 ։ ժգ · 3 ։ ժե · 25 ։ (3) Նաայ · ծգ · 5 ։ Ղևովհ · ը · 15 ։ Գաղ · գ · 26 ։ դ · 6 ։ ա Հովհ · ե · 1 ։ (4) Ղևովհ · ը · 18 ։ բ Կորնթ · գ · 17 ։ (5) Ղևովհ · ը · 29 ։ ա Կորնթ · ժե · 49 ։ Փիլիպ · գ · 21 ։ Կող · գ · 4 ։ բ Պետր · ա · 4 ։ (6) Հոբ · ժԲ · 26 ։ Պաւլ · ժգ · 11 ։ Մատթ · ե · 8 ։ ա Կորնթ · ժգ · 13 ։ բ Կորնթ · ե · 7 ։ (7) ա Հովհ · գ · 17 ։ (8) Ղևովհ · գ · 15 ։ ա Հովհ · ե · 17 ։ (9) ա Հովհ · ա · 2 ։ (10) Նաայ · ծգ · 5 , 6 · 11 ։ ա Տիմ · ա · 15 ։ Նբր · ա · 3 ։ Բ · 26 ։ ա Պետր · բ · 24 ։ (11) բ Կորնթ · ե · 21 ։ Նբր · գ · 15 ։ Բ · 28 ։ ա Պետր · բ · 22 ։

Digitized by Google

6 Ո՛մնայն որ ՚ի նմա է հաստատեաալ՝ ոչ մեղանչէ · և ամենայն որ մեղանչէ , ոչ ետես զնա՝ և ոչ ծանեաւ զնա ։

7 Ա՝նկուն՛ք՝ մի ոք զձեզ խաբեցէ · որ առնէ զարդարութիւն , արդար է՝ որպէս և նայն արդար է ։

8 Եւ որ առնէ զմեղս՝ ՚ի Սատանայէ է , զի ՚ի սկզբանէ Սատանայ մեղանչէ · վասն այսորիկ յայտնեցաւ Որդին Ա՛ստուծոյ՝ զի լուծցէ զգործս Սատանայի ։

9 Ո՛մնայն որ յԱ՛ստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ , զի սերմն նորա ՚ի սմա մնայ · և ոչ կարէ մեղանչել , զի յԱ՛ստուծոյ է ծնեալ ։

10 Ա՛յսուիկ յայտնի են ՚ի միմեանց որդիք Ա՛ստուծոյ՝ և որդիք Սատանայի · ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ նա յԱ՛ստուծոյ , և որ ոչ սիրէ զեղբայր իւր ։

11 Զ՚ի այս է պատուիրանն՝ զոր լուարուք ՚ի սկզբանէ՝ զի սիրեսցուք զմիմեանս ։

12 Ո՛չ որպէս Կայէնն ՚ի չարէ անտի էր՝ և սպան զեղբայրն իւր , և յո՞ի սակս սպան զնա · զի իւր գործքն չար էին , և եղբօրն բարիք ։

13 Եւ մի՛ ինչ զարմանայք եղբարք , եթէ աշխարհ զձեզ ատեայ ։

14 Մ՚եք գիտեմք՝ զի փոխեցաք ՚ի մահուանէ ՚ի կեանս , քանզի սիրեմք զեղբարս · իսկ որ ոչն սիրէ , անց

6 Ո՛ւրախ ով որ նորանուա՛ հաստատված է՝ չի մեղանչուա · և ուրախ ով որ մեղանչուա , ո՛չ տեսաւ նորան՝ և ո՛չ ճանաչեց նորան[13] ։

7 Ա՝նկուն՛ք՝ չըլինի թէ ոմանք ձեզ խաբէ[14] · նա՝ որ արդարութիւն է անուա՝ արդար է , ինչպէս որ նա՛ էլ արդար է[15] ։

8 Եւ նա որ մեղք է անուա՝ Սատանայիցն է · ինչու որ Սատանան հենց սկըզբիցն մեղանչուա[16] · ընդրահամար յայտնըվեցաւ Ա՛ստուծոյ Որդին՝ որ Սատանայի գործքերըն քանդէ[17] ։

9 Ո՛րն ով որ Ա՛ստուածանից է ծնված՝ մեղք չի անուա[18] · ինչու որ նորա սերմն մնուա նորանուա · և կարող չէ մեղանչել , պատճառն որ Ա՛ստուածանից է ծնված[19] ։

10 Որոնով իրարից (ջոկված) յայտնի են Ա՛ստուծոյ որդիքն՝ և Սատանայի որդիքն · ամէն ով որ արդարութիւն չի անուա՝ նա Ա՛ստուածանից չէ[20] , և ո՛չ էլ նա՝ որ իրան եղբօրըն չի սիրուա[21] ։

11 Ինչու որ էս է էն պատուիրանքըն՝ որ սկըզբիցն լսեցիք[22] որ պէտք է իրար սիրենք[23] ։

12 Ա՛ղ թէ ինչպէս Կայէնն (որ) չարիցն էր՝ և իրան եղբօրըն սպանեց[24] · և ինչու համար սպանեց նորան · Նրան համար որ իրան գործերըն չար էին և եղբօրն բարի ։

13 Ա՛ի զարմանաք եղբարք , եթէ աշխարհըս ատէ ձեզ[25] ։

14 Մ՚ենք գիտումենք՝ որ մահիցն դէպի կեանքն փոխվեցանք · պատճառն որ եղբարներին սիրումենք[26] ·

(12) ա Յովհ · բ · 4 ։ գ · 8 ։ գ Յովհ · 11 ։ (13) ա Յովհ · բ · 26 ։ (14) Յովհ · ժբ · 5—9 ։ Հովհ · բ · 13 ։ ա Յովհ · բ · 29 ։ (15) Ա՛ռաք · ժգ · 28 ։ Յովհ · բ · 24 ։ (16) Ա՛ննք · գ · 15 ։ Ղովհ · ժ · 13 ։ Յովհ · ժգ · 11 ։ Լբէր · բ · 14 ։ (17) ա Յովհ · ե · 18 ։ (18) ա Գիւտ · ա · 23 ։ (19) ա Յովհ · բ · 29 ։ (20) ա Յովհ · գ · 8 ։ (21) ա Յովհ · ա · 5 ։ բ · 7 ։ (22) Յովհ · ժգ · 34 ։ ժե · 12 ։ Ա՛ռաք · 23 ։ ա Յովհ · գ · 7 · 21 ։ բ Յովհ · 5 ։ (23) Ա՛ննք · գ · 4 · 8 ։ Լբէր · ժա · 4 ։ Յովհ · 11 ։ (24) Յովհ · ժե · 18 , 19 ։ ժե · 14 ։ բ Տի՛մ · գ · 12 ։ (25) ա Յովհ · բ · 19 ։

Digitized by Google

դէն ՚ի Տէհուն Ծով ։

15 Ո՛մնայն որ տեսեալ զեղբայր իւր՝ մարդասպան է. և գիտէք՝ զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս յանձին հաստատեալ ։

16 Ո՛յսուիկ գիտացաք զսէրն Ո՛ստուծոյ. զի նա զանձն իւր եդ վասն մեր. և մեք վասն եղբարց մերոց պարտիք դնել զանձինս ։

17 Այր ունիցի զկեանս ինչ զաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք՝ և փակիցէ զգութս իւր առ ՚ի նմանէ, զիա՞րդ սէրն Ո՛ստուծոյ ՚ի նմա իցէ քնակեալ ։

18 Ո՛րդեակք՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք և ճշմարտութեամբ ։

19 Եւ այսուհետ գիտեմք ծանուցեալք՝ եթէ ՚ի ճշմարտութենէ անտի իցեմք. և առաջի նորա արասցուք հանդէս սրտից մերոց ։

20 եթէ սոգասանիցեն զմեզ սիրտք մեր՝ այլ Ո՛ստուած մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ զամենայն ։

21 Այրեալիք՝ եթէ սիրտք մեր զմեզ ոչ սոգասանիցեն, համարձակութիւն ունիմք առ Ո՛ստուած ։

22 Եւ զոր ինչ հայցեմք, առնումք ՚ի նմանէ. զի զպատուիրանս նորա պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք ։

բայց ով որ չի սիրում եղբայրներին, մահի մէջն է մնում[28] ։

15 Ո՛ւմէն ով որ իրան եղբօրըն ատում՝ մարդասպան է[27]. և գիտէք՝ որ ամէն մարդասպան յաւիտենական կեանքըն չունի հաստատուած իրանում[28] ։

16 Այրանով գիտացինք Ո՛ստուծոյ սէրըն, որ նա իրան անձըն դրաւ մեզ վերայ[29]. և մենք էլ պէտք է մեր եղբարց վերայ դնենք մեր անձնները ։

17 «Լա՛» որ էս աշխարհքիս ապրանքըն ունենայ, և տեսնէ թէ իրան եղբայրն կարօտ է մին բանի, և իրան գութըն փակէ նորանից[30], էլ ի՞նչպես Ո՛ստուծոյ սէրն քնակած կըլինի նորանում[31] ։

18 Ո՛րդեակներ՝ ո՛չ թէ խօսքերով և լեզուներով սիրենք, այլ գործքով և ճշմարտութենով[32] ։

19 Եւ սրանով ճանաչվումենք՝ թէ էն ճշմարտութենից ենք[33]. և նորա առաջի կանենք մեր սրտերի քընութիւնըն ։

20 Եթէ մեր սրտերն մեղադրեն մեզ, բայց Ո՛ստուած մեր սրտերից էլ աւելի մեծ է՝ և ամէն բան գիտէ[34] ։

21 Ո՛րբելինե՛ր՝ եթէ մեր սրտերն չըմեղադրեն մեզ, համարձակութիւն ունինք Ո՛ստուծոյ առաջին[35] ։

22 Եւ ինչ որ խնդրենք՝ կառնենք նորանից[36]. պատճառն որ նորա պատուիրաններըն՝ որ նորա առաջին հաճոյ են, անումենք[37] ։

(26) ա Յովհ. բ. 9. 11 ։ (27) Մատթ. է. 21, 22 ։ ա Յովհ. դ. 20 ։ (28) Կազ. է. 21 ։ Յայտ. խ. 8 ։ (29) Յովհ. գ. 16 ։ Ժե. 13 ։ Հռոմ. է. 8 ։ Ա՛թես. է. 2. 25 ։ ա Յովհ. դ. 9. 11 ։ (30) բ Ա՛րին. Ժե. 7 ։ Ա՛լոհ. գ. 11 ։ (31) ա Յովհ. դ. 20 ։ (32) Ա՛գի. Լդ. 31 ։ Հռոմ. Ժբ. 9 ։ Ա՛թես. դ. 15 ։ Յակ. բ. 15 ։ ա Պետր. ա. 22 ։ (33) Յովհ. Ժը. 37 ։ ա Յովհ. ա. 8 ։ (34) ա Կորնթ. գ. 4 ։ (35) Յովբ. խբ. 26 ։ Ա՛ղբ. ժ. 22 ։ ա Յովհ. բ. 28 ։ դ. 17 ։ (36) Ա՛ռակ. Լգ. 15 ։ Ա՛ղբ. 18, 19 ։ Ո՛սէա. Ժե. 29 ։ Ա՛ղբ. խբ. 13 ։ Մատթ. է. 8 ։ թա. 22 ։ Մարկ. Ժա. 24 ։ Յովհ. Ժգ. 13 ։ Ժե. 7 ։ Ժզ. 23, 24 ։ Յակ. ա. 16 ։ ա Յովհ. ե. 14 ։ (37) Յովհ. ը. 29 ։ թ. 31 ։

Digitized by Google

23 Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի, և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ետ մեզ պատուէր։

24 Եւ որ պահէ զպատուիրանս նորա, ի նմա է հաստատեալ՝ և նա ի սմա. և յայսմանէ գիտեմք եթէ բնակէ ի մեզ ի Հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ։

23 Եւ ըստ է նորա պատուիրանքն, որ հաւատանք անուան Որդւոյ Յիսուսի Քրիստոսի անուանն[23], և իրար սիրենք[39], ինչպէս որ նա պատուիրանք տուաւ մեզ[40]։

24 Եւ նա՝ որ նորա պատուիրանքն ներքն պահէ[41], նորանում հաստատուած է և նա նորանում[42]. և սրանից գիտուելիք է եթէ բնակուած մեզանում է՝ Հոգուն՝ որ (նա) տուաւ մեզ[43]։

Գ Ի Ղ · Գ

1 Ընդհատուածքն որ ամէն վարդապետների չգիտանալիք, որ նորանք պարծենում՝ թէ Հաւատոյ Հոգին ունին, բայց պէտք է փորձել նորանք աչքաթող հաստատի վարդապետութիւնները. 7 Եւ շատ պատճառներով յորդորուած եղբայրական սէր ունենալոյ համար։

1 Սիրելիք՝ մի ամենայն հոգւոյ հաւատայք. այլ ընտրեցէք զՀոգիսըն՝ եթէ յԱստուծոյ իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ։

2 Եւ ամք այսուիկ ճանաչեմք զՀոգին Աստուծոյ. ամենայն հոգի՝ որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնաւ եկեալ, յԱստուծոյ է նա։

3 Եւ ամենայն հոգի՝ որ ոչ խոստովանի զՅիսուս մարմնով եկեալ, չէ նա յԱստուծոյ. և այս Անտիքն է, զորմէ լուարուք՝ եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի է։

4 Դուք յԱստուծոյ էք որդեակք, և յաղթեցիք նոցա. զի մեծ է որ ի ձեզ է՝ քան զայն որ յաշխարհին է։

1 Սիրելիներ՝ ամէն հոգւոյ մի հաւատայք[1]. բայց փորձեցէք հոգիները եթէ Աստուածմանից են[2]. պատճառն որ շատ սուտ մարգարէներ են եկել աշխարհք[3]։

2 Եւ մենք սրանով ենք ճանաչում Աստուծոյ հոգին. ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով եկած է խոստովանում, նա Աստուածմանից է[4]։

3 Եւ ամէն հոգի որ Յիսուս Քրիստոսին մարմնով եկած չին խոստովանում, նա Աստուածմանից չէ. և էս Անտեր (հոգին) է[5], որ նորա համար լսեցիք թէ գալու է, և հենց հիմիկ աշխարհքում է[6]։

4 Դուք Աստուածմանից էք որդեակներ, և յաղթեցիք նորանց. պատճառն որ՝ նա որ ձեզմանում է՝ մեծ է, քանթէ նա՝ որ աշխարհքի մէջն է[7]։

(38) Յովհ. գ. 29 : ժե. 3 : (39) Մատթ. իբ. 39 : Յովհ. ժգ. 34 : ժե. 12 : Եփես. ե. 2 : ա Թես. գ. 9 : ա Պետր. դ. 8 : Ա Յհ. 11 : ա Յովհ. գ. 21 : (40) ա Յովհ. բ. 8. 16 : (41) Յովհ. ժգ. 23 : ժե. 10 : ա Յովհ. գ. 13 : (42) Յովհ. ժե. 21 : (43) Հռոմ. ը. 9 : ա Յովհ. դ. 13 : (1) Ղևտ. ԼԲ. 8 : Մատթ. իգ. 4 : (3) ա Կորնթ. ժգ. 29 : ա Թես. ե. 21 : Յայտ. բ. 2 : (3) Մատթ. իգ. 5. 24 : Գործ. ի. 30 : ա Տիմ. գ. 1 : բ Պետր. բ. 1 : ա Յովհ. բ. 18 : բ Յովհ. 7 : (4) ա Կորնթ. ժբ. 3 : ա Յովհ. ե. 1 : (5) ա Յովհ. բ. 22 : բ Յովհ. 7 : (6) բ Թես. բ. 7 : ա Յովհ. բ. 18. 22 : (7) ա Յովհ. ե. 4 : (8) Յովհ. ժբ. 31 : ժգ. 30 : ժզ. 11 : ա Կորնթ. բ. 13 : Եփես. բ. 2 : զ. 12 :

Digitized by Google

5 Ոմանք յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, և աշխարհ լսէ նոցա։

6 Մեք յԱստուծոյ եմք. որ գիտէ զԱստուած՝ լսէ մեզ. և որ չէ յԱստուծոյ՝ ոչ լսէ մեզ. այսուհետև ճանաչեմք զհոգին ճշմարտութեան և զհոգին խաբէութեան։

7 Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է. և ամենայն որ սիրէ՝ յԱստուծոյ է ծնեալ՝ և ճանաչէ զԱստուած։

8 Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է։

9 Եւ զի յայսմ երևեցաւ սէրն Աստուծոյ՝ ի մեզ, զի զՈրդին իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ կենդանիք։

10 Այսմ է սէրն. ոչ զի մեք սիրեցաք զԱստուած՝ այլ զի նա սիրեաց զմեզ, և առաքեաց զՈրդին իւր՝ ի քաւութիւն մեղաց մերոց։

11 Սիրելիք՝ եթէ Աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա և մեք պարտական զմիմեանս սիրել։

12 ԶԱստուած ուրուք երբեք չէիք տեսանել. եթէ սիրեսցուք զմիմեանս՝ Աստուած ի մեզ բնակէ, և սէր նորա ի մեզ կատարեալ է։

13 Այսուհետև գիտեմք, եթէ մեք ի նմա բնակեալ եմք՝ և նա ի մեզ, զի ի հոգւոյն իւրմէ եա մեզ։

5 Որովանք աշխարհքիցն են, նորա համար աշխարհքիցն են խօսի[9], և աշխարհքն լսէ նորանց[10]։

6 Մենք Աստուածանից ենք. ով որ Աստուծոյն ճանաչէ՝ լսէ մեզ[11]. և ով որ Աստուածանից չէ՝ չի լսէ մեզ. սորանով ենք ճանաչում ճշմարտութեան հոգին[12] և խաբեպաշտութեան հոգին։

7 Սիրելիներ՝ իրար սիրենք[13], ինչու որ սէրն Աստուածանից է. և ամէն ով որ սիրում՝ Աստուածանից է ծրնված, և ճանաչում Աստուծոյն։

8 Այս՝ որ չի սիրում, Աստուծոյն չի ճանաչում[14]. ինչու որ Աստուած սէր է[15]։

9 Եւ սորանով Աստուծոյ սէրն երևեցաւ մեր միջումն[16], որ Աստուած իրան միածին Որդին ուղարկեց աշխարհ, որ նորանով կենդանի լինինք[17]։

10 Սրանում է սէրն. որ ոչ թէ մենք սիրեցինք Աստուծոյն, բայց որ նա սիրեց մեզ[18], և իրան Որդին ուղարկեց մեր մեղքերըն քաւելոյ համար[19]։

11 Սիրելիներ՝ եթէ Աստուած էապէս սիրեց մեզ, ապա մենք էլ պէտք է իրար սիրենք[20]։

12 Ոևէի մին ժամանակ մինն չի տեսել Աստուծոյն. թէ որ (մենք) իրար սիրենք՝ Աստուած մեզանում է բնակվում[21], և նորա սէրն մեզանում կատարեալ է[22]։

13 Սրանով գիտումնենք որ մենք նորանում ենք բնակված՝ և նա մեզանում. որ իրան Հոգուցն տուաւ մեզ[23]։

(9) Յովհ. գ · 31։ (10) Յովհ. ժե · 19 · ժէ · 14։ (11) Յովհ. ը · 47 · ժ · 27։ ա Պետ. ժգ · 37։ բ Պետ. ժ՛. 7։ (12) Ղաւդ. ը · 20։ Յովհ. ժգ · 17։ (13) ա Յովհ. գ · 10, 11 · 23։ (14) ա Յովհ. բ · 4 · գ · 6։ (15) Ա՛ար · 16։ (16) Յովհ. դ · 16։ Հռոմ. ե · 8 · ը · 32։ ա Յովհ. գ · 16։ (17) ա Յովհ. ե · 11։ (18) Յովհ. ժե · 16։ Հռոմ. ե · 8 · 10։ Տիտ. գ · 4։ (19) ա Յովհ. բ · 2։ (20) Մատթ. ժը · 32։ Յովհ. ժե · 12, 13։ ա Յովհ. գ · 16։ (21) Յովհ. ա · 18։ ա Տիմ. ը · 16։ Ա՛ար · 20։ (22) ա Յովհ. բ · 5։ Ա՛ար · 18։ (23) Յովհ. ժգ · 20։ ա Յովհ. գ · 24։

Digitized by Google

14 Եւ մեք տեսաք՝ եւ վկայեմք զի Հայր առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշխարհի ։

15 Որ որ խոստովանեսցի՝ եթէ Յիսուս է Որդի Աստծոյ , Աստուած ՚ի նմա բնակէ՝ եւ նա յԱստուած ։

16 Եւ մեք հաւատացաք՝ եւ ծանեաք զսէրն Աստուծոյ՝ զոր ունի առ մեզ . Աստուած սէր է , եւ որ կայ ՚ի սէրն՝ բնակեալ է յԱստուած , եւ Աստուած ՚ի նմա բնակէ ։

17 Հայամիկ կատարեալ է սէրն նորա ՚ի մեզ . զի համարձակութիւն ունիցիմք յաւուրն դատաստանի . զի որպէս եւ նայն է՝ նոյնպէս եւ մեք եմք յաշխարհի յայմիկ ։

18 Երկիւղ ոչ գոյ ՚ի սէր , այլ սէրն կատարեալ ՚ի բաց մերժէ զերկիւղն . զի երկիւղ ընդ տանջանաւք է . իսկ որ երկնչին , չէ կատարեալ ՚ի սէրն ։

19 Մե՛ք սիրեսցո՛ւք զԱստուած , վասն զի նա նախ սիրեաց զմեզ ։

20 Եթէ ոք ասիցէ՝ եթէ Սիրեմ զԱստուած , եւ զեղբայր իւր ատիցէ , սուտ է . որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ , զԱստուած զոր ոչն նաեւ՝ զիա՞րդ կարիցէ սիրել ։

21 Եւ զայս պատուէր ունիմք առ ՚ի նմանէ , զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա եւ զեղբայր իւր ։

14 Եւ մենք տեսանք եւ վկայեմք[24] , որ Հայրն իրան Որդին ազդարկեց աշխարհքի փրկիչ (լինելոյ)[25] ։

15 Ով որ դաւանի՝ թէ Յիսուս է Աստուծոյ Որդին , Աստուած նմանում է բնակվում՝ և նա Աստուածանում[26] ։

16 Եւ մենք հաւատացինք և ճանաչեցինք Աստուծոյ սէրըն՝ որ ունի մեզ վերայ . Աստուած սէր է[27] , և ով որ սիրոյ մէջն է կենում Աստուծոյ մէջն է բնակվում , և Աստուած նորանում է բնակվում[28] ։

17 Այրանում է նորա սէրն կատարեալ մեզ հետ , որ համարձակութիւն ունինք դատաստանի օրըն[29] . պատճառն որ ինչպես որ նա է՝ էնպես էլ մենք ենք էս աշխարհքում[30] ։

18 Ո՛չ ունի երկեայ սիրոյ մէջն . այլ կատարեալ սէրն հեռացնում վախին . ինչու որ վախն տանջանք ունի . բայց նա՝ որ վախում , կատարեալ չէ սիրոյ մէջն[31] ։

19 Մե՛նք սիրենք Աստուծոյն . պատճառն որ առաջ նա սիրեց մեզ ։

20 Ով որ միտն ասէ՝ թէ Սիրում Աստուծոյն , և իրան եղբօրըն ատէ , նա սուտ է . ինչու որ նա՝ որ իրան եղբօրըն որ տեսնում՝ չի սիրում[32] , Աստուծոյն որ չի տեսել՝ ինչպես կարող է սիրել[33] ։

21 Եւ էս պատուիրանքըս տուինք նորանից , թէ նա որ Աստուծոյն սիրում , իրան եղբօրըն էլ սիրէ[34] ։

(24) Յովհ . ա . 14 ։ ա Յովհ . ա . 1 , 2 ։ (25) Յովհ . գ . 17 ։ (26) Հռոմ . ժ . 9 ։ ա Յովհ . ե . 1 . 5 ։ (27) Մ Իր . 8 ։ (28) ա Յովհ . գ . 24 ։ Մ Իր . 12 ։ (29) Յոբ . բ . 13 ։ ա Յովհ . բ . 28 ։ գ . 19 . 21 ։ (30) ա Յովհ . գ . 8 ։ (31) Մ Իր . 12 ։ (32) ա Յովհ . բ . է ։ գ . 17 ։ (33) Մ Իր . 12 ։ (34) Մատթ . իբ . 37 . 39 ։ Յովհ . ժգ . 34 ։ ժե . 12 ։ ա Յովհ . գ . 23 ։

Digitized by Google

ԳԻ · Ն

1 Ա՛մէն ով որ հաւատայ[1] թէ Յիսուս է Քրիստոսն[2], Աստուածանից է ծնեալ[3]. և ամէն ով որ ծնօղին սիրէ՝ նորանից ծնեալին էլ սիրէ[4]:

2 Սրանով ենք ճանաչում՝ թէ Աստուծոյ (*) զաւակներին սիրում ենք, երբոր Աստուծոյն սիրենք, և նորա պատուիրանքները անենք:

3 Պատճառն որ Աստուծոյ սէրն էս է, որ նորա պատուիրանքներն պահենք[5]. և նորա պատուիրանքներն խիստ ծանր չեն[6]:

4 Ինչու որ՝ ամէն ով որ Աստուածանից է ծնեալ՝ յաղթում է աշխարհին. և էս է յաղթութիւնը՝ որ աշխարհին յաղթում է, (այսինքն) մեր հաւատքն[7]:

5 Եւ ո՞վ է՝ որ յաղթում է աշխարհին, բայց միայն նա՝ որ հաւատում է, թէ Յիսուս Աստուծոյ Որդին է[8]:

6 Այ է որ եկաւ ջրով և հոգով և արիւնով՝ (այսինքն) Յիսուս Քրիստոսն. ոչ թէ մէնակ ջրով, բայց արիւնով և ջրով[9]. և Հոգին է որ վկայում է, որ Հենց Հոգին է ճշմարտութիւնն[10]:

7 Պատճառն որ երեք են որ երկընքումն վկայում են, Հայրն և Խօսքն և Սուրբ Հոգին[11]. և էս երեքս մի են[12]:

8 Եւ (էս) երեքս են որ երկրում

1 Ա՛մէն ով որ հաւատայ՝ թէ Յիսուս է Քրիստոսն, Աստուածանից է ծնեալ է. և ամէն ով որ ծնօղին սիրէ, սիրէ և ծնեալին՝ ի նմանէ:

2 Ա՛յսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յորժամ զԱստուած սիրեսցուք՝ և զպատուիրանս նորա արասցուք:

3 Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուիրանս նորա պահեսցուք. և պատուիրանք նորա ձիր ինչ ծանրանք:

4 Զի ամենայն որ Աստուծոյ ծնեալ է՝ յաղթէ աշխարհի. և այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր:

5 Եւ ո՞վ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի. եթէ ոչ որ հաւատայցէ՝ եթէ Յիսուս է Որդի Աստուծոյ:

6 Այ է որ եկն ջրով և հոգւով և արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով միայն, այլև արեամբ և ջրով. և Հոգին է՝ որ վկայէ, զի Հոգին ճակ է ճշմարտութիւն:

7 Զի երիք են որ վկայեն յերկինս, Հայր, Բանն և Հոգին Սուրբ. և երիքեքին մի են:

8 Եւ երիք են որ վկայեն յեր-

(1) Յովհ. ա. 12: (2) ա Յովհ. բ. 22, 23: գ. 2. 15: (3) Յովհ. ա. 13: (4) Յովհ. ժե. 23: (*) Յոհաննէսին Աստուծոյ զաւակներին: (5) Յովհ. ժգ. 15. 21. 23: ժե. 10: բ Յովհ. 6: (6) Մատ. ժ. 8: Մարկ. ժա. 30: (7) Յովհ. ժգ. 33: ա Յովհ. գ. 9: դ. 4: (8) ա Կորնթ. ժե. 57: ա Յովհ. գ. 15: (9) Յովհ. ժթ. 34: (10) Յովհ. ժգ. 17: ժե. 26: ժգ. 13: ա Յնի. գ. 16: (11) Յովհ. ա. 1: Հայտ. ժթ. 13: (12) Յովհ. ժ. 30:

Digitized by Google

կրի . հոգի , ջուր և արիւն . և երեքքինն մի են :

9 Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք՝ ապաքէն Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ , այս է վկայութիւնն Աստուծոյ , զի վկայեաց ի վերայ Որդւոյն իւրոյ :

10 Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ , ունի յանձին զվկայութիւնս զայս . որ ոչ հաւատայ Որդւոյ Աստուծոյ , սուտ առնէ զնա . քանզի ոչ հաւատայ վկայութեանն՝ զոր վկայեաց Աստուած ի վերայ Որդւոյն իւրոյ :

11 Եւ այս իսկ է վկայութիւն , զի կեանս յաւիտենական ետ մեզ Աստուած . և այս են կեանք՝ որ յՈրդին նորա են :

12 Որ ընդունի զՈրդին , ընդունի և զկեանս . և որ ոչ ընդունի զՈրդին Աստուծոյ , և ոչ զկեանս ընդունի :

13 Այս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ կեանս յաւիտենական ունիք . և զի հաւատայցէք յանուն Որդւոյն Աստուծոյ :

14 Եւ այս է համարձակութիւնն զոր ունիմք մեք առ նա , զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց նորա , լսէ մեզ :

15 Այլ եթէ գիտիցեմք՝ եթէ լսէ հայցուածոցն մերոց . ապա գիտեմք՝ եթէ առնուաք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ի նմանէ :

16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ որ ոչ առ ի մահ , խնդրեսցէ՝ և տացէ նմա կեանս՝ մեղուցելոյն ոչ առ ի մահ . են մեղք՝ որ մահաւանդ են , ոչ ասեմ այնմ-

մէն վկայեալքն . հոգին , և ջուրն , և արիւնն . և էս երեքս մի են :

9 Եթէ մարդկանց վկայութիւնն ընդունումք , ապա աւրհնեալ Աստուծոյ վկայութիւնն աւելի մեծ է[12] . (ինչու որ) էս է Աստուծոյ վկայութիւնն , որ վկայեց իրան Որդոյն վերայ[14] :

10 Ով որ հաւատումէ Աստուծոյ Որդոյն , էս վկայութիւնըս ունի իրան անձնուամբ[15] . ով որ չի հաւատում Աստուծոյ Որդոյն , սուտ է անում նորան[16] . պատճառն որ չի հաւատում են վկայութեանն , որ Աստուած վկայեց իրան Որդոյ վերայ :

11 Եւ հենց էս է վկայութիւնն , որ Աստուած յաւիտենական կեանք ըրեն տուաւ մեզ[17] . և էս կեանքս էն է՝ որ նորա Որդոյ միջումն է[18] :

12 Ով որ Որդոյն ընդունի , (նա) կեանքըն էլ կընդունի . և ով որ Աստուծոյ Որդոյն չընդունի , (նա) կեանքըն էլ չի ընդունիլ[19] :

13 Այս (բանըս) գրեցի ձեզ[20] որ հաւատաք՝ թէ յաւիտենական կեանքըն ունիք[21] , և (էլ) որ հաւատաք Աստուծոյ Որդոյ անունին :

14 Եւ էս է էն համարձակութիւնըն որ մենք ունինք նորա մոտ , թէ ինչ որ նորա կամաց պես խընդրենք՝ կըլսէ մեզ[22] :

15 Եւ թէ որ գիտումենք՝ թէ մեր խնդրվածքներին կըլսէ . ապա գիտումենք որ կառնենք (մեր) խընդրվածքներըն՝ որ խնդրումենք նորանից :

16 Ով որ մենք տեսնէ՝ թէ խրան եղբայրն մեղանչել է (էնպէսի) մեղքով՝ որ դէպի մահ չէ , թող խընդրէ (Աստուածանից)՝ և կեանք կըտայ նորան՝ (այնպես) նորան որ

(12) Յովհ . ը . 17 , 18 : (14) Պետր . գ . 16 , 17 : ժէ . 5 : (15) Հռոմ . ը . 26 : Գաղ . գ . 6 : (16) Յովհ է գ . 39 : ե . 38 : (17) ա Յովհ . ը . 25 : (18) Յովհ ա . ե . ա Յովհ . գ . 9 : (19) Յովհ . գ . 36 : ե . 24 : (20) Յովհ . բ . 31 : (21) ա Յովհ . ա . 1 , 3 : (22) ա Յովհ . գ ։ 22 :

Digitized by Google

ըրկ ասեմ եթէ խնդրեսցես ։

17 Ի՛մեսյն անիրաւութիւն՝ մեղք են . և են մեղք՝ որ մահու չեն ։

18 Գիտեմք եթէ ամենայն որ յԱ՛ստուծոյ է ծնեալ՝ ոչ մեղանչէ . այլ որ յԱ՛ստուծոյն է ծնեալ՝ պահէ զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ ։

19 Գիտեմք եթէ յԱ՛ստուծոյ եմք , և աշխարհ ամենայն ի չարի կայ ։

20 Եւ գիտեմք՝ եթէ Որդին Ա՛ստուծոյ եկն , և ետ մեզ միտս . զի ծանիցուք զՃշմարիտն . և եմք ի Ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի . զի նա է Ճշմարիտ Ա՛ստուած՝ և կեանք յաւիտենական ։

21 Որդեակք՝ պահեցէք զանձինս ի կռապաշտութենէ ։

մեղանչել է չէ թէ դէպի մահ[23] . կայ մեղք՝ որ մահու չափ է[24] , ետրս չասեմ ես չեմ ասում որ խնդրես[25] ։

17 Ա՛մէն անիրաւութիւն մեղք է . և կայ մեղք որ մահու չափ է[26] ։

18 Գիտումենք որ ամէն ով որ Ա՛ստուածմանից է ծնված՝ մեղք չի գործում[27] , բայց նա՝ որ Ա՛ստուածմանից է ծնված , իրան անձն պահում[28] , և չարն չի մխամանում նորա ։

19 Գիտումենք որ (մենք) Ա՛ստուածմանից ենք , և բոլոր աշխարհք չարութեան մէջ է կենում[29] ։

20 Եւ գիտումենք որ Ա՛ստուծոյ Որդին եկաւ , և մեզ միտք տուաւ[30] , որ ճշմարիտն ճանաչենք[31] . և ճշմարտի մէջումն ենք , (այսինքն) նորա Որդի Յիսուս Քրիստոսումն . այսա՛ճառն որ նա ճշմարիտ Ա՛ստուած է[32] և յաւիտենական կեանք[33] ։

21 Որդեակներ՝ (ձեր) անձներըդ պահեցէք կռապաշտութենից[34] ։

(23) Յովհ . ե . 6 ։ Յով . ե . 14 , 15 ։ (25) Մատթ . ժբ . 31 , 32 ։ Մարկ . գ . 29 ։ Ղուկ . ժբ . 10 ։ Նբէր . գ . 4 . 6 . ժ . 26 ։ (25) Նբէր . է . 16 ։ ժգ . 11 ։ Յովհ . ժե . 9 ։ (26) ա Յովհ . գ . 4 ։ (27) ա Գիտ . ա . 23 ։ ա Յովհ . գ . 9 ։ (28) Յով . ա . 27 ։ (29) Գաղ . ե . 4 ։ (30) Ղուկ . ի . 45 ։ (31) Յովհ . ժե . 3 ։ (32) Նաա . բ . 6 ։ իե . 6 ։ ծգ . 5 ։ Յովհ . ի . 28 ։ Գործ . ի . 28 ։ Հռովմ . բ . 5 ։ ա Տիմ . գ . 16 ։ Տիտ . բ . 13 ։ Նբէր . ա . 8 ։ (33) Ա Յհ . 11—13 ։ (34) ա Կորնթ . ժ . 14 ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ

ՅՈՎՀ. ԱՌԱՔԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԸՆԴՅԱՆ

1 Ընտրեալն յորդորումն մեծ բարեպաշտ կին՝ որ իրան որդեկիներով հաստատուն կենալ Քրիստոսի սէրի և հաւատքի մէջ, 8 Որ չզլխի քէ իրանց առաջի գաւանութեան վարձքն կորցնեն. 10 Պատուէր է տալիս որ չընդունին են մոլորացնօղներին՝ որ նորանք Քրիստոս Աստուած մարմնով վորդապետութիւն ըլնին։

1 Յիրաւի՝ ատ ընտրեալ կիւրիա, և ատ որդեակս իւր, զոր ես սիրեմ ճշմարտութեամբ, և ոչ եմէ ես միայն, այլ և ամենեքեան, որք գիտակ են ճշմարտութեանն.

2 Վասն որոյ ճշմարտութեանն՝ որ ի մեզ հաստատեալ է, զի և ընդ ձեզ իցէ. և դուք յաւիտենից ընդ մեզ իցէք։

3 Ընծորք, ողորմութիւն, խաղաղութիւն լիասուածոյ ի Հօրէ, և ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր՝ ճշմարտութեամբ և սիրով եղիցին ընդ ձեզ։

4 Ուրախ եղէ յոյժ, զի գտի յորդեկացդ քոց՝ որ գնան ճշմարտութեամբ, ըստ պատուիրանին զոր առաք ի Հօրէ։

1 Յիրաւի կողմանէ ընտրեալ կիւրիայիդ, և իրան որդեակներին՝ որ ես նորանց սիրեմ ճշմարտութենով[1], և ոչ միայն ես, բայց էլ են ամէնքն՝ որ ճշմարտութիւնն ճանաչել են[2].

2 Յն ճշմարտութեան պատճառովն՝ որ մեզանում հաստատված է, որ նա էլ ձեզ հետ լինի, և դուք յաւիտեան մեզ հետ լինիք։

3 Ընորհք, ողորմութիւն, խաղաղութիւն լիասուած Հօրիցն, և Տէր Յիսուս Քրիստոսից Հօր Որդուցն՝ լինի ձեզ հետ[3], ճշմարտութենով և սիրով[4]։

4 Շատ ուրախ էլայ, որ քո որդեակներիդ գտի՝ որ ճշմարտութենով են գնում, էն պատուիրանքին պես որ Հօրիցն առինք[5]։

(1) ա Յովհ. գ. 18։ գ Յովհ. 1։ Պայր. 3։ (2) Յովհ. ը. 32։ Պաղ. բ. 5. 14։ գ. 1։ ե. 7։ Պտր. ա. 5։ բ Խոս. բ. 12։ ա Տիմ. բ. 4։ Նբր. ժ. 26։ (3) ա Տիմ. ա. 2։ (4) Վիր. 1։ (5) գ Յովհ. 3։

Digitized by Google

5 Եւ այժմ աղաչեմ զքեզ՝ կիւրիա · իբրև ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ քեզ , այլ զոր ի ըսկզբանէն ունէաք , զի սիրեսցուք զմիմեանս ։

6 Եւ այս է սէրն , զի գնասցուք ըստ պատուիրանաց նորա · և այս է պատուիրանն , զի որպէս լուաք ի սկզբանէ՝ ըստ նմին գնասջիք ։

7 Զի բազում մոլորեցուցիչք եւ ելին յաշխարհ · որ ոք ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով , նա մոլորեցուցիչ է՝ և նեռն ։

8 Զգոյշ լինիջիք անձանց՝ զի մի կորուսանիցէք՝ զոր վաստակեցէքն , այլ զի առնուցուք բովանդակ ըզվարձս ։

9 Ամենայն որ յանցանէ՝ և ոչ կայ ի վարդապետութեանն Քրիստոսի , զԱստուած ոչ ճանաչէ · որ կայ ի վարդապետութեանն , նա՝ և զՈրդի և զհայր ընդունի ։

10 Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի , մի ընդունիցիք զնա ի տուն , և մի ողջոյն տայցէք նմա ։

11 Եւ որ ասասցէ նմա ողջոյն՝ կցորդ լիցի չարեաց գործոց նորա ։

12 Բազում ինչ ունէի գրել առ ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարտիսի և դեղով գրել · զի ակնունիմ ինձէն իսկ գալ առ ձեզ և բերան ի բերան խօսել · զի ուրախութիւնն մեր իցէ կատարեալ ։

13 Ողջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ · ընդ ձեզ ։

5 Եւ հիմիկ աղաչեմ քեզ կիւրիայ · իբր ոչ թէ միոն նոր պատուիրանք եմ գրեալ քեզ , այլ հենց էն որ սկըզբից ունէինք[8] , որ իրար սիրենք[7] ։

6 Եւ էս է սէրն , որ նորա պատուիրանքներին պէս գնանք[8] , և էս է պատուիրանքն , որ ինչպէս որ լսեցիք սկըզբից՝ էնպէս գնաք[9] ։

7 Ինչու որ շատ մոլորեցնողներ դուրս եկին աշխարհքի մէջ[10] · ով որ չի դաւանում Յիսուս Քրիստոսին որ մարմնով է եկած[11] , նա մոլորացնող է՝ և նեռն[12] ։

8 Զգոյշ կացէք ա՛ձներիդ՝ որ չըլինի թէ կորցնէք էն որ վաստակեցիք · բայց որ բոլոր վարձ առնէք[13] ։

9 Ումն ով որ յանցանէք գործէ , և չըկենայ Քրիստոսի վարդապետութեան մէջն , Աստուծոյն չի ճանաչում[14] · ով որ կենում վարդապետութեան մէջն , նա՝ Հայրոյն էլ և Որդուն էլ ընդունում է ։

10 Ով որ միոնն ձեզ մօտ գայ և էս վարդապետութիւնս չունենայ , մի ընդունիք նորան (ձեր) տունն , և ողջոյն մի տաք նորան[15] ։

11 Ով որ Հողջոյն ասէ նորան , մասնակից կըլինի նորա չար գործքերին ։

12 Շատ բան ունէի ձեզ գրելոյ , բայց չըկամեցայ թղթով և թանաքով (գրել) · պատճառն որ յոյս ունիմ՝ որ հենց ես ինքն գամ ձեզ մօտ , և բերանէ բերան խօսիմ[16] · որ մեր ուրախութիւնն կատարեալ լինի[17] ։

13 Ողջոյն են տալիս քեզ քո ընտրեալ քրմոր որդիքն[18] · հնարք (լինի) ձեզ հետ ։

(6) = Յովհ · բ · 7 , 8 : գ · 11 ։ (7) Յովհ · ժգ · 34 : ժե · 12 : Նէեմ · ե · 2 : = Պետր · գ · 8 : = Յովհ · գ · 23 ։ (8) Յովհ · ժգ · 15 · 21 : ժե · 10 : = Յովհ · բ · 5 : ե · 3 ։ (9) = Յովհ · բ · 24 ։ (10) = Յովհ · գ · 1 ։ (11) = Յովհ · գ · 2 , 3 ։ (12) = Յովհ · բ · 22 : գ · 3 ։ (13) Գ·ոչ · գ · 4 : Նէր · ժ · 33 · 35 ։ (14) = Յովհ · բ · 23 ։ (15) Հ·ովհ · ժգ · 17 : = Կուռն · ե · 11 : ժգ · 22 : Գաղ · ա · 8 , 9 : բ Տիմ · գ · 5 : Տիտ · գ · 10 ։ (16) գ Յովհ · 13 , 14 ։ (17) Յովհ · ժե · 13 : = Յովհ · ա · 4 ։ (18) = Պետր , ե · 1 · 3 ։

Digitized by Google

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Ողջոյնք գովեստի Յովհաննու առ Կիւրիոս բարեպաշտութիւնն . 5 Յն օտարականներին սիրելն 7 Զի նոքանով շնորհս քարոզիչներին պատճառ էր անուն . 9 Վիճարկիչին անվայել վարքըն և նորա պատճառքն կհանդիպէ , 11 Զի նորա չար օրինակին զգոյշ լինելոյ համար պատուիրէ և ասէ . 13 Մին յաւուրէ վիճակութիւն կլսեայ Դեմետրիոսի բարի անունին համար .

1 Յովհաննէս ծերակրօն կաթուղիկոսիս սիրելի , զոր ես սիրեմ ճշմարտութեամբ :

2 Սիրելի՝ վասն ամենայն իրաց քոց յաջողութեան և առողջութեան աղօթիս առնեմ . որպէս է իսկ յաջողութիւն անձինդ քո :

3 Ուրախ եղէ՛ի գալ եղբարց՝ և լինել վկայ քոյոյ ճշմարտութեանդ , որպէս գնաս դու ճշմարտութեամբ :

4 Ոչ՝ եթէ ինչ ուրախութիւն քան զայս ոչ ունիմ . զի լսեմ՝ եթէ իմ որդեակքն ճշմարտութեամբ գընան :

5 Սիրելի՝ հաւատարիմ գործես զայս ինչ եղբարս՝ զոյս և զայր եթէ առնիցես առ եղբարս՝ զոյն և առ օտարս :

6 Որք վկայեցին զքո սիրոյդ առ

1 Յովհաննէս կաթուղիկոս սիրելի Կիւրիոսիդ , զոր ես սիրեմ ճշմարտութեամբ[1] :

2 Սիրելի՝ քո ամէն բանի յաջողութեան և առողջութեան հաւատով աղօթք եմ անում . ինչպէս որ քո անձնդ էլ յաջողութեան մէջ է :

3 Շատ ուրախ էլայ երբոր եղբայրքն եկին , և քո ճշմարտութեանդ վկայ եղան , ինչպէս որ դու ճշմարտութեամբ գնում[2] :

4 Յն սրանից աւելի մեծ ուրախութիւն չունիմ , որ լսում եմ իմ որդեակներս ճշմարտութեամբ են գնում[3] :

5 Սիրելի՝ հաւատարմութեամբ ես գործում էդ՝ ինչ որ անում ես եղբարներին , հենց էդ էլ օտարականներին կանես :

6 Իր նորանք քո (արած) սիրոյդ

(1) բ Յովհ . 1 : (2) բ Յովհ . 4 : (3) ա Կորնթ . 4 . 15 : Փիլիպ . 10 :

Digitized by Google

առջի եկեղեցւոյ · որոց բարիս արա-
րեալ յուշարկես արժանիս Աստու-
ծոյ ։

7 Ի վան անուանն եղին , և
ոչինչ յումեքէ առնուն զհեթանո-
սականացն ։

8 Ի՝նք այսուհետև պարտիմք քա-
դունել զայնպիսիան , զի գործա-
կիցք լիցուք ճշմարտութեանն ։

9 Կրեցի ինչ եկեղեցւոյն · այլ
որ յահաբեղդէնն ի նոյանէ էր՝ վի-
ճաբանիփէս , ոչ ընդունի զմեզ ։

10 Վ ան այսորիկ եթէ եկից՝ յի-
շեցուցից զգործս նորա՝ զոր առնէ ,
բանիւք չարեօք չառակախօսութեան
առնէ զմեզ աշխատ , և ոչ այսքանիւք
շատացեալ , ոչ ինքն ընդունի զեղ-
բարս , և զայնոսիկ որ ընդունին ,
արգելու , նաև յեկեղեցւոյ ևս հա-
նէ ։

11 Սիրելի՛ մի՛ լինիցիս նմանող
չարի՝ այլ բարւոյ · զի որ զբարիս
առնէ՝ յԱստուծոյ է . և որ զչարիս
գործէ՝ նա ոչ եռես Աստուած ։

12 Դեմետրեայ վկայեալ է յա-
մենեցունց , և յինկեղեցւոյն՝ և ի
ճշմարտութենէ , և մեք վկայեմք .
և դու գիտես՝ զի ճշմարիտ է մեր
վկայութիւնն ։

13 Հազում ինչ ունէի գրել քեզ ·
այլ ոչ կամիմ քաղտիսիւ և գեղով
գրել ։

14 Յի սկսանիմ՝ ի մօտոյ իսկ
տեսանել զքեզ , և բերան ի բե-
րան խօսել ։

15 Խաղաղութիւն ընդ քեզ · ող-
ջոյն տան քեզ սիրելիք · ողջոյն տա-
ջիր սիրելեաց մերոց իւրաքանչիւր
յանուանէ ։

վկայութիւն տուին եկեղեցւոյ առա-
ջին · որ եթէ նորանց Աստուծոյ ար-
ժանաւոր ճանապարհ քցես , լաւ
կանիս ։

7 Ինչու որ (Քրիստոսի) անու-
նին համար դուրս եկին , և իսկի մին
հեթանոսից մին բան չեն առնում[4] ։

8 Պարտք ունինք մենք ըն-
դունինք էնպէսիներին , որ օգնական
լինինք ճշմարտութեան գործոյն ։

9 Ի՛նչ բան գրեցի եկեղեցոյն .
բայց Փիտրէփէս՝ որ նորանց մի-
ջումն առաջ ընկնօղն է , մեզ չի
ընդունում ։

10 Որ համար եթէ որ գամ՝ նորա
գործքերըն կը յիշեմ՝ որ նա անու-
մէ . չառակախօսութեան չար խօսքե-
րով նեղացնում մեզ . և սրանով
էլ բաւական չի լինում՝ ինքն էլ
ընդունում եղբարներին , և նորանց
էլ՝ որ ընդունումեն , արգելում է . և
եկեղեցւոյ միջիցն էլ հանում ։

11 Սիրելի՝ մի լինիր նման չարին՝
բայց բարոյն՝ . ինչու որ ով որ բա-
րի է գործում՝ Աստուածանից է[5] .
և ով որ չարիք է գործում՝ նա իսկի
մին ժամանակ Աստուծոյն չի տեսաւ ։

12 Դեմետր (բարի) վկայութիւն
ունէ ամենից[6] , և եկեղեցուցն էլ ,
և հենց ճշմարտութենիցն էլ , և
մենք էլ վկայում ենք . և դու գի-
տում որ մեր վկայութիւնն ճշմա-
րիտ է[7] ։

13 Շատ բան ունէի քեզ գրելոյ ,
բայց չեմ կամենում թղթով և թա-
նաքով գրել[8] ։

14 Յուսացառն որ՝ յոյս ունիմ որ
հենց մօտ ժամանակումն քեզ տես-
նեմ , և բերանէ բերան քեզ հետ
խօսիմ ։

15 Խաղաղութիւն (լինի) քեզ հետ .
ողջոյն են տալիս քեզ սիրելիքն .
ողջոյն տուր մեր սիրելիներին ամեն
մէկին իրան անունովն ։

(1) ա Պետ . բ . 12 . 15 ։ (2) Գաղ . լե . 27 ։ Նայ . ա . 16 , 17 ։ ա Պետ . գ .
14 ։ 400 ա Կորնթ . բ . 29 ։ գ . 6 . 9 ։ (7) ա Յովհ . գ . 1 ։ (8) Յովհ . խա . 24 ։ (9)
բ Կորնթ . 13 ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ

ՅՈՒԴԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՑ

1 Ընտրեալն յոգւոյն քրիստոնեականէն՝ որ հաստատ կենան հաւատքին գաւանութեան մէջն , և Իմաց առնէ նորանց թէ՝ խաբեբայ վարդապետներ մտել են նորանց միջէն՝ որ նորանք մոլորցնեն . որ նորանց դատապարտվելոյ արժան վարդապետութեանըն և վարքին համար՝ տակալի պատիժ պատրաստված է . 20 Ասյց բարեպաշտներին համար խնդա կըսայ թէ՝ նորանք Ընտրեալ աղօթք անելով Սուրբ Հոգւին օգնութենովն կարող են հաստատ կենալ, անձնէրնին անարատ պահել և ուրիշներին ել փրկել են մոլորացնօղներէն ի պատրաստէրէն :

1 ՅՈՒԴԱՅ Յիսուսի Քրիստոսի ծառայ , և եղբայր Յակոբոսի . հեթանոսաց՝ որ Հաւատացեալ Հօրէ էք սիրեցեալք , և Յիսուսի Քրիստոսի պահեալք և ընտրեալք :

2 Ողորմութիւն ձեզ՝ և խաղաղութիւն և սէր բազմասցի :

3 Սիրելիք՝ զամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց փրկութեան , հարկ յանձին կալայ գրել ձեզ և աղաչել՝ զի ճգնիցիք ի վերայ հաւատոցն , որ միանգամ աւանդեցաւն սրբոց :

4 Վասնզի սպրդեցին մարդիկ , որ յառաջագոյն խակ կատարեալ էին

1 ՅՈՒԴԱՅ Յիսուսի Քրիստոսի ծառայ , և Յակոբոսի եղբայր[1] . ձեզ (հեթանոսներիդ)՝ որ Հաւատաց Հօրից սիրված էք , և Յիսուս Քրիստոսում պահվածք[2] և ընտրվածք[3] :

2 Ողորմութիւն , խաղաղութիւն և սէր շատանայ ձեզ վերայ[4] :

3 Սիրելիներ՝ որովհետև ամէն ջանք արի որ գրեմ ձեզ մեր հաւատացեալց փրկութեան համար . հարկ եղաւ ինձ որ գրեմ ձեզ՝ և աղաչեմ[5] , որ ջանք անէք էն հաւատքին վերայ՝ որ միանգամ սրբերին պահ արվվաւ[6] :

4 Վասնզի առն որ մինչեանիան ներս սրծան մարդիկ[7] , որ նորանք հենց ա-

(1) Ղուկ . գ . 16 : Գործ . ա . 13 : (2) Յովհ . ժէ . 11 , 12 . 15 : ա Պետր . ա . 5 : (3) Հռովմ . ա . 7 : (4) ա Պետր . ա . 2 : բ Պետր . ա . 2 : (5) Յնթ . ա . 8 : (6) Փիլիպ . ա . 27 : ա Տիմ . ա . 18 : գ . 12 : բ Տիմ . ա . 13 : գ . 7 : (7) Գաղ . բ . 4 : բ Պետր . բ . 1 :

Digitized by Google

ի՛ն ի տուն դատաստան. ամբարիշտք՝ որ զԱստուածոյ մերոյ չնորհսն դարձուցին յանկարգութիւն. և զմի միայն Իշխանն՝ և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք։

5 Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ է ինձ՝ որ գիտէիդ զամենայն. զի Աստուած միանգամ ժողովուրդըն փրկեաց յԵգիպտոսէ. երկրորդ անգամ զանհաւատսն կորոյս։

6 Եւ զհրեշտակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց բնակութիւնն, ի դատաստանս մեծի աւուրն՝ մշտնջեն նաւտի ձագանօք պահեաց ի խաւարի։

7 Որպէս Սոդոմ և Գոմոր, և որ շուրջ զնոքօք քաղաքքն, որ լիտն նմին օրինակի պոռնկեցան զկնտրեալն մարմնոց, կան առաջի օրինակ՝ զյաւիտենական հրոյն ընկալեալ զդատաստան։

8 Այսո նմին օրինակի և սոքա խրտիլ քնով դանգաչեալք՝ զմարմինն պղծեն, զէրութիւնս քամահեն՝ զփառս հայհոյեն։

9 Այլ Միքայէլ հրեշտակապետ՝ յորժամ բանսարկու Սատանայի վիճեալ տայր պատասխանի վասն Մովսիսեան մարմնոյն, ոչ ժպրհեցաւ հայհոյութեան դատաստանին հանդուրժել. այլ ասէ, Սատանացէ՛ի քեզ Տէր։

10 Իսկ սոքա զոր ինչ ոչն իմանան՝ հայհոյեն, և զայլն ևս՝ զոր ասջուց հասատատված կին ևս գատաստանիս համարէ. ամբարիշտներ՝ որ մեր Աստուածոյ շնորհքըն[9] անկարգութիւն դարձրին[10]. և էն մին մենակ (Աստուածոյն և) Իշխանին, և մեր Տէր Յիսուս Քրիստոսին ուրացան[11]։

5 Արդ համար իմ կամքս էս է՝ որ ձեր միտքն բերեմ ձեզ որ էս ամէն բաներըս գիտուտէք. թէ Աստուած միանգամ ժողովուրդըն փրկեց ԵգիպտոսիցՆ[12]. և երկրորդ անգամ անհաւատներին կորուցուց[13]։

6 Եւ էն հրեշտակներըն՝ որ իրանց իշխանութիւնըն չըպահեցին, այլ իրանց բնակութիւնըն թողին[14], (նա) յաւիտենական կապանքներով խաւարի մէջ պահեց[15] մեծ օրի դատաստանին համար[16]։

7 Ինչպէս որ Սոդոմն և Գոմոր, և նորանց չորս կողմի քաղաքներն, որ հենց էն կերպով պոռնկվեցան (իրանց) ընկերների մարմիններին հետ, օրինակի համար առաջներս դրվան՝ յաւիտենական կրակի դատաստան ընդունելով[17]։

8 Հենց էնպէս էլ սոքանք իրր քնով թմրացած՝ մարմինըն պղծումեն[18]. տէրութիւններին անարգումեն, և փառքըն հայհոյումեն[19]։

9 Այնչ որ Միքայէլ հրեշտակապետն երբոր բանսարկու Սատանայի հետ հակառակվելով պատասխան էր տալիս Մովսէսի մարմնոյն համար[20], չըհամարձակվեցաւ հայհոյանքին դատաստան անել[21], բայց ասաց՝ Տէրն քեզ պատժէ[22]։

10 Այդց սորանք էն բաներն որ չեն իմանում՝ հայհոյումեն. և ինչ

(8) Հուդ. ը. 21, 22։ ա Պետր. բ. 8։ (9) Տիտ. բ. 11։ Նբր. ժբ. 15։ (10) բ Պետր. բ. 10։ (11) Տիտ. ա. 16։ բ Պետր. բ. 1։ ա Յովհ. բ. 22։ (12) ա Կորնթ. ժ. 9։ (13) Թուոց. ժդ. 29. 37։ իզ. 64։ Սաղմ. ճզ. 26։ Նբր. գ. 17. 19։ (14) Յովհ. ը. 44։ (15) բ Պետր. բ. 4։ (16) Յայտ. ք. 9։ (17) Ծննդ. ժբ. 24։ ի Օրին. իբ. 23։ բ Պետր. բ. 6։ (18) բ Պետր. բ. 10։ (19) Նյուդ. իբ. 28։ (20) Դան. ժ. 13։ ժբ. 1։ Յայտ. ժբ. ի։ (21) բ Պետր. բ. 11։ (22) Հուդ. գ. 2։

Digitized by Google

քնութեամբ իբրև զանխօս անասունս գիանն , ՚ի նոսին ապականեցին ։

11 Վ այ է նոցա , զի ըստ ճանապարհին Կայենի գնացին , և ըստ մոլորութեանն Նաղաամայ զեղեցան զՀետ վարձուց , և ըստ հակառակութեանն Կորխայ կորեան ։

12 Որք են առեցեալք շոգմոգք՝ երթեալ զՀետ ցանկութեանց իւրեանց . ՚ի սէրս իւրեանց խարդախութեամբ , լինին ընդ ձեզ ուրախակիցք . աներկիւղ զանձինս ճարակեն . ամպք անջրդիք հողմակոծեալք , ծառք պաղակարոյսք անպտուղք , կրկնաւեալք՝ խլեալք արմատոքի ,

13 Ընատաս ալիք ծովու , որ միշտ փրփրեն զիւրեանց զանձանց զամօթս . աստեղք մոլորք , որոց վիհ խաւարին յաւիտենից պահեալ է ։

14 Վարգարէացաւ վասն նոցա և եօթներորդն յԱդամայ Ենովք՝ և ասէ . Ընաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք հրեշտակօք ,

15 Ընել դատաստան ըստ ամենեցուն , և յանդիմանել զամենայն ամբարիշտս վասն գործոց իւրեանց՝ զոր ամբարշտեցին . և վասն ամենայն խիստ բանից , զոր խօսեցան զնմանէ մեղաւորք և ամբարիշտք ։

16 Վորք են տրտնջօղք և շոգմոգք , երթեալք ըստ իւրեանց անձանց ցանկութեանց . և բերանք նոցա զամպարտ էլ անթօս անասունի պէս բանաթենով գիտեմն՝ նոքանցով կապականվին[32] ։

11 Վ այ է նոցա , ընչաւ որ կայէնի ճանապարհովն գնացին[34] . և Նաղաամի մոլորութեան պէս չար վարձքի շահին հեաւեցին[35] , և Կորխայ հակառակութեան պէս կորան[36] ։

12 Վորոնք սաեղի են (և) քաղցրաթոյս խաթերայք[37] , որ իրանց ցանկութիւններին են հեաւեալ[38] . իրանց սերըն ցոյդ են առելու խաթերատութենով , ձեզ հետ ուրախատեան ընկեր են լինում , և առանց վախի (իրանց) անձներըն արածացնուն . անջուր ամպեր[39] քամիներով անդադար տառապած[40] . պտուղ կորց օղ անպտուղ ծառեր , երկու անգամ մեռած՝ արմատից (բնօրէից) պոկվածք[41] ,

13 Վովու կատաղած ալիքներ[42] , որ մէշ իրանց անձների ամօթըն են փրփրացնում[43] . մոլորված աստեղներ , որ յաւիտենական խաւարի անգունդըն նորանց համար է պահվածք[44] ։

14 Ենօքն էլ՝ որ եօթներորդն է Ադամից[45] , որանց համար մարգարեացաւ՝ և ասաց . Ընայ Տէրն հազարաւոր սուրբ հրեշտակներով եկաւ[46] ,

15 Վր դատաստան անէ բոլորին , և ամբարիշտներին յանդիմանէ իրանց գործքերին համար՝ որ նորանք ամբարշտութենով գործեցին . և ամէն կոկիծ և ծանր խօսքերին համար՝ որ ամբարիշտներն և մեղաւորներն նորանից խօսեցին[47] ։

16 Վորք են տրտնջօղներ և փըսփսօղներ , որ իրանց անձներէ ցանկութիւնների պէս են գնում· և նո-

(23) բ Պետ · բ · 12 ։ (24) Յուդէ · ե · 5 ։ ա Կորնթ · ժ · 12 ։ (25) Ելս · իբ · 7 , 21 ։ բ Պետ · բ · 15 ։ (26) Ելս · ԺԶ · 1 ։ (27) բ Պետ · բ · 13 ։ (28) ա Պորնթ · ժա · 21 ։ (29) Ընաւ · իե · 14 ։ բ Պետ · բ · 17 ։ (30) Նիւս · ե · 14 ։ (31) Մատթ · ժե · 13 ։ (32) Նաայ · ծե · 20 ։ (33) Փիլիպ · ե · 19 ։ (34) բ Պետ · բ · 17 ։ (35) Ղսնկէ · է · 18 ։ (36) բ Օրին · ԼԵ · 3 ։ Դատ · է · 19 ։ Ըաւ · ժե · 5 ։ Մատթ · իե · 31 ։ բ Ելս · ա · 7 ։ Ըայտ · ա · 7 ։ (37) ա Ելսէ · բ · 3 ։ Ամմ · Լ · 18 ։ ԼԵ · է ։ Մաղ · ե · 18 ։

Digitized by Google

քաջասանա քաջքաոին . առնուն ակն երեսաց վասն օգտի :

17 Ասայց դուք սիրելիք՝ յիշեցէք զկանխասաց բանս զառաքելոցն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի .
18 Զի ասէին ձեզ , եթէ ի յետին ժամանակս եղիցին մարդիք որ հատուցուցուք , երթեալք ըստ իւրեանց ամբարշտութեանցն ցանկութեանց :
19 Սոքա են նշաւակեալք շնչաւորք , որ զՍգին ոչ ունիցին :
20 Եւքս մեք սիրելիք՝ եղիցուք շինեալ զանձինս սրբութեամբն հաւատոյ ի Հոգին Սուրբ . կացցուք յաղօթս ,
21 Պահել զանձինս սիրովն Աստուծոյ . ակնասնել ողորմութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի կեանսն յաւիտենական :

22 Եւ ոմանց դատապարտելոց լինիջիք կշտամբիչք ,
23 Եւ զոմանս ապրեցուցանիջիք՝ յափշտակեալ ի հրոյ . և ոմանց ողորմաջիք երկիւղիւ դատել , և զպատժաճանն որ ի մարմնոյն իցէ աղտեղեալ :
24 Եւ այնմ , որ կարօղն է պահել զձեզ անարատս և անբիծս , հաստատել առաջի իւրոց փառացն աներևկևան ցնծութեամբ .
25 Միոյն Աստուծոյ փրկչին մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ՝ փառք , մեծութիւն , զօրութիւն և իշխանութիւն՝ յառաջ քան զամենայն յաւիտեան , և այժմ և յամենայն յաւիտեան . ամէն :

բանց բերանն ամբարտաւան բաներ են խօսում[37] . երեսպաշտութիւն են անում շահի համար[38] :
17 Ասայց դուք սիրելիներ՝ յիշեցէք մեր Տէր Յիսուսի Քրիստոսի առաքելոց առաջուց ասած խօսքերն[40] .
18 Ինչու որ ասում էին ձեզ՝ թէ Յետին ժամանակներում անարգող մարդիկ կըլինին , որ իրանց ամբարշտութեան ցանկութեանց ետևէն կըգնան[41] ;
19 Որոնք են ջոկված հեռացած[43] հնչաւորներ[42] , որ Հոգի չունին ;
20 Ասայց մենք սիրելիներ՝ մեր անձներըս սուրբ հաւատքին վերայ շինենք Սուրբ Հոգուվն[44] , աղօթք անենք[45] ,
21 Որ անձներըս Աստուծոյ սիրովն պահենք . մեր Տէր Յիսուսի Քրիստոսի ողորմութեանն սպիկ տալով՝ յաւիտենական կենացն համնելոյ համար[46] :
22 Եւ մինքանիսին որ զատապարտվելոյ վերայ են , խրատ տուէք :
23 Եւ մինքանիսին ապրեցրէք[47] կրակից դուրս քաշելով[48] . և մինքանիսին վերայ խղճացէք՝ որ վախով դատապարտէք էն շորըն էլ՝ որ մարմնից կեղտաւալած է[49] :
24 Եւ Նորան՝ որ կարօղ է անապատ[50] և անկեղտ պահել ձեզ[51] , (և) իրան փառաց առաջին կանգնացնել առանց վախի ցնծութեամբ .
25 Մին մին Աստուծոյն՝ և մեր փրկիչ Յիսուս Քրիստոսին՝ (լինի) փառք , մեծութիւն , զօրութիւն և իշխանութիւն ամէն յաւիտեանից առաջ , և հիմիկ և ամէն յաւիտեաններում . ամէն[52] :

(38) բ Պետր . բ . 18 : (39) Ումխ . ԽԸ . 31 : Յով . բ . 1 . 9 : (40) բ Պետր . գ . 2 : (41) ա Տիմ . գ . 1 . բ Տիմ . գ . 1 . գ . 3 . բ Պետր . բ . 1 . գ . 3 : (42) Ումխ . ՀԸ . 1 : Նախ . ժգ . 7 : Ռէնի . գ . 14 : բ . 10 : Նէր . ժ . 25 : (43) ա Կորնթ . բ . 14 : Յով . գ . 15 : (44) Կող . բ . 7 : ա Տիմ . ա . 4 : (45) Հռովմ . ը . 26 : Նփես . զ . 18 : (46) Տիտ . բ . 13 : բ Պետր . գ . 12 : (47) Հռովմ . ժա . 14 : ա Տիմ . գ . 16 : (48) Ումխ . գ . 11 : ա Կորնթ . գ . 15 : Ովս . գ . 2 : (49) Ովս . գ . 4 , 5 : Յայտ . գ . 4 : (50) Հռովմ . ժգ . 25 : Նփես . գ . 20 : (51) Կող . ա . 22 : (52) Հռովմ . ժգ . 27 : ա Տիմ . ա . 17 : բ . 3 :

Digitized by Google

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1 Յոհաննէս իբրեւ էլաւ յայտնութիւնն զրուած եօթն եկեղեցիներին որ Եփեսոս են, ո՛ր նորանց անունց լինելոյ համար ցոյց ամենայն եօթն ասիի հրեշտակներուն։ 7 Որ իւրաքանչիւր գալն՝ 18 և նա նոցա զգուշութիւնն և մեծ փառքն։

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ Յի-
սուսի Քրիստոսի, ՚ի ձեռն որոյ
եա Ա՛ստուած ցուցանել ծառայից
իւրոց՝ որ ինչ լինելոց է վաղվաղա-
կի. և նշանակեաց առաքելով ՚ի
ձեռն հրեշտակի իւրոյ, առ ծառայ
իւր Յովհաննէս։

2 Որ վկայեաց զվկայութիւն բա-
նին Ա՛ստուծոյ, և զվկայութիւն
Յիսուսի Քրիստոսի՝ զոր ետես. և
որ էր՝ և որ լինելոցն էր յետ ա-
նորիկ։

3 Երանի՛ որ կարդայցէ և ամ-
լսիցէ զբանս մարգարէութեանս, և
պահեսցէ զոր ՚ի սմա գրեալ է.
զի ժամանակ մերձեալ է։

1 ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի յայտ-
նութիւնն՝ որ ետուն Ա՛ստուած ա-
ւաւ իրան՝ որ ցոյց տայ իրան ծա-
ռաներին[1] էն որ շուտով պիտի լի-
նի[2]. և իրան հրեշտակի ձեռքէն
ուղարկեց նշանց տուաւ իրան Յո-
հաննէս ծառային։

2 Որ վկայեց Ա՛ստուծոյ բանին,
և Յիսուսի Քրիստոսի վկայու-
թեանն[3] որ տեսաւ[4] էն որ էր, և
որ նրանից առաջ պիտի լինէր։

3 Երանի՛ նորան՝ որ կարդայ և
լսէ էս մարգարէութեան խօսքերն,
և պահէ էն՝ որ մէրնումէ գրուած
է[5]. ինչու որ ժամանակն մօտացել
է[6]։

(1) Յովհ. գ. 22։ ը. 26։ ժբ. 20։ (2) Յայտ. գ. 1։ ժ. 7։ (3) Յայտ. ի. 16։ (4) ա Կորնթ. ա. 6։ Յայտ. գ. 9։ ժբ. 17։ ժ. 4։ (5) ա Յովհ. ա. 1։ (6) Դան. ժա. 28։ Յայտ. իբ. 7։ (7) Հռով. ժգ. 11։ Ղուկ. ա. 3։ ա Պետր. գ. 7։ Յայտ. իբ. 10։

4 Յովհաննէս առ եօթն եկեղեցիսն՝ որ են ՚ի Ասիա, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն ՚ի Աստուծոյ՝ ՚ի էն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և յեօթն հոգւոցն զորս ՚ի առաջի աթոռոյն իւրոյ ։

5 Եւ ՚ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է անդրանիկ ՚ի մեռելոցն, և իշխան թագաւորութեանց երկրի. որ սիրեաց զմեզ, և ելոյծ զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով ։

6 Եւ արար զմեզ թագաւորս և քահանայս Աստուծոյ և Հօր իւրոյ. որում փառք և զօրութիւն՝ յաւիտեան և միշտ և յաւիտենից յաւիտենից. ամէն ։

7 Ահաւասիկ գալոց է ընդ ամպս. և տեսցէ զնա ամենայն աչք, և տեսցեն զնա ծագք երկրի, և որք խոցոցին զնա ամենեքեան յերկրի, և կծծեսցին ՚ի վերայ նորա. այո՝ ամէն ։

8 Ես եմ Ա և Ք, ասէ Տէր Աստուած, որ էն՝ և որ էր՝ և որ գալոցն է Ամենակալ ։

9 Ես Յովհաննէս եղբայր ձեր և հաւատակից նեղութեան՝ և արքայութեան՝ և համբերութեան որ ՚ի Քրիստոս Յիսուս. եղէ ես ՚ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս՝ վասն բանին և վասն վկայութեան Յիսուսի Քրիստոսի ։

4 Յովհաննէսից եօթն եկեղեցիներին՝ որ Ասիայի մէջն են, շնորհք (կենի) ձեզ հետ՝ և խաղաղութիւն Աստուածմանից՝ Նորանից որ է[3]. և որ էր[3], և որ գալոց է, և եօթն հոգիներիցն, որ նորա աթոռի առաջին են[10] ։

5 Եւ Յիսուս Քրիստոսից էն հաւատարիմ վկայից[11], որ մեռելների միջից առաջինեկն է[12], և երկրի թագաւորներու իշխան[13]. որ մեզ սիրեց[14], և մեր մեղաց կապանքներըն արձակեց իրան արիւնովը[15]։

6 Եւ մեզ արաւ թագաւորներ և քահանաներ Աստուծոյ և իրան Հօր համար[16]. որ նորան (կենի) փառք և զօրութիւն՝ հիմիկ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն[17] ։

7 Նա գալոց է ամպերով. և ամէն աչքերն կը տեսանեն նորան, և երկրի ծայրերն, և նորանք էլ որ խոցոցին նորան[18]. և երկրի ամէն ազգերն կոծ կանեն նորա վերայ. իրաւ՝ ամէն[19] ։

8 Ես եմ Ա և Ք, ասաւ Տէր Աստուած[20], նա որ է՝ և որ էր՝ և որ գալոց է Ամենակարօղն[21] ։

9 Ես Յովհաննէս ձեր եղբայր և հաւատարիմ ընկեր[22] նեղութեան՝ և արքայութեան[23] և համբերութեան որ Քրիստոս Յիսուսումն է. ես պատմա տաւած կղզեակումն (ապրեցա՝ ես) էի Աստուծոյ բանին համար, և Յիսուսի Քրիստոսի վկայութեանն համար[24] ։

(1) Նա · գ · 14 · Ա՝ · 8 · (2) Յովհ · ա · 1 · (10) Օ՚ · գ · 9 · գ · 10 · Յայտ · գ · 1 · գ · 5 · է · 6 · (11) Յովհ · ը · 14 · ա Տի՚ · գ · 13 · Հայտ · գ · 14 · (12) ա Կորնթ · ժե · 20 · Կող · ա · 18 · (13) Նէթ · ա · 20 · Հայտ · ժե · 14 · ժը · 16 · (14) Յովհ · ժգ · 34 · ժե · 9 · Կող · ր · 20 · (15) Նէթ · ը · 18 · ա Հով · ա · 7 · (16) ա Պետ · բ · 5 · 9 · Հայտ · ե · 10 · ի · 6 · (17) ա Տի՚ · գ · 18 · Նէթ · ժգ · 24 · ա Պետ · գ · 11 · է · 14 · (18) Ման · է · 10 · Մատթ · իգ · 30 · իգ · 68 · Ղուկ · գ · 15 · (19) Օ՚ · ժբ · 40 · Յովհ · ժը · 37 · (20) Հայտ · իա · 5 · Հգ · 6 · իա · 12 · Ա՚ · 10 · 17 · Հայտ · բ · 8 · իա · 6 · իբ · 18 · (21) Ա՚ · 4 · Հայտ · գ · 8 · ժա · 17 · ժգ · 5 · (22) Փիլիպ · ա · 7 · գ · 14 · բ Տի՚ · գ · 9 · (23) Ա՚ · գ · 17 · բ Տի՚ · բ · 12 · (24) Հայտ · ա · 9 · Վէր · 2 ·

10 Եւ եղեւ յիս՝ ՚ի կիւրա-
կէի աւուր, և լուայ զձայն զհես
իմ զմեծ իրրեւ զձայն փողոյ, որ ա-
սէր ցիս. Ես եմ Ա՛լֆա և Ով. ա-
ռաջին և վերջին։

11 Զոր տեսանես՝ գրեա ՚ի գիրս,
և ուղարկեա յեօթն եկեղեցիս՝ որ
յԵփեսոս և ՚ի Զմիւռնիա՝ ՚ի Պեր-
գամոն և ՚ի Թիւատիրա, և ՚ի
Սարդիկէ, և ՚ի փիլադելփեա, և
՚ի Լաւոդիկեա։

12 Եւ դարձայ տեսանել զձայնն՝
որ խօսեր ցիս. և ՚ի դառնալն ի-
մոմ տեսի եօթն ճրագարան ոսկի։

13 Եւ ՚ի մէջ եօթն ճրագարա-
նացն նմանն Որդւոյ մարդոյ, զգե-
ցեալ պատմուճանն պզտնաւոր, և գո-
տեւորեալ առ առեամբքն գօտի ոս-
կեղէն.

14 Եւ գլուխ նորա և հերքն իբ-
րև զսպո սպիտակ՝ և որպէս զձիւն.
և աչք նորա որպէս բոց հրոյ.

15 Եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ
ծխելոյ ՚ի մէջ ՚ևոցի հրաշէկ. և
ձայն նորա իբրև զձայն լուրց բազ-
մաց։

16 Եւ ունէր յաջոյ ձեռինն ի-
րում աստեղս եօթն, և ՚ի բերա-
նոյ նորա ելանէր սուր երկսեռան-
եան. և երեսք նորա իբրև զարե-
գական ճառագայթեալ երևեին։

17 Եւ իբրև տեսի զնա՝ անկայ
առ ոտս նորա իբրև զմեռեալ. և
եդ ՚ի վերայ իմ զաջ իւր՝ և ասէ
ցիս. Ա՛ի երկնչիր, ես եմ առա-

10 Եւ ՚ևոգի էլաւ ինձ վերայ[35]
կիրակի օրուա՛ն[36]. և իմ լսեաի մեծ
ձայն լսեցի ինչպէս փողի, որ
ասումէր ինձ[37]. Ես եմ Ա՛լֆան և
Օն[38], առաջինն և վերջինն[39]։

11 Ինչ որ տեսնուա՛ծ՝ գրիր մին
գրքի մէջ, և ուղարկեա էն եօթն
եկեղեցիներուն որ Եփեսոսի և Զ-
միւռնիայի, և Պերգամոնի, և Թի-
ւատիրայի, և Սարդիկէի, և փի-
լադելփեայի, և Լաւոդիկեայի մէջն
են։

12 Եւ դարձայ որ էն ձայնըն տես-
նե՛մ՝ որ ինձ հետ խօսուա՛ծը. և
երբոր դարձայ՝ եօթն ոսկի ճրագա-
կալ տեսի[40]։

13 Եւ էն եօթն ճրագակալներուն
միջուա՛ն[41] (մինն կար) Որդյ մարդոյ
նմանն[42], որ երկար կապոյ ունէր
հագած մինչև ոտներուն պզտնեռն[43], և
ծըծերուն մօտ ոսկի գօտիկ կապած[44]։

14 Եւ նորա գլուխն և մազերն
ըլըղի պէս՝ ձիւնի պէս սպիտակ[45].
և նորա աչքերն կրակի բոցի պէս[46]։

15 Եւ նորա ոտներն կարմրած (ազ-
նիւ) պղնձի պէս որ փոռան մէջն կը-
րակով կայմրած է[47], և նորա ձայ-
նըն շատ ջրերի ձայնի պէս[48]։

16 Եւ իրան ալ ձեռի մէջն եօթն
աստեղներ ունէր[49], և նորա բերա-
նէն երկու բերանի սուր էր գուրս
գալիս[50], և նորա երեսն արեգական
պէս ճառագայթած էր երևում[51]։

17 Եւ երբոր տեսի նորան՝ մեռա-
ծի պէս վըր ընկայ նորա ոտներուն
առաջին[52]. և իրան ալ ձեռըն ինձ
վերայ դրաւ՝ և ասաց ինձ[53]. Ա՛ի

(35) Գործ · ժ · 10։ բ Կորնթ · ժբ · 2։ Յայտ · գ · 2։ ժե · 3։ իա · 10։ (36) Յովհ · ի · 26։ Գործ · ի · 7։ ա Կորնթ · ժգ · 2։ (37) Յայտ · գ · 1։ ժ · 8։ (38) Ալֆ · 8։ (39) Ալայր · 17։ (40) Ալայր · 20։ Նէս · իե · 37։ Ովս · գ · 2։ (41) Հայտ · բ · 1։ (42) Նգ Հ · ա · 26։ Գան · է · 13։ ժ · 16։ ժգ · 13։ (43) Գան · ժ · 5։ (44) Յովհ · ժե · 6։ (45) Գան · է · 9։ (46) Գան · ժ · 6։ Յայտ · բ · 18։ ժբ · 12։ (47) Նգ Հ · ա · 7։ Գան · ժ · 6։ Յայտ · բ · 18։ (48) Նգ Հ · իգ · 2։ Գան · ժ · 6։ Յայտ · ժգ · 2։ ժբ · 6։ (49) Ալայր · 20։ Յայտ · բ · 1։ գ · 1։ (50) Եզ · իգ · 2։ Նէս · ը · 17։ Նբր · գ · 12։ Յայտ · բ · 12 · 16։ ժբ · 15 · 21։ (51) Գործ · իգ · 13։ Յայտ · ժ · 1։ (52) Նգ Հ · ա · 28։ (53) Գան · ը · 18։ ժ · 10։

Digitized by Google

ջին և ես եմ յետին ։

18 Եւ ես եմ կեանք՝ և ես նոյն որ մեռայ, և եմ կենդանի այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։ և ունիմ զիշխանս մահու և դժոխոց ։

19 Գրեա՛ զոր տեսանես՝ որ էն, և որ յապագայ՝ և որ հանդերձեալ է լինել այս ։

20 Խորհուրդ եօթն աստեղացդ՝ զոր տեսերդ յաջս իմ · և զեօթն ճրագարանս ոսկիս · եօթն աստեղքն՝ հրեշտակք եօթն եկեղեցեացն են, և ճրագարանքն եօթն՝ եօթն եկեղեցիքն են ։

վախճանաբ, ես եմ առաջինն և (ես եմ) վերջինն[44] ։

18 Եւ (ես եմ) կեանքն[45], և ես (եմ) նա՛ որ մեռայ, և (ահա՛) կենդանի եմ հիմիկ և միշտ և յաւիտեան յաւիտենից, ամէն[46] · և ունիմ մահի և դժոխքի բանալիքներն[47] ։

19 Գրի՛ր զինչ որ տեսանես[48], և զինչ որ է[49], և զինչ որ յետոյ լինելու է[50] ։

20 Գնն եօթն աստեղներուն խորհուրդը որ իմ աջ ձեռիս վրէն տեսիր[51], և էն եօթն ոսկի ճրագակալներըն[52] · եօթն աստեղներն՝ եօթն եկեղեցիներուն հրեշտակներն են[53], և եօթն ճրագակալներն՝ եօթն եկեղեցիներն են[54] ։

ԳԼՈՒԽ · Ռ

1 Նփեսացոց ։ 8 Զմիւռնացոց ։ 12 Պէրգամոյ ։ 18 Եւ Թիւատիրի եկեղեցիներուն հրեշտակներուն (այսինքն) հոգեւոր պաշտօնեաներուն ետեւ պատուէրները · և էն եկեղեցիներուն ետեւ դովասանքն և սասանքն ։

1 Ա՛ռ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն գրեա՛ · Ա՛յսպէս ասէ կարօղն՝ որ ունի զաստեղս եօթն յաջու ձեռին իւրում, և շրջի՛ ի մէջ եօթն աշտանակի ոսկւոյ ։

2 Գիտեմ զգործս քո և զվաստակս քո և զհամբերութիւն քո · և զի ո՛չ բառնաս զչարս, և փորձեցեր՝ որ ասեն զինքեանս առաքեալս՝ և ո՛չ են, և գտեր զայնոսիկ՝ և սուտս ։

3 Եւ համբերեցեր և վշտացար վասն անուան իմոյ՝ և աշխատեցար ։

1 Ընփեսացոց եկեղեցւոյ հրեշտակին գրէ՛ր · Այսպէս է ասում (էն) կարօղն՝ որ եօթըն աստեղներըն ուն իրան աջ ձեռուն[1], և եօթն ոսկի ճրագակալներուն մէջն կան է գալիս[2] ։

2 Գիտում քո գործքերըդ՝ և քո վաստակներըդ և քո համբերութիւնդ[3] · և որ չարերին չես համբերում, և (էլ) փորձեցիր նորանց[4] որ իրանց առաքեալ են ասում՝ և չեն, և գտիր (են ասում)՝ և սուտ են[5] ։

3 Եւ իմ անունիս համար համբերեցիր, և նեղութիւն քաշեցիր և աշխատեցիր (և չըմռայացար[6]) ։

(44) Նոյ · խա · 8 : խգ · 9 : խը · 12 : (45) Յոյս · բ · 8 : խբ · 18 : ԱԽ · 10 : (46) Յովհ · ժա · 25 : ժգ · 8 : Հռովմ · գ · 9 : (47) Յովհ · դը · 20 : (48) Յոյս · բ · 1 : ԱԽ · 12 : (49) Յոյս · բ · 1 · (50) Յոյս · գ · 1 : (51) ԱԽ · 16 : (52) ԱԽ · 12 : (53) Մտ · բ · 7 : Յոյս · բ · 1 : (54) Օսէ · գ · 2 : Մատթ · ե · 15 : Փիլիպ · բ · 15 : (1) Յոյս · ա · 16 · 20 : (2) Յոյս · ա · 13 : (3) Մտթ · ա · 6 : Վ.յոյ · 9 · 18 · 19 : : Յոյս · 1 · 8 · 13 : (4) ա Յովհ · գ · 1 : (5) բ Պետ · ժա · 13 : բ Պետ · բ · 1 : (6) Կտ. · գ · 9 : Եբր · ժբ · 3 · 5 ։

Digitized by Google

4 Ես՝ ասեմ առ քեզ, զի զսէրն քո զառաջինն թողեր։

5 Յիշեա՛ այժմ ուստի անկարն՝ և ապաշաւեա՛, և զառաջին գործսն քո արա՛. ապա թէ ո՛չ՝ գամ ես վասն քո, և շարժեցից զաշտանակս քո ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ ո՛չ ապաշխարեսցես։

6 Այլ զայս արա՛՝ զի ատեսցես զգործսն Նիկողայտացւոց, զորս ես ատեմ։

7 Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ զինչ ասէ Հոգին Աստուած եկեղեցեաց. Որ յաղթէն, տացից նմա ուտել ի փայտէն կենաց՝ որ է ի մէջ դրախտին Աստուծոյ։

8 Եւ առ հրեշտակ Փիւնացւոց եկեղեցւոյն գրեա՛. Այսպէս ասէ Նախիզբն և անվախճանն, որ եղև մեռեալ և կենդանացաւ։

9 Գիտեմ զգործս քո՝ և զնեղութիւն և զաղքատութիւն, այլ հարուստ ես դու. և զհայհոյութիւնն՝ որ ասէին զինքեանս Հրէայս գոլ՝ և չէին ինչ, այլ ժողով Սատանայի։

10 Մի՛ երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարիլ. ահա Սատանայ արկանել ի ձէնջ ի բանտ, զի փորձիցիք, և ունիք նեղութիւն տասն տասուրս տանն. լեր հաւատարիմ մինչև ի մահ, և տացից քեզ զպսակն կենաց։

11 Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին Աստուած ասէ առ եկեղեցիս. Որ յաղթէ, ոչ անհրաւիրի յերկրորդ մահուանէն։

4 Այլ ես եմ ատում քեզ՝ որ քո առաջին սէրդ թողիր։

5 (Ուրեմն) յիշիր (թէ) որտեղից վէր ընկար՝ և ղղջացիր, և քո առաջին գործքերդ արա. ապա թէ չէ՝ ես կերթամ շուտով, և քո ճրագակալդ կըշարժեմ իրան տեղից՝ թէ որ չապաշխարես[7]։

6 Այլ ես բանս արա՛ որ Նիկողայոսի գործքերդն ատես, էն որ ես էլ ատում եմ[8]։

7 Ով որ լսելոյ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Աստուած Հոգին ասում է եկեղեցիներին[9]. Ով որ յաղթում՝ նորան կենաց փայտից[10] ուտել կըտամ, որ Աստուծոյ դրախտին մէջն է[11]։

8 Եւ Փիւնացոց եկեղեցոյ հրեշտակին գրիր. Այսպէս է ասում Նա՝ որ ոչ սկիզբն ունի և ոչ վերջ, որ էլաւ մեռեալ և կենդանացաւ[12]։

9 Գիտեմ քո գործքերդ և նեղութիւնդ և աղքատութիւնդ[13]. բայց քո աղքատութիւնդ մեծութիւն կըլինի[14]. և (նորանց) հայհոյանքն որ իւրանց համար ասում են թէ Հրէայ են և չեն[15], բայց Սատանայի ժողովք (են)[16]։

10 Մի՛ վախենար էն բաներից որ պիտի չարչարվիս. ահա Սատանան պատրաստված է որ ձեզանից բանտի մէջ քիչ, որ փորձվիք, և տասն օր նեղութիւն կունենաք[17]. հաւատարիմ կաց մինչև մահ[18], և կենաց պսակն կըտամ քեզ[19]։

11 Ով որ (լսելոյ) ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Աստուած Հոգին ասում է եկեղեցիներին[20]. ով որ յաղթում, երկրորդ մահից ձեռա չի քաշիլ[21]։

(7) Գործ. բ. 41. 43։ (8) Սաղմ. 15։ (9) Գործ. ժա. 15։ ժգ. 9. 43։ Սաղմ. 11. 17. 29։ Հայտ. գ. 9. 13. 22։ ժգ. 9։ (10) Ծննդ. բ. 9։ (11) Հայտ. իգ. 2. 14։ (12) Հայտ. ա. 8. 17, 18։ (13) Սիր. 2։ (14) Ղուկ. ժբ. 21։ ա Տիմ. գ. 18։ Հայտ. բ. 5։ (15) Հռոմ. բ. 17. 28, 29։ թ. 6։ (16) Հայտ. գ. 9։ (17) Գործ. ժ. 23։ (18) Գործ. իգ. 13։ (19) Հայտ. ա. 12։ Հայտ. գ. 11։ (20) Սիր. 7։ Հայտ. ժգ. 9։ (21) Հայտ. ի. 14։ իա. 8։

Digitized by Google

12 Եւ առ հրեշտակն՝ որ ի Պերգամոս եկեղեցին, գրեա. Այսպէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սրբեալ։

13 Գիտեմ զգործս քո՝ և զի բնակեալ ես ուր աթոռն է Սատանայի, և ունիս զանունն իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ յաւուրս յորում Անթիպաս վկայն իմ հաւատարիմ եղև. զի վկայ է իմ հաւատարիմ ամենայն հաւատացեալ՝ որ սպանաւ ի ձէնջ, որ կայք ուր Սատանայ է բնակեալ։

14 Այլ ունիմ առ քեզ սակաւ. զի կայ առ քեզ վարդապետութիւն Բաղաամայ՝ որ ուսոյց զԱղաւակ դնել գայթագղութիւն առաջի որդւոցն Իսրայէլի, ուտել նոցա զոհեալ՝ և պառնկել։

15 Այսպէս և դու ունիս զվարդապետութիւն Նիկողայեցեաց՝ զոր ես ատեմ։

16 Արդ՝ ապաշխարեա, ապա թէ ոչ՝ գամ վաղվաղակի. և պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմով։

17 Որ ունիցի ականջս լսելոյ՝ լսիցէ զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս. Որ յաղթէ՝ տացս նմա ուտել ի մանանայէն թաքուցեալոյ, և տացս նմա զգիրն սրբութեան. և գրեալ անուն նոր ի գիրն, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն որ առնուն։

18 Եւ առ հրեշտակն որ ի Թիւատիրա եկեղեցին՝ գրեա. Այսպէս ասէ Որդին Աստուծոյ, որոյ աչք իւր են իբրև զբոց հրոյ, և ոտք նորա նման պղնձի ծխելոյ։

12 Եւ Պերգամայի եկեղեցոյ հրեշտակին գրէ. Այսպէս է ասում նա՝ որ երկու բերանի սուրըն սրած ունի[22]։

13 Գիտեմ քո գործքերըդ[23], և որ դու հնտեղն ես բնակվում՝ որտեղ որ Սատանայի աթոռն է[24]. և իմ անունըս ունիս, և իմ հաւատքըս չուրացար՝ էն օրումն, որ իմ Անթիպաս վկան հաւատարիմ էլաւ. (ինչու որ ամէն հաւատացեալ՝ իմ հաւատարիմ վկաս է,) որ ձեր միջումն սպանվեցաւ՝ որտեղ որ Սատանան է բնակվում։

14 Այլ քեզ դէմ քիչ բան ունիմ. պատճառն որ քեզ մոտ կայ Բաղաամի վարդապետութիւնն՝ որ Բաղակին սովորցրուց, որ գայթակղութիւն դնէ Իսրայէլի որդոց առաջին[25], որ նորանք (կըռքի) մատաղ ուտեն[26] և պառնկութիւն սնեն[27]։

15 Այսպէս էլ դու՝ Նիկոլայեցոց վարդապետութիւնըն ունիս՝ որ ես ատումեմ[28]։

16 Ուրեմն ապաշխարիր, ապա թէ չէ՝ կըգամ շուտավ, և կըկռվիմ նորանց հետ իմ բերանիս սրովն[29]։

17 Ով որ (լսելոյ) ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասումէ եկեղեցիներին[30]. Ով որ յաղթուէ՝ էն պահվածի մանանայիցն ուտել կըտամ նորան, և սրբութեան գիր կըտամ նորան. և էն գրի վերայ նոր անուն գրվածի, որ իսկի մինն չի գիտուի, բայց նա՝ որ առնուումի[31]։

18 Եւ Թիւատիրի եկեղեցոյ հրեշտակին գրէ. Այսպէս է ասում Աստուծոյ Որդին, որ նորա աչքերըն կրակի բոցի նման են, և նորա ոտներն մաքուր գտված պղնձի պէս[32]։

(22) Յայտ. ա. 16։ (23) Վէր. 2։ (24) Վէր. 9։ (25) Թուոց. իդ. 14. իե. 1, լա. 16։ բ Պետր. բ. 15։ Յուդ. 11։ (26) Ա Կոր. 20։ Գործ. ժե. 20։ ա Կորնթ. ը. 9, 10։ ժ. 19, 20։ (27) ա Կորնթ. զ. 13։ (28) Վէր. 6։ (29) Նոյ. ժա. ե։ բ Թես. բ. 8։ Յայտ. ա. 16։ ժբ. 15. 21։ (30) Վէր. 7. 11, 13։ (31) Յայտ. գ. 12։ ժբ. 13։ (32) Յայտ. ա. 14, 15։

Digitized by Google

19 Տեսի զգործս քո՝ և զսէր և զհաւատս՝ և զպաշտօն քո հոգւովդ Թեսմէ. զի բազում է վաստակ քո վերջինն քան զառաջինն։

20 Ունիմ ասել առ քեզ բազում. զի թողեր զինն զկնգաբէլ. որ սաէր զինքն մարգարէ, և ուսուցանէր ժողովրդեան զծառայս իմ՝ պոռնկել և ուտել զզոհեալ։

21 Եւ եռաւ նոցա ժամանակ սպասկարել զպոռնկութիւնն իւրեանց՝ և ոչ ապաշխարեցին։

22 Ունհաւատիկ ես արկանեմ զնա ի ննջս, և զգործակիցս իւր ընդ նմա ընացուս՝ ի նեղութիւնս մեծս. եթէ ոչ ապաշխարեսցեն ի գործոց իւրեանց։

23 Եւ զորդիս նոցա սպանից մահուամբ. և ծանիցեն ամենայն եկեղեցիք՝ թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս և զսիրտս. և տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց։

24 Ունմէ ձեզ ասեմ որք ի Թիւատիրա էք, և ոչ ունիք զվարդապետութիւնս զայս. որ ոչ ծանեայք զխոր Սատանայի՝ զոր խօսին. Ունչ արկից ձեզ ծանրութիւն։

25 Ունմէ զոր ունիք, պահեցէք՝ մինչև ես գամ։

26 Եւ որ յաղթէ և պահէ զգործս իմ մինչև ցվախճան, տաց նմա իշխանութիւն ի վերայ ազգաց։

27 Եւ հովուեսցէ զնոսա գաւազանով

19 Տեսի քո գործքերդ[39], և սէրդ և հաւատքդ, և քո ծառայութիւնդ, և քո համբերութիւնդ. որ քո վերջին աշխատանքդ շատ է քանէ առաջինն։

20 Ոչայց քեզ չար եմ ասում. էն որ հնգետասէլ կնկանն հանդուրժում էր ասում իրան, և իմ ծառաներիս մոլորութիւն է սովորցնում[34], որ պոռնկութիւն անեն և (կրոնքի) մատաղ ուտեն[35]։

21 Եւ ժամանակ տուի նորանց՝ որ ապաշխարեն իրանց պոռնկութեան համար, և չապաշխարեցին[36]։

22 Ունհա ես նորան փոսի մէջ կը-քցեմ, և նորա գործընկերներըն էլ որ նա նորանց հետ չնացաւ՝ մեծ մեծ նեղութիւնների մէջ. եթէ որ չապաշխարեն իրանց գործքերից։

23 Եւ նորանց որդիքներըն մահով կըսպանեմ. և ամէն եկեղեցիներն կըճանաչեն՝ թէ ես եմ որ քննում եմ երիկամունքներըն և սրտերըն[37], և տալիս եմ ձեզ ամէն մէկիդ իրան գործքերի չափովն[38]։

24 Ոչայց ձեզ ասում եմ՝ որ Թիւատիրացի էք, և էս վարդապետութիւնըս չունիք. որ Սատանայի խորութիւններըն էլ չըճանաչեցիք, ինչպէս որ նորանք խօսում են. Ձեզ վերայ ծանրութիւն չեմ դնիլ[39]։

25 Ոչայց էն որ ունիք՝ պահեցէք մինչև ես գամ[40]։

26 Եւ ով որ յաղթում է և իմ գործքերս պահում մինչև վերջն[41], նորան իշխանութիւն կըտամ ազգերի վերայ[42]։

27 Եւ երկաթէ գաւազանով կը-

(33) Վէր • 2 • 9 • 13։ (34) գ Գնաւ • ժգ • 31։ թա • 25։ գ Գնաւ • բ • 7։ (35) Նե • ւբ • 15։ Գործ • ժե • 20 • 29։ ա Կորնթ • ժ • 19, 20։ Վէր • 14։ (36) Հռ • ովմ • բ • 4։ Յայտ • բ • 20։ (37) ա Գնաւ • ժգ • 7։ ա Պետ • իբ • 9։ Կո • 17։ բ Պետ • գ • 30։ Պսալ • է • 9։ Երեմ • ժա • 20։ ժէ • 10։ բ • 12։ Յեղ • բ • 24, 25։ Գործ • ա • 24։ Ղուկ • ը • 27։ (38) Պսալ • կբ • 12։ Պտրկ • ժգ • 27։ Հռով • բ • 6։ ժգ • 12։ բ Կորնթ • ե • 10։ Գործ • գ • 5։ Յայտ • ը • 12։ (39) Գործ • ժե • 28։ (40) Յայտ • գ • 11։ (41) Յեղ • գ • 39։ ա Յեղ • գ • 33։ (42) Պտրկ • ժբ • 28։ Ղուկ • իգ • 29, 30։ ա Կորնթ • զ • 3։ Յայտ • գ • 21։ բ • 6։

Digitized by Google

զանաւ երկաթեայս . և իբրև զա-
նօթ բրտի փշրեսցէ զնոսա :
28 Իրպէս և ես ընկալայ ՚ի Հօ-
բէ իմմէ , և ասաց նոցա զաստղն
առաւօտուն :
29 Որ ունի ականջս լսելոյ՝ լու իցէ
զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս :

Հավուէ նորանց , և բրուտի (կավեայ
չինած) ամանի պէս կրփշրէ նորանց[43]։
28 Ինչպես որ ես էլ իմ Հօրից
ընդունեցի , և կրտամ նորանց ա-
ռաւօտուս աստղըն[44] :
29 Ով որ ականջ ունի՝ թող լսէ
ինչ որ Հոգին ասումէ եկեղեցինե-
րին[45] :

Գ Լ · Գ

2 Ջրթիատա աստուածն Սարդիացոց եկեղեցոյ հրեշտակին . 3 Զգօրգուսանէ նորան որ ապաշ-
խարէ և պատիժ խոստանուածն նորա . 8 Պատուէն Փիլադելփացւոյ եկեղեցոյ հրեշտակին՝ 10
Նրան սքղնուն լինելոյն և համբերութեանն համար . 15 Նախատինք է ասելս Լաւդիկեայ
եկեղեցոյ հրեշտակին՝ ոչ ցուրտ և ոչ տաք լինելոյն համար , 19 Նա պատուէր է տալիս որ
ասէնք նախանձով և ջերմեռանդ լինի : 20 Ջրթիատա դռան առաջին կանգնած թաղուած :

1 Եւ առ հրեշտակ Սարդիացւոց
եկեղեցւոյն գրեա . Այսպէս ասէ՝
որ ունի զեօթն Հոգին Աստուծոյ՝
և զեօթն աստեղս . Տեսի զգործս
քո՝ զի անուն կենդանւոյ ունիս և
մեռեալ ես :
2 Լեր արթուն՝ և հաստատեա՛
այսուհետև՝ զի հանդերձեալ ես մե-
ռանել . քանզի ՚ոչ գտի զգործս քո
կատարեալ առաջի Աստուծոյ :
3 Յուրեմն միտդ բեր թէ որպէս լուա-
րըն , և պահեա՛ և ապաշխարեա՛ .
ապա թէ ոչ զուարթանաս՝ գամ
որպէս գող . և ոչ գիք իմանայ զգա-
լուստ իմ առ քեզ :
4 Ունիս սակաւ մի զանուն Սար-
դիացւոցն , որք ոչ աղտեղացուցին
զՀանդերձս իւրեանց . և շրջին ՚ի
սպիտակս՝ որում արժանի եղեն :
5 Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի ըս-

1 Եւ Սարդիացոց եկեղեցոյ հր-
եշտակին գրիր . Այսպէս է ասում
նա՝ որ Աստուծոյ եօթըն Հոգիքըն,
և (էն) եօթըն աստեղներըն ունի[1]։
Տեսի քո գործքերըդ[2], ինչու որ կեն-
դանոյ անուն ունիս՝ և մեռած ես[3] :
2 Զրթիռն կաց , և սրանից ետև
հաստատվիր , որ (շուտով) պիտի
մեռնիս . պատճառն որ քո գործքե-
րըդ կատարեալ չըգտի Աստուծոյ
առաջին :
3 Ուրեմն միտդ բեր թէ ինչպէս
լսեցիր , և պահիր[4] և ապաշխարիր[5] .
ապա թէ որ չզարթնանաս՝ կըգամ
գողի պէս . և ոչ ով չիմանալ իմ
գալըս քեզ ժօտ[6] :
4 (Նայց) ունիս մինքիչ անուն-
ներ էլ Սարդիացոց մէջն[7] , որ ի-
րանց շորերըն չըկեղտոտացրին[8] , և
սպիտակ (շորերով) են մանգալիս՝
որ նորան արժանի էլան[9] :
5 Ով որ յաղթուում՝ հագնէս ըս-

(43) Ոգէ . բ · 8 , 9 : Ելք . 15 : Դան . է . 22 : Հայր . ժբ . 5 · ժբ . 15 : (44) Բ Պետր . ա . 19 : Հայր . իբ . 16 : (45) Ա Իւ . 7 : (1) Հայր . ա . է . 18 : գ . 5 : է . 6 : (2) Հայր . բ . 2 : (3) Ներ . բ . 1 . 5 : ա Տիմ . է . 6 : (4) ա Տիմ . գ . 20 : բ Տիմ . ա . 13 : Ա այր . 11 : (5) Ա այր . 19 : (6) Մատթ . իգ . 42 , 43 , ին . 13 · Մարկ . ժգ . 33 : Ղուկ . ժբ . 39 , 40 : ա Թես . է . 2 . 6 : բ Պետր . գ . 10 · Հայր . ժգ . 15 : (7) Փոխ . ա . 15 : (8) Հռոմ . 23 : (9) Հայր . գ . է : գ . 11 : է . 9 . 13 :

Digitized by Google

պիտակս . և ոչ ընկճեցի անուն նո-
րա ՚ի դպրութենէն կենաց . և խոս-
տովանեցայց զանուն նորա առաջի
Ա՛ր իմոյ և առաջի հրեշտակաց :

6 Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ
զինչ ասէ Ա՛ստիւն առ եկեղեցիս :

7 Եւ առ հրեշտակն փիլադելփ-
իացւոց եկեղեցւոյն գրեա . Ա՛յսպէս
ասէ Այուրբն , Ա՛շխարհան , որ ու-
նի զփականս Դաւթի . բանայ՝ և
ոչ ոք է որ փակէ , և փակէ՝ և ոչ
ոք է որ բանայ :

8 Ես գործս քո . ահա եռաս
առաջի քո դուռն բացեալ , զոր ոչ
ոք կարէ փակել . զի սակաւիկ ու-
նիս զօրութիւն , և պահեցեր զբանս
իմ , և ոչ ուրացար զանուն իմ :

9 Ա՛հաւասիկ ես տամ քեզ ըղ-
ժողովէն Սատանայի , որք ասեն զին-
քեանս Ա՛րեայս գոլ՝ և ոչ են , այլ
ստեն . արարից զնոսա՝ զի եկեսցեն՝
և երկիրպագցեն առաջի ոտից քոց ,
և ծանիցեն զի ես սիրեցի զքեզ :

10 Զի պահեցեր զբան համբերու-
թեան իմոյ , և ես պահեցից զքեզ
՚ի ժամ փորձութեան քո . որ հան-
դերձեալ է գալ յամենայն տիեզերս
փորձել զամենայն բնակեալս յերեսս
երկրի :

11 Ա՛հա գամ վաղվաղակի . կալ
զոր ունիսդ՝ զի մի ոք առցէ զպսակ
քո :

պիտակ կըհագնի[20] . և նորա անու-
նըն[21] կենաց գրքիցն չի ջնջվիլ[22] . և
կըդաւանեմ նորա անունըն իմ Ա՛ր-
րըս առաջին՝ և նորա հրեշտականեըն
առաջին[23] :

6 Ով որ (լսելոյ) ականջ ունի՝
թող լսէ ինչ որ Ա՛ստիւն ասումէ ե-
կեղեցիներուն[24] :

7 Եւ փիլադելփեայի եկեղեցոյ
հրեշտակին գրէ՛ր . Ա՛յսպէս է ա-
սում Այուրբն[25] , Ա՛շխարհան[26] , որ
Դաւթի բանալիքներըն ունի[27] . բա-
նումէ՝ և ոչ ով չըկայ որ փակէ[28] , և
փակումէ՝ և ոչ ով չըկայ որ բաց
անէ[29] :

8 Ես քո գործքերըդ[30] . ահա
քո առաջիդ (մին) բացված դուռըն
դրի , որ նորան ոչ ով կարօղ չէ
փակել[31] , ինչու որ քիչ զօրութիւն
ունիս , և իմ խօսքերըս պահեցիր ,
և իմ անունըս չուրացար :

9 Ա՛հա ես Սատանայի ժողովքըն
քեզ եմ ասլիս , որ իրանց համար
աստումն թէ Ա՛րեայ են՝ և չեն ,
բայց սուտ են ասում[32] . ահա կա-
նեմ նորանց՝ որ գան քո առաջերիդ
առաջին երկրպագութիւն անեն , և
ճանաչեն թէ ես սիրեցի քեզ[33] :

10 Որովհետև իմ համբերութեան
խօսքըն պահեցիր , ես էլ քեզ կը-
պահեմ փորձանքի ժամուն (ա-
հա Հոխուսին)[34] . որ պիտի գայ բոլոր
աշխարհքին վերայ որ փորձէ ամեն-
քըն[35] , որ երկրի երեսի վերայ բը-
նակված են[36] :

11 Ա՛հա կըգամ շուտով[37] , (պինգ)
բռնիր էն որ ունիս[38] , որ չըվինի
թէ մինն առնէ քո պսակըդ[39] :

(10) Յայտ . ժբ . 3 : (11) Նէ . լբ . 32 : Մատ . կբ . 28 : (12) Փիլպ . գ . 3 : Յայտ . ժգ . 6 : ժէ . 8 : բ . 12 : բա . 27 : (13) Մատթ . ժ . 32 : Ղ.ա . ժբ . 8 : (14) Յայտ . բ . 7 : (15) Գործ . գ . 15 : (16) ա Յովհ . ե . 20 : Մատթ . 15 : Յայտ . ա . 5 : գ . 10 : ժբ . 11 : (17) Եսայ . խբ . 22 : Ղ.ա . ա . 32 : Յայտ . ա . 18 : (18) Մատթ . ժգ . 19 : (19) Յոբ . ժբ . 15 : (20) Ա՛ր . 1 : (21) ա Կորնթ . ժգ . 9 : բ Կորնթ . բ . 12 : (22) Յայտ . բ . 9 : (23) Եսայ . խբ . 28 . է . 14 : (24) բ Պետր . բ . 9 : (25) Ղ.ա . բ . 1 : (26) Եսայ . խգ . 17 : (27) Փիլպ . գ . 5 : Յայտ . ա . 3 : խբ . 7 . 12 . 20 : (28) Յայտ . բ . 25 : (29) Յայտ . բ . 10 :

Digitized by Google

12 Իբր յաղթէ՝ արարից զնա սիւն տաճարի Աստուծոյ իմոյ, և արտաքս այլ մի՛ ևս ելցէ. և գրեցից ՚ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, և զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմ, որ իջանէլոց է յերկնից Աստուծոյ իմմէ. և անուն նորա ևս։

13 Իբր ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս։

14 Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկեղեցւոյն գրեա. Այսպէս ասէ Ամէնն՝ ի կայն հաւատարիմ և ճշմարիտ, Սկիզբն արարածոց Աստուծոյ։

15 Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել և կամ ջերմ։

16 Ասէ դու գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ, Հանդերձեալ ես փսխել ՚ի բերանոյ իմմէ։

17 Զի ասես. Ի՝ եմ ստուն էի՝ և մեծացայ, և ոչ իւիք կարօտ եմ. և ոչ գիտես՝ եթէ դու ես ողորմելի և հեղգ և աղքատ՝ մերկ և կոյր։

18 Ուրդ՝ ես խորհրդակից եղէց քեզ, առ գնեա յինէն ոսկի փորձեալ ՚ի հրոյ՝ զի մեծասցիս, և հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս, զի մի երևեսցի անվայելչութիւն մերկութեան քո. և դիր դեղ յաչս քո՝ զի տեսցես։

19 Ես՝ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրատեմ. նախանձեա այժմ, և ապաշխարեա։

20 Ահաւասիկ կամ ես առ դուռն

12 Իվ որ յաղթեսուքի՝ սիւն կանեմ նորան իմ Աստուծոյ տաճարումն, և էլ դուրս չի գնայլ[30]. և նորա վերայ կըգրեմ իմ Աստուծոյ անունըն, և իմ Աստուծոյ քաղաքի անունըն[31], (այսինքն) նոր Երուսաղէմինըն՝ որ երկնքիցն պիտի վերգայ իմ Աստուածանիցս[32], և իմ նոր անունըս[33]։

13 Իվ որ ականջ ունի՝ թող լսէ ինչ որ Հոգին ասումէ եկեղեցիներին[34]։

14 Եւ Լաւոդիկեայ եկեղեցւոյ հրեշտակին գրիր. Այսպէս է ասումէ Ամէնն[35] էն հաւատարիմ և ճշմարիտ վկան[36], Աստուծոյ ստեղծուածներուն Սկիզբն[37]։

15 Գիտումէմ քո գործքերդ[38]՝ որ ոչ ցուրտ ես՝ և ոչ տաք. պէտք էր որ դու ցուրտ լինէիր՝ և կամ տաք։

16 Ասոյդ դու գոլ ես՝ և ոչ տաք և ոչ ցուրտ, որ պիտի փսխըվիս իմ բերանիցս։

17 Պատճառն որ ասումես թէ Հարուստ եմ՝ և մեծացայ, և իսկի մին բանով կարօտ չեմ[39]. և չես գիտում՝ թէ դու ողորմելի ես՝ և ծոյլ աղքատ, մերկ՝ և կոյր,

18 Իւրեմն ես խրատ տամ քեզ. գնիր՝ առ ինձմանից կրակումն փորձած ոսկի՝ որ հարստանաս[40], և քսպիտակ շորեր՝ որ հագնիս, որ քո մերկութեան ամօթն չերևի[41]. և դեղ դիր քո աչքերիդ որ տեսնես։

19 Ես ումմ որ սիրումեմ՝ յանդիմանումեմ և խրատումեմ[42]. ուրեմն ջանք արա, և ապաշխարիր։

20 Ահա ես դռան առաջին կանգ-

(30) գ Հով. ե. 21։ Պտր. բ. 9։ (31) Հայտ. բ. 17։ ԺԳ. 1։ իբ. 4։ (32) Պտր. գ. 26։ Նիր. ԺԲ. 23։ Հայտ. քա. 2. 10։ (33) Հայտ. իբ. 4։ (34) Հայտ. բ. 7։ (35) Ես. ԿԵ. 16։ (36) Հայտ. ա. 5։ ԺԲ. 11։ իբ. 6։ ԱԼԲ. 7։ (37) Պտր. ա. 18։ (38) ԱԼԲ. 1։ (39) Ոսե. ԺԲ. 8։ ա Պետր. գ. 8։ (40) Ես. ծե. 1։ Մատթ. ԺԳ. 44։ իե. 9։ (41) բ Կորնթ. ե. 3։ Հայտ. ե. 18։ ԺԶ. 15։ ԺԲ. 8։ (42) Հեբ. ե. 17։ Ա-ած. գ. 11, 12։ Նիր. ԺԲ. 25, 8։ Յով. ա. 18։

Digitized by Google

և լսեմք . եթէ ոք լուիցէ ձայնի իմում՝ և բանայցէ զդուռնան , մտից առ նա՝ և ընթրիս արարից առ նա , և նա ընդ իս ։

21 Որ յաղթէ՝ տացց նմա նստել ընդ իս յաթոռ իմ , որպէս և ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ Հօր իմոյ ։

22 Որ ունիցի ականջս՝ լսիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս ։

նած եմ և թախուեմ[43] . քէն որ մին լսէ իմ ձայնըս և դուռըն բանայ[44], կըմանեմ նորա մօտն՝ և ընթրիս կանեմ նորա հետ , և նա ինձ հետ[45] ։

21 Ով որ յաղթուածն կըլայ նստած , որ ինձ հետ նստի աթոռիս վերայ[46] , ինչպէս որ ես յաղթեցի՝ և նստեցի իմ Հօրս աթոռն ։

22 Ով որ ականջ ունի՝ թնդ լսէ ինչ որ Հոգին ասուածն եկեղեցիներուն[47] ։

ԳԼ. Գ.

2 Յօհաննես Նամուսոյ աթոռան անունովն երկրագործ : 4 Ոչոան և քոյր երէցներըն : 6 Ձոյ կենդանիք՝ որ նոցանց առաջոց և յետոց լիքն էին աչօքով : 10 Լուծիներըն՝ իրանց պըսակներըն աթոռի վերայ նստողի առաջին վէր գնելով երկրպագութիւն կըտան նորան ։

1 Ես յետ այսր ամենայնի տե-սի՝ և ահա դուռն երկնից բացեալ էին , և ձայն փողոյն առաջնոյ զոր լուայ՝ խօսէր ընդ իս և ասէր . Ել այսր , և ցուցից քեզ՝ զինչ լինելոց է յապա ժամանակս ։

2 Եւ ժամանակ չիս Հոգի , և ահա աթոռ մի՝ դի կայր յերկինս ։

3 Եւ ի վերայ աթոռոյն նստեր նման տեսլեան ականց յասպսի և սարդիոնի ։

4 Եւ քահանայք շուրջ զաթո-ռովն նման տեսլեան զմրխտի , և շուրջ զաթոռովն աթոռք քսան և չորք , և ի վերայ աթոռոցն նըս-տեին քսան և չորք երիցունք՝ ըզգեցեալ հանգերձս սպիտակս , և ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս ։

1 Ես ես ամէն բաներուցս ետև՝ տեսի , և ահա (մին) դուռն էր բաց-ված երկինքը մէջ և էն առաջին ձայ-նըն որ փողի պէս լսեցի՝ խօսէր ինձ հետ և ասում[1] . Վե՛ր էլիր ես տեղ[2] և ցոյց կըտամ քեզ ինչ որ լինելու է յետին ժամանակներուն[3] ։

2 Եւ հենց էն ժամուն (սահա-նաւն) Հոգի եկաւ ինձ վերայ[4] . և տեսի որ մին աթոռ կար երկնքումն[5] ։

3 Եւ նա՝ որ աթոռին վերայ նըս-տած էր , յասպիս և սարդիոն ա-կուռնքի նման տեսիլք ունէր ։

4 Եւ էն աթոռի չորս կողմանքն հանուն էլ կարմիր գօտիկ կար , որ զըմրուխտի նման տեսիլք ունէր . և աթոռի չորս կողմանքն քսան և չորս աթոռներ (կային) , և էն աթոռնե-րուն վերայ քսան և չորս երէցներ նստած էին[6] սպիտակ չորեր հագած[7] , և իրանց գլուխներուն ոսկի պսակ-ներ[8] ։

(13) Ներք . ե . 2 : (14) Գ՚ա՛ . ժբ . 37 : (15) Յովհ . ժգ . 23 : (16) Առաք . ժբ . 28 : Գ՚ա՛ . իբ . 30 : ա Կորնթ . գ . 2 : բ Տի՛մ . բ . 12 : Յայտ . բ . 26 , 27 : (17) Յայտ . բ . 7 : (1) Յայտ . ա . 10 : (3) Յայտ . ժա . 12 : (4) Յայտ . ա . 12 : իբ . 6 : (5) Յայտ . ա . 10 , ժէ . 3 : իա . 10 : (5) Նոյ . գ . 1 : Ներմ . ժէ . 12 : Նգէի . ա . 26 : ժ . 1 : Դան . է . 9 : (6) Յայտ . ժա . 16 : (7) Յայտ . գ . 4 , 5 : գ . 11 : է . 9 . 13 , 14 : ժբ . 14 : (8) Առաք . 10 :

Digitized by Google

5 Եւ յաթոռոյ սմանի ելանէին փողատակմունք և ձայնք և որոտմունք . և եօթն ջամբարք հրոյ բորբոքելոյ առաջի աթոռոյն , որ են եօթն Հոգիքն Աստուծոյ ։

6 Եւ էր առաջի աթոռոյն ծով ապակիզէն՝ նման սպիտակութեան սառին , և ի մէջ աթոռոյն չորք կենդանիք՝ և լի էին աչօք առաջոյ և յետոյ ։

7 Եւ էր կենդանին առաջին նման առիւծու , և երկրորդ կենդանին նման զուարակի , և երրորդ կենդանին ունէր երեսս մարդոյ , և չորրորդ կենդանին նման ագռաւոյ թռուցեալ ։

8 Եւ չորիք կենդանեացն էին միոյ ի նոցանէ վեց թեւք , շուրջանակի և ի ներքոյ լի էին աչօք , ոչ հանգչէին՝ ոչ գիւր և ոչ գիշեր՝ ասելով . Սուրբ , Սուրբ , Սուրբ , Տէր Աստուած Ամենակալ՝ որ էր , և ես , և որ գալոց ես ։

9 Եւ յորժամ տային կենդանիքն փառս և պատիւ և գոհութիւն նըստեալոյն ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից ,

10 Ընկենէին քսան և չորք երիցունքն առաջի նստելոյն յաթոռն , և երկիր պագանէին կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից . և գնէին զպսակս իւրեանց առաջի աթոռոյն ասելով ,

11 Արժանի ես Տէր Աստուած մեր առնուլ փառս և պատիւ և զօրութիւն , զի դու ստեղծեր զա-

5 Եւ էն սաթոռիցն փայլատակմունք և ձայներ և որոտմունք էին դուրս գալիս[9] . և եօթն լամբարներ կրակով բորբոքված սաթոռի առաջին[10] , որ նորունք Աստուծոյ եօթն Հոգիներն են[11] ։

6 Եւ սաթոռի առաջին ապակիոյ (շուշայի) պէս ծով կար ապիտակ սառուցի նման[12] , և սաթոռի մէջն չորս կենդանիք (կային)[13] որ առաջաւց և յետուց լիքն էին աչքերով[14] ։

7 Եւ առաջին կենդանին առիւծի նման էր , և երկրորդ կենդանին եզի նման , և երրորդ կենդանին մարդ երես (ունէր) , և չորրորդ կենդանին թռած արծուի նման[15] ։

8 Եւ էն չորս կենդանիքն առանձկին վեց թեև ունէին , իրանց չորս կողմովը[16] և նեղուածց լիքն էին աչքերով[17] . և չանգիստ չէին առնում՝ ոչ ցերեկ և ոչ գիշեր՝ ասելով . Սուրբ , Սուրբ , Սուրբ[18] , Տէր Աստուած Ամենակարօղ[19] , և որ էր , և ես , և որ գալու ես[20] ։

9 Եւ երբոր էն կենդանիքն փառք և պատիւ , և գոհութիւն էին տալիս աթոռի վերայ նստողին՝ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից[21] ,

10 Քսան և չորս երէցներն վեր էին ընկնում աթոռի վերայ նստողի առաջին[22] , և երկրպագութիւն էին տալիս նորան՝ որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից[23] . և իրանց պսակները վեր էին գնում աթոռի առաջին և ասում[24] .

11 Արժանի ես մեր սուրբ Տէր Աստուած՝ որ փառք , և պատիւ , և զօրութիւն առնես[25] . պատճառն

(9) Յայտ . ը . 5 ։ ժգ . 18 ։ (10) Նէ . լէ . 28 ։ բ Պետ . գ . 20 ։ Նեհ . ա . 18 ։ Օբդ . գ . 3 ։ (11) Յայտ . ա . 4 ։ գ . 1 ։ ե . 6 ։ (12) Նէ . ը . 6 ։ Յայտ . դբ . 2 ։ (13) Նեհ . ա . 5 ։ (14) Պայր . 8 ։ (15) Նեհ . ա . 10 ։ ժ . 14 ։ (16) Եզեկ . գ . 2 ։ (17) Ալբ . 6 ։ (18) Ղեսայ . գ . 3 ։ (19) Յայտ . ա . 8 ։ (20) Յայտ . ա . 4 ։ (21) Յայտ . ա . 18 ։ ե . 14 ։ ժե . 7 ։ (22) Յայտ . ե . 8 ։ 14 ։ (23) Ալբ . ծ . 6 ։ (24) Ալբ . 8 ։ (25) Յայտ . ե . 12 ։

Digitized by Google

մինչեւ, և ի կամելն զո ստեղծան՝ որ գու ստեղծեցիր ամէն բան, և զո կամելովդ ստեղծվեցան՝ և կեն- նուամն հաստատ[26]։

ԳԼՒ · Ն

1 Նոքին կնքով (Ա֊ովով) կնքված գիրքն։ 9 Ամենակ մարդվան պատն արժանի էր են գիր- քըն բանալ՝ 13 ՚Նպատ հատոր հրեշտակներն փառք և օրհնութիւն կըտան նորա։ 19 Նա կը- դատանին որ նա փրկից իրանք՝ իրան պրհնութիւն։

1 Եւ տեսի ի ձեռս աջոյ՝ որ նստէր ի վերայ աթոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ և արտաքոյ, և կնքեալ եօթն կնքով։

2 Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր ի ձայն մեծ. Ո՞վ է արժանի բանալ զգիրքս՝ և լուծանել զկնիք նորա։

3 Եւ ոչ ոք կարէր՝ ոչ ի յեր- կինս և ոչ յերկիր և ոչ ի ներքոյ երկրէ՝ բանալ զգիրքն, զի ոչ տես- սին զնա։

4 Եւ ես լայի ուժգին՝ զի ոչ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն և հայել ի նա։

5 Եւ մի յերիցանցն ասէ ցիս. Ա՛ի լար, ահաւասիկ յաղթեաց Լ֊ուիւծն յազգէն Յուդայ յարմատոյն Դաւթի՝ բանալ զգիրքն՝ և լուծանել զեօթն կնիքսն նորա։

6 Եւ տեսի ի մէջ աթոռոյն և ի մէջ չորից կենդանեացն՝ և ի մէջ երիցանցն Գառն կայր զենեալ, որ ուներ եօթն եղջիւրս՝ և աչս եօթն, որ են եօթն Հոգիքն Աստուծոյ՝ որ են առաքեալ ընդ ամենայն երկիր։

7 Եւ եկն ընկալաւ յաջոյ ձե-

1 Եւ աթոռի վերայ նստողի ոլ ձեռուքն մին գիրք տեսի, որ ներ- սեւանց և դրսեւանց գրված էր[1], և եօթն կնքով (Ա֊օվով) կնքված[2]։

2 Եւ մին զօրաւոր հրեշտակ տե- սի՝ որ մեծ ձայնով կանչումեր և քարոզումեր. Ո՞վ է արժանի բա- նալ էս գիրքըս՝ և սորա կնիքներըն (Ա֊օվներըն) արձակել։

3 Եւ խավի մինն՝ ոչ երկնքումն և ոչ երկրի վերայ և ոչ երկրի ներ- քեւումն՝ կարող չէր էն գիրքն բա- նալ, և ոչ էլ տեսնել նորան[3]։

4 Եւ ես սաստիկ լաց էի լինում, որ ոչ ով չէ գտնվաւ արժանի՝ որ էն գիրքն բանայ, և նորա մէջ նայի։

5 Եւ էն երեցներիցն մինն ասաց ինձ. Լաց մի լինիր, ահա յաղթեց էն Լ֊ուիւծն որ Յուդայի ցեղիցն է[4] Դաւթի արմատիցն (Ռ֊էօրէյն), որ գիրքըն բաց անէ[5] և նորա եօթըն կնիքներըն (Ա֊օվներըն) արձակէ[6]։

6 Եւ տեսի էն աթոռի միջումն և չորս կենդանիներուն միջումն՝ և էրեցներուն միջումն մին Գառան էր կանգ- նած մորթածի նման[7], որ եօթն եղ- ջեր ուներ՝ և եօթն աչք[8], որ Լ֊ա- ռաւծոյ եօթն Հոգիքն են, որ ու- ղարկվածք են ամէն երկիրներըն[9]։

7 Եւ նա եկաւ՝ և էն աթոռի

(26) Դնկ. ա. 1։ Գործ. ժե. 24։ Նկ. գ. 9։ Կող. ա. 16։ Հայոց. ժ. 6։ (1) Նկ. ե. 9, 10։ (2) Նոյ. իբ. 11։ Գան. ժբ. 4։ (3) Ա֊այր. 13։ (4) Դնկ. իբ. 9, 10։ Նբր. է. 14։ (5) Նոյ. ժա. 1. 10։ Հռով. ժե. 12։ Հայոց. իբ. 16։ (6) Ա֊իր. 1։ Հայոց. գ. 1։ (7) Նոյ. ծգ. 7։ Հովհ. ա. 29. 36։ ա Պետր. ա. 19։ Հայոց. ժգ. 8։ Ա֊այր. 9. 13։ (8) Զաք. գ. 9։ գ. 10։ (9) Հայոց. գ. 5։

Digitized by Google

ռանէ նորա՝ որ նստէր՝ի վերայ աթոռոյն ։

8 Եւ յորժամ առ զգիրն , չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն անկանէին առաջի Գառինն ։ և ունէին իւրաքանչիւր քնար՝ և բուրվառ ոսկի լի խնկով , որ է աղօթք սրբոցն ։

9 Եւ օրհնէին երգս նորս և ասէին . Յորժամի ես առնուլ զգիրքն՝ և բանալ զնիւք դորա , վի զնար՝ և գնեցեր՝ զմեզ Յստուծոյ արեամբդ քով՝ յամենայն ազգաց և ի լեզուաց և ի ժողովոց հեթանոսաց ։

10 Եւ արարեր զսոսա Յստուծոյ մերոյ թագաւորս և քահանայս՝ թագաւորել ի վերայ երկրի ։

11 Եւ տեսի , և լուայ զձայն հրեշտակաց բազմաց՝ որք կային շուրջ զաթոռովն և զղուխք կենդանեօքն և զքահանայիւքն ։ և էր թիւն նոցա բիւրք բիւրուց՝ և հազարք հազարաց ։

12 Յսէին ձայնիւ մեծաւ . Յրժան է Գառնդ զնեալ առնուլ զզօրութիւն և զհմայութիւն և զզօրութիւն և զպատիւ և զփառս և զօրհնութիւն ։

13 Եւ ամենայն արարածք՝ որ են յերկինս և յերկրի և ի ծովս և որ ի նոսա՝ լուայ զի ասէին . Որ նստի յաթոռն՝ և Գառանն օրհնեալ բարձրացեալ և փառաւորեալ յաւերայ նստօղի աչ ձեռիցն (էն գիրքըն) առաւ[10] ։

8 Եւ երբոր գիրքըն առաւ չորս կենդանինեըն և քսան և չորս էրէցներն վեր էին ընկուզ Գառի առաջին[11] . և նորանց ամէն մէկն քնար (սանթուր) ունէին՝ և ոսկի բուրվառ խնկով լիքն[12] , որ սրբոց աղօթքն է[13] ։

9 Եւ նոր երգով օրհնումէին և ասում[14] . (Գու) արժանի ես էդ գիրքըդ առնել՝ և դորա կնիքներըն բանալ[15] , ինչու որ մորթվեցար[16] , և քո արիւնովդ մեզ գնեցիր Յաստուծոյ համար[17] ամէն ազգներից՝ և լեզուներից՝ և հեթանոսների ժողովըրդից[18] ։

10 Եւ մեր Յաստուծոյն համար թագաւորներ և քահանաներ արիր , որ երկրի վերայ թագաւորութիւն անենք[19] ։

11 Եւ տեսի՝ և շատ հրեշտակներ ձայն լսեցի՝ որ աթոռի և չորս կենդանիքներուն և էրէցների չորս կողմովն էին կանգնած[20] . և նորանց համարն էր բիւրք բիւրոց՝ և հազարք հազարաց[21] ։

12 Ու մեծ ձայնով ասումէին . Յրժանի է Գառնդ՝ որ մորթված է՝ որ մեծութիւն և իմաստութիւն և զօրութիւն և պատիւ և փառք և օրհնութիւն պտնէ[22] ։

13 Եւ ամէն տեղծվածներն որ երկնքումն են և երկրի վերայ և ծովումն , և նորանք որ նորա մէջն են , (էն ամէնից) լսեցի որ ասում էին[23] . (Գնա) որ աթոռին վերայ

(10) Հայտ · դ · 2 ։ (11) Հայտ · դ · 8 · 10 ։ (12) Հայտ · ժդ · 2 ։ ժե · 2 ։ (13) Սաղմ · ճխա · 2 ։ Հայտ · ը · 3 , 4 ։ (14) Սաղմ · խ · 3 ։ Հայտ · ժդ · 3 ։ (15) Հայտ · դ · 11 ։ (16) Ա Էր · 6 ։ (17) Պօղտ · ի · 28 ։ Ղուկ · գ · 24 , 25 ։ ա Պետր · գ · 20 ։ է · 23 ։ Եփես · ա · 7 ։ Կող · ա · 14 ։ Եբր · թ · 12 ։ ա Պետր · ա · 18 , 19 , բ Պետր · ը · 1 ։ ա Հովհ · ա · 7 ։ (18) Դան · դ · 1 ։ գ · 25 ։ Հայտ · է · 9 ։ ժա · 9 ։ ժդ · 6 ։ (19) Ելք · ժթ · 6 ։ Հայտ · ա · 6 ։ ի · 6 ։ իբ · 5 ։ (20) Հայտ · դ · է · 6 ։ (21) Սաղմ · կը · 17 ։ Դան · է · 10 ։ Եբր · ժբ · 22 ։ (22) Հայտ · դ · 11 ։ (23) Փիլիպ · բ · 10 ։ Ա Էր · 3 ։

Digitized by Google

ւիսեաննս յաւիտենից ։

14 Եւ չորք կենդանիքն ասէին, Ո՛չ. և երիցունքն անկանէին առաջի նորա և երկիրպագանէին ։

ՀԻ · Ը.

1 Ինչպէս կարդալ բացվելը, և նորանց յետոյ գալոց սխալները ։

1 Եւ տեսի զի եբաց գառինն ի կնիքքոցն, և լուայ ի միոյ ի չորից կենդանեացն իբրև զձայն որոտման՝ զի ասէր՝ Թէ Գնա՛ ։

2 Եւ տեսի՝ և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ նմա պսակ, և ելն յաղթօղն՝ զի յաղթեսցէ ։

3 Եւ յորժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ երկրորդ կենդանւոյն՝ զի ասէր, Գնա՛ ։

4 Եւ ել այլ ձի կարմիր, և որ հեծեալն էր ի վերայ նորա՝ տուաւ նմա առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զենցեն. և տուաւ նմա սուր մի մեծ ։

5 Եւ յորժամ եբաց զկնիքն երրորդ՝ լուայ երրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ Թէ Գնա՛. և տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր ի վերայ նորա՝ ունէր կշիռք ի ձեռին իւրում ։

6 Եւ լուայ ձայն ի միջոյ չորից կենդանեացն. Կապիճ մի ցորեան՝ դենարի միոջ, և երեք կապիճ գառնդեան՝ դենարի միոջ, և զձէթ և զգինի մի՛ ապականեր ։

1 Եւ տեսի որ Գառն էն կնիքներից միոնն բացս արաւ[1], և էն չորս կենդանիքներէն մըներից լսեցի որոտմունքի ձայնի պէս՝ որ ասումէր Թէ Կըգամ[2](*) ։

2 Եւ տեսի՝ և ահա մին սպիտակ ձի[3]. և նա՝ որ նորա վերայ հեծած էր՝ մին աղեղ ունէր[4]. և մին պըսակ տըվվաւ նորան[5], և եկաւ յաղթօղն՝ որ յաղթէ ։

3 Եւ երբոր երկրորդ կնիքըն բացս արաւ, երկրորդ կենդանիյն լսեցի՝ որ ասումէր՝ Թէ Կըգամ[6](*) ։

4 Եւ ուրիշ ձի դուրս եկաւ կարմիր[7]. և նա՝ որ նորա վերայ հեծած էր՝ նորան տըվվաւ որ խաղաղութիւնըն վեր առնէ երկրիցն, որ իրար մորթեն, և մին մեծ սուր տըվվաւ նորան ։

5 Եւ երբոր երրորդ կնիքն բացս արաւ, երրորդ կենդանիյն լսեցի՝ որ ասումէր՝ Թէ Կըգամ[8](*). և տեսի՝ և ահա մին սեւ ձի[9], և նա՝ որ նորա վերայ նստած էր՝ կշեռք ուներ իրան ձեռումն ։

6 Եւ չորս կենդանիներուն միջիցն ձայն լսեցի՝ (Թէ) Ա՝ին կապիճ չոփ ցորենն մին դենարի, և երեք կա-

(24) Յայտ · գ · 16 ։ է · 10 ։ (25) ա Կոռ · իբ · 11 ։ Ըսովմ · բ · 5 ։ ժգ · 27 ։ ա Տիմ · գ · 16 ։ ա Պետր · գ · 11 ։ է · 11 ։ Յայտ · ա · 6 ։ (26) Յայտ · ժբ · 4 ։ (27) Յայտ · գ · 9 , 10 ։ (1) Յայտ · է · 5 , 6 , 7 ։ (2) Յայտ · գ · 7 ։ (*) Ածանցին · Ի՛կ և ասա ։ (3) Ովտ · գ · 3 ։ Յայտ · ժբ · 11 ։ (4) Պսղ · խե · 4 , 5 ։ (5) Ովտ · գ · 11 ։ Յայտ · ժգ · 14 ։ (6) Յայտ · գ · 7 ։ (7) Ովտ · գ · 2 ։ (8) Յայտ · գ · 7 ։ (9) Ովտ · գ · 2 ։

Digitized by Google

քի՝ դենաբի միոջ · և ձէթի և գինի մի՛ ընասխացես ։

7 Եւ չորժամ եւաց զկնիքն չորրորդ , լուայ ձայն ի չորրորդ կեն֊դանւոյն՝ զի ասէր՝ Թէ Գո՛մ ։

8 Եւ տեսի՝ և ահա ձի շլոտաս , և որ նստէրն ի վերայ՝ ունէր Ո֊մահ , և Գժոխք երթային զհետ նորա · և տուաւ նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրով և սովով և մահուամբ՝ և գա֊զանօք երկրի ։

9 Եւ չորժամ եւաց զկնիքն հինգ֊երորդ՝ տեսի ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան զեղեալ վասն բանին Ա֊ստուծոյ և վասն վկայութեան նորա զոր ունէին ։

10 Որք ասէին ի ձայն մեծ · Մինչև յե՞րբ Տէր սուրբ և ճշմարիտ՝ ո՛չ դատես , և խնդրես զվրէժ ա֊րեանն մերոյ ի բնակիչս երկրի ։

11 Եւ տուաւ նոցա արկանելիս ըս֊պիտակս , և ասացաւ նոցա զի հան֊գիցեն փոքր մի ժամանակ , մինչև լցցին ծառայակիցք նոցա և եղբարք նոցա՝ որք հանդերձեալ են կատա֊րիլ իբրև զնոսա ։

12 Եւ տեսի չորժամ եւաց զը֊կնիքն վեցերորդ՝ եղև շարժումն մեծ , և արեգակն եղև սեաւ իբրև զկա֊պերտ այծեայ , և լուսինն բոլորո֊վին եղև արիւն ։

13 Եւ աստեղք երկնից թօթափե֊ցան ի յերկիր , որպէս տերև թը֊զենւոյ զի ուժգին շարժիցի ի հող֊մոյ ։

պիճի չափ գարին մին դենաբի , և ձէթին և գինոյն մի՛սաս չընպաս[10] ։

7 Եւ երրորդ չորրորդ կնիքըն բաց արաւ , չորրորդ կենդանիցն ձայն լսեցի՝ որ ասէր՝ Թէ Կո՛ղ[11](*) ։

8 Եւ տեսի՝ և ահա մին մոխրա֊ւանկ ձի[12] , և նա՝ որ նոր֊ա վերայ նստած էր՝ նորա անունն Ա՛ահ էր , և Գժոխք էր գնում նորա ետևէն · և իշխանութիւն տրվվաւ նորան աշ֊խարհքի չորրորդ քաժնի վերայ՝ որ սրով և սովով և մահով[13] և երկ֊րի գազաններովն պատակէ[14] ։

9 Եւ երրոր հինգերորդ կնիքըն բաց արաւ , տեսի սեղանի ներքևն[15] էն ամէն (մարդկանց) հոգիքն[16] որ մորթվաձ էին Ա֊ստուծոյ բանին հա֊մար[17] և նորա վկայութեան համար որ ունէին[18] ։

10 Որ մեծ ձայնով ասում էին · Մի՛նչև երբ[19] Տէր և ճշմարիտ մինչև երբ[20] դատաստան չես անում[21] , և մեր արիւնի թոք չես խնդրում երկ֊րի վերայ բնակողներից ։

11 Եւ սպիտակ վերարկուներ տրվ֊վաւ նորանց[22] , և ասվեցաւ նորանց՝ որ մին քիչ ժամանակ հանգիստ առ֊նեն[23] , մինչև որ նորանց ծառայ ըն֊կերներն և նորանց եղբարներն էլ կատարվին՝ որ նորանց պէս պիտի սպանվին ։

12 Եւ տեսի երրոր վեցերորդ կը֊նիքըն բաց արաւ՝ (երկրի) մեծ շարժ֊մունք էլաւ[24] , և արեգակն սևացաւ այծի մազէ կարկատանի պէս , և լուսինն իսպառ արիւնի պէս էլաւ[25] ։

13 Եւ երկնքի աստեղներն թափ֊վեցան երկրի վերայ՝ ինչպէս թըզի (ծառի) տերև՝ որ սաստիկ շարժվու֊մէ քամուցն[26] ։

(10) Յայտ · ք · 6 ։ (11) Յայտ · զ · 7 ։ (*) Յատնոթին · Ն՛ի և տես ։ (12) Օշէ · գ · 3 ։ (13) Եղի · ժգ · 21 ։ (14) Ղևտ · ի֊ը · 22 ։ (15) Յայտ · ը · 3 · ի֊ · 13 · ժգ · 18 ։ (16) Յայտ · ի · 4 ։ (17) Յայտ · ա · 9 ։ (18) ը Տի՛մ · ա · 8 ։ Յայտ · ժը · 17 ։ ժի֊ · 10 ։ (19) Յայտ · զ · 7 ։ (20) Օշէ · ա · 12 ։ (21) Յայտ · ժա · 18 · ժի֊ · 2 ։ (22) Յայտ · զ · 4 , 5 · է · 9 · 11 ։ (23) Եբր · ժա · 40 ։ Յայտ · ժգ · 13 ։ (24) Յայտ · ժգ · 18 ։ (25) Յովէլ · ը · 10 · 30 · զ · 15 ։ Ա֊մոս · ի֊ը · 20 ։ Գործ · ը · 20 ։ (26) Յայտ · ը · 10 · ի֊ · 1 ։

Digitized by Google

14 Եւ երկին լրւև զմագաղաթեայ գիրս գալարեր . և ամենայն լերինք և կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան :

15 Եւ թագաւորք երկրի և իշխանք՝ հազարապետք և մեծամեծք և զօրաւորք՝ և ամենայն ծառայք և ամենայն ազատք թաքուցին զինքեանս յայրս և 'ի ծերպս վիմաց :

16 Եւ ասէին լերանց՝ թէ Անկեր՛ուք 'ի վերայ մեր , և ցլուրս՝ թէ Ծածկեցէ՛ք զմեզ :

17 Օ՛ի եկն օր մեծ բարկութեան նորա . և ո՞վ կարէ կալ առաջի նորա :

14 Եւ երկինքն մագաղաթէ գլորելի պէս կօրւվում էր[27] . և ամէն սարեր և կղզիներ (ապառնէք) իրանց տեղից շարժվեցան[28] :

15 Եւ երկրի թագաւորներն և իշխաններն՝ հազարապետներն և մեծամեծներն և զօրաւորներն՝ և ամէն ծառաներն և ամէն ազատներն թաքցրին իրանց անձները՝ այրերի (հապշտապէք) և սարերի քարերի մէջն[29] :

16 Եւ սարերին ասում էին՝ Վէր ընկէք մեզ վերայ , և դարերին՝ թէ Ծածկեցէ՛ք մեզ աթոռի վերայ նստողի երեսից , և Գառի բարկութենից[30] :

17 Ինչու որ նորա բարկութեան մեծ օրն եկել է[31] , և ո՞վ կարող է կենալ նորա առաջին[32] :

Գլ · Ի֊

2 Մին հրեշտակ Աստուծոյ ծառաներին վերայ կնիք կընէ՝ իրանց ճակատներումն : 4 Ընտրվածների համարը՝ այսինքն Իսրայէլի ցեղից զատած մին համար , 9 Ու ամէն ազգէ ժողովրդներ որ նորանց համար չըկար՝ աթոռի առաջին կանգնած էին իրանց վերայ սպիտակ շորեր գցած՝ և իրանց ձեռներումն արմաւենիներ (բռնած) : 14 Նորանց վերաբերութիւնը լուացված էին գառի արիւնովն :

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս զի կային 'ի չորս անկիւնս երկրի . և ունէին զչորս հողմս երկրի՝ զի մի՛ շնչեսցէ հողմ 'ի վերայ երկրի , և մի՛ 'ի ծովու՝ և մի՛ 'ի ծառս :

2 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի եւ յարևելից , և ունէր զնիք Աստուծոյ կենդանւոյ , և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտականն՝ որոց առեալ էր իշխանութիւն ապականել զերկիր և զծով :

3 Եւ ասէր . Մի՛ վնասէք երկրի՝ մի՛ ծովու՝ մի՛ ծառոց , դադա-

1 Եւ սրանից ետև տեսի՝ որ չորս հրեշտակ կանգնած էին երկրի չորս անկիւնումն . և երկրի չորս քամին էլ բռնել էին[1] որ քամի չըփչէ , ո՛չ երկրի վերայ՝ ո՛չ ծովի վերայ , և ո՛չ ծառերի վերայ[2] :

2 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի՝ որ արևելքից դուրս եկաւ , և կեանդանի Աստուծոյ կնիքըն (Էօհկըն) ունէր , և մեծ ձայնով աղաղակեց դէպի էն չորս հրեշտակներն՝ որ իշխանութիւն էին առել որ երկիրըն և ծովըն ապականեն :

3 Եւ ասում էր . Վնաս մի՛ տաք ո՛չ երկրին՝ ո՛չ ծովուն՝ և ո՛չ էլ ծա-

(27) Սաղ · ճե · 26 : Նաում · լէ · 4 : Նէբէ · ա · 12 : (28) Նէհ · գ · 23 : գ · 24 : Յայտ · ժգ · 20 : (29) Նաում · բ · 12 : (30) Ամոս · ժ · 8 : Ղուկ · իգ · 30 : Հայտ · բ · 6 : (31) Նաում · ժգ · 6 : Սոփոն · ա · 14 : Հայտ · ժգ · 14 : (32) Սաղմ · հգ · 7 :
(1) Դան · է · 2 : (2) Հայտ · բ · 4 :

Digitized by Google

բեցէք մինչև կնքեցից զծառայս Աստուծոյ իմոյ ի ճակատս նոցա ։

4 Եւ լուայ զթիւ կնքելոցն՝ հարիւր քառասուն և չորք հազար կնքեալք յազգէ որդւոցն Իսրայէլի ։

5 Յազգէն Յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Ռուբենի՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Գադայ՝ երկոտասան հազար կնքեալ ։

6 Յազգէն Ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Մանասէի՝ երկոտասան հազար կնքեալ ։

7 Յազգէն Շմաւոնի՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Լևեայ՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Իսաքարայ՝ երկոտասան հազար կնքեալ ։

8 Յազգէն Զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Յովսեփայ՝ երկոտասան հազար կնքեալ . յազգէն Բենիամինի՝ երկոտասան հազար կնքեալ ։

9 Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա ժողովուրդ բազում՝ որոց ոչ գոյր թիւ , յամենայն հեթանոսաց և յամենայն ազգաց և յամենայն լեզուաց և յամենայն ժողովրդոց , որք կային առաջի աթոռոյն և առաջի Գառնին՝ արկեալ զհիւրեամբք հանդերձս սպիտակս , և արմաւենիս ի ձեռս իւրեանց ։

10 Աղաղակէին ի ձայն մեծ՝ և ասէին . փրկութիւն Աստուծոյ մերոյ՝ որ նստի ի վերայ աթոռոյն , և Գառնին ։

ուերին[3] , դադարեցէք մինչև որ իմ Աստուծոյ ծառաներին վերայ կնիք (Խօհր) դնեմ[4] (իրանց ճակատներուն)[5] ։

4 Եւ կնքվածներուն համարը լսեցի[6] (որ էր) հարիւր քառասուն և չորս հազար՝ որ կընքվեցան Իսրայէլի որդոց ամեն ցեղերից[7] ։

5 Յուդայի ցեղից՝ տասներկու հազար կնքված . Ռուբենի ցեղից՝ տասներկու հազար կնքված . Գադայ ցեղից՝ տասներկու հազար կընքված ։

6 Ասերի ցեղից՝ տասներկու հազար կնքված . Նեփթաղիմի ցեղիցըն՝ տասներկու հազար կնքված . Մանասէի ցեղից՝ տասներկու հազար կնքված ։

7 Շմաւոնի ցեղից՝ տասներկու հազար կնքված . Լևիի ցեղից՝ տասներկու հազար կնքված . Իսաքարի ցեղից՝ տասներկու հազար կնքված ։

8 Զաբուղոնի ցեղից՝ տասներկու հազար կնքված . Յովսէփի ցեղից՝ տասներկու հազար կնքված . Բենիամինի ցեղից՝ տասներկու հազար կնքված ։

9 Եւ ես բաներից ետև տեսի՝ և ահա շատ ժողովուրդ (կար) որ նոյնից համար չկրնար , ամեն հեթանոսներից և ամեն ազգերից և ամեն լեզուներից և ամեն ժողովուրդներից , որ աթոռի առաջին և Գառի առաջին կանգնած էին[8] իրանց վերայ սպիտակ շորեր գցած[10] , և իրանց ձեռներումն արմաւենիներ (բռնած) ։

10 Աղաղակում էին բարձր ձայնով՝ և ասում . փրկութիւն մեր Աստուծոյն[11] որ աթոռի վերայ նստում է , և Գառինն[12] ։

(3) Յայտ . ը . 6 ։ Բ . 1 ։ (4) Եզեկ . Բ . 4 ։ Յայտ . ժգ . 1 ։ (5) Յայտ . իգ . 4 ։ (6) Յայտ . Բ . 16 ։ (7) Յայտ . ժգ . 1 ։ (8) Հռով . ժա . 25 ։ ( ) Յայտ . է . 9 ։ (10) Յայտ . գ . 5 . 18 ։ դ . 4 ։ ը . 11 ։ Ա՚այր . 11 ։ (11) Ա՚ամ . գ . 8 ։ Նաա . իգ . 11 ։ Երեմ . գ . 23 ։ Ա՚ետ . ժգ . 1 ։ Յայտ . ժԲ . 1 ։ (12) Յայտ . է . 13 ։

Digitized by Google

11 Եւ ամենայն հրեշտակք կային շուրջ զաթոռովն և զերիցամբքն և զչորիւք կենդանեօքն , և անկանէին յերեսս առաջի աթոռոյն՝ և երկրպագանէին Աստուծոյ ,

12 Աբելով . Ամէն . օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և շնորհք Տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

13 Եւ ասէ ցիս մի յերիցանց անտի . Այոքա որ զգեցեալ են զհանդերձս սպիտակս՝ ո՞վք են՝ և կամ ուստի՞ գան :

14 Եւ ասացի ցնա . Տէր՝ դու գիտես . և ասէ ցիս . Այոքա են՝ որ գան ի վշտաց մեծաց , և լուացին զարկանելիս իւրեանց՝ և սպիտակացուցին արեամբ Գառինն :

15 Վասն այնորիկ են առաջի աթոռոյն Աստուծոյ և պաշտեն զնա զօիւ և զգիշեր ի տաճարի նորա . և որ նստի ի վերայ աթոռոյն՝ բնակեսցէ ի նոսա :

16 Ո՛չ քաղցիցեն և ո՛չ ծարաւիցեն , և ո՛չ ոք մեղիցէ նոցա՝ ո՛չ արեգակն և ո՛չ ամբ :

17 Եւ Գառն ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուեսցէ զնսա , և առաջնորդեսցէ նոցա ի կենաց աղբիւր ջրոյ կենդանւոյ . քանզի եհատ Աստուած զամենայն արտասուս յերեսաց նոցա :

11 Եւ ամէն հրեշտակներն կանգնած էին աթոռի և երեցներուն և չորս կենդանիքներուն չորս կողմանէն , և վար էին ընկնում երեսներին վերայ աթոռի առաջին՝ և երկրպագութիւն էին անում Աստուծոյն[12] ,

12 Աբելով . Ամէն . օրհնութիւն և փառք և իմաստութիւն և գոհութիւն և պատիւ և զօրութիւն և շնորհք (լինի) մեր Տէր Աստուծոյն՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն[14] :

13 Եւ էն երեցներից մինն ասաց ինձ . Այորանք՝ որ սպիտակ շորեր են հագել՝ ովքե՞ն են , և կամ ո՞րտեղից են գալիս[15] :

14 Եւ ասացի նրան . Տէր՝ դու ես գիտում . և ասաց ինձ . Այորանք են՝ որ մեծ նեղութիւններից են գալիս[16], և իրանց վերարկուները լուացին՝ և սպիտակացրին Գառի արիւնովն[17] :

15 Ուրախմար Աստուծոյ աթոռի առաջին են՝ և ցերեկ և գիշեր պաշտում են նորան իրան տաճարի մէջ . և նա՝ որ աթոռի վերայ նստած է , բնակվածի է նորանց մէջ[21] :

16 Ո՛չ կըսովին՝ և ո՛չ կըծարաւին[19] , և ո՛չ ով չի նեղացնել նորանց՝ ո՛չ արեգակն և ո՛չ ամբութիւնն[20] :

17 Եւ Գառն իրան աթոռի միջից կարածացնէ նորանց[21] , և կառաջնորդէ նորանց դէպի կենաց աղբիւրի (կենդանի) ջուրն . և Աստուած սրբէ ամէն արտասուներն նորանց երեսներիցն[22] :

(13) Յայտ . գ . 5 : (14) Յայտ . է . 13 , 14 . (15) Ա՛ր . 9 : (16) Յայտ . ը . 9 ; ժէ . 6 : (17) Ղեւտ . ա . 18 : Երէմ . ք . 14 : ա Յովհ . ա . 7 : Յայտ . ա . 5 : Ովս . գ . 3—5 : (18) Ղեւտ . գ . 5 , 6 : Ձայտ . խա . 3 : (19) Ղեւտ . խք . 10 : (20) Ռազմ . ԺԱ . 6 : Յայտ . խա . 4 : (21) Ռազմ . իգ . 1 : ՀԱ . 8 : Յովհ . ժ . 4 . 11 . 14 : (22) Ղեւտ . իե . 8 : Յայտ . խա . 4 :

Digitized by Google

1 Ա Ե յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝ եղև լռութիւն ՚յերկինս՝ որպէս կէս ժամու ։

2 Եւ տեսի հրեշտակս եօթն, որ առաջի Ա՛ստուծոյ կային. և տուաւ նոցա եօթն փող ։

3 Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն, և ունէր խնկանոց ոսկի. և տուաւ նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս ամենայն սրբոց ՚ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն ։

4 Եւ ել ծուխ խնկոցն՝ աղօթք սրբոցն ՚ի ձեռաց հրեշտակացն առաջի Ա՛ստուծոյ ։

5 Եւ ետուն հրեշտակն զխնկանոցըն ՚ի հրոյ սեղանոյն՝ և արկ զնա յերկիր. և եղև որոտումն և ձայնք և փայլատակումն և շարժումն մեծ ։

6 Եւ եօթն հրեշտակքն որ ունէին եօթն փողս՝ պատրաստեցին զինքեանս առ ՚ի հարկանել ։

7 Եւ առաջինն հրեշտակն եհար զփողն, և եղև կարկուտ և հուր և արիւն խառնեալ՝ և տնկաւ յերկիր, և զերրորդ մասն երկրի այրեաց, և զերրորդ մասն ծառոց այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց ։

8 Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և իբրև պէտս էր մի մեծ հրեղէնեալ լեառն ՚ի ծով, և եղև երրորդ մասն ծովուս արիւն ։

1 Ե երբ որ եօթներորդ կնիքը լացարաւ՝ լռութիւն էլաւ երկնքումն՝ կէս ժամի (սահմէ) չափ ժամանակ[1] ։

2 Եւ եօթն հրեշտակներ տեսի՝ որ Ա՛ստուծոյ առաջին կանգնած էին[2]. և եօթն փող աբվվաւ նորանց[3] ։

3 Եւ մին ուրիշ հրեշտակ եկաւ կանգնեց սեղանին մօտ, և ոսկի խնկաման ունէր. և շատ խունկ տրվվաւ նորան, որ (նորանով) ամէն սրբերուն աղօթքըն[4] մատուցանէ էն ոսկի սեղանին վերայ որ աթոռի առաջին էր[5] ։

4 Եւ խնկերի ծուխն՝ սրբոց աղօթքն վեր ելաւ հրեշտակներէն ձեռներինն Ա՛ստուծոյ առաջին[6] ։

5 Եւ հրեշտակն էն խնկամանը լցրուց էն սեղանի կրակիցն, և քըցեց նորան երկրի վերայ. և որոտմունք և ձայներ և փայլատակմունք[7] և մեծ շարժ էլաւ[8] ։

6 Եւ էն եօթն հրեշտակներն՝ որ էն եօթն փողերըն ունէին՝ իրանց պատրաստեցին որ փչեն ։

7 Եւ առաջին հրեշտակն փողըն փչեց, և էլաւ կարկուտ և կրակ և արիւն խառնրվածի[9] և ընկաւ երկրի վերայ և երկրի երրորդ բաժինըն այրեց[10], և ծառերի երրորդ բաժինն այրեց, և բոլոր կանանչ խոտերըն այրեց[11] ։

8 Եւ երկրորդ հրեշտակն փչեց, և մին մեծ սարի պէս որ կրակով բորբոքված էր՝ ընկաւ ծովին մէջ[12], և ծովի երրորդ բաժինն[13] արիւն դարձաւ[14] ։

(1) Յայտ. ը. 1։ (2) Ա՛ստ. ժը. 10։ Ղ՛ած. ա. 19։ (3) բ Ա՛նց. իբ. 25—28։ (4) Յայտ. ե. 8։ (5) Նւմ. ԺԶ. 1։ Յայտ. ը. 3։ (6) Ա՛ստ. ձա. 2։ Ղ՛ած. ա. 10։ (7) Յայտ. ժգ. 13։ (8) բ Թագ. ՚իբ. 8։ գ Թագ. ժբ. 11։ Գործ. գ. 21։ (9) Նեհ. լբ. 22։ (10) Յայտ. ժը. 2։ (11) Նոյ. բ. 13։ Յայտ. թ. 4։ (12) Երմ. ծա. 25։ Ա՛մո. է. 4։ (13) Յայտ. ժը. 3։ (14) Նիհ. ծգ. 19։

Digitized by Google

9 Եւ սատակեցաւ երրորդ մասն լուսակաց, և որ ունէր շունչ կենդանի՝ ապականեցաւ. և երրորդ մասն նաւուց ընկղմեցաւ։

10 Եւ երրորդ հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից աստղ մի մեծ՝ բորբոքեալ իբրև զշամբար, և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբերաց։

11 Եւ էր անուն աստեղն Վհատութիւն. և բազումք մեռան ի դառնութենէ ջուրցն։

12 Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և վիրաւորեցաւ երրորդ մասն արեգական՝ և երրորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն աստեղաց. և խաւարեր երրորդ մասն նոցա, և երրորդ մասն գիշերոյ նոյնպէս։

13 Եւ տեսի՝ և լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ ի մէջ երկնից՝ զի ասէր ի ձայն մեծ, Վա՜յ, վա՜յ, վա՜յ՝ որ բնակեալ են յերկրի. յորժամ լինիցի ձայն երիցն ևս փողոց, զոր կամիցին հրեշտակքն հարկանել։

9 Եւ լողացող կենդանիքն երրորդ բաժինն սատակվեցաւ. և նաև էլ որ կենդանի շունչ ունէր՝ ապականվեցաւ[15]. և նաւերի երրորդ բաժինն ծովի մէջ կործանվեցաւ։

10 Եւ երրորդ հրեշտակն փչեց, և մին մեծ աստղ ընկաւ երկնքիցն՝ լամպարի (խոշոլէ) պէս բորբոքված[16] և ընկաւ գետերի և աղբիւրների երրորդ բաժնի վրայ[17]։

11 Եւ աստեղի անունն Վհատութիւն էր[18]. և շատ մարդիք մեռան էն ջրերի դառնութենէն[19]։

12 Եւ չորրորդ հրեշտակն փչեց, և վիրաւորվեցաւ արեգական երրորդ բաժինն, և լուսնի երրորդ բաժինն. և աստեղների երրորդ բաժինն, և նորանց երրորդ բաժինն խաւարվեցաւ. և ցերեկի երրորդ բաժինն լոյս չէր ասլես, էնպես էլ գիշերի երրորդ բաժինն[20]։

13 Եւ տեսի՝ և ձայն լսեցի, որ մին հրեշտակ երկնքի միջումն թռուած մեծ ձայնով ասում էր[21]. Վա՜յ, վա՜յ, վա՜յ նորանց՝ որ բնակված են երկրի վերայ, երբոր էն մնկել եւ ընք փողերի ձայնն կըլինի՝ որ հրեշտակներն պիտի փչեն[22]։

Գլ. Ժ

1 Երրորդ հրեշտակն փողն փչելով՝ մին աստղ երկնքիցն վէր ընկաւ, որ նոքա անգունդի գըրի բանալիքն առվին։ 2 Նա՝ անգունդի գուրըն բանուաւ. որ էն տեղից մաքոփներ գուռա կըգան կարիւնների պէս։ 12 Մին վայն կ'անցկանայ։ 13 Վեցերորդ փողըն կըփչվի։ 14 Չորս հրեշտակներըն որ կապված են առնակվումեն։

1 Եւ հինգերորդ հրեշտակն փող փչեաց. և տեսի զի աստղ մի անկաւ յերկնից, և տուաւ նմա բանալի գբոյն անդնդոց.

1 Եւ հինգերորդ հրեշտակն փչեցաւ. և տեսի որ մին աստղ երկնքիցն վէր ընկաւ երկրի վերայ՝. և ատնդունդի գըրի բանալիքն առվաւ նորան[2]։

(15) Յայտ. ժգ. 3։ (16) Նոայ. ժգ. 12։ Յայտ. թ. 1։ (17) Յայտ. ժգ. 4։ (18) Ղեռւտ. ա. 20։ (19) Ելք. ժե. 23։ Երեմ. թ. 15։ ԺԹ. 15։ (20) Նոայ. ժգ. 10։ Ընդհ. ը. 9։ (21) Յայտ. ժգ. 9։ ԺԹ. 17։ (22) Յայտ. թ. 12։ ժա. 14։ (1) Գործ. ժ. 18։ Յայտ. ը. 10։ (2) Գործ. ը. 31։ Յայտ. ժե. 8։ ի. 1։ Գայտ. 2. 11։

Digitized by Google

2 Եւ ելանէր ծուխ ՚ի գբոյն որպէս զծուխ վառոյի մեծի. և խաւարեցաւ արեգակն և օդք ։

3 Եւ ՚ի գբոյն ելանէր մարախ ՚ի յերկրի. և առաւ նոցա իշխանութիւն իբր զկայծոցս կարձի .

4 Եւ ասացաւ նոցա՝ զի մի՛ մեղանչեն խոտոյ երկրի և մի՛ ամենայն ծառոց, բայց միայն մարդոյ երկրպանոյ, որ ո՛չ ունիցին զնիք ՚ի վերայ ճակատու իւրեանց ։

5 Եւ առաւ նոցա հրաման՝ զի մի՛ սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա ամիս հինգ. և չարչարանք նոցա իբրև զխայթոցս կարձի՝ որ հարկանիցէ զմարդ ։

6 Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և մի՛ գտցեն. և ցանկան մեռանել՝ և փախիցէ ՚ի նոցանէ մահ ։

7 Եւ նմանութիւն մարախոյն, նմանութիւն ձիոյ պատրաստելոյ ՚ի պատերազմ. և ՚ի վերայ գլխոց նոցա իբրև զպսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք նոցա իբրև զերեսս մարդոյ ։

8 Եւ հերք նոցա իբրև զհերս կնոջ. և ատամունք նոցա իբրև զառիւծու ։

9 Եւ ունէին զրահս իբրև զրահս երկաթի. և ձայն թևոց նոցա իբրև զձայն կառավար ձիոց բազմաց՝ որ արշաւեն ՚ի պատերազմ ։

10 Եւ ունին ագիս ըստ նմանութեան կարձի. և խայթոց յագիս նոցա. և ունէին իշխանութիւն չարչարել զմարդիկ ամիս հինգ ։

2 Եւ էն գբբիցն ծուխ էր դուրս գալիս մեծ փուռն ծխի պէս. և արեգակն և օդն (հուռն) խաւարվեցաւ[3] ։

3 Եւ գբբիցն մարախ էր դուրս գալիս երկրի վերայ[4]. և նորանց իշխանութիւն տրվվաւ կարիճի խայթոցի պէս[5] ։

4 Եւ նորանց ասվեցաւ՝ որ երկրի խոտին[6] վնաս չը՛տան[7], և ո՛չ էլ ամէն ծառերուն, բայց միայն երկրաւոր մարդկանց, որ (Ա՛ստուծոյ) կնիքըն (Տօհլըն) չունին իրանց ճակատներուն վերայ[8] ։

5 Եւ հրաման տրվվաւ նորանց՝ որ չը՛սպանեն նորանց, բայց հինգ ամիս չարչարեն նորանց. և նորանց չարչարանքն կարիճի խայթոցի պէս (էր)՝ որ մին մարդոյ կծուածի[9] ։

6 Եւ էն օրերուն մարդիք մահ կըխնդրեն՝ և չեն գանիլ. և կըցանկանան մեռնելոյ՝ և մահ կըփախչի նորանցից[10] ։

7 Եւ էն մարախի կերպն՝ նման էր ձիոյ՝ որ պատրաստված է կռվի համար[11]. և նորանց գլխներուն վրայ պսակի պէս (էր)՝ ոսկոյ նման[12]. և նորանց երեսները մարդոյ երեսի նման[13] ։

8 Եւ նորանց մազերն կընկան մազերի պէս. և նորանց ատամներն առիւծի (ատամներն) նման[14] ։

9 Եւ զրահներ ունէին՝ ինչպէս երկաթէ զրահներ. և նորանց թեւերուն ձայնն նման (էր) շատ կառք (ապտպոյ) քաշող ձիանց պէս՝ որ կռվի մէջ վազումն[15] ։

10 Եւ ագիներ ունէին կարիճի նման, և խայթոց իրանց ագիներումն էր. և իշխանութիւն ունէին՝ որ հինգ ամիս մարդկանց չարչարեն[16] ։

(3) Յովէլ · բ · 2 · 10 ։ (4) Ննչ · ժ · 4 · Ելից · է · 12 ։ (5) Ա՛ապր · 19 ։ (6) Ելից · ը · 7 ։ (7) Ելից · գ · 6 · է · 3 ։ (8) Ննչ · ժբ · 23 ։ Ննխ · բ · 4 ։ Ելից · է · 3, (9) Ելից · ժա · 7 · Ա՛ապր · 10 ։ (10) Ցոբ · գ · 21 · Ներց · բ · 19 · Ննխ · ը · 3 ։ Ելից · գ · 16 ։ (11) Յովէլ · բ · 4 ։ (12) Նահում · գ · 17 ։ (13) Ելից · է · 8, (14) Յովէլ · ա · 6 ։ (15) Յովէլ · բ · 5—7 ։ (16) Ա՛ապր · 5 ։

Digitized by Google

11 Եւ ունէին թագաւոր ՚ի վերայ իւրեանց զՀրեշտակն գժոխոց . և անուն նորա Եբրայեցերէն Ա՛զաբդոն , որ կոչի ՚ի Հայ բարբառ Կորուստ :

12 Ա՛հաւասիկ վայ մի էանց , և վայք երկու գալոց են :

13 Եւ վեցերորդ Հրեշտակն հարկանէր զփողն . և լուայ ձայն ՚ի չորից կենդանեացն՝ որ էին առաջի սեղանոյն Ա՛ստուծոյ .

14 ՚Ի մէջ ցՀրեշտակն վեցերորդ՝ որ ունէր զփողն . Լ՛ուծ զչորս Հրեշտակսն զկապեալս ՚ի վերայ գետոյն Եփրատայ :

15 Եւ լուծան չորս Հրեշտակքն՝ պատրաստեալք ՚ի ժամ և յօր և յամիս և ՚ի տարի , զի սպանցեն զերրորդ մասն մարդկան :

16 Եւ համարք հեծելոց զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց՝ և Հազարք Հազարաց՝ լուայ զթիւ նոցա :

17 Եւ տեսի ձիս ՚ի տեսլեանն , և հեծեալս ՚ի նոսա՝ որք ունէին զզրահս Հրեղէնս , և յակինթս Հըրդեհեալս ծծմբով . և գլուխք ձիոցն իբրև զգլուխս առիւծուց . և ՚ի բերանոյ նոցա Հուր ելանէր՝ և ծուխ և ծծումբ :

18 Եւ ՚ի Հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ մասն մարդկան՝ ՚ի Հրոյն և ՚ի ծխոյն և ՚ի ծծմբոյն , որ ելանէր ՚ի բերանոյ նոցա :

19 ՚Ի իշխանութիւն ՚ի բերանս է նոցա՝ և յագիս նոցա , և ագիք նոցա նմանութիւն օձի . և ունէին գլուխք՝ որով սատակէին զանիրաւս :

11 Եւ իրանց վերայ թագաւոր ունէին[17] դժոխքի Հրեշտակը[18] . և նոր անունը՝ Եբրայեցերէն Ա՛ղբադոն (էր) . որ Յուներէն Կորուստ կասվի :

12 Ա՛յժ մին վայն անցկացաւ , և երկու վայ էլ պիտի գան[19] :

13 Եւ վեցերորդ Հրեշտակն փողն փչեց . և ձայն լսեցի էն չորս կենդանիներիցն՝ որ Ա՛ստուծոյ սեղանի առաջին էին ,

14 Որ ասումէր վեցերորդ Հրեշտակին՝ որ էն փողը ունէր . (քէ) Լ՛ուծակիր էն չորս Հրեշտակներըն՝ որ Եփրատ գետի վերայ կապված են[20] :

15 Եւ էն չորս Հրեշտակներն արձակվեցան , որ պատրաստաված էին ժամին և օրին և ամսին և տարոյն Համար , որ մարդկանց երրորդ բաժինըն սպանեն :

16 Եւ նորանց ձիաւոր զօրքի Համարն[21] բիւրք բիւրոց և Հազարք Հազարաց (էր)[22] լսեցի նորանց Համարըն[23] :

17 Եւ էն տեսիլքի մէջ ձիանք տեսի , և նորանց վերայ հեծածներն կրակէ և յակինթէ և ծըծումբով (ՓՈՓՈՒՂՈՎ) վառված զրահներ ունէին . և ձիանքի գլուխներն առիւծի գլուխների նման (էին) . և նորանց բերանից կրակ և ծուխ և ծծումբ էր դուրս գալիս[24] :

18 Եւ էս կոտորմունքից՝ մարդկանց երրորդ բաժինն մեռաւ էն կրակից և ծխից և ծըծումբից , որ նորանց բերանից դուրս էր գալիս :

19 Ինչու որ նորանց զօրութիւնն իրանց բերանումն էր՝ և իրանց պոչերումն , և նորանց պոչերն օձի նման (էին) և գլուխներ ունէին՝ որ նորանցով սպանումին անիրաւներին[25] :

(17) Նախ . բ · 2 : (18) Ա՛յր · 1 : (19) Հայտ · ը · 13 : (20) Հայտ · ժգ · 12 : (21) Նախ · լբ · 4 : (22) Ա՛ամ · կը · 17 : Ա՛ան · է · 10 : (23) Հայտ · է · 4 : (24) ա Մեննոց · ժբ · 8 : Ա՛ուայ · է · 28 , 29 : (25) Ա՛ուայ · բ · 15 :

Digitized by Google

20 Եւ պղք ՚ի մարդկանէ որ ոչ մեռանի ՚ի հարուածոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին և ոչ դարձան ՚ի գործոց ձեռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց և կռոց յոսկեղինաց և յարծաթեղինաց՝ և ՚ի պղընձոյ և ՚ի քարէ և ՚ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն՝ և ոչ լսել և ոչ գնալ։

21 Եւ ոչ ապաշխարեցին ՚ի մարդասպանութենէ՝ և ՚ի դեղատուութենէ, և ՚ի պոռնկութենէ՝ և ՚ի գողութենէ իւրեանց։

11 Եւ գազանն՝ որ էր՝ և չէ՝ և նա ութերորդ է. և է յեօթանց անտի, և ՚ի կորուստ երթալոց է ։

12 Եւ տասն եղջիւրն՝ զոր տեսեր՝ տասն թագաւորք են. որոց չև՚ևս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝ և կան իշխանք ՚ի մի ժամ. և առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազանին ։

13 Մի՛որ մի կամս ունին, և զզօրութիւն և զիշխանութիւն գազանին տան ։

14 Եւ ընդ Գառնին պատերազմին. և Գառն յաղթէ նոցա. զի Տէր է նոցա. և Թագաւոր թագաւորաց. և որք ընդ նմա՝ կոչեցեալք ևն, ընտրեալք և հաւատացեալք ։

15 Եւ ասաց ցիս. Եւ զջուրն զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք են, և բազմութիւնք և ազգք և լեզուք ։

16 Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր գազանին, նոքա տեսցեն զպոռնիկն՝ և աւերեցեն զնա, և զմերկին նորա կերիցեն՝ և այրեցցեն զնա հրով ։

17 Զի Աստուած եդ ՚ի սիրտ զարմանան երթալ. և չէ, և մտ է։

9 Այստեղ է իմաստութիւնն՝ էն որ միտք ունի. էն եօթն գլուխն՝ եօթն սարերն են որ կինն նորանց վերայ նստած է։ (և նորանք եօթը թագաւորներ են.) և եօթն թագաւոր որ էին,

10 Հինգն վէր ընկան, և միսն կայ, և միսն դեռ չի եկել. և երբոր գայ՝ միսքիչ ժամանակ ունի ։

11 Եւ գազանն որ էր, և չէ, նա էլ ութերորդն է. և էն եօթնիցն է, և պիտի կորուստն գնայ։

12 Եւ տասն եղջիւրներն որ տեսիր՝ տասն թագաւոր են. որ դեռ թագաւորութիւն չեն առել, բայց պիտի հինց մին ժամի (սահմանի) չափ թագաւորի պէս իշխանութիւն առնեն էն գազանի հետ ։

13 Նորանք միև կամք ունին, և իրանց զօրութիւնը և իշխանութիւնն կրտան գազանին ։

14 Եւ կռիւ կանեն Գառին հետ, և Գառն կը յաղթէ նորանց, ինչու որ նորանց Տէրն է, և թագաւորների Թագաւորն։ և նորանք՝ որ նորա հետ են կոչված, ընտրված և հաւատացեալ։

15 Եւ ասաց ինձ. Այդ ջուրդ որ տեսիր՝ որ տեղ որ պոռնիկն նըստած էր, ժողովուրդներ են, և բազմութիւններ և ազգեր և լեզուներ ։

16 Եւ տասն եղջիւրներն՝ որ տեսիր գազանումն, նորանք (կըտեսնեն պոռնիկին) և կատեն նորան. և նորա մարմինը կուտեն՝ և կրակով կայրեն նորան ։

17 Պատճառն որ Աստուած դրաւ

(25) Յայտ. ժգ. 8։ (26) Յայտ. ժգ. 16։ (27) Յայտ. ժգ. 1։ (28) Ա՚ր. 8։ (29) Դան. է. 20։ Ա՚ր. ա. 18, 19. 21։ Յայտ. ժգ. 1։ (30) Յայտ. ժգ. 14։ ժբ. 19։ (31) Բ Օրին. ժ. 17։ ա Տի՚մ. գ. 15։ Յայտ. ժբ. 16։ (32) Նեհ՚ ե. 44, 45։ Յայտ. ժգ. 1։ (33) Նաա. ը. 7։ Ա՚ր. 1։ (34) Յայտ. ժգ. 7։ (35) Նեհ՚ ե. 41, 42։ Յայտ. ժգ. 12։ (36) Նաի. ժգ. 37—44։ Յայտ. ժը. 16։ (37) Յայտ. ժը. 8։

Digitized by Google

տըս նոցա առ ՚ի լինիլ նոցա մի կամն , և տալ զիշխանութիւնն գազանին՝ մինչև կատարեսցի բանն Աստուծոյ :

18 Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն մեծ , որ ունի զիշխանութիւն ՚ի վերայ թագաւորութեանց երկրի :

նորանց սրտի մէջ՝ որ նորանք միոյ կամք ունենան , և որ իրանց թագաւորութիւնըն տան գազանին[39] մինչև որ Աստուծոյ խօսքն կատարվի[39] :

18 Եւ կինն որ տեսիր՝ էն մեծ քաղաքն է[40] , որ թագաւորութիւն է անուամ երկրի թագաւորութիւններու վերայ[41] :

ԿԻ · ԺԴ

2 Մեծ Բաբիլոնն վէր կ՚ընկնի : 4 Աստուծոյ ժողովուրդին հրաման կըլինի , որ նորա միջից դուրս գան : 9 Երկրի թագաւորներն , 11 վաճառականներն 17 և նաւավարներն ողբ և սուգ կ՚անեն նորա վերայ : 20 Առաքեալներն ուրախ կըլինին էն մեծ քաղաքին վերայ քանզի որ Աստուած նորա դատաստանըն դատեց նորա վերայ :

1 Եւ եկն մի յեօթն հրեշտակաց որ ունէին զեօթն սկաւառակսն , և խօսեցաւ ընդ իս՝ եւ ասէ ցիս . Եկ՝ ցուցից քեզ զդատաստան պոռնկացն մեծի որ նստի ՚ի վերայ ջուրց բազմաց :

2 Ընդ որում պոռնկացան թագաւորք երկրի , և արբուցին որ բնակեալ են յերկրի ՚ի գինւոյ պոռնկութեան նորա :

3 Եւ տարան զիս ՚ի հովիտ մի յանապատ , և տեսի կին մի նստեալ ՚ի վերայ գազանի կարմրի , լի անուամբ հայհոյութեան , որ ունէր գլուխս եօթն և եղջիւրս տասն :

4 Եւ կինն էր զգեցեալ ՚ի ծիրանի և ՚ի կարմիր , և զարդարեալ ոսկով և ակամբք և մարգարտիւք , և ունէր բաժակ ոսկի ՚ի ձեռին իւրում , լի պղծութեամբ և անմաքրութեամբ պոռնկութեան իւրոյ :

1 Եւ եկն մի յայնց եօթն հրեշտակաց որ ունէին զեօթն սկաւառակսն , և խօսեցաւ ընդ իս՝ եւ ասէ ցիս . Եկ՝ ցուցից քեզ զդատաստան մեծի պոռնկին որ նստի ՚ի վերայ ջուրց բազմաց :

2 Ընդ որում պոռնկացան թագաւորք երկրի , և արբուցին որ բնակեալ են յերկրի ՚ի գինւոյ պոռնկութեան նորա :

3 Եւ տարան զիս ՚ի հովիտ մի յանապատ , և տեսի կին մի նստեալ ՚ի վերայ գազանի կարմրի , լի անուամբ հայհոյութեան , որ ունէր գլուխս եօթն և եղջիւրս տասն :

4 Եւ կինն էր զգեցեալ ՚ի ծիրանի և ՚ի կարմիր , և զարդարեալ ոսկով և ակամբք և մարգարտիւք , և ունէր բաժակ ոսկի ՚ի ձեռին իւրում , լի պղծութեամբ և անմաքրութեամբ պոռնկութեան նորա :

1 Եւ էս բաներիցս եաւս տեսի որ մին ուրիշ հրեշտակ երկնքիցն վէր էր գալիս՝ որ մեծ իշխանութիւն ունէր[1] , և երկիրն լուսաւորվեցաւ նորա փառքիցն[2] :

2 Եւ մեծ ձայնով աղաղակեց՝ և ասաց . Ա՛ր ընկաւ էն մեծ Բաբիլոնն[3] , և էլաւ դևերի բնակութիւն՝ և ամէն պիղծ հոգիների կենալոյ տեղ[4] , և ամէն անսուրբ և ատելի հոգիների բանտ[5] :

3 Պատճառն որ նորա պոռնկութեան գինոյ բարկութենիցն ամէն ազգերն և երկրի թագաւորներն՝ որ նորա հետ պոռնկվեցան[6] . և երկրի վաճառականներն հարըստացան նորա փափկութեան առատութենիցն[7] :

4 Եւ ձայն լսեցի երկնքիցն՝ որ ասում էր . Գնացէք դորա միջիցն իմ ժողովուրդ , որ մասնակից չըլինիք դորա մեղացն , և (որ) դորա պատուհասըն չընդունիք[8] .

(38) բ Խոս . բ . 10 : (39) Յայտ . ժ . 7 : (40) Յայտ . ժգ . 19 : (41) Յայտ . ժբ . 4 : (1) Յայտ . ժե . 1 : (2) Նովի . խգ . 2 : (3) Նոսա . ժգ . 19 : խ . 9 : Նբիմ . ծա . 8 : Յայտ . ժգ . 8 : (4) Նոսա . ժգ . 21 : խ . 8 : լգ . 14 : Նբիմ . ծ . 20 : ծա . 37 : (5) Նոսա . ժգ . 22 : լգ . 11 : Մատթ . ժ . 2 , 8 : (6) Յայտ . ժգ . 8 : ժե . 2 : (7) Ա՛ղդ . 11 . 15 : Նոսա . խե . 15 : (8) Նոսա . խը . 20 : ծբ . 11 : Նբիմ . ծ . 8 : ծա . 8 . 55 : բ Պօղնք . գ . 17 :

Digitized by Google

5 Օ՛ր հասին կցնցան մեզք դա-
ցա մինչև յերկինս . և յիշեաց Ա՛ս-
ուածծ զամբարշտութիւնս դորա ։
6 Եւ հաւուցանէ դմա որպէս և
հատոյցն մեզ , և ատցէ դա երկ-
պառիկ ըստ գործոց իւրոց . և ըզ-
բաժակն որով խառնեացն՝ խառնե-
ցէք դմա կրկին ։

7 Եւ որչափ փառաւորեաց զին-
քըն և խայտաց , այնչափ հատուցէք
դմա սուգ . զի ՚ի սրտի իւրում ա-
սէր՝ Թէ Նստայց ես Թագաւոր՝ և այրի ոչ ևս եղէց ։

8 Ոլ ասն այնորիկ ՚ի միում ա-
ւուր եկեսցեն ՚ի վերայ դորա հա-
րուածք՝ ժահ և սուգ և սով , և ՚ի
հուր այրեսցի . զի հզօր է Տէր
Ա՛ստուածն՝ որ դատեցաւն զդա ։

9 Եւ լայցեն՝ և կոծեսցին ՚ի վե-
րայ դորա Թագաւորք երկրի , որք
ընդ դմա պոռնկեցան և խաղացին .
և հեծեսցեն՝ յորժամ տեսցեն ըզ-
ծուխ կիզմանն ասնջանաց դորա ։

10 ՚ի հեռաստանէ կայցեն ՚ի վասն
երկիւղի տանջանաց դորա՝ և ասա-
ցեն . Ոլ՝ այ քաղաքիդ մեծի Բաբե-
լոնիդ . քաղա՛ք հզօր , զի ՚ի միում
ժամու եկին հասին դատաստանք քո ։

11 Եւ վաճառականք երկրի ողբ-
ասցեն և սգասցեն ՚ի վերայ քո ,
զի քեռն ևս ոք գնէ ։

5 Ինչու որ դորա մեղքերն հա-
սին մինչև երկինքն[9] . և Ա՛ստուած
յիշեց դորա ամբարշտութիւնները[10] ։
6 Եւ հատուցուրն արէք դորան՝
ինչպես որ դա հատուցուրն տուաւ
ձեզ , և թմղ դա իրան գործածնե-
րի չափովն երկու պատիկ տանէք[11] .
և էն բաժակըն (Խառնն) որ դա ըզ-
ցրուց (ձեզ)[12] , ըրէք դորա համար
երկու չափով[13] ։
7 Եւ որչափ որ իրան փառաւո-
րեց և փափկացաւ , էնչափ սուգ
և տանջանք հատուցուցէք տուէք գո-
րան[14] . ինչու որ իրան սրտաւն ա-
սուէր՝ Թէ (Ա՛)ինչա) Թագուհի պի-
տի նստիմ՝ և արքաների չեմ լինիլ .
(և էլ սուգ չեմ տեսնիլ[15]) ։
8 Ա՛ւրտվայր հենց մին օրուանն
պիտի գան դորա վերայ պատահմա՝
մահ , և սուգ , և սով[16] , և կրա-
կով պիտի այրվի[17] . ինչու որ հըզ-
օր է Տէր Ա՛ստուածն որ դորա դա-
տաստանըն արաւ[18] ։
9 Եւ լաց և կոծ կանեն դորա
վերայ[19] երկրի Թագաւորներն՝ որ
դորա հետ պոռնկվեցան և խաղա-
ցին[20] . և ողբ կանեն երբոր տես-
նեն ծուխըն որ դորա այրվելոյ ծուխըն կը-
տեսնեն[21] ։
10 Հեռու կրկանգնեն դորա տան-
ջանքի վախից՝ և կսեն . Ոլ՝ այ
քեզ՝ մեծ քաղաքդ Բաբիլոն , զօրա-
ւոր քաղաք[22] . ինչու որ հենց մին
ժամումն (սահմանին) քո գատաս-
տանդ եկաւ հասաւ[23] ։
11 Եւ երկրի վաճառականներն ողբ
և սուգ կանեն քեզ վերայ , ինչու
որ իսկի մինն չըկայ որ նորանց քեռ-
ներըն առնէ[24] ։

(9) Ծննդ . ԺԸ . 20 , 21 ։ Ելից . ԾԱ . 9 ։ Ելեւ . ա . 2 ։ (10) Ելայ . ԺԷ . 18 ։
(11) Ա՛ռմ . ԺԷ . 6 ։ Ելից . Ե . 15 . 20 . ԾԱ . 24 . 40 ։ Բ Տի՛մ . գ . 16 ։ Ելայ .
ԺԳ . 10 ։ (12) Ելայ . ԺԷ . 10 ։ (13) Ելայ . ԺԷ . 10 ։ (14) Նախ . ԽԸ . 3 ։ (15)
Նաայ . խե . 7 , 8 ։ Սփոն . բ . 15 ։ (16) Նաայ . խե . 9 ։ Ա՛ույր . 10 ։ (17) Ելայ .
ԺԵ . 16 ։ (18) Երեմ . Ե . 34 ։ Ելայ . ԺԱ . 17 ։ (19) Երեմ . Ե . 10 ։ (20) Նախ .
ԽԸ . 10 , 17 ։ Ելայ . ԺԵ . 2 ։ Ա՛ույր . 8 ։ (21) Ա՛ույր . 18 ։ Ելայ . ԺԲ . 3 ։ (22)
Նաայ . խա . 9 ։ Ելայ . ԺԳ . 8 ։ (23) Ա՛ույր . 17 . 19 ։ (24) Նախ . ԽԷ . 27—30 .
Ա՛ույր . 8 ։

Digitized by Google

12 Եւ շահք որ ի քէն՝ ուչ ևս ի-
ցէ ոսկւոյ և արծաթոյ և ականց
պատուականաց՝ և մարգարտոյ և բե-
հեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և
որդան, և ամենայն փայտ խնկոյ և
ամենայն անօթ փղոսկրեայ, և ա-
մենայն անօթ ի փայտէ պատուա-
կանէ և ի պղնձոյ և յերկաթոյ և
ի կճոյ ։

13 Եւ կինամոմոն և ամենայն խունկ
և իւղ և կնդրուկ, և գինի և ձէթ
և նաշիշ և ցորեան, և սատակուածք
ամենայն, արջառ և ոչխար. և ե-
րիվարաց և կառաց՝ որ վայել է
մարմնոց և ոգւոց մարդկան ։

14 Եւ ամենայն ցանկութիւն ան-
ձին քո գնաց ի քէն, և ամենայն
լուսափայլ վայելչութիւնն, պա-
րարան և գերն և սպիտակն գնաց
ի քէն, և ուչ ևս գտցես զայդ ։

15 Եւ ամենայն շահավաճառք այ-
սպիսիք մեծացեալք՝ ի քէն ի բաց
կացցեն վասն երկիւղի տանջանաց
քոց լալով՝ և սուգ առնելով ։

16 Եւ ասասցեն. Վա՜յ վա՜յ քա-
ղաք մեծ. որ զգեցեալ էիք բեհեզս
և ծիրանիս և որդան և ոսկեզօծս՝
և քարինս պատուականս՝ և մարգա-
րիտս ։

17 Զի ի միում ժամու պակա-
սեցաւ այսչափ մեծութիւն քո. և
ամենայն նաւավար՝ և ամենայն որ
ի տեղիս տեղիս նաւեն, և նաւազք
և որք միանգամ ուռկանաւ գործեն՝
ի հեռաստանէ կայցեն լալով,

18 Եւ աղաղակեցեն՝ տեսանելով
զծուխ հիւմման նորա, ասելով. Ո՞

12 Եւ քեզանից էլ շահ չի լինիլ
ոսկոյ և արծաթի և պատուական
ակունքների՝ և մարգարիտի և բե-
հեզի և ծիրանի և ոսկեթելի և կար-
միր որդի (ղըրմըզի), և ամեն կերպ
խնկե փայտի՝ և ամեն փղի ոսկորից
շինած ամաններ, և ամեն պղնձի-
փայտից և պղնձից և երկաթից և
կիճ (չըրչ) քարից շինած աման-
ներ[25] ։

13 Եւ կինամոն (փոլչին) և ամեն
կերպ խունկ և իւղ և կնդրուկ, և
գինի և ձէթ, և շարմաղի ալիւր
և ցորեն, և ամեն (կերպ) պարանք,
արջառ և ոչխար. և ձիանք և կառ-
քեր (ռեպոպանէր)՝ էն որ մարդկանց
մարմիններին և հոգիներին կըվայե-
լէ[26] ։

14 Եւ քո անձիդ ամեն ցանկու-
թիւնն գնաց քեզանից, և ամեն լու-
սով փայլող վայելչութիւնն, պա-
րարան և գիրացածն և սպիտակն
գնաց քեզանից, և էլ չես գտնիլ
դորան ։

15 (Եւ) ամեն վաճառականներն՝
որ սրանցով հարստացան՝ (քեզա-
նից) հեռու կըկենան քո տանջանքի
վախից լաց և սուգ անելով[27] ։

16 Կասեն. Վա՜յ վա՜յ (քեզ) մեծ
քաղաք, որ բեհեզներ և ծիրանի և
կարմիր որդ (ղըրմըզ) էիր հագած.
և ոսկով և ազնիւ քարերով և մար-
գարիտով (զարդարվածք)[28] ։

17 Ինչու որ հենց մին ժամի մէջ
էդ չափ մեծութիւնդ պակասվեցաւ[29].
և ամեն նաւավարներն և էն ամենքն
որ տեղ տեղ նաւով են գնում, և
նորանք որ ծովի մէջ են գործում,
և էն ամենքն որ ուռկան (ղօա) են
բանացնում՝ հեռու կըկանգնեն լաց
լինելով[30],

18 Եւ կազաղակեն՝ նորա այրվե-
լոյ ծուխըն տեսնելով (և) կասեն[31].

(25) Հայտ. ժե. 4։ (26) Նախ. իե. 13։ (27) Ա՛իր. 3. 11։ (28) Հայտ. ժե. 4։
(29) Ա՛իր. 19։ (30) Հայտ. իգ. 14։ Նախ. իե. 29։ (31) Նախ. իե. 30, 31։
Ա՛իր. 9։

Digitized by Google

նման է քաղաքիս ոյսմիկ մեծի ։

19 Եւ արկցեն հաղ ՚ի վերայ գլխոց իւրեանց՝ և գուժալով ձայնիւ մեծաւ՝ լալով և սգալով ասասցեն . Վա՛յ վա՛յ քաղաք մեծ , որով ամենքեան մեծանային՝ որք ունէաք ըզնաւս ՚ի ծովս՝ վասն պատուական նուխեան քո . զի ՚ի միում ժամու ապականեալ կործանեցար ։

20 Ուրա՛խ լերուք ՚ի վերայ նորա երկինք՝ և սուրբ առաքեալք և մարգարէք . զի դատեցաւ Աստուած զդատաստան ձեր ՚ի դմանէ ։

21 Եւ առ հրեշտակն հզօր՝ քար մի խրամ զերկան մեծ , և ընկէց ՚ի ծով՝ ասելով . Այսպէս յորձանամամբ անկցի Բաբելոնն քաղաք մեծ , և այլ ոչ ևս գտցի ։

22 Եւ ձայն քնարերգաց և երաժշտականաց՝ արուեստականաց՝ և փողահարաց՝ և թմբկի , այլ ոչ ևս լուիցի ՚ի քեզ ։

23 Եւ լոյս ճրագի և ձայն երկանի՝ այլ ոչ երևեսցի ՚ի քեզ . և ձայն փեսայի և ձայն հարսին այլ ոչ ևս լուիցի ՚ի քեզ . և ոչ վաճառականք քո՝ փառաւորք և մեծամեծք երկրի , որ զուարճացեալ էին ՚ի քեզ . վասն զի կախարդութեամբ դեղատուութեան քո մոլորեցան ամենայն ազգք ։

24 Եւ ՚ի քեզ ամենայն արիւն մարգարէից և սրբոց գտաւ , և ամենայն գրելոց յերկրի կենդանեաց ։

Ո՞ր (քաղաք) նման է ևս մեծ քաղաքիս[32] ։

19 Եւ հող կը ձգեն իրանց գլխներին վերայ , և մեծ ձայնով կողաղաչեն և լաց և սուգ անելով կասեն . Վա՛յ վա՛յ մեծ քաղաք , որ (քեզանով) էինք հարստանում ամենքս , որ ծովի վերայ նաւեր ունէինք քո պատուականութենեն հարստ[33] . ի՞նչպէս մին ժամի (սահմնի) մէջ ապականված կործանվեցար[34] ։

20 Ուրա՛խ եղէք նորա վերայ երկինք՝ և սուրբ առաքեալք և մարգարէք[35] , ինչու որ Աստուած ձեր դատաստանն դատեց դորա վերայ[36] ։

21 Եւ մին զօրաւոր հրեշտակ՝ մին քար առաւ մեծ չաղացաքարի պէս՝ և ձգեց ծովի մէջ ասելով . Այսպէս պիտի սաստիկ վէրընկնի Բաբելոնն մեծ քաղաքն[37] , և էլ չի գտնվիլ[38] ։

22 Եւ էլ քնար ածողներն , և երաժիշտներն և արուեստականներն , և փող փչողներն և թմբուկի ձայն չէ՛պիտի լսվի քո միջումդ[39] ։

23 Եւ ճրագի լոյս և ջաղացի ձայն էլ խոկի չէ՛պիտի երևի քո միջումդ[40] . և փեսայի ձայն և հարսի ձայն էլ չէպիտի լսվի քեզանում[41] . և ոչ էլ քո վաճառականներդ երկրի (մարդկանց) մեծատուներն և փառաւորներն (կլլելնին) . որ նորանք քեզանով էին ուրախանում , պարծենում[42] . ինչու որ քո դեղատուութեան կախարդութենովը ամեն ազգերն մոլորվեցան[43] ։

24 Եւ քեզանում գտվաւ մարգարէներուն և սրբերուն և էն ամենի սրբուն[44] որ կենդանաց երկրումը գրված են[45] ։

(32) Յայտ . ժգ . 8 : (33) Յես . է . 8 : ա Յեռ . գ . 12 : Յոբ . բ . 12 : Նեհ . իե . 20 : (34) Ա Իր . 8 : (35) Նաայ . իգ . 23 : իթ . 18 : Նբիմ . ծա . 58 : (36) Ղ.աւ . ժա . 19 , 58 : Յայտ . ժբ . 2 : (37) Նբիմ . ծա . 64 : (38) Յայտ . ժբ . 8 : ժգ . 20 : (39) Նաայ . իգ . 8 : Նբիմ . է . 34 : ժգ . 8 : իե . 10 : Նեհ . իգ . 12 : (40) Նբիմ . իե . 10 : (41) Նբիմ . է . 34 : ժգ . 8 : իե . 16 : ԼՃ . 11 : (42) Նաայ . իգ . 8 : (43) գ Եսթ . բ . 22 : Ղատամ . գ . է : Յայտ . ժե . 2 . 5 : (44) Յայտ . 6 : (45) Նբիմ . ծա . 58 :

Digitized by Google

ԳԼ՝ ԺԹ

1 Երկիրքումն Լաստաձոյն փառք կըտան՝ որ մեծ պոռնիկին դատից, և իրան ծառաներէն արիւնն վրէժըն խնդրից : 7 Գառին հարսանիքն : 19 Հրեշտակն չ՛ԹողՒ որ Յովհաննէսն իրան երկրպագութիւն անէ : 17 Հաւտնիներին կոչմունն՝ որ ուտեն մարդկանց և անասուններուն մսերնիններըն :

1 Ե՛ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան յերկինս ասելով . Ա՛ղէլուիա , փրկութիւն և փառք և պատիւ և զօրութիւն Լաստուծոյ մերում .

2 Ո՛ր ճշմարիտ և արդար են դատաստանք նորա . զի դատեաց զպոռնիկին մեծ՝ ի պոռնկութեան իւրում , և խնգրեաց զվրէժ արեանն ծառայից իւրոց՝ ի ձեռաց նորա :

3 Եւ կրկին ասացին՝ Ա՛ղէլուիա . և ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւիտենից :

4 Եւ անկան քսան և չորք երիցունքն՝ և չորք կենդանիքն , և երկրպագին Լաստուծոյ՝ որ նստէրն յաթոռ փառաց , ասելով , Ա՛մէն՝ ալէլուիա :

5 Եւ ձայն յաթոռոյն ելանէր՝ ասելով . Օրհնեցէք զԼաստուած մեր ամենայն ծառայք նորա , և որք երկնչիք՝ ի նմանէ՝ փոքունք և մեծամեծք :

6 Եւ լուայ ձայն բազմութեան մեծի՝ իբրև զձայն ջուրց բազմաց , և իբրև զձայն հզօր որոտման , ասելով դարձեալ . Ա՛ղէլուիա , վասն զի թագաւորեաց Տէր Լաստուած մեր Ա՛մենակալ :

7 Խնդամք՝ և ցնծամք և տամք

1 Ե՛ սրանից եաւս մեծ բազմութեան ձայն լսեցի երկնքումն՝ որ ասումէին[1] . Ա՛ղէլուիա , փրկութիւն և փառք և պատիւ և զօրութիւն մեր Լաստուծոյն[2] :

2 Ի՛նչու որ նորա դատաստաններն ճշմարիտ և արդար են . որովհետև էն մեծ պոռնիկըն դատեց իրան պոռնկութենումն[3] , և իրան ծառաներուն արիւնի վրէժըն խնդրեց նորա ձեռքէն[4] :

3 Եւ երկրորդ անգամ էլ (օրհնեցին) և ասացին , Ա՛ղէլուիա . և նորա ծուխն դուրս էր գալիս յաւիտեանս յաւիտենից[5] :

4 Եւ քսան և չորս էրէցներն և չորս կենդանիքներն վէր ընկան՝ և երկրպագութիւն արին Լաստուծոյն՝ որ իրան փառաց աթոռի վերայ նըստած էր՝ և ասացին[6] . Ա՛մէն՝ Ա՛ղէլուիա[7] :

5 Եւ աթոռիցն ձայն էր դուրս գալիս՝ ասելով . Օրհնեցէք Լաստուծոյն՝ նորա ամէն ծառաներդ[8] , և դուք էլ որ նորանից վախումէք՝ փոքրներդ և մեծերդ[9] :

6 Եւ մեծ բազմութեան ձայն լսեցի՝ շատ ջրերի ձայնի պէս , և սաստիկ որոտումների ձայնի նման , որ միևնոյն ասումէր[10] . Ա՛ղէլուիա , պատճառն որ Ա՛մենակարող Տէր Լաստուածն թագաւորեց[11] :

7 Խնդանք և ուրախ լինինք , և

(1) Յայտ . ժա . 15 : (2) Յայտ . գ . 11 : է . 10 . 12 : ժբ . 19 : (3) Յայտ . ժե . 3 : ժգ . 7 : (4) ը Օրին . ա . 43 : Յայտ . գ . 19 : ժբ . 20 : (5) Ես . լդ . 10 . Յայտ . ժդ . 11 : ժբ . 9 . 18 : (6) Յայտ . դ . ե . 6 . 19 : է . 14 : (7) ա Թագ . ժգ . 36 : Նեհ . է . 13 . ը . 6 : Յայտ . է . 14 : (8) Պսալ . ճկդ . 1 : ճկե . 1 : (9) Յայտ . ժա . 18 : ի . 12 : (10) Եզեկ . ա . 24 : խգ . 2 : Յայտ . ժդ . 2 : (11) Յայտ . ժա . 15 : 17 : ժբ . 19 : ի . 22 :

Digitized by Google

փառս նմա ; զի եկն հարսանիք Գառինն , և կինն Հարսն նորա պատրաստեաց զինքն :

8 Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզ սպիտակա սուրբս և լուսաւոր փայլս . որ է բեհեզն արդարութիւն սրբոցն :

9 Եւ ասէ ինձ հրեշտակն . Գրեա՛ զայդ , երանելիք են ամենեքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս հարսանեաց Գառինն :

10 Եւ ես անկեալ առաջի ոտից նորա , երկիրպագի նմա . և ասէ ցիս . Նայ՛ մի անկանիր առաջի իմ , քանզի և ես ծառայակից քո եմ , և եղբարց քոց՝ որք ունին վկայութիւնն Յիսուսի . ԶԱստուած երկրպագեա՛ . քանզի հաւատարմութեամբ Յիսուսի է մեսիլդ , և հոգի մարգարէութեանդ . զի վկայութիւն Յիսուսի է Հոգուդն Սրբով , որ ի մարգարէսն էր :

11 Եւ տեսի զերկինս բացեալ , և ահա ձի սպիտակ . և որ հեծեալն էր ի նմա՝ Հաւատարիմ և Ճշմարիտ , և արդարութեամբ դատի՝ և պատերազմի :

12 Եւ աչք նորա բոց հրոյ , և ի վերայ գլխոյ նորա պսակք բազումս . և ունէր անուն գրեալ , զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն ինքն :

13 Եւ արկեալ զհերսաւ հանդերձ փառաց նորա . ինչուան կոչի Բանն Աստուծոյ :

14 Եւ զաւրքն որ յերկինս էին՝ հետևեցան նմա ձիովք սպիտակաւք , հագեալ բեհեզիւ սպիտակաւ և մաքրով :

15 Եւ սրէ սուր երկսայրի ելանէ ի բերանոյ նորա , զի նովաւ հարցէ զազգսն . և նա հովուեսցէ զնոսա երկաթեայ գաւազանաւ , և նա կոխէ զհնձան գինւոյ սրտի և բարկութեան Աստուծոյ Ամենակալին :

16 Եւ ունի ի հանդերձի և ի ազդրի իւրում անուն գրեալ . Թագաւոր թագաւորաց և Տէր տերանց :

17 Եւ տեսի զհրեշտակ մի կայեալ ի մէջ արեգական , և աղաղակեաց մեծաձայն՝ ասելով առ ամենայն թռչունս որ թռչին ի միջօկս երկնից . Եկայք ժողովեցարուք ի ճաշ մեծի Աստուծոյ :

18 Զի կերիցէք զմարմինս թագաւորաց , և զմարմինս հազարապետաց , և զմարմինս հզօրաց , և զմարմինս ձիոց և հեծելոցն , և զմարմինս ամենայն ազատաց և ծառայից , և փոքունց և մեծաց :

19 Եւ տեսի զգազանն և զթագաւորսն երկրի և զզաւրս նոցա ժողովեալս՝ առնել պատերազմ ընդ հեծելոյն և ընդ զաւրին նորա :

20 Եւ բռնեցաւ գազանն , և ընդ նմա սուտ մարգարէն որ արար զհրաշս առաջի նորա , որովք մոլորեցոյց զայնոսիկ որ առին զդրոշմն գազանին , և որ երկրպագին պատկերի նորա . կենդանի կրակաւ այրեցան երկոքեան ի ծովակն որ հրով և ծծմբով այրի :

21 Եւ զայլսն սրով հարին որ ելանէր ի բերանոյ հեծելոյն նորա , և ամենայն թռչունք կշտացան ի մարմնոցն նոցա :

(12) Ա՝ոպ. խբ • 2 • խե • 10 • բ Կպ՝ն. ժա • 2 • Կ՝ի՝ո • է • 32 • Յայտ • խա • 2 • 9 • (13) Ա՝ոպ. խե • 13 , 14 • Կ՝ի՝ո • ժգ • 10 • Յայտ • գ • 18 • (14) Ա՝ոպ • ոչ • 9 • (15) Ա՝ոպ • խբ • 2 , 3 • Ա՝ոյ • ժգ • 15 , 16 • (16) Յայտ • խբ • 8 • (17) Գործ • ժ • 28 • ժգ • 14 , 15 • Յայտ • խդ • 9 • (18) ա Յ՝ով • է • 10 • Յայտ • ժբ • 17 • (19) Յայտ • ժե • 5 • (20) Յայտ • ղ • 2 • (21) Յայտ • գ • 14 • (22) Ա՝ոյ • ժա • 6 • (23) Յայտ • ա • 18 • բ • 18 • (24) Յայտ • ղ • 2 • (25) Յայտ • բ • 12 • Ա՝ոյ • 16 •

Digitized by Google

ներկեալ արեամբ . և կոչէր անուն նորա՝ Ման Ա՛ստուծոյ ։

14 Եւ զօրավարք երկնից՝ և զօրք երկնից զհետ երթային նորա ձիովք սպիտակօք , զգեցեալ բեհեզս սուրբս և սպիտակս ։

15 Եւ ՚ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ . զի նովաւ հարցէ զազգսն . և նա հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեայ . և նա կոխեսցէ զկնճան գինւոյ՝ բարկութեան Ա՛ստուծոյ Ա՛մենակալի ։

16 Եւ ունէր ՚ի վերայ պատմուճանի իւրոյ և ՚ի վերայ անդամոց իւրոց գիր գրեալ . ԹԱԳԱՒՈՐ ԹԱԳԱՒՈՐԱՑ, ՆԻ ՏԻՐ ՏԻՐԱՆԱՑ։

17 Եւ տեսի զմի հրեշտակ՝ որ կայր ՚ի վերայ արեգական , զի աղաղակեաց ՚ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով . Եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին Ա՛ստուծոյ ։

18 Եւ կերիջիք զմարմինս թագաւորաց , և (զմարմինս հզօրաց) , և զմարմինս երիվարաց՝ և ամենայն հեծելոց ՚ի նոսա , և զմարմինս ազատաց և ծառայից՝ մեծի և փոքու ։

19 Եւ տեսի զգազանն՝ և զթագաւորս երկրի՝ և զզօրս նոցա ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ , որ հեծեալն էր ՚ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա ։

20 Եւ բռնեցաւ գազանն , և ար ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանս առաջի նորա , և զորս մոլորեցոյց . և ետ առնուլ ընդգրոյշ գազանին՝ և զերկրպագուս պատկերի նորա . և կենդանի կած շոր եր քցեալ . և նորա անուանն ընդն Ա՛ստուծոյ Ման (խոսք) էր կոչ-վեալ ։

14 Եւ երկնքի զօրավարներն և զօրքերն՝ նորա եւևէն գնեալին ըսպիտակ ձիով՝ սուրբ և սպիտակ բեհեզ հագած ։

15 Եւ նորա բերանիցն սրած սուր էր դուրս գալիս , որ նորանով զարկէ ազգերին . և նա երկաթէ գաւազանով կըհովուէ նորանց ։ և Ա՛մենակարող Ա՛ստուծոյ բարկութեան սրամաւթեան գինոյ՝ կճանն նա պիտի կոխէ ։

16 Եւ իրան կապակի վերայ , և իրան անդամներին վերայ գիր ունէր գրած . ԹԱԳԱՒՈՐ՝ԱՆԵՐ ԹԱԳԱՒՈՐ՝ ԵՒ ՏԻՐԱՒՐԻ ՏԻՐ ։

17 Եւ սուրիշ հրեշտակ տեսի՝ որ կանգնած էր արեգական վերայ , և մեծ ձայնով աղաղակեց և ամէն թռչուններին՝ որ երկնքի մէջ կըթռչումին՝ ասաց . Եկէք հաւաքվեցէք մեծ Ա՛ստուծոյ ընթրիքն ։

18 Եւ կերէք թագաւորներուն մարմիններըն , և ձիանքի՝ և նորանց վերայ եղող ամէն հեծածներուն մարմիններըն , և ազատներուն և ծառաներուն՝ մեծի և փոքրի մարմիններըն ։

19 Եւ տեսի գազանին և երկրի թագաւորներին և նորանց զօրքերուն ժողովված՝ որ կուիւ անին նորա դէմ որ էն սպիտակ ձին հեծել էր՝ և նորա զօրքերուն դէմ ։

20 Եւ գազանն բռնըվեցաւ , և նորա հետ սուտ մարգարէն էլ՝ որ նշաններ էր անում նորա առաջին , և նորանցով մոլորացուց նորանց որ գազանի դրոշմն առին , և նորանց էլ՝ որ երկրպագութիւն արին

(26) Նոյ · կբ · 3 , 8 ։ (27) Յովհ · ա · 1 ։ ա Յովհ · ե · 7 ։ (28) Յայտ · ժգ · 26 ։ (29) Ա՛ռակ · իբ · 3 ։ Յայտ · դ · 4 ։ է · 9 ։ (30) Նոյ · ժա · 4 ։ բ Թես · բ · 8 ։ Յայտ · ա · 16 ։ Ա՛յր · 21 ։ (31) Ա՛ռակ · բ · 9 ։ Յայտ · բ · 27 ։ ժբ · 5 ։ (32) Նոյ · կբ · 3 ։ Յայտ · ժգ · 19 , 20 ։ (33) Ա՛յր · 12 ։ (34) Գան · բ · 47 ։ ա Յովհ · գ · 15 ։ Յայտ · ժե · 14 ։ (35) Ա՛յր · 21 ։ (36) Եզեկ · լբ · 17 ։ (37) Եզեկ · լբ · 18 · 20 ։ (38) Յայտ · ժգ · 16 ։ ժե · 13 , 14 ։ (39) Յայտ · ժգ · 13 , 14 ։

Digitized by Google

արկին զնոսա ՚ի լիմ հրոյ պղծելոյ ծծմբով ։

21 Եւ մկունքն մեռան ՚ի սրոյ հեծելոյն ՚ի վերայ ձիոյն · յորոյ բերանոյ ելանէր սուրն · և ամենայն թռչունք յագեցան ՚ի մարմնոց նոցա ։

նորա պատճերին[40] · և նորանից կենդանի[41] քցեցին իրենց լճի մէջն՝ որ ծծմբով (յուսկապով) այրվում[42] ։

21 Եւ ուրիշներն մեռան էին ձիոյ վերայ նստողի սրից, որ նորա բերանից սուր էր դուրս գալիս[43] · և ամէն թռչուններն[44] կշտացան նոցանց մարմիններից[45] ։

Կ · Ի

2 Աստղն կապտաւուն գազար տալի ։ 6 Ընտրելն յարուածեան · երանի՝ նորանց որ բաժին ունին նորա մէջն ։ 7 Յաստեան մինել արձակվելով կը-ժողովէ Գոգը և Մագոգը ։ 9 Աստեան կը-բռնի և ծը-ծմբէ ծովն ։ 12 Ո՛չ երկի ամէն մարդկանց յարուածեան ։

1 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր յերկնից, և ունէր զբանալի անդնդոց դժոխոց, և շղթայս մեծ ՚ի ձեռին իւրում ·

2 Եւ ըմբռնեաց զվիշապն (զօձն) զառաջին, որ է Սատանայ և Սատանայ, և կապեաց զնա հազար ամ՝

3 Եւ արկ զնա յանդունդս դժոխոց, և փակեաց և կնքեաց ըզնա՝ զի այլ մի՛ եւս մոլորեցուցէ զազգս, մինչև կատարեսցի հազար ամն · և յետ այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ ։

4 Եւ տեսի աթոռս · և նստան ՚ի վերայ նոցա · և դատաւորութիւն տուաւ նոցա, քնարել զՀոգիս չարչարելոցն վասն վկայութեանն Յիսուսի՝ և վասն բանին Աստուծոյ · և զորս ոչ երկրպագին գազանին, և ոչ առին զդրոշմ նորա ՚ի ճակատս իւրեանց և ՚ի վերայ ձեռին իւրեանց · և կացին՝ և թագաւորեցին ընդ Քրիստոսի հազար

1 Եւ մին ուրիշ հրեշտակ տեսի որ վէր էր գալիս երկնքից, և դժոխքի բանալիքը ունէր, և մին մեծ շղթայ (պզնձէ) իւրան ձեռքումն[1] ·

2 Եւ էն առաջին վիշապին բռնեց՝ որ է Սատանան և Սատանան, և նորան կապեց հազար տարի[2] ·

3 Եւ քցեց նորան դժոխքի անդունդն, և փակեց՝ և կնիք (ճօճկը) դրաւ նորա վերայ՝ որ էլ չըմոլորացնէ ազգերին, մինչև որ հազար տարին լրվի · և նրանից յետև պէտք է որ նա մինքիչ ժամանակ արձակվի[3] ·

4 Եւ սեթոռներ տեսի, և նորանց վերայ նստեցին[4] · և դատաւորութիւն տըվվաւ նորանց[5], որ ընդրեն նորանց հոգիքըն որ գլխատվել էին Յիսուսի վկայութեան համար՝ և Աստուծոյ բանին համար[6] · և նորանց որ երկրպագութիւնն չի արին գազանին, (և ոչ էլ նորա պատկերին)[7], և նորա դրոշմին չտուին իրանց ճակատն և ոչ էլ իրանց ձե-

(39) Յայտ · ժգ · 12 · 15 ։ (41) Յայտ · ի · 10 ։ Դան · է · 11 ։ (42) Յայտ · ժգ · 10 ։ ին · 8 ։ (43) Ա Իր · 15 ։ (44) Ա Իր · 17, 18 ։ (45) Յայտ · ժէ · 16 ։ (1) Յայտ · ա · 18 ։ Բ · 1 ։ (2) Յայտ · ժբ · 9 ։ ր Պետր · բ · 4 ։ Յուդ · 6 ։ (3) Դան · ը · 17, 9 ։ (4) Յայտ · ժգ · 14 · 16 ։ Ա Կոր · 6 ։ (5) Դան · է · 9 · 22 · 27 ։ Մատթ · ժթ · 28 ։ Լուկ · իբ · 30 ։ (6) ա Պետ · ը · 3, 8 ։ (7) Յայտ · ը · 3 ։ (8) Յայտ · ժգ · 12 ։

աւմ ։

5 Եւ յետ այսորիկ ՚ի մեռելոց ոչ ոք եկաց , մինչեւ ՚ի կատարել հազար ամին . այս է յարութիւն առաջին ։

6 Երանի սրբոցն , որք ունին բաժին ՚ի յարութեանն առաջնում , ՚ի վերայ սոցա երկրորդ մահ ոչ ունի իշխանութիւն . այլ եղիցին քահանայք Աստուծոյ և Տեառն Յիսուսի ՚Քրիստոսի . և թագաւորեսցեն ընդ նմա հազար ամ ։

7 Եւ յետ հազար ամին լուծցէ Սատանայ՝ և հանցէ ՚ի բանակ անաւր . եւ ելցէ և մոլորեցուսցէ զազգս աննման ընդ չորս կողմանս երկրի . և զԳոգ և զՄագոգ առցէ ՚ի ձեռս՝ ժողովել նոքօք զամենայն զորս ՚ի պատերազմ . որոյ թիւ նոցա իբրև զաւազ ծովու ։

8 Եւ ելլեն ՚ի լայնութիւն երկրի , և պատեսցեն շուրջ զբանակս սրբոցն , և զքաղաքին սիրեալ ։

9 Եւ իջցէ հուր յերկնից առ ՚ի Աստուծոյ՝ և կերիցէ զնոսա և զդիզապետսն նոցա զՍատանայ՝ որ մոլորեցոյց զնոսա . և արկցէ զնոսա ՚ի ծովն հուր և ծծմբով , ուր էր գազանն՝

10 Եւ սուտ մարգարէն . և չարչարեսցին զտիւ և զգիշեր ։

11 Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ . և ՚ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին և փախչէին երկինք և երկիր , և տեղի ոչ գտաւ ձեռին վերայ . և սրտանք կենդանացեալ նոցան՝ և ՚Քրիստոսի հետ թագաւորեսցեն արին հազար տարի[20] ։

5 Եւ սրանից եւս էլ ոչ ով չը-կենդանացաւ մեռելներից , մինչեւ որ հազար տարի լրանի . ես է առաջին յարութիւնն ։

6 Երանի էն սրբերին , որ բաժին ունին առաջին յարութեան մէջ . սրանց վերայ իշխանութիւն չունի երկրորդ մահը[22] . բայց Աստուծոյ և (Տէր Յիսուսի) ՚Քրիստոսի քահանայք կըլինին[23] . և նորա հետ կը-թագաւորեն հազար տարի[24] ։

7 Եւ հազար տարուցն եւս՝ կարձակէ Սատանային՝ և էն բանտից կը-ցանէ[25] . և դուրս կըգայ և կը-մոլորացնէ բոլոր ազգերը որ երկրի չորս կողմանն են[26] . և Գոգը և Մագոգն էլ (իրան ձեռքն կառնէ)[27] որ (նորանցով) աշխարհի ծովրքերը կռվի մէջ ժողովէ . որ նորանց համարն ծովի աւազի պէս է[27] ։

8 Եւ դուրս կըգան երկրի լայնութեան վերայ , և սրբերի բանակին (օրպանէրը) և սիրելի քաղաքը կըպատեն չորս կողմով[28] ։

9 Եւ երկնքից կրակ վեր կը-գայ Աստուածանից՝ և կայրէ կըսպանէ նորանց և նորանց զօրապետ Սատանան՝ որ նորանց մոլորացրուց[29] կըքցվի կրակի և ծըծմբի ծովը , որտեղ որ էն գազանն՝ և ոսոխ մարգարէներն էին[30] ։

10 Եւ կըչարչարվին ցերեկ և գիշեր[31] ։

11 Եւ տեսի սպիտակ մեծ աթոռ , և նորան էլ որ նորա վերայ նստած էր . որ երեսից երկինքն և երկիրն վախեցին և փախ-

(9) Ցեխ . ժգ . 15 , 16 ։ (10) Հռով . ը . 17 ։ բ Տիմ . ը . 13 ։ Ցեխ . է . 10 ։ (11) Ցեխ . բ . 11 ։ թ . 8 ։ (12) Նեեմ . կա . 6 ։ ա Պետր . ը . 9 ։ Ցեխ . ա . 6 ։ է . 10 ։ (13) Վէր . 4 ։ (14) Վէր . 2 ։ (15) Վէր . 3 ։ Վեսդ . 9 ։ (16) Նկհ . ւը . 2 ։ գի . 1 ։ (17) Ցեխ . ժգ . 11 ։ (18) Նեեմ . ը . 8 ։ Նկհ . ւը . 9 . 16 ։ (19) Վէր . 9 ։ (20) Ցեխ . ժի . 20 ։ (21) Ցեխ . ժգ . 10 , 11 ։

Digitized by Google

նոցա ։

12 Եւ տեսի զմեռեալս մեծամեծս և զփոքրագունս, որ կային առաջի աթոռոյն. և գրեանք բանային. և այլ գիրք բացաւ կենաց, և գտանեցան մեռեալք ի գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց ։

13 Եւ ետու ծով զմեռեալս իւր, և մահ և դժոխք զիւրեանց մեռեալս. և գտանեցան իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ։

14 Այնհ և դժոխք մատնեցան ի լիճ հրոյն. (այս է մահն երկրորդ։)

15 Եւ որ ոչ գտաւ ի գիրն կենաց գրեալ՝ արկաւ ի լիճ հրոյն ։

չուա[22]. և տեղ չգտաւ նոցա (հմմտ.)[23] ։

12 Եւ տեսի որ մեռելներն մեծ և փոքր կանգնած կին առաջի աթոռոյն[24]. և գրքեր էին բացվա[25]. և մին ուրիշ գիրք բացվաւ, որ է կենաց (գիրքն), և մեռելներն գատվեցան էն գրքերից[26] իրանց գործքերին պես[27] ։

13 Եւ ծովն իրան (միջի) մեռելները տուաւ, և մահն և դժոխքն իրանց մեռելներըն (տուին)[28]. և ամեն մեկն իրանց գործքերին պես դատվեցան[29] ։

14 Այն և դժոխքն մտանըվեցան (քցվեցան) կրակի լճի մէջ[30]. (էս է երկրորդ մահն[31]) ։

15 Եւ ով որ գրված չգտաւ կենաց դրքի մէջն, կրակի լճին մէջ քցվեցաւ[32] ։

ԳԼ. ԻԱ.

1 Նոր երկինքն և նոր երկիրն ։ 10 Երուսաղէմի տեսիլքն և նորա պատուիրելը։ 23 Նորա մէջ արեգական պէտք չունի, պատմուհան որ՝ Ըստուծոյ փառքը լուսաւորեաց նորան ։ 24 Երկրի թագաւորները իրանց փառքն կբերեն նորա մէջ ։

1 Եւ տեսի՝ նոր երկինք և նոր երկիր[1]. քանզի առաջինն երկինք և երկիր հեռաց. և ծով ոչ էր այլ ։

2 Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի՝ զի իջանէր յԱստուծոյ և յերկնից, զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ ։

3 Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ա-

1 Եւ տեսի՝ նոր երկինք և նոր երկիր[1]. ինչու որ առաջին երկինքն և երկիրն անցկացաւ[2]. և ծով էլ չկար ։

2 Եւ սուրբ քաղաքըն՝ էն նոր Երուսաղէմըն տեսի՝ որ վիզը էր գալիս Աստուածանից[3] (և) երկնքից՝ պատրաստվեր ինչպես մին գեղեցկացված հարսն իրան մարգոյն համար[4] ։

3 Եւ ձայն լսեցի երկնքից՝ որ

(22) բ Պետ. գ. 7. 10, 11 ։ Ցայտ. խա. 1 ։ (23) Դան. բ. 35 ։ (24) Ցայտ. ժբ. 5 ։ (25) Դան. է. 10 ։ (26) Սամ. կը. 28 ։ Գան. ժբ. 1 ։ Փնկ. գ. 3 ։ Ցայտ. գ. 5 ։ ժգ. 8 ։ խա. 27 ։ (27) Երեմ. ժէ. 10 ։ լբ. 19 ։ Մատթ. ժզ. 27 ։ Գ Սամ. բ. 6 ։ Ցայտ. բ. 23 ։ իբ. 12 ։ Պաչր. 12 ։ (28) Ցայտ. ղ. 8 ։ (29) Ա Կր. 12 ։ (30) = Ցուդիթ. ժէ. 29. 54, 55 ։ (31) Ա Կր. 8 ։ Ցայտ. խա. 8 ։ (32) Ցայտ. ժբ. 20 ։ (33) Ցայտ. ժբ. 20 ։ (1) Եսայ. կէ. 17 ։ կզ. 22 ։ բ Պետ. գ. 13 ։ (2) Ցայտ. ի. 11 ։ (3) Եսայ. նբ. 1 ։ Գաղ. դ. 26 ։ Եբր. ժա. 10 ։ ժբ. 22 ։ ժգ. 14 ։ Ցայտ. գ. 12 ։ Պաչր. 19 ։ (4) Եսայ. ծգ. 5 ։ կա. 10 ։ բ Կորնթ. ժա. 2 ։

Digitized by Google

ասէր ։ Ընդ ասելոյ խորհրդեան Յիսուս ծոյլ ի մէջ մարդկան , և քնանիցէ ընդ նոսա . և նոքա ժողովէսցուն ընդ նմա , և ապ Յարուցեալ նոցա ։

4 Եւ զնոսեցոյց զամենայն արուեստ յայնց նոցա . և մահ ոչ ևս գոյ , ոչ սուգ և ոչ աղաղակ , ոչ ցաւք և ոչ աշխատանք ոչ ևս գոյ , զի առաջինն հանդ ։

5 Եւ ասաց ցիս՝ որ նստեր ի վերոյ աթոռոյն . Ընդ ասելոյ զամենայն նոր . և ասէ ցիս , Գրեա . զայս բանք ճշմարիտ և հաւատարիմք ։

6 Եւ ասէ ցիս . Եղե՛ ես Ա և Ով , սկիզբն և կատարած , ես ծարաւելոցն տամ յաղբերոյ ջրոյ կենաց ձրի ։

7 Որ յաղթիցէ , ժառանգեսցէ զայս ամենայն . և ես եղէց նմա Յաստուած , և նոքա եղիցին ինձ որդիք ։

8 Եւ ծուլացն և անհաւատից ըստգեղծաց և պոռնիկաց և կախարդաց և կռապաշտաց և ստախօսաց՝ և ամենայն ստոյ՝ ամբարշտաց , բոց բաժինն իւրեանց՝ ի լճին այրելոյ հրով և ծծմբով . որ է մահն երկրորդ ։

9 Եւ եկն առ իս մի յեօթն հրեշտակացն , որք ունէին զեօթն սափորսն լցեալս եօթն վերջին պատուհասովքն , խօսեցաւ ընդ իս և ասէ , Եկ՝ ցուցից քեզ զկտրուած Գառինն զկին ։

ասելոյր . Ընդ Յաստուծոյ խորհրդեան մարդկանց միջոցաւ (է) , (և) նա կը քնանայ նորանից հետ . և նորանք (կրկնեին) նորան ժողովուրդ , և ան նորանց Յաստուած ։

4 Եւ ամէն արտասուքը կըսրբէ նորանց աչքերից . և էլ մահ չի լինիլ , ոչ սուգ և ոչ աղաղակ և ոչ ցաւ և ոչ աշխատանք էլ չի լինիլ , քանզու որ առաջինն անցեալ ։

5 Եւ նա որ աթոռին վերայ նստած էր՝ ասաց ինձ . Ընդ ամէն բան նոր եմ շինում . և ասաց ինձ . Գրիր , քանզու՝ այս խօսքերս ճշմարիտ և հաւատարիմ (են) ։

6 Եւ ինձ ասաց . Կատա . Ես եմ Ա և Օ . սկիզբն և վերջն . ես ձրի (տալիքս) կըտամ ծարաւածներին կենաց աղբիւրի ջրից ։

7 Ով որ յաղթէ , էս ամէնքս կըժառանգէ . և ես կըլինեմ նորան Աստուած , և նա կըլինի ինձ որդի ։

8 Բայց ծուլերին և անհաւատներին , մարդասպաններին և պոռնիկներին , և կախարդներին , և կռապաշտներին և մահադեղ ստօղներին և ամէն սուտ աստղներին՝ և ամբարիշտներին , նորանց բաժինն էն լըճումն կրկնին որ կրակով և ծըծմբով վառվում . որ է երկրորդ մահ ։

9 Եւ միոնն էն եօթն հրեշտակներից՝ որ էն եօթն սկաւառակն (ըսասլն) ունէին՝ վերջին եօթն պատուհասներովն լցված , ինձ մօտ եկաւ , խօսեց ինձ հետ և ասաց . Եկ՝

(5) Գ Կոր . ԺԲ . 11 , 12 : Յովհ . Ի . 7 : Բ Կորնթ . Գ . 16 ; Յայտ . Ե . 12 : (6) Ես . Ի . 6 : Յայտ . ԻԱ . 6 : Յայտ . Ե . 17 : (7) ա Կորնթ . ԺԵ . 28 . 54 : Յայտ . Բ . 14 : (8) Կոչ ՚ ի . 10 : Կո . 3 : Ա . 19 : (9) Յայտ . գ , 3 . թ . Ե . 1 , Ի , 11 : (10) Կոչ . Խգ . 19 : Բ Կորնթ . Ե . 17 : (11) Յայտ . ԺԲ . 9 : (12) Յայտ . ԺԲ . 17 : (13) Յայտ . ո . թ . Իգ . 13 : (14) Կոչ , ՃԸ . 3 . ԾԵ . 1 : Յովհ . գ . 18 . 14 : Ե . 27 : Յայտ . Իգ . 12 : (15) Ա՛ . Ը . 3 : Կիր : Ը . 10 : (16) ա Կորնթ . Ը . 9 , 10 ; Գաղ . Ե . 13 , 20 , 21 : Կոլոս . Գ . 5 : գ Յովհ . ա . 8 : Կիր . ԺԸ . 15 : Յայտ . Իգ . 15 : (17) Յայտ . Ե . 14 , 15 : (18) Յայտ . ԺԸ . 1 . 4 , 7 ։

Digitized by Google

ՆԸՆ և զկին Վահունն ։

10 Եւ առ առաւօտս զկս ՚ի լեառն մի բարձր և մեծ՝ Հոգւովն. և եղեալ ինձ զքաղաքն մեծ և սուրբ՝ երեսաղէմ. զի իջեալ էր յերկնից առ ՚ի Յ՚աստուծոյ ,

11 Եւ ունէր զփառս Յ՚աստուծոյ. և էր ՚ի նմա լուսաւորութիւն, նըմանեալ ականց պատուականաց՝ քար յասպիս սառնաւեսակ և կենդանի։

12 Եւ էին պարիսպք նորա մեծ և բարձր , և ունէր դրունս երկոտասան. և յերկոտասան դրունսն երկոտասան հրեշտակս , և անուանք իւրաքանչիւրացն ՚ի վերայ դրանցն գրեալ էին՝ զոր երկոտասան ցեղից որդւոց Իսրայէլի ։

13 Յարևելից կողմանէ դրունք երիք, և ՚ի հիւսիսոյ կողմանէ դրունք երիք, և ՚ի հարաւոյ կողմանէ դրունք երիք, և յարևմտից կողմանէ դրունք երիք ։

14 Եւ պարիսպ քաղաքին ունէր հիմունս երկոտասան , և ՚ի նոսա երկոտասան անուանք երկոտասան առաքելոց Վահունն ։

15 Եւ որ խօսէրն ընդ իս , ունէր եղէգն ոսկի ՚ի ձեռին իւրում՝ զի չափեսցէ զքաղաքն՝ և զդրունս նորա՝ և զպարիսպս նորա ։

16 Եւ էր քաղաքն քառակուսի . և արչափ երկայնութիւն նորա՝ նոյնչափ և լայնութիւն՝ և բարձրութիւն՝ հաւասար , և էր չափ երկայնութեան նորա երկոտասան հազար ասպարէզս . և լայնութիւն նորա և բարձրութիւն միաչափ՝ կիվսս ։

17 Եւ չափեաց զպարիսպն նորա՝ ՃԿԴ ասեղ քսիղ հարսին (որ է) Վահունն կիննն[19] ։

10 Եւ հոգովն առաւ առաքեալ զինձ մին բարձր ոստ[20], և ինձ ցոյց առաւէն մեծ քաղաքըն սուրբ՝ Երուսաղէմն , որ երկնքէցն էր վեր եկել Յ՚աստուածանից[21] ։

11 Եւ Յ՚աստուծոյ փառքըն ունէր . և լուսաւորութիւն ունէր պատուական ակունքի պէս , (պզինն) առուզի պէս պայծառ յասպիս քարի նման[22] ։

12 Եւ նորա պարիսպներն մեծ և բարձր էին , և տասներկու գռան ունէր , և տասներկու գռներուն տասներկու հրեշտակ . և անոնց մէկ գրեներին վերայ անուններ էին գրած՝ որ Իսրայելի տասներկու ցեղէ տ նուններն էին[23] ։

13 Յ՚արևելքի կողմէն երեք գռան , և հիւսիսի կողմէն երեք գռան , և հարաւի կողմէն երեք գռան , և արևմտքի կողմէն երեք գռան[24] ։

14 Եւ քաղաքի պարիսպն տասներկու հիմունք ունէր , և նոցանց վերայ Վահի առաքելոցն տասներկու անուններն[25] ։

15 Եւ նա որ ինձ հետ խօսուէր , մին ոսկէ եղէգ (ղէրչ) ունէր իրան ձեռուն , որ քաղաքըն և նորա գռներըն և նորա պարիսպներըն չափէ[26] ։

16 Եւ քաղաքն չորս անկիւնաւոր էր . և որչափ նորա երկայնութիւնն (էր) , հնչափ էլ նորա լայնութիւնն և բարձրութիւնն՝ հաւասար . և նորա երկայնութեան չափն տասներկու հազար ասպարեզ (նանիկն) (էր) . և նորա լայնութիւնն և բարձրութիւնն միաչափ ։

17 Եւ նորա պարիսպըն չափեց

(19) Յայտ . ԻԲ . 7 : Ալ . 8 : (20) Յայտ . ա . 10 : Իե . 8 : (21) Նկհ . Խը : Ալ . 2 : (22) Յայտ . Իբ . 5 : Ալ . 23 : (23) Նկհ . Խը . 31—34 : (24) Նկհ . Խը . 31—34 : (25) Մտթ . Իզ . 18 : Գաղ . բ . 9 : Եփես . բ . 20 : (26) Նկհ . Խ . 3 : Օգտ . բ . 1 : Յայտ . Իե . 1 :

Digitized by Google

հարիւր և քառասուն և չորս ապարէզս · չափ մարդոյ՝ որ է հրեշտակի ։

18 Եւ էր շինուած պարսպաց քաղաքին յասպիս · և քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման ապակւոյ ։

19 Եւ հիմունք քաղաքին յամենայն անհանգ պատուականանց · հիմն առաջին պատուական յասպիս , երկրորդն շափիղայ , երրորդն պղնձագոյն , չորրորդն զմրուխտ ,

20 հինգերորդն եղեգնաքար , վեցերորդն սարդիոն , եօթներորդն ոսկեքար , ութներորդն բիւրեղ , իններորդն տապազիոն , տասներորդն քրիսոպրասոս , մեռասանն յակինթ , երկոտասանն ամեթիստ ։

21 Եւ էին երկոտասան դրունք երկոտասան մարգարտաց՝ միանձն · և իւրաքանչիւրոցն դրունք՝ էին մի մի ոմանք՝ ի միոյ միոյ մարգարտէ · և ընդարձակութիւն քաղաքին ոսկի մաքուր՝ որպէս ապակի պայծառ ։

22 Եւ տաճար ոչ տեսի ի նմա , քանզի Տէր Ա՛ստուած Ա՛մենակալ տաճար էր ի նմա՝ և Գառն ։

23 Եւ քաղաքին էին պէտք արեգական և լուսնի , զի լուսաւորեսցեն զնա · քանզի փառքն Ա՛ստուծոյ լուսաւորէին զնա յամենայն ժամ · և ճրագ ի նմա Գառն ։

24 Եւ գնային հեթանոսք ի լոյս նորա · և թագաւորք երկրի լուսաստղեսցեն լինելոյ ի փառաց նորա ։

25 Եւ դրունք նորա ոչ փակեսին ի տուէ և ի գիշերի , այլ բաց կացին հանապազորդ · և գիշեր ոչ ևս լինիցէ ի նմա ։

26 Ա՛յլ փառք և պատիւ ազգաց

հարիւր և քառասուն և չորս ապարէզ · մարդոյ չափովն՝ որ հրեշտակին է ։

18 Եւ քաղաքի պարիսպների շինուածքն յասպիս (քարից) էր · և քաղաքն մաքուր ոսկի էր՝ յիստակ և լապիտակ ապակի (շուշայի) նման ։

19 Եւ քաղաքի հիմունքն ամէն պղնիւ ակունքներից (էր) · պարսպի առաջին հիմն յասպիս , երկրորդն՝ շափիղայ , երրորդն՝ պղնձագոյն , չորրորդն՝ զմրուխտ[27] ։

20 հինգերորդն՝ եղեգնաքար , վեցերորդն՝ սարդիոն , եօթներորդն՝ ոսկեքար , ութերորդն՝ բիւրեղ , իններորդն՝ տապազիոն , տասներորդն՝ քրիսոպրասոս , տասնեւմէկերորդն՝ յակինթ , տասներկուսերորդն՝ ամեթիստ ։

21 Եւ տասներկու դուռն կար՝ տասներկու մարգարիտից՝ մին ձեւով · և ամէն մէկ դուռն մին մարգարիտից · և քաղաքի բաց փողոցներն յիստակ ոսկի՝ ինչպէս պայծառ ապակի (շուշայ)[28] ։

22 Եւ տաճար չը՛տեսի նորա մէջն , ինչուղղ Տէր Ա՛ստուած Ա՛մենակալ՝ նորա տաճար է և Գառն[29] ։

23 Եւ քաղաքն իսկի արեգական և լուսնի պէտք չունէր՝ որ լուսաւորեն նորան · ինչուղղ որ Ա՛ստուծոյ փառքը միշտ լուսաւորում է նորան , և նորա ճրագն Գառն էր[30] ։

24 Եւ հեթանոսներ նորա լուսովն էին գնում · և երկրի թագաւորներն նորա փառաց լոյսն հագնում էին[31] ։

25 Եւ նորա դռներն չէին փակվում ցերեկ և գիշեր , այլ միշտ բաց էին մնում[32] · և գիշեր էլ չէր լինում նորա մէջն[33] ։

26 Եւ ազգերի փառքն և պատիւը (կըբերեն) նորա մէջ[34] ։

(27) Յայտ · ծգ · 11 · (28) Յայտ · իբ · 2 · (29) Յովհ · գ · 23 · (30) Եսայ · իգ · 23 · կ · 19 , 20 · Յայտ · իբ · 5 · Ա Կոր · 11 · (31) Եսայ · կ · 3 · 5 · 11 · կզ · 12 · (32) Եսայ · կ · 11 · (33) Եսայ · կ · 20 · Ծած · ժգ · 7 · Յայտ · իբ · 5 · (34) Ա Կոր · 24 ·

Digitized by Google

27 Եւ ոչ մարդկ անդ ամենայն չար-
րակամ[ա] եւ պիղծ եւ սուտ[բ]իւն, բայց
միայն որ գրեալ են ի գոգաւթիւն
կենաց Գառնին ։

27 Եւ իսկի չար կամք մտնել ընդ
մտերիք են տեղին, եւ ոչ էլ պիղծ եւ
սուտ[բ]իւն[31], բայց միայն նոքանք որ
Գառին կենաց գրքի մէջն գրված են[32]։

Գ Լ Ո Ի Ս

1 Ցնծադանի ջրի գետ ։ 2 Կենաց ծառ ։ 5 Ջեր Աստուածն լուսաւորեսցէ զոսոր վճռելոցն ։ 9 Հրեշտակին չի ասացաւ՝ որ իրան երկրպագութիւն անեն ։ 18 Ցնծի որ միմեանց բան առնելոցն են գրքի վերայ ։ եւ միւս բան պահպանելոցն նորանից՝ Աստուած էլ կամելոցն նոցա վերայ ճշմարիտ պատուհասանքն ։ եւ հրեշտակացոյն նոցա բաժինն կենաց ծառին ։ եւ սրբերի քաղաքին ։

1 Եւ ցոյց ինձ մաքուր գետ կեն-
դանի ջրոյ՝ սառնասառնակ, որ
ելանէր յաթոռոյն Աստուծոյ և Գառ-
նին ։

2 Եւ գնայր ի միջ հրապարա-
կաց քաղաքին. և զերծրք գետոյն
առափ և անտի ծառ կենաց՝ որ բե-
րէր պտուղս երկոտասան. ըստ մի-
ոյ միոյ ամսոյ տային զպտուղս իւր-
եանց, և տերեւք ծառոյն էր բժըշ-
կութիւն հեթանոսաց ։

3 Եւ նզովք ամենայն ոչ ևս էին. և
աթոռն Աստուծոյ և Գառնին նորա
էր ի նմա. և ծառայք նորա պաշ-
տեսցեն զնա ։

4 Եւ տեսանիցեն զերեսս նորա.
և անուն նորա գրեալ էր ի ճա-
կատս նոցա ։

5 Եւ գիշեր ոչ լինի՝ և չէր ինչ
անդ պէտք ճրագի և լուսոյ արեգա-
կան, զիասն զի Տէր Աստուած լու-
սաւորէր զնոսա. և թագաւորեսցեն
յաւիտեանս յաւիտենից ։

1 Եւ ինձ ցոյց մաքուր գետ ցոյց
առուս՝ կենդանի ջրի՝ սառուցի նը-
մանն (փայլուն), որ Աստուծոյ և
Գառնի աթոռոյն էր դուրս գալիս[1]։

2 Եւ քաղաքի բաց փողոցների
միջումն էր գնում[2], և գետի եզեր-
քերն (ափերն) էս կողմից էն կողմից
կենաց ծառ (կայր)՝ որ տասներկու
պտուղ էր բերում[3]. ամէն ամիս
(ժամանակումն) իրանց պտուղն
տալիս էին. և ծառի տերևն բժըշ-
կութիւն էր հեթանոսներին (հա-
մար)[4]։

3 Եւ հեռուղն էլ իսկի նզովք չը-
կար[5]. և Աստուծոյ և (Գառնու) Գա-
ռի աթոռն էր նորանում[6]. և նորա
ծառաներն պաշտամունին նորան[7]։

4 Եւ նորա երեսն տեսնումին.
և նորա անունն գրված էր նորանց
ճակատներումն[8]։

5 Եւ գիշեր չըկար էնտեղ, և
իսկի ճրագի և արեգական լոյս պէտք
չէր էնտեղ[9]. այսպէսով որ Տէր
Աստուածն լուսաւորումէր նորանց[10].
և կըթագաւորին յաւիտեանս յա-
ւիտենից[11]։

(35) Նոյ. լի. 8 ։ Նր. է. փ. 31 ։ Յովհ. գ. 17 ։ Հայտ. իբ. 14, 15. (36) Փիլիպ. գ. 3 ։ Հայտ. ա. 6. Ոչ. ծ. բ. 22 ։ (1) Նկրի. կամ՝ Հրեշտակ. ոչ. 8 ։ (3) Հովհ. ժե. 16 ։ Հայտ. իա. 21 ։ (5) Գրնդ. գ. 9 ։ Հայտ. գ. 7 ։ (6) Հայտ. իա. 21 ։ (7) Ոչ. ծ. 3 ։ Նոյ. իե. 13 ։ ա Յովհ. գ. 8 ։ (8) Հայտ. գ. 12 ։ ոչ. ծ. 4 ։ (10) Ոչ. իգ. 9 ։ ոչ. 11 ։ (11) Դան. է. 18 ։ Հայտ. ե. 10 ։ Ոչ. ծ. 5 ։ (12) Ոչ. ե. 12 ։ Հայտ. գ. 21 ։

Digitized by Google

6 Եւ ասէ ցիս . Ա՛յս բանք հաստատեալ է և ճշմարիտ . և Տէր Աստուած մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ իւր՝ ծառայից իւրոց ցուցանել զոր լինելոց է վաղվաղակի :

7 Ա՛հա գամ վաղվաղակի . երանի՝ որ պահէ զբան մարգարէութեան գրոյս :

8 Եւ ես Յովհաննէս լուայ՝ և տեսի զայս ամենայն . և յորժամ լուայ և տեսի , անկայ՝ և երկրպագի հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս ամենայն :

9 Եւ ասէ ցիս . Ա՛ր անկանիր առաջի իմ՝ և եղկիր պատաներ . քանզի և ես ծառայակից քո եմ և եղբարց քոց՝ որ պահեցեն զբան մարգարէութեան գրոյս այսորիկ . Աստուծոյ երկիր պագ :

10 Եւ ասէ ցիս դարձեալ . Ա՛ր կնքեր զբան մարգարէական գրոցս այսմիկ . քանզի ժամանակ մերձ է :

11 Որ ամպարշտեալցն է՝ ամպարշտեսցի , և որ աղտեղաձայնացին է՝ աղտեղասցի , և որ արդարանալոցն է՝ արդարասցի , և որ սրբելոցն է՝ սրբեսցի :

12 Ա՛հա գամ վաղվաղակի՝ և վարձք իմ ընդ իս , հատուցանել իւրաքանչիւր ըստ գործոյ իւրոմանց :

13 Ես եմ Ա՛լփայ և Ով , սկիզբն և կատարած , առաջինն և վերջին :

14 Երանելի՛ են՝ որ պահեն զպատուիրանս նորա . նորա ունիցին

6 Եւ ասաց ինձ . Այս խօսքերս հաստատուն եմ՝ և ճշմարիտ են[23] . և Տէրն՝ աստուած մարգարէից Աստուածն իւրեան հրեշտակն ղրկեց՝ որ իւրեան ծառաներին ցոյց տայ են որ շուտով պիտի լինի[23] :

7 Ահա շուտով (կրգամ)[24] . երանի՝ որ կը (գրքի) մարգարէութեան խօսքերն կը պահէ[25] :

8 Եւ ես Յովհաննէս էս ամէն բաներս լսեցի և տեսի . և երբոր լսեցի և տեսի , վերընկայ՝ որ երկրպագութիւն անեմ էն հրեշտակին , որ էս ամէն բաներս ցոյց էր տալիս ինձ[26] :

9 Եւ ինձ ասաց . Ա՛ր ընկնիր իմ առաջս՝ և երկրպագութիւն մի աներ . ինչու որ ես էլ ծառայ ընկեր եմ քեզ և քո եղբարներին՝ որ էս գրքի մարգարէութեան խօսքերն կը պահեն . Աստուծոյն երկրպագութիւն արա[27] :

10 Եւ ասաց ինձ (միևէլ) . Ա՛ր կնքեր (չկնքէր) էս գրքի մարգարէական խօսքերն[28] . ինչու որ ժամանակն մօտացել է[29] :

11 Իվ որ ամբաւրիշա է՝ թող ամբաւրշանայ , և ով որ կեղտոտ է՝ թող կեղտոտվի , և ով որ արդար է՝ թող (էլ) արդարանայ , և ով որ սուրբ է՝ թող (էլ) սրբվի[30] :

12 Ահա շուտով կրգամ[31] և իմ վարձքս էլ ինձ (է)[32] . որ ամէն մէկին հատուցանեմ իրան գործքին պէս[33] :

13 Ես եմ Ալֆան և Օն . սկիզբն և կատարածն , առաջինն և վերջինն[34] :

14 Երանելի են նորանք՝ որ նորա պատուիրանքներն կը պահեն[35] . նո-

(12) Յայտ . ԻԲ . 9 . բա . 5 : (13) Յայտ . ա . 1 : (14) Յայտ . գ . 11 : Այտ . 10 . 12 . 20 : (15) Յայտ . ա . 3 : (16) Յայտ . ԻԲ . 10 : (17) Յայտ . ԻԲ . 10 : (18) Գաղ . ը . 20 . Իբ . 6 . 9 : Յայտ . ժ . 6 : (19) Յայտ . ա . 3 : (20) Դան . գ . 27 : Գաղ . Իբ . 10 . բ Տիմ . գ . 13 : (21) Ես . 7 : (22) Նաւմ . ե . 10 : կբ . 11 : (23) Հաւկ . բ . 6 : Իբ . 12 : Յայտ . բ . 62 : (24) Նաւմ . ե . 3 : Իսկ . 6 : Իբ . 12 : Յայտ . ա . 8 . 11 : բա . 6 : (25) Գաղ . Իբ . 12 : ա Յովհ . գ . 24 :

Digitized by Google

իշխանութիւն ուտել ի փայտէն կեանց՝ և մտանել ընդ դրունս քաղաքին :

15 Արտ եղեն արտաքս՝ շուներ և դեղատուք և պոռնիկք և կռապաշտք , և ամենեքեան որ սիրեն զսուտ եւ առնեն :

16 Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել ձեզ եկեղեցիացդ . ես արմատ և սեռ ի Դաւիթ , և աստղ պայծառ առաւօտին :

17 Եւ Հոգի , և փեսայն՝ որ գայ՝ ասեն եմ . և որ լսէ՝ ասելով թէ եկ՝ և որ ծարաւի իցէ՝ եկեսցէ , և որ ոք կամի առնուլ զջուրն կեանց ձրի :

18 Վկայեմ և ես ամենայնի՝ որ լսէ զբանս մարգարէութեան գրոցս այսմիկ . թէ ոք յաւելցէ ի սա , յաւելցէ Աստուած ի վերայ նորա զեօթն հարուածան՝ գրեալս ի գիրս յայս :

19 Եւ եթէ ոք պակասեցուցէ ի բանից մարգարէութեան գրոցս այսմիկ՝ պակասեցուսցէ և Հատցէ Աստուած զբաժին նորա ի ծառոյն կենաց՝ և ի քաղաքէն սրբոց՝ որ գրեալ է ի գիրս յայս :

20 Ասաց՝ որ վկայեացն զայս . Ոմն ես վաղվաղակի . Ամէն : Եկ՝ Տէր Յիսուս Քրիստոս :

21 Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի վերայ ամենայն սրբոց . Ամէն :

բանք իշխանութիւն ունին որ կենաց փայտին տալոյ[36] , և քաղաքի դռնէն ներս մտանեն[37] :

15 Արտաքոյ գտցի սիրտ գեանց[38] շներն , և մարհադիզ առօգներն , պոռնիկներն , և կռապաշտներն , և ընդ ամենայն որ առնէ սուտ սիրէ[39] :

16 Ես Յիսուս իմ հրեշտակս առաքեցի՝ որ վկայէ ձեզ եկեղեցիներիդ՝ զայս բանիս համար[40] . ես եմ Դաւթի արմատն և ցեղն[41] , և առաւօտեան պայծառ աստղն[42] :

17 Եւ Հոգին՝ և հարսն առնեն ասեն[43] . և նա որ լսէ՝ թող ասէ՝ եկ . և ով որ ծարաւ է՝ թող գայ , և նա որ կամենայ կենաց ջուրն ձրի (խափոյ) առնէ[44] :

18 Ես վկայեմ ամենին՝ ով որ էս գրքի մարգարէութեան խօսքերն լսում . թէ որ մինն բան աւելացնէ սորա վերայ[45] , Աստուած կաւելացնէ նորա վերայ էն եօթըն պատուհասներըն՝ որ էս գրքումս գրված են :

19 Եւ թէ որ մինն էս գրքիս մարգարէութեան խօսքերիցն բան պակասացնէ , Աստուած կրպակասացնէ և կրկտրէ նորա բաժինըն կենաց ծառիցն[46] , և սրբերի քաղաքիցն՝ որ էս գրքումս գրված են[47] :

20 Ասէ որ էս (բաներիս) վկայեց՝ ասաց . (Իրաւ) ես շուտով կգամ[48] . Ամէն[49] : Եկ՝ Տէր Յիսուս[50] :

21 Ա՛ր Տէր Յիսուսի Քրիստոսի շնորհքն լինի՝ ամէն սրբերին վրայ . Ամէն[51] :

(36) Ա՛յր . 2 : Յայտ . բ . 7 : (37) Յայտ . խա . 27 : (38) ա Կորնթ . գ . 9 , 10 : Պետ . ե . 19 , 20 , 21 : Կող . գ . 6 : Յայտ . ք . 29 , 21 : խա . 8 : (39) Փիլիպ . գ . 2 : (39) Յայտ . ա . 1 : (31) Յայտ . ե . 5 : (32) Ցնծա . իգ . 17 : Հռոմ . գ . 12 : բ Պետ . ա . 19 : Յայտ . բ . 28 : (33) Յայտ . խա . 2 . 9 : (34) Յայտ . ծե . 1 : Յովհ . ե . 37 : Յայտ . խա . 6 : (35) բ Օրին . գ . 2 : ժբ . 32 : Աստ . ե . 6 : (36) Նե . լբ . 33 : Աստ . կբ . 28 : Յայտ . գ . 5 : ժգ . 8 : (37) Յայտ . խա . 2 : (38) Ա՛յր . 12 : (39) Յովհ . խա . 5 : (40) բ Տիմ . գ . 8 : (41) Հռով . ժգ . 20 . 24 : բ Թես . գ . 18 :

Ա՛ՒԵՏԱՐԱՆԻՆ ՍՏԵՓԱՆՈՍԻ ✓

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

JUN 1 5 1932

Digitized by Google